ՎԱՀՐԱՄ ԲԱԼԱՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐ

SCIENTIFIC CENTER OF ARTSAKH · НАУЧНЫЙ ЦЕНТР АРЦАХА

VAHRAM BALAYAN

GLIMPSES ON THE HISTORY OF THE ARTSAKH REPUBLIC SETTLEMENTS

•

ВАГРАМ БАЛАЯН

ОЧЕРКИ ИСТОРИИ НАСЕЛЕННЫХ ПУНКТОВ РЕСПУБЛИКИ АРЦАХ

"ZANGAK" PUBLISHING HOUSE
ИЗДАТЕЛЬСТВО "ЗАНГАК"
YEREVAN · ЕРЕВАН

ԱՐՑԱԽԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՎԱՀՐԱՄ ԲԱԼԱՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐ

Մենագրություն

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ · 2020

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Բ 200

Տպագրվել է Արցախի գիտական կենտրոնի գիտական խորհրդի երաշխավորությամբ

Գիտական խմբագիր՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Մելանյա Բալայան
Հրատարակչական խմբագիր՝ Նարինե Ավանեսյան
Գրախոս՝ ԱրՊՀ պատմության ամբիոն

Բալայան Վահրամ Ռազմիկի
Բ 200 ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐ: Մենագրություն / Վ. Բալայան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2020.— 752 էջ:

Գրքում արխիվային նյութերի, տարբեր ժամանակահատվածներում պարբերական մամուլում տեղ գտած հրապարակումների, տպագիր սկզբնաղբյուրների, պատմագիտական աշխատությունների հիման վրա ներկայացված է խոր հնադարից մինչև մեր օրերը Արցախի Հանրապետության 2020 թ. դրությամբ գործող 308 բնակավայրերի պատմությունը:

Աշխատության մեջ առաջին անգամ օգտագործվել են նաև ժողովրդի մոտ պահպանված, սերնդեսերունդ փոխանցված հետաքրքիր զրույցներ ու պատումներ: Դրանք շրջանառության մեջ դնելը թույլ է տվել առավել համակողմանի քննության ենթարկել արցախահայության բազմադարյան երթը:

Մենագրության մեջ արժեքավոր տեղեկություններ կան ԱՀ բնակավայրերի ժողովրդագրության, ազգագրության վերաբերյալ:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, ազգագրագետների, քաղաքագետների և ընթերցող լայն շրջանների համար:

ISBN 978-9939-68-827-5

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

© Բալայան Վ., 2020
© «Զանգակ-97» ՍՊԸ, 2020

Գիրքը նվիրվում է ընկերոջս՝ հայ անվանի հուշարձանագետ, պատմաբան և բանահավաք Սամվել Կարապետյանի լուսավոր հիշատակին:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայկական լեռնաշխարհի անբաժանելի մասը կազմող Հայոց արևելից նահանգները՝ Արցախն ու Ուտիքը, Մեծ Հայքի ընդհանուր ճակատագրի հետ մեկտեղ, ունեցել են նաև ինքնատիպ պատմություն ու զարգացման առանձնահատկություններ:

Իր պատմական երկարատև կենսափորձի վրա հենվելով՝ Հայոց արևելից նահանգների հայությունը կենաց ու մահու պայքար է մղել արտաքին ու ներքին բոլոր թշնամիների դեմ՝ հանուն սեփական հայրենիքի, պետականության, ժողովրդի ազատության ու անկախության: Այդ պայքարի բարձրակետը դարձավ Արցախի Հանրապետության ծնունդը:

Ի սկզբանե Արցախյան շարժումը պատմական անարդարությունը շտկելու և Արցախը Հայաստանի կազմ վերադարձնելու նպատակ ուներ: Այդ ճանապարհը հարթ ու հանգիստ չէր: Հոգեվարքի մեջ գտնվող ԽՍՀՄ ղեկավարության անհանդուրժողական կեցվածքը, Ադրբեջանի ագրեսիվ նկրտումները, միջազգային անբարենպաստ զարգացումները նոր պետականության վերակերտման շեմին կանգնած Հայաստանի նկատմամբ շոշափելի ճնշումները, ստեղծված անորոշ պայմանները, ապագա արհավիրքներին դիմակայելու և Արցախի ճակատագիրը հստակ կանխորոշելու անհրաժեշտությունը ազատագրական շարժման ղեկավարներին դրդեցին առավել իրատեսական որոշում կայացնելուն:

Հիմք ընդունելով 1990 թ. ապրիլի 3-ին ընդունված «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու կարգի մասին» ԽՍՀՄ օրենքի 3-րդ հոդվածը, որտեղ ասված էր. «Միութենական հանրապետությունում, որի կազմում կան ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր և ինքնավար օկրուգներ, հանրաքվեն յուրաքանչյուր ինքնավարության համար անց է կացվելու առանձին:

Ինքնավար հանրապետությունների և կազմավորումների ժողովուրդներին իրավունք էր վերապահված ինքնուրույն որոշել ԽՍՀՄ կազմում կամ դուրս եկող ինքնա-

վար միութենական հանրապետություններում մնալու, ինչպես նաև իր պետական կարգավիճակի ձևակերպման հարցը: Այն միութենական հանրապետություններում, որտեղ կան ազգային խմբերի հոծ բնակության վայրեր և տվյալ տարածքում այդ խմբերը կազմում են բնակչության կեսից ավելին, հանրաքվեի տվյալներն ամփոփելիս քվեարկության արդյունքներն հաշվի են առնվում առանձին», ազատագրական շարժման կազմակերպիչները, արտահայտելով արցախահայության կամքը, որոշեցին ստեղծել ազգային առանձին պետություն:

1991 թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նիստ, որտեղ ընդունվեց «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» որոշումը:

Արցախահայության պետականության վերականգնման ճանապարհին կարևոր քայլեր են հանդիսանում 1991 թ. դեկտեմբերի 10-ին կազմակերպված հանրաքվեն և ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանի՝ 1992 թ. հունվարի 6-ին ընդունած «ԼՂՀ պետական անկախության հռչակագիրը»:

Այսպիսով, հետևելով ԽՍՀՄ օրենսդրությանը և միջազգային իրավունքի բոլոր նորմերին՝ արցախահայության ինքնորոշման ուղղությամբ 1991 թ. ընտրվեց անկախություն և պետականություն ունենալու տարբերակը:

Պետականության ստեղծման քսանինը տարիները առնեցուն էին դժվարություններով և հերոսական էջերով: Հաղթական ավարտին հասցնելով Ադրբեջանի դեմ մղված ազատագրական պատերազմը (1991–1994 թթ.), հաղթահարելով տեսանելի և անտեսանելի բոլոր խութերը՝ արցախահայությունը կերտում է ժողովրդավարական արժեքներով ապրող ժամանակակից պետություն:

Արցախի Հանրապետությունում լիարյուն գործում են պետական իշխանության բոլոր կառույցներն ու աշխարհին ընկալելի ժողովրդավարական ինստիտուտները:

Արցախի Հանրապետության տարածքը կազմում է 11 432 հազ. քառ. կիլոմետր: Հայկական երկրորդ հանրապետությունը գտնվում է Փոքր Կովկասի լեռնաշղթայի հարավարևելյան մասում՝ Մեծ Հայքի ծայր արևելյան հատվածում: Հյուսիսից և արևելքից այն սահմանակից է Ադրբեջանի Հանրապետությանը, արևմուտքից՝ Հայաստանի Հանրապետությանը, հարավից՝ Իրանի Իսլամական Հանրապետությանը:

Արցախի Հանրապետությունը զբաղեցնում է Մեծ Հայքի Սյունիք, Արցախ, Ուտիք նահանգների տարածքների մի մասը: Հարկ է նկատել, որ ներկայիս Արցախի Հանրապետության տարածքը հիմնականում տեղաբաշխված է պատմական Արցախի գավառների վրա:

Երեք հազարամյակների ընթացքում Արցախ նահանգը սկզբնաղբյուրներում ներկայացված է տարբեր անուններով՝ Ուրտեխե, Օրխիստենե, Ծավդեք, Արցախ, Խաչեն, Փոքր Սյունիք, Փոքր Հայաստան, Աղվանք, Հայոց Արևելից կողմանք, Խորին աշ-

խարհն Հայոց, Ղարաբաղ, խորհրդային տարիներին՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ, ներկայումս՝ Արցախի Հանրապետություն:

ԱՀ ազգային ժողովի 1998 թ. հունիսի 26-ի որոշմամբ, որը հետագայում որոշ փոփոխությունների է ենթարկվել, հաստատվեց հանրապետության ներկա վարչատարածքային կառուցվածքը՝ բաղկացած 7 վարչատարածքային շրջաններից (Հադրութի, Քաշաթաղի, Մարտունու, Ասկերանի, Շուշիի, Մարտակերտի, Շահումյանի) և վարչական շրջանի կարգավիճակ ունեցող Ստեփանակերտ մայրաքաղաքից:

2020 թ. հունվարի 1-ի դրությամբ ԱՀ-ում կան 228 համայնք և 337 բնակավայր: Նշված ժամանակահատվածում հանրապետությունում կա 308 գործող բնակավայր, որոնց թվում 12-ը՝ Ստեփանակերտը, Շուշին, Մարտունին, Մարտակերտը, Հադրութը, Ասկերանը, Բերձորը, Քարվաճառը, Ճարտարը, Միջնավանը, Կովսականը, Որոտանը, քաղաքներ են:

Պատմաքաղաքական իրադարձությունների արդյունքում հայկական լեռնաշխարհի շատ բնակավայրեր տարբեր պատճառներով հեռացել են պատմության թատերաբեմից: Անգամ նրանց անունները ջնջվել են ժողովրդի հիշողությունից: Այդ տեսանկյունից ԱՀ բնակավայրերի պատմության ուսումնասիրությունը և ապագա սերունդներին թողնելը հայոց պատմական հիշողության մի անջնջելի էջ կդառնան:

ԱՀ բնակավայրերի կենսագրության մանրամասների վերհանումը հայագիտության արդի հիմնախնդիրներից է և կոչված է արժևորելու նրանց տեղն ու դերը համահայկական ընդհանրական պատմության մեջ, և այդ ամենը օգնելու է նրանց շուրջ ծագած ներկայիս հարցերի ճիշտ ըմբռնմանն ու լուսաբանմանը:

ԱՀ բնակավայրերը բազում դարերի հորձանուտում, բնաշխարհագրական և հանրային ինքնատիպ միջավայրում, կերտել են յուրօրինակ կենսագրություն: Այդ ամենի բացահայտումը նոր հեռանկարներ կբացի Արցախի ընդհանրական պատմության համապարփակ ուսումնասիրության համար: ԱՀ բնակավայրերի պատմության չլուսաբանված էջերի քողազերծման պայմաններում մենք հասու ենք դառնում բազում դարերի ընթացքում փոքրաքանակ զինական կարողություններով, թշնամական ուժերով շրջափակման, մշտական սադրանքների ու ճնշումների պայմաններում, մասնավորապես արցախահայության՝ մայր հայրենիքում գոյատևելու գաղտնիքներին և ընդհանուր առմամբ հայ մարդու ֆենոմենին:

Ադրբեջանի պատմաբանները, քաղաքական գործիչները, կեղծելով ու եղծելով իրողությունը, ամեն կերպ փորձել են և այսօր մի առանձին եռանդով շարունակում են սեփականաշնորհել Հայոց Արևելից նահանգների պատմական ժառանգությունը:

ԱՀ բնակավայրերի պատմության մանրամասները, որպես մեկ ամփոփ ամբողջություն ներկայացնելն ունի ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական նշանակություն: Այն ևս մի համեստ քայլ կդառնա Արցախի պատմության ստվերոտ կողմերի բացահայտման ասպարեզում, միաժամանակ ներկա օրերում կնպաստի հանրապե-

տության բնակավայրերի զարգացման հայեցակարգային նշանակության ծրագրերի ամբողջականացմանը:

Վերոհիշյալ ուսումնասիրության մեջ քննարկվել և լուսաբանվել են հետևյալ հարցերը.

ա) ցույց է տրվել ԱՀ բնակավայրերի ձևավորման ու կայացման ընթացքը՝ հնագույն ժամանակներից սկսած:

բ) Առանձնակի քննարկման նյութ է դարձել ազատագրված և ԱՀ անբաժան մաս կազմած տարածքների, բնակավայրերի պատմությունը, վեր են հանվել ժամանակի հոլովույթում այդ համայնքների թողած կենսագրության առանձնահատկությունները:

գ) Բացահայտվել են օտար ցեղերի ու պետությունների կողմից ներկայիս ԱՀ հատկապես ազատագրված տարածքների բնակավայրերի հայաթափման նպատակներն ու ներկայացվել այդ ամենի հետևանքով հայ ժողովրդի ունեցած կորուստները:

դ) Մեկնաբանվել են ազատագրված տարածքների վերաբնակեցման և դրանց նորից հայկական շունչ հաղորդելու քաղաքականության անհրաժեշտությունն ու ընթացքը, և այդ խորապատկերի վրա արժևորվել ԱՀ միջազգային ճանաչման և որպես հայկական երկրորդ պետության կայացման գործում նրանց դերը:

ե) Վեր են հանվել և հիշատակվել ԱՀ բնակավայրերի՝ հատկապես գյուղական համայնքներին բնորոշ սովորությունները, մշակութային շերտերը, տնտեսվարման ավանդական ձևերը և հիմնավորվել դրանց պահպանման, զարգացման նպատակահարմարությունն ու հաջորդ սերունդներին փոխանցելու անհրաժեշտությունը:

զ) Ներկայացվել են ԱՀ բնակավայրերում ու նրանց հարակից տարածքներում գոյություն ունեցող հնավայրերը, պատմական միջավայրերն ու հուշարձանները:

է) Քննարկման նյութ են դարձել ԱՀ բնակավայրերի սոցիալ-տնտեսական, կրթական, մշակութային ներկայիս կացությունը ու դրանց զարգացման հեռանկարները:

ը) Արժևորվել է արցախահայ ազատագրական պայքարում և պետականության վերակերտման գործում հանրապետության ամեն մի բնակավայրի դերակատարությունը:

թ) Առաջին անգամ շրջանառության մեջ դրված փաստացի նյութերի հիման վրա ցույց են տրվել ԱՀ բնակավայրերում պատմական տարբեր շրջափուլերում ապրած մարդկանց դերը համազգային կարևորագույն խնդիրների լուծման, հատկապես ազգային պետականության վերակերտման գործում:

Ձեռագրերի, նորահայտ արխիվային վավերագրերի, տպագիր սկզբնաղբյուրների, պարբերական մամուլի, ժողովրդի մեջ պահպանված զրույցների և հրապարակի վրա եղած պատմագիտական գրականության հիմքերի վրա համակողմանի ուսումնասիրվել է հնագույն շրջանից մինչև մեր օրերը ԱՀ սահմանադրությամբ ամրագրված հանրապետության ներկայիս վարչական տարածքի մեջ ընդգրկված փաստացի գործող բնակավայրերի պատմությունը:

Միաժամանակ աշխատության մեջ ներկայացված է նաև Ադրբեջանի կողմից բռնազավթված ԱՀ այն բնակավայրերի պատմությունը, որոնց բնակիչները նոր գյուղեր են հիմնել ազատագրված տարածքներում: Մասնավորապես խոսքը վերաբերում է Մարտակերտի շրջանի Չայլու, Մարաղա, Լենինավան, Հասանղայա, Սեյսուլան, Կարմիրավան, Շահումյանի շրջանի Բրաջուր, Վերինշեն, Էրքեջ, Կարաչինար, Մանաշիտ, Խարխափուտ, ինչպես նաև Գետաշեն գյուղերին:

Ուսումնասիրությունը ամբողջական տեսքի բերելու համար բավականաչափ օգտագործվել են ԱրՊՀ հայագիտական կենտրոնում հավաքագրված նյութերը[1]: Տարիների ընթացքում դասախոսների և ուսանողների աշխատանքի շնորհիվ Հայագիտական կենտրոնում կուտակվել են մեծ քանակությամբ նյութեր, այդ թվում նաև Արցախի հանրապետության բնակավայրերի վերաբերյալ: Ցավոք վերոհիշյալ նյութերը ֆոնդավորված չեն: Այդուհանդերձ, պատեհ առիթ է դրանց մի մասը, գիտական մշակումներից հետո, առաջին անգամ ներկայացնել հանրությանը: Նկատելի է նաև, որ այդ հավաքածուի մեջ ծանրակշիռ տեղ են գրավում, ԱՀ տարբեր համայնքներում ապրող և իրենց գյուղերի պատմությամբ հետաքրքրված մարդկանց մոտ պահպանված, նախորդ սերունդներից բերնեբերան փոխանցված հետաքրքիր զրույցներ և այլ բնույթի նյութեր, որոնց օգտագործումը նոր լույս կսփռի ԱՀ բնակավայրերի պատմության չլուսաբանված էջերին:

Տարիներ առաջ մեր կողմից հրատարակված «Գիշի. պատմական անցյալն ու ներկան» աշխատությունը, բարեբախտաբար, ինչ-որ առումով վարակիչ է եղել հանրապետության տարբեր բնակավայրերում ապրող մասնագետների, հատկապես պատմության ուսուցիչների համար, որոնք նույնպես փորձել են գրել իրենց հայրենի գյուղերի պատմությունները:

Կարծում ենք՝ «Արցախի Հանրապետության բնակավայրերի պատմության ուրվագծեր» աշխատության հրատարակությունը նոր խթան կհանդիսանա ոչ միայն հանրապետության բնակավայրերի, այլև պատմական Արցախում և Ուտիքում տարբեր ժամանակներում գոյություն ունեցած և այս կամ այն հանգամանքների ազդեցության տակ վերացած գյուղերի պատմության ուսումնասիրությանը:

Ձեռնարկելով Արցախի հանրապետության բնակավայրերի պատմության հրատարակության գործը՝ մեր առջև խնդիր չենք դրել սպառիչ մեկնաբանություններ տալ բոլոր հարցերին: Տարբեր աղբյուրներում սփռված բազմաշերտ ու բազմաբովանդակ նյութերի առկայությունը մեկ կամ մի քանի ուսումնասիրողների համար սպառելը գործնականորեն անհնարին է դառնում: Ուստի մենք նպատակ ենք հետապնդել առավել շատ ուրվագծել այն ուղղությունները, որոնցով պետք է շարժվեն ապագա հետազոտողները:

[1] Մեր կողմից 1995 թ. նախաձեռնվել և հիմնադրվել է ԱրՊՀ հայագիտական կենտրոնը: Նույն ժամանակահատվածում Լիբանանի «Արցախի օգնության հիմնադրամ»-ի կողմից տրամադրված գումարով վերոնշյալ կենտրոնը վերանորոգվել և կահավորվել է:

Հաշվի առնելով վերոբերյալը՝ բոլոր փաստերին, պատմական իրադարձություններին, տարբեր ժամանակներում ապրած և հայրենիքի նկատմամբ մեծ ներդրում ունեցած մարդկանց գործունեությանը առավել հանգամանորեն չանդրադառնալու համար մասնագետների և ընթերցողների լայն շրջանակի ներողամտությունն ենք հայցում:

Հուսով ենք, որ այդ ամենը ապագայում նոր ուսումնասիրությունների տեսքով կներկայացվի ինչպես մեր հայրենակիցներին, այնպես էլ թարգմանաբար՝ օտար ընթերցողներին:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՔԱՐՏԵԶԸ



ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Քաղաքը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Արցախի նախկին Խաչեն և Վարանդա գավառներում: Բնակավայրը տեղաբաշխված է Ղարաբաղյան լեռնաշղթայից դեպի արևելք ձգվող լեռնաճյուղերի վերջնամասի թեք հարթության վրա՝ Կարկառ գետի միջին հոսանքի երկու ափերին:

Ժամանակակից Ստեփանակերտը ներառում է նախկին Վարարակն, Ներքին շեն, Սողոմոնի շեն, Հին և Նոր Արմենավան, Կրկժան, Փահլուլ կամ Փահլուր (Վարդուտ), Մալիբեկլու գյուղերի տարածքները:

Ստեփանակերտի տարածքում և շրջակայքում հայտնաբերված հնագիտական նյութերը վկայում են, որ այստեղ մարդը բնակություն է հաստատել անհիշելի ժամանակներից: Առայժմ Ստեփանակերտում հայտնաբերված ամենահին գործիքները՝ հատիչներ, մուրճեր, վերագրվում են նեոլիթյան (նոր քարե դար) ժամանակաշրջանին:

1895 թ. Շուշիի ռեալական ուսումնարանի տեսուչ Էմիլ Ռյոսլերը պեղումներ է կատարել Ստեփանակերտի տարածքում և իր հաշվետվություններում հիշատակել է իր կողմից հայտնաբերված բրոնզե դարաշրջանի առարկաների մասին:

1938–1939 թթ. այստեղ հնագիտական ուսումնասիրություններ է կատարել գերմանացի ճանաչված հնագետ Յու. Հումմելը: Պեղումների ընթացքում ի հայտ են եկել Ք. ա. 2–1-ին հազարամյակների գործիքներ, որոնք ներկայումս (Հումմելի զեկուցագրերի հետ միասին) գտնվում են Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանում:

1960–1980-ական թվականներին Ստեփանակերտում շինարարական աշխատանքների ժամանակ բացվել են կարասային տիպի թաղումներ: Կարասների մեջ հայտնաբերվել են երկաթե թուր, երկկանթ կճուճ, գործվածքի պատառիկ, ոսկրե հյուսիչներ, խեցեղեն, բրոնզաձույլ արձանիկներ:

1988 թ. նոյեմբերին Ստեփանակերտի Նոր Արմենավան թաղամասում շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերվել է մի ընդարձակ դամբարանադաշտ, որտեղ պեղումներ է կատարել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը՝ Համլետ Պետրոսյանի ղեկավարությամբ: Դամբարանադաշտից ոչ հեռու տարածվել է բնակատեղին: Հետազոտվող տարածքից գտնվել են վաղ քրիստոնեական դարաշրջանին բնորոշ նյութեր:

ԱՀ մայրաքաղաքի տարածքում հայտնաբերվել է նաև 6–8-րդ դարերի դամբարանադաշտ, որն իր զուգահեռներն ունի Այրարատում, Շիրակում և Գուգարքում հայտնաբերված համանման հուշարձանների հետ:

Ստեփանակերտը որպես բնակավայր ձևավորվել է 19-րդ դարի սկզբին՝ ներկայիս Ստեփանակերտի շրջագծի մեջ՝ քաղաքի հյուսիսարևմտյան կողմում տարածված և մինչև 19-րդ դարի կեսերը գոյություն ունեցած հնահիմք զուտ հայաբնակ Վարարակն գյուղի տեղում, որն ունի ավելի քան երկուհազարամյա պատմություն: Բնակավայրի հիմնադրումը կապվում է Հայոց արևելից կողմանց թագավոր Վաչագան Բարեպաշտի անվան հետ: Վարարակն գյուղատեղիի մի հատվածում՝ քաղաքի հյուսիսային ձորի ձախ լանջին, պահպանվել են աղբյուր, Սբ. Աստվածածին եկեղեցին, ինչպես նաև գերեզմանոցը և վաղ ժամանակների, ընդհուպ 17-րդ դարին վերաբերող տապանաքարեր. «Այդտեղ առաջ եղել է հին Վարարակն հայոց գիւղը, որ այժմ գոյութիւն չունի, որի բեկորներն երևում են,– գրել է ականատեսը: Վարարակնի հանգստարանում այժմ գտնուում են 200 տարուան արձանագրութիւն գերեզմանաքարերի վրայ...»[2]: Որոշ աղբյուրներում գյուղի եկեղեցին անվանված է Սբ. Հռիփսիմե, որի մասին «Նոր-Դարի» թղթակիցը 1890 թ. գրել է. «...աւանի արևմտյան կողմում, կէս վերստաչափ հեռավորութեամբ գտնուում է Վարարակն կոչուած գիւղը, որի միայն տների հետքերն են երևում այժմ: ... Սակայն որպէս մի կենդանի յիշատակ այդ գիւղի այդտեղ կանգնած է մի եկեղեցի, որի վրայ, դժբախտաբար, ոչ մի արձանագրութիւն և թուական չկայ...»[3]: Վարարակնի մասին՝ որպես հին բնակավայրի, տեղեկություններ է հաղորդում Մակար Բարխուդարյանցը[4]: Տակավին 1841 թ. Վարարակնը 31 տուն՝ 133 շունչ (74 արական, 59 իգական) բնակչով հիշվում է որպես առանձին գյուղ[5]:

Ստեփանակերտի հյուսիսային թաղամասերից մեկում՝ Կրկժանում, մինչև խորհրդային կարգերի հաստատվելը միայն հայեր էին ապրում: 1890-ական թվականներին գյուղում կար 61 տուն, 405 բնակիչ: Այդտեղ կառուցված էր Սբ. Աստվածածին եկեղեցին[6]:

Ստեփանակերտի հյուսիսարևմտյան մասում գտնվող Փահլուլ (Փահլուր) գյուղի մասին հիշատակություններ են պահպանվել 1667 թ. կազմված «Արցախի թեմի վերաբերյալ զանազան կալվածագրերի և պայմանագրերի ժողովածու»-ի «Խալխեն խարձեր» հատվածում[7]:

18-րդ դարի վերջին այժմյան քաղաքի հյուսիսարևելյան կողմում հիմնվում է Շուշվա խանի ձմեռանոց Խանեն քաղը (Խանի այգի): Տարածքը դառնում է խանի «անձնական» սեփականությունը: Վերջինս իրեն է ենթարկում նաև Վարարակն գյուղը, որն անվանափոխվում է այսպես կոչված «Խանքենդի»՝ խանապատկան գյուղ: Հարկավ, սա չի նշանակում, թե այստեղ ապրում էին խանի ցեղակիցները:

---

2 «Նոր-Դար», հմ. 32, 1889:

3 «Նոր-Դար», հմ. 126, 1890:

4 Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, Երևան, 1999, էջ 239:

5 ՀԱԱ, ֆ. 56, ց.1, գ. 305, թ. 47:

6 Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 238:

7 ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 3, թ. 113:

Պարզապես Ղարաբաղի խաները, վարելով հայաջինջ քաղաքականություն, ձգտում էին վերանայել այն, ինչ հայկական էր, և իրենց հայեցողությամբ փոխում էին հինավուրց հայկական գյուղերի անունները՝ նրանց տալով թուրք-թաթարական[8] աղավաղված անվանումներ:

«Խանքենդին» Ղարաբաղի խաների հետ կապելու հանգամանքը իրավամբ մերժելի է համարում բանասեր-պատմաբան Հայկ Խաչատրյանը: Նա հստակ նշել է, որ «Վարարակնի տափարակը գտնվում էր Բալլուջա և Կարկառ գետերի արանքում ու որպեսզի սրբագործվեր որպես Վարանդայի մելիքների տիրույթ, Վարարակնում բնակություն հաստատած Բաղուն շենի բնակիչները ընդարձակված բնակավայրը անվանում են խանի դաստակերտ: Խան ասելով՝ նրանք նկատի են ունեցել հայկազուն մելիք Բաղր խանին, որը Կարկառ գետի աջ ափին 1600-ական թվականներին հիմնադրել է Բաղուն շենը: ...Նրանք (այսինքն՝ ռուս իշխանավորները) 1847 թվականին, Մելիք-Շահնազարյանների զարմորդիների հուշումով Վարարակնը խանի դաստակերտ դարձած տեղանունը թարգմանել են Խանքենդ (խանի դաստակերտ) գյուղ, ռուսները դաստակերտը գյուղ են թարգմանել՝ գտնելով, որ այդ բնակավայրը դաստակերտի շնորհներ չունի): Այսպիսով, Վարարակնի Խանքենդ դառնալը պաշտոնական անվանակոչություն չի եղել, այլ միայն խանի դաստակերտ անվան թարգմանություն»[9]:

19-րդ դարի 20-ական թվականներին բնակավայրում, որտեղ միայն ապրում էին 40 ծուխ հայեր[10], հիշատակվում է Դավիթ անունով տանուտերը: 1835 թվականին Վարարակնի արևելյան եզրին ռուս զինվորականները հիմնում են զորակայան: Այդտեղ տեղակայված երկու զորամասերը անվանվել են «Պլաստունեան հետևակ, միւսը Բատարէյեան ռմբաձիգ զօրագունդ: Այդ զօրագնդերի բոլոր զինուորներն էլ Կուբանից և Թերէքի շրջանների բնակիչ կազակներից են»[11]: Զորանոցի շրջակայքում նոր բնակավայր է ձևավորվում, որտեղ ապրում էին հայ և ռուս ընտանիքներ: Հայտնի է, որ

[8] XIX դ. երկրորդ կեսի ռուսական աղբյուրներում *թյուրք-թաթար* տերմիններից առավել գործածական է դառնում *թաթարը*: Միաժամանակ, Կազանի, Աստրախանի և Ղրիմի թաթարներին տարբերելու համար Արևելյան Այսրկովկասի թյուրքալեզու բնակչությունը հանրագիտական բառարաններում և պաշտոնական վիճակագրական տեղեկագրերում սկսեց անվանվել *կովկասյան* կամ *այսրկովկասյան թաթարներ*: Ադրբեջանում 1930-ական թվականներին տեղի ունեցած անձնագրավորման ժամանակ, երբ համատարած կերպով «ադրբեջանականացվեց» թյուրքալեզու բնակչությունը, 1939 թ. հունվարի 17-ի մարդահամարի պաշտոնական նյութերում նոր միայն «Ադրբեջան» արհեստածին վարչաքաղաքական անունից ի հայտ եկավ *ադրբեջանցի* տերմինը (տես Всесоюзная перепись населения 1939 г.: основные итоги, Москва, 1992, с. 71): Մանրամասն տես Ստեփանյան Գ., Արևելյան Այսրկովկասում «ադրբեջանցի» էթնանվան գործառման հարցի շուրջ, «Մերձավոր Արևելք», պրակ V, Երևան, 2008, էջ 137-144:

[9] Խաչատրյան Հ., Տարիքը տասնհինգ դար, «Գրական թերթ», 02.09.1988, էջ 3:

[10] Описаніѣ Карабагской провинціи, составленное в 1823 г., по распоряженію главноуправляющаго въ Грузіи Ермоловым, действительным статским совѣтникомъ Могилевскимъ и полковникомъ Ермоловымъ 2-мъ, Тифлисъ, 1866, с. 218.

[11] «Նոր-Դար», հմ. 126, 1890:

1847 թ. ռուսական բանակի Մինգրելյան գնդի շտաբի պետ Ուցմիևը ներկայիս Կենտրոնական պաշտպանական շրջանի գնդի տարածքում հիմնել է զորանոց, որը ժողովրդի մոտ ստացել է «Կազաչի պոստ» անվանումը[12]:

19-րդ դարի երկրորդ կեսին վերոհիշյալ զորանոց շտաբի հարևանությամբ կառուցվել է մեկ այլ զորանոց ևս: Այդ շենքը խորհրդային տարիներին ծառայում էր որպես Ստեփանակերտի պոլիկլինիկա, իսկ մեր օրերում վերանորոգումից հետո դարձել է հյուրանոց՝ «Արցախ պարկ հոթել» անվանմամբ: Երկու զորանոցների արանքում էլ կառուցվել է ռուսական փոքր եկեղեցի, որի հիմքերը բացվել են 2018 թ. Ստեփանակերտի Սբ. Աստվածամոր Հովանու մայր տաճարի հրապարակի կառուցման ժամանակ:

Ռուսական զորակայանների կառուցումից հետո Վարարակնի հայերի մեծ մասը տեղափոխվել է Շուշի և հաստատվել քաղաքի վերին թաղում ու կազմել Սբ. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցու ծուխ[13]: Վարարակնի մնացած բնակիչներն էլ նոր տներ են կառուցում զորանոցի շրջակայքում:

Վարարակն՝ Ստեփանակերտը որպես քաղաքատիպ բնակավայր հայտնի է դարձել 1847 թվականից: Այժմյան քաղաքի ձևավորման համար հիմք են հանդիսացել 19-րդ դարի վերջերին այստեղ փոխադրված Շուշիից, Կրկժանից, Խնածախից, Բալուջայից և Փահլուլից (Փահլուր) 60 տուն հայ ընտանիքները[14]: Նույն ժամանակահատվածում Վարարակն ավան են տեղափոխվել նաև մերձակայքում գտնվող Ներքին շեն և Բաղեն շեն գյուղերից[15]: Այսպիսով՝ ներկայիս Ստեփանակերտի շրջագծում 1830-ական թվականներին զորանոց բնակավայրի հիմնադրումը ուղղակի կերպով քայքայում է դրկից Վարարակն և Բաղաշեն գյուղերը, որոնց բնակիչների հիմնական մասը հաշված տարիների ընթացքում փոխադրվում են ռազմական, վարչական և բնակելի շինությունների իմաստով առավել կարևորություն ձեռք բերած նորահիմն ավանը: Հատկանշական է, որ Վարարակնի ամայացումն ու նոր զորակայան-ավանի ծնունդը ժամանակագրորեն գրեթե միմյանց հաջորդել են և հին գերեզմանատունը, պահպանելով իր նշանակությունը, ծառայել է նաև նոր ավանի բնակիչներին:

«Այդ աւանում,- գրում է Ա-Դոն,- նախ բնակութիւն հաստատեցին Շուշու տակ ընկած Բաղինշէն և Վառարակն փոքրիկ գիւղերի հայերը: Ապա ի նկատի ունենալով զօրքերի ներկայութիւնը և նրանց հետ կապված առևտուրը՝ այստեղ եկան հաստատուեցին Շուշուց և շրջակայ գիւղերից առևտրով և արհեստներով պարապող հայեր...»[16]:

[12] Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստեփանակերտ, 2012, էջ 203:

[13] «Նոր-Դար», հմ. 73, 1899:

[14] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 152:

[15] «Նոր-Դար», հմ. 75, 1899:

[16] Ա-Դո, Հայ-թուրքական ընդհարումները Կովկասում (1905-1906 թթ.), Երևան, 1907, էջ 176:

Ավանում, կապված ռուսական զորագնդի կարիքների սպասարկման հետ, հայերը հիմնականում զբաղվում էին արհեստագործությամբ և առևտրով: Այդ կապակցությամբ «Արձագանք»-ի լրագրողը գրել է. «Դրանց (իմա՝ հայերի — Վ. Բ.), առևտուրը զօրքի հետ է և դրա համար իւրքանչիւր տուն մի խանութ ունի. երկրագործութեամբ ոչ ոք չի պարապում»[17]:

1880 թ. Վարարակն ավանում հիմնվում է եկեղեցի, որն օծվում Սբ. Գևորգ անվամբ: 1887 թ. եկեղեցին դեռևս կիսաշեն էր. «... պատերը բարձրացած են մինչև կամարները և այնուհետև նիւթական աղքիւրը հատնելով, գործը արդէն 7-րդ տարին է, որ նոյնութեամբ մնում է: Ժամերգութիւնը կատարում են մի փայտաշէն տան մէջ...»[18]:

19-րդ դարի վերջերին եկեղեցին վերջնական կառուցվել և գործող էր: Սբ. Գևորգ եկեղեցին քանդվել է 1936 թ., իսկ տեղում կառուցվել է Ստեփանակերտի թատրոնի շենքը: 1990-ական թվականների սկզբներից, երբ դեռ Ստեփանակերտում եկեղեցի չկար, իրենց հոգևոր կարիքները հոգալու նպատակով, թատրոնի երկրորդ հարկի դահլիճը մայրաքաղաքի բնակիչները դարձրել էին աղոթատուն, որտեղ ամեն օր ժամերգություն էր կատարվում, իսկ կիրակի օրերին՝ մատուցվում պատարագ:

1888 թիվականին (այլ տվյալներով՝ 1886 թ-ին) ավանում բացվել է հայկական եկեղեցական-ծխական ուսումնարան: Կոչվել է «Ս. Գևորգյան տղայոց միդասյան ուսումնարան»[19]: 1888/1889 ուսումնական տարում ունեցել է 3 բաժանմունք, 1 ուսուցիչ և 30 աշակերտ[20]: Ուսուցիչն էր՝ Պ. Տեր-Հովհաննիսյանը[21]: Դպրոցը վերաբացվել է փակումից 11 տարի անց՝ 1907 թ.: 1908/1909 թթ. ուսումնական տարում եղել է միդասյա երկսեռ՝ 2 բաժանմունքով: Դպրոցում սովորել են 52 տղա և 20 աղջիկ: 1914 թվականին դպրոցն ունեցել է 54 աշակերտ[22]:

1890 թ. կեսերին ավանն ուներ ավելի քան 500 տուն բնակիչ. մեծամասնությունը կազմում էին հայերը և քիչ քանակությամբ՝ ռուսները[23]: Վերջիններս հիմնականում ռուսական զորամասում ծառայող սպաների ընտանիքների անդամներն էին: 1897 թ. ռուսների թիվը ավանում կազմում էր 70 տուն, իսկ 1899-ին՝ 52 տուն[24]: 1897 թ. այստեղ բնակվող ռուսների մասին նշվել է. «Ռուսների տները բոլորը փայտաշեն են Ռուսաստանի խրճիթների ձևով, բայց դրանց գեղեցկութիւն տուող ակացիաներն ու լորենիներն են, որոնք շարուած են փողոցների երկու կողմով և որոնք իրանց անուշահոտութեամբ զմայլեցնում են անցնողներին: Փողոցները կանոնավոր և հարթ ու լայն են, քաղաքից աւելի գեղեցիկ, միայն դրանց պակասութիւնն այն է, որ ձմեռը մի քանի փողոցներ սարսափելի ցեխ է լինում, այնպէս, որ դժուար է լինում անցնել: Ռուսները պարապում են անասնապահութեամբ և վարելահողեր ունի Խոջալու կայարանի մօտ»[25]:

ԽՍՀՄ գոյության ժամանակահատվածում Ստեփանակերտի զորամասում տեղակայված էր խորհրդային մի զորագունդ, որտեղ ծառայող սպաների ընտանիքները շարունակում էին ապրել մարզի կենտրոնում: 1991 թ. սեպտեմբերի 2-ին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումից հետո, նշմարելի էր դառնում վերահաս լայնամասշտաբ պատերազմի ուրվականը: Հաշվի առնելով այդ հանգամանքը 1991 թ. սեպտեմբերի 16-ին ԽՍՀՄ մինիստրների խորհուրդը որոշում էր կայացրել խորհրդային բանակը դուրս բերել ԼՂԻՄ տարածքից[26]:

Այդպես մեկ և կես դար անց Ստեփանակերտից հեռացավ ռուսական զորագունդը: ԱՀ կառավարության որոշմամբ այդտեղ տեղակայվեց Պաշտպանության բանակի ամենամարտունակ զորամասերից մեկը՝ Կենտրոնական պաշտպանական շրջանի գունդը: Ռուս սպաների ընտանիքների մի մասը, որոնք մերվել էին Ստեփանակերտի հայկական միջավայրին, որպես լիիրավ քաղաքացիներ, շարունակում են ապրել այս անգամ ԱՀ մայրաքաղաքում:

Հայերի, ռուսների հետ միասին քաղաքում ապրում էին նաև ավելի ուշ շրջանում ավան տեղափոխված թուրքեր: Ցարական կառավարության հրամանով քոչվորությունից հարկադրաբար նստակեցության անցած թուրքերը, ինչպես ամենուր, այստեղ էլ հռչակված էին որպես «պարապ ավազակներ, կրթութիւնից բոլորովին զուրկ»[27]: Տեղին է այստեղ վկայաբերել Ֆ. Բրոքհաուզենի ու Ի. Եֆրոնի հրատարակությամբ լույս տեսած «Հանրագիտարանային բառարան»-ում կովկասյան թաթարներին տրված հակիրճ բնութագրականը. «Կիսաքոչվոր կյանքով ապրող այսրկովկասյան թաթարները վրիժառու են ու տգետ, հակված են խաբեբայության, գողության ու կողոպուտի...»[28]: Նրանց մի մասը զբաղվում էր մանրավաճառությամբ:

1897 թ. տվյալներով ավանում կովկասյան թաթարները 50 տուն էին[29]: 19-րդ դարի վերջերին բնակավայրն ու հարակից հողերը պարտքի դիմաց անցել են Շուշիի բնակիչ Հ. Մելիք Շահնազարյանցին: Նրա դեմ 1897 թ. հարուցվել է դատական գործ, որը 1911 թ. լուծվել է՝ հօգուտ վերջինիս[30]:

17 «Արձագանք», հմ. 85, 1897:
18 «Նոր-Դար», հմ. 174, 1887: Տես նաև «Արձագանք», հմ. 38, 1887:
19 Խուդոյան Ս., Արևելահայ դպրոցները 1830-1920-թվականներին: Ժամանակագրությունը հավելյալ մանրամասներով, Երևան, 1987, էջ 362:
20 Նույն տեղում:
21 «Նոր-Դար», հմ. 126, 1890:
22 Խուդոյան Ս., նշվ. աշխ., էջ 362:
23 «Նոր-Դար», հմ. 126, 1890:
24 «Նոր-Դար», հմ. 73, 1899:

25 «Արձագանք», հմ.85, 1897:
26 «Правда», 17 сентября, 1991.
27 «Արձագանք», հմ. 85, 1897:
28 Энциклопедический словарь под ред. К. Арсеньева и проф. В. Шевякова, т. XIIIA, издатели Ф. Брокгауз, И. Ефрон, СПб., 1894, с. 838.
29 «Արձագանք», հմ. 85, 1897:
30 «Նոր-Դար», հմ. 100, 1911:

19-րդ դարի վերջերին ավանի տնտեսական կյանքի աշխուժացման պայմաններում բնակավայրը կառուցապատվում է Շուշիում գործող քաղաքաշինության կանոնավոր սկզբունքներով: Դա պայմանավորված էր ոչ միայն ստեղծված համեմատաբար բարենպաստ միջավայրով, այլև կառուցողական արվեստի, շինարարական գործի կատարելագործմամբ, հասարակության կողմից առաջադրված գործնական պահանջներով և իշխող գաղափարների ազդեցությամբ:

Ավանի բնակիչները 1880-ական թվականների վերջերին սկսել էին իրենց հին փայտաշեն տները քանդել և փոխարենը կառուցել նոր ձևի բնակարաններ: «Ամենքը՝ ով նիւթական ոյժ ունի, առաջին գործերն այն է լինում, որ ունենայ կարգին տուն կանոնաւոր սենեակներով»[31]: Վերոբերյալին այսպես է արձագանքել ժամանակաշրջանի մամուլը:

20-րդ դարի սկզբին ավանը ականատեսին ներկայացել է որպես «...մի գեղեցիկ բնակավայր...»[32]: Խորհրդային տարիներին այդ հին շինությունների նկատմամբ անխնա վերաբերմունք էր որդեգրվել: Դրանց մի մասը վերափոխվել և ձևախեղվել է: 2018-2019 թվականներին Թումանյան փողոցի վրա գտնվող, 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին կառուցված շինությունները, ՀՀ նախկին վարչապետ Կարեն Կարապետյանի բարերարությամբ և ԱՀ կառավարության համաֆինանսավորմամբ բերվել են նախնական տեսքի, որոնք նոր հմայք են տալիս մայրաքաղաքի կենտրոնական հատվածին:

Ավանի միջով էր ձգվում կառավարության հոգածությամբ բարեկարգված Շուշի-Եվլախ փոստային գլխավոր ճանապարհը: Գլխավոր այս ճանապարհից զատ ավանը մի քանի այլ ճանապարհներով էլ կապված էր մերձավոր գյուղերի և անգամ սրբատեղիների հետ:

Հայտնի է օրինակ 1889 թ. ավանի բնակիչ Սողոմոն Սողոմոնյանի միջոցներով բարեկարգված, Վարարակնից Դաշուշեն գյուղի Սբ. Սարիբեկ ուխտատեղին տանող ճանապարհը: Այդ կապակցությամբ ականատեսը գրել է. «...Սարիբէկ ուխտատեղին, որ գտնվում է Դաշուշեն գիւղի մօտ, ճանապարհը մինչև Մազէ կամուրջը շատ ուղիղ և հաստատ է. անցնելով կամուրջից՝ զատում է խաճուղուց և դէպի ձորի միջով հոսող Դաշուշէնի գետը: Օգտուելով ջրի պակասութիւնից, կարողացանք առանց նեղութիւն կրելու գետից անցնել միւս ափը: Այդ տեղից ճանապարհը բարձրանում է դարձեալ դժուար կլիներ գնալ՝ եթէ հանգուցեալ Սողոմոն Սողոմոնեանը անցեալ տարի շինել չտար այդ ճանապարհը: Այժմ այդ ճանապարհը լաւացած է, այնպէս որ երկու անիւաւոր սայլակ է կարողանում գնալ»[33]:

[31] «Նոր-Դար», հմ. 174, 1888:
[32] Ա-Դօ, նշվ. աշխ., էջ 176:
[33] «Նոր-Դար», հմ. 153, 1890:

Ավանը հայտնի էր կոշկակարների արհեստանոցներով, ուր մեծ մասամբ կարում էին «կոզլովոյ» կոչված կոշիկներ և փոստով ուղարկում ուրիշ տեղեր: Բնակավայրում կար նաև մետաքսագործարան, որը պատկանում էր Դավիթ Հարունյանցին[34]:

20-րդ դարի սկզբներին ավանում կար երկու երկսեռ դպրոց: Ծխական մեկդասյա դպրոցը բացվել է 1887 թ.: Դպրոցը 1897 թ. փակվել է, իսկ 1907 թ. նորից վերաբացվել: 1917 թ. դպրոցն ուներ 70 աշակերտ և 1 ուսուցիչ: Ավանի պետական երկդասյա դպրոցը բացվել է 1898 թ.: 20-րդ դարի սկզբներին դպրոցն ուներ 100-ից ավելի աշակերտ և 3 ուսուցիչ: Կրթօջախին կից կար արհեստագործական բաժանմունք[35]:

Ավանի սոցիալ-տնտեսական և կրթամշակութային կյանքի բարելավումը նպաստում է բնակչության թվաքանակի ավելացմանը:

Բնակավայրում 1855 թ. կար 95 բնակիչ[36], 1886 թ.՝ 106[37], 1897 թ.՝ 1495, 1917 թ.՝ 1519[38]: Ըստ «Փայլակ» թերթի թղթակից Ա. Ասլանյանի՝ ավանում 1917 թ. կար 280 տուն[39]:

Վարարակնի հայությունը ծանր ժամանակներ ապրեց 1905-1906 և 1918-1920 թվականների հայ-թաթարական ընդհարումների տարիներին: Կովկասյան թաթարները պարբերաբար սադրիչ գործողություններ էին կազմակերպում ավանում: 1905 թ. դեկտեմբերի 18-ին Մալիբեկլուից և Ղուշչիլարից 60 զինված թուրքեր, գաղտնի մտնելով ավան, «սպանել են մի պառավ կնոջ և նրա 8 տարեկան թոռանը: Ավանին հարևան հայկական գյուղերից օգնական ուժեր եկան, և երկու կողմերի միջև դաժան ընդհարում տեղի ունեցավ: Թուրքերը, կորուստներ տալով, կարողացան ապաստան գտնել զորանոցներում: Նրանք ունեցան 30, իսկ հայերը՝ 6 սպանվածներ»[40]:

1906 թ. թուրքերը նորից փորձեցին խռովել հայերի անդորրը, սպառնալով, թե ավանը «պէտք է աւերենք և տեղը սխտոր վարենք: Ցանկանում ենք յաջողութիւն, որքան առաջին ընդհարման ժամանակ կոտորեցին, նույնն էլ հարկաւ երկրորդ անգամ կլինի»[41]: Սակայն հայկական կողմը կայուն պաշտպանվածությամբ մշտապես ձախողել է նրանց հարձակումները:

1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո ավանում, Շուշիում և Հադրութում տեղակայված ռուսական զորքերը լքեցին Արցախի սահմանները: Արցախի Ազգային խորհրդի որոշմամբ ավանի զորանոցը ժամանակավորապես օգտագործվում էր որպես քանտ[42]: Բնակավայրի հայությունը շոշափելի մասնակցություն ունեցավ 1917-

[34] «Փայլակ», հմ. 14, 2 մարտի, 1917:
[35] Նույն տեղում:
[36] Տեր Գասպարյան Ռ., Շուշի, Երևան, 1993, էջ 84:
[37] Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, т. IV, Тифлис, 1886, с. 326.
[38] Բալայան Վ., Դրվագներ..., էջ 202:
[39] «Փայլակ», հմ. 14, 2 մարտի, 1917:
[40] Ա-Դօ, նշվ. աշխ., էջ 176-177:
[41] «Մշակ», հմ. 67, 28 մարտի, 1906:
[42] Իշխանեան Ե., Լեռնային Ղարաբաղ (1917-1920), Երևան, 1999, էջ 167:

1920 թվականներին արցախահայության պետականության վերակերտման գործին: Այստեղ 1918 թ. ապրիլի 22–ին հրավիրվել էր Խաչենի և Վարանդայի գյուղացիական համագումար, որտեղ մասնավորապես քննարկվել էր քոչվորների հետ ունեցած հարաբերությունների հարցը[43]:

Արցախի նորաստեղծ պետականության նկատմամբ ճնշումը մեծացնելու նպատակով անգլիացիների հովանավորությամբ մուսավաթական արհեստածին Ադրբեջանի կառավարությունը 1919 թ. հունվարի 15–ին Ղարաբաղում և Զանգեզուրում ստեղծեց գեներալ–նահանգապետություն և նահանգապետ կարգեց հայտնի հայատյաց, ազգությամբ քուրդ, մասնագիտությամբ բժիշկ Խոսրով Բեկ Սուլթանովին: Շուշին և շրջակա հայկական բնակավայրերը ահ ու սարսափի մեջ պահելու և արցախահայության նկատմամբ լայնածավալ ռազմական գործողություններ իրականացնելու նպատակով 1919 թ. հունվարի 27–ին Թոմսոնի հրամանով թուրք–թաթարական մի զորագունդ, անգլիական մի գումարտակի հետ մտնում է Վարարակն և գրավում զորանոցներն ու սպայական ակումբը[44]:

Մուսավաթական Ադրբեջանի դեմ Արցախում 1920 թ. մարտի 23–ին սկսած համաժողովրդական ապստամբության ժամանակ Արցախի ինքնապաշտպանական ուժերը կարողացան ազատագրել ավանը և շրջապատել զորանոցը[45]: Ռազմագործողությունը գլխավորում էր հայտնի հրամանատար Ալեքսան Բալասանյանը՝ ժողովրդի մեջ առավել հայտնի Ալեքսան Դայի անունով: Նա թաթարներից պահանջում է զենքը ցած դնել: Վերջիններս հրաժարվում են, և զորանոցի վրա սկսվում է գրոհը, որի ժամանակ զոհվում է Ալեքսան Բալասանյանը: Դրանից հետո շփոթ է առաջանում հայ մարտիկների շրջանում: Թշնամին ձեղքում է պաշարման օղակը՝ թալանում և հրկիզում ավանի խանութները, տները, սպանում խաղաղ բնակիչներին[46]:

1920 թ. գարնանը արցախահայությունն ապրում էր մղձավանջային ժամանակներ: Թուրք–թաթարական անընդմեջ կրկնվող արշավանքներին զումարվել էր խորհրդային Ռուսաստանի ծավալապաշտ քաղաքականությունը, որը ենթադրում էր ամեն գնով խորհրդային կարգեր հաստատել տարածաշրջանի երկրներում: 1920 թ. մայիսի 26–ին խորհրդային կարգեր հաստատվեցին Արցախում: Ստեփանակերտի համար սկսվեց պատմական մի նոր ժամանակաշրջան՝ առլեցուն հակասություններով և հաջողություններով: 1920 թ. հայ–թաթարական ընդհարումներից հետո ավանն ուներ 300 բնակիչ[47]:

1923 թ.՝ ԼՂԻՄ–ի կազմավորվելուց հետո, մարզի ղեկավարությունը քաջ գիտակցում էր, որ Ադրբեջանի կառավարությունը ոչ մի գնով չի համաձայնի Շուշին դարձնել հայկական երկրամասի կենտրոն: 1923 թ. օգոստոսի 1–ին մարզկոմի ժամանակավոր նախագահությունն անդրանիկ նիստում որոշեց իր գործունեությունը ծավալել Վարարակնում[48]:

[43] Նույն տեղում, էջ 137:
[44] Նույն տեղում, էջ 331:
[45] Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ.1, 2, Երևան, 2011, էջ 463:
[46] Իշխանյան Ե., նշվ. աշխ., էջ 614:
[47] Սեյրան Գ., Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները, Թիֆլիս, 1928, էջ 98:

ԼՂԻՄ կուսակցության մարզկոմի 1923 թ. սեպտեմբերի 18–ի և մարզխորհրդի նույն թվականի նոյեմբերի 23–ի որոշումներով՝ Բաքվի կոմունայի ղեկավար Ստեփան Շահումյանի հիշատակը հավերժացնելու համար հնավանդ բնակավայրը վերանվանվում է Ստեփանակերտ[49]:

Չնայած բազում դժվարություններին՝ մարզկենտրոն դառնալուց հետո Ստեփանակերտում մեծածավալ աշխատանքներ կատարվեցին: Ինչպես Շուշիի կառուցման ժամանակ, նույն ձևով Արցախի տարբեր գյուղերից այստեղ էին գալիս արհեստավորներ, շինարարներ: Մեկ տարվա ընթացքում տասնյակ տներ վերականգնվեցին, կառուցվեցին նորերը, անցկացվեց էլեկտրականություն, շրջանների հետ հաստատվեց հեռախոսակապ, բարեկարգվեցին փողոցները:

Այդ օրերին Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր հեղկոմի նախագահի տեղակալ Մ. Չալյանը գրել է. «Ինքնավար Լեռնային Ղարաբաղի հեղկոմի գործունեությունն առաջին իսկ րոպեից նվիրված էր շինարարությանը: ... բացի ավերակներից ուրիշ ոչինչ չկար, հատուկենտ մարդիկ ստվերների նման էին երևում փողոցներում: Առաջին հերթին հարկավոր էր բնակարաններ պատրաստել՝ թե ապագա հիմնարկությունների և թե աշխատակիցների համար: Այդ նպատակով հրավիրվեց շրջանների արհեստավորությունը: Անմիջապես եկան 60–ի չափ հյուսներ, 10–ից ավելի որմնադիրներ և այլն ու մինչև 100 այլ արհեստավորներ: Սկսվեց մի արտասովոր եռանդուն աշխատանք այդ ավերակների աշխարհում»[50]:

1923 թ. բնակավայրը ստացավ քաղաքի կարգավիճակ: Անհրաժեշտ էր քաղաքը կառուցապատել՝ ճարտարապետական կանոնների համաձայն: Ստեփանակերտի հատակագծման ու կառուցման առաջին նախագիծը կազմել է Ա. Թամանյանը (1926 թ.) երկրորդը՝ Սլոբոտյանիկի խումբը (1938 թ.), երրորդը՝ Բ. Դաղաշյանը (1968 թ.): Բոլոր նախագծերում պահպանվել են քաղաքի կառուցապատման Ա. Թամանյանի հղացած գաղափարները:

Ստեփանակերտի կառուցապատման համար եթե 1929 թ. հատկացվել է 39 600 ռուբլի[51], ապա 1932 թ. միայն բնակարանաշինության համար մարզգործկոմը նախատեսել էր 882 022 ռուբլի[52]:

[48] Բալայան Վ., Դրվագներ..., էջ 202:
[49] «Կոմունիստ», 23 սեպտեմբերի, 1923; «Республика Армения», 13 мая, 1997; Քաղաքը կրեց Ստեփան Շահումյանի անունը: Նրան հաջողվել էր մի կարճ ժամանակահատված 1918 թ. ներկայիս Ադրբեջանի մի հատվածում Բաքու կենտրոնով կազմակերպել ըստ էության հայկական պետություն:
[50] «Կոմունիստ», 19 սեպտեմբերի, 1923:
[51] Բալայան Վ., Դրվագներ..., էջ 205:
[52] ԱՀ պետարխիվ, ֆ. 250, ց. 11, գ. 1, թ. 38:

1923–1924 թվականների ընթացքում Ստեփանակերտում հաստատվել են իշխանության մարզային մարմինները, կազմավորվել են նոր հիմնարկություններ և արտադրական ձեռնարկություններ: Դիմակայելով դժվարություններին՝ Ստեփանակերտը օրեցօր դառնում է ԼՂԻՄ քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոնը: Այդ ամենի շնորհիվ քաղաքի ազգաբնակչությունն օրեցօր ավելանում էր: 1924 թ. մարդահամարի տվյալներով քաղաքում ապրում էր 2467 մարդ[53], 1939 թ.՝ 10 258 մարդ[54]:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Ստեփանակերտից զորակոչվել է 1259 մարդ, զոհվել է 576 մարդ[55]:

Խորհրդային տարիներին Ստեփանակերտում գործել են մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ, որոնց թիվը հասնում էր 20–ի: Համախառն արտադրանքով առաջատարը թեթև արդյունաբերությունն էր համարվում:

Արդյունաբերական հաշվեկշռում իրենց ուրույն տեղն ունեին Ղարմետաքսկոմբինատը, կոշկի ֆաբրիկան, էլեկտրոտեխնիկական և կոնդենսատորների գործարանները, շինանյութերի կոմբինատը, գորգագործարանն ու կարի և կահույքի ֆաբրիկաները, մսի, հացաբուլկեղենի, հրուշակեղենի, կաթնամթերքների, խմիչքների արտադրության ձեռնարկությունները:

ԽՍՀՄ փլուզումից հետո երկրի տարբեր շրջանների միջև տնտեսական կապերի վերացման և Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակման պայմաններում, այդ գործարանները մեծամասամբ փակվել կամ վերապրոֆիլավորվել են:

Ստեփանակերտը ոչ միայն ավտոճանապարհների խոշոր հանգույց էր, այլև երկաթգծով կապված էր Բաքու–Թբիլիսի երկաթուղային մայրուղու հետ:

Խորհրդային տարիներին Ստեփանակերտը դարձել էր նաև ազգային ազատագրական պայքարի խմորումների կենտրոն: ԼՂԻՄ–ը ՀԽՍՀ–ին վերամիավորելու նպատակով 1962–1966 թվականներին Ստեփանակերտի աշխատանքային կոլեկտիվներից և մտավորականության ներկայացուցիչների կողմից ԽՍՀՄ ղեկավարությանը մի քանի անգամ նամակներ էր հղվել: Գործընթացը ղեկավարում էր ԼՂԻՄ գրողների միության մարզային բաժանմունքի պատասխանատու քարտուղար Բագրատ Ուլուբաբյանը[56]:

1965–1968 թվականների ժողովրդական հուզումների և բողոքների ճնշման ընթացքում 50 հայեր ազատազրկվեցին: Նրանցից 20 հոգի գնդակահարվեցին կամ էլ այս կամ այն ձևով սպանվեցին բանտերում և աքսորավայրերում, 10 մարդ անհայտ

[53] Սարգսյան Ս., Արցախ, պատմաաշխարհագրական ճշգրտումներ, Երևան, 1996, էջ 64:

[54] ԱՀ պետարխիվ, ֆ. 268, ց. 1, գ. 1, թ. 6:

[55] Բարսեղյան Ս., Արցախ–Ղարաբաղը Մեծ հայրենականում (1941–1945 թթ.), Ստեփանակերտ, 2015, էջ 273–280:

[56] Բալայան Վ., Դրվագներ..., էջ 268–276:

կորավ, ավելի քան 150 հոգի բռնատեղահանվեց: Շարունակվող հետապնդումների պատճառով 100 ընտանիք հեռացավ Լեռնային Ղարաբաղից[57]:

1986 թ. ապրիլից Ստեփանակերտում ընդհատակյա գործում էր «Արցախյան միություն» կամակերպությունը[58]: Նրա աշխատանքներին մասնակցում էին երիտասարդներ, որոնք պայքարի փորձ ձեռք բերեցին ու հետագայում ազատագրական պայքարի կրողներ դարձան՝ ստանձնելով ուսանողության կազմակերպման, գաղափարական կողմնորոշման և իրենց հետևից տանելու առաքելությունը:

Արցախյան շարժման ակտիվիստները Ստեփանակերտի ազատության հրապարակում 1988 թ. փետրվարի 13–ին ցույց կազմակերպեցին: Ըստ էության այդ ցույցն ինքնաբուխ էր: Այդ օրվանից շարժումը համաժողովրդական և աննահանջ պայքարի բնույթ ստացավ: ԼՂԻՄ մարզխորհրդի արտահերթ նստաշրջանի 1988 թ. փետրվարի 20–ի նիստում, որը կայացավ Ստեփանակերտում, ԼՂԻՄ–ը ՀԽՍՀ–ի հետ վերամիավորվելու մասին պատմական որոշում կայացվեց:

Հաշվի առնելով արտաքին մի շարք մարտահրավերներ՝ 1991 թ. սեպտեմբերի 2–ին Ստեփանակերտում տեղի ունեցած ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նիստը ընդունեց «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին»: Ստեփանակերտը դարձավ նորաստեղծ հանրապետության մայրաքաղաքը[59]:

Իրողությունը սրերով ընդունեց Ադրբեջանի ղեկավարությունը: 1991 թ. նոյեմբերից զինված ագրեսիա սկսվեց ԱՀ նկատմամբ: Թշնամու հիմնական թիրախը Ստեփանակերտն էր: Օր ու գիշեր մայրաքաղաքը ռմբահարվում էր: Ստեփանակերտի բնակչությունը 3 տարի ճակատային գծում և նկուղներում տոկաց ու կերտեց բաղձալի հաղթանակը: Պատերազմի հաղթական ավարտի կերտման գործում անուրանալի է Ստեփանակերտում տեղակայված, մայրաքաղաքի բնակիչներից կազմված Կենտրոնական պաշտպանական շրջանի գնդի սխրանքը: Գունդը Արցախի հերոս, գեներալ–մայոր Սամվել Կարապետյանի հրամանատարությամբ Օմարից մինչև Արաքսի ափերը և ռազմաճակատի տարբեր հատվածներում թշնամուն ջախջախիչ պարտության է մատնել: Ազատագրական պայքարի տարիներին ստեփանակերտցի ազատամարտիկները և խաղաղ բնակիչները հազարավոր զոհեր են ունեցել:

1994 թ. զինադադարից հետո, Ստեփանակերտում մեծ թափ ստացան վերականգնողական աշխատանքները: Քաղաքում աչք են շոյում ճարտարապետական հուշարձաններն ու կոթողները, մասնավորապես՝ Մեծ հայրենականում և Արցախյան գոյա-

[57] Սարուխյան Ն., Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը 1960–1988 թվականներին, Երևան, 2008, էջ 93 և 95:

[58] Բալայան Վ., Դրվագներ..., էջ 277:

[59] Մինչև 1978 թ. Ստեփանակերտը, մարզային վարչական կենտրոն լինելուց բացի, նաև համանուն շրջանի կենտրոնն էր: 1978 թ. հետո Ստեփանակերտի շրջանը վերանվանվում է Ասկերանի շրջան, իսկ շրջանային կենտրոնն էլ դառնում է Ասկերան ավանը:

մարտում նահատակվածների անմահությունը խորհրդանշող հուշահամալիրը, որը ժողովրդի համար դարձել է ուխտատեղի:

ԱՀ մայրաքաղաք մտնողների վրա առանձնակի տպավորություն է թողնում բարձունքում տեղադրված Ս. Բաղդասարյանի «Մենք ենք մեր սարերը» տուֆակերտ հուշարձանը, որը մայր հողին ամուր կառչած արցախցու հավատարմությունն ու հավերժությունն է խորհրդանշում:

Ստեփանակերտում տարեցտարի կառուցվում են նոր թաղամասեր, բազմահարկ տուֆակերտ շենքեր, հիմնվում նոր զբոսայգիներ ու պուրակներ: Քաղաքի կենտրոնում 2019 թ. շահագործման է հանձնվել «Ազատամարտիկների» պուրակը և Սուրբ Աստվածամոր Հովհանու մայր տաճարը: Քաղաքում գործում է նաև Սբ. Հակոբ նորակառույց եկեղեցին:

Ստեփանակերտը ԱՀ նախագահի նստավայրն է: Այստեղ են գտնվում ԱՀ Ազգային ժողովն ու կառավարությունը, նախարարություններ, գերատեսչություններ, հասարակական և այլ կազմակերպություններ, տարբեր միություններ, կուսակցություններ, հիմնադրամներ, դատաիրավական մարմիններ, զանգվածային լրատվամիջոցներ:

Մայրաքաղաքում գործում են միջազգային կազմակերպությունների գրասենյակները:

Ստեփանակերտում օր օրի ավելանում է փոքր և միջին ձեռնարկությունների թիվը: ԱՀ արդյունաբերական արտադրանքի 50 տոկոսը բաժին է ընկնում Ստեփանակերտին: Աննախադեպ զարգացում է ապրում ծառայությունների ոլորտը: Մայրաքաղաքում գործում են առևտրի 1200 օբյեկտներ, 15 բանկեր և բանկերի մասնաճյուղեր, 11 հյուրանոցներ՝ Պարկ հոթել Արցախ, Արմենիա, Նաիրի, Եվրոպա, Հեղնար, Վալեքս Գարդեն հոթել, Լոտոս, Երևան, Էդ-Էմ, ՖԴ Սոֆիա, Ստենդալ Հոթել:

Ստեփանակերտում կան 12 հանրակրթական և 1 մասնագիտական՝ ֆիզմաթ դպրոցներ, որտեղ սովորում են 8322 աշակերտներ և դասավանդում 774 ուսուցիչներ, 6 մանկապարտեզներ, որտեղ հաճախում են 1110 երեխաներ:

Մայրաքաղաքում գործում են Թ. Քամալյանի անվան պետական բժշկական, պարարվեստի, Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջները, արհեստագործական ուսումնարանը:

Ստեփանակերտում են գտնվում Արցախի պետական համալսարանը, «Գրիգոր Նարեկացի», «Մեսրոպ Մաշտոց» ոչ պետական հավատարմագրված բուհերը: Հարկ է նշել, որ խորհրդային տարիներին Ստեփանակերտում գործել են երկամյա մանկավարժական ինստիտուտը, մանկավարժական ինստիտուտը, գյուղատնտեսական և բժշկական տեխնիկումները, երաժշտական ուսումնարանը:

Մայրաքաղաքում գործում են քաղաքային մշակույթի տունը, (երիտասարդական պալատ), 3 գրադարաններ, Վահրամ Փափազյանի անվան դրամատիկական թատրոնը (հիմնադրվել է 1932 թ.), ԱՀ հանրային հեռուստառադիո ընկերությունը, Ստեփան Շահումյանի անվան հանրապետական մարզադաշտը, Արցախի պետական կամերային նվագախումբը, Արցախի պետական երգչախումբը, «Մռակած» պետական կամերային երգչախումբը, «Մենք ենք մեր սարերը» երգի պարի պետական, Արցախի Ա. Բաբայանի անվան պարի պետական, «Ղարաբաղ» պետական էստրադային համույթները, Ջազ նվագախումբը, Ստեփանակերտի պարարվեստի քոլեջը, Շաղ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնը, «Արցախի ձայներ» ՓԲԸ-ն, Ստեփանակերտի Կոմիտասի անվան երաժշտական դպրոցը, Ստեփանակերտի Հակոբ Գյուրջյանի անվան արվեստի դպրոցը:

Ստեփանակերտում են տեղակայված «Հանրապետական հիվանդանոց» ՓԲԸ-ն, «Արևիկ» մանկական հիվանդանոց ՓԲԸ-ն, «Արմինե Փակումյանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ն, «Ինֆեկցիոն հիվանդանոց» ՓԲԸ, «Հակապալարախտային դիսպանսեր» ՓԲԸ-ն, «Ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ն, «Մաշկավեներոլոգիական դիսպանսեր» ՓԲԸ, «Հոգեթմրաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ն, «Ստոմատոլոգիա» ՓԲԸ-ն, «Կանխարգելիչ ախտահանման բաժանմունք» ՓԲԸ-ն, «Դատաբժշկական փորձաքննության բյուրո» ՓԲԸ-ն, «Ք. Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ը, «Համաճարակաբանության և հիգիենայի կենտրոն» ՊՈԱԿ-ը և կանանց կլինիկան, զինվորական հոսպիտալը, մի շարք ստոմատոլոգիական կենտրոններ ու կլինիկաներ:

Համայնքը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Ստեփանակերտի աղբյուրներն են՝ Վարարակն, Երեք ծորակ, Կրկժան, Հոռեն տակ, Մռակած, Փահլուր, Ղազախ բուլախ, Հաջի բուլախ, Մոսուն, Քոռ, Թթու ջուր:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Ստեփանակերտում 1956 թ. կար 17 430 բնակիչ, 1959 թ.՝ 19 600 բնակիչ[60], 2010 թ.՝ 52 860 բնակիչ[61], 2019 թ.՝ 58 079 բնակիչ[62]: Նրանք հիմնականում աշխատում են տեղական և մասնավոր հիմնարկ-ձեռնարկություններում, ծառայում ԱՀ Պաշտպանության բանակում:

[60] Տեր Գասպարյան Ռ., նշվ. աշխ., էջ 84:

[61] Լեռնային Ղարաբաղի հանրապետության շրջանները թվերով (2004-2010), վիճակագրական ժողովածու, Ստեփանակերտ, 2011, էջ 217:

[62] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԳՈՐԾՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՔԱՐՏԵԶԸ



ԱՍԿԵՐԱՆ

Քաղաքը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկինում Արցախի Խաչեն գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Կարկառ գետի միջին հոսանքի ձախափնյակում: Մայրաքաղաք Ստեփանակերտից Ասկերանը 15 կմ հեռավորության վրա է գտնվում:

Ընդհանուր առմամբ տիրական է այն կարծիքը, որ Ասկերանը՝ որպես բնակավայր, գոյություն ունի 1920 թվականից: Քաղաքի շրջակայքում եղած հնավայրերի թեկուզև մասնակի ուսումնասիրությունը փաստում է, որ վաղ շրջանից այստեղ բնակատեղի է եղել: Դրա մասին են խոսում Ասկերանից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող Խոջալլուի Ք. ա. 3–1–ին հազարամյակների դամբարանադաշտը, Հացուտ քարանձավ–սրբատեղին, 4–19–րդ դարերում Ակնայից մինչև Շուշի կառուցված բերդերն ու ամրացված վայրերի մնացորդները:

Ասկերանը գտնվում է այն գլխավոր ճանապարհի վրա, որով Ուտիքն ու Արցախը կապվում են Սյունիքի հետ: Կյանքի ճանապարհի համարում ունեցող այդ միջանցքը պաշտպանելու նկատառումով Ք. ա. 1–ին հազարամյակից սկսած՝ հայ թագավորները, իշխանները տափաստանից դեպի հայկական լեռնաշխարհի խորքերը տանող առանցքային այդ կետերում ամրոց բնակավայրեր են կառուցել:

Այդ բնակավայրերում, ինչպես նաև Ասկերանում, հիմնականում ապրում էին զինվորականներ՝ իրենց ընտանիքներով:

Հնադարում ամրոց–բնակավայրի գոյության մասին է խոսում նաև վերջինիս Ասկերան անունը: Ընդունելի է Ս. Սարգսյանի այն տեսակետը, համաձայն որի Ասկերան անվանումը թուրքական ասկյար բառի հետ ոչ մի կապ չունի և այն հնդեվրոպական–հայկական ծագում ունի: Նախկինում բնակավայրը ունեցել է Ասկարան անվանումը: Ըստ Ս. Սարգսյանի «կարան» նշանակում է քար, քարանձավ, իսկ «աս»–ն էլ ունի երկնային, աստվածային, սուրբ նշանակություն: Փաստորեն Ասկարան նշանակում է Սուրբ քար, որը բնորոշ է եղել հատկապես լեռնային բարձունքների և տարածքների, որոնք սրբացված էին հեթանոս նախնիների կողմից[63]: Ընդունելով այս տեսակետից բխող գաղափարը, միաժամանակ նկատենք, որ «կարան» արմատը ավելի շատ կապ ունի բրոնզի դարաշրջանում՝ 3–1–ին հազարամյակներում, հայկական լեռնաշխարհում տարածված լուսնի (կար) պաշտամունքի հետ, որը իմաստային տեսանկյունից նույն սուրբ վայրն է:

[63] Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը (ստուգաբանություններ), Երևան, 2018, էջ 24:

Ասկարան անունով բնակավայրեր կան նաև հնդեվրոպական ժողովուրդների նախահայրենիք համարվող Իրանում և Հնդկաստանում:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ Ասկարան անունով լեռնագագաթ և բնակավայր գոյություն ունի նաև Պերույում: Մի քանի անգամ հզոր երկրաշարժերի հետևանքով (վերջինը տեղի է ունեցել 2001 թ.) Ասկարան լեռնագագաթի տակ գտնվող քաղաքը կործանվել է: Սակայն կենդանի մնացած բնակչությունը համառորեն ամեն անգամ վերանորոգում և նորից շենացնում է իր նախկին բնակավայրը: Պերույի այդ բնակավայրի բնակիչների բացատրությամբ անկախ բնական աղետների պատճառած վնասներից՝ Ասկարան սուրբ լեռան հարևանությամբ ապրելը նրանց համար աստվածաշնորհ է:

Սղնախական պայքարի տարիներին՝ 1720-ական թվականներին, Ավան հարյուրապետը, հաստատվելով Շուշիում, կարևորելով դեպի բերդավան տանող ճանապարհի վրա գտնվող ամրացված վայրերի նշանակությունը, Ասկարանում մշտապես ուղեկալ էր պահել:

18-րդ դարում Փանահ խանը, ամրանալով Շուշիում, Վարանդայի Մելիք Շահանզարի խորհրդով ու օժանդակությամբ հյուսիսից հարավ Կարկառը հատելով, շուրջ 1,5 կմ երկարությամբ, Ղլիշբաղ, Քյաթուկ գյուղերի արանքում պարիսպների և բերդի շինարարություն է սկսում: Այն նոր թափով շարունակվեց Իբրահիմ խանի կառավարման շրջանում: Պարսպագիծը կառուցվեց մասնավորապես հայ վարպետների քրտինքի ու ջանքերի շնորհիվ: Եկվորները, իրենց սովորության համաձայն, թուրքական լեզվահնչյունային համակարգին համապատասխան, Ասկարանը դարձրին Ասկերան:

Ամրոց բնակավայրի շրջակայքում դրամատիկ իրադարձություններ ծավալվեցին ռուս-պարսկական առաջին պատերազմի տարիներին:

1805 թ. հունիսին պարսից թագաժառանգ Աբաս-Միրզան, մեծ բանակով անցնելով Արաքսը և մտնելով Ղարաբաղ, պաշարեց Շուշին: Բերդավանի պաշտպաններին օգնելու համար Գանձակից գնդապետ Կարյագինի հրամանատարությամբ ուղարկվում է 500 հոգանոց մի ջոկատ՝ երկու հրանոթով:

Ասկերանի մոտ ռուսական զորքերին շրջապատում է պարսկական Փիր-Ղուլի խանի 10 հազարանոց բանակը: Գումարտակի ծանր վիճակի մասին Շուշիի կայազորին տեղյակ է պահում կուսապատցի Վանի Աթաբեկյանը:

Պարսիկները հրանոթների համազարկերով փորձում էին ընկճել ռուսական փոքրաթիվ ջոկատը: 400 հոգուց կենդանի էին մնացել 150-ը: Վերահաս աղետից փրկվելու նպատակով Կարյագինը հրամայում է հանկարծակի գրոհել պարսկական մարտկոցների վրա: Ռուսները վնասազերծում են 4 հրակետեր և առգրավում 15 թնդանոթներ: Շուտով պարսից առաջապահ զորքերին օգնության է հասնում Աբաս Միրզայի 30 հազարանոց բանակը: Վանի Աթաբեկյանը, մեծ դժվարությամբ ծպտյալ անցնելով պարսիկների միջով, հասնում է Խրամորթ:

Պաշարված Կարյագինի ջոկատին օգնելու նպատակով Ջրաբերդի մելիք Ադամը և Ասրի բեկ Փիրումյանը կամավորներ են հավաքագրում: Աբաս Միրզայի զորքերը Ասկերանի վրա անընդհատ գրոհում են, բայց՝ ապարդյուն: Վերջնական ջախջախումից Կարյագինի ջոկատին փրկելու նպատակով Վանի Աթաբեկյանը ռուսներին գաղտնի կածաններով Ասկերանից հասցնում է Շահբուլաղ[64]:

Իրանից 1806 թ. նորանոր զորքեր արշավեցին դեպի Շուշի: Բերդավանի պաշտպանությունը կազմակերպելու նպատակով 1806 թ. հունիսի 8-ին գեներալ Նեբոլսինի ջոկատը հասնում է Ասկերանի բերդին: Այս անգամ նախապես մայոր Լիսանևիչին հաջողվել էր Շուշիից հասնել Ասկերան և դիրքավորվել բերդում:

Հունիսի 13-ին պարսկական և ռուսական զորքերի միջև Ասկերանում՝ Կարկառի ափին, տեղի է ունենում արյունալի ճակատամարտ: Հայ կամավորների գործուն մասնակցությամբ ռուսները փայլուն հաղթանակ են տանում, և Աբաս Միրզան հեռանում է Ղարաբաղից: Այդ ճակատամարտում ցուցաբերած խիզախության համար Վանի Աթաբեկյանն արծաթե մեդալ է ստանում[65]:

Ռուսաստանի այս հաջողություններից անհանգստացած Թուրքիան 1809 թ. ապրիլին ռազմական գործողություններ վերսկսեց Ռուսաստանի դեմ: Երկու ճակատով կռվելուց խուսափելու նպատակով 1810 թ. փետրվարին Թավրիզում և ապրիլին Ասկերանում ցարական արքունիքը շահական կառավարության հետ բանակցություններ սկսեց: Սակայն Պարսկաստանը, ակնկալելով մեծ տերությունների աջակցությունը, ընդհատեց բանակցությունները և վերսկսեց պատերազմական գործողությունները[66]:

Ասկերանը հաջորդ անգամ ռազմական բախումների կիզակետում հայտնվեց 1905-1906 թթ. և 1917-1920 թթ. հայ-թաթարական ընդհարումների տարիներին:

1905 թ. օգոստոսի 17-ին Սեյիդլու գյուղից մի քանի հարյուր զինված կռվկասյան թաթարներ, Շուշիի իրենց ցեղակիցներին օգնելու նպատակով, փորձում են անցնել Ասկերանով: Սակայն Համազասպի գլխավորությամբ հայ մարտիկների հարվածներից ճողոպրում են:

1905 թ. օգոստոսի 19-20-ը թաթարների հրոսակախմբերը նորից գրոհեցին Ասկերանի վրա, բայց հայ մարտիկներին այս անգամ էլ է հաջողվում նրանց հետ մղել՝ մեծ կորուստներ պատճառելով[67]:

---

64 Потто В., Первые добровольцы Карабага въ эпоху водворенія русского владычества (Меликъ-Вани и Акопъ Юзбаши Атабековы), Тифлисъ, 1902, с. 3-4. 36-37.

65 Բալայան Վ., Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Երևան, 2017, էջ 132:

66 Արամայիս, Մի քանի գլուխ հայ-թրքական ընդհարումներից, մասն Ա., I. Ասկերան, II. Վարանդայ-Խաչէն, Թիֆլիս, 1907, էջ 7:

67 Ստեփանյան Գ., Համազասպ Սրվանձտյանց, Երևան, 2016, էջ 114-115:

Հայ ինքնապաշտպանական ջոկատները, Ասկերանի կիրճն անառիկ պահելով, ոչ միայն վերահաս աղետից փրկեցին Շուշիի հայությանը, այլև նախկինում քաղաք մտած, ժողովրդին թալանած և վերադարձի ճանապարհը բռնած ավազակախմբերից խլեցին գողոնը: Ասկերանի մարտերին մասնակից Արամայիսն իրավացիորեն նկատել է. «...Վարանդայի, Խաչենի ու մասնավորապես Շուշուայ համար՝ Ասկերանը նշանավոր դեր է խաղացել. Նա մի կատարեալ Սախկալ-թութան[68] է եղել թուրք հրոսակախմբերի համար հայ-թրքական ընդհարումների սկզբից մինչև վերջը»[69]:

Ասկերանի կիրճում «թուրքերի կորուստը շատ մեծ էր,-գրել է Արամայիսը,-մեծ էր նրանով, որ շատ նշանավոր բէկեր ևս այնտեղ իրանց համար գերեզման գտան և այլևս աւազակախմբեր կազմել ու հայերի տները քանդել չէին կարող. մենակ Ափաթտուից 3 նշանավոր բէկեր էին սպանել...: Մեր կորուստները միայն մեր արձակած փամփուշտներն էին և միայն դժգոհում էինք, որ զինուորները շուտ հասան չը թողեցին, որ զէնքեր հաւաքենք»[70]:

Խաղաղարար դերակատարություն ունենալու փոխարեն կառավարությունը սկսեց հալածել հայերին: 1906 թ. հունվարի 3-ին կառավարական զորքերը, թնդանոթներից ռմբակոծելով հայկական գյուղերը, անցնում են Ասկերանի կիրճով: Հայկական ինքնապաշտպանական ջոկատները ստիպված էին ժամանակավորապես հեռանալ Ասկերանի կիրճից:

Կառավարական զորքերի հեռանալուց հետո 1906 թ. հուլիսին Աղդամից բազմահազար զինյալ թուրքերի առաջխաղացումը դեպի Շուշի կասեցնելու նպատակով հայկական ինքնապաշտպանական ջոկատները նորից դիրքավորվեցին Ասկերանի կիրճում:

1920 թ. մարտի 23-ին Շուշիում ավելի քան 10 000 հայերի կոտորածից, հայկական քաղաքամասը հրի մատնելուց և կողոպտելուց հետո էլ հայ-թաթարական զինաբախումները շարունակվեցին: Առավել կատաղի մարտեր ծավալվեցին Ասկերանի ռազմաճակատում: Հայկական փոքրաթիվ ուժերը Դալի Ղազարի գլխավորությամբ

[68] Սախկալ-թութան ձորը գտնվում է Որոտանի ակունքի մոտ: Տեղանքի անվան ծագումը կապված է հետևյալ ավանդազրույցի հետ. «Տաթևից Հալիձոր գնալիս Դավիթ-բեկը պատահում է Ֆաթալի խանի օգնականին: Սա ծաղրելով Դավիթին ասում է. «Դավիթ-բեկ մորուքդ բռնիր, նամազդ արա, վերջդ եկել է»: Դավիթ-բեկը պատասխանում է. «Մենք այսպիսի տեղերում նամազ չենք անում, ոչ էլ մորուք բռնում, մենք թրի կոթ ենք բռնում, տղամարդ ես դիմացիր»: Ասում է թուրը քաշում, վրա է տալիս խանի ձիավորներին, բոլորին կոտորում, և դառնում խանին ասում. «Մորուքդ բռնիր, այ շուն, նամազդ արա, վերջդ եկել է, և թոցնելով նրա գլուխը նետում է Որոտան գետի մեջ: Դրանից հետո այդ ձորի անունը դնում են Սախկալ-թութան (Մորուսակալ)»: Տես՝ Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, 1969, էջ 44-45: Այս ավանդության հիման վրա էլ հետագա դարերում վտանգավոր և դժվարանցանելի կիրճերին ու ձորերին փոխաբերական իմաստով նույնպես տրվել է Սախկալ-թութան անունը: Տես՝ Ստեփանյան Գ., Համազասպ Սրվանձտյանց, էջ 108:

[69] Գնթունի, Յիշողութիւներ մօտիկ անցեալից, պրակ առաջին (Ասկերան), Թիֆլիս, 1907, էջ 5:

[70] Հայ-թաթարական ընդհարումները Անդրկովկասում, «Դրոշակ», հմ.13, Ժնև, 1905, էջ 204:

մարտի 27-29-ը ընկած ժամանակահատվածում մի քանի ջախջախիչ հարվածներով հետ մղեցին թուրք-թաթարական մեծաքանակ զորքերի հարձակումները: Ահաբեկված թուրքերը ստիպված էին թողնել Աղդամը և մի քանի սահմանամերձ բնակավայրեր: Թշնամին, նոր ուժեր կուտակելով, ապրիլի 3-ին, օգտվելով թանձր մառախուղից, Ասկերանում ճեղքեց պաշտպանական գծի ճակատը և շարժվեց դեպի Շուշի: Դալի Ղազարը, կորուստներ չտալու համար, իր ջոկատին հրամայում է նահանջել, իսկ ինքը մնում է և կռվում մինչև վերջին փամփուշտը՝ այն ուղղելով իր քունքին[71]:

Մինչև 1920 թ. Ասկերանի պաշտոնապես բնակավայր հռչակվելը, 1916 թ. մամուլի էջերում այն արդեն որպես վարչական տարածք էր ներկայացված, որտեղ նաև խանութ էր գործում[72]: Ավելին, 1915 թ. Հայոց մեծ եղեռնից փրկվածներին օգնելու նպատակով Ասկերանում, Շուշում, Թաղավարդում, Նոգիում, Շուշիում գործող փախստականների օգնության կազմակերպությունը ստեղծել էր պարենի հավաքագրման բաժիններ, պահեստներ, բժշկական կետեր, բաղնիքներ[73]:

Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը, քաջ գիտակցելով Ասկերանի ունեցած դերը արցախահայության կյանքում, Աղդամն Ասկերանի ու Ստեփանակերտի հետ կապող ճանապարհի վրա նոր ձևավորված Քորփա Ափաթլի գյուղը միացրեց Աղդամի շրջանին[74]:

Հայրենական մեծ պատերազմից հետո Ադրբեջանի իշխանություններին հաջողվեց ադրբեջանցի մի քանի ընտանիքներ վերաբնակեցնել Ասկերանում:

ԼՂԻՄ ղեկավարությունը, կարևորելով Ասկերանի նշանակությունը մարզի հայության կյանքում, իր հերթին միջոցներ ձեռնարկեց բնակավայրը զարգացնելու ուղղությամբ: Կառուցվեցին գինու, գարեջրի, լիմոնադի, հացի գործարաններ, բազմահարկ բնակելի շենքեր, բացվեցին կենցաղսպասարկման կետեր, հիվանդանոց, հոգեբուժական դիսպանսեր, հակահամաճարակային կայան, ակումբ, դպրոց, մանկապարտեզ: 1930-ական թվականներին կառուցվեց նաև փոքր ՀԷԿ:

1978 թ. բնակավայրը ստացել է քաղաքատիպ ավանի, իսկ 1991 թ.՝ քաղաքի կարգավիճակ: 1978 թ. բնակավայրը դարձել է ԼՂԻՄ Ասկերանի շրջանի վարչական կենտրոն:

Ասկերան ավանի երիտասարդությունը մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին:

Ամրոց-բնակավայրը առավել ընդգծված դերակատարություն է ունեցել արցախյան ազատագրական պայքարի տարիներին:

1985 թ. «վերակառուցման» քաղաքականության տարիներին Արցախում մտավորականության ու ուսանողության շրջանում սկսեցին բարձրաձայն քննարկվել մար-

[71] Բալայան Վ., Դրվագներ..., էջ 95-96:

[72] «Փայլակ», հմ. 80, 20 հոկտեմբերի, 1916:

[73] «Փայլակ», հմ. 48, 23 օգոստոսի, 1915:

[74] Բալայան Վ., Դրվագներ..., էջ 181:

զում տասնամյակներ շարունակ կուտակված քաղաքական, տնտեսական, մշակութային հիմնահարցերը՝ մատնանշելով հայկական երկրամասը մայր Հայաստանին վերամիավորելու՝ վաղեմի փափագած իղձերի իրագործման ուղիները:

Քննարկվող հարցերին գործնական ընթացք տալու նպատակով 1986 թ. ապրիլից Ստեփանակերտում սկսեց գործել «Արցախյան միություն» կազմակերպությունը[75]: Այդ միությունը բաժանմունքներ ուներ շրջկենտրոններում: Հաղորդում այդ աշխատանքները ղեկավարում էին Արթուր Մկրտչյանը և Էմիլ Աբրահամյանը, Մարտունիում՝ Վլադիմիր Խաչատրյանը, Գրիգոր Ուլուբաբյանը, Անգելինա Հովսեփյանը, Ասկերանում՝ Սլավիկ Առուշանյանը, Սլավիկ Միրզոյանը, Կոմիտաս Դանիելյանը, Մարտակերտում՝ Վիգեն Շիրինյանը, Վագիֆ Գալստյանը[76]:

Արցախահայության սահմանադրական պահանջներին ի պատասխան՝ Ադրբեջանի ղեկավարությունը Մոսկվայի կենտրոնական իշխանությունների հովանավորությամբ որդեգրեց բիրտ ուժի և բռնության քաղաքականությունը:

1988 թ. փետրվարի 22-ին Աղդամի շրջանից, իրենց ճանապարհին ամեն ինչ ավերելով, ադրբեջանական բազմահազարանոց հրոսակները շարժվեցին դեպի Ստեփանակերտ՝ «կարգ ու կանոն հաստատելու», բայց Ասկերանի մատույցներում կանգնեցվեցին և հետ շպրտվեցին[77]:

Այդ դեպքերից հետո շրջկենտրոնում կազմակերպվեց ինքնապաշտպանական ջոկատ, որի հիմքերի վրա էլ հետագայում ձևավորվեց Ասկերանի գումարտակը: Ասկերանում էր տեղակայված 4-րդ պաշտպանական շրջանի շտաբը:

Ադրբեջանի զինված ուժերը Ստեփանակերտը գրավելու նպատակով ամեն կերպ ձգտում էին մտնել ամրոց-բնակավայր, բայց Ասկերանի պաշտպանները մնում էին անընկճելի:

1992 թ. մայիսի 9-ին Շուշին՝ ազատագրվելուց հետո, Ադրբեջանը մայիսի 10-ից լայնածավալ ռազմական գործողություններ է սկսում Արցախի հարավարևելյան սահմանի երկայնքով՝ Մարտակերտից մինչև Հադրութ: Առանձնապես կատաղի մարտեր են տեղի ունենում Ասկերանի շրջանում: Հակառակորդը Ասկերանի ճակատից ջղաձիգ փորձեր էր կատարում՝ օգնության հասնելու յուրայիներին: Ասկերանը այդպես էլ մնաց որպես անառիկ բերդաքաղաք:

Ասկերանի ազատամարտիկներն իրենց ավանդն ունեցան ռազմաճակատի տարբեր հատվածներում հաղթանակի կռման գործում: Ռազմական գործողությունների ընթացքում 69 ազատամարտիկ զոհվել, իսկ 3 հոգի էլ անհետ կորել է: ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի են արժանացել Վիտալի Բալասանյանը, Արթուր Հարությունյանը, ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի՝ Սամվել Միքայելյանը, Ռոբերտ Հակոբջանյանը, Շմավոն Աղաջանյանը: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի են արժանացել հետմահու Էդմոն Բարսեղյանը, Գրիգորի Հայրիյանը, Արամ Տերզիկյանը, Գարիկ Մելքումյանը:

Հետպատերազմյան տարիներին հրետանակոծությունից տուժած բնակավայրը արագ սկսեց վերականգնվել:

Խորհրդային տարիներին Ասկերանում գործում էր միջնակարգ դպրոց, որտեղ 1987 թ. սովորում էր 295 աշակերտ, դասավանդում 30 ուսուցիչ[78]: 1988-1990 թթ. համապատասխանաբար՝ 156 աշակերտ, 26 ուսուցիչ, 1991-1994 թթ.՝ 86 աշակերտ, 16 ուսուցիչ, 2004-2006 թթ.՝ 126 աշակերտ, իսկ 2014-2015 ուսումնական տարում՝ 289 աշակերտ, 28 ուսուցիչ[79]:

2011-2012 ուսումնական տարվանից դպրոցը դարձել է ավագ հոսքային: 2009 թ. կառուցվել է դպրոցական նոր շենք:

Ասկերանը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Համայնքի տարածքով անցնում են Սովետարխ, Խաթունարխ և Իվանյան-Ասկերան ոռոգման ջրատարները: Համայնքի աղբյուրներն են՝ Կուքուն, Բայթալ, Քյահրիզ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Ասկերանում գործում են շրջվարչակազմ, քաղաքապետարան, «Ասկերանի մշակույթի և երիտասարդության կենտրոն» ՊՈԱԿ, շրջանային հիվանդանոց, դպրոց, «Ասկերանի մանկական երաժշտական դպրոց» ՊՈԱԿ, մանկապարտեզ, մարզադաշտ, գինու-օղու գործարան, գինու առանձին արտադրամաս, տակառաշինական գործարան, շինանյութերի արտադրամաս, 3 բանկերի մասնաճյուղեր, առևտրի 26 օբյեկտներ:

Ծագումով խանաբաղցի, երևանաբանակ բարերար Բարսեղ Բեգլարյանի միջոցներով քաղաքում 2002 թ. կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցին:

Ասկերան համայնքի տարածքում են գործում Քյաթուկ գյուղը և Ակնա թաղամասը:

Ասկերանում 1920 թ. կար 7 տուն, 35 բնակիչ, 1987 թ.՝ 480 տուն, 1800 բնակիչ[80], 2010 թ.՝ 607 տուն, 2156 բնակիչ[81], 2018 թ.՝ 651 տուն, 2293 բնակիչ[82]:

Ասկերանի բնակչությունը աշխատում է շրջկենտրոնի և մայրաքաղաքի պետական ու մասնավոր հիմնարկ-ձեռնարկություններում, ծառայում ԱՀ ՊԲ-ում, զբաղվում գյուղատնտեսությամբ:

[75] Բալայան Վ., Բալայան Ռ., Հարությունյան Մ., Անկախության նվիրյալները, ԱրՊՀ ուսանողները արցախյան ազգային-ազատագրական պայքարի տարիներին, Երևան, 2009, էջ 6:
[76] Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը (1917-2000), գիրք Գ, Ստեփանակերտ, 2007, էջ 19:
[77] «Մարտիկ», 25 հունվարի, 1995:
[78] Մելքումյան Ս., Լեռնային Ղարաբաղ, Երևան, 1990, էջ 116-118:
[79] Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Լեռնային Ղարաբաղի հանրապետության կրթական համակարգը (1991-2016 թթ.), հ. 3-րդ, Ստեփանակերտ, 2017, էջ 580:
[80] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 116:
[81] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[82] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, Ստեփանակերտ, 2018, էջ 1:

ՔՅԱԹՈՒԿ

Գյուղը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Վարանդա գավառում:

Բնակավայրը տեղաբաշխված է Կարկառ գետի միջին հոսանքի աջափնյա բարձրադիր մասում՝ Ասկերան քաղաքից 4 կմ հարավ արևմուտք:

Ներկայիս բնակավայրից 500 մ վերև են գտնվում Հին Քյաթուկի ավերակները:

Վերոհիշյալ բնակավայրի սկզբնավորման ժամանակաշրջանի մասին աղբյուրները լռում են:

19-րդ դարի վերջերին Մակար Բարխուդարյանը մի ավանդություն է լսել, համաձայն որի՝ Հին Քյաթուկում կար 400-500 ծուխ[83]:

Փաստն այն է, որ բնակավայրը բազմամարդ է եղել և դեպի լեռնաշխարհի խորքերը տանող ճանապարհը, մասնավորապես Ասկերանի կիրճը, վերահսկող գյուղի դեր է ունեցել: Պատահական չէ, որ 17-րդ դարի սկզբներին պարսից Շահ Աբաս Ա-ն Հին Քյաթուկում ռազմակայան էր դրել և անձամբ իր հպատակների ընդունելություն կազմակերպել: Առաքել Դավրիժեցին բնակավայրը անվանել է Քոթուկլու[84]: Ի դեպ, այդ բնակավայրին Ղևոնդ Ալիշանն էլ տվել է Գետիկ անվանումը[85]:

Հին Քյաթուկի շրջակայքում պահպանվում են միջնադարյան գերեզմանոցի, Սպիտակ հօլ (ուլ) եկեղեցու մնացորդները, Ջինավոր սրբատեղին:

1797-1798 թվականների ժանտախտի ժամանակ Հին Քյաթուկի բնակիչները հեռանում են ավելի ապահով բնակավայրեր, իսկ մի քանի ընտանիքներ էլ հաստատվում են գյուղի հանդամասում և հիմնում ներկայիս Քյաթուկ բնակավայրը: Մի քանի գերդաստաններ էլ հիմնավորվում են Խաչմաչ գյուղում[86]: 19-րդ դարի երկրորդ կեսին գյուղում կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցին:

Քյաթուկի բնակիչները 1804-1813 և 1826-1828 թվականների ռուս-պարսկական պատերազմի ժամանակ հայկական կամավորական ջոկատների կազմում պաշտպանել են դեպի Շուշի տանող Ասկերանի կիրճը:

Քյաթուկի հայությունը ծանր ժամանակներ ապրեց 1905-1906 թթ. և 1917-1920 թթ.՝ հայ թաթարական ընդհարումների տարիներին:

1906 թ. հունվարի 16-ին գեներալ Գոլոշչապովի գլխավորությամբ կառավարական զորագունդը Ասկերանի կիրճով հասնում է Շուշի՝ ճանապարհին ոմբահարելով Խրամորթ, Խանաբադ, Քյաթուկ, Ղլիշբաղ, Դաշուշեն և Շոշ գյուղերը[87]:

1917 թ. դեկտեմբերի 23-ին Արցախում հայկական պետականության վերածննդից հետո Թուրքիան ռազմական գործողություններ սկսեց Հայոց արևելից հայության դեմ: 1918 թ. սեպտեմբերի 22-ին թուրքական զորքերը մտան Լեռնային Ղարաբաղ՝ ավերելով Դահրազ, Վարազաբույն, Փիրջամալ, Նախջևանիկ, Քյաթուկ, Խրամորթ, Խանաբադ, Ղլիշբաղ, Քարագլուխ գյուղերը: Թուրքական զորամասերը Շուշի մտան սեպտեմբերի 25-ին: Բանակի հետևից շարժվում էր «տեղական թաթարների հազարավոր խուժանը՝ գրավված գյուղերն ու քաղաքը ավերելու և թալանելու նպատակով»[88],— պատմում է ժամանակակիցը: Խորհրդային կարգերը Քյաթուկին ազատություն և բարգավաճում չբերեցին:

1920-1930 թվականներին Արցախի մի շարք գյուղերում, այդ թվում՝ Քյաթուկում, ստեղծված ծանր կացության մասին հետաքրքիր տեղեկություններ է պարունակում Խաչենից Պարսկաստան տեղափոխված վտարանդի գործիչներից մեկի հուշերում: «...փամփուշտի կոիվ չկա, սակայն թուրք բեկերի և կալվածատերերի «կոմունիստ» զավակները նոր ձևի փամփուշտներով են կռվում հայ գյուղացու և հայ քաղաքացու դեմ: Անցել եմ հայ գյուղերը՝ Խրամորթ, Խանաբադ, Նորշեն, Հացին, Քեաթուկը, Փրջամալը և այլն, երբեմնի փարթամ ու հարուստ այդ շեն գյուղերը, որ կարծես այդ դաժան փոթորիկը եկել ու քշել է ամեն բան: Գյուղերի գեղեցիկ տները ավերված ու անտեր են, իբրև կուլակների ու հակահեղափոխականների տներ: Գլխավորապես ծեր կանայք ու տղամարդիկ են երևում, աչքաբաց և առույգ երիտասարդները կամ փախչել են բոլշևիկյան զուլումից և կամ իբրև «Ղարաբաղը Հայաստանին» միության անդամ, քշված են դեպի ցրտաշունչ Ռուսաստանի խորքերը: Երեկոյան ժամը 7-8-ին դռները պինդ կողպում և փակվում են խրճիթներում ահ ու սարսափի տակ: Վախենում են և ավազակից և կոմսոմոլից և կոմբջջից»[89]:

1930 թ. գյուղում կոլտնտեսություն էր կազմակերպվել: Խոշորացման տարիներին այն միավորվել էր Խանաբադի կոլտնտեսությանը:

Քյաթուկից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 121 մարդ, զոհվել է 68-ը: Նրանց հիշատակին հուշարձան է կառուցվել: Գյուղի երիտասարդները մասնակցել են արցախյան ազատագրական պատերազմին:

1870 թ. Քյաթուկում բացվել է նախակրթարան, իսկ 1871 թ.՝ եկեղեցական-ծխական դպրոց: Ուսուցիչն էր Հովհաննես Հովսեփյանը, իսկ 20-րդ դարի սկզբին՝ Համազասպ Տեր-Հակոբյանը[90]:

1896 թ. դպրոցը փակվել և 1907-1908 ուսումնական տարում նորից վերաբացվել է: Դպրոցը պահվում էր բաքվաբնակ քյաթուկցիների հայրենակցական միության և աշակերտների ուսման վարձով:

Խորհրդային տարիներին գյուղում տարրական դպրոց է գործել:

---

83 Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 227:

84 Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Երևան, 1988, էջ 218:

85 «Բազմավեպ», հմ.1-4, Վենետիկ, 1989, էջ 218:

86 Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 211:

87 «Արշալոյս», հմ.10, 17 հունվարի, հմ.12, 19 հունվարի, 1906:

88 ՀԱԱ., ֆ. 200, ց. 1, գ. 49, թ. 47:

89 Խաչենցի, Ղարաբաղի դրությունը, «Դրոշակ», հմ.12, 1928, էջ 333-334:

90 Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Արցախի կրթական համակարգը, հ.1, Ստեփանակերտ, 2014, էջ 394:

Հայրենական մեծ պատերազմից հետո բնակչությունը հիմնականում տեղափոխվել և հաստատվել է Ասկերան շրջկենտրոնում:

Աշակերտների թվաքանակի կտրուկ նվազման պատճառով 1987 թ. դպրոցը փակվել է:

Ծագումով Քյաթուկից են նավթարդյունաբերող, բարերար, 20-րդ դարի սկզբներին Այսրկովկասի նշանավոր մեծահարուստ՝ Միքայել Արամյանցը, երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Բալասանյանը, Արցախի հերոս, գեներալ-մայոր Վիտալի Բալասանյանը:

Քյաթուկ գյուղը ընդգրկված է Ասկերանի համայնքի կազմում:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջուր: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտրնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Քյաթուկում 19-րդ դարի սկզբներին կար 36 տուն[91], 19-րդ դարի 90-ական թվականներին՝ 25 տուն, 124 բնակիչ[92], 1987 թ.՝ 30 տուն, 73 բնակիչ[93], 2018 թ.՝ 6 տուն, 7 բանկիչ[94]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն էր:

ԱՀ կառավարությունը միջոցներ է ձեռնարկում՝ Քյաթուկի վերաբնակեցման գործին նոր լիցք հաղորդելու:

ԱԿՆԱՂԲՅՈՒՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Դիզակ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Վարանդա գետի վերին հոսանքի ձախափնյակում: Գյուղը անտառապատ է, ունի գեղատեսիլ բնություն:

Նախկինում Ակնաղբյուրը անվանվել է նաև Ղարաբուլաղ (Կարաբուլաղ): Գյուղի անվան ծագման հետ կապված շրջանառվում են տարբեր կարծիքներ: Մակար Բարխուդարյանը այն համարում է Սև աղբյուր[95], Թեմուր Ամիրջանյանի կարծիքով գյուղը նախկինում ունեցել էր Վարարակն (մեծ աղբյուր, վարար աղբյուր)[96] անվանումը, Սլավա Սարգսյանն էլ գտնում է, որ տեղանվան ճիշտ անվանաձևը Քարաղբյուրն է[97]:

[91] Սարգիս արքեպիսկոպոս Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս Ա, Բ, Երևան, 2016, էջ 521:

[92] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 227:

[93] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 144:

[94] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:

[95] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 208:

[96] «Սովետական Ղարաբաղ», հմ. 281, 8 դեկտեմբերի, 1998:

[97] Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 51:

Թ. Ամիրջանյանի կարծիքն առավել հավանական է, որովհետև հնդեվրոպական ծագում ունեցող "կար" բառարմատը նշանակում է մեծ: Գյուղում հորդառատ աղբյուրի և Վարանդա գետի առկայությունը նույնպես վերոհիշյալ կարծիքի օգտին են վկայում:

Գյուղի սկզբնավորման ստույգ ժամանակաշրջանը մեզ անհայտ է: Սակայն գյուղի տարածքում պահպանված մի քանի հուշարձաններ, մասնավորապես Ղևոնդանց (Ղևոնդիկ) անապատը (5-18-րդ դարեր), հնադարյան Ըխտրլ հազ և Ղուզե թաղի սրբատեղիները, միջնադարյան Ղարալի գյուղատեղիի և գերեզմանոցի մնացորդները խոսուն վկաներն են վաղընջական ժամանակներում տվյալ տարածքում աշխույժ և բազմաբովանդակ կյանքի:

Ամենայն հավանակությամբ Վարանդայի վերին հոսանքում գտնվող փոքր գյուղերի բնակիչները 18-րդ դարի երկրորդ կեսին բնակության համար առավել հարմարավետ վայր են ընտրել և հիմնել ներկայիս Ակնաղբյուրը:

Ինչպես վաղ և միջին միջնադարում Արցախում եղած թագավորությունների ժամանակ, այնպես էլ Վարանդայի մելիքության գոյության շրջանում Կարաբուլաղի հայությունը պայքարել է երկրամասի անկախության և պետականության պահպանման համար:

19-րդ դարում գյուղում կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցին:

Արցախը Ռուսաստանին անցնելուց հետո ցարական կառավարությունը տարածաշրջանում ձգտել է ստեղծել ազգային հենարան: Այդ նպատակով 19-րդ դարի 20-ական թվականներից՝ Երմոլովի կառավարչության շրջանում, Հայոց արևելից նահանգներում բնակեցվում էին Ռուսաստանի տարբեր նահանգներից բերված ռուս գաղթականներ[98]:

Սկզբնական շրջանում ռուս վերաբնակների մի մասը մինչև առանձին բնակավայրեր ստեղծելը հաստատվել է Մարիամաձոր, Դուդուկչի, Կարաբուլաղ, Թալիշ, Գյուլիստան, Վարարակն գյուղերում[99]:

Հայերի համար պատուհաս էին դարձել ռուս վերաբնակները, որոնց բաժին էին հասնում ջրարբի, բերրի տարածքները: Տեղաբնիկները պարտավոր էին գաղթականների համար կառուցել տներ, ձմռան նախաշեմին կուտակել փայտ: Նրանց համար հայ գյուղացիները պարտավոր էին հող մշակել և ցանել: Ժողովրդական դժգոհությունների պատճառով վերաբնակները հիմնականում հեռացան հայկական գյուղերից:

19-րդ դարի 70-ական թվականներից մինչև 20-րդ դարի սկզբները շուշեցի մի շարք ձեռներեց ընտանիքներ մետաքսաթել պատրաստող գործարաններ էին ստեղծել ինչպես Շուշիում, այնպես էլ գավառի գյուղերում: Նման գործարաններ Դանիել

[98] Բալայան Վ., Դրվագներ..., էջ 45:

[99] Долженко К., К истории образования русских поселений Закавказья (1830-1840 гг.), Լեռնային Ղարաբաղի հանրապետություն, անցյալը, ներկան, ապագան, միջազգային գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 2007, էջ 316-317:

Ահարոնյանը ուներ Քարինտակում, Սղնախում, Չանախչիում, Կարաբուլաղում, Կրկժանում, Ստեփանակերտում[100]:

1920 թ. գարնանը Արցախը ապրում էր մղձավանջային ժամանակներ: Մուսավաթական, այնուհետև խորհրդային, Ադրբեջանի ճնշումներին գումարվել էին նաև բոլշևիկյան Ռուսաստանի ագրեսիվ հարձակողական գործողությունները:

Արցախահայությանը օգնելու նպատակով 1920 թ. ապրիլի 14-ին Հայաստանի կառավարությունը Զանգեզուրից Վարանդա ուղարկեց Դրոյին, իսկ Կապանից Դիզակ՝ Նժդեհին: Դրոյի ռազմականյանը գտնվում էր Սարուշեն և Կարաբուլաղ գյուղերում:

Այդ ահռելի ուժին դիմակայել անհնարին էր: 1920 թ. մայիսին Արցախում հաստատվեցին խորհրդային կարգեր: Ակնաղբյուրում 1929 թ. կոլտնտեսություն է կազմավորվում: Զարգացող տնտեսությունը նպաստում է, որ լուծվեն գյուղի սոցիալ-տնտեսական և մշակութային բնույթի բազմաթիվ հարցեր: Կառուցվում են դպրոց, ակումբ, բուժկետ, կապի բաժանմունք, գրադարան, խանութ, կենցաղսպասարկման տուն: Գյուղը 1963 թ. էլեկտրաֆիկացվեց: Կառուցվեցին երկհարկանի տներ:

1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվեցին մասնավոր տնտեսություններ:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 128 մարդ, զոհվել է 61-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Ակնաղբյուրի ազգաբնակչության դիմում խնդրագիրը հաշվի առնելով, 1894 թ. կաթողիկոսի կոնդակով գյուղում ծխական-եկեղեցական դպրոց է բացվում: Այն միադասյա երկսեռ դպրոց էր: 1907 թ. դպրոցն ուներ երկու բաժանմունք, որտեղ 35 աշակերտ էր սովորում: Ուսուցիչը Արամ Տեր-Հայրապետյանն էր: 1909-1910 թթ. դպրոցում արդեն սովորում էր 52 աշակերտ, դասավանդում՝ 2 ուսուցիչ[101]: Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և բնակչության հանգանակած գումարներով:

Խորհրդային տարիներին Ակնաղբյուրում գործում էր միջնակարգ դպրոց: 1988-1992 թթ. դպրոցում սովորում էր 150 աշակերտ, դասավանդում՝ 24 ուսուցիչ: 1991-1994 թթ. պատերազմի տարիներին դպրոցի մի հատվածում հանգրվանել էին Շուշիի և Քարին տակի բնակիչները:

Հետպատերազմյան տարիներին Ակնաղբյուրի հիմնական դպրոցի աշակերտների թիվը քչացել է: 2014-2015 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 86 աշակերտ, դասավանդում՝ 18 ուսուցիչ:

1988 թվականից առայսօր դպրոցի տնօրեններ են աշխատել Վանյա Ավանեսյանը, Ժորա Մարգարյանը, Անդրեյ Ղարամյանը:

[100] Բալայան Վ., Շուշի, էջ 199:
[101] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 43, թ. 1:

Առավել տպավորիչ է Ակնաղբյուրի բնակչության մասնակցությունը արցախյան ազատագրական պայքարին: Շարժման նախօրեին դպրոցում գործում էր Արթուր Ավանեսյանի նախաձեռնությամբ ստեղծված «Մահ կամ ազատություն» գաղտնի խմբակը:

Ամարասի հովտում ադրբեջանցիների հարձակումներից ժողովրդի ունեցվածքը պաշտպանելու նպատակով Արշավիր Ղարամյանի հրամանատարությամբ ստեղծվել է ինքնապաշտպանական ջոկատ: Այդ ջոկատի հիմքերի վրա հետագայում ստեղծվել է գումարտակ, որը Ասկերանի պաշտպանական շրջանի գնդի կազմում մասնակցել է ճակատի տարբեր հատվածներում մղված մարտական գործողություններին: Իրենց կյանքը հայրենիքին են նվիրաբերել ակնաղբյուրցի 19 ազատամարտիկներ: Արմեն Հայրապետյանը արժանացել է ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի, իսկ Վարդան Ջիվանշիրյանը (հետմահու), Սուրեն Ղարամյանը և Արմեն Գրիգորյանը՝ ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի: ԱՀ բարձրագույն պարգևին՝ «Արցախի հերոսի» կոչմանն է արժանացել գեներալ-լեյտենանտ Արշավիր Ղարամյանը: Պատերազմից հետո նա վարել է ԱՀ Գլխավոր դատախազի, այնուհետև Ազգային անվտանգության ծառայության տնօրենի, իսկ 2019 թ. Անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնները:

Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Համայնքի աղբյուրներն են՝ Ակնաղբյուր, Գյունե, Ղուզե, Քառ, Ճիրիմիձրի, Փայտ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, մանկապարտեզ, առևտրի 3 կետեր:

1995 թ. գյուղը վերանվանվել է Ակնաղբյուր:

Գյուղում շարունակում են ապրել Ղրամանց, Օհանջանանց, Թումասանց, Հըրբեդանց, Բղդըսարանց, Բնյաթանց, Ջիվշիրանց, Կյուքունց, Բուլլուվանց, Դերունց, Մուքանանց, Պետունց, Ավանեսանց, Մըվրսեդունց, Շահնազարանց, Պողոսանց, Թևոսանց, Թաթավուսանց, Մարտիրոսանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Բնակավայրում 19-րդ դարի 90-ական թվականներին կար 35 տուն, 295 բնակիչ[102], 1920 թ.՝ 127 տուն, 545 բնակիչ, 1987 թ.՝ 137 տուն, 544 բնակիչ[103], 2018 թ.՝ 144 տուն, 529 բնակիչ[104]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[102] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 208:
[103] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 127:
[104] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:

ԱՅԳԵՍՏԱՆ

Գյուղը գտնվում է Ղարաբաղի լեռնաշղթայի Խաչախութի լեռնաճյուղի՝ դեպի հարթավայրը ձգվող փեշերին՝ Բալլուջա գետակի ձախ ափին՝ Ստեփանակերտից 5 կմ հյուսիս: Նախկինում անվանվել է Պալլուջա, Բալլուջա, 1995 թվականից վերանվանվել է Այգեստան:

Գյուղի հյուսիսարևմտյան մասում է գտնվում Ք. ա. 2–I–ին հազարամյակներից մնացած «Ծղալի թափա» դամբարանադաշտը: Նույն ժամանակաշրջանի մեկ այլ դամբարանադաշտ էլ մնացել է բնակավայրի հարավարևմտյան մասում: Այգեստանի շրջակայքում պահպանվում են վաղ միջնադարից մնացած գյուղատեղիների հետքերը: Գյուղից հյուսիս գտնվում է Երե շեն հին գյուղի հանգստարանը: Արևմտյան կողմում գտնվում է Ալուխանայ շենը, իսկ Թամցի եղցիի մոտ՝ Ցոցագետի աջ ափին, մեկ այլ գյուղատեղի[105]: Տեղաբնիկները այն անվանում են Հին շինատեղ: Ամենայն հավանականությամբ ներքին և արտաքին անբարենպաստ գործոնների ազդեցության տակ այս երեք գյուղերն էլ ավերվել են, իսկ բնակիչներն էլ հիմնել են նոր գյուղ և անվանել Պալլուջա:

Ժամանակին այն անվանվել է նաև Մեծ Խմհատ[106]:

1667 թ. սկզբնաղբյուրներում ներկայիս գյուղը արդեն հիշատակվում է Պալուլձա անվամբ[107]:

Մակար Բարխուդարյանցը նշում է. «120 ընտանիք քաջեր 1770 թ. Ջրաբերդից տեղափոխվում են Խաչեն և հիմնադրում ... Պալլուձա գյուղը, որի մեջ բնակվում է 70 ընտանիք»[108]: Այնուհետև նա, շտկելով իր միտքը, ասում է, որ այդ ընտանիքները Ջրաբերդ էին տեղափոխվել Մեծ Սյունիքից[109]:

Գարդմանում՝ Ոսկանապատից վերև՝ Դաստափոր գյուղի մոտ, գետակի ձախ ափին կար Պալլուջա հայկական բնակավայր, որտեղից 18–րդ դարի վերջերին որոշ ընտանիքներ տեղափոխվել և հաստատվել են Բալլուջայում[110]: Հայերի հեռանալուց հետո Գարդմանի Պալլուձան թուրքաբնակ է դառնում: Հնարավոր է, որ այդ ընտանիքներն էլ իրենց նախկին գյուղի անունը վերագրել են նոր բնակավայրին: Դրա հետ կապված Մակար Բարխուդարյանը գրել է. «... որովհետև Գարդմանայի Պալլուձայից ևս լինում են քաջերի մեջ, Պալլուձա են անվանում իրենց գյուղը»[111]:

[105] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 240:
[106] «Խորհրդային Ղարաբաղ», 20 մայիսի, հմ. 115, 1989:
[107] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 3, թ. 10:
[108] Մակար եպս. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Երևան, 1907, էջ 104:
[109] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 240:
[110] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 304; «Ակունք», հմ. 5–6, Երևան, 1991, էջ 33:
[111] Մակար եպս. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ 104:

Աշխարհագրական հարմարավետ դիրքը, դաշտավայրին մոտ լինելու և Վարանդան Խաչենի հետ կապող հանգուցակետում լինելու հանգամանքը նպաստում է, որ գյուղն ազատ զարգանա:

Արդեն 19–րդ դարի վերջերին Պալլուձայում կար 160 ծուխ, 982 բնակիչ, որից 550–ն արական սեռի, իսկ 432–ն՝ իգական[112]:

Սակավահողության պատճառով 1847 թ. որոշ ընտանիքներ տեղափոխվում և հաստատվում են ներկայիս Ստեփանակերտի տարածքում:

Ներկայիս Այգեստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո՝ 1930 թ. ստեղծվում է կոլտնտեսություն: Հետագայում դրա հիմքերի վրա ձևավորվում է սովխոզտեխնիկում:

Հայրենական մեծ պատերազմին Այգեստանից մասնակցել է 310 մարդ, զոհվել է 151–ը, որոնց հիշատակին գյուղում կանգնեցված է հուշարձան:

Այգեստանի ազգաբնակչությունն անուրանալի դերակատարություն է ունեցել արցախահայության ազատագրական պայքարում և Արցախի Հանրապետության կայացման գործում:

Ստեփանակերտին մոտ գտնվելով՝ Այգեստանն ադրբեջանցիների համար հրետակոծության թիրախ էր դարձել: Խնածախն ու Լուսաձորը, Այգեստանի հետ մեկտեղ շարունակ հրետակոծվում էին Քյոսալարից, Ջանհասանից, Ջամիլլուից, Խոջալուից: Հայրենի բնակավայրը պաշտպանելու նպատակով Այգեստանի երիտասարդներից կազմվում է կամավորական ջոկատ, որի հրամանատարն էր Գագիկ Դաղայանը: Նա էլ դարձավ վաշտի առաջին հրամանատարը, որը, իր շուրջը համախմբելով համագյուղացիներին, առաջնորդում էր այգեստանցիների ազատագրական պայքարը:[113]

Գրեթե նույն ժամանակահատվածում ձևավորվեց նաև Սամվել Հակոբյանի ջոկատը. վաշտի շտաբի պետն էր Կամո Բարսեղյանը: Այգեստանի վաշտն օրեցօր համալրում էին նաև Ռուսաստանից, Միջին Ասիայից, Երևանից ծննդավայր վերադարձած համագյուղացիներից շատերը: Ջոկատի մարտիկներն առաջին լուրջ մարտական մկրտությունը ստացան Շուշիի գրոհի ժամանակ: Հետագայում Այգեստանի վաշտի մարտիկները իրենց հերոսական կենսագրությունը կերտեցին արցախյան պատերազմի տարբեր ճակատներում: Նրանցից 28 հոգի իրենց կյանքը նվիրեցին հայրենիքի պաշտանության սուրբ գործին: ԱՀ «Մարտական խաչ» 1–ին աստիճանի շքանշանի է արժանացել Սամվել Արշավիրի Գաբրիելյանը:

Մինչև 1873 թվականը Այգեստանում գործել է նախակրթարան: 1873 թ. գյուղն ուներ ծխական դպրոց, որտեղ սովորում էր 18 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ:

[112] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 240:
[113] Միքայելյան Դ., Այգեստանի արծիվները, Ստեփանակերտ, 2011, էջ 32:

1884 թ. գյուղում բացվում է մեկդասյա ծխական դպրոց, որն ուներ 2 բաժանմունք: 1887–88 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 45 աշակերտ, որից 13-ը՝ աղջիկներ, դասավանդում էին 2 ուսուցիչներ:

1903 թ. ցարական կառավարության կողմից փակվում է դպրոցը: Այն վերաբացվել է 1907 թ. բաքվաբնակ Աբրահամ Նասիբյանի միջոցներով: Մեկդասյա երկսեռ դպրոցն ուներ 3 բաժանմունք, 95 աշակերտ, որոնից 15-ը աղջիկներ: Ուսուցիչներն էին Հակոբ Հակոբյանն ու Առաքել Առաքելյանը (նշանավոր գրականագետ — Վ. Բ.):

Խորհրդային տարիներին Այգեստանում գործել է միջնակարգ դպրոց: 1988–1991 թթ. դպրոցում սովորում էր 160–170 աշակերտ: 2015 թ. տվյալներով դպրոցում սովորում էր 183 աշակերտ, դասավանդում՝ 26 ուսուցիչ:

1984–1996 թթ. դպրոցի տնօրենն է եղել Ա. Գրիգորյանը, 1996–1999 թթ.՝ Է. Գրիգորյանը, 1999 թվականից առ այսօր Վ. Վերդյանը:

Այգեստանում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային հուշարձաններ, մասնավորապես Ք. ա. 2–1-ին հազարամյակների դամբարաններ, 12–13-րդ դարերից մնացած գյուղատեղիների մնացորդներ, հին գերեզմանոցներ, Փոշնի նահատակ սրբատեղին (12–13-րդ դարեր), Թամցի եկեղեցին (12–13-րդ դար), Սբ. Վանեսի (Հովհաննեսի) եկեղեցին (18-րդ դար), Սբ. Հովհաննես եկեղեցու ավերակները, 1850 թ. կառուցված Սբ. Աստվածածին եկեղեցին:

Նշանավոր են Թխծրաբեն, Մոշ, Շքյուրեն բաղեն, Ղզարանց բաղեն, Դերունց բաղեն, Փթարխլու, Ցրցակետ, Բաբեն, Պտրուսանց, Շոշռան աղբյուրները:

Գյուղում գործում է գյուղապետարան, դպրոց, մանկապարտեզ, մշակույթի տուն, բուժկետ:

2018 թ. տվյալներով Այգեստանում կար 280 տուն, 1080 բնակիչ[114]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԱՍՏՂԱՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Խաչեն գավառում:

Բնակավայրը տեղաբաշխված է Բաղարա գետի ձախափնյակում՝ Ղարաբաղյան լեռնաշղթայի Խաչախութի և Հավքախաղաց լեռնաճյուղերի միջլեռնային գոգավորությունից դեպի հարթավայր ձգվող հատվածում:

Աստղաշենի՝ որպես բնակավայրի կազմավորման վերաբերյալ գրավոր սկզբնաղբյուրներում հատուկ տեղեկություններ չեն պահպանվել: Գյուղի շրջակայքում Ք. ա. 2–1-ին հազարամյակներից մնացած դամբարանները, միջնադարյան տապանաքարերը վկայում են, որ հնագույն ժամանակներից քննության առարկա տարածքը բնակեցված է եղել:

Տեսակետ կա, որ նախկինում բնակավայրը անվանվել է Քարաղբյուր[115]: Գյուղում պահպանվում են Փոնգյուլանց Սուրբ, Խաչին տակ, Կապեն խաչ, Չիմանեն խաչ, Յերե նահատակ կամ Խաչին դոշ սրբավայրերը:

Ղարաբաղի խանության շրջանում գյուղը թարգմանաբար դարձել էր Դաշբուլաղ:

Գտնվելով Արցախի կենտրոնական հատվածում ու բավականաչափ մարդաշատ լինելով՝ բնակավայրը 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին երկրամասի համար կարևոր դերակատարություն է ունեցել:

18-րդ դարում գյուղում կառուցվել է Ֆրանգյուլի վանքը, 1898 թ.՝ Սբ. Գևորգ եկեղեցին:

1898 թ. օգոստոսի 24-ին Դաշբուլաղ էր ժամանել Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկը: Կաթողիկոսի պատվին եկեղեցուց մինչև Քարաղբյուր գորգ էր փռված: Գյուղում նրա գտնվելու մասին վկայում է արձանագիր քարը, որը պահպանվում է եկեղեցու մուտքի պատին:

19-րդ դարի 70-ական թվականներից մինչև 20-րդ դարի սկզբները շուշեցի մի շարք ձեռներեց ընտանիքներ մետաքսաթել պատրաստող գործարաններ են ստեղծել ինչպես Շուշիում, այնպես էլ գավառի գյուղերում: Նմանօրինակ գործարաններ Բաբաջան Ղազարյանը հիմնել էր Բաղարայում, Դաշբուլաղում և Հիլիսում[116]:

Տարեցտարի Դաշբուլաղի բնակչությունը շատանում էր: 19-րդ դարի 90-ական թվականներին գյուղում կար 136 տուն, 1124 բնակիչ[117]:

Ապրուստի միջոցներ հայթայթելու և նոր հողեր ձեռք բերելու նպատակով Դաշբուլաղից մի քանի տասնյակ ընտանիքներ տեղափոխվել և հաստատվել են Կոկիսոն (Գյոգ չայ) գավառում: Մասնավորապես նրանք վերաբնակվել են Ավանաշեն, Շիքիչի, Ղալագյայ գյուղերում[118]:

Դաշբուլաղի հայությունն իր գործուն մասնակցությունն է ունեցել 1917–1920 թթ. Արցախում պետականության վերակերտման գործին:

Գյուղի երիտասարդությունը, Սբ. Գևորգ վանքի վանահայր, ծագումով առաջաձորցի Հարություն (Մեսրոպ քահանա) Շահիջանյանի գլխավորությամբ, որը ավելի շատ հայտնի էր Դալի Մահրասա անունով, բազում քաջագործություններ է կատարել: Դալի Մահրասան կենդանության օրոք արդեն առասպել էր դարձել: Նա Խաչենում գործող հայկական զորագնդի հրամանատար Համազասպի տեղակալն էր: 1918 թ. հուլիսին Արցախի կառավարության որոշմամբ նա նշանակվել էր Խաչենի աջափ-

[114] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:

[115] Ամիրջանյան Թ., Արցախի գյուղանունները, «Կրթությունը և գիտությունը Ղարաբաղում», հմ. 1, 1996, էջ 36; Մելքումյան Ս., նշվ աշխ., էջ 124; Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 38:

[116] Բալայան Վ., Շուշի, էջ 199:

[117] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 243:

[118] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 103, 105–106, 109:

նյակի բնակավայրերի փոխոստիկանապետ[119]: Արցախում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո ազատագրական պայքարի առաջամարտիկներին ձերբակալում և տեղափոխում են Թարթառ, որտեղ էլ 12 հոգու, այդ թվում Դալի Մահրասային, ինչպես ականատեսն է գրել. «... ամայի տեղում ոչխարի պես մորթոտում են: Դիակները թաղում են փեյնի (անասունի աղբի) տակ, այնքան երես, որ շները հանելով, մեծ ճանապարհի վրա շաղ էին տվել մարդկային ձեռներ ու ոտներ»[120]:

Ծագումով աստղաշենցի Հայրապետ Մուսայելյանը դարձավ 1917–1920 թթ. արցախահայ պետականության վերակերտողներից մեկը: Նա դարձավ Ազգային խորհրդի առաջին նախագահը: Որպես կարևոր նշանակության բնակավայր՝ 1919 թ. ապրիլի 29-ին Դաշբուլաղում կայացել է արցախահայության 5-րդ համագումարը, որտեղ, ի թիվս այլ հարցերի, քննարկվել է Ադրբեջանի զավթողական քայլերին դիմակայելուն ուղղված գործողությունների ծրագիրը: Խաչենում գործող ջոկատների սպառազինության համար Դաշբուլաղում զինապահեստ էր ստեղծվել:

Արցախում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Դաշբուլաղը շարունակեց շրջակա բնակավայրերի համար կարևոր դերակատարություն ունենալ:

1923 թ. ԼՂԻՄ կազմավորումից հետո մարզը բաժանվել էր 4 շրջանների: Վերջիններս էլ իրենց հերթին բաժանվել էին ենթաշրջանների (վոլոստ): Խաչենի շրջանը կազմված էր 4 ենթաշրջաններից՝ Դաշբուլաղ, Ասկերան, Կարմիր գյուղ, Բերդաձոր[121]:

Փաստորեն Դաշբուլաղը ենթաշրջանային կենտրոն էր: 1920 թ. գյուղում կար 450 տուն, 1600 բնակիչ[122]: Այն ԼՂԻՄ խոշոր բնակավայրերից էր:

Գյուղում 1929 թ. կոլտնտեսություն է կազմակերպվել: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո մասնավոր տնտեսություններ են ստեղծվել: Հայրենական մեծ պատերազմին Դաշբուլաղից մասնակցել է 400 մարդ, զոհվել է 124-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կանգնեցվել:

Խորհրդային տարիներին Ադրբեջանին բռնակցված Արցախը արագ յուրացնելու նպատակով վերոհիշյալ հանրապետության ղեկավարությունը ԼՂԻՄ-ը հայաթափելու ծրագիր էր մշակել: Առանցքային տեղերում ոչ միայն ադրբեջանաբնակ բնակավայրեր էին ստեղծվում, այլև հայկական գյուղերում վերաբնակեցնում էին ադրբեջանցի ընտանիքներ: Դա առավել ծավալուն ընթացք ստացավ 1970-ական թվականներին, երբ Ադրբեջանի կոմկուսի ԿԿ-ի առաջին քարտուղար դարձավ Հեյդար Ալիևը:

[119] Բալայան Վ., Դրվագներ..., էջ 82:

[120] Кочарян Г., Нагорный Карабах, Баку 1925, с. 47–51.

[121] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 124:

[122] ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 111, թ. 54–55: Հարություն Շահիջանյանը ֆիզիկական մեծ ուժի տեր և համարձակ անձնավորություն էր: Նա իր վրա է կրել 18-րդ դարի կեսին Արցախում Իբրահիմ խանի ավազակախմբերի դեմ կռվող քաջարի հերոսներից մեկի՝ Դալի (նշանակում է գիժ — Վ. Բ.) Մահրասայի անունը:

1940-ական թվականներին Դաշբուլաղում հայտնվեցին առաջին ադրբեջանցիները: Շուտով դպրոցում բացվեց ադրբեջանական բաժին: Այդ կործանարար ընթացքը կանխվեց արցախյան ազատագրական պայքարի շնորհիվ:

Արցախյան ազատագրական շարժման առաջին շրջանում՝ 1989–1990 թվականներին, գյուղում ինքնապաշտպանական ջոկատ է ստեղծվել, որը Ասկերանի պաշտպանական շրջանի կազմում աննկուն կամքով պաշտպանել է արցախահայության ազատության ու պետություն ունենալու իրավունքը: Այդ պայքարում 12 ազատամարտիկներ զոհվել են: Գյուղում նահատակների հիշատակը հավերժացնող կոթող է կառուցվել:

1887–88 ուսումնական տարում Դաշբուլաղում ծխական եկեղեցական դպրոց է բացվել: Դպրոցում սովորում էին նաև Խանցքի և Մեհտիշենի աշակերտները: 1896 թ. կառավարության որոշումով դպրոցը փակվել է: 1906–1907 ուսումնական տարվանից այն նորից սկսել է գործել[123]:

Խորհրդային տարիներին գյուղում կար ութամյա դպրոց: Այն ներկայումս միջնակարգի կարգավիճակով շարունակում է իր գործունեությունը:

2014 թ. դպրոցական նոր շենք է կառուցվել: Ծագումով Աստղաշենից են բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, սրտաբան Անդրանիկ Ճաղարյանը, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռոլանդ Գրիգորյանը, ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը, ԱՀ առաջին և ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, գեներալ-մայոր Արմեն Ղահրամանյանը:

1996 թ. հունվարի 31-ին գյուղը վերանվանվել է Աստղաշեն:

Բնակավայրի աղբյուրներն են՝ Քարե, Ալեքսանի, Պլալան, Վերին, Նապաստակի, Վանուն, Ալիսանի, Քրամի, Վետանց, Ղշլաղեն, Մոսունց ծորին:

Աստղաշենի ազգատոհմերն են՝ Լելունք, Նեսունք, Դաղաշանք, Գյուզողանք, Անդրունք, Բուդաղանք, Հաբունք, Բոզունք, Քիդունք, Կոծունք, Մեժունք, Ուղղակունք, Բագրատանք, Կքորանք, Սվարանք, Ըղվալանք, Քոշունք, Թլիշանք, Վերդյաններ, Կարապետյաններ, Խաչատրյաններ, Ղահրամանյաններ, Ղազարյաններ, Ջհանգիրյաններ, Բաբայաններ, Պետրոսյաններ, Գրիգորյաններ, Սարգսյաններ, Աղաբալյաններ, Աղայաններ:

Բնակավայրը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Աստղաշենում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, դպրոց, Ասկերանի շրջանի «Աստղաշենի արվեստի դպրոց» ՊՈԱԿ-ը, առևտրի 2 կետեր:

[123] Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Արցախի կրթական համակարգը, հ. 1, էջ 424–425:

Աստղաշենում 1987 թ. կար 208 տուն, 703 բանկիչ[124] (նրանց մի մասը ադրբեջանցիներ էին), 2010 թ.՝ 128 տուն, 505 բնակիչ[125], 2018 թ.՝ 138 տուն, 512 բնակիչ[126]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԱՎԵՏԱՐԱՆՈՑ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Վարանդա գավառում: Բնակավայրը տեղաբախշված է Քիրսի ստորոտում՝ Քյոնդալան գետի ձախ ափի արևելահայաց գեղատեսիլ մի բլրի վրա: Գյուղը շրջապատված է այգիներով ու անտառներով: Այս բնակավայրը վաղ միջնադարից սկսած հայտնի է Ավետարանոց անունով: 17-րդ դարից սկսած մինչև 1995 թ. ավելի շատ գործածվում էր Չանախչի անունը: Արցախում պետականության վերակերտումից հետո գյուղը 1995 թ. պաշտոնապես վերանվանվեց Ավետարանոց:

Բնակավայրում դարերի ընթացքում տեղի են ունեցել իրադարձություններ, որոնք իրենց հնչեղությամբ համահայկական նշանակություն են ունեցել:

Ավետարանոցը միջնադարում, տների քանակով ու բնակչությամբ, գեղեցիկ շինություններով և մելիքանիստ լինելով ավելի շատ գյուղաքաղաքի էր նման:

Ավարայրի ճակատամարտից հետո հայ ժողովուրդը շարունակեց հակապարսկական ազատագրական պայքարը: 457 թ. այն գլխավորում էր Հայոց Արևելից կողմանց թագավոր Վաչե Առանիշահիկը: Վաչեն քանդեց Ճորա պահակի ամրությունները և, Հյուսիսային Կովկասի ցեղերի բազմությունների հետ հարձակվելով ջարդեց պարսկական բանակը: Վաչեի փոքրաթիվ զորքը մի ամբողջ տարի օրհասական մարտեր է մղել պարսիկների և հոների բազմաքանակ ուժերի դեմ:

Հետագայում դեպքերը զարգացման այլ ընթացք ունեցան:

Հայոց Արևելից կողմերում սկսվող ներքին խլրտումների և Պերոզի անընդհատ ճնշումների հետևանքով Վաչեն լքվում է բոլորի կողմից, թողնում աշխարհիկ կյանքը և ավետարան առնելով՝ անցնում քարոզչության[127]:

Սարգիս Ջալալյանցը Ավետարանոց ավանում ծերունիներից մի ավանդություն է լսել, ըստ որի՝ Վաչե թագավորն իր կյանքի վերջին տարիներն անց է կացրել այդ գյուղում, ձգնել է հենց այստեղ, և դրանից էլ բնակավայրը ստացել է Ավետարանոց անունը:[128]

Մակար Բարխուդարյանցը գտնում է, որ Համամ թագավորը նույնպես թաղված է այդ գյուղում, և որ նրա գերեզմանաքարն ունի հարթաքանդակ՝ հեծյալ թագավորի

[124] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 124:
[125] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[126] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:
[127] Բալայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2011, էջ 61-32:
[128] Սարգիս արք. Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 435:

պատկեր՝ խաչը ձեռքին, ձիու հետևից մի ահագին վիշապ՝ երախը բաց: «Խաչազարդ է տապանաքարիս միւս երեսը և քանդակւած մէջքի վրայ, որ կարդացւում է խիստ դժվարութեամբ»[129]:

Դոփյան իշխանական տոհմից 16-րդ դարի սկզբներին սերված Գեղարունիքի մելիք Շահնազարյան տոհմի ներկայացուցիչ Միրզաբեկը 1703 թ. հաստատվում է Ավետարանոցում և այդպես Վարանդայում սկզբնավորվում է Մելիք Շահնազարյանների տիրապետությունը:

1606 թ. Շահ Աբբաս Ա-ն մելիքանիստ Մեծ Մազրայում հյուրընկալվեց Մելիք Շահնազարյաններին և հրովարտակով ամրագրեց նրանց իշխանությունը, իսկ Մելիք Շահնազարի կրտսեր եղբորը՝ Միրզաբեկին էլ, որ բնավորվել էր Ավետարանոցում, հաստատեց նրա մելիքական իրավունքները: Նրան հաջորդած մելիք Բաղի Ա-ն, մելիք Շահնազար Ա-ն, մելիք Միրզաբեկը, մելիք Բաղի Բ-ն, մելիք Հովսեփ Ա-ն (պարսիկները նաև մելիք Հուսեյն են անվանել) աչքի են ընկել հայրենասեր գործունեությամբ, և այդ ամենի շնորհիվ արցախահայության կյանքում մեծացել էր Վարանդայի և նրա կենտրոն Ավետարանոցի դերակատարությունը:

Օտարների ոտնձգություններից գյուղաքաղաքը պաշտպանելու նպատակով Մելիք Շահնազարյանները Ավետարանոցն ամուր պարսպապատեցին:

1733 թ. օսմանյան մի մեծ զորաբանակ Գանձակի կողմերից թափանցեց Արցախ և խորացավ Վարանդայի կենտրոնական հատվածներում: Տեղացիները, զգալով, որ չեն կարող դիմադրել թվով գերակշռող թշնամուն, առերես ընդունեցին նրանց հպատակությունը և կերուխումից հետո Դիզակի մելիք Եգանի ու Վարանդայի մելիքի աղջկա՝ Գայանեի գլխավորությամբ, մի գիշերվա մեջ նախօրոք դրված պայմանով կոտորեցին թուրքերին: Գայանեն անձամբ ղեկավարում էր գործողությունն Ավետարանոցում[130]:

Ավետարանոցում տեղի ունեցած այդ իրադարձությունների մասին ավանդազրույցի ձևով Լեոյին պատմել են գյուղի ծերերը, ըստ որի՝ Վարանդայում գտնվող օսմանյան զորքի հրամանատար Սուլեյման բեկը, որ ապրում էր Ավետարանոցում, տեսնելով գեղանի օրիորդին, վճռում է նրան կին վերցնել: Գայանեի ծնողները խոստացան իրենց աղջկան տալ նրան, բայց անընդհատ ձգձգում էին այդ գործը՝ պատճառաբանելով, թե ըստ հայկական սովորույթների՝ նախ պետք է կատարել մի քանի արարողություններ: Այդպես նրանք ժամանակ էին շահում, մինչև որ եկավ նշանակված գիշերը: Մելիք Հուսեյնի կինը՝ Աննա Խաթունը, գյուղի փողոցներում զենքը ձեռքին կռվում էր թուրքերի դեմ: Սուլեյման բեկը, տեսնելով անելանելի վիճակը, փրկու-

[129] Մակար եպս. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղվանից, հ. Ա, Էջմիածին, 1902, էջ 190; Նույնի՝ Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 211:
[130] Բալայան Վ., Շուշի, էջ 78-79:

թյան հույսով շտապում է մելիքի տունը: Սակայն տան շեմքին Գայանեն դաշունահարեց ատելի փեսային[131]:

Ի դեպ, Արամ Խաչատրյանի երաժշտական արվեստն ուսումնասիրող մի շարք արվեստագետներ գտնում են, որ մեծ կոմպոզիտորի Գայանե օպերայի հենքը կազմել է պատմական այս իրադարձությունը:

Սակայն այս դեպքից հետո, երբ մելիք Շահնազար Բ-ն դավադրաբար սպանեց մելիք Հովսեփին և բռնությամբ 1748 թ. տիրացավ Ավետարանոցի մելիքական ապարանքին ու բերդին, այս բնակավայրը մինչև վերջինիս մահը՝ 1792 թվականը, դարձել էր Արցախի հայության շահերի հակոտնյա ուժերի կենտրոնատեղի:

Գյուղաքաղաքի մելիք Հովսեփը, Ջրաբերդի Ալլահ-դուլի Սուլթանը, Դիզակի մելիք Եսային, Խաչենի մելիք Ալլահվերդի Հասան-Ջալալյանը մի քանի անգամ փորձել են գրավել Ավետարանոցը, բայց չի հաջողվել:

Հայկական այս բնակավայրը դարերի ընթացքում դարձավ քաղաքական բազմազան գործընթացների ականատեսն ու վկան:

1792 թ. Ավետարանոցում մելիք Ջումշուդի իշխանությունը վերցնելուց հետո, բնակավայրը նորից վերագտավ իր վաղեմի փառքը և դարձավ քաղաքական կյանքի ու ազատագրական պայքարի կարևոր կենտրոն:

19-րդ դարի երկրորդ կեսին Ավետարանոցում մետաքսի 3 գործարան կար:

Ինչպես Արցախի մյուս բնակավայրերը, այնպես էլ Ավետարանոցը, խորհրդայնացավ 1920 թ. մայիսին: 1930 թ. գյուղում կազմավորվել է կոլտնտեսություն, որի առաջին հիմնադիր նախագահը եղել է Ալեքսան Արզումանյանը: Այդ պաշտոնում հետագայում աշխատել են՝ Միքայել Գրիգորյանը, Ավագ Ավանեսյանը, Հակոբջան Գրիգորյանը, Արմենակ Ավանեսյանը, Սերգեյ Բալայանը, Վաղարշակ Հայրապետյանը, Հունան Ղահրամանյանը, Վոլոդյա Հայրիյանը, Գեորգի Պետրոսյանը: Ավետարանոցի և Սղնախի կոլտնտեսությունները 1951 թ. միավորվել են:

Անասնապահության ասպարեզում արձանագրված հաջողությունների համար 1972 թ. կոլտնտեսությունն արժանացել է ԽՄԿԿ Կենտկոմի, ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի, ՀԱՄԿԽ-ի և ՀամԼԿԵՄ Կենտկոմի պատվոգրին[132]: Խորհրդային տարիներին Ավետարանոցում գործել է Ստեփանակերտի մետաքսի կոմբինատի մասնաճյուղը:

Ավետարանոցից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 335 մարդ: Նրանցից 130-ը զոհվել են: Նահատակների հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Ավետարանոցի ազգաբնակչությունն իր արժանի ավանդն ունեցավ արցախյան ազատագրական պատերազմի տարիներին: Քանի որ գյուղը ճակատային գծից հեռու էր գտնվում, ուստի այն սահմանամերձ բնակավայրերի ազգաբնակչության համար ապահով հանգրվանի դեր էր կատարում:

[131] Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, Երևան, 1973, էջ 257:
[132] «Սովետական Ղարաբաղ», 4 նոյեմբերի, 1972:

1990 թ. Ավետարանոցում կազմակերպված կամավորական ջոկատի հրամանատար դարձավ Համլետ Ստեփանյանը: Այդ ջոկատը հետագայում ընդգրկվեց Պաշտպանության բանակի 35-րդ գումարտակի մեջ:

Պատերազմի առաջին օրերին Ավետարանոցը հարևան գյուղերից և ՀՀ-ից եկած կամավորական ջոկատների համար յուրօրինակ զորակայան էր դարձել: Ինչ-որ մի տեղ վերականգնվեցին 18-րդ դարի սղնախական ժամանակաշրջանի ավանդույթները:

32 ավետարանոցցիներ՝ Արմեն Առաքելյանը, Համլետ Առստամյանը, Արթուր Ավանեսյանը, Լևոն Արզումանյանը, Հրաչյա Բաղդասարյանը, Աշոտ Բաբայանը, Արթուր Բաբայանը, Մաքսիմ Բաղրյանը, Սլավիկ և Վալեր Գաբրիելյանները, Ալբերտ Գաղյանը, Կառլեն Գաղյանը, Նելսոն Մանասյանը, Կարո Գրիգորյանը, Արմեն Գրիգորյանը, Կիմա Գրիգորյանը, Կամո Դանիելյանը, Մայիս Դանիելյանը, Մխիթար Դանիելյանը, Նաիրի Դանիելյանը, Արտակ Խաչատրյանը, Վալերի Համբարձումյանը, Արարատ Հայրապետյանը, Ավետիք Հայրապետյանը, Վալերի Հովսեփյանը, Վլադիկ Հովսեփյանը, Միհեր Հովսեփյանը, Ջիվան Մնացականյանը, Արթուր Պետրոսյանը, Գարսևան Պետրոսյանը և Համլետ Սարգսյանը իրենց կյանքը նվիրաբերեցին՝ ազատ ու անկախ Արցախ ունենալու համար:

Երախտապարտ համագյուղացիները 17-րդ դարում հիմնված Գայանեի վանքի հարակից տարածքում՝ Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հուշարձանի հարևանությամբ, վեր խոյացրին նրանց հիշատակը հավերժացնող նոր կոթող: Ժայռեղեն բարձունքի վրա կառուցված համալիրն անկրկնելի տպավորություն է թողնում բոլորի վրա: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվել են Համլետ Գրիգորիի Ստեփանյանը, Ալիխան Սուրենի Համբարձումյանը, հետմահու՝ Ավետիք Վարդանի Հայրապետյանը, Միհեր Գեորգիի Հովսեփյանը, Կառլեն Ալեքսանդրի Գաղյանը:

1869 թ. Ավետարանոցի Սբ. Աստվածածին եկեղեցուն կից գործել է դպրոց: 1873 թ. բացվում է նախակրթարան՝ 20 աշակերտով: Ուսուցիչն էր Ալեքսանդր քահանա Ամիրյանցը: 1874 թ. Ավետարանոցի բնակչությունը խնդրագիր է ուղարկում կաթողիկոսին՝ բացելու միդասյա ծխական դպրոց: Նույն թվականի հոկտեմբերին կրթօջախը բացվում է:

1908-1909 ուսումնական տարում գյուղում բացվում է երկդասյա երկսեռ դպրոց, որտեղ սովորում էր 82 աշակերտ: Դպրոցն ուներ 4 բաժանմունք, 3 ուսուցիչ[133]:

Խորհրդային տարիներին Ավետարանոցում գործել է միջնակարգ դպրոց, որի երկար տարիներ տնօրենն էր ԽՍՀՄ վաստակավոր մանկավարժ Իվան Աթայանը:

1988-1992 թթ. դպրոցում սովորում էր 281 աշակերտ, դասավանդում՝ 32 ուսուցիչ: 2014-2015 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 168 աշակերտ, աշխատում՝

[133] Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Արցախի կրթական համակարգը, հ. 1, էջ 379-380:

28 ուսուցիչ: Վերջին տարիներին դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են՝ Գ. Պետրոսյանը և Ա. Խաչատրյանը:

Ավետարանոց գյուղում ծնվել և մեծացել են ռազմական, քաղաքական, մշակութային և գիտական ոլորտների գործիչներ, որոնք կարևոր դերակատարություն են ունեցել հայոց պատմության մեջ: Նրանցից են ռուսական բանակի զորավար, գեներալ-լեյտենանտ Վալերիան Մադաթովը (Ռոստոմ Գրիգորի Մադաթյան), գրողներ Կոստանդին Մելիք-Շահնազարյանը, Նվարդ Ավագյանը, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալեքսանդր Մանասյանը, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կամո Աթայանը, տնտեսագիտության դոկտոր Արզիկ Սուվարյանը:

Հարկ է նկատել, որ Մելիք-Շահնազարյանների տոհմից սերված ռազմական, գիտության տարբեր ասպարեզների մի քանի տասնյակ գործիչներ ճակատագրի բերումով ապրել և աշխատել են հայրենիքից դուրս:

Ավետարանոցը հիրավի բաց թանգարան է երկնքի տակ: Գյուղում և նրա շրջակայքում կան պատմական մեծ հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ հուշարձաններ: Դրանց մեջ առանձնանում է Կուսանանց անապատը (1616 թ.), որի մոտ պահպանվել են 5-7-րդ դարերի բազիլիկ եկեղեցու հիմնապատերը: Կուսանաց անապատում պահպանվել է Մելիք-Շահնազարյանների տոհմական գերեզմանոցը:

Կուսանաց անապատի մոտ՝ ժայռի վրա, մի մեծ ճեղքվածք կա: Գյուղացիները այդ ճեղքվածքը Քաջքատուն են կոչում և հավատում, թե քաջքերով լի է[134]:

Գյուղի կենտրոնում է գտնվում Սբ. Աստվածածին եկեղեցին: Այն եռանավ բազիլիկ է՝ կառուցված 1651 թ.: Եկեղեցին ունեցել է բազմաթիվ գրչագրեր, մագաղաթյա ավետարաններ, խաչեր և ուրիշ թանկարժեք մասունքներ:

Գյուղում կարելի է տեսնել քաղաքացիական ճարտարապետության հիանալի նմուշների հետքեր: Դրանք Մելիք-Շահնազարյանների 3 ապարանքներն են: Նշանավոր է նաև Ավետարանոցի ամրոցը:

Նշվածներից բացի Ավետարանոցում հաշվառված են հետևյալ հուշարձանները՝ Ծկոռե (գտնվում է գյուղից մոտ 5 կմ արևմուտք, պահպանվել են բնակելի շենքերի և Սանա անվանվող եկեղեցիների մնացորդները), Հղոտեք, Սուրբ Ավանես (գյուղից 6 կմ դեպի արևելք, եկեղեցին կանգուն է, բակում կան մեծ թվով գերեզմանաքարեր, խաչքարեր), Խաչխութ (զարդանախշերով 9-10-րդ դարերի խաչքար, գտնվում է Բախշունց բունա կոչված հանդամասում), Պուտքար գյուղատեղին, Քարկապ խաչ (Քիրսի ստորոտում), Ղոնդիկ եկեղեցու մնացորդները (գյուղի հարավ-արևելյան մասում, 7 կմ հեռավորության վրա), Բլեն խութ (հին գյուղատեղի՝ գերեզմանոցներով, Ավետարանոցից 5 կմ դեպի արևմուտք), Եկեղեցու ձորի եկեղեցու փլատակները, Ավետարանոց գետի վրա պահպանվել է միաչքանի գոգավոր կամուրջը՝ կառուցված 1640 թ.: Նույն գետի վրա, գյուղից վերև, կա մեկ այլ քարաշեն կամուրջ, որ նույնպես կառուցվել է Վարանդայի մելիքության ծաղկման շրջանում՝ 17-րդ դարում:

Գյուղից 2,5 կմ հեռավորության վրա գտնվող Սահարանց աղբյուրից ջուրը կավե խողովակներով հասցվել է Մելիք-Շահնազարյանների ապարանքը: Կավե ջրատարի վրա փորագրված է 1625 թ.[135]:

Ավետարանոցում հայտնի են Ցորտ, Մեծ, Դաշխուն, Շոր, Շահգալդանց, Քշանանց, Կերթնուկ, Սալքարեր, Ռուսեն, Աշոտեն, Թաս, Հացեն, Վրթեզ, Քոռ, Հայրունց, Ստեփանանց, Իդանանց, Ջիմով, Սահար, Վանեսի և Խնձորամաքի աղբյուրները:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ, դպրոց, մանկապարտեզ, «Ասկերանի մանկական երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ի Ավետարանոցի մասնաճյուղը, բուժկետ, 4 խանութներ:

Ավետարանոցում 2018 թ. կար 250 տուն, 1158 բնակիչ[136]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԱՐՄԵՆԱԿԱՎԱՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսարևելյան հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Խաչեն գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Խաչենի ջրամբարի հարևանությամբ՝ նույնանուն գետի աջափնյակում:

Միջնադարյան ժամանակշրջանի գյուղի պատմության վերաբերյալ մեզ տեղեկություններ չեն հասել:

Միջին միջնադարից սկսած քոչվոր ցեղերի ճնշումները Արցախի դաշտավայրում ապրող հայկական բնակավայրերի վրա սաստկանում էր: Նմանօրինակ իրավիճակ էր ստեղծվել նաև Խաչենի միջին և ստորին հոսանքում գտնվող բնակավայրերի հայության, այդ թվում Փոքր Ջինլիի՝ ներկայիս Արմենակավանի տարածքում ապրողների համար: Անվտանգության նկատառումներից ելնելով՝ հայությունը ապաստանել էր լեռնաստանում: Այսօր Արմենակավանի շրջակայքում մնացած գյուղատեղիների, գերեզմանոցների, եկեղեցիների հազիվ նշմարվող մնացորդները մեզ դրա մասին են պատմում:

19-րդ դարի վերջերին ու 20-րդ դարի սկզբներին հայկական նախկին բնակավայրում, որի անունը մեզ չի հասել, թաթար մի քանի ընտանիքներ էին հիմնավորվել:

[134] Լալայան Ե., Երկեր, հ. 2, Երևան, 1988, էջ 38:

[135] Աթայան Ի., Լույսի տաճարում, Ստեփանակերտ, 1991, էջ 5:

[136] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:

Գյուղերից մեկը անվանվել էր Ջինլի, իսկ մյուսը՝ Փոքր Ջինլի:

Հարևան հայկական գյուղերից անասնագողությունն ու հայ տեղաբնիկների հետ ընդհարումներն անպակաս էին:

Նմանօրինակ իրավիճակ պահպանվել էր նաև խորհրդային տարիներին:

Արխիվային փաստաթղթերից մեկում ընթերցում ենք, որ ազգային հողի վրա 1933 թ. Ստեփանակերտի շրջանի Քարագլուխ և Աղդամի շրջանի Ջինլի գյուղերի միջև ընդհարում է եղել[137]:

Ադրբեջանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Փոքր Ջինլին ներառվել էր Աղդամի շրջանի կազմի մեջ:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ բնակավայրը ազատագրվել է:

2000 թ. սկսվել է փոքր Ջինլիի վերաբնակեցման գործընթացը: Այդտեղ հաստատվել են ՀՀ բնակավայրերից, ԱՀ հարևան գյուղերից ու Ադրբեջանից բռնատեղահանված մի քանի ընտանիքներ: Գյուղը ստացել է Արմենակավան անունը:

Բնակավայրը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում է գյուղապետարան, բուժկետ, Խրամորթի միջնակարգ դպրոցի Արմենակավանի մասնաճյուղը:

Արմենակավանում 2018 թ. կար 14 տուն, 63 բնակիչ[138]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՊԱՏԱՐԱ

Գյուղը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին՝ Խաչենի գավառում՝ Պատարա գետի վերին հոսանքում: Նրա տարածքով են հոսում նաև Պատարա գետի Պիծի և Խրավանդ վտակները:

Գյուղի թիկունքում են գտնվում նշանավոր Կուսանանց լեռները: Պատարան գտնվում է բնության գողտրիկ վայրում՝ շրջապատված անտառապատ բլուրներով:

Պատարան (նախկինում՝ Պտրեցիք, խորհրդային շրջանում՝ Բադարա) Արցախի հնագույն բնակավայրերից մեկն է համարվում: Ղևոնդ Ալիշանը նշում է, որ գյուղը Պտրեցիք է կոչվել իր մոտ գտնվող լեռան անունից[139]: Այստեղ հայ մարդն իր գործունեությունը սկսել է առնվազն Ք. ա. 1-ին հազարամյակից և անընդհատ շարունակվել է մինչև մեր օրերը: Դրա մասին են վկայում նաև Պատարայում և նրա

[137] ԱՀ պետարխիվ, ֆ. 268, ց. 1, գ. 2, թ. 6:

[138] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:

[139] Ալիշան Ղ., Արցախ, «Բազմավեպ», հմ. 1-4, Վենետիկ, 1889, էջ 204:

շրջակայքում պահպանված պատմամշակութային նշանակության շուրջ 200 հուշարձաններ:

Պտրեցիք Արցախի իշխանական տների գլխավորությամբ տարբեր դարաշրջաններում պայքարել են հայրենի երկրամաս թափանցած քոչվոր ցեղերի և օտար նվաճողների դեմ:

Իրենց անվտանգությունը պահպանելու նպատակով նրանք անմատչելի վայրերում կառուցել են բերդեր, ամրացված վայրեր:

19-րդ դարի վերջին Պատարայում կար 121 ծուխ, 982 բնակիչ[140]: Եղիշե Իշխանյանն ասում է, որ 1918 թ. գյուղն ուներ 250 տուն, որի բնակիչները հայ-թուրքական ընդհարումների ժամանակ աչքի են ընկել իրենց խիզախությամբ ու քաջությամբ[141]:

Արցախում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո՝ 1930 թ., Պատարայում կազմակերպվեց «Էռնեստ Թելմանի» անվան կոլտնտեսությունը: Խոշորացումից հետո՝ 1962 թ., Պատարա, Աստղաշեն, Խանցք և Դահրավ գյուղերի տնտեսությունների հիմքերի վրա ստեղծվեց «Հոկտեմբեր» կոլտնտեսությունը, որն իր գործունեությունը շարունակեց մինչև 1988 թ.:

Ապախոշորացումից հետո Պատարայում շարունակեց գործել Կոմիտասի անվան կոլտնտեսությունը: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո, այդ տնտեսությունը նույնպես դադարեց գործելուց:

Տարբեր տարիների Պատարայի կոլտնտեսությունը ղեկավարել են Խուրշուդ Ղահրամանյանը, Նիկոլայ Գասպարյանը, Բենիկ Գասպարյանը, Ալբերտ Դավթյանը:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 230 մարդ, զոհվել է 112-ը:

Արցախյան ազատագրական շարժման սկզբնափուլում Կարեն Արզումանյանի հրամանատարությամբ կազմավորվել է ինքնապաշտպանական ջոկատ: Այդ ջոկատի հիմքերի վրա, նաև հարևան գյուղերի երիտասարդների ներգրավմամբ ստեղծվել է առանձին գումարտակ, որը Կարեն Արզումանյանի հրամանատարությամբ Արցախի տարբեր շրջաններում մասնակցել է մարտական գործողություններին: Ի դեպ, պատերազմի ավարտից հետո՝ 1995 թ. մինչև 2019 թվականը, Պատարայի համայնքը ղեկավարել է Կարեն Արզումանյանը:

Մարտական գործողություններին մասնակից պատարացի 154 ազատամարտիկներից 23-ը զոհվել են:

ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի են արժանացել Մխիթար Հարությունյանը՝ հետմահու, Կարեն Արզումանյանը, Սուրեն Օհանյանը, Էդիկ Իսրայելյանը, Կառլեն Խաչատրյանը և Ալիք Իսրայելյանը:

[140] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 241:

[141] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 265:

1874–1875 ուսումնական տարում Պատարայում բացվել էր եկեղեցական–ծխական դպրոց, որտեղ սովորում էր 12 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ՝ Սարգիս Տիրացուն:

1881 թ. գյուղում գործում էր մեկդասյա արական ծխական դպրոց, որտեղ սովորում էր 35 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ: Դպրոցը փակվել է 1896 թ. և վերաբացվել 1906 թ.: Ուսուցիչն էր Վաղարշակ Տեր–Գրիգորյանը: Մինչև խորհրդային կարգերի հաստատումը պարապմունքները անց էին կացվում Խուրշուդ Շահրամանյանի տան ներքնահարկում:

1920–ական թվականներին Պատարայում գործում էր տարրական դպրոց: Ուսուցիչներն էին Սեդրակ և Միսակ Պետրոսյանները:

1930 թ. գյուղում կառուցվում է դպրոցական շենք: 1936 թ. դպրոցը դառնում է միջնակարգ: 1988–1990 թթ. դպրոցում սովորում էր 152 աշակերտ, դասավանդում 24 ուսուցիչ, 2014–2015 ուսումնական տարում՝ 112 աշակերտ, 20 ուսուցիչ:

Տարբեր տարիներին դպրոցի տնօրեններ են աշխատել Ռուբեն Իշխանյանը, Միշա Սարգսյանը, Դավիթ Ղահրամանյանը, Ելենա Սարուխանյանը, Ռիտա Մնացականյանը (ԱՀ Աժ պատգամավոր), Արթուր Ջհանգիրյանը:

Պատարայում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային արժեք ունեցող 200–ից ավելի հուշարձաններ: Դրանցից առավել նշանավոր են Օխտը եղցի վանական համալիրը (12–13–րդ դարեր), Օձկավանքը (12–13–րդ դարեր), Ծերա նահատակ եկեղեցին (1326 թ.), Ամենափրկիչ եկեղեցին (13–րդ դար), Դարպասուտ եղցի և Ջուխտակ եղցի եկեղեցիները (12–րդ դար), Խրավանդ կամ Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, Սբ. Ստեփանոս եկեղեցին (1870 թ.), բերդերի մնացորդներ, բազմաթիվ խաչքարեր (12–13–րդ դարեր):

Նշանավոր են նաև Կուսանաց–Կենդակտուն, Կուսանաց Մեյդան–Շլորուտ, Տանձու բաղ և Պատարա–Սիպտակ վեղ տեղանքների հուշարձանները:

Պատարայում նշանավոր են Խնձորի բաղեր, Կապեն ծով, Սուրբեն, Պառավ, Ղլեչուն, Փրկիչին, Պուլուր ծով, Մուլուքանց, Հունի, Ղասրմ, Հակոբեն, Թթու ջուր, Ղազարանց կալին, Տանձոտեն, Ցորտ, Սուրփին, Վարար ձիրին, Կերեզմանոտեն, Շնատեղեն աղբյուրները: Շրշռան ջրվեժի մոտ է գտնվում Պատարա հանքային ջուրը:

Գյուղում հայտնի են Քեթևան, Դերին–թալա, Սեփանց տափ, Տանձուտ, Սպիտակ վեղ, Ներքե Մնաքանց, Շինատեղեր, Շլորե վեղ, Հացե վեղ, Ղազարանց կալ հանդամասերը:

Պատարայում շարունակում են ապրել Դերունց, Մասքյոխանց, Տկլորանց, Պուղուսանց, Չարչունց, Բաղունց, Սեփունց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Համայնքը էլեկտրաֆիկացված և գազիֆիկացված է: Ունի նոր կառուցված խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը:

Պատարայում գործում է գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, հանդիսությունների նորակառույց սրահ, հացի 2 փուռ և 4 խանութ:

Գյուղում 1987 թ. կար 204 տուն, 644 բնակիչ[142], 2019 թ.՝ 220 տուն, 867 բնակիչ[143]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԲԵՐՔԱԶՈՐ

Բնակավայրը տեղաբաշխված է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում: Բերքաձորը գտնվում է Կարկառի միջին հոսանքում՝ գետի աջ ափին՝ Ստեփանակերտից 6 կմ հեռավորության վրա:

Ներկայիս բնակավայրի տեղում էին գտնվում Ստեփանակերտի թիվ 2 խորհտնտեսության հողահանդակները: Վերոհիշյալ սովխոզը ստեղծվել էր 1930–ական թվականների վերջերին: Տնտեսության կազմում էին նաև Կրկժանն ու Խոջալլու գյուղը:

Սովխոզի աշխատակիցների համար 1970–80–ական թվականներին հանրակացարաններ են կառուցվել, և 1988 թ. ԼՂԻՄ մարզգործկոմի որոշմամբ Հասանաբադ անունով բնակավայրի կարգավիճակ է տրվել: Բնակավայրը խառը բնակչություն ուներ: Այստեղ ապրում էին հայեր և ադրբեջանցիներ: 1988 թ. գյուղն ուներ 57 բնակիչ: Գյուղխորհրդի նախագահն էր Վլադիմիր Գասպարյանը:

Արցախյան շարժման առաջին իսկ օրվանից տեղի հայությունը, քանի որ փոքրամասնություն էր կազմում, անվտանգությունից ելնելով, 1988–89 թթ. տեղափոխվում է Ստեփանակերտ: Հասանաբադը վեր է ածվում Ադրբեջանի օմոնականների որջի: Հյուսիսից և արևելքից Ստեփանակերտը օղակի մեջ էին առել Ջամիլլու (նախկինում հայաբնակ — Վ. Բ.), Խոջալլու (նախկինում հայաբնակ — Վ. Բ.), Հասանաբադ և Մալիբեյլի՝ տվյալ պահին ադրբեջանաբնակ, գյուղերը:

1991 թ. Արցախի ինքնապաշտպանական ուժերի առջև խնդիր էր դրված՝ երկրամասից մաքրել ռազմական հենակետերի վերածված ադրբեջանաբնակ բնակավայրերը:

Հասանաբադի մատույցներում տեղի ունեցած մի քանի ժամվա մարտերից հետո հակառակորդը տեղի տվեց, և բնակավայրը ազատագրվեց:

Արցախյան պատերազմի տարիներին մարտական գործողություններին մասնակցել են նաև նախկինում Հասանաբադում ապրող հայ բնակիչները: Նրանցից 10 հոգի զոհվել են: 1994 թ. զինադադարի կնքումից հետո Հասանաբադում հաստատվում են Ադրբեջանի հայկական բնակավայրերից տեղահանված հայ փախստականների մի քանի ընտանիքներ: Նախկին բնակավայր են վերադառնում նաև Ստեփանակերտում հաստատված հասանաբադի բնակիչները:

[142] Մելքումյան Ս., նշվ.աշխ., էջ 125:
[143] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

ԱՀ Գերագույն խորհրդի տեղանվանական հանձնաժողովի կողմից բնակավայրը ստացավ Բերքաձոր անվանումը:

1993 թ. Բերքաձորում բացվել է տարրական դպրոց: 2000 թ. դպրոցը ստացել է ութամյայի կարգավիճակ: Այստեղ սովորում էր 44 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ: 2010 թ. կառուցվել է դպրոցի նոր շենքը: 2014–2015 ուսումնական տարում Բերքաձորի դպրոցում սովորում էր 30 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ: Դպրոցի տնօրենն է Կ. Ալեքսանյանը:

Ընդհանուր առմամբ Կարկառի միջին ավազանը, Ստեփանակերտից մինչև Ասկերան, Ք. ա. 2–1-ին հազարամյակներին խիտ բնակեցված է եղել և պատահական չէ դամբարանաբլուրների այն առատությունը, որ գոյություն ունի վերոհիշյալ տարածքում: Բերքաձորը այդ տեսանկյունից նույնպես բացառություն չէ: Այստեղ հաշվառված է 14 հուշարձան:

Համայնքի տարածքում կա 2 աղբյուր՝ Շլորեն, Կապուտանի մոտ:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Լուծված է ջրամատակարարման հարցը: Բնակչությանը հասանելի է հեռուստատեսությունը, ռադիոն, ինտերնետ ծառայությունը, անլար հեռախոսակապը:

Համայնքում գործում է գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, դպրոց, առևտրի 2 կետ:

2018 թ. տվյալներով Բերքաձորում կա 50 տուն, 195 մարդ[144]: Բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Կան նաև պետական տարբեր հիմնարկություններում աշխատողներ:

ԴԱՀՐԱՎ

Գյուղը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին Խաչեն գավառում՝ Շնաքար լեռան լանջին:

Գյուղի շրջակայքում կան գեղատեսիլ անտառներ, որոնց ցածրում հաջորդում են Փլեկի տանձենու և խնձորենու այգիները և ապա սահուն փոխվելով վարելահող տափարակների՝ հասնում մինչև գետահովիտը: Գյուղի մոտակայքով հոսում է Բաղարա գետը:

Դահրավը Արցախի հնագույն բնակավայրերից է: Դրա մասին են խոսում գյուղի շրջակայքում գտնվող նախաքրիստոնեական շրջանի սրբատեղիները, միջնադարյան գյուղերի, գերեզմանների, մատուռների և եկեղեցիների մնացորդները:

Դահրավից ոչ շատ մեծ հեռավորության վրա է գտնվում ծովի մակերևույթից 1200 մ բարձրություն ունեցող մի լեռնագագաթ, որին ժողովուրդը Նավասարդ է անվանում:

[144] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:

Հավանաբար դա կապված է տվյալ տարածքում ապրող հայության նախաքրիստոնեական շրջանի սովորությունների և նիստուկացի հետ:

Հնուց եկած և ժողովրդի զրույցի համաձայն՝ Դահրավի Քըշըմրոր անտառում է թաղված Վարդան Մամիկոնյանը: Քըշըմրորի մթին անկյուններից մեկում ժայռեր կան, որոնք նման են ծառս եղած նժույգների: Ըստ ավանդության՝ Ավարայրի ճակատամարտից հետո Բակ Առանշահիկը արցախյան գնդի գլուխ անցած իր հետ Արցախ է տանում նաև նահատակ սպարապետի մարմինը: Պարսիկների հետ ընդհարումներ ունենալով նա հասնում է Քըշըմրորի մթին անկյուններից մեկը, որտեղ ժայռերը նման են ծառս եղած նժույգների: Բակ իշխանի հրամանով հենց այդ ժայռերից մեկի տակ էլ փոս փորեցին և ամփոփեցին սպարապետի դին: Ժայռը դարձավ Վարդան Մամիկոնյանի շիրիմաթումբ-հուշարձանը[145]:

Դահրավի բնակիչները բնական աղետների և արտաքին թշնամիների ավերիչ հարձակումների ու կողոպուտների պայմաններում իրենց բնակավայրը տարբեր դարաշրջաններում տեղից տեղ են փոխադրել, բայց պահպանել են անունը:

Ավանդույթը ասում է, որ 17-րդ դարի սկզբներին հին Դահրավի բնակիչներից մեկը՝ Ղուլին, բնակարան է կառուցում Շնաքար լեռան լանջին՝ ներկայիս բնակավայրի տարածքում: Այստեղ է հաստատվում նաև Մաղավուզ գյուղից հարյուրապետ Հախումը, և այդպես ձևավորվում է ներկայիս բնակավայրը: Ի դեպ նկատենք, որ Եղիշե Իշխանյանը Դահրավը ներկայացնում է նաև Տամբավ, Դամբավ ձևով[146]: Գյուղի գերեզմանոցում պահպանվել է Հախում յուզբաշու կողակցի՝ Մագֆարու գերեզմանաքարը՝ 1713 թվագրությամբ:

Մելիքական շրջանում Դահրավի հայությունը հերոսաբար պայքարել է և անսասան պահել հայրենի սահմանները: Դահրավից Հախումը իր հերոսության և անձնազոհության համար Խաչենի իշխանից հարյուրապետի պաշտոն է ստացել:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Դահրավից 12 հայորդիներ, Արևմտյան Հայաստանը ազատագրելու նպատակով, մասնակցել են կամավորական շարժմանը:

1917–1920 թթ. Դահրավի հայությունը անմնացորդ նվիրվեց Արցախում հայկական պետականության վերականգնման գործին: Ցարական բանակի նախկին սպա, դահրավեցի Մուսա Խաչատրյանը վերադարձավ հայրենի երկրամաս, և Ալեքսան Բալասանյանի հետ կազմակերպեց միլիցիայի ջոկատներ, ու միասին անզիջում պայքար սկսեցին ավազակների ու թալանչիների դեմ[147]:

Արցախում խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1930 թ., գյուղում ստեղծվում է կոլտնտեսություն: 1998 թ. կոլտնտեսային կարգերի լուծարումից հետո գյու-

[145] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[146] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 104 և 143:

[147] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 104, 105, 143, 153, 155, 170, 172, 183, 188, 229:

դում ստեղծվեցին մենատնտեսություններ: Կոլտնտեսության վարչության նախագահներ են աշխատել Մուխան Դանիելյանը, Ղուկաս Հայրիյանը, Գրիշա Աբրահամյանը, Միքայել Ավանեսյանը, Բախշի Մանգասարյանը, Մուշեղ Հախումյանը, Արամ Ծատրյանը, Հմայակ Դավթյանը:

Հայրենական մեծ պատերազմին Դահրավից մասնակցել է 300 հոգի, որոնցից 123-ը զոհվել են: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Դահրավի ազգաբնակչությունը անմնացորդ նվիրվել է արցախահայության ազատագրական պայքարին: 1989 թ. գյուղում կազմավորվել է կամավորական ջոկատ, որի գործունեությունը համակարգում էին Սլավիկ Առուշանյանն ու Արտյուշա Մեհրաբյանը: Ջոկատի հիմքերի վրա ձևավորվեց 118 հոգուց բաղկացած վաշտ, որի հրամանատարն էր Էդիկ Խաչատրյանը: Վաշտը մասնակցել է Շուշիի, Լաչինի, Քելբաջարի, Աղդամի, Ֆիզուլիի և Մարտակերտի շրջաններում ընթացող մարտական գործողություններին: Ջոկատը ունեցել է 24 նահատակ, որոնցից 7-ը Դահրավից էին: Վաշտի հրամանատար Էդիկ Խաչատրյանը արժանացել է ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվել են Բենիկ Հակոբյանը, Յուրա Ղարայանը:

19-րդ դարի կեսերին Դահրավի ունևորներից մեկը ուսուցիչ էր վարձել, որը երեխաներին գրել ու կարդալ էր սովորեցնում: 1870 թ. գյուղում բացվել է նախակրթարան, իսկ 1873-1874 ուսումնական տարում՝ եկեղեցական-ծխական դպրոց: Ուսուցիչն էր տեր Սարգիս քահանան: Այնուհետև նրան փոխարինել է Սեդրակ Պետրոսյանը: Ցարական կառավարության որոշմամբ 1896 թ. փակվել են հայկական դպրոցները, այդ թվում Դահրավի կրթարանը: 1906-1907 ուսումնական տարում դպրոցը վերաբացվել է: Այն մեկդասյա երկսեռ դպրոց էր, ուներ 40 աշակերտ և մեկ ուսուցիչ՝ Բախշի վարժապետը: Նրան էլ փոխարինեց ջավախքեցի Սերգեյ Կորգանյանը:

Խորհրդային առաջին տարիներին Դահրավում գործում էր տարրական դպրոց: 1929-31 թթ. նոր դպրոցական շենք կառուցվեց: Դպրոցը ստացավ ութամյայի կարգավիճակ: 1988-1990 թթ. դպրոցում սովորում էր 92 աշակերտ, դասավանդում՝ 16 ուսուցիչ:

Հետպատերազմյան տարիներին աշակերտների թիվը կտրուկ նվազել է: 2014-2015 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 15 աշակերտ, դասավանդում 9 ուսուցիչ:

Դպրոցի շենքը հիմնանորոգվել է 2003 թ. Լոս Անջելեսի «Հայ կրթական հիմնարկություն» կազմակերպության և բարերար Սերգեյ Բաղդասարյանի միջոցներով: Դպրոցը կրում է պատմավիպասան՝ ծննդով Դահրավից, Հայկ Խաչատրյանի անունը:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել՝ Վանյա Քոչարյանը, Գուրգեն Հովհաննիսյանը, Հակոբ Հակոբյանը, Միշա Անդրյանը, Հրաչիկ Ղազարյանը, Միշա Պետրոսյանը, Վաղարշակ Հակոբյանը, Հովհաննես Սամվելյանը, Վարդան Անդրյանը, Անիկ Հախումյանը, Նինա Սարգսյանը, Սերգեյ Հախումյանը, Ժորա Աբրահամյանը, Միքայել Գասպարյանը, Սուսաննա Գաբրիելյանը, Ջոյա Ղալայանը, Սլավա Առուշանյանը, Եվգենյա Գրիգորյանը:

Դահրավը տվել է տնտեսության, գիտության, մշակույթի, գրականության նշանավոր գործիչներ՝ հիդրոմարտարագետ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Միքայել Սարկիսովը (Եգիպտոսի Ասուանի հիդրոհանգույցի կառուցման գլխավոր փորձագետ, Վոլժսկի ՀԷԿ-ի գլխավոր ինժեներ: Նրա նախաձեռնությամբ գյուղում ժամանակին փոքր ՀԷԿ է կառուցվել), գրող, պատմավիպասան Հայկ Խաչատրյանը, ճարտարապետ Արսեն Խաչատրյանը, Չելյաբինսկի մանկավարժական ինստիտուտի պրոռեկտոր Լյուդմիլա (Լյուսիկ) Հախումյանը, ԱՀ գյուղնախարար Բենիկ Բախշյանը, ԱՀ ԱԺ պատգամավոր, «Հայբիզնես» բանկի վարչության նախագահ, տնտեսագիտության թեկնածու Արսեն Միքայելյանը:

Գյուղի տարածքում կան բազմաթիվ պատմամշակութային արժեքներ՝ 11-րդ դարի մատուռ, 11-13-րդ դարերի եկեղեցիների ավերակներ, Եղցու խաչ, Փոշտին նահատակ, Սոեն հատակը սրբատեղիները, Բաֆֆու աղբյուր-հուշարձանը (1872 թ. Բաֆֆին եղել է Դահրավում և ջուր խմել այդ աղբյուրից — Վ. Բ.), 1885 թ. կառուցված Սբ. Հովհաննես գյուղամիջյան եկեղեցին, միջնադարյան խաչքարեր:

Համայնքի տարածքում են գտնվում հետևյալ աղբյուրները՝ Մռվեն, Կրմնջին, Հարթեն, Օրինած, Բաֆֆու, Խաչ, Խաչի հող, Պիծի կյումեր, Սիսեռն, Սորթուն հորթ, Սուրթնեն երթ, Նիկոսեն, Ումուոլու, Աբելի:

Գյուղի նշանավոր հանդամասերն են՝ Բալին դուզ, Ջնալի, Պլալան, Ջնաել հող, Բիշիշ, Նավասարդ, Ժմիարեն կյումեր, Քշմրոր, Բլանց տափ, Սորփեն սեռ, Կոպաշտեն սեռ, Թեղուտ աղբյուր, Պիծի խովուխութ, Մեծ խովուխութ, Աղալու, Մոշոտ թալա, Ղարա կապ:

Նախկին Դահրավում առանձին թաղերով ապրում էին նույն տոհմի ներկայացուցիչները: Ներկայումս Դահրավում ապրում են Կիրակոսանց (Գյուրգյուսանց), Աբրահամանց, Սայունց, Ղուլունց, Փականց, Կոստանդանց, Նանանց, Սարքիջանանց, Թիրիփանց, Նեսունց, Մռանանց, Առուշանց, Պրսեղանց, Խաչունց, Ենգիբարանց, Կիլիգյանց, Հայրունց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է, ունի ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, ինտերնետ ծառայությունները, անլար հեռախոսակապը բնակչությանը հասանելի են:

Դահրավում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, դպրոց, առևտրի մեկ կետ:

1885 թ. Դահրավում կար 64 տուն[148], 1970 թ.՝ 137 տուն, 450 բնակիչ, 1987 թ.՝ 115 տուն, 287 բնակիչ[149], 2018 թ.՝ 49 տուն, 161 բնակիչ[150]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[148] Հայկունի. Եղիշե (Հովակիմ) ավագ քահանա Գեղամյանց, Ուղեգնացական ակնարկներ, Երևան, 2010, էջ 57:
[149] Մելքումյան Ս., նշվ.աշխ., էջ 187:
[150] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:

ԴԱՇՈՒՇԵՆ

Դաշուշենը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկինում՝ Վարանդայի գավառում՝ Կարկառ գետի աջ անտառաշատ ափին: Արևելքից բնակավայրի սահմանը հասնում է անտառաշատ Շաղասարին, արևմուտքից՝ Ծաղկասարին: Մայրաքաղաք Ստեփանակերտից գյուղը 6 կմ հեռավորության վրա է գտնվում:

Կարկառի վերին և միջին հոսանքի մեծ մասը հնագույն ժամանակներից խիտ բնակեցված է եղել: Նման ձևով մի քանի բնակավայրեր են եղել նաև ներկայիս Դաշուշենի շրջակայքում: Դրանց մեծ մասը անբնակ են դարձել միջին միջնադարում, իսկ օրինակ Ներքին շենը և Սողոմոնի շենը այդ ճակատագրին են արժանացել 1860-ական թվականներին, երբ բնակչությունը ավելի լավ կյանքի փնտրտուքով տեղափոխվեց Շուշի:

Ներկայիս Դաշուշենի հարևանությամբ գտնվող հայկական գյուղերից մի քանի ընտանիքներ 17-րդ դարում տեղափոխվեցին և հիմնեցին նոր բնակավայր:

Ավանդույթը պատմում է, որ 17-րդ դարում երկու եղբայրներ վերոհիշյալ լքված հայկական գյուղերից հաստատվում են ներկայիս Դաշուշենի հանդամասերից մեկում՝ Արմենակի բաղում: Թուրքերը այդ բնակավայրը երկու անգամ հրկիզում են: Այնուհետև եղբայրներից մեկը, որի անունը Դաշի էր, տեղափոխվում և հաստատվում է ավելի ապահով, լեռնային դիրք ունեցող ներկայիս Դաշուշեն գյուղում և դառնում այդ բնակավայրի հիմնադիրը: Նրա անունից էլ գյուղը անվանվեց Դաշուշեն: Մյուս եղբայրն էլ տեղափոխվում է Հադրութի կողմերը[151]: Գյուղը նշանավոր է դառնում, հատկապես նրա շրջակայքում գտնվող Սարիբեկ նշանավոր ուխտատեղիի շնորհիվ: Սարիբեկը շուշեցիների համար ամենասիրելի ուխտատեղին է համարվել:

Վերոհիշյալ ուխտատեղիի վերաբերյալ երկու ավանդազրույց է պահպանվել: Մեկը գրի է առնվել «Ազգագրական հանդես»-ի, իսկ մյուսը «Նոր Դար»-ի կողմից:

Պատմում են, որ մահմեդական մի քույր և եղբայր հյուրնկալվում են Երուսաղեմ ուխտի գնացած մի վարդապետի մոտ: Նրանք դռան բացվածքից նկատել են, որ վարդապետը օդի մեջ կանգնած աղոթում է: Այդ հրաշքից տպավորված՝ նրանք ընդունում են քրիստոնեությունը և, մի նորահավատ ծառայի ուղեկցությամբ, հետապնդումներից խուսափելու նպատակով, հասնում են Վարանդա: Թուրքերը նրանց հետևից հասնում են և Շուշիից 10 վերստ հեռավորության վրա գտնվող մի բարձունքի վրա սպանում են, ուր և գտնվում է ուխտատեղին: Նահատակ եղբոր անունը եղել է Մարտիրոս: Քանի որ նա սրով է նահատակվել, դրա համար վայրը կոչվել է Սրաբեկ, իսկ ժողովուրդը, այն աղավաղելով, կոչել է Սարիբեկ: Ձորի մեջ՝ թփերի տակ, գտնվում է նահատակված ծառայի ուխտատեղին: Սարիբեկից մի քիչ բարձր էլ գտնվում է քրոջ նահատակության վայրը[152]:

[151] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[152] «Ազգագրական հանդես», գիրք Բ, Թիֆլիս, 1897, էջ 82:

Ժողովրդի մեջ մնացած մեկ այլ ավանդազրույցի համաձայն՝ մի հայ քրիստոնյայի պարսիկները ստիպում են ընդունել զրադաշտություն: Նա հրաժարվում է և հետապնդումներից խուսափելու նպատակով փախչում ու ապաստանում է Քիրս լեռան անմատչելի ծերպերում, սակայն պարսիկները վերահաս լինելով, սրախողխող են անում նրան: Դիակը տեղափոխում և ամփոփում են նշված սրբավայրում[153]:

Քանի որ Դաշուշենի հայերը աշխատասեր էին և կազմակերպված, նրանց հաջողվել է ստեղծել կայուն զարգացող գյուղ:

19-րդ դարի վերջերին այստեղ կար 40 ծուխ, 370 բնակիչ[154]:

Նախկին խարխուլ տների փոխարեն արդեն կառուցվում են պատշգամբներով և թիթեղյա տանիքներով երկհարկանի տներ: «Փայլակ»-ի թղթակիցը, 1916 թ. լինելով Դաշուշենում, գրել է, որ 60 ծխից բաղկացած գյուղի բնակչության արտադրած բանջարեղենը և Կարկառից որսացած ձուկը սպառում էին Շուշիում և «... ամբողջ գիւղում մի աղքատ մարդ չի գտնուիլ»[155]: «Բագուի ձայն» թերթի թղթակիցն էլ 1913 թ. արձանագրել է. «Շուշիին թարմ կանաչի էին մատակարարում Դաշուշենի գյուղացիները»[156]: Ի դեպ, Դաշուշենի բնակիչների, որպես լավ կանաչեղեն արտադրողի, իմիջը առայսօր պահպանվում է:

Դաշուշենի հայությունն իր ավանդն է ունեցել 20-րդ դարի սկզբներին արցախահայության ինքնության և ազգային պետականության պահպանման համար մղված պայքարի գործում:

1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ գյուղը տուժեց:

Հայ ինքնապաշտպանական ջոկատներին ճնշելու նպատակով 1906 թ. հունվարի 16-ին գեներալ Գոլոշչապովի գլխավորությամբ կառավարական մի զորագունդ Ասկերանի կիրճով հասնում է Շուշի՝ ճանապարհին ոմբահարելով Խրամորթ, Խնապատ, Քյաթուկ, Ղլիշբաղ, Դաշուշեն և Շոշ գյուղերը[157]:

1917-1920 թթ. Դաշուշենի հայությունը հերոսաբար կռվեց նաև թուրք-թաթարական հրոսակախմբերի դեմ:

Արցախում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո՝ 1930 թ., գյուղում կոլտնտեսություն է կազմավորվել: Տնտեսությունը զարգացավ մանավանդ Երվանդ Ադամյանի և Հայրապետ Թորոսյանի ղեկավարման տարիներին:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են 78 հոգի, նրանցից 28-ը զոհվել են: Գյուղում նրանց հիշատակին հուշարձան է կանգնեցվել:

Դաշուշենի հայությունն իր ավանդն ունեցավ արցախյան ազատագրական պատերազմը հաղթական ավարտին հասցնելու գործում: Գյուղում ստեղծվել էր կամավո-

[153] «Նոր Դար», հմ. 90, 12 հունիսի, 1886:

[154] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 227:

[155] «Փայլակ», հմ. 83, 30 հոկտեմբերի, 1916:

[156] «Բագուի ձայն», հմ. 121, 31 օգոստոսի, 1913:

[157] «Արշալոյս», հմ. 10, 17 հունվարի, հմ. 12, 19 հունվարի, 1906:

ական ինքնապաշտպանական ջոկատ, որի հրամանատարն էր Սամվել Վարդանյանը: Նա զոհվել է: Հրամանատարի մարտական ընկերները 2017 թ. նրա հիշատակին Խաչին տակ կոչված տարածքում հուշարձան են կառուցել: Մարտական գործողությունների ընթացքում Դաշուշենի ջոկատի 6 քաջորդիներ զոհվել են: Գյուղում նրանց հիշատակին հուշարձան է կանգնեցվել:

Խորհրդային տարիներին գյուղում միջնակարգ դպրոց է գործել, որտեղ սովորում էր 94 աշակերտ, դասավանդում՝ 18 ուսուցիչ: Տարիների ընթացքում աշակերտների թիվը նվազեց, և դպրոցը փակվեց: 1995 թ. գյուղում նոր դպրոցի շենք է կառուցվել, որտեղ սովորում էր 8 աշակերտ: 2018–2019 ուսումնական տարում աշակերտների թիվը հասավ 15–ի:

Ծնունդով Դաշուշենից են գրողներ Վազգեն Օվյանը (նրա անունով է կոչվում Դաշուշենի դպրոցը), Գերասիմ Հովսեփյանը, դերասույց Էդիկ Ալանյանը:

Գյուղի տարածքում պահպանվել են պատմամշակութային արժեքներ Սուրբ Սարիբեկ ուխտատեղին, համանուն մատուռը, Կարկառ գետի վրա 19–րդ դարում կառուցված կամուրջը, գյուղամիջյան Սբ. Աստվածածին եկեղեցին, որը 2017 թ. հիմնանորոգվել է:

Համայնքի տարածքում են գտնվում հետևյալ աղբյուրները՝ Սորփեն, Սարիբեգ, Չինզին, Քարին, Քարին տափ, Խաչին տակ, Քարեն ձուր, Քահրիզ, Թազա աղբյուր, Վարակն: Աղբյուրների մի մասի վրա պահպանվում են հին արձանագրություններ:

Դաշուշենի նշանավոր հանդամասերն են՝ Արտեն յամաջ, Մաններ, Ցաքուտ, Կաղնուտ, Խաչին տակ:

Գյուղում ապրում են Աղաջանանց, Ալանանց, Օհանանց, Աբրահամանց ազգատոհմերի շառավիղները:

Համայնքն էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Գյուղը ունի խմելու ջրագիծ: Բնակչությանը հասանելի է հեռուստատեսությունը, ռադիոն, ինտերնետ ծառայությունը, անլար հեռախոսակապը:

Դաշուշենում 1987 թ. կար 33 տուն, 69 բնակիչ[158], 2018 թ.՝ 32 տուն, 113 բնակիչ[159]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Կան նաև Ստեփանակերտի հիմնարկ–ձեռնարկություններում աշխատողներ:

ԻՎԱՆՅԱՆ

Բնակավայրը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ Կարկառ և Բադարա գետերի հատման եռանկյունում:

Հազարամյակներ շարունակ բնակավայրում ապրել և արարել է հայ մարդը: Այստեղ ամենուր տեսանելի են բրոնզե և երկաթե դարաշրջանների դամբարանաբլուր-

[158] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 136:

[159] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 1:

ները: Դրանց հարևանությամբ պահպանվել են վաղ միջնադարից մինչև 18–րդ դարն ընկած ժամանակահատվածին պատկանող տապանաքարեր:

19–րդ դարի վերջերին և 1950–ական թվականներին Ռեոսլերը և Կուշնարյովան Խոջալլույում պեղումներ են կատարել և հանգել այն եզրակացության, որ այստեղ նշանավոր բնակավայր է եղել, որի պատմությունը սկսվում է Ք. ա. 2–1–ին հազարամյակներից:

Ռեոսլերի պեղումների մասին Շուշիում տպագրվող «Ազգագրական հանդեսում» գրված է. «Խոջալուի կուրգանը կառուցված է եղել ողորկ գետնաքարերից, որի մեջ՝ քարարկղ (սարկոֆագ): Եղել են բրոնզե իրեր, թռչուն, մուրճ, մատանի, որի վրա թռչնի գլուխ, դանակ, ասեղներ, մի մեծ գունդ, հագուստների և ամանների զարդարանք, գոտու թիթեղների մնացորդներ՝ նուրբ փորագրություններով, նետերի բազմաթիվ ծայրակալներ, ոսկյա մատանիներ, ոսկյա զարդարուն կտորների մնացորդներ, մարգարիտ, որի վրա՝ նշաններ (ըստ էության արձանագրություն, որը Ռեոսլերի կարծիքով մովաբերեն կամ նաբաթերեն է): Գտնվել են նաև օքսիդիանից և եղջուրքարից պատրաստված նետերի ծայրեր, գառնեոլից և այլ քարերից բազմաթիվ մարգարիտներ, ուլունքներ, կենդանու ոսկորներ, կենդանու կմախք, որի վրա (գլխին) իբրև զարդարանք՝ բրոնզե թիթեղ: Ըստ Ռեոսլերի, տեղի բնակիչները կենդանիներին պաշտում էին, ինչպես եգիպտացիները իրենց Ապիսին: Պեղումներից ի հայտ են բերվել նաև սև, փայլուն կավից պատրաստված գեղեցիկ սափորներ, ամաններ և այլն: Է. Ռեոսլերի կարծիքով, այստեղ՝ Կուր–Արաքս գետերի միջնամասում, հին ժամանակներում մշակութային մի մեծ տերություն է եղել»[160]:

Բնակավայրում հայտնաբերված ազաթե ուլունքը, որի վրա հիշատակված է Ասորեստանի Ադադնիրարի 1–ին (Ք. ա. 1310–1280 թթ.) արքայի անունը, տեղափոխվել և պահվում է Պետերբուրգի Էրմիտաժում:

Պրոֆեսոր Խ. Սամուելյանի կարծիքով ասորական գրությամբ ազաթե ուլունքը Խոջալու է հասել տեղացի ցեղապետերից մեկի միջոցով, որը, ամենայն հավանականությամբ, ծառայել է Ասորեստանի բանակում և որպես նվեր ստացել է Ադադնիրարի 1–ինի կողմից[161]: Վերոհիշյալ փաստը վկայում է, որ Արցախը Ք. ա. 3–1–ին հազարամյակներում ներառված է եղել Առաջավոր Ասիայի քաղաքակրթության ոլորտը և սերտ առնչություններ է ունեցել դրա օջախներից մեկի՝ Ասորեստանի հետ: Հարկ է նշել, որ հայտնաբերված հնագիտական արժեքավոր նյութերի նշանակալից մասը տեղափոխվել է Թիֆլիս, Պետերբուրգ, Գերմանիա և Բաքու[162]:

Հնագույն ժամանակներից մինչև 19–րդ դարի վերջերը բնակավայրը գտնվում էր Պարսկաստանից Շուշիի վրայով դեպի Կովկասի խորքերը տանող առևտրական մայ-

[160] «Ազգագրական հանդես», Ա., Շուշի, 1895, էջ 37–39:

[161] Սամուելյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, Երևան, 1941, էջ 309:

[162] Museum Gaukaicum, V, Tiflis, 1902, p. 113–114; О раскопках Реслера в Ходжалу, ОАК, 1895, 1899, 1900 гг.

ղուղիների հանգուցակետում: Այստեղ ժամանակին քարավանատներ են եղել և հանդիսացել են առևտրականների հավաքատեղի: Անշուշտ բնակավայրը վաղ ժամանակներից ունեցել է հայկական անվանում, իսկ արդեն նոր շրջանում, ստացել էր օտարահունչ Խոջալլու անունը: Արցախը Ռուսաստանին անցնելուց հետո՝ 1830-ական թվականներից ցարական կառավարությունը կայսրության խորքերից մոլականների և դուխաբորների է տեղափոխում ու բնակեցնում հայկական երկրամասի տարբեր հատվածներում, այդ թվում և Խոջալլուում: Այստեղ է տեղակայվում նաև ռուսական Մինգրելյան գունդը: Նույնիսկ ռուսներով բնակեցված թաղամասը որոշ աղբյուրներում ներկայացված է որպես առանձին վայր՝ Ղարաղշլաղ անունով բնակավայր[163]:

Խոջալլուն դեպի ալպյան արոտավայրերը տանող քոչվոր թուրք-թաթար մի քանի ընտանիքների հանգրվան է դառնում:

1897 թ. համառուսաստանյան առաջին մարդահամարի տվյալներով Խոջալլուն ներկայացված է մի քանի թաղամասերով. Խոջալլու կայարան՝ 14 մարդ՝ 7 ռուս, 5 հայ, 2 մահմեդական, Խոջալլու խուտուր՝ 9 ռուս, 5 հայ:[164]

1918 թ. սեպտեմբերի 5-ին, Բերդաձորի ենթաշրջանի գյուղերը թուրք-թաթարների կողմից գրավվելուց հետո, մի քանի ընտանիքներ ևս հաստատվում են Խոջալլուում[165]: 1920 թ. բնակավայրում ապրում էր 72 հայ և 2 թուրք ընտանիք:

Արցախը Ադրբեջանի գերիշխանությանը հանձնելուց հետո նպատակային քաղաքականություն էր վարվում՝ հանգուցային կետերից հայերին դուրս մղելու և ադրբեջանցիներով բնակեցնելու:

1932 թ. օգոստոսին ՀԽՍՀ Դարալագյազի շրջանից 28 հոգուց բաղկացած 9 թուրք ընտանիքներ տեղափոխվում և բնակություն են հաստատում գյուղի հայկական թաղամասում[166]: Մինչև 1960-ական թվականները հայ ընտանիքները ստիպված տեղափոխվեցին Ստեփանակերտ: Ռուսները նույնպես հեռացան գյուղից: Եվ այդպես նախկին հայկական բնակավայրը դարձավ լրիվ ադրբեջանաբնակ:

1989 թ. մարդահամարի տվյալներով այստեղ ապրում էր 1661 ադրբեջանցի[167]: Արցախյան ազատագրական շարժման առաջին տարիներին Խոջալլուն դարձել էր Ադրբեջանի ամենահզոր ռազմական հենակետը:

Ադրբեջանի ղեկավարությունը, հեռուն գնացող ծրագիր ունենալով, Խոջալլուն հռչակեց ԼՂԻՄ վարչական կենտրոն և Մոսկվայից մարզին հատկացված 400 մլն ռուբլին օգտագործեց Խոջալլուն թուրք-մեսխեթցիներով վերաբնակեցնելուն: Որոշ տվյալներով այդ թիվը հասել էր 6300-ի: Արցախահայության գլխին օրեցօր ահագնացող վտանգը չեզոքացնելու նպատակով 1992 թ. փետրվարի 26-27-ին Արցախի ինքնապաշտպանական ուժերը ազատագրեցին գյուղը: Մինչև ռազմագործողության սկիզբը հայկական զինված ուժերը, բնակչությանը անվտանգ հեռացնելու նպատակով, Կարկառի հոսանքով դեպի Աղդամ միջանցք էին բացել: Սակայն Ադրբեջանի ազգային ճակատի զինյալները, իրենց հանրապետության նախագահ Այազ Մութալիբովին իշխանությունից հեռացնելու նպատակով, Աղդամի մատույցներում թուրք-մեսխեթցիներին գնդակահարում են, անարգում դիակները և այդ ամենը բարդում հայերի վրա: Այդ մասին ժամանակին խոստովանել է նաև Այազ Մութալիբովը: Այսօր էլ Ադրբեջանի քարոզչական մեքենան շարունակում է շահարկել վերոհիշյալ իրադարձությունները:

1992 թ. բնակավայրում հաստատվում են Ադրբեջանի հայաբնակ տարածքներից և Խրամորթից բռնի տեղահանված ընտանիքները: Բնակավայրը հարմարավետ վայրում գտնվելով՝ այստեղ հետագա տարիներին հաստատվում են նաև ԱՀ տարբեր բնակավայրերից տասնյակ ընտանիքներ:

2001 թ. հոկտեմբերից գյուղը վերանվանվել է Իվանյան: Այն կրում է Արցախի հերոս գեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանյանի անունը:

1993 թ. Իվանյանում դպրոց է բացվում, որտեղ իրենց ուսումը շարունակում են Խրամորթ գյուղի տեղահանված աշակերտները:

Խրամորթն ազատագրվելուց հետո՝ 1997 թ., վերոհիշյալ գյուղի աշակերտները վերադառնում են հայրենի գյուղ, բայց Իվանյանի դպրոցը շարունակում է գործել արդեն Ասկերանի թիվ 2 միջնակարգ դպրոցի անվան տակ: 2006 թ. շահագործման հանձնվեց դպրոցի նորակառույց շենքը: Հիշյալ տարում դպրոցում սովորում էր 164 աշակերտ, դասավանդում՝ 30 ուսուցիչ: Դպրոցը այսօր կրում է 2016 թ. ապրիլյան պատերազմի նահատակ փոխգնդապետ Օ. Գրիգորյանի անունը: 2012-2013 ուսումնական տարում կրթական հաստատությունը ավագ դպրոցի կարգավիճակ է ստացել: 2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 209 աշակերտ:

Դպրոցի տնօրեններ են եղել Արմո Մկրտչյանը, Յուրա Բալայանը, Ռեբեկա Մարտիրոսյանը, 2009 թվականից առ այսօր՝ Գուրգեն Ղուլյանը:

Իվանյանը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Հիմնականում լուծված է խմելու ջրի հարցը: Հեռուստատեսությունը, ռադիոն, ինտերնետ ծառայությունները և անլար հեռախոսակապը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում է գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, դպրոց, մանկապարտեզ, առևտրի 11 կետեր, արտադրական փոքր ձեռնարկություններ:

Իվանյանը ԱՀ այն բնակավայրերից է, որ օրեցօր զարգանում է, աճում է բնակչության թվաքանակը: 2018 թ. Իվանյանում կար 346 տնտեսություն, 1397 բնակիչ[168]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[163] Кочарян Г., Нагорный Карабах, с. 49.

[164] ЦГИА РФ, Санкт-Петербургское отделение, Первая всеобщая перепись населения Российской империи, 1897 г., ф. 1290, оп. 11, д. 646.

[165] Իշխանեան Ե, նշվ. աշխ., էջ 195-196:

[166] ԱՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 38, թ. 66-70:

[167] Всесоюзная перепись населения СССР 1989 года, Нагорно-Карабахская Автономная область, Москва, 1990.

[168] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:

ԼՈՒՍԱՁՈՐ

Բնակավայրը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածներում՝ Ասկերանի շրջանում, նախկին Խաչեն գավառում: Նրա վարչական տարածքի հյուսիսարևելյան մասով հոսում է Բաղարա գետը: Ստեփանակերտից Լուսաձորը 12 կմ հեռավորության վրա է:

Գյուղից 2,5 կմ հեռավորության վրա գտնվող Քարաբլուր տեղամասի դամբարանադաշտը և սրբատեղիները վկայում են, որը վերոհիշյալ տարածքները հնագույն շրջանից բնակեցված են եղել:

Տարբեր հանգամանքների բերումով նշված տարածքներում եղած գյուղերի մի մասի բնակիչները լքել են իրենց օջախները:

1826–1828 թթ. ռուս–պարսկական պատերազմի ավարտից հետո Թուրքմենչայի պայմանագրով պարսկահպատակ հայեր տեղափոխվեցին Արևելյան Հայաստան: Որոշ ընտանիքներ հաստատվեցին նաև Արցախում: Ներկայիս Լուսաձոր գյուղի բնակիչների նախապապերը՝ խոյեցի Այվազյան, Սարգսյան, Ղամբարյան, Մկրտչյան, Պողոսյան, Մեսրոպյան, Կարապետյան, Պետրոսյան ընտանիքների անդամները հաստատվեցին Լուսաձորից ոչ շատ մեծ հեռավորության վրա գտնվող համեմատաբար դաշտավայրային Խասկա Չընգլ տեղամասում:

Պաշտպանական նկատառումներով խոյեցիները նպատակահարմար գտան բնակավայր հիմնել ավելի բարձրադիր վայրում՝ ներկայիս Լուսաձորի տարածքում, և գյուղը անվանակոչեցին Մեհտիշեն:

Տասնամյակների ընթացքում Խոյից բերված կենցաղավարությունը, բարքերը, սովորությունները արցախյան միջավայրում նոր որակ ստացան և Մեհտիշենը դարձավ Արցախի ինքնատիպ զարգացող բնակավայրերից մեկը:

Տասնամյակներ շարունակ Մեհտիշենի երիտասարդները՝ աղջիկներն ու տղաները ձգտում էին իրար հետ ամուսնանալ: Այս հանգամանքը նպաստեց, որ ընտանիքներում պահպանվի սեփական բարբառը: Բարբառագետներ Կարո Դավթյանն ու Արմեն Սարգսյանը գտնում են, որ Արցախի բարբառների շարքում Մեհտիշենի բարբառը առանձին ճյուղ է կազմում:

Արցախի բարբառախոս միջավայրում ձևավորված լինելով՝ Մեհտիշենի բարբառը շարունակ կրել է այդ միջավայրի ազդեցությունը, ենթարկվել փոփոխությունների՝ թե՛ հնչյունական ու բառագիտական, թե՛ քերականական ու ոճական մակարդակներում:

Լուսաձորի բնակիչները չափազանց աշխատասեր են և ունեն հաճախ զվարճալի, կովարարության հասնող աշխուժություն: Դա էլ նպաստել է, որպեսզի նրանք հեշտությամբ դիմակայեն դժվարություններին: Պատահական չէ, որ նրանք կարճ ժամանակահատվածում վրանաբնակ բնակավայրը դարձրել են քարաշեն գյուղ, և 19–րդ դարի վերջերին էլ կառուցվել է Սբ. Հովհաննես եկեղեցին:

1851 թ. Արցախի վիճակի, քաղաքների, գյուղերի, ժողովրդի, քահանաների, սարկավագների, եկեղեցականների հաշվեցուցակում 139 համարի տակ նշված է, որ Դահիրավ, Մեհտիշեն և Դաշպուլաղ գյուղերը միասին ունեն 84 բնակիչ:

1901 թ. դրությամբ Մեհտիշենը ուներ 372 բնակիչ[169]:

1901 թ. Արցախի թեմի հայ Գրիգորյան եկեղեցիների ունեցվածքի ցուցակի համաձայն՝ Մեհտիշենի Սբ. Հովհաննես եկեղեցու եկամուտը արծաթով կազմում էր 15 ռուբլի, 63 կոպեկ: Անշարժ գույքի եկամուտը արծաթով կազմում էր 12 ռուբլի, 60 կոպեկ, ծախսը՝ 12 ռուբլի, 25 կոպեկ[170]: Խորհրդային տարիներին գյուղի եկեղեցին օգտագործվում էր որպես պահեստ:

Առաջին համաշխարհային պատերազմին Մեհտիշենից մասնակցել են Ասլան Կարապետյանը, Գերասիմ Օհանյանը և Բախշի Այվազյանը:

Արցախում խորհրդային կարգեր հաստատելուց հետո Մեհտիշենում 1930 թ. կազմակերպվել է կոլտնտեսություն: 1954 թ. այն միավորվել է Բալուջայի տնտեսությանը:

Մեհտիշենից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 116 մարդ, զոհվել է 61–ը, որոնց հիշատակին կանգնեցվել է հուշարձան:

1954 թ. գյուղում կառուցվում է ակումբ, որը կարևոր վայր էր հանդիսանում երիտասարդության ժամանցը կազմակերպելու առումով: Խորհրդային տարիներին գյուղի երիտասարդների մի մասը, աշխատանք գտնելու նպատակով, տեղափոխվում է Բաքու, որի պատճառով համայնքի բնակչության թիվը խիստ նվազում է:

Լուսաձորի հայությունն անմնացորդ պայքարեց Արցախի ազատության համար: 1989 թ. գյուղում Տիգրան Խաչատրյանի հրամանատարությամբ 12 հոգուց բաղկացած կամավորական ջոկատ է ստեղծվում:

Խոջալուում տեղակայված ադրբեջանական ավազակախմբերը գողանում էին նաև լուսաձորցիների անասունները: Գյուղի պաշտպանության համար մղված մարտերում 1991 թ. հոկտեմբերի 29–ին Տիգրան Խաչատրյանը զոհվում է: Դրանից հետո ջոկատը գլխավորում է Լևոն Ավանեսյանը: Կամավորականների թիվն օրեցօր շատանում է և հասնում 60 մարտիկի: Նրանք իրենց մասնակցությունն են բերել նորանկախ երկրի սահմանների պահպանման գործում: Այդ պայքարում 60 լուսաձորցիներից 12–ը զոհվել են:

Անձնվիրության համար լուսաձորցի Յուրա Ղամբարյանը և Գառնիկ Պողոսյանը հետմահու պարգևատրվել են ԱՀ «Մարտական խաչ» 2–րդ աստիճանի շքանշանով:

1995 թ. Մեհտիշենը վերանվանվել է Լուսաձոր:

Մեհտիշենում դպրոց չլինելու պատճառով գյուղի աշակերտները երկար ժամանակ հաճախում էին հարևան Դաշպուլաղի դպրոցը: 1920–ական թվականներին Թևոս Պետրոսյանի առանձնատանը տարրական դպրոց է բացվում: Շենքը 1963 թ. որոշակի վերակառուցվում է: Աշակերտ չլինելու պատճառով 1985 թ. դպրոցը փակվում է: 1989 թ. Տիգրան Խաչատրյանի նախաձեռնությամբ դպրոցը վերաբացվում է:

[169] Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813–1933 թթ.), գիրք Թ., Երևան, 2001, էջ 406:

[170] Նույն տեղում, էջ 424:

2004–2005 ուսումնական տարում դպրոցն ուներ 24 աշակերտ, 11 ուսուցիչ, 2017–2018 ուսումնական տարում՝ 18 աշակերտ:

Տարբեր տարիներին դպրոցի տնօրեններ են աշխատել Ե. Սարգսյանը, Ռ. Ասծատրյանը, Է. Ջաքարյանը, Ս. Մակվեցյանը:

Լուսաձոր գյուղում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային արժեք ունեցող հուշարձաններ՝ 2–1-ին հազարամյակների դամբարանադաշտ, Ծերա նահատակ, Օծկան վանքերը, Բուշնին նահատակ եկեղեցին, 19-րդ դարում կառուցված Սբ. Աստվածածին եկեղեցին, 12-րդ դարի խաչքարեր:

Համայնքի տարածքում հայտնի են Ներքին, Դառն, Ծոփակեր, Շոռնա աղբյուրները:

Գյուղում շարունակում են ապրել Այվազյանների, Սարգսյանների, Ղամբարյանների, Մկրտչյանների, Պողոսյանների, Պետրոսյանների, Մեսրոպյանների, Կարապետյանների ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու և ոռոգման ջրագծեր: Լուսաձորում գործում են՝ գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, դպրոց:

2010 թ. Լուսաձորում կար 44 տուն, 179 մարդ[171], 2018 թ.՝ 58 տնտեսություն, 197 մարդ[172]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԽՆԱՊԱՏ

Գյուղը գտնվում է ԱՀ արևելյան հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին Խաչեն գավառում: Խնապատի տարածքը հյուսիսում հասնում է մինչև Քարագլխի լեռնաբազուկը: Արևելքից և հյուսիս-արևելքից գյուղի հողահանդակները սահմանակցում են Ասկերանի, Ղլիջբաղի, Աղդամի, Խրամորթի հարթավայրային տարածքներին և Կարկառ գետին: Գյուղի տարածքի արևմտյան սահմանը հասնում է մինչև Բիլա խութ անտառապատ լեռը: Գյուղն Ասկերան քաղաքից գտնվում է 6 կմ, իսկ մայրաքաղաք Ստեփանակերտից՝ 21 կմ հեռավորության վրա:

Գյուղի տարածքը հարուստ է աղբյուրներով: Հատկապես հայտնի են՝ Կիզատեղ, Ճիրվաձուր, Ղազար, Շուշան, Սիյամանց, Կաթնաղբյուր, Ճիրվեր, Գյոլ, Վաղվան, Զոփ, Խաղին, Քյամանչի աղբյուրները:

Խնապատի տարածքում հայտնաբերված հուշարձանները, ժամանակագրական առումով, ընդգրկում են Ք. ա. 11-րդ դարից մինչև 20-րդ դարի սկզբները: Գյուղի ամենահին թվագիր հուշարձանը Ցեց քար խաչքարն է՝ թվագրված 1187 թվականով: Գյուղի սրբավայր-գերեզմանոցում կան 3 ավերված մատուռներ:

Խնապատից 3 կմ արևմուտք՝ հին գյուղի տարածքում, պահպանվում է թաղակապ, միանավ եկեղեցի: Երեշեն հնավայրում գտնվում են 19-րդ դարում կառուցված Սուրբ

[171] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[172] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:

Աստվածածին եկեղեցին և մի մատուռ: Նույն վայրում գտնվող գերեզմանոցը վերաբերում է 9–20-րդ դարերին:

Վերոհիշյալ գերեզմանոցում 1224 թ. կառուցված եկեղեցին հիմնովին ավերված է: Գյուղից 3,5 կմ հյուսիս-արևմուտք՝ Վաղվան տեղամասում՝ հնագույն գյուղատեղիում, նկատելի են մեկ այլ եկեղեցու ավերակներ:

Միջին միջնադարում՝ 10–14-րդ դարերում, Խնապատը գտնվում էր ներկայիս գյուղից 2 կմ արևմուտք՝ Երեշեն վայրում և Հարթ տեղամասում: 14-րդ դարի կեսերին Խնապատի բնակիչները տեղափոխվել են մոտ 3 կմ հարավ-արևմուտքում գտնվող Շինատեղ կամ Ճիրավեր վայրը:

Սկզբնաղբյուրները վկայում են, որ 14-րդ դարի կեսերից մինչև 18-րդ դարի սկզբները գյուղն անվանվել է Ջրհոր[173]: 18-րդ դարի կեսերից բնակչությունը տեղափոխվեց մոտ 3 կմ հյուսիս գտնվող Երեշեն տեղամասը:

19-րդ դարի կեսերից խնապատցիները հաստատվեցին ներկայիս գյուղի տարածքում:

1886 թ. տվյալներով Խնապատում կար 88 ծուխ, 798 բնակիչ[174], 1912 թվականին՝ 78 ծուխ, 1107 բնակիչ:[175]

Դարերի ընթացքում Ասկերանի կիրճով դեպի Շուշի, Սյունիք, Այրարատ տանող ռազմավարական նշանակության ճանապարհի պահպանման գործում խնապատցիները կարևոր դերակատարում են ունեցել:

1929 թ. Խնապատում կազմավորվել է «Տրակտոր» անունով կոլտնտեսությունը, որի առաջին նախագահը եղել է Գրիգոր Ծատրյանը: Նրան հաջորդել են Սայի Պողոսյանը, Երեմ Խաչատրյանը, Սայի Ավետիսյանը: Հայրենական մեծ պատերազմից հետո, մինչև 1959 թ., կոլտնտեսության նախագահներն էին՝ Ջումշուդ Բաղալյանը, Արամ Հարությունյանը, Իվան Շահրամանյանը և Ավետիս Գասպարյանը: 1959–1988 թթ.՝ շուրջ 30 տարի, այդ պաշտոնը վարել է Ասրի Ղահրամանյանը: Այդ տարիներին տնտեսությունը բավականաչափ զարգացավ: 1982 թ. 2968 տ խաղողի բերք հավաքվեց: Նույն թվականին անասունների գլխաքանակը հասել էր 11 274-ի, որից խոշոր եղջերավոր՝ 1245, մանր եղջերավոր՝ 8625, խոզ՝ 1404 գլուխ: Կոլտնտեսության ամբողջ համախառն արտադրանքը կազմում էր 1 959 743 ռուբլի[176]:

1950-ական թվականներից կոլտնտեսությունը կրում էր Նելսոն Ստեփանյանի անունը: 1954 թ. գյուղում Նելսոն Ստեփանյանի կիսանդրու բացման առթիվ Խնապատ էին այցելել ԽՍՀՄ կրկնակի հերոսի հայրը, մայրը և եղբայրը:

[173] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 3, թ. 112–113:

[174] Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г., Тифлис, 1888, с. 67.

[175] Приложение к памятной книге Елисаветопольской губернии на 1914 г., Тифлис, 1914, с. 152.

[176] Սարգսյան Ս., Խնապատ. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2006, էջ 67:

Խնապատից 250 հոգի մասնակցել են Հայրենական մեծ պատերազմին, որոնցից 104 խիզախներ տարբեր ռազմաճակատներում զոհվեցին: Երախտապարտ գյուղացիները նրանց հիշատակը հավերժացնելու համար 1968 թ. գյուղի հարավարևելյան բարձունքին հուշարձան կանգնեցրին:

Խնապատցիները մեծ հակում ունեն կրթության և գիտության նկատմամբ: 1870 թ. գյուղում բացվել է 150 աշակերտներով նախակրթարան: 1884 թ. Խնապատում սկսեց գործել եկեղեցական-ծիսական դպրոց[177]: Ցարական իշխանությունների կողմից 1896 թ. դպրոցը փակվել է, իսկ 1908 թ.՝ նորից վերաբացվել: Խորհրդային տարիների սկզբին դպրոցը տարրական էր, 1928 թ. այն դարձավ յոթնամյա, իսկ 1940 թ. միջնակարգի կարգավիճակ ստացավ: 1978 թ. գյուղում նոր դպրոցական շենք է կառուցվել: Խորհրդային վերջին տարիներին դպրոցում սովորում էր 170–180 աշակերտ: 2001 թ. աշակերտների թիվը հասել էր 190-ի: 2015–2016 ուսումնական տարում դպրոցում սովորել է 112 աշակերտ:

Խնապատի միջնակարգ դպրոցն են ավարտել ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Խաչատրյանը, Երևանի ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի հեռակա բաժանմունքի դեկան, դոցենտ Կոլյա Բաղասյանը, ԱՀ ԱԺ պատգամավոր, ԱՀ գյուղատնտեսության նախկին նախարար Արմո Ծատրյանը, բարերարներ Բարսեղ Բեգլարյանը, Սամվել Գաբրիելյանը, գեներալ-մայոր Սերգեյ Գրիգորյանը և ԱՀ մշակույթի վաստակավոր գործիչ, հուշարձանագետ Սլավա Սարգսյանը: Արմատներով Խնապատից է տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ գիտության վաստակավոր գործիչ Միքայել Շահրամանյանը:

Խնապատի քաջորդիներն իրենց մասնակցությունն են բերել արցախահայության ազատագրական պայքարին և պատերազմին: Նրանցից 51 հոգի իրենց կյանքը նվիրաբերեցին հայրենիքի պաշտպանության գործին: Սանասար Գուրգենի Ծատրյանը (Ասկերանի գնդի փոխհրամանատարը) և Արթուր Էդիկի Հայրապետյանը հետմահու արժանացել են ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի, իսկ Աշոտ Ալյոշայի Պետրոսյանը հետմահու՝ ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի են արժանացել նաև Հրայր Յուրիի Հովսեփյանը և Արա Խորենի Գաբրիելյանը:

1995 թ. Խնապատի կոլտնտեսության լուծարումից հետո գյուղի բնակիչները զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:

Համայնքը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Գյուղում գործում է գյուղապետարան, դպրոց, ակումբ, գրադարան, երաժշտական դպրոց, փոստ, մանկապարտեզ, բուժկետ, 3 խանութներ:

[177] Հարությունյան Գ., Արցախահայ դպրոցը 5–19-րդ դարերում, Ստեփանակերտ, 2000, էջ 88:

Գյուղի բնակլիմայական պայմանները, մշակովի հողահանդակների առկայությունը, բնակչության աշխատասիրությունը, մայրուղիների և մայրաքաղաքին մոտ լինելու հանգամանքը նպաստավոր պայմաններ են ստեղծում բազմաճյուղ տնտեսության զարգացման համար:

Խնապատում 2018 թ. կար 244 տուն, 1048 բնակիչ[178]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԽԱՆՑՔ

Գյուղը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ պատմական Արցախի Խաչեն գավառի կազմում: Դիրքը նախալեռնային է, գտնվում է Ղարաբաղի լեռնաշղթայի Կուսանաց և Խաչախութի լեռնաճյուղերի միջլեռնային գոգավորության անտառաշատ հարթության վրա՝ Պատարա և Պիծի Պատարա գետերի ափին:

Գյուղն ունի փարթամ բուսականություն, և չորսբոլորը պատված է սաղարթախիտ անտառներով, որտեղ գտնվող ծառերի զգալի մասը պտղատու են:

Խանցքը Արցախի հնագույն բնակավայրերից է: Գյուղի տարածքում եղած Ք. ա. 2–1-ին հազարամյակներին առնչվող դամբարանաբլուրը և միջնադարյան գյուղատեղիների ու գերեզմանոցների մնացորդները դրա մասին են վկայում:

Գյուղի անվան ծագումնաբանության վերաբերյալ տարբեր մոտեցումներ կան:

Մի շարք ուսումնասիրողներ գտնում են, որ Խանցք նշանակում է խաների նստատեղ[179]: Մյուսներն էլ գտնում են, որ 11-րդ դարում սելջուկ-թուրքերը հրի են մատնել գյուղը և անվանումն էլ իբր ծագել է խանձել, այրել բառերից[180]:

Կարծում ենք, որ երկու մոտեցումներն էլ հիմնավոր չեն: Խանցքը՝ որպես հնագույն բնակավայր, ամենայն հավանականությամբ գոյություն է ունեցել նաև Քրիստոսից առաջ: Իսկ մեզ հայտնի է, որ մայրիշխանության շրջանում գոյություն է ունեցել լուսնի՝ հան-ի պաշտամունք:

Հնագույն շրջանում բնակավայրերի անունները կապված էին սրբությունների և երկրային պաշտամունքների հետ: Ուստի կարելի է ենթադրել, որ Խանցքն էլ նույնօրինակ ծագում ունի: Այսինքն կատարվել է հան-խան-Խանցք անցումը: Մեզ հայտնի է, որ հայերենում «ք» մասնիկը տեղանուն է մատնանշում:

Գյուղի անցյալի հետ կապված որոշ հուշեր պահպանվել են ժողովրդի շրջանում: Պատմում են, որ Լենկ-Թեմուրի արշավանքի ժամանակ գյուղը ոչ միայն ավերվել, այլ նաև բնակչությունը սրախողխող է արվել վայրագների կողմից: Դրանից հետո մոտակա գյուղերի բնակիչները նոր շունչ են հաղորդել հին բնակավայրին: Պատմում են

[178] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:

[179] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 137:

[180] Սարգսյան Ս., Արցախ. պատմաաշխարհագրական ճշգրտումներ, էջ 67:

նաև, որ այստեղ ժամանակի ընթացքում հաստատվում են նաև Բարգուշատից տեղափոխված հայերը, և բնակչության թիվը հասնում է 700-ի[181]: Նրանց մեծ մասը արհեստավորներ են եղել, դարբիններ, պայտարներ, քարտաշ-որմնադիրներ, հյուսներ: Այս հանգամանքը նպաստել է տվյալ ժամանակաշրջանում գյուղում արհեստագործության զարգացմանը: Ե. Իշխանյանը գրել է. «Խանցք գիւղում ծեր մարդիկ կային, հարիւրից բարձր տարիք ունեցող, պատմում էին, թէ բարգիւշատցի դարբինների զնդանների ձայնը լսելի էր լինում գիւղից բավական հեռու»[182]:

19-րդ դարի երկրորդ կեսին Խանցք գյուղի բարգուշատցիների մեծ մասը գաղթում են Շուշի և բնակություն հաստատում քաղաքի ամենաբարձր հատվածում, որտեղ հետագայում կառուցվում է կայազորի երկհարկանի շենքը: Բարգուշատցիները հաստատվում են Գավուրղալայից մինչև Քամու Ջաղաց կոչված թաղը: Բավական ընդարձակ այդ տարածությունը կոչվում էր Խանցկեցոց թաղ[183]:

Խանցկեցիները ընդհանուր առմամբ բնավորությամբ բռնկուն են ու դյուրաբորբոք: Ըստ ավանդության «Մելիք-Շահնազարը կարգադրել է, որ Ղարաբաղի իրաքանչիւր գիւղից մի խենթ բերեն իրա մօտ, իսկ Խանձքից՝ ով որ պատահի, նրան բերեն: Որոշ ճշմարտութիւն կա դրա մէջ, որովհետև թուրք քոչորները որևէ հայկական գիւղի հետ ընդհարում չէին ունենում, բայց Խանձքի սահմաններին կռիւը անպակաս էր լինում ամէն տարի»[184]:

Խանցքում ձևավորված կամավորական ջոկատի մարտիկները 1905-1907 թթ. հայ-թաթարական ընդհարումների և 1917-1920 թթ. Արցախի սահմանների պաշտպանության ժամանակ անձնազոհության օրինակներ են ցուցաբերել: Պատմում են, որ 1918 թ. հայերը առերես համաձայնում են թուրքերի ներկայացրած պայմաններին, այն է՝ զինաթափվել: Պատարայի բնակիչները գյուղի քյոխվայի սխալ բացատրությունից ճիշտ չէին հասկացել և ունեցած չունեցած զենքերը հավաքել տանում էին հանձնելու: Այս մասին տեղեկանում են խանցկեցիները և գալիս ճանապարհը փակում են: Երկու գյուղերի միջև բուռն վիճաբանություն է տեղի ունենում, և խանցկեցիներին հաջողվում է զենքը վերադարձնել, որն էլ 1918-1920 թթ. օգտագործվում է հայկական գյուղերի պաշտպանության համար: Նույնօրինակ սխրանքներ նրանք կատարել են նաև Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Պատերազմին Խանցքից մասնակցել է 138 մարդ[185]: Նրանցից 56-ը զոհվել են (55 տղամարդ և մեկ կին): 1983 թ. համագյուղացիների հանգանակած միջոցներով կառուցվել է նրանց հիշատակը հավերժացնող հուշարձան:

[181] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 469:
[182] Նույն տեղում:
[183] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 471:
[184] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 266:
[185] Арутюнян К., Участие воинов-армян Нагорного Карабаха и Северного Арцаха в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945), Ереван, 2009, с. 36.

Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Խանցքում 1930 թ. կոլտնտեսություն է կազմավորվել: 1962 թ. Խանցքի, Բաղարայի, Դաշպուլաղի և Դահրավի տնտեսությունները միանում են մեկ կոլտնտեսության մեջ և ստանում «Հոկտեմբեր» անվանումը: Կոլտնտեսության վարչության նախագահներ են աշխատել Դավիթ Ղահրամանյանը, Բախշի Ղահրամանյանը, Յուրի Արամյանը, Սլավա Գրիգորյանը, Արմո Աբրահամյանը: 1998 թ. կազմալուծվում է Խանցքի կոլտնտեսությունը և ստեղծվում են առանձին մենատնտեսություններ:

Խանցքի հայությունը ակտիվորեն մասնակցել է արցախահայության ազգային ազատագրական պայքարին:

1965 թ. ԼՂԻՄ ղեկավար աշխատողներից 15 հոգի նամակով դիմում են ԽՄԿԿ Կենտկոմ, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ և Նախարարների խորհուրդ՝ մարզի բնակչության անունից խնդրելով երկրամասը միավորել մայր Հայաստանի հետ: Նամակի տակ ստորագրել է նաև ծննդով խանցքից բանաստեղծ Գուրգեն Գաբրիելյանը: Նրան կուսակցական խիստ նկատողություն տվեցին և ազատեցին ԼՂԻՄ մշակույթի մարզային վարչության պետի պաշտոնից: Չնայած դրան, նա հավատարիմ մնաց իր գաղափարներին: 1988 թ. փետրվարի 10-ին արցախահայության երրորդ պատվիրակության կազմում մեկնեց Մոսկվա:

Հարազատ օջախները պաշտպանելու համար Վազգեն Գաբրիելյանի նախաձեռնությամբ Խանցքում ստեղծվել է կամավորական ջոկատ: Ասկերանի 4-րդ պաշտպանական շրջանի 34-րդ հրաձգային գումարտակի շարքերում Կարեն Արզումանյանի հրամանատարությամբ 33 խանցկեցիներ մասնակցել են ինչպես պաշտպանական, այնպես էլ հարձակողական մարտերի: Պատերազմի դաշտում զոհվել են 3 խանցկեցիներ՝ Գալերիկ Միքայելյանը, Կառլեն Պողոսյանը, Մառլեն Գաբրիելյանը: Կառլեն Պողոսյանը հետմահու արժանացել է ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի:

Միջնադարից սկսած Խանցքի եկեղեցում գործել է ծխական-եկեղեցական դպրոց: Խորհրդային տարիներին դպրոցը տարրականի կարգավիճակ ուներ: 1988 թ. այն դարձավ ութամյա: 2014-2015 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 24 աշակերտ և դասավանդում 12 ուսուցիչ:

1988 թ. դպրոցի տնօրեններ են աշխատել Լ. Մկրտչյանը և Է. Աբրահամյանը:

Խանցքը հայ ժողովրդին տվել է ազգային ազատագրական պայքարի երևելի դեմքեր:

Ծննդով խանցկեցի են Պետրոս Խանցկեցի կաթողիկոսը, Եղիշե Իշխանյանը, գրող հրապարակախոս Գուրգեն Գաբրիելյանը:

1672 թ. Գանձասարի Պետրոս կաթողիկոսը հատուկ ուղերձով դիմում է ցար Ալեքսեյ Միխաիլովիչին՝ խնդրելով հայերին իր հովանավորության տակ վերցնել: Փաստորեն Պետրոս կաթողիկոսը հայ իրականության մեջ առաջինն ուրվագծեց ռուսական կողմնորոշման նախաշավիղը, որին նոր քաղաքական ընթացք հաղորդեցին Իսրայել Օրին և Արցախի մելիքները:

Եղիշե Իշխանյանն էլ 1917–1920 թթ. դարձավ արցախահայության պետականության վերակերտողներից մեկը: Նա Արցախի Ազգային խորհրդի ղեկավարն էր:

Այդ պայքարի վերջնական հաղթանակի ապահովման գործում իր դերն է ունեցել գրող Գուրգեն Գաբրիելյանը, որի ստեղծագործությունները ոգեշնչման և հայրենասիրության նոր աղբյուր են հանդիսանում:

Խանցքում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանավոր հուշարձաններ:

Պատմական սկզբնաղբյուրներում Խանցք գյուղի առաջին հիշատակությունը վերաբերվում է 1560 թ.: Այստեղ արտագրված Ավետարանում խոսվում է նաև գյուղի մասին:

Գյուղի ամենահին հուշարձաններից է համարվում Վարդապետի խութ եկեղեցին (11–12–րդ դարեր), որը դժբախտաբար ավերված է: Վերոհիշյալ եկեղեցու շրջակայքում գտնվում է հին գերեզմանոց: Մեկ այլ պատմամշակութային արժեք կրող կառույց է Սբ. Հովհաննես եկեղեցին (13–րդ դար), որը գտնվում է գյուղի հյուսիս–արևելքում Ջոխտակ խաչից ներքև առվակի ձախ կողմում: Եկեղեցին կիսավեր վիճակում է: Եկեղեցու շրջակայքում փռված է հին գերեզմանատունը:

Գյուղի հարավարևմտյան մասում 2 մեծ խաչատապաններ կան՝ Ջուխտակ խաչը: Խաչերից մեկը թվագրված է 1230 թ., մյուսը՝ 1253 թ.:

Գյուղամիջի Սբ. Ստեփաննոս եկեղեցին կառուցվել է 1673 թ. Գանձասարի Պետրոս Խանցքեցի կաթողիկոսի կողմից:

Գյուղի արևմտյան կողմում՝ Շրրշոան խութի ստորոտում, կա քարակերտ մատուռ Անապատ անունով: Նրա շուրջ փռված են երկու գյուղատեղիներ: Եղիշե Իշխանյանի հորեղբոր՝ Աբրամբեյի երկհարկանի տունը նույնպես պատմամշակութային արժեք է:

Գյուղը հարուստ է քաղցրահամ աղբյուրներով, որոնցից նշանավոր են՝ Մրսելանց, Բաբունց, Մշակ, Անտակ ծովեն, Ջրմաջուր, Դերին, Հոպալուեն, Ղուրուղեն ջուր, Վարար ջուր, Ջալալ, Փիալ, Ցորտ ջուր, Շլորեն, Քոռ, Քարաղբյուր, Գանիմաթեն, Նեղ բանդեն, Ղրանց, Քյորջաբուլաղ, Հցոտեն, Բագանց, Միսալենց, Վերին, Ճիրմաձյուր, Հոտավերին աղբյուրները:

Գյուղի հանդամասերն են՝ Խալար ձեղաց, Անտակ ծով, Կռատափ, Խնձորաբաղ, Քշթաղեր, Ցորտ ճիրին տափ, Գյոլեն խութ, Ճակատ, Չբխչուն հարթ, Գյորգի շինատեղ, Ցիղապատ, Մուկուռան, Ճղարեն տափ, Վարդապետի խութ, Սուրբ Վանեսի տափ, Բղեգա քար, Կալեն քամակ, Մուխուրտանձուն տափ, Հարթխմհատ, Քյունադա գյունե, Ճնջքարեն գյունե, Մշակ աղբյուրին տափ, Ամուն կածան, Ջկոոտ, Թութեն բաղ, Պուշկեն թումբ, Սարե վեղեն փիրմա, Թուզնեն պրակ, Ծտմորեն քերծ, Խլաթա փոս, Սլալոտ, Ծպավանց ձեղաց, Ժեժտած ձեղաց, Խորուն ծոր, Պերմին ծոր, Բուդաղեն քերծ, Հճրկոտ ծմակ, Օրթա թալան, Հաբուց քերծ, Ծուվեն խութ, Պնրաձոր, Բախճա, Սզնոտ, Քամուն խաչ, Ջաքարին ծմակ, Նպատեն հարթ, Հցոտեն ծոր, Ափունց ծոր:

Խանցքում կան հետևյալ ազգատոհմերը՝ Աբրամբեյանք (Աբրահամյաններ), Կրրպետանք (Կարապետյաններ), Կյափունք, Պուղուսանք, Անդրունք (Գաբրիելյաններ), Խուրդանք (Ջաքարյաններ), Խուրջանք (Մարգարյաններ), Ջաքունք (Վերդյաններ), Մուքունք (Բեգլարյաններ), Իշխանանք (Իշխանյաններ), Վիտունք (Իսրայելյաններ, Պողոսյաններ), Մկրտեչանք (Հարությունյաններ), Ջյավունք (Մուսայելյաններ), Ցյուքունք (Մարգարյաններ), Դադունք (Ավանեսյաններ), Ղուլունք (Բաբայաններ), Կյուքունք (Գրիգորյաններ), Ռուշանանք (Առուշանյաններ), Հաբունք (Հարությունյաններ), Ծտորանք (Ասծատուրյաններ, Հովսեփյաններ), Սայունք (Հակոբյաններ), Մասունք (Ավանեսյաններ, Գրիգորյաններ), Ռքելանք (Առաքելյաններ), Սոլթունք (Գաբրիելյաններ):

Հետպատերազմյան տարիներին՝ 2002 թ., կառուցվել է գյուղի ջրագիծը, 2003 թ.՝ բուժկետը, կապիտալ վերանորոգվել է դպրոցը, որը ունի մարզահրապարակ: 2014 թ. կառուցվել է համայնքային կենտրոնի շենքը, որի մեջ տեղավորված են գրասենյակը, բուժկետը, հանդիսությունների սրահը և գրադարանը:

1823 թ. Ղարաբաղի պրովինցիայի կամերալ ցուցակագրության համաձայն գյուղը ուներ 17 ընտանիք[186]: 1832–1833 թթ. տվյալներով Խանցքում բնակվում էր 91 տղամարդ և 77 կին, ընդամենը 168 մարդ[187]:

1841 թ. հոկտեմբերին Ղարաբաղի թեմի վիճակագրական տվյալների համաձայն գյուղը ունեցել է 24 տուն՝ 56 արական, 49 իգական բնակչությամբ[188]: 1851 թ. մարտի տվյալներով Խանցքը ունեցել է 33 ընտանիք, 297 բնակիչ[189]: 1885 թ. այդ թիվը հասել էր 317 մարդու[190]:

Շուշիում կազմված վիճակագրական մի տեղեկության համաձայն՝ 1917 թ. գյուղում կար 669 մարդ[191]:

Խորհրդային տարիներին բնակչության թիվը կտրուկ սկսեց նվազել: 1989 թ. մարդահամարի տվյալների համաձայն գյուղի բնակչության թիվը կազմում էր 226 մարդ[192]:

Անկախության տարիներին բնակչության որոշակի աճ արձանագրվեց: 2018 թ. մարդահամարի տվյալներով գյուղում կար 62 տնտեսություն, 235 մարդ[193]: Բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն են:

186 Описание Карабахской провинции, составленное в 1823 г. …
187 ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 50, թ. 247:
188 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 43:
189 Հայկունի, նշվ. աշխ., էջ 57:
190 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8064, թ. 108:
191 ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 59:
192 Ամիրջանյան Թ., Արզումանյան Վ., Լեռնային Ղարաբաղի աշխարհագրություն, Ստեփանակերտ, 1994, էջ 102:
193 ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ էջ 1:

ԽԱՉԵՆ

Գյուղը տեղաբաշխված է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ Ստեփանակերտ–Գանձասար ճանապարհի վրա:

Գյուղի հյուսիսարևելյան մասում վեր է խոյանում Սուրունանց սարը, որի հովիտը Մրեն ձորն ու Պռավա հարթակն է: Իսկ նրանցից քիչ ներքև հոսում է Ճրի խառնուրդ գետակը, որը սկիզբ է առնում Թռավսարի, Շլորա հողի, Հաչա տանձին տափերում բխող աղբյուրներից: Գյուղի հյուսիսարևմտյան մասում է գտնվում Քյաքուլ սարը, որը շրջապատված է խիտ անտառներով:

Խաչենը Արցախի հնագույն բնակավայրերից է: Որոշ տեղեկություններով հին գյուղը գտնվում էր Ցեխ ծոր կոչվող վայրում՝ Խաչեն և Սրենի գետերի մոտ՝ Մթեն կամուրջի հարավային մասում: Այն ուներ Մաչին շեն անունը: Այստեղ տեսանելի են հնագույն բնակավայրի հետքերը, որոնք դարերի ընթացքում ծածկվել են խիտ անտառներով: Կարծիք կա, որ վերոհիշյալ վայրից բնակիչները տեղափոխվել են ներկայիս բնակավայր և գյուղը անվանել Սեյտի կամ Սայտի շեն:

Սեյտին, Բ. Ուլուբաբյանի կարծիքով, Հասան Ջալալ իշխանի տոհմի շառավիղներից է[194]: Գյուղի ծերերը պատմում են, որ Հասան–Ջալալյան տոհմի իշխան Աղբաստի մահից հետո 1456 թ. նրան փոխարինած Սայտին կամ Սեյտին հիմնել է վերոհիշյալ գյուղը:

Այս հանգամանքը հաշվի առնելով՝ կարելի է ասել, որ անիմաստ էր բնակավայրի հին անվան փոխարինելը Խաչենով:

1795–97 թթ. Աղա Մուհամադ խանի արշավանքներից հետո Արցախում բռնկված սովն ու մահտարժամը բնակչությանը ստիպեց իրենց ճակատագիրը որոնել Այսրկովկասի տարբեր գավառներում: Այդ ճակատագրին արժանացավ նաև Սեյտի շենի բնակչության մի մասը, որ բնակություն հաստատեց Բոլնիս–Խաչենում: Նրանց թվում էին նաև Ղազարոս Աղայանի հայրն ու մայրը:

Մեծ գրողը գրել է, որ իր հայրը՝ Աղանց Վերդին և մայրը՝ Հռիփսիմեն, 200 տարի առաջ Խաչեն գավառի Սեյտիշենից գաղթել են Բոլնիս–Խաչեն[195]:

Մինչև օրս Աղայանների հողատարածքին տեղացիները անվանում են Աղանց տափ, Աղանց ճղպրեն: Աղայանը պատմում է, որ լինելով հայրենի գյուղում, տեսել է Աղանց տափն ու ճղպրեն:

19–րդ դարի վերջերին այդտեղ է եղել նաև Ռաֆֆին:

Դեռևս 13–րդ դարից ներկայիս գյուղի տարածքում կառուցված է եղել Սբ. Ստեփաննոս եկեղեցին: Վերոհիշյալ եկեղեցին նախկինում կրում էր Սբ. Հովհաննես անունը: Այն 1900–1901 թթ. Ներսես Բեկ Սարումյանի կողմից հիմնովին վերակառուցվել ու դարձել է Սբ. Ստեփաննոս: 1939 թ. բոլշևիկները եկեղեցին վերափոխել են

[194] Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X–XVI դդ., Երևան, 1975, էջ 351, 354:
[195] Աղայան Ղ., Իմ կյանքի գլխավոր դեպքերը, Թիֆլիս, 1893, էջ 4:

և դարձրել ակումբ: Այդ ընթացքում նրանք քանդել են պարիսպներն ու գմբեթը: Հետագայում եկեղեցին ծառայել է որպես կոլտնտեսության պահեստ:

Արցախում 1991 թ. պետականության վերակերտումից հետո եկեղեցին հիմնանորոգվել ու ստացել է իր նախկին տեսքը և բավարարում է ժողովրդի հոգևոր պահանջները:

Հայկունին 1885 թ. գրել է, որ Սեյտիշենը 25 տուն ունի ու մի փոքրիկ և խղճուկ եկեղեցի[196]:

Խորհրդային տարիներին՝ 1932 թ., Սեյտիշենում կոլտնտեսություն է կազմավորվել: 1970–ական թվականներին Սեյտիշենի, Խնձրիստանի և Հիլիսի կոլտնտեսությունների հիման վրա առանձին սովխոզ է ձևավորվել: Հետխորհրդային տարիներին նորից սովխոզը վերափոխվել է կոլտնտեսության, որն էլ 1998 թ. դադարեցրել է իր գործունեությունը:

Տարբեր տարիներին տնտեսությունը ղեկավարել են Իսա Գաբրիելյանը (Սարինյան), Բաբա Մկրտումյանը, Խուրշուդ Իսրայելյանը, Մուրադ, Խաչատուր, Նարիման Գրիգորյանները, Անդրանիկ Գաբրիելյանը, Բորիկ Բալայանը, Ռաֆայել Շաքարյանը:

Հայրենական մեծ պատերազմին Խաչեն և Ուլուբաբ գյուղերից ռազմաճակատ մեկնեցին 250 երիտասարդներ: Նրանցից 90–ը զոհվել են: 1965 թ. գյուղում նրանց հիշատակին հուշարձան է կառուցվել:

Խաչենի հայությունն իր արժանի ավանդն ունեցավ արցախյան ազատագրական պատերազմը հաղթական ավարտին հասցնելու գործում: Մարտական գործողություններին մասնակցել են 42 հոգի, զոհվել են 9 հայորդիներ:

Սլավիկ Խոսրովի Ստեփանյանը հետմահու արժանացել է ԱՀ «Մարտական խաչ» 2–րդ աստիճանի շքանշանի:

19–րդ դարի կեսերին Սբ. Հովհաննես եկեղեցուն կից գործել է դպրոց, որտեղ սովորում էր 15 աշակերտ: Արցախի թեմի կոնսիստորիայի Էջմիածնի Սինոդին ներկայացրած վիճակագրական տվյալների համաձայն 19–րդ դարի 70–ական թվականներին Սեյդիշենում բացվել է նախակրթարան՝ 25 աշակերտով[197]:

1885 թ. կաթողիկոսի թույլտվությամբ Սեյդիշենում բացվել է մեկդասյա ծխական դպրոց, որն ունեցել է 30 աշակերտ, մեկ բաժանմունք և մեկ ուսուցիչ: 1888–1889 ուսումնական տարում դպրոցն ունեցել է 2 բաժանմունք: Դպրոցը պահվում էր նաև Տեր–Անդրեասյան–Սարումյան 3 եղբայրների 150 ռ. նվիրատվության հաշվին, որի համար նրանք արժանացել էին կաթողիկոսի գովասանական կոնդակին:

1990–ական թվականներին դպրոցը փակվում և վերաբացվում է 1907–1908 ուսումնական տարում: 1915 թ. դպրոցն ուներ 2 բաժանմունք, 45 աշակերտ, 1 ուսուցիչ:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո գյուղում գործել է տարրական դպրոց: 1934 թ. մինչև 2001 թ. դպրոցը տեղակայված է եղել Սարումյանների տանը:

[196] Հայկունի, նշվ. աշխ., էջ 58:
[197] «Կրթությունը և գիտությունը Արցախում», մայիս, Երևան, 2015, էջ 15:

Այն ժամանակի ընթացքում վերակառուցվել է: Դպրոցը այդ տարիներին միջնակարգի կարգավիճակ ուներ: 1988–1989 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 156 աշակերտ, դասավանդում՝ 24 ուսուցիչ: Ցավոք տարեցտարի աշակերտների թիվը նվազել է: 2004–2010 թթ. դպրոցում սովորում էր 45–50 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ: 2018–2019 ուսումնական տարում դպրոցում կար 50 աշակերտ: 2001 թ. գյուղում դպրոցական նոր շենք է կառուցվել:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Անդրեյ Պողոսյանը, Գևորգ Ղուլյանը, Արտյուշա Հովհաննիսյանը, Սուրեն Աղաբալյանը, Անաստաս Հովհաննիսյանը, Ալվինա Գրիգորյանը, Սուրբիկ Իսրայելյանը, Գրիշա Ղազարյանը, Համեստ Հայրապետյանը:

Ծննդով Խաչենից են բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ անդամ Սերգեյ Սարինյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սևակ Արզումանյանը, տնտեսագիտության դոկտոր Վլադիմիր Առուստամյանը, Սոցիալիստական աշխատանքի հերոս Գոհար Սարինյանը:

Խաչենում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային արժեք ունեցող հուշարձաններ՝ Ճոխտակ եղցեն (5–6–րդ դարեր), Պտկես բերք վանքը (13–17–րդ դարեր), Սբ. Ստեփաննոս եկեղեցին (13–21–րդ դարեր), 12–13–րդ դարերի խաչքարեր:

Խաչենի տարածքում են գտնվում Բաղեն, Դերին, Կարմիր, Օխնը, Տնջրեն, Թխկե, Ջիվանեն, Վահանեն, Պռավեն, Երե ջուր, Սպիտակ, Նուվավուր, Մշհավա, Վժնակ, Սաքիապան, Լուսավերին, Ջուլվեն աղբյուրները:

Խաչենի նշանավոր հանդամասերն են՝ Սզնուտը, Մլքումանց քոլը, Ռուխալենջին տափը, Կրասեն ծորը, Մուրադա հարթը, Լենջին տափը, Գարաժին տափը, Կինջ հողը, Սաքին քերծը, Ըվաքին քերծը, Քյաքուլ սարը, Շառ քարը, Պռավա հարթը, Կյարին ծորը, Թռվասերը, Շլորա հողը, Ռուխա լենջը, Սմբաթեն սրոը:

Խաչենում շարունակում են ապրել՝ Թուրանց, Միլիսեթանց, Սիրինանց, Սուբանց, Բիլգանդունց, Շիփերանց, Դադանց, Ըղրջանանց, Մուզունց, Բլանց, Ըպրեսանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Համայնքը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, ինտերնետ ծառայությունը, անլար հեռախոսակապը հասանելի են բնակչությանը:

Խաչենում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, մանկապարտեզ, բուժկետ:

1901 թ. գյուղն ուներ 372 բնակիչ[198], 1987 թ.՝ 117 տուն, 343 բնակիչ[199], 2018 թ.՝ 94 տուն, 326 բնակիչ[200]: Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[198] Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ., էջ 407:
[199] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 129:
[200] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 1:

ԽԱՉՄԱՉ

Բնակավայրը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մարտունի և Ասկերան շրջանների սահմանամերձ լեռնաճյուղերից մեկի հարավահայաց անտառածածկ լանջին:

Խաչմաչը Վարանդայի հինավուրց գյուղերից մեկն է: Բնակավայրի շրջակայքում միջնադարյան գյուղատեղիներից պահպանված մնացորդները դրա մասին են վկայում: Մասնավորապես տների հետքեր են պահպանվել Թղուփ, Թալար, Նավավրդ տեղամասերում:

Ներկայիս գյուղի ծագման վերաբերյալ տարբեր ավանդազրույցներ են մեզ հասել: Պատմում են, որ Շահ Աբաս Առաջինի ժամանակ պարսկահպատակ հայկական գավառներից երեք եղբայրներ՝ Խաչին, Սարոն և Սարգիսը, չդիմանալով Իրանի տիրակալի ոտնձգություններին, ընտանիքներով տեղափոխվում են Արցախ, որպես ապահով վայր: Սարոյի կառուցած գյուղը ստացել է Սարուշեն, Սարգսինը՝ Սարգսաշեն, իսկ Խաչունը՝ Խաչմաչ անունները: Ասում են՝ երեք գյուղերի բնակիչները միասնաբար որոշում են իրենց բնակավայրերի արանքում կառուցել Սբ. Ամենափրկիչ եկեղեցին[201]:

Խաչմաչի տարեցների մոտ պահպանված մեկ այլ ավանդության համաձայն, քանի որ այդ տարածքներում դարերի ընթացքում միայն հայեր են ապրել, հետևաբար աստծո ողորմությամբ հրեշտակը գյուղի չորս կողմերում խաչեր է կառուցել և բնակավայրը թողել խաչերի արանքում՝ ըստ Արցախի բարբառի՝ «խաչերեն մաչեն»: Այդտեղից էլ գյուղը ստացել է Խաչմաչ անունը[202]:

Իրականում ներկայիս բնակավայրից 1–2 կմ հեռավորության վրա գտնվող գյուղերից բնակիչները տեղափոխվել և հաստատվել են ավելի բարենպաստ միջավայրում: Հետագայում որոշ ընտանիքներ այստեղ են տեղափոխվել Բարգուշատից, Քյաթուկից, Բերդաշենից և Հարավից:

1651 թ. Խաչմաչի բնակիչները կառուցել են Սբ. Ստեփանոս եկեղեցին: Ըստ պահպանված արձանագրության եկեղեցին կառուցել են «... ուստա Յուսեփ և Գևորգ» քարագործ վարպետները: Թադևոս քահանայի խնդրանքով Աղեքսանդր եպիսկոպոսի օրհնված վերոհիշյալ եկեղեցու Ավետարանը պահվել է Շուշիի Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցում:

Խաչմաչի Սբ. Ստեփանոս եկեղեցու քահանայի մոտ եղել է երկու գրագիր սաղմոս: Նրանցից մեկը՝ մագաղաթյա և գեղագիր, ունեցել է նաև Աթանաս եպիսկոպոսի, Դավիթ մարգարեի մեկնությունը: Վերջին չորս ձեռագրերի ճակատագրերը հայտնի չեն[203]:

[201] Սարգսյան Ա., Արցախի բանահյուսությունը, Երևան, 2015, էջ 200:
[202] Սարգսյան Ա., Արցախի բանահյուսությունը, էջ 200, Էփրիկեան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, գիրք Ա և Բ, Վենետիկ, 1907, էջ 149: Բարխուդարեանց Մ., Արցախ, Բագու, 1895, էջ 99:
[203] Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց կաթողիկոսութեան մայր աթոռոյ սրբոց Էջմիածնի., Ս. Էջմիածին, յունիս, 2015, էջ 107:

Նույն եկեղեցու՝ 100 կգ քաշ ունեցած զանգը տեղափոխել են Բաքու և որպես ադրբեջանական ժողովրդի «պատմական հնություն»՝ ցուցադրվում է պատմության թանգարանում: 2007 թ. բարերար Սեյրան Կարապետյանի միջոցներով եկեղեցին վերանորոգվել է:

Խաչմաչի երիտասարդները 1905–1907 թվականների հայ-թաթարական ընդհարումների ժամանակ հայ կամավորականների շարքերում պաշտպանել են Վարանդայի գյուղերը: Առանձնապես տպավորիչ է նրանց 1918–1920 թթ. պայքարը: Խաչմաչեցի Հարություն Մկրտչյանը և ցարական բանակի նախկին սպա, պորուչիկ Խաչատուր Հայրումյանը գյուղում կազմակերպում են ինքնապաշտպանական ջոկատ և Թևան Ստեփանյանի օգնությամբ զինվում ու պաշտպանում հայկական գյուղերի անդորրը[204]:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո գյուղը մտցվել է Ստեփանակերտի շրջանի կազմի մեջ, իսկ 1978 թ. այն դառնում է նոր կազմավորված Ասկերանի շրջանի բնակավայրերից մեկը:

1930 թ. Խաչմաչում կազմակերպվում է կոլտնտեսություն: 1951 թ. կատարվում է կոլտնտեսությունների խոշորացում: Խաչմաչի, Վերին ու Ներքին Սզնեքների և Կարմիր գյուղի տնտեսությունների հիման վրա ստեղծվում է «Կոմունիզմ» կոլտնտեսությունը: 1988 թ. կատարվում է կոլտնտեսությունների ապախոշորացում: Խաչմաչի կոլտնտեսությունը առանձնանում է և կրում Նադեժդա Կրուպսկայայի անունը: 1998 թ. կազմալուծվում են կոլտնտեսությունները, և ստեղծվում են մենատնտեսություններ: Խորհրդային տարիներին կոլտնտեսությունը ղեկավարել են Գերասիմ Դանիելյանը, Մելիք Հայրապետյանը, Վարդան Պողոսյանը, Անդրանիկ Կարապետյանը, Գրիշա Համբարձումյանը, Ջալալ Առուշանյանը, Ժորա Պետրոսյանը, Սուրեն Մելիքսեթյանը, Օղուլ Քարամյանը, Հենրիխ Խաչատրյանը, Արարատ Պետրոսյանը:

Հայրենական մեծ պատերազմին Խաչմաչից մասնակցել է 105 մարդ, զոհվել՝ 66-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել, որը բացվել է 1971 թ. մայիսի 9-ին:

Խաչմաչի երիտասարդությունը ակտիվ մասնակցություն է ունեցել արցախահայության ազատագրական պատերազմին: Նրանցից 5 քաջեր՝ Վանյա Մնացականյանը, Աշոտ Հայրապետյանը, Գառնիկ Հարությունյանը, Կամո Մնացականյանը իրենց մատաղ կյանքն են դրել հայրենիքի զոհասեղանին: 2003 թ. հուլիսի 2-ին գյուղում տեղի ունեցավ արցախյան պայքարում զոհված խաչմաչցիների հիշատակը հավերժացնող հուշարձանի բացումը:

1873 թ. Խաչմաչում գործել է ծխական դպրոց՝ 27 աշակերտով, որտեղ դասավանդել է 1 ուսուցիչ: 1903 թ. գյուղի բնակիչների միջոցներով կառուցվել է դպրոց: 1915 թ. դպրոցում սովորում էր 45 աշակերտ և դասավանդում 1 ուսուցիչ[205]: 1920–1962 թթ. գյուղում գործել է յոթնամյա, 1963–1979 թթ.՝ ութամյա, 1980–1986 թթ.՝ տարրական,

[204] «Ազատ Արցախ», 19 ապրիլի, 2012:
[205] ՀԱԱ, ֆ. 56, g. 1, գ. 43, թ. 49:

1986–1992 թթ.՝ ութամյա, 1992 թ.՝ միջնակարգ դպրոց: Որպես թիկունքային գյուղ Խաչմաչի դպրոցում արցախյան պատերազմի տարիներին սովորել են Ստեփանակերտից, Մարտունուց, Մարտակերտից, Բերդաձորից այդտեղ ապաստանած դպրոցահասակ երեխաներ:

Խաչմաչի դպրոցի տնօրեններ են աշխատել Առաքել Չալյանը, Տիգրան Գաբրիելյանը, Քրիստափոր Պետրոսյանը, Իշխան Գասպարյանը, Սավադ Կարապետյանը, Գաբրիել Պետրոսյանը, Արփիկ Թովմասյանը, Ավանես Մնացականյանը, Սոնյա Ղազարյանը, Վանյա Ղազարյանը, Շահեն Ավետիսյանը Սվետլանա Դանիելյանը, Սերոբ Մնացականյանը:

Խաչմաչի դպրոցի շրջանավարտ է հողագիտության դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Հայրապետյանը: Ծագումով Խաչմաչից են ԱՀ նախագահ Արայիկ Հարությունյանը, ռեժիսոր Ջիվան Ավետիսյանը, ԱՀ ֆինանսների նախարար, ներկայումս ԱՀ Ազգային ժողովի պատգամավոր Արթուր Հարությունյանը:

Խաչմաչում և նրա շրջակայքում են գտնվում Շոշկավանքը, որը կառուցվել է 12–13-րդ դարերում, այնուհետև հիմնովին վերակառուցվել 17-րդ դարում և 1999 թ., Սբ. Ստեփանոսի եկեղեցին, Սուրբ Վանես վանքը, Հարավա Եղցի եկեղեցին, միջնադարյան խաչքարեր, որոնցից են Հունի խաչը, Տանձի խաչը, Կաղնու խաչը: Խաչմաչում նշանավոր են Թղուփ, Կույրաղբյուր, Ծլոկ, Ղազախյուրդ, Քարեն, Երե ձյուր, Ցորտ, Թոխ, Կյարմուր, Նադար, Կենե, Սարգիսին, Կետե ձյուր, Քարե ձյուր աղբյուրները:

Խաչմաչի հին ազգատոհմերից են՝ Ղըզարանք, Ղահրունք, Ափունք, Բախշունք, Մընըցկանանք, Գյուլունք, Համբարձումանք, Հըրըվեցեք, Թյունունք, Քյասունք, Մրսելանք, Ջարգարանք, Կըրըբեդանք, Ըղամանք, Դալլաքանք, Ըփըրհամանք, Տընըյելանք, Հիրումանք, Վիտիսանք:

1823–1833 թթ. Խաչմաչում ապրում էր 13 ընտանիք[206]: 1841 թ. տվյալներով գյուղում ապրում էր 18 ընտանիք՝ 72 բնակիչներով, որոնցից 35-ը արական և 37-ը իգական սեռի ներկայացուցիչներ[207]: 1851 թ. գյուղում ապրում էր արդեն 175 մարդ[208], իսկ 1873 թ.՝ 338 մարդ[209]: 1885 թ. Խաչմաչում կար 80 ծուխ, 409 մարդ[210]: 1890 թ. գյուղում կար 62 ծուխ, 510 բնակիչ[211]: Ըստ 1897 թ. համառուսաստանյան մարդահամարի տվյալների Խաչմաչում ապրում էր 411 բնակիչ, որից 210-ը՝ տղամարդ, 201-ը՝ կին[212]:

[206] Описание Карабахской провинции, составленное в 1823 г. ..., с. 157; ՀԱԱ, ֆ. 93, g. 1, գ. 49:
[207] ՀԱԱ, ֆ. 56, g. 1, գ. 305, թ. 43:
[208] ՀԱԱ, ֆ. 56, g. 1, գ. 2596, թ. 10:
[209] ՀԱԱ, ֆ. 56, g. 1, գ. 6416, թ. 120:
[210] Հայկունի, նշվ. աշխ., էջ 90; ՀԱԱ, ֆ. 56, g. 1, գ. 8064, թ. 108:
[211] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[212] РГИА, ф. 1290, оп. 4, д. 645.

Հաջորդ տասնամյակի ընթացքում բնակչության թիվը համարյա անփոփոխ է մնում: 1906 թ. տվյալներով գյուղի բնակչության թիվը կազմել է 422 մարդ[213]:

20-րդ դարասկզբին Խաչմաչի բնակչության թիվն աճեց: 1917 թ. այն կազմեց 657 մարդ[214]:

1921 թ. տվյալներով գյուղում կար 102 ընտանիք, 545 բնակիչ, որից 276-ը՝ կին, 269-ը՝ տղամարդ[215]: 1926 թ. այդ թիվը կազմել է 87 ընտանիք՝ 435 մարդ, որից 216-ը՝ տղամարդ և 219-ը՝ կին[216]: 1987 թ. Խաչմաչում արդեն կար 56 տուն՝ 185 բնակիչ[217]: 2018 թ. Խաչմաչում ապրում էր 240 մարդ[218]:

Վերջին տարիներին մեծածավալ աշխատանքներ են կատարվել գյուղի սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելու համար: Գյուղը գազաֆիկացվել է, կառուցվել են նոր ջրագիծ, համայնքային կենտրոն, որտեղ գործում են գյուղապետարանը, բուժկետը, գրադարանը, համակարգչային սենյակը և 150 հոգու համար նախատեսված միջոցառումների դահլիճը: Սալահատակվել են գյուղամիջյան ճանապարհները: 2009 թ. ստեղծվել է «Խաչմաչ» հիմնադրամը, որը գյուղում իրականացնում է բազմաթիվ ծրագրեր, որոնք խթանում են ինչպես ծնելիության աճին, այնպես էլ գյուղի հետ կապված հարցերի լուծմանը:

ԽՆԱԾԱԽ

Գյուղը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին Խաչենի գավառում: Խնածախը տեղակայված է երկու գետերի արանքում: Գյուղի հարավարևելյան մասով հոսում է Տրակետ գետը, իսկ արևելյան սահմանը հասնում է Բալլուջա (Մեղրագետ) գետին: Բուն բնակավայրի աշխարհագրական սահմաններն են՝ Պուլուր թումբը, Ծակ քերծը, Կիմիրտեղին ծորը և Դիրաքին ծորը:

Խնածախի շրջակայքը նախկինում խիտ բնակեցված է եղել: Գյուղի հյուսիսային կողմում պահպանվել են բնակավայրի հետքեր, որին ժողովուրդը անվանում է Շիրատեղ-քաղաքատեղ: Խնածախի վերևի մասում՝ բնակավայրից ոչ շատ մեծ հեռավորության վրա են գտնվում հին գերեզմանատունը (Քյոհնա հանգիստ), Յուղուրլուի խաչարձանը (Խաչարձանը ներկայումս չի պահպանվում): Տեղացիները տեղանքը անվանում են Յուղուրլուի կապ: Նրանից քիչ հեռու էլ գտնվում է Ծակ քարը: Այդ ամենից վերև՝ մի սարահարթում, պահպանվում են հին գյուղատեղիի, հանգստարանի, եկեղեցու ավերակներ: Խանածախից ոչ շատ մեծ հեռավորության վրա են գտնվում Տրակետի ակունքներում գտնվող անանուն գյուղատեղին, ինչպես նաև Ջալալ-Հասան, Մլրկիվանց կամ Գիվրմատեղ գյուղատեղիները: Բուն Խնածախի տեղն էլ եղել է Փոքր Խմիատ (բառացի նշանակում է անտառից մաքրած բացատ — Վ. Բ.) բնակավայրը[219]:

1686 թ. Սյունիքի Խանածախ գյուղից մի քանի ընտանիքներ տեղափոխվում են Ջրաբերդ, իսկ այդտեղից էլ Փոքր Խմիատ: Ինչպես 19-րդ դարի հեղինակ Ապրես Բեկնազարյանցն է գրել. «Շատ չանցած փոքր Խմիատ անունը ևս տեղի տվեց Խնածախ անվանը»[220]:

Գյուղը օրեցօր բարգավաճում է: 18-րդ դարի վերջերին մի երկարատև պայքար է սկսվում Խնածախի և հարևան հայկական գյուղերի ու Շուշիում ծվարած Իբրահիմ խանի միջև: Խանը ձգտում էր Շուշիի շրջակայքում ստեղծել մահմեդականներից կազմված նոր բնակավայրեր: Խնածախի հայերը եթե ցերեկը շինում էին գոմեր, մարագներ, կալեր, մշակում արտեր, ապա գիշերները, գնդեր դարձած, հարձակվում էին անկոչ հյուրերի վրա, պաշտպանելով հայրենի երկրամասը: Իբրահիմ խանը նրանց պատժելու նպատակով երեք հազարանոց զորք է ուղարկում՝ Խնածախն ու Բալլուջան ավերելու: Սակայն հայ կտրիճները բոլորին ոչնչացնում են, իսկ հրամանատարին գերում և ազատ արձակելով՝ ուղարկում են Շուշի՝ պահանջելով խանին հաղորդել. «Քեզ ուղարկող Ճրո-խանին կասես Ճրո-խան, դո՛ւ Պարսկաստանից հայ գլուխ չես բերել, որ մեզանից գլխահարկ ես պահանջում, Շահմար-Ղավալը (հայկական ջոկատների հրամանատարը — Վ. Բ.,) մի կտոր անգամ քեզ չի տա, որ աչքիդ քցես: Դո՛ւ հետապնդեցիր հիմնահատակ կործանել Պալլուջան և Խնածախը, բայց ջնջել տվեցիր քո երեք հազարանոց զորքը»[221]: Երբ Իբրահիմ խանը հուսահատ հարցնում է Մելիք-Շահնազարից, թե ինչպես անի, որ հաղթի Խնածախի և Բալլուջայի հայերին, նա պատասխանում է. «Խնածախի և Պալլուճայի քաջերն այնքան համամիտ են, համակամ, հանդուգն և արյունարբու հրեշներ են, մինչև անգամ թռչունները սարսափից չեն թռչում դրանց օդում և գիշատիչ գազանները չեն համարձակվում անցուդարձ անել դրանց անտառներով: ... Առածն ասում է. «Կաքավի ձվից ելած ձագը հավ թուխսկանի կրթկրթոցին ականջ չի դնի»: Ավելի լավ է քաղցրությամբ վարվել դրանց հետ, թերևս կարողանանք մի կերպ որսալ՝ սիրաշահելով և սպասելով ամենահարմար ժամանակի»: Մելիք-Շահնազարի սույն խոսքերով վերջացան Ճրո-խանի կողմից հայտնի կամ գաղտնի հարձակումները»[222]:

[213] ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 265, թ. 144:

[214] ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 59, թ. 1-6:

[215] Карапетян М., Этническая структура населения Нагорного Карабаха в 1921 г. (по сельскохозяйственной переписи Азербайджана 1921 г.), Ереван, 1990, с. 12.

[216] Азербайджанское центральное статистическое управление, список населенных мест Азербайджана по данным переписи населения 1926 года А. О. Нагорного Карабаха, Баку, 1927, с. 157.

[217] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 135:

[218] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:

[219] Բեկնազարյանց Ա., Գաղտնիք Ղարաբաղի, Ստեփանակերտ, 2018, էջ 99:

[220] Նույն տեղում:

[221] Բեկնազարյանց Ա., նշվ. աշխ., էջ 100, 104:

[222] Բեկնազարյանց Ա., նշվ. աշխ., էջ 100, 101:

1795 թ., երբ Աղա Մուհամմադ շահի զորքերը, Պարսկաստանից հասնելով Շուշի, չկարողացան գրավել այն, այդ ժամանակ նրանք թալանի նպատակով սկսեցին ասպատակել և ավերել բերդաքաղաքի շրջակայքում գտնվող գյուղերը:

Խնածախի և Բալլուջայի քաջերից բաղկացած փոքրաքանակ զորաջոկատը Ծակ քարի շրջակայքում ջախջախիչ պարտության մատնեց զավթիչներին[223]:

19-րդ դարի վերջերին Խնածախում կար 85 տուն, 563 բնակիչ: Ժամանակի ընթացքում Խնածախի որոշ ընտանիքներ տեղափոխվել և հաստատվել են Կապաղակ գավառի Ցաղուբլու (Հակոբայ) գյուղում և Հաթերքում[224]:

1813 թ.՝ Արցախը Ռուսաստանին անցնելուց հետո, ցարական արքունիքը ոչ միայն վերացրեց Գանձասարի կաթողիկոսական աթոռը և մելիքական դասը, այլև որոշակի արտոնություններ տրվեց նախկին խանական ընտանիքների անդամներին: Թաթար խաներն ու բեկերը, զարտուղի ճանապարհներով, կաշառքներով և շողոքորթությամբ սիրաշահելով ռուս աստիճանավորներին, տեր էին դառնում հայկական գյուղերին և մելիքների նախկին տիրույթներին:

Այսպես, 20-րդ դարի սկզբներին Խաչենի գավառի 35 գյուղերից 19-ը պատկանում էր թաթար բեկերին: Եթե ամեն մի հայ մելիք լավագույն դեպքում երկու կամ երեք գյուղերից էր եկամուտ ստանում, ապա Ջաֆար աղա Ջիվանշիրը՝ 23 գյուղերից[225]:

Նմանօրինակ վիճակում էր նաև Խնածախը: Մինչև 1905 թ. գյուղը եղել է Մահմադ աղայի լծի տակ: 1905 թ. խնածախցիները ապստամբեցին և հրկիզեցին աղայի տունը:

20-րդ դարի սկզբներին Խնածախը դարձել էր հայ-թաթարական ընդհարումների թատերաբեմ: Գյուղի երեխաները, կանայք և ծերերը երբեմն ստիպված էին ապաստանել Ցեխ-ծորի անտառներում և հարակից հայկական գյուղերում:

Նման իրավիճակում գյուղը ապրել է նաև խորհրդային առաջին տարիներին:

Այդպիսի մի ընդհարում 1935 թ. հուլիսին տեղի է ունեցել Խնածախի հայերի և քոչվորների միջև: Վերջիններիս անասունների հոտերը ոտքի կոխան էին դարձրել հայ գյուղացիների դաշտերն ու այգիները: Չորս տարի անց՝ 1939 թ. մայիսի 7-ին, Ադրբեջանի կոմկուսի կենտկոմն անդրադառնում է այս հարցին և այդ ամենի մեջ մեղավոր է ճանաչում Խնածախի կոլտնտեսության նախագահ Սանթուր Սաֆարյանին: Միր Ջաֆար Բաղիրովի հրահանգով վերջինիս ազատազրկում են[226]:

19-րդ դարի վերջերին Խնածախում շուշեցի Դանիել Ահարոնյանը մետաքսամանման գործարան էր կառուցել[227]:

Խնածախում 1930 թ. փետրվարի 16-ին կազմավորվել է կոլտնտեսություն, որը կրել է «Մուրճ և մանգաղ» անունը: 1962 թ. հունվարից Խնածախի, Բալլուջայի և Մեհ-

[223] Հայկունի, նշվ. աշխ., էջ 30:
[224] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 116, 264:
[225] Заварян С., Экономические условия Карабага и голодъ 1905-1907 гг., С. Петербургъ, 1907, с. 9.
[226] ԱՀ պետարխիվ, ֆ. 268, ց. 1, գ. 19, թ. 9, Բալայան Վ., Դրվագներ..., էջ 246-247:
[227] Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ 1, էջ 311-312:

տիշենի կոլտնտեսությունները միավորվեցին և կազմակերպական տեսանկյունից դարձան խորհտնտեսություն: 1989 թ. սովխոզը նորից վերածվեց կոլտնտեսության: 1998 թ. կոլտնտեսությունն էլ լուծարվեց և ստեղծվեցին մենատնտեսություններ:

Խնածախի տնտեսությունը տարբեր տարիների ղեկավարել են Ռուբեն Դանիելյանը, Հակոբ Ավագյանը, Սանթուր Սաֆարյանը, Արշակ Պետրոսյանը, Աբավոն Զաքյանը, Բենիկ Գասպարյանը, Սուրեն Մելքումյանը, Գուրգեն Կարապետյանը, Միհր Նիկողոսյանը:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 136 մարդ, զոհվել է 66-ը: Նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան:

Արցախյան ազատագրական պատերազմին Խնածախից մասնակցել է 96 հոգի: Նրանցից 9 ազատամարտիկներ՝ Արմեն Ավագյանը, Համլետ Մկրտումյանը, Վալերի Բաբայանը, Գավրուշա Արզումանյանը, Մարտիկ Պետրոսյանը, Գառնիկ Սարգսյանը, Վաչագան Խաչատրյանը, Նելսոն Խաչիյանը, Իվան Բաբայանը զոհվել են:

ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանների հետմահու արժանացել են Սամվել Միրզոյանը, Սամվել Կաֆյանը, Վաչագան Խաչատրյանը:

Խորհրդային առաջին տարիներին գյուղում գործել է տարրական դպրոց, որը տեղակայված էր Թառունց և Ավանանց տներում: 1934 թ. Խնածախում դպրոցական նոր շենք է կառուցվել: 1936-37 ուսումնական տարվանից դպրոցը յոթամյայի, 1959-1960 ուսումնական տարվանից՝ ութամյայի, իսկ 1990-1991 ուսումնական տարվանից միջնակարգի կարգավիճակ է ստացել:

1960-1980-ական թվականներին դպրոցում շուրջ 120 աշակերտ էր սովորում: 2014-2015 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 68 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ: 1994 թվականից դպրոցը կրում է գյուղի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատար, արցախյան գոյամարտի նահատակ Արմեն Ավագյանի անունը:

1922 թվականից առ այսօր տարբեր տարիների դպրոցը ղեկավարել են Իշխան Առաքելյանը, Բախշի Բաբաջանյանը, Հրաչյա Մկրտչյանը, Վռամ Միքայելյանը, Վիկտորիա Ավանեսյանը, Ներսես Առաքելյանը, Անդրեյ Պողոսյանը, Ջհանգիր Խաչատրյանը, Գուրգեն Խանումյանը, Սերյոժա Բաղդասարյանը, Սողոմոն Սառաջյանը, Վաղո Այվազյանը, Արմենակ Բարխուդարյանը, Լամբարոն Հարությունյանը, Արամ Աբարյանը, Չերքեզ Կարապետյանը, Ալեքսանդր Միրզոյանը, Եղիշե Ավագյանը, Գյուլչորա Արզումանյանը:

Ծննդով Խնածախից են ազգագրագետ, հոգևորական Մակար եպիսկոպոս Բարխուդարյանը, բանասիրական գիտությունների դոկտորներ Առաքել Առաքելյանը, Սմբատ Ավագյանը, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Պետրոսյանը:

Խնածախում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային բազմաթիվ հուշարձաններ՝ գյուղատեղի՝ Քաղաքատեղ (12-13-րդ դարեր), Պարուր սրբատեղին (17-18-րդ դարեր), միջնադարյան գերեզմանոց, Սբ. Աստվածածին եկեղեցին

(1740 թ.), 1858 թ. գյուղից գտնված հելենիստական շրջանի սուր, որը պահվում է Պետերբուրգի Էրմիտաժում, միջնադարյան խաչքարեր:

Համայնքի տարածքում հայտնի են Վերին, Աթունց, Պանուր, Մեծ, Պիծի, Աբուլին, Եգանին, Թյունգին, Ջուղին աղբյուրները:

Գյուղի նշանավոր հանդամասերն են՝ Միջավեղը, Ջիրգարին թալան, Դալուն տախտը, Կիրատեղը, Շահրամանանց տափը, Աշղանց տափը, Սարդուշլաղը, Խութին քամակը, Արզումանանց տափը, Շիհրիտեղին յալը, Ղուբանին ծորը, Թիփին տակը, Պառավլան, Վրցակա խութը, Դիհնակին կլոխը, Պանորը, Քոլավաթը, Քրծպետերը, Ննգյունց ծորը, Մեհրունց ծորը, Ցարադուրին խութը:

Գյուղում ապրում են՝ Քոլունց, Նինգունց, Գուլումանց, Պրուտանց, Բրխուդարանց, Ստիփանանց, Ավաքանց, Միրքիրանց, Միթվեյանց, Վնկանց, Կյուքունց, Չփուռանց, Քեչունց, Դիլաքանց, Աշղանց, Ղրիբանց, Անդրունց, Դերունց, Մարունց, Տոնունց, Ցարադուրանց, Համբարձումանց, Մախաձունց, Պրսեղանց, Արզմանանց, Քիսպարանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Համայնքը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Բնակչությանը հասանելի են հեռուստատեսությունը, ռադիոն, ինտերնետ ծառայությունը, անլար հեռախոսակապը:

Համայնքում գործում են գյուղապետարանը, մշակույթի տունը, բուժկետը, դպրոցը: Նախկինում գյուղն ուներ մանկապարտեզ և հանդիսությունների սրահ:

1987 թ. Խնածախում կար 133 տուն, 385 բնակիչ[228], 2018 թ.՝ 150 տուն, 633 բնակիչ[229]: Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԽՆԶՐԻՍՏԱՆ

Գյուղը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում, նախկին՝ Խաչենի գավառում:

Խնձրիստանով է հոսում նույնանուն գետը, որը գյուղի մի փոքր թաղամասը և հողահանդակների զգալի մասը բաժանում է բնակավայրից: Այդ երկու հատվածները իրար հետ միացնելու նպատակով 1830 թ. կամարաձև կամուրջ է կառուցվել, որն էլ առայսօր բանուկ է:

Գյուղի տարածքում պահպանված 12–13-րդ դարերի գերեզմանոցը, միջնադարյան գյուղատեղիներ՝ Բբեն շենը և Փիրումաթաղը, սրբատեղիները վկայում են, որ Խնձրիստանը Արցախի հնագույն բնակավայրերից մեկն է:

Գյուղի մոտ գտնվող Մեծ քերծ կաթսայաձև բնական հուշարձանի վերաբերյալ Խնձրիստանի բնակիչների մոտ ավանդազրույց է պահպանվել, ըստ որի՝ մոնղոլ-

[228] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 132:

[229] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:

թաթարների տիրապետության տարիներին մի հայ կին կերակուր է եփում և կաթսան դնելով գլխին՝ ուղևորվում գութանավորների մոտ: Ճանապարհի կեսին թաթարները սկսում են նրան հետապնդել, որ բռնեն: Կինը, որպեսզի չընկնի թաթարների ձեռքը, ճարահատյալ խնդրում է Աստծուց, որ իրեն քար դարձնի և իսկույն կաթսան գլխին քարանում է[230]:

Ընդհանուր առմամբ դարերի ընթացքում Խնձրիստանի հայությունը ստիպված է եղել կռվել օտար նվաճողների դեմ՝ պահպանելով իր ինքնությունն ու հայրենի երկրի սահմանները:

Այդ տեսանկյունից պատահական չէ նաև գյուղի տեղանքի ընտրությունը, որը պատշգանական առումով հարմարավետ է: Գյուղի շրջակայքում եղած քարայրները նույնպես այդ նպատակին են ծառայել: Օրինակ, Ծակ քարի քարանձավը, որը գտնվում է գյուղից 4 կմ հեռավորության վրա: Քարանձավում 25–30 մարդ էր պատսպարվում: 1992–1993 թվականներին, երբ գյուղը ռմբակոծվում էր ազերի-թուրքերի հրոսակների կողմից, որոշ ընտանիքներ պատսպարվել էին Ծակ քարի քարանձավում:

12-րդ դարից սկսած Խնձրիստանը գտնվում էր Հասան-Ջալալյան տան իշխանության ներքո: Հասան-Ջալալի եղբոր՝ Ալավերդու նստավայրը գտնվում էր Ուլուբաբ գյուղում: Նրա տիրապետության տակ էին գտնվում Խաչեն և Բալլուջա գետերի միջև ընկած բնակավայրերը, այդ թվում նաև Խնձրիստանը: Այս բնակավայրը հիշատակվում է 1667 թ. եկեղեցական կալվածագրերում[231]:

18-րդ դարի կեսերին քոչվոր Փանահ խանը, հաստատվելով Շուշիում, ցանկանում է իր տիրապետությունը տարածել նաև Արցախի մյուս գավառների վրա: Փանահը ամեն քայլի դիմում է՝ իրեն ենթարկեցնելու Խաչենի անհնազանդ մելիք Ալավերդուն: Չկարողանալով հասնել իր նպատակին, նա դիմում է խարդավանքի: Խնձրիստանցի հարկահավաք Միրզախանին խոստումներ է տալիս և գործի լծվում: Գյուղի պաշտպանությունը կազմակերպելու պատրվակով նա Խնձրիստան է հրավիրում մելիք Ալավերդուն և դավաճանաբար գիշերը ձերբակալում նրան ու վերջինիս երկու ուղեկցողներին և հանձնում Փանահ խանին:

Այդ ստոր ծառայության համար Փանահը Միրզախանին մելիքի կարգավիճակ է շնորհում և նրա տիրապետության տակ դնում Խաչեն և Բալլուջա գետերի միջև ընկած տարածքը:

1794 թ. Խնձրիստանում կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցին: Եկեղեցին իր մեծությամբ ու գեղեցկությամբ հավասարը չուներ մելիքությունում: Տարեց մարդիկ

[230] Մանուկյան Մ., Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանները, քաղաքները, գյուղերը, պատմամշակութային, ֆիզիկաաշխարհագրական, վարչատնտեսական նկարագրեր, Երևան, 2015, էջ 103:

[231] Մալխասյանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1944, էջ 264; Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան, 1973, էջ 368:

պատմում են, որ եկեղեցու զանգի ղողանջները լսվում էին 8–10 կմ հեռավորությունից: Եկեղեցուն կից գործել է դպրոց:

Խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1922 թ., եկեղեցին դադարեց գործելուց: 1924 թ. եկեղեցին դարձավ գյուղական ակումբ: Բոլշևիկյան անհանդուրժողական գաղափարախոսության շնորհիվ 1954 թ. եկեղեցին հիմնահատակ քանդեցին և տեղը կառուցեցին կոլտնտեսության գրասենյակ:

1885 թ. տվյալներով Խնձրիստանում 45 տուն կար[232]: 19-րդ դարի երկրորդ կեսին շուշեցի Դանիել Ահարոնյանը, ի թիվս այլ գյուղերի, Խնձրիստանում նույնպես մետաքսամանման գործարան է հիմնում[233]:

Խնձրիստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո՝ 1930 թ., գյուղում ստեղծվեց կոլտնտեսություն:

Խոշորացման քաղաքականության շնորհիվ՝ 1960 թ. Խնձրիստանի, Հիլիսի, Խաչենի և Ուլուպապի կոլտնտեսությունների հիման վրա ստեղծվեց միացյալ տնտեսություն: Հետագայում այս տնտեսությունը ապախոշորացվեց և Խնձրիստանի կոլտնտեսությունը շարունակեց գործել առանձին:

1998 թ. կոլտնտեսությունը լուծարվեց, և ստեղծվեցին մենատնտեսություններ: Տարբեր տարիների կոլտնտեսությունը գլխավորել են Շամիր Համբարձումյանը, Հակոբջան Գրիգորյանը, Ղուկաս Դանիելյանը, Շաբո Երամիշյանը, Արսեն Ավագիմյանը, Մուրադ Գրիգորյանը, Վոլոդյա Ղուլյանը, Ազատ Հովհաննիսյանը, Ռոմա Ղուլյանը, Խաչիկ Գրիգորյանը, Ռազմիկ Սաղյանը, Հրանտ Պողոսյանը, Անդրեյ Գրիգորյանը, Հենրիկ Աղաջանյանը:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 400 մարդ, նրանցից 136-ը զոհվել է:

Հատկապես տպավորիչ է արցախյան ազատագրական պատերազմին Խնձրիստանի հայության մասնակցությունը: 1989 թվականից գյուղում գործել է ինքնապաշտպանական կամավորական ջոկատ: Մարտական գործողություններին մասնակցել է 240 հոգի, նրանցից 42-ը զոհվել է:

Մարտերում ցուցաբերած բացառիկ խիզախության համար ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի են արժանացել գումարտակի հրամանատար Վլադիմիր Աղասարյանը, Մարատ Ավանեսյանը՝ հետմահու: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի են արժանացել՝ Սանթուր Միրզոյանը, Գենադի Մնացականյանը, Արթուր Դանիելյանը, Ռաֆիկ Ավանեսյանը, Ալիշ Բեգլարյանը, Ներսես Ղուլյանը, Գեորգիի Միրզոյանը, Մհեր Պողոսյանը, Կառլեն Սարգսյանը, Դավիթ Բեգլարյանը:

Ծագումով Խնձրիստանից է Արցախի հերոս Աշոտ Ղուլյանը (Բեկոր):

[232] Հայկունի, նշվ. աշխ., էջ 58:
[233] Բալայան Վ., Շուշի, էջ 199–200:

Մինչև խորհրդային իշխանության հաստատումը գյուղում կանոնավոր գործող դպրոց չկար: Տարբեր ժամանակներում գյուղի հոգևորականները վարձով դասեր են անցկացրել ապահով ընտանիքների երեխաների հետ: Սովորողների տարիքային տարբերությունը միևնույն խմբում երբեմն հասել է 5–8 տարի:

1910 թ. Պետրոս Դանիելյանի տանը բացվել է մասնավոր դպրոց, որտեղ սովորում էր 15 աշակերտ: Մինչև 1920 թ. ուսուցչություն են արել Վաղարշակ Գրիգորյանը, Վաղարշակ Տեր-Հովհաննիսյանը, Սամսոն Խաչատրյանը, Արտաշես Հովհաննիսյանը: Վերջինիս նախաձեռնությամբ և գյուղի բնակչության միջոցներով 1926 թ. կառուցվում է երկու սենյականոց դպրոցական շենք:

1930–1931 ուսումնական տարում դպրոցը ստացավ յոթնամյայի, 1938–39 ուսումնական տարում՝ միջնակարգի կարգավիճակ: 1945–1946 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 492 աշակերտ, իսկ 1950–51 ուսումնական տարում՝ 395 աշակերտ: Հարկ է նկատել, որ Խնձրիստանի միջնակարգ դպրոցում սովորում էին նաև Դաշբուլաղ, Սեյդիշեն, Ուլուբաբ գյուղերի բարձր դասարանների աշակերտները:

1988–1990 թթ. դպրոցում սովորում էր 150-ից ավելի աշակերտ, 2013–2014 ուսումնական տարում՝ 128 աշակերտ, դասավանդում 24 ուսուցիչ:

1942 թվականից առայսօր տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Սուրեն Աղաբաբյանը, Աղասի Սիմոնյանը, Վերդի Խաչատրյանը, Հրաչիկ Ղազարյանը, Արամ Գասպարյանը, Հայրապետ Թորոսյանը, Ազատ Հովհաննիսյանը, Պավել Հովհաննիսյանը, Արմիկ Արամյանը, Ժորա Աբրահամյանը, Ազատ Հովհաննիսյանը, Անահիտ Բալայանը:

Ծննդով Խնձրիստանից են տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտյուշա Աղասարյանը, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գլխավոր դատախազ, գեներալ-լեյտենանտ Գադմոս Հովհաննիսյանը (Իոնիսյան), Խորհրդային միության հերոս Կոնստանտին Նազարյանը, ԱՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը:

Խնձրիստանում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային արժեք ունեցող հուշարձաններ՝ միջնադարյան գյուղատեղիներ, գերեզմանոց (12–13-րդ դարեր), Հանգած եղծի եկեղեցին (12–13-րդ դարեր), Ճոխտակ եղծե եկեղեցին (11–13-րդ դարեր), Սբ. Աստվածածին եկեղեցին (1754 թ.), ձիթահան (1782 թ.), 11–12-րդ դարերի խաչքարեր:

Խնձրիստանում հայտնի են Վարար, Վետանց, Լաչինի, Հճարկե, Նովավոր, Աբիապուն, Պետրոսապուն, Շենին, Քարե, Չոլեն ձյուր, Կրբուլախ աղբյուրները:

Գյուղի շրջակայքում են գտնվում Ծակ քար, Շառ քար, Տափակ քար, Սուլուլ քար, Բաբին քար լեռները, Կոճին սեռ, Ղըլըտեղեր, Ճղացեն մանը, Խաչին մանը, Պեմեն խութ, Էրկան գյունե անտառները, Սունջինկա, Կիզավեր, Ճոխտակ Եղցե հանդամասերը:

Գյուղում ապրում են Տեր Վանեսանց (Ավանեսյան), Դիլաքանց (Աղաջանյան), Ապրեսանց (Դանիելյան, Ապրեսյան), Փրումանց (Ավանեսյան), Մանուչարանց (Մանուչարյան), Տեր-Հկուփանց (Հակոբյան), Քալունց (Ավանեսյան), Սուրխանանց (Գրիգորյան), Մեհրունց (Իսրայելյան, Առուստամյան), Աթաբեկանց (Բալայան), Բագունց (Բեգլարյան), Քյուխանց (Ղուլյան), Համբարձումանց (Համբարձումյան), Մելիքանց-Աղալարանց (Միրզոյան), Ջդանց-Մոսունց (Մուսայելյան), Նրանանց (Սարգսյան), Ուդալանց (Դանիելյան) ազգատոհմերի ներկայացուցիչները:

Խնձրիստանը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, դպրոց, մանկապարտեզ, առևտրի երկու կետ:

Խնձրիստանում 1901 թ. կար 691 բնակիչ, 1987 թ.՝ 220 տուն, 659 բնակիչ[234], 2018 թ.՝ 205 տուն, 747 բնակիչ[235]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն ու շինարարությունն է:

ԽՐԱՄՈՐԹ

Գյուղը գտնվում է ԱՀ արևելյան մասում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին Խաչենի գավառում՝ Կարկառ գետի ձախ գետահովտում՝ Ակնայից (Աղդամ) և Ասկերանից ոչ շատ մեծ հեռավորության վրա:

Խրամորթը հյուսիսից և հյուսիս-արևմուտքից թիկնած է Շիկաքար, Պուզտի լեռներին, արևմուտքից շրջափակված Կլոր թումբ և Փթոս բլուրներով, իսկ արևելքից բնակավայրը համաչափ իջնում է դեպի դաշտահովիտ:

Հին Խրամորթը տեղաբաշխված է եղել նշանավոր Շիկաքար ամրոցի հարևանությամբ՝ Վաղվանա տարածքում՝ ներկայիս Խրամորթից 1 կմ դեպի հարավ-արևմուտք: Հին Խրամորթից ոչ շատ մեծ հեռավորության վրա են գտնվում նաև Երե շենը, որը անբնակ է դարձել դեռևս 18-րդ դարից, և Քարագլուխը: Ցավոք, այս բնակավայրից էլ վերջին հայ ընտանիքները հեռացել են 20-րդ դարի 70-ական թվականներին: Հին Խրամորթի մոտ է գտնվում նաև միջնադարյան գերեզմանոցը, որը օգտագործվել է նաև Խրամորթի բնակիչների կողմից մինչև 1951 թ.: 18-րդ դարի կեսերից մինչև 19-րդ դարի սկիզբը Հին Խրամորթից և Երե շենից տեղափոխվում և հաստատվում են ներկայիս բնակավայրում:

Խրամորթը, գտնվելով Ղարաբաղյան դաշտավայրից դեպի լեռնաստանի խորքերը տանող հանգուցային կետում, 7-րդ դարից սկսած, արաբների, սելջուկ-թուրքերի, մոնղոլ-թաթարների, թուրքմենական ցեղախմբերի, պարսիկների, իսկ 20-րդ դարի վերջերին էլ՝ ադրբեջանցիների կողմից մշտապես հարձակումների է ենթարկվել: Բնակչությունը՝ որպես ապահով վայր, պաշտպանվում էր Շիկաքարի (Քարագլուխ) անառիկ ամրոցում:

Խրամորթում և նրա շրջակայքում դրամատիկ իրադարձություններ ծավալվեցին 1805 թ. ռուս-պարսկական առաջին պատերազմի ժամանակ: Շուշին այդ օրերին պաշարված էր պարսկական բազմահազարանոց զորքերի կողմից: Շուշիի պաշտպաններին օգնելու համար Գանձակից գնդապետ Կարյագինի հրամանատարությամբ 1805 թ. հունիսի 18-ին ուղարկվում է 400 հոգանոց մի ջոկատ: Ռուսական ջոկատը հայ կամավորականների օգնությամբ, ծանր մարտեր մղելով, հասնում է Ասկերանի բերդին: Կարյագինը հանձնարարում է կուսապատցի Վանի Աթաբեկյանին գումարտակի ծանր վիճակի մասին տեղյակ պահել Շուշիի կայազորին: Վանի Աթաբեկյանը, մեծ դժվարությամբ գաղտագողի անցնելով պարսիկների միջով, հասնում է Խրամորթ: Այստեղ Ջրաբերդի մելիք Ադամը և Ասրի-բեկ Փիրումյանը կամավորներ էին հավաքագրում՝ Կարյագինի պաշարված ջոկատին օգնելու նպատակով: Շրջակա հայկական գյուղերից, այդ թվում Խրամորթից, հավաքագրված կամավորականները թիկունքային հարվածներով օգնում են ռուսներին և նրանց փրկում վերահաս կործանումից: Ջոհված հայ կամավորների և ռուս զինվորների հիշատակը հավերժացնելու համար ճակատամարտի վայր հանդիսացած բարձունքներից մեկում խրամորթցիները հուշաքար են տեղադրել:

1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Խրամորթը հայտնվել էր ռազմական բախումների կիզակետում:

Թուրք-թաթար բեկերն ու հոգևորականությունը Արցախի հարակից մահմեդական բնակավայրերից մարտական նոր ուժեր են հավաքագրում: Օգոստոսի 18-ին նրանք հավաքվում են Թարթառում և, մզկիթում խորհրդակցելուց հետո, շարժվում են դեպի Շուշի[236]: Աղդամում նրանց են միանում Սեյիդլուից, Մարզուլուից, Շելլիից հավաքված թուրք հեծյալները և երեք՝ Խրամորթի, Խանաբադի ու Ասկերանի ուղղություններով, փորձում ճեղքել հայկական բնագծերը: Մի քանի տասնյակ հայ մարտիկներ ջախջախիչ հարվածներ հասցրին թշնամուն: Թուրքերը, բազմաթիվ զոհեր տալով, նահանջեցին և ապաստանեցին Աղդամում[237]:

Այս դեպքերի մասին 1905 թ. նոյեմբերի 28-ին Արցախի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը հեռագիր է ուղարկում փոխարքային: Հեռագրում մասնավորապես ասված էր. «Գավառներում տեղի են ունենում խմբակային յարձակումներ հայ գիւղերի վրա (Դոլանլար, Խրամորթ, Խանաբադ և այլն): Ամբողջ գաւառում փոստային խաչու-

[234] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 125:

[235] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:

[236] Ընդհարումները Ջիվանշիրի գավառում, «Դրօշակ», հմ. 11, Ժնև, 1905, էջ 171:

[237] Արամայիս, Մի քանի գլուխ հայ-թրքական ընդհարումներից, մասն Ա., I. Ասկերան, II. Վարանդայ-Խաչէն, էջ 10:

ղիները փակել են թուրքերը: ...Քաղաքին սով, ցուրտ և հիւանդութիւն է սպառնում, չյիշելով, որ իւրաքանչիւր րոպէ կարող է սկսել կոտորած և հրդեհ»[238]: Մեկ օր անց՝ 1905 թ. նոյեմբերի 29-ին, Շուշիի քաղաքագլուխ Գ. Մելիք-Շահնազարյանը նմանօրինակ մի հեռագիր է ուղարկում փոխարքային, որի մեջ ասված էր. «Քաղաքի դրութիւնը վատ է, ամեն օր սպանութիւն կայ. խմբակային յարձակումներ են տեղի ունեցել Խանաբադ և Խրամորթ հայ գիւղերի վրայ»[239]:

Չնայած թուրք-թաթարների ագրեսիվ պահվածքին՝ կառավարական զորքերը հայկական գյուղերում իրականացրին պատժիչ գործողություններ:

1906 թ. հունվարի 16-ին գեներալ Գոլոշչապովի գլխավորությամբ կառավարական մի զորագունդ Ասկերանի կիրճով հասնում է Շուշի՝ ճանապարհին ոմբահարելով Խրամորթ, Խանաբադ, Քյաթուկ, Ղլիշբաղ, Դաշուշեն և Շոշ գյուղերը[240]:

Խրամորթի համար ծանր շրջափուլ էին նաև 1917-1918 թվականները: 1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած երկու հեղափոխություններից հետո երկիրը ապրում էր անիշխանության շրջան: Դրանից օգտվելով Թուրքիան փորձում էր իրագործել իր վաղեմի փափագած ծրագիրը՝ նվաճել ողջ Կովկասը: Սակայն այդ ճանապարհին կանգնած էր իր անկախությունը 1917 թ. դեկտեմբերի 23-ին հռչակած Լեռնային Ղարաբաղը: 1918 թ. գարնանից սկսած թուրքական զորքերը, տեղի թաթարների օժանդակությամբ, փորձում էին ճեղքել հայկական պաշտպանական գիծը:

Թուրքական բանակը 1918 թ. սեպտեմբերի 22-ին մտավ Արցախ՝ ավերելով Դահրազ, Վարազաբույն, Փիրջամալ, Նախիջևանիկ, Քյաթուկ, Խրամորթ, Խանաբադ, Ղլիշբաղ, Քարագլուխ գյուղերը: Բանակի հետևից շարժվում էր «տեղական թաթարների հազարավոր խուժանը՝ գրավված գյուղերն ու քաղաքը (խոսքը վերաբերում է Շուշիին, որը գրավվել էր սեպտեմբերի 25-ին — Վ. Բ.), ավերելու և թալանելու նպատակով»[241]: Ավերվեց և թալանվեց Խրամորթը:

1918 թ. հոկտեմբերի 18-ին Մսմնայի ճակատամարտում թուրքերը պարտություն կրեցին: Առաջին համաշխարհային պատերազմում պարտություն կրած Թուրքիան ստիպված էր հեռանալ Այսրկովկասից: Խրամորթի բնակչությունը վերադարձավ գյուղ և սկսեց վերականգնել հայրենի օջախը:

Ծանր էր նաև Խրամորթի վիճակը խորհրդային առաջին տարիներին: Ադրբեջանը ամեն կերպ ձգտում էր հայաթափել ԼՂԻՄ-ը:

Ազգային հողի վրա 1933 թ. Քարագլուխ և Աղդամի շրջանի Ջինլի թուրքաբնակ գյուղերի միջև ընդհարում է եղել[242]:

[238] «Արշալոյս», հմ. 68, 3 դեկտեմբերի, 1905:
[239] «Արշալոյս», հմ. 66, 1 դեկտեմբերի, 1905:
[240] «Արշալոյս», հմ. 10, 17 հունվարի, հմ. 12, 19 հունվարի, 1906:
[241] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 49, թ. 47:
[242] ԱՀ պետարխիվ, ֆ. 268, ց. 1, գ. 2, թ. 6:

Քննարկվող ժամանակահատվածում Արցախում տիրող քաղաքական, սոցիալ-տնտեսական վիճակի, խորհրդային Ադրբեջանի կողմից հայության նկատմամբ կիրառված անսանձ բռնությունների, ազգային-ազատագրական պայքարի դրսևորումների, ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորելու նպատակով սկսած ժողովրդական շարժումների վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ է պարունակում Խաչենից Պարսկաստան տեղափոխված վտարանդի գործիչներից մեկի հուշերում: «... փամփուշտի կոիվ չկա, սակայն թուրք բեկերի և կալվածատերերի «կոմունիստ» զավակները նոր ձևի փամփուշտներով են կռվում հայ գյուղացու և հայ քաղաքացու դեմ: Անցել եմ հայ գյուղերը՝ Խնաբադը, Խրամորթը, Նորշենը, Հացին, Քեաթուկը, Փրջամալը և այլն, երբեմնի փարթամ ու հարուստ այդ շեն գյուղերը, որ կարծես այժմ դաժան փոթորիկը եկել և քշել է ամեն բան: Գյուղերի գեղեցիկ տները ավերված ու անտեր են, իբրև կուլակների և հակահեղափոխականների տներ: Գլխավորապես ծեր կանայք ու տղամարդիկ են երևում, աչքաբաց և առույգ երիտասարդները կամ փախել են բոլշևիկյան զուլումից և կամ իբրև «Ղարաբաղը Հայաստանին» միության անդամ, քշված են դեպի ցրտաշունչ Ռուսաստանի խորքերը: Երեկոյան ժամը 7-8-ին դռները պինդ կողպում և փակվում են խրճիթներում ահ ու սարսափի տակ: Վախենում են և՛ ավազակից, և՛ կոմսոմոլից, և՛ կոմբջիջից»[243]: Այդ դժվարություններն էլ հաղթահարվեցին Արցախի, տվյալ դեպքում՝ Խրամորթի հայության կողմից:

1932 թ. գյուղում ստեղծվել է կոլտնտեսություն: Տնտեսվարման այս ձևը հնարավորություն տվեց լուծելու Խրամորթի բնակչության սոցիալ-տնտեսական բնույթի հարցերը:

Տարբեր տարիներին կոլտնտեսությունը ղեկավարել են Մելիք Հայրապետյանը, Վահան Օհանյանը, Աղասի Ղամբարյանը, Սարգիս Սարգսյանը, Սերգեյ Գրիգորյանը, Վանո Պետրոսյանը, Էդվարդ Սահակյանը, Բորիս Ղահրամանյանը:

1998 թ. հոկտեմբերի 10-ին լուծարվեց տնտեսությունը: Խրամորթի բնակիչները իրենց տնտեսությունը սկսեցին վարել անհատական կարգով:

Հայրենական մեծ պատերազմին Խրամորթից մասնակցել է 135 հոգի, զոհվել՝ 75-ը, որոնց հիշատակին գյուղում հուշարձան է կանգնեցված:

Արցախյան ազատագրական պայքարի առաջին տարիներին Խրամորթի ազգաբնակչության համար ծանր ժամանակներ սկսվեցին: Գյուղը, գտնվելով Աղդամի հարևանությամբ, ադրբեջանական ավազակախմբերի կողմից մշտապես հարձակումների թիրախում էր հայտնվում: 1989 թ. գյուղում ինքնապաշտպանական ջոկատ ստեղծվեց: Այն Աղդամից անընդհատ հրետակոծվում էր:

1992 թ. դեկտեմբերի վերջին Խրամորթը ազերիների կողմից գրոհի ենթարկվեց: Մարտական տեխնիկայի՝ հրասայլերի ուղեկցությամբ նրանք գյուղ մտան: Ավերվեցին մի շարք տներ ու դպրոցը: Հայ ինքնապաշտպանները, կենտրոնացնելով ուժերը,

[243] Խաչենցի, Ղարաբաղի դրությունը, «Դրոշակ», հմ. 12, 1928, էջ 334:

թշնամուն դուրս քշեցին գյուղից: 1992 թ. հունվարի 31-ին թուրք-ազերիները նորից գրոհեցին Խրամորթի վրա: Այս անգամ գրավելով այն՝ հայկական բնակավայրը վեր էին ածել ռազմական հենակետի: 1993 թ. հունիսի 26-ին Արցախի պաշտպանության բանակի հարվածների տակ Խրամորթը վերջնականապես ազատագրվեց:

1994 թ. մինչև 2000 թ. Խրամորթի ավերված տների մեծ մասը վերականգնվեց և բնակիչները նորից վերադարձան իրենց լքված տները: Կյանքը նորից մտավ իր բնականոն հունի մեջ:

Արցախյան ազատագրական պատերազմին Խրամորթից մասնակցել է 112 մարդ: Նրանցից 33-ը զոհվել են:

2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ խրամորթցի փոխգնդապետ Օնիկ Գրիգորյանը հերոսաբար զոհվեց: Նա հետմահու արժանացել է ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի հետմահու արժանացել է Գառնիկ Ավանեսյանը: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանակիրներ են նաև Վազգեն և Արթուր Մկրտչյանները:

1894 թ. Խրամորթում կար եկեղեցական-ծխական դպրոց: Այն գործել է կառավարությունից գաղտնի: 1909-1910 ուսումնական տարում Խրամորթում բացվել է մեկդասյա երկսեռ ծխական դպրոց՝ 35 աշակերտով, ուներ մեկ բաժանմունք, մեկ ուսուցիչ՝ Գրիգոր Ալահվերդյանը: Մինչև խորհրդային կարգերի հաստատվելը դպրոցը գործել է Բաղրունց Ավանեսի, Աղաբեկանց Միրզոյան Աղաբեկի և Բաղրունց Մովսեսի տներում:

Խորհրդային տարիներին Խրամորթում կար միջնակարգ դպրոց: 1990 թ. դպրոցում սովորում էր 104 աշակերտ, դասավանդում՝ 18 ուսուցիչ:

1991 թ. սեպտեմբերին կատարվեց նորակառույց դպրոցի բացումը: Պատերազմի ժամանակ դպրոցական շենքը ավերվել է: Մինչև 1997 թ. դպրոցական շենքի վերանորոգումը Խրամորթի աշակերտները սովորում էին Իվանյանի դպրոցում:

2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 66 աշակերտ, դասավանդում՝ 16 ուսուցիչ:

Դպրոցի տնօրեններ են աշխատել՝ Լևոն Հովսեփյանը, Համո Քարամյանը, Սոնյա Ծատրյանը, Միքայել Պողոսյանը, Ջիվան Ղահրամանյանը, Արմո Մկրտչյանը, Անուշ Առաքելյանը (Գաբրիելյան):

Խրամորթում և նրա շրջակայքում կան պատմամշակութային արժեք ներկայացնող հուշարձաններ՝ Սբ. Աստվածածին եկեղեցին (19-րդ դար), Շիկաքարի ամրոցը (վաղ միջնադար), 13-րդ դարի խաչքարեր:

Խրամորթի աղբյուրներն են՝ Տնջրի, Շենին, Տանձին, Աղի, Գյադուկի, Կաչաղակի ձորի, Մինդ, Վերին ջուր, Ներքին ջուր, Վաղվանա:

Գյուղի նշանավոր հանդամասերն են՝ Պուլուր թումբ, Փթոս, Ըռպետե կալ, Շրշռան, Բխաձեն գյոլ, Պոզտուն տակ, Ղուրուղեն ձոր, Տնջրուն տակ:

Խրամորթում ապրում են Սաքունց, Պրսեղանց, Բխտամանց, Գյուղղանց, Տիզկանց, Սահականց, Բաղրունց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Համայնքը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրի ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը հասանելի են բնակչությանը:

Խրամորթում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, դպրոց:

19-րդ դարի վերջերին Խրամորթում կար 55 տուն, 428 բնակիչ[244], 1959 թ.՝ 210 տուն, 576 բնակիչ, 1985 թ.՝ 185 տուն, 691 բնակիչ[245], 2018 թ.՝ 128 տուն, 525 բնակիչ[246]: Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԾԱՂԿԱՇԱՏ

Գյուղը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին Խաչենի գավառում՝ Ստեփանակերտ-Գանձասար ճանապարհի միջնամասում: Համայնքի սահմանային գոտով հոսում է Կարկառի վտակը: Գյուղի դիրքը նախալեռնային է, բլրաշատ:

Ծաղկաշատը Արցախի հին բնակավայրերից է: Նախկինում գյուղը տեղակայված էր Խաչենագետի աջ ափին՝ ներկա բնակավայրից 2-2,5 կմ հյուսիս, և կրում էր Վաքա կամ Վաքու անունը[247]: Այդ տարածքում պահպանվել են Ք. ա. 2-1-ին հազարամյակների դամբարաններ և մինչև 12-13-րդ դարերը հասնող տարաբնույթ հնություններ: Ամենայն հավանականությամբ 13-րդ դարում գյուղը Վաքայից տեղափոխվել է Ծաղկաշատից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող Շենատեղ վայրը: Որոշակի հանգամանքների ազդեցության տակ այստեղից էլ 17-րդ դարում տեղափոխվել և հաստատվել են ներկայիս բնակավայրում:

Ամենայն հավանականությամբ Շենատեղում եղած գյուղը անվանվել էր Ղշլաղ: Հայտնի է, որ 16-րդ դարի կեսերին, իսկ ավելի ստույգ՝ 1546 թ., Աղվանից կաթողիկոս է հիշատակվում Սարգիս Ղշլաղեցին[248]: Նրան 1555 թ. հաջորդել է Տեր Գրիգորը:

Ծաղկաշատցի 80-ամյա Նիկոլայ Համբարձումյանն իր պապից լսած մի ավանդություն է պատմել, ըստ որի՝ նոր գյուղի առաջին բնակիչը եղել է Զալին: Քիչ անց այդտեղ հաստատվել է նաև Բախտին: Երկուսի սերունդներն էլ այսօր ապրում են Ծաղկաշատում: Պահպանված մեկ այլ զրույցի համաձայն Ղշլաղը հիմնադրել է Ավանեսը[249]:

[244] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 246:
[245] Մելքումյան Ս., նշվ.աշխ., էջ 127:
[246] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:
[247] ՀԱԱ, ֆ. 57, ց.1, գ. 3, թ. 113:
[248] Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանց, Էջմիածին, հ.Ա, 1842, էջ 344:
[249] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

Բնակչության հիմնական զբաղմունքը եղել են հողագործությունն ու անասնապահությունը: Հայրենիքի վտանգի դեպքում ծաղկաշատցին գութանը և բահը փոխարինել է զենքով և պահել լեռնաստանի անդորրը:

Բնակչության թիվը օրեցօր մեծանում էր: 19-րդ դարավերջի տվյալներով Ծաղկաշատում ապրում էր 1096 մարդ: Կար 159 ծուխ[250]:

Սակավահողության պայմաններում, ինչպես Արցախի մյուս բնակավայրերից, այնպես էլ Ծաղկաշատից որոշ ընտանիքներ տեղափոխվել և Ուտիքի դաշտավայրում՝ Գանձակից ոչ շատ հեռավորության վրա, հիմնել են Շիքիրչի և Ղալակեայ գյուղերը[251]:

Բնակչության մի մասն էլ ներգրավվել էր գործարանային արտադրության մեջ: 1887 թ. Դանիել Ահարոնյանը, ի թիվս մի շարք գյուղերի, Ղշլաղում նույնպես բացել էր մետաքսամանման գործարան: 1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների կիզակետում էր հայտնվել նաև Ղշլաղը: Գյուղի տերտերի որդին՝ Պավել բեկը, զինված ջոկատի գլուխ անցած, ապահովում էր Ղշլաղի անվտանգությունը:

1917-1920 թվականներին ղշլաղցիները պահանջում էին նաև անկախ Արցախի սահմանները:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական ճակատում ռուսական զորքերի շարքերում կռվում էին նաև շատ արցախցիներ: Նրանց շարքերում էր նաև ղշլաղցի Գրիգոր Մեհրաբյանը: Նա, ռուս հրամանատար Դանցովից զենք ու զինամթերք ստանալով և տեղափոխվելով Արցախ, հայ մյուս կամավորների հետ թուրքերից պաշտպանում էր Ասկերանի կիրճը:

1918 թ. սեպտեմբերին թուրքական կանոնավոր զորքերը, մտնելով Արցախ, սկսեցին զինաթափել հայ գյուղացիներին, մասնավորապես Ասկերանի մոտ գտնվող Դաշպուլաղի և Ղշլաղի բնակչությանը[252]:

Արցախում խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1930 թ., Ղշլաղում կազմակերպվել է կոլտնտեսություն: 1950 թ. Ղշլաղի և Ռևի կոլտնտեսությունների հիմքերի վրա ձևավորվել է միացյալ տնտեսություն: Խոշորացման քաղաքականության շնորհիվ՝ 1960 թ. փետրվարի 5-ին այն միավորվել է Նորագյուղի «Հաղթանակ» կոլտնտեսության հետ: 1989 թ. կոլտնտեսությունների ապախոշորացման արդյունքում Ղշլաղի տնտեսությունը շարունակել է գործել որպես առանձին միավոր: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո Ղշլաղի կոլտնտեսությունը դադարեց գործելուց:

Կոլտնտեսությունը ղեկավարել են Բախշի Մանվելյանը, Նիկոլայ Պողոսյանը, Աբրահամ Աբրահամյանը, Վաչիկ Խաչատրյանը, Արմենակ Սարգսյանը, Լազր Հովհաննիսյանը, Բաղդասար Ղարամյանը, Սուրիկ Ղուկասյանը, Կառլեն Սողոմոնյանը, Վլադիկ Սարգսյանը, Յուրիկ Մեհրաբյանը:

[250] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 245:
[251] Նույն տեղում, էջ 106, 109:
[252] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 265:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 162 մարդ, զոհվել է 83-ը, որոնց հիշատակին հուշարձան է կանգնեցվել:

Գյուղի ազգաբնակչությունը անմնացորդ պայքարել է Արցախի պետականության վերակերտման համար: 1989 թ. գյուղում կազմակերպվել է ինքնապաշտպանական ջոկատ, որը հետագայում Ասկերանի գնդի կազմում մասնակցել է ինչպես պաշտպանական, այնպես էլ հարձակողական մարտերին:

Այսօր Ծաղկաշատի դպրոցը կոչվում է ազատագրական պատերազմի նահատակներից մեկի՝ Գարիկ Մեհրաբյանի անվամբ: 1995 թ. գյուղը վերանվանվել է Ծաղկաշատ:

1895 թ. Ղշլաղում գործել է դպրոց, որտեղ սովորել է 25 աշակերտ, դասավանդել՝ 1 ուսուցիչ: Ցարական կառավարության կողմից դպրոցը փակվելուց հետո այն նորից վերաբացվեց 1908-1909 ուսումնական տարում: Դպրոցը երկսեռ մեկդասյա էր: Սովորում էր 40 աշակերտ: Ուսուցիչն էր Արիստակես Սեդրակյանը:

Խորհրդային տարիներին Ծաղկաշատում գործում էր միջնակարգ դպրոց: Այդ կարգավիճակը պահպանվել է նաև 1991 թ. հետո: Դպրոցի շենքը հիմնանորոգված է: 2015-2016 ուսումնական տարում դպրոցում սովորել է 25 աշակերտ, դասավանդել՝ 18 ուսուցիչ: Դպրոցի տնօրեններ են աշխատել Ավետիս Միրզոյանը, Մելիք Սողոմոնյանը, Լազր Հովհաննիսյանը, Սերգեյ Անդրյանը, Բեգլար Հակոբյանը, Յուրա Գրիգորյանը, Կառլեն Սողոմոնյանը:

Ծննդով Ղշլաղից են հայ ազգային ազատագրական պայքարի մեծ գործիչներ Նիկոլ Դումանը (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան) և Խանասորի Վարդանը (Վարդան Մեհրաբյան):

Հետպատերազմյան տարիներին Դավիթ Իշխանյանի և Սերգեյ Շահվերդյանի նախաձեռնությամբ ու ամերիկաբնակ բարերար Ժասմեն Բունիաթյանի նյութական աջակցությամբ Ծաղկաշատում ստեղծվել է Նիկոլ Դումանի տուն-թանգարանը: Միաժամանակ վերանորոգվել են 19-րդ դարից մնացած մի շարք տներ և ստեղծվել ազգագրական բնույթի ժողովրդական տների համալիր: Թանգարանը նպաստում է գյուղի կյանքի աշխուժացմանն ու զբոսաշրջության զարգացմանը: Ծննդով Ղշլաղից էին նաև ԼՂԻՄ մարզգործկոմի նախագահ Ռուբեն Շահրամանյանը, ԽՍՀՄ հերոս Ժորա Գրիգորյանը:

Ծաղկաշատում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային արժեք ունեցող հուշարձաններ՝ Ք. ա. 2-1-ին հազարամյակների դամբարանաբլուրներ, միջնադարյան գյուղատեղիներ, գերեզմանոցներ, վաղ միջնադարյան Բագ (Պուլուր պուտնը) ամրոցը, 19-րդ դարում կառուցված Սբ. Աստվածածին եկեղեցին, 13-րդ դարի խաչքար:

Ծաղկաշատի աղբյուրներն են՝ Ջրգարին, Նով, Ծետ, Խրդավերին, Թխկե, Մեծ ջուր, Վերած, Հոռաղբյուր, Լուսակերչ, Կարմիր:

Ծաղկաշատի նշանավոր հանդամասերն են՝ Չալի հող, Սգնու ձոր, Հարթ հող, Մաղաս, Վաքա, Շենատեղ, Կալի խութ, Ջարդար, Վիդանու հող, Հոնի հող, Ղշլաղատեղ, Ճտի թումբ, Ղրբոլեն խութ, Գետի թալ:

Ծաղկաշատում շարունակում են ապրել Ջորունց, Չալունց, Ղազունց, Մեհրաբանց, Ղևոնդանց, Ազիզանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են: Ծաղկաշատում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, դպրոց, առևտրի մեկ կետ:

1920 թ. Ծաղկաշատում կար 150 տուն, 750 բնակիչ, 1970 թ.՝ 70 տուն, 150 բնակիչ, 1987 թ.՝ 70 տուն, 171 բնակիչ[253], 2018 թ.՝ 51 տուն, 138 բնակիչ[254]:

Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԿԱՐՄԻՐ ԳՅՈՒՂ

Գյուղը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին Վարանդա գավառում՝ Բովրխան լեռան հարավարևմտյան լանջին:

Արցախի հնագույն բնակավայրերից մեկն է: Մինչև 15-րդ դարը գյուղը գտնվում էր ներկայիս Կարմիր գյուղից 1,5 կմ հեռավորության վրա՝ «Կալերահող» տեղամասում: Գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցուց 100-150 մ հեռավորության վրա կառուցված են եղել կամար և տանիքով աղոթարան (որմնախորշ), որի ներսում տեղադրված էին երեք խոյաքանդակ խաչքարեր: Այն կոչվել է Բեմ, արցախյան բարբառով՝ Պեմ:

Ըստ Մ. Բարխուդարյանի՝ Բեմի արևմտահայաց ճակատում զետեղված երեք գեղեցկաքանդակ նրբագործ խաչքարների վերևի հատվածը արձանագիր էր: Արձանագրությունը ուներ թվագրություն՝ ՇԻ (1071 թ.)[255]:

Կարմիր գյուղի տարեցները պատմում են, որ գյուղը կործանվել է Լենկ Թեմուրի ասպատակությունների ժամանակ՝ 13-րդ դարում: Այդ դեպքերի և գյուղի մոտ պահպանված Աղի նահատակի սրբավայրի հետ կապված ավանդազրույց է պահպանվել: Վերոհիշյալ արձանագրությունը երկու տարբերակով հասել է մինչև մեր օրերը: Առաջին տարբերակում ասվում է, որ Լենկ Թեմուրի արշավանքի ժամանակ թշնամիները սպանում են մի հղի կնոջ, այդտեղից էլ տեղանքը կոչվել է Հղի (հետագայում՝ Աղի) նահատակ: Երկրորդ տարբերակում պատմվում է, որ Լենկ Թեմուրի հորդաների դեմ կռիվներում զոհվում է գյուղի տանուտերը (աղան), որի դին ամփոփվել է բլրի վրա:

[253] Մելքումյան Ս., նշվ.աշխ., էջ 138:
[254] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:
[255] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 228:

Հետագայում գերեզմանի վրա կառուցվել է եկեղեցի, և վայրը կոչվել է Ըղեն (Աղի) նահատակ[256]:

Այդ դեպքերից հետո գյուղը կորցնում է նախկին փառքը, և 15-րդ դարում բնակավայրի քահանա Տեր-Արտավազդը բնակչությանը համոզում է հեռանալ այդ անիծված վայրից ու նախկին գյուղից ոչ շատ մեծ հեռավորության վրա հիմնել Դրնավազը: Բնակավայրը տարբեր պատմափուլերում ունեցել է նաև Դերնավազ, Դերավազ, Տոնավազ անունները:

Սա ինչ որ չափով հնարավոր վարկած է, որովհետև ուշ շրջանում Արցախում և նրա շրջակայքում հայտնված մահմեդականներն իրենց սովորության համաձայն հայկական բնակավայրերի մի մասի անունները թարգմանաբար են ներկայացրել: Օրինակ՝ 1904 թ. Ելիզավետպոլի նահանգի քարտեզում և տվյալ ժամանակաշրջանի այլ նյութերում բնակավայրը Քեշիշքենդ անունն է ունեցել[257]:

Գյուղը արագ զարգանում և բարգավաճում է: Հայկունին նշում է, որ 1885 թ. Դոնավազում կար 300 տուն,[258] իսկ Մակար Բարխուդարյանի վկայությամբ՝ համարյա նույն ժամանակահատվածում՝ 128 տուն, 828 մարդ[259]: Տեղացիներն էլ ասում են, որ մինչև 1920 թ. գյուղում 1800 մարդ էր ապրում: Գուցե դա էր պատճառը, որ Դրոն, երբ 1920 թ. Տոնավազում էր, գտնվելով գյուղից վերև Խութ կոչված վայրում, նկատել է, թե ինչպես թուրքերը մտնում են գյուղ ու վառում դեզերը, մարագներն ու իր մարտիկներին դիմելով՝ բացականչել է. «Հասեք, քաղաքը վառում են»: Այդ դեպքերի մասին պատմում է Կարմիր գյուղի բնակիչ Գրիշա Պետրոսյանը:

Ի դեպ, երբ 1923 թ. ԼՂԻՄ-ը կազմավորվեց, որոշվեց մարզը բաժանել 4 շրջանների՝ Դիզակի, Վարանդայի, Խաչենի, Ջրաբերդի: Շուշիին տրվեց առանձին քաղաքի կարգավիճակ:

Խաչենի շրջանն իր հերթին բաժանված էր 4 ենթաշրջանների՝ Դաշպուլաղի, Ասկերանի, Կարմիր գյուղի (Տոնավազ) և Բերդաձորի[260]:

Բնակչության թվաքանակի ավելացմանը զուգահեռ, սակավահողության պայմաններում, որոշ ընտանիքներ տեղափոխվում և հաստատվում են Կոկիսոն գավառում (Գյոգ չայ) և այստեղ էլ, Հադրութից ու Հաղորտիից տեղափոխվածների հետ միասին հիմնադրում Բոզայանդ գյուղը[261]:

1917-1920 թվականներին թուրքերը փորձում են նվաճել Արցախը: Տոնավազի բնակչության համար նույնպես սկսվեցին բարդ ու ծանր ժամանակներ:

[256] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[257] Ա-Դ0, նշվ. աշխ., էջ 170, «Կարմիր դրոշ», հմ. 61, 9 սեպտեմբերի, 1988:
[258] Հայկունի, նշվ. աշխ., էջ 90:
[259] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 227:
[260] Բալայան Վ., Դրվագներ..., էջ 192:
[261] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 110:

Տոնավազում ձևավորվում է ինքնապաշտպանական ջոկատ: 1918 թ. սեպտեմբերի 18-ին Լաչինի քրդերը հարձակվում են Ղայբալի, Կրկժան, Փահլուր և Ջամիլլու հայկական գյուղերի վրա: Խաչենի ուժերը, Ալեքսան Բալասանյանի գլխավորությամբ, հետ են շպրտում թշնամուն: Ռազմական գործողություններին մասնակցել են նաև Տոնավազի մարտիկները:

1918 թ. սեպտեմբերի 25-ին թուրքական զորքերը մտան Շուշի: Թուրքական հրամանատարությունը լուծարեց Ղարաբաղի կառավարությունը: Ավելի քան 60 մտավորականներ, այդ թվում և Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանը, ձերբակալվեցին ու բանտ նետվեցին: Թեպետ Շուշին ընկավ, սակայն Արցախի գավառները մնացին անառիկ: Ազատության մեջ մնացած Արցախի կառավարության և Ազգային խորհրդի անդամները նոր իրավիճակը քննարկելու նպատակով հրավիրեցին արցախահայության երրորդ համագումարը: Քանի որ Տոնավազը Շուշիին մոտ էր և համեմատաբար ապահով, 1918 թ. սեպտեմբերի 29-ին համագումարի նիստերը ընթացան վերոհիշյալ բնակավայրում[262]:

Նույն նկատառումով 1919 թ. ապրիլի 10-ին Արցախի կառավարությունը որոշում է Տոնավազը դարձնել երկրի զինվորական ղեկավարության կենտրոնատեղի: Այստեղ էլ մայիսի 25-27-ը կայացավ Արցախի զինվորականների համագումար, որտեղ որոշվեց Արցախը բաժանել 5 պաշտպանական շրջանների՝ Դիզակի՝ Նիկոլայ Փիրումյանի, Վարանդայի՝ ա. մասի՝ Հովակ Ստեփանյանի, Վարանդայի բ. մասի՝ Ս. Չալյանի, Խաչենի՝ Արշավիր Պետրոսյանի, Ջրաբերդ-Գյուլիստանի՝ Արշակ Զախարբեկյանի հրամանատարությամբ: Ընդհանուր հրամանատարն էր կապիտան Արտաշես Վարդապետյանը:

Համագումարը հաստատեց նաև գործողությունների ծրագիրը[263]:

1918 թ. սեպտեմբերի 25-ին՝ Շուշին գրավելուց հետո, թուրքերը հոկտեմբերի սկզբներին 400 հոգանոց մի զորախմբով փորձում են Շուշիից Վարանդայի վրայով անցնել Կարյագինո՝ նպատակ ունենալով ավերել Դիզակն ու Վարանդան:

Ինչպես Արցախի մյուս բնակավայրերում, այնպես էլ Տոնավազում, Համբարձում Պետրոսյանի գլխավորությամբ կազմավորվում է մի ջոկատ: Թուրքական զորաջոկատը անցնում է Տոնավազով, և փորձում գիշերել գյուղում: Բայց ապահով չզգալով՝ նրանք շարունակում են ճանապարհը: Թուրքերը հասան Մմնա և գյուղից դուրս գալով Կոլխոզաշենի «Ճրատափ» կոչված տեղամասում հայտնվեցին Վարանդայի և Դիզակի աշխարհազորայինների խաչաձև կրակի տակ: Հոկտեմբերի 18-ին հայ կամավորականները լիովին ջախջախեցին թշնամու զորամասը:

Չնայած դրան՝ Ադրբեջանի ճնշումը Արցախի վրա օրեցօր ավելի էր մեծանում: 1920 թ. մարտի 23-ին նրանց հաջողվեց հրի մատնել Շուշիի հայկական քաղաքամասը: Հազարավոր մարդիկ սարսափելի եղեռնագործության ենթարկվեցին: Այդ օրերին ՀՀ կառավարությունը, ծանր վիճակի մեջ լինելով հանդերձ, 1920 թ. ապրիլի 14-ին Զանգեզուրից Վարանդա ուղարկեց Դրոյին, իսկ Կապանից Դիզակ՝ Նժդեհին:

Դրոն, երբ հասնում է Տոնավազ, անմիջապես վերջնագիր է ուղարկում Շուշիի թուրքերին, որ գերիներին բաց թողնեն[264]:

Տոնավազի տարեցները պատմում են, որ հիշում են Դրոյին և գտնում, որ մեծ զորավարը կոտորածից փրկեց հայկական մի բնակավայր ևս: Այդ օրերին տոնավազցիներից կազմված ջոկատի հրամանատարն էր Լոբունց Մոսին: Ընդհարումների ժամանակ զոհվում են տոնավազցի Բախշի Աղամյանը, Ալան Զաքարյանը, իսկ թշնամու կողմից տասնյակ զինվորներ և նրանց հրամանատար Գաջիևը:

Խորհրդային Ադրբեջանը, Արցախը ուժի միջոցով չկարողանալով նվաճել, փորձեց այդ նպատակին հասնել նաև ժողովրդին սիրաշահելու միջոցով:

1920 թ. Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի և Հեղկոմի որոշմամբ քարոզչական աշխատանքներ կատարելու համար դեպի գյուղեր են առաքվում բանվորական խմբեր: Նրանց թվում կային նաև մշակութային գործիչներ (երգիչներ, երաժիշտներ, դերասաններ), որոնք իրենց հետ տանում էին նավթ, աղ, լուցկի և ամենակարևորը՝ փող: 1920 թ. խորհրդային Ադրբեջանի կառավարությունը՝ Արցախը և Զանգեզուրը նվաճելու համար, մարդկանց սիրաշահելու, կաշառելու նպատակով 200 մլն ռուբլի էր տրամադրել[265]:

Գյուղի տարեց մարդիկ պատմում են, որ այդպիսի մի խումբ՝ 5 թուրք քարոզիչներ՝ երաժիշտների անվան տակ, գալիս են Տոնավազ: Նրանք տանուտեր Շամիրի բակում, որը այժմ կոչվում է Լոռունց կտոր, սկսում են նվագել, միաժամանակ բնակչությանը ասում, որ Ադրբեջանը հարուստ, ինտերնացիոնալ երկիր է և պատրաստ է հայերին նավթ, հացահատիկ տրամադրել ու բարելավել Արցախի վիճակը: Դրա փոխարեն նրանք ակնկալում էին, որ Արցախը Ադրբեջանին միացնելու հարցում հայերը կտան իրենց համաձայնությունը: Այդ օրը հարևան Խաչմաչ գյուղից Տոնավազում էր գտնվում Թևան Ստեփանյանի համախոհներից մեկը՝ Բագրատը: Նա անմիջապես հայտնում է Թևանին, վերջինս էլ իր ջոկատով հասնում է Տոնավազ, հարձակվում բոլշևիկների և թուրքերի վրա: Սպանվում է երեք թուրք և երկու հայ բոլշևիկ: Դրանից հետո Կարմիր բանակի կանոնավոր գնդերը գրոհում են գյուղի վրա, բայց տեղացիների աջակցությամբ Թևանին հաջողվում է հետ մղել թշնամուն: Մի քանի ամիս անց՝ 1921 թ. փետրվարի 26-ին, զինված ջոկատով Խան քիշի անունով մի թուրք գալիս է գյուղ և հարցաքննության պատրվակով յոթ հոգու տանում Շուշի: Մեկ օր անց՝ փետրվարի 27-ին, Տոնավազ են գալիս երկու զինված թուրքեր և խաբելով հայտնում բնակչությանը, որ տղամարդիկ պետք է գնան Շուշի՝ իշխանությունների հետ խորհրդակ-

[262] Իշխանեան Ե., նշվ. աշխ, էջ 242:
[263] Նույն տեղում, էջ 385, 415-418:
[264] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 615:
[265] Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ. գոյության պայքար, գիրք Ա, Երևան, 1993, էջ 31:

ցելու նպատակով: 18–50 տարեկան 70–80 տղամարդ Շոշ գյուղով, Ծեխլեգ կամուրջով հասնում են Շուշի: Բերդի մատույցներում նրանց վրա հարձակվում է գազազած թուրք ամբոխը և սկսում կոտորել[266]:

Դեպքերի ականատեսը պատմում է. «Ես և Լամբրոնը կանգնած էինք պատշգամբում և զրուցում էինք, երբ տեսանք մի մեծ խումբ մարդկանց՝ շրջապատված ասկյարներով, բերին «Խանեն աղջկա» աղբյուրի մոտ գտնվող ազատ տարածությունը: Բացի ասկյարներից, շրջապատել էր նաև թուրք ամբոխը և քարերով, փայտերով խփում էին այդ կապած կռներով մարդկանց: Ես և Լամբրոնը սարսափում էինք այդ տեսարանից, որը կատարվում էր մեր աչքի առջև: ...Ամբոխը ծեծելով այդ մարդկանց, քշեց դեպի բանտը: Տոնավազ գյուղից բերած 60–65 մարդկանց քշելով հինավուրց բերդի մեջ՝ սկսեցին կոտորել քարերով, դագանակներով ու սրերով: Մի քանի մարդիկ, որոնք վիրավորված մնացել էին դիակների տակ, ուշքի գալով, դուրս են գալիս գիշերը ու փախչում»[267]: Դիակների տակ կենդանի են մնում երեք հոգի: Ըստ տոնավազցի Մուքի (Միքայել) քեռու պատմածի, հաջորդ օրը բանտում նստածներին տանում են բերդից դուրս և դեպի Ստեփանակերտի կողմը նայող պարսպի տակ 8–10 մետր հսկա խրամատ փորում ու դիակները հողով ծածկում: Մուքի քեռին տրեխներից ճանաչում է իր եղբորը[268]:

Այդ դեպքերից հետո 1921 թ. ապրիլի 10-ին Շամիր տանուտերը մեկնում է Շուշի՝ իր 17-ամյա որդուն փրկելու: Սակայն նրան էլ են ձերբակալում: Բանտում եղածներին էլ պետք է գնդակահարեին: Վոյցեխովսկին հրամայում է նրանց ազատ արձակել, բայց թուրքերը գաղտնի սպանեցին Շամիրին, նրա որդի Սամսոնին, Հակոբջան Արզումանյանին և դաշնակցական խաչմաչեցի Բագրատին ու ևս 4 հոգու[269]:

Այդ ողբերգական իրադարձությունների հետ կապված 1988 թ. Տոնավազում հուշարձան է կանգնեցվել, որի վրա արձանագրված է, «Հայոց մեծ եղեռնի և 1921 թ. Շուշիում մուսավաթականների կողմից բարբարոսաբար նահատակված տոնավազցիների հիշատակին»:

1921 թ. խորհրդային Ադրբեջանի կառավարության որոշմամբ Տոնավազը վերանվանվեց Կարմիր գյուղ:

Գյուղը խորհրդայնացնելուց հետո 1930 թ. ստեղծվում է կոլտնտեսություն, որը լուծարվել է 1998 թ.:

Հայրենական մեծ պատերազմին Կարմիր գյուղից մասնակցել է 160 մարդ, զոհվել են 102-ը, որոնց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցված:

Ստեփանակերտի մերձակա Կարմիր գյուղը հայաթափելու նպատակով 20-րդ դարի 70-ական թվականներին Ադրբեջանի կառավարությունը ադրբեջանցի մի

[266] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[267] Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. 2, էջ 158–159:
[268] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[269] Աբրահամյան Հ., Թևան, Երևան, 1998, էջ 19:

քանի ընտանիքների բնակեցնում է հայկական հնագույն բնակավայրում: Այս անգամ էլ Տոնավազը փրկվեց արցախյան շարժման շնորհիվ:

1989 թ. Ալեքսանդր Ավետիսյանի գլխավորությամբ գյուղում ստեղծվում է կամավորական ջոկատ: Որպես ապահով վայր՝ Քարին տակից, Շուշիից, Մխիթարաշենից, Ճարտարից, Ստեփանակերտից տասնյակ ընտանիքներ ապաստանում են Տոնավազում:

1992 թ. մարտի 11-ին Շուշիից «գրադ» կայանքից գյուղը հրթիռակոծվեց: Զոհվեցին 17-ամյա Ժիրայր Մուսայելյանը և 22-ամյա Վալյա Գրիգորյանը: Մինչև Շուշիի ազատագրումը գյուղը ևս մի քանի անգամ հրետակոծվեց: Մարտական գործողությունների ժամանակ զոհվել են՝ Գրիգոր Ավետիսյանը, Վոլոդյա Կարապետյանը, իսկ Էդվարդ Սարգսյանը և Գուրգեն Հարությունյանը անհայտ կորած են համարվում: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի արժանացել է Արթուր Ստեփանյանը:

1866–67 թվականներին գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցուն կից գործել է դպրոց: Կրթարանի ուսուցիչն էր Տեր-Պողոս Տեր-Մանվելյանը: 1873 թ. գյուղի հասարակության խնդրանքով կաթողիկոսի կոնդակով Տոնավազում ծխական եկեղեցական դպրոց է բացվում: Դպրոցում 56 աշակերտ էր սովորում: Դպրոցը կոչվեց Սուրբ Պողոս-Պետրոսի անունով: Դպրոցը մի քանի անգամ՝ 1885, 1896 և 1906 թվականներին ցարական կառավարության որոշմամբ փակվել է:

1920–1926 թթ. դպրոցն ուներ տարրականի, 1926–1935 թթ.՝ յոթնամյայի, իսկ 1936 թվականից՝ միջնակարգ-գիշերօթիկի կարգավիճակ: Մինչև 1932 թ. դպրոցական շենքի կառուցումը պարապմունքները կատարվում էին Դերունց, Ասրունց, Երմունց տներում:

1935–1936 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 131 աշակերտ: Ցավոք, աշակերտների թիվը բնակչության թվին զուգահեռ պակասում է: Այսպես եթե 1986–87 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 65 աշակերտ, 1998–99 ուսումնական տարում՝ 35, ապա 2013–14 ուսումնական տարում՝ ընդամենը 19 աշակերտ:

Դպրոցի տնօրեններ են աշխատել Ավագ Դավթյանը, Արմենակ Բաբայանը, Աբրահամ Դավթյանը, Համո Քարամյանը, Լևոն Արամյանը, Բարդուղիմեոս Սակարյանը, Սոկրատ Աբրահամյանը, Միքայել Առաքելյանը, Շահեն Մարտիրոսյանը, Նարիման Գրիգորյանը, Միքայել Հովհաննիսյանը, Շահեն Մարգարյանը, Դավիթ Գրիգորյանը, Մանվել Մխիթարյանը, Մարտիրոս Ավետիսյանը, Արթուր Ստեփանյանը:

Կարմիր գյուղի շրջանավարտներ են բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Քրիստափոր Պետրոսյանը, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Հայրապետյանը, ԱՀ ժողովրդական արտիստ Մամիկոն Միքայելյանը, բանաստեղծ Գերասիմ Հովսեփյանը, դիվանագետ, գեներալ-մայոր Վալենտին Իսրայելյանը:

Տոնավազում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային արժեք ներկայացնող շատ հուշարձաններ: Դրանցից նշանավոր են Բովրխանի վանքը և

նրա շրջակա մթին անտառներն ու քարանձավները: Ավանդությունը պատմում է, որ Դրնգդրնգան քարանձավից ճանապարհով կարելի է հասնել մինչև Հարավ գյուղ: Արցախյան պատերազմի ժամանակ ռումբերի հարվածների տակ քարանձավը ներսից փլվել է:

Տոնավազի տարեցները պատմում են, որ Բովրխանի կողմերում՝ լեռների մեջ, 17-րդ դարում մելիք Բաղին փորել է ստորգետնյա մի ճանապարհ, որը հասնում էր մինչև Նգի գյուղը: Անցուղին այնքան լայն էր կառուցված, որ ձիավորը կարող էր այնտեղով անցնել:

Կարևոր են նաև Ըղեն նահատակ եկեղեցին (12-13-րդ դարեր), Սբ. Աստվածածին եկեղեցին (1841 թ.), կամուրջը (1864 թ.):

Կարմիր գյուղի նշանավոր աղբյուրներն են՝ Գյուղի, Փոքր ջուր, Սիլամանանց, Ռքելանց քյահրիզ, Պետունց, Վալադանց, Մեծ ջուր, Թխկե:

Գյուղում շարունակում են ապրել Սարդարանց, Ստեփանանց, Մխելանց, Տեր-Մանվելյանների, Զաքարյանների ազգատոհմերի ներկայացուցիչները:

Համայնքը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը:

Կարմիր գյուղում 1987 թ. կար 72 տուն, 198 բնակիչ[270], 2018 թ.՝ 49 տուն, 181 բնակիչ[271]: Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՀԱՐԱՎ

Գյուղը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին Վարանդա գավառում: Բնակավայրի հարևանությամբ հոսում է Կարկառի վտակներից մեկը, և դարերի ընթացքում գետի հունով խոր ձոր է առաջացել, իսկ Հարավն էլ ձևավորվել է բարձրադիր ամրոցատիպ սարահարթի վրա: Գյուղը շրջապատված է մի շարք բարձրադիր բլուրներով և սարերով. արևելյան կողմից՝ Խաշար խութը, հյուսիս-արևելքից՝ Քյաթուկի բլրաշարը, հյուսիսից՝ Շիշթափան, արևմուտքից՝ Կիշկի լեռնազանգվածը, հարավից՝ Բովրխանի բարձրադիր սարը: Գյուղի հարևանությամբ գտնվում են Բովրխանի, Կիշկի, Ծառեխա ծմակները և Դահրազի յալլի անտառները:

Գյուղից 2 կմ դեպի արևելք պահպանված Ք. ա. 2-1-ին հազարամյակների դամբարանադաշտը, անհայտ անուններով միջնադարյան գյուղերի և գերեզմանոցների հետքերը, 11-13-րդ դարերի Հարու բերդի մնացորդները վկայում են, որ վերոհիշյալ տարածքները դարեր շարունակ հայ մարդու գործունեության ոլորտում են եղել:

Վերոնշյալ անանուն գյուղերի բնակիչներն իրենց համար առավել հարմարավետ նոր բնակավայրի տեղ են ընտրել ներկայիս Հարավ գյուղի տարածքը:

[270] Մելքումյան Ս., նշվ.աշխ., էջ 130:
[271] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:

Ամենայն հավանականությամբ գյուղն իր անունը ստացել է նրանից ոչ շատ մեծ հեռավորության վրա գտնվող Հարու բերդի անունից: Վերոհիշյալ ամրոցի մասին միակ հիշատակությունը պահպանվել է Մ. Գոշի ժամանակագրության մեջ: Նա գրել է, որ սելջուկ Էլտկուզ աթաբեկը, կռվելով Խաչենի իշխանի դեմ, գաղտագողի գրավում է նրա Հարու ամրոցը և կոտորում պաշտպաններին[272]: Երևի դրանից է, որ Արցախի բնակավայրերի անուններն ուսումնասիրող Թ. Ամիրջանյանը գյուղին Հար-բերդ է անվանել[273]:

Ղ. Ալիշանն[274] ու Բ. Ուլուբաբյանը Հարարը նույնացնում են Հարու ամրոցի հետ[275]:

Հետագա դարաշրջաններում Քաշաթաղի Հարար և Ծաքիի Վարդաշեն բնակավայրերից որոշ ընտանիքներ տեղափոխվում և հաստատվում են Հարավում ու մերվում տվյալ միջավայրին:

1795 թ. Հարավում կառուցվում է Սբ. Մեսրոպ եկեղեցին: Քանի որ բնակավայրը գտնվում էր հարթավայրից դեպի լեռնաստանի խորքերը տանող առանցքային կետում, քոչվոր ցեղերի կողմից մշտապես հարձակումների թիրախում է գտնվել:

19-րդ դարի վերջերին Հարավում կար 65 ծուխ, 445 բնակիչ[276]:

1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Ղուշչիլար, Աբդալ, Գիլափլու թուրքաբնակ ավազակաորջերը անընդհատ խաթարում էին Հարավի և հարևան հայկական բնակավայրերի բնակչության անդորրը:

Ի դեպ, նույն իրավիճակն էր ստեղծվել նաև արցախյան շարժման առաջին տարիներին (1988-1991 թթ.), երբ վերոհիշյալ թուրքաբնակ գյուղերից ավազակախմբերը հարձակվում և սպանում էին Հարավի խաղաղ բնակիչներին:

Հարավի հայությանը ծանր բաժին հասավ նաև 1917-1920 թվականներին: Թուրք-թաթարական զորախմբերից Ասկերանի կիրճի աջ թևը պաշտպանող հայկական ջոկատների համար Հարավը հենակետային բնակավայրի դերակատարություն ուներ:

Արցախում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո 1933 թ. գյուղում կոլտնտեսություն է կազմավորվում: Խորհրդային տարիներին գյուղի ազգաբնակչությունը հիմնականում ներգրավված էր կոլտնտեսային արտադրության մեջ: Տնտեսությունը մասնավորապես հայտնի էր որակյալ կարտոֆիլի արտադրությամբ:

Տարբեր ժամանակներում կոլտնտեսությունը ղեկավարել են Վարդան Ներսիսյանը, Սուրեն Մելքումյանը, Աշոտ Բաղդասարյանը, Աբավոն Զաքիյանը, Վահան Ասծատրյանը, Լենսեր Անդրյանը, Յուրի Գասպարյանը, Էռնեստ Մինասյանը:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 122 մարդ, զոհվել է 69-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կանգնեցվել:

[272] Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դդ., էջ 122:
[273] «Սովետական Ղարաբաղ», 8 դեկտեմբերի, հմ. 281, 1988:
[274] Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 388-389:
[275] Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դդ., էջ 122:
[276] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 216:

Արցախյան ազատագրական պայքարին և ԱՀ կերտմանը Հարավի ազգաբնակչությունն իր արժանի ավանդն է ունեցել: Ազատագրական շարժման առաջին տարիներին գյուղում Կամո Մելքումյանի հրամանատարությամբ կամավորական ինքնապաշտպանական ջոկատ է կազմավորվել, որը մասնակցել է ԱՀ շրջաններում ծավալված մարտական գործողություններին: 20 հոգի իրենց կյանքն են նվիրաբերել հայրենիքի պաշտպանության սուրբ գործին:

ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվել է Կամո Մելքումյանը, հետմահու՝ Արմեն Մինասյանը,:

1883 թ. գյուղի Սբ. Մեսրոպ եկեղեցուն կից գործել է դպրոց: 1886-1887 ուսումնական տարում բացվում է ծխական դպրոց, որտեղ սովորում էր 20 աշակերտ, դասավանդում՝ 1 ուսուցիչ: 1896 թ. ցարական կառավարության կողմից դպրոցը փակվում է և 1909 թ. նորից վերաբացվում: Այն մեկդասյա երկսեռ դպրոց էր, ուներ 1 բաժանմունք, 1 ուսուցիչ և 25 աշակերտ[277]:

Խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Հարավում 1933 թ. բացվում է տարրական դպրոց, իսկ 1934 թ.՝ յոթամյա: Դպրոցական շենք չլինելու պատճառով կրթական հաստատությունը գործել է Դայունց և Սերգեյանց տներում: 1957 թ. պարապմունքները անց են կացվել նորակառույց շենքում: Այդ տարիներին դպրոցում սովորում էր շուրջ 120 աշակերտ:

Դպրոցի տնօրեններ են աշխատել Շամիր Հայրիյանը, Վարյա Օհանյանը, Լենդրուշ Սարգսյանը, Ռազմիկ Ավագյանը, Պավել Ղազիյանը, Հակոբ Մինասյանը:

Ծննդով հարավից են Փառքի երեք աստիճանի շքանշանակիր Շահեն Սարգսյանը, երկրաբանական գիտությունների դոկտոր Հրանտ Ղազարյանը, գրող, հրապարակախոս Մաքսիմ Հովհաննիսյանը:

Հարավում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային արժեք ներկայացնող հուշարձաններ՝ Ք. ա. 2-1-ին հազարամյակների դամբարանադաշտ, 11-13-րդ դարերի Հարու բերդը, 5-7-րդ դարերի Քյոհնա ղալա ամրոցը, որի ժայռի վրա կան չընթերցված հայատառ վիմագիր արձանագրություններ, Ծառեխա խաչ և Պիծի խաչ սրբատեղիները, Սբ. Մեսրոպ եկեղեցին (1795 թ.), Բովուրխանի վանք-ամրոցը (16-17-րդ դարեր), 1890, 1898 թվագրությամբ արձանագիր աղբյուրներ, 13-րդ դարի խաչքար, Ճաք աղբյուրի շրջակայքում միջնադարյան բնակատեղիներ:

Գյուղում և նրա շրջակայքում կան մի շարք աղբյուրներ՝ Ճապկի խաչ, Քոսեն ձյուր, Թունգուն, Բնկետի, Խաչի, Ղուզի, Նովուզուրդ, Գյոլին ձյուր, Սեգիտտու:

Հարավի նշանավոր հանդամասերն են՝ Ճղպրոտ, Քոսին ձյուր, Ճապկի խաչ, Գյադուկներ, Ղուզի, Գյոլեր, Հունուն տափ, Բայլի ղուրուղ, Աղջեբաղի, Դուզեր, Սալտափ, Գյոլին ծոր, Տախծի ծոր, Խնձրոտ, Սեգիտտու, Բաղունց թումբ:

[277] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, վավ. 309:

Հարավում ներկայումս շարունակում են ապրել՝ Վերդունց, Բդասանց, Հայրունց (Զատունց, Մուսանց), Բաղունց, Վընեսանց, Աղունց, Հանջունց, Ասրունց, Մրութանց, Մեսրուփանց, Կյափունց, Կուքունց, Միրզաջանանց, Ավագյումանց, Գլրանց, Իսաջանանց, Դայունց, Բլանց, Ջաքունց, Մուքունց, Ըթանց, Վիտունց, Սլեյմանանց, Դերանց, Բղդանց, Պետունց, Մինասանց, Ըփրամանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Համայնքը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը:

Հարավում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, դպրոց, մանկապարտեզ, առևտրի մեկ կետ:

1987 թ. այստեղ կար 96 տուն, 281 բնակիչ[278], 2018 թ.՝ 98 տուն, 311 բնակիչ[279]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Հարավի բնակիչների մի մասն էլ աշխատում են գյուղի մոտ գտնվող մարմարի քարհանքերում և քարամշակման արտադրամասերում:

ՀԻԼԻՍ

Գյուղը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին Խաչեն գավառում: Բնակավայրը նախալեռնային է և տեղաբաշխված է Ասկերան շրջկենտրոնից հյուսիս-արևմուտք: Գյուղը երեք կողմից շրջապատված է անտառներով, իսկ ներքևի մասով հոսում է Կարկառ գետի Հիլիս վտակը: 1810 թ. Պարսկաստանի Ղարադաղ նահանգից 7 հայ ընտանիքներ տեղափոխվում և բնակվում են ներկայիս գյուղի տարածքում: Արցախյան լքված բնակավայրերից մեկը վերակենդանանում է: Նախկինում Հիլիս գյուղի տարածքում եղած բնակավայրի մասին են խոսում նաև գյուղի գերեզմանոցում պահպանված 16-18-րդ դարերին վերաբերող թաղումները:

Հիլիսի եկեղեցու մուտքի դռան ճակատային քարի վրա պահպանված արձանագրության համաձայն այն կառուցվել է «ՌՄՂ», այսինքն 1860 թվականին:

Ղարադաղից եկած հայերը բնակավայրին տվել են Հիլիս անվանումը: Գյուղի ներկայիս բնակիչները ասում են, որ իրենց պապերը բնակավայրը Հիլիս են անվանել, որովհետև իրենց տների մոտով հոսող գետակի ջուրը այնքան մաքուր և ջինջ է եղել, որ նման էր հայելու:

1860 թ. գյուղում կառուցվել է Սբ. Հովհաննես եկեղեցին: Խորհրդային տարիներին այն վերածվել էր պահեստի, հետո ակումբի: Ներկայումս եկեղեցին անմխիթար վի-

[278] Մելքումյան Ս., նշվ.աշխ., էջ 136:
[279] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:

ձակում է գտնվում: Ներսը խոնավ է, անձրևաջրերը թափվում են ներս: Տանիքը պատված է բուսականությամբ:

19-րդ դարի վերջերին Հիլիսում կար 50 ծուխ, 295 բնակիչ[280]:

Գյուղում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո 1932 թ. կազմակերպվել է «Նոր հույս» անունով կոլտնտեսություն: 1950 թ. այն միացել է Խնձրիստանի «Իլյիչ»-ի անվան կոլտնտեսությանը: 1989 թ. Հիլիսի կոլտնտեսությունը նորից առանձնացել է և շարունակել գործել որպես առանձին միավոր: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո կոլտնտեսությունը լուծարվել է:

Հայրենական մեծ պատերազմին Հիլիսից մասնակցել է 60 մարդ, որոնցից 33-ը զոհվել է: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կանգնեցված:

Արցախյան ազատագրական պատերազմի տարիներին գյուղից զինվորագրվել են 31 կամավորականներ, որոնցից զոհվել են 7 ազատամարտիկներ, իսկ մեկը համարվում է անհայտ կորած: Վագիֆ Մկրտչյանը և Լավրենտ Թամրազյանը հետմահու արժանացել են ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի:

Խորհրդային տարիներին Հիլիսում գործել է տարրական դպրոց: 1991-1992 ուսումնական տարում դպրոցը ստացել է ութամյայի կարգավիճակ: Ներկայումս կրթական հաստատությունը դարձել է Խնձրիստանի միջնակարգ դպրոցի մասնաճյուղը: Դպրոցն ունի 11 աշակերտ, 4 ուսուցիչ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Միքայել Ղուլյանը, Ալվարդ Գրիգորյանը, Գայանե Մեժումյանը, Գուրգեն Ղուլյանը:

Հիլիսում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային արժեք ներկայացնող հուշարձաններ Սբ. Հովհաննես եկեղեցին (1860 թ.), հին գյուղատեղին (16-18-րդ դարեր), գերեզմանոցը (16-18-րդ դարեր):

Համայնքի տարածքում կա թվով 5 աղբյուր՝ Տապեն, Կապեն ծոր, Պապեն, Ջալալ ապոր և Վանի ապոր:

Գյուղի նշանավոր հանդամասերն են՝ Հաստ խաչ, Ներքե հանդ, Մալը հող, Քամու խաչ, Ըղանց տափ, Կինջի հող, Ղուզե հող, Ջըղվերեն ծյոր:

Հիլիսում շարունակում են ապրել Ղուլունց (Ղուլյաններ), Դերունց (Բաբաքյոխյաններ), Վըրդանանց (Վարդանյաններ), Մադունց (Մարտիրոսյաններ), Ադունց (Աղաջանյաններ), Կոստանդանց (Խաչատրյաններ), Ղըզարանց (Ղազարյաններ), Ջումունց (Թամրազյաններ), Համբունց (Համբարձումյաններ), Սափարունց (Սաֆարյաններ), Թոխունց (Ավագյաններ), Դերունց (Մկրտչյաններ) ազգատոհմերի ներկայացուցիչները:

Համայնքն էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը:

[280] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 243:

Հիլիսում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, դպրոց, առևտրի 1 կետ:

Հիլիսում 2010 թ. ապրում էր 47 տուն, 161 մարդ[281]: 2018 թ. տվյալներով կա 48 տուն, 218 բնակիչ[282]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՀՈՎՍԵՓԱՎԱՆ

Գյուղը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ Պատարա գետի ձախ գետահովտում: Գյուղը հիմնադրվեց քաղաքական որոշ հանգամանքների ազդեցության տակ, և այն նոր որակ հաղորդեց արցախյան ազատագրական պայքարին:

Արցախյան շարժման առաջին իսկ օրերից ժողովրդական ընդվզման նկատմամբ իշխանությունները թշնամաբար էին տրամադրված: ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոն շարժումը որակեց «ծայրահեղական» և «նացիոնալիստական»: Դրան հաջորդեց 1988 թ. մարտի 24-ին ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի՝ 1988-1995 թթ. ԼՂԻՄ սոցիալ-տնտեսական զարգացման միջոցառումների վերաբերյալ որոշումը[283], որով նախատեսված շուրջ 400 մլն խորհրդային ռուբլին հետագայում հիմնականում նպատակաուղղվեց մարզի ադրբեջանական բնակավայրերի արհեստական խոշորացմանը:

Ավելին՝ Խոջալուն հայտարարվեց մարզկենտրոն ու աննախադեպ շինարարություն սկսվեց: Ստեփանակերտի շուրջ օղակը օրեցօր ավելի էր սեղմվում:

Այդ օրերին հայ գործիչները միջոցներ էին որոնում օրեցօր ահագնացող վտանգը չեզոքացնելու:

1989 թ. շարժման առաջամարտիկներից մեկը՝ Յուրի Հովսեփի Ջհանգիրյանը, դիմում է Աստղաշենի կոլտնտեսության նախագահ Սլավիկ Գրիգորյանին՝ Խոջալուին հակակշիռ մի նոր բնակավայր ստեղծելու համար իրեն տրամադրել վերոհիշյալ բնակավայրի մոտ գտնվող մեքենատրակտորային կայանը՝ իր օժանդակ շինություններով և 40 հա հողահանդակը:

Հայաստանի կոոպերատիվների միությունը նոր բնակավայրերի կառուցման համար 2 մլն ռուբլի է տրամադրում: Շուտով կառուցվեցին առաջին տները, և Յուրի Ջհանգիրյանի հոր՝ Հովսեփի անունով նոր բնակավայրը անվանվեց Հովսեփավան: Ադրբեջանական իշխանությունները չէին կարող հանդուրժել դա, և 1991 թ. հուլիսին, խորհրդային բանակի զինվորների ուղեկցությամբ, Ադրբեջանի հատուկ ջոկատայինները անձնագրային ռեժիմի պատրվակով Հովսեփավանում կալանավորում են Յուրի

[281] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[282] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:

[283] Нагорный Карабах, Историческая справка, Ереван, 1988, с. 74.

Ջհանգիրյանին և Շուշիի ու Բաքվի բանտերում դաժանաբար խոշտանգելով՝ սպանում են 1993 թ. մայիսին: Նրա խոշտանգված մարմինը փրկագնով բերում և ամփոփում են հայրենի հողում:

1994 թ. պատերազմի ավարտից հետո Հովսեփավանում հաստատվում են Մարտակերտի և Ասկերանի շրջանի ավերված գյուղերի տասնյակ ընտանիքներ: Գյուղի առաջին բնակիչները դառնում են Ռոզան, Վազգենը, Վովան, Ռաֆիկը, Ալիխանը, Խաչիկ Պետրոսյանը, Հրաչիկ Սարգսյանը: Գյուղի կայացման գործում կարևոր էր նաև Նորագյուղի կոլտնտեսության նախկին նախագահ Արշավիր Գալստյանի դերը:

Արցախյան պատերազմին գյուղից մասնակցել է 16 մարդ: Նրանցից 4 ազատամարտիկներ զոհվել են:

1998 թ. Հովսեփավանում բացվել է տարրական դպրոց: 2009 թ. դպրոցը դարձավ հիմնական և անվանակոչվեց Յուրի Ջհանգիրյանի անունով: 2013 թ. ԱՀ կառավարությունը գյուղում նոր դպրոցական շենք է կառուցել: 2014–2015 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 25 աշակերտ, դասավանդում 12 ուսուցիչ:

Դպրոցի տնօրեններ են աշխատել Նարինե Աղաջանյանը, Անժելիկա Էլիբեկյանը, Անահիտ Գրիգորյանը:

Համայնքի տարածքում կա մեկ աղբյուր՝ Խաչիկի աղբյուրը:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը և ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակիչների համար հասանելի են:

Հովսեփավանում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, դպրոց:

2018 թ. Հովսեփավանում կար 30 տուն, 184 բնակիչ[284]: Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՄԱԴԱԹԱՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին Վարանդայի գավառում՝ համանուն գետակի աջ կողմում՝ պատմական Ավետարանոց գյուղից ոչ շատ մեծ հեռավորության վրա:

Մադաթաշենի շրջակայքը դեռևս վաղ միջնադարից խիտ բնակեցված է եղել: Դրա մասին են վկայում բնակավայրի շրջակայքում գտնվող անանուն գյուղատեղիների, գերեզմանոցների մնացորդներն ու սրբատեղիները: Միջին միջնադարում Մադաթաշենի տարածքում են եղել մելիքանիստ Ավետարանոցի անասնագոմերը:

1710 թվականից Ավետարանոցից և հարևան հայկական գյուղերից տեղափոխված անասնապահները ընտանիքներով հիմնավորվում են այստեղ, և այդ հիմքերի

[284] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:

վրա ձևավորվում է բնակավայր: Այն սկզբում ուներ Ալամանց գոմեր անունը[285]: 19-րդ դարում այս գյուղում ծնված Պետրոս Մադաթյանի հետ կապված՝ գյուղը ստացավ Մադաթաշեն անունը[286]: Կարծիք կա նաև, որ գյուղի անունը առաջացել է գեներալ Վալերիան Մադաթովի ազգանունից[287]:

Քանի որ Մադաթաշենը գտնվում էր Այսրկովկասի խորքերից դեպի Պարսկաստան տանող առևտրական ճանապարհներից մեկի հանգուցակետում, ուստի այն նաև իջևանատեղիի դերակատարություն է ունեցել:

19-րդ դարի վերջերին Մադաթաշենում կար 35 ծուխ, 207 բնակիչ[288]:

Արցախում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո 1929 թ. Մադաթաշենում կազմակերպվել է կոլտնտեսություն: 1960-ական թվականներին այն միացվել է Ակնաղբյուրի կոլտնտեսությանը:

Արցախի հանրապետության կազմավորումից հետո կատարվել է կոլտնտեսությունների ապախոշորացում: Մադաթաշենում փայատիրական տնտեսության ձևով կոլեկտիվ տնտեսությունը շարունակել է գոյատևել: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո այն դադարել է գործել:

Հայրենական մեծ պատերազմին Մադաթաշենից մասնակցել է 62 մարդ, որից զոհվել է 26-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

1989 թ. գյուղում կազմակերպվել է ինքնապաշտպանական ջոկատ, որը Ասկերանի գնդի կազմում մասնակցել է արցախա-ադրբեջանական պատերազմի տարբեր ուղղություններում ընթացած մարտական գործողություններին: Մարտերում ցուցաբերած խիզախության համար Սերգեյ Գասպարյանը պարգևատրվել է ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

1969 թ. գյուղում գործել է տարրական դպրոց: 1975 թ. այն փակվել է: Մադաթաշենի դպրոցահասակ երեխաները սովորում էին Ակնաղբյուրի և Ավետարանոցի միջնակարգ դպրոցներում:

1990 թ. գյուղում նորից բացվեց տարրական դպրոց: 2015 թ. այն ստացել է հիմնական դպրոցի կարգավիճակ: 2015–2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 12 աշակերտ:

Դպրոցի տնօրեններ են աշխատել Լուսիկ Ցարամիշյանը, Սվետլանա Ավանեսյանը, Գայանե Պետրոսյանը:

Մադաթաշենում և նրա շրջակայքում կան պատմամշակութային նշանակության հուշարձաններ: Գյուղից ոչ շատ մեծ հեռավորության վրա է գտնվում պատմական Ղևոնդիկ վանքը (5–18-րդ դարեր): Այն կառուցվել է 5-րդ դարի վարդանանց պատերազմի զոհերի հիշատակին:

[285] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 208:
[286] Նույն տեղում:
[287] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 138:
[288] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 208:

Գյուղամիջում 1904 թ. կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցին:

Մադաթաշենի շրջակայքում կան 17–րդ դարի կամուրջ, 19–րդ դարի ջրաղաց, 9–րդ դարի Ըխտըլահազի սրբավայրը և 13–14–րդ դարերի ժայռափոր խաչքարեր:

Գյուղում նշանավոր են Կաթնաղբյուր, Գյուլուտեղեր, Ախալանբեգին և Տափին ծոր աղբյուրները:

Մադաթաշենում շարունակում են ապրել Չոբանանց, Բալասանանց, Հաթամանց, Ճղարանց, Դիլաքանց, Մայիլանց, Հեբունց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը:

Մադաթաշենում գործում են գյուղապետարան, ակումբ, գրադարան, բուժկետ, դպրոց, առևտրի 2 կետ:

1987 թ. այստեղ կար 29 տուն, 101 բնակիչ[289], 2018 թ. 27 տուն, 104 բնակիչ[290]: Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՄԽԻԹԱՐԱՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին Վարանդա գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Կարկառ գետի վերին հոսանքի աջափնայակում, Շուշիի կամ Հունոտի կիրճի աջ մասում՝ մի հովտանման ձորակում:

Գյուղի սկզբնավորման ժամանակշրջանի վերաբերյալ գրավոր սկզբնաղբյուրներում ստույգ տեղեկություններ չեն պահպանվել:

Նախկինում գյուղը անվանվել էր Արկաթալու, Ըրկթալի, Արկաթալու շեն[291]: Մատենադարանում պահպանված ձեռագրերից մեկում հիշատակված է, որ գյուղը Երկաթալի ձորակում լինելու պատճառով անվանվել է Արկաթալու[292]:

Գյուղը կրել է նաև Մխիթարաշեն անունը: Վերոհիշյալ անվան ծագման հետ կապված՝ Արցախում մի զրույց է պահպանվել, ըստ որի՝ 1720–ական թվականներին՝ սղնախական պայքարի տարիներին, Արկաթալի գյուղի մոտ Մխիթար սպարապետի հրամանատարությամբ հայկական զորագունդը ջախջախել է Արցախ թափանցած պարսկական զորքին: Առայսօր գյուղի հնավայրերից մեկը շարունակում է կրել զորավարի անունը՝ Մխիթար սպարապետի քարանձավ:

Գյուղում և շրջակայքում պատմամշակութային նշանակության շատ հուշարձաններ են պահպանվել: Դրանցից առավել շատ հայտնի են Մխիթարաշենի Սբ. Աստվածածին եկեղեցին (19–րդ դար), գերեզմանոց (17–18–րդ դարեր), ջրաղաց (19–րդ դար), Հունոտ գյուղատեղին, գերեզմանոցը, 1720 թ. կառուցված կամուրջը, Հունոտի կիրճի ջրաղացները, Ամարաթներ կոչված քարանձավային համալիր շինությունը, Շաղոտ գյուղատեղին և ամրոցը, հայտնի կատակաբան Պըլը Պուղու գերեզմանը:

Մխիթարաշեն անվան հետ 19–րդ դարում շարունակում էր գործածական մնալ նաև Արկաթալին:

1841 թ. Ղարաբաղի կոնսիստորիայի կազմած «Ցուցակ թուոյ Հայոց ժողովրդականաց կրկին սեռի իւրաքանչիւր եկեղեցւոյ քաղաքի և գեղջ Ղարապաղու վիճակի» վերնագրով ցանկում Մխիթարաշենը ներկայացված է Արկաթալի անունով[293]:

Միջին միջնադարից մինչև 1868 թ. Վարանդայի գավառը Շուշիի հետ կապող հիմնական ճանապարհը անցնում էր Մխիթարաշենով: Պատահական չէ, որ Շուշիի չորս դռներից մեկը կոչվում էր Ամարասի կամ Մխիթարաշենի[294]: Այս հանգամանքը նպաստել է Մխիթարաշենի զարգացմանը:

1868 թ. Ելիզավետպոլի նահանգապետի հրամանագրով 2000 քառ. մ տարածք է հատկացվել Շուշիում բանտ կառուցելու համար, որի պատճառով Մխիթարաշենի դուռը փակվել է[295]:

Արցախում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո 1930 թ. Մխիթարաշենում կոլտնտեսություն է կազմակերպվել: Այնուհետև այն միավորվել է Շուշիի կոլտնտեսության հետ:

1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո գյուղում ստեղծվել են մասնավոր տնտեսություններ:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Մխիթարաշենից 30 հոգի զոհվել են: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կանգնեցվել:

Արցախյան ազատագրական պատերազմի տարիներին գյուղի երիտասարդները մասնակցել են ռազմական գործողություններին:

Շուշիի ազատագրման ռազմագործողության ժամանակ Մխիթարաշենը դարձել էր ԱՀ ՊԲ կարևոր հենակետերից մեկը: Խնդիր էր դրված Շոշի ուղղությունում զարգացնել հարձակումը Մխիթարաշենի մոտակա ելման բնագծից՝ քաղաքի ծայրամասում ադրբեջանցի զինյալներին ոչնչացնելու և բանտի ու հիվանդանոցի գծում ամրանալու, որն էլ հաջողությամբ իրագործվել էր:

Բնակավայրը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Գյուղի աղբյուրներն են Երե, Փրփթան, Հադրութանց:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

[289] Մելքումյան Ս., նշվ.աշխ., էջ 139:
[290] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 1:
[291] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 228:
[292] Մատենադարան, ձեռ. հմ. 2734:

[293] ՀԱԱ. ֆ. 57, ց. 1, գ. 305, թ. 45:
[294] Բալայան Վ., Շուշի, էջ 287:
[295] Նույն տեղում, էջ 52:

Գյուղի աշակերտները սովորում են Շոշի միջնակարգ դպրոցում:

Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ:

Մխիթարաշենում 1890-ական թվականներին կար 26 տուն, (1893 թ. հարկացուցակների համաձայն 17 տուն[296]), 228 բնակիչ[297], 1987 թ.՝ 17 տուն, 59 բանկիչ[298], 2018 թ.՝ 21 տուն, 101 բնակիչ[299]: Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՄՈՇԽՄՀԱՏ

Գյուղը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին Վարանդայի գավառում: Գյուղի մոտակայքով հոսում են Երե, Առու, Շորեն գետակները:

Մոշխմհատի մոտակայքում են գտնվում Ղոնդեգ և Ղուզեն լեռները: Բնակավայրը շրջապատված է անտառներով, ունի գեղատեսիլ բնություն:

Մոշխմհատի բնակիչների մոտ պահպանված զրույցի համաձայն՝ բնակավայրը գոյություն ունի 5-րդ դարից և գտնվում էր ներկայիս գյուղից քիչ վերև՝ Քարաղբյուր կոչված հանդամասում: 17-րդ դարում նրանք ներկայիս գյուղի տարածքում եղած մոշի թփերն ու անտառները մաքրել են և հիմնել են նոր գյուղ: Երևի դրանից էլ գյուղը ստացել է Մոշխմհատ անվանումը:

19-րդ դարի վերջերին այստեղ կար 50 ծուխ, 275 բնակիչ[300]:

Ժամանակի ընթացքում բնակչության մի մասը տեղափոխվում և հաստատվում է Շամախու Աղբուլաղ գյուղում:

17-րդ դարում գյուղում կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցին: Խորհրդային տարիներին այն օգտագործվում էր որպես պահեստ: 1929 թ. գյուղում կոլտնտեսություն է կազմավորվել: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո այն լուծարվել է:

Հայրենական մեծ պատերազմին Մոշխմհատից մասնակցել է 48 մարդ, որից զոհվել է 31-ը: Նրանց հիշատակին հուշարձան է կանգնեցվել:

Չնայած ազգաբնակչության փոքրաթիվ քանակին՝ արցախյան ազատագրական պատերազմին մասնակցել է 25 հոգի: Նրանցից 5 հոգի զոհվել են, իսկ 1 հոգու ճակատագիրը առայսօր անհայտ է:

Խորհրդային տարիներին Մոշխմհատում կար ութամյա դպրոց: 1970 թ. դպրոցահասակ երեխաների թվաքանակի նվազման պատճառով դպրոցը փակվել է, և գյուղի դպրոցականները հաճախել են Ակնաղբյուրի դպրոց: 1994 թ. Մոշխմհատում նորից

[296] ՀԱԱ, ֆ.57, ց.1, գ.148, թ. 89:
[297] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 228:
[298] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 142:
[299] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:
[300] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 207:

բացվեց քառամյա դպրոց, որը, երեխաների թվի աճի շնորհիվ, հետագայում ստացավ ութամյայի կարգավիճակ: Սակայն 2009 թ. այն կրկին դարձավ տարրական:

Աշակերտների թվաքանակի կտրուկ նվազման պատճառով 2010 թ. այն որպես առանձին դպրոց դադարեց գործել և դարձավ Ակնաղբյուրի կրթական հաստատության մասնաճյուղ: Կրթօջախը 2012 թ. հանդիսանում է Մադաթաշենի դպրոցի մասնաճյուղ, որտեղ սովորում է 4 աշակերտ: 2000-2001 թթ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով Մոշխմհատում նոր դպրոց է կառուցվել:

Ծագումով Մոշխմհատ գյուղից է ԱՀ երկրորդ նախագահ Արկադի Ղուկասյանը:

Մոշխմհատում և նրա շրջակայքում կան պատմամշակութային նշանակության հուշարձաններ: Գյուղից 2 կմ դեպի հյուսիս վեր է խոյանում Սբ. Ղևոնդիկ վանքը (5-18-րդ դարեր): Գյուղի մերձակայքում են գտնվում Հեղինեի քույր սրբատեղին (12-13-րդ դարեր), Համբյուրատեղ կամ Ճնթոլմ սրբատեղին (15-16-րդ դարեր), Թուխնակալ ապարանքը (18-րդ դար), գյուղամիջի Սբ. Աստվածածին եկեղեցին (17-րդ դար), կամուրջ (17-18-րդ դարեր), 12-13-րդ դարերի խաչքարեր, 19-րդ Միդովանց, Մարունց ջրաղացները, ձիթահանը:

Գյուղի նշանավոր աղբյուրներն են՝ Սիսեռն, Քարաղբյուր, Տամբուլ, Շենին, Ներքե, Վարդապետի, Գրիգորեն, Ճիրմաճուր:

Մոշխմհատի հանդամասերն են Ճեղացեն կլոխը, Բխճենեն, Մեծ խմհատը, Ներքե տափը, Բոստանատեղը, Մին թևանին, Ջոլակը, Փիրմին տակը, Քարեն տափը:

Գյուղում ապրում են Սափարունց, Վստականց, Նազունց, Վանունց, Սոփունց, Մարունց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները հասանելի են բնակչությանը:

Գյուղում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, դպրոց:

Մոշխմհատում 1920 թ. կար 64 տուն, 300 բնակիչ, 1959 թ.՝ 51 տուն, 250 բնակիչ, 1970 թ.՝ 17 տուն, 40 բնակիչ, 1987 թ.՝ 11 տուն, 26 բնակիչ[301], 2018 թ.՝ 17 տուն, 64 բնակիչ[302]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՆԱԽԻՋԵՎԱՆԻԿ

Գյուղը գտնվում է ԱՀ արևելյան հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ համանուն քաղաքից 7 կմ դեպի արևելք՝ Կարկառի աջ գետահովտի շարունակություն համարվող անտառաշատ փեշերի արևելահայաց հարթության վրա: Նախիջևանիկը նախ-

[301] Մելքումյան Ս., նշվ.աշխ., էջ 145:
[302] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:

կին Վարանդա գավառի հին գյուղերից է: Տեղաբնիկների կարծիքով գյուղը գոյություն ունի դեռևս 4-րդ դարից:

Գյուղի շրջակայքում պահպանվել են Ք. ա. 2-1-ին հազարամյակների դամբարաններ, գյուղատեղիների հետքեր: Բնակավայրի հյուսիսարևմտյան մասում՝ բարձունքի վրա, գտնվում են վաղ միջնադարյան Նահատակ սրբատեղին, Քոս պռակ կոչված ամրոց-բնակատեղին (Ք. ա. 1-ին հազարամյակ-վաղ միջնադար), 9-13-րդ դարերի գերեզմանոցը:

Մակար Բարխուդարյանը գրում է, որ գյուղը ստացել է Նախիջևանիկ անունը, քանի որ վերոհիշյալ բնակիչների մի մասը ծագումով Նախիջևանից են[303]:

Գյուղի տարեցների մոտ պահպանված զրույցի համաձայն՝ 1729 թ. Մխիթար սպարապետը, հասնելով իրենց բնակավայրը, ասել է. «Նախ իջևանենք, հետո ճամփան շարունակենք»: Նրանց կարծիքով դրանից հետ Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, ո գյուղը անվանվել է Նախիջևանիկ[304]:

19-րդ դարի վերջերին գյուղում կար 193 ծուխ, 1139 բնակիչ[305]:

Նախիջևանիկի բնակիչների մի մասը ժամանակին տեղափոխվել և հաստատվել են Գյոգ-չայի Ազայի շեն կամ Նորաշեն գյուղում:

1917-1918 թթ. Նախիջևանիկի համար ծանր տարիներ էին: Լինելով սահմանամերձ գյուղ՝ այն ենթարկվում էր թուրք-թաթարական ավազակախմբերի հարձակումներին:

1918 թ. սեպտեմբերի 23-ին թուրքական կանոնավոր զորքերը գրավեցին Նախիջևանիկը: 1918 թ. հոկտեմբերի սկզբներին, գյուղի ազատագրվելուց հետո, խաղաղ բնակչությունը նորից վերադառնում է հարազատ բնակավայրը:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո 1931 թ. գյուղում կոլեկտիվ տնտեսություն է կազմավորվում:

1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո Նախիջևանիկի նախկին կոլտնտեսականները դարձան մենատնտեսներ:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Նախիջևանիկից մասնակցել է 200-ից ավելի մարդ, որոնցից 106 հոգի զոհվել են: Գյուղում նրանց հիշատակին հուշարձան է կառուցվել:

Նախիջևանիկի հայությունը անմասն չմնաց արցախահայության ազատագրական պայքարից: Գյուղում կազմակերպվել է ինքնապաշտպանական ջոկատ:

1992 թ. հունիսի 12-ին ադրբեջանական ստորաբաժանումները գրավում են Նախիջևանիկը: Նույն թվականի սեպտեմբերի 4-ին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ թշնամին հեռացավ Նախիջևանիկից:

[303] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 226:
[304] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[305] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 226:

Պատերազմի երեք երկար ու ձիգ տարիներին Նախիջևանիկի ազատամարտիկները Ասկերանի գնդի կազմում մասնակցել են ինչպես հարձակողական, այնպես էլ պաշտպանողական մարտերին: Գյուղի վաշտի հրամանատարն էր Արամ Սարուխանյանը, ով հետագայում արժանացել է ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի: Ռազմական գործողությունների ընթացքում զոհվել են 14 ազատամարտիկներ Արմեն Ասրյանը, Աշոտ Ասրյանը, Արմեն Ղազարյանը, Անուշավան Հարությունյանը (արժանացել է ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի), Սերգեյ Հարությունյանը, Ռաֆայել Հարությունյանը, Յուրի Համբարձումյանը, Գավրուշա Ստեփանյանը, Արմեն Սարուխանյանը, Ջամիլ Սարգսյանը, Շիրին Մանասյանը, Յուրի Մարտիրոսյանը, Գրիգորի Մանուչարյանը, Արամ Օհանյանը:

1873 թ. Նախիջևանիկում բացվում է նախակրթարան: 1886 թ. գյուղում սկսեց գործել եկեղեցական-ծխական դպրոց, որտեղ սովորում էր 25 աշակերտ: 1996 թ. դպրոցը փակվում է: Այն վերաբացվում է 1908 թ.: Այն մեկդասյա երկսեռ դպրոց էր և ուներ երկու բաժանմունք, որտեղ սովորում էր 40 աշակերտ:

Խորհրդային տարիներին գյուղում կար տարրական դպրոց, այնուհետև այն միջնակարգի կարգավիճակ է ստացել: 1988-1992 թթ. դպրոցում սովորել է շուրջ 200 աշակերտ, դասավանդել՝ 28 ուսուցիչ:

1992 թ. գյուղի ազատագրվելուց հետո դպրոցական շենքը վերանորոգվել է, և 1994 թ. պարապմունքները նորից վերսկսվել են: 2014-2015 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 70 աշակերտ, 2018-2019 ուսումնական տարում՝ 85 աշակերտ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Հ. Սարուխանյանը, Վ. Արամյանը, Գ. Մեժումյանը:

Ծննդով Նախիջևանիկից են Սարդարապատի ճակատամարտի հերոսներ գեներալ-լեյտենանտ Դանիել Բեկ-Փիրումյանը, գեներալ-մայոր Պողոս Բեկ-Փիրումյանը, փոխծովակալ Վլադիմիր Փիրումովը, ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը:

Նախիջևանիկում և նրա շրջակայքում կան պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ Ք. ա. 2-1-ին հազարամյակների դամբարաններ, Նահատակ մատուռը (13-րդ դար), Պուղունց օջախ մատուռը (16-րդ դար), Սբ. Աստվածածին եկեղեցին (17-րդ դար), Վարդեր գյուղատեղին (16-19-րդ դարեր):

Գյուղի աղբյուրներն են՝ Միրզին ակն, Կուքուն ակն, Ցեխ աղբյուր, Մաղուն ակն, Ղամիշլանա ակն, Քառ նավ, Դերունց ակն, Շոր աղբյուր, Փերունց ակն, Ցեխեն տակ, Տնջրե, Շենին, Ցամաք ձորի:

Գյուղի նշանավոր հանդամասերն են՝ Թարթնուտ, Ղուլուն մոշուտ, Քյուրան, Ասլանանց տափ, Բլանց բղատեղ, Քարեն տակ, Պուլու-Պուտնը, Տնջրե, Ջմններ, Կետ, Կարմիր էլչ, Չրմախութ, Դավուլու տափեր, Ղուրդեր, Մատուն ակնը, Ղամիշլանա ծոր, Ջավոդեն տափ, Պուլուսունց քոլուտ, Պավլուն ծոր, Սալավ, Ղրջղե, Փերունց ակնը, Թմամանց քերծ, Եգորեն տափ, Ցեխեն տակ, Քուլահան:

Նախիջևանիկի ազգատոհմերն են՝ Ալիխանանք (Սարուխանյան), Իսաջանանք (Սարուխանյան), Կանդիտատանք, Բլասանք (Սարուխանյան), Ղարաղլիջանք (Սարուխանյան), Սհականք (Սահակյան), Սրոանք (Մանասյան), Դիլաքանք (Միրզոյան), Ութունք (Դանիելյան), Սայունք (Դանիելյան), Հըմբարցունք (Համբարձումյան), Վերդունք (Վերդյան), Մչարանք (Մանուչարյան), Ղրըխանանք (Ղարախանյան), Չալունք (Ղարախանյան), Հուռումանք (Հարությունյան), Բիլլարանք (Հարությունյան), Մրսելանք (Պետրոսյան), Դերունք (Գաբրիելյան), Մահունք (Հարությունյան), Սունանք (Խաչատրյան), Բլանք (Բալայան), Ճգալդունք (Շահգելդյան), Շահունք (Միրզոյան):

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի նորակառույց ինքնահոս ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը:

Նախիջևանիկում գործում է գյուղապետարան, ակումբ, բուժկետ, փոստ, հանդիսությունների սրահ, առևտրի մեկ կետ:

Գյուղում 1987 թ. կար 142 տուն, 453 բնակիչ[306], 2018 թ.՝ 64 տուն, 230 բնակիչ[307]: Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՆՈՐԱԳՅՈՒՂ

Գյուղը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին Խաչեն գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Ասկերան շրջկենտրոնից 7 կմ արևմուտք՝ հարթավայրային գոտում:

Գյուղը 4 անգամ տեղից տեղ է տեղափոխվել և ամեն անգամ էլ շարունակել է կրել Նորագյուղ անվանումը: Նախկին գյուղատեղիները պահպանվում են:

Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ 1667 թ. Նորագյուղը անվանվել է Նոր գեղ[308]:

Տեղաբնիկները ասում են, որ գյուղը երբեմն անվանվել է նաև Դերու շեն, որովհետև այդ բնակավայրից շատ հոգևորականներ են սերվել:

Պատահական չէ, որ 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբների աղբյուրներում և առանձին հեղինակների մոտ Նորագյուղը երբեմն անվանվել է Քեշիշքենդ[309]: 1810 թ. գյուղում կառուցվել է Սբ. Գևորգ եկեղեցին:

19-րդ դարի վերջերին Նորագյուղում կար 181 ծուխ, 1075 բնակիչ[310]: Բնակչության մեծ մասը բնիկ է, փոքր մասը՝ տեղափոխված Խոյից:

[306] Մելքումյան Ս., նշվ.աշխ., էջ 129:

[307] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:

[308] ՀԱԱ, ֆ. 57, գ. 1, գ.3, թ.113:

[309] Свод статистических данных о населении Закавказского края, Тифлис, 1893, отдел IV; Кочарян Г., Нагорный Карабах, с. 50.

[310] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 246:

Հաշվի առնելով գյուղի զարգացման հեռանկարը՝ 1966 թ. ԼՂԻՄ մարզգործկոմը որոշում է բնակավայրը տեղափոխել հին Նորագյուղից 2 կմ դեպի արևելք՝ առավել հարթավայրային հատված, որտեղ բնակլիմայական պայմանները նպաստավոր են, իսկ հողն էլ բերքառատ է: Այս հարցում նախանձախնդիր հետևողականություն են ցուցաբերել ԼՂԻՄ մարզգործկոմի նախագահ, ծննդով նորագյուղցի Մուշեղ Օհանջանյանն ու Նորագյուղի կոլտնտեսության նախագահ Արշավիր Գալստյանը:

Կարճ ժամանակահատվածում գյուղը ոչ միայն կառուցվեց, այլ նաև զարգացում ունեցավ:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո 1931 թ. Նորագյուղում կազմավորվեց կոլտնտեսություն: Այն ԼՂԻՄ առաջավոր տնտեսություններից մեկն է համարվել, որտեղ զարգացած էր խաղողագործությունը, հացագործությունը, անասնապահությունը: Նորագյուղի կոլտնտեսության մեջ ներառվել են Ծաղկաշատ, Սարդարաշեն և Ռև գյուղերի տնտեսությունները:

Տարբեր տարիներին կոլտնտեսությունը ղեկավարել են Լևոն Մինասյանը, Գրիգոր Օհանջանյանը, Արսեն Առաքելյանը, Սամվել Մարտիրոսյանը, Շամիր Գալստյանը, Բաղդասար Ղարամյանը, Արշավիր Գալստյանը, Էդվարդ Ասլանյանը, Սանթուր Մինասյանը, Ռոբիկ Գրիգորյանը և Արմո Գալստյանը:

1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո կոլտնտեսությունը դադարեցրեց իր գործունեությունը:

Ի տարբերություն ԱՀ շատ ու շատ բնակավայրերի՝ Նորագյուղում ֆերմերային տնտեսությունները կազմակերպական տեսանկյունից ձևավորվել և զարգացում են ապրում:

Հայրենական մեծ պատերազմին Նորագյուղից մասնակցել է 256 մարդ, զոհվել է 91-ը: Նրանց հիշատակին հին Նորագյուղում 1959 թ. կառուցվել է հուշաղբյուր, իսկ 1968 թ.՝ հուշարձան:

Արցախյան շարժման առաջին տարիներին գյուղում կազմակերպվել է կամավորական ինքնապաշտպանական ջոկատ: Շուրջ 200 հոգի մասնակցել են ռազմական գործողություններին: 26 նորագյուղցիներ իրենց կյանքը զոհաբերել են Արցախի ազատագրմանը: Նրանցից 6 հոգի Ստեփանակերտի բնակիչներ էին: Մի հոգի էլ անհայտ կորած է:

ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ կարգի շքանշանի են արժանացել Վիտալի Պետրոսյանը՝ հետմահու, Սերգեյ Զաքարյանը, Սաղաթել Զաքարյանը, Արմավիր Գալստյանը, Սամվել Մնացականյանը, Լևոն Ենգիբարյանը, Կամո Մարտիրոսյանը:

1886 թ. Նորագյուղում գործել է ծխական դպրոց: Այն ցարական կառավարության կողմից փակվել է 1896 թ. և վերաբացվել 1907 թ.: Դպրոցը մեկդասյա էր և ուներ երկու բաժանմունք, որտեղ սովորում էր 42 աշակերտ: Ուսուցիչն էր քահանա տեր Միքայել Զաքարյանը: Խորհրդային առաջին տարիներին Նորագյուղում գործում էր տարրա-

կան դպրոց: 1931 թ. այն դարձավ յոթամյա: Դասերը անց էին կացվում Դերունց և Հոռունց տներում:

1969 թ. Նորագյուղում դպրոցական նոր շենք կառուցվեց: Դպրոցն արդեն միջնակարգի կարգավիճակ ուներ:

2012 թ. ԱՀ կառավարությունը նոր դպրոցական շենք է կառուցում: 2015–2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 218 աշակերտ, դասավանդում՝ 28 ուսուցիչ: 2018–2019 ուսումնական տարում արդեն աշակերտների թիվը հասել էր 242-ի:

Տարբեր ժամանակներում Նորագյուղի դպրոցի տնօրեններ են աշխատել Համո Քարամյանը, Ռուբեն Սարգսյանը, Միքայել Գասպարյանը, Ազատ Անդրյանը, Արշավիր Գալստյանը, Մելիք Սողոմոնյանը, Լևոն Արամյանը, Միքայել Ջհանգիրյանը, Ալյոշա Գասպարյանը, Վարդան Բեգլարյանը, Էրիկ Վարդանյանը: Ծագումով Նորագյուղից են Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ռեկտոր Սերգեյ Խալատրյանը, ԼՂԻՄ մարզգործկոմի նախագահ, այնուհետև ԱՀ Ազգային ժողովի փոխնախագահ Մուշեղ Օհանջանյանը:

Նորագյուղում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ Սարե խաչ, Հոնի խաչ, Սոի խաչ, Պառավի խաչ, Նոր խաչ սրբավայրերը, Սբ. Գևորգ եկեղեցին (1810 թ.), գերեզմանոց (19–20-րդ դարեր):

Հին և նոր Նորագյուղի աղբյուրներն են՝ Մեժուն, Երե ջուր, Քշաջուր, Ներքե ջուր, Խեժն, Չոբանանց, Պապու, Գյուղատեղի, Կատվի աղբյուր, Սևաջուր, Հաջալվի ջուր, Քղհանի ձորի, Գող աղբյուր, Շորի առաջ, Շոր ջուր, Վետած, Շվեդ, Ղլիձորի, Բրամա, Ղշլաղի, Քյահրիզ, Ղշլաղատեղի, ժողովրդական թալայի:

Գյուղի նշանավոր հանդամասերն են՝ Ալա հող, Ղազարանց յրոբղան, Տանձի խութ, Ցաքի հող, Քղհանա ձոր, Խուրջին հող, Ռվեցու քամակ, Խեժնաղբյուր, Հաջալու, Սևաջրի դոշ, Գյոլատեղ, Շախունց տափ, Գալուստանց տափ, Նաշունց տափ, Կումբալանց տափ, Պրուտեն հող, Խազազաձոր, Գյուբարանց տափ, Սզնոտ, Կուքու տափ, Մոսունց տափ, Խաչի տակ, Մարունց խութ, Բիլախութ, Մռնգեց, Խուտուրավար, Կշկոոտ, Ավունց ցաքոտ, Քարի տակ, Սոնա խանումի խութ, Քյուզորե խութ, Խորձոր, Մեկթևանի, Քարի տափ, Ջղանոտ, Ճղպրոտի ձոր, Քյահրիզի գլուխ, Ջարգարանց շալ, Կնդակ սզնու ձոր, Քոհնա գոմեր, Կաղնի հող, Ղլի ձոր, Ղլի սեռ, Շվեդ աղբյուրի ձոր, Վետած աղբյուրի ձոր, Փունթեն տեղ, Շորի ձոր, Երկան խութ, Դուլորեն ձոր, Գող աղբյուրի թումբ, Շլորի հանդ, Դալին ցաքուտ, Մեծ թափայի տակ, Մեկ թափայի գլուխ, Պուլուր թումբ, Հոնի ձոր, Ղշլաղատեղ, Ջարգարանց մարագ, Շորի ջրի դուզ, Նիրինանց շալեր, Դերունց տափ, Դիք դաշ, Թևանանց բաղ, Արխի տակ, Ժողովրդական թալա, Ղահրամանանց թալա, Մուսունց թալա, Գետի թալա, Ղուրուղատեղ, Ոսկանա խութ, Մուշոտի ղուրուղ, Խուրուվեն խութ, Բրամա ղշլաղ, Կռված խութ, Նափսանա ձոր, Դերունց ցախուտ, Հացուտ, Դերունց խութ, Հոնի խաչի

տափ, Հայրապետանց տափ, Ծիտան քերծ, Իծանուց, Վրիշեն քերծ, Ղլանաքար, Բլեն ծակ:

Նորագյուղում շարունակում են ապրել Գալուստանց, Մուսունց, Գյուբարանց, Նաշունց, Հայրապետանց, Մուղդուսունց, Օհանջանանց, Դերունց, Քյասունց, Գրիգորանց, Ջարգարանց, Քոլունց, Բդոլունց, Պողոսանց, Ղահրամանանց, Բոզունց, Մարունց, Ստեփանանց, Աղաբեկանց, Մարդունց, Խչտորանց, Անդրունց, Պարսեղանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Նորագյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, «Ասկերանի մանկական երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ի մասնաճյուղը, բուժկետ, դպրոց:

1920 թ. հին Նորագյուղում կար 180 տուն, 1500 բնակիչ, 1987 թ.՝ 249 տուն, 1043 բնակիչ[311], 2018 թ.՝ 346 տուն, 1597 բնակիչ[312]: Նրանք աշխատում են Իվանյանի, Ասկերանի, Ստեփանակերտի հիմնարկ-ձեռնարկություններում, ծառայում ԱՀ բանակում, մի զգալի մասն էլ գյուղատնտեսության ոլորտում:

ՆԵՐՔԻՆ ՍԶՆԵՔ

Գյուղը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին Վարանդայի գավառում՝ համանուն գետի ձախ ափին՝ պատմական Ավետարանոցից ոչ շատ մեծ հեռավորության վրա:

Գյուղի շրջակայքում պահպանվել են միջնադարյան գյուղատեղիների հետքեր, սրբատեղիներ:

Ներքին Սզնեքը՝ որպես բնակավայր, ձևավորվել է 18-րդ դարի սկզբներին: 2017 թ. մեծ շուքով նշվել է գյուղի 300 ամյակը: Գյուղի հիմնադիրները դարձել են նրա հարևանությամբ գտնվող և դեռևս 18-րդ դարի անբնակ Ղրալի գյուղի բնակիչները: Ժամանակին այստեղ հաստատվում են նաև Սյունիքից և Պարսկաստանից տեղափոխված մի քանի ընտանիքներ:

1849 թ. Ներքին Սզնեքում կառուցվում է Սբ. Աստվածածին եկեղեցին: 19-րդ դարի վերջերին Ներքին Սզնեքում կար 92 ծուխ, 727 բնակիչ[313]:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո 1930 թ. Ներքին Սզնեքում կազմավորվել է Ալեքսանդր Մյասնիկյանի անվան կոլտնտեսությունը: 1950 թ. Ներքին Սզնեքի և Վերին Սզնեքի, Կարմիր գյուղի, Խաչմաչի տնտեսությունները մի-

[311] Մելքումյան Ս., նշվ.աշխ., էջ 122:
[312] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:
[313] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 211:

ացել են մեկ կոլեկտիվ տնտեսության մեջ: 1988 թ. ապախոշորացումից հետո վերոհիշյալ տնտեսությունները շարունակել են գործել որպես առանձին միավորներ: Այդ իրավիճակը պահպանվել է մինչև 1998 թ. հողերի սեփականաշնորհումը:

Ներքին Սզնեքի կոլտնտեսությունը ղեկավարել են Գյանջում Համբարձումյանը, Գրիշա Միքայելյանը, Շափաղաթ Մուսայելյանը, Արարատ Պետրոսյանը, Արտյուշա Միքայելյանը, Շահեն Մարգարյանը:

1930–1950 թվականներին գյուղում գործել է «Լույս» կարի ֆաբրիկան, որտեղ աշխատում էին գյուղի 40 բնակիչներ: 1950 թ. ֆաբրիկան փակվեց: Շենքը սկզբում օգտագործվեց որպես ակումբ և գրադարան, իսկ ներկայումս՝ հանդիսությունների սրահ:

Ֆաբրիկայի փակվելուց հետո Ներքին Սզնեքից մեծ քանակությամբ ընտանիքներ տեղափոխվեցին Բաքու:

Սզնեքը դարեր շարունակ հայտնի էր նաև իր արհեստավորներով, մասնավորապես՝ դերձակներով և ոսկերիչներով:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 50 մարդ, որից զոհվել է 25-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կանգնեցված:

Արցախահայության ազատագրական շարժման սկզբին գյուղում կազմավորվել էր երկու ջոկատ, որոնց հրամանատարներն էին Գրիշա Միքայելյանը և Սամվել Ավանեսյանը: Քարին տակի ճակատամարտում Գրիշա Միքայելյանի զոհվելուց հետո 35 կամավորները միավորվել են մեկ ջոկատի մեջ և իրենց մասնակցությունն են ցուցաբերել Արցախի ազատագրության գործին: Նրանցից 12 նվիրյալներ զոհվել են: Միհեր Ահարոնյանը հետմահու արժանացել է ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի:

1873 թ. Ներքին Սզնեքում 31 աշակերտի համար բացվել է նախակրթարան: 19-րդ դարի 80-ական թվականներին գյուղում գործում էր 2 բաժանմունքով ծխական դպրոց: Չնայած 1896 թ. ցարական կառավարության կողմից փակվել էին հայկական դպրոցները, այնուամենայնիվ Ներքին Սզնեքում շարունակում էր գաղտնի գործել դպրոցը, որտեղ սովորում էին նաև հարևան գյուղերի երեխաները:

Խորհրդային տարիներին Ներքին Սզնեքում գործում էր ութամյա դպրոց:

1950 թ. գյուղում դպրոցական նոր շենք է կառուցվել: 1963 թ. դպրոցում սովորում էր 85 աշակերտ, 2001 թ.՝ 35 աշակերտ, իսկ 2018–2019 ուսումնական տարում՝ 11 աշակերտ:

Դպրոցի տնօրեններ են աշխատել Շմավոն Ասլանյանը, Միքայել Առաքելյանը, Շահեն Մարգարյանը, Ալբերտ Մարգարյանը, Մելիքսեթ Սահակյանը:

Ծննդով Սզնեքից են ՀԽՍՀ ներքին գործերի նախարար, գեներալ-մայոր Սերգեյ Արզումանյանը, Հայրենական մեծ պատերազմի մասնակից, «Փառքի» շքանշանի երեք աստիճանի ասպետ՝ Գեորգի Իսրայելյանը, ֆիզմաթ գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր Հայկ Արզումանյանը, ԱՀ ժողովրդական դերասան Մամիկոն Միքայելյանը:

Ներքին Սզնեքում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ միջնադարյան գյուղատեղիներ, գերեզմանոց, Սբ. Հովհաննես մատուռը (10-րդ դար), Սբ. Աստվածածին եկեղեցին (1849 թ.), ջրաղաց (19-րդ դար), 12-13-րդ դարերի խաչքարեր, Պառավ խաչ սրբատեղին (13-րդ դար):

Գյուղի աղբյուրներն են՝ Ջաքուն, Շինիմաչին, Հովուզին, Տնազուրեն, Օխեն, Շենին տակեն, Քարեն տակեն, Ճիրար արխեն:

Ներքին Սզնեքի նշանավոր հանդամասերն են Քարին տակ, Ձորի ղրաղ, Ռվեզ, Շուշանին ձոր, Բնազուր, Խաչի խութ, Կաղնե խաչ, Հունոտ, Կրավերին ձոր, Ղրալի:

Գյուղում շարունակում են ապրել Կյուքունց, Բալունց, Հարունանց, Թումասանց, Բուդունց, Մոսունց, Պուղուսանց, Սափարունց, Թազա Հասունց, Ըոստամանց, Թավադունց, Գյալունց, Կոստանդանց, Ջավունց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Համայնքը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը:

Ներքին Սզնեքում 1987 թ. կար 32 տուն, 95 բնակիչ[314], 2003 թ.՝ 34 տուն, 132 բնակիչ[315], 2018 թ.՝ 32 տուն, 138 բնակիչ[316]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՇՈՇ

Շուշի քաղաքին հանդիպակաց՝ Կարկառ գետի հարավային վտակի աջափնյակից դեպի կիրճը ձգվող թեք սարալանջին է գտնվում Արցախի հնագույն բնակավայրերից մեկը՝ Շոշը: Բնակավայրը Վարանդան ու Խաչենն իրար հետ կապող կարևոր հանգուցակետում է գտնվում:

Գյուղի ներկայիս բնակիչների նախնիների մի մասը բնիկ են, մյուսներն էլ տարբեր ժամանակահատվածներում այստեղ են տեղափոխվել Սողքից, Ջրաբերդից, Ապարանից, Գորիսից, Հադրութի Թաղասեռ գյուղից, Մարտունու շրջանի Նեգի գյուղից, իսկ մի քանի ընտանիք՝ Պարսկաստանից:

Սկզբում գյուղը գտնվում էր ներկայիս բնակավայրի վերևի հատվածում, որը կոչվել է Տուն-տնատեղ: Տեղանքը սակավաջուր էր, այդ պատճառով բնակիչները իջել են ներկայիս գյուղի տարածք, որտեղ հորդ աղբյուրներ կային:

[314] Մելքումյան Ս., նշվ.աշխ., էջ 132:
[315] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[316] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:

Ձեռագիր հիշատակարաններում որոշ տեղեկություններ են պահպանվել գյուղի մասին: 15-րդ դարի ձեռագրերից մեկում գյուղը հիշվում է ոչ թե Շոշ, այլ Շուշու ձևով. «գրեցաւ Աստուածագիր սուրբ Ավետարանս ձեռամբ յոգնամեղ և ապիկար գրչի տէր Մանուելի և թուականութեանս հայոց ՊՀԷ (1428) և յաշխարհիս Աղուանից, ի վիճակս Ամարասայ, ի գեղս Շուշու կոչեցեալ...»[317]:

Շոշում երկու եկեղեցիների առկայությունը, ինչպես նաև հին գերեզմանոցի զբաղեցրած տարածքը վկայում են նրա բազմամարդության մասին:

19-րդ դարի երկրորդ կեսին Շոշում 350 ծուխ կար[318]:

Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցի տվյալներով գյուղում կար 367 ծուխ, 2348 բնակիչ, որից արական՝ 1248, իգական՝ 1100[319]: Արցախում այդ մեծության գյուղեր քիչ կային:

Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցը ասում է, որ Շոշի հայերը «քաջությամբ գերազանցում են բոլոր ղարաբաղցիներին»[320]:

Պատմիչն ասում է, որ շոշեցիները սրակոտոր են արել Օսմանյան տերության զորապետերին և զորքը: Շարունակելով այդ միտքը՝ նա նշում է, որ 1826 թ. գյուղի բնակիչները հզոր հարված են հասցրել պարսից մեծաթիվ բանակին և նրանց արյունով ներկել Կարկառ գետը[321]:

1919 թ. հունվարին, երբ անգլիացիների օգնությամբ Խոսրով Բեկ Սուլթանովը հաստատվեց Շուշիում, քաղաքում հայության համար կյանքն անտանելի դարձավ: Ազգային գործիչները ստիպված էին գործունեություն ծավալել գյուղերում, մասնավորապես Շոշում:

1919 թ. հունիսի 28-30-ին և օգոստոսին Շոշում հրավիրվել են արցախահայության 6-րդ և 7-րդ, իսկ 1920 թ. մարտի 5-ին՝ 8-րդ համագումարները:

Շոշում կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ.: Կոլտնտեսությունը բարգավաճեց Նիկոլայ Յարամիշյանի ղեկավարության ժամանակ:

Հայրենական մեծ պատերազմին բանակ են զորակոչվել 700 շոշեցիներ, որոնցից 216-ը զոհվել են:

Շոշի զավակներն իրենց մասնակցությունն են բերել արցախյան ազատամարտին, և նրանցից 32 քաջեր իրենց մատաղ կյանքը նվիրեցին հայրենիքի ազատագրության սուրբ գործին: Նրանց թվում էր նաև Շոշի կամավորական առաջին ջոկատի հրամանատար Արգամ Սերգեյի (Շոշի Ազո) Հարությունյանը: Նա հետմահու արժանացել է ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի: ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանակիր է Գառնիկ Շմավոնի Ավանեսյանը:

[317] Մատենադարան, ձեռագիր հմ. 8211, թ. 359, բ-360ա:
[318] Հայկունի, նշվ. աշխ., էջ 90:
[319] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 228:
[320] Սարգիս արք. Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 432:
[321] Նույն տեղում, էջ 432:

ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի արժանացել են՝ Վիտալի Վահանի Վերդյանը, Գրիգորի Առաքելի Գասպարյանը, Կարեն Աղասիի Ջալավյանը, հետմահու՝ Գուրգեն Բորիկի Ծատրյանը և Ալբերտ Սուրենի Մարգարյանը:

Զոհվածների հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

19-րդ դարի 70-ական թվականներին Շոշում գործել է եկեղեցական-ծխական դպրոց՝ 15 աշակերտով: Այն գործել է Սբ. Աստվածածին եկեղեցուն կից, որտեղ դասավանդում էր Տեր Առաքել քահանան: Շոշի հասարակության խնդրանքով 1884-1885 ուսումնական տարում գյուղում բացվում է եկեղեցական-ծխական նոր դպրոց՝ 20 աշակերտով: 1896 թ. դպրոցը փակվում և վերաբացվում է 1907-1908 ուսումնական տարում, որտեղ սովորում էր 45 աշակերտ: Դպրոցը պահվում էր գյուղի ազգաբնակչության և բաքվաբնակ շոշեցիների միջոցներով:

1921 թ. Շոշում ստեղծվել է տարրական դպրոց, որի վարիչը 1930 թ. եղել է Պետրոս Մուսայելյանը: 1928-29 ուսումնական տարում դրվել է Շոշի յոթամյա դպրոցի հիմքը: 1934-1935 թթ. դպրոցն ունեցել է մոտ 500 աշակերտ, և որպես դպրոց օգտագործվում էր գյուղի տանուտերի տունը, որտեղ պարապմունքները կազմակերպվում էին 3 հերթով: 1943-1944 ուսումնական տարում Շոշում սկսել է գործել միջնակարգ դպրոց, որտեղ 1-2 տարի սովորելով և համապատասխան քննությունները հանձնելով՝ միջնակարգ կրթության վկայական են ստացել նաև հարևան գյուղերի աշակերտները:

1988-1990 թթ. դպրոցում սովորում էին 150-ից ավելի աշակերտներ: 2017-2018 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 102 աշակերտ, դասավանդում՝ 25 ուսուցիչ:

2004 թ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի Տորոնտոյի մասնաճյուղի ատենապետ Մկրտիչ Մկրտչյանի հովանավորությամբ կառուցվել է Շոշի Սարգիս Աբրահամյանի անվան դպրոցը, որի հանդիսավոր բացումը կատարվեց 2004 թ. հոկտեմբերի 10-ին: 1992-1993 ուսումնական տարվանից առ այսօր դպրոցի տնօրենն է Համլետ Հարությունյանը:

Բնակչությանը ջրով ապահովելու նպատակով 2004 թ. կառուցվել է 80 տոննանոց ջրամբար:

Շոշում «Հայաստան» համահայկական հիմնադրամի և ԱՀ կառավարության համաֆինանսավորմամբ 2015 թ. հունիսի 9-ին շահագործման հանձնվեց համայնքային նոր կենտրոնը, որտեղ տեղավորված են գյուղապետարանը, 250 տեղանոց հանդիսությունների դահլիճը և բուժկետը: Գյուղում միաժամանակ գործում են 2 խանութ, հանդիսությունների սրահ և հացի փուռ:

Շոշում են ծնվել գրողներ՝ Սամվել Գրիգորյանը, Գերասիմ Հովսեփյանը, Սարգիս Աբրահամյանը (նա միաժամանակ պետական գործիչ էր — Վ. Բ.), հայտնի զվարճախոս՝ Պըլը Պուղին:

Շոշի դպրոցն են ավարտել մեծավաստակ մանկավարժ, ԽՍՀՄ ժողովրդական ուսուցիչ Իվան Աթայանը, գրողներ Վազգեն Օվյանը, Գևորգ Աղաջանյանը, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Աղաջանյանը:

Հայ մարդը, դարերի ընթացքում անընդհատ ապրելով Շոշում, ժամանակի հոլովույթում ստեղծել է բազմազան ու բազմաթիվ մշակութային արժեքներ:

Գյուղի 4 ուղղություններում պահպանվել են Ք. ա. 2–1–ին հազարամյակներին վերաբերող դամբարանադաշտեր: Շոշի հյուսիսային մասում պահպանվող հին խարխլված եկեղեցին կառուցվել է 1454 թ.: Սբ. Ստեփանոս եկեղեցին կառուցվել է 1655 թ., իսկ Սբ. Աստվածածին եկեղեցին 19–րդ դարում:

Գյուղից 3 կմ դեպի արևելք գտնվում է Շաղասարի հնագույն սրբավայրը: Նշանավոր են Բուդուռու սրբատեղին (11–13–րդ դդ.), Կարմիր Տարան մատուռը (19–րդ դար), Փրխկանուտ սրբատեղին, Ձախլիկ կամուրջը (18–րդ դար), Մուստուփա ձորեն կամուրջը (18–րդ դար), Կոտրված կամուրջը (18–րդ դար), Իջևանատունը (13–րդ դար), Պըլը Պուղու գերեզմանը (18–րդ դար), Մխիթար սպարապետի քարանձավը (18–րդ դար. ավանդույթն ասում է, որ այստեղ եղել է նշանավոր զորավարը — Վ. Բ.), միջնադարյան խաչքարերը, հին գերեզմանոցը, բազմաթիվ ջրաղացներ (17–19–րդ դարեր): Գյուղում պահպանվել են 1458, 1651, 1655 և 1712 թվագրություններով հայերեն վիմագիր արձանագրություններ:

Շոշում կան նաև նշանավոր աղբյուրներ՝ Իծիրիկիհի, Սալ, Օրից, Սոֆիայի, Քերծեն տակեն, Ճեղացեն ծորին, Խըծրկեին, Ծախլեգ, Տինգ, Ըլալեն, Շղասարեն, Պրպտանեն, Սվըծորին, Լոլակ, Թազա, Կրվերեն, Էրեց, Թեղուն: Հատկապես նշանավոր է 1866 թ. կառուցված Լալիկ աղբյուրը: 2012 թ. շոշեցի ռուսաստանաբնակ բարերար Բորիս Ստեփանյանի ընտանիքի միջոցներով հիմնովին վերանորոգվել է Լալիկ աղբյուրը, որի մասին շոշեցիների մոտ շատ ավանդազրույցներ են պահպանվել:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, մանկապարտեզ, առևտրի 4 կետեր:

Շոշում 2018 թ. կար 183 տուն, 682 բնակիչ[322]: Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՋՐԱՂԱՑՆԵՐ

Գյուղը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին Վարանդայի գավառում՝ մելիքանիստ Ավետարանոց գյուղից 2 կմ հարավարևելք:

[322] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 1:

Ջրաղացներից 1 կմ հեռավորության վրա պահպանվում են միջնադարյան գյուղի հետքեր, որին տեղացիները անվանում են Շինատեղ: Գյուղի հիմնադրման վերաբերյալ տեղաբնիկների մոտ մի զրույց է պահպանվել, ըստ որի 19–րդ դարի սկզբներին Ավետարանոցից 3 եղբայրներ տեղափոխվում և հիմնավորվում են ներկայիս գյուղի տարածքում: Նրանցից մեկը զինագործ էր, մյուսը՝ դարբին, իսկ երրորդը՝ ջրաղացների վարպետ: Վերոհիշյալ 3 եղբայրների մասնագիտությունից էլ գյուղը միաժամանակ ունեցել է 3 անուններ՝ Դամիրչիլար, Լուլասազ և Ջաղացներ:

19–րդ դարի հեղինակների մոտ այս 3 անունները նույնպես պահպանվել են[323]: Ներկայումս գյուղի պաշտոնական անունը Ջրաղացներ է: Մինչև հիմա պահպանվում են Աղաբեկանց, Աբալունց, Ջալալենց, Խուջունց ջրաղացների փլատակները:

19–րդ դարի վերջերին Ջրաղացներում կար 65 ծուխ, 429 բնակիչ[324]:

1882 թ. գյուղում կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցին: Խորհրդային տարիներին սրբատաշ քարերով կառուցված եկեղեցու խաչը և գմբեթը քանդել են: Բարեբախտաբար շենքը առայսօր հիմնականում պահպանվել է:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո 1926 թ. Ջրաղացներում ստեղծվել է ԼՂԻՄ առաջին գյուղատնտեսական կոմունաներից մեկը՝ «Աշխատանք» անունով:

1929 թ. արդեն ստեղծվել է կոլեկտիվ տնտեսություն: Խոշորացումից հետո այն միավորվել է Ակնաղբյուրի կոլտնտեսության հետ: 1988 թ. ապախոշորացման հետևանքով այն նորից առանձին տնտեսության կարգավիճակ ստացավ և մնաց մինչև 1998 թ.: Հողերի սեփականաշնորհումից հետո գյուղում ստեղծվեցին մենատնտեսություններ:

Կոլտնտեսությունը ղեկավարել են Միշա Ավանեսյանը, Վոլոդյա Բալոյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 36 մարդ, զոհվել է 26–ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կանգնեցվել:

Արցախի ազատության և անկախության համար մղված մարտերին Ջրաղացից մասնակցել են 20 ազատամարտիկներ: Նրանցից 7–ը զոհվել են: Հայրենիքի նվիրյալների հիշատակը հավերժացնելու համար երախտապարտ համագյուղացիները գյուղում հուշարձան են կառուցել: Գյուղից ԱՀ «Մարտական խաչ» 1–ին աստիճանի շքանշանի է արժանացել Վաչագան Մարգարյանը:

19–րդ դարի 80–ական թվականներից գյուղում դպրոց է գործել: 1908–1909 ուսումնական տարում մեկդասյա երկսեռ դպրոցում սովորում էր 25 աշակերտ, դասավանդում՝ 1 ուսուցիչ[325]: Խորհրդային տարիներին՝ մինչև 1942 թ., Ջրաղացներում դպրոց չի եղել: 1942 թ. գյուղում բացվել է տարրական դպրոց: Աշակերտների քանակի տա-

[323] Հայկունի, նշվ. աշխ., էջ 90; Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 208:

[324] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 208:

[325] «Նոր դպրոց», ամսագիր, թիվ 4, 1908, էջ 84:

տանման պատճառով մինչև 1988 թ. դպրոցը մի քանի անգամ փակվել և բացվել է: 1966 թ. գյուղում կառուցվել է դպրոցական երկհարկանի շենք: 1991–1992 ուսումնական տարում դպրոցը ստացել է ութամյայի կարգավիճակ: Այդ տարիներին դպրոցում սովորում էր 27 աշակերտ: Սակայն դպրոցահասակ երեխաների թվաքանակի կրճատման պատճառով Ջրաղացների դպրոցը ներկայումս դարձել է Ակնաղբյուրի հիմնական դպրոցի մասնաճյուղ, որտեղ սովորում է 7 աշակերտ:

Տարբեր տարիներին դպրոցի տնօրեններ են աշխատել Միքայել Պետրոսյանը, Մարգարիտա Գրիգորյանը, Լիանա Գրիգորյանը:

Ծագումով Ջրաղացից են գունավոր հեռուստատեսության գյուտարար Հովհաննես Ադամյանը, ֆիզմաթ գիտությունների դոկտոր Շաբո Մուսայելյանը, ԽՍՀՄ ժողովրդական ուսուցիչ Իվան Աթայանը:

Ջրաղացներում և նրա շրջակայքում պահպանվում են պատմամշակութային արժեք ներկայացնող հուշարձաններ Սբ. Վանես եկեղեցին (13–րդ դար), Բանունց եկեղեցին, Փոշ խութի ստորոտում կառուցված Եղծին, Սբ. Աստվածածին եկեղեցին:

Ջրաղացներում հայտնի են Բաբունց, Մուսունց, Վանունց, Փասին, Ճըրմիճրին աղբյուրները:

Գյուղի հանդամասերն են՝ Բունունց ձոր, Պապունց ձոր, Ջալալանց ձոր, շենատեղ, Մաչի հարթ, Բաղեն ձոր:

Գյուղում շարունակում են ապրել Ջալալունց, Աղաբեկանց, Տերտերանց, Ավիսանց, Քարամանց, Կուքունց, Կյուզողանց, Ըթանց, Բաբունց, Աձունց, Վանունց, Մուսանց, Մելքումանց, Հուռումանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Ջրաղացները էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, բուժկետ, ակումբ, դպրոց:

Գյուղում 1987 թ. կար 47 տուն, 182 բնակիչ[326], 2018 թ.՝ 41 տուն, 137 բնակիչ[327]: Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՌԵՎ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիս արևելյան հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին Արցախի Խաչեն գավառում:

Բնակավայրը տեղաբաշխված է Ղարաբաղյան լեռնաշղթայից դեպի արևելք ձգվող լեռնաճյուղերից մեկի բարձրադիր հարթավայրային մասում՝ Սբ. Գևորգ սարի արևելյան ստորոտում:

[326] Մելքումյան Ս., նշվ.աշխ., էջ 140:

[327] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 1:

Գյուղում և նրա շրջակայքում մնացած որոշ կառույցների մնացորդներն ու հնավայրերը, մասնավորապես 18–19–րդ դարերի գերեզմանոցը, թույլ են տալիս ասել, որ բնակավայրը գոյություն ունի առնվազը 17–րդ դարի երկրորդ կեսից:

Գյուղը 19–րդ դարում և 20–րդ դարի սկզբներին ունեցել է նաև Շալվա անունը[328]:

Ռևում 1894 թ. կառուցվել է Սբ. Ստեփանոս եկեղեցին, որը խորհրդային տարիներին օգտագործվում էր որպես կենցաղսպասարկման տուն:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Ռևում 1930 թ. կոլտնտեսություն է կազմակերպվել, որը խոշորացման տարիներին Ծաղկաշատի և Սարդարաշենի տնտեսությունների հետ ներառված է եղել Նորագյուղի կոլտնտեսության կազմի մեջ: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո Ռևում ստեղծվել են մասնավոր տնտեսություններ:

Ռևից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 86 մարդ, զոհվել է 47–ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել: Ծննդով Ռևից են խորհրդային միության հերոսներ Վ. Հովհաննիսյանը և Ս. Պետրոսյանը:

Արցախյան ազատագրական շարժման առաջին շրջանում՝ 1889–1990 թվականներին, Ռևում կամավորական ինքնապաշտպանական ջոկատ է կազմակերպվել, որը Ասկերանի Պաշտպանական շրջանի զորամասերի կազմում ռազմաճակատի տարբեր մասերում հերոսաբար կռվելով պաշտպանել է ԱՀ սահմանները: Գյուղից ԱՀ «Մարտական խաչ» 2–րդ աստիճանի շքանշանի է արժանացել Արթուր Պետրոսյանը:

1895 թ. Ռևում բացվել է եկեղեցական–ծխական դպրոց: 20–րդ դարի սկզբներին գյուղի ուսուցիչն էր Աննա Մանուկյանը:

Խորհրդային տարիներին՝ մինչև 1970–ական թվականները, գյուղում գործել է ութամյա դպրոց: Աշակերտների թվաքանակի կտրուկ նվազման պատճառով դպրոցը փակվել էր: Ներկայումս գյուղի աշակերտները սովորում են Ծաղկաշատի միջնակարգ դպրոցում:

Բնակավայրը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Գյուղի աղբյուրներն են Միրզախանանց, Անջրհողեն, Քարե, Կումուրաղեն, Ծլպլպլան, Մուշուհավա, Փադի:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, առևտրի 1կետ:

[328] Кавказский календарь на 1856 г., Тифлис, 1855, с. 380; ԱՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 1, թ. 12; «Советское краеведение», № 10, 1936, с. 1; հմմտ., Բալայան Վ., Դրվագներ..., էջ 176:

Ռևում 1890-ական թվականներին կար 40 տուն, 349 բնակիչ[329], 1920 թ.՝ 120 տուն, 450 բնակիչ, 1970 թ.՝ 90 տուն, 250 բնակիչ, 1987 թ.՝ 52 տուն, 112 բնակիչ[330], 2018 թ.՝ 33 տուն, 115 բնակիչ[331]: Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ

Գյուղը գտնվում է ԱՀ արևելյան հատվածում՝ նախկին Վարանդա գավառում:

Բնակավայրը տեղաբաշխված է Բովուրխանի լեռնազանգվածից դեպի արևելք ձգվող լեռնաճյուղերից մեկի վերջավորությունում՝ Մուխանքի դաշտաբերանում:

Գյուղի շրջակայքում եղած 12-15-րդ դարերի գյուղատեղիի և գերեզմանոցի մնացորդները վկայում են, որ առնվազն միջին միջնադարից տվյալ տարածքում բնակավայր է եղել:

15-16-րդ դարերում թուրքմենական աղ կոյունլու և կարա կոյունլու ցեղերի ճնշումների տակ Մուխանքի դաշտում գտնվող հայկական բնակավայրերի բնակիչները ստիպված քաշվում են լեռնաստանի խորքերը և հաստատվում ավելի ապահով վայրերում: Նշված ժամանակահատվածում Մուխանքի Բայլական կամ Բելուկան քաղաքից մի քանի ընտանիքներ վերաբնակվում են Սառնաղբյուրում:

19-րդ դարի և 20-րդ դարի սկզբների սկզբնաղբյուրներում Սառնաղբյուրը ավելի շատ հայտնի է Միրշալու[332], Միրշուլու[333], Միրիշանլու[334], Միվրիշենլու[335] անուններով:

Խորհրդային տարիներին գյուղը անվանվել էր Աղբուլաղ:

1875 թ. գյուղում կառուցվել է Սբ. Գևորգ եկեղեցին: Սառնաղբյուրում առայսօր պահպանվում են միջնադարյան գերեզմանոցի տապանաքարեր, Հացուտ քարանձավ-սրբատեղին, 19-րդ դարի ջրաղաց:

Սառնաղբյուրը, լինելով դաշտավայրը լեռնաստանի հետ կապող հանգուցակետում, միջնադարից սկսած քոչվոր ցեղերի, իսկ 20-րդ դարի սկզբներին՝ թուրք-թաթարական ավազակախմբերի հարձակումների թիրախում է գտնվել:

1918 թ. սեպտեմբերի 22-ին թուրքական կանոնավոր բանակը գրավել էր Միվրիշենլու, Դահրազ, Ղլիշբաղ, Քյաթուկ, Նախիջևանիկ, Փիրջամալ, Վարազաբույն գյուղերը[336]:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո թուրքական զորքերը հեռացան Այսրկովկասից: Նրանց կողմից գրավված հայկական գյուղերի բնակիչ-

[329] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 245:
[330] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 137:
[331] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:
[332] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 226:
[333] Հայկունի, նշվ. աշխ., էջ 81:
[334] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 148, թ. 89:
[335] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 229:
[336] Նույն տեղում:

ները, վերադառնալով իրենց բնակավայրերը, 1918-1920 թվականներին ձեռնամուխ եղան Արցախի պետականության պաշտպանմանն ու ամրապնդմանը:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո, 1930 թ. գյուղում կոլտնտեսություն էր կազմակերպվել: 1971 թ. այն միավորվել էր Նախիջևանիկի պետական տնտեսությանը: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվել են մասնավոր տնտեսություններ:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 67 մարդ, զոհվել է 42-ը: Նրանց հիշատակին Սառնաղբյուրում հուշարձան է կառուցվել:

Արցախյան ազատագրական պայքարի առաջին տարիներին՝ 1889-1990 թվականներին, Սառնաղբյուրում կամավորական ինքնապաշտպանական ջոկատ է կազմավորվել, որը Ասկերանի պաշտպանական շրջանի զորամասերի կազմում մասնակցել է ԱՀ պաշտպանության գործին:

Թշնամին օր ու գիշեր հրետակոծում էր գյուղը: 1992 թ. մայիսի 10-ին ադրբեջանցիներին հաջողվեց գրավել Աղբուլաղ, Նախիջևանիկ, Փիրջամալ, Արանգամին, Միրզաբույն գյուղերը՝ թուրքավարի հրո ճարակ դարձնելով դրանք:

Վերակազմավորելով ու վերախմբավորելով ուժերը ԱՀ ՊԲ զորամասերը ազատագրեցին Խրամորթ, Դահրազ, Նախիջևանիկ, Աղբուլաղ, Արանգամին, Փիրջամալ գյուղերը:

Գյուղի ազատագրվելուց հետո Աղբուլաղի բնակիչները վերադարձել են հայրենի օջախներ և ԱՀ կառավարության աջակցությամբ վերականգնել բնակավայրը:

1995 թ. գյուղը վերանվանվել է Սառնաղբյուր:

1873 թ. Սառնաղբյուրում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց: 1996 թ. կառավարության որոշմամբ դպրոցը փակվել և վերաբացվել է 1907 թ.:

Խորհրդային տարիներին գյուղում ութամյա դպրոց էր գործում:

1992 թ. ադրբեջանցիների կողմից բնակավայրը բռնազավթելուց հետո դպրոցը միաժամանակ դադարեցրել է իր գործունեությունը: 1997-1998 ուսումնական տարվանից կրթօջախը դարձել է Նախիջևանիկի միջնակարգ դպրոցի մասնաճյուղ:

Ծննդով Սառնաղբյուրից է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Սերգեյ Սարգսյանը:

Սառնաղբյուր համայնքի կազմում ընդգրկված է նաև Դահրազ գյուղը:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Բնակավայրի աղբյուրներն են՝ Ներքին ծորեն, Վետած, Պոութին, Տիվերդուն:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, բուժկետ, դպրոց:

Սառնաղբյուրում 1890-ական թվականներին կար 55 տուն, 369 բնակիչ[337], 1987 թ.՝ 48 տուն, 129 բնակիչ[338], 2018 թ.՝ 28 տուն, 112 բնակիչ[339]: Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԴԱՀՐԱԶ

Գյուղը գտնվում է ԱՀ արևելյան հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին Վարանդա գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Բովուրխանի լեռնազանգվածից դեպի արևելք ձգվող լեռանձյուղերից մեկի վերջավորությունում՝ Մուխանքի դաշտաբերանում:

Բնակավայրի կազմավորման վերաբերյալ գրավոր սկզբնաղբյուրներում հստակ տեղեկություններ չեն պահպանվել:

Ուսումնասիրողներից Ս. Մելքումյանը, առանց աղբյուր մատնանշելու, գրում է, որ Դահրազի պատմությունը սկսվում է 17-րդ դարի սկզբներից[340]:

Գյուղին մերձ՝ հյուսիսարևելյան ուղղության ժայռի վրա են գտնվում Դահրազի կամ Հոռոմսիմի ամրոցի մնացորդները, որը կառուցվել էր 12-13-րդ դարերում:

Տիգրանակերտը, Քարագլուխ-Շիկաքարը, Հոռոմսիմի, Կուսաբերդի ամրոցների շարքը միջին միջնադարում Մուխանքի դաշտից դեպի լեռնաստանի խորքերը թափանցել ցանկացող քոչվորներին դիմակայելու գործում կարևոր դերակատարություն է ունեցել:

Հոռոմսիմ բերդի առկայությունը թույլ է տալիս ասել, որ առնվազն վերոհիշյալ ժամանակահատվածում նրա հարևանությամբ բնակավայր է եղել:

Դահրազում Դավիթ Ադամյանի և Բաղդասար Սողոմոնյանի միջոցներով 1862 թ. կառուցվել է կամարակապ Սբ. Աստվածածին եկեղեցին[341]:

1797-1798 թվականներին՝ ժանտախտի տարածման ժամանակ, Հադրութ, Թաղլար, Դահրազ, Խաչմաչ, Ճարտար, Թաղասեռ բնակավայրերից բազմաթիվ ընտանիքներ տեղափոխվել են Շամախու գավառ և հիմնել Արփավուտ գյուղը[342]:

Դահրազը ծանր ժամանակաշրջան ապրեց նաև 1905-1906 և 1917-1920 թվականների հայ-թաթարական ընդհարումների տարիներին: Թաթար հրոսակախմբերը Մուխանքի դաշտից գրոհում էին հայկական գյուղերի վրա:

[337] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 226:
[338] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 141:
[339] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:
[340] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 128:
[341] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 227:
[342] Նույն տեղում, էջ 89:

1918 թ. սեպտեմբերի 12-ին թուրքական կանոնավոր բանակը գրավել և ավերել էր Միվրիշենլու, Դահրազ, իսկ սեպտեմբերի 23-ին՝ Քարագլուխ, Խրամորթ, Խանապատ, Ղլիշբաղ, Քյաթուկ, Նախիջևանիկ, Փիրջամալ, Վարազաբույն գյուղերը[343]:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո թուրքական զորքերը հեռացան Այսրկովկասից: Գրավված հայկական գյուղերի բնակիչները վերադարձան իրենց բնակավայրերը:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո, Դահրազում 1931 թ. կոլտնտեսություն է կազմակերպվել: 1971 թ. այն միավորվել էր Նախիջևանիկի կոլտնտեսությանը և դարձել խորհտնտեսություն: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո Դահրազում ստեղծվել են մասնավոր տնտեսություններ:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 37 մարդ, զոհվել է 20-ը:

Արցախյան ազատագրական պայքարի առաջին իսկ օրերից գյուղը ենթարկվում էր ադրբեջանցի ավազակախմբերի հարձակումներին:

Ադրբեջանցիներին 1992 թ. մայիսի 10-ին հաջողվել է գրավել Դահրազ, Աղբուլաղ, Նախիջևանիկ, Փիրջամալ, Արանզամին գյուղերը: Նույն թվականի սեպտեմբերին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ թշնամին հեռացավ Դահրազից: Գյուղից ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի է արժանացել Արմեն Բալայանը:

1873 թ. Դահրազում բացվել էր եկեղեցական ծխական դպրոց: 1896 թ. կառավարության որոշմամբ այն փակվել և վերաբացվել է 1908 թ.:

Խորհրդային տարիներին գյուղում ութամյա դպրոց է գործել: Աշակերտների թվաքանակի նվազման պատճառով 1980-ական թվականներին այն փակվել է, որն առայսօր չի գործում:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Դահրազի աղբյուրներն են Կոթ, Ուսումանց:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Դահրազը ներառված է Սառնաղբյուր համայնքի մեջ:

Դահրազում 1890-ական թվականներին կար 65 տուն, 463 բնակիչ[344], (որոշ տվյալներով 1893 թ.՝ 31 տուն[345]), 1987 թ.՝ 21 տուն, 55 բնակիչ[346], 2018 թ.՝ 3 տուն, 3 բնակիչ[347]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[343] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 89:
[344] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 227:
[345] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 148, թ. 89:
[346] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 143:
[347] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:

ՍԱՐԴԱՐԱՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին Խաչենի գավառում՝ Արցախի նշանավոր բնակավայրերից մեկի՝ Նորագյուղից ոչ շատ մեծ հեռավորության վրա:

Սարդարաշենի բնակիչների մոտ պապերից եկած մի զրույց է պահպանվել, ըստ որի՝ 4-ից մինչև 17-րդ դարի կեսերը իրենց բնակավայրը գտնվում էր ներկայիս գյուղից 1,5-2 կմ հեռավորության վրա: Գյուղը ուներ 700-800 ծուխ և սկզբում ուներ Ցրտաջուր, իսկ հետագայում՝ Նոր շեն անունը: Առայսօր պահպանվում են նախկին գյուղից մնացած տների փլատակները, եկեղեցու պատերից որոշ մասեր, կալատեղեր:

17-րդ դարի կեսերին Նոր շենը ավերվել է պարսկական արշավանքների հետևանքով: Բնակիչների մի մասը տեղափոխվել և հաստատվել է ներկայիս Ադրբեջանի Աղսուի շրջանում և Վարանդայի Նոր շեն գյուղում: Մյուսներն էլ համառորեն շարունակել են ապրել հայրենի բնակավայրում: Քանի որ Նոր շենը ավերված էր, Վերդունց, Դերունց և Պետունց ընտանիքների անդամները տեղափոխվում և բնակություն են հաստատում գյուղից արևելք գտնվող իրենց գոմատեղերում: Եվ այդպես ձևավորվում է մի նոր բնակավայր: Պատմում են, որ Վերդունց տոհմում կար մի զորեղ, ֆիզիկապես ուժեղ տղամարդ՝ Սարդար անունով: Հարևան գյուղերի երիտասարդների հետ կազմակերպված ըմբշամարտի (կոխի) մրցույթներում և վեճակոիվներում միշտ հաղթող էր ճանաչվում Սարդարը: Նրա համբավը տարածվում է Արցախում և երբ որևէ մեկն ուզում էր նշել Սարդարի ապրելու վայրը, ասում էր Սարդարաշեն: Ըստ պահպանված զրույցի՝ այդպես էլ բնակավայրը անվանակոչվեց Սարդարաշեն:

19-րդ դարի սկզբներին Խոյից գաղթած մի քանի ընտանիքներ նույնպես հաստատվում են Սարդարաշենում:

19-րդ դարի վերջերին այդտեղ կար 40 ծուխ, 349 բնակիչ[348]:

1917-1920 թթ. ընթացքում՝ արցախահայության պետականության գոյության պայմաններում, դեպի երկրի մայրաքաղաք Շուշի տանող ճանապարհի վրա գտնվող Ասկերանի կիրճը թուրքերից պաշտպանող հայկական զորամասերի համար Սարդարաշենը դարձել էր ապահով հավաքատեղի: Գյուղում էր գտնվում նաև սարդարաշենցիներից կազմված զինված մի ջոկատ, որի հրամանատարն էր դաշնակցական գործիչ հանրահայտ Մաշտին: Նրանք Դալի-Ղազարի հրամանատարությամբ Ասկերանում անզիջում կռվել են թուրքական կանոնավոր զորքերի դեմ:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1932 թ., գյուղում կազմակերպվում է «Նոր կյանք» կոլտնտեսությունը:

1950 թ. տնտեսությունների խոշորացման քաղաքականության հետևանքով Սարդարաշենի կոլտնտեսությունը միացվեց Նորագյուղի կոլտնտեսությանը:

[348] Մակար եպս. Բարխուդարեանց, Աղուանից երկիր և դրացիք. Արցախ, էջ 245:

1966 թ. նորագյուղցիները տեղափոխվեցին ներկայիս բնակավայր: Սարդարաշենից որոշ ընտանիքներ նույնպես հաստատվեցին Նորագյուղում: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո Սարդարաշենում ձևավորվեցին առանձին գյուղացիական տնտեսություններ, որոնց աշխատանքը առայսօր արդյունավետ չէ:

Տարբեր տարիների Սարդարաշենի կոլտնտեսությունը ղեկավարել են Մակիչ Բաղդասարյանը, Ենոք Բաղդասարյանը, Իսրայել Բաբայանը, Պողոս Բաբայանը, Հովսեփ Պետրոսյանը:

Հայրենական մեծ պատերազմին Սարդարաշենից մասնակցել է 104 մարդ: Նանց շարքում կային նաև կանայք՝ Աննա Գրիգորյանը (զոհվել է պատերազմում), Վարսենիկ Հայրիյանը, Նորա Ասլանյանը, Գյուլզադա Մուրադյանը, Աշխեն Գրիգորյանը: Պատերազմի մասնակիցներից 46 հոգի զոհվել են: Նրանց հիշատակին գյուղում կանգնեցվել է հուշարձան:

Սարդարաշենցիները անմնացորդ նվիրվածությամբ պայքարեցին նաև արցախյան ազատագրական պատերազմի տարիներին: Ստեղծվեց ինքնապաշտպանական ջոկատ՝ անվախ հրամանատար Կայծեր Շահբազյանի գլխավորությամբ: Ջոկատը կրում էր հրամանատարի «Կայծ» անունը: Ջոկատում ընդգրկված էին շուրջ 70 մարտիկներ: Նրանք միշտ էլ պատվով են կատարել մարտական խնդիրները: 1992 թ. մարտի 12-ին Խրամորթի բարձունքում գտնվող եկեղեցում դարանակալած թշնամու գնդակից զոհվեց Կայծեր Շահբազյանը: Նրան փոխարինեց Նուրեն (Էդո) Գրիգորյանը, այնուհետև՝ Սերգեյ Գրիգորյանը:

Կայծեր Շահբազյանը, Նուրեն Գրիգորյանը և Արարատ Գոլեցյանը հետմահու պարգևատրվել են ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

1894-1895 ուսումնական տարում Սարդարաշենում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց, որտեղ սովորում էր 25 աշակերտ, դասավանդում՝ 1 ուսուցիչ: Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և եկեղեցու միջոցներով:

1927 թ. գյուղում բացվել է տարրական դպրոց: Պարապմունքները անց էին կացվում եկեղեցում: 1933 թ. դպրոցը դարձավ յոթամյա: Կառուցապատվեց դպրոցական նոր շենք:

Ներկայումս կրթական հաստատությունը ունի հիմնական դպրոցի կարգավիճակ: 2004-2010 թթ. դպրոցում սովորում էր 32-40 աշակերտ, դասավանդում՝ 14 ուսուցիչ, իսկ 2014-2015 ուսումնական տարում՝ 15 աշակերտ, 9 ուսուցիչ, 2018-2019 ուսումնական տարում՝ 7 աշակերտ, 9 ուսուցիչ:

Դպրոցի տնօրեն են աշխատել Ծատուր Հովհաննիսյանը, Արտաշես Պետրոսյանը, Միքայել Գասպարյանը, Մովսես Հայրապետյանը, Գուրգեն Եսայանը, Լազար Հովհաննիսյանը, Վահան Խաչատրյանը, Ազատ Անդրյանը, Սերգեյ Բեգլարյանը, Հրաչիկ Սիմոնյանը, Վալենտինա Գրիգորյանը, Լաուրա Հակոբյանը, նունե Սալիկյանը:

Ծնունդով Սարդարաշենից է անասնաբուժական գիտությունների դոկտոր Վերդի Հակոբյանը:

Սարդարաշենում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ Ճգնավոր, Նոր շենի խաչ, Կաղնի խաչ սրբավայրերը, Ցրտաջուր, այնուհետև Նոր շեն գյուղատեղին (4–17-րդ դարեր), Չնգլ քարանձավը, գերեզմանոցը (8–13-րդ դարեր), Սբ. Գևորգ եկեղեցին (18-րդ դար), 12–13-րդ դարերի խաչքարեր:

Սարդարաշենի աղբյուրներն են՝ Գյուղամիջի, Տկողնի, Նոր շենի, Եփրեմանց գյոլ, Խաչենի գյոլ, Միրզին գյոլ, Կաղնի խաչ, Ըզնակի ձորի, Ուղտի թուլ իլածի, Սուլուր քարի, Ցրտաջրի, Շոշոանի, Տնջրի, Ղազամ հանդի ձորի, Հաբուն ձորի, Կիմարա ձորի, Դերունց բաղեն, Հաջալուի, Շբովեն բաղի ջուր, Մշինին ջուր, Շիգյովեն բուստանեն ջուր:

Գյուղի հանդամասերն են՝ Քրմաղան, Թյուքլու, Նոր շեն, Ցրտաջուր, Գյադուկ, Ղազամ հանդ, Կաղնե խաչ, Օղտեն թուլ իլած, Հացի խութ, Ծովատեղ, Միթևանի, Մորուխորթ, Գյոլեն ղրաղ, Ճղպրոտի ձոր, Գոմերի ձոր, Ջղանոտ, Պետունց ձոր, Դերունց տափ, Սվաջուր, Մեծ տափ, Էրկան սեռ, Շենին առաջ, Թվարա հարթ, Մնացականի խմհատ, Տանձի հարթ, Ղըլըտեղեր, Սարի Աղամիրի տափ, Էմիրանց տափ, Սարի Հայրունց տափ, Քրըկլոխ, Խմհատներ, Տըխտրքարի գյունե, Սուլուր քար, Ըսլանանց յամաջ, Խոր ձոր, Հաբուն ձոր, Բաղդասարանց, Վերդունց, Աղամերանց, Դերունց բաղերը:

Սարդարաշենում շարունակում են ապրել Ղլեչունց, Պետունց, Վերդունց, Բաղդասարանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: 2014 թ. կառուցվել է խմելու նոր ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Սարդարաշենում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, հանդիսությունների սրահ, առևտրի 1 կետ:

Սարդարաշենում 1955 թ. կար 120 տուն, 675 բնակիչ, 1987 թ.՝ 62 տուն, 195 բնակիչ, 2019 թ.՝ 26 տուն, 81 բնակիչ[349]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՍԱՐՈՒՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին Վարանդա գավառում՝ Ղարաբաղյան լեռնաշղթայի հանդիպակաց լեռան անտառոտ լանջին՝ Ստեփանակերտ–Կարմիր շուկա մայրուղու միջակայքում:

Գյուղամիջում և նրա շրջակայքում պահպանվել են 10–17-րդ դարերի բնակարանների հետքեր: Հետաքրքիր է, որ Սարուշենի մոտ 12–13-րդ դարերում կառուցված և

[349] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

1641 թ. վերակառուցված Փիրումաշեն եկեղեցու պատերի մեջ կան հեթանոսական ժամանակաշրջանի գերեզմանաքարեր:

Նախկինում գյուղը անվանվել է նաև Փիրումաշեն:

Գյուղի տարեցների մոտ պահպանված մի զրույցի համաձայն՝ 16-րդ դարում գյուղ են ներխուժել թուրքական ավազակախմբերը, բնակիչներին լցրել եկեղեցին և վառել: Հետագայում, երբ գյուղը վերականգնվել է, բնակիչները գյուղը անվանել են «փյունիկի նման հառնած շեն»: Նրանց կարծիքով այստեղից էլ առաջացել է Փիրումաշեն անունը:

Փիրումաշենի մոտ պահպանված շինությունների հետքերը վկայում են, որ այստեղ առնվազն մինչև 17-րդ դարի կեսերը բնակավայր է եղել: Ամենայն հավանականությամբ 17-րդ դարի առաջին կեսերին բնակավայրը տեղափոխվել է ներկայիս գյուղի տեղը:

19-րդ դարի 1-ին կեսին այստեղ կար 30 տուն[350]:

19-րդ դարի սկզբներին Սարուշենում կառուցվել է Սբ. Ամենափրկիչ եկեղեցին, որտեղ պահպանվում էր հռչակավոր մագաղաթյա Ավետարանը: Մագաղաթյա մատյանի համար Սարուշեն ուխտագնացության էին գնում ոչ միայն Արցախի և հարակից բնակավայրերի հայությունը, այլև Բաքվից, Թիֆլիսից, անգամ մահմեդականներ:

Ռուս-պարսկական 1826–1828 թթ. պատերազմի ժամանակ պարսկական զորքերը ավերում են նաև Սարուշենը և իրենց հետ տանում Ավետարանը:

1833 թ. Շուշիի բնակիչ Միրզա Հովհաննիսյան-Զարգարյանցը Թավրիզում մահմեդականների մոտ տեսնում է Ավետարանը, այն գնում և բերում հանձնում եկեղեցուն[351]:

19-րդ դարի վերջերին Սարուշենում արդեն կար 70 ծուխ, 584 բնակիչ[352]:

1890 թ. գյուղի Ամենափրկիչ եկեղեցին վերանորոգվել է բաքվաբնակ Գրիգոր Այվազյանի միջոցներով:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1930 թ., Սարուշենում կազմավորվել է կոլտնտեսություն: 1960-ական թվականների սկզբներին այն միավորվում է Ակնաղբյուրի կոլտնտեսության հետ: Հետագա տարիներին տնտեսությունը գործել է որպես առանձին միավոր: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվեցին առանձին գյուղացիական տնտեսություններ:

Տարբեր տարիների Սարուշենի կոլտնտեսությունը ղեկավարել են Սերգեյ Առուստամյանը, Աշոտ Գասպարյանը, Սամվել Բաղդասարյանը, Բաղդասար Ղարամյանը, Բենիկ Հայրապետյանը, Արտյուշա Հարությունյանը:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 175 մարդ, զոհվել՝ 92-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կանգնեցվել: Արցախյան ազատագրա-

[350] Սարգիս արք. Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 522:

[351] Սարգիս արք. Ջալալյանց, նշվ. աշխ, էջ 522, Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 212:

[352] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 212:

կան պատերազմի ժամանակ գյուղից մասնակցել է 66 մարդ: Նրանցից 12 ազատամարտիկ՝ Սլավիկ Առուստամյանը, Այբերտ Ավետիսյանը, Վալերի Ավետիսյանը, Վրեժ Գասպարյանը, Վլադիսլավ Գասպարյանը, Կարեն Իսրայելյանը, Վարդան Իսրայելյանը, Իվան Համբարձումյանը, Գենադի Համբարձումյանը, Արծվիկ Հարությունյանը, Արթուր Հայրապետյանը և Լևոն Ղազարյանը իրենց կյանքը նվիրաբերել են հայրենիքի ազատագրման գործին: Վարդան Իսրայելյանը՝ հետմահու, Կարմեն Ավետիսյանը, Արմեն Գասպարյանը, Գրիգորի Գասպարյանը արժանացել են ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի:

1870 թ. Սարուշենում բացվել է նախակրթարան, իսկ 1979 թ. գործել է եկեղեցական ծխական դպրոց, որտեղ սովորում էր 30 աշակերտ, դասավանդում՝ 1 ուսուցիչ: 1885 թ. դպրոցը փակվել է և վերաբացվել 1886–1887 ուսումնական տարում: 1890 թ. գյուղում բացվել է մեկդասյա երկսեռ Գրիգորյան ուսումնարանը: Այն ուներ 60 աշակերտ, ուսուցիչն էր Թովմաս Այվազյանը: Չնայած 1996 թ. ցարական կառավարությունը փակել էր հայկական դպրոցները, այնուամենայնիվ այստեղ կրթարանը գաղտնի շարունակում էր գործել: Տվյալ ժամանակահատվածում գյուղում բացվում է նաև իգական դպրոց: Ուսուցչուհին էր Հռիփսիմե Այվազյանը: Բարերար Գրիգոր Այվազյանը կառուցել է գյուղի դպրոցը:

Խորհրդային տարիներին գյուղում բացվել է տարրական դպրոց, որը հետագայում միջնակարգի կարգավիճակ է ստացել: 1971–1972 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 158 աշակերտ, դասավանդում՝ 20 ուսուցիչ: 1994–2000 թվականներին դպրոցում սովորում էր 78–85 աշակերտ: 2017–2018 ուսումնական տարում աշակերտների թիվը կրճատվեց և հասավ 51-ի: Դասավանդում էր 20 ուսուցիչ: Թեհրանահայ բարերարներ Գևորգ և Հասմիկ Շիշմանյանների միջոցներով դպրոցը հիմնանորոգվել է: Դպրոցի տնօրեններ են աշխատել Վանյա Ավանեսյանը, Էդիկ Հովհաննիսյանը, Սերգեյ Գասպարյանը, Մովսես Ավետիսյանը, Սերգեյ Բալայանը: Ծննդով սարուշենցի է տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մինաս Մինասյանը:

Սարուշենում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ Փիրումաշեն եկեղեցին (1641 թ.), Ամենափրկիչ եկեղեցին (19-րդ դար), Փիրումաշեն գյուղատեղին (10–17-րդ դարեր), գերեզմանոց (18–19-րդ դարեր), խաչքար (12–13-րդ դարեր):

Սարուշենում հայտնի են Քոնջ, Խավար ջուր, Շոր, Ներկարար, Մղրաջուր, Ավագի, Խավ, Մելիքի, Բաղեն ձոր, Կոնչու, Նադար, Մողլաջուր, Ցորտ աղբյուրները:

Սարուշենի հանդամասերն են՝ Դլլու խութ, Երե խմհատ, Քյուխանց խմհատ, Կճիճուրի տեղամաս, Փիրումաշենի տեղամաս, Կալադունց դարա, Պառավ արտի ձոր, Սղաշեն, Քաչալ խութ, Բամբակարտ, Հինգ կալ, Ներկարար աղբյուրի տեղամաս:

Գյուղում շարունակում են ապրել Իսունց (Գասպարյաններ), Բյարանց (Իսրայելյաններ, Սարգսյաններ), Լազգունց (Հարությունյաններ), Վիտիսանց (Ավետիսյաններ), Հրիբեդանց (Հայրապետյաններ), Հայրունց (Հայրիյաններ), Բոխանց (Բալայաններ), Միրքիրիդանց (Հարությունյաններ), Կուծանանց (Գրիգորյաններ). Մոսունց (Ղազարյաններ), Նառանց (Գրիգորյաններ), Մուրունց (Մարտիրոսյաններ, Ավետիսյաններ), Իփրհամանց (Աբրահամյաններ) ազգատոհմերի ներկայացուցիչները:

Սարուշենը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը: Գյուղում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, մանկապարտեզ:

Սարուշենում 1979 թ. կար 125 տուն, 510 բնակիչ, 1987 թ.՝ 108 տուն, 395 բնակիչ[353], 2018 թ.՝ 97 տուն, 376 բնակիչ[354]: Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՍՂՆԱԽ

Գյուղը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին Վարանդա գտավառում՝ մելիքանիստ Ավետարանոց գյուղի հարևանությամբ՝ Փոքր Քիրսի ստորոտում: Գյուղի տարածքով հոսում են Վարանդա գետի վտակներ Առաջնեկը, Շիփերեն անցը և Փողզրաթը: Գյուղը շրջապատված է անտառներով, ծաղկազարդ մարգագետիններով, որոնք բնակավայրին անկրկնելի հմայք ու գեղեցկություն են հաղորդում:

Հին Սղնախը դեռևս 14-րդ դարից գտնվում էր ներկայիս բնակավայրի հարավային հատվածում՝ Խաչին տակ տեղամասում: Ամենայն հավանականությամբ գյուղն այդ ժամանակ այլ անուն ուներ:

Վերոնշյալ վայրից բնակչությունը 17-րդ դարի վերջերին տեղափոխվում և հաստատվում է ներկայիս բնակավայրի տարածքում:

18-րդ դարի սկզբներին Պարսկաստանը ապրում էր երկպառակության շրջան: Պարսկաստանի դարավոր թշնամին՝ Օսմանյան կայսրությունը, նրան առավել հյուծելու նպատակով հրահրում է Դաղստանի ավարառու այուների լեռնականներին, որոնք էլ մշտապես ահ ու սարսափի մեջ էին պահում Իրանի հյուսիսային նահանգների բնակիչներին: Առավել շատ տուժում էր հայությունը:

Պարբերաբար կրկնվող ավերիչ արշավանքների առաջն առնելու նպատակով անջատ-անջատ գործող Արցախի մելիքները, ապավինած իրենց անառիկ բերդերին, ստեղծեցին զինական միասնություն, որը պատմությանը հայտնի է սղնախներ անունով:

Ջրաբերդի, Գյուլիստանի և Խաչենի մելիքությունների զինվորականությունը կենտրոնացված էր Մռավի ստորոտում: Այն հայտնի է Մեծ սղնախ անունով:

[353] Մելքումյան Ս., նշվ.աշխ., էջ 140:
[354] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:

Վարանդայի և Դիզակի մելիքների զինական ուժն էլ տեղակայված էր Քիրսի ստորոտում՝ Ավետարանոց և Սխղնախ գյուղերի տարածքում, ինչպես նաև՝ Շուշի բերդաքաղաքի շրջակայքում: Այն ընդունված է անվանել Փոքր սղնախ:

Հավանաբար քնության առարկա բնակավայրի տարածքում եղած ամրացված վայրերից էլ գյուղը ստացել է Սղնախ անվանումը:

Սղնախի տարեցների մոտ պահպանված մի զրույցի համաձայն՝ 1720-ական թվականներին Մխիթար սպարապետը մի քանի օր մնացել է Սղնախում և ապրել Մոսանց տանը:

Սերո Խանզադյանը «Մխիթար Սպարապետ»-ը գրելու պատրվակով 1970-ական թվականներին այդ հետքերով եղել է Սղնախում և զրուցել գյուղի տարեցների հետ:

Արցախը Ռուսաստանին անցնելուց հետո 1816 թ. գեներալ Վ. Մադաթովին տրվում են Չանախչի, Քեշիշքենդ, Սարուշեն, Ննգի, Ղուզումքենդ, Գյունե Ճարտար, Ղուզե Ճարտար և Տող գյուղերը՝ որպես սեփական կալվածքներ[355]:

Պատահական չէ, որ 1826 թ., երբ պարսկական զորքերը թագաժառանգ Աբաս Միրզայի գլխավորությամբ մտան Արցախ, բանակի թուրք և քուրդ ավազակախմբերը թալանել էին Մադաթովին պատկանող գյուղերը: Մեհտի Ղուլի խանի կարգադրությամբ կողոպտում և հրո ճարակ են դարձնում գեներալ Մադաթովի տունն ու կալվածքը, անարգում նրա նախնիների գերեզմանները[356]:

Այդ արշավանքից հետո ավերված գյուղերը ամոքում են իրենց վերքերը և շարունակում իրենց հայրենաշեն գործը:

19-րդ դարի վերջերին Սղնախում կար 55 ծուխ, 424 բնակիչ[357]:

Նույն ժամանակահատվածում շուշեցի մեծահարուստ Դանիել Ահարոնյանը Սղնախում մետաքսամանման գործարան է բացում:

1874 թ. Շուշիում ապրող Մխիթարյան մեծահարուստ գերդաստանի միջոցներով գյուղում կառուցվում է Սբ. Աստվածածին եկեղեցին: Խորհրդային տարիներին եկեղեցին ավերվել է:

19-րդ դարում Սղնախից մի քանի ընտանիքներ հաստատվում են հայաբնակ Ճառ (Ջաքաթալա) քաղաքում:

1917-1920 թվականներին արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման շրջանում նորից վերականգնվեցին սղնախական շրջանի ավանդույթները: Սղնախ գյուղը դարձավ հայկական զորքերի հավաքատեղի: Այստեղ զորքը ոչ միայն մարզվում էր, այլ նաև Շուշիի թուրքերի աչքից հեռու կատարվում էր ինքնաշեն նոր զենքերի փորձարկումներ:

[355] Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 111, գ. 36, վակ. 80, թ. 1-3:
[356] Ներսեսով Միրզա Յուսուֆ, Ճշմարտացի պատմություն, Երևան, 2000, էջ 117:
[357] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 211:

Սղնախում 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին ոչ միայն ապրում էին հողի մշակներ, այլ նաև արհեստավորներ:

Հայտնի էին Սղնախի հյուսները, քարագործ շինարարները, երաժշտական գործիքների վարպետները:

Նրանց շատերի ջանքերի շնորհիվ են կառուցվել ներկայիս Ադրբեջանի տարածքի մի շարք բնակավայրեր:

1930 թ. գյուղում ձևավորվում է կոլտնտեսություն: Այդ տնտեսությունը 1950-ական թվականներին ներառվեց Ավետարանոցի կոլեկտիվ տնտեսության կազմի մեջ:

1987 թ. Սղնախի տնտեսությունը առանձնացվեց և շարունակեց գործել որպես առանձին միավոր: 1998 թ.՝ հողերի սեփականաշնորհումից հետո, դադարեցվեց Սղնախի Ստեփան Շահումյանի անվան կոլտնտեսության գործունեությունը:

Տարբեր տարիների կոլտնտեսությունը ղեկավարել են Դավիթ Հովսեփյանը, Խաչատուր Ավանեսյանը, Ղազար Ավանեսյանը, Վոլոդյա Հայրյանը, Գեորգի Պետրոսյանը, Վարդան Վարդանյանը:

Հայրենական Մեծ պատերազմին Սղնախից մասնակցել է 102 մարդ, զոհվել 48-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Արցախյան շարժման առաջին իսկ տարիներին Սղնախում Վարդան Վարդանյանի և Արմեն Մխիթարյանի գլխավորությամբ կամավորական ջոկատ է կազմակերպվել: Ջոկատն իրեն փայլուն դրսևորեց 1992 թ. հունվարի 26-ի Քարին տակի նշանավոր ճակատամարտում:

Հետագայում՝ պատերազմի տարիներին, Սղնախը հարուստ կենսագրություն կերտեց: Արցախյան ազատամարտի տարիներին, հատկապես Շուշիի ռազմագործողության ժամանակ, Սղնախի աշխարհագրական դիրքը հնարավորություն ընձեռեց բնակավայրը դարձնել հայկական զինված ուժերի զորատեղի: Այստեղ էր տեղադրված նաև զինվորական հոսպիտալը: Շուշիի վրա գրոհող հարավային ուղղությամբ գործող ստորաբաժանման մեջ ներգրավված էր նաև Սղնախի ջոկատը:

Արցախյան ազատամարտում զոհվել են Նարվեն Ավետիսյանը, Վլադիկ Հայրյանը, Սամվել Ավետիսյանը, Գեղամ Միրզոյանը, Կամո Հայրապետյանը, Արտիկ Աղասյանը, Մելսիկ Սարգսյանը, Արայիկ Աղասյանը, Ռաֆիկ Ավետիսյանը, Հմայակ Հայրյանը, Մարտիկ Հարությունյանը, Ալյոշա Բաղրյանը:

Ծագումով Սղնախից ԱՀ ՊԲ ռազմաբժշկական ծառայության պետ Սամվել Գևորգյանը և Հովսեփ Ավետիսյանը արժանացել են ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի:

19-րդ դարի վերջերից Սղնախում գործել է ծխական մեկդասյա դպրոց: 1918 թ. այն երկդասյա երկսեռ դպրոց էր:

Խորհրդային առաջին տարիներին Սղնախում բացվել է տարրական դպրոց: 1930-ական թվականներից մինչև 1958 թ. այն յոթամյակի, իսկ դրանից հետո՝ մինչև 1988 թ., ութամյակի կարգավիճակ ուներ: Արցախյան շարժման առաջին իսկ տարում այն

դարձավ միջնակարգ: 1989 թ. դպրոցում սովորում էր 38 աշակերտ, դասավանդում՝ 10 ուսուցիչ: 2018–2019 ուսումնական տարում՝ համապատասխանաբար 43 աշակերտ, 17 ուսուցիչ:

2000 թ. դպրոցը հիմնանորոգվել է բարերարներ Մելինե և Զարեհ Իսախանյանների կողմից:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Վարդան Բաբայանը, Գ. Հովսեփյանը:

Ծնունդով Սղնախից են տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Արզիկ Միքայելյանը, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ Հովսեփ Հովսեփյանը, Վալերի Հովսեփյանը, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վեներա Հայրապետյանը, գրող հրապարակախոս Նվարդ Ավագյանը:

Սղնախում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ Խաչին տակ տարածքում գյուղատեղիի մնացորդներ (13–18-րդ դարեր), միջնադարյան գերեզմանոցի, եկեղեցու ավերակներ (13–18-րդ դարեր), Շամիրեն կարան քարանձավը (4–7-րդ դարեր), Սբ. Աստվածածին եկեղեցին (19-րդ դար), Խաչին տակի, Խնձորա խաչին տակի, Պուտ քարի, Կուխտիգի, Կաղնուն խաչի սրբավայրերը:

Գյուղի աղբյուրներն են՝ Քշմրորի, Թեղուն, Փողզրադի, Մարանդի, Թանագ, Թեղուտի ձոր, Չախմախի, Պտրուսանց ձոթ, Շրշռանի, Ֆահրադի, Արայի յուրդ, Համեն տակ, Պեց, Գյուղի, Նավաթխան, Մկրտիչի, Ռուսեն, Փըրվըզար:

Սղնախի հանդմասերն են՝ Հինգ շեն, Տանձուտ, Թալա, Էրկան թալա, Շլորա սեռ, Թանագ աղբյուր, Համեն տակ, Մկոնան, Քշմրոր, Կյուղոկեն ձոր:

Սղնախում շարունակում են ապրել Ղահրամանյանների, Հովսեփյանների, Մխիթարյանների, Աղաբեկյանների, Սարգսյանների, Հակոբջանյանների, Ջանյանների, Առստամյանների, Հայրյանների, Ավետիսյանների, Հակոբյանների, Վարդանյանների ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: 1986 թ. Առաջնեկի ջուրը գյուղ է հասցվել:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Գյուղում գործում են գյուղապետարան, ակումբ, հանդիսությունների սրահ, (կառուցվել է ծագումով Սղնախից՝ բարերար Մարատ Հակոբջանյանի միջոցներով), բուժկետ, դպրոց:

Սղնախում 1987 թ. կար 64 տուն, 250 բնակիչ, 2018 թ.՝ 64 տուն, 302 բնակիչ[358]: Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[358] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:

ՎԱՐԴԱՁՈՐ

Գյուղը գտնվում է ԱՀ արևելյան հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին Վարանդայի գավառում՝ Կարկառ գետի աջափնյակում: Գյուղը անմիջապես գտնվում է Մուխանքի դաշտաբերանում:

Ներկայումս Վարազաբուն (Արանզամին) գյուղի հետ կազմում է մեկ համայնք:

Վարդաձորը ԱՀ հնագույն բնակավայրերից մեկն է: Վերջին տարիներին կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ գյուղամերձ Քոս պռակ կոչվող տարածքում Ք. ա. 2–1-ին հազարամյակներում եղել է կիկլոպյան ամրոց–բնակատեղի:

Ներկայիս գյուղի պատմությունը սկսվում է 12-րդ դարից: Հին բնակատեղին գտնվում է ներկայիս գյուղից հարավ արևմուտք՝ 4 կմ հեռավորության վրա, բարձրադիր անտառում: Բնակավայրը անվանվել է Վարդուտ (Վարդոտ): Գյուղը ունեցել է եկեղեցի: Այն ավերվել է, սակայն տարածքը բնակչության համար սրբատեղի է համարվում:

17-րդ դարում Վարդոտի բնակիչները իջել են Դերի ձորը և հաստատվել նոր տեղանքում: Այս անգամ գյուղը անվանվել է Փիրջամալ (Փրջամալ):

Ավանդությունը պատմում է, որ գյուղի նոր անունը կապված է հավատի համար նահատակված Փիր և Ջամալ եղբայրների հետ, որոնց աճյունները ամփոփված են գյուղում՝ «Ղոբի» կոչվող վայրում: Նրանց քույրը ևս նահատակվում է անօրենների ձեռքից, որի աճյունը ամփոփված է Նախիջևանիկի հյուսիս արևմտյան բարձունքի «Նահատակ» կոչված սրբավայրում, որտեղ նաև մատուռ է կառուցված:

Փիր պարսկերեն և արաբերեն նշանակում է սուրբ, սրբավայր[359], իսկ ջամալ արաբերեն գեղեցիկ[360]:

Մեկ այլ կարծիքով բնակավայրի անունը կապված է գյուղի դեմ-դիմաց գտնվող Չախմախ թափա (որը նշանակում է Սուրբ, Աստվածածին բարձունք կամ գեղեցիկ սուրբ) սրբատեղիի հետ:

Շահ Աբաս Բ-ի հրովարտակներից մեկում նշված է, որ Փիրջամալ, Ղազանչի և Քոլատակ գյուղերը համարվում են Սաֆի Ղուլի բեկի սեփականությունը[361]:

19-րդ դարում շուշեցի բարերար Մահտեսի Շահգելդիի և Փիրջամալցի Բաղդասար Շամխալյանի միջոցներով գյուղում կառուցվել է Սբ. Աստուածածին եկեղեցին:

1832 թ. մարդահամարի տվյալներով գյուղում ապրում էր 179 մարդ, 19-րդ դարի վերջերին՝ 832 մարդ (146 ծուխ), 1906 թ.՝ 1212 մարդ[362]:

[359] Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Երևան, 1962, էջ 209:
[360] Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1948, էջ 288:
[361] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, պրակ 3, կազմեց Ք. Կոստիկյանը, Երևան, 2005, էջ 31:
[362] Տվյալները պահպանվում են ՀԱԱ-ում:

1905–1906 թվականների հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Փիրջամալը հայտնվել էր թուրք-թաթարական հրոսակախմբերի թիրախում:

Նույն իրավիճակում էր հայտնվել նաև գյուղը 1917–1918 թվականներին: 1918 թ. սեպտեմբերի 22-ին թուրքական կանոնավոր զորքերը ներխուժեցին Արցախ: Սեպտեմբերի 23-ին նրանք ավերեցին Դահիրազ, Վարազաբույն, Փիրջամալ, Նախիջևանիկ, Քյաթուկ, Խրամորթ, Խանաբադ, Ղլիշբաղ, Քարագլուխ գյուղերը:

1918 թ. հուլիսի կեսերին Փիրջամալից երկու գյուղացիներ գնում են իրենց բնակավայրի մոտակայքում գտնվող Աբդալ և Գյուլափլու թուրքաբնակ գյուղերը՝ իրենց ծանոթներից գնումներ կատարելու: Պատահաբար այստեղ էր գտնվում նաև Աղդամի կոմենդանտ Քյազիմ բեյը: Վերջինիս հրահանգով երկու հայ գյուղացիներին էլ՝ որպես լրտեսների, խարույկի վրա վառում են[363]: Չնայած այդ ամենին՝ 1917–1920 թվականներին Փիրջամալի հայերը սահմանապահի իրենց առաքելությունը պատվով կատարեցին:

1920-ական թվականներին Արցախը, հայտնվելով Ադրբեջանի հայասպան ճիրաններում, ծանր ժամանակներ ունեցավ: Ժամանակակիցը գրել է «Անցել եմ հայ գյուղերը՝ Խնաբադը, Խրամորթը, Նորշենը, Հացին, Քյաթուկը, Փրջամալը և այլն, երբեմնի փարթամ ու հարուստ այդ շեն գյուղերը, որ կարծես այժմ դաժան փոթորիկը եկել ու քշել է ամեն բան: Գյուղերի գեղեցիկ տները ավերված ու անտեր են, իբրև կուլակների և հակահեղափոխականների տներ: Գլխավորապես ծեր կանայք ու տղամարդիկ են երևում, աչքաբաց և առույգ երիտասարդները կամ փախել են բոլշևիկյան զուլումից և կամ իբրև «Ղարաբաղը Հայաստանին» միության անդամ, քշված են դեպի ցրտաշունչ Ռուսաստանի խորքերը»[364]:

1932 թ. գյուղում կոլտնտեսություն է կազմակերպվել: 1950-ական թվականներին Փրջամալի, Նախիջանիկի և Արանզամինի տնտեսությունների հիմքերի վրա ստեղծվել է խոշորացված մեկ տնտեսություն:

1969 թ. կոլտնտեսությունը վերակազմակերպվել է սովխոզի, որի մեջ ընդգրկվել են Վարդաձորի, Նախիջևանիկի, Արանզամինի, Աղբուլաղի և Դահիրազի տնտեսությունները:

1989 թ. սովխոզը կազմալուծվելուց հետո ձևավորվել են 3 կոլտնտեսություններ: 1998 թ. Վարդաձորի կոլտնտեսությունը լուծարվեց, և ստեղծվեցին անհատական տնտեսություններ:

Փիրջամալի կոլտնտեսությունն ու սովխոզը ղեկավարել են Ասլան Թովմասյանը, Իշխան Ասլանյանը, Աշոտ Հայրապետյանը, Համո Քարամյանը, Աշոտ Միքայելյանը, Սարուխան Մեժլումյանը, Չերքեզ Միրզոյանը, Աշոտ Ջիվանշիրյանը, Հրանտ Ծատրյանը, Զավեն Սարգսյանը, Աշոտ Վանյանը, Լևոն Քոչարյանը, Միքայել Բաբայանը, Յուրի Իսրայելյանը:

[363] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 162:
[364] Բալայան Վ., Դրվագներ ..., էջ 262:

Հայրենական Մեծ պատերազմին մասնակցել է 211 մարդ, զոհվել է 116-ը, որոնց հիշատակին կառուցված է հուշարձան:

Որպես սահմանամերձ բնակավայր՝ արցախյան ազատագրական շարժման առաջին իսկ օրերից գյուղը ադրբեջանական ավազակախմբերի կողմից հարձակումների է ենթարկվել:

1992 թ. մայիսի 10-ին՝ Շուշիի ազատագրման հաջորդ օրը, ադրբեջանական զինուժը խորհրդային բանակի ստորաբաժանումների օժանդակությամբ, մեծաքանակ զինտեխնիկայով լայնածավալ հարձակում սկսեց Նախիջևանիկ–Վարդաձոր–Արանզամին–Աղբուլաղ ճակատային գծի ողջ երկայնքով: Թշնամին մտավ գյուղը: Հինգ տարեց բնակիչներ, որոնք չհասցրին հեռանալ, բոլորն էլ սպանվեցին: Նույն օրը թշնամին դուրս շպրտվեց, բայց մեկ ամիս անց՝ հունիսի 12-ին, գյուղը նորից գրավվեց: 1992 թ. սեպտեմբերի սկզբներին ազատագրվեցին Խրամորթ, Դահիրազ, Նախիջևանիկ, Աղբուլաղ, Արանզամին, Փիրջամալ գյուղերը:

Արցախյան պատերազմին գյուղից մասնակցել է 44 հոգի, զոհվել են 6 ազատամարտիկ և 10 խաղաղ բնակիչ:

1874 թ. Փիրջամալում բացվել է նախակրթարան, որտեղ սովորում էր 15 աշակերտ, ուսուցիչն էր Մանաս Ներսիսյանը: 1876–1877 ուսումնական տարում Փիրջամալում բացվել է նաև եկեղեցական ծխական դպրոց: 19-րդ դարի 80-ական թվականներին այն փակվեց և վերաբացվեց 1888 թ.: Դպրոցը նորից ցարական իշխանությունների կողմից փակվեց 1896 թ. և ժողովրդի բողոքներից հետո վերաբացվեց 1908 թ. սեպտեմբերին: Այն պահվում էր բաքվաբնակ փիրջամալցի Միրզա և Սարգիս Սարուխանյան եղբայրների միջոցներով: Վերջիններս Շուշիի թեմական, ռեալական, Մարիամյան և այլ դպրոցներին շուրջ 37 000 ռուբլի են նվիրաբերել:

Խորհրդային տարիներին գյուղում գործում էր տարրական դպրոց: 1930 թվականից գյուղի նախկին տանուտերի տունը որպես դպրոցական շենք էր ծառայում: Այդտեղ սովորում էին նաև Նախիջևանիկի ու Փիրջամալի դպրոցականները:

Այդ ժամանակ դպրոցը յոթամյակի կարգավիճակ ուներ:

1968–1969 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 333 աշակերտ:

1974 թ. դպրոցական նոր շենք է կառուցվել: Դպրոցն արդեն միջնակարգ էր:

Ադրբեջանի զինված ուժերի կողմից գյուղի գրավվելուց հետո՝ 1992 թ. մինչև 1994 թ., ուսումնական պարապմունքները կազմակերպվում էին Ստեփանակերտի աջափնյակ թաղամասում: 1992 թ. դպրոցում սովորում էր 166 աշակերտ:

1994 թ. սեպտեմբերի 1-ից՝ Փիրջամալի դպրոցը մասամբ վերանորոգվելուց հետո, ուսումնական պարապմունքները վերսկսվել են 61 աշակերտներով և 10 ուսուցիչներով:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Իսրայել Եղյանը, Սուրեն Աղաբաբյանը, Արշակ Գաբրիելյանը, Համո Քարամյանը, Գրիգոր Ուլուբաբյանը, Սուրեն Արամյանը, Վաչիկ Ծատրյանը, Վերդի Խաչատրյանը, Արևիկ Արամյանը,

Անուշավան Սարյանը, Համլետ Սարուխանյանը, Վարյա Արամյանը, Գալինա Մեժլումյանը:

Ծննդով Փիրջամալից են 19-րդ դարի վերջերի 20-րդ դարի սկզբների հայ ազգային ազատագրական շարժման նշանավոր դաշնակցական գործիչ Գրիգոր Միրզաբեկյանը (Մածուն Խեչոն), գրող հրապարակախոս, հասարակական-քաղաքական դաշնակցական գործիչ, հայ ազգային-ազատագրական շարժման նվիրյալ՝ Միսաք Տեր-Դանիելյանը (Արամայիս, 1874-1954 թթ.):

1995 թ. գյուղը պաշտոնապես կրում է Վարդաձոր անունը:

Գյուղում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ 12-17-րդ դարերի գյուղատեղի, միջնադարյան գերեզմանոց, Նահատակ, Տնջրե սրբատեղիները, 12-13-րդ դարերի խաչքարեր, Ղաշխա քերծ ամրոցը (12-13-րդ դարեր):

Վարդաձորի աղբյուրներն են՝ Ծրվաձյուր, Սև ակն, Թրխկըձրին, Թեղուն, Եղծուն ձյուրը, Ղազան, Բլասեն, Տնջրե, Ցկանեն, Գուլալին, Կթկթան, Քահրիզ:

Գյուղի նշանավոր հանդամասերն են՝ Ուղտաքամակ, Պապուն տափեր, Մարաթեն տափ, Դամյա: Վարդաձորում շարունակում են ապրել Մեժունց (Մեժլումյանների), Սոաջանց (Սառաջյաններ), Ըլըվերդունց (Բեգլարյաններ), Կոստունց (Ավթյաններ), Ղազունց (Մարգարյաններ), Փաստունց (Բաղդասարյաններ), Պետունց (Սեյրանյաններ), Բոզունց (Ներսիսյաններ), Փարունց (Բաբայաններ), Ղզախանց (Միրզոյաններ), Իփրամանց (Աբրահամյաններ), Սիմոնանց (Սիմոնյաններ), Ափունց (Հարությունյաններ), Խաչունց (Ասրյաններ, Ջվանշիրյաններ, Միրզաբեկյաններ), Նյաբունց (Սարգսյաններ), Մրրգրրանք (Մարգարյաններ), Բրլսանանց (Գյանջումյաններ), Տիրկանց (Տերզիկյաններ), Թմասանց (Թովմասյաններ), Տանունց (Դանիելյաններ), Կիվերքանց (Գևորգյաններ, Վահանյաններ), Հմբարցունց (Համբարձումյաններ), Կապունց (Բեգլարյաններ), Թառունց (Սարգսյաններ) ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: 2015 թ. ֆրանսահայ բարերարների աջակցությամբ անց է կացվել ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Գյուղում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց: Նախկինում Վարդաձորում եղել են նաև հիվանդանոց, կենցաղասպասարկման կետեր, հանդիսությունների սրահ:

1987 թ. գյուղում կար 139 տուն, 443 բնակիչ[365], 2018 թ.՝ 76 տուն, 266 բնակիչ[366]: Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[365] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 128:

[366] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:

ՎԱՐԱԶԱԲՈՒՅՆ

Գյուղը գտնվում է ԱՀ արևելյան հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին Վարանդա գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Բովուրխանի լեռնազանգվածից դեպի Կարկառի հովիտը ձգվող լեռնաճյուղերի արևելահայաց լանջին:

Գյուղի սկզբնավորման ստույգ դարաշրջանը մեզ հայտնի չէ: Բնակավայրը նախկինում ունեցել է 2 անուն՝ Արանզամին և Վարազաբույն:

Մակար Բարխուդարյանը գտնում է, որ վերոհիշյալ բնակավայրը ժամանակին եղել է 7-րդ դարում ապրած Վարազ-Տրդատ և Վարազ-Գրիգոր իշխանների ամառանոց-բնակատեղին[367]:

7-րդ դարի պատմիչ Մովսես Կաղանկատվացին էլ խոսում է «Վարազմանեան»[368] բնակավայրի մասին, սակայն հայտնի չէ խոսքը Վարազաբույնին է վերաբերում, թե մեկ այլ բնակավայրի:

Ուսումնասիրողներից Ս. Սարգսյանը, բացատրելով Արանզամին անունը, գրել է, որ 1886 թ. տվյալներով բնակավայրը հանդես է գալիս Արան-զամին անվամբ: Այն կազմված է Արան այսինքն՝ Առան երկրամաս և զամին կամ զեմին բառերից: Զամին նշանակում է հող, երկիր[369], այսինքն Առան երկիրը կամ Առանի հող[370]:

Երկու դեպքում էլ՝ Արանզամին և Վարազաբույն անունները մեզ հուշում են բնակավայրի վաղ միջնադարից գոյության մասին:

Բնակավայրը, Մուխանքի դաշտավայրը լեռնաստանի հետ կապող ռազմավարական նշանակության կետում լինելով, Արցախի համար քաղաքական և տնտեսական կարևոր դերակատարություն է ունեցել:

19-րդ դարի առաջին կեսերին Ղարադաղից մի քանի ընտանիքներ հաստատվել են Արանզամինում:

19-րդ դարում Ջավադ Իսախանյանի, բաքվաբնակ վարազաբունցիներ Հովսեփ Մկրտչյանի, Ջիվանշիր Իսրայելյանի, Թևոս Ղուկասյանի, Ջումշուդ Հայրապետյանի, Մկրտիչ Տեր-Հովհաննիսյանի, Բաբա Չերքեզյանի միջոցներով գյուղում կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցին և երկհարկանի դպրոց[371]:

19-րդ դարի սկզբներին Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցը Արանզամինում մի գրչագիր մատյան է տեսել, որի մեջ գրված էին Հովհաննես Թուլկուրանցի վարդապետի ստեղծագործությունները, մեծ մասով չափածո, որոնց վերջում գրված է «Խև Հովհաննես Թուլկուրանցի»[372]:

[367] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 226:

[368] Մ. Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 300, 304:

[369] Словарь географических терминов и других слов, формирующих топонимию Ирана, Москва, 1971, с. 88.

[370] Տես՝ Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 25:

[371] Հայկունի, նշվ. աշխ., էջ 81:

[372] Սարգիս արք. Ջալալյանց, նշվ.աշխ., էջ 521:

Եղիշե ավագ քահանա Գեղամյանցն էլ 1885 թ. գրել է, որ Վարազաբույնում մի մասնավոր անձի տան մեջ տեսել է մագաղաթյա գրչագիր ավետարան, որ գրված էր ՋԺԹ (1470) թվականին[373]:

Հնարավոր է, որ Վարազաբույնը եղել է Արցախի գրչության արվեստի կենտրոններից մեկը:

1905–1906 և 1917–1920 թվականներին Արանզամինի հայության համար ծանր ժամանակներ էին: Թաթար հրոսակախմբերը Մուխանքի դաշտից գրոհում էին հայկական գյուղերի վրա:

1918 թ. սեպտեմբերի 21-ին թուրքական կանոնավոր բանակը գրավել և ավերել էր Միվրիշենլու, Դահրազ, իսկ սեպտեմբերի 23-ին՝ Քարագլուխ, Խրամորթ, Խանապատ, Ղլիշբաղ, Քյաթուկ, Նախիջևանիկ, Փիրջամալ, Վարազաբույն գյուղերը[374]:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո թուրքական զորքերը հեռացան Այսրկովկասից: Արանզամինի հայությունը նորից վերադարձավ իր բնակավայրը:

Խորհրդային տարիներին Արանզամինի հայության համար պատմական նոր ժամանակաշրջան սկսվեց:

Մշտապես կրկնվող թուրքական արշավանքների հետևանքով Մուխանքի դաշտաբերանի գյուղերը, այդ թվում Արանզամինը, սակավամարդ էին դարձել: 1920-ական թվականների վերջերին և 1930-ական թվականների սկզբներին ԼՂԻՄ մարզգործկոմը ներքին միգրացիայի միջոցով լեռնային խիտ բնակեցված գյուղերի հաշվին փորձում էր լուծել այդ խնդիրը:

Ընդառաջելով Բերդաձորի ենթաշրջանի գյուղերի բնակչության ցանկություններին՝ 47 տնտեսություն՝ շուրջ 250 մարդ, ԼՂԻՄ մարզգործկոմը 1930 թ. ապրիլի 7-ին որոշել էր նրանց տեղափոխել Արանզամին[375]:

Գործող կոլտնտեսությունների միավորմամբ պետական տնտեսություն էր ստեղծվել: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո գյուղում կազմակերպվել են մասնավոր տնտեսություններ:

Արանզամինից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 97 մարդ, զոհվել է 59-ը: Խորհրդային միության հերոսի կոչման են արժանացել Երեմ Դանիելյանը և Գևորգ Հակոբյանը:

Արցախյան ազատագրական պայքարի առաջին իսկ օրերից գյուղը ենթարկվում էր ադրբեջանցի ավազակախմբերի հարձակումներին: Ադրբեջանցիներին 1992 թ. մայիսի 10-ին հաջողվել է գրավել Դահրազ, Աղբուլաղ, Նախիջևանիկ, Փիրջամալ, Արանզամին գյուղերը:

[373] Հայկունի, նշվ. աշխ., էջ 81:
[374] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 226:
[375] ԱՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 19, թ. 21:

Վերախմբավորելով ուժերը, ԱՀ ՊԲ ստորաբաժանումները 1992 թ. սեպտեմբերին նորից ազատագրել են վերոհիշյալ բնակավայրերը:

Արանզամինում 1870 թ. բացվել է ծխական-եկեղեցական դպրոց: 1885 թ. դպրոցը փակվել է: 1886–1887 ուսումնական տարում գյուղում բացվել է Սբ. Գրիգորյան մեկդասյա ծխական դպրոցը:

1880-ական թվականների վերջերին Արանզամինում սկսել է գործել նաև օրիորդաց դպրոց: 1896 թ. կառավարության որոշմամբ վերոհիշյալ դպրոցները փակվել են: 1906 թ. հոկտեմբերից գյուղում սկսել է գործել 2 բաժանմունքով մեկդասյա երկսեռ դպրոց: Ուսուցիչն էր Արամ Վերդյանը[376]:

1906 թ. վարազաբույնեցի բաքվաբնակ Ջիվանշիր և Շիրին Տեր-Հովհաննիսյան եղբայրները մի քանի տարի ձեռք մեկնեցին հայրենի գյուղի դպրոցահասակ երեխաներին՝ տարեկան 200 ռուբլի նպաստով թեթևացնելով աշակերտների կրթական ծախսերը[377]:

Խորհրդային տարիներին գյուղում ութամյա դպրոց է գործել: 1980-ական թվականներին աշակերտների թվաքանակի կտրուկ նվազման պատճառով դպրոցը փակվել է:

Վերոհիշյալ ժամանակահատվածում Արանզամինում կար ակումբ, գրադարան, Երեմ Դանիելյանի անունը կրող թանգարան:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հայտնի են Գյոզալին, Շոր, Շենին աղբյուրները:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

1995 թ. գյուղը կրում է Վարազաբույն անունը: Վարազաբույնը ներառված է Վարդաձոր համայնքի կազմում:

Վարազաբույնում 19-րդ դարի սկզբներին կար 50 տուն[378], 1885 թ.՝ 92 տուն[379], 19-րդ դարի 90-ական թվականներին՝ 155 տուն, 955 բնակիչ[380], 1987 թ.՝ 45 տուն, 150 բնակիչ[381], 2018 թ.՝ 11 տուն, 37 բնակիչ[382]: Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[376] Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Արցախի կրթական համակարգը, հ.1, էջ 381:
[377] «Փայլակ», հմ. 14, 2 մարտի, 1917:
[378] Սարգիս արք. Ջալալյանց, նշվ.աշխ., էջ 521:
[379] Հայկունի, նշվ. աշխ., էջ 81:
[380] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 226:
[381] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 143:
[382] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 1:

ՎԵՐԻՆ ՍԶՆԵՔ

Գյուղը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին Վարանդա գավառում՝ համանուն գետի ձախ ափին՝ պատմական մելիքանիստ Ավետարանոցից ոչ շատ մեծ հեռավորության վրա:

Վերին Սզնեքը տեղաբաշխված է Ներքին Սզնեքից 500–600 մ դեպի արևմուտք և ավելի բարձր դիրք ունի: Շրջապատված է գեղատեսիլ անտառներով:

Վերին Սզնեքը՝ որպես բնակավայր, ձևավորվել է 18–րդ դարի սկզբներին՝ մինչև վերոհիշյալ ժամանակահատվածը շրջակայքում գոյություն ունեցած հայկական գյուղերի հաշվին:

19–րդ դարում Արաքսի աջափնյակում գտնվող Ղարադաղ գավառից որոշ ընտանիքներ հաստատվել են Վերին Սզնեքում:

19–րդ դարի վերջերին Վերին Սզնեքում կար 46 ծուխ, 323 բնակիչ[383]:

1885 թ. գյուղում կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցին, որտեղ քահանայություն էր անում Ներքին Սզնեքի եկեղեցու սպասավորը:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո այստեղ 1930 թ. կազմավորվել է կոլտնտեսություն: 1950 թ. Ներքին և Վերին Սզնեքների, Կարմիր գյուղի, Խաչմաչի տնտեսությունները միացել են մեկ կոլեկտիվ տնտեսության մեջ:

1988 թ. ապախոշորացումից հետո Վերին և Ներքին Սզնեքների տնտեսությունները շարունակել են գործել որպես մեկ առանձին կոլտնտեսություն: Այդ իրավիճակը պահպանվել է մինչև 1998 թ. հողերի սեփականաշնորհումը:

Հայրենական մեծ պատերազմին Վերին Սզնեքից մասնակցել է 29 մարդ, զոհվել՝ 17–ը:

Արցախյան ազատագրական պատերազմի տարիներին Վերին Սզնեքի կամավորները Արցախի տարբեր շրջաններում մասնակցել են ռազմական գործողություններին: Գյուղի ազատամարտիկներից մի քանի հոգի իրենց կյանքն են նվիրաբերել հայրենիքի ազատագրության և պետականության վերակերտման պատվաբեր ու մեծ գործին: Քանի որ Վերին և Ներքին Սզնեք բնակավայրերն իրարից ոչ շատ մեծ հեռավորության վրա են գտնվում, հետևաբար 2 գյուղերի երեխաների համար համեմատաբար բնակչության ավելի մեծ թվակազմ ունեցող Ներքին Սզնեքում գործում է մեկ դպրոց:

Վերին Սզնեքում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ միջնադարյան գյուղատեղի, գերեզմանոց (16–19–րդ դարեր), եղցաձորի եղցի եկեղեցին (17–18–րդ դարեր), Սբ. Աստվածածին եկեղեցին (1885 թ.):

Վերին Սզնեքի աղբյուրներն են՝ Ցորտ, Շենին, Խաչեն տակեն, Օքուն:

[383] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 211:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը:

Վերին Սզնեքում գործում են գյուղապետարանը, մշակույթի տունը, բուժկետը:

Գյուղում 1987 թ. կար 35 տուն, 150 բնակիչ[384], 2018 թ.՝ 8 տուն, 27 բնակիչ[385]: Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՈՒՂՏԱՍԱՐ

Գյուղը գտնվում է ԱՀ արևելյան հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին Վարանդայի գավառում՝ Կարկառ գետի աջ հովտում՝ շրջկենտրոնից 9 կմ դեպի արևելք:

Դեռևս Ք. ա. 1–ին հազարամյակից Տիգրանակերտից (Շահբուլաղ) մինչև Ակնա (Աղդամ) և Ուղտասար ձգվող հարթավայրը հայերով խիտ բնակեցված էր:

11–ից մինչև 16–րդ դարը սելջուկ–թուրքերի, մոնղոլ–թաթարների, կարա–կոյունլու և ակ–կոյունլու ցեղախմբերի, այնուհետև պարսիկների ու թուրքերի արշավանքներից հետո վերոհիշյալ տարաքներից բնակչությունը հեռացել է օտար երկրներ, իսկ մի մասն էլ փրկություն է գտել լեռնաստանում գտնվող հայրենակիցների բնակավայրերում:

19–րդ դարի երկրորդ կեսերին ներկայիս Ուղտասարի տարածքում ձևավորվում է թաթարաբնակ Շելլի բնակավայրը: 1885 թ. այդտեղ կար 50 տուն: Բայց հետաքրքիրն այն էր, որ աղբյուրներում այն ներկայացված է Շէնլու ձևով[386]:

Հնարավոր է, որ օտարացեղ եկվորները հայկական «շեն» բառարմատին ավելացրել են իրենց լեզվին հատուկ «լու» ածանցը և դարձրել Շենլու, իսկ հետագայում էլ՝ Շելլի:

Արցախյան պատերազմի առաջին տարիներին Շելլին ադրբեջանցիների համար դարձել էր ռազմական հենակետ: Գյուղի թիկունքում գտնվող Ուղտասարը (շրջակայքի հայկական գյուղերի բնակիչներն այն անվանում են նաև Ուղտի մեջք) հայկական բնակավայրերը, մասնավորապես՝ Ասկերանը, Նախիջևանիկը, Աղբուլաղը, Փիրջամալը, Դահրազը գնդակոծելու և հրետակոծելու համար այն հարմար դիրք էր դարձել:

1993 թ. հունիսին հակառակորդի Աղդամի ռազմական հենակետը վնասազերծելու ռազմագործողության ժամանակ ազատագրվեց նաև Շելլին:

2001 թ. գրեթե ամայի տարածքում սկսվեց իրականացվել վերաբնակեցման քաղաքականություն: Այդտեղ հաստատվեցին ինչպես Ադրբեջանի հայաշատ վայրերից

[384] Մելքումյան Ս., նշվ.աշխ., էջ 133:

[385] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 1:

[386] Հայկունի, նշվ. աշխ., էջ 81:

բռնագաղթեցված հայկական ընտանիքներ, այնպես էլ ԱՀ տարբեր բնակավայրերից վերաբնակիչներ: Առաջին վերաբնակիչները դարձան Սամսոն Մեսրոպյանի, Արթուր Սարգսյանի, Մանվել Պետրոսյանի ընտանիքները: Նրանք էլ տարբեր ժամանակներում դարձան նոր ձևավորված Ուղտասար համայնքի ղեկավարներ:

Պետության և բարերարների աջակցությամբ Ուղտասարը տարեցտարի զարգանում է:

2002–2003 ուսումնական տարվանից Ուղտասարում սկսել է գործել դպրոց, որտեղ 18 աշակերտ էր սովորում: 2018–2019 ուսումնական տարվանից դպրոցում արդեն սովորում էր 34 աշակերտ և դասավանդում՝ 15 ուսուցիչ:

2018 թ. սեպտեմբերի 1–ից Ուղտասարի աշակերտների համար բացվել է նորակառույց հիմնական դպրոցի շենքը:

Սկսած 2002 թ. դպրոցի տնօրեններ են աշխատել Նունե Գևորգյանը, Գնել Սահակյանը, Կարմեն Խաչատրյանը, Աշոտ Ասրյանը, Կառլեն Մայիլյանը, Վլադիմիր Հակոբջանյանը:

Համայնքի տարածքով անցնող Սովետարխ և Խաթունարխ ոռոգման ջրատարները նպաստում են ինտենսիվ հողագործության զարգացմանը:

Ուղտասարում կա մեկ աղբյուր՝ Կուչուն:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը:

Համայնքում գործում է գյուղապետարան, բուժկետ, դպրոց, առևտրի մեկ կետ:

2019 թ. Ուղտասարում կար 66 տուն, 327 բնակիչ[387]: Նրանց հիմնական զբաղմունքը անասնապահությունն է, այգեգործությունն ու մեղվապահությունը:

ՓԱՌՈՒԽ

Գյուղը գտնվում է ԱՀ արևելյան հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին Վարանդա գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Շիկաքարի հյուսիսահայաց լանջի վրա, Խաչենագետի միջին հոսանքի աջափնյակում:

Փառուխը Քարագլուխ–Շիկաքարի մերձակայքում է, և կարծիք կա, որ նախկինում այդ նշանավոր ամրոց–բնակավայրի ձմեռանոցն էր[388]:

Փառուխը Արցախի հնագույն բնակավայրերից է: Կարմիր աղբյուրից հյուսիս արևմուտք գտնվող բարձունքի Կալեն խութ խաչքարերով գերեզմանոցը և եկեղեցու նշմարվող հիմքերը վկայում են, որ միջին միջնադարում Փառուխը գտնվում էր վերոնշյալ վայրում: Որոշակի հանգամանքների ազդեցության տակ բարձունքից բնակիչները իջել են ներքև և նոր բնակավայր հիմնադրել:

[387] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[388] Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 669:

Սկզբնաղբյուրներում գյուղը հիշատակվում է 1804–13 թվականներին ռուս–պարսկական պատերազմի առիթով: 1812 թ. սկզբներին պարսկական առաջապահ զորքերը թագաժառանգ Աբաս Միրզայի հրամանատարությամբ հասնում են Շահ Բուլաղի բերդը և պաշարում: Ամրոցում էր գտնվում ռուսական 2 վաշտ՝ մայոր Իլյաշենկիի հրամանատարությամբ: Վերահաս կործանումից նրանց փրկեց Վանի Աթաբեկյանը: Նա գիշերը ռուսական ջոկատը ծածուկ հանեց բերդից և լեռնային կածաններով հասցրեց Փառուխ, որտեղ նրանք արդեն անվտանգ էին և, այդտեղից էլ նրանց ապահով ճանապարհեցին Շուշի[389]:

Գյուղի մոտ՝ ժայռի մեջ՝ անմատչելի մի վայրում է գտնվում Փառուխի նշանավոր քարայրը, որի մեջ պատերազմական տարիներին ժողովուրդը պատսպարվում էր:

Մակար Բարխուդարյանը գրել է, որ տեղացիների վկայությամբ նախկինում գյուղում 100 տուն բնակիչ կար, իսկ 1890–ական թվականներին ընդամենը 8 տուն, 24 բնակիչ[390]:

19–րդ դարում Փառուխում նոր եկեղեցի էր կառուցվել՝ Սբ. Աստվածածինը: 18–րդ դարի վերջերին և 19–րդ դարի սկզբներին Փառուխից մի քանի ընտանիքներ տեղափոխվել և հաստատվել են Հաթերքում:

1905–1906 և 1917–1920 թվականներին Փառուխը հայտնվել էր հայ–թաթարական բախումների կիզակետում:

1918 թ. սեպտեմբերի 22–ին թուքական բանակը տեղացի մահմեդականների ուղեկցությամբ մտավ Արցախ՝ ավերելով Դահրազ, Վարազաբույն, Փիրջամալ, Նախիջևանիկ, Քյաթուկ, Խրամորթ, Խանաբաղ, Ղլիշբաղ, Քարագլուխ, Փառուխ գյուղերը:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո, թուրքական զորքերը հեռացան Այսրկովկասից: Գրավված հայկական գյուղերի բնակիչները վերադարձան իրենց բանկավայրերը և նորից վերականգնեցին ավերված ու թալանված բնակարանները:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1932 թ., Փառուխում կոլտնտեսություն է կազմակերպվել: Խոշորացման տարիներին այն միավորվել է Խրամորթի կոլտնտեսությանը: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվել են մասնավոր տնտեսություններ:

Գյուղի երիտասարդությունը մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Արցախյան ազատագրական պայքարի առաջին իսկ օրերից գյուղը ենթարկվում էր ադրբեջանցի ավազակախմբերի հարձակումներին:

1992 թ. մայիսի 10–ին ադրբեջանցիներին հաջողվել է գրավել Փառուխը: 1992 թ. սեպտեմբերի սկզբներին ԱՀ ՊԲ ստորաբաժանումները, վերախմբավորելով ուժերը,

[389] Потто В., Первые добровольцы Карабага въ эпоху водворенія русскаго владычества (Меликъ -Вани и Акопъ-Юзбаши Атвабековы), с. 41–42.

[390] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 247:

ազատագրել են Փառուխ, Խրամորթ, Դահիրազ, Նախիջևանիկ, Աղբուլաղ, Արանզամին, Փիրջամալ գյուղերը: Սակայն 2 ամիս անց թշնամին նորից գրավել է Փառուխ գյուղը: 1993 թ. հունվարին ԱՀ ՊԲ լայնամասշտաբ ռազմագործողության արդյունքում ազատագրվել են գերյալ մի շարք տարածքներ, այդ թվում՝ Փառուխը:

Գյուղի վերականգնողական աշխատանքները սկսվել են պատերազմից անմիջապես հետո:

Խորհրդային տարիներին գյուղում տարրական դպրոց է գործել: Աշակերտների թվաքանակի կրճատման պատճառով 1984 թ. դպրոցը փակվել է: ԱՀ կառավարության որոշմամբ պատերազմից հետո բնակավայրում բացվել է Խրամորթի միջնակարգ դպրոցի Փառուխի մասնաճյուղը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Բնակավայրի աղբյուրներն են Կարմիր, Օրինած, Քյահրիզ, Մկրտիչին:

Հեռուստատեսությունը և ռադիոն, բջջային ու անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, բուժկետ:

Փառուխում 1987 թ. կար 24 տուն, 81 բնակիչ[391], 2010 թ.՝ 17 տուն, 63 բնակիչ[392], 2018 թ. 21 տուն, 82 բնակիչ[393]:

ՔՌԱՍՆԻ

Գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Ասկերանի շրջանում՝ նախկին Վարանդայի գավառում՝ Ստեփանակերտից 9 կմ հարավարևելք:

Քռասնու սահմանային գոտով է հոսում Կարկառ գետի վտակը: Գյուղի անմիջապես թիկունքում է գտնվում անտառապատ ծածկույթով Բովուրխանի սարը, իսկ հյուսիսարևելյան մասում՝ Կիշկի լեռները:

Գյուղի մոտակայքում պահպանված Ջլղավար (4–7-րդ դարեր) և Պուլուր (12–13-րդ դարեր) ամրոցների մնացորդները վկայում են, որ բնակավայրը հին պատմություն ունի:

Մինչև 17-րդ դարի սկզբները գյուղը գտնվում էր ներկայիս բնակավայրից ոչ շատ մեծ հեռավորության վրա գտնվող Կիշիկ կոչված ժայռոտ տեղամասերում և բնակարանները հիմնականում քարանձավներում էին գտնվում:

Ղևոնդ Ալիշանի կարծիքով գյուղը կրում էր Տաղտան անունը[394]: Այստեղից էլ թուրքերը հետագայում Քռասնին անվանել են Դաղդաղան:

[391] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 145:
[392] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[393] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:
[394] Ալիշան Ղ., Հայապատում, մաս Բ, էջ 388–389, Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X–XVI դդ., էջ 122:

17-րդ դարի սկզբներին գյուղում կար 40 ծուխ[395], 19-րդ դարի վերջերին՝ 50 ծուխ, 375 բնակիչ[396]:

20-րդ դարի սկզբներին գյուղը, քանի որ գտնվում էր թուրքաբնակ Մելիքեյլի բնակավայրի հարևանությամբ, մշտապես ենթարկվել է թուրք-թաթար ավազակախմբերի հարձակումներին, և դրա պատճառով երբեմն Քռասնու մի մասը ավերվել է:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո 1930 թ. Քռասնիում կոլտնտեսություն է կազմավորվել:

1951 թ. կոլտնտեսությունը միավորվել է Հարավի տնտեսության հետ: Այն կազմակերպական տեսանկյունից վերածվել էր սովխոզի: 1988 թ. ապախոշորացումից հետո այն նորից դարձել է կոլտնտեսություն: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվեցին անհատական տնտեսություններ:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 130 մարդ, զոհվել է 59-ը, որոնց հիշատակին Քռասնիում հուշարձան է կանգնեցվել:

Արցախյան ազատագրական պատերազմին մասնակցել է 39 հոգի: Զոհվել է 5 ազատամարտիկ և 3 խաղաղ բնակիչ: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի հետմահու արժանացել է Ռաֆայել Արզումանյանը:

1880-ական թվականներին Սբ. Հռիփսիմե եկեղեցուն կից ծխական դպրոց է գործել: Էջմիածնի Սինոդի պաշտոնական տվյալներով 1894 թ. գյուղում բացվել է 20 աշակերտից կազմված եկեղեցական-ծխական դպրոց:

Խորհրդային առաջին տարիներին դպրոցը տարրական էր, իսկ 1935–57 թթ.՝ երկհերթ յոթամյա, որտեղ 100-ից ավելի աշակերտ էր սովորում:

1957 թ. կառուցվեց երկհարկանի կցակառույցով դպրոց, որը ութամյայի կարգավիճակ ուներ: Դպրոցն ուներ 93 աշակերտ, 8 ուսուցիչ:

1993–1994 ուսումնական տարվանից դպրոցը 38 աշակերտով և 12 ուսուցիչներով միջնակարգ էր, սակայն աշակերտների թվաքանակի կրճատման պատճառով դարձավ իննամյա:

2006 թվականից պարապմունքներն անց են կացվում երկհարկանի նորակառույց դպրոցում: 2015–2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 31 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Մարգարիտա Գևորգյանը, Արտաշես Պետրոսյանը, Գրիշա Ալանյանը, Ռուբեն Խաչատրյանը, Գևորգ Գևորգյանը, Նորա Շաքարյանը, Համլետ Քարամյանը, Սերգեյ Արզումանյանը, Վահան Լալայանը, Էվելինա Պետրոսյանը, Աիդա Բաբայանը, Դավիթ Համբարձումյանը:

Ծագումով Քռասնի գյուղից են 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի սկզբների հայ ազգային ազատագրական շարժման նշանավոր գործիչ, դաշնակցական Գևորգ

[395] Սարգիս արք. Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 521:
[396] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 227:

(Եգոր) Առստամյանը (Մենակ), նրա եղբայրը՝ կոմունիստ, պետական գործիչ, ԼՂԻՄ մարզգործկոմի, այնուհետև ժողտնտխորհի նախագահ Հայկ Առստամյանը, ազատագրական շարժման մեկ այլ նշանավոր գործիչ, դաշնակցական Նիկոլ Պողոսյանը (Վանա Իշխան), ցարական բանակի գեներալ, Նիկոլայ երկրորդ ցարի խորհրդական Ջումշուդ Լալայանը, Անդրանիկի զինակիցներից մեկը՝ Կարապետ Համբարձումյանը (Բալաբեխ Գարո կամ Կարո), փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարգարիտա Գևորգյանը:

Գյուղում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ Ջլղավար ամրոցը (4–7–րդ դարեր), Պուլուր ամրոցը (12–13–րդ դարեր), Սբ. Հռիփսիմե եկեղեցին, Աղին նահատակ և Սուրբ օջախ սրբավայրերը:

Քռասնու աղբյուրներն են՝ Պուրթի, Հունի, Քռասնի, Նվերին, Ջլղավար, Տկողնե, Բաստամ, Ղրդաղլու, Կարմիր, Տհարին, Երե ձյուր, Քահրիզ, Փերունց ձյուր, Կալին ծոր, Կուչու:

Գյուղի հանդամասերն են՝ Երե հանդ, Ցաքուտ, Հին շինատեղ, Պուլուր թումբ, Ճինջաքար, Ուղտաքար, Կալեր, Սրդարանց ծոր, Քաչալ խութ, Մաչի խութ, Թփանա քար, Կուրկատեղ, Խաչի վրդ, Թավեն ծոր:

Գյուղում շարունակում են ապրել Լյալյունց, Սիրաթանց, Ագուջանց, Ղրմանանց, Գյուլունց, Բլանց, Դուրունց, Քյուխանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Համայնքը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Գյուղում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, առևտրի երկու կետ: Քռասնիում 1987 թ. կար 69 տուն, 217 բնակիչ[397], 2018 թ.՝ 56 տուն, 266 բնակիչ[398]: Նրանց մի մասը աշխատում է Ստեփանակերտում, իսկ մեծամասնության զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[397] Մելքումյան Ս., նշվ.աշխ., էջ 139:

[398] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 2:

ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ԳՈՐԾՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՔԱՐՏԵԶԸ



ՀԱԴՐՈՒԹ

Քաղաքը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Ղարաբաղյան լեռնաշղթայի Դիզափայտի անտառապատ լեռնաճյուղերից իջնող հովիտներից մեկում՝ Ընկուզագետի երկու վտակների Խոր աղբյուրի մոտ միախառնման վայրում: Այստեղից էլ նրա Հադրութ՝ միջագետք անվանումը[399]:

Հարավային, արևմտյան և հյուսիսային կողմերից Հադրութը շրջապատված է լեռներով և միայն արևելյան մասով ելք ունի դեպի դաշտավայրը: Բնական ամրություններից բացի Հադրութի շրջակայքում դարերի ընթացքում կառուցվել են Բերդի մուտք, Ծծախաչ ղալա, Վնեսաբերդ, Ցորաբերդ ամրոցները:

Հադրութը Արցախի հնագույն բնակավայրերից է: Քաղաքում և նրա շրջակայքում հայտնաբերվել են Ք. ա. 2-1-ին հազարամյակներին առնչվող նյութեր:

Արցախից դեպի Պարսկաստան տանող ռազմավարական նշանակության ճանապարհի վրա գտնվելով՝ Հադրութը Արցախի պատմության տարբեր շրջափուլերում կարևոր դերակատարություն է ունեցել:

Հադրութի մասին մեզ հայտնի ամենահին գրավոր հիշատակությունը վերաբերում է 1428 թ.: Վայոց ձորի Եղեգիս քաղաքի մոտ գտնվող Ճգնավորի քար անապատում 1428 թ. ընդօրինակված Ավետարանի գրիչ Եղիան հիշատակում է, որ ինքը Դիզակի Հադրութ գյուղից է[400]:

Հադրութի մասին հաջորդ տեղեկությունը մեզ է թողել Աբրահամ աբեղան 1584 թ.: Նա ձեռագիր Ավետարանը արտագրել է Հադրութում, որն այսօր պահվում է Բեյրութի մոտ գտնվող Զմմառի վանքում[401]:

Սղնախական պայքարի շրջանում՝ 1723 թ. հոկտեմբերի 20-ին՝ հայկական զորաջոկատները ջախջախում են Արցախ թափանցած պարսկական առաջապահ գնդերը: Հակառակորդը, 2000 զոհ տալով, նահանջում է[402]:

1736 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Աբրահամ Կրետացին Մուղանում Նադիր շահի թագադրման արարողությանը մասնակցելուց հետո Էջմիածին վերադառնալու ճանապարհին անցել է Դիզակի «Հատրութ գեղջ»[403]:

[399] Давидбеков И., Село Гадрут Елисаветопольской губернии, СМОМПК, вып. VI, Тифлис, 1888, с. 153.
[400] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 154:
[401] Նույն տեղում:
[402] Армяно-русские отношения в первой трети XVIII века, Сборник документов, т. II, ч. I, Ереван, 1964, վավ. 194 և 195:
[403] Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ Պատմագրութիւն անցիցին իւրոց և Նատր-Շահին պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 74:

Ղևոնդ Ալիշանն իր «Արցախ» աշխատության մեջ այս բնակավայրին նույնպես անդրադարձ է կատարել[404]:

19-րդ դարի սկզբներին Հադրութում ապրում էր 100 տուն հայ բնակիչ[405]:

Բնակավայրի աշխարհագրական դիրքն արգասաբեր լինելը և առևտրական մայրուղիների վրա գտնվելու հանգամանքը նպաստել են, որ Հադրութը արագ զարգանա:

Բազմաճյուղ գյուղատնտեսությունը վերելք էր ապրում: Աշխուժացան արհեստագործությունն ու առևտուրը: Այստեղ կային դերձակներ, հյուսներ, կոշկակարներ, որմնադիրներ, դարբիններ, ոսկերիչներ, մսագործներ, սափրիչներ: Գյուղը ավանի կարգավիճակ ստացավ: Բացվեցին խանութներ և շուկա: Ավանում կային մետաքսագործական ֆաբրիկա, գորգագործարան, կղմինդրի 2 արտադրամաս, հեռագրատուն, արքունի զորամաս: Ռուսական տիրապետության շրջանում ավանում տեղակայված էր 1500 հոգուց բաղկացած հեծյալ զորամասը, որը Արաքսի վրայով Պարսկաստանի սահմաններն էր հսկում:

Օրեցօր աշխուժացող կյանքն էլ պատճառ է դառնում, որ այստեղ հավաքվեն նաև որոշ ընտանիքներ Թիֆլիսից, Միլից, Գողթան գավառի Ղազանչի, Բարգուշատ բնակավայրերից, Ղարադաղից, Ցորից:

19-րդ դարի վերջերին Հադրութում կար 260 ծուխ, 1910 բնակիչ[406]: Հետաքրքիրն այն է, որ 18-19-րդ դարերում Հադրութից որոշ ընտանիքներ տեղափոխվում և հաստատվում են Շամախու, Արփավուտ, Մեյսարի, Մյուրիշեն, Գյուրջևան, Գյոկչայի Աղբուլաղ, Գանձակ, Բոզավանդ գյուղերում[407]: Այդ ընտանիքների մեծ մասը Հադրութից հեռացել են Աղա Մուհամմադ շահի 1795-1797 թվականների աշխարհակործան արշավանքներից հետո, երբ Արցախում տիրում էին սովը, հիվանդություններն ու դրանց հաջորդած մահտարժամը:

Այս ժամանակաշրջանի հետ է առնչվում նաև 19-րդ դարի հայագիտության երախտավորներից մեկի՝ Միրզա Ֆարուխ Մինասյան Ամիրխանյանցի անունը: Պատմագիտության մեջ նա հայտնի է նաև Միրզա Յուսուֆ Ներսեսով անունով: Գրել է Ղարաբաղի պատմությունը պարսկերեն «Թարիխ-ե Սաֆի» (Ճշմարտացի պատմություն) պատմագիտական երկը:

Միրզա Յուսուֆ Ներսեսովը ծնվել է Հադրութում՝ 1798 թ.: 1805 թ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ նա գերվել և տարվել է Պարսկաստան: Տիրապետելով արևելյան և եվրոպական մի քանի լեզուների՝ նա պետական ծառայության է ընդունվում և դառնում Թեհրանի սարդարի քարտուղարը: Պարսկական արքունիքում ստանում է Ֆարուխ անունը: 1826-28 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ

[404] Ղ. Ալիշան, Արցախ, Երևան, 1993, էջ 119:
[405] Սարգիս արք. Ջալայանց, նշվ. աշխ., էջ 448:
[406] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 195:
[407] Նույն տեղում, էջ 89, 92, 97, 103, 104, 110:

նրան հաջողվել է փախչել գերությունից և հիմնավորվել հայրենի Արցախում՝ Շուշի քաղաքում: Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանը նրան մկրտում է: Այստեղ էլ նա, համագործակցելով Բազելի ավետարանական քարոզչական ընկերության ներկայացուցիչների հետ, ձեռնամուխ է լինում գիտական-ուսումնական աշխատությունների հրատարակմանը: Միրզա Ֆարուխի առաջին կինը Թավրիզի թրքուհի էր, որը չի ցանկացել քրիստոնեություն ընդունել և բաժանվել է: Այնուհետև Շուշիում նա ամուսնացել է հայուհի Շողակաթի հետ, ունեցել է հինգ զավակ: Մահացել է 1855 թ. նոյեմբերի 11-ին: Նրա մարմինն ամփոփվել է Շուշիի հայկական գերեզմանատանը[408]:

1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ և 1917-1920 թթ. Հադրութի երիտասարդները կռվել են երկրամասի ազատության, անկախության և ազգային ինքնության պահպանման համար:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1928 թ., ԼՂԻՄ-ում նոր վարչական բաժանում կատարվեց: Դիզակի, Վարանդայի, Խաչենի, Ջրաբերդի և Շուշիի փոխարեն կազմավորվեցին Ստեփանակերտի, Շուշիի, Մարտունու, Հադրութի և Մարտակերտի շրջանները[409]: ԼՂԻՄ մարզգործկոմի 1932 թ. հոկտեմբերի 16-ի որոշմամբ շրջանների անունները համապատասխանեցվեցին շրջկենտրոնների անունների հետ[410], և Դիզակը դարձավ Հադրութ:

Փաստորեն խորհրդային տարիներից առայսօր Հադրութ ավանը, մեր օրերում՝ քաղաքը, դարձավ շրջկենտրոն:

1930 թ. օգոստոսի 8-ին կազմավորվել է Հադրութի «Կարմիր Դիզակ» կոլտնտեսությունը, որը 1951 թ. դարձել է Լենինի անվան, իսկ 1969 թ. օգոստոսի 1-ից այն վերակազմակերպվել է խաղողագործական խորհրդային տնտեսության: 1992 թ. խորհտնտեսությունը վերափոխվել է գյուղացիական կոլեկտիվ տնտեսության (ԳԿՏ): 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո Հադրութում ստեղծվեցին անհատական տնտեսություններ:

Տարբեր տարիների Հադրութի տնտեսությունը ղեկավարել են Բագրատ Անաստասյանը, Աշոտ Կասպարովը, Վլադիմիր Սաֆարյանը, Սամվել Աբրահամյանը, Վիգեն Ներսիսյանը, Նիկոլայ Հայրապետյանը, Արմավիր Սարգսյանը, Գրիշա Բաղյանը, Սլավիկ Պետրոսյանը, Վալերի Սաֆարյանը, Ռոմա Ստեփանյանը:

Մինչև 1935 թ. Հադրութում գործում էր փոքր ՀԷԿ[411]:

Ավանի բնակչության զգալի մասը աշխատում էր հիմնարկ ձեռնարկություններում, գինու, կաթի վերամշակման գործարաններում, ծխախոտի, մորթեղենի ընդունման

[408] Բալայան Վ., Շուշի, էջ 246:

[409] Լիսիցյան Ս., Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ), Հայ ազգագրության և բանահյուսության նյութեր և ուսումնասիրություններ, հ. 12, Երևան, 1981, էջ 39-40:

[410] ԱՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 46, թ. 4:

[411] ԱՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 35, թ. 173:

կայաններում, կենցաղսպասարկման տաղավարներում, երկու դպրոցներում, գրադարանում, ակումբում, թանգարանում, երաժշտական դպրոցում, հիվանդանոցում, փոստային բաժանմունքում, մանկապարտեզում, խանութներում:

Հայրենական մեծ պատերազմին Հադրութից մասնակցել է 588 հոգի, զոհվել են 211-ը: Նրանց հիշատակին շրջկենտրոնում հուշարձան-կոթող է կանգնեցվել:

Արցախյան ազատագրական շարժմանը և պատերազմին Հադրութի ազգաբնակչությունը անմնացորդ մասնակցություն ցուցաբերեց:

1988 թ. փետրվարի 12-ին Մարտունիում և Հադրութում Ադրբեջանի իշխանությունների դեմ առաջին անգամ ցույց կազմակերպվեց: Ռազմական գործողություններին Հադրութից մասնակցել է 596 ազատամարտիկ, նրանցից 88-ը զոհվել է: Նրանց հիշատակը հավերժացնելու համար քաղաքում հուշարձան է կառուցվել:

Հադրութից ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի արժանացել են Կարեն Մադունցը, Արմեն Աբրահամյանը, Արթուր Հովակիմյանը, Էդիկ Մարգարյանը և Էրիկ Աբրահամյանը՝ հետմահու: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի արժանացել են Կարեն Աբրահամյանը, Հայկ Շադյանը, Կիմա Բաղդասարյանը, Վաչագան Ներսիսյանը, Արամ Սարգսյանը, Գրիգոր Ջաբյանը, Արծվիկ Մայիլյանը, Գրիգորի Դավիդովը, Ֆելիքս Ղազարյանը, Հարություն Պետրոսյանը, Արմեն Սեյրանյանը, Ռոմելս Ֆատյանը, Ռոբերտ Համբարձումյանը, Արթուր Սարգսյանը, Էդիկ Ալեքսանյանը, Լեռնիկ Բաղունցը, Սեյրան Սարյանը, Մանվել Ստեփանյանը, Ջոնիկ Հայրյանը, Պավել Սարգսյանը, Կարեն Միրզոյանը, Ռազմիկ Դադամյանը, Համլետ Մարտիրոսյանը, Սամվել Պողոսյանը, Դավիթ Ահարոնյանը, Ռուբիկ Բաբայանը, Ալեքսանդր Աբրահամյանը, Արսեն Ստեփանյանը, Շահեն Ստեփանյանը, Արշավիր Օհանյանը:

1860-ական թվականներից Հադրութում գործել է նախակրթարան: 1879 թ. Հովհաննես Տեր-Գրիգորյանի կողմից ստեղծվել է եկեղեցական-ծխական դպրոց, որի առաջին ուսուցիչն էր Ալեքսանդր Սարդարյանը: Դպրոցը փակվել է 1896 թ. և վերաբացվել 1906 թ.:

1908-1909 ուսումնական տարում երկդասյա երկսեռ դպրոցն ունեցել է 180 աշակերտ, 12 ուսուցիչ, 4 ուսուցչուհի[412]:

Խորհրդային տարիներին Հադրութ ավանում գործել է միջնակարգ դպրոց: 1991-1992 ուսումնական տարում Հադրութի Միքայել Մանվելյանի անվան միջնակարգ հոսքային դպրոցում սովորում էր 532 աշակերտ, դասավանդում՝ 42 ուսուցիչ, 2015-2016 ուսումնական տարում՝ 550 աշակերտ, 45 ուսուցիչ:

[412] ԱՀ պետարխիվ, ֆ. 56, ց. 1, գ. 543, թ. 12, գ. 492, թ. 122, Խուդոյան Ս., Արևելահայ դպրոցները 1830-1920 թթ., էջ 346:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել՝ Գ. Բալայանը, Ա. Հայրապետյանը, Ն. Հայրապետյանը, Ա. Բաղդասարյանը, Ա. Ավագյանը, Գ. Գրիգորյանը, Ա. Սարգսյանը, Պ. Ներսիսյանը, Ա. Մելքումյանը, Լ. Ստեփանյանը, Գ. Պետրոսյանը, Գ. Ալավերդյանը, Է. Պետրոսյանը, Ա. Մինասյանը:

Ծննդով Հադրութից են ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Ներսիսյանը, ԽՍՀՄ ժողովրդական բժիշկ Քնար Բալայանը:

Հադրութում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ Սբ. Հարություն եկեղեցին (1621 թ.), Ծիլտախաչ կամուրջը (13-րդ դար), գերեզմանոց (14-19-րդ դարեր), խաչքարեր (14-16-րդ դարեր), կամուրջ (19-րդ դար), ջրաղաց (19-րդ դար), ձիթահան (19-րդ դար), Հայրենական մեծ պատերազմի և արցախյան գոյապայքարի նահատակների, երկրաշարժի, 1915 թ. Հայոց մեծ եղեռնի, Սումգայիթյան ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշաքարեր:

Հադրութի աղբյուրներն են՝ Օխտը կռան, Խոյի գլուխ, Շինզարանց, Խորն:

Քաղաքի հանդամասերն են՝ Խմարաց բաղեր, Տախտեն տակ:

Հադրութում շարունակում են ապրել Մնգսարանց, Զանունց, Սահականց, Միհիլանց, Բուդուրանց, Չալունց, Թանունց, Պռատանց, Մուքունց, Զուլունց, Շինզարանց, Հումունց, Իմիրանց, Ըթանց, Խնանանց, Պիծի Իփրամանց, Անվանց, Ղսումանց, Հանունց, Մոսունց, Բլվանց, Չարչունց, Հայրունց, Բրաթանց, Պտրուսանց, Արթուն Բաբունց, Ներսեսանց, Ըլշանց, Խմարանց, Գյուլաբունց, Ճրթանանց, Քաշկանց, Ըբալանց, Ղրիբանց, Թողունց, Մադունց, Բդանց, Աղասունց, Կիփանանց, Հրունանց, Ղթելանց, Արկոռունց, Կոստունց, Ժմիարանց, Զրգարանց, Դերունց, Կալունց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Քաղաքը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Քաղաքում կառուցված են նաև բազմաբնակարան շենքեր: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Հադրութում գործում են քաղաքապետարանը, «Մշակույթի և երիտասարդության կենտրոն» ՊՈԱԿ-ը, շրջանային հիվանդանոցը, դպրոցը, «Մանկական երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ը, թանգարան, գրադարան, մանկապարտեզ, 3 բանկերի մասնաճյուղեր, 65 խանութ, առևտրի, ինչպես նաև սպասարկման, վերանորոգման կետեր:

Քաղաքում է տեղակայված ԱՀ ՊԲ զորամասերից մեկը:

Հադրութ համայնքի կազմում են նաև Վանք և Տյաք գյուղերը:

Հադրութում 1987 թ. կար 1143 ընտանիք, 2396 բնակիչ,[413] 2018 թ.՝ 1430 ընտանիք, 4002 բնակիչ[414]: Նրանք աշխատում են պետական, մասնավոր հիմնարկ-ձեռնարկություններում, ծառայում ԱՀ պաշտպանության բանակում, ոստիկանությունում, զբաղվում գյուղատնտեսությամբ:

[413] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 252:

[414] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

ՏՅԱՔ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Հադրութի շրջանում՝ համանուն շրջկենտրոնից 1,5 կմ դեպի հարավ արևմուտք, նախկին Դիզակ գավառում:

Գյուղը շրջափակված է թավ անտառներով:

Վերոհիշյալ բնակավայրը տարբեր աղբյուրներում և գրականության մեջ ներկայացված է նաև Տագ[415], Տայք[416], Թանկ[417], Տանկ[418], Դաք[419], անուններով:

Բնակավայրի ձևավորման ստույգ դարաշրջանը հայտնի չէ: Հադրութի Շախկախի եկեղեցու թվակիր (1673 թ.) արձանագրության մեջ հիշատակվում է «յերկիրն Դիզակոյ ի գիւղս Դաք»[420]:

Ռուս պարսկական 1826-28 թվականների պատերազմից հետո Ղարադաղից մի քանի ընտանիքներ նույնպես հաստատվել են այս գյուղում:

19-րդ դարի վերջերին գյուղում կար 35 ծուխ, 310 բնակիչ[421]: Նույն ժամանակաշրջանում Տյաքում կառուցվել է Սբ. Մեսրոպ եկեղեցին:

Տյաքի հայությունը 1917-20 թվականներին անձնուրաց պայքարել է Արցախի ազատության ու անկախության համար:

Երկրամասում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1930 թ., գյուղում Եփրեմ Բաղդասարյանի գլխավորությամբ կոլտնտեսություն է կազմակերպվել: 1970-ական թվականներին այն միացվել է Հադրութի խորհտնտեսությանը:

1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո գյուղում ստեղծվեցին անհատական տնտեսություններ:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ադրբեջանական իշխանությունները ամեն կերպ փորձում էին հայաթափել Արցախը և հայկական բնակավայրերը լցնել ադրբեջանցի վերաբնակներով: Այդ ծրագրի շրջանակներում մի քանի ընտանիքներ էլ հայտնվեցին Տյաքում: Անգամ նրանց համար տարրական դպրոց բացվեց:

1967-1968 թվականներին ազգամիջյան մի քանի ընդհարումներից հետո անկոչ վերաբնակները հեռացան հինավուրց հայկական գյուղից:

[415] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 194:

[416] «Սովետական Ղարաբաղ», 8 դեկտեմբերի; 1988, «Խորհրդային Ղարաբաղ», 6 նոյեմբերի, 1990:

[417] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 273:

[418] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 158:

[419] «Արարատ», Վաղարշապատ, 1896, էջ 46:

[420] Նույն տեղում:

[421] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 194:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 85 մարդ, զոհվել է 40-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կանգնեցվել:

Արցախյան ազատագրական պատերազմի տարիներին գյուղից 13 հոգի Առաջին պաշտպանական շրջանի զորամիավորումների կազմում մասնակցել է ռազմական գործողություններին: 2 ազատամարտիկներ զոհվել են: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի հետմահու արժանացել են Վալերի Ղահրամանյանը, Ռազմիկ Դադամյանը: Զոհվածների հիշատակին Տյաքում հուշարձան է կառուցվել:

1870 թ. Տյաքում բացվել է նախակրթարան: 1874-1875 ուսումնական տարում գյուղում գործում էր եկեղեցական ծխական դպրոց, որտեղ սովորում էր 25 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ: 1885 թ. դպրոցը փակվել և վերաբացվել է 1888 թ. սեպտեմբերին: Այն կոչվում է Սուրբ Սահակյան դպրոց: 1896 թ. հայկական դպրոցների հետ փակվում է նաև Տյաքի կրթական հաստատությունը: 1906-1907 ուսումնական տարում այն վերաբացվել և գործել է մինչև խորհրդային իշխանության հաստատումը:

Խորհրդային տարիներին գյուղում գործել է տարրական դպրոց: Այնտեղ սովորել է մինչև 20 աշակերտ: Վերջին տարիներին աշակերտների թվաքանակի նվազման պատճառով դպրոցը փակվել է: Դպրոցահասակ մի քանի աշակերտներ հաճախում են Հադրութի դպրոցը:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Սիրանույշ Գրիգորյանը, Արևհատ Օհանջանյանը, Ժենյա Դադամյանը, Սիրան Ղահրամանյանը:

Տյաք գյուղում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ Սբ. Մեսրոպ եկեղեցին (19-րդ դար), միջնադարյան գյուղատեղիի և գերեզմանոցի մնացորդները, Ցորաբերդը (3-17-րդ դարեր), Սուրբ Հակոբ, Ընջուկախաչ սրբավայրերը:

Գյուղի տարածքում եղել է նաև միջնադարյան եկեղեցի, որը խորհրդային տարիներին քանդվել, և քարը՝ որպես շինանյութ, օգտագործվել է կոլտնտեսության գոմը կառուցելու համար:

Գյուղի հանդամասերն են՝ Սուրդուր, Թորոսի արտ, Ակվաց արտ, Փոս արտ, Նվազ արտ, Թեղուն արտ, Ղանդուն արտ, Ուկուփաց խամ, Ջուվադանց արտ, Մեծ ծոր:

Տյաքում շարունակում են ապրել Իփրամանց, Ղրմանանց, Միրադանց, Թառունց, Դամանց, Ուկուփանց, Գյուզողանց, Ջալալովանց, Ըլանանց, Փառունց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են: Գյուղն ունի ակումբ:

Տյաքը ընդգրկված է Հադրութի համայնքի կազմի մեջ:

Գյուղում 1987 թ. կար 30 տուն, 90 բնակիչ[422], 2010 թ.՝ 62 բնակիչ, 2018 թ.՝ 31 տուն, 65 բնակիչ[423]: Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՎԱՆՔ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում՝ շրջկենտրոն Հադրութից 2 կմ դեպի հարավարևմուտք:

Վանքը Արցախի հնագույն բնակավայրերից է: Գյուղի պատմությունը սերտորեն կապված է եպիսկոպոսանիստ Սպիտակ խաչ վանքի անվան հետ, որը կառուցվել է 1184 թ.:

Վանքում մինչև 19-րդ դարի կեսերը պահվում էր բյուրեղյա մի խաչ և՝ ըստ ավանդության՝ պատկանում էր Աղվանից Գրիգորիս կաթողիկոսին, որը նրան նվիրել էր Գրիգոր Լուսավորիչը: Գրիգորիսի նահատակությունից հետո խաչը երկար ժամանակ պահվում էր Վանք գյուղում, որի շնորհիվ էլ այստեղ կառուցվել է Սպիտակ խաչ եկեղեցին: Վանքում խաչի հետ միասին պահվում էին Աղվանից Հովհան, Եսայի և Սիմեոն կաթողիկոսների կոնդակները:

Սրբազան խաչի շնորհիվ Աղվանից կաթողիկոսները տվյալ տարածաշրջանին թեմի կարգավիճակ շնորհեցին, որի եպիսկոպոսանիստ կենտրոնը դարձավ Վանքի Սպիտակ խաչ եկեղեցին[424]:

Եկեղեցու մոտ է գտնվում Վելիջան բեկ Ջալալյանցի գերեզմանը: Եկեղեցու մոտ 1333 թ. կառուցվել է որմնախորշով խաչքար, որի հետ կապված նույնպես ավանդազրույց է պահպանվել: Ավանդազրույցը պատմում է, որ Լենկ-Թեմուրի զորքը ասպատակել է Արցախը և հասել Վանք գյուղ: Բռնակալը հրամայել է քանդել որմնախորշը և խաչի հետ միասին քարերը թափել Արաքս գետը: Այդ նպատակով Լենկ-Թեմուրը մինչև Արաքս 40 կմ երկարությամբ զինվորներից մի շղթա է կազմում և ձեռքից ձեռք փոխանցելով սուրբ քարերը լցնում գետը: Սակայն գիշերը հրեշտակները նորից վերականգնում են խաչքարը: Բռնակալի հրամանը մի քանի անգամ կատարում են, սակայն՝ ապարդյուն: Լենկ Թեմուրը, այդ ամենը տեսնելով, ապշահար հեռանում է Արցախից[425]:

14-րդ դարում թշնամիների կողմից ավերված հայկական Միլ քաղաքից բազմաթիվ հայ ընտանիքներ տեղափոխվում և հաստատվում են Որդնաշատ, Թղասեռ և Հադրութ բնակավայրերում, իսկ նրանց առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսի նստավայրը դառնում է Վանքի Սպիտակ Խաչ եկեղեցին: Նույն վանքում ամփոփված են Հովհաննես, Մկրտիչ և Պետրոս եպիսկոպոսների մարմինները[426]:

[422] Մելքումյան Ս., Լեռնային Ղարաբաղ, էջ 273:
[423] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:
[424] Սարգիս արք. Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 449:
[425] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[426] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 194:

Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցը նշում է, որ 19-րդ դարում Վանք գյուղում կար 10 ծուխ,[427] իսկ ըստ Մակար Բարխուդարյանի՝ 19-րդ դարի վերջին արդեն կար 35 ծուխ, 269 բնակիչ[428]:

19-րդ դարի 30-ական թվականներին այստեղ հայտնվում են մոլականների մի քանի ընտանիքներ և այդտեղ ապրում 30 տարի: Դրա մասին է վկայում նաև Վանք գյուղի արևմտյան մասում գտնվող Ռուսեն գերեզմանոտ տեղամասը: 19-րդ դարի կեսերին Գրիգոր Լուսավորչի խաչը և կաթողիկոսների կոնդակները գողանում են:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Վանքում 1930 թ. կոլտնտեսություն է կազմավորվել: 1970-ական թվականներին վերոհիշյալ տնտեսությունը ներառվել է Հադրութի սովխոզի կազմի մեջ: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվեցին անհատական տնտեսություններ:

Տարբեր տարիների Վանքի տնտեսությունը ղեկավարել են Աբգար Սարգսյանը, Սաշա Կաֆյանը, Կոստի Մելիքսեթյանը:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 50 մարդ, զոհվել է 22-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կանգնեցվել:

Արցախյան պատերազմի ժամանակ մարտական գործողություններին մասնակցել է 30 ազատամարտիկ, զոհվել է 9 հոգի: Նրանց հիշատակը հավերժացնելու համար երախտապարտ համագյուղացիները հուշակոթող են կառուցել:

ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի հետմահու արժանացել է Ալեքսանդր Միքայելի Բաբայանը:

19-րդ դարի 30-ական թվականներից գյուղում գործել է ծխական եկեղեցական դպրոց: Խորհրդային տարիներին Վանքում բացվել էր տարրական դպրոց: 2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 8 աշակերտ: Բարձր դասարանցիները իրենց ուսումը շարունակում են Հադրութ շրջկենտրոնում:

Վանքում և նրա շրջակայքում պահպանվում են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ Սպիտակ խաչ վանքը (12-րդ դար), Ցորաբերդը (3-17-րդ դարեր):

Գյուղի աղբյուրներն են՝ Ծրվաջուր, Բանդի, Ջոխն, Ղուշն, Ծկան, Մոսն:

Վանքի հանդամասերն են՝ Սարի տախտակ, Ջնգլավար, Տյաքի խութ, Հիքալա կալ:

Գյուղում շարունակում են ապրել Դորասանանց, Վարդանանց, Կյափունց, Դորունց, Բաղունց, Պողոսանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Վանքը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը: Գյուղն ունի ակումբ:

[427] Սարգիս արք. Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 449:
[428] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 194:

Վանքն ընդգրկված է Հադրութ համայնքի կազմում:

Գյուղում 1987 թ. կար 42 տուն, 141 բնակիչ[429], 2018 թ.՝ 38 տուն, 127 բնակիչ[430]: Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԱՅԳԵՍՏԱՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Հադրութի շրջանում, նախկին Դիզակ գավառում: Աշխարհագրական տեսանկյունից գյուղը տեղադրված է Ընկուզագետի ձախ հովտում՝ Արևասար և Խոտհատ սարերի արանքում:

Քոչբեկը գտնվում է Արևասար լեռան լանջին՝ ներկայիս բնակավայրից ոչ մեծ հեռավորության վրա:

Մեզ հասած տեղեկությունները վկայում են, որ Քոչբեկը հիմնադրվել է 17-րդ դարի երկրորդ կեսին: Այստեղ 3 ընտանիք տեղափոխվել են Խաչենի մելիքությունից, 2-ը՝ Հադրութից:

1741 թ. Մելիք Եգանի թոռը՝ մելիք Արամի տղան՝ մելիք Եսային Քոչբեկում կառուցում է Սբ. Հարություն եկեղեցին:

19-րդ դարի վերջերին գյուղում կար 25 տուն, 135 բնակիչ[431]:

1929 թ. գյուղում կոլտնտեսություն է կազմավորվել: 1951 թ. այն միավորվել է Հադրութի կոլտնտեսությանը, որը 1970-ական թվականներին վերակազմավորվել է սովխոզի:

Հայրենական մեծ պատերազմին Քոչբեկից 79 մարդ է մասնակցել, որոնցից 37-ը զոհվել է: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կանգնեցվել: 1967-1970 թթ. գյուղը սարալանջից տեղափոխվել է Ընկուզագետի ձախ ափը: Փոխվել է նաև գյուղի անունը, Քոչբեկը դարձել է Այգեստան:

Խորհրդային տարիներին Քոչբեկից բազմաթիվ ընտանիքներ տեղափոխվել և հաստատվել են Միջինասիական հանրապետություններում, Բաքվում, Սումգայիթում, Գրոզնիում, Ռուսաստանի տարբեր քաղաքներում:

Արցախյան ազատագրական շարժման ժամանակ գյուղում տեղակայվել էին ԽՍՀՄ ներքին գործերի զորքերի որոշ ստորաբաժանումներ: 1991 թ. դեկտեմբերին այդ զորամիավորումը հեռացավ: Ադրբեջանցիները, վստահ լինելով իրենց ուժերին, փորձեցին գրավել գյուղը: 1992 թ. հունվարի 9-ին զրահատեխնիկայի ուղեկցությամբ թշնամու մեծաքանակ զորքերը, գրոհելով հայ ինքնապաշտպանական ուժերի դիրքերի վրա, հասան մինչև գյուղամեջ և վառեցին ներքևի թաղի տները:

[429] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 272:
[430] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:
[431] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղվանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 196:

Հայ ինքնապաշտպանները, իմի բերելով ուժերը, թշնամուն հետ շպրտեցին ելման դիրքեր՝ նրան պատճառելով մարդկային ու նյութական կորուստներ:

Ընդհանուր առմամբ արցախյան պատերազմի ժամանակ Քոչբեկից զոհվել է 11 հոգի: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով հետմահու պարգևատրվել է Մարտիկ Ավագյանը:

Պատերազմից հետո վերականգնվել են գյուղի ավերված տները:

Խորհրդային տարիներին Այգեստանում գործել է տարրական, յոթամյա, այնուհետև ութամյա դպրոց:

1968 թ. գյուղում դպրոցական նոր շենք է կառուցվել: 1980-ական թվականների կեսերին դպրոցում սովորում էր 42 աշակերտ: Պատերազմական գործողությունների հետ կապված 1992-1994 թթ. դասապարապմունքները կազմակերպվել են Հաղրութի պիոներական տանը: Այդ տարիներին դպրոցական շենքը դարձել էր զորանոց: 2008 թ. դպրոցը հիմնանորոգվել է:

2013-2014 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 41 աշակերտ, դասավանդում՝ 16 ուսուցիչ, 2017-2018 ուսումնական տարում՝ 41 աշակերտ, 23 ուսուցիչ: Դպրոցն ունի 12 երեխայից կազմված նախադպրոցական խումբ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Անահիտ Բալասանյանը, Արամայիս Բաղդասարյանը, Արտավազդ Բալայանը, Կարինե Հովհաննիսյանը, Սուրեն Հովհաննիսյանը, Լյուդմիլա Աբրահամյանը, Սուրեն Բաղդասարյանը, Արթուր Ավանեսյանը:

Գյուղում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ Հին Քոչբեկ գյուղատեղին և Սբ. Հարություն եկեղեցին (1741 թ.):

Գյուղի աղբյուրն է Շենին աղբյուրը:

Այգեստանում շարունակվում են ապրել Գյոզալանց, Ղահրունց, Վիտիսանց, Սովանց, Բլվանց, Մեթունց, Հայրուց, Դերունց, Մուքունց, Թունունց, Ռուշանանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը:

Գյուղն ունի գյուղապետարան, ակումբ, բուժկետ, հանդիսությունների տուն, դպրոց, առևտրի 2 կետ:

Այգեստան համայնքի կազմի մեջ ընդգրկված է նաև Մելիքաշեն գյուղը:

Այգեստանում 1901 թ. կար 457 բնակիչ[432], 1987 թ.՝ 89 տուն, 331 բնակիչ[433], 2018 թ.՝ 85 տուն, 368 բնակիչ[434]: Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[432] Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ., էջ 406:
[433] Մելքումյան Ս., նշվ աշխ., էջ 262:
[434] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

ՄԵԼԻՔԱՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Հաղրութի շրջանում՝ նախկին Արցախի Դիզակ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Բլութան գետի աջափնյակում:

Մեզ հասած տեղեկություններով գյուղի ներկայիս բնակիչների նախնիները 19-րդ դարի սկզբներին Ղարադաղից տեղափոխվել և հաստատվել են Մելիքաշենում: Սակայն Մելիքաշեն անունը և նրա շրջակայքում եղած պատմամշակութային նշանակության հուշարձանների մնացորդները, մասնավորապես 18-րդ դարում կառուցված Սբ. Աստվածածին եկեղեցին, վկայում են, որ ավելի վաղ շրջանում վերոհիշյալ տարածքում բնակավայր է եղել:

Ընդհանուր առմամբ Դիզակի մի քանի գյուղերի բնակիչներ սոցիալ-տնտեսական ծանր կացության և անվտանգության հետ կապված որոշ հանգամանքների ազդեցության տակ միջնադարում մի քանի անգամ տեղափոխվել են Արաքսի մյուս ափ, բնավորվել Ղարադաղում, բայց իրավիճակի փոփոխման հետ կապված՝ նորից վերադարձել և հաստատվել են իրենց նախկին գյուղերում:

Մելիքաշենը նմանօրինակ բնակավայրերից մեկն է: Մելիքաշենում 1889 թ. կառուցվել է Սբ. Հարություն եկեղեցին:

19-րդ դարի վերջերից սկսած Մելիքաշենը միաժամանակ ունեցել է Մելիքջանլու, Մըրըշկայալու անունները:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1930 թ., գյուղում կոլտնտեսություն է կազմակերպվել: Խոշորացման տարիներին այն միավորվել է Բլութանի տնտեսությանը:

Հայրենական մեծ պատերազմին Մելիքաշենից մասնակցել է 105 մարդ, զոհվել 52-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Մելիքաշենի երիտասարդները Հաղրութի առաջին պաշտպանական շրջանի ստորաբաժանումների կազմում մասնակցել են արցախյան ազատագրական պատերազմին;

Խորհրդային տարիներին գյուղում ութամյա դպրոց է գործել, որը աշակերտների թվաքանակի նվազման պատճառով 1980-ական թվականներին փակվել է:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Բնակիչները հիմնականում օգտվում են Շենին կոչվող աղբյուրից:

Հեռուստատեսությունը և ռադիոն գյուղում հասանելի են:

Մելիքաշենը ընդգրկված է Այգեստան համայնքի կազմում: Մելիքաշենում 1890-ական թվականներին կար 32 տուն, 287 բնակիչ, 1987 թ.՝ 24 տուն, 56 բնակիչ[435],

[435] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 267:

2010 թ.՝ 4 տուն, 11 բնակիչ[436], 2018 թ.՝ 7 տուն, 10 բնակիչ[437]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԱԶՈԽ

Բնակավայրը տեղաբաշխված է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Իշխանագետի ձախ հովտում: Գյուղը շրջապատված է սարերով և բլուրներով:

Ազոխը ԱՀ հնագույն բնակավայրերից մեկն է: Ավելին՝ այն աշխարհում մարդու հնագույն բնակատեղիներից մեկն է: Հին Ազոխը տեղակայված էր ներկայիս գյուղի հյուսիս-արևմուտքում՝ Մրախաթուն կամ Սբ. Աստվածամայր հանդամասում՝ համանուն եկեղեցու շուրջ, որը կառուցվել է 9-րդ դարում:

Ըստ Ա. Ղարիբյանի «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ի՝ ազոխ նշանակում է ժուռ՝ խակ խաղող, ընդհանրապես՝ խակ պտուղ[438]: Նման բացատրություն է տրված նաև Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանում», որտեղ ասված է. «Ազոխ նշանակում է խակ, տհաս, ժուռ, ժաստ, խակ ու ժուռ, ձիոն խաղող»[439]: Գյուղի անվան ծագման հետ կապված՝ ժողովրդի մոտ մի ավանդազրույց է պահպանվել, համաձայն որի՝ Ազոխի բնակիչներն իրենց աշնանացան ցորենի պաշարները պահում էին քարանձավում: Մոնղոլ-թաթարական արշավանքներին հաջորդեցին սաստիկ երաշտն ու սովը: Ամոռան վերջին մարդիկ սովից փրկվելու համար որոշեցին ձեռք տալ աշնանացանի համար պահված սերմացուին: Սակայն գյուղի փորձառու տարեցները, հոգալով գալիքի մասին, փակեցին քարայրի մուտքը: Շինականները ստիպված սկսեցին սնվել դեռահաս խաղողով: Այդ պատճառով գյուղը կոչվեց Ազոխ, որը նշանակում է խակ խաղող[440]:

Ազոխ գյուղի հետ է կապված նրա հարևանությամբ գտնվող Որվան կոչված քարանձավը: Ներկայումս այդ տարածքը աշխարհին առավել շատ հայտնի է Ազոխի քարանձավ անունով: Այդտեղ մարդը սկսել է ապրել դեռևս 400-ից 300 հազար տարի Քրիստոսից առաջ:

Քարանձավի մասին անդրադարձներ կան հայ պատմիչների աշխատություններում, մասնավորապես Եղիշեն պատմում է, որ վարդանանց պատերազմի ժամանակ կանայք և երեխաները պարսկներից պատսպարվել են Որվանում[441]:

Մեկ այլ ավանդազրույցի համաձայն՝ մոնղոլական արշավանքների ժամանակ, երբ թշնամին ավերում է Արցախի բնակավայրերը, մոտակա գյուղերի բնակիչները

[436] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[437] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:
[438] Ղարիբյան Ա., Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1969, էջ 11:
[439] Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, հ. 1, Երևան, 1967 թ., էջ 17:
[440] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[441] Եղիշէի Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 125-127:

400 աղջիկների թաքցնում են Ազոխի քարանձավի անձավներից մեկում: Մնացած բնակիչները թողնում են գավառի սահմանները և ամրանում Արցախի անառիկ վայրերում: Թշնամու հեռանալուց հետո մարդիկ վերադառնում են տները և շտապում քարանձավից դուրս բերել աղջիկներին: Նրանք չեն գտնում աղջիկներին, ոչ էլ այն անձավը, որտեղ թաքցրել էին նրանց: Երկրաշարժը վերաձևել էր ծանոթ քարայրը[442]:

Հնագույն շրջանի այդ բնակատեղին ունի բազմաթիվ ելքեր ու մուտքեր, լաբիրինթոսի նման շուրջ վեց դահլիճ: Դրանցից ամենամեծը գրավում է երեք հազար քառակուսի մետր տարածություն[443]:

Մակար Բարխուդարյանցը գրել է, որ քարանձավի «...մէջ կայ մի կնոջ արձան, որ գրկած է մի մանուկ: Արձանս կոփուած է քարից, կնոջ զգեստի տարազն և գլխի շինութեան ձևն ներկայացնում են Արցախի կանանց հագուստների և փաթաթոցներով շինած գլուխների տիպը»[444]:

1960-ական թվականներից սկսած հնագետները ձեռնամուխ եղան Ազոխի քարանձավի ուսումնասիրությանը:

Յոթ մետր խորության վրա հնագետները հայտնաբերեցին մուստերյան մարդու՝ նեանդերթալցու ներքին ծնոտի մի խոշոր բեկոր, որն իր մեծությամբ և ատամների դասավորությամբ տարբերվում է ժամանակակից մարդու ծնոտից: Վարդագույն գրանիտի բեկոր հիշեցնող այդ ոչ մեծ, բայց պատմական արժեք ունեցող առարկան, ինչպես նաև Արցախի տարածքից հայտնաբերված շատ գտածոներ ժամանակին տարհանվել են և այժմ գտնվում են Բաքվում՝ Ադրբեջանի ԳԱ պատմության ինստիտուտում: Մինչ այդ նեանդերթալցու մնացորդներ հայտնաբերվել են աշխարհի 4 հնավայրերում՝ Սիդի Աբդուրախմանում (Մարոկկո), Շտեյնհեյմում (Գերմանիա), Սպանկոմպբում (Անգլիա) և Սեդիա-դել Դիաբոլոնում (Իտալիա):

Անվանի հնագետներ Պ. Բորիսովսկին և Ն. Քալանթարիձեն նախամարդու այդ տեսակն անվանեցին «ազոխաբնակ»[445]:

Այս հազվագյուտ հայտնագործությունն իր վրա բևեռեց արտասահմանյան շատ գիտնականների ուշադրությունը: 1974 թ. Ազոխի քարանձավը ուսումնասիրել է Մարսելի համալսարանի պրոֆեսոր Անրի դը Լյումլեյնը: Անվանի գիտնականը Ազոխի քարանձավը և նրանում գտնված սինանտրոպից նեանդերթալցուն անցնող մարդու ծնոտը համարել է «հողագնդի վրա մարդկային հնագույն քաղաքակրթության օջախի նշանավոր գյուտ»[446]:

2002 թվականից սկսած Ազոխի քարանձավում պարբերաբար ուսումնասիրություններ են կատարում Իսպանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Իրանի,

[442] Խաչատրյան Հ., Հացապատում, Երևան, 1984, էջ 125-127:
[443] Մկրտչյան Շ., Արցախի գանձերը, Երևան, 2000, էջ 38:
[444] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 205:
[445] «Կոմունիստ», 7 հունվարի, 1974:
[446] Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994, էջ 17:

Հայաստանի և Արցախի հնագետները: Հայտնաբերվել են ձեռքի բազմաթիվ հատիչներ, այժմ գոյություն չունեցող տարաբնույթ կենդանիների ոսկորներ, այդ թվում քարանձավային հսկա արջի, որոնք այսօր պահպանվում են Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանում, ինչպես նաև հենց բուն Ազոխում:

Ազոխի քարանձավից հայտնաբերված նյութերը մեկ անգամ նորից համոզում են, որ բուն քարայրը և նրան հարակից տարածքները անհիշելի ժամանակներից ներառված են եղել ժամանակակից մարդու կազմավորման գործընթացի մեջ:

Ներկայիս գյուղը ձևավորվել է 17-րդ դարի սկզբին՝ Դիզակի մելիք Սուջումի իշխանության տարիներին: Վերջինս լավ հարաբերություններ ուներ Շահ Աբաս Ա-ի հետ և այդ հանգամանքն օգտագործեց Դիզակի հզորացման համար: Մելիքի դուստր Թագուհին մելիք Եգան Ա-ի կինն էր: Նա թաղված է Ազոխի գերեզմանատանը: Տապանաքարի վրա գրված է. «Այս է տապան Թագուհու, դուստր մելիք Սուջումի, կին մելիք Եգանի»:

Քանի որ Հին և Նոր Ազոխները իրար շատ մոտ են գտնվել, ուստի Հին Ազոխի բնակիչներին հուղարկավորել են նաև նոր գյուղի գերեզմանատանը: Պատահական չէ, որ գերեզմանատանը առայսօր պահպանվում է 15-րդ դարի տապանաքար:

Գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1604 թ. մելիք Սուջումի կողմից: Վերոհիշյալ եկեղեցին 1931-1942 թթ. օգտագործվել է որպես գյուղական ակումբ, իսկ 1942 թ.՝ քանդվել: Սբ. Աստվածածին եկեղեցու շինանյութով կառուցվել է ակումբ, իսկ քարերի մի մասով էլ սալահատակվել է գյուղական փողոցի մի հատվածը:

Ազոխի հայությունը, մաքառելով դժվարությունների դեմ, հավատարիմ պապերի ավանդին, դարեր շարունակ պաշտպանում էր հայրենի գյուղն ու Արցախ աշխարհը:

20-րդ դարը նոր անակնկալներ բերեց Ազոխի հայությանը: 1905-1907 թթ. նրանք ստիպված էին դիմակայել թուրք-թաթարական և քրդական հրոսակախմբերի ճնշումներին:

Քեռնդալան գետակի վրա տեղակայված թաթարաբնակ Ղաջար գյուղը ավազակորջի էր վերածվել և անընդհատ խաթարվում էր Դիզակի ու Վարանդայի գյուղերի անդորրը:

1905 թ. հունվարի 9-ին Դիզակի ու Վարանդայի հայկական կամավորական ջոկատների մարտիկները հետ մղեցին Դրախտիկի վրա Ղաջարի թուրքերի հերթական գրոհը և անցնելով հակահարձակման՝ կրակի մատնեցին ավազակորջը: Նույն օրը՝ երեկոյան, Ղաջարի թուրքերը հրդեհեցին Շեխերի և Ազոխի գոմերը: 1905 թ. մարտին Կովկասի զորագունդը չորս թնդանոթներով, փոխգնդապետ Վիվերնի, գավառապետ Ֆրեյլիխի, սպաներ Բիրկիվլկինի, Հաջինի, հաշտարար միջնորդ Երմոլաևի, պրիստավ Ֆիտինի գլխավորությամբ մտավ Վարանդայի և Դիզակի գավառները: Նրանք ամենադաժան կերպով թալանեցին Ավետարանոց, Սարգսաշեն, Շեխեր, Թաղավարդ, Թաղլար, Տող, Տումի, Ազոխ, Հաղորտի, Սոս, Գյունե Ճարտար, Ղուզե Ճարտար, Խնուշինակ, Գիշի գյուղերը[447]:

Ազոխում նրանք, հարձակվելով խաղաղ բնակչության վրա, ավերում ու թալանում են բազմաթիվ տներ, բռնաբարում կանանց, աղջիկներին և նույնիսկ ծերերին[448]:

1906 թ. օգոստոսի 14-ին Ղաջարի թուրքերը նորից հրդեհեցին Ազոխի գոմերը[449]:

1918-20-ական թվականների արցախահայության ազատագրական պայքարին մասնակցեցին նաև Ազոխի բնակիչները: Գտիչի ձորում ապստամբների մի խումբն էլ ղեկավարում էր Թևան Ստեփանյանի «աջ ձեռք» անունը վաստակած ազոխեցի Սարգիս Գևորգյանը[450]:

Պետք է նկատել, որ բոլշևիկների զինված ուժերի շարքերում նույնպես կռվում էր Ազոխի բնակիչների մի մասը: Նրանց գլխավորում էին Թաղևոս Արզումանյանը և Թարիվերդի Աբրահամյանը[451]:

1929 թ. Ազոխում ստեղծվել է «Լույս» կոլտնտեսությունը: 1961 թ. Ազոխի, Դրախտիկի և Սալաքյաթինի տնտեսությունները միացան մեկ կոլտնտեսության մեջ: Այն կրում էր Հովհաննես Բաբաջյանի անունը: 1964 թ. վերոնշյալ կոլտնտեսությունը միացվեց Մեծ Թաղերի Մարշալ Խանփերյանցի անվան սովխոզին: 1989 թ. վերոհիշյալ սովխոզը նորից վերակազմավորվեց:

Ազոխի տնտեսությունները ղեկավարել են Թևան Աղաջանյանը, Արշավիր Ավագյանը, Ռուբեն Հարությունյանը, Թեմուր Ավանեսյանը:

Հայրենական մեծ պատերազմին Ազոխից մասնակցել է 177 հոգի, որից 5-ը՝ աղջիկ: Ռազմաճակատ մեկնածներից 99-ը զոհվել են: 1967 թ. զոհված ազոխցիների հիշատակին գյուղում հուշակոթող է կառուցվել:

Հայրենական մեծ պատերազմում աչքի են ընկել շատ ազոխցիներ, մասնավորապես՝ գեներալներ Սուրեն Աղաջանյանը և Սարգիս Սարդարյանը (Սարդարով): Վերջինս ծառայությունն ավարտել է գեներալ-գնդապետի կոչումով և ԽՍՀՄ ռազմաօդային ուժերում զբաղեցրել է բարձր պաշտոններ:

Արցախահայության ազատագրական պայքարի տարիներին Ազոխի հայությունը նույնպես փոթորկալից ճանապարհ անցավ:

1991 թ. Ազոխի 18-45 տարեկան 132 ազոխցի տղամարդիկ դարձան կամավորական ստորաբաժանման մարտիկներ: Ստեղծվեց 11 ջոկատ, ամեն մեկի մեջ ներառված էր 11-ական մարդ: Ջոկատների գործունեությունը համակարգում էր գյուղի պաշտպանության շտաբը, որը գլխավորում էր Վյաչեսլավ Մելքումյանը: Գործող ջոկատների հիմքերի վրա ստեղծվեց առաջին վաշտը, որի հրամանատարն էր Կամո

[447] Բալայան Վ., Դրվագներ..., էջ 65-66:
[448] Բալայան Վ., Շուշի, էջ 413:
[449] Ա-Դ., նշվ.աշխ., էջ 184:
[450] Բաղդասարյան Ա., Հայրենի եզերք, Ստեփանակերտ, 2003, էջ 232:
[451] Հաղրութի շրջանային արխիվ, ֆ. 3, գ. 60, թ. 108:

Պետրոսյանը: Վաշտը հետագայում դարձավ Հադրութի պաշտպանական շրջանի ամենամարտունակ ստորաբաժանումներից մեկը, որն իր մասնակցությունը բերեց ռազմաճակատի տարբեր հատվածներում մղված, ինչպես պաշտպանական, այնպես էլ հարձակողական գործողություններին:

Մարտական գործողությունների ընթացքում ազոխցի 17 հայորդիներ իրենց կյանքը նվիրաբերեցին հայրենիքի պաշտպանության սուրբ գործին: Գեորգի Ավանեսյանը արժանացել է ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի, իսկ Արմավիր Մնացականյանը՝ հետմահու: Զոհվածների հիշատակը հավերժացնելու համար գյուղում հուշարձան է կառուցվել:

1873 թ. Ազոխում բացվել է նախակրթարան, որտեղ սովորում էր 15 աշակերտ: 1874-75 ուսումնական տարում Ազոխում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց, որտեղ սովորում էր 22 աշակերտ, դասավանդում՝ 1 ուսուցիչ[452]: 19-րդ դարի 80-ական թվականներին դպրոցը փակվել է: Այն վերաբացվել է 1890 թ.:

Որոշ տվյալներով գյուղում 1890 թ. գործել է իգական դպրոց, որտեղ սովորում էր 15 աղջիկ[453]:

1907 թ. Ազոխում բացվում է մեկդասյա երկսեռ դպրոց, որը ուներ մեկ բաժանմունք, 49 աշակերտ և մեկ ուսուցիչ՝ Արսեն Ղուկասյանը: Դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը և պահվում էր ազոխցիների «Մշակութային միության» նպաստով[454]:

1922 թ. Ազոխում գործող դպրոցի պարապմունքները անց էին կացվում երկու մասնավոր տներում՝ 12-ական աշակերտով:

1934 թ. ավարտվում է Ազոխի դպրոցի շենքի շինարարությունը: Այդ նույն տարում դպրոցը յոթամյայի կարգավիճակ է ստանում: 1960 թ. դպրոցը դառնում է ութամյա, իսկ 1968 թ. այն արդեն միջնակարգ էր:

2017 թ. սեպտեմբերի 1-ին Ազոխի նորակառույց դպրոցը շահագործման է հանձնվել: 1988-1990 թթ. դպրոցում սովորում էր 226 աշակերտ, 2017-2018 ուսումնական տարում՝ 133 աշակերտ:

1934 թ. առայսօր դպրոցը ղեկավարել են Արշավիր Ավագյանը, Բագյում Լալայանը, Նիկոլայ Բալասանյանը, Արմիկ Ասրյանը, Վարդուհի Չիթչյանը, Արտավազդ Բաղդասարյանը, Շմավոն Պողոսյանը, Վիտալիկ Պողոսյանը, Ապրես Ավանեսյանը և Իլյա Պողոսյանը:

Ազոխի դպրոցի շրջանավարտներ, ինչպես նաև ծագումով այդ գյուղից են տեխնիկական գիտությունների դոկտորներ Արամ Աղաջանյանը-Բերգը, Սերգեյ Բաղդասարյանը, Հենրիկ Ամիրյանը, Միքայել Պողոսյանը, պատմական գիտությունների դոկտորներ Ռազմիկ Պողոսյանը, Վալերի Ավանեսյանը, ֆիզմաթ գիտությունների դոկտոր Պավել Գևորգյանը, ՀՀ վաստակավոր արտիստ Գեորգի Մինասյանը:

Ազոխի տարածքում պահպանված պատմամշակութային հուշարձաններից են Ազոխի քարանձավը, Ս. Աստվածածին եկեղեցին (17-րդ դար), գերեզմանը (10-19-րդ դարեր), Ցից քար և Պղնձաքար բերդերի մնացորդները, որոնք նշանակալից դեր են ունեցել 9-րդ դարի հակաարաբական ապստամբությունների ժամանակ: Գյուղի շրջակայքում են գտնվում Սբ. Ավանես (Հովհաննես), Չոր Խաչ, Կախան, Խաչին խութ սրբատեղիները:

Համայնքի տարածքում գործում են Նոր, Քոհնա, Մալլուլուվա, Գետին, Մուշկերակա, Կոմուտեն, Քարամիջին, Փալանդավութի, Փառատոսի աղբյուրները:

Գյուղի նշանավոր հանդամասերն են՝ Մոլալու, Ղուրուղեն դարա, Մուշկերակ, Սալին արտ, Փառատոս, Դոլուն խութ, Ափքյասան, Ղաշար արտ, Տանձուն խութ:

Գյուղում ապրում են Փախկունց, Բլլսանանց, Դելլաքանց, Ամրունց, Խանունց, Մակունց, Տոնունց, Գյանջումանց, Գալդունց, Ջինգիրանց, Սումանանց, Պուղունց, Մարունց, Մկանանց, Ջաքունց, Դերունց, Մոսունց, Ավանանց, Չալունց, Լալունց, Ազանանց, Փիրումանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Հետպատերազմյան տարիներին վերանորոգվել են գյուղի տները: 2008 թ. կառուցվել է մանկապարտեզ, 2009 թ.՝ ջրամատակարարման ցանցը, վերանորոգվել բուժամբուլատորիան, հանդիսությունների սրահը:

Գյուղը գազաֆիկացված է, գործում է դպրոցը և գյուղապետարանը: Հյուսիս-հարավ մայրուղին անցնում է Ազոխի միջով, որը նպաստում է գյուղի զարգացմանը:

1890 թ. Ազոխում կար 140 տուն, 807 բնակիչ, 1987 թ.՝ 240 տուն, 705 բնակիչ[455], իսկ 2018 թ.՝ 214 տուն, 812 բնակիչ[456]: Նրանք հիմնականում աշխատում են գյուղատնտեսության ասպարեզում:

ԱԿՆԱՂԲՅՈՒՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Արևսար լեռան ստորոտում:

1826-28 թվականների ռուս-պարսկական պատերազմի ավարտից հետո Ղարադաղից 8 ընտանիքներ, չտանելով բեկերի և խաների ծանր հալածանքները, Արաքսը հատում և անցնում են Արցախ: Սկզբում նրանք հաստատվում են Մավասում, սակայն այդտեղ հողը բեկական էր: Հետագա ճնշումներից խուսափելու նպատակով հասնում են ներկայիս Ակնաղբյուրի տարածք, որն այն ժամանակ անտառապատ էր: Այն մաքրում և դարձնում են բնակավայր:

[452] «Դպրոց» ամսագիր, հմ. 1, 1875, էջ 16:
[453] Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Արցախի կրթական համակարգը, հ. 1, էջ 371:
[454] ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 314, թ. 10:
[455] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 257:
[456] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

Գյուղի տարածքում բխող աղբյուրի անունից էլ նոր բնակավայրը ստացավ Աղբուլաղ անունը:

Աղայանների, Ամիրջանյանների, Բաբայանների, Բրուտյանների, Սարդարյանների, Առաքելյանների նախնիները տեղափոխվել են Ղարադաղի Դյու Գյոյ Դարայ գյուղից, Բոզունք, Ղվալանք՝(Գրիգորյաններ) Սըղընից, Աղաջանանք՝ (Խանյաններ) Սուրունից, Բադունք՝(Պետրոսյաններ) Բերդենյետքից: Հովսեփյան եղբայրներ Հովսեփը՝ Սըղընից, Գրիգորն ու Սարգիսը՝ Դյու Գոյ Դարայից, գաղթել են սկզբում Մելիքջանլու, այնտեղից Աղբուլաղ: Միրզոյաններն էլ սկզբում հասել են Խարմանջուղ, այնուհետև տեղափոխվել Աղբուլաղ:

Գյուղի տարեցները պատմում են, որ իրենց պապերը, երբ սկսել են նոր տեղանքում բնակարաններ կառուցել, հողային աշխատանքների ժամանակ հայտնաբերել են նախկին բնակավայրերի հետքեր:

Ընդհանուր առմամբ պիտի նկատենք, որ 13-րդ դարի մոնղոլական արշավանքներից սկսած, անվտանգության նկատառումներից ելնելով, Դիզակի և Ղարադաղի մի շարք բնակավայրերից բնակչության անընդհատ տեղաշարժեր են եղել: Հայրենի երկրամասում համեմատաբար ապահով վիճակ ստեղծելուց հետո նրանք նորից հաստատվել են Արցախում:

Ռուսական տիրապետության ժամանակաշրջանը համեմատաբար ապահով ու անվտանգ է համարվում:

Վերաբնակները մի քանի տարով ազատվել էին հարկերից և կյանքն իր բնականոն հունի մեջ էր մտել: Նրանք, հողագործությանն ու անասնապահությանը զուգահեռ, զբաղվում էին նաև արհեստագործությամբ: Հայտնի էին Աղբուլաղի բրուտագործները, փայտագործ վարպետները: Հետագայում որոշ ազգատոհմերի ներկայացուցիչներ սկսեցին անվանվել իրենց պապերի արհեստը բնութագրող անուններով: Օրինակ Բրուտանց, Ղվալանց, Դուլգարանց, Դալլաքանց:

1866 թ. գյուղում կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցին:

19-րդ դարի վերջին Աղբուլաղում կար 32 ծուխ, 252 բնակիչ[457]:

Աղբուլաղից 19 հոգի մասնակցել է առաջին համաշխարհային պատերազմին:

Համատարած կոլեկտիվացման տարիներին՝ 1929 թ., գյուղում կոլտնտեսություն է կազմակերպվել: Խոշորացման քաղաքականության արդյունքում Աղբուլաղի, Էդիլլուի, Հախուլուի և Դուդուկչիի տնտեսությունների հիմքերի վրա ստեղծվել է միասնական կոլտնտեսություն: Կազմակերպահիրավական տեսանկյունից 1975 թ. սեպտեմբերի 1-ից կոլտնտեսությունը դարձավ սովխոզ:

1993 թ. նորից Աղբուլաղում ստեղծվեց գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն, որն էլ 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո լուծարվեց:

[457] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 196:

Աղբուլաղի տնտեսությունը տարբեր տարիներին ղեկավարել են Գրիգոր Պողոսյանը, Հայկ Աղայանը, Մարդի Պետրոսյանը, Եփրեմ Միրզոյանը, Այդին Միրզոյանը, Սաշա Սարդարյանը, Իսրայել Գրիգորյանը, Սիմոն Հովսեփյանը, Քրիստափոր Սարդարյանը, Աշոտ Կասպարովը, Լևոն Պողոսովը, Վլադիմիր Նավասարդյանը, Վագիֆ Պետրոսյանը, Սերժիկ Միրզոյանը:

Հայրենական մեծ պատերազմին Աղբուլաղից մասնակցել է 128 հոգի, որոնցից 64-ը զոհվել են: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Արցախյան ազատագրական շարժման առաջին տարիներին գյուղում կամավորական ջոկատ է ստեղծվել: Լինելով սահմանային գյուղ՝ կամավորականները որսորդական հրացաններով մեծ դժվարությամբ կարողանում էին զսպել հակառակորդին: Սակայն 1991 թ. մայիսի 15-ին ադրբեջանական օմոնը ԽՍՀՄ ներքին զորքերի ստորաբաժանումների ուղեկցությամբ, անձնագրային ռեժիմի ստուգման պատրվակով հայաթափեցին Աղբուլաղը: Դա չհուսահատեցրեց բնակչությանը: Նրանք շարունակեցին պայքարը՝ իրենց արժանի ներդրումն ունենալով ինչպես հայրենի օջախի ազատագրման, այնպես էլ Արցախի՝ ընդհանրապես: Պատերազմի ժամանակ գյուղը տվել է 29 զոհ, որոնցից 19-ը՝ խաղաղ բնակիչներ էին, ընդ որում 6-ը՝ երեխաներ:

Ցուցաբերած սխրանքների համար Խորեն Հովսեփյանը պարգևատրվել է ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով:

1886 թ. գյուղում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց: Ուսուցիչն էր Արամ Տեր-Բաղդասարյանը: 1996 թ. դպրոցը փակվել է և վերաբացվել 1908 թ.: Ուսուցիչն էր Վահրամ Վարդապետյանը: 1914 թ. դպրոցն ունեցել է 1 բաժանմունք, 45 աշակերտ, 1 ուսուցիչ:

Խորհրդային առաջին տարիներին գյուղում գործում էր տարրական, 1938 թ. յոթամյա, 1962 թ.՝ ութամյա, իսկ 2000 թ.՝ միջնակարգ դպրոց: 1962-1963 թթ. գյուղում նոր դպրոցական շենք է կառուցվել: 2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորել են 50 աշակերտներ, դասավանդել՝ 20 ուսուցիչներ:

Տարբեր տարիներին դպրոցի տնօրեններ են աշխատել Արեգնակ Աթայանը, Քնարիկ Մելքումյանը, Արծրունի Արամյանը, Ժենյա Աբրահամյանը, Շահեն Հովսեփյանը, Մարտին Քալաշյանը, Քրիստափոր Գրիգորյանը, Խորեն Ղազարյանը, Առնո Բաղդասարյանը, Արթուր Արզումանյանը, Լիրա Ազիզբեկյանը:

Ծնունդով Աղբուլաղից են գրող, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սոկրատ Խանյանը, բժշկական գիտությունների դոկտոր, գնդապետ Վլադիմիր Հովսեփյանը:

Գյուղի տարածքում պատմամշակութային նշանակության երևելի հուշարձաններ չեն պահպանվել:

Գյուղի աղբյուրներն են Կարաս, Սար բուլաղ:

Գյուղի նշանավոր հանդամասերն են Մուրղուզլու, Դերին արտ:

Ակնաղբյուրում շարունակում են ապրել Բաղունց (Պետրոսյաններ), Ղվալանց (Գրիգորյաններ), Անունց (Գրիգորյաններ), Հովսեփանց (Հովսեփյաններ), Աղասունց (Աղայաններ), Խանունց (Խանյաններ), Դուլգարանց (Բաբայաններ), Բրուտանց (Բրուտյաններ), Ջվաղանց (Ջավաղյաններ), Սիրդարանց (Սարդարյաններ), Միրզանց (Միրզոյաններ), Դաստունց (Հարությունյաններ) ազգատոհմերի ներկայացուցիչները:

Համայնքը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Գյուղում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, դպրոց, առևտրի 4 կետեր:

1995 թ. գյուղը վերանվանվել է Ակնաղբյուր:

1987 թ. այդտեղ կար 93 տուն, 270 բնակիչ[458], 2018 թ.՝ 72 տուն, 307 բնակիչ[459]:

Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԱՌԱՔԵԼ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում՝ Ղարաբաղյան լեռնաշղթայի հարավարևելյան լեռնաճյուղերից առաջացած ձորակի հարթավայրային մասում:

5–14-րդ դարերում գյուղը գտնվում էր ներկայիս Մեխակավանից 2 կմ հյուսիս-արևելք՝ Շինատեղ հանդամասում:

14-րդ դարում Շինատեղից բնակիչները տեղափոխվում և հաստատվում են ներկայիս Առաքելի հարևանությամբ գտնվող Մուլքուդարա հանդամասում: Բնակիչներն այդ տարածքը անվանում են Նապատ: Ինչպես Շինատեղում, այնպես էլ Նապատում և Անապատում նրանք եկեղեցիներ են կառուցել, որոնք քոչվոր ցեղերի կողմից ավերվել են:

Կարծիք կա, որ Հին Առաքելը գոյություն է ունեցել նաև մինչև 5-րդ դարը, և Քրիստոսի առաքյալներից մեկը 1–2-րդ դարերում քարոզչություն է արել վերոհիշյալ բնակավայրում:

17-րդ դարի սկզբներին, երբ Շահ Աբասը Արևելյան Հայաստանի հարյուրավոր բնակավայրեր հայաթափեց, նույն տխուր ճակատագրին արժանացավ նաև Հին Առաքելի բնակչությունը: Նրանք շուրջ երկու դար ապրեցին Արաքսի մյուս ափին՝ Ղարադաղում, և 1826–28 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո միայն հաջողվեց վերադառնալ հայրենի բնօրրան: Մեծ զրկանքների գնով նրանք Հին Առաքելից 500 մ հեռավորության վրա հիմնեցին նոր բնակավայր:

[458] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 264:

[459] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

19-րդ դարի վերջերին Առաքելում կար 90 տուն, 652 բնակիչ[460]:

Գյուղում 1902–1907 թվականներին կառուցվում է Սբ. Աստվածածին եկեղեցին:

1912 թ. գյուղում կար 1233 բնակիչ[461]:

19-րդ դարի վերջերին Իվան Ջաքարյանը Առաքել գյուղում հիմնում է մետաքսամանման գործարան[462]:

1928 թ. գյուղում փոքր հզորության ՋԷԿ է կառուցվում, որով էլեկտրաֆիկացվում է նաև բնակավայրը[463]:

1929 թ. Առաքելում կոլտնտեսություն է կազմավորվել: Իրավա-կազմակերպական տեսանկյունից այն 1969 թ. սովխոզի կարգավիճակ է ստանում: 1988 թ. այն նորից վերակազմակերպվեց կոլխոզի:

1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո Առաքելի բնակիչները դարձան մենատնտեսներ:

Առաքելի տնտեսությունը տարբեր տարիների ղեկավարել են Գրիգոր Գրիգորյանը, Յուրի Մկրտչյանը, Շահեն Սարդարյանը, Լյուբլեն Աբրահամյանը, Աբրիկ Մարտիրոսյանը, Ռազմիկ Գրիգորյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 340 մարդ, որոնցից 96-ը զոհվել են: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կանգնեցվել:

Արցախյան շարժման առաջին իսկ տարիներից Առաքելը՝ որպես սահմանամերձ գյուղ, անընդհատ ենթարկվում էր ադրբեջանական հրոսակների հարձակումներին: Գյուղի խաղաղ բնակչության անվտանգությունը ապահովելու նպատակով կազմավորվեց ինքնապաշտպանական ջոկատ:

1991 թ. «Օղակ» ռազմագործողության ժամանակ ադրբեջանական Օմոնը խորհրդային զորքերի աջակցությամբ Առաքելը հայաթափեց, իսկ հունիսից սկսեցին այդտեղ բնակեցվել ադրբեջանցի առաջին ընտանիքները: 1993 թ. Արցախի ՊԲ հարվածների տակ Առաքելը ազատագրվեց: Բնակչության մի մասը վերադարձավ հարազատ օջախ և ձեռնամուխ եղավ գյուղի վերաշինմանը:

1888–1889 ուսումնական տարում Առաքելում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց, որտեղ սովորում էր 25 աշակերտ, դասավանդում՝ 1 ուսուցիչ: 1896 թ. դպրոցը փակվեց, սակայն 1906 թ. վերաբացվեց: Ուսուցիչն էր Աշոտ Բայանդուրյանը:

Խորհրդային առաջին տարիներին գյուղում՝ նախկին տանուտերի տանը, բացվեց տարրական դպրոց: Հետագայում այն միջնակարգի կարգավիճակ ստացավ:

[460] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 192:

[461] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[462] Բալայան Վ., Շուշի, էջ 200:

[463] Բալայան Վ., Դրվագներ..., էջ 252:

2000 թ. դպրոցը տեղափոխվել է նորակառույց երկհարկանի շենք: 2018–2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 33 աշակերտ, դասավանդում՝ 16 ուսուցիչ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Լուսիկ Գրիգորյանը, Գրիշա Հայրյանը, Շահեն Իսախանյանը, Ջոյա Գրիգորյանը, Սվետլանա Առաքելյանը, Բորիկ Ամիրջանյանը: Ծնունդով Առաքել գյուղից է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդվարդ Խաչիյանը:

Գյուղում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ Սբ. Աստվածածին եկեղեցին (1902–1907 թթ.), միջնադարյան սրբատեղիներ, գերեզմանոց:

Գյուղի աղբյուրներն են՝ Կուձի ձուր, Մեծ ձուր, Գյուղեն ձուր, Գյոլեն արտեն, Կթնաձուր, Արխեն բաղեն ձուր, Երե ձուր:

Առաքելի հանդամասերն են՝ Մաչի խութ, Սղնախ, Բուբետեղ, Ջեյրան-բուլաղ, Տախտեր, Չախակալու, Քավթառեն գյունե, Լպատեն քամակ, Գյոլարտը:

Գյուղում շարունակում են ապրել Ճղարանց (Հայրիյաններ), Ծտորանց (Բաբայաններ, Ծատրյաններ), Կյափունց (Ղահրամանյաններ, Ավետիսյաններ, Սարգսյաններ), Կյուքունց (Գրիգորյաններ, Ավթանդիլյաններ), Ղլեչունց (Ղահրամանյաններ), Բացունց (Համբարձումյաններ), Սեյրանանց (Սեյրանյաններ), Գյուլուշանանց (Գրիգորյաններ), Նախրչուց (Մովսիսյաններ), Գիլմանց (Պետրոսյաններ), Սվադանց (Առաքելյաններ) ազգատոհմերի ներկայացուցիչները:

Առաքելը էլեկտրաֆիկացված է: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում է գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, մանկապարտեզ, առևտրի 2 կետ: Նախկինում գյուղն ունեցել է նաև հիվանդանոց, հացի փուռ, գազի լցարան, ճաշարան:

Առաքել համայնքի կազմի մեջ ընդգրկված են նաև Ձորագյուղ, Ջրաբերդ և Սարալանջ գյուղերը:

Առաքելում 1987 թ. կար 70 տուն, 253 բնակիչ[464], 2018 թ.՝ 33 տուն, 119 բնակիչ[465]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՁՈՐԱԳՅՈՒՂ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Դիզափայտ լեռնաշղթայի արևելյան լեռնաճյուղերից մեկի գագաթին:

[464] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 260:
[465] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

Գյուղի վաղանցյալ շրջանի պատմության մանրամասները մեզ չեն հասել: Հայտնի է, որ 19-րդ դարի սկզբներին Ղարադաղից մի քանի ընտանիքներ հաստատվել էին Քարագլուխում և մերվել տեղացիների հետ:

Չնայած գյուղը ներկայումս ավերված վիճակում է այնուամենայնիվ Սանկտ Պետերբուրգում բնակվող քարագլուխցի բարերարի միջոցներով 2013 թ. Քարագլուխում կառուցվել է Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին:

Արցախում խորհրդային կարգեր հաստատելուց հետո գյուղում 1930 թ. կոլտնտեսություն էր կազմակերպվել: Այն հետագայում միավորվել էր Բանազուրի խորհտնտեսությանը:

Խորհրդային տարիներին գյուղում կար տարրական դպրոց, ակումբ:

Արցախյան ազատագրական պատերազմի տարիներին գյուղի երիտասարդները Հադրութի առաջին պաշտպանական շրջանի ստորաբաժանումների կազմում մասնակցել են հայրենի երկրամասի սահմանների պաշտպանության գործին:

Արցախյան ազատագրական պատերազմի առաջին տարում՝ 1991 թ., ադրբեջանցիներին հաջողվել է գրավել ու ավերել Քարագլուխը: 1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը վերջնականապես ազատագրվել է:

Քարագլուխի նախկին բնակիչները նախընտրեցին գյուղից ոչ շատ մեծ հեռավորության վրա ավելի հարմարավետ ջրառատ ձորահովտում նոր բնակավայր հիմնել: Այն ստացավ Ձորագյուղ անվանումը:

Գյուղի աշակերտները սովորում են Առաքելի միջնակարգ դպրոցում:

Քարագլուխում 1890-ական թվականներին կար 25 տուն, 203 բնակիչ, իսկ 1987 թ.՝ 40 տուն, 96 բնակիչ[466]:

Նոր կազմավորված Ձորագյուղում 2010 թ. կար 12 տուն, 38 բնակիչ[467], 2018 թ.՝ 9 տուն, 39 բնակիչ[468]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՍԱՐԱԼԱՆՋ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Ղարաբաղյան լեռնաշղթայի արևելյան լեռնաճյուղերից մեկի բլրապատ լանջին՝ Առաքել գյուղի հարավ արևմտյան հատվածում:

Գյուղի տարածքում եղած միջնադարյան գերեզմանոցի մնացորդները և 18-րդ դարում կառուցված Սբ. Աստվածածին եկեղեցին վկայում են, որ բնակավայրը գոյություն ունի առնվազն միջին միջնադարից:

[466] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 271:
[467] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[468] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

Գյուղը ունեցել է Ջիլան անունը:

18-րդ դարի վերջերին քաղաքական և տնտեսական որոշակի հանգամանքների ազդեցության տակ գյուղի բնակիչները տեղափոխվել էին Ղարադաղ:

19-րդ դարի սկզբներին Արցախը Ռուսաստանի գերիշխանության տակ անցնելուց հետո, համեմատաբար բարվոք պայմանները նպաստել են որպեսզի նախկին բնակիչները վերադառնան հարազատ օջախները:

Ինչպես Մակար Բարխուդարյանցն է նշել 19-րդ դարի 40-ական թվականներին Ղարադաղից և Բաղաց Կապանից որոշ ընտանիքներ հաստատվել էին Ջիլանում[469]:

Գյուղի հետ կապված տարբեր պատմափուլերում հետաքրքիր դեպքեր չեն արձանագրվել:

Արցախում խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1930 թ., գյուղում կոլտնտեսություն է կազմակերպվել: 1960-ական թվականներին այն միավորվել է Բանազուրի խորհտնտեսությանը: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվել են անհատական տնտեսություններ:

Գյուղի երիտասարդները մասնակցել են ինչպես Հայրենական մեծ պատերազմին, այնպես էլ Արցախյան ազատագրական պայքարին:

Խորհրդային տարիներին գյուղում տարրական դպրոց է գործել: Աշակերտների թվաքանակի նվազման պատճառով դպրոցը փակվել է:

Բնակավայրը էլեկտրաֆիկացված է: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Արցախում պետականության վերակերտումից հետո գյուղը վերանվանվել և դարձել է Սարալանջ: Այն ընդգրկված է Առաքել համայնքի կազմի մեջ:

Սարալանջում 1890-ական թվականներին կար 28 տուն, 200 բնակիչ, 1987 թ.՝ 12 տուն, 20 բնակիչ[470], 2010 թ.՝ 8 տուն, 35 բնակիչ[471], 2018 թ.՝ 5 տուն, 24 բնակիչ[472]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՔԱՐԱԳԼՈՒԽ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Հադրութի շրջանում, նախկինում՝ Արցախի Դիզակ գավառում:

Բնակավայրը տեղաբաշխված է Դիզափայտի արևելյան լանջին:

Քարագլուխը Արցախի հին բնակավայրերից է: Միջնադարում շրջակա գյուղերի բնակիչների համար բնակավայրը ավելի շատ պաշտպանական կառույցի դերակատարություն է ունեցել: Այսօր միայն ամրոցի հետքերն են տեսանելի:

[469] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 192:
[470] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 271:
[471] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[472] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

19-րդ դարի սկզբներին Ղարադաղից մի քանի ընտանիքներ հաստատվել են Քարագլխում և արագ մերվել տեղաբնիկների հետ:

19-րդ դարի երկրորդ կեսին գյուղում կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցին:

Գյուղի բազմադարյան պատմության վերաբերյալ հետաքրքիր նյութեր չեն հայտնաբերվել:

Արցախում խորհրդային կարգեր հաստատելուց հետո Քարագլուխում 1930 թ. կոլտնտեսություն է կազմակերպվել: Այն 1960-ական թվականներին միավորվել է Բանազուրի պետական տնտեսությանը: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո գյուղում ստեղծվել են մասնավոր տնտեսություններ:

Քարագլուխի երիտասարդները մասնակցել են Հայրենական մեծ պատերազմին: Արցախյան ազատագրական պատերազմի տարիներին գյուղի բնակչությունը մեկ մարդու նման լծվել էր հայրենիքի ազատագրության ու անկախության գործին:

1991 թ. մայիսին՝ «Օղակ» ռազմագործողության ժամանակ, ԽՍՀՄ ներքին գորքերի զորքերի օժանդակությամբ Ադրբեջանի հատուկ ջոկատայինները Քարագլուխը հայաթափել են:

1992 թ. հայ ազատամարտիկներին հաջողվել է գյուղը ազատագրել: Սակայն թշնամին, նոր ուժեր կուտակելով Արցախի հարավային թևում, նորից գրավել է Քարագլուխը: 1993 թ. հուլիսին ԱՀ պաշտպանության բանակի հարվածների տակ Քարագլուխն ազատագրվեց: Սակայն բնակչությունն այդպես էլ չվերադարձավ հայրենի գյուղ:

Խորհրդային տարիներին Քարագլուխում գործում էր տարրական դպրոց, ակումբ:

2015 թ. մեկ ընտանիք հաստատվել է Քարագլուխում՝ հեռանկարում հնարավորություն ստեղծելով նորից վերականգնել դարավոր բնակավայրը:

Քարագլխում 1890-ական թվականներին կար 25 տուն, 203 բնակիչ, 1987 թ.՝ 40 տուն, 96 բնակիչ[473], 2018 թ.՝ 1 տուն, 3 բնակիչ[474]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

Քարագլուխն ընդգրկված է Առաքել համայնքի կազմի մեջ:

ԱՐԵՎՇԱՏ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում՝ Աղավնո և Չախմախ գետերը իրար միացնող գետահովտում:

Գյուղի հարավային մասով ձգվում են Ղլեն քար, իսկ հյուսիսային սահմանով՝ Թեյդարա լեռները: Վերոհիշյալ լեռները անտառապատ են:

[473] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 271:
[474] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

Աղավնո և Չախմախ գետերի հովիտներում հայտնաբերվել են Ք. ա. 1-ին հազարամյակի թաղումներ, 9-15-րդ դարերի գերեզմանոցներ:

Արևշատ գյուղի մոտ է գտնվում նաև Հանգած եղցի եկեղեցին (9-10-րդ դարեր):

Այս փաստերը վկայում են, որ տարածքում հնագույն ժամանակներից հայկական բնակավայր է եղել:

1828 թ.՝ Թուրքմենչայի պայմանագրի ստորագրումից հետո, Ղարադաղից 7 ընտանիքներ հաստատվել են Քոչբեկի հյուսիսում գտնվող Ուրգյունաշ (Արևկող) կոչվող տարածքում: Չհարմարվելով տեղանքին այդ ընտանիքները տեղափոխվում և հաստատվում են ներկայիս Արևշատ գյուղի տեղում, որտեղ նախկինում հայկական բնակավայր է եղել:

Սկզբում կառուցվում են գետնափոր, այնուհետև միահարկ ու երկհարկ տներ: Նոր գյուղին սկզբում տրվեց Արգյունաշ[475] (արևկող), այնուհետև Դոլանլար (պարսկերենից թարգմանաբար նշանակում է ապրելու վայր — Վ. Բ.) անունները:

1880-ական թվականներին կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցին, որը 1991 թ. ադրբեջանցիների կողմից ավերվել է:

18-19-րդ դարերում Աղավնո (Հակարի) գետի հոսանքն ի վեր գտնվող բնակավայրերը հայաթափվելուց և դրանք մահմեդականներով (թուրքեր, քրդեր) բնակեցվելուց հետո, Արևշատը և հարակից հայկական բնակավայրերը դարձան Արցախի հարավի սահմանապահ գյուղեր:

Թուրք-թաթարական, քրդական ավազակախմբերը ամեն կերպ ձգտում էին տիրանալ այդ գյուղերին:

1905 թ. թուրքերը հրկիզեցին և ավերեցին Արևշատը: Բնակչությունն ապաստանեց Հին Թաղերում: 1907 թ. իրավիճակը կարգավորելուց հետո նրանք վերադարձան Արևշատ և վերաշինեցին իրենց բնակավայրը:

Նմանօրինակ կացություն ստեղծվել էր նաև 1918 թ.: Մուսավաթականների գլխավորած հրոսակախմբերը նորից ավերել էին Արևշատը: Միայն 1920 թ. բնակիչներին հաջողվել էր վերադառնալ հայաշատ օջախ:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1932 թ., Արևշատում կազմակերպվել է կոլտնտեսություն:

Տնտեսությունների խոշորացումից հետո՝ 1953 թ., Արևշատի տնտեսությունը միացվել է Հին Թաղերի կոլտնտեսությանը:

Տարբեր տարիների Արևշատի տնտեսությունը ղեկավարել են Աստատուր Հակոբյանը, Ղևոնդ Գրիգորյանը, Ավետիս Մարտիրոսյանը, Օհան Գասպարյանը, Աստատուր Զաքարյանը, Սիմոն Զաքարյանը, Գերասիմ Զաքարյանը, Յուրի Ալթունյանը,

[475] Свод статистических данных о населении Закавказского края, т. IV, материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, т. IV, Тифлис, 1886, с. 334.

Տիգրան Ամիրյանը, Ալիկ Հակոբյանը, Վալերի Ալավերդյանը, Արթուր Հայրապետյանը, Վաչագան Զաքարյանը:

1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվել են մասնավոր տնտեսություններ:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 150 հոգի, զոհվել՝ 101-ը: Նրանց հիշատակին 1969 թ. գյուղում հուշարձան է կառուցվել:

Արցախյան ազատագրական պատերազմի տարիներին Արևշատը ծանր ժամանակներ է ապրել: Ադրբեջանական ավազակախմբերը անընդհատ հարձակումներով լարվածության մեջ էին պահում Արևշատի ազգաբնակչությանը:

1991 թ. մայիսի 16-ին ադրբեջանական օմոնը, ԽՍՀՄ ներքին զորքերի աջակցությամբ, գյուղը տեղահանեցին: Արևշատի բնակչությունը ապաստան գտավ Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղում: Թալանվեց և հրի մատնվեց Արևշատի բնակչության՝ տասնամյակներ շարունակ ստեղծածը:

1993 թ. օգոստոսի 15-ին ԱՀ ՊԲ զորամիավորումները գյուղն ազատագրեցին: Վերադառնալով գյուղ՝ Արևշատի բնակչությունը ԱՀ կառավարության և հովանավորների աջակցությամբ վերականգնեց հայրենի օջախները:

Արցախյան ազատամարտին գյուղից մասնակցել է 15 հոգի: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի է արժանացել Ավետիք Հայրապետյանը:

ԱՀ սահմանները պաշտպանելու ժամանակ՝ 1997 թ., զոհվել է Մարատ Զաքարյանը, իսկ 2016 թ. ապրիլյան պատերազմի ժամանակ՝ ավագ սերժանտ Ղարիբ Սահակյանը:

1886-1887 ուսումնական տարում Արևշատում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց, որտեղ սովորում էր 25 աշակերտ, դասավանդում՝ 1 ուսուցիչ: Դպրոցը գործել է մինչև 1914 թ.: 20-րդ դարի սկզբին գյուղի դպրոցի ուսուցիչն էր Հակոբ Տեր-Միքայելյանը:

Խորհրդային տարիներին դպրոցը սկզբում ութամյա էր, իսկ 1972 թ. դարձավ միջնակարգ: 1932 թ. Արևշատում դպրոցական շենք է կառուցվել: 1990-1991 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 45 աշակերտ:

1991 թ. դպրոցը ադրբեջանցիների կողմից ավերվեց: Գյուղի ազատագրվելուց հետո 1994 թ. սեպտեմբերի 11-ից դասերը կազմակերպվում էին համայնքի բնակիչներից մեկի տանը, իսկ 1996 թ. սեպտեմբերի 11-ից՝ արդեն վերանորոգվող նախկին դպրոցական շենքում:

2011 թ. ԱՀ կառավարության որոշմամբ և ֆինանսավորմամբ Արևշատում նոր շենք է կառուցվել:

2017-2018 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 38 աշակերտ, դասավանդում 15 ուսուցիչ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Աստծատուր Զաքարյանը, Արտաշես Աբրահամյանը, Արծրուն Արամյանը, Յուրի Զաքարյանը, Լևոն Բուդաղյանը, Արև Բաղալյանը:

Արևշատում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային հուշարձաններ. Երղանի տակ կոչված տեղանքում՝ բնակավայր (9–15–րդ դարեր), Կիզիռնե տեղանքում՝ գերեզմանոցի (9–15–րդ դարեր) մնացորդներ, Հանգած եղցի եկեղեցին (9–10–րդ դարեր), Թովմասաբերդը (9–15–րդ դարեր), խաչքար (12–13–րդ դարեր):

Արևշատի աղբյուրներն են՝ Շենին, Ցորտ, Գաբրիել:

Գյուղի հանդամասերն են Մինասանց բաղը, Կապունց բաղը, Աշուղեն բաղը, Ամունց բաղը, Ղալբաղ դուզը, Ղրղաջեն ձորը, Եռղանի տակը, Քարահովիտը, Ղլեն սարը:

Արևշատում շարունակում են ապրել Զաքարյանների, Գասպարյանների, Բաղալյանների, Հակոբյանների, Մինասյանների և Ավագյանների ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց:

Արևշատում 1939 թ. կար 600 մարդ, 1987 թ.՝ 110 տուն, 308 մարդ[476], 2018 թ.՝ 60 տուն, 208 մարդ[477]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԲԱՆԱՁՈՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում՝ Զայլաղ գետի ավազանում:

Գյուղի արևելյան սահմանը ձգվում է Մխորկա ձորով, Ցորա ղուզե բարձրադիր, թփուտածածկ բարձունքներով: Հյուսիսում այն փոխակերպվում է նոսր անտառների:

Բանաձորի տարածքները սահմանակցում են Ցոր, Սարեն շեն, Ծամձոր գյուղերի հողահանդակներին:

Սերնդեսերունդ փոխանցված զրույցներն ու պահպանված նյութերը վկայում են, որ վաղ և միջին միջնադարում ներկայիս Բանաձորի շրջակայքը խիտ բնակեցված է եղել:

Բանաձորի շրջակայքում գտնվող շենատեղ տարածքում նախկինում բնակավայր է եղել: Այն անվանվել է նաև Կհոկ:

Բանաձորի կազմավորման հետ կապ ունի նաև Պստիկ շենը:

[476] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[477] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 2:

Վերոհիշյալ գյուղի կազմավորման վերաբերյալ Բանաձորի տարեցների մոտ զրույց է պահպանվել, ըստ որի՝ Պարսկաստանից հայազգի Ադիլ, Թամրազ և Զեյնալ անուններով 3 եղբայրներ իրենց ընտանիքներով գալիս և Դիզափայտի հարավարևելյան մասում գտնվող անտառում հիմնում են Պստիկ շենը:

19–րդ դարի կեսերին հողային վեճերի պատճառով Պստիկ շենի և Խանձաձորի բնակիչների միջև արյունալի ընդհարումներ են տեղի ունենում, որի պատճառով պստիկշենցիները տեղափոխվում և հաստատվում են Բանաձորում: Դրանք Ադիլի շառավիղներ Քրմալունք և Ծտորանք էին, Զեյնալինը՝ Բդալանք, Ստեփանանք, Գյուրջունք և Թամրազինը՝ Կակունք, Կաբունք, Կյուրվանք, Ակունք:

Մինչ այդ՝ 11–13–րդ դարերում, սելջուկների և մոնղոլ–թաթարների արշավանքների պատճառով Բերձորի թալանված հայ բնակիչները տեղափոխվում և հաստատվում են Կհոկի հարևանությամբ գտնվող մի տարածքում: Մի քանի դար այստեղ մնալուց հետո ինչ–ինչ պատճառներով նրանք Կհոկ բնակավայրի հայերի հետ միասին տեղափոխվում և հաստատվում են Բանաձորում[478]:

Ի դեպ, տարբեր հեղինակներ բնակավայրը անվանում են Բանաձոր, Բանազուր, Վանաձոր և Վանազուր,[479] իսկ կաթողիկոս Աբրահամ Կրետացին՝ Պնաձոր[480]:

1655 թ. վերաբերող հիշատակարաններից մեկում բնակավայրը ներկայացված է Բանաձոր, իսկ 1745 թ. գրված Ավետարանում՝ Բանազուր տարբերակներով:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ բանաձորցի Հաբունց Իսակի բակում գտնվող կամարաձև մի քարի վրա արձանագրված է Թաթուլի շեն անվանումը[481]:

Ամենայն հավանականությամբ Բանաձորը որպես բնակավայր ձևավորվել է 17–րդ դարի սկզբներին:

Արցախի՝ Ռուսաստանի կազմ անցնելուց հետո սկզբնական շրջանում հայ գյուղացիությունը անխնա շահագործվում էր թաթար բեկերի և ռուս չինովնիկների կողմից: Դրա մասին են վկայում Բանազուրի բնակիչների՝ 1849 թ. բազմիցս գրած բողոք–խնդրագրերը՝ ուղղված Կովկասի փոխարքային և Ներսես կաթողիկոսին: «Ղարաբաղի զնդապետ (պոլկովնիկ) Ջաֆար Կուլի խանը, որի իշխանության ներքո ենք գտնվում, որպես ռահաթներ,– գրում են Բանազուրի գյուղացիները,– տանջում է մեզ և պատճառում անպատմելի նեղություններ, պատիժներով ու տուգանքներով, մինչև անգամ ամենայն կենցաղավարությունից այժմ էլ զրկված, մատնվել ենք սովի, ... մեր քահան տեր Մինասի փիլոնը գցել տվեց շան վրա և ստիպեց ժողովրդին՝ երկրպագե-

[478] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[479] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 193; Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան 1986, էջ 592; Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985, էջ 129; Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 261:

[480] Կրետացի Ա., Պատմագրութիւն անցիցին իւրոց և Նատր–Շահին պարսից, էջ 74:

[481] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

լով գնալ նրա հետևից, հայտարարելով՝ թե այդ լինի ձեզ սուրբ և քահանան «նեղսրտեց» և մահացավ: Քանի մարդ մեզանից ծեծից մահացել է: Նեղվելով, մեր գյուղի բնակիչները ցրվեցին այլևայլ տեղեր, ջանալով ազատվել նրա գերությունից ...: Հուսալքված բնակչությունը անգամ երանի էր տալիս Իբրահիմ խանի ժամանակներին»[482]:

Այս դեպքերից հետո Բանազուրի բնակիչները ապստամբում և թոթափում են ատելի լուծը: Սա նոր հեռանկարներ է բացում գյուղի համար:

Գյուղը, գտնվելով հարմարավետ վայրում, արագ զարգանում է: 19-րդ դարի վերջերին Բանաձորում կար 150 ծուխ, 1005 բնակիչ,[483] իսկ 1921 թ.՝ 288 տուն, 1254 բնակիչ[484]:

1912 թ. գյուղում կար 122 հա թթենու և 152 հա խաղողի այգի: Պատահական չէ, որ երկար ժամանակ Բանաձորի թթի օղին և հատկապես գինին հռչակված էր Արցախում և նրա սահմաններից դուրս:

Գյուղում կար 4 ձիթահան (սրանոց), 6 ջրաղաց: 1929 թ. կառուցվել է նաև էլեկտրաղաց:

Գյուղատնտեսությանը զուգահեռ՝ զարգացած էր նաև արհեստագործությունը՝ հատկապես կղմինդրագործությունը (վարպետ՝ Ներսես Ալահվերդյան), փալանագործությունը (վարպետ՝ Դաղունց Ղազար), բրուտագործությունը, ոսկերչությունը, արծաթագործությունը, ջուլհակությունը, պղնձագործությունը, փայտագործությունը:

Բանաձորցիները հայտնի էին նաև որպես կամուրջների շինարարներ: Նրանք իրենց մասնակցությունն են ունեցել Խուդափերինի երկու նշանավոր կամուրջների կառուցման գործին: Հատկապես այդ բնագավառում հայտնի էին վարպետներ Սովունց Սամսոնը և Դիլլաքանց Սուրաբին:

1917-1920 թթ. Բանազուրի հայությունը կարևոր դերակատարություն ունեցավ Արցախի սահմանների պաշտպանության գործում: Երբ 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ռուսական զորքերը հեռանում էին Արաքսի ափերից, Արցախի իշխանությունը ներկայացնող Միջկուսակցական բյուրո-կառավարությանը հաջողվեց զենքերի որոշ խմբաքանակ վերցնել և որպես ապահով վայր՝ պահել Բանաձորում: Հայրենիքի ճամփան բռնած և թուքերից ահաբեկված ռուս զինվորներն ու սպաները նույնպես ապաստանել էին Բանաձորում:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1930 թ., գյուղում կոլտնտեսություն է կազմավորվել: 1969 թ. կոլտնտեսությունը կազմակերպական տեսանկյունից վերածվեց սովխոզի: 1988 թ. այն վերակազմավորվեց կոլտնտեսության: Բանաձորի տնտեսությունը տարբեր ժամանակներում ղեկավարել են Թունունց Սիմոնը, Ֆրանց Ավանեսյանը, Արսեն Առաքելյանը, Լևոն Ղուլյանը, Գրիգոր Գրիգորյանը, Յուրի Մկրտչյանը, Շահեն Սարդարյանը, Լյուբլեն Աբրահամյանը, Աբրիկ Մարտիրոսյանը:

1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվեցին անհատական տնտեսություններ: Բնակչության տնտեսական ակտիվությունը մեծացնելու նպատակով 2010 թվականից ԱՀ կառավարությունը իրագործում է գյուղատնտեսական նշանակության ենթաշրջանային ծրագիր:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել են 229 հոգի: Նրանցից 142-ը զոհվել են: 1967 թ. նոյեմբերի 7-ին նրանց հիշատակին Բանաձորում հուշարձան է բացվել: 1991 թ. ադրբեջանցիները ոչնչացրել են հուշարձանը:

Արցախյան ազատագրական պայքարի տարիներին Բանաձորը՝ որպես սահմանային գյուղ, շատ զրկանքներ ունեցավ: 1991 թ. մայիսի 15-ին անձնագրային ռեժիմի պատրվակով խորհրդային զորքերի աջակցությամբ ադրբեջանական օմոնականները Բանաձորի հայերին արտաքսեցին իրենց տներից՝ դրանք հանձնելով ադրբեջանցի ընտանիքներին: Նույնիսկ փոխեցին գյուղի անունը՝ այն դարձնելով Նարիմանլը: Բանաձորցիների մեծ մասը չլքեցին հայրենիքը: Նրանք մնացին Հադրութում և շարունակեցին պայքարը՝ հայրենի գյուղն ու գերյալ մյուս բնակավայրերը ազատագրելու համար:

1993 թ. հոկտեմբերին Բանաձորը ազատագրվեց: Գյուղը նորից շենացնելու համար Հադրութից և տարբեր տեղերից, ուր ժամանակավոր հանգրվանել էին բանաձորցիներ, վերադարձան հայրենի օջախ:

Արցախյան ազատագրական պայքարին մասնակցած բանաձորցիներից Իվան և Ռուբեն Ավանեսյանները, Կամո Մուսայելյանը պարգևատրվել են ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

1870 թ. Բանաձորում գործել է նախակրթարան՝ 15 աշակերտի ընդգրկմամբ: 1873 թ. գյուղում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց: 19-րդ դարի 80-ական թվականներին Բանաձորում կար նաև իգական դպրոց, որտեղ սովորում էր 20 աշակերտուհի, ուսուցիչն էր Մարիամ Հովակիմյանը:

1891-1995 թթ. գյուղի մեկդասյա ծխական դպրոցն ուներ 40 աշակերտ և 1 ուսուցիչ՝ Ալեքսանդր Տեր-Սահակյանը: Չնայած կառավարության որոշմամբ 1896 թ. հայկական դպրոցները փակվել էին, այնուամենայնիվ գյուղում գաղտնի շարունակում էր գործել դպրոցը:

1906 թ. Բանաձորի դպրոցը մեկդասյա երկսեռ էր, ուներ 3 բաժանմունք, 78 աշակերտ, 2 ուսուցիչ՝ Հակոբ Տեր-Եսայանը և օրիորդ Աղազարյանցը: Վերջինիս գյուղ էր գործուղել Ստեփան Շահումյանը: Նա միաժամանակ ուներ բժշկի մասնագիտություն և վայելում էր բանաձորցիների հարգանքը: Գյուղացիները նրան անվանում էին «օրիորդ Հայաստան»:

[482] Документы и материалы по истории армянского народа, социально-политическое и экономическое положение восточной Армении после присоединения к России (1830-1870), Ереван, 1993, с. 204-205, 208.

[483] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 193:

[484] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

Դպրոցը պահվում էր բաքվաբնակ բանազուրցիների հայրենակցական միության տարեկան 700 ռ. նպաստով և աշակերտների ուսման վարձով[485]:

Խորհրդային տարիներին դպրոցը սկզբում ստացել էր տարրականի, այնուհետև՝ յոթամյայի ու միջնակարգի կարգավիճակ: Կառուցվել է դպրոցական նոր շենք: 1930-1940 թթ. դպրոցում շուրջ 450 աշակերտ էր սովորում: Նրանց թվում էին նաև ենթաշրջանի գյուղերի բարձր դասարանների աշակերտները:

Գյուղն ազատագրվելուց հետո՝ 1994 թ., դպրոցը վերսկսեց իր գործունեությունը՝ 9 աշակերտով և 5 ուսուցչով:

1994 թ. հոկտեմբերին ավարտվեց Բանաձորի հիմնական դպրոցի տիպային շենքի կառուցումը: 2009 թ. այն հիմնանորոգվել է: 2014-2015 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 32 աշակերտ: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Խաչիկ Մայիլյանը, Սեդրակ Ղազարյանը, Գրիգոր Սաֆարյանը, Լուսիկ Գրիգորյանը, Շահեն Հայրապետյանը, Խաչիկ Խաչատրյանը, Գրիգոր Գրիգորյանը, Մարգո Հովհաննիսյանը, Երվանդ Ղահրամանյանը, Կարո Ավետիսյանը, Ազնիվ Աղաբեկյանը, Կամո Բալայանը, Նուշիկ Առաքելյանը:

Ծննդով Բանաձորից է նշանավոր քանդակագործ Սարգիս (Սերգեյ) Բաղդասարյանը:

Բանաձորում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ միջնադարյան գյուղատեղի, գերեզմանոց, Սբ. Աստվածածին եկեղեցին (17-րդ դար), կամուրջ (19-րդ դար), սրբատեղիներ՝ Միխորկա ձոր, Ուջաղեն բաղ, Ցաքուտ, Սպիտակ տղա, Մուխ-թաքա, Ազրիանց սուրբ, Լաբուն ձորեն սուրբ:

Գյուղի աղբյուրներն են՝ Թունջին ծորեն, Դիմիշլարեն, Ղմիշոտ, Տոնունց, Ֆրանցեն, Թամանց, Ակունց, Դիլլաքանց ծորեն, Կուրվանց ծորեն, Լյաբուն ծորեն, Շուլուխեն, Ծիրանեն քոլեն, Աղուլանա տակեն, Քյարինջ, Ղուլուշլու, Վերին:

Բանաձորի նշանավոր հանդամասերն են՝ Ղուլուշլուն, Քյահրիզը, Թափա Դիբին, Շենին բաղեր, Շուլուխը, Դիմիշլարը, Մեծ ձորը, Կաբունց ձորը, Ղաշարը, Ուջաղեն բաղը, Մաքունց բաղը, Միխորկա ձորը, Ծակ կապը, Թուփ ըրած քարերը, Ուխտըտանձին:

Գյուղում շարունակում են ապրել Բդալանց, Բդասանց (Նեսունց), Հնազանդանց, Գյուշունց, Դիլլաքանց, Իվիշանց, Ծտորանց, Կուրվանց, Ղուզունց, Ղուլունց, Յուղուբանց (Քըոմանլունց), Շեթանց, Շուխունց, Չուբանանց, Պըլ Սաքունց, Սըղըթելանց (Քըզըմանց), Տոնունց, Քրամանց, Նազունց, Հլաջանց, Վաղունց, Մուքունց, Խընդմանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Ներկայումս Բանաձոր համայնքի մեջ ընդգրկված է նաև Ցոր գյուղը:

Բանաձորը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը:

[485] «Նոր դպրոց», հմ. 7, 1909:

Գյուղում գործում է գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, դպրոց:

1987 թ. Բանաձորում կար 105 տուն, 298 բնակիչ[486], 2018 թ.՝ 58 տուն, 194 բնակիչ[487]: Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՑՈՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Ղարաբաղյան լեռնաշղթայից դեպի հարավ ձգվող լեռնաճյուղերից մեկի գոգավորությունում:

Ցորը Արցախի հնագույն բնակավայրերից է: Աբրահամ Կրետացի կաթողիկոսը բնակավայրը անվանել էր Ձոր՝ ամենայն հավանականությամբ հաշվի առնելով ձորում տեղաբաշխված լինելու հանգամանքը[488]:

19-րդ դարի և 20-րդ դարի սկզբների գրականության մեջ Ցորը ներկայացված է Սուր, Սոր անվանաձևերով[489]:

Առայսօր ժողովրդի մեջ ավանդազրույց է պահպանվել, ըստ որի Մեսրոպ Մաշտոցը Արցախում առաջին դպրոցներից մեկը բացել է Ցորում:

Գյուղի կենտրոնական մասում է գտնվում 951 թ. կառուցված Ամենափրկիչ եկեղեցին: Ցորի մոտ է գտնվում Գրիգոր Լուսավորչի անապատը՝ կառուցված 5-րդ դարում, միջնադարյան գերեզմանոցը, ստորգետնյա կացարաններ, դամբարաններ, խաչքարեր և առավել շատ հայտնի Ցորաբերդը: Միջնադարյան ողջ ժամանակահատվածում՝ 4-18-րդ դարերում, Ցորաբերդը Արցախում գոյություն ունեցած թագավորությունների և իշխանությունների համար պաշտպանական նշանակության կարևոր կենտրոն է եղել: Ամրոցը հայտնի է նաև Վնեսա ղալա (Հովհաննեսի բերդ) անունով:

Ցորաբերդն ուներ միջնաբերդ, ջրավազան, բնակարաններ:

1797-98 թվականներին Արցախում բռնկված ժանտախտի պատճառով Ցորի բնակիչների մի մասը տեղափոխվել և հաստատվել է Շամախու գավառի Դարա-Քարքանջ, Մեյսարի գյուղերում[490]:

Հադրութ քաղաքի բնակիչների մի մասի նախնիները նույնպես ծագումով Ցորից են:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1930 թ., Ցորում կոլտնտեսություն է կազմակերպվել: 1960-ական թվականներին այն միավորվել էր Բանա-

[486] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 261:

[487] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

[488] Աբրահամ Կրետացի, Պատմագրութիւն անցիցին իւրոց և Նատր Շահին պարսից, էջ 74:

[489] Описание Карабагской провинции, составленное в 1823 г., с. 181; Сегаль Л., Сборник сведений о Елисаветопольской губернии, Тифлис, 1902, с. 134; Кочарян Г., Нагорный Карабах, с. 48.

[490] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 90, 92:

զուրի պետական տնտեսությանը: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվել են մասնավոր տնտեսություններ:

Գյուղի երիտասարդները մասնակցել են Հայրենական մեծ պատերազմին:

1989–1990 թվականներին Ցորում կազմակերպվել է ինքնապաշտպանական կամավորական ջոկատ, որը արցախյան պատերազմի օրերին ԱՀ ՊԲ շարքերում մասնակցել է Արցախի պաշտպանության և գերված հայրենիքի մի հատվածի ազատագրության գործին:

1991 թ. մայիսին՝ «Օղակ» ռազմագործողության ժամանակ, ԽՍՀՄ ներքին գորքերի զորքերի աջակցությամբ Ադրբեջանի հատուկ նշանակության ստորաբաժանումները բռնի տեղահանել են Ցորի բնակչությանը: 1992 թ. Արցախի ինքնապաշտպանական ուժերին հաջողվել է գյուղն ազատագրել: 1992 թ. ամռանը թշնամին, զրահատեխնիկայի ուղեկցությամբ և մեծաքանակ ուժերով Ցորի վրա գրոհելով, նորից գավթել էր հայկական բանակավայրը: 1993 թ. ԱՀ ՊԲ հարվածների տակ գյուղը վերջնականապես ազատագրվել է:

5-րդ դարում Ցորում դպրոց է բացվել: Սակայն հետագա դարերում դպրոցի գործունեության մասին մեզ տեղեկություններ չեն հասել:

Խորհրդային տարիներին գյուղում ութամյա դպրոց կար:

Պատերազմից հետո բնակչության մի մասը այդպես էլ չվերադարձավ հայրենի բնակավայր, և աշակերտների համապատասխան թվաքանակի բացակայության պատճառով ներկայումս դպրոցը չի գործում:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Ցորում 1890-ական թվականներին կար 75 տուն, 560 բնակիչ, 1987 թ.՝ 37 տուն, 77 բնակիչ[491], 2010 թ.՝ 7 տուն, 25 բնակիչ[492], 2018 թ.՝ 7 տուն, 15 բնակիչ[493]: Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԴՐԱԽՏԻԿ

Գտնվում է Հադրութի շրջանում՝ Ղարաբաղյան լեռնաշղթայի Քիրսի լեռնաճյուղերից մեկի արևելահայաց լանջին՝ Իշխանագետի ձախ գետահովտում:

Մակար Բարխուտարյանցը 1890 թ. գյուղի մասին գրել է. «Նոր Դրախտիկը հիմնուած է նոյն սարի ծայրում, մի արևելահայեաց լանջի վերայ, դիրքն՝ վեհապանծ, տեսարանն՝ զմայլելի. բնակիչնք՝ բնիկ. տեղական բերքերն՝ նոյն, հողն՝ բեկական, անջրդի և կարի սակաւ արդիւնաւէտ, գերազանց՝ օդն, կլիման և ջուրն. երկար կեանք՝60–65 տարի. գերազանց, եկեղեցին Սուրբ Գրիգոր Նարեկացի. քարուկիր, շինուած, ՌՂԴ թուին Հայոց մի բարձրահայեաց բլրի վերայ, որի հարթակն լի է ծերունի ծառերով և հանգիստներով: Քահանայ՝ մի: Ծուխ 47, ար.՝ 136, իգ.՝ 116»[494]:

Դրախտիկի շրջակայքում կան Ք. ա. 1-ին հազարամյակի դամբարաններ: Մասնակի պեղումների արդյունքում, մանավանդ «Գյունե արտ» տեղամասում, հայտնաբերվել են բրոնզե ապարանջաններ, կախիչներ, զանգակ, վզնոց, քարե սանդակոթ, սարդիոնե ուլունքներ, երկաթե դանակ, նիզակ, մանգաղ[495]:

Նոնեգա վանքի շրջակայքում կա մի խոշոր բնակատեղի, որը տարեց տեղացիները կոչում են Շինատեղ: Այս ամենը վկայում է, որ ներկայիս Դրախտիկի հարևանությամբ գոյություն են ունեցել հին բնակավայրեր:

Հին Դրախտիկը գտնվում էր ներկայիս գյուղից դեպի արևմուտք՝ լեռան ստորոտում: Գյուղի դիրքը նպաստավոր չէր պաշտպանություն կազմակերպելու համար: Թուրքերի և քոչվոր մյուս ցեղերի կողմից Դրախտիկն անընդհատ հարձակումների էր ենթարկվում: Հրկիզվում էին տները, սպանում գյուղացիներին, քշում տանում անասունները: Դրախտիկի բնակիչները պաշտպանական նկատառումներով 19-րդ դարի սկզբներից սկսում են տներ կառուցել գյուղի արևմտյան բլրագագաթին, իսկ հետագայում՝ ռուսական իշխանության շրջանում և խորհրդային տարիներին, ապահով վիճակը հնարավորություն տվեց, որ տներ կառուցվեն նաև թեք հարթություններում և դաշտավայրում: Այդպես ձևավորվեց ներկայիս Դրախտիկը:

1920 թ. վերջին և 1921 թ. սկզբներին Դրախտիկի ազգաբնակչությունը Թևան Ստեփանյանի զինված ջոկատներում կռվում էր ինչպես թուրքերի, այնպես էլ բոլշևիկների ու կարմիր բանակայինների դեմ:

Այնուամենայնիվ, կարմիր բանակի ճնշման տակ 1921 թ. մայիսին ապստամբությունը ճնշվում է, և խորհրդային կարգեր են հաստատվում նաև Դրախտիկում:

1920–1930-ական թվականներին Դրախտիկում կոլտնտեսություն է կազմակերպվում: Տնտեսությունների խոշորացումից հետո այն մտավ Մեծ Թաղերի խաղողագործական սովխոզի կազմի մեջ:

Դրախտիկից 120 մարդ է մասնակցել Հայրենական մեծ պատերազմին, նրանցից 60-ը զոհվել է: Նրանց հիշատակին գյուղի կենտրոնական մասում՝ դպրոցի բակում, հուշարձան է կառուցվել:

Գյուղի ազգաբնակչությունը մեկ մարդու պես մասնակցել է արցախահայության ազատագրական պայքարին: Գյուղի պատմության ծանր շրջաններից մեկն է համարվում 1988–1992 թ. ժամանակահատվածը:

Դրախտիկի հարևանությամբ գտնվող Սալաքյաթին, Արզուման, Ղաջար գյուղերը և Տող գյուղի թուրքական թաղամասը պատուհաս էին դարձել հայերի համար: Հրե-

[491] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 271:
[492] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[493] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

[494] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 89:
[495] Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, էջ 111:

տակոծության հետևանքով գյուղի 10 տները փլվել էին: Դեպքերի ականատեսը գրել է. «1991 թ. գյուղի վիճակը էլ ավելի ծանրացավ: Ազերի օմոնականները ռուսների հետ միասին մտան հայկական գյուղերը, այդ թվում և Դրախտիկ: Նրանք հորինում են տարբեր կեղծիքներ, միայն թե գյուղը զրկեին դիմադրող ուժից՝ տղամարդկանցից: Մտնում էին տները 18–ից 20 հոգով, ծեծում կանանց, եթե դիմադրում էին՝ գերում տղամարդկանց: 1988 թ. Սալաքյաթինի թուրք բնակիչները գիշերները հանգիստ չէին տալիս, լավ եմ հիշում, թե ինչպես էին կրակում գյուղի վրա, ծանր հարված հասցնում խաղաղ բնակիչներին: Եղել են այնպիսի գիշերներ, որ նույնիսկ տանը չէինք քնել, ողջ գյուղը փախել և գիշերել ենք գյուղից շատ բարձր մի անտառում»[496]:

Ադրբեջանական հրոսակախմբերը, գրավելով Կախան կոչված սրբատեղի–բարձունքը, կրակի տակ էին պահում գյուղը: 1992 թ. ապրիլի 22–ին Կախան սրբատեղիի մոտ ադրբեջանցի հրոսակները շրջապատեցին Ստեփանակերտից Դրախտիկ եկող ավտոբուսը և անզեն 12 ուղևորներին գնդակահարեցին: Նրանք Մեծ Թաղեր, Ազոխ, Դրախտիկ և Քարինգ գյուղերի բնակիչներ էին:

1991 թ. ապրիլին Դրախտիկը արդեն ուներ լավ կազմավորված ինքնապաշտպանական ջոկատ[497]: Սկզբում ջոկատի մեջ ընդգրկված էր 13 հոգի, հունիսին այն դարձավ՝ 57: Ջոկատի հրամանատարն էր Վաչիկ Առուշանյանը:

1991 թ. հոկտեմբերի 29–ին հայկական ջոկատներն Արկադի Տեր–Թադևոսյանի գլխավորությամբ ազատագրեցին Տողի թուրքական թաղամասը: Այդ լուրի ազդեցության տակ Դրախտիկից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա գտնվող և հայերի համար պատուհաս դարձած Սալաքյաթինի թուրքերը հեռացան գյուղից:

Ազատության և հայրենի երկրի համար պայքարում զենքը ձեռքին Դրախտիկից նահատակվեցին 9 հոգի՝ Արկադի Գևորգյանը, Տոլիկ Առուշանյանը, Յուրիկ Գևորգյանը, Շահեն Գևորգյանը, Սուրեն Հովսեփյանը, Երջանիկ Տոնյանը, Վազգեն Բաղդասարյանը, Լյովա Մկրտումյանը, Ռոբերտ Տոնյանը (արժանացել է ԱՀ «Մարտական խաչ» 2–րդ աստիճանի շքանշանի): Դրախտիկից Վազգեն Շաբոյի Բաղդասարյանը, Կարապետ Իշխանի Բալաբեկյանն արժանացել են ԱՀ «Մարտական խաչ» 2–րդ աստիճանի շքանշանի:

Մինչև 1920 թ. Դրախտիկի բնակիչներն ուսում էին ստանում առանձին անհատների մոտ: 1930–1931 ուսումնական տարում գյուղում բացվել էր տարրական դպրոց: Առաջին տնօրենն էր Տող գյուղից Հովսեփ Մարյանը, այնուհետև տումեցի Թևան Մարդանյանը:

Հայրենական մեծ պատերազմից հետո դպրոցը դարձել է ութամյա, իսկ 1986 թ. ստացավ միջնակարգի կարգավիճակ:

[496] ԱրՊՀ Հայագիտական կենտրոն, Նունե Օհանջանյան, ավարտական աշխատանք, 2004 թ. էջ 34:
[497] «Մարտիկ», հմ. 30, 1993:

2015–2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էին 82 աշակերտներ, դասավանդում՝ 19 ուսուցիչ:

1983–1993 թթ. դպրոցի տնօրենն էր Ս. Ստեփանյանը, 1993–1995 թթ.՝ Ա. Առուշանյանը, 1995 թվականից առ այսօր՝ Ս. Ստեփանյանը: Դպրոցի շենքը նորակառույց է, շահագործման է հանձնվել 2008 թ. սեպտեմբերին:

Դրախտիկի նշանավոր հնավայրերն են համարվում Կախան սրբատեղին, 1645 թ. կառուցված Սբ. Գրիգոր Նարեկացի եկեղեցին, հին գերեզմանոցը (14–19–րդ դարեր), 14–18–րդ դարերին պատկանող խաչքարեր:

Դրախտիկում հայտնի է Կրակիչ աղբյուրը:

1958 թ. գյուղն էլեկտրաֆիկացվել է: Բնակավայրը գազաֆիկացված է և ունի խմելու ջրագիծ:

Դրախտիկն այսօր ունի մշակույթի տուն, նորակառույց մանկապարտեզ, համայնքային կենտրոն, բուժկետ, առևտրի 4 կետեր:

Գյուղի կենտրոնով է անցնում Արցախի հյուսիսը հարավի հետ կապող մայրուղին: Ճանապարհի կառուցումը ավելի է աշխուժացրել գյուղի կյանքը: Բնակիչները հիմնականում ունեն կահավորված երկհարկանի տներ: Դրախտիկի բնակիչներն աշխատասեր են: Նրանց եռանդի ու աշխատասիրության շնորհիվ գյուղն օրեցօր դառնում է բարգավաճ ու հզոր:

Դրախտիկում 2018 թ. տվյալներով կա 112 տուն, 413 բնակիչ[498]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԹԱՂԱՍԵՌ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Ընկուզագետ և Պարզագետ գետերի արանքում:

10–րդ դարից սկսած՝ ներկայիս բնակավայրի և հարակից տարածքներում հայկական գյուղեր են եղել:

1045 թ.՝ Բագրատունյաց թագավորության անկումից հետո, քոչվոր ցեղերը մահ ու ավեր են սփռել ոչ միայն Արցախի դաշտավայրում, այլ նաև լեռնաստանում: Այդ գյուղերի բնակիչների մի մասը լքել են իրենց բնակավայրերը:

Առավել ծանր վիճակում հայտնվեց Ուտիքի և Արցախի հարթավայրային գավառների հայությունը:

[498] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 2:

17-րդ դարի սկզբներին Միլ (Բայլական կամ Բելոկան)[499] քաղաքից բազմաթիվ հայ ընտանիքներ հաստատվում են Արցախի լեռնաստանում, որտեղ իշխանությունն իրենց ձեռքն էին վերցրել մելիքական տների ներկայացուցիչները, և իրավիճակը համեմատաբար կայուն էր: Նրանցից մի քանի ընտանիքներ հաստատվում են Հինգ շեն կոչված վայրում, որը ներկայիս Թաղասեռից 5 կմ հեռավորությամբ բարձունքի վրա է գտնվում:

Փաստորեն այստեղ էլ ձևավորվում է Հին Թաղասեռ բնակավայրը: Հնարավոր է, որ նախկինում այդտեղ գտնվող բնակավայրը նույնպես ունեցել է Թաղասեռ անունը:

17-րդ դարում այստեղ կառուցվել է Սբ. Ամենափրկիչ եկեղեցին:

Թաղասեռը հանդիսանում է Արցախի գրչության կենտրոններից մեկը: 1631 թ. Բաղդասար Գրիչը Թաղասեռում գրել է մի Մաշտոց: Ձեռագրի ստորին լուսանցքում նա գրել է «Ձեռս գնաց, գիրս մնաց, Ձեռս փտի, դառնա ի հող, գիրս մնայ յիշատակող»:

Ձեռագիրը հետո հայտնվել է գերության մեջ: 1791 թ. թիֆլիսեցի Նալբանդ Սիսոյի որդի Եզչիսիսոն ազատել է գերված ձեռագիրը և որպես հիշատակ նվիրել Սբ. Աստվածածին եկեղեցուն: Ձեռագրի վերջին ստացողն է եղել ագուլեցի Հարությունը, ով 1804 թ. այն գնել է Թիֆլիսում: 100 տարի անց ձեռագիրը բերվել է Սբ. Էջմիածին:

1638 թ. Հովհաննես եպիսկոպոսի պատվերով Կիրակոս երեցը Մաշտոց է օրինակել՝ «Գրեցաւ սուրբ աւետարանս ի երկրիս Աղուանից՝ ի գաւառիս Դիզակայ, ի գեաւղս, որ կոչի Թեղասեռ՝ ի դուռն սուրբ Սարգսիս, ի Շահ Սեփու երրորդ ամին ձեռամբ փծուն և անարհեստ գրչի՛ սուտանուն Մելիքսեդ երիցու և միաշունչ եղբարս իմոյ սրբամիտ և հեզահոգի տէր Կիրակոս քահանայի, որ ի միասին սկսաք և աւարտեցաք»: Հիշատակարանն այժմ պահվում է Մատենադարանում:

Կիրակոսը Մելիքսեթ երեցի հետ նույն եկեղեցում բոլորագիր մի Ավետարան է սկսել և ավարտել: Ավետարանը գերի է տարվել Թավրիզ, որտեղից էլ 1806 թ. էրզրումցի պարոն Մկրտիչը փրկագնել ու նվիրել է շուշեցի մահտեսի Սրապիոն Շխեյնացուն:

Ձեռագիրը պահվել է Շուշիի Սբ. Ագուլեցոց եկեղեցում, որտեղ այն տեսել և արտագրել է Մակ. Բարխուդարյանցը[500]: Ձեռագիրը հետագայում կորել է:

Պահպանված աղբյուրները փաստում են, որ Թաղասեռում պահվել են ևս երկու հիշատակարաններ, որոնց ճակատագրերն առայժմ անհայտ են:

1795-1797 թվականներին՝ պարսից Աղա Մուհամմադ շահի արշավանքներից հետո, Արցախում սովը, բռնկված համաճարակ հիվանդություններն ու դրան հաջորդած մահտարժամը բնակչության մի մասին ստիպել են հեռանալ հայրենի երկրամասից: 1798 թ. Հադրութից, Թաղլարից, Դահրազից, Խաչմաչից, Ճարտարից, Թաղասեռից որոշ ընտանիքներ տեղափոխվել և հաստատվել են Շամախու հարավային կողմերում և հիմնել Արփավուտ գյուղը[501]:

19-րդ դարի սկզբներին Հին Թաղասեռի բնակիչները տեղափոխվել և հաստատվել են իրենց բնակավայրից ոչ շատ մեծ հեռավորության վրա գտնվող վայրում և հիմնել ներկայիս Թաղասեռը:

19-րդ դարի վերջերին Թաղասեռում կար 110 ծուխ, 1160 բնակիչ[502]:

Այստեղ նրանք փայտաշեն եկեղեցի են կառուցել:

Արցախցիներից կազմված մահապարտների գնդում Սարդարապատի ճակատամարտին մասնակցել են նաև Թաղասեռի երիտասարդները: Նրանցից Սարգիս և Տիգրան Բաղդասարյանները նահատակվել են այդ հերոսական ճակատամարտում:

1917-1918 թթ. Արցախի կառավարությունը գենքի և զինամթերքի պաշարների մի մասը պահում էր Թաղասեռում՝ որպես ապահով վայր:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1930 թ., գյուղում կազմակերպվել է կոլտնտեսություն: 1952 թ. այդ տնտեսությունը միավորվել է Հադրութի կոլտնտեսության հետ: 1969 թ. վերոհիշյալ կոլտնտեսությունը վարչակազմակերպական տեսանկյունից վերափոխվել է սովխոզի: 1991 թ. Թաղասեռի տնտեսությունը առանձնացվել և դարձել է առանձին կոլտնտեսություն: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվեցին անհատական տնտեսություններ:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին գյուղից ռազմաճակատ է մեկնել 181 մարդ, զոհվել է 97-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կանգնեցվել:

Արցախյան շարժման առաջին տարիներին, երբ Ադրբեջանի հետ հակամարտությունը խորացավ, ստեղծվեց ինքնապաշտպանական ջոկատ, որի մարտիկները մասնակցել են բազմաթիվ ճակատամարտերի: Նրանցից 22 հոգի զոհվել են: Սլավա Ավագյանը և Բորիս Հայրյանը հետմահու արժանացել են ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի:

Թաղասեռի եկեղեցական ծխական դպրոցը բացվել է 1887 թ.: Այն ուներ 25 աշակերտ, 1 ուսուցիչ: 1896 թ., երբ փակվում են հայկական դպրոցները, այստեղ կրթական գործընթացը գաղտնի շարունակվում էր:

1908-1909 ուսումնական տարում Թաղասեռում բացվել է մեկդասյա երկսեռ ծխական դպրոց: Ուսուցիչն էր Միհրան Տեր-Առաքելյանը: Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և հասարակության միջոցներով[503]:

Խորհրդային տարիներին Թաղասեռում գործել է միջնակարգ դպրոց: 1955-1956 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 127, 1965-1966 ուսումնական տարում՝

[499] Այս բնակավայրում և նրա շրջակայքում հայտնված թուրքերը Միլին անվանել են Օրեն կալա (ավերակ ամրոց):

[500] ԱրՊՀ Հայագիտական կենտրոն; Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 234:

[501] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 89:

[502] Նույն տեղում, էջ 195:

[503] «Մուրճ», հմ.4, 1889:

106, 1988–1989 ուսումնական տարում՝ 86, 1994–1995 ուսումնական տարում՝ 69, 2017–2018 ուսումնական տարում՝ 61 աշակերտ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Մուշեղ Իշխանյանը, Արշալույս Բաղդասարյանը, Վարյա Կաֆյանը, Գուրգեն Հովհաննիսյանը, Ալեքսեյ Սարգսյանը, Լյուսյա Թաիրյանը, Պետյա Պետրոսյանը, Թամարա Բաղդասարյանը, Էդիկ Պետրոսյանը, Կարինե Ֆանունցը, Մարգարիտա Գասպարյանը, Խորեն Մայիլյանը, Նովելա Սեյանը:

Մի կարճ ժամանակահատված այս դպրոցում դասավանդել է ԱՀ ԳԽ առաջին նախագահ Արթուր Մկրտչյանը:

Գյուղը հայտնի է իր նշանավոր զավակներով: Ծննդով Թաղասեռից են բանաստեղծ Արտո Հովենցը, ԽՍՀՄ բժշկական և բժշկատեխնոլոգիական տեղեկատվության գիտահետազոտական ինստիտուտի հիմնադիր և առաջին ղեկավար, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Բաղդասարյանը, խորհրդային Հայաստանի տեքստիլ արդյունաբերության հիմնադիրներից՝ Հայկ Բաղդասարյանը, խորհրդային բանակի գեներալ-մայոր Արմենակ Բաղդասարյանը, որը 1937 թ. զոհ գնաց ստալինյան բռնություններին, Ադրբեջանական և հայկական ԽՍՀ ժողովրդական դերասան Արզուման (Արզո) Արզումանյանը, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արարատ Մկրտչյանը, խորհրդային Հայաստանի ավիացիայի հիմնադիրներից մեկը՝ Սիմոն Հովսեփյանը, որը նույնպես զոհ է գնացել ստալինյան բռնաճնշումներին, շախմատի ՀԽՍՀ և ԽՍՀՄ բազմակի չեմպիոն Հենրիխ Գասպարյանը:

Նապոլեոն Բոնապարտի թիկնազորում պաշտոն է վարել թաղասեռցի Պետրոսը: Մատենադարանում պահպանված փաստաթղթերը վկայում են, որ նա ծնվել է 1781 թ. սեպտեմբերի 12-ին Թաղասեռ գյուղում: Պարսկական մի արշավանքի ժամանակ պատանի Պետրոսը գերվել է և վաճառվել եգիպտացի բեյերին: Շուտով նա ընդգրկվում է մամլուքների ջոկատում: Այնտեղ նա հայտնի էր Հովհաննես Պետրոսով ինչպես նաև փոխառված Օմար անունով: 1799 թ. հայ երկու մամլուք՝ Ռոստոմն ու Պետրոսը գերեվարվում են ֆրանսիացիների կողմից: Գեներալ Մյուրատի երաշխավորությամբ նրանք, որպես քաջ զինվորներ, ընդգրկվում են Նապոլեոնի թիկնազոր գնդում: Քաջության համար Պետրոսը՝ (Պիեռ) Նապոլեոնի կողմից արժանանում է Պատվո լեգեոն և այլ շքանշանների: 1813 թ. հունիսին հիվանդության պատճառով նա զորացրվում է:

Նապոլեոնի պարտությունից հետո Պետրոսն ու Ռոստոմը ենթարկվում են հալածանքների: Հետապնդումներից խուսափելու համար Ռոստոմն անցնում է Պարսկաստան, այնտեղից Արցախ և հաստատվում Շուշիում: Պետրոսը մինչև 1816 թ. մնում է Ֆրանսիայում, ապա դիմում Ռուսաստանի կայսր Ալեքսանդր առաջինին և, հայրենիք վերադառնալու թույլտվություն ստանալով, վերստին հաստատվում է Թաղասեռում: 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ, նա որպես կամավոր,

զինվորագրվում է ռուսական բանակին: Հաշվի առնելով նրա ֆրանսերենի լավ իմացությունը՝ հրամանատարությունը, կարևոր հանձնարարությամբ նրան ուղարկում է արտասահման: Առաջադրանքը կատարելուց հետո, ռուսները նրան պարգևատրում են շքանշանով: Կյանքի վերջին տարիներն ապրել է հայրենի գյուղում՝ Թաղասեռում:

Գյուղում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ Սբ. Աստվածածին եկեղեցին, շինարարական արձանագրությամբ հին կամուրջ (1763 թ.), միջնադարյան գյուղատեղիների և գերեզմանոցների մնացորդներ, կիսավեր Անապատ եկեղեցին (1635 թ.), Սև Խաչ սրբավայրը, Արցախյան ազատամարտում նահատակված թաղասեռցիների հիշատակը հավերժացնող խաչքարը (2005 թ.): Թաղասեռում գրված Մաշտոցներից մեկում հիշատակված է Սբ. Սարգիս եկեղեցու մասին, որը սակայն հիմնովին ավերվել է:

Թաղասեռի աղբյուրներն են՝ Շենին, Կոձին, Սիսեռն, Տեղուն, Մեծ Կիլիսուտ, Ադուն: Գյուղի կամարակապ աղբյուրը կառուցվել է 1915 թ. Թաղասեռի մեծահարուստներից մեկի՝ Սարգիս Հովսեփյանի կողմից:

Գյուղի հանդամասերն են Ռուսեն յուրդը, Տնջրուն արտը, Քեղերթը, Հոռուն արտը, Սիլեկեն արտը:

Թաղասեռում շարունակում են ապրել Փոթունց, Սոփանց, Պետունց, Մուլքումանց, Բուդաղանց, Խաչունց, Լուտանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Թաղասեռը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, հանդիսությունների սրահ, առևտրի 3 կետ:

Գյուղում 1987 թ. կար 162 տուն, 502 բնակիչ, 2018 թ.՝ 130 տուն, 510 բնակիչ[504]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԹԱՂՈՒՏ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում:

Բացի արևելյան և հյուսիսարևելյան մասերից՝ գյուղը հիմնականում շրջապատված է անտառապատ լեռներով: Գյուղի երկու մասով հոսում են Թաղուտի և Մինգոլտեղի գետերը, որոնք բնակավայրի արևելյան մասում միախառնվում և հասնում են Իշխանագետին:

[504] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

Բնակավայրի կազմավորման վերաբերյալ տեղաբնիկների մոտ ավանդազրույց է պահպանվել, ըստ որի՝ կապանցի նշանավոր առևտրական Խոջա Ղազարը իր քարավանով անցել է ներկայիս գյուղի տարածքով և, հավանելով գողտրիկ այդ միջավայրը, 17-րդ դարի սկզբներին իր հարազատների հետ հաստատվում է այդ վայրում: Ավանդությունը միաժամանակ պատմում է, որ այդ տարածքում թեղի ծառերի պուրակ կար և այդպես էլ գյուղը ստացել է Թեղուտ հետագայում Թաղուտ անունը: Այդ ծառերից մնացել է Ցոջ խաչ վանքի բակում և Համամի աղբյուրի մոտ: Խոջա Ղազարը այնքան հայտնի վաճառական էր, որ անգամ Պարսից շահը նրա հետ ուներ բարիդրացիական հարաբերություններ: Խոջա Ղազարը Տողի Եսայի բեկի հետ միասին այցելում են Թեհրան, շահին մեծամեծ նվերներ տանում և նրան ցավակցում մեծ տիկնոջ մահվան առիթով: Շահը նրանց հյուրընկալել է պալատում և Եսայուն պատվել մելիքի, իսկ խոջա Ղազարին՝ բեկի տիտղոսներով[505]:

Գյուղի անունը ստուգաբանվում է նաև որպես լեռան ստորոտում գտնվող բնակավայր[506]:

Ի դեպ, Խոջա Ղազարը այս գյուղում 1738 թ. աղբյուր է կառուցել և շինարարական արձանագրության մեջ նշել է, «Որ եկի Դզաղ Թաղօտ գեղն, ՌՃԿԸ (1719 թ.)»:

Հնարավոր է՝ այդ տարածքում եղել է լքված Թաղուտ գյուղը, և պարզապես նա նոր շունչ է հաղորդել Արցախի նախկին հին բնակավայրին:

Հետագայում այստեղ որոշ ընտանիքներ հաստատվում են նաև Սյունիքի Դարաբաս գյուղից:

19-րդ դարի վերջերին այստեղ կար 70 տուն, 475 բնակիչ[507]:

Թաղուտ գյուղը ծանր կացության մեջ հայտնվեց 1905-1906 թվականների հայ թաթարական ընդհարումների ժամանակ:

Ցարական իշխանությունները, զորքեր ուղարկելով Արցախ, ոչ թե փորձեցին խաղաղեցնել երկու կողմերը, այլ արյան մեջ խեղդեցին հայկական պոռթկումը:

1906 թ. մարտին կոզակներից բաղկացած զորաջոկատները սկսեցին ռմբահարել և թալանել հայկական գյուղերը: Հրետանակոծվեց նաև Թաղուտը:

Տվյալ ժամանակշրջանի մամուլը գրել է, որ կոզակները սկսել են վառել Տող և Թաղուտ գյուղերի տները: «Գյուղացիները հազիվ հազ կարողացան ազատել Թաղ գիւղում 8 տուն: Կանայք փակեցին նկուղներում: Կոզակները իմացան այդ բանը, կոտրեցին դռները, ներս մտան և ամենաանգութ կերպով բռնաբարեցին»[508]:

Արցախի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը, այդ բռնությունները նկարագրելով, բարձրագույն իշխանություններին գրել է. «...գաւառապետը և հաշտարար միջնորդը հրամայեցին թուրքերին ըստ իրանց հայեցողութեան տանել ուզած ապրանքը հայերից: Գիւղացիները զրկելով ամեն ինչից այժմ գտնւում են ամենաողբալի դրութեան մէջ: Լենկ Թեմուրի, Չինգիսխանի, Շահ-Աբասի ժամանակներում, նոյնիսկ տեղի չեն ունեցել այնպիսի դէպքեր, որոնք կատարում են քրիստոնյա պետութեան մէջ 20-րդ դարում»[509]:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1929 թ., Թաղուտում կազմակերպվել է կոլտնտեսություն: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո Թաղուտում ձևավորվեցին անհատական տնտեսություններ:

Տարբեր տարիների կոլտնտեսությունը ղեկավարել են Հայկ Ղուկասյանը, Մեխակ Ավանյանը, Հայրապետ Կոստանդյանը:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 160 մարդ, զոհվել է 72-ը: Նրանց հիշատակին Թաղուտում հուշարձան է կանգնեցվել:

Արցախյան ազատագրական շարժման առաջին իսկ օրվանից Թաղուտի հայությունը զինվորագրվեց և իր ավանդն ունեցավ փառահեղ հաղթանակների կերտման գործում:

Ռազմական գործողություններին մասնակցել են 34 ազատամարտիկներ: Նրանցից 7-ը՝ Սերգեյ Բաբայանը, Վիտալի Բաբայանը, Էդիկ Դավթյանը, Վագիֆ Մանգասարյանը, Սլավիկ Աբրահամյանը, Արմեն Մկրտչյանը, Արկադի Մկրտչյանը, զոհվել են: Կարեն Աբրահամյանը արժանացել է ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի:

19-րդ դարի երկրորդ կեսին Թաղուտի Սբ. Հովհաննես եկեղեցուն կից գործել է նախակրթարան: 1889 թ. Թաղուտում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 20 աշակերտով, որտեղ դասավանդում էր 1 ուսուցիչ: 1896 թ. դպրոցը փակվում է և վերաբացվում 1908 թ. հոկտեմբերին: Ուսուցիչն էր Գրիգոր Ասրյանը:

1926-1927 ուսումնական տարվանից Թաղուտում գործել է յոթամյա, 1962-1963 ուսումնական տարվանից՝ ութամյա, 1991-1992 ուսումնական տարվանից՝ միջնակարգ դպրոց: 1950-1951 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 104 աշակերտ, դասավանդում 13 ուսուցիչ, 2017-2018 ուսումնական տարում՝ 32 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ:

Տարբեր տարիներին դպրոցի տնօրեններ են աշխատել Գրիշա Խաչատրյանը, Սամվել Գրիգորյանը, Հայկ Բարխուդարյանը, Արմիկ Ասրյանը, Գուրգեն Ստեփանյանը, Գյունդուզ Միրզոյանը, Էդիկ Ղահրյանը, Բորիս Ներսիսյանը:

Ծննդով Թաղուտից են Բաքվի 26 կոմիսարներից՝ Բաղդասար Ավագյանը, ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Սլավա Ասրյանը:

Թաղուտի և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ միջնադարյան գյուղատեղիի և գերեզմանոցի մնացորդներ,

[505] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[506] Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 93:
[507] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 197:
[508] «Արշալոյս», հմ. 69, 30 մարտի, 1906:

[509] Բալայան Վ., Շուշի, էջ 414-415:

Պտկաթաղի վանքը (1670 թ.), Սբ. Հովհաննես եկեղեցին (1896 թ.), սրբատաշ քարով կառուցված արձանագիր Ճվավանքի աղբյուրը (1738 թ.), իջևանատուն (18-րդ դար):

Գյուղի աղբյուրներն են Քաշեն, Արտեն, Սիսեռն, Սորբեն: Թաղուտի հանդամասերն են՝ Նոր խաչը, Շինատեղ, Հարթը, Արջաձորը, Սարին արտը, Պառակը, Դերուն խութը:

Գյուղում շարունակում են ապրել Խոջանց, Ապվանց, Գալուստանց, Ջանունց, Դավիթանց, Կոսունց, Սաղունց, Աղաթելանց, Ակոպանց, Տեփնանց, Խաչատորանց, Այդինանց, Քոսականց, Ղուգազանց, Ունդունց, Արզումանանց, Բաղանց, Չոփչունց, Դալլաքանց, Թոսունց, Աղաջանանց, Փանունց, Մնգասարանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Թաղուտն էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, հանդիսությունների տուն, մարզադաշտ, դպրոց, առևտրի 3 կետ:

Թաղուտում 1987 թ. կար 71 տուն, 198 բնակիչ, 2018 թ.՝ 56 տուն, 203 բնակիչ[510]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԽԱՆՁԱՁՈՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում:

Գյուղը 3 կողմից շրջափակված է լեռներով: Հյուսիսում Դիզափայտի լեռնազանգվածն է, հարավ արևմուտքից հյուսիս արևմուտք ձգվում է Խմապեց, Լոբուն մաններ, Կոնգլա խութ, իսկ հարավ արևելքից և արևելքից՝ Թոխ քար, Մեժլումեն խութ, Հարսնաքար, Հաչա քար, Ծով քար լեռները:

Բնակավայրի մերձակայքում կան անտառներ (Ծմկահոնջ, Թեժ սար, Կրավ տված, Մեծ Ղուզե):

Խանձաձորը Արցախի հնագույն բնակավայրերից է: 20-րդ դարի 20-ական թվականներից թուրքերը հայկական այս բնակավայրն անվանել են նաև Աղջաքենդ:

Գյուղի մասին պահպանված հիշատակությունները վերաբերում են վաղ միջնադարին: Առայսօր Խանձաձորի շրջակայքում պահպանվում են հին բնակավայրերի, սրբավայրերի, ամրացված վայրերի մնացորդներ, մասնավորապես Թուփ ծառ, Շնատեղ, Եղծուն ծոր, Խաչեր, Լոլու արտ, Արաբաց արտ, Ջնալի վայրերի գյուղատեղիները:

Խանձաձորը և հարակից գյուղերը պաշտպանելու նպատակով, վերոհիշյալ բնակավայրից 4 կմ դեպի հարավ-արևելք կառուցվել է Կարմիր քար ամրոցը: Կարմիր

[510] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

քարին հանդիպակաց, նրանից 3 կմ արևմուտք, գտնվում է մեկ այլ անանուն բերդ: Անմիջապես գյուղի մոտ ոչ շատ բարձր բլրի վրա է գտնվում մյուս ամրոցը, որը տեղացիները անվանում են Պերթ:

Խանձաձորի համար կարևոր պաշտպանական կառույց է նաև գյուղից հյուսիս, Դիզափայտի լանջին՝ անմատչելի վայրում գտնվող Դիզափայտի ամրոցը: Այն շուրջ մեկ հեկտար տարածք է զբաղեցնում:

300 տարուց ավելի գյուղը գտնվում էր 1698 թ. կառուցված Սբ. Աստվածածին եկեղեցու շրջակայքում:

Որոշ հանգամանքների, մասնավորապես պատերազմների պատճառով Խանձաձորի բնակիչների մի մասը հեռացել և հաստատվել է ավելի ապահով վայրերում, Կավահանում (Ղավախան)[511], Մեծ թաղերում:

1991 թ. ադրբեջանցիները գյուղը գրավել և հրի են մատնել[512]:

Խանձաձորը ազատագրվելուց հետո նպատակահարմար գտնվեց գյուղը տեղափոխել նախկին բնակավայրից մի քանի հարյուր մետր արևելք գտնվող համեմատաբար հարթ վայրը՝ Գյոռոտ, Լոլու արտ հանդամասեր: Այդտեղ կառուցվեց 40 նոր բնակարան:

Մշտապես կրկնվող պատերազմների, համաճարակների, սովի պատճառով դարերի ընթացքում Խանձաձորի բնակչության ակնհայտ աճ չի արձանագրվել, բացառությամբ 19-րդ դարի:

1824 թ. գյուղում եղել է 9 ծուխ, մոտ 80 բնակիչ, 19-րդ դարի վերջերին՝ 57 ծուխ, շուրջ 500 բնակիչ[513]:

19-րդ դարի երկրորդ կեսին գյուղը խաղաղ ժամանակաշրջան ապրեց: Բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն էր: Առավել շատ ցանում էին ցորեն ու գարի:

19-րդ դարի վերջերից մինչև 1921 թ. Խանձաձորը ապրում էր խռովահույզ ժամանակներ: Թուրք-թաթարական ավազակախմբերը փորձում էին թալանել հայկական բնակավայրերը:

Խանձաձորի բնակչությունը Մանաս Ստեփանյանի, Հայկ Բաղասյանի, Անդրանիկ Բաբայանի, Ղևոնդ Այվազյանի գլխավորությամբ ոչ միայն հսկում էր գյուղի անդորրը, այլ նաև օգնության հասնում հարևան գյուղերին:

1920-1921 թվականներին Խանձաձորի կամավորականները և Թևան Ստեփանյանի գլխավորած զորամասերը անօրինակ կամք ու համառություն ցուցաբերեցին թուրք-բոլշևիկյան հակաարցախյան ալյանսի դեմ պայքարում:

[511] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 217:
[512] Մկրտչյան Ա., Ինչ է տեղի ունեցել Հադրութում, Ստեփանակերտ, 2019, էջ 16:
[513] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

Թուրքերի հետապնդումներից խուսափելու նպատակով 1920-ական թվականներին Խանձաձորից 50 ընտանիք տեղափոխվեց Ստավրոպոլի երկրամաս և առանձին գյուղ հիմնեց: Գյուղը հետագայում ստացավ «Սովխոզ Դրուժբա» անունը:

1921-1940 թվականներին հակաթուրքական, հակաբոլշևիկյան պայքարի համար 40 խանձաձորցիների աքսորեցին կամ էլ գնդակահարեցին:

1931 թ. Խանձաձորում կազմակերպվեց կոլտնտեսություն: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվեցին անհատական տնտեսություններ:

Տարբեր տարիների կոլտնտեսությունը ղեկավարել են Գ. Դավթյանը, Վ. Համբարձումյանը, Ս. Աբգարյանը, Ռ. Գրիգորյանը, Ծ. Ղահրամանյանը, Ս. Համբարձումյանը, Բ. Գրիգորյանը, Ն. Հայրյանը, Գ. Գրիգորյանը, Մ. Համբարձումյանը, Շ. Սարդարյանը, Է. Այվազյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 91 մարդ, զոհվել՝ 49-ը: Նրանց հիշատակին 1977 թ. գյուղում հուշարձան է կառուցվել:

Արցախյան ազատագրական պատերազմի ժամանակ գյուղից 30 հոգի զինվորագրվեց: 5 ազատամարտիկներ զոհվեցին:

ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի հետմահու արժանացել է Համբարձում Այվազյանը: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվել է նաև գումարտակի հրամանատար Վահան Բաղասյանը:

1886 թ. Խանձաձորում բացվել է եկեղեցական ծխական դպրոց, որտեղ սովորում էր 22 աշակերտ, դասավանդում՝ 1 ուսուցիչ[514]:

1896 թ. դպրոցը փակվել և 1908 թ. հոկտեմբերին վերաբացվել է: Ուսուցիչն էր Եփրեմ Տեր-Մանվելյանը:

Ի դեպ, նույն տոհմի ներկայացուցիչ, Խանձաձորի եկեղեցու վանահայր Հովհաննես Տեր Մանվելյանի զավակները նախնական կրթությունը ստացել են վերոհիշյալ դպրոցում, այնուհետև ավարտել Դորպատի համալսարանը: Նրանցից Միքայել Տեր Մանվելյանը՝ որպես կենսաբանության մասնագետ, վերադառնում է հայրենիք և 1930-կան թվականներին պայքարում Հադրութում մոլեգնող խոլերայի դեմ, ինքն էլ դառնում այդ չարիքի զոհը: Հադրութի շրջանային հիվանդանոցը անվանակոչվեց Միքայել Տեր Մանվելյանի անունով:

Խորհրդային տարիներին գյուղում գործել է տարրական դպրոց: 1989-1990 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 25 աշակերտ, դասավանդում 8 ուսուցիչ:

1991 թ. գյուղը տեղահանվելուց հետո, դպրոցական պարապմունքները կազմակերպվել են Հադրութի մանկապարտեզի շենքում:

1996 թ. դեկտեմբերին շահագործման է հանձնվել դպրոցական նոր շենքը:

[514] Մատենադարան, ֆ. 56, ց. 1, գ. 78, թ. 1-2:

2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 17 աշակերտ, դասավանդում՝ 14 ուսուցիչ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել՝ Ս. Գրիգորյանը, Գ. Ավագյանը, Ն. Հայրյանը, Ս. Հովհաննիսյանը, Ա. Այվազյանը, Գ. Համբարձումյանը, Լ. Մկրտչյանը:

Խանձաձորում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ Սբ. Աստվածածին եկեղեցին (1698 թ.), Կատարո վանքը (17-րդ դար), միջնադարյան գյուղատեղիների, գերեզմանոցների մնացորդներ, Կարմիր քար և անանուն երկու ամրոցները, խաչքար (17-րդ դար):

Գյուղի աղբյուրներն են՝ Քար, Սանգյար, Արզուման, Հորդ, Ակնեն, Համբարձումեն, Տանձուտեն, Շլուրտանեն, Թթոտեն, Կիզապատեն, Ցուլ, Սնախի, Տզրփաղա, Քոչի, Արջի, Թունգ:

Գյուղի հանդամասերն են՝ Գյոգին, Թուփ ծառ, Արվեն հոնջ, Ներքե հանդ, Մրգյարան, Տանձուտ, Շենատեղ, Ութտող, Լոլու արտ, Մաչի յուրդ:

Խանձաձորում շարունակում են ապրել Փահրադանց, Ալեքսանանց, Միսարանց, Հումանց, Այվազանց, Քարամյանների ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է, ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, դպրոց:

Խանձաձոր համայնքի կազմի մեջ ընդգրկված է նաև Հայկավան գյուղը: Խանձաձորում 1987 թ. կար 54 տուն, 150 բնակիչ[515], 2018 թ.՝ 20 տուն, 108 բնակիչ[516]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՀԱՅԿԱՎԱՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Արցախի Դիզակ գավառում:

Բնակավայրը տեղաբաշխված է Չախմախ գետակի ափին՝ Ղարաբաղի լեռնաշղթայից դեպի հարավ ձգվող լեռնաճյուղերի գոգավորությունում:

Գյուղի տարածքում պահպանվել են միջին միջնադարից մնացած գյուղատեղիի, գերեզմանոցի մնացորդները:

Գյուղը նախկինում ունեցել է Սիրիկ անվանումը:

1797-1798 թվականներին հայկական այս գյուղի բնակիչները համաձարակի զոհ են դարձել: Կենդանի մնացածներն էլ լքել են գյուղը:

[515] Մելքումյան Ս., Նշվ. աշխ., էջ 260:

[516] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

Մինչև 1920 թ. գյուղը անմարդաբնակ էր: 1923 թ. Ադրբեջանի կողմից կազմված ԼՂԻՄ սահմանները ձշտող հանձնաժողովը հայկական գյուղերի արանքում գտնվող բնակավայրը նպատակային կտրեց ինքնավար Արցախի տարածքից և ներառեց Ադր. ԽՍՀ Ջեբրայիլի շրջանի կազմի մեջ:

Կարճ ժամանակահատվածում խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը գյուղը վերաբնակեցրեց թաթար ընտանիքներով:

Վերջիններս բավականին ագրեսիվ էին տրամադրված հարևան գյուղերի հայերի նկատմամբ: Անասնագողությունն ու ծեծկոտուքը սովորական երևույթներ էին:

Արցախյան ազատագրական պայքարի առաջին օրերից Ադրբեջանի իշխանությունները Սիրիկը դարձրել էին ռազմական հենակետ: Այդտեղից ադրբեջանական ավազակախմբերը գրոհում էին հայկական մարզի բնակավայրերի վրա:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղն ազատագրվեց:

Պատերազմից անմիջապես հետո սկսվել է գյուղի վերաբնակեցման գործընթացը: Այդտեղ հաստատվել են ինչպես Ադրբեջանից բռնատեղահանված, այնպես էլ ՀՀ-ի և ԱՀ բնակավայրերից մի քանի ընտանիքներ: Բնակավայրը ստացել է Հայկավան անունը:

Գյուղի վերականգնման ու վերաբնակեցման գործում շոշափելի է սփյուռքահայերի, մասնավորապես Լոս Անջելեսի հայ համայնքի ներդրումը: Գյուղում կառուցվել են նոր տներ, դպրոց, բուժկետ:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Գյուղի կրթօջախը տարրական դպրոցի կարգավիճակ ունի:

Հայկավանում 2010 թ. կար 12 տուն, 61 բնակիչ[517], 2018 թ.՝ 17 տուն, 80 բնակիչ[518]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԽԾԱԲԵՐԴ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում՝ Դիզափայտ լեռան հարավային կողմի լանջի վրա, որտեղից լայն հովիտ է բացվում դեպի Հագարու գետը:

Գյուղի շրջակայքում գտնվող Սլկիան սարի, Սուրբ խութի, Եղցուն ձորի միջնադարյան բնակավայրերը, Օձաբերդի, Հազարափրկչի, Ամուտեղի, Ղալալվի ամրոցները, կիսավեր եկեղեցիները, մատուռները վկայում են, որ Խծաբերդը հազարամյակների պատմություն ունի:

[517] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[518] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

Գտչավանքի վանահայր Առաքել Կոստանդյանն իր «Պատմութիւն Արցախի» աշխատության մեջ Խծաբերդը Օձաբերդ է անվանել[519]:

1828–1829 թթ. Ղարադաղի Նեփեշտ գյուղից մի քանի ընտանիքներ նույնպես հաստատվել են Խծաբերդում և նոր համ ու հոտ հաղորդել Արցախի հնագույն բնակավայրին:

Բազում դարերի ընթացքում Խծաբերդցին, պայքարելով օտար նվաճողների դեմ, ավելի է կառչում իր հողին և բնակավայրը օրեցօր առավել շենացնում:

1823 թ. Խծաբերդում ապրում էր 18 ընտանիք,[520] 1886 թ.՝ 50 ընտանիք, 336 բնակիչ,[521] 1912 թ.՝ 57 ընտանիք, 624 բնակիչ,[522] 1918 թ.՝ 120–130 ընտանիք[523]:

19-րդ դարում մի քանի գերդաստաններ տեղափոխվում և հաստատվում են Քարին տակ գյուղում՝ իրենց հետ տանելով նաև նախնիների համառությունն ու երկաթյա կամքը:

20-րդ դարը նոր անակնկալներ բերեց Խծաբերդի հայությանը:

1918 թ. Թուրքիան, իսկ 1918 թ. հունիսից՝ նոր կազմավորված մուսավաթական Ադրբեջանը, ամեն կերպ ձգտում էին տիրանալ Արցախին:

Խծաբերդը՝ որպես սահմանապահ գյուղ, թշնամիների համար այդպես էլ անխոցելի մնաց:

1918 թ. մարտի 16-ին թուրքերը գրոհով փորձեցին գրավել Խծաբերդը: Գյուղի պաշտպանները համառորեն դիմադրել են թշնամուն: Նրանց օգնության հասավ Դիզակի մարտական ուժերի պատասխանատու Արտեմ Լալայանը: Կենտրոնացնելով ուժերը՝ նրանք անցան հակահարձակման և մեծ կորուստներ պատճառելով թուրքերին, վտարեցին գյուղի սահմաններից[524]:

1919 թ. մայիսի 28-ին Խծաբերդը գրավելու փորձ կատարեցին Ադրբեջանի մի քանի հազարանոց զինված ուժերը՝ թուրք սպա, Աղդամի նախկին կոմենդանտ Քեազըմ բեյի գլխավորությամբ, որոնց ուղեկցում էր նաև թալանին սովոր խուժանը:

Խծաբերդցիներին նորից օգնության հասան Արտեմ Լալայանի և Արշակ Շահնազարյանի զինված ջոկատները: Մայիսի 28-ին և 29-ին, մի քանի անգամ կասեցնելով թուրքերի գրոհը, մայիսի 30-ին հայ մարտիկները հակագրոհի են անցնում և լիովին ջախջախում նրանց: Թուրքերը ռազմի դաշտում թողնում են 200 սպանված, իսկ նրանց հրամանատար Քեազըմ բեյը ռազմի դաշտից ձողոպրում է[525]:

[519] Մատենադարան, ձեռագիր հմ. 7822:

[520] Описание Карабахской провинции, составленное в 1823 г., с. 183.

[521] Свод статистических данных о населении Закавказского края, IV отдел, Тифлис, 1893.

[522] Приложение к памятной книге Елисаветпольской губернии, на 1914 г., с. 126.

[523] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 420:

[524] Նույն տեղում, էջ. 420–421:

[525] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 420–421:

1921 թ. ամռանը՝ մինչև Կապան անցնելը, Թևան Ստեփանյանի համար Խծաբերդը դարձել էր վերջին անմատչելի հենակետը:

Արցախի ազատագրության և անկախության համար պարզած դրոշը Խծաբերդի հայությունը բարձր պահեց նաև խորհրդային տարիներին:

1930 թ. գենքը ձեռքին նրանք ապստամբեցին Ադրբեջանի իշխանությունների դեմ: Արցախի հարևանությամբ գտնվող շրջաններում տեղակայված կարմիր բանակը փորձել է ճնշել այն, սակայն սկզբում չի հաջողվել: Այնուհետև ստիպված Բաքվից մեծ քանակությամբ զորքեր են տեղափոխել և ճնշել ապստամբությունը[526]:

Խորհրդային տարիներին, ինչպես Արցախի մյուս գյուղերում, Խծաբերդում ևս 1932 թ. կոլտնտեսություն է կազմավորվել: Տարբեր տարիներին այն ղեկավարել են Հարություն Պետրոսյանը, Շ. Բաղդասարյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Վիլա Գրիգորյանը, Ներսես Սարգսյանը, Սաշա Առուստամյանը, Գրիշա Գևորգյանը, Ասլան Գևորգյանը, Շուրկա Բաղդասարյանը, Միշա Քարամյանը: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո Խծաբերդի բնակիչները դարձան մենատնտեսներ:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 155 մարդ, զոհվել է 84-ը: Զոհվածների հիշատակին կանգնեցված է հուշարձան:

Արցախյան շարժման առաջին տարիներին գյուղում Նարվիկ Գևորգյանի գլխավորությամբ կազմակերպվել է կամավորական ջոկատ: Մարտական գործողություններին մասնակցել է 43 մարդ, զոհվել են 7 ազատամարտիկ և 2 խաղաղ բնակիչ: Նարվիկ Գևորգյանը և Ալեքսանդր Ավանեսյանը արժանացել են ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի:

1889 թ. գյուղում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց, որտեղ սովորում էր 25 աշակերտ, դասավանդում՝ 1 ուսուցիչ[527]: Դպրոցը փակվել է 1896 թ. և վերաբացվել 1908-1909 ուսումնական տարում: Այն մեկդասյա երկսեռ էր, ուներ 3 բաժանմունք: Ուսուցիչն էր Կարապետ Սահրադյանը:

1930 թ. գյուղում գործում էր յոթամյա դպրոց: 1980-ական թվականներին դպրոցում սովորում էր 6-7 աշակերտ: 1990-ական թվականներին նախկին խծաբերդցիների գյուղ վերադառնալուց հետո վիճակը կայունացավ: 2004 թ. կրթական հաստատությունը ստացավ հիմնական դպրոցի կարգավիճակ: 2006-2010 թթ. դպրոցում արդեն սովորում էր 62 աշակերտ, դասավանդում՝ 16 ուսուցիչ: Բնակչության նոր արտահոսքի պատճառով 2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 16 աշակերտ:

Ներկայումս դպրոցի տնօրենն է Վարսիկ Հայրապետյանը:

Ծննդով խծաբերդցի են բանաստեղծ Արտաշես Պողոսյանը, ֆիզմաթ գիտությունների դոկտոր Ալեքսան Եգանյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մկրտչյանը:

[526] Սարուր, Կացությունը Ադրբէջանի մեջ, «Դրոշակ», հմ. 4, 1930, էջ 120:
[527] «Նոր դար», թերթ, հմ. 1, 1886:

Գյուղում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ միջնադարյան գյուղատեղիների և գերեզմանոցների մնացորդներ, Եղցաձորի եկեղեցին (16-17-րդ դարեր), Օձաբերդ, Հազարափրկիչ, Ամուտեղ, Ղալալվի ամրոցները, Թեղին սուրբ սրբատեղին, Տեմին սրբ հնավայրը:

Խծաբերդի աղբյուրներն են՝ Տեղուն, Պոտունց, Քուլանեն, Չիմանեն, Խաչուն, Կետեն:

Գյուղում ապրում են Պոտունց, Աշուղանց, Ղարասաքունց, Քարամանց, Թիմրազանց, Հուռունց, Բաբադայունց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը:

Համայնքում գործում է գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, առևտրի մեկ կետ:

Խծաբերդի համայնքի կազմի մեջ ընդգրկված են նաև Սպիտակաշեն, Արփագետիկ, Պետրոսաշեն գյուղերը:

Խծաբերդում 1987 թ. կար 52 տուն, 154 բնակիչ[528], 2010 թ.՝ 47 տուն, 132 բնակիչ[529], 2018 թ.՝ 30 տուն, 117 բնակիչ[530]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՍՊԻՏԱԿԱՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Ղարաբաղյան լեռնաշղթայի հարավարևմտյան լեռնաճյուղերից դեպի հարթավայր ձգվող մասում:

17-րդ դարի սկզբներին՝ պարսից շահ Աբաս Ա-ի կազմակերպած մեծ գաղթաշարժի ժամանակ, տեղահանվել էին նաև Հարարի բնակիչները: Մի քանի տասնամյակ անց, չհամակերպվելով Պարսկաստանում գտնվող նոր բնակավայրին, նրանք նորից վերադարձել են Արցախ: Վերադարձածների մեծ մասը հաստատվել էր Հարարում: Նրանցից մի քանի ընտանիքներ էլ նախընտրեցին հիմնավորվել Զինգինակապ գետի վերին հոսանքում գտնվող իրենց բնակավայրի հանդամասերում:

Այսպիսով՝ 17-րդ դարի կեսերին Հարարի բնակիչները հիմնեցին Արփագյադուկ, Պետրոսաշեն, Սպիտակաշեն, Թեզխարաբ, Փարաջանց, Քոհնաշեն գյուղերը:

Սպիտակաշենի արևմտյան մասով ձգվող լեռնաբազուկի վերջավորության վրա է գտնվում Սաքյունց սարի եղցեն, որի կառուցման դարաշրջանն անհայտ է:

[528] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 259:
[529] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[530] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

Վերոհիշյալ գյուղերի համար ծանր շրջան հանդիսացավ 1905–1906 և 1917–1920 թվականների ժամանակահատվածը:

Գտնվելով թաթարներով և քրդերով բնակեցված բնակավայրերի հարևանությամբ, հիշյալ գյուղերը մշտապես հարձակումների էին ենթարկվում:

ՀՅԴ «Ապառաժ»-ի կառույցին հաջողվել էր տեղում եղած ուժերը համախմբել և պաշտպանել ժողովրդի անվտանգությունը:

Խորհրդային տարիներին՝ 1930 թ., Սպիտակաշենում կոլտնտեսություն է կազմակերպվել: Խոշորացման տարիներին այն միացվել է Խծաբերդի կոլտնտեսությանը: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվել են մասնավոր տնտեսություններ:

Խորհրդային տարիներին Սպիտակաշենում գործում էին դպրոց, ակումբ, բուժկետ:

Գյուղի երիտասարդությունը մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին:

Արցախահայության ազատագրական պայքարի տարիներին Սպիտակաշենում կամավորական ջոկատ էր ստեղծվել, որը ԱՀ ՊԲ ստորաբաժանումների կազմում մասնակցել է երկրամասի սահմանների պաշտպանության գործին:

1991 թ. մայիսին՝ «Օղակ» ռազմագործողության ժամանակ, գյուղը հայաթափվել է: Հադրութում գործող կամավորական ջոկատներին հաջողվել է 1992 թ. սկզբներին թշնամուն դուրս մղել գյուղից:

Արցախի հարավային թևում հակառակորդը, նոր ուժեր կուտակելով, 1992 թ. ամռանը նորից Սպիտակաշենը գրավեց: 1993 թ. ԱՀ ՊԲ ստորաբաժանումների հարվածների տակ Սպիտակաշենը վերջնականապես ազատագրվել է:

Բնակավայրի վերականգնողական աշխատանքները ծավալվել են հետպատերազմյան տարիներին:

Սպիտակաշենը էլեկտրաֆիկացված է: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Սպիտակաշենում 2010 թ. կար 2 տուն, 11 բնակիչ[531], 2018 թ.՝ 2 տուն, 8 բնակիչ[532]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԱՐՓԱԳԵՏԻԿ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավ-արևմտյան հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակի գավառում՝ Հագարի գետի ձախափնյակում: Գյուղի տարածքով են հոսում Հագարիի վտակներ Ջնգանա և Մեծ ձորի սակավաջուր գետերը:

[531] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[532] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

Գյուղը տարբեր հեղինակների մոտ ներկայացված է Արփագյադուկ,[533] Արփագետիկ[534], Քարինգ[535] ձևերով: Գյուղի հարևանությամբ կա նաև Արփագետիկ անունով լեռ:

Գյուղի մերձակայքում պահպանվել են 10–13-րդ դարերի գյուղատեղի, միջնադարյան Ըլմնա ուրթի գերեզմանատան մնացորդները:

Ավանդությունը պատմում է, որ 18-րդ դարում հարևան հայկական գյուղից Դավիթ անունով մի մարդ տեղափոխվում և հաստատվում է ներկայիս Արփագետիկի տարածքում ու այդպես նոր բնակավայր է հիմնադրում: Նա ունեցել է 7 որդի, որից 6-ի անունները մեզ հայտնի է՝ Ավանես, Պետրոս, Պողոս, Բեգլար, Մկրտիչ, Հարություն:

20-րդ դարի սկզբներին Արփագետիկը, Սպիտակ շենը և Թիս-Խարաբ գյուղերը հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Արցախի հարավային հատվածները պահող սահմանամերձ բնակավայրերի դերակատարություն են ստանձնել: Այդ առաքելությունը նրանք պատվով կատարեցին:

Արփագետիկի հայությունը Թևան Ստեփանյանի գլխավորած ազատագրական բանակի շարքերում Արցախի անկախությունն ու ազատությունը պահպանելու համար մարտնչել են թուրք-բոլշևիկյան միացյալ ուժերի դեմ:

Խորհրդային տարիները եթե մի շարք բնակավայրերի զարգացման համար դրական դերակատարություն են ունեցել, ապա Արփագետիկի հետ կապված՝ կործանարար: Տարեցտարի բնակչության թիվը պակասում էր:

1933 թ. գյուղում ստեղծվեց կոլտնտեսություն, որի վարչության նախագահն էր Ավետիս Մկրտչյանը:

Խորհրդային իշխանության առաջին տարիներին գյուղում կար 64 տնտեսություն:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 72 մարդ, զոհվել՝ 35-ը:

Արցախյան ազատագրական պայքարի տարիներին գյուղը ծանր կորուստներ ունեցավ: 1991 թ. մայիսի 15-ին՝ Արցախի հայաթափման «Օղակ» գործողության ընթացքում, ադրբեջանցի օմոնականները՝ խորհրդային զորքերի ուղեկցությամբ, մտան Արփագետիկ և դաժանաբար սպանեցին գյուղի 7 խաղաղ բնակիչների:

1993 թ. ազատագրվելուց հետո գյուղը միառժամանակ անտերության էր մատնված:

2008 թ. ԱՀ իշխանությունները նախաձեռնեցին գյուղի վերակենդանացման ծրագիրը: Կառուցվեցին նոր տներ, որտեղ հաստատվեց 5 ընտանիք:

Խորհրդային տարիներին Արփագետիկում գործել է յոթամյա դպրոց: 1973 թ. այն փակվել է՝ աշակերտներ չունենալու պատճառով: Գյուղը վերաբնակեցվելուց հետո այստեղ բացվել է Խծաբերդի հիմնական դպրոցի մասնաճյուղ, որտեղ 2018–2019 ուսումնական տարում սովորում էր 7 աշակերտ:

[533] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 263:

[534] Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893, էջ 270, 271; Էփրիկյան Հ., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ.1, Վենետիկ, 1903–1905, էջ 343:

[535] Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, էջ 122:

Ծագումով Արփագետիկից են ԱՀ 3-րդ նախագահ Բակո Սահակյանը, բանաստեղծ, բանասիրական գիտությունների դոկտոր Վարդան Հակոբյանը, գեներալ-լեյտենանտ, ԱՀ պաշտպանության նախարար, գեներալ-լեյտենանտ Կարեն Աբրահամյանը, գեներալ-մայոր Արմեն Աբրահամյանը:

Արփագետիկում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ միջնադարյան գյուղատեղի, գերեզմանոց, Եղցան ձոր եկեղեցին (16-17-րդ դարեր), խաչքարեր:

Գյուղի աղբյուրներն են Քարաղբյուրը, Ակվանց, Մայկոնանց, Սահականց, Դերին, Քչարունց, Ղզղան, Կոլխոզի նավ:

Արփագետիկի նշանավոր ազգատոհմերն են՝ Դվութանք (Փոլադանք), Ջառունք, Մարգարանք, Ուրութանք, Թունունք: Նրանց ներկայացուցիչներն այսօր Արփագետիկում չեն ապրում:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը: Նորակառույց տներից մեկը օգտագործվում է որպես դպրոց:

1987 թ. Արփագետիկում կար 7 տուն, 33 բնակիչ[536], 2019 թ.՝ 5 տուն, 19 բնակիչ[537]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԾԱԿՈՒՌԻ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում՝ Վնեսա սարի արևելյան լեռնաճյուղերի մեջ գտնվող ձորի երկու կողմերի լանջերի վրա:

Նախկինում գյուղը ունեցել է Հինդուսար (զՅնդուսար) անունը: Դրա մասին է խոսում գյուղամիջի 1682 թ. կառուցված եկեղեցու դռան գլխի ճակատակալ քարի արձանագրությունը[538]:

Կարծիք կա, որ գյուղը ունեցել է նաև Ծաղկավանք անունը[539]:

1923 թ. աղբյուրներում գյուղը ներկայացված է ինչպես Ծակուռի, այնպես էլ Պակորի անուններով[540]:

Չբացահայտված հանգամանքներում բնակիչները լքում են Հինդուսար կամ Ծաղկավանք բնակավայրը:

[536] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 263:
[537] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[538] Դիվան հայ վիմագրության, կազմեց Ս. Բարխուդարյանը, պրակ V, Արցախ, Երևան, 1982, էջ 172:
[539] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[540] «Советское краеведение», № 10, 1936, с. 1.

18-րդ դարում Վարանդայի մելիքանիստ Ավետարանոցի մոտ գտնվող Ծկոռե գյուղից 3 եղբայրներ՝ Խաչատուրը, Ավան և Մարտիրոսը, տեղափոխվում և բնակվում են Ծաղկաշատի եկեղեցու շրջակայքում: Մի քանի տարի հետո նույն գյուղից այստեղ են տեղափոխվում նաև Չիլինգարանց, Ղվալանց, Ջաղունց, Ունջանանց, Քուսականց, Թոխունց, Սինամանց, Իդինանց, Ասրունց գերդաստանների ներկայացուցիչները:

19-րդ դարում Ծակուռիում հաստատվում են նաև Ղարադաղից մի քանի ընտանիքներ:

Գյուղը պատկանում էր Միրզաբեկանց ազնվական տոհմին:

19-րդ դարի առաջին կեսերին Ծակուռիում կար 22 տուն,[541] իսկ նույն դարի վերջերին՝ 40 տուն, 268 բնակիչ[542]:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1930 թ., գյուղում կազմավորվել է կոլտնտեսություն:

Խոշորացումից հետո Ծակուռիի, Մարիամաձորի և Ջրակուսի տնտեսությունների հիմքերի վրա կազմակերպվել էր մեկ կոլտնտեսություն: 1973 թ. այն միացրել են Տողի սովխոզին:

1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո գյուղի բնակիչները դարձան մենատնտեսներ:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 120 հոգի, զոհվել է՝ 48-ը:

Այս փոքր գյուղից արցախյան ազատագրական պատերազմին մասնակցել է 20 հոգի: Նրանցից 3 ազատամարտիկ զոհվել է:

1896 թ. գյուղում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց՝ 25 աշակերտով, որտեղ դասավանդում էր 1 ուսուցիչ: 1896 թ. ցարական իշխանությունների կողմից դպրոցը փակվել է: 1910 թ. բացվել է մեկդասյա երկսեռ դպրոց: Ուսուցիչն էր Մինաս Տեր Մինասյանը:

Խորհրդային տարիներին գյուղում գործում էր տարրական դպրոց: 1995 թվականից այն հանդիսանում է Մարիամաձորի հիմնական դպրոցի մասնաճյուղ, որտեղ ներկայումս սովորում է 4 աշակերտ:

Դպրոցի տնօրեններ են աշխատել Սեդրակ Ավագյանը, Անժելա Հարությունյանը, Միքայել Խաչատրյանը:

Գյուղում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ Պտկաթաղի վանքը (1670 թ.), Ծաղկավանք եկեղեցին (1682 թ.), գերեզմանոց (17-19-րդ դարեր), խաչքար (17-րդ դար):

Գյուղի աղբյուրներն են՝ Ակնեն, Ներսես, Թեղուն, Կյափունց:

[541] Սարգիս արք. Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 447:
[542] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 197:

Ծակուռիի հանդամասերն են՝ Ցեխեր, Գյունե, Կալ Չխկլան, Բեբու աղբյուր, Կետեր, Ներքե բախձա, Երե բախձա:

Գյուղի շրջակայքի անտառներն են՝ Շուլուրոտը, Դերունց սորան, Անվանց սորան:

Ծակուռիում շարունակում են ապրել Խաչունց, Ղվալանց, Բաբունց, Ունջանանց, Անվանց, Դերունց, Ըսանանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: 1996 թ. գործում է խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում է գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, դպրոց, հանդիսությունների սրահ, առևտրի մեկ կետ:

Գյուղում 1987 թ. կար 50 տուն, 115 բնակիչ[543], 2018 թ.՝ 31 տուն, 110 բնակիչ[544]:

Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԾԱՄԱՁՈՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում՝ Դիզափայտի լեռնաձյուղերից մեկի լանջին:

Գյուղի շրջակայքում են գտնվում Վիշապի (Օշափ), Խոնգի, Կապերի, Խոր ծմակի, Թռունց, Թղենակի, Տանձուն, Ծմալի, Նուխնիի, Վրվանի, Պարիկ շենի յոթ խաչ ու Հարսնաքար լեռները:

Գյուղի տարածքը հարուստ է ջրային պաշարներով՝ աղբյուրներով, գետակներով. Վրվանի և Հորաձորի, Խոնցի, Սև քարի ձորի, Աղի ջրի, Մարալի, Մեծ Վրվանի, Թալայի, Տանձուն արտի:

Ծամձորը որոշ աղբյուրներում ներկայացված է նաև Ջամձոր, Ձեմձոր անուններով[545]:

Ծամձորը Արցախի հնագույն բնակավայրերից է: Գյուղի տարածքում նախկինում 14 փոքր բնակավայր է եղել: Վտանգի դեպքում այդ գյուղերի բնակիչները պատսպարվում էին Վամա բերդում: Ժողովրդի մեջ ավանդազրույց է պահպանվել, համաձայն որի՝ Վանի թագավորության Մենուա արքան մի քանի օր մնացել է այս բերդում[546]:

Ինչպես Արցախի մի շարք բերդերի, այնպես էլ Վամա ամրոցի պարսպաշարը խորհրդային տարիներին քարհանք էր դարձել և օգտագործվել որպես շինանյութ:

Բերդի տարածքում պահպանվել է հազարամյա մի կենի, որը շրջակա բնակավայրերի բնակիչների կողմից սրբացվել է: 1991 թ. ռազմական գործողությունների ժամանակ ծառը այրվել է:

[543] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 273:
[544] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:
[545] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 3, թ. 72:
[546] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

Մոտավորապես 15-րդ դարի վերջերին և 16-րդ դարի սկզբներին, պաշտպանական նկատառումներից ելնելով, վերոհիշյալ 14 բնակավայրերի բնակիչները հավաքվում են Ծամձոր գյուղում:

Ծամձորի հավատավոր ժողովուրդը դարերի ընթացքում մի շարք եկեղեցիներ է կառուցել Շենատեղում, Թղենակում: Դրանց միայն հետքերն են պահպանվում: Իսկ գյուղի կենտրոնում 1669 թ. կառուցված Սբ. Աստվածածին եկեղեցին առայսօր պահպանվում է: 19-րդ դարի վերջերին գյուղում կար 100 տուն, 620 բնակիչ[547]:

19-րդ դարում Ծամձորից մի քանի ընտանիք հաստատվում է Չափար գյուղում[548]:

1918 թ. մայիսի 28-ին Ծամձորի և շրջակա հայկական գյուղերի կամավորականները փայլուն հաղթանակ են տանում թուրքական կանոնավոր 2000-անոց զորքի դեմ[549]:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1929 թ., գյուղում կոլտնտեսություն է կազմավորվել: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո բնակչությունը զբաղվում է մենատնտեսությամբ:

Հայրենական մեծ պատերազմի ժամանակ գյուղից 200-ից ավելի մարդ է մասնակցել, նրանցից 106-ը զոհվել է: Զոհված ազատամարտիկների հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Արցախյան ազատագրական պայքարի առաջին իսկ օրերից ծանր կացության մեջ էր հայտնվել Ծամձորը: Ադրբեջանական ավազակախմբերի կողմից անընդհատ հարձակումների էր ենթարկվում գյուղը, իսկ հունիսի 5-ին խորհրդային զորքերի օժանդակությամբ բնակավայրը գրավվեց[550]: Հունիսի կեսերից սկսած գյուղը սկսեցին բնակեցնել ադրբեջանցիներով: 1992 թ. գյուղը նորից ազատագրվեց: Բնակչությունը նորից վերադարձավ հայրենի բնակավայր: 1990 թ. դեկտեմբերի 3-ին՝ ֆերմայում հերթապահության ժամանակ, կոլտնտեսության վարչության նախագահ Ռաֆիկ Հովակիմյանը զոհվել է: Գյուղից մարտական գործողություններին մասնակցել է 12 հոգի:

19-րդ դարի 70-ական թվականներին գյուղում կար եկեղեցական-ծխական դպրոց: Չնայած ցարական հրովարտակով 1896 թ. հայկական դպրոցները փակվեցին, այնուամենայնիվ Ծամձորում գաղտնի դպրոց էր գործում:

1908-1909 ուսումնական տարում գյուղում բացվել էր մեկդասյա երկսեռ դպրոց: Ուսուցիչն էր Արամ Տեր Հովակիմյանը:

Խորհրդային տարիներին Ծամձորում միջնակարգ դպրոց էր գործում: Գյուղում 1928 թ. երկհարկանի դպրոցական շենք է կառուցվել: Այն 1991 թ. ադրբեջանական ագրեսիայի ժամանակ ավերվել է: Գյուղն ազատագրվելուց հետո «Հայաստան» հա-

[547] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 192
[548] Իշխանյան Ե., նշվ. աշխ., էջ 420-421:
[549] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 265:
[550] Մկրտչյան Ա., նշվ. աշխ., էջ 16-17:

մահայկական հիմնադրամի Ֆրանսիայի մասնաճյուղի միջոցներով նոր երկհարկանի դպրոցական շենք է կառուցվել:

2014–2015 ուսումնական տարում դպրոցում սովորել է 18 աշակերտ, դասավանդել՝ 10 ուսուցիչ: 2018–2019 ուսումնական տարում աշակերտների թիվը կրճատվել է: Դպրոցում սովորում է 8 աշակերտ: Այն դարձել է Առաքելի հիմնական դպրոցի մասնաճյուղը:

Դպրոցի տնօրեններ են աշխատել Շուրա Ավանեսյանը, Շուրա Զաքարյանը, Ռոզա Ալավերդյանը, Պ. Գրիգորյանը, Ա. Հայրիյանը, Գ. Գևորգյանը Վ. Ղազարյանը, Է. Եսայանը, Ռ. Սահակյանը:

Գյուղում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ Սբ. Աստվածածին եկեղեցին (1669 թ.), միջնադարյան գյուղատեղիներ, գերեզմանոցներ, Կեծե սրբատեղին, Օրհնած ջրի ձոր, Պկլաձոր կամուրջները (17–19–րդ դարեր), հնագույն Վամա բերդը:

Ծամձորի աղբյուրներն են՝ Հունոտի ձորի, Շնտեղի, Տնզաձոր, Մշո, Պատիկ, Կհոլուն, Պկլաձոր, Շենին:

Գյուղի հանդամասերն են՝ Տաքդեղի, Շնատեղի, Տանձուն, Խոնգի, Բալուն, Ղնումանց Կալին մանը, Գարի, Փանունց, Ալիս Ապրուս, Կոմուսի, Չիրնի, Կովերեն, Դեմի, Գորտնավարի, Խոր ծմակի, Թղումեն:

Ծամձորում շարունակում են ապրել Ամունց, Զաքունց, Ջավունց, Մանունց, Մսելանց, Ծածունց, Խնումանց, Վրդանանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են: Ծամձորն ունի գյուղապետարան, բուժկետ, դպրոց: Նախկինում կար նաև ակումբ:

Ծամձորում 1987 թ. կար 71 տուն, 134 բնակիչ[551], 2018 թ.՝ 14 տուն, 35 բնակիչ[552]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՍԱՐԻՆՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հադրութ քաղաքից 6 կմ դեպի արևմուտք՝ Դիզափայտի լեռների արևելահայաց լեռնազանգվածի վրա:

Գյուղի շրջակայքում եղած միջնադարյան հնավայրերը, մասնավորապես Հանդին ձեռք սրբատեղին, վկայում են, որ բնակավայրը բազմադարյան կենսագրություն ունի:

[551] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 268:
[552] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 2:

Գյուղից ներքև՝ հարավարևելյան հատվածում է գտնվում պատմական Շաղախ բնակավայրն ու Վանք սրբատեղին:

Ըստ էության Սարինշենը Շաղախի մի թաղամասն էր: Վերոհիշյալ բնակավայրի մասին հիշատակված է նաև Շախկախի եկեղեցու 1673 թ. արձանագրության մեջ, որտեղ գյուղը ներկայացված է Շախկախ անվամբ:

Շաղախ գյուղի վերաբերյալ Մակար Բարխուդարյանցը ժամանակին մի ավանդազրույց է գրի առել, ըստ որի՝ «Սուրբ Շաղախն նահատակուելու ժամանակ փախչում է, բայց փախչելիս՝ անօրէններն կտրում են մի ձեռն, որ մնում է այստեղ, յետոյ կտրուած ձեռնին վերայ շինում են մատուռ: Բայց որովհետև արնաշաղախ է լինում նահատակուելիս, այս պատճառաւ կոչւում է Շաղախ՝ շաղախուած արիւնով»[553]:

1797–1798 թվականներին Արցախում տարածվում են սովն ու մահտարժամը: Հազարավոր մարդիկ համաճարակի զոհ են դառնում: Դրանից չեն փրկվում նաև Շաղախի բնակիչները: Կենդանի մնացածներն էլ հեռանում են Արաքսի մյուս ափը և հաստատվում Ղարադաղում:

Արցախը Ռուսաստանին անցնելուց հետո երկրամասում ստեղծված համեմատաբար բարվոք վիճակը Ղարադաղում ծվարած Դիզակի գյուղացիությանը դրդում է վերադառնալ հարազատ վայրեր: Շաղախի նախկին բնակիչները հիմնավորվում են ներկայիս Սարինշենում:

19–րդ դարում գյուղում կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցին:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1930 թ., գյուղում կոլտնտեսություն է կազմակերպվել: Խոշորացման տարիներին այն միավորվել է Ծամձորի կոլտնտեսության հետ:

Ներկայումս Սարինշենում գործում են մի քանի մասնավոր տնտեսություններ:

Գյուղի երիտասարդները մասնակցել են Հայրենական մեծ պատերազմին:

Արցախյան ազատագրական շարժման առաջին փուլում գյուղում ինքնապաշտպանական ջոկատ է ստեղծվել, որը 1991–1994 թվականների ռազմական գործողությունների ժամանակ մասնակցել է ինչպես պաշտպանական, այնպես էլ հարձակողական նշանակության մարտերին:

Սարինշենում 1873 թ. բացվել էր եկեղեցական–ծխական դպրոց: Ցարական իշխանությունների ձնշումների տակ դպրոցը 1885 և 1896 թվականներին փակվել էր, այնուհետև վերաբացվել 1908: Ուներ մեկ բաժանմունք, 46 աշակերտ: Ուսուցիչն էր Գրիգորիս Տեր Գրիգորյանը: Դպրոցը գործել է մինչև 1915 թ.[554]:

Խորհրդային տարիներին Սարինշենը ուներ տարրական դպրոց: Աշակերտների թվաքանակի կրճատման պատճառով դպրոցը փակվել էր:

[553] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 193:
[554] Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Արցախ կրթական համակարգը, հ. 1, էջ 377:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են: Սարինշենը ընդգրկված է Ծակուռի համայնքի կազմի մեջ:

Սարինշենում 1890-ական թվականներին կար 70 տուն, 505 բնակիչ, 1987 թ.՝ 14 տուն, 38 բնակիչ[555], 2010 թ.՝ 10 տուն, 14 բնակիչ[556], 2018 թ.՝ 6 տուն, 12 բնակիչ[557]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՀԱՐԹԱՇԵՆ

Գտնվում է ԱՀ հարավ-արևելյան հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում՝ Արփասարի գեղատեսիլ լանջին: Նախկինում գյուղը անվանվել է Կհոլ, ավելի շատ Ըխեցիք,[558] իսկ խորհրդային տարիներին՝ Հախուլլու[559]:

Հարթաշենը Արցախի հնագույն բնակավայրերից մեկն է: Գյուղի տարեցների մոտ զրույցներ է պահպանվել, ըստ որի՝ արաբական ժամանակներից (7-9-րդ դարեր) սկսած, բնակչությունը պաշտպանական նկատառումներից ելնելով՝ գետնափոր (կհոլ) տներում են ապրել: Նույն նկատառումներից ելնելով՝ տվյալ գերդաստանի բոլոր ընտանիքների գետնափոր տների միջև անցուղիներով ներքին կապ է եղել: 18-րդ դարի վերջերից սկսած՝ Հարթաշենի բնակիչները սկսել են կառուցել մեկ և երկու հարկանի շենքեր:

Գյուղի գերեզմանոցում պահպանվել է եկեղեցու հիմքեր, որի կառուցման ժամանակաշրջանը անհայտ է: Բնակիչները պատմում են, որ թշնամիների հարձակումների ժամանակ եկեղեցում եղած թանկարժեք իրերը պահվել են գետնափոր տներում:

19-րդ դարի վերջերին Հարթաշենում կար 20 տուն, 115 բնակիչ:

1930 թ. գյուղում ստեղծվել է կոլտնտեսություն, որն իր գործունեությունը ծավալել է մինչև 1998 թ. հողերի մասնավորեցումը:

Գյուղից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 35 հոգի, որից 17-ը զոհվել է: Նրանց հիշատակին հուշարձան է կառուցվել:

Արցախյան շարժման տարիներին գյուղում կազմավորվել էր ինքնապաշտպանական ջոկատ, որի մարտիկները Արցախի տարբեր շրջաններում մասնակցել են ռազմական գործողություններին:

Այս փոքրիկ գյուղից զինվորագրվել է 18 հոգի: Նրանցից 4-ը զոհվել է, 5 հոգի համարվում է անհայտ կորած:

[555] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 273:
[556] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[557] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:
[558] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 102; ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 3, թ. 72:
[559] «Советское краеведение», № 10, 1936, с. 1.

20-րդ դարի սկզբներին Հարթաշենում բացվել էր երկդասյա դպրոց, որտեղ պարապմունքները տարվում էին ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն լեզուներով: Հայկական բաժնում դասավանդում էր Պետրոս Վարժապետյանը, իսկ ռուսական բաժնում՝ ազգությամբ վրացի ուսուցիչ:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ դպրոցը դադարեցրեց իր գործունեությունը:

Խորհրդային տարիներին գյուղում գործում էր սկզբում տարրական, այնուհետև՝ ութամյա դպրոց: Ներկայումս գյուղի 6 աշակերտները սովորում են Ուխտաձորի դպրոցում:

Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կոլյա Միրզոյանը ծննդով Հարթաշենից է:

Գյուղի աղբյուրներն են՝ Դաշպուլաղ, Հեռե, Չինարի, Տյոտուն, Դավութ, Հարթեն:

Հարթաշենի հանդամասերն են՝ Չինոտին տակ, Կարաս աղբյուր, Հեռու աղբյուր:

Գյուղում շարունակում են ապրել Խաչունց (Խաչյաններ), Բալլարանց (Բալայաններ), Արզումանանց (Արզումանյաններ), Հասալարանց (Հասանյաններ), Խաչալարանց (Բաղդասարյաններ) ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազիֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Հարթաշենում գործում են գյուղապետարան, բուժկետ, հանդիսությունների սրահ:

1987 թ. գյուղում կար 178 տուն, 585 բնակիչ[560], 2019 թ. 27 տուն, 83 բնակիչ[561]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՀԱԿԱԿՈՒ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում՝ Վնեսա սարի լեռնաճյուղերի միջև գտնվող ձորի հարթավայրային մասում: Բնակավայրը շրջապատված է Ղուշա քար, Հաչա քար, Նոր խաչ, Քաչալ խութ, Դերին սրո սարերով և Մեծ շլորուն խութ, Կուճի շլորուն խութ, Սուրան, Գյուղատեղ, Բուլբուդա խութ անտառներով:

Գյուղի մոտակայքով հոսում է Աղրուղեն գետակը, որն ունի գեղատեսիլ ջրվեժներ՝ Ցերե շոշոանը, Ներքե շոշոանը:

Բնակավայրը գոյություն ունի առնվազն 16-րդ դարից: Դրա մասին է վկայում նաև գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցու շինարարական արձանագրությունը, ըստ որի եկեղեցու կառուցումը ավարտվել է 1621 թ.:

[560] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 265:
[561] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

Տեղանունների բառարանում գյուղը ներկայացված է նաև Գագաղի անունով,[562] որոշ աղբյուրներում էլ՝ Հկակուշեն կամ Հակակ[563]:

19-րդ դարի վերջերին գյուղում կար 25 տուն, 151 մարդ[564]:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1929 թ., գյուղում կոլտնտեսությունն է կազմավորվել: Հետագայում տնտեսությունը ընդգրկվել է Տողի սովխոզի կազմի մեջ:

Տարբեր տարիների Հակակուի տնտեսությունը ղեկավարել են Արշակ Հակոբյանը, Ռաֆայել Բաբայանը, Աղալում Գրիգորյանը:

1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվեցին մենատնտեսություններ:

Գյուղից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 47 մարդ, որից 24-ը զոհվել է: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել: Արցախյան ազատագրական պատերազմին գյուղից մասնակցել է 38 հոգի: Վեց ազատամարտիկներ՝ Գրիգոր Գրիգորյանը, Ռոմա Ավանեսյանը, Լևոն Բախշյանը, Վաչիկ Հարությունյանը, Գագիկ և Ղարիբ Գրիգորյանները զոհվել են, իսկ Էդիկ Մելքումյանը համարվում է անհայտ կորած:

Դպրոցի տնօրեն, մաթեմատիկայի ուսուցիչ Սլավիկ Բախշյանը արժանացել է ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի:

19-րդ դարի վերջերին գյուղում գործել է ծխական եկեղեցական մեկդասյա դպրոց:

Խորհրդային տարիներին Հակակուի դպրոցը յոթամյայի կարգավիճակ ուներ: Աշակերտների թվաքանակի կրճատման պատճառով 1980-ական թվականներին այն դարձավ տարրական, որտեղ սովորում էր 9 աշակերտ, դասավանդում՝ 1 ուսուցիչ:

2002 թ. կրթական հաստատությունը ստացավ հիմնական դպրոցի կարգավիճակ: 2004-2010 թթ. դպրոցում սովորում էր 35-40 աշակերտ, դասավանդում՝ 14 ուսուցիչ: 2018-2019 ուսումնական տարում՝ 29 աշակերտ, 14 ուսուցիչ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Երուշա Սարգսյանը, Շմավոն Բաբայանը, Սերգեյ Դավթյանը, Հայրապետ Սարգսյանը, Մարո Գրիգորյանը, Սեդրակ Ավագյանը, Սլավիկ Բախշյանը, Ն. Հայրյանը:

Ծագումով Հակակու գյուղից է ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Ալեքսանյանը:

Հակակու գյուղում և շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ միջնադարյան գյուղատեղիի և գերեզմանոցի մնացորդներ, Սբ. Աստվածածին եկեղեցին (1621 թ.), Սև խաչ սրբատեղին, Ուտարան մատուռը, խաչքար (17-րդ դար):

[562] Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, էջ 765:
[563] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 197:
[564] Նույն տեղում:

Գյուղի աղբյուրներն են Շենին, Նունիկին, Բախշուն, Հրթամեն, Շոշոանեն, Բուրբուդա խութին, Կյուփանեն ձուր, Ծրվաձուր, Քյուլակեն:

Հակակուի հանդամասերն են՝ Մեծ տափ, Պերակ ձյուր, Եղցու արտ, Ծիր տանձուն տակ, Սորփուն տակ, Կալ, Կյուփան:

Գյուղում շարունակում են ապրել Խնդղանց (Հակոբյաններ), Սհականց (Ավագյաններ), Չալունց (Գրիգորյաններ), Ուտրատրոանց (Բաբայաններ), Դերունց (Հարությունյաններ), Ըղրջանանց (Աղաջանյաններ), Մեժլումաց (Մելքումյաններ, Բախշյաններ), Ավանեսյանների ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրագիծը բացակայում է: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, բուժկետ, դպրոց, առևտրի 1 կետ: Նախկինում գյուղը ակումբ է ունեցել:

Գյուղում 1987 թ. կար 40 տուն, 128 բնակիչ[565], 2018 թ.՝ 34 տուն, 135 բնակիչ[566]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՀԻՆ ԹԱՂԵՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում: Գյուղի թիկունքում է գտնվում Դիզափայտ լեռը:

Հին Թաղերի շրջակայքում է գտնվում Կուրկակալերի, Կուլառի, Առվակի անտառները:

Գյուղի տարածքով հոսող 3 գետակները Հակարիի վտակներն են, որի ջրերը հասնում են Արաքսին:

Հին Թաղերը Արցախի հին բնակավայրերից մեկն է: Գյուղի կազմավորման ստույգ դարաշրջանը այնքան էլ հայտնի չէ: Սակայն հայտնի է, որ ներկայիս բնակավայրի տարածքում կային ութ գյուղեր՝ Ղըլաց ձորի, Թուղուտների, Պուզտուն ձորի, Կուրկուկալերի, Ըրկթավերի, Կոզառի, Սոփուլուի և Հին Թաղերի:

Մոտավորապես 16-րդ դարի վերջերին և 17-րդ դարի սկզբներին, պաշտպանական նկատառումներից ելնելով, վերոհիշյալ գյուղերի բնակիչները հաստատվեցին ներկայիս բնակավայրի տարածքում: Գյուղը կրեց վերոհիշյալ բնակավայրերից մեկի՝ Հին Թաղերի անունը: Գյուղը ուներ նաև Քյոհնա Թաղեր կամ Հին Թաղլար անունը:

Ընտրված աշխարհագրական դիրքը իրապես նշանավոր էր ինչպես Արցախի հարավային սահմանները պաշտպանելու, այնպես էլ գյուղի բնակչության անվտանգությունը ապահովելու տեսանկյունից: Թշնամիները, հատկապես թուրքերը, տարբեր

[565] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 269:
[566] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

դարաշրջաններում բազմիցս փորձել են գրավել Հին Թաղերը, բայց միշտ էլ անհաջողության են մատնվել:

Նման կեցվածքը նպաստել է, որպեսզի տեղաբնակիկներն ունենան ինքնատիպ բնավորություն: Այս տեսանկյունից Եղիշե Իշխանյանը Հին Թաղերում 1918 թ. կատարված մի դեպքի մասին է պատմում: «Հին թաղլարցիների հասկացողութեամբ,- գրել է Եղիշե Իշխանյանը,- գողութիւնը նոյնքան անպատիւ գործ էր, որքան մարդասպանութիւնը: Միջակ ունևոր գիւղացիներից մեկի այծը գողացել էր և իբրև գող կասկածել, միջակ ունևորից ցած, կարելի է ասել չունևոր գիւղացիներից մէկը: Կասկածած գողը ներկայացավ մեզ՝ ասելով. «Մեր գիւղը հիմնելու օրւանից մինչև այսօր, չէ պատահել, որ մէկը մեղադրած լինի, իբրև գող. իզուր տեղը զրպարտում են ինձ, թէ իբր ես եմ գողացել այծը: Ես չեմ ուզում կեղտոտ և զզւելի գող անուն տան ինձ: Դա մեծ ամօթ է, ինչով կուզէք, երդւեմ, որ ես գող չեմ և վստահ եմ, որ գողը մեր գիւղացի չէր: Ես պատրաստ եմ իմ ունեցած այծերից մէկը տալ գողացածի փոխարէն, բայց երբեք յանձն չեմ առնի մի յանցանք, որը ես չեմ գործել: Ես խնդրում եմ, որ խիստ քննութիւն կատարեք»: ... Շատ չանցած, իրողութիւնը պարզւեց: Հարևան Խծաբերդ գիւղում յայտնաբերւեց, թէ ով էր գողը»[567]:

1917–1921 թվականներին Հին Թաղերի ազգաբնակչությունը անզիջում պայքարեց Արցախի ազատության և անկախության համար:

1921 թ. ապրիլի կեսերին կարմիր բանակի դեմ Թևան Ստեփանյանի գլխավորությամբ վերջին դաժան մարտերը ծավալվեցին Հին Թաղերի և Խծաբերդի ուղղությամբ[568]:

1991 թ. մայիսին, երբ «Օղակ» ռազմագործողության ժամանակ ադրբեջանցի օմոնականները խորհրդային զորքերի աջակցությամբ տեղահանեցին Հադրութի շրջանի 15 գյուղերի բնակիչներին, և Դիզափայտի ստորոտում Հին Թաղերը և Խծաբերդը մնացել էին պաշարված վիճակում, ժողովուրդը միահամուռ պայքարեց ու անառիկ պահեց հայրենի օջախը:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1931 թ., գյուղում կազմավորվել է կոլտնտեսություն: Այն ղեկավարել են Եփրեմ Բաբայանը, Սուրեն Այվազյանը, Եղիշե Ալթունյանը, Օհան Գասպարյանը, Ռուբեն Շադյանը, Շահեն Սարդարյանը, Հրանտ Ամիրյանը, Վալերի Ալավերդյանը, Իլիչ Շադյանը: Համեմատության համար նշենք, որ կոլտնտեսության ժամանակ գյուղն ուներ 5000 գլուխ ոչխար, 700 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 300 գլուխ խոզ, 3000 թև թռչուն: Ներկայումս կա 20 գլուխ մանր, 120 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 400 թև թռչուն:

1998 թ. կոլտնտեսության լուծարումից հետո գյուղացիները վարում են իրենց անհատական տնտեսությունները:

[567] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 122:
[568] Բալայան Վ., Դրվագներ..., էջ 145:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 220 մարդ, որից 101-ը զոհվել է: Նրանց հիշատակին կառուցվել է հուշարձան:

Արցախյան շարժման առաջին տարիներին գյուղում Էրիկ Այվազյանի գլխավորությամբ կազմավորվել է «Վրիժառու» ջոկատը, որը պաշտպանության բանակի շարքերում մասնակցել է բազմաթիվ ռազմագործողությունների: Նրանցից 11 ազատամարտիկ զոհվել են:

ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվել են Գրիգոր Շադյանը (հետմահու), Էդիկ Այվազյանը:

19-րդ դարի վերջերին Հին Թաղերում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց: 1927 թ. դպրոցը միջնակարգի կարգավիճակ ուներ: 1928 թ. գյուղում նոր դպրոցական շենք է կառուցվել: 1950-60-ական թվականներին դպրոցում սովորում էր շուրջ 280 աշակերտ: Այստեղ էին սովորում նաև Արևշատի, Խանձաձորի, Խծաբերդի, Պետրոսաշենի, Արփագետիկի, Սպիտակաշենի բարձր դասարանի աշակերտները:

1988-1992 թթ. դպրոցում սովորում էր 122 աշակերտ, 1994-2004 թթ.՝ 28 աշակերտ, դասավանդում էր 12 ուսուցիչ:

2018-2019 ուսումնական տարում Հին Թաղերի հիմնական դպրոցում սովորում էր ընդամենը 8 աշակերտ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Տիգրան Ամիրյանը, Գուրգեն Արզումանյանը, Սմբատ Ալավերդյանը, Գրիշա Շադյանը, Վահան Ալթունյանը, Ալվարդ Բաբայանը, Մեխակ Գասպարյանը, Մարինա Աբաղյանը, Արարատ Աբաղյանը:

Գյուղում և նրա շրջակայքում պահպանվում են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ գյուղամիջյան եկեղեցին (1607 թ.), Սբ. Ամենափրկիչ եկեղեցին, միջնադարյան գյուղատեղիների, գերեզմանոցների մնացորդներ, Կատարո վանքը (17-րդ դար), Սոփուլու տարածքում Հանգած եղցե եկեղեցին, Ղլաց ձոր, Թուղուտնե, Խաչին պռակ, Կուրկակալ, Բալուն նալ, Ըկրթավեր, Կոզառ, Սոփուլու, Սանդին ձոր, Բերդ տեղամասերի միջնադարյան խաչքարերը:

Գյուղի աղբյուրներն են Դերունց ծորին, Թաղուն, Երե թաղեն, Ներքե թաղեն, Շատ, Կիզարեն:

Հին Թաղերի հանդամասերն են՝ Կուլառի, Առվակի աղբյուրի, Քոլերի խութի, Խոր չխուրի, Դեղին լենջի, Բողքի ձորի, Աերոդրոմի, Սուրբեն խութ, Ձլեն հուրթ, Շատաղբյուրների:

Գյուղում շարունակում են ապրել՝ Շադյանների, Աբաղյանների, Ալթունյանների, Այվազյանների, Համբարձումյանների, Ամիրյանների, Սաֆարյանների, Ծատրյանների ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը:

Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, հանդիսությունների սրահ, դպրոց, առևտրի 1 կետ:

Հին Թաղերը 1920 թ. ունեցել է 400 բնակիչ, 1987 թ.՝ 76 տուն, 198 բնակիչ[569], 2018 թ.՝ 35 տուն, 101 բնակիչ[570]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՄԱՐԻԱՄԱՁՈՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավ արևելյան հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Արևսար լեռան ցածրադիր գոգավորություն ունեցող լանջին:

Նվերա գետի վրա 13-րդ դարում կառուցված կամուրջը իրար է միացնում լեռան երկու լանջին փռված թաղամասերը:

Գյուղը շրջապատված է Տիշիղատափ, Ճապկոտ, Արջեն գյուղեն, Բալուն անցը, Շլորուտ անտառներով:

Մարիամաձորը Արցախի հնագույն բնակավայրերից է:

Գյուղում նոր տներ կառուցելիս հայտնաբերվում են կարասային թաղումներ, որոնք Հայաստանում առավել շատ կիրառված է եղել հելենիստական դարաշրջանում:

Գյուղը հայտնի է նաև Մամատաձոր, Մամտաձոր, երբեմն էլ Արփադուզ[571] անուններով:

Մարիամաձոր անունը առավել շատ կապ ունի Մարիամ Աստվածածնի անվան հետ: Գյուղում գոյություն ունի նաև Սբ. Մարիամ աղբյուրը:

1601 թ. բնակավայրում կառուցվել է Սբ. Մարիամ եկեղեցին:

Մարիամաձորի շրջակայքում գտնվող Կաքավավանքի, Նոռեն, Վանեսավանք և Կախան վանքերի կառուցման վերաբերյալ տեղաբնիկների մոտ ավանդազրույց է պահպանվել, ըստ որի 4 եղբայրներ շրջակա լեռներից դիտարկում էին շրջապատը և թշնամիների մոտենալու դեպքում տեղյակ պահում մոտակա գյուղերի բնակիչներին: Վերջիններս էլ հավուր պատշաճի պատսպարվում և հակահարված էին տալիս թշնամուն[572]:

1830-ական թվականներին, երբ ցարական արքունիքը մոլականներով և դուխաբորներով բնակեցնում էր Այսրկովկասի, այդ թվում Արցախի գավառները, նրանցից մի քանի ընտանիքներ հայտնվեցին Մարիամաձորում: Մի քանի տարի հետո նրանք

[569] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 254:
[570] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:
[571] Свод статистических данных о населении Закавказского края, Тифлис, т. IV, Тифлис, 1893.
[572] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

հեռացան Մարիամաձորից[573]: Մարիամաձորի որոշ ազգատոհմեր ծագումով Տեղից և Ղարադաղի հայկական գյուղերից են:

19-րդ դարի վերջերին գյուղում կար 33 ծուխ, 227 ընտանիք[574]:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1926 թ., գյուղում կոմունա է կազմակերպվել, իսկ 1929 թ.՝ կոլտնտեսություն: 1950-ական թվականներին՝ խոշորացման ժամանակ, Մարիամաձորի, Ծակուռիի և Ջրակուսի տնտեսությունները միավորվել են: 1973 թ. Տող, Թաղուտ, Մոխրենես, Հակակու, Մարիամաձոր, Ջրակուս, Ծակուռի գյուղերի կոլտնտեսությունների հիման վրա կազմակերպվել է պետական տնտեսություն:

1989 թ. ապախոշորացումից հետո Մարիամաձորում նորից կազմակերպվել է կոլտնտեսություն, որը գործել է մինչև 1998 թ. հողերի սեփականաշնորհումը:

Տարբեր տարիների Մարիամաձորի տնտեսությունը ղեկավարել են Թարխան Ավանեսյանը, Եղիշե Հայրյանը, Մովսես Դաղայանը, Աղաբեկ Ղազարյանը, Սամսոն Սահակյանը, Աշոտ Ավագյանը, Բենիկ Բաբայանը, Իվան Դաղայանը, Սուրեն Գրիգորյանը:

Գյուղից Հայրենական Մեծ պատերազմին մասնակցել է 122 հոգի, զոհվել է 35-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցված:

Արցախյան պատերազմի տարիներին Մարիամաձորի կամավորական ջոկատը կռվել է ռազմաճակատի տարբեր հատվածներում:

41 ազատամարտիկներից 8-ը զոհվել է: Նրանց հիշատակին հուշարձան է կառուցվել: Նելսոն Սայիյանը հետմահու արժանացել է ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի:

1886 թ. Մարիամաձորում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց: 1896 թ. ցարական հրովարտակով Արցախի դպրոցների հետ միասին փակվել է նաև Մարիամաձորի կրթական հաստատությունը: 1908 թ. բացվել է մեկդասյա երկսեռ դպրոց: Ուսուցիչն էր Արսեն Տեր-Մելիքյանը:

Խորհրդային տարիներին Մարիամաձորում գործել է յոթամյա, այնուհետև ութամյա դպրոց: Այստեղ սովորում էին մինչև 42 աշակերտներ, դասավանդում՝ 12 ուսուցիչ:

1988 թ. դպրոցը միջնակարգ է: 2013-2014 ուսումնական տարում դպրոցում սովորում էր՝ 60 աշակերտ, դասավանդում 18 ուսուցիչ:

2004 թ. դպրոցական շենքը բարերարների միջոցներով հիմնանորոգվել է:

Ներկայումս դպրոցում գործում է նախադպրոցական խումբ, որտեղ ներառված են 12 երեխաներ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել՝ Սամվել Ասրյանը, Բեգլար Մելքումյանը, Համբարձում Մարդանյանը, Միշա Ավագյանը, Կլարա Գրիգորյանը,

[573] Բալայան Վ., Դրվագներ ..., էջ 47:
[574] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 197:

Արտաշես Գրիգորյանը, Ալեքսան Բաղյանը, Հենրիխ Միրզոյանը, Քաջերիկ Ստեփանյանը, Միքայել Խաչատրյանը, Մադլենա Սեյրանյանը:

Ծննդով Մարիամաձորից է գեներալ-մայոր Վերդի Խաչատրյանը:

Գյուղում և նրա շրջակայքում են գտնվում պատմամշակութային նշանակության հետևյալ հուշարձանները՝ Վնեսա Ղալան (9–13-րդ դարեր), Սբ. Մինաս եկեղեցին (1601 թ.), Կավաք վանքը (7–13-րդ դարեր), կամուրջ (1867 թ.), գերեզմանոց (9–19-րդ դարեր), խաչքար (16-րդ դար):

Գյուղի աղբյուրներն են՝ Մարիամ, Սիրանգ, Բալունանց, Օհանդաղունց, Ճուղունց, Ափուն, Շուլորուտեն:

Գյուղի հանդամասերն են՝ Երե բաղ, Մոտե բաղ, Հմամեն տափ, Տկոկոտ, Մանգուն տափ, Եխցուն տակ, Մկիչին խնձորուտ, Մորուն բաղ, Խչենեն արտ, Արջեն գյունե, Բալուն անց, Ռուսեն կամուրջ, Հաչա հղե:

Մարիամաձորում շարունակում են ապրել՝ Մոսունց, Ղրդղոցունց, Ճզունց, Քոչանց, Միրզանց, Հայրանց, Դվութանց, Ղուլանց տոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Մարիամաձորում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, հանդիսությունների սրահ, առևտրի 3 կետ:

Գյուղում 1987 թ. կար 81 տուն, 232 բնակիչ, 2018 թ.՝ 72 տուն, 240 բնակիչ[575]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՄԵԾ ԹԱՂԵՐ

Հադրութի շրջանի ամենամեծ գյուղը Մեծ Թաղերն է: Գյուղը գտնվում է Իշխանագետի վերին հոսանքի ձախ ափին՝ երեք հեղեղատներով մասնատված թեքադիր գոգավորությունում՝ Իշխանասարի հարավահայաց լանջի վրա: Չորս կողմն անտառապատ լեռներ են, թիկունքում՝ Մարխաթունը, աջ թևում՝ Ճոխտ Պովածառը, դիմացը՝ Քթիշը, իսկ ձախ մասում՝ քարեդարյան անձավ՝ Ծծախաչը:

Բնաշխարհագրական միջավայրը հարմարավետ է և մարդը քարե դարի շրջանից ապրել է Արցախի այս գողտրիկ անկյունում: Դրա մասին է խոսում գյուղի հարավարևելյան մասում գտնվող Շմանենք քարանձավը, որտեղ ապրել է նախնադարյան մարդը: Քարանձավը բաղկացած է հերթականությամբ դասավորված անցուղիներով իրար հետ կապված քարայրներից:

1963–1964 թթ. առաջին քարայրի մուտքում կատարվել են պեղումներ, որոնց արդյունքում պարզվել է, որ հնավայրում գոյություն ունեն պալեոլիթի դարաշրջանի 16

[575] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

մշակութային շերտեր[576]: Չնայած լիարժեք չի ուսումնասիրվել, բայց կարելի է ենթադրել, որ Մեծ Թաղերի հարևանությամբ գտնվող Կարան և Ծակ քար քարայրերը նույնպես հնադարյան մարդու բնակատեղիներ են եղել:

Ըստ ավանդության՝ 4-րդ դարի սկզբներին Գրիգոր Լուսավորիչը Ամարաս ավանի եկեղեցու հիմքերը դնելուց հետո շրջել է Վարանդայի գյուղերում և քարոզել քրիստոնեություն: Մի օր՝ իրիկնադեմին, երբ նա հասնում է Մեծ Թաղեր գյուղի արևելյան սահմանը, գիշերում է մի քարայրում և տեղաբնիկների շրջանում քրիստոնեություն տարածում: Նոր հավատ ընդունած բնակիչները ջարդում են գյուղում եղած հեթանոսական կուռքերը: Այդ օրվանից վերոհիշյալ քարայրը դարձել էր սրբավայր և կրել Լուսավորչի քար, Լուսավորչի սորբ, իսկ սարը՝ Լուսավորչի սար անունը[577]:

Հին Թաղերի ներկայիս համայնքի տարածքում վաղ միջնադարում գոյություն է ունեցել Իշխանաշեն, Հանգած եղցե, Մրխաթուն գյուղերը:

10–18-րդ դարերում քոչվոր ցեղերի անընդհատ հարձակումների, սովի, դրան հաջորդած համաճարակային հիվանդությունների պատճառով նշված գյուղերի բնակիչներն արտագաղթել են, իսկ մի մասն էլ հիմնավորվել է Հին Թաղերում: Որոշ տվյալներով այստեղ են հանգրվանել նաև Ղարադաղից, Քարին տակից, Շուշիից, Տիգրանակերտից քիչ հեռավորության վրա գտնվող Ակնայից տեղափոխված հայերը:

Արյունակցական, բարեկամական կապերի սկզբունքով գյուղում ձևավորվում են երեք թաղամասեր: Ղլանց[578], Քաշանց, Շրվանանց գերդաստանները հիմնավորվում են գյուղի արևելյան մասում, Սինամանք, Սիքերանք և Ղրուշանք՝ հյուսիսային, իսկ Բիջանանք, Մկրտչյանք, Աբաղանք՝ արևմտյան թաղամասերում: Ամեն մի թաղամաս ուներ իր թաղապետը:

Գյուղի Կաժ անունը փոխակերպվեց Թաղերի:

Ըստ Լեոյի՝ դա մի խոշոր բնակավայր էր՝ բաժանված անջատված ձորերով, որոնց արանքում եղած թաղամասերը նկատի ունենալով՝ գյուղը կոչել են Թաղեր:

Բայց երբ կառուցվեցին 4 քարաշեն կամուրջներ, հողով, քարով լցվեցին ձորերի առանձին հատվածները: Թաղերն իրար հետ ձուլվեցին, և սկսեց գործածական դառնալ Մեծ Թաղլար անունը[579]:

19-րդ դարի վերջերին այստեղ 500 ընտանիք էր ապրում[580]:

Մեծ Թաղերի հայությունը, Մելիք Ավանյան-Եգանյանների շուրջը համախմբված, արցախահայության ազատության և ինքնավարության համար անզիջում պայքարել է Ղարաբաղի ինքնակոչ խաների՝ մասնավորապես Փանահի և Իբրահիմի դեմ:

[576] Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, էջ 157:

[577] Աբրահամյան Ե., Մեծ Թաղեր, Ստեփանակերտ, 2009, էջ 22:

[578] Ամենայն հավանականությամբ այս գերդաստանը Հին Թաղեր էր տեղափոխվել Շուշիից:

[579] Լեո, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, 1985, էջ 9; Ղ. Ալիշանը Մեծ Թաղերը անվանել է «Գինեթաղք», «գեօղ Հարանդայ», տես՝ Ղ. Ալիշան, Սիսական, էջ 271:

[580] Հայկունի, նշվ. աշխ., էջ 88:

Մյուս կողմից էլ Դիզակի հայությունը ստիպված էր դիմակայել Պարսկաստանի և Թուրքիայի ճնշումներին:

Գտչավանքի վանահայր Առաքել Կոստանդյանը գրել է. «Հայոց ՌՄՋ-1204 (1755) թ. Մամադհասան աղան եկավ և ՌՄԷ-1207 (1758) թ. պինդ կռիվ եղավ Թաղլարի բերդի վրա, որ գտնվում է Դիզափայտի սուրբ տաճարի տակ՝ միապաղաղ՝ միակտոր, պարզ քարի վրա՝ շատ ամուր և անառիկ...»[581]:

1795-1797 թթ. պարսից Մուհամմադ խանի արշավանքներից հետո Արցախը ապրում էր դաժանագույն ժամանակներ: Արշավանքներին հաջորդեցին երաշտը, սովը, հիվանդություններն ու արտագաղթը: Մեծ Թաղերի բնակիչների մի մասը տեղափոխվել է Շամախի գավառը, Ափավուտ, Սաղյան, Դարա-Քարքանդ ու Կիկոսոն գավառի Գանձակ և Գիրկ գյուղերը[582]:

19-րդ դարի կեսերից սկսած, հարևան գյուղերի հետ համեմատած, Մեծ Թաղերի բնակիչները բարեկեցիկ կյանքով էին ապրում:

Գյուղի բնակիչների հիմնական զբաղմունքը եղել են դաշտավարությունն ու բանջարաբուծությունը, անասնապահությունը և արհեստը: Այդ մասին Լեոն գրել է. «Նայելով գյուղի արտաքին տեսքին, բնակիչների կեցությանը, կարելի է ասել, որ Թաղլարը առհասարակ հարուստ գյուղ է: Այստեղ այնքան շատ չեն գետնափոր տները, որոնցից կազմված են լինում առհասարակ հայ գյուղերը, այլ պատահում են լավ շինված նոր ձևի տներ, բնակիչների մասնագիտությունը արհեստագործությունն է: Ձմեռը այդ արհեստով պարապում են համարյա ամենքը և Շուշիում ծախվող ածխի բավական մեծ բաժինը ընկնում է թաղլարեցուց վրա: Ածխագործության արհեստին շատ նպաստավոր է փայտի առատությունը գյուղի շրջակայքում, որ իսկապես զարմանալի է:

Անասնապահությունը բնակչության հիմնական զբաղմունքներից է և թաղլարեցիք հայտնի ջորեպաններ են: Մյուս տնային կենդանիներ քիչ կան»[583]:

Գյուղի զարգացմանը նպաստում էր ճանապարհների խաչմերուկում լինելու հանգամանքը: Արևելքից՝ Ծծախաչ կամ Շմանեք կոչվող քարանձավի առջևով անցնող ճանապարհը Մեծ Թաղերը կապում է Ազոխ, Տող, Գյումուշատու գյուղերի և Կարյագինոյի հետ, հյուսիսից՝ Քար աղբյուրի ճանապարհով, Մեծ Թաղերը շաղկապվում է Շեխերի և Սխտորաշենի հետ, արևմուտքից՝ Խոռնահատի ճանապարհը Մեծ Թաղերը կապում է Թաղավարդ և Ջարդանաշեն գյուղերի ու Շուշիի հետ:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին գյուղի հողերի մեծ մասը պատկանում էր Համբարձում Քալաշյանին:

581 Մատենադարան, ձեռ. 7823, թ. 194:

582 Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 89-90, 104-105; Կարապետյան Ս., Բուն Աղվանքի վիմագրերը, Երևան, 1997, էջ 69:

583 Լեո, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 9:

19-րդ դարի վերջերին Մեծ Թաղերում կար մետաքսի մշակման գործարան: Այն պատկանում էր շուշեցի Աղաջան Մուսլունյանցին[584]:

1897 թ. Մեծ Թաղերում կար 530 ծուխ, 3240 բնակիչ, 1914 թ.՝ 900 ծուխ, 3500 բնակիչ: Խորհրդային տարիներին այդ թվերն անկման միտում ունեին: Օրինակ՝ 1922 թ. Մեծ Թաղերում կար 647 ծուխ, 2620 բնակիչ, 1988 թ.՝ 510 տուն, 1550 բնակիչ[585]:

1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ ռուսական կոզակական գնդերը պատժիչ գործողություններ են իրականացնում Արցախի գյուղերում՝ այդ թվում Մեծ Թաղերում: Գյուղի ազգաբնակչությունը մեծապես տուժում է այդ արհավիրքից:

1920 թ. դեկտեմբերից մինչև 1921 թ. մայիսը Մեծ Թաղերի ազգաբնակչությունը Թևան Ստեփանյանի գինված գնդերում կռվել է բոլշևիկների և թուրքերի դեմ: Ապստամբության ճնշումից հետո ժողովրդական շարժման մասնակիցներին «թևանիստ» պիտակով գնդակահարեցին կամ, լավագույն դեպքում, լցրին բանտերը:

Խորհրդային տարիները նոր պատմաշրջան դարձան Մեծ Թաղերի համար: 1928 թ. ստեղծվեց Մեծ Թաղերի կոմունան: 1930 թ. ստեղծվեց կոլտնտեսություն, որի առաջին նախագահն էր Խաչիկ Գալստյանը, 1933-1935 թթ.՝ Նիկոլայ Ճավակյանը, 1935-1958 թթ.՝ Սմբատ Սարգսյանը: Այդ տարիներին Մեծ Թաղերի բնակչությունը գյուղտնտեսությունից զատ շարունակում է զբաղվել արհեստագործությամբ: Գյուղն ուներ դարբնոց, պայտարանոց, կղմինդրի թրծման ցեխ, ատաղձագործական արհեստանոց:

1962 թ. ստեղծվեց Ա. Խանփերյանցի անվան սերմնաբուծական սովխոզը, իսկ 1964 թ. այն վերակազմավորվեց խաղողագործական սովխոզի: 1965-1972 թթ. սովխոզի դիրեկտորն էր Գրիշա Ասրյանը, 1972-1986 թթ.՝ Սամվել Աբրահամյանը, 1986-1995 թթ.՝ Գուրգեն Հայրյանը:

1978 թ. Մեծ Թաղերում ստեղծվում է գինու սկզբնական վերամշակման կետ:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են Մեծ Թաղերի 540 քաջորդիներ: Նրանցից 283 հոգի զոհվել են: Ջոհվածների հիշատակին գյուղում կառուցվել է հուշարձան:

Մեծ Թաղերի ազգաբնակչությունն ակտիվորեն մասնակցել է արցախյան ազատագրական շարժմանը: Գյուղի երիտասարդները զինվորագրվեցին և դարձան հայրենիքի պաշտպաններ: Մեծ Թաղլարի քաջորդիները աչքի են ընկել ռազմաճակատի տարբեր հատվածներում ընթացող մարտերում: Ազատագրական պայքարին մասնակցած գյուղի 400 ազատամարտիկներից 45-ը զոհվել են: Նրանց հիշատակը վառ պահելու համար գյուղում 2012 թ. կառուցվել է հուշահամալիր:

584 Հայկունի. նշվ. աշխ., էջ 88:

585 Աբրահամյան Ե., նշվ.աշխ., էջ 103:

Արցախի հերոսի բարձր կոչմանն է արժանացել Արթուր Ալեքսանդրի Աղաբեկյանը:

ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի են արժանացել Գրիգոր Շադյանը, Գագիկ Շադյանը, Վահրամ Բաբայանը, Վլադիկ Բաբայանը, Արմեն Ղունյանը, Էդիկ Այվազյանը, Յակով Ալթունյանը:

1840-ական թվականներին Մեծ Թաղերում գործում էր եկեղեցական-ծխական դպրոց՝ 20 աշակերտով: 1868 թ. աշակերտների թիվը հասավ 30-ի: 1876 թ. գյուղում բացվում է մեկդասյա ծխական դպրոց, որն ուներ 1 բաժանմունք, 35 աշակերտ և 1 ուսուցիչ: 1880 թ. բացվում է մեկդասյա երկսեռ դպրոց: Այն ուներ 3 բաժանմունք, 40 աշակերտ, որից 10-ը՝ աղջիկ: Դրանից բացի գյուղում սկսեց գործել Սբ. Մարիամյան օրիորդաց դպրոցը՝ 40 աշակերտով: 1885 թ. ցարական կառավարությունը դպրոցը փակել է: Այն վերաբացվեց մեկ տարի անց:

1888 թ. գյուղում գործում էր Սբ. Սահակյան մեկդասյա ուսումնարանը, որն ուներ 50 աշակերտ: 1896 թ. կրթօջախը փակվում է և նորից վերաբացվում 1906 թ.:

1912 թ. գյուղի դպրոցը 4 սենյականոց մի հողակտուր շենք էր, որտեղ դասավանդում էին Երեմ վարժապետը, Աստղիկ և Վարսիկ վարժուհիները:

1921-1926 թթ. դպրոցի տնօրենն էր Ռուբեն Ղուկասյանը: 1930-1931 թթ. դպրոցին տրամադրվել է Գրիգոր Մարգարյանի եռահարկ տունը: 1930-ական թվականներին դպրոցի տնօրեններ էին Սուրեն Դալլաքյանը, Հայկ Բարխուդարյանը, Հայրապետ Հայրապետյանը, Վարդան Բարխուդարյանը, Խաչիկ Խաչատրյանը:

1937-1938 ուսումնական տարվանից դպրոցը ութամյա էր, իսկ 1939-1940 ուսումնական տարում միջնակարգի կարգավիճակ ստացավ:

1946-2017 թթ. դպրոցի տնօրեններ էին Վանյա Ճավակյանը, Հայասեր Եգանյանը, Լևոն Սանամյանը, Գալյա Բաղասյանը, Ռոզա Ավետիսյանը, Բիոլետա Դանիելյանը:

1980 թ. դպրոցում սովորում էր 360 աշակերտ, 2014-2015 ուսումնական տարում՝ 233 աշակերտ, դասավանդում՝ 26 ուսուցիչ:

Դպրոցի շրջանավարտներից շատերը դարձել են անվանի զորավարներ, գիտության, մշակույթի, առողջապահության, տնտեսության տարբեր բնագավառների լավագույն աշխատողներ: Այդ շարքում իրենց արժանի տեղն ունեն ավիացիայի մարշալ՝ Արմենակ Խանփերյանցը (Սերգեյ Խուդյակով), գեներալ-լեյտենանտ, Արցախի հերոս Արթուր Աղաբեկյանը, գեներալ-մայոր Ալեքսանդր Հուռումյանը, տեխնիկական գիտությունների դոկտոր Ալեքսանդր Ղարուշյանը:

Մեծ Թաղերի տարածքը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, մասնավորապես միջնադարյան Մարխաթուն, Եղցու արտ, Ըշխնեցեք, Իգակուց գյուղատեղիները, Շմանեք կամ Ծծախաչ քարանձավները, հոչակավոր Քթիշ բերդը (9-րդ դար) և Գտչավանքը (13-րդ դար), Հանգած եղցե եկեղեցին (7-րդ դար), Մարխաթուն եկեղեցին (1603 թ.), Ամենափրկիչ եկեղեցին (1846 թ.), Մակուն (1890 թ.), Տող-Տայիսի

(13-14-րդ դարեր), Հալևորի (1835 թ.), միջնադարյան գերեզմանոցներ, 12-16-րդ դարերի խաչքարեր:

Համայնքում հայտնի են Հոռեն, Ծավեն, Շենին, Երե ջուր, Ներքե ջուր, Վրարակն, Ռրքելանց, Նազանու, Թթու ջուր աղբյուրները:

Արթուր Աղաբեկյանի ջանքերով գյուղի կենտրոնում կառուցվել է զբոսայգի: Համայնքն ունի գյուղապետարան, մարշալ Ա. Խանփերյանցի տուն-թանգարանը, հանդիսությունների տուն, բուժկետ, դպրոց, արվեստի դպրոց, «Սոսե» մանկապարտեզ, թեյատուն, փոքր հյուրատուն, գեղեցկության սրահ:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Մեծ Թաղերում 2018 թ. կար 425 տուն և ապրում է 1519 մարդ[586]: Բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՄՈԽՐԵՆԵՍ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում: Բնակավայրի հարավարևելյան մասով է հոսում Իշխանագետի վտակ Քար աղբյուր գետը: Մոխրենեսի թիկունքում է գտնվում Պլանեն քար բարձունքը:

Մոխրենեսը Արցախի հնագույն բնակավայրերից է: Այն գոյություն ունի առնվազն վաղ միջնադարից: Նախկինում գյուղը եղել է Շինատեղ կոչված վայրում:

Որ գյուղը գոյություն ունի վաղ ժամանակներից, դրա մասին է խոսում նաև Մոխրենեսի հարևանությամբ գտնվող 5-6-րդ դարերում կառուցված Օխտը դոնի վանքը: Ավանդությունը պատմում է, որ վանքը կառուցել է զավթիչների դեմ պայքարում զոհված յոթ եղբայրների միակ քույրը:

13-րդ դարի Գտչավանքի շինարարական արձանագրության մեջ խոսվում է նաև Մոխրենես (Մոխրենիս) բնակավայրի մասին:

14-րդ դարում նախկին բնակավայրից ոչ շատ մեծ հեռավորության վրա հիմնվում է Նոր Մոխրենեսը:

1918-1920 թվականներին Մոխրենեսի հայությունը հայրենի երկրի սահմանները պաշտպանել է մուսավաթական Ադրբեջանի ավազակախմբերի ոտնձգություններից:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1929 թ., Մոխրենեսում կազմակերպվել է կոլտնտեսություն: 1975 թ. Տողի, Թաղուտի, Հակակուի, Ծակուռիի, Ջրակուսի, Մարիամաձորի, Մոխրենեսի կոլտնտեսությունները միավորվել են և ստեղծվել է պետական տնտեսություն:

[586] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

Ապախոշորացումից հետո, 1989 թ., նորից կազմակերպվել է Մոխրենեսի կոլտնտեսությունը, որը գործել է մինչև 1998 թ.: Հողերի սեփականաշնորհումից հետո գյուղացիները վարում են իրենց անհատական տնտեսությունները: Տարբեր տարիների Մոխրենեսի տնտեսությունը ղեկավարել են Ալեքսան Պետրոսյանը, Հայկ Գրիգորյանը, Հայկ Բաղդասարյանը, Ժորա Բաղդասարյանը:

Մոխրենեսից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 120 մարդ, նրանցից 62-ը զոհվել է: Գյուղում պատերազմի զոհերի հիշատակը հավերժացնելու համար 1968 թ. հուշարձան է կառուցվել:

Արցախյան ազատագրական պատերազմին գյուղից մասնակցել է 42 հոգի: Ռազմական գործողությունների ժամանակ 8 հոգի զոհվել է: Ազատամարտի նահատակների հիշատակին գյուղում հուշարձան կոթող է կառուցվել:

1894 թ. Մոխրենեսում եկեղեցական-ծխական դպրոց է բացվել, որտեղ սովորում էր 15 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ: 1896 թ. ցարական կառավարության կողմից դպրոցը փակվել է և վերաբացվել 1908 թ.: Ուսուցիչն էր Արև Տեր-Պողոսյանը:

Գյուղում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1926 թ., բացվել է տարրական դպրոց: Այնուհետև այն ստացել է ութամյակի կարգավիճակ:

1960-1970-ական թվականներին դպրոցում սովորում էր 150 աշակերտ, 1989-1990 ուսումնական տարում՝ 26 աշակերտ, դասավանդում 8 ուսուցիչ:

Տարեցտարի աշակերտների թիվը կրճատվում է: 2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր ընդամենը 13 աշակերտ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Միքայել Ավագյանը, Վարդան Բաղդասարյանը, Համբարձում Մարդանյանը, Վիգեն Գրիգորյանը, Էդիկ Ղահրիյանը, Լավրենտ Ստեփանյանը:

Մոխրենեսում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ Օխտը դռնի վանքը (5-6-րդ դարեր), միջնադարյան գյուղատեղիի մնացորդներ, Քարաղբյուր գետի կամուրջը (14-15-րդ դարեր), Սբ. Սարգիս եկեղեցին (1840 թ.) Սուրբ Վանես, Խաչին սրբավայրերը, խաչքար (10-11դդ դարեր):

Գյուղի աղբյուրներն են Ցորցորտ, Երե թաղեն, Ներքե թաղեն, Ակունց, Գայլաձոր, Ղուզե, Քարաղբյուր:

Մոխրենեսի հանդամասերն են Մեծ ու Փոքր զկռատափ, Շլորուտ, Արփալու, Սլդախանց, Մաչի գոմեր, Ծումն արտեր, Կռակլավ:

Մոխրենեսում շարունակում են ապրել Սրաբունց (Ավագյաններ), Դադունց (Պողոսյաններ), Պետունց (Պետրոսյաններ), Ասրունց (Ասրյաններ), Մաքունց (Ստեփանյաններ), Բաբունց (Բաղդասարյաններ), Աղաբաբունց (Աղաբաբյաններ) ազգատոհմերի ներկայացուցիչներ:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, դպրոց, առևտրի 3 կետ: Նախկինում գյուղում կար մանկապարտեզ:

Մոխրենեսում 19-րդ դարի վերջերին կար 40 տուն, 350 բնակիչ[587], 1987 թ.՝ 72 տուն, 311 բնակիչ[588], 2018 թ.՝ 41 տուն, 180 բնակիչ[589]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՆՈՐԱՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նույնանուն շրջկենտրոնից 5 կմ դեպի հարավարևմուտք, նախկին Դիզակ գավառում:

Բնակավայրի սահմանով հոսում է Ընկուզագետը:

Գյուղը գոյություն ունի միջնադարից՝ առնվազն 15-րդ դարից: 1926-1928 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո Ղարադաղից մի քանի ընտանիքներ հաստատվում են Նորաշենում[590]:

1892 թ. կառուցվում է Հին Նորաշեն եկեղեցին:

Խորհրդային տարիներին Նորաշենը նույնպես հայտնվեց ադրբեջանցիների թիրախում: Այստեղ հաստատվում են ադրբեջանցի մի քանի ընտանիքներ: Նրանց թվաքանակը տարեցտարի շատանում էր:

1930 թ. Նորաշենում կազմավորվում է կոլտնտեսություն: Այնուհետև այն ներառվում է Հադրութի սովխոզի կազմի մեջ: Հայրենական մեծ պատերազմում զոհված նորաշենցիների հիշատակին գյուղում հուշակոթող է կառուցվել:

Արցախահայության ազատագրական պատերազմում հաղթանակի կերտման գործում իր ավանդը բերեց նաև Նորաշենի հայությունը:

1991 թ. գյուղը գրավվեց ադրբեջանցիների կողմից: Հայ բնակիչների տները հիմնահատակ կործանվեցին: 1992 թ. ՊԲ առաջին պաշտպանական շրջանի զորամասերը գյուղը ազատագրեցին:

Ռազմական գործողությունների ընթացքում գյուղն ավերվել էր, և այնտեղ անհնարին էր ապրել:

ԱՀ կառավարության որոշմամբ 2001 թ. սկսվեց Նորաշենի վերաբնակեցման գործընթաց: Այդ հարցում մեծ էր սփյուռքահայության աջակցությունը: Առանձնապես տեսանելի է Հայ բարեգործական ընդհանուր միության ջանքերը:

Մերի և Սուրեն Գործունյանների հովանավորությամբ կառուցվել է գյուղի մանկապարտեզը, իսկ Արա Հարությունյանի հովանավորությամբ՝ բուժկետը:

[587] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 200:
[588] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 266:
[589] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:
[590] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 194:

Խորհրդային տարիներին Նորաշենում գործում էր ութամյա դպրոց: 2001 թ.՝ գյուղը վերաբնակեցնելուն զուգահեռ, բացվել է տարրական դպրոց, որտեղ սովորում էր 8 աշակերտ: 2004 թ. դպրոցը դարձել է ութամյա: 2018–2019 ուսումնական տարում դպրոցում կար 23 աշակերտ:

2001 թ. առայսօր դպրոցի տնօրեններ են աշխատել Լուարա Գևորգյանը, Ալյոնա Համզոյանը, Թուշիկ Մելքոնյանը, Մելինե Ղազարյանը:

Գյուղում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ եկեղեցի (1892 թ.), Վելիջան իշխանի բերդը կամ Ցորաբերդը (3–17-րդ դարեր), միջնադարյան գերեզմանոց, խաչքար:

Գյուղի աղբյուրը Քահրիզն է:

Նորաշենի հանդամասերն են՝ Գյուզլակ, Ղրդաղլու, Սուրուջուխ, Կրոզլու:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչության հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց:

Նորաշենում 1987 թ. կար 41 տուն, 90 բնակիչ[591], 2018 թ.՝ 41 տուն, 147 բնակիչ[592]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՊԼԵԹԱՆՑ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հադրութ քաղաքից 8 կմ դեպի հյուսիսարևելք՝ Ղարաբաղյան լեռնաշղթայի արևելյան լեռնաճյուղերի վերջավորության հարթավայրային մասում:

Գյուղը գոյություն ունի առնվազն 16-րդ դարից: Գյուղի տարածքում պահպանվել են 16–18-րդ դարերի գերեզմանոցի մնացորդներ, վերոհիշյալ ժամանակաշրջանից մնացած խաչքարերի բեկորներ:

Պլեթանցում 1651 թ. կառուցվել է Սբ. Ստեփանոս եկեղեցին:

Գրավոր աղբյուրներում Պլեթանցի պատմության վերաբերյալ բազմաբովանդակ տեղեկություններ չեն պահպանվել:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին գյուղը անվանվել է նաև Պլըթան, իսկ խորհրդային տարիներին նաև Բլութան:

Արցախում խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1930 թ., գյուղում կոլտնտեսություն էր կազմակերպվել: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո գյուղի բնակիչները դարձել են մասնավոր տնտեսատերեր:

[591] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 272:

[592] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 90 մարդ, զոհվել է 45-ը: Նրանց հիշատակին հուշարձան է կառուցվել:

Արցախյան ազատագրական պայքարի տարիներին գյուղը ծանր զրկանքների շրջան ապրեց: Հարևան ադրբեջանաբնակ գյուղերի զինյալներին դիմակայելու նպատակով 1989–1990 թվականներին գյուղում ինքնապաշտպանական ջոկատ էր ստեղծվել, որը 1991–1994 թվականների պատերազմի ժամանակ Հադրութի պաշտպանական շրջանի զորամասերի կազմում մասնակցել է ԱՀ պաշտպանության համար մղված մարտերին:

1991 թ. դեկտեմբերի 10-ին Ադրբեջանի զինված ուժերին հաջողվել էր մի քանի ժամով մտնել գյուղ թալանել և հրդեհի մատնել այն: Հադրութից օգնական ուժեր գալուց հետո բնակավայրը նորից ազատագրվել է:

Գյուղի վերաշինման գործընթացը սկսվել է պատերազմի ավարտից հետո, սակայն բնակչության մի մասն այդպես էլ չվերադարձավ հարազատ օջախ:

Խորհրդային տարիներին Պլեթանցում գործում էր ութամյա դպրոց: Վերոհիշյալ դպրոցի շրջանավարտ է ԱրՊՀ ռեկտոր, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմեն Սարգսյանը:

Հետպատերազմյան տարիներին աշակերտների համապատասխան թվաքանակի բացակայության պայմաններում գյուղի դպրոցը փակվել էր:

Համայնքը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Գյուղում կա 2 աղբյուր՝ Շենին և Իսայի:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են: Պլեթանցում գործում են գյուղապետարան և բուժկետ:

Պլեթանցում 1890-ական թվականներին կար 20 տուն, 160 բնակիչ[593], 1987 թ.՝ 46 տուն, 149 բնակիչ[594], 2018 թ.՝ 10 տուն 18 բնակիչ[595]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԾԱՂԿԱՎԱՆՔ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հադրութ քաղաքից 12 կմ դեպի հյուսիսարևելք՝ Ղարաբաղյան լեռնաշղթայի արևելյան լեռնաճյուղերից մեկի արևելահայաց լանջին:

[593] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 196:

[594] Մելքումյան Ս., նշվ. աշխ., Երևան, 1990, էջ 264:

[595] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

Գյուղի վերաբերյալ սկզբնաղբյուրներում տեղեկություններ չեն պահպանվել: Միայն հայտնի է, որ 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին գյուղն անվանվում էր Խարմանջուղ[596], Խիրմանջուղ[597], իսկ խորհրդային տարիներին՝ Խրմանջուղ:

19-րդ դարի սկզբներին Ղարադաղից մի քանի ընտանիքներ հաստատվել են գյուղում:

1830 թ. կառուցվել է Խրմանջուղի Ծաղկավանք եկեղեցին:

Նորօրյա ժամանակներում՝ 1995 թ., գյուղը վերանվանվել է Ծաղկավանք:

Արցախում խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1930 թ., գյուղում կոլտնտեսություն է կազմակերպվել: Այն հետագայում՝ 1950-ական թվականներին, միավորվել է Պլեթանցի կոլտնտեսության հետ: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվել են անհատական տնտեսություններ:

Խորհրդային տարիներին գյուղում տարրական դպրոց էր գործում: Աշակերտների թվաքանակի նվազման պատճառով 1980-ական թվականների սկզբներին դպրոցը փակվել է: Հայրենական Մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 90 մարդ, զոհվել է 45-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Արցախյան ազատագրական պատերազմի տարիներին գյուղը ծանր զրկանքների ժամանակշրջան ապրեց: Հարևան ադրբեջանաբնակ գյուղերի զինյալներին դիմակայելու նպատակով 1989-1990 թվականներին գյուղում ինքնապաշտպանական ջոկատ է ստեղծվել, որը 1991-1994 թվականների պատերազմի ժամանակ Հադրութի պաշտպանական շրջանի զորամասերի կազմում մասնակցել է ԱՀ պաշտպանության համար մղված մարտերին:

1991 թ. դեկտեմբերին Ադրբեջանի զինված ուժերին հաջողվել էր մտնել գյուղ, թալանել և հրդեհի մատնել այն: Անցնելով հակագրոհի՝ Արցախի ինքնապաշտպանական ջոկատներին հաջողվել է թշնամուն դուրս քշել գյուղից:

Ծաղկավանքի վերականգնման աշխատանքները մեկնարկել են պատերազմի ավարտից անմիջապես հետո, սակայն բնակչության մի մասն այդպես էլ չվերադարձավ հարազատ օջախ:

Ծաղկավանքը ընդգրկված է Պլեթանց համայնքի կազմի մեջ:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Բնակավայրում է գտնվում Շենին աղբյուրը:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

[596] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 196:

[597] Савин Б., Словарь географических терминов и других слов, формирующих топонимию Ирана, Москва, 1971, с. 201.

Ծաղկավանքում 1890-ական թվականներին կար 40 տուն, 310 բնակիչ[598], 1959 թ.՝ 49 տուն, 200 բնակիչ, 1987 թ.՝ 17 տուն, 46 բնակիչ[599], 2018 թ.՝ 2 տուն, 2 բնակիչ[600]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՋՐԱԿՈՒՍ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում: Բնակավայրի հյուսիսարևմտյան սահմանային գոտով հոսում է Իշխանագետը: Ջրակուսի հարևանությամբ է գտնվում Վղերա քոլ, Դինակեն ծոր, Կաղնուտ, Գազարատեղ անտառները:

Ջրակուսը Արցախի հնագույն բնակավայրերից է: Գյուղը մի քանի անգամ տեղից տեղ է տեղափոխվել, բայց շարունակաբար մնացել է ներկայիս բնակավայրի աշխարհագրական տարածքում:

Վաղ միջնադարում գյուղը գտնվում էր ներկայիս բնակավայրից 2 կմ դեպի հյուսիս-արևելք՝ Խուդուն քար կոչվող բլրի վրա, և անվանվել է Սդեցեք: Անհարմար աշխարհագրական դիրքի պատճառով արդեն միջին միջնադարում բնակիչները տեղափոխվել են ներկայիս բնակավայրից 1 կմ հեռավորությամբ Կյուլին պունին խութ տարածքը:

Ավանդությունը պատմում է, որ գյուղի հիմնական հորդահոս աղբյուրը պատկանում էր Հողեր գյուղում ապրող իշխանին, որը, դաշտերը ոռոգելով, մեծ եկամուտներ էր ստանում: Այդ ամենին նախանձով էր վերաբերվում դաշտավայրում հայտնված վրանաբնակ թուրքերի ցեղապետ բեկը: Վերջինիս հրամանով նրա ցեղակիցները մեծ քանակությամբ թաղիք են լցնում աղբյուրի ակունքը և ջուրը կտրում: Մինչև հիմա աղբյուրի տեղը պահպանվում է և տեղացիները այն անվանում են Քոռ աղբյուր: Այս աղբյուրը ցամաքելուց հետո գյուղի բնակիչները 1500-ական թվականներին որոշում են 1 կմ հարավ-արևմուտք՝ երեք կողմերից շրջապատված անտառաշատ լեռների հովտում՝ սառնորակ աղբյուրների հարևանությամբ հիմնել նոր գյուղ Ջրակուսը[601]:

Տեղացիները իրենց բնակավայրի անվան ծագումնաբանության մի քանի վարկածներ ունեն: Նրանց կարծիքով քանի որ գյուղի շրջակայքում կան սառնորակ աղբյուրներ, բնակիչներն այն անվանել են Ջրակույս: Մեկ այլ դեպքում, քանի որ գյուղը փռված է 12 աղբյուրների արևմտյան կողմում, այն անվանվել է աղբյուրներից կամ ջրից այն կողմ բարբառային արտահայտությամբ ջրի են կուսին (ջրի մյուս կողմին):

Այստեղից էլ Ջրակուս անունը:

[598] Մակար եպս. Բարխուդարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 196:

[599] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 265:

[600] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

[601] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

Որոշ հեղինակներ ենթադրում են, որ Ջրակուս բառացի նշանակում է սուրբ ջուր[602]:

1698 թ. գյուղում կառուցվել է Սբ. Ստեփանոս եկեղեցին: 1935 թ. բոլշևիկների աթեիստական պայքարի շրջանակում քանդվեց նաև Սբ. Ստեփանոս եկեղեցին: Քարը օգտագործեցին կոլտնտեսության պահեստները, ֆերմաները կառուցելու համար: Ներկայումս Ջրակուսի գերեզմանոցում նշմարվում են նախկին եկեղեցու հետքերը:

1917–1920 թվականներին Ջրակուսի երիտասարդները Աղալումի հրամանատարությամբ Արցախի հարավային սահմաններն անառիկ պահելու համար կռվել են թուրքերի դեմ:

Արցախում խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1930 թ., գյուղում կոլտնտեսություն է կազմակերպվել:

Տնտեսությունների խոշորացման քաղաքականության հետևանքով Ջրակուսի, Մարիամաձորի և Ծակուռիի կոլտնտեսությունները միավորվեցին: 1975 թ. Տողի, Թաղուտի, Հակակուի, Մոխրենեսի, Ծակուռիի, Մարիամաձորի և Ջրակուսի տնտեսությունների միավորմամբ այս անգամ կազմակերպվեց միացյալ սովխոզ:

Ապախոշորացումից հետո՝ 1991 թ., Ջրակուսում նորից կազմակերպվեց առանձին կոլտնտեսություն: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո Ջրակուսում ձևավորվեցին անհատական տնտեսություններ:

Տարբեր տարիների Ջրակուսի տնտեսությունը ղեկավարել են Գուրգեն, Ասծատուր, Ենոք, Երվանդ Վարդանյանները, Աղաբեկ Ղազարյանը, Աշոտ Ավագյանը, Հրանտ Դաղայանը, Բենիկ Բաբայանը, Սուրեն Գրիգորյանը, Պետրոս Ղահրյանը, Արտագին Օհանջանյանը, Գեորգի Դավթյանը, Միքայել Հայրապետյանը, Սուրեն Գրիգորյանը, Վիտալի Բաբայանը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Ջրակուսից մասնակցել է 162 մարդ, 74-ը զոհվել է: Գյուղում նրանց հիշատակին հուշարձան է կառուցվել: Արցախյան պատերազմի ժամանակ Ջրակուսից 56 հոգի մասնակցել է ռազմական գործողություններին: Նրանցից 9 հոգի զոհվել է:

19-րդ դարի երկրորդ կեսին Ջրակուսի Սբ. Ստեփանոս եկեղեցուն կից գործել է նախակրթարան: 1894 թ. գյուղում բացվել է եկեղեցական ծխական դպրոց՝ 22 աշակերտով, որտեղ դասավանդում էր 1 ուսուցիչ:

1896 թ. դպրոցը փակվել և 1908 թ. վերաբացվել է: Դպրոցի ուսուցիչն էր Արամ Երիցյանը: 1914 թ. դպրոցում սովորում էր 36 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ[603]:

1952 թ. դպրոցն ուներ ութամյակի, իսկ 2002 թ. սեպտեմբերի 1-ից՝ միջնակարգի կարգավիճակ: 1937 թ. գյուղում կառուցվել է դպրոցական նոր շենք, որը 2004 թ. վերանորոգումներից հետո առայսօր օգտագործվում է: 2017–2018 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 41 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ:

[602] Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 101:
[603] «Նոր դպրոց», հմ.10, 1914:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Մարդի Ամիրջանյանը, Արտաշես Ավագյանը, Նիկոլայ Մելքումյանը, Քաջերիկ Ստեփանյանը, Մելիք Վարդանյանը, Արեգա Սարդարյանը, Կայծեր Հայրապետյանը:

Հետաքրքիր է այն փաստը, որ ծնունդով այս գյուղից են ցարական և խորհրդային բանակի ու ներքին գործերի 13 գնդապետներ Ասրի Իշխանյանը, Աղա Իշխանյանը, Իշխան Իշխանյանը, Գրիշա Միքայելյանը, Թևանտրոս Վարդանյանը, Սերյոժա Վարդանյանը, Լևոն Վարդանյանը, Միքայել Իշխանյանը, Լևոն Ավագյանը, Ստալիկ Ավագյանը:

Գյուղի և նրա շրջակայքի պատմամշակութային հուշարձաններն են Սբ. Ստեփանոս եկեղեցին (1698 թ.), Կավաքավանքը (1742 թ.), Վնեսա ղալա ամրոցը (13-րդ դար), Խաչ աղբյուր, Վերին սուրբ, Նահատակաթումբ սրբատեղիները, գերեզմանոց (16–19-րդ դարեր), խաչքար (12–13-րդ դարեր):

Ջրակուսի աղբյուրներն են Բալբուլաղ, Գյուրջիբուլաղ, Քարի գլխի, Մեծ կամ Ներքին, Գյուլբաղի արտի, Խաչ, Սեյրանաց բաղի, Դհանակի ձորի, Խոզին գյոլի, Շահբուդաղի, Գազարատեղի, Թավարի բաղի, Շենին:

Գյուղի հանդամասերն են՝ Սելավ, Աղվանի գյունե, Մանասի ձոր, Բալուն քոլ, Հրբեդաց չխուր, Թորքաց ձոր, Սանդ քար, Գազարատեղ, Դհանակի ձոր, Յորդատեղ, Վնեսա ղալա, Խոզին գյոլ, Եղանա բարա, Ճռանա խութ, Վղերա քոլ, Նահատակա թումբ, Օրան բաղ, Դրմանա բանդ, Գյուլբաղա արտ, Քոռ աղբյուր:

Ջրակուսում շարունակում են ապրել՝ Իշխանյանների, Վարդանյանների, Միքայելյանների, Նազարյանների ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքի տարածքում գործում են գյուղապետարան, բուժկետ, դպրոց, մարզադաշտ: Ակումբի շենքը վթարային վիճակում է:

Հողեր գյուղը ընդգրկված է Ջրակուս համայնքի մեջ:

19-րդ դարի վերջերին Ջրակուսում կար 37 տուն, 309 բնակիչ[604], 1987 թ. 61 տուն, 176 բնակիչ[605], 2018 թ.՝ 57 տուն, 248 բնակիչ[606]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[604] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 197:
[605] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 273:
[606] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

ՎԱՐԴԱՇԱՏ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է շրջկենտրոնից 3 կմ հյուսիս-արևմուտք՝ երեք կողմերից սարերով շրջափակված մի ձորում:

Գյուղի տարածքում պահպանվել է 16-րդ դարի գյուղատեղի:

Բնակավայրը տարբեր հեղինակների մոտ ներկայացված է Որդաշատ, Վարդնաշատ, Էդիշա անուններով: Ի դեպ, խորհրդային տարիներին ոչ պաշտոնական ձևով ադրբեջանցիները Էդիշա էին անվանում:

Նկատենք, որ երբ 1923 թ. ԼՂԻՄ սահմանները ճշտգրտելու համար Լեռնային Ղարաբաղի, Դաշտային Ղարաբաղի, Քուրդիստանի և ԱԽՍՀ կենտրոնական իշխանություններից խառը մի հանձնաժողով էր ստեղծվել նրանց փաստաթղթերում գյուղը ներկայացված է Որդնաշատ ձևով:[607]

Պահպանված նյութերից և գյուղի տարեց մարդկանց պատմածներից կարելի է ենթադրել, որ բնակավայրը ձևավորվել է 18-րդ դարի սկզբներին: Նախ և առաջ այստեղ հաստատվել են 7 ընտանիքներ. Ցեջունք, Ծատուրանք, տեղափոխվել են Կոռնիձորից, Մանգունք՝ Ցորից, Չուչունք՝ Մեծ Թաղերից:

Շուտով այստեղ են հանգրվանում նաև դաշտային Ղարաբաղի Միլ կամ Բայլական հայկական քաղաքից մի շարք ընտանիքներ: Ընդհանուր առմամբ դեռևս Ք. ա. 1-ին հազարամյակից Կուր և Արաքս գետերի միջև եղած դաշտավայրում կային հարյուրավոր հայկական բնակավայրեր: Մահմեդական քոչվոր ցեղերի ճնշման տակ 17-18-րդ դարերի ընթացքում նրանք տեղափոխվում և հաստատվում են իրենց հայրենակիցների մոտ՝ լեռնային Արցախում: Նրանց մի զգալի մասն էլ հեռանում է օտար երկրներ:

Քիչ չէին նաև կրոնափոխ եղածները, որոնք այդպես էլ անդառնալիորեն դարձան թուրքեր ու քրդեր:

Նման չարագույժ ճակատագրի արժանացան նաև Բայլականի բնակիչները:

19-րդ դարի վերջերին գյուղում կար 50 ծուխ, 285 բնակիչ: 20-րդ դարի 10-ական թվականներին Վարդաշատում հաշվվում էր արդեն 100 ծուխ[608]:

1896 թ. Վարդաշատում կառուցվել է Սբ. Հռիփսիմե եկեղեցին:

Արցախում խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1930 թ., Վարդաշատում կազմակերպվել է կոլտնտեսություն, որի առաջին ղեկավարը դարձել է Եգոր Առուշանյանը: 1998 թ., հողերի սեփականաշնորհումից հետո, գյուղի բնակիչները դարձել են մենատնտեսներ:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 76 մարդ, նրանցից 36-ը զոհվել է:

[607] ԱՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 1, թ. 12; «Советское краеведение», № 10, 1936, с. 1.
[608] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

Արցախյան շարժման առաջին իսկ ամիսներից գյուղի երիտասարդությունը անդամագրվեց կամավորական շարժմանը: Հետագայում նրանք Առաջին պաշտպանական շրջանի զորամասերի շարքերում մասնակցել են տարբեր ռազմագործողությունների: Նրանցից 6 ազատամարտիկներ՝ Յուրի Աբրահամյանը, Ալեքսանդր Բաբայանը, Տիգրան Դավթյանը, Էռնեստ Դավթյանը, Ռոբերտ Մարտիրոսյանը, Վլադիմիր Սահակյանը զոհվել են:

19-րդ դարի վերջերից գյուղի եկեղեցուն կից գործել է եկեղեցական ծխական դպրոց: 1912 թ. Վարդաշատում բացվել է երկսեռ մեկդասյա դպրոց: Ուսուցիչն էր Ասլան վարժապետը:

Խորհրդային տարիներին գյուղն ուներ տարրական դպրոց: 1989 թ. այն ութամյակի, իսկ 2008 թ.՝ հիմնական դպրոցի կարգավիճակ էր ստացել:

2008-2009 ուսումնական տարում դպրոցում կար 16 աշակերտ, 10 ուսուցիչ, 2014-2015 ուսումնական տարում՝ 28 աշակերտ, 16 ուսուցիչ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Կաքավ Հայրապետյանը, Շարմաղ Սադիխյանը, Էլլա Աբրահամյանը, Սիլվա Ավետիսյանը, Բորիս Սարգսյանը, Ալեքսանդր Բաբայանը, Նվարդ Շաղյանը:

1960-ական թվականներին գյուղը մանկապարտեզ է ունեցել:

Ծննդով Վարդաշատից են բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Արշակ Հակոբյանը, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Երվանդ Հայրապետյանը:

Գյուղում և նրա շրջակայքում կան պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ Սբ. Հռիփսիմե եկեղեցին (1896 թ.), միջնադարյան գյուղատեղի և գերեզմանոց:

Գյուղի աղբյուրներն են Օրինած, Մուկնտամեն, Սորբեն, Երե ջուր, Կենտ խաչ, Ճոխտ խաչ, Թառամ:

Վարդաշատի հանդամասերն են Տխտկներ, Չիգալաչալ, Շլորոտ, Կյուտած քար, Ճանոկ, Տոն քար, Սղնախ, Եղցատեղեր, Ուլբուլաղ, Ակնեն ծոր, Վերեկած, Կրավեր, Կակաչ քար:

Գյուղում շարունակում են ապրել Ցեջունց, Ծատուրանց, Մանգունց, Չուչունց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են: Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց:

Վարդաշատում 1987 թ. կար 57 տուն, 130 բնակիչ, 2002 թ.՝ 65 տուն, 185 բնակիչ, 2018 թ.՝ 46 տուն, 151 բնակիչ[609]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[609] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

ՏՈՂ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Տողասարի ստորոտում՝ Իշխանագետի աջ հովտում:

Տողի շրջակայքում են գտնվում Փրխներ, Տախտոց, Գյուլեր, Սռնատուն անտառները:

Տողը Արցախի հնագույն բնակավայրերից է, որի մասին գրավոր աղբյուրներում առաջին անգամ հիշատակված է 2-րդ դարի հեղինակ Պտղոմեոսի 1653 թ. Փարիզում և 1667 թ. Ամստերդամում տպագրված քարտեզներում[610]:

Կարծիք կա, որ Տողի եկեղեցիներից երկուսը կառուցված են հեթանոսական տաճարների հիմքերի վրա:

Դարերի ընթացքում Տողի հայությունը հերոսական պատմության շատ էջեր է գրել: Դրանցից մեկը կապված է 9-րդ դարի կեսերի հակաարաբական շարժումների հետ:

850 թ. Մշո դաշտում արաբական զորքերը Խութեցի Հովնանի և Բագրատունյաց իշխանազունների գլխավորած ապստամբներից խայտառակ պարտություն են կրում: Սպանվում է նաև նրանց հրամանատար Յուսուֆը: Այսօրինակ խայտառակ պարտության վրեժն առնելու համար թուրք զորավար Բուղա Շարաբիի գլխավորությամբ 200 հազարանոց մի զորաբանակ խալիֆը ուղարկեց Հայաստան և Այսրկովկաս:

Բուղան արյան մեջ խեղդեց Սասունը, Վասպուրականը, Ռշտունիքն ու Մոկքը, Արևելյան Վրաստանը Տփղիս մայրաքաղաքով:

Բուղայի արնածարավ բանակի թափը կոտրվեց Դիզակում: Հենվելով իր բերդերի անմատչելիության ու առավելապես իր քաջ զինվորականության վրա, Դիզակի Եսայի Աբու Մուսե իշխանը վճռեց դիմադրություն ցույց տալ Բուղային: Տողի մոտ գտնվող Քթիշ (Գտիչ) ամրոցում հավաքվեց ոչ միայն Եսայի իշխանի զորքը, այլև Տողի և շրջակա գյուղերի հայությունը:

Մեկ տարվա ընթացքում Բուղան 28 անգամ գրոհում է բերդի վրա և ամեն անգամ խայտառակ պարտություն կրելով՝ նահանջում: Ամենից զարմանալին ու հետաքրքիրն այն է, որ բերդի պաշտպանները նման դժոխային պայմաններում Բուղայի կործանած Գտչավանքի փոխարեն կառուցեցին նոր եկեղեցի: Քանի որ սրբավայրի կառուցումն ընթացել է ճակատամարտի թեժ պահին, այդ իսկ պատճառով էլ այն կոչվել է Թեժ անունով:

Նման պայմաններում իր ցեղակիցների գործելակերպին հատուկ՝ Բուղան դիմեց խարդավանքի: Մութավաքիլից Եսայիի համար բերել տվեց մի թուղթ, որով նա հրավիրվում էր Բաղդադ՝ խալիֆի հետ խաղաղության բանակցություններ վարելու: Լեռնեցի ասպետ զորավարը որքան խիզախ ու անպարտ էր, այնքան էլ միամիտ ու հավատավոր էր թշնամու խարդավանքների առաջ: Եսայի իշխանը մեկնեց Բաղդադ ու այլևս չվերադարձավ հայրենիք՝ նահատակվեց բանտում[611]:

[610] Sarkis Boghossian, Armenian iconography, Paris, 1987, p. 22–23.

Անմատչելի բնակավայրի համբավը, ինչպես նաև առևտրական մայրուղիների վրա գտնվելու հանգամանքը նպաստում էր, որ Տողը դառնար միջնադարյան Արցախի Իշխանանիստ կենտրոններից մեկը:

Տող ավանը աննախադեպ վերելք ապրեց մելիք Եգանի կառավարման տարիներին (1716–1744) թթ.: Դիզակի տեր Մելիք Եգանյան-Ավանյանների տիրույթները ձգվում էին Դիզափայտ–Քիրս լեռնագոտուց մինչև Արաքս գետի հովիտները: Մելիքանիստն էր Տող ավանը:

Մելիք Եգանը, պարսից Նադիր շահից խանական տիտղոս ստանալով, գլխավորեց Խամսայի մելիքությունը:

Պատմական բախտորոշ այս ժամանակաշրջանում Մելիք Եգանի նման տաղանդավոր պետական-քաղաքական գործիչը, օգտագործելով Նադիրի հետ ունեցած իր ջերմ հարաբերությունները, հոգում էր ողջ Արևելյան Հայաստանի հոգսերը: Դրա մասին է վկայում Տողի մելիքական ապարանքի ճակատին Մելիք-Եգանի թողած վիմագիրը. «Ես թողեցի ոչ Հայաստանաս եսիր տալու»: Մելիք Եգանի արժանավոր ժառանգորդները դարձան նրա որդիներ Արամը և մելիք Եսային: Վերջինիս թուրքերի դեմ տարած փայլուն հաղթանակների շնորհիվ Նադիրը նրան տվեց «սուլթան» տիտղոսը:

Փաստորեն, 18-րդ դարի կեսերին պատմական բախտորոշ այդ ժամանակահատվածում, Արցախի քաղաքական պետական առաջմղիչ ուժը Գանձասարից և Շուշիից տեղափոխվեց Տող ավան:

18-րդ դարի երկրորդ կեսին Փանահ խանն իր դաշնակցի՝ մելիք Շահնազարի հետ մի քանի անգամ պաշարել է Տող բերդավանը, բայց խայտառակ պարտություն կրելով՝ հետ է նահանջել:

Փանահին հաջորդած Իբրահիմ խանը, չկարողանալով ծնկի բերել Տողի հայությանն ու նրանց առաջնորդ Մելիք Եգանյան-Ավանյաններին, խորամանկ քայլ կատարեց: 1780-ական թվականներին Իբրահիմ խանը կարողացավ կրոնափոխել Մելիք Եգանյան-Ավանյանների մի մասին: Կրոնափոխ եղած Մելիք Վահանին և մելիք Ալանին են անցնում գերդաստանի կալվածքներն ու ողջ ունեցվածքը: Դեռ ավելին՝ Մելիք Եգանյանների տոհմից սերված Մելիք-Ալանյանների ներկայացուցիչները 1905–1906 թվականների հայ-թաթարական ընդհարումների ժամանակ կազմակերպեցին Նախիջևանի և Սյունիքի հայության կոտորածները, իսկ 1918–1920 թվականներին Ադրբեջանի հանրապետության հիմնադիրների շարքում էին՝ դառնալով կառավարության և խորհրդարանի անդամներ:

Եվ այդպես Տողի միասնականությունը ճեղք տվեց: Այստեղ հայտնվեցին նաև մահմեդականներ: Տողի հայությունը, հայրենի գյուղի ճակատագրով մտահոգ, ամեն

[611] Բալայան Վ., Արցախի պատմությունը, էջ 77–78:

կերպ պայքարում էր այդ խորթ երևույթի դեմ: Մահմեդականություն ընդունած Մելիք Եգանյանների ներկայացուցիչները միաժամանակ բնակության վայր ընտրեցին Կարյագինոն:

1916 թ. Տողում կար 300 տուն, որից 30-ը թուրքեր էին: Քանի որ վերջիններս Մելիք-Եգանյան տան մահմեդականացված ճյուղի ներկայացուցիչներն էին, ուստի գյուղի բերրի հողերի մեծ մասը նրանց էր պատկանում[612]:

1813 թ. Գյուլիստանի պայմանագրով Արցախը Ռուսաստանի կազմ անցնելուց հետո՝ 1816 թ., Տողը՝ որպես սեփական կալվածք, անցավ գեներալ Մադաթովին[613]:

1826-1828 թվականների ռուս-պարսկական պատերազմի տարիներին Տողի հայությունը զենքը ձեռքին պաշտպանեց հայրենի գյուղը:

1826 թ. հուլիս-օգոստոսին պարսկական զորքերը Աբաս Միրզայի հրամանատարությամբ, չկարողանալով գրավել Շուշին, հայերից վրեժխնդիր լինելու համար Արցախի տարբեր գավառներում հարձակումներ են գործում անպաշտպան բնակավայրերի վրա, կողոպտում և սպանում մարդկանց: Արյունահեղ մարտեր ծավալվեցին Դիզակում: Ամիր խան սարդարի հրոսակները հասան Տող: Ազգաբնակչությունը ապաստանեց Գտչավանքում: Կանանց և երեխաներին պատսպարելով անտառներում՝ Տողի և հարևան գյուղերի բնակիչները պաշտպանում էին իրենց բնակավայրերը:

Ռուս-պարսկական պատերազմների տարիներին չնայած արցախահայությունը մեծ ծառայություններ էր մատուցել ռուսական զորքերին, այնուամենայնիվ, դա չխանգարեց, որ ցարական կառավարությունը 23 գյուղ նվիրաբերի թաթար Ջաֆար աղա Ջիվանշիրին[614], որը դաժանորեն շահագործում էր հայերին:

1849 թ. Բանազուրի, Տողի և շրջակա հայկական գյուղերի բնակիչները ապստամբում են թաթար կալվածատիրոջ դեմ: Նահանգապետը մեղադրեց ոչ թե Ջաֆար աղային, այլ հայ գյուղացիներին և հոգևորականներին:

Տողի հայերին կառավարելի դարձնելու նպատակով 1830 թ. ցարական արքունիքի որոշմամբ բնակավայրի հարևանությամբ դուխոբորներն ու մոլոկանները հիմնադրում են Շաբա-Կիշլյակ կամ Կրզլ-Կիշլյակ բնակավայրը[615]:

1905-1906 թվականներին՝ հայ-թաթարական ընդհարումների ժամանակ, ցարական իշխանությունները խաղաղարար միջնորդի փոխարեն փորձում են ճնշել հայերի դիմադրական շարժումը:

Դեպքերի ժամանակակիցը գրել է. «Մարդկանց տանջելը տեղ է ունեցել Թաղ, Տող, Ազոխ, Շեխեր, Սոս, Գիւնեյ Ճարտար, Գիւղեսլու և Չարաղ գիւղերում: Մեռել է մեկը...: Առհասարակ կոզակները բոլոր գիւղերում ծեծում էին և դուրս քշում ժողովրդին, որ-

[612] «Փայլակ», հմ. 90, 1 դեկտեմբերի, 1916:
[613] Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 111, գ. 36, վավ. 8, թ.1-3:
[614] Заварян С., Экономические условия Карабага и голод 1905-1907 гг., с. 9.
[615] АКАК, т. X, док. 295, с. 285.

պեսզի ազատորեն օգտեն ուրիշի ստացածքից: ... Ջահաթաղ, Թաղ, Տող, և Ճարտար գիւղերում ոմբակոծեցին տները թնդանոթներով: Դրագունները Տողում հրդեհեցին տները, գոյքը, երկիւղից եղել են երեխաների մահաւան դէպքեր, կանանց վիժումներ, խելագարութիւներ: Բոլոր գիւղերում խլում էին զէնքերը, ամեն մի տնից պահանջում էին 5 ռուբլի տուգանք: Բնակիչները կատարում էին անխօս, չնայելով, որ բոլոր գիւղերում հայ պատուելիները և հոգևորականները ընդառաջ էին գնում աղ ու հացով, պաշտօնեաներ չէին ընդունում: Տողում նույնիսկ հրամայեցին կոզակներին գանակոծել նրանց: Հասարակութիւնը ճաշ էր պատրաստել զորքի և պաշտօնեաների համար, բայց հաշտարար միջնորդ Երմոլաեվը, որ գործի ղեկավարն էր և թշնամաբար էր տրամադրված դէպի հայերը, չընդունեց ճաշը, այլ խնջոյք սարքեցին տեղական Ասլան-Բէգ Մելիք-Ալանովի մոտ, որը Մինքենդ գիւղը աւերող պաշտոնաթող ոստիկանական պրիստաւ յայտնի Սաղըդ-Բէգ Մելիք-Ալանովի եղբայրն է: Ճաշից յետոյ Երմոլաեվի և զօրախմբի գլխաւոր Հաջիեվի ղեկավարութեամբ սկսեցին իրանց գազանութիւնները: Ներս խուժեցին գիւղի ամենայարգի ու համեստ ամենահարուստ վաճառական Յարութիւն Մուսայէլեանի տունը, յափշտակեցին արժեքաւոր գոյքը, ապա հրդեհեցին տունն ու մնացած գոյքը: Ներկայ գտնուող 6 տանուտէրերից մեկը, Բաբա Դովլաթեանցը աղերսում էր թոյլ տալ հանգեցնելու կրակը և այդ բանի համար կոզակները ձգում են նրան բոցերի մեջ»[616]:

Չնայած այդ դժվարություններին Տողի հայությունը, կառչած իր հողին, շարունակում էր զարգացնել հարազատ բնօրրանը:

Գյուղում զարգանում են արհեստի տարբեր ճյուղեր, մասնավորապես՝ գորգագործությունը:

Շուշեցի Տեր-Մկրտչյան եղբայրները Տողում մետաքսաթել պատրաստող գործարան են բացում:

1915 թ. գյուղում հիվանդանոց էր բացվել[617]:

1917-1921 թվականներին Տողի հայությունը պայքարել է Արցախի ազատության և անկախության համար:

Արցախում խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1929 թ., Տողում կոլտնտեսություն է կազմակերպվել: 1975 թ. կազմակերպչական տեսանկյունից կոլտնտեսությունը վերափոխվեց խորհտնտեսության:

Տնտեսությունների ապախոշորացումից հետո՝ 1990 թ., ստեղծվեց Տողի կոլտնտեսությունը: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո Տողում ձևավորվեցին մասնավոր անհատական տնտեսություններ:

Տարբեր տարիներին Տողի տնտեսությունը ղեկավարել են Հովսեփ Հովսեփյանը, Արտաշ Ջախարյանը, Խաչատուր Ավագյանը, Խաչատուր Սարգսյանը, Սիմոն Հայրի-

[616] «Արշալոյս», հմ. 69, 30 մարտի, 1906:
[617] «Փայլակ», հմ. 90, 1 դեկտեմբերի, 1916:

յանը, Սաշա Շաբուրյանը, Վանիչկա Աբրահամյանը, Աթան Ադամյանը, Սիմոն Գրիգորյանը, Ժորա Բաղդասարյանը, Նիկոլայ Պետրոսյանը, Արտաշես Հայրյանը, Պետրոս Ղահրիյանը, Ավան Ստեփանյանը, Արտաշես Օհանջանյանը, Գորգին Դավթյանը, Միշա Հայրապետյանը, Ժորիկ Պողոսյանը, Բորիկ Ջավադյանը:

Հայրենական Մեծ պատերազմին մասնակցել է 644 մարդ, որից 272-ը զոհվել է: Գյուղում նրանց հիշատակին հուշարձան է կառուցվել:

Խորհրդային տարիներին Տողի ուծացած հայերի կողքին հայտնվեցին ադրբեջանցի մի քանի ընտանիքներ: Այդպես ստեղծվեց Տողի ադրբեջանական թաղամասը: Վերահաս աղետից բնակավայրը փրկվեց արցախյան ազատագրական պայքարի շնորհիվ:

Տողի հայությունն իր ավանդը ունեցավ Արցախի ազատագրման և պետականության վերակերտման գործում:

Ի տարբերություն արցախյան մյուս գյուղերի՝ Տողում ինքնապաշտպանական ջոկատը ավելի վաղ ստեղծվեց: 1988 թ. մարտից ջոկատի հրամանատարն էր Վիգեն Գրիգորյանը: Դա հիմնականում կապված էր գյուղի ադրբեջանցիների ագրեսիվ կեցվածքի հետ: 1988 թ. մարտին երկու կողմերի միջև ընդհարում տեղի ունեցավ: Տողում տեղակայվեց Ադրբեջանի ՄՀՆՋ-ի մի գումարտակ: Նրանք էլ 1991 թ. հոկտեմբերի 17-ին սպանել են Դանիելյանների ընտանիքի բոլոր 5 անդամներին՝ չխնայելով անգամ 4 տարեկան երեխայի կյանքը:

Տողի ազատագրումը դարձավ արժանապատվության հարց:

Տողի հարևան բնակավայրերից և Ստեփանակերտից այդտեղ հասած կամավորական ջոկատները Արկադի Տեր-Թադևոսյանի հրամանատարությամբ 1991 թ. հոկտեմբերի 30-ին շեշտակի հարվածով գյուղը մաքրեցին թշնամական ուժերից: Նրանց հետ միասին գյուղից հեռացան նաև ադրբեջանցիները: Տողի ռազմագործողությունը ոգևորիչ և վարակիչ էր նաև մյուս շրջանների համար:

Արցախյան պատերազմի տարիներին գյուղի 25 մարտիկներ նահատակվեցին:

ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի արժանացան Արմեն Գասպարյանը (Արմենչո, հետմահու), Վիգեն Ավետիսյանը: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի և «Մեսրոպ Մաշտոց» շքանշանների արժանացավ հետմահու՝ Վիգեն Գրիգորյանը, ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի՝ Ալեքսանդր Շաբուրյանը, Կառլեն Միքայելյանը և Սամվել Սավադյանը:

1873 թ. Տողում բացվել էր եկեղեցական ծխական դպրոց: Ուսուցիչն էր Սերոբ Տիրացուն: 1886 թ. Տողի դպրոցն ուներ երկու բաժանմունք, 65 աշակերտ, 2 ուսուցիչ: 1896 թ. դպրոցը փակվել է և 1906 թ. վերաբացվել: Ուսուցիչներն էին Ալեքսանդր և Վարդուհի Միրզոյանները: Դպրոցի տեսուչն էր տեր Ավետիսը: Կրթական հաստատությունն ուներ 5 դասարան:

Խորհրդային տարիներին՝ 1938-1939 ուսումնական տարվանից, Տողում գործել է միջնակարգ դպրոց: Կրթական հաստատությունն ուներ 2 բաժանմունք՝ հայկական և ադրբեջանական:

2014-2015 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 120 աշակերտ, դասավանդում 24 ուսուցիչ:

Տարբեր տարիների դպրոցում տնօրեններ են աշխատել Լևոն Մանուչարյանը, Արկադյա Պետրոսյանը, Հայկ Բարխուդարյանը, Գուրգեն Արզումանյանը, Նիկոլայ Պետրոսյանը, Միքայել Ավագյանը, Վլադիկ Ղահրիյանը:

Ծննդով Տող գյուղից են ԽՍՀՄ հերոսներ Արմենակ Հայրիյանը և Վարդան Տոնյանը:

Տողում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ Գտիչ (Քթիշ) բերդը (9-13-րդ դար), Գտչավանքը, (1241-1246 թթ.), Սբ. Ստեփանոս եկեղեցին (1747 թ.), մելիքական ապարանք (1738 թ.), Խաչս Վարդան կամ Ապարանք եկեղեցին (1737 թ.): Ընդհանուր առմամբ այստեղ հաշվառված է շուրջ 97 հուշարձան:

Գյուղի աղբյուրներն են՝ Վերին ջուր, Միջին ջուր, Շոր ջուր, Տահեսի կամ Հովիտ, Քորի ջուր:

Տողի հանդամասերն են Գյուլու բաղ, Գյունջու խութ, Ջապաղ, Ջիիդա տեղ, Թեղուն փոս, Թքեռնուտ, Ժմհարա խութ, Խաչին խութ, Խոտ դարա, Ծիլտա խաչ, Ծկծկոտ, Կաթեգ ձյուր, Կյառռավ, Կյուտած քար, Հաջուն բաղ, Ղզարա դուզ, Ճոխտակ խութ, Պիմպիկարտ, Սալավ, Սրե խութ, Տահիս (Դաղես Խաչեն), Քարքարա բանդ:

Գյուղում շարունակում են ապրել Աբուլանց (Ստեփանյաններ), Վիտիսանց (Ավետիսյաններ), Ղահրունց (Ղահրիյաններ), Հայրունց (Հայրյաններ), Ամիրզանց (Ամիրզյաններ), Բդաղանց (Բաղդասյաններ), Շբուրանց (Շաբուրյաններ), Եգանանց (Եգանյաններ), Թվարանց (Պողոսյաններ), Սահականց (Սահակյաններ), Ջվաղանց (Ջավադյաններ), Պլոզանց (Սարգսյաններ), Կուքանց (Գրիգորյաններ), Բրոսանց (Բալայաններ), Դիլլաքանց (Աթայաններ) տոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ (1903 թ. գյուղում բացվել էր հիվանդանոց), դպրոց, «Տողի արվեստի դպրոց» ՊՈԱԿ, «Սոսե» մանկապարտեզ, հանդիսությունների սրահ: Տողում տեղակայված է «Կատարո» ապրանքանիշով գինու գործարան:

Գյուղում 19-րդ դարի վերջերին կար 280 տուն, 1460 բնակիչ[618], 1987 թ.՝ 396 տուն, 1421 բնակիչ[619], 2018 թ.՝ 192 տուն, 719 բնակիչ[620]:

ՏՈՒՄԻ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Դիզափայտ լեռան ստորոտում՝ Իշխանագետի վտակ Շնաքար գետակի ձախափնյա արևելահայաց բարձրության վրա:

Տումին բնության մի գողտրիկ անկյունում է: Նրա տարածքը զբաղեցնում է Հարոս-Իքակ և Շնաքար-Տումի գետերի ընդարձակ ավազանները, ձգվելով դեպի Դիզափայտի լեռնազանգվածը և Քիրսի ստորոտները:

Տումին Արցախի հնագույն բնակավայրերից է: Ընդհանուր առմամբ պետք է նկատել, որ Ք. ա. 3-1-ին հազարամյակների միջագետքյան արձանագրություններում Հայկական լեռնաշխարհում տեսանելի են Թումի, Տումե անուններով բնակավայրեր:

Բուղայի արնածարավ զորքերը 9-րդ դարի առաջին կեսին հասան մինչև Գտիչ (Քթիշ), Տումի և լեռնաստանի խիզախ հայության կողմից խայտառակ պարտություն կրեցին:

Պատահական չէ, որ 9-11-րդ դարերում Տումին դարձավ Դիզակի իշխանանիստ կենտրոնը:

Տումիի թիկունքում է գտնվում Դիզակի իշխանների գերեզմանոցը, որից քիչ վերև՝ մի առանձնացված սարահարթի վրա, պահպանվում են շինության բեկորներ: Տեղացիները ավանդաբար դրան անվանում են Թագավորի պալատ: Վերոհիշյալ շինությունից քիչ հեռավորության վրա՝ բլրին, գտնվում է ավերված մատուռ և մի տապանաքար՝ թագավորի գերեզմանը: Դա Գագիկ թագավորի գերեզմանոցն է: Թագավորի պալատից հյուսիս՝ ձորում, պահպանվում է սրբատաշ քարերով կառուցված Թագավորի աղբյուրը: Գյուղի հարավային կողմում կանգնած կիսավեր Կարմիր եկեղեցու լուսամուտի կամարին կար արձանագրություն. «Ի ՆԽԹ (1000) թվին Հայոց և թագաւորութեանս տեառն Գագիկա՝ որդու Մուսէի, ես՝ Սոփի դուստր Մուսէի շինեցի տուն Աստուծո[621]»:

Տումիի հայությունը 7-րդ դարից մինչև 19-րդ դարի սկզբները պայքարել են արաբ, սելջուկ, մոնղոլ, կարա կոյունլու, ակ կոյունլու, պարսիկ, թուրք, Հյուսիսային Կովկասի խառնամբոխ նվաճողների դեմ և միշտ էլ իրենց լեռների պես անսասան են

[618] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 198:
[619] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 255:
[620] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:
[621] Բալայան Վ., Արցախի պատմությունը, էջ 86:

մնացել: Դարերի ընթացքում պայքարելը ժողովրդի մեջ վերաճել և դարձել է բնավորություն ու ապրելակերպ:

1826 թ. հուլիսի 26-ին պարսկական բազմահազարանոց զորքը գահաժառանգ Աբաս Միրզայի գլխավորությամբ հասավ Շուշի, բայց չկարողացավ գրավել բերդը:

Հայերին վրեժխնդիր լինելու համար պարսկական զորքերն Արցախի տարբեր գավառներում հարձակումներ են գործել անպաշտպան բնակավայրերի վրա, կողոպտել և սպանել մարդկանց: Արյունահեղ մարտեր ծավալվեցին Դիզակում:

Ամիր խան սարդարի հրոսակախմբերը հասան Տող: Ազգաբնակչությունը ապաստանեց Գտչավանքում: Կանանց և երեխաներին պատսպարելով անտառներում, Տողի և հարևան գյուղերի բնակիչները պաշտպանում էին իրենց բնակավայրերը: Հատկապես աչքի ընկան Տումի գյուղի երիտասարդները, որոնք համարձակ գործողություններով մեծ կորուստներ պատճառեցին թշնամուն: Ժամանակակիցը գրել է «...ամենքն սաստիկ և քաջք և անտառաբնակք որպես վայրենիք»[622]:

1828 թ. մինչև 1905 թ. Տումին ապրում էր համեմատաբար անխռով ժամանակներ: Բնակչությունը զբաղվում էր գյուղատնտեսությամբ և արհեստագործությամբ:

19-րդ դարի վերջերին Տումիում կար 120 տուն, 1033 բնակիչ[623]:

Տումիի հայությունը ծանր ժամանակներ ապրեց նաև 1905-1906 թվականների հայ-թաթարական ընդարումների օրերին:

Ցարական արքունիքը, երկու ժողովուրդներին հաշտեցնելու փոխարեն, իրար դեմ էր լարում և, հայերի դիմադրությունը կոտրելու միտումով՝ օգնում թաթարներին:

1905 թ. մարտին 400 զինվորներից և կազակներից բաղկացած մի զորագունդ, չորս թնդանոթներով, փոխգնդապետ Վիվերնի, գավառապետ Ֆրեյլիխի, սպաներ Բիրկիվլկինի, Հաջինի, հաշտարար միջնորդ Երմոլանի և պրիստավ Ֆիտինի գլխավորությամբ մտավ Վարանդայի և Դիզակի գավառները:

Նրանք ամենադաժան կերպով թալանեցին և ավերեցին Ավետարանոց, Շեխեր, Սարգսաշեն, Թաղավարդ, Թաղլար, Տող, Տումի, Ազոխ, Հաղորտի, Սոս, Գյունե Ճարտար, Ղուզե Ճարտար, Խնուշինակ, Գիշի գյուղերը[624]:

Տումիի հերոսական պատմության հաջորդ էջերը գրվեցին 1917-1921 թվականներին:

1918 թ. հոկտեմբերի 9-ին՝ Մամնայի ճակատամարտի ժամանակ, Ալանիկ Մուրադխանյանին օգնության են հասնում տումեցիների ջոկատը՝ Թևան Ստեփանյանի և Վարանդայի մարտական ուժերը՝ Արտեմ Պետրոսյանի հրամանատարությամբ[625]:

Համագործակցությամբ հայկական ուժերը ջախջախեցին թուրքական էքսպեդիցիոն զորախմբին:

[622] Մատենադարան, ձեռ. 7823, թ. 69:
[623] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 200:
[624] Բալայան Վ., Դրվագներ..., էջ 66:
[625] Իշխանեան Ե., նշվ.աշխ., էջ 267:

Չնայած անհավասար ուժերին՝ տումեցիները Թևան Ստեփանյանի գլխավորությամբ Արցախի փրկության համար կռվեցին խորհրդաթուրքական ուժերի դեմ:

Արցախում խորհրդային կարգեր հաստատելուց հետո նոր իրավիճակ է ստեղծվում:

1929 թ. գյուղում կազմակերպվեց կոլտնտեսություն, որը 1976 թ. վերակազմակերպվեց խորհտնտեսության: Այն ուներ անասնապահական ուղղվածություն: 1995 թ. խորհտնտեսությունը լուծարվեց, և ստեղծվեց գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն՝ ԳԿՏ: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո գյուղացիները սկսեցին վարել իրենց անհատական տնտեսությունները:

Տումիի տնտեսությունը տարբեր տարիների ղեկավարել են Շահնազար Շահնազարյանը, Սաշա Ավագյանը, Սայի Գասպարյանը, Հակոբ Հակոբյանը, Սիմոն Բաբայանը, Կոլյա Պետրոսյանը, Նիկոլայ Խաչատրյանը, Սամվել Աբրահամյանը, Գրիշա Ասրյանը, Շահեն Աբրահամյանը, Հաշիմ Բաղյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 400 մարդ, որոնցից զոհվել է 200 հոգի: Գյուղում նրանց հիշատակին 1967 թ. հուշարձան է կառուցվել: Հուշակոթողի նախագծի հեղինակն է տումեցի երևանաբնակ ճարտարապետ Արմենակ Հակոբյանը:

Արցախյան ազատագրական պատերազմին նորից ընդգծվեց տումեցիների նվիրվածությունը հայրենի եզերքի նկատմամբ:

Մինչև 55 տարեկան 170 տղամարդիկ մասնակցեցին ռազմական գործողություններին: 27 տումեցիներ նահատակվեցին:

ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով հետմահու պարգևատրվել է Մաքսիմ Գրիգորյանը: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի են արժանացել Ռուբիկ Հակոբյանը, Գագիկ Մանվելյանը:

1870-ական թվականներին Տումիում գործել է նախակրթարան: 1882 թ. գյուղում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց, որտեղ սովորում էր 25 աշակերտ, դասավանդում՝ 1 ուսուցիչ: 1896 թ. դպրոցը փակվել է: Այդ տարիներին գյուղի ունևորների երեխաները շարունակել են ուսում ստանալ Գտչավանքի դպրոցում, որտեղ ուսուցչություն էր անում Առաքել վարդապետ Կոստանյանցը:

1908 թ. Տումիի դպրոցը վերաբացվել է: Այն մեկդասյա երկսեռ դպրոց էր, ուներ 2 բաժանմունք, 40 աշակերտ: Ուսուցիչն էր Թադևոս Պետրոսյանը: Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և Շուշիի բարեգործական ընկերության նպաստով[626]:

1920-1921 ուսումնական տարում գյուղում բացվեց տարրական դպրոց: Կրթօջախը 1924-1977 թվականներին գործել է նախկին բեկ Ա. Աթաբեկյանի առանձնատանը: 1943-1944 ուսումնական տարում դպրոց էր հաճախում 469 աշակերտ:

[626] ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, թ. 1-8:

1933-1934 ուսումնական տարվանից դպրոցը յոթնամյա էր: 1977 թ. դպրոցական նոր շենք է կառուցվել, որը հիմնանորոգվել է 2004 թ.:

1994-2004 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 124 աշակերտ, դասավանդում 24 ուսուցիչ, 2018-2019 ուսումնական տարում՝ 113 աշակերտ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Հայրապետ Ղազարյանը, Տիգրան Արտուկչյանը, Գրիշա Սարգսյանը, Սիմոն Գրիգորյանը, Խաչիկ Մայիլյանը, Վոլոդյա Բաղալյանը, Սամսոն Խաչատրյանը, Հայկ Սարգսյանը, Բեգլար Մելքումյանը, Գրիշա Խաչատրյանը, Կոլյա Պետրոսյանը, Սմբատ Աբրահամյանը, Ներսես Աբրահամյանը, Գուրգեն Իսանյանը, Մարդի Ամիրջանյանը, Խորեն Ղազարյանը, Վագիֆ Ամիրջանյանը, Վալերի Ծատրյանը, Լյուդմիլա Ավագյանը, Վահրամ Բաբայանը:

Ծննդով Տումեցի են 20-րդ դարի սկզբների հայ ազատագրական շարժման գործիչ Թևան Ստեփանյանը, գեներալ-մայոր Գրիգոր Գրիգորյանը, արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդական, գեներալ-լեյտենանտ Արմեն Խաչատրյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Աբրահամյանը, բանաստեղծ Բոգդան Ջանյանը, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հենրի Բակունցը, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Հակոբյանը:

Տումիում և նրա շրջակայքում կառուցվել են պատմամշակութային նշանակության բազմաթիվ հուշարձաններ: Դրանց մի մասը ժամանակի ընթացքում ավերվել է, մյուս մասն էլ՝ որպես ժառանգություն, հասել է ներկա սերնդին:

Դրանցից նշանավոր են Գորոզ, Գտիչ (Քթիշ) բերդերը (7-11-րդ դարեր), Կարմիր եկեղեցին (10-րդ դար), Թագավորի պալատը (10-րդ դար), Սբ. Հովհաննես եկեղեցին (17-րդ դար), Սբ. Հովհաննես եկեղեցին (1868 թ.), Բաղինք արքունականք (եղել է Դիզակի իշխանության հանքային ջրերի առողջարանը), Ջրվանես (12-13-րդ դարեր), Իգակուց (12-13-րդ դար), Նադար աղբյուր, Հալևորի (17-րդ դար) կամուրջները, Խտուդռեն, Նահատակ, Գյոջին խաչ, Ստեփանոց, Մոմաքար, Բուք քար, Ունգուճախաչ, Խաչին արտ, Երեգերգեչ, Խաչիխութ, Քմախաչ, Ջինդարա գոմեր, Թագավորի աղբյուրի խաչ, Շլորուն արտ սրբավայրերն ու ուխտատեղիները:

Տումի գյուղի տարածքում պահպանվել են Ղրանց կյումեր, Խտրո խութ, Ստեփնոցեն խութ, Մկրտիչի տեփեր, Կարմիր քարի, Իգակուց կամ Հայկազն, Խաչին արտ միջնադարյան գյուղատեղիները, որոնք գոյություն են ունեցել 5-18-րդ դարերում:

Գյուղի աղբյուրներն են Թաղալ, Օխուն, Քոշին, Անուշ, Շուշու, Վարար, Բդուրեն, Քոսի, Կաթնեգ, Կուրձին չալեն, Համազեն, Ստանուց գոմերի, Ծտոխուց, Մոշաձորի, Գյուլասին, Օղտեն կապեն, Ջար Վանեսի, Թագավորի, Նադար (Նվազ), Սահակ, Գյոլեն, Ակնեն ձորի, Ակութ, Սիսեռ, Ծավ աղբյուրները:

Նշանավոր են Քեֆաձորի և Կարմիր քարի թթու ջրերը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Տումիում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, առևտրի 8 կետ: 1959–1972 թվականներին գյուղում կար 15 մահճակալանոց հիվանդանոց:

Տումիում 1987 թ. կար 286 տուն, 847 բնակիչ, 2018 թ.՝184 տուն, 708 բնակիչ[627]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՈՒԽՏԱՁՈՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում՝ Հադրութ շրջկենտրոնից 10 կմ դեպի հյուսիս–արևելք:

Գյուղի տարածքով հոսում է Ճղացեն ծորին գետակը, որի հոսքը սեզոնային բնույթ ունի և ամռանը հիմնականում չորանում է:

Գյուղի շրջակայքում են գտնվում Հրկանոր, Ցորտաղբյուր, Ըխտածոր, Ուրգունաշ, Սնածավ, Կեզարատեղ, Ռուսեն տնտեղեր անտառները:

Խորհրդային տարիներին գյուղը կրել է նաև Էդիլլու անունը:

Գյուղի կազմավորման ստույգ դարաշրջանը հայտնի չէ: Սակայն 1693 թ. կառուցված Սբ. Աստվածածին եկեղեցին, հին գերեզմանոցում պահպանված 15–րդ դարի թաղումները վկայում են, որ գյուղը գոյություն ունի առնվազն միջին միջնադարից:

19–րդ դարի վերջերին գյուղում կար 60 տուն, 500 բնակիչ[628]:

Խորհրդային իշխանության առաջին տարիներին այստեղ հայտնվեցին թուրք մի քանի ընտանիքներ, որոնք, արագ աճելով, գյուղի հայկական դիմագիծը վտանգի տակ դրեցին:

1931 թ. գյուղում կոլտնտեսություն կազմավորվեց: Այն սկզբում կրում էր «Անաստաս Միկոյան»–ի, այնուհետև՝ «Դրուժբա» անունը:

1975 թ. հարևան գյուղերի կոլտնտեսությունների հիմքերի վրա ձևավորվեց սովխոզ:

Ուխտաձորի տնտեսությունը տարբեր տարիների ղեկավարել են Պավլի Բաբայանը, Լևոն Մանասյանը, Սուրեն Պողոսյանը, Ղուլի Ավագյանը, Աշոտ Կասպարովը, Լևոն Պողոսյանը, Վլադիմիր Նավասարդյանը, Էդիկ Նավասարդյանը, Վլադիկ Հովակիմյանը:

1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո Ուխտաձորի բնակիչները դարձան մենատնտեսներ:

Գյուղի բնակչությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին իր մասնակցությունը բերեց հաղթանակի կերտման գործում: Մարտական գործողություններին

[627] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 2:

[628] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 196:

մասնակցած 160 ուխտաձորցիներից 70–ը զոհվել են: Զոհվածների հիշատակին գյուղում հուշարձան է կանգնեցվել:

Արցախյան ազատամարտի տարիներին Ուխտաձորի հայությունը զենքը ձեռքին պայքարեց երկրամասի ազատության և անկախության համար: Այդ պայքարում 18 հոգի նահատակվել են:

ԱՀ «Մարտական խաչ» 2–րդ աստիճանի շքանշանի է արժանացել Սերգեյ Ավագյանը՝ հետմահու, իսկ Կամո Աղաջանյանը՝ ԱՀ «Մարտական խաչ» 1–ին և 2–րդ աստիճանի շքանշանների:

1873 թ. Ուխտաձորում բացվել է նախակրթարան, որտեղ սովորում էր 12 աշակերտ, դասավանդում՝ 1 ուսուցիչ: 1874–1875 ուսումնական տարում բացվել է եկեղեցական ծխական դպրոց: 1882–1883 ուսումնական տարում բացվել է արական, 1889–1890 ուսումնական տարում՝ իգական դպրոց:

1896 թ. ցարական հրովարտակով Արցախի թեմի դպրոցների փակվելուց հետո, գյուղում դպրոցը շարունակել է գործել գաղտնի: 1908 թ. Ուխտաձորում բացվել է մեկդասյա երկսեռ դպրոց: Ուսուցիչն էր Հայրապետ Ղազարյանը[629]:

Խորհրդային տարիներին գյուղում գործում էր միջնակարգ դպրոց: 1958 թ. և 1985 թ. Ուխտաձորում կառուցվել են դպրոցական նոր շենքեր:

Առավել հարմարավետ պայմաններ ստեղծելու նպատակով ԱՀ կառավարության որոշմամբ 2017 թ. նոր դպրոցական շենք է կառուցվել, որտեղ 2018–2019 ուսումնական տարում սովորում էր 64 աշակերտ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Բուղդան Շադյանը, Շահեն Մարդանյան, Ս. Գյուլուշանյանը, Մարտին Քալաշյանը, Ալեքսանդր Պողոսյանը, Միքայել Խաչիյանը, Արթուր Արզումանյանը:

Ծննդով ուխտաձորցի են ԱՀ առաջին ղեկավար, Գերագույն խորհրդի նախագահ Արթուր Մկրտչյանը, գեներալ–մայոր Կամո Աղաջանյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Միհրան Խաչատրյանը, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վիկտոր Մելքումովը, Սոցիալիստական աշխատանքի հերոսներ՝ Ալեքսանդր Արալյանը, Իլյազ Զալյանը, Մեսրոպ Բաղդասարյանը:

Ուխտաձորի տարածքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ Սբ. Աստվածածին եկեղեցին (1693 թ.), Եղցե, Քմախաչ, Ըխտածոր, Պառավ խաչ, Կավաքավանք սրբատեղիները, գերեզմանոց (17–19–րդ դարեր):

Գյուղի աղբյուրներն են՝ Տուղուցուց տափեր, Խնձորոտուն ծոր, Փոսեն արտ, Մոլլա դարա, Հրսանեն կալատեղ, Ունջանանց կալ, Ըրկաթեն ծոր:

Ուխտաձորում շարունակում են ապրել Նիրբեդանց (Նահապետյաններ), Բոզունց (Զալյաններ, Բոզյաններ), Աղաբեկանց (Աղաբեկյաններ), Մելքումանց (Մելքումյան-

[629] «Նոր դպրոց», հմ. 3, 1907–1908:

ներ, Բեգլարյաններ), Ուջանց, Բաբունց, Ըղջանանց (Խաչատրյաններ) ազգատոհմերի ներկայացուցիչները:

Ուխտաձորը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, ինտերնետ ծառայությունը, անլար հեռախոսակապը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, հանդիսությունների սրահ, դպրոց, Ղարաբաղ տելեկոմի սպասարկման կետ, հրշեջ փրկարարական ծառայության ջոկ, 3 խանութ:

Ուխտաձորում 1987 թ. կար 170 տուն, 490 բնակիչ[630], 2018 թ.՝ 102 տուն, 313 բնակիչ[631]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՔՅՈՒՐԱԹԱՂ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում՝ Արևասարի արևելահայաց լանջի ստորոտում: Գյուղի արևմտյան հատվածը անտառածածկ է:

Վաղ միջնադարից սկսած Արևասարի շրջակայքում գյուղը մի քանի անգամ տեղից տեղ է տեղափոխվել:

16-րդ դարում այդ գյուղերի բնակիչները վերջնականապես հաստատվել են ներկայիս Քյուրաթաղի տարածքում: Գյուղը անվանվեց Քյուրաթաղ: Գյուղից հարավ առայսօր պահպանվում են Հականոր գյուղատեղիի մնացորդները: Տարբեր հեղինակների կողմից փորձեր են եղել գյուղի անվան բացատրությունը ստուգաբանել, այնուամենայնիվ, դրանք մեզ հավատ չեն ներշնչում: Միայն նկատենք, որ գյուղը երբեմն անվանվել է նաև Կիրաթաղ,[632] Հիհքիիրաթաղ,[633] Դուդուկչի[634]:

Գյուղի 1743 թ. կառուցված Սբ. Աստվածածին եկեղեցու վրա փորագրված արձանագրության մեջ բնակավայրը անվանվել է Քյուրաթաղ:

Գյուղի հյուսիսարևմտյան մասում գտնվող Վնեսա սարի վրա գտնվող Վնեսա ղալա բերդը դարեր շարունակ Քյուրաթաղի և հարևան բնակավայրերի անվտանգության ապահովման լավագույն միջոց է հանդիսացել:

Ցարական Ռուսաստանը Այսրկովկասում, այդ թվում Արցախում, ազգային հենարան ստեղծելու նպատակով, 19-րդ դարի 30-ական թվականներին դուխոբորների ու մոլականների հազարավոր ընտանիքներ բնակեցնում է տարածաշրջանում:

[630] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 263:
[631] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:
[632] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 31; Кочарян Г., Нагорный Карабах, с. 48.
[633] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 196:
[634] «Советское краеведение», № 10, л. 936, с. 1.

1830 թ. նման ընտանիքներ հայտնվում են նաև Մարիամաձոր, Դուդուկչի, Կարաբուլաղ, Թալիշ, Գյուլիստան, Վարարակն գյուղերում[635]: Նրանք հետագայում հեռացել են վերոհիշյալ գյուղերից:

19-րդ դարի վերջերին Քյուրաթաղում կար 26 ծուխ, 226 ընտանիք[636]:

Արցախում խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1930 թ., գյուղում կոլտնտեսություն է կազմավորվել: 1950 թ. խոշորացման քաղաքականության արդյունքում այն միավորվել է Ուխտաձորի տնտեսությանը: 1974 թ. կոլտնտեսությունը վերակազմավորվեց սովխոզի: 1988 թ. տնտեսությունների ապախոշորացումից հետո Քյուրաթաղի կոլտնտեսությունը շարունակեց գործել մինչև 1998 թ. հողերի սեփականաշնորհումը:

Տարբեր տարիների կոլտնտեսությունը ղեկավարել են Հարություն Առաքելյանը, Աղալում Ալեքսանյանը, Սուրեն Ամիրջանյանը, Աշոտ Գասպարյանը, Վոլոդյա Նավասարդյանը, Էդիկ Նավասարդյանը:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 112 հոգի, զոհվել՝ 62-ը:

Անօրինակ սխրագործության համար օդաչու Աշոտ Գասպարյանը արժանացել է Խորհրդային միության հերոսի բարձր կոչմանը:

Արցախյան ազատագրական պատերազմի ժամանակ գյուղի երիտասարդությունը՝ շուրջ 60 հոգի, անդամագրվել էր կամավորական շարժմանը: Նրանցից 8 ազատամարտիկներ զոհվել են, իսկ 2 հոգի էլ ճանաչվել են որպես անհայտ կորած:

ՀՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի հետմահու արժանացել է Ռոման Պողոսյանը, ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի՝ հետմահու Ռուսլան Մարտիրոսյանը և Գառնիկ Գասպարյանը:

1886 թ. Քյուրաթաղում գործել է 15 աշակերտներից կազմված նախակրթարան:

1888 թ. գյուղում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց: 1890-ական թվականներին հայկական դպրոցների փակման պայմաններում գյուղում դպրոցը շարունակել է գործել գաղտնի:

1907-1908 ուսումնական տարում բացվել է մեկդասյա երկսեռ դպրոց: Ուսուցիչն էր Վրույր Առաքելյանը:

1927 թ. գյուղում դպրոցական շենք է կառուցվել: Դպրոցը յոթամյայի կարգավիճակ ուներ: Մինչև 1970-ական թվականների կեսերը աշակերտների թիվը տատանվում էր 90-100-ի միջև: Հետագա տարիներին աշակերտների թիվը սկսեց նվազել: 2004-2005 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 32 աշակերտ, դասավանդում՝ 14 ուսուցիչ: 2000 թ. դպրոցը միջնակարգի կարգավիճակ ստացավ: 2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 55 աշակերտ, դասավանդում՝ 23 ուսուցիչ:

[635] Долженко В., К истории образования русских поселений Закавказья (1830-1840 гг.), Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան, միջազգային գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, էջ 316-317:
[636] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 196:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Անդրանիկ Մայիլյանը, Ապրես Առաքելյանը, Մարո Բարությանը, Երեմ Սահակյանը, Խուդան Բաբայանը, Վոլոդյա Նավասարդյանը, Մարգո Դավթյանը, Մարտին Քալաշյանը, Եղիշե Ղալայանը, Արմեն Աբրահամյանը, Ալեքսանդր Շահնազարյանը, Էլզա Գասպարյանը, Արման Պողոսյանը:

Գյուղում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ Վենսա ամրոցը (10–14-րդ դարեր), միջնադարյան գյուղատեղի և գերեզմանոց, Սբ. Աստվածածին եկեղեցին (1743 թ.):

Գյուղի աղբյուրներն են Մեծ, Արտեզյան ջրհոր և Հեռե:

Քյուրաթաղում ապրում են Պողոսյան, Գասպարյան, Շահնազարյան, Պետրոսյան, Նավասարդյան, Մարտիրոսյան, Ալեքսանյան, Բալասանյան, Դանիելյան, Բաբայան, Առաքելյան, Ղալայան, Ղազարյան, Ավետյան, Ալավերդյան, Ավանեսյան, Օհանջանյան, Աղաջանյան ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

2017 թ. Հայաստան համահայկական հիմնադրամի միջոցներով և Արցախի կառավարության համաֆինանսավորմամբ կառուցվել է համայնքային կենտրոն, որտեղ գործում է գյուղապետարան, գրադարան, բուժկետ և հանդիսությունների սրահ: Քյուրաթաղը ունի դպրոց և առևտրի 5 կետ:

1987 թ. գյուղում կար 93 տուն, 248 բնակիչ[637], 2018 թ.՝ 69 տուն, 316 բնակիչ[638]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԿԱՐՄՐԱԿՈՒՃ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում՝ Արևասարի հարավային զառիթափ ստորոտում:

Գյուղը մի շարք հեղինակների մոտ ներկայացված է Կարմրագուճ,[639] Կերմակուճ,[640] Կեմրակուճ[641] անուններով:

Գյուղը կազմավորվել է 12–13-րդ դարերում: Սկզբում այն գտնվում էր ներկա բնակավայրից 400 մ հարավ՝ մի ընդարձակ տեղամասում, որին տեղացիները առայսօր անվանում են Շինատեղ:

[637] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 273:
[638] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:
[639] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 196:
[640] Свод статистических данных о населении Закавказского края, Тифлис, 1893, отдел IV.
[641] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 270:

18-րդ դարի վերջերին և 19-ի սկզբներին բնակիչները տեղափոխվել են Լպատին ծոր կոչվող հատվածը և հիմնադրել այսօրվա Կարմրակուճ գյուղը:

19-րդ դարի երկրորդ կեսին այստեղ հաստատվում են նաև Կապանից մի քանի ընտանիքներ: Ըստ գերդաստանների տեղակայվածության՝ գյուղում ձևավորվում է 3 թաղամաս՝ հին կամ Դերունց թաղամաս, միջին կամ Եխծու թաղամաս և նոր թաղամաս:

15-րդ դարում գյուղում կառուցվում է Սբ. Ամենափրկիչ եկեղեցին: 1844 թ. կույս Մարիամը վերանորոգում է եկեղեցու քանդված կամարաձև դուռը, ինչի մասին փաստող արձանագրությունը առայսօր պահպանվում է: 2013 թ. եկեղեցին վերանորոգվել է:

19-րդ դարի վերջերին գյուղում կար 50 տուն, 468 բնակիչ[642]:

1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Արաքսի ափին տեղակայված ռուսական սահմանապահ գունդը տարածաշրջանից հեռանալու ժամանակ, Արցախի միջկուսակցական բյուրո կառավարության և հրամանատարության միջև կայացած համաձայնությամբ, զենքերի մի մասը թողնում է հայկական կողմին: Հանդիսանալով որպես ապահով վայր՝ զենքերի այդ խմբաքանակը պահեստավորում են Դիզակի գյուղերում, այդ թվում՝ Կարմրակուճում:

Գյուղի երիտասարդությունը 1917–1920 թթ. Արցախի զինված ուժերի շարքերում անզիջում պայքարեցին թուրք-թաթարական և բոլշևիկյան հրոսակախմբերի դեմ:

Կարմրակուճի ջոկատը իրենց հրամանատար Ասլանիկ Մուրադխանյանի հետ փայլեց 1918 թ. հոկտեմբերի 18-ին Մսմնայի ճակատամարտում:

Արցախում խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1931 թ., գյուղում կազմավորվում է «Պրավդա» կոլտնտեսությունը:

1960-ական թվականներին վերոհիշյալ տնտեսությունը ներառվեց Հադրութի սովխոզի կազմի մեջ:

1988 թ.՝ սովխոզի վարչակազմակերպչական իրավասությունները դադարեցնելուց հետո, Կարմրակուճի կոլեկտիվ տնտեսությունը մինչև 1998 թ. հողերի սեփականաշնորհումը շարունակեց իր գործունեությունը:

Տարբեր տարիներին Կարմրակուճի տնտեսությունը ղեկավարել են Վոլոդյա Սաֆարյանը, Ալիկ Դավթյանը:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել են 100-ից ավելի երիտասարդներ, նրանցից 60 հոգի զոհվել են:

Արցախյան ազատագրական պատերազմին իրենց ակտիվ մասնակցությունն են ունեցել գյուղի երիտասարդները: 7 ազատամարտիկներ՝ Գագիկ Պետրոսյանը, Գարիկ Հակոբյանը, Ռաֆիկ Ստեփանյանը, Արտյուշա Սաֆարյանը, Խաչատուր Դավթյանը, Արմեն Սարգսյանը, Անտոն Ջհանյանը իրենց կյանքը զոհաբերել են Արցախի ազատության և պետականության համար:

[642] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 196:

ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով հետմահու պարգևատրվել են Գարիկ Հակոբյանը, Գագիկ Պետրոսյանը, Ռաֆայել Ստեփանյանը, Արտյուշա Սաֆարյանը:

1894–1895 ուսումնական տարում Կարմրակուռում բացվել է 25 աշակերտով եկեղեցական-ծխական դպրոց[643]: 1896 թ. դպրոցը փակվում է և վերաբացվում է 1908–1909 ուսումնական տարում: Այն մեկդասյա երկսեռ էր, ուսուցիչը՝ Հովակիմ Տեր-Միրզոյանն էր: 1917 թ. դպրոցում սովորում էր 52 աշակերտ, դասավանդում՝ 2 ուսուցիչ:

1929 թ. գյուղում դպրոցական շենք է կառուցվում: Խորհրդային տարիներին դպրոցը ութամյայի կարգավիճակ ուներ: 1988–1990 թթ. դպրոցում սովորում էր 52 աշակերտ, դասավանդում՝ 14 ուսուցիչ, 1994–2004 թթ.՝ 18 աշակերտ, 8 ուսուցիչ:

Աշակերտների թվաքանակի կրճատման պատճառով Կարմրակուռի կրթական հաստատությունը դարձել է Թաղասեռի հիմնական դպրոցի մասնաճյուղ, որտեղ 2018–2019 ուսումնական տարում սովորում էր 15 աշակերտ:

Դպրոցի տնօրեններ են աշխատել՝ Ա. Մայիլյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Կարինե Դավթյանը:

Ծագումով Կարմրակուռից էր արցախյան ազատագրական պայքարի ղեկավարներից Իգոր Մուրադյանը:

Գյուղում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ Սբ. Աստվածածին եկեղեցին (15-րդ դար), Վանեսա ղալա ամրոցը (10–14-րդ դարեր), Կարմիր քար սրբավայրը:

Գյուղի աղբյուրներն են՝ Կիրմրակուռ, Մեծ, Մեղր, Կարմիր քար, Աղբաբեն, Արգունաշա:

Կարմրակուռի հանդամասերն են՝ Սզնոտ, Գյոլեն խութ, Սարեն արտ, Արգունաշ, Մանդի քար, Խոնաձաշ:

Գյուղում շարունակում են ապրել Ղազարյանց, Բաղիմունց, Զարգարանց, Դերունց, Սաֆարյանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը:

Կարմրակուռում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, առևտրի 2 կետ:

Գյուղում 1979 թ. կար 65 տուն, 208 բնակիչ, 1987 թ.՝ 54 տուն, 162 բնակիչ[644], 2018 թ.՝ 57 տուն, 165 բնակիչ[645]: Որոշ հաշվարկներով ծագումով Կարմրակուռից 316 ընտանիք ապրում է ՀՀ-ում և ՌԴ-ում:

Կարմրակուռի բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[643] «Նոր դար» թերթ, հմ. 4, 1909:
[644] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 270:
[645] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

ՄԵԽԱԿԱՎԱՆ

Մեխակավանը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Ղարաբաղյան լեռնաշղթայից դեպի հարավ ձգվող լեռնաճյուղերից մեկի ստորոտում՝ Ծամձոր գետակի հովտում: Հեռավորությունն Առաքել գյուղից կազմում է 7 կմ, իսկ Առաջամուղից՝ 4 կմ:

Միջնադարում ներկայիս բնակավայրի տարածքում հայկական գյուղ է եղել, որի անունը մեզ անհայտ է: Կարծիք կա, որ այդ բնակավայրը ունեցել է Կուրախտին անվանումը[646]:

19-րդ դարի գրավոր սկզբնաղբյուրներում բնակավայրը ներկայացված է Ջեբրայիլ կամ Ջաբրայիլ անուններով[647]:

19-րդ դարի վերջերին Մակար Բարխուդարյանը, շրջելով այդ վայրերով, գրել է, որ Ջաբրայիլից ներքև, Երասխի ձախափնյակում կան հայկական գյուղատեղիներ, հանգստարաններ և եկեղեցիների հետքեր: Դրանք հայոց թագավորության գոյության շրջանում շեն բնակավայրեր են եղել, խիտ բնակեցված բազմամարդ գյուղերով, «...իսկ այժմ, գիւղերից շատերն աւերակ են և շատերն՝ մահմեդականաբնակ»[648]:

Արցախը Ռուսաստանին անցնելուց հետո՝ 1890-ական թվականներին, ցարական արքունիքը երկրամասի մի շարք գյուղերում, այդ թվում Ջեբրայիլում, բնակեցնում է մոլականների և դուխոբորների:

19-րդ դարի երկրորդ կեսին Ջեբրայիլում արդեն ապրում էին հայեր, ռուսներ և փոքր թվով թուրքեր: Նույն դարի վերջերին Ջեբրայիլում կային 20 ծուխ հայ բնակիչներ[649]:

1826 թ. պարսկական զորքերը, Արաքսի վրայով հատելով սահմանը, Շուշին գրավելու նպատակով անցել են Ջեբրայիլով[650]:

Խուդափերինի կամուրջներով դեպի Պարսկաստան տանող կարևոր առևտրական ճանապարհի վրա գտնվելով՝ Ջեբրայիլը, ինչպես միջնադարում, այնպես էլ նոր շրջանում, Արցախի համար կարևոր դերակատարություն է ունեցել: Այն գտնվում էր մեծ ճանապարհի վրա: Պատահական չէ, որ այդ բնակավայրը 19-րդ դարում ռուսները մաքսակետ էին դարձրել: Այն սպասարկում էր շուշեցի առևտրականներին: 1878 թ. Ջեբրայիլի մաքսակետը ունեցել է 269 806 ռուբլու մուտք և 105 299 ռուբլու ելք[651]:

19-րդ դարում Ջեբրայիլում զարգացած էր նաև գորգագործությունը[652]: Իրանի հետ սահմանը պահելու նպատակով ռուսները Ջեբրայիլում մշտապես զորք էին պա-

[646] Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 105:
[647] Ներսեսով Միրզա Յուսուֆ, Ճշմարտացի պատմություն, էջ 113; Բալայան Վ., Դրվագներ..., էջ 41:
[648] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 191:
[649] Նույն տեղում:
[650] Բալայան Վ., Շուշի, էջ 155:
[651] «Ազգագրական հանդես», գիրք Բ, էջ 112:
[652] Բալայան Վ., Շուշի, էջ 195:

հում: Այդտեղ էին տեղակայված նաև զինապահեստները: Հարկ է նշել, որ 1917 թ. հոկտեմբերյան պետական հեղաշրջումից հետո, երբ Ռուսաստանում խառնակ իրավիճակ էր, թաթարները այդտեղ գտնվող ռուսական զորքերը զինաթափել էին և սրախողխող արել[653]:

Ջեբրայիլ ավանն ուներ իր փոստը, հեռագրատունը, դատարանը, դպրոցը:

Ջեբրայիլում 1870 թ. բացվել էր արքունական դպրոց, որի սաների մեծ մասը և ուսուցչական ողջ կազմը հայեր էին[654]:

Ջեբրայիլի դպրոցն այնքան մեծ համարում ուներ, որ Գտչավանքի վանահայր Առաքել վարդապետ Կոստանյանը հայ մելիքների պատմության վերաբերյալ իր աշխատությունը վայելչագրելու համար ուղարկել էր վերոհիշյալ բնակավայրի դպրոցի սաներից մեկին[655]:

1867 թ. դեկտեմբերի 9-ի ցարական կառավարության ընդունած օրենքով Այսրկովկասը բաժանվեց 5 նահանգների՝ Քութայիսի, Թիֆլիսի, Երևանի, Ելիզավետպոլի և Բաքվի: Լեռնային Ղարաբաղը հայտնվեց Ելիզավետպոլի նահանգի կազմի մեջ[656]:

Արցախը վարչատարածքային տեսանկյունից բաժանվեց 3 գավառների՝ Ջևանշիրի, Շուշիի և Ջեբրայիլի: Գավառական կենտրոններ դարձան Թարթառը՝ Ջևանշիրի համար, որի մեջ ներառվեցին Գյուլիստանի, Ջրաբերդի նախկին մելիքություններն ամբողջապես և Խաչենի մի մասը, Ջեբրայիլը համանուն գավառի համար, որի կազմում էր Դիզակի տարածքի մի հատվածը: Շուշիի գավառի մեջ ընդգրկվեցին ողջ Վարանդան, Խաչենի և Դիզակի զգալի մասը[657]:

1905–1906 թվականների հայ-թաթարական ընդհարումների տարիներին, Ջեբրայիլի վերջին հայ ընտանիքները թողեցին իրենց հայրենի բնակավայրը:

1923 թ., երբ ճշտվում էին ԼՂԻՄ սահմանները, Ջեբրայիլը դուրս մնաց նորաստեղծ մարզի կազմից: 1930 թ. ձևավորվեց խորհրդային Ադրբեջանի Ջեբրայիլի շրջանը, որի վարչական կենտրոն դարձավ համանուն բնակավայրը: 1950 թ. Ջեբրայիլ գյուղը ստացավ քաղաքատիպ ավանի, իսկ 1980 թ.՝ քաղաքի կարգավիճակ:

1993 թ. օգոստոսի 19-ին մարտական գործողությունները ծավալվեցին Ֆիզուլի-Ջեբրայիլ-Կուբաթլու ռազմագծի երկայնքով: Կասեցնելով հակառակորդի ճնշումները՝ ԱՀ ՊԲ զորամիավորումների շեշտակի հարվածների տակ օգոստոսի 23-ին թշնամին թողեց Ֆիզուլի քաղաքը, օգոստոսի 25-ին՝ Ջեբրայիլ շրջկենտրոնը, իսկ օգոստոսի 31-ին՝ Կուբաթլուն[658]:

[653] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 323:
[654] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 213:
[655] Հայկունի, նշվ. աշխ., էջ 89:
[656] Нагорный Карабах, Историческая справка, с. 16; Товмасян В., Атаджанян В., Нерсесян Ю., Карабахский вопрос: Истоки и сущность в документах и фактах, Степанакерт, 1991, с. 25.
[657] Բալայան Վ., Արցախի պատմությունը, էջ 243:
[658] Բալայան Վ., Դրվագներ…, էջ 323:

Ստանալով մարդկային, նյութական, ռազմատեխնիկական զգալի համալրում՝ 1993 թ. հոկտեմբերի 21–23-ը Ջեբրայիլի, Ֆիզուլու և Կուբաթլուի շրջաններում ադրբեջանական ուժերը հարձակման անցան: ԱՀ ՊԲ-ն ոչ միայն կասեցրեց թշնամու հարձակումը, այլև սրընթաց գրոհով հոկտեմբերի 23-ին մտավ Հորադիզ կայանը: Շրջափակման մեջ հայտնվեցին ոչ միայն ադրբեջանական ցաք ու ցրիվ խմբավորումները, այլ նաև խաղաղ բնակչությունը: Վերջիններիս միջանցք տրվեց, որպեսզի հեռանան ռազմական գործողությունների թատերաբեմից: Հոկտեմբերի 28-ից հայկական ուժերը մեծացրին ճնշումը, և նոյեմբերի 1-ին մտան նաև Ջանգելան շրջկենտրոնը:

Այսպիսով, 1993 թ. աշնանային զորաշարժի ժամանակ Պաշտպանության բանակի կողմից ազատագրվեց դարերի ընթացքում հայ ժողովրդից այս կամ այն ճանապարհով խլված պապենական հողերի մի հատվածը: Իրանի և ԱՀ-ի միջև Արաքսը դարձավ միջպետական սահման:

1994 թ. Ջեբրայիլ քաղաքը դարձավ ԱՀ ՊԲ զորամասերից մեկի տեղակայման վայրը: Բնակատեղին ստացավ Մեխակավան անվանումը՝ ի հիշատակ արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկ Մեխակ Մեխակյանի: Տարիների ընթացքում Մեխակավանում հաստատվեցին ՀՀ և ԱՀ բնակավայրերից վերաբնակիչներ: Մի ժամանակվա հայկական բնակավայրը նորից հայաշունչ դարձավ:

Բնակավայրն ընդգրկված է Առաջամուղ համայնքի կազմում:

Դպրոցական շենքի բացակայության պատճառով Մեխակավանի թվով 80 աշակերտ հաճախում է Առաջամուղի միջնակարգ դպրոց:

2019 թ. պետական միջոցներով սկսել է 56 երեխայի համար նախատեսված մանկապարտեզի շենքի շինարարությունը:

Մեխակավանում առկա են բազմաբնակարան շենքեր և առանձնատներ:

Բնակավայրը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Մեխակավանում 2018 թ. կար 182 ընտանիք, 446 բնակիչ[659], 2019 թ. հուլիսի 1-ի դրությամբ՝ 188 ընտանիք, 469 բնակիչ[660]: Բնակչության մի մասը ծառայում է ԱՀ Պաշտպանության բանակում, մի զգալի մասն էլ զբաղվում է գյուղատնտեսությամբ:

ԱՌԱՋԱՄՈՒՂ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Հադրութի շրջանում՝ Ղարաբաղյան լեռնաշղթայից դեպի հարավի հարթավայր ձգվող լեռնաճյուղերից մեկի վերջ-

[659] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:
[660] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

նամասում՝ Արաքսի ափամերձ տարածքում: Վերոհիշյալ տարածքները վաղ և միջին միջնադարում գտնվում էին Արցախի իշխանական տան՝ Առանշահիկների՝ Դիզակում հաստատված ճյուղի ներկայացուցիչների, իսկ արդեն ուշ միջնադարում՝ համանուն գավառի մելիքների իշխանության ներքո:

15–18-րդ դարերում մահմեդական քոչվոր ցեղերի մշտական ասպատակությունների պայմաններում հարթավայրի հայությունը քաշվում է ավելի ապահով լեռնաստան:

Ներկայիս Առաջամուղի տարածքում 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին հայտնվեցին վրանաբնակ քոչվորներ, որոնք իրենց բազմահազար անասունների հոտերը ամռանը պահում էին Քաշաթաղի ալպյան մարգագետիններում, իսկ ձմռանը հանգրվանում մեղմ կլիմա ունեցող Առաջամուղի տարածքում:

Խորհրդային տարիներին այստեղ ձևավորվել էր թաթարաբնակ (ադրբեջանաբնակ) Դաշ Վեյսալու գյուղը:

1991–1994 թթ. պատերազմի տարիներին գյուղի բնակիչները վերադառնում են Ադրբեջան:

Պատերազմից հետո ԱՀ կառավարությունը որոշում է նոր կյանք տալ նախկին հայկական բնակավայրերին, և 2005 թ. սկսվում է կառուցվել Առաջամուղ գյուղը:

Այստեղ հաստատվում են Ադրբեջանից ինչպես բռնատեղահանված, այնպես և ԱՀ և ՀՀ բնակավայրերից տեղափոխված մի քանի տասնյակ ընտանիքներ:

Առաջամուղի վերաբնակեցմանը առավել կազմակերպված ընթացք ապահովելու նպատակով բնակավայրում լայնածավալ աշխատանքներ սկսեց իրականացնել Թուֆենկյան հիմնադրամը: Վերոնշյալ հիմնադրամի միջոցներով 2007 թ. գյուղում բացվել է Զապել Եսայանի անվան միջնակարգ դպրոցը: Հարկ է նկատել, որ մինչ այդ դպրոցը ֆրանսիահայ բարերար Շարլ Ղազարյանի հովանավորությամբ 2004 թ. գործել էր Առաջամուղի հարևանությամբ գտնվող Արալեռ գինվորական ավանում:

2018–2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 82 աշակերտ, դասավանդում՝ 20 ուսուցիչ: Առաջամուղի դպրոցում սովորում են նաև Արաքսավանի և Մեխակավանի աշակերտները:

Դպրոցի հիմնադիր տնօրենն է Կարինե Մկրտչյանը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը:

Համայնքում գործում են գյուղապետարան, բուժկետ, դպրոց:

Առաջամուղի համայնքի կազմի մեջ ընդգրկված է նաև Արաքսավան գյուղը, որտեղ 2015 թ. կար 12 տնտեսություն, 35 բնակիչ:

Առաջամուղում 2010 թ. ապրում էր 83 մարդ, 2015 թ.՝ 117 մարդ, 2019 թ.՝ 191 մարդ[661]: Նրանցից 20 հոգի մասնակցել են արցախյան ազատագրական պատերազմին:

Առաջամուղի բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԱՐԱՔՍԱՎԱՆ

Արաքսավանը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Արաքսի ձախափնյակում՝ Առաջամուղ գյուղից 11 կմ հեռավորության վրա:

Արաքսավանի տարածքում նախկին բնակավայրի հետքեր տեսանելի չեն:

Ազատագրված տարածքների վերաբնակեցման քաղաքականության շրջանակներում 2015 թ. ԱՀ կառավարությունը Արաքսի անմիջապես ափամերձ տարածքում մեծածավալ ներդրումային ծրագիր է իրագործում: Արդյունքում ձևավորվել է նոր բնակավայր, որը ստացել է Արաքսավան անունը:

Վերաբնակչի կարգավիճակով Արաքսավանում հաստատվել են ՀՀ Վայոց ձորի մարզի և ԱՀ Հադրութի շրջանի բնակավայրերից մի քանի ընտանիքներ:

Գյուղում կառուցվել է գյուղատնտեսական մթերքների վերամշակման գործարան, որը նոր հեռանկարներ է ուրվագծում վերբանակների զբաղվածության հետ կապված հարցերի լուծման ասպարեզում: Արաքսավանի կառուցումը վերջին տարիներին նպաստել է արաքսամերձ հողատարածքների յուրացմանն ու մշակմանը:

Սահմանամերձ գոտիներում եղած բանկավայրերի հզորացումն ու նորերի կառուցումը ԱՀ անվտանգության ապահովման կարևոր բաղադրիչներն են: 2016 թ. ապրիլյան պատերազմը նորից հաստատեց ռազմավարական նշանակության այդ քայլերի կարևորությունը: Անվտանգության գոտի հանդիսացող այդ շղթայի կարևոր օղակներից մեկն էլ Արաքսավանն է:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Արաքսավանում 2018 թ. կար 11 տուն, 28 բնակիչ[662]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[661] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[662] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ԳՈՐԾՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՔԱՐՏԵԶԸ


ՄԱՐՏԱԿԵՐՏ
Մարտակերտի
Մատաղիսի
Մարտակերտ
Ագաբեկյանք
Ներքին Հոտաբաղ
Ծաղկաշեն
Նոր Կարմիրավան
Նոր Հայկաբերդ
Նոր Ազգտան
Նոր Ղազանչի
Հոլոտաշեն
Նոր Մեսրուպան
Ինչիսու
Ղարաբաղ
Ղարաբաղ
Ղարաբաղ

ղեկավարում են՝ Գրիշա Եղիազարյանը, Կարապետ Պետրոսյանը, Արտեմ Սարգսյանը: 1959 թ. կոլտնտեսության վարչության նախագահ է ընտրվում Սամվել Մամունցը: 1964 թ. կոլտնտեսությունը վերածվեց խորհտնտեսության: Տնտեսությունն աննախադեպ վերելք է ապրել: Միայն խաղողի արտադրությամբ նրանք հատում էին 20 000 տոննայի բնագիծը: Միաժամանակ զարգանում են անասնապահությունը, շերամապահությունը, թռչնաբուծությունը, հացահատիկի և բանջարաբոստանային մշակաբույսերի արտադրությունը:

Սոցիալիստական աշխատանքի հերոսներ դարձան Սամվել Մամունցը, Հակոբջան Իզմայիլյանը, Լենա Ջավադյանը: Սամվել Մամունցը միաժամանակ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր էր:

Բնակավայրը օրեցօր զարգանում էր, կառուցվում են նոր թաղամասեր: Քանի որ Մարտակերտ քաղաքը շրջկենտրոն էր և խաչմերուկային ճանապարհների հատման կետում էր գտնվում, զարգացման նոր խթաններ էր ստանում:

19-րդ դարի 90-ական թվականներին այստեղ կար 355 տուն, 3049 բնակիչ, 1959 թ.՝ 1191 տուն, 4492 բնակիչ, 1979 թ.՝ 1594 տուն, 6690 բնակիչ: 1987 թ. Մարտակերտի բնակչությունը կազմել է 8500 մարդ[664]:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ռազմաճակատ են մեկնել 581 մարտակերտցիներ: Նրանցից 290-ը զոհվեցին: 48 մարտակերտցիներ դարձել են սպաներ: Մարտակերտցի Թեմիկ Ավթանդիլյանը արժանացել է Խորհրդային միության հերոսի բարձր կոչմանը: 1975 թ. պատերազմում զոհված մարտակերտցիների հիշատակին կառուցվել է հոյակերտ հուշարձան:

Հետպատերազմյան տարիներին քաղաքի կյանքն օրեցօր սկսեց աշխուժանալ: 1947 թ. ավարտվեց մշակույթի տան կառուցումը: Մշակույթի տանը կից գործում էին թատերական, երգի ու պարի ինքնագործ խմբակներ:

Ինչպես մարզային, հանրապետական, այնպես էլ միութենական մրցություններում աչքի էին ընկնում մարտակերտցի մարզիկները: Քաղաքում գործող հիվանդանոցի համակազմը բժշկական գիտությունների թեկնածու Ու. Բազիյանի գլխավորությամբ սպասարկում էր ողջ շրջանի ազգաբնակչությանը:

Այդ տարիներին Մարտակերտում գործել են երկու դպրոցներ, մանկապարտեզներ, մարզադահլիճ, մարզադաշտ, թանգարան, մանկական և շրջանային գրադարաններ, հանդիսությունների սրահ, մշակույթի տուն, գրախանութ, հացի կոմբինատ, լիմոնադի արտադրամաս, գինու, կաթի գործարաններ, հյուրանոց, սննդի և կենցաղսպասարկման կետեր, փոստ, Ստեփանակերտի մետաքսի կոմբինատի Մարտակերտի մասնաճյուղը:

Արցախահայության ազատագրական պատերազմը շատ բան փոխեց մարտակերտցիների կյանքում: Նրանք նույնպես ներգրավվեցին ազատագրական պայքարի

[664] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 159:

մեջ: Ստեղծվեցին ինքնապաշտպանական ջոկատներ, որոնց գործողությունները համակարգում էր Վագիֆ Գասպարյանը: Նա դարձավ ԱՀ Ազգային ժողովի (Գերագույն խորհրդի) առաջին գումարման պատգամավոր: Պատերազմական գործողությունների ժամանակ նա զոհվում է:

1992 թ. մայիսի 30-ին Ադրբեջանի զինուժի ճնշման տակ Մարտակերտի խաղաղ բնակչությունը հեռանում է քաղաքից: Մեկ տարվա ընթացքում Արցախի ինքնապաշտպանական ուժերի կողմից բազմիցս փորձ է արվել ազատագրել Մարտակերտը: Այն վերջնականապես հաջողվել է 1993 թ. հունիսի 29-ին:

Ռազմական գործողություններին մասնակցել են ավելի քան 250 մարտակերտցիներ, որոնցից 109 հոգի զոհվել է: Նրանց հիշատակը հավերժացնելու համար քաղաքում հուշակոթող է կառուցվել:

ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի են արժանացել Մհեր Պետրոսյանը, հետմահու՝ Իգոր Բաղունցը, Վանյա Միրզոյանը, Սլավիկ Ներսիսյանը:

ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի են արժանացել Գրիգորի Միրզոյանը, Իլիչ Բաղրյանը, Սամվել Խաչատրյանը, Ռաֆայել Խաչատրյանը, Աշոտ Բեգլարյանը, Սամվել Յաղուբյանը, Արթուր Ավանեսյանը, Արմիկ Գրիգորյանը, Սիրանուշ Առուշանյանը, Բորիս Մակյանը, Էմիլ Ավետիսյանը, Վլադիմիր Սանթրյանը, Սամվել Պողոսյանը, Մամիկոն Կալոյանը, հետմահու՝ Լյովա Կարապետյանը, Վաչագան Ավագիմյանը, Նելսոն Բաղրյանը, Արթուր Մամունցը, Վարդան Մինասյանը, Կամո Մամունցը:

1830-ական թվականների վերջերին Մարտակերտում սկսել է գործել մասնավոր մեկդասյա դպրոց: 1883 թ.՝ Սուրբ Կարապետ եկեղեցին կառուցելուց հետո, բացվել է հոգևոր-ծխական երկդասյա դպրոց, որը գործել է մինչև 1901 թ.: Պետերբուրգում բարձրագույն կրթություն ստանալուց հետո գյուլաթաղցի Վարդան Տեր-Սահակյանը, վերադառնալով հայրենի երկրամաս, 1901 թ. Մարտակերտում բացում է երկդասյա պետական դպրոց:

Խորհրդային առաջին տարիներից Մարտակերտում գործում էր տարրական դպրոց: 1938-1939 ուսումնական տարում այն միջնակարգի կարգավիճակ ստացավ: Այդ հիմքի վրա էլ ձևավորվել էր Մարտակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցը: Մինչև արցախյան պատերազմը դպրոցը ունեցել է 160 ուսուցիչ և 1600 աշակերտ:

2015-2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 573 աշակերտ, դասավանդում՝ 54 ուսուցիչ: Դպրոցի տնօրեններ են եղել Արամ Գասպարյանը, Արսեն Կարապետյանը, Սեդրակ Ղուկասյանը, Շահեն Օհանջանյանը, Նիկոլայ Բաղրյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Սուրեն Հովսեփյանը, Յուրա Դավթյանը, Վարդուշ Հարությունյանը, Վազգեն Պողոսյանը: 1994 թ. առայսօր դպրոցը ղեկավարում է նույն դպրոցի շրջանավարտ Լիդիա Պետրոսյանը:

Մարտակերտում գործել են նաև թիվ 2 միջնակարգ և գիշերօթիկ դպրոցները: 1963-1964 ուսումնական տարում թիվ 2 դպրոցը դարձավ ութամյա, իսկ 1975-1976

ուսումնական տարվանից՝ միջնակարգ: Դպրոցի տնօրեններ են աշխատել Արտեմ Սարգսյանը, Հունան Հովհաննիսյանը, Լևոն Սահյանը, Ռազմիկ Պետրոսյանը, Էլմիրա Ափունցը, Լենա Գասպարյանը, Ռազմիկ Ահարոնյանը, Ռաֆայել Պետրոսյանը, Գառնիկ Իսրայելյանը, Վալերի Պողոսյանը:

2002 թ. դպրոցի շենքը կապիտալ վերանորոգվել է:

Մարտակերտում ծնվել և միջնակարգ կրթություն են ստացել բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ՝ Սերգեյ Ավագյանը, Գևորգ Տեր-Եղիազարյանը, անասնաբուժական գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ՝ Արամ Աբրահամյանը, Վալերի Առաքելյանը:

Մարտակերտ քաղաքի և նրա հարակից տարածքներում պահպանվել են Ք. ա. 2-1-ին հազարամյակների դամբարանադաշտեր, պաշտպանական ամրությունների մնացորդներ, հնագիտական բազմաքնույթ նյութեր, հին գերեզմանոցների, գյուղատեղիների մնացորդներ, 13-15-րդ դարերի եկեղեցիների մնացորդներ:

Համայնքի տարածքում կան ջրի 5 ակունքներ՝ Երե Քյահրիզը, Ներքե Քյահրիզը, Դիլլաքանց, Դրինանց և Մակառի աղբյուրները:

Մարտակերտի հայտնի հանդամասերն ու տեղավայրերն են Թազա խաչեն յալը, Մարին խաչը, Սարեն Ղուզեն, Դլողրեն ձորը, Գինդրին ձորը, Ճոխտակ հղեն, Սուլուլ քարը, Ղաչքարը, Մոշուտեն յալը, Օղտեն ձորը, Ճոխտակ տափը, Սըլղանց տնտեղերը, Հաքին ձորը, Արև ձորը, Մալականեն հղեցը, Տանին ձորը, Շոր աղբյուրը, Բախչոտը, Թեղին տափը, Սուլթանեն տափը, Գյուվգյուվան ցամաք ձորը, Յուպուպանց աղբյուրը, Ղասունց յաթաղը:

2016 թ. ապրիլյան պատերազմի օրերին Մարտակերտ քաղաքը թշնամու թիրախներից մեկն էր դարձել: Օր ու գիշեր հրետակոծվում էր շրջկենտրոնը: Նորից վերականգնելով հայրենի օջախը՝ մարտակերտցիները շարունակում են ապրել իրենց հայրենի հողում:

2018 թ. քաղաքում կար 1130 տուն, 4620 մարդ[665]:

Քաղաքը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է, ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Մարտակերտում գործում են շրջվարչակազմը, քաղաքապետարանը, 2 դպրոց, մշակույթի տունը, երաժշտական դպրոցը, մարզադաշտը, 2 մանկապարտեզ, շրջանային հիվանդանոցը, առևտրի 88 կետեր, 4 գործարաններ և 2 բանկերի մասնաճյուղեր:

Բնակչությունը աշխատում է պետական և մասնավոր հիմնարկ-ձեռնարկություններում, գյուղատնտեսության ոլորտում ու ծառայում ԱՀ Պաշտպանության բանակում:

[665] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 1918 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

ՆՈՐ ՀԱՅԿԱՁՈՒՐ

Հասանղայան գտնվում է ԱՀ հյուսիսարևելյան հատվածում՝ Մարտակերտի շրջանում՝ Թարթառ գետի ստորին հոսանքի աջափնյակում՝ Չայլու գյուղի դիմաց՝ Լենինավանից 4 կմ հեռավորության վրա: Նախկինում բնակավայրը գտնվում էր Արցախի Ջրաբերդ գավառում:

Որոշ աղբյուրների համաձայն՝ ներկայիս Ադրբեջանի Եվլախ քաղաքի հարևանությամբ գոյություն ուներ հայկական գյուղ, որը անվանվում էր Էրմանի ջուհուր (հայկական ափ), ինչպես նաև Հասանղայա[666]: Այս բնակավայրը հիշատակվում է նաև Բրուձ անվամբ, որը վերաբերում է «քարերի, լեռների, ժայռերի մեջ եղած փոսերին»[667]: Հնարավոր է, որ «Բրուձ»-ը «բուրջ»-ի աղավաղումն է, և արաբերեն կամ պարսկերեն դա վերաբերում է «բերդի կամ պարսպի մեջ տեղ շինած աշտարակին»[668]: Երկու դեպքում էլ Հասանղայա, Բրուձ կամ Բուրջ ասելով կարելի է հասկանալ ամրոց, ամրացված վայր:

19-րդ դարի կեսերին Հասանղայայի հայերը, ցարական իշխանությունների կողմից հովանավորվող խաների կողմից հալածվելով, տեղափոխվում և հաստատվում են Պատարայից մեկ մղոն հեռավորության վրա գտնվող Թարթառի ձախափնյակի մի հատվածում: Տեղափոխվելով նոր շրջան՝ նրանք չփրկվեցին մահմեդական խաների հետապնդումներից, մյուս կողմից էլ վատառողջ տենդաբեր կլիման նրանց ստիպեց 1880-ական թվականներին տեղափոխվել և հաստատվել Թարթառի աջափնյակում գտնվող Նիկոլայ բեկ Փիրումյանցի կալվածքներում: Ինչ-ինչ պատճառներով այդտեղ հաստատվածների մի մասը 1883 թ. նորից տեղափոխվում է իր նախկին բնակավայրը: Մնացողներն էլ դառնում են Հասանղայա անունով նոր գյուղի հիմնադիր: Բերրի հողերը, ջրի առկայության փաստը թույլ են տալիս, որ նոր բնակավայրն արագ կայանա: 19-րդ դարի վերջերին արդեն այստեղ ապրում էր 46 ընտանիք 218 մարդ[669]: Նույն ժամանակահատվածում գյուղում կառուցվում է Սբ. Աստվածածին եկեղեցին:

1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ գյուղը տուժել է: Դրանից հետո որոշ ընտանիքներ՝ Պողոս-քյոխալիները (Պողոսյաններ), Ներսեսդիները (Ներսիսյաններ), Քյասպարանք (Գասպարյաններ), Սյուդալարները (Պետրոսյաններ), տեղափոխվեցին Լևոնարխի և Մարգուշավանի արանքի հարթավայրը, որը հայտնի է Բրուջ անունով: Հնարավոր է, որ նրանք այդ հարթավայրը անվանակոչել են իրենց նախկին բնակավայրի՝ Բրուձի անունով:

Խորհրդային կարգեր հաստատելուց հետո Հասանղայայում ստեղծվել է կոլտնտեսություն, որը 1964 թ. Լենինականի խաղողագործական սովխոզի հետ միացել է, և դարձել են մեկ տնտեսություն: Հասանղայան միաժամանակ ներառվել էր Լենինա-

[666] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[667] Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. 1, էջ 400:

[668] Նույն տեղում, էջ 394:

[669] Մակար եպս.Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 176:

վանի ավանային խորհրդի կազմի մեջ: 1980 թ. Լենինավանի սովխոզը կազմակերպական տեսանկյունից փոխվեց և Հասանղայայի նախկին կոլտնտեսության, ինչպես նաև Մարալյան Սարովի ու Լևոնարխի տնտեսությունների հիման վրա ստեղծվեց Սլավա Կասպարովի անվան սովխոզը: 1987 թ. նշված երեք գյուղերը առանձնացվեցին Լենինավանի ավանային խորհրդի կազմից, և ստեղծվեց Հասանղայայի գյուղական խորհուրդը:

1991 թ. գյուղի հասարակության ընդհանուր ժողովը, հաշվի առնելով իրենց նախկին բնակավայրի անունը՝ Էրմանի ջուհուր (հայկական ափ) անվանումը, գյուղը վերանվանեց Հայկաջուր: Արցախյան շարժման ժամանակ գյուղի երիտասարդությունը ստեղծեց կամավորական ջոկատ, որի հրամանատարն էր Ժորա Պողոսյանը: Ջոկատը շրջակա գյուղերից կազմված կամավորականների հետ միասին բազմիցս կասեցրեց Լենինավանի և հարևան բնակավայրերի վրա՝ ադրբեջանցիների կազմակերպած գրոհները:

1992 թ. հունիսի 17-ին թշնամուն հաջողվում է գրավել Հասանղայա գյուղը: Բնակչությունը բռնում է գաղթի ճանապարհը:

Հարկ է նշել, որ մինչև ողբերգական այդ իրադարձությունները գյուղն ուներ 682 բնակիչ, միջնակարգ դպրոց, մշակույթի պալատ, մանկապարտեզ, բուժկետ, փոստ, երկհարկանի բնակելի տներ:

Բռնագաղթից հետո Հասանղայայի բնակչության մեծամասնությունը հաստատվեց Ռուսաստանում և առայսօր շարունակում է ապրել հայրենիքից հեռու: Մի մասն էլ հայրենիքը շենացնելու և արցախահայության վերակերտված պետականությունը հզորացնելու տեսլականով 2003 թ. նախկինում թուրքաբնակ Բոյահմեդլի գյուղի տեղում նոր բնակավայր հիմնադրեց: Գյուղը վերանվանվեց Նոր Հայկաջուր: Այստեղ հաստատվել են նաև Մարալյան Սարով, Լևոնարխ գյուղերի մի քանի ընտանիքներ: Ի դեպ, խորհրդային տարիներին Բոյահմեդլիի տարածքում ադրբեջանցի հնագետները հայտնաբերել են վաղ միջնադարյան բազիլիկ եկեղեցու հիմքերը, և պատահական չէ, որ այդ վայրը նրանք անվանակոչել էին Գյավուր ղալա:

Բոյահմեդլի գյուղի հարևանությամբ գտնվող Սոֆուլլու գյուղում է եղել 9-րդ դարի վերջին իշխած Գրիգոր (Համամ Բարեպաշտ) Առանշահիկի գերեզմանոցի վրա դրված խաչքարը, որն այսօր պահվում է Ադրբեջանի պատմության թանգարանում[670]: Հայատառ այդ շիրմաքարը ադրբեջանցիները համարում են իրենց ստեղծածը:

Մարտակերտի շրջանի բռնազավթված գյուղերի նախկին բնակիչները, վերաբնակվելով ազատագրված տարածքներում, փորձում են նոր շունչ հաղորդել դարեր առաջ իրենց պապերից խլված հայրենի երկրի այդ հատվածին:

1880 թ. նոր բնակավայր տեղափոխված Հասանղայայի բնակիչները, մտահոգ իրենց երեխաների կրթության, դաստիարակության հարցերով, բացում են նախակրթարան: 1895 թ. գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 18 աշակերտով, որտեղ դասավանդում էր 1 ուսուցիչ: 1896 թ. դպրոցը փակվում է և վերաբացվում 1909 թ. հոկտեմբերին: Դպրոցն ուներ մեկ բաժանմունք, 35 աշակերտ և մեկ ուսուցիչ: 1988-1992 թվականներին դպրոցում սովորում էր 210 աշակերտ: Դասավանդում էր 28 ուսուցիչ:

Հայկաջուրի բնակիչները, վերաբնակվելով Նոր Հայկաջուրում, 2005 թ. տարրական դպրոց են բացում: 2010 թվականից կրթական հաստատությունը հիմնական դպրոցի կարգավիճակ ունի: 2014-2015 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 38 աշակերտ, դասավանդում 16 ուսուցիչ: Նոր Հայկաջուրի շրջակայքում պահպանվում են Ք. ա. 2-1-ին հազարամյակների մի շարք դամբարանաբլուրներ, վաղ միջնադարյան եկեղեցու հիմքերը, հին գյուղատեղիի և գերեզմանոցի մնացորդներ:

2018 թ. հնագետները պեղել են Նոր Հայկաջուրի մի քանի դամբարաններ և հայտնաբերել հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող ժողովուրդներին հատուկ բազմատեսակ նյութեր:

Նոր Հայկաջուրում կա երեք աղբյուր՝ Երե, Հոռին և Տնջրե: Համայնքում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, դպրոց: Գյուղն ապահովված է էլեկտրաէներգիայով: Ռադիոն, հեռուստատեսությունը և ինտերնետ ծառայությունը, բջջային և անլար հեռախոսակապը բնակչությանը հասանելի են:

Նոր Հայկաջուրում 2015 թ. տվյալներով ապրում էր 22 տուն, 89 բնակիչ[671], 2018 թ.՝ 53 տուն, 154 բնակիչ[672]: Բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունն ու հողագործությունն է:

ԱՂԱԲԵԿԱԼԱՆՋ

Բնակավայրը գտնվում է ԱՀ հյուսիսարևելյան հատվածում՝ Մարտակերտի շրջանում՝ համանուն քաղաքից 3 կմ դեպի արևմուտք՝ նախկին Ջրաբերդ գավառում:

Աղաբեկալանջում և նրա շրջակայքում պահպանվել են եկեղեցու, գյուղատեղիի հետքեր, գերեզմանոցի մնացորդներ:

Այնուամենայնիվ ներկայիս բնակավայրը համեմատաբար նոր է: Մոխրաթաղի բնակիչները 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին այստեղ ունեին գոմեր և զբաղվում էին անասնապահությամբ: 1910 թ. որոշ ընտանիքներ հիմնավորվեցին այստեղ և տներ կառուցեցին: Շուտով երկրամասում հաստատվեցին խորհրդային կարգեր: 1930 թ. Աղաբեկալանջում կազմակերպվել է կոլտնտեսություն, որը 1950 թ. միավորվել է Մոխրաթաղի կոլտնտեսության հետ: 1975 թ. կոլտնտեսությունը վերակազմակերպվում է խորհրդային տնտեսության (սովխոզ):

[670] Բալայան Վ., Արցախի պատմությունը, էջ 82-83:

[671] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[672] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

Վերոհիշյալ տնտեսությունը ղեկավարել են Սանթրի Բալուղյանը, Սամսոն Բաբալյանը, Վաղարշակ Հարությունյանը, Հովսեփ Փանյանը, Կարապետ Մովսիսյանը, Հարություն Բաղմանյանը, Շամիր Ղահրամանյանը, Կարապետ Պետրոսյանը, Ջհանգիր Գրիգորյանը, Գրիշա Գրիգորյանը: Սոցիալիստական աշխատանքի հերոս է դարձել Սոնյա Բալուղյանը:

Կոլտնտեսությունները լուծարվելուց հետո՝ 1998 թվականից, գյուղում սկսեցին գործել մենատնտեսություններ:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 45 հոգի, զոհվել է 24-ը:

Ազատագրական պատերազմի առաջին տարիներին գյուղում Վլադիմիր Բալայանի գլխավորությամբ ստեղծվում է ինքնապաշտպանական ջոկատ: Շուտով Վլադիմիր Բալայանը դառնում է «Ազատագրական բանակ»-ի արցախյան ճակատի հրամանատար: Ազատագրական բանակի մարտիկները ուժերի գերլարումով պաշտպանել են Շահումյանի, Մարտակերտի շրջանների բնակավայրերը:

1991-1994 թթ. ռազմական գործողություններին գյուղից 45 հոգի է մասնակցել: Նրանցից 4-ը՝ Վլադիմիր Բալայանը, Վանյա Միրզոյանը, Վալերի Սայիյանը և Անաստաս Միրզոյանը, զոհվել են: Վլադիմիր Բալայանը հետմահու արժանացել է «Արցախի հերոս» բարձր կոչմանը, իսկ Վանյա Միրզոյանը հետմահու՝ ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի են արժանացել նաև Գրիգորի Միրզոյանը և Սամվել Պողոսյանը:

1991 թ. մայիսին՝ «Օղակ» ռազմագործողության ժամանակ ԽՍՀՄ ներքին զորքերի զորքերը և Ադրբեջանի հատուկ ջոկատայինները Աղաբեկալանջի բնակչությանը բռնաճնշումների ենթարկեցին: Մեկ տարի անց՝ 1992 թ. հունիսին, Ադրբեջանի զինված ուժերը գրավեցին Աղաբեկալանջը: Բնակչության մեծ մասը տեղափոխվեց այլ երկրներ, մասնավորապես՝ ՌԴ: 1993 թ. հունիսի 17-ին գյուղի ազատագրվելուց հետո, Աղաբեկալանջի բնակչության ընդամենը 1/3-ը վերահաստատվեց հայրենի գյուղում:

Բռնագաղթի նախօրյակին՝ 1992 թ. հունիսի 1-ին, Աղաբեկալանջում ապրում էր 441 մարդ, 1998 թ. մայիսի 1-ի տվյալներով գյուղում կար ընդամենը 156 մարդ[673]:

Խորհրդային տարիներին Աղաբեկալանջում գործել է տարրական դպրոց: 1988-1990 թթ. դպրոցում սովորում էր 32 աշակերտ ու դասավանդում 6 ուսուցիչ:

1955 թ. տնտեսության միջոցներով գյուղում դպրոցի շենք է կառուցվել: 1972 թ. կառուցվել է ներկայիս դպրոցի շենքը, որը գյուղն ազատագրելուց հետո վերանորոգվել է և այսօր գործում է: 2006-2009 թթ. դպրոցը ութամյայի կագավիճակ ուներ, իսկ 2010-2011 ուսումնական տարվանից՝ հիմնականի: 2015-2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 12 աշակերտ, դասավանդում՝ 4 ուսուցիչ: Դպրոցի տնօրեններ են աշխատել Սեիլ Միրզոյանը, Վեներա Սայիյանը:

[673] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

Գյուղում կա թվով 7 աղբյուր՝ Թևունց, Գյուղամիջի, Ղրղվոտ, Դաղին բաղ, Հոռին, Դիլլաքանց, Բիդարա:

Աղաբեկալանջի հանդամասերն են՝ Դային բաղ, Ղրղվոտ, Քեմքեշ, Ճղպրոտ, Թթոտ, Դիլլաքանց բաղ:

Գյուղում այսօր ապրում են Բաբալունց (Գևորգյաններ, Բաբալյաններ, Հարությունյաններ), Չիչ-չունց (Սայիյաններ), Միրզիբեգանց (Միրզոյաններ, Բալասանյաններ), Դիլլաքանց (Իսրայելյաններ), Բըլըղանց (Բալուղյաններ), Պետունց (Աբրահամյաններ), Ճընգլըմանց (Սահակյաններ), Մամունց (Մամունց) տոհմի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Աղաբեկալանջում գործում են գյուղապետարան, բուժկետ, դպրոց, առևտրի մեկ կետ:

Աղաբեկալանջում 1970 թ. կար 69 տուն, 326 բնակիչ, 1987 թ.՝ 99 տուն, 392 բնակիչ, 1992 թ.՝ 411 բնակիչ[674], 2018 թ.՝ 56 տուն, 197 բնակիչ[675]: Նրանք հիմնականում զբաղվում են գյուղատնտեսությամբ:

ԱՌԱՋԱԶՈՐ

Բնակավայրը գտնվում է Մարտակերտի շրջանի հյուսիսային հատվածում՝ Խաչենագետի վերին հոսանքի ձախափնյա լեռնալանջին:

Ընդհանուր առմամբ Խաչենագետի վերին հոսանքի երկու հատվածներում գտնվող տարածքները բնաաշխարհագրական տեսանկյունից բավականաչափ հարմարավետ են, և պատահական չէ, որ դարեր շարունակ հայ մարդն անընդհատ ապրել է նշված գողտրիկ վայրերում: Այս վայրերում հաճախակի հանդիպում ենք Ք. ա. 3-1-ին հազարամյակներին վերաբերող դամբարանադաշտեր, կիկլոպյան ամրոցներ: Մանավանդ քրիստոնեական դարաշրջանի հուշարձանները բավական բազմազան են ու շատ: Սկզբնական շրջանում բնակավայրերը պաշտպանական նկատառումներով տեղադրված են եղել բարձրադիր լեռնային հատվածներում: Առաջաձորի բնակիչների նախնիները բնակվել են Տակաթաղ և Փլուսանց շեն լեռնային գյուղերում:

10-րդ դարում այդ գյուղերի բնակիչները իջել և բնակություն են հաստատել ցածրադիր մասում, որի դիմաց ձգվում է մի անդնդախոր ձոր: Կարծիք կա, որ այստեղ էլ առաջացել է գյուղի անվանումը:

[674] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[675] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

Սարգիս Ջալալյանցը ասում է, որ գյուղի 11-րդ դարի մի գրչագիր Ավետարանի կողի արձանագրությունում բնակավայրը Առաջաձոր է անվանում[676]:

Միջին միջնադարից սկսած Առաջաձորը սկսում է ընդլայնվել Խաչեն գետի երկու վտակների ափերին: Այն հիմնականում երկու թաղերից էր կազմված՝ ներքին թաղ և վերին թաղ: Դրանք կոչվում էին նաև Ղուզե թաղ և Գյունե թաղ:

Դեպի Սևանի ավազան և Վայոց ձոր տանող ռազմավարական ճանապարհի վրա գտնվելով՝ Առաջաձորի բնակչությունը դարերի ընթացքում մաքառել է թշնամական ուժերի, մասնավորապես օտար նվաճողների դեմ:

Հենց այստեղ է Խաչենի իշխան Հասան Ջալալ Դոլայի աղջիկը՝ Ռուզանը, ծուղակի մեջ առել մոնղոլ թաթարներին և գլխովին ջախջախել:

Առաջաձորի խիզախ մարտիկները 18-րդ դարի վերջերին Ջրաբերդի մելիքների առաջնորդությամբ կռվել են Իբրահիմ խանի հրոսակների դեմ:

Քանի որ Առաջաձորի բնակչությունը մշտապես գտնվել է ազատագրական պայքարի հորձանուտում, հետևաբար այդ անցուդարձի մասին պատմող փաստաթղթեր է պահպանվել գյուղում: Հայկունին պատմում է, որ 19-րդ դարի վերջերին լինելով Առաջաձորում, երիցուհի Խորիշան Տեր-Պետրոսյանի մոտ տեսել է Արցախի մելիքների 16 նամակներ և թղթեր, 48 հատ թուրքերեն ֆերմաններ և այլ թղթեր, Աղուանից Հովհաննես, Իսրայել, Ներսես, Եսայի կաթողիկոսների և Գանձասարի աթոռակալ Կիրակոս վարդապետի կողմից գրված 20 կոնդակներ[677]:

1813 թ. Գյուլիստանի հաշտության պայմանագրով Արցախը Ռուսաստանին անցնելուց հետո երկրամասի բնակավայրերի զարգացման համար որոշակի պայմաններ ստեղծվեցին: Մասնավորապես դրան նպաստում էին խաղաղ պայմանները: Եթե 19-րդ դարի կեսերին Առաջաձորում կար 80 տնտեսություն[678] ապա 19-րդ դարի վերջերին՝ 197 տուն, 1501 բնակիչ[679]:

1920 թ. աշնանը Արցախում բռնկված հակախորհրդային ապստամբությունը Թևան Ստեփանյանի գլխավորությամբ հաջողություններ արձանագրեց հատկապես Դիզակում և Վարանդայում:

1921 թ.՝ Երևանում փետրվարյան ապստամբության հաղթանակից հետո, Արցախում արմատական բեկում կատարվեց: Մեկը մյուսի հետևից ազատագրվում էին գյուղերը: Նմանօրինակ իրավիճակ էր ստեղծված նաև Խաչենագետի ձորակում: 1921 թ. փետրվարից հունիս ընկած ժամանակահատվածում այստեղ իշխանությունը գտնվում էր ապստամբների ձեռքում: Ապստամբության կենտրոնը համարվում էր Առաջաձոր գյուղը: Շարժման կազմակերպիչները սերտ կապեր ունեին Թևան Ստեփանյանի հետ:

[676] Սարգիս արք. Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 428:
[677] Հայկունի, նշվ. աշխ., էջ 77:
[678] Սարգիս արք. Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 428:
[679] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 257:

1921 թ. փետրվարի 12-ին կոմկուսի Ջևանշիրի գավառային կոմիտեն լիազորում է Թևանտրոս Միրզաբեկյանին՝ բանակցել ապստամբների հետ: Ժամանակ շահելու նպատակով ապստամբության ղեկավարները բանակցությունները ձգձգեցին մինչև հուլիսի 12-ը[680]:

Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վարանդայում և Դիզակում ապստամբությունը գնում էր դեպի մարում, այստեղ նույնպես որոշվեց համակերպվել իրավիճակին:

Առաջաձորում խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1929 թ., գյուղում կոլտնտեսություն է կազմակերպվում, 1977 թ. այն վերակազմակերպվեց խորհտնտեսության: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո տնտեսությունը լուծարվեց:

Խորհրդային տարիներին Առաջաձորը որոշակի զարգացում ունեցավ: Գյուղում կառուցվեցին երկհարկանի տներ: Առաջաձորում կար մշակույթի տուն, տեղամասային հիվանդանոց, կապի բաժանմունք, կար ու ձևի արհեստանոց, հացի փուռ, գրադարան, կենցաղսպասարկման կոմբինատ, շինվերանորոգման տեղամաս, կաթի ընդունման և նախնական վերամշակման կետ:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են 450 առաջաձորցիներ, նրանցից 197-ը զոհվել են: Նրանց հիշատակը վառ պահելու համար երախտապարտ համագյուղացիների հանգանակությամբ 1975 թ. կառուցվել է հուշարձան:

Արցախյան ազատամարտի տարիներին գյուղում Մ. Ալավերդյանի գլխավորությամբ կազմավորվել է ինքնապաշտպանական ջոկատ, որի մարտիկները աչքի են ընկել մի շարք ռազմական գործողությունների ժամանակ: Պատերազմի ժամանակ զոհվել է 29 ազատամարտիկ:

1992 թ. աշնան սկզբներին ադրբեջանցիների առաջխաղացումը կանգնեցվել է Առաջաձորի մատույցներում: Հայկական ուժերը, անցնելով նախահարձակ գործողությունների, կարողացել են ձախողել Խաչենի ձորակի գյուղերի, այդ թվում Առաջաձորի գրավման պլանը:

Առաջաձորից ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի են արժանացել՝ Վարուժան Բեկնազարյանը և Արթուր Ջաքարյանը:

1889-1890 ուսումնական տարում Առաջաձորում գործել է եկեղեցական-ծխական դպրոց: Գյուղի հասարակության խնդրանքով և Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակով 1895 թ. Առաջաձորում բացվել է ծխական դպրոց, որտեղ սովորում էին 45 աշակերտներ: Չնայած ցարական կառավարությունը 1890-ական թվականներին որոշել էր փակել հայկական դպրոցները, այնուամենայնիվ մի շարք բնակավայրերում, այդ թվում՝ Առաջաձորում, գաղտնի գործում էր դպրոցը, որը հարևան գյուղերի աշակերտների համար նույնպես մնաց որպես հարազատ կրթօջախ:

[680] Мирзабекян З., Тевадрос Мирзабекян, с. 28, անտիպ գործ, պահվում է ԱՀ պատմաերկրագիտական թանգարանում:

1908–1909 ուսումնական տարում Առաջաձորում բացվել է մեկդասյա երկսեռ դպրոց: Ուսուցիչն էր Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի շրջանավարտ Հովակիմ Համազասպյանը:

Խորհրդային տարիներին Առաջաձորում գործում էր սկզբում տարրական, այնուհետև յոթամյա դպրոց: 1936 թ. դպրոցը միջնակարգի կարգավիճակ ստացավ:

Քանի որ հարևան Չլդրան, Ղազանչի, Կիչան և Քոլատակ գյուղերի բարձր դասարանցիները նույնպես հաճախում էին Առաջաձորի կրթական հաստատություններ, հետևաբար շուրջ 360 աշակերտների համար ուսումնական պարապմունքները երկհերթ էին կազմակերպվում:

2014–2015 ուսումնական տարում Առաջաձորի դպրոցում սովորում էին 135 աշակերտներ, դասավանդում՝ 24 ուսուցիչներ:

Ծննդով Առաջաձորից են կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արեգ Գրիգորյանը, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Գրիգորյանը, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լավրենտ Մովսիսյանը, տեխնիկական գիտությունների դոկտոր Աշոտ Բաղրյանը:

Առաջաձորում և նրա շրջակայքում պահպանվել են պատմաճարտարապետական հետաքրքիր և արժեքավոր հուշարձաններ: Առաջաձորի արևելյան կողմում՝ մի փոքր ժայռի տակ է գտնվում Անապատ եկեղեցին, որը կառուցվել է 1249 թ.: Նրա հարևանությամբ է գտնվում 12–18-րդ դարերի գերեզմանոց: Խաչենագետի ձախ ափին՝ Առաջաձոր և Վանք գյուղերի արանքում է գտնվում Վաճառ քաղաքատեղին: Այնտեղ պահպանվում են որոշ շինությունների ավերակներ: Մանավանդ կիսականգուն է Սբ. Ստեփանոս եկեղեցին, որը կառուցել է Հասան Ջալալը 1229 թ.:

Առաջաձորի հարավային հատվածում պահպանվում են 13-րդ դարում կառուցված երկու ժայռափոր մատուռներ: Նրանց մոտ գտնվող ժայռի վրա պահպանված արձանագրությունը վկայում է, որ մատուռները կառուցվել են 1249 թ.: Գյուղում պահպանվում է 1668 թ. Գանձասարի Պետրոս Խանձկեցի կաթողիկոսի ժամանակ կառուցված Սբ. Աստվածածին եկեղեցին: Տվյալ եկեղեցու պատի մեջ պահպանվել է մի խաչքար, թվագրված 1253:

Սարգիս Ջալալյանցը պատմում է, որ 19-րդ դարի կեսերին ինքը Սբ. Աստվածածնի եկեղեցում տեսել է մի Աստվածաշունչ: Ըստ պատմագրի՝ այն վերջին անգամ նորացվել է 17-րդ դարի կեսերին: Աստվածաշնչում պահպանված հիշատակարանների մեջ խոսվում է 13–14-րդ դարերում Խաչենի իշխանների գործունեության մասին[681]: Կարելի է ենթադրել, որ վերոհիշյալ Աստվածաշունչը գրվել է առնվազը 13-րդ դարում:

Սբ. Աստվածածին եկեղեցուց վերև՝ մի քարայրի վրա, գտնվում են Ճգնավորի բնակարանն ու գերեզմանը: Գյուղի արևելյան մասում համանման քարայր ու գերեզման կա Ճգնավորի ձոր կոչված հանդամասում: Մակար Բարխուդարյանը պատմում է, որ Առաջաձորի հյուսիսային կողմում գտնվում է Կարմիր եկեղեցին և Նահատակ փոքրիկ եկեղեցին: Այդ երկու եկեղեցիների մոտ գտնվում էր գյուղատեղիի և գերեզմանոցի մնացորդներ[682]: Երկու եկեղեցիներն էլ այսօր չեն պահպանվել:

Գյուղի հյուսիսային մասում, Խաչենագետի վտակներից մեկի վրա, պահպանվում է 4,30 մ երկարություն ունեցող միջնադարյան կամուրջ: Գյուղի արևելյան եզրին է գտնվում 12–13-րդ դարերում կառուցված Ծիրանաքար ամրոցը: Առաջաձորի արևմտյան մասում բլրի վրա պահպանվում են Ղլեն խութ ամրոցի պարիսպների մի մասը և որոշ անցուղիներ:

Անտառի մեջ գտնվող Խաչեր, Խենչալի խաչեր, Ջուխտ խաչ, Խաչխութ, Վանունց սար, Տակաթաղ, Ուրջուզանց տեղամասերում պահպանվում են 12–18-րդ դարերի խաչքարեր:

Առաջաձորում առկա են Ճկնավեր, Սալ կավալքի, Տնջրե, Ավդալանց, Ալին, Փոս, Բուղանց, Բախին, Քոլունց, Դովանց, Սառնատու, Վռակնը, Ղարդունց, Միրզին, Նավեն, Ճիրին ձոր աղբյուրները:

Համայնքում գործում է գյուղապետարան, բուժկետ, դպրոց, մանկապարտեզ:

Առաջաձորում 1987 թ. կար 297 տուն, 1087 բնակիչ,[683] 2018 թ.՝ 178 տուն, 618 բնակիչ[684]: Բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ:

ԳԱՌՆԱՔԱՐ

Բնակավայրը գտնվում է ԱՀ հյուսիսային հատվածում՝ Մարտակերտի շրջանում, նախկին Խաչեն գավառում՝ համանուն գետի վերին հոսանքի աջ ափին: Գյուղի ներքևի մասով հոսում է համանուն՝ Գառնաքար գետակը:

Հին Գառնաքարը, որը ներկայիս բնակավայրի հարևանությամբ էր գտնվում, գոյություն ուներ առնվազն վաղ միջնադարից՝ 3–4-րդ դարերից, և հանդիսացել էր Խաղբակյան իշխանական տոհմի բնակատեղին: Դրա մասին իր աշխատության մեջ հանգամանալից անդրադարձել է կաթողիկոս Գարեգին Հովսեփյանը[685]: Մակար Բարխուդարյանցի կարծիքով մինչև Խաղբակյանները տվյալ շրջանում իշխում էր Բակ իշխանը, որի տիրույթներն էին Գառնաքարը, Կաչաղակաբերդը, Խոխանաբերդը, Նատարինը, Աղուենը, Շիկաքարը[686]:

Հին Գառնաքարը 4-րդ դարից մինչև 13-րդ դարի սկիզբը եղել է Խաչենի վերին հոսանքի ամենառազմավարական նշանակության ամրոց բնակավայրը:

681 Սարգիս արք. Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 428–431:

682 Մակար եպս. Բարխուդարեանց, նշվ. աշխ., էջ 258:

683 Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 179:

684 ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

685 Հովսեփյան Գ., Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, մաս I, Վաղարշապատ, 1928:

686 Մակար եպս. Բարխուտարեանց., Պատմութիւն Աղուանից, մաս Ա, Թիֆլիս, 1900, էջ 123:

12-րդ դարի 90-ական թվականներին Զաքարյան իշխանական տան ներկայացուցիչների գլխավորությամբ սելջուկ-թուրքերի տիրապետությունից ազատագրվեցին Հայաստանի հյուսիսարևելյան նահանգները:

Ազատագրված գավառների լիիրավ տերեր էին դարձել կամ հին իշխանական տների ներկայացուցիչները, կամ էլ այդ պայքարում առավել աչքի ընկած զորավարները:

Այդ նույն ժամանակ Վասակ Խաղբակյանը և նրա երեք խիզախ զավակները իրենց քաջագործությունների համար որպես «արեանգինք» Զաքարյաններից ստացան մի նոր ընդարձակ տիրույթ Վայոց ձորում[687]: Նրանք տարածքներ ունեին նաև Շահապունիքում, Վարաժնունիքում, Կոտայքի շրջանում, մի մասն էլ Այրարատի նահանգում: Խաղբակյանների նոր իշխանության կենտրոններն էին Սրկղունքը (ներկայիս Վերնաշենը) և Բոլորաբերդը[688]: Ճիշտ է, Խաղբակյան իշխանական տոհմի որոշ ներկայացուցիչներ, օրինակ՝ Խաղբակի որդի Դլեն, շարունակեցին ապրել Արցախում, այնուամենայնիվ, նրանք ստիպված էին Խաչենագետի հովիտը զիջել վերելքի ուղին բռնած Հասան-Ջալալյան տոհմին: Հին Գառնաքարի դերը խամրեց, երբ նրանից ներքև 13-րդ դարի սկզբներից սկսեցին կառուցել ներկայիս Գառնաքարը:

1667 և 1745 թվականների աղբյուրներում Գառնաքարը ներկայացված է Գեռաքար[689] և Կոայքար[690] անուններով:

Իշխանական բնակավայրի համարում ունեցող Գառնաքարը մշտապես թշնամական ուժերի անբարեհաճ ուշադրության կենտրոնում է գտնվել: Կիրակոս Գանձակեցին պատմում է, որ մոնղոլները, հյուսիսային Հայաստանի մի շարք գավառներ նվաճելուց հետո՝ 1236 թ., հասան Ներքին Խաչեն: Բնակչությունը Հասան-Ջալալ իշխանի գլխավորությամբ համառորեն դիմադրում է: Մոնղոլները, երկար ժամանակ չկարողանալով գրավել Խոխանաբերդը, դիմեցին արդեն իսկ իրենց փորձված մեթոդին. հնազանդության կոչեցին Հասան Ջալալին՝ խոստանալով նրան թողնել իր երկիրը: Ներքին Խաչենի տերը, դրսից օգնության հույս չունենալով և երկիրն ավելորդ ավերից և կոտորածից փրկելու նպատակով՝ ընդունեց մոնղոլների առաջարկը: Չնայած Հասան-Ջալալը հնազանդվեց, այնուամենայնիվ Ջուղբուղա նոյինի հրամանով մոնղոլները քանդում են մի շարք ամրոցներ, այդ թվում՝ Գառնաքարի մոտ գտնվող Ծիրանաքար ամրոցը[691]: Երևի սա է պատճառը, որ Մեսրոպ Թաղիադյանը նշում է նաև «Ծիրանաքար» անունը[692]:

Գառնաքարցի տարեցների պատմածով Տեղ գյուղից 4 եղբայր՝ Մանգին, Զաքարը, Մելքումն ու Բաղդասարը, 18-րդ դարի կեսերին հաստատվում են Առաջաձորում:

[687] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 397:
[688] Բալայան Վ., Արցախի պատմությունը, էջ 91:
[689] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 280:
[690] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 3, թ. 97, 113:
[691] Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 224:
[692] Մեսրովբ Թաղիադեանց, Ճանապարհորդութիւն ի Հայս, հ. 1, Կալկաթա, 1847, էջ 301-302:

Մելքումը դառնում է Գառնաքարի քյոխվան: Եղբայրներն այնուհետև հիմնավորվում են Գառնաքարում և դառնում շրջակա կալվածքների տերը: Նրանց ժառանգները՝ Մելքումի որդի Մարդին, Մանգու որդի Սարգիսը, Զաքարի որդի Վանեսը և Բաղդասարի որդի Պետրոսը, շարունակում են իրենց հոր գործը:

Այսօր գյուղի գերեզմանոցում պահպանվում են Մելքումի, Մանգու, Զաքարի, Բաղդասարի և նրանց հետնորդների տապանաքարերը: Եղիշե քահանա Գեղամյանցի տեղեկությամբ 1885 թ. Գառնաքարում ապրում էր 8 տնտեսություն[693]:

Գառնաքարում խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1929 թ., կոլտնտեսություն է կազմավորվել: Խոշորացումից հետո այն միավորվել է Վանքի կոլտնտեսությանը: Վերակազմակերպվելուց հետո այն դարձել է պետական տնտեսություն (սովխոզ):

Հայրենական մեծ պատերազմին գյուղից 56 մարդ է մասնակցել, զոհվել է 24-ը, որոնց հիշատակին Գառնաքարում հուշարձան է կառուցվել: Հայրենական մեծ պատերազմի տարիներին խիզախության համար գառնաքարցի Աշոտ Մելքումյանը արժանացել է Փառքի երեք աստիճանի շքանշանի:

Արցախյան ազատագրական պայքարի տարիներին ծանր օրեր ապրեց նաև Գառնաքարը: Ռազմաճակատին մոտ լինելու պատճառով գյուղի բնակիչները 1992 թ. ամառվանից մինչև 1993 թ. ձմեռը տեղափոխվել էին այլ բնակավայրեր:

Գյուղում կազմավորված ինքնապաշտպանական ջոկատը ՊԲ կազմում մասնակցել է Քարվաճառի, Մարտակերտի, Աղդամի շրջաններում ծավալված ռազմական գործողություններին: Գյուղից 3 ազատամարտիկ զոհվել է: Նրանցից Քաջիկ Մանգասարյանը հետմահու պարգևատրվել է ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

1924 թ. Գառնաքարում տարրական դպրոց է բացվել, որտեղ 12 աշակերտ էր սովորում: 1988-1989 ուսումնական տարվանից դպրոցը ութամյայի կարգավիճակ ստացավ: 2014-2015 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 24 աշակերտ, դասավանդում՝ 9 ուսուցիչ: Դպրոցում տնօրեններ են աշխատել Նատաշա Մուսայելյանը, Իշխան Զաքարյանը, Արամ Զաքարյանը, Օֆելյա Սահակյանը, Տամելա Բալասանյանը, Ելենա Ավանեսյանը:

Գառնաքարի շրջակայքում կան պատմամշակութային բազմաթիվ հուշարձաններ՝ Համամի եկեղեցին (9-րդ դար), Հանգած եկեղեցին (11-13-րդ դարեր), Մուղդուսի եկեղեցին (12-13-րդ դարեր), Սբ. Աստվածածին եկեղեցին (9-11-րդ դարեր), Սբ. Հովհաննես եկեղեցին (12-13-րդ դարեր), Հավապտուկ վանքը (12-13-րդ դարեր), Խոխանաբերդը (11-13-րդ դարեր), Դարպասները՝ Հասան-Ջալալ իշխանի ապարանք-նստավայրը (13-րդ դար), միջնադարյան Խտրիողը, Դազգահատեղը, Յաթաղատեղը, Ջուխտ ջուրը, Համամի ձորը և համանուն այլ գյուղատեղիներ, գերեզմանոցներ, 9-13-րդ դարերի խաչքարեր:

[693] Հայկունի, նշվ. աշխ., էջ 66:

Գառնաքարի նշանավոր աղբյուրներն են՝ Չինգիլին, Առջին ձորի, Տզնոտեն ձորի, Երե արտեն, Ներքե Խզուլներ, Ավագեն, Մուշահով, Դահնին:

Գառնաքարում հայտնի են Ռուզանա բերդ, Խաչերի թումբ, Շինատեղ հանդամասերը:

Գյուղում ներկայումս ապրում են Ջաքարի, Բաղդասարի, Մանգասարյանների, Մելքումի ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գառնաքարը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ապահովված է խմելու ջրով: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են: Այստեղ գործում են գյուղապետարան, բուժկետ, դպրոց:

1959 թ. այստեղ կար 64 տուն, 190 բնակիչ, 1979 թ.՝ 51 տուն, 154 բնակիչ, 1987 թ.՝ 45 տուն, 150 բնակիչ, 1992 թ.՝ 45 տուն, 151 բնակիչ[694], 2018 թ.՝ 45 տուն, 170 բնակիչ[695]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԳԵՏԱՎԱՆ

Բնակավայրը գտնվում է ԱՀ հյուսիսային հատվածում՝ Մարտակերտի շրջանում՝ նախկին Խաչեն գավառում: Գյուղը տեղաբաշխված է Թարթառ (Տրտու) գետի ափին: Գյուղի ձախ մասով հոսում է Պղտորագետը: Երկու գետերի ջրերը Վաղուհաս գետի ջրերի հետ իրար են խառնվում հինավուրց կամուրջի տակ և թափվում Սարսանգի ջրամբարը:

Գյուղը շրջապատված է բլրապատ սաղարթախիտ անտառներով, որոնք բարձրանալով հասնում են մինչև Մռավի լեռնաշղթայի փեշերը: Դա յուրօրինակ գեղեցիկ տեսք է տալիս ինչպես գյուղին այնպես էլ շրջապատին:

Գյուղի տարածքը համեմատաբար հարթավայրային է: Պաշտպանական նկատառումներով անհարմար դիրք ունենալու և դեպի Քարվաճառի խորքը գնացող լեռնանցքի բերանում լինելու պատճառով միջնադարում բնակավայր չի կառուցվել:

Գետավանից 7 կմ դեպի հյուսիսարևմուտք՝ Գետավան և Չարեքտար գյուղերի միջև, գտնվում է Կարմիր քարի վանական համալիրը (11–14–րդ դարեր): Նրա շրջակայքում պահպանվում են միջնադարյան գյուղատեղիի և գերեզմանոցի մնացորդներ:

Գետավան գյուղը հիմնադրվել է 1940 թ.՝ կապված Մարտակերտ–Քարվաճառ ճանապարհի կառուցման հետ:

Առաջին տունը կառուցողներն են եղել Չափարից՝ Ջալալ Մարտիրոսյանը, Հաթերքից՝ աշխարհագրության ուսուցիչ Անդրանիկ Օհանջանյանը, Մոխրաթաղից՝ Գարեգին Սարգսյանը, ով աշխատում էր կապի բաժանմունքում:

[694] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[695] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 3:

Թարթառ և Վաղուհաս գետերի միացման կետում կամուրջ կառուցելու հետ կապված՝ գյուղը սկզբում կոչվել է Վագմոստ: Հետագայում բնակիչները բնակավայրն անվանում էին Մոստ, իսկ 1995 թ. պաշտոնապես ստացավ Գետավան անունը:

Նկատենք, որ նախկինում՝ 1223 թ., նույն հատվածում կամուրջ է եղել կառուցված, որը հետագայում ավերվել էր:

Անտառին մոտ լինելու հանգամանքը նպաստեց, որ 1955 թ. այդտեղ կառուցվի փայտամշակման գործարան: Պատրաստի ապրանքը հիմնականում տեղափոխվում էր Բաքու:

Սկսեցին կառուցել բանվորական տներ: 1960 թ. սկսեց գործել փոստը, 1962 թ.՝ դեղատունը, 1966 թ.՝ ռադիոհանգույցը, 1970 թ.՝ Հաթերքի կենցաղային կոմբինատի մասնաճյուղը, 1979 թ.՝ խնայդրամարկղը: Նոր գյուղի բնակիչների մի մասը ներգրավված էր կոլտնտեսային արտադրության մեջ: Արդեն 1960–ական թվականներին գյուղում կար 52 տնտեսություն:

1958 թ. Անդրանիկ Օհանջանյանի ջանքերով Գետավանում տարրական դպրոց է բացվում: 1958–60 թթ. դպրոցում սովորում էր 58 աշակերտ, դասավանդում 10 ուսուցիչ, իսկ 1969–1970 թթ.՝ 96 աշակերտ, 15 ուսուցիչ: 1988 թ. դպրոցը դարձավ ութամյա:

1992 թ. հունիսի 4–ին պատերազմական գործողությունների պատճառով գյուղի բնակչությունը բռնագաղթել է: Գետավանի դպրոցահասակ երեխաների ուսումը շարունակվել է կազմակերպվել Ստեփանակերտի դպրոցներում: 1993 թ. գյուղի ազատագրվելուց հետո դպրոցը սկսեց գործել:

2013–14 ուսումնական տարում սովորում էր 54, իսկ 2015–2016 ուսումնական տարում՝ 86 աշակերտ, դասավանդում 16 ուսուցիչ:

Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են՝ Ա. Մայիլյանը, Գ. Սարգսյանը, Հ. Լալայանը, Ս. Մարտիրոսյանը, Ն. Ասրյանը, Է. Հարությունյանը, Ա. Վարդանյանը, Դ. Շիրինյանը, Մ. Իսրաելյանը, Ա. Սարգսյանը, Ն. Ասրյանը, Ռ. Գրիգորյանը:

Արցախահայության ազատագրական պայքարի տարիներին՝ 1989 թ., Ա. Սարգսյանի և Հ. Թամրազյանի հրամանատարությամբ կազմավորվել են երկու կամավորական ջոկատներ: Նրանք Մարտակերտի պաշտպանական շրջանի գնդի կազմում մասնակցել են ինչպես պաշտպանական, այնպես էլ հարձակողական մարտերին: Ռազմական գործողությունների ընթացքում զոհվել են գետավանցի 12 ազատամարտիկներ: Նրանց հիշատակին բարերար Կարեն Սարգսյանը 2010 թ. հուշարձան է կառուցել: ԱՀ «Մարտական խաչ» 1–ին աստիճանի շքանշանի հետմահու արժանացել է Ջանբուլաթ Մուրադյանը, իսկ ԱՀ «Մարտական խաչ» 2–րդ աստիճանի շքանշանի ներկայումս Գետավանի դպրոցի տնօրեն Արմեն Գասպարյանը:

Հետպատերազմյան տարիներին Գետավանում կառուցվել է համայնքային կենտրոն, որի մեջ ընդգրկվում են նաև հանդիսությունների սրահը, ակումբը, գյուղապետարանը: Գյուղում գործում են տեղամասային հիվանդանոց և 2 դեղատուն: Գետա-

վանի և հարևան գյուղերի բնակիչներին սպասարկում են 11 խանութ, 2 բենզալցակայան:

Գետավանով է անցնում Մարտակերտ–Վարդենիս՝ ռազմավարական նշանակության ասֆալտապատ ճանապարհը:

Գյուղի տարածքում են գտնվում Նարգիզի և Միրզայի աղբյուրները, Թթու ջուրը: Բնակավայրն ունի շուրջօրյա խմելու ջուր:

Գետավանում ապրում են Գասպարենց, Մարդունց, Պիտականց, Փափախչունց, Ուսուբանց, Խութանց, Քափունց, Ջաքունց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները հասանելի են բնակչությանը:

Գետավանում 2018 թ. կար 102 տուն, 350 բնակիչ[696]: Նրանք աշխատում են «Բեյզ Մեթըլս» ընկերությունում, գյուղատնտեսության ոլորտում և գյուղում գործող հիմնարկություններում:

ԴՐՄԲՈՆ

Բնակավայրը գտնվում է ԱՀ հյուսիսարևելյան հատվածում՝ Մարտակերտի շրջանում՝ նախկին Խաչեն գավատում: Գյուղը տեղաբախշված է Մռավ լեռան դեմ դիմաց՝ Թարթառ գետի վերին հոսանքի աջ ափին՝ Սարսանգի ջրամբարի հարևանությամբ: Գյուղի արևելյան և հյուսիսային կողմերը անտառածածկ են: Դրանք հարուստ են պտղատու վայրի ծառատեսակներով և տարբեր տեսակի կենդանիներով:

Գյուղի հարևանությամբ գտնվող Լոկեն հող տարածքում գտնվող Ք. ա. 2–1–ին հազարամյակներին վերաբերող դամբարանադաշտը, 12–18–րդ դարերի գյուղատեղին, Մաչել կոչված տարածքի բնակատեղը, միջնադարյան գերեզմանոցը, մատուռները, եկեղեցիները, խաչքարերը վկայում են, որ ներկայիս Դրմբոնում և հարակից տարածքներում դեռևս հնագույն ժամանակներից հայկական բնակավայրեր են եղել:

Մշտապես կրկնվող պատերազմների, դրան հաջորդած սովի, մասսայական հիվանդությունների, մահտարժամի պատճառով այդ բնակավայրերը ոչնչացել են, իսկ կենդանի մնացած ազգաբնակչության մի հատվածն էլ փորձել է բախտ որոնել օտար ափերում:

Վերոհիշյալ տարածքները հետագայում անցան Գանձասարի կաթողիկոսական աթոռի իրավասության տակ, որտեղ հիմնականում անասուններ էին պահում: Առավել արդյունավետ գյուղատնտեսությամբ զբաղվելու նպատակով Վանք գյուղից 18–րդ դարի կեսերին մի քանի ընտանիքներ տեղափոխվում և մշտական բնակություն են հաստատում ներկայիս Դրմբոնի տարածքում:

[696] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հուվարի 1–ի դրությամբ, էջ 3:

19–րդ դարի կեսերին կազմված կալվածագրերում գյուղը ներկայացված է որպես Գանձասարի վանքի ձմեռանոց[697]:

Նոր բնակավայրում ամուր հաստատվելու նպատակով Գանձասարի վանքը որոշ հողեր սեփականության իրավունքով տրամադրում է նրանց: Վերաբնակները հանգուցյալներին շարունակում էին հուղարկավորել Վանքի գերեզմանատանը:

Գյուղի ծերերի պատմածի համաձայն՝ Դրմբոնի գերեզմանատանը առաջին հանգուցյալին՝ Ռուշանանց Վանեսին, հուղարկավորել են 1865 կամ 1866 թ. ձմռանը:

19–րդ դարի ընթացքում Դրմբոնի բնակչության թիվը օրեցօր շատանում է, և այդ տարածքը բնակավայրի կարգավիճակ է ստանում:

Գյուղի բնակչությունը 1917–20 թթ. մասնակցել է արցախահայության ազատագրական պայքարին:

1920 թ. մայիսին խորհրդային կարգեր են հաստատվում Դրմբոնում: 1931 թ. Դրբոնում ստեղծվում է կոլտնտեսություն: Մինչև կոլտնտեսային կարգերի վերացումը տնտեսությունը ղեկավարել են Սիրակ Վարդանյանը, Աճատուր Առաքելյանը, Վոլոդյա Հարությունյանը, Թադևոս Սահակյանը, Շմավոն Դավթյանը, Կոլյա Հակոբյանը, Անդրանիկ Լազարյանը, Պայծառ Հարությունյանը, Սաշա Հակոբյանը, Սուրեն Հակոբյանը, Անդրանիկ Պետրոսյանը, Գավրուշա Հաթամյանը, Արմավիր Լալայանը, Միշա Հակոբյանը, Սուրեն Շաբոյանը, Վահան Ստեփանյանը, Հենզել Հայրապետյանը, Սերժիկ Ղալայանը, Ջոն Ասլանյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 105 մարդ, զոհվել է 49–ը, որոնց հիշատակին կանգնեցվել է հուշարձան:

Մինչև 1924 թ. Դրմբոնում դպրոց չկար: 1924 թ. Նիկոլայ Շիրինյանի նախաձեռնությամբ գյուղում դպրոց է բացվում: Սկզբում այն տարրական դպրոց էր, հետագայում միջնակարգի կարգավիճակ ստացավ: Խորհրդային տարիներին Դրմբոնում կառուցվել է տիպային դպրոց: 1992 թ. այն ավերվել է ադրբեջանցիների կողմից: Գյուղի ազատագրվելուց հետո դասապարապմունքները կազմակերպվել են ուսուցիչ Կարո Ղալայանի տանը:

2004–2005 թվականներին «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով նոր դպրոց է կառուցվել: 2014–2015 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 70 աշակերտ, դասավանդում՝ 15 ուսուցիչ: 1924 թվականից մինչև 2018 թվականը դպրոցի տնօրեններ են աշխատել Սարգիս Բաղրյանը, Սողոմոն Վեզիրյանը, Անդրանիկ Խազխազյանը, Լևոն Գասպարյանը, Գեղեոն Դանիելյանը, Լևոն Սամվելյանը, Սարգիս Աթայանը, Աբրահամ Լալայանը, Արխո Կսեպտերիդիսը, Էլզա Գյուրջյանը, Ժորա Հակոբյանը, Սիրուշ Ալլահվերդյանը:

[697] Ցուցակ կալուածոց վանօրեից Ղարաբաղու վիճակի, կազմեալ ի 23 օգ., 1854 ամի, Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 146–147:

Ծննդով Դրմբոնից են Սոցիալիստական աշխատանքի հերոս Հեղուշ Լալայանը և ԱՀ զինանշանի հեղինակ, ԱՀ ժողովրդական նկարիչ Լավրենտ Ղալայանը:

Արցախյան ազատագրական շարժումը նոր կացություն է ստեղծում նաև Դրմբոնում: 1989 թ. գյուղում ստեղծվում է կամավորական ինքնապաշտպանական ջոկատ: Սերժիկ և Բորիկ Ասլանյանները Երևանից վերադառնալով գյուղ Դրմբոնի և հարակից գյուղերի պաշտպանությանը ավելի կազմակերպված բնույթ են տալիս:

Ադրբեջանի զինված ուժերի և նրանց ուղեկցող ավազակային զինված խմբերի ճնշման տակ 1992 թ. հունիսին խաղաղ բնակչությունը հեռանում է հայրենի գյուղից: 1993 թ. գյուղն ազատագրելուց հետո այդտեղ է տեղակայվում Մարտակերտի պաշտպանական շրջանի շտաբը: Ռազմական գործողությունների ժամանակ գյուղից զոհվել են 6 ազատամարտիկներ:

Դրմբոնից ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի է արժանացել Ռաֆայել Խաչատրյանը:

Պատերազմի ավարտից հետո գյուղն արագ վերականգնվել է: Մանավանդ 2002 թ., երբ «Բեյզ Մեթըլս» ընկերությունը սկսեց շահագործել Դրմբոնի բազմամետաղ հանքավայրը, գյուղի կյանքը ավելի աշխուժացավ: Բնակիչները, որոնք ներգրավված էին հանքաարդյունաբերության մեջ, սկսեցին կայուն եկամուտներ ունենալ:

Դրմբոնում գործում են դպրոց, մշակույթի տուն, մանկապարտեզ, գրադարան, բուժկետ, գյուղապետարան, առևտրի 9 օբյեկտ և 1 բանկի մասնաճյուղ:

Դրմբոն գյուղում և նրա շրջակայքում պահպանվել են մի շարք պատմաճարտարապետական ու հնագիտական հուշարձաններ: Դրանցից հայտնի են Ք. ա. 2-1-ին հազարամյակներին վերաբերող Լոկեն հող տարածքի դամբարանադաշտը, 12-րդ դարի Մանդուրի եկեղեցին, Թխկուտ գոմեր, Մուքին խաչ, Սհարանց խաչ մատուռ սրբատեղիները, 11-18-րդ դարերի խաչքարերը, որոնցից հայտնի են 11-12-րդ դարերի Ճոխտակ խաչ 2 խաչքարերը, 11-13-րդ դարերի Մշակա խաչը, 11-12-րդ դարերի Մանդուռ խաչքարը և 12-18-րդ դարերի Ղլբենին խաչ խաչքարերի խումբը:

Համայնքի աղբյուրներն են՝ Շիրինանց, Խումարեն, Խնձորին, Հոռեն, Քոռ և Միհավեն:

Գյուղի նշանավոր հանդամասերն են Կոռ քարը, Ծակ քարը, Կըրիձին յաստանը, Մեծ մոշեն մանը, Պեխուտ ծորը, Ջըղլըղներեն տակը, Ղլեն յաստանը, Ծիրանոտ գյունեն, Թաքուն գյունեն, Քամհար խութը, Երգյան ծորը, Մորեն ղալը, Միդանեն առաջը, Մաչախ, Մըշըհավեն տափը, Թալան-ղլանցը, Տրխտրկներեն յաստանը, Խըչերեն քամակը, Յերե հարթը, Թառին տեղը, Կըրտըմանը, Շահրազը, Շենատեղը, Մամնդուռը, Մեծ տափը, Պըլպըլանը, Հըձարկեն աղբյուրը, Ըսլանանց խմհատը, Շորեն թալան, Դերին ծորը, Խնմեն տափը, Շանոտ ծորը, Լիվիգյանա ազնոտը, Դաշլուն, Լծատափը, Հաչա կաղնին, Սև քերծեն պատը, Ճղացեն պատը, Ծիրանոտը, Մեծ սզնոտը, Պիծի լվեգյան, Տանձոտը:

Դրմբոնում ներկայումս ապրում են Հասան Ջալալյան, Ղալայան, Օսեփանց, Լալայան, Շաբոյան, Ահարոնյան, Լազարյան, Շիրինյան, Առուշանյան, Ծատուրանց (Գևորգյան) ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները հասանելի են բնակչությանը:

Դրմբոն համայնքում 1970 թ. կար 119 տուն, 512 բնակիչ, 1979 թ.՝ 137 տուն, 455 բնակիչ, 1987 թ.՝ 121 տուն, 428 բնակիչ[698], իսկ 2018 թ.՝ 142 տուն, 515 բնակիչ[699]: Դրմբոնը Արցախի այն քիչ բնակավայրերից է, որտեղ բնակչության թվաքանակն օրեցօր աճում է:

Գտնվելով Ստեփանակերտ–Քարվաճառ–Վարդենիս–Երևան նորակառույց մայրուղու վրա գյուղը նոր զարգացման հեռանկարներ ունի:

ՋԱԳԼԻԿ

Բնակավայրը գտնվում է ԱՀ հյուսիսային հատվածում՝ Թարթառ գետի ձախ ափին՝ Մռավ սարի ստորոտի գեղատեսիլ մի վայրում: Նախկինում գյուղը գտնվում էր Արցախի Ջրաբերդ գավառում:

Ջագլիկը ԱՀ մյուս գյուղերի համեմատ բավականին նոր բնակավայր է: 1918-1920 թվականներին պատմական Գարդմանի՝ Քարհատի շրջանի Փիփ կամ Ջագլիկ գյուղից և Արծվաշենից մի քանի ընտանիքներ գալիս և հաստատվում են Մռավի ստորոտում գտնվող հարմարավետ այդ վայրում: Նոր բնակիչները իրենց նախկին բնակավայրի անունով տարածքը կոչել են Փիփ, իսկ ավելի ուշ այն վերանվանվել է Ջագլիկ:

Շամքոր գետի աջ ափին գտնվող Հին Փիփ գյուղում պահպանված եկեղեցու արձանագրությունը վկայում է, որ 17-րդ դարում այդպիսի բնակավայր կար[700]: Ավանդության համաձայն՝ այս անվանումը բխում է Փեփրոնյա կույսի անունից[701]: Այս մոտեցումը հիմնավորվում է մասնավորապես 1885 թ. մի վավերագրում, ըստ որի՝ Հին Փիփ գյուղատեղիի եկեղեցին օծվել է նշված կույսի անվամբ[702]: 19-րդ դարում գյուղը վերանվանվել է Ջագլիկ: Նոր բնակավայրում գյուղացիները, իրենց հմտություններին համապատասխան, զբաղվում էին անասնապահությամբ, հողագործությամբ և որսորդությամբ:

Շուտով նոր բնակավայրում խորհրդային կարգեր են հաստատվում, իսկ 1931 թ. կազմավորվում է կոլտնտեսություն: Հետագայում հարևան Ումութլու գյուղի կոլտն-

[698] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 190:
[699] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:
[700] Մակար եպս. Բարխուտարեանց, Արցախ, էջ 300-301:
[701] Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, Երևան, 2004, էջ 258:
[702] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 29:

տեսության հետ կազմակերպվում է միացյալ տնտեսություն: 1987 թ. Ջագլիկի կոլտնտեսությունը դարձել է Մարտակերտի հմ. 120 մեքենայացված շարժական շինարարական վարչության օժանդակ տնտեսություն:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 15 մարդ, որից 5-ը զոհվել է:

Փոքր այդ գյուղը արցախյան պատերազմում իր արժանի ավանդն է ունեցել հաղթանակի կերտման գործում: Ութ զագլիկցիներ՝ Սուրեն Անտոնյանը, Արթուր Խաչատրյանը, Աշոտ Ադամյանը, Քաջիկ Սարգսյանը, Արտաշ Ադամյանը, Խաչատուր Չորանյանը, Վլադիկ Ադամյանը, Մխիթար Կոնջորյանը զոհվել են: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի են արժանացել Արթուր Խաչատրյանը և Սուրեն Անտոնյանը:

Խորհրդային տարիներին Ջագլիկում գործել է տարրական դպրոց: 1988 թ. ավարտվում է գյուղի ութամյա դպրոցի շինարարությունը: Դպրոցը շուտով ստանում է նաև միջնակարգի կարգավիճակ: Նախկին տարրական դպրոցի վարիչներ են աշխատել Հ. Սարգսյանը, Ս. Սարգսյանը, Մ. Սարգսյանը, Ա. Բաբայանը, իսկ միջնակարգի տնօրեններ են եղել Ս. Պետրոսյանը, Ա. Բաբայանը, Ս. Սարգսյանը:

2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 42 աշակերտ, դասավանդում՝ 16 ուսուցիչ:

Համայնքում գործում են գյուղապետարան, բուժկետ, դպրոց, ակումբ, հանդիսությունների սրահ, առևտրի 2 օբեկտներ:

Համայնքի տարածքով է անցնում Թրղե-Հաթերք ոռոգման ջրատարը: Գյուղի ճանապարհները սալահատակված են: Համայնքի տարածքում առկա են թվով 5 աղբյուրներ՝ Օխտը, Ներքին, Սրըշենու, Քոռ և Հունոտի:

Գյուղի նշանավոր հանդամասերն են՝ Կովահող, Սարուխաչ, Ջղանուտ: Ջագլիկում ապրում են Անտոնանց, Այունց, Գագունց, Կոնջորանց, Ադամանց, Մղդուսունց, Չոբանանց ազգատոհմերը:

Արցախյան պատերազմից հետո գյուղում ավելացել է երիտասարդ ընտանիքների քանակը, որոնց մեծ մասի համար պետական միջոցներով տներ են կառուցվել:

1970 թ. Ջագլիկում կար 44 տուն, 227 բնակիչ, 1979 թ.՝ 44 տուն, 222 բնակիչ, 1987 թ.՝ 39 տուն, 186 բնակիչ[703], 2018 թ.՝ 55 տուն, 261 բնակիչ[704]: Նրանք աշխատում են դպրոցում, «Կաշեն»-ի հանքարդյունաբերական ձեռնարկությունում, զբաղվում անասնապահությամբ և հողագործությամբ: Երիտասարդների մի մասը՝ որպես պայմանագրային զինծառայողներ, պաշտպանում է պետական սահմանը:

[703] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 190:

[704] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

ՋԱՐԴԱԽԱՉ

Գյուղը գտնվում է Արցախի հյուսիսային հատվածում՝ Թարթառ գետի միջին հոսանքի ձախ ափի բլրալանջին՝ Մռավի լեռնաշղթայից դեպի հարավարևելք:

Համայնքի տարածքում առկա են հնադարյան դամբարանադաշտ, միջնադարյան գյուղատեղիի, գերեզմանոցի մնացորդներ, 12-13-րդ դարերի խաչքարեր: Պատահական չէ, որ Ջարդախաչի նոր բնակիչները գյուղատեղի են ընտրել Սարսանգի ջրամբարի հարևանությամբ գտնվող այդ բնակավայրը:

Ջարդախաչը հիմնադրվել է 1918 թ.: Բնակիչներն այստեղ են տեղափոխվել Հադրութի շրջանի Խծաբերդ և Շուշիի շրջանի Մեծ Շեն գյուղերից: Առաջին բնակիչներն էին՝ Խաչատուր և Մակիչ Մուսայելյանները, Սարգիս Ոսկանյանը, Ենգիբար Հունանյանը և ուրիշներ:

Տեղացիները պատմում են, որ նոր բնակիչները Պլանդամ կոչվող տեղամասի անտառը հատելուց հետո, հերկելիս, հողի միջից դուրս է եկել մի մեծ խարքար, որը պահվում է գյուղում: Նորաբնակներն այդ նույն տարածքում ցանում են «Ջարդա» կոչվող ցորեն, որը տալիս է առատ բերք: Այդտեղից էլ բնակավայրը ստացել է Ջարդախաչ անունը: Գյուղի հիմնադրումը համարյա թե համընկավ Արցախում խորհրդային կարգերի հաստատման հետ:

1930-1931 թթ. գյուղում ձևավորվեց կոլեկտիվ տնտեսություն: Կոլտնտեսության վարչության նախագահներն էին Ավագ Միրզոյանը, Ռուբեն Սարգսյանը, Արմենակ Հունանյանը, Ալեքսան Մուսայելյանը:

1950 թ. Չափարի, Ջարդախաչի և Իմերթ Քերավանդի տնտեսությունները խոշորացվեցին, և կազմավորվեց մեկ կոլտնտեսություն: 1989 թ. Ջարդախաչի կոլտնտեսությունն այս անգամ միացավ Հաթերքի Ա. Միկոյանի անվան տնտեսությանը: Այնուհետև բաժանվեց 1990 թ. վերջերին: 1999 թ. կոլտնտեսությունը լուծարվեց և հողը, անասնագլխաքանակը, անշարժ և շարժական գույքը տրվեցին մենատնտեսներին:

1960-ական թվականներից գյուղացիների կյանքը բարվոք դարձավ: Նախկին հողաշեն տներին փոխարինեցին մեկ-երկու հարկանի տներ:

1965 թվականին գյուղն էլեկտրաֆիկացվեց, կառուցվեցին դպրոց, բուժկետ, ակումբ, խանութներ:

1970 թ. այստեղ կար 61 տուն, 252 բնակիչ, 1979 թ.՝ 58 տուն, 137 բնակիչ, 1987 թ.՝ 53 տուն, 165 բնակիչ[705]:

Հարենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 65 մարդ: Նրանցից 10 հոգի զոհվել են: Այսօր գյուղի կենտրոնում նրանց հիշատակը հավերժացնող հուշարձան է կառուցված:

Արցախյան ազատագրական պայքարի առաջին իսկ օրվանից Ջարդախաչի բնակչությունն ամենաեռանդուն մասնակցությունն ունեցավ: Բաղդասար Մկրտչյանի

[705] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 192-193:

հրամանատարությամբ կազմավորվեց 7 հոգուց բաղկացած ջոկատ, որոնց թիվը շուտով հասավ 24-ի: Հետագայում ջոկատի հրամանատար դարձավ Սերժիկ Սարգսյանը: Այս ջոկատը 1992 թ. ներառվել է Մարտակերտի պաշտպանական շրջանի ստորաբաժանումների կազմի մեջ:

Շահումյանի անկումից հետո, 1992 թ. հուլիսի 4-ին բնակչությունը բռնեց գաղթի ճանապարհը: Գյուղում մնացած 4 խաղաղ բնակիչներից 3-ին ադրբեջանցիները սպանեցին:

1992 թ. հուլիսի 19-ին ազատագրվեցին Հաթերք, Զարդախաչ և Չափար գյուղերը: Ադրբեջանցի զինյալները 1992 թ. օգոստոսի 11-13-ը, անցնելով հակագրոհի, վերագրավեցին Թարթառի ձախափնյա գյուղերը, այդ թվում Զարդախաչը:

1993 թ. փետրվարի 20-ին Զարդախաչը վերջնականապես ազատագրվեց: Ռազմագործողություններին մասնակցել են Զարդախաչի 24 քաջորդիներ: Նրանցից Մհեր Հակոբյանը ոչնչացրել է ադրբեջանական ռազմական ուղղաթիռ և ինքնաթիռ: Ծնունդով Զարդախաչից Գեորգի Գասպարյանը (Գրաղ Ժորա) դարձել է գեներալ-մայոր և արժանացել «Արցախի հերոս» բարձր կոչմանը: Իրավամբ, նա համարվում է ԱՀ ՊԲ հրետանային զորամասերի հիմնադիրներից մեկը:

Պատերազմի տարիներին զոհվել են զարդախաչցի 5 ազատամարտիկներ՝ Գագիկ Գասպարյանը, Արմեն Մկրտչյանը, Սերժիկ Սարգսյանը, Մարտիկ Սարգսյանը, Պավել Մանուկյանը:

1940 թ. Զարդախաչում բացվել է տարրական դպրոց: 1961 թ. կրթօջախը ստացավ ութամյա դպրոցի կարգավիճակ: Դպրոցի տնօրեններ են եղել՝ Անդրանիկ Սայիյանը, Նիկոլայ Մակյանը, Արամ Աբրահամյանը, Սարգիս Ներսիսյանը, Նորա Մովսիսյանը: 1993 թվականից առ այսօր Զարդախաչի Գեորգի Գասպարյանի անվան հիմնական դպրոցի տնօրենն է Կարինե Ոսկանյանը:

2004-2005 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 17 աշակերտ, իսկ 2013-2015 թթ.՝ 24 աշակերտ, դասավանդում՝ 10 ուսուցիչ:

Դպրոցի շրջանավարտներից է բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ժորա Զոբանյանը:

Գյուղի շրջակայքում գտնվում են 12-13-րդ դարերի խաչքարեր, հին եկեղեցու, գերեզմանատան մնացորդներ, 17-րդ դարի Քրիստոնջ եկեղեցին:

Նշանավոր է գյուղի Մոշոտի աղբյուրը:

2018 թ. տվյալներով Զարդախաչում կար 37 տուն, 121 բնակիչ[706]: Նրանց հիմնական մասը զբաղվում է գյուղատնտեսությամբ:

[706] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

ԹԱԼԻՇ

Գյուղը գտնվում է Թարթառ գետի ստորին հոսանքում՝ ԱՀ հյուսիսային սահմանագլխին: Այս բնակավայրը տեղակայված է եղել պատմական Արցախի կենտրոնական հատվածում: Գյուղի արևմտյան սահմանը հիմնականում անտառածածկ բլուրներով է պատված: Թալիշի բնակլիմայական բարենպաստ պայմանները, հարուստ ու ոռոգովի հողատարածքները մարդկանց բարեկեցիկ կյանքի համար միշտ էլ նպաստավոր են եղել:

Թալիշի և նրա շրջակա տարածքների վրա կատարված հողային և շինարարական աշխատանքների ընթացքում հայտնաբերված նյութերը, մասնավորապես՝ քարից պատրաստված գործիքները, քարարկղային թաղումները վկայում են, որ այդ հատվածում մարդն ապրել է հնագույն ժամանակներից:

Ավանդությունը պատմում է, որ ներկայիս Թալիշից 2 կմ հարավ-արևմուտք հեռավորության վրա՝ պատմական Դյութական բնակավայրում, 5-րդ դարի վերջերին եղել է Վաչագան Բարեպաշտի ամառանոցը: Քյունքաթ աղբյուրն ու նրա շրջակայքը նույնպես Հայոց արևելից կողմանց թագավորների համար ծառայել են որպես ամառանոց:

Ամենայն հավանականությամբ «տարվա օրերի թվով» Վաչագան Բարեպաշտի կառուցած եկեղեցիներից մեկը Հոռեկավանքն (Գլխո վանք) է, որն այսօր պահպանվում է Թալիշի տարածքում: Դրա մասին մեզ տեղեկություն է հաղորդել Մովսես Կաղանկատվացին՝ վանքը անվանելով Հիւրեկ[707]:

5-րդ դարում Հոռեկա վանքի շրջակայքում եղած բնակավայրն անվանվել է Թարիջ[708]:

1140 թ. հզոր երկրաշարժից հետո, որի ժամանակ ձևավորվել էր նաև Ալիարակ (Գյոյ գյոլ) լիճը, ավերվել է Հոռեկա վանքը: Այն վերակառուցվել է 1279 թ.: Դրանից հետո գյուղը անվանակոչվել է Հոռեկա:

Միջնադարում ներկայիս Թալիշից 1 կմ հեռավորության վրա գոյություն է ունեցել նաև Շիրախանա բերդաքաղաքը: Գյուղի տարածքում պահպանվել են 5-8-րդ դարերում կառուցված առանց գրության խաչքարեր: Մեզ հասած 14-16-րդ դարերի մահարձաններն ու վերոհիշյալ փաստերը վկայում են, որ բնակավայրում կյանքը շարունակվել է նաև հետագա դարերում:

16-րդ դարի վերջերին և 17-րդ դարի սկզբներին գյուղը տեղափոխվել է ներկայիս Թալիշի բնակատեղին: Քոչվոր ցեղերի ճնշումների տակ գյուղի բնակչությունը մի քանի անգամ թողել է իր հարազատ բնակավայրերը: Նման փաստ արձանագրվել է 18-րդ դարի կեսերին: 1795 թ. Աղա-Մուհամադ շահի արշավանքից և դրան հաջորդած սովի ու մահտարծամի պատճառով Թարինջի (Հոռեկա) բնակիչները տեղափոխվել են Բոլնիս: 1807-1809 թվականներին նրանք նորից վերադառնում են և հիմ-

[707] Մ. Կաղանկատվացի, էջ 8, 278:

[708] Արցախապատում, գիրք 4, Թալիշ, Ստեփանակերտ, 2015, էջ 168:

նում Աղջաղալա, Մանասին թաղ գյուղերը (հետագայի Շահումյանի շրջանում), ինչպես նաև վերականգնում իրենց նախկին բնակավայրերն ու անվանում Թբլեցիք (Թբիլիսի բառից):

1822 թ. Մելիք-Բեգլարյան Թալիշ բեկի անունից գյուղը վերանվանվել է Թալիշ: Նկատենք նաև, որ այդ ժամանակահատվածում Մեսրոպ Թաղիադյանցը այդ գյուղն անվանել է Դիզա:[709]

Հարկ է նշել, որ Թալիշի հարմարավետ և ռազմավարական նշանակություն ունեցող դիրքը նպաստել է, որ այդ բնակավայրը դառնա Գյուլիստանի մելիքության վարչական կենտրոնը:

1601-1603 թթ. ընթացում Սև Աբովն Ուտիքի Նիժ ավանից տեղափոխվում է Թալիշ և բնակավայրը դարձնում Մելիք-Բեգլարյանների նստավայրը: Հետագայում Մելիք Բեգլարի անունից այդ տոհմը ստացավ Մելիք-Բեգլարյան անունը: Այս տոհմը, մինչև Արցախի Ռուսաստանին անցնելը, կարևոր դերակատարում է ունեցել Հայոց արևելից նահանգների հյուսիսային սահմաններն անառիկ պահելու գործում:

Մելիք Աբով Ա-ին հուղարկավորել են 1632 թ. Հոռեկա վանքի բակում, որտեղ էլ պահպանվում է նրա տապանաքարը: Այդ վանքում են ամփոփվել նաև Մելիք-Բեգլարյան մյուս մելիքների մարմինները:

Թալիշի հողերը ջրարբի դարձնելու նպատակով 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Մելիք-Բեգլարյանները երկու ջրանցք կառուցեցին, ինչը մեծապես նպաստեց գյուղատնտեսության զարգացմանը: Այդ ամենը խթանեց ազգաբնակչության թվաքանակի աճին:

1920 թ. գարնանը ռուսական կարմիր բանակը հասել էր Այսրկովկաս: Նորից բարդացավ Արցախի վիճակը: Դաշտավայրից թուրքերի կողմից հայկական բնակավայրերի վրա հարձակումները շատացան: Թալիշի հայերը երկու ամսով 1920 թ. մարտին լքեցին իրենց բնակավայրերը:

Խորհրդային խաղաղ տարիները նպաստավոր էին Թալիշի զարգացման համար: 1930 թ. գյուղում ստեղծվեց կոլտնտեսություն: Կոլտնտեսության նախագահներն էին՝ Սաշա Մարտիրոսյանը, Վիկտոր Ջանբարյանը, Ալեքսան Խալափյանը, Մարգար Խալափյանը, Իշխան Բաղդասարյանը, Բախշի Դալլաքյանը, Ջինավոր Օհանյանը, Մինաս Աղաջանյանը, Սաշա Մարտիրոսյանը, Գրիշա Եղիազարյանը, Հայկազ Սահակյանը, Գառնիկ Աղաջանյանը, Մովսես Մովսիսյանը:

Կոլտնտեսությունն ուներ շուրջ 420 հա պտղատու այգի, 1560 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 7500 ոչխար, 2500 խոզ, 8000-ից ավելի հավ: Արտադրվում էր 4500 տ հացահատիկ, 5500 տ խաղող, 3840 տ կաթ, 792 տ միս, 1 մլն. 245 հազ. հատ ձու, 96 տ բուրդ, 26 տ բոժոժ[710]:

[709] Մեսրովբ Թաղիոեանց, Ճանապարհորդութիւն ի Հայս, հ. 1, էջ 302:

[710] Արցախապատում, էջ 109-110:

Գյուղում սկսեցին կառուցել երկհարկանի տներ, մշակույթի տուն, հասարակական նշանակության բաղնիք, հյուրանոց, 3 խանութ, փոստ, ծննդատուն, բուժկետ, դպրոց, մանկապարտեզ, կենցաղի տուն, մարզադահլիճ, երկու գրադարան:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են 450 թալիշցիներ, նրանցից 224 հոգի զոհվել են: Նրանց հիշատակին 1968 թ. գյուղում կառուցվել է հուշարձան:

1870-ական թվականներից գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցուն կից գործել է դպրոց: 1886 թ. գյուղում բացվել է եկեղեցական-ծխական, իսկ 1958-1959 ուսումնական տարում միդասյա երկսեռ ծխական դպրոց[711]: Խորհրդային տարիներին գյուղում գործում էր միջնակարգ դպրոց, որտեղ 1988-1992 թթ. սովորում էր շուրջ 320 աշակերտ: Մինչև 2016 թ. ապրիլյան պատերազմը Թալիշում գործել է հիմնական դպրոց:

Թալիշում են ծնվել արցախյան ազատագրական պայքարի նվիրյալ Մելիք Ֆրեյդունը (18-րդ դար), Մելիք Հովսեփը (18-րդ դարի վերջ — 19-րդ դարի սկիզբ), բանաստեղծ Հակոբ Հակոբյանը (կիսանդրին կանգնեցրած է գյուղում), տնտեսագիտության դոկտոր Ռուբեն Դանիելյանը, գրող Ջորայր Խալափյանը, բանաստեղծ Աբրահամ Բախշունին, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդվարդ Հարությունյանը, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրա Մովսիսյանը:

Գյուղում և նրա շրջակայքում պահպանվում են մի շարք պատմաճարտարապետական հուշարձաններ: Մասնավորապես դրանցից հայտնի է Հոռեկա վանքը, Մելիք-Բեգլարյանների ապարանքը, 1894 թ. կառուցված Ամենափրկիչ եկեղեցին, Պապին տակ ուխտավայրը: Թալիշից 2 կմ հեռավորության վրա պահպանվում են Դյութական գյուղատեղիի կիսավեր շինությունները, 1151 թ. կառուցված եկեղեցու մնացորդները: Այստեղ պահպանվել են նաև միջնադարյան խաչքարեր, գերեզմանոցներ: Թալիշի տարածքում է գտնվում նաև Ջրվշտիկ կամ Եղիշե առաքյալի վանքը, որի գավթում թաղված է Վաչագան Բարեպաշտ թագավորը (5-րդ դար) և Մելիք-Բեգլարյան մելիք Աղամը:

Հոռեկա վանքում գրված մագաղաթյա Ավետարանը մինչև խորհրդային տարիները պահպանվում էր Թալիշում: Այն ներկայումս պահպանվում է Երևանի Մատենադարանում:

Գյուղի տարածքում հաշվառված են 26 հուշարձաններ:

Թալիշում կան բազմաթիվ աղբյուրներ՝ Բարակ, Արցախ, Միջնաշենի, Քոնով, Նիկոլայի, Մալավանի, Տմբլի, Շկոլի, Կլուբի, Մեժունց, Սպիտակ, Մոխանի, Բժշկի, Համամի, Հոռի, Միջնակ, Դյութք, Ճոխտ, Ճղպրեն: Հայտնի են նաև Բլուլբյութա, Երկար, Աղի լճերը:

Թալիշցիներն իրենց մասնակցությունը բերեցին արցախյան ազատագրական պայքարին: 1992 թ. հունիսի 16-ին ադրբեջանական հրոսակները գրավեցին Թալիշը: Գյուղի 2000-ից ավելի բնակչությունը հանգրվանել էր ՀՀ և ԱՀ տարբեր բնա-

[711] Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Արցախի կրթական համակարգը, հ. 1, էջ 432:

կավայրերում: 1994 թ. ապրիլի 14-ին հայկական բանակը նորից ազատագրեց պատմական Թալիշը: Մարտական գործողություններին մասնակցել են 250 թալիշցիներ, նրանցից 44 հոգի զոհվել են: Արոդյա Իվանի Խալափյանը, Վիլեն Բարաթի Պետրոսյանը, Շամո Էդիկի Խաչատրյանը՝ հետմահու, պարգևատրվել են ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

2016 թ. ապրիլյան պատերազմի ժամանակ Թալիշ գյուղը հրետակոծվեց թշնամու կողմից: Գյուղի բնակչությունը ստիպված լքեց հայրենի բնակավայրը: Նրանք հանգրվանեցին Մարտակերտի շրջանի Ալաշան կոչված տեղամասում:

2 տարիների ընթացքում ԱՀ կառավարության և բարերարների կողմից մեծածավալ աշխատանքներ են կատարվել Թալիշում: Հայրենի գյուղն այսօր սպասում է իր զավակների վերադարձին: Համայն հայության ջանքերով Թալիշը նորից կդառնա Արցախի բարգավաճ բնակավայրերից մեկը:

Թալիշում 19-րդ դարի վերջերին կար 130 տուն, 1022 բնակիչ, 1987 թ.՝ 548 տուն, 1995 բնակիչ[712]: Արցախյան պատերազմի նախօրեին գյուղում բնակվում էր 2200 մարդ: 2010 թ. Թալիշում կար 148 տուն, 565 բնակիչ[713]: 2019 թ. վերջերին գյուղում նորից 40 ընտանիք է հաստատվել:

ԹԲԼՂՈՒ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսարևելյան հատվածում՝ Մարտակերտի շրջանում՝ նախկին Խաչեն գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Խաչեն գետի աջափնյա Քոլատակ վտակի ափին:

Թբլղուն Արցախի հին բնակավայրերից է:

Ընդհանուր առմամբ Խաչեն գետի վերին հոսանքի երկու ափերի հարակից տարածքներն էլ Արցախի աշխարհիկ և հոգևոր տերերի համար կարևոր դեր են ունեցել:

Ուսումնասիրողներից ակադեմիկոս Սուրեն Երեմյանը գտնում է, որ Աղուան (Աղվեն) ամրոցը 4-5-րդ դարերում թագավորների ամառանոցներից մեկն է եղել[714]:

Վերոնշյալ ամրոցը Թբլղու գյուղին մերձ է, տեղաբաշխված է նրանից ներքև և գտնվում է Քոլատակ, Խաչեն գետերի միախառնման եռանկյունու անմատչելի հատվածում: Ամրոցի խոցելի հատվածը ամրացված էր պարսպաշարով:

Ուսումնասիրողներից Ս. Մելքումյանը առանց սկզբնաղբյուրը մատնանշելու գրել է, որ այն գոյություն ունի 7-րդ դարից: Որոշակի հանգամանքների ազդեցության տակ բնակավայրը դատարկվել էր և 17-րդ դարի սկզբներին Իսրայել անունով մի հայ մարդ հաստատվել էր լքված գյուղում, ու բնակավայրը նոր շունչ էր առել[715]:

[712] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 163:
[713] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[714] Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963, էջ 34:
[715] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 172:

1667 և 1745 թվականների աղբյուրներում գյուղը ներկայացված է Թամղալլու (Թամղալա)[716], իսկ ավելի ուշ Դամղալու[717], Թմբլղի[718] անուններով:

13-րդ դարում գյուղում եկեղեցի է կառուցվել: Բնակավայրից վերև՝ ժայռի վրա է գտնվում Ծակ քար ապաստարանը:

Արցախում խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1930 թ., գյուղում կոլտնտեսություն էր կազմակերպվել: 1977 թ. Առաջաձորի և Քոլատակի կոլտնտեսությունների հետ կազմել են միասնական պետական տնտեսություն: 1988 թ. ապախոշորացումից հետո Թբլղուում շարունակվել է պահպանվել կոլտնտեսային կարգը: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո կազմավորվել են մասնավոր տնտեսություններ:

Գյուղից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 76 մարդ: Նրանցից 42-ը զոհվել է:

Փոքրիկ այդ գյուղի երիտասարդները մասնակցել են արցախյան ազատագրական պատերազմին: Մեկ ազատամարտիկ զոհվել է: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվել է Ռաշիդ Ավանեսյանը:

Խորհրդային տարիներին գյուղում գործում էր ութամյա դպրոց:

Աշակերտների թվաքանակի նվազման պատճառով, դպրոցը տարրականի կարգավիճակ է ստացել և դարձել Քոլատակի միջնակարգի մասնաճյուղ:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրի ջրացանց:

Բնակավայրի աղբյուրներն են Դարգին թավ, Շորին ծորի, Վանքի տակի, Տզզանի, Սաքի ապոր, Լբսնընտեղի:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, դպրոց, բուժկետ, ակումբ:

Թբլղուում 1970 թ. կար 60 տուն, 318 բնակիչ, 1979 թ.՝ 65 տուն, 275 բնակիչ, 1987 թ.՝ 63 տուն, 211 բնակիչ[719], 2010 թ.՝ 52 տուն, 179 բնակիչ[720], 2018 թ.՝ 42 տուն, 145 բնակիչ[721]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[716] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 3, թ. 97, 113, հմմտ. Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 110:
[717] Описание Карабагской провинции, составленное в 1823, с. 88, հմմտ. Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 110:
[718] Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 667:
[719] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 181:
[720] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[721] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

ԽՆԿԱՎԱՆ

Գյուղը գտնվում է ԱՀ Մարտակերտի շրջանի հյուսիսարևմտյան մասում՝ Թարթառ գետի աջ ափին՝ Ղարաբաղի լեռնաշղթայի Հակառակաբերդի լեռնաճյուղի անտառապատ գեղատեսիլ լանջին: Խնկավանը գտնվում է Վաղուհասի հարևանությամբ և համեմատաբար նոր բնակավայր է: Գյուղը հիմնվել է 19-րդ դարի վերջին Վաղուհասից այստեղ տեղափոխված ընտանիքներից: Մեկ այլ կարծիքի համաձայն՝ գյուղի առաջին հիմնադիրը եղել է Ղումաշ անունով մի մարդ, որը Սյունիքում թուրքի սպանելուց հետո ապաստանում է Վաղուհասում և հիմնում վերոհիշյալ բնակավայրից ոչ շատ մեծ հեռավորության վրա գտնվող Խնկավանը: Նրանից հետո այստեղ տուն են կառուցել Օհանը, Աբրահամը[722]:

Գյուղում խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1929 թ., Խնկավանի մենատնտեսները ներգրավվեցին Վաղուհասի կոլտնտեսության մեջ: 1989 թ. ապախոշորացման արդյունքում Խնկավանում ստեղծվում է առանձին կոլտնտեսություն: Նոր ստեղծված տնտեսության վարչության նախագահն էր Ռազմիկ Աթասյանը, այնուհետև դարձավ Աշոտ Գրիգորյանը: 1998 թ. կոլտնտեսության լուծարումից հետո բնակչությունը սկսել է զբաղվել անհատական տնտեսությամբ:

Խնկավանից 56 մարդ մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Նրանցից 25 հոգի զոհվել են:

Արցախյան ազատագրական պայքարի առաջին տարիներից Խնկավանում կազմավորվել է ինքնապաշտպանական ջոկատ՝ Ս. Աբրահամյանի և Գ. Միքայելյանի հրամանատարությամբ:

1992 թ. հունիսի 4-ին ադրբեջանական բանակի ճնշման տակ Խնկավանի բնակիչները հեռացան գյուղից: 1993 թ. փետրվարի 12-ին Խնկավանը Արցախի Պաշտպանության բանակի հարվածների տակ ազատագրվեց: Ազատագրական պատերազմի տարիներին 8 խնկավանցի երիտասարդներ զոհվել են:

Խորհրդային առաջին տարիներից սկսած Խնկավանի դպրոցական երեխաները սովորում էին Վաղուհասի միջնակարգ դպրոցում: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Խնկավանում բացվել է տարրական դպրոց, 1970 թ. այն դարձավ 8-ամյա, իսկ 1988 թ. միջնակարգ: Դպրոցի տնօրեններ են եղել Ասատուր Աբրահամյանը, Միշա Միքայելյանը, Գարիկ Հարությունյանը, Մագրաֆինա Ասրյանը, Ալվարդ Զաքարյանը և Դավիթ Շիրինյանը:

2004-2005 ուս. տարում դպրոցում սովորում էր 26 աշակերտ: Ներկայումս Խնկավանի դպրոցը Վաղուհասի կրթական հաստատության մասնաճյուղն է:

Խնկավանի և նրա շրջակայքի պատմական հուշարձանների մասին ներկայացվել է Վաղուհաս բնակավայրին վերաբերող տեքստի մեջ:

[722] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 237:

Համայնքի տարածքում նշանավոր աղբյուրներ են՝ Բախշալին տափը, Շինատեղ, Սևունց թաղի, Հակոբի և Ղրուղանց տափի:

Խնկավանում շարունակում են ապրել Դիլլաքանց, Ակուփանց, Սևունց, Ուսուբանց, Առաքելանց, Զաքյունց ազգատոհմերի ներկայացուցիչները:

2018 թ. տվյալներով Խնկավանում կար 44 տուն, 179 մարդ[723]: Բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԾԱՂԿԱՇԵՆ

Բնակավայրը գտնվում է ԱՀ հյուսիսարևելյան հատվածում՝ Մարտակերտ շրջկենտրոնից 9 կմ հարավ-արևմուտք: Գյուղը հիմնականում բլրապատ վայրում է գտնվում: Մարտակերտի շրջանի այս բնակավայրը համեմատաբար նոր է և կազմավորվել է 1890-ական թվականներին Կուսապատից այստեղ տեղափոխվածների հաշվին: Բնակավայրի տարեցները և իրենց գյուղի պատմության քաջատեղյակ ծաղկաշենցիները պատմում են, որ առաջինը Կուսապատից այստեղ է տեղափոխվել մի դարբին, և այդտեղից էլ բնակավայրը ստացել է Դամիրլու[724] անվանումը:

1988 թ. օգոստոսի 30-ին համայնքի ընդհանուր ժողովը գյուղը վերանվանել է Ծաղկավան: Այնուհետև խնդրել են ժողովրդական պատգամավորների շրջանային խորհրդին՝ հաստատելու ընդունված որոշումը[725]: Սակայն ավելի ուշ՝ ԱՀ Գերագույն խորհրդի տեղանվանափոխության հանձնաժողովի որոշման համաձայն՝ բնակավայրը ստացել էր Կաքավաթաո անվանումը: 1995 թ. վերանվանվել է Ծաղկաշեն:

Հարկ է նկատել, որ որոշ հեղինակներ՝ Ս. Մելքումյանը[726] և Մ. Մանուկյանն[727] իրենց աշխատությունների մեջ, գյուղի նախկին Դամիրլու անունից տպավորված, սխալմամբ գրել են, թե իբր վերոհիշյալ բնակավայրում հայերի հետ խառը ապրում էին նաև թուրքեր: Մինչդեռ, իրականում Ծաղկաշենում վերջիններս երբևէ չեն բնակվել:

Ընդհանուր առմամբ Կուսապատը, մելիքանիստ լինելով, խիտ բնակեցվածության և սակավահողության պատճառով, գյուղացիները տեղափոխվել և իրենց նախկին բնակավայրից ոչ շատ մեծ հեռավորության վրա նոր գյուղեր էին հիմնել: Այդպիսինն էր նաև Ծաղկաշենը:

Մինչև 1920 թվականը Ծաղկաշենն ապրում էր տվյալ ժամանակաշրջանին հատուկ տնտեսական, սոցիալական օրինաչափություններով, սակայն խորհրդային

[723] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:
[724] Արցախյան բարբառում դարբինը հնչում է դամիրչի ձևով:
[725] «Բարեկամություն» թերթ, 20 հոկտեմբերի, 1988:
[726] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 195:
[727] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 238:

կարգերի հաստատվելուց հետո ամեն ինչ արմատապես փոխվեց, այդ թվում և տնտեսակարգը:

1929 թ. Ծաղկաշենում կազմակերպվեց կոլտնտեսություն, որի առաջին ղեկավարը դարձավ Տիգրան Առաքելյանը: 1941 թվականից այդ պաշտոնում հաջորդաբար աշխատել են Արամ Խաչատրյանը, Կատին Գրիգորյանը, Սեդրակ Ավթանդիլյանը, Մակար Խաչատրյանը:

Տնտեսությունների խոշորացման պայմաններում 1975 թ. Ծաղկաշենի կոլտնտեսությունը միացվեց Ներքին Հոռաթաղի սովխոզին: Խաղողագործության ասպարեզում ունեցած հաջողությունների համար Գոհարիկ Ազրյանը արժանացել է մեդալների և շքանշանների:

Հետխորհրդային շրջանում նորից վերականգնվեց Ծաղկաշենի կոլտնտեսությունը, որը վերջնականապես լուծարվեց 1998 թվականին:

Գյուղի բնակչությունը մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: 59 մասնակիցներից 27-ը զոհվել են:

Ծաղկաշենի երիտասարդությունը 1991-1994 թթ. ակտիվ մասնակցություն է ունեցել ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: Դեռևս մինչև պատերազմը գյուղի անդորրը պաշտպանելու նպատակով Վ. Ավագիմյանի հրամանատարությամբ կազմակերպվում է ինքնապաշտպանական ջոկատ:

1992 թ. հուլիսի 4-ին գյուղը բռնազավթվել է ադրբեջանցիների կողմից: 1993 թ. հունիսի 27-ին հայկական բանակի կողմից Ծաղկաշենն ազատագրվեց: Ազատագրական պատերազմի մասնակից 44 ծաղկաշենցիներից 12 հոգի զոհվել են:

ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի են արժանացել Աշոտ Սարգսյանը (հետմահու), Արթուր Խաչատրյանը (հետմահու) և Վլադիկ Խաչատրյանը, ով նաև ունի գեներալ-մայորի զինվորական կոչում:

2001 թ. ռուսաստանաբնակ ծաղկաշենցի Ենոք Գրիգորյանի միջոցներով գյուղում զոհվածների հիշատակին հուշարձան է կառուցվել:

1930-ական թվականներին գյուղում գործել է տարրական դպրոց: Հետագայում դպրոցը դարձավ Կուսապատի միջնակարգ դպրոցի մասնաճյուղ: Դպրոցական պարապմունքներն իրականացվում էին մասնավոր տներում: 1959 թ. կառուցվել է դպրոցական նոր շենք: Ծաղկաշենի մասնաճյուղի վարիչն էր Գոհարիկ Սարդարյանը:

1980-ական թվականներին դպրոցում սովորում էր 23-25 աշակերտ, դասավանդում՝ 9 ուսուցիչ:

1994 թ. դպրոցը դարձավ ութամյա: 2000 թ. աշակերտների թվակազմի նվազման հետևանքով կրթարանը նորից տարրական դպրոցի կարգավիճակ ստացավ:

2013 թ. դպրոցը գործում է որպես Ներքին Հոռաթաղի միջնակարգ դպրոցի մասնաճյուղ: Դպրոցում աշխատում էր 3 ուսուցիչ, սովորում՝ 8 աշակերտ: Դպրոցի տնօրեններն էին Նազիկ Սողոմոնյանը, Լեսմոնյա Հայրապետյանը: Ներկայումս այդ պարտականությունները կատարում է Վալենտինա Խաչատրյանը:

Ծաղկաշենի տարածքում պատմաճարտարապետական նշանակության հուշարձաններ չեն պահպանվել:

Ծաղկաշենում նշանավոր են Բոնյու, Ջրդաքին, Կարմիր, Նով, Քյոհնա աղբյուրները:

Գյուղի հայտնի հանդամասերն են Ըվգյումանց յալը, Չալունց յալը (Կոբրեն յալ), Մամունց տափը, Խմհատեն ձորը, Տեփնանց չխուրը, Խզազին չխուրը, Միասսեն ձորը, Թավլարունց տափը:

Գյուղում շարունակում են ապրել Շիթիրանց (Խաչատրյաններ), Արտունց (Մինասյաններ), Արթունբեգանց (Աթաբեկյաններ), Գառանց (Առաքելյաններ), Չալունց (Չալյաններ), Ըվգյումանց (Ավագիմյաններ) տոհմերը:

Ի դեպ, ծագումով խոյեցի լինելու պատճառով, Շիթիրանց տոհմին անվանում են նաև Խոյլունց: Այս տոհմի ներկայացուցիչները 17-րդ դարում Արցախ, տվյալ դեպքում Կուսապատ են տեղափոխվել, իսկ 19-րդ դարի վերջերին հաստատվել Ծաղկաշենում:

Համայնքում գործում են ակումբ, գյուղապետարան, բուժկետ, հանդիսությունների սրահ:

Խորհրդային տարիներին Ծաղկաշենում ապրում էր 290-300 մարդ: 2018 թ. գյուղում կար՝ 42 տուն, 156 մարդ[728]: Բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԾՄԱԿԱՀՈՂ

Բնակավայրը գտնվում է ԱՀ հյուսիսային հատվածում՝ Խաչենագետի վերին հոսանքի ձախ ափին՝ նույն գետի Վաճառ վտակի աջ ափին՝ Առաջաձոր և Շահմասուր գյուղերի միջև գտնվող մի գեղատեսիլ վայրում: Գյուղը նախկինում եղել է Արցախի Խաչեն գավառում:

Ծմակահողի և Վաճառ գյուղաքաղաքի շրջակայքում կան բրոնզեդարյան ժամանակաշրջանի հուշարձաններ, հատկապես՝ դամբարանաբլուրներ: Նշված տարածքում գտնվում են 8 հին գերեզմանատներ՝ մանավանդ Արծաթասար, Խաչխութ, Մեյդանի տակ, Գերեզմանների խութ, Բաբեն բոստան, Կեռ հղեց տեղամասերում: Այս փաստը վկայում է, որ վերոհիշյալ տարածքը միջնադարում խիտ բնակեցված է եղել:

Վաճառ գյուղաքաղաքը, գտնվելով Վաճառ գետի ձախ ափին՝ դեպի Ծար գավառ տանող տարանցիկ ճանապարհի հանգուցակետում, արագ զարգանում և դառնում է Խաչենագետի վերին հոսանքի ամենաբարեկեցիկ և մարդաշատ բնակավայրը: Վաճառը հարևան բնակավայրերի և գավառների բնակիչների համար յուրօրինակ շուկայի դերակատարություն ուներ:

[728] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

Մակար եպս. Բարխուդարյանը 19-րդ դարի վերջերին լինելով Վաճառում, գրել է. «Վաճառ առուի ձախ ափի լանջի վերայ երևում են ընդարձակ աւերակի հետքեր-տնատեղեր, խանութների և այլ շինութեանց քարուկիր մնացորդները»[729]: Այնքան կարևոր նշանակություն ուներ Ծմակահողը Խաչենի իշխանների համար, որ Հասան Ջալալ-Դոլան այստեղ ամառանոց կառուցեց:

13-րդ դարում, երբ մոնղոլ-թաթարները ներխուժեցին նաև Խաչենի իշխանության տարածք, ավերվեց և թալանվեց Վաճառ վաճառաշահ գյուղաքաղաքը: Ճիշտ է մինչև 18-րդ դարը այդտեղ մարդ էր ապրում, այնուամենայնիվ բնակչության մեծ մասը նախընտրեց տեղափոխվել առավել ապահով վայրեր: Բնակչության մի զգալի մասն էլ բնակավայրի հարևանությամբ գտնվող ապահով մի վայրում՝ Վաճառ գետակի աջ ափին՝ անտառի (ծմակ) մեջ, կառուցեց նոր բնակավայր, որն էլ կոչվեց Ծմակահող:

Պատահական չէ, որ Գանձասարի կալվածագրերից մեկում բնակավայրը ներկայացվում է «գեղջն Վաչառ կամ Ծմակահող»[730]:

Գանձասարի շրջակայքում գտնվող բնակավայրերը 13-րդ դարից մինչև 19-րդ դարի կեսերը օտարացեղ ասպատակիչների կողմից մշտապես հարձակումների թիրախում էին: Մեծ զոհողությունների և դժվարությունների գնով տեղի բնակչությունը պահում է իր ինքնությունն ու հայրենի երկրի անկախությունը:

19-րդ դարի վերջերին այդտեղ կար 40 ծուխ, 423 բնակիչ[731]:

Խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1930 թ., Ծմակահողում կազմակերպվում է Աթաբեկովի անվան կոլտնտեսությունը: Խոշորացման ժամանակ՝ 1950-ական թվականներին, այն միացվեց Առաջաձորի կոլտնտեսությանը: 1967 թ. ապախոշորացումից հետո Ծմակահողի կոլտնտեսությունը դարձավ առանձին միավոր և կրեց Վ. Տերեշկովայի անունը: 1977 թ. այդ տնտեսությունը նորից միավորվեց Վանքի 26 կոմիսարների անվան սովխոզին: 1988 թ., նորից առանձնանալով, դարձավ առանձին կոլտնտեսություն և այդ կարգավիճակով մնաց մինչև 1998 թ.: Հողերի սեփականաշնորհումից հետո ձևավորվեցին անհատ գյուղացիական տնտեսություններ:

Ծմակահողի տնտեսությունը ղեկավարել են Հարություն Աթաջանյանը, Վարդան Պողոսյանը, Սահակ Հովհաննիսյանը, Արշակ Դանիելյանը, Լևոն Սաֆարյանը, Հովհաննես Սաֆարյանը, Ռաշիդ Պետրոսյանը, Ստելլա Հայրապետյանը, Էդիկ Դանիելյանը, Սուրեն Ավանեսյանը, Սահակ Հակոբյանը, Արթուր Սաֆարյանը:

Այդ տարիներին Ծմակահողն ուներ 358,79 հա գյուղատնտեսական նշանակության հողեր, որոնց մեծ մասն այսօր ըստ նպատակի չի օգտագործվում: Մշակովի հողերը մացառապատվում և անպիտան են դառնում: 1930-ական թվականներին ծմակահողցի ակադեմիկոս Ա. Իոսիֆյանցի ջանքերով Արցախում առաջին անգամ կառուցվել է փոքր ՀԷԿ: Ծմակահողից 186 հոգի մասնակցել են Հայրենական մեծ պատերազմին: Նրանցից 96-ը զոհվել են, որոնց հիշատակին խորհրդային տարիներին գյուղում հուշարձան է կառուցվել:

[729] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 256:

[730] Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 148:

[731] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 255:

Արցախյան ազատագրական պատերազմի նախօրյակին գյուղում ինքնապաշտպանական կամավորական ջոկատ է ստեղծվել, որը Խաչենի գումարտակի 2-րդ վաշտի կազմում մասնակցել է ինչպես պաշտպանողական, այնպես էլ հարձակողական մարտերին:

Մարտական գործողություններին մասնակցած թվով 60 ազատամարտիկներից 9-ը զոհվել են: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվել է Արմեն Մանվելի Ավանեսյանը:

19-րդ դարի 80-ական թվականներին Ծմակահողի Սբ. Ստեփանոս եկեղեցուն կից գործել է ծխական դպրոց, որտեղ ուսուցչություն են արել Տեր-Գրիգորը, այնուհետև նրա որդին՝ Տեր-Ղևոնդը: Դպրոցը պահվում է աշակերտների ուսման վարձով և եկեղեցու միջոցներով[732]:

Խորհրդային տարիներին գյուղամիջի Անկունք եկեղեցին վերածվեց դպրոցի: Այնուհետև եկեղեցու հարևանությամբ կառուցվեց դպրոցի նոր շենք, որը գործեց մինչև 1978 թ.: 1979 թ. ակադեմիկոս Անդրանիկ Իոսիֆյանի միջամտությամբ նոր դպրոց է կառուցվում, որն էլ այսօր կրում է նրա անունը:

1960-ական թվականներին դպրոցում սովորում էր շուրջ 120 աշակերտ: Խորհրդային իշխանության վերջին տարիներին այդ թիվը հասավ 75-ի: 2018-2019 ուսումնական տարում Ծմակահողի դպրոցում սովորում էր 25 աշակերտ:

1970 թվականից Ծմակահողի դպրոցը յոթամյայի կարգավիճակ ուներ, 1989 թ.՝ ութամյայի, 1995 թ.՝ միջնակարգի, 2006 թ. առայսօր՝ հիմնական:

Դպրոցի տնօրեններ են աշխատել Վանյա Քոչարյանը, Բոգդան Յուզբաշյանը, Աբգար Գրիգորյանը, Գրիշա Աբրահամյանը, Սուրեն Աղաբաբյանը, Սուրեն Վերդյանը, Սուրեն Մուսայելյանը, Փարավոն Բեկնազարյանը, Վարդան Գրիգորյանը, Վիգեն Աղաբաբյանը, Միշա Գրիգորյանը, Էլմիրա Սարգսյանը, Վահրամ Գևորգյանը, Արթուր Սաֆարյանը, Սպարտակ Ավանեսյանը:

Ծննդով Ծմակահողից են գիտության, մշակույթի նշանավոր գործիչներ՝ տեխնիկական գիտությունների դոկտոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Անդրանիկ Իոսիֆյանը, տեխնիկական գիտությունների դոկտոր, ՌԴ ԳԱ թղթակից անդամ Վլադիմիր Ավետիսյանը, ՀՀ ժողովրդական նկարիչ Արկադի Բաղդասարյանը:

Ծմակահողը և նրա շրջակայքը հարուստ է պատմամշակութային նշանակության բազմաթիվ հուշարձաններով:

Խաչենագետի և նրա վտակների ափերին կան բազմաթիվ բրոնզեդարյան դամբարանաբլուրներ, միջնադարյան 8 գերեզմանատներ: 1229 թ. Հասան-Ջալալ Դո-

[732] «Նոր դպրոց», թիվ 3-5, 1913:

լայի կողմից կառուցվել է Սբ. Ստեփանոս եկեղեցին: 1260–1261 թթ. Արծաթասարի լանջին Մամքան իշխանուհու հիշատակին կառուցվեց Մամքա եկեղեցին, գյուղամիջում՝ 1231–1239 թթ. Անկնունք եկեղեցին, 5 մատուռներ, 3 ժայռափոր արձանագրություն, Վաճառ և Խաչեն գետի վրա ջրաղացներ, Ծիրանաքար բերդը, 300–ից ավելի խաչքարեր, որոնցից 10–ը պատկերաքանդակներով, 63–ը՝ արձանագրությամբ:

Թշնամիներից պաշտպանվելու համար ծմակահողցիներն անանցանելի ժայռերում ունեին թաքստոց քարանձավներ: Արծաթասարի ամենամեծ քարանձավը գտնվում է Վաճառ գետակի հյուսիսային հոսանքի արևելյան լեռնալանջին: Վայրը կոչվում է «Պախրաքար»: Այդ քարանձավից վերջին շրջանում գտնվել են մարդկանց կմախքներ, զենքերի մնացորդներ:

Դեպի բնության գողտրիկ վայրերը թափանցելու նպատակով ծմակահողցիները ձեղքել են Արծաթասարը: Այդ ճանապարհը կրում է Կապ անունը: Ժամանակի ընթացքում նմանատիպ ճանապարհներ են կառուցել դեպի Ճոխտակ ծով, Բանաձոր, Պլեթանց մարագ սարերը:

Ծմակահողի նշանավոր հանդամասերն են Բաբեն բոստանը, Մեյդանի տակը, Դերունց սարը, Բանաձորը, Պլեթանց մարագը, Խանչալ խաչը:

Ծմակահողում և նրա շրջակայքում կան սառնորակ, զուլալ աղբյուրներ: Հատկապես կարևոր են Հոռեն տակեն (Գագոյի), Կույսի, Լևոնի, Նովեն ծորի, Նայունց կալի, Պապեն, Բաբեն բոստան աղբյուրները:

Ծմակահողի ազգատոհմերն են Աբրահամանք, Սարուխանանք, Մկրտումանք, Քոլունք, Ղզարանք, Քսպարանք, Դերունք, Վանունք, Ճղարանք, Ջուլղարանք, Ջըգարանք, Խլուվանք:

Ծմակահողում ներկայումս գործում են գյուղապետարան, բուժկետ, դպրոց, մանկապարտեզ, հանդիսությունների սրահ, կենցաղսպասարկման կետ, երկու առևտրի կետ: Համայնքն ապահովված է էլեկտրաէներգիայով: 2007 թ. գյուղը գազաֆիկացվել է: Գյուղը ունի ջրագիծ: Այստեղ հասանելի է հեռուստատեսությունը, ռադիոն, ինտերնետ ծառայությունը, անլար հեռախոսակապը:

1890–ական թվականներին Ծմակահողում կար 40 տուն, 423 բնակիչ[733], 1970 թ.՝ 68 տուն, 320 բնակիչ, 1979 թ.՝ 71 տուն, 282 բնակիչ, 1987 թ.՝ 72 տուն, 256 բնակիչ[734], 2015 թ.՝ 70 տուն, 261 բնակիչ[735], 2018 թ.՝ 58 տուն, 238 բնակիչ[736]:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ:

[733] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 255:
[734] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 180:
[735] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[736] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 3:

ԿԻՉԱՆ

Կիչանը գտնվում է ԱՀ հյուսիս–արևելյան հատվածում՝ Խաչեն գետի ձախ ափին: Նրա արևմտյան մասով ձգվում է Մեղրասար լեռնաշղթան: Գյուղը շրջապատված է անտառներով: Ի դեպ, 1745 թ. պահպանված մի փաստաթղթում գյուղը հայտնի էր «Մեղրագետ» անվամբ[737]:

Առնվազն 12–րդ դարից, ներկայիս բնակավայրից 1,5 կմ հարավ–արևմուտք, Մեղրասարի ստորոտում էր գտնվում նախկին Կիչանը: Երևի այդ շրջանում է գյուղը անվանվել Մեղրագետ: Ուշ միջնադարում՝ 18–րդ դարում, գյուղը տեղափոխվել է ոչ շատ մեծ հեռավորության վրա գտնվող ավելի հարմարավետ վայր:

Կիչանը, Խաչենի և Թարթառի ձորակներում գտնվող բնակավայրերը իրար կապող հանգուցային կետում լինելով, կարևոր դերակատարություն է ունեցել նաև ազատագրական պայքարի տարիներին:

Փանահ խանի հրոսակների դեմ պայքարում Ջրաբերդի և Խաչենի ուժերը հավաքվում էին Կիչանում[738]:

Բնակավայրը, գտնվելով ռազմական բախումների կետում, բնակչության շատացման տեսանկյունից առանձնակի աճ չի ունեցել: Օրինակ՝ 1885 թ. Կիչանում ընդամենը 9 ընտանիք էր ապրում[739]: Այս բնակավայրի հողերը հիմնականում վանքապատկան էին: 1873 թ. գյուղում կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցին:

Խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1931 թ. Կիչանում կազմակերպվել է կոլտնտեսություն, որը տնտեսական մեծ ներուժ չի ունեցել: 1998 թ. կոլտնտեսությունը լուծարվել է:

Կոլտնտեսության վարչության նախագահներ էին Գաբրիել Բաղրյանը, Սարգիս-ջան Մկրտչյանը, Գարիկ Սարգսյանը:

Հայրենական մեծ պատերազմին Կիչանից մասնակցել է 62 մարդ, զոհվել է 27 հոգի:

1990 թ. Կիչանում Կ. Առաքելյանի գլխավորությամբ կազմավորվել է ինքնապաշտպանական ջոկատ: 1992–1993 թթ. ռազմական գործողությունների ժամանակ գյուղը 5 անգամ ձեռքից ձեռք է անցել: Ադրբեջանցիների կողմից բնակավայրը անխնա ավերվել է:

Արցախյան պատերազմին Կիչանից մասնակցել են 28 հոգի, զոհվել է 10–ը:

1924 թ. Կիչանում գործում էր տարրական դպրոց: 1930–ական թվականների վերջերին դպրոցը ստացավ 8–ամյա կրթության կարգավիճակ, որտեղ սովորում էր շուրջ 50 աշակերտ: 2014–2015 ուսումնական տարում միջնակարգ դպրոցում սովորում էր 62 աշակերտ, դասավանդում՝ 14 ուսուցիչ: Դպրոցի տնօրեններ են աշխատել Ռուբեն

[737] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 3, թ. 97:
[738] Мирза Джамал Джеваншир, История Карабага, Баку, 1959, с. 69; Мирза Адигезал бек, Карабаг–наме, Баку, 1950, с. 59.
[739] Հայկունի, նշվ. աշխ., էջ 77:

Ալահվերդյանը, Երվանդ Գրիգորյանը, Գուրգեն Նալբանդյանը, Կարինե Ասրիյանը: Կիչանի միջնակարգ դպրոցի շրջանավարտներ են բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Հովհաննիսյանը, ԼՂԻՄ մարզգործկոմի նախագահի տեղակալ Արտաշես Ղուլյանը:

Կիչան գյուղում և նրա շրջակայքում պահպանվել են բազմաթիվ պատմամշակութային արժեքներ, մասնավորապես Անապատ վանքը (12–18–րդ դարեր) և նրա շրջակայքում գտնվող միջնադարյան գերեզմանոցը, Նապատ գերեզմանոցը (12–13–րդ դարեր), Վախախաչ սրբատեղին, 12–18–րդ դարերի բազմաթիվ խաչքարեր, 1873 թ. կառուցված Սբ. Աստվածածին եկեղեցին:

Գյուղի տարածքում նշանավոր են Անահիտի, Ճգնավորի, Շումոնեկի, Գյուղի, Միրզին աղբյուրները:

Կիչանի հանդամասերն են՝ Գուզլակեն ծորը, Դուզերը, Սաղնաքարը, Թեղեն պատը, Գուլութալան, Կաղնախաչը, Դոլին կլոխը, Թեղեն պատը, Երեշենը:

Գյուղում ապրում են հետևյալ ազգատոհմերը՝ Գրիգորյաններ, Ալահվերդյաններ, Սարգսյաններ, Մկրտչյաններ, Ղուլյաններ:

Արցախյան պատերազմից հետո ծավալուն աշխատանքներ են կատարվել գյուղի վերակառուցման համար:

Ներկայումս Կիչանում գործում են գյուղապետարանը, բուժկետը, դպրոցը, երկու առևտրի օբեկտներ: Գյուղը 1963 թվականից էլեկտրաֆիկացված է: Ջրամատակարարումը իրականացվում է ինքնահոս եղանակով, և բնակչությունը ապահովված է խմելու ջրով:

Կիչանով է անցնում Ստեփանակերտ–Վարդենիս–Երևան մայրուղին, որը նպաստում է գյուղի զարգացմանը:

2018 թ. տվյալներով Կիչանում կար 44 տուն, 207 մարդ[740]: Երիտասարդության 60%–ը պայմանագրային զինծառայություն են իրականացնում Արցախի պաշտպանության բանակում, մի փոքր հատված էլ զբաղվում է գյուղատնտեսությամբ:

ԿՈՃՈՂՈՏ

Մարտակերտի շրջանի Կոճողոտ գյուղը գտնվում է Կաթողիկե սարի լեռնաշղթայի հյուսիսարևելյան հատվածում՝ Եկեղենա սարից դեպի հյուսիս թեքված մի սարահարթի վրա՝ Թարթառ գետի միջին հոսանքի և Սարսանգի ջրամբարի աջ ափին:

Կոճողոտ գյուղի շրջակայքում պահպանվել են Ք. ա. 2–1–ին հազարամյակների դամբարաններ: Թեև Կոճողոտի և նրա հարակից տարածքներում եղած բնակավայրերի վերաբերյալ գրավոր աղբյուրներում սակավ նյութեր են պահպանվել, այնուամենայնիվ, եղած պատմաճարտարապետական կառույցների ու բնակատեղիների

[740] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 3:

ավերակները վկայում են, որ հայ մարդը վաղնջական ժամանակներից անընդհատ ապրել է Արցախի այս հատվածներում:

Կոճողոտ և Պողոսագոմեր գյուղերի արանքում էր գտնվում վաղ միջնադարից գոյություն ունեցած Խորաստան գյուղը: Այդտեղ պահպանվել են հին գերեզմանոցը, մատուռը: Տեղացիները մատուռը անվանում են Մանդուռ: Այդտեղ հայտնաբերվել են բազմաթիվ խաչքարեր, որոնց վրա գրություններ են եղել: Խորհրդային Ադրբեջանի գիտաերկրահետախուզական վարչության կողմից խաչքարերը 1986–1987 թթ. տեղափոխել են Բաքու:

Մյուս խոշոր բնակատեղին Թխախորն է իր ավերակ եկեղեցով, գերեզմաններով, խաչքարերով: Գերեզմանատան մեջ կա 1226 թ. թվագրությամբ խաչքար, որի վրա կա արձանագրություն. «Ես Սարգիս որդի Բագրատայ կանգնեցի զխաչս մաւր իմոյ Ազ(իզին)» [741]:

Կոճողոտից հարավ–արևմուտք գտնվում են Կարմիր քար, Երի Հոռաթաղ բնակատեղիները: Մեկ այլ բնակատեղի՝ Վարի ու Վերի Խամշուտ ծով (Եղեգնուտ լիճ) անունով, գտնվում է անտառի մեջ: Պահպանվում են եկեղեցու, գերեզմանոցի և բնակելի տների ավերակները: Ինչպես Հայաստանի մյուս նահանգները, Արցախը նույնպես 11–17–րդ դարն ասպատակվել ու թալանվել է սելջուկ–թուրքերի, մոնղոլների, թուրքմենական ցեղերի, պարսիկների, նորից թուրքերի կողմից:

Թարթառի միջին հոսանքի աջ կողմում փռված բնակավայրերն ավերվել են 1145–1146 թթ.՝ պարսիկ Զոլի զորապետի արշավանքների ժամանակ: Նա, թեև չկարողացավ գրավել հայոց անառիկ բերդերն ու ամրոցները, բայց և այնպես արնածարավ զորապետին ոչինչ չխանգարեց անպաշտպան բնակավայրերը, վանքերն ու եկեղեցիները, այդ թվում Դադի վանքն ավերելու: Կոտորածներից մազապուրծ փախածները բնակության նոր վայրեր էին փնտրում, կամ պատսպարվում, ով որտեղ և ինչպես կարող էր: Այդ վայրերից էր նաև Կոճողոտը:

Ներկայիս Կոճողոտի ձևավորման մասին գրավոր աղբյուրները լռում են: Եղած նյութերը վկայում են, որ Գանձասարի Սարգիս կաթողիկոսի կոնդակով 16–րդ դարում թուրքերից նեղված փախստականներին իրավունք է վերապահվել բնակատեղի ընտրել ներկայիս Կոճողոտի տեղում[742]:

Այս բնակավայրը ևս ավերվել է ժամանակի ընթացքում, իսկ բնակչությունը կամ բռնել է գաղթի ճանապարհը, կամ էլ կոտորածի ենթարկվել:

Ներկայիս գյուղի կազմավորման մասին հնաբնակների պատմածներն էլ հաճախ հակասում են մեկը մյուսին: Նրանց մի մասը պնդում է, թե իբր ներկայիս Կոճողոտը հիմնադրվել է 18–րդ դարի սկզբին, մյուսը նույն դարավերջն է հիմնադրման հավանական ժամանակաշրջանը համարում:[743]

[741] ԱրՊՀ հայագիտական կենտրոն, Սարգսյան Գ., Կոճողոտցիների մասնակցությունը արցախյան ազատագրական պայքարին, Ստեփանակերտ, 2014, էջ 19:

[742] Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, էջ 61:

[743] Արիս Արսենի, Զերվոն Վարդանյանի կյանքն ու անմահությունը, Երևան, 2005, էջ 12:

Մակար Բարխուդարյանը ասում է՝ Կոճողոտի «բնակիչք տեղափոխուած են Վանքաշէնից»[744]:

Տարեց կոճողոտցիների մի մասի պատմածներից երևում է, որ նոր բնակատեղ փնտրողներն ամենևին էլ վանքաշենցիներ չէին, թեև եկել էին Վանքաշենից, այլ ապրուստի միջոցներ փնտրելով՝ տարբեր վայրերից են Վանքաշեն հասել, այնտեղից էլ՝ նոր բնակատեղ հիմնադրելու համար անտառապատ լեռնանցքով իջել են Թարթառի հովիտը:

1815–1818 թթ. ընթացքում Արցախի հոգևոր թեմի առաջնորդ Սարգիս Ջալալյանցը ներկայիս Կոճողոտի տարածքում փախստականներին վերաբնակվելու թույլտվություն է տալիս:

Գյուղի առաջին բնակիչներն էին Խաչոն, Կոպալ-Վերդին, Աթասունց Դանիելը, Մելին, Խալափը, Սևին, Առուշանը, Թաթոսը, Քոչարին: Նախ նրանք կառուցում են ժամանակավոր կացարաններ, այնուհետև մշտական տներ՝ ղարաղամներ[745]:

Տներն իրարից բավականին հեռու են կառուցվում և զբաղվում հողագործությամբ ու անասնապահությամբ:

1886 թ. գյուղում ստեղծվում է երաժշտական գործիքների՝ թառի, սազի և քյամանչայի արտադրամաս: Վարպետներն էին Մելունց Ջումշուդը և Սարուխան Վանյանը[746]:

Այդ գործը հետագայում շարունակել են Սահակ Մխիթարյանը, Սամսոն Առուշանյանը, Երվանդ Վանյանը, Աբրահամ Մխիթարյանը: Հայտնի նվագողներ, երաժիշտներ են եղել կոճողոտեցի Ջումշուդ և Սարուխան Վանյանները, Ջավադ և Բախտի Հաթամյանները, Սամսոն Առուշանյանը, Բախշի Պողոսյանը:

Արդեն 1920 թ. Կոճողոտ գյուղում կար 80 տնտեսություն, 350 մարդ[747]:

Խորհրդային կարգերը Կոճողոտ հասավ 1920 թ. մայիսին: 1930 թ. գյուղում կազմակերպվել է «Աշխատանք» անունը կրող կոլտնտեսություն: 1952 թ. խոշորացման հետևանքով այն վերամիավորվել է Դրմբոնի Կալինինի անվան կոլտնտեսության հետ: 1977 թ. այն դարձել է սովխոզ: 1990 թ. գործող տնտեսությունը վերակազմակերպվել և դարձել է կոլտնտեսություն, որը գոյատևել է մինչև 1998 թ. վերջը: Կոճողոտի կոլտնտեսության ղեկավարներն են եղել Գրիգոր Վանյանը, Անդրանիկ Պետրոսյանը, Սուրեն Դավթյանը, Աշոտ Ադամյանը, Ռոմա Ադամյանը, Վելիկո Սարգսյանը, Բախշի Մխիթարյանը, Վարդան Հայրիյանը, Սամսոն Առուշանյանը, Մարտիրոս Մխիթարյանը, Միշա Հակոբյանը, Կոստյա Բուդուխովը, Հենզել Հայրապետյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են 144 կոճողոտցիներ, նրանցից 77 հոգի զոհվել են: Նրանց հիշատակին գյուղում կանգնեցվել է հուշարձան:

[744] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 259:
[745] ԱրՊՀ հայագիտական կենտրոն, Սարգսյան Գ., նշվ. աշխ., էջ 14:
[746] Նույն տեղում:
[747] Վանյան Գ., Կոճողոտ գյուղի պատմություն, Ստեփանակերտ, 2009, էջ 34:

1970 թ. Կոճողոտում կար 150 տուն, 733 բնակիչ, 1979 թ.՝ 151 տուն, 685 բնակիչ, 1987 թ.՝ 161 տուն, 626 բնակիչ:[748]

Արցախը Մայր Հայաստանին վերամիավորելու պահանջով հասարակության առաջին ժողովը Կոճողոտում կայացել է 1988 թ. հունվարին, պատմության ուսուցիչ Սերգեյ Գրիգորյանի նախաձեռնությամբ և գյուղխորհրդի քարտուղար Վելիկո Սարգսյանի քարտուղարությամբ:

1991 թ. վերջին և 1992 թ. սկզբին Կոճողոտում կազմավորվել է կամավորական երկու ջոկատ: Առաջինի հրամանատարն էր Գարիկ Պողոսյանը, երկրորդինը՝ Համբարձում Ադամյանը:[749]

Շահումյանի շրջանի հայության բռնագաղթից հետո՝ 1992 թ. հունիսի 4-ին, Կոճողոտի և հարևան մի շարք գյուղերի բնակիչներ նույնպես սկսեցին հեռանալ իրենց բնակավայրերից:

1992 թ. օգոստոսի 22-ին ադրբեջանցի հրոսակախմբերը մտնում են Կոճողոտ: Ինքնապաշտպանական ուժերը նահանջում են Վանք գյուղ: Ռազմական գործողությունների ընթացքում ձևավորվում է նաև Արցախի բանակը: Կոճողոտցի կամավորները ընդգրկվում են Մարտակերտի պաշտպանական շրջանի 2-րդ գումարտակի մեջ:

Անցնելով գրոհի՝ 1992 թ. նոյեմբերի 10-ին հայ ազատամարտիկներն ազատագրեցին Կոճողոտը: Սակայն շրջափակումից խուսափելու նպատակով նրանք նահանջեցին:

1993 թ. փետրվարի 5-ին Մարտակերտի պաշտպանական շրջանի զորամիավորումներն անցան հարձակման՝ նպատակ ունենալով ազատագրել Կիչան-Վաղուհաս գծի վրա գտնվող գյուղերը: Սակայն հայ մարտիկներին հաջողվեց ազատագրել միայն Կոճողոտ գյուղը: Փետրվարի 9-ի լույս 10-ի գիշերն ադրբեջանցի զինյալներն օղակի մեջ են առնում Կոճողոտը: Հայ ինքնապաշտպանները փետրվարի 10-ի առավոտյան ստիպված թողնում են գյուղը և դուրս գալիս շրջափակումից: Փետրվարի 10-ի երեկոյան հայկական կողմը, վերախմբավորելով ուժերը, ազատագրում է ոչ միայն Կոճողոտը, այլ նաև Դրմբոն-Գետավան գծի բոլոր գյուղերը:

Կոճողոտցի ազատամարտիկներն իրենց մասնակցությունը բերեցին նաև Քարավաճառի, Կուբաթլուի ազատագրման մարտական գործողություններին:

Ընդհանուր առմաբ մարտական գործողություններին մասնակցել է 70 մարդ, զոհվել է 15 ազատամարտիկ: Գուրգեն Շուրայի Վարդանյանը և Վարդան Շահնազարի Մինասյանը արժանացել են ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի:

1922 թ. Կոճողոտում՝ Վերդունց տանը, հիմնվել է տարրական դպրոց: Առանձին շենք կառուցվել է 1927–1928 ուսումնական տարում: 1934 թ. դպրոցը դարձել է յոթնա-

[748] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 189:
[749] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988–1994 թթ., Երևան, 2004, էջ 300–301:

մյա, 1965 թ.՝ ութամյա, 1968 թ.՝ միջնակարգ: Դպրոցի տնօրեններ են եղել՝ Արգարը՝ Վանք գյուղից, Երվանդ Հովհաննիսյանը, Մխիթար Գրիգորյանը, Կեպին Դանիելյանը, Սոնյա Պողոսյանը, Աբրահամ Լալայանը, Ասատուր Ստեփանյանը, Մանվել Աղասյանը, Աշոտ Մարտիրոսյանը, Գյոզալ Մնացականյանը, Արիս Պողոսյանը, Համլետ Շեկյանը, Լարիս Ղալայանը, Արթուր Սարգսյանը, Ալեքսանդր Դանիելյանը, Մալենա Դավթյանը, Սիլվա Հարությունյանը, Կամո Հայրիյանը:

1988–1990 թթ. դպրոցում սովորել է 130–140 աշակերտ, դասավանդել՝ 26 ուսուցիչ, 2017–2018 ուսումնական տարում համապատասխանաբար՝ 66 աշակերտ, 20 ուսուցիչ:

2007 թ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով կառուցվել է դպրոցի նոր շենք:

Կոճողոտի համայնքի տարածքում պահպանվել են մի շարք պատմաճարտարապետական հուշարձաններ:

Պողոսագոմեր և Կոճողոտ գյուղերի միջև գտնվում է 13-րդ դարի սկզբներին կառուցված Ամենափրկիչ եկեղեցին, որի շրջակայքում պահպանվում է միջնադարյան գերեզմանոց: Գյուղից հարավարևելք պահպանվել է 11–13-րդ դարերի կիսաավեր մատուռ, իսկ արևմտյան հատվածում՝ ավերակ եկեղեցու մնացորդներ: Գյուղի շրջակայքում պահպանվում են բազմաթիվ խաչքարեր և նրանց բեկորները:

Գյուղի նշանավոր աղբյուրներն են՝ Ցորտ, Անուշ, Վանին, Ճիրիկներ, Սրաքանց տափին, Դնգդնգան, Բալին, Շաշմա, Պեխեն, Խինա, Խաչունց, Կրավերեն ձոր, Շահրամանեն, Շոր, Խուդանեն, Քոռ, Ճնջքարա, Գյուլուլ, Վարդուտեն, Պըլը-պուղու:

Գյուղի նշանավոր հանդամասերն են՝ Քամիար խութը, Մանդուռը, Տանձոտը, Սհարանց տափը, Էրկու ճիրին ղաթը, Կիժին տեղը, Ճիրիքները, Խչերեն սեռը, Խաչունց տեղը, Դլաքանց տափը, Պիլոր գյունեն:

Այսօր Կոճողոտում շարունակում են ապրել Մելունց, Խաչունց, Խչովանց, Թաթոսանց, Բուղվանանց, Վերդունց, Խոյլունց, Ալիսանանց, Նալբանդյանների ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, դպրոց, բուժկետ, առևտրի 11 կետեր:

Կոճողոտում 2018 թ. տվյալներով կար 135 տուն, 507 բնակիչ[750]: Համայնքի անդամները հիմնականում աշխատում են «Բեյզ Մեթըլս» ընկերությունում: Մյուսները զբաղվում են անասնապահությամբ, մշակում տնամերձ հողամասերը:

[750] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

ԿՈՒՍԱՊԱՏ

Գյուղը գտնվում է ԱՀ արևելյան հատվածում: Կուսապատը ձգվում է խոր ու զառիթափ ձորի աջ հեղեղատի եզերքով և փռված է Մարտակերտից դեպի Հաթերք բարձրացող ճանապարհի վրա: Բնակավայրը նախկինում գտնվում էր Արցախի Ջրաբերդ գավառում: Գյուղի հարավարևմտյան մասից՝ Ջրակն կոչվող ձորից, սկիզբ է առնում Չարխեն ձորի կամ Կուսապատի գետակը: Գյուղի դիրքը գեղատեսիլ է. մի կողմից թավ անտառներ ու մարգագետիններ են, մյուս կողմից՝ մացառներ ու լերկ լանջեր:

Կուսապատը Արցախի հինավուրց բնակավայրերից մեկն է: Ներկայիս գյուղի շրջակայքում՝ Հին շենի ծոր, Փոսի ծոր, Ցեստին յալ, Անուշ յալ հանդամասերում վաղ միջնադարից գոյություն են ունեցել առանձին բնակավայրեր: Պատահական չէ, որ այստեղ հիմնվել են Անապատ (12-րդ դար), Սբ. Աստվածածին (1269 թ.) եկեղեցիները, Նահատակ ուխտատեղին: Միջնադարյան գերեզմանատներում պահպանվում են 12–13-րդ դարերի խաչքարեր:

Ներկայիս բնակավայրը հիմնադրվել է 15-րդ դարում: Իշխան Ջալալ Գ Մեծ Հասան-Ջալալյանի որդի իշխան Աթաբեկ Գ-ն Վանքից տեղափոխվում և հաստատվում է Չորտանձուտին ջուր գետակի ափին և այստեղ հիմնում բնակավայր: Բնակչության անվտանգությունը ապահովելու նպատակով նա սկսում է կառուցել Ծիրանաքար ամրոցը: Սակայն ամրոցը մնացել է անավարտ և կառուցվել է միայն պատերի մի մասը, ինչից էլ նորաստեղծ բնակավայրը ստացել է իր անվանումը՝ Կիսապատ, հետագայում՝ Կուսապատ:

Փիլիպպոս կաթողիկոսի կոնդակում բնակավայրը ներկայացված է Կիսապատ ձևով[751]:

19-րդ դարի աղբյուրներում գյուղը շարունակվում է անվանվել Կիսապատ[752]:

Գյուղի հիմնադրման և անվան վերաբերյալ պահպանվել են երկու ավանդազրույցներ: Դրանցից առաջինը պատմում է. «Լինում է մի իշխան, անունը Գույժ, որ քաջ նետաձիգ էր և քաջ որսորդ, իր շքախմբով անցնում էր այս կողմերով: Կեսօրին նա մի աղբյուրի մոտ վրան խփեց՝ հանգստանալու: Իշխանը լսեց ծառերի սոսափն ու հավքերի դայլայլը, շրջեց զովասուն անտառում, տեսավ եղնիկներ ու այծյամներ, միրհավեր ու կաքավներ, նորից ջուր խմեց սառնորակ աղբյուրից և դարձավ իր մարդկանց. «Ես այս չնաշխարհիկ բնության գրկում կկառուցեմ մի դղյակ և միշտ կապրեմ այստեղ»: Գույժ իշխանը մոտիկ և հեռու գյուղերից վարպետներ բերեց, որ ամրոցի համար հիմք փորեն, քար տաշեն, պատ շարեն: Հիմք փորեցին, քար տաշեցին, սկսեցին պատ շարել: Եվ մի օր իշխանը գնաց որսի, նայեց, տեսավ՝ անտառի կանաչ բացատում երկու սիրուն եղնիկ սիրատենչ գգվում են իրար: Իշխանը լարեց նետն ու աղեղը, նշան բռնեց վարուժանին, արձակեց նետը: Վարուժանն ընկավ խոցված, կանաչը ներկեց արյունով, և այնժամ էգը լեզու առավ, անիծեց Գույժ իշխանին. «Ո՞վ անգութ

[751] Մակ.եպս. Բարխուտարեանց, Արցախ, էջ 49:

[752] Описание Карабахской провинции, составленное в 1823 г., с. 128.

իշխան, ինչպես իմ սերը, այնպես էլ քո պատը թող հար-հավիտյան կիսատ մնա»: Եվ ասում են այդ օրից էլ ամրոցի պատը մնաց կիսատ: Վարպետները մինչև ուշ երեկո քարը դնում էին քարի վրա, բարձրացնում են պատը, առավոտյան գալիս են՝ տեսնում շարածը քանդված: Այդպես մի շաբաթ, երկու շաբաթ, բայց պատը չի բարձրանում: Եվ իշխան Գոյժը հիշեց եղնիկի անեծքն ու ասաց. «Այս պատն այլևս չի բարձրանա, սա իմ գործած մեղքի հատուցումն է»: Այդ օրվանից այս վայրի անունը, մնում է Կսապատ, այսինքն կիսատ պատ»[753]:

Մյուս ավանդազրույցը պատմում է. «Աբդուլ խանը հարձակվում է կուսանոցի վրա, որպեսզի առնանգի կույսերին, տանի իր հարեմը: Երեսուն կույսեր փախչում են վանքից, անցնում մթին ձորերով ու անտառներով և կանչում. «Տեր Աստված, փրկության մի դուռ բացիր մեզ համար»: Եվ հանկարծ նրանք հասնում են բարձրաբերձ մի պատի, թաքնվում ետևում: Անցնում է մի օր, երկու օր՝ շուրջը մութ անտառ, գայլերի ոռնոց. ինչ անեն խեղճ ու թշվառ կույսերը: Եվ նրանք նորից են դիմում աստծուն. «Ո՜վ ամենակարող, մեզ համար դուռ ես բացել, բայց մենք ինչպե՞ս ապրենք այդ դատարկ պատերի ետևում»: Աստծո կամքո՞վ, թե՞ իրենց սրտի թելադրանքով երեսուն ջահել ու սիրուն կտրիճներ գալիս առնում են կույսերին, կառուցում մի գյուղ... և Կսապատը դառնում է Կուսապատ»[754]:

Գյուղը օրեցօր զարգանում և դառնում է Ջրաբերդի մելիքության ամենանշանավոր ավաններից մեկը: Կուսապատը բաժանված էր երկու հիմնական թաղամասերի՝ Մելիքանց շեն և Ջինաբեկ թաղ: Մելիքանց շեն թաղամասում, մինչև արցախյան պատերազմը, պահպանվել էին մելիքական ապարանքի դարպասները: Ադրբեջանցի զինյալները, 1992 թ. գրավելով գյուղը, ավերել են նաև այդ հուշարձանը: Մելիքական ծագում ունեցող Աթաբեկյան տոհմի ներկայացուցիչները Կուսապատում կառուցել են 11 ջրաղաց, ոսկերչական արհեստանոց, դարբնոց և բացել են դպրոց:

18-րդ դարի երկրորդ կեսին Ղարաբաղի խանության գոյության և Արցախում հայկական իշխանության թուլացման պայմաններում Այսրկովկասի, Պարսկաստանի խաների միջև տեղի ունեցած արյունահեղ պատերազմներին, թուրքական և Հյուսիսային Կովկասի ցեղերի մշտական կրկնվող արշավանքների պատճառով Արցախի մի շարք գյուղերի, այդ թվում Կուսապատի բնակիչները, տեղափոխվում և հաստատվում են Ուտիքում, Վրաստանում և Հյուսիսային Կովկասում:

19-րդ դարի սկզբներին ռուս-պարսկական պատերազմների ժամանակ Կուսապատի հայությունը Վանի Աթաբեկյանի գլխավորությամբ նպաստել են ռուսական զենքի հաղթանակների ապահովմանը:

Մելիք Վանի Աթաբեկյանը Արցախում հիմնել կամ վերականգնել է 6 նոր բնակավայր՝ Մարտակերտը, Կարմիրավանը, Ծաղկաշենը, Մեծ շենը, Մոխրաթաղը, Ենգիջանը, Մաղավուզը, Լյուլասարը, Ջանյաթաղը,[755] ուր և տեղափոխվել է Կուսապատի բնակիչների մի մասը: 1885 թ. տվյալներով Կուսապատում կար 285 տուն[756]:

Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո. 1929 թ.՝ Կուսապատում կազմակերպվում է կոլտնտեսություն: 1960 թ. Ներքին Հոռաթաղի տնտեսության հետ Կուսապատի կոլտնտեսությունը վերակազմակերպվել է սովխոզի: 1988 թ. նորից այն դարձավ կոլտնտեսություն: 1998 թ. կոլտնտեսությունը դադարեցրեց իր գործունեությունը, և ստեղծվեցին մենատնտեսություններ:

Կոլտնտեսության վարչության նախագահներ են աշխատել Իսահակ Առստամյանը, Սարգիս Ստեփանյանը, Սեդրակ Մարությանը, Մովսես Գասպարյանը, Աբրահամ Գրիգորյանը, Ավագ Պետրոսյանը, Գաբրիել Բալայանը, Ենոք Հայրապետյանը, Լյոնիկ Երիցյանը: Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 251 մարդ: Նրանցից 97 հոգի զոհվել են, որոնց հիշատակին գյուղում հուշարձան է կանգնեցվել: Կուսապատի երիտասարդությունը մասնակցել է արցախահայության ազատագրական պայքարին: 1991 թ. գյուղում կազմավորվել է կամավորական ջոկատ:

Մարտական գործողությունների ընթաքում 1992 թ. հունիսի 12-ին ադրբեջանցիները գրավել են գյուղը: Շշմեցուցիչ հարվածից ուշքի գալով Արցախի ՊԲ-ին հաջողվեց կարճ ժամանակահատվածում՝ հուլիսի 11-12-ը, ետ վերցնել Կուսապատը և հարակից հայկական բնակավայրերը: Սակայն օգոստոսին վարձկան զորամիավորումների և զրահատեխնիկայի նոր համալրումներ ստանալով՝ հակառակորդին հաջողվեց նորից տիրանալ Կուսապատին և մյուս հայկական բնակավայրերին: 1993 թ. հուլիսի 12-ին գյուղը վերջնականապես ազատագրվում է: Մարտական գործողությունների ընթացքում Կուսապատից 12 հոգի զոհվել են: Նրանց հիշատակին գյուղում կառուցվել է հուշաքար:

1873 թ. Կուսապատում բացվել է մասնավոր նախակրթարան՝ 25 աշակերտով: Ուսուցիչն էր Սահակ Ջոհրապյանը: 1875-76 ուսումնական տարում Կուսապատում բացվել է երկդասյա պետական դպրոց՝ 88 աշակերտով: Ուսուցումը տարվում էր ոչ միայն հայոց, այլ նաև ռուսաց լեզվով: Դպրոցում աշխատում էր երեք ուսուցիչ: Քանի որ դպրոցը պետական էր, ուստի 19-րդ դարի 90-ական թվականներին հայկական դպրոցների փակման տակ չհայտնվեց: 1883-1884 թվականներին գյուղի բնակչության միջոցներով կառուցվում է դպրոցի նոր շենքը: 1901 թ. Կուսապատում աղջիկների համար առանձին դպրոց է բացվել: Պարապմունքները տարվել են իշխանություններից գաղտնի, Ալեքսանդր Բեկզադյանի հայրական տանը[757]:

1920 թվականից գյուղում գործել է տարրական դպրոց: 1931-32 ուսումնական տարում այն յոթնամյայի, իսկ 1936-37 ուսումնական տարվանից՝ միջնակարգի կար-

[753] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 245:
[754] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 245:

[755] Израелов Г., Село Касапет, Елизаветпольской губернии Джеванширского уезда, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. 13, Тифлис, 1892, с. 42-45.
[756] Հայկունի, նշվ. աշխ., էջ 78:
[757] «Նոր դպրոց», թիվ 4, 1909:

գավիճակ է ստացել: 1988–1991 թվականներին դպրոցում սովորում էր 150–ից ավելի աշակերտ, դասավանդում՝ 26 ուսուցիչ: 1992 թ. բռնագաղթից հետո բնակչության կեսը այդպես էլ չվերադարձավ հայրենի օջախ: Դպրոցահասակ երեխաների թիվը կտրուկ նվազեց: 2015–2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 44 աշակերտ, դասավանդում՝ 14 ուսուցիչ: 2018–2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 48 աշակերտ: 1937 թվականից առայսօր դպրոցի տնօրեններ են աշխատել Ռուբեն Անաստասյանը, Աշոտ Համբարձումյանը, Վլադիմիր Անաստասյանը, Արշավիր Առստամյանը, Արշակ Գաբրիելյանը, Արամ Գասպարյանը, Հունան Հովհաննիսյանը, Լևոն Հովհաննիսյանը, Էմմա Հովհաննիսյանը, Խրիստո Քսիպտիրիդիսը, Սերգեյ Գրիգորյանը, Սվետլանա Գասպարյանը, Կոլյա Բաբայանը, Վանյա Մաթևոսյանը, Ռազմիկ Ստեփանյանը, Սվետլանա Պողոսյանը, Վահրամ Գևորգյանը, Անյուտա Խաչատրյանը:

Կուսապատը հայոց երկրին տվել է նշանավոր գործիչներ՝ Վանի և Հակոբ հարյուրապետերը, ՀԽՍՀ արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Բեկզադյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Անտոնյանը, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովակիմ Խոնդկարյանը, քիմիական գիտությունների դոկտոր, ԽՍՀՄ ԳԱ իսկական անդամ Նիկոլայ Եսիկոլոպյանը, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լևոն Մայիլյանը, ՀԽՍՀ ժողովրդական արտիստուհիներ՝ Արև Բաղդասարյանը, Անժելա Աթաբեկյանը:

Կուսապատում և նրա շրջակայքում պահպանվում են պատմամշակութային նշանավոր հուշարձաններ՝ Սբ. Աստվածածին եկեղեցին (1269 թ.), Նահատակ ուխտատեղին: Կուսապատից հյուսիս, 2 կմ հեռավորության վրա է գտնվում Ինանը մաս եկեղեցին: Նրա շրջակայքում է գտնվում մելիք Հաթամի կիսաքանդ պալատը, որը շրջապատված է ամուր պարիսպներով: Ինանը մաս անապատի հյուսիսային պատի մոտ պահպանվել են Մելիք Իսրայելյանների տոհմի ներկայացուցիչների՝ Սայի բեկի, Սհար խանումի, Մելիք Հաթամի (Ադամի) կնոջ Թումար խանումի և այլ մելիքազունների տապանաքարերը:

Նույն վայրում են գտնվում Մելիքանց կամուրջը, Ծիրանաքար ամրոցի մնացորդները:

Կուսապատի գերեզմանոցը յուրօրինակ թանգարան է բաց երկնքի տակ: Այստեղ պահպանվել են Վանի, Հովսեփ բեկ Աթաբեկյանի, Մուրացանի քրոջ, Աթաբեկյան և Փիրումյան իշխանատոհմերի ներկայացուցիչների տապանաքարերը:

Համայնքի աղբյուրներն են Պտաշին Միշանց, Վեզանց, Սհականց, Բաղեն, Մշհավեն, Ջնիբեգա ջուր, Տեփնաց, Ջնիրին, Ծտուրանց ծորին, Ճիրինին, Նեթալանց, Սուլակնածովի, Բագունց գյոլի, Ռուբենին, Նըլբանդանց, Մնդրեկան, Ճիրակնեն:

Գյուղի նշանավոր հանդամասերն են Ղարասայունց տափը, Սուլակնածովը, Մնդրեկանց, Իշեղանց քոլը:

Կուսապատում ներկայումս ապրում են ներքոհիշյալ ազգատոհմերի ներկայացուցիչները՝ Ազրունց (Գրիգորյաններ), Բլվանց (Թավադյաններ), Բոզունց (Բազյաններ), Բաղմանթունունց (Ասրյաններ), Գանունց (Նալբանդյաններ), Դիլաքանց (Իսրայելյաններ), Ընթռանանց (Հարությունյաններ), Թաքունց (Անդրյաններ), Իմիրանց (Ամիրյաններ), Խչտորանց (Խաչատրյաններ), Խոյունց (Բալայաններ, Աբրահամյաններ), Կարաբեղանց (Գրիգորյաններ), Կպրանց (Առաքելյաններ), Մնվելանց (Ավանեսյաններ), Մաքունց (Սարգսյաններ, Մկրտումյաններ), Մրութանց (Մովսեսյաններ), Մարդունց (Մարդյաններ), Շախունց (Մնացականյաններ), Պողոսայունց (Պողոսյաններ), Ջվադանց (Բաբայաններ), Ջիվանանց (Գրիգորյաններ), Վեզանց (Այվազյաններ), Քիսպարանց (Գասպարյաններ):

Ներկայումս համայնքում գործում են գյուղապետարան, բուժկետ, դպրոց, հանդիսությունների սրահ: Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը:

1901 թ. այստեղ կար 848 բնակիչ[758], 175 տուն, 1970 թ.՝ 721 բնակիչ, 1987 թ.՝ 160 տուն, 687 բնակիչ[759], 2015 թ.՝ 75 տուն, 231 բնակիչ[760], 2018 թ.՝ 69 տուն, 260 բնակիչ[761]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՀԱԹԵՐՔ

Գտնվում է ԱՀ Մարտակերտի շրջանում՝ Թարթառ գետի ձախափնյա սարահարթում՝ Մռավի լեռնաշղթայի անտառապատ ստորոտում: Բնակավայրն ունի խիստ կտրտված մակերևույթ և հյուսիսից թեքությամբ իջնում է դեպի հարավ՝ Թարթառ գետի հովիտը, ուստի ծովի մակերևույթից նրա բարձրությունը կազմում է 750–ից 1900 մետր:

Բնակլիմայական հարմարավետ պայմանները, մրգատու ծառերով հարուստ անտառների, ջրային պաշարների առկայությունը և պատմական իրադարձությունների ընթացքը նպաստել են, որպեսզի հայ մարդն այստեղ կերտի իր տնտեսական, մշակութային և քաղաքական կյանքը:

Գյուղում և շրջակայքում կան հարյուրավոր աղբյուրներ: Դրանցից առավել նշանավորներն են՝ Կապեն տակի, Կապեն գլխի, Ճախենանցի, Ջովզալարի, Հոնոտ փոսի, Մունդուռեն, Մշահավի, Իծաձորի, Ծաղկոցի, Ծրվաջրի, Երգյան թալայի, Գյուլատեղի, Դահնակի, Շրոշրռան, Մալականների, Ակնի հողի, Տաք ջրի, Գետի, Վարար

[758] Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 408:
[759] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 168:
[760] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[761] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 3:

ջրի, Ղլամա ջրի, Ճղպրոտ ձորի, գյուղամիջի աղբյուրները՝ Ցուրտ, Հոնի, Ջկոեն, Օխն, Քար, Ղոշ, Մթնաձորի:

Հաթերք գյուղի կլիմայական պայմանները մեղմ և բարեխառն են: Գյուղի տարածքում և շրջակայքում պահպանված դամբարանադաշտերը, հնությունները վկայում են, որ մարդը այստեղ շարունակաբար ապրում է հնագույն ժամանակներից:

Վաղ միջնադարում Հաթերքի հյուսիսային եզրագիծն էր համարվում Մռավի լեռնաշղթան, հարավում այն ձգվում էր մինչև Թարթառ գետը, արևմուտքում հասնում էր մինչև Դադի վանք: Արևելքում գյուղի սահմանները հասնում են Մթնաձորի կուսական անտառներին:

Հաթերքը, ի սկզբանե իշխանական կենտրոն լինելով, ավելի շատ գյուղաքաղաքի կարգավիճակ ուներ:

Հին Հաթերքի տարածքում կան ավելի քան 30 հնություններ, որոնցից երեքը եկեղեցիներ են: Արաբ մատենագիրները՝ Ալ-Իստախրին, Ալ-Մուկադդասին, Իբն-Հաուքալը, Յակուտ-ալ-Համավին պատմում են, որ Հաթերքը 7-10-րդ դարերում եղել է Դվին-Պարտավ ճանապարհի վրա գտնվող ամենաբանուկ կայարաններից մեկը[762]:

12-րդ դարի կեսերին Զաքարյան իշխանների հովանավորությամբ Հաթերք կենտրոնով ստեղծվել էր համանուն իշխանություն: Իշխանության հիմնադիրն էր Վախթանգ Սակառը: Իշխանությունը առավել հզորացավ նրա թոռան՝ Վախթանգ (1182-1214 թթ.) իշխանի օրոք: Նա կրթության, գիտության, արվեստների հովանավոր էր: Վախթանգ իշխանի մոտ հյուրընկալել էր Մխիթար Գոշը:

Մխիթարի կինը՝ Արզու խաթունը, կառուցել է Դադիվանքի ամենանշանավոր Ս. Նշան զմբեթավոր կաթողիկե եկեղեցին: Նա իր աղջիկների հետ ասեղնագործել է Դադիվանքի, Հաղպատի, Մակարավանքի վարագույրները:

15-րդ դարում Կարա-Կոյունլու և Ակ-Կոյունլու թուրքմենական ցեղերը ասպատակեցին Արցախը: Հիմնովին ավերվեց Հաթերքը: Նրա բնակիչները 16-րդ դարում իրենց բնակավայրից ոչ շատ հեռու հիմնում են նույնանուն՝ ներկայիս Հաթերք գյուղը: Ժամանակի ընթացքում Փառուխ, Կաղարծի, Ճարտար, Խանածախ գյուղերից և Վանից որոշ ընտանիքներ տեղափոխվել և հաստատվել են Հաթերքում[763]:

Միջին միջնադարից սկսած՝ գյուղի բնակչությունն իր հոգևոր պահանջները բավարարում էր Հաթերքի կենտրոնում գտնվող և այսօր էլ պահպանվող Ս. Աստվածածին եկեղեցում:

Գյուղի բնակչությունը, վաղ շրջանից սկսած, զբաղվում էր հողագործությամբ, անասնապահությամբ և արհեստագործությամբ:

Հաթերքցիները մեծ հակում ունեին դեպի կրթությունը և գիտությունը:

[762] СМОМПК, Т. XXIX, Тифлис, с. 33, Т. XXXVIII, Тифлис, 1908, с. 17, 101; Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Երևան, 1965, էջ 107; Йакут-ал Хамави, Муджам ал-Булдан, Баку, 1983, с. 30:

[763] Մակար եպս. Բարխուտարեանց, Արցախ, էջ 200:

Դեռևս 13-րդ դարում Հաթերքի Վախթանգ իշխանի տանը գործել է մասնավոր դպրոց, որտեղ Արզու խաթունը աղջիկներին սովորեցնում էր գրել, կարդալ, հաշվել, ձեռագործություն: Հետագայում այստեղ գործել են նախակրթարան, եկեղեցական-ծխական, իգական դպրոցներ[764]: 1881 թ. Հաթերքում գործել է ծխական դպրոց: 1890-ական թվականների սկզբներին ցարական իշխանությունները փակեցին հայկական կրթական հաստատությունները, այդ թվում՝ Հաթերքի դպրոցը:

1895 թ. Մոսի Վարդունցը բացում է նոր դպրոց, որը գործել է մինչև 1907 թ.: 1908-1909 ուսումնական տարում գյուղում բացվել է միադասյա 45 աշակերտներով դպրոց: Այն գործել է մինչև խորհրդային կարգերի հաստատումը Արցախում[765]:

1921 թ. Հաթերքում գործել է տարրական դպրոց: 1929 թ. այն յոթնամյայի կարգավիճակ էր ստացել, իսկ 1936 թ.՝ միջնակարգի:

1960-80-ական թթ. Հաթերքի միջնակարգ դպրոցում աշխատում էին 60-70 ուսուցիչներ, սովորում էին 800-900 աշակերտներ[766]:

Հաթերքի միջնակարգ դպրոցը ավարտել են գիտությունների 5 դոկտոր պրոֆեսորներ (Բենիկ Հարությունյան, Սերգեյ Գրիգորյան, Ռուբեն Ոսկանյան, Հրանտ Պետրոսյան, Լերմոնտ Մովսիսյան), 18 թեկնածուներ:

1992 թ. հուլիսի 4-ին աղրբեջանցի հրոսակները, մտնելով գյուղ, ավերեցին նաև դպրոցը:

2010-2011 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 274, 2015-2016 ուսումնական տարում՝ 290, իսկ 2017-2018 ուսումնական տարում 289 աշակերտ:

Խորհրդային տարիներին դպրոցին կից գործել է Մարտակերտի շրջանային թիվ 120 ՊՏՈՒ-ի Հաթերքի մասնաճյուղը:

Այդ նույն ժամանակահատվածում գյուղում կային մանկապարտեզ, ակումբ, գրադարան, հիվանդանոց, կապի բաժանմունք, կենցաղսպասարկման կետեր, խանութներ:

1929 թ. Հաթերքում կազմակերպվել է կոլտնտեսություն, որը 1977 թ. վերակազմավորվել և դարձել է խորհրդային տնտեսություն (սովխոզ): Կոլեկտիվ տնտեսությունը ղեկավարել են՝ Խաչատուր Աղաբաբյանը, Լազար Մակյանը, Ղազար Պետրոսյանը, Բագրատ Խաչատրյանը, Ավանես Գրիգորյանը, Ավանես Ասրյանը, Գարեգին Նարիմանյանը, Ջինավոր Աղաբեկյանը, Արամայիս Աղաբաբյանը, Միքայել Աղաջանյանը:

Գյուղի բնակիչների մի մասը աշխատում էր Ստեփանակերտի կոնդենսատորների գործարանի մասնաճյուղում, կարի ու ձևի ֆաբրիկայի բաժանմունքում և գորգագործական արհեստանոցում:

[764] Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Արցախի կրթական համակարգը, հ.1, էջ 427:

[765] Հարությունյան Գ., Արցախահայ դպրոցը 5-19-րդ դարերում, էջ 91; Նույնը՝ ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, 144, 543; «Նոր դպրոց», թիվ 5, 1908:

[766] Աղաջանյան Մ., Հաթերք, պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Ստեփանակերտ, 2012, էջ 16-17:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են 400 հաթերքցիներ: Նրանցից 195 հոգի զոհվել են: Գյուղի կենտրոնում 1965–1966 թթ. կառուցվել է զոհվածների հիշատակը հավերժացնող աղբյուր–հուշարձան:

Ծննդով Խանլարի շրջանի Ղուշչի գյուղից է Խորհրդային միության հերոս, գեներալ–մայոր Գրիգոր Բաղյանը, ով Հաթերքում աշխատել է որպես դպրոցի տնօրեն:

1988 թ. սկսած Հաթերքի բնակչությունը նույնպես ներքաշվեց Արցախյան ազգային ազատագրական պայքարի հորձանուտը:

1992 թ. հունիսի 12–ին ադրբեջանական զինված ստորաբաժանումները, իրենց հանրապետությունում դեռևս մնացած խորհրդային զորքերի աջակցությունը ստանալով, անցան լայնածավալ հարձակման և գրավեցին Շահումյանի շրջանն ու Մարտակերտի շրջանի զգալի մասը: Հուլիսի 4–ին ընկավ նաև Հաթերք գյուղը: 19 բնակիչ, որոնք չէին հասցրել հեռանալ գյուղից սպանվեցին: Թալանվեց ողջ գյուղը: 1992 թ. հուլիսի 19–ին մի կարճ ժամանակահատվածով Հաթերքն ազատագրվեց: Նույն թվականի օգոստոսի 13–ին ադրբեջանցիներին նորից հաջողվեց մտնել գյուղ: Հաթերքը վերջնականապես ազատագրվեց 1993 թ. փետրվարի 20–ին:

Արցախյան պատերազմին մասնակցած 200 հաթերքցիներից 57 հոգի զոհվել են: Նրանց թվում էր նաև ԼՂՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Բարմիկ Գրիգորյանը: Այսօր դպրոցը կրում է նրա անունը:

ԱՀ «Մարտական խաչ» 2–րդ աստիճանի շքանշանով պարգևատրվել են Սիրանուշ Սիրականի Առուշանյանը և Արամ Նիկոլայի Առուշանյանը, հետմահու՝ Բարմեն Սերգեյի Գրիգորյանը և Արամ Յուրիի Գրիգորյանը:

Կարճ ժամանակահատվածում վերականգնվեց ավերված գյուղը:

Հաթերքի բնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ: Սակայն այդ ասպարեզում գյուղում եղած ներուժը լիարժեք չի օգտագործվում:

Գյուղը ունի 20 խանութ, 3 հացի փուռ, վառելիքի 3 լցակայան, 3 սղոցարան, 1 էլեկտրոաղաց, կերերի աղաց: Բնակչության մի մասը աշխատում է վերոհիշյալ ձեռնարկություններում, ինչպես նաև դպրոցում, մանկապարտեզում և մշակույթի տանը:

Գյուղի շրջակայքում եղած ջրային պաշարները թույլ են տալիս կառուցել մանր ՀԷԿ–եր:

Հաթերքի բնաաշխարհագրական միջավայրը և պատմաճարտարապետական հուշարձանները նպաստավոր պայմաններ են ստեղծում զբոսաշրջության զարգացման համար:

1895 թ. Հաթերքն ուներ 694 բնակիչ, 1930 թ.՝ 1865, 1941 թ.՝ 2100, 1970 թ.՝ 2679, 1979 թ.՝ 2504, 1987 թ.՝ 2700, 1989 թ.՝ 2610, 2011 թ.՝ 1674[767], 2018 թ.՝ 484 տուն, 1544 բնակիչ[768]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[767] Աղաջանյան Մ., նշվ.աշխ., էջ 373:

[768] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 3:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆԱԳՈՄԵՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսային հատվածում՝ Մարտակերտի շրջանում՝ նախկին Խաչեն գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Վաղուհասից արևելք՝ Թարթառի աջափնյա բարձրադիր վայրում: Բնակավայրը ծովի մակարդակից 800 մ բարձրության վրա է գտնվում՝ շրջապատված անտառներով և ընդհանրապես գեղատեսիլ բնությամբ: Գյուղը տեղակայված է ձորակի երկու լանջերում, որտեղից պարզ երևում է Գոմեշ լեռնագագաթը:

Գյուղի շրջակայքում կան հին բնակատեղիներ, գերեզմանատներ, կիսավեր եկեղեցիներ, մատուռներ: Առանձնապես հայտնի են Միջի խութ, Հունոտ, Եղծատեղ, Պիծի հոռաթաղ, Շլորոտ շինատեղ գյուղատեղիները:

Հարությունագոմերի ներքևի հատվածով հոսող գետի ողջ երկայնքով կառուցված են թվով 16 ջրաղացներ: Այս փաստը նույնպես խոսում է այն մասին, որ այստեղ վաղ միջնադարից սկսած գոյություն են ունեցել բազմաթիվ բնակավայրեր:

Կիրակոս Գանձակեցին նույնպես վկայում է, որ տարածքը խիտ բնակեցված է եղել և սելջուկ–թուրքերի արշավանքների ժամանակ տեղաբնիկ հայերին եկվորները ոչնչացրել են:

Մինչև 17–րդ դարի կեսերը Թարթառի աջափնյակի հայաթափված բնակավայրերին տիրություն էր անում Գանձասարի կաթողիկոսական աթոռը:

Ավանդությունը պատմում է, որ 17–րդ դարի կեսերին Վանք գյուղից Հարություն անունով մի մարդ տեղափոխվում է Հարությունագոմերի ներկայիս տարածքը և զբաղվում անասնապահությամբ: Սակայն համաճարակի պատճառով անասունները ոչնչանում են, և Հարությունը ստիպված վերադառնում է Վանք: Ավանդությունն ասում է, որ Հարությունի անունից էլ գյուղը հետագայում կոչվել է Հարությունագոմեր: Մի քանի տարի անց Վանք գյուղից երկու եղբայրներ, հաշվի առնելով տեղանքի հարմարավետ դիրքը, բնական նպաստավոր պայմանները, որոշում են այդ տարածքներում զբաղվել խոզաբուծությամբ: Ծնողները, հաշվի առնելով Հարությունի անհաջողությունը, ընդդիմանում են: Սակայն եղբայրներն անդրդվելի էին և հաստատվում են բնության այդ գողտրիկ վայրում: Այդպես էլ սկսվեց Հարությունագոմերի պատմությունը:

Հարությունագոմերի հարուստ բնությունը նոր բնակիչների համար բարեկեցիկ կյանքի նոր պայմաններ է ստեղծում: Խան աղբյուրից կավե խողովակներով՝ թյունգերով, ջուրը ինքնահոս եղանակով գյուղ է հասցվել:

Նոր ժամանակներում ռուսական տիրապետության մեկ դարը Հարությունագոմերի համար առանձնակի դերակատարություն չունեցավ: Այդ ամենով հանդերձ հարությունագոմերցիները 19–րդ դարի սկզբներին ջանադիր մասնակցություն են ունեցել ռուս–պարսկական պատերազմներին: Նրանցից Ավետիսը (Վետիսը) ճարպիկ և փորձառու հետախույզի համարում ուներ: Քանի որ Գանձասարը ազատագրական

պայքարի կենտրոն էր, այստեղից նա գաղտնի ճանապարհներով նամակները հասցնում էր Գանձակ:

Գյուղն ապրում էր իր առօրյա միապաղաղ կյանքով: 1905–1920 թթ. Հարությունագոմերի բնակչությունը ստիպված էր դիմակայել հարևան շրջանների քրդերի և թուրք-թաթարների հարձակումներին ու ալան-թալանին:

Հարությունագոմերում խորհրդային կարգերը հաստատվել են 1920 թ. մայիսին: 1930 թ. գյուղում կազմակերպվեց «Կայծ» կոլտնտեսությունը, որի նախագահներն են եղել Արտեմ Դանիելյանը, Լևոն Հակոբյանը, Բենիկ Ավետիսյանը: 1977 թ. կոլտնտեսությունը վերակազմակերպվել է խորհտնտեսության: Նոր միավորի տնօրեններն են եղել Ջավեն Իշխանյանը, Հրաչիկ Սարգսյանը:

Հայրենական մեծ պատերազմին Հարությունագոմերից մասնակցել է 135 մարդ, զոհվել է 53-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան:

Արցախահայության ազատագրական պայքարում հաղթանակի ապահովման և պետականության վերակերտման գործում Հարությունագոմերի բնակչությունը իր համեստ ներդրումն է ունեցել:

Արցախյան շարժման առաջին իսկ օրվանից Մ. Բախշիյանի հրամանատարությամբ կամավորական ջոկատ է կազմավորվել: Ռազմական գործողությունների ընթացքում ջոկատը օրեցօր համալրվել է խորհրդային Հայաստանում ապրող, ծագումով հարությունագոմերցի, կամավորներով: 1991 թ. «Օղակ» ռազմագործողության ժամանակ Հարությունագոմերի կամավորական ջոկատը կռվել է ոչ միայն Ադրբեջանի օմոնականների, այլև նրանց աջակցող խորհրդային զորքերի դեմ:

Ադրբեջանի հրոսակները հրետանու և ինքնաթիռների միջոցով ռմբակոծել են գյուղի խաղաղ բնակչությանը:

1992 թ. հունիսին գյուղի բնակչությունը բռնագաղթեց: Ադրբեջանի կողմից ավերվեց ու թալանվեց Հարությունագոմերը: 1993 թ. փետրվարին Արցախի ՊԲ-ն ազատագրեց գյուղը:

Հարությունագոմերի համար մղված մարտերում մեծ ավանդ են ունեցել «Արծիվ» մահապարտների ջոկատի տղաները: Նրանց մեծ մասը 1992 թ. սեպտեմբերի 6-ին՝ դաժան մարտերի ժամանակ, զոհվել է:

Պաշտպանողական և հարձակողական մարտերի ժամանակ զոհվել են 13 հարությունագոմերցիներ: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի են արժանացել հետմահու՝ Ջարմիկ Ավետիսյանը և Վաղինակ Պետրոսյանը: Զոհվածների հիշատակը հավերժացնելու նպատակով հարությունագոմցի ռուսաստանաբնակ Հարություն Ներսիսյանի հովանավորությամբ 2010 թ. գյուղում հուշարձան է կառուցվել:

1994 թ. Հարությունագոմերի համար նոր շրջան սկսվեց: Գյուղում իրականացվել են վերականգնողական բազմաբնույթ աշխատանքներ:

Երկար ժամանակ Հարությունագոմերը դպրոց չուներ: 1911 թ. Էջմիածնից այստեղ է գալիս Մուշեղ Բրուտյանը և դպրոց հիմնում: Դպրոցական շենք չլինելու պատճառով դասերը կազմակերպվում էին Դերունց տանձ կոչվող տարածքում գտնվող մի հողաշեն տնակում:

1927–1928 ուսումնական տարում դպրոցը տեղափոխվեց համեմատաբար լուսավոր մի շինություն, որտեղ ուսուցչություն էին անում խորհրդային Հայաստանից Հարությունագոմեր գործուղված ուսուցիչներ: Այդ գործում աչքի ընկավ Գարեգին Սիմոնյանը, որը հետագայում դարձավ փիլիսոփայության գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Հարությունագոմերի քառամյա դպրոցն իր աշխատանքները հետագայում շարունակեց Նարիմանյանների երկհարիարկանի տան ներքնահարկում:

1935 թ. դպրոցը յոթնամյայի կարգավիճակ ստացավ: Դպրոցում սկսեցին սովորել նաև Վաղուհասից և Ներքին Հոռաթաղից եկած աշակերտները: 1938–1940 թթ. դպրոցական նոր շենք է կառուցվում: Այդ տարիներին դպրոցում սովորում էին 120-ից ավելի աշակերտներ: 1992 թ. ադրբեջանցի զինյալները, գրավելով Հարությունագոմերը, ավերեցին դպրոցական շենքը: Գյուղն ազատագրելուց հետո մի քանի ամիս Հարությունագոմերի աշակերտները դպրոց են հաճախում Վերին Հոռաթաղում: 1993–1994 ուսումնական տարում պարապմունքները կազմակերպվեցին Հարությունագոմերի բնակիչներից մեկի առանձնատանը: 1994–1995 ուսումնական տարում աշակերտները տեղափոխվեցին կիսով չափ վերանորոգված շենքը: 2005 թ. սկսվեցին դպրոցական նոր շենքի կառուցման աշխատանքները, որոնք ավարտվեցին 2010 թ.: Դպրոցն ունի բոլոր պայմանները գյուղի երեխաների ուսումնական գործը կազմակերպելու համար:

Դպրոցի տնօրեններ են աշխատել Անդրանիկ Հայրապետյանը, Սողոմոն Վեզիրյանը, Սարգիս Կարապետյանը, Ռուբիկ Միքայելյանը, Բերժիկ Մնացականյանը, Օլմեր Աղաբեկյանը, Գյուլնարա Գրիգորյանը, Ռոմելա Ավետիսյանը:

2014–2015 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 74 աշակերտ, դասավանդում՝ 16 ուսուցիչ:

Ներկայումս գյուղում գործում է նաև մանկապարտեզ, որտեղ 49 երեխաներ են հաճախում:

Ծննդով Հարությունագոմերից են փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գարեգին Սիմոնյանը, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բերման Անանյանը:

2005 թ. ռուսաստանաբնակ Վյաչեսլավ Վանյանի հովանավորությամբ գյուղում կառուցվել է Ս. Սարգիս եկեղեցին:

Համայնքի աղբյուրներն են՝ Վետած, Հճարկեն, Տանիելին, Վերդուն, Կարաբեդին, Ճկռանեն, Պիծի Հոռաթաղի, Հադալեն, Լենջին, Հուլուսնոտ ձորի:

Գյուղի նշանավոր հանդամասերն են՝ Միջի խութ, Ղազանչեցոց գոմեր, Քիհրիզին հարթ:

Հարությունագոմերում շարունակում են ապրել Կյուքունց, Մակունց, Տոնունց, Ղավալ Պուղունց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Համայնքում գործում են գյուղապետարան, դպրոց, մանկապարտեզ, բուժկետ, առևտրի 5 տաղավարներ:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները հասանելի են բնակչությանը:

Հարությունագոմերում 2018 թ. կար 75 տուն, 502 բնակիչ:[769] Բնակչության մեծ մասը աշխատում է «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ում, մի մասն էլ զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ:

ՀՈՎՏԱՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ արևելյան հատվածում՝ Մարտակերտի շրջանում՝ նախկին Ջրաբերդ գավառում:

Բնակավայրը տեղաբաշխված է Խաչենի ջրամբարի ձախ հատվածում:

Հովտաշենի շրջակայքում եղած Ք. ա. 2-1-ին հազարամյակների դամբարանաբլուրներն ու հելենիստական դարաշրջանի դամբարանները վկայում են, որ վերոնշյալ տարածքներում վաղընջական ժամանակներից բնակավայր է եղել:

Գյուղի պատմության միջնադարյան ժամանակահատվածի վերաբերյալ մեզ տեղեկություններ չեն հասել:

19-րդ դարի վերջերին բնակավայրը անվանվել է Ալիաղալու կամ Ղարխին:

Հայկունին գրում է, որ 1880-ական թվականներին գյուղում ապրում էր 27 հայ ընտանիք: Գյուղի մոտ էր գտնվում Ալի փենջա ուխտատեղին[770]:

Քանի որ Ղարխին հարթավայրային տեղանքում է գտնվում, 1905-1906 թվականների հայ-թաթարական ընդհարումների ժամանակ հայ բնակչությունը ծանր կացության մեջ էր հայտնվել: Չնայած ՀՅ Դաշնակցության ինքնապաշտպանական ջոկատին հաջողվել էր կազմակերպել Խաչենի հովտի գյուղերի պաշտպանությունը, այնուամենայնիվ մշտապես կրկնվող թալանից և սպանություններից խուսափելու համար տեղի բնակչությունը տարիների ընթացքում լքել է հարազատ օջախը:

Խորհրդային առաջին տարիներին գյուղը լիովին հայաթափվել էր: Գյուղի տարածքը 1923 թ. բռնակցվել էր խորհրդային Ադրբեջանին:

Ղարխինի հողահանդակները մտցվել էին Աղդամի վարչական շրջանի կազմի մեջ՝ նեղ շերտով հայտնվելով ԼՂԻՄ բնակավայրերի արանքում:

Խորհրդային Ադրբեջանի կառավարության որոշմամբ հանրապետության տարբեր վայրերից մի քանի թաթար ընտանիքներ հաստատվել են նախկին հայկական գյուղում:

[769] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հուվարի 1-ի դրությամբ, էջ 3:
[770] Հայկունի, նշվ. աշխ., էջ 77:

Ղազանչիի հայ բնակիչներն իրենց հողատարածքները մշակելու համար ստիպված պետք է անցնեին արդեն Ալիաղալու պաշտոնական անունը ստացած բնակավայրով:

1993 թ. ԱՀ ՊԲ հարվածների տակ Ալիաղալուն ազատագրվել է:

Բնակլիմայական հարմարավետ պայմաններն ու աշխարհագրական դիրքը հնարավորություն են ընձեռել վերաբնակեցման գործն ավելի սահուն իրագործել:

Պատերազմի ավարտից հետո՝ 1994 թ. Ադրբեջանից բռնագաղթված, ինչպես նաև ԱՀ-ի Վանք գյուղից ու ՀՀ մարզերից մի քանի ընտանիքներ հաստատվել են Ալիաղալույում: Վերաբնակեցված գյուղը ստացել է Հովտաշեն անունը: Գյուղից ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի է արժանացել Էռնեստ Արամայիսի Շեկյանը:

1995 թ. գյուղում դպրոց է բացվել: Հովտաշենի և Սեյսուլանի մոտ լինելու հանգամանքը նպաստել է, որպեսզի երկու բնակավայրերի տարրական դպրոցները միավորվեն և գործեն որպես Նոր Սեյսուլանի միջնակարգ դպրոց:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում կան գյուղապետարան, բուժկետ, առևտրի մեկ կետ: Բնակավայրերի, հանդամասերի և աղբյուրների անունները մոռացության են տրվել: Համայնքում առկա աղբյուրները նոր անուններ են ստացել՝ Վովայի, Գյուղի, Ժորիկի:

Խաչեն գետին մոտ լինելու հանգամանքը նպաստում է Հովտաշենում հողագործության զարգացմանը:

Հովտաշենում 2010 թ. կար 78 տուն, 260 բնակիչ[771], 2018 թ.՝ 63 տուն, 341 բնակիչ[772]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՃԱՆԿԱԹԱՂ

Մարտակերտի շրջանի Ճանկաթաղ գյուղը գտնվում է ԱՀ արևելյան հատվածում՝ Մարտակերտի շրջանում՝ նախկին Ջրաբերդ գավառում: Գյուղը շրջապատված է Մռով սարի լեռնաբազուկներից մեկի լեռնապարով՝ ծածկված կաղնու, բոխու, հաճարենու, թեղու և այլ լայնատերև անտառներով, ինչպես նաև բազմազան մրգատու ծառերով:

Ճանկաթաղը Արցախի հին բնակավայրերից մեկն է համարվում: Դրա մասին են վկայում գյուղի տարածքում պահպանված Ք. ա. 2-1-ին հազարամյակների դամբարանադաշտերը, հին գյուղատեղիների և գերեզմանների հետքերը:

[771] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[772] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

Հայոց Փիլիպոս կաթողիկոսի կոնդակում գյուղը ներկայացված է Ջանկաթաղ ձևով,[773] իսկ 18-րդ դարի հիշատակարաններից մեկում այն անվանված է Ճանկաթաղ[774]:

17-րդ դարի սկզբներին, մանավանդ Շահ Աբասի օրոք, Արցախի որոշ բնակավայրերից, այդ թվում Ճանկաթաղից, բնակիչներին բռնագաղթեցնում են Արաքսի մյուս ափը՝ Ղարադաղ:

19-րդ դարի սկզբներին ռուս-պարսկական պատերազմներից հետո գեներալ Մաղաթովի նախաձեռնությամբ Արցախի նախկին բնակիչների մի մասին նորից տեղափոխում են հայրենի տարածքներ:

Ղարադաղի Ամրագյուլ և Քյանի հայկական գյուղերից[775] 9 բազմանդամ ընտանիքների անդամներն իրենց նահապետների՝ Նարինի, Սարգսի, Սարդարի, Հարությունի, Խաչատուրի, Հակոբի, Բաբանի, Գրիգորի և Ջահանի գլխավորությամբ երկար դեգերումներից հետո հանգրվանում են Արցախի Տիգրանակերտ քաղաքի տարածքում: Այնտեղ մի քանի օր մնալուց հետո, որոշ անհարմարություններից, մասնավորապես թունավոր օձերից և խայթող միջատներից խուսափելու համար տեղափոխվում են ներկայիս Նոր Կարմիրավան գյուղի տարածքը: Եվ միգուցե նրանք այստեղ էլ բնակություն հաստատեին, եթե չլիներ մի պատահականություն, խմբի տղամարդիկ, օրերից մի օր դիտարկելով տեղանքը, հորիզոնում նկատում են անտառը և որս անելու նպատակով ճանապարհվում են այդ վայրը: Նրանք հասնում են ներկայիս Ճանկաթաղի Բանդ կոչվող տեղը, որտեղից էլ սկսվում է անտառը: Որսորդներն անտառում նկատում են եղնիկների, կրակում և վիրավորում են մեկին: Վիրավոր կենդանին արյունաքամ խորանում է անտառի մեջ: Արյան հետքերով որսորդները եղնիկին գտնում են անտառի խորքում գտնվող ամայացած եկեղեցու խուցերից մեկի մեջ: Եկեղեցու մուտքի սյուներից մեկի վրա հայերեն գրված էր Ճանկաթաղ, որը մնում էր մինչև 1992 թ. գաղթը: Ղարադաղից եկածները որոշում են բնակություն հաստատել Սբ. Գևորգ եկեղեցու շրջակայքում:[776] Վերոհիշյալ եկեղեցին կառուցվել է 1608-1609 թվականներին: Վերջին տարիներին այն վերականգնվել է ծագումով Ճանկաթաղցի ռուսաստանաբնակ բարերարներ Էդիկ և Տամելլա Սարգսյանների միջոցով:

Հետագա տասնամյակներում գյուղը ընդարձակվում է եկեղեցու դիմացի բարձրության վրա: Այդտեղ կառուցվում են անասնագոմեր, մարագներ, կալեր: Գյուղի վերևի այդ թաղամասը անվանեցին Կալեր:

Ցարական կառավարության ժամանակ Այսրկովկաս աքսորված ռուս-մոլականները գյուղի ներքևի թաղամասում ստեղծում են ձիաբուծարան և զարգացնում ղարաբաղյան հռչակավոր ձիու տեսակը: Այդ թաղամասը կոչվեց *Ջավոդ*: Այդտեղ կառուցվում են նաև ռուսական եկեղեցի, շուկա, ձիթահան և պրիստավի եռահարկ շենքը: Վերջին պրիստավին՝ Վիլմանին, որը միաժամանակ արքունական ձիերի գործարանի տերն էր, Քոլանի քրդերը դավադրաբար սպանում են: 1884 թ. Վիլմանի սպանողներին հայտնաբերում և կախում են: Այն տեղամասը, որտեղ կախաղան են բարձրացրել, մինչև այսօր էլ կոչվում է «թորքին գյոռ»: Վիլմանին հուղարկավորում են «զավոդի» թաղամասի գերեզմանոցի մոտակա բարձունքին, որը հետագայում կոչվեց «պալկովնիկի թումբ»: Շրջակա գյուղերի հայ բնակիչները և գնդապետ Վիլմանը լավ հարաբերություններ ունեին:

1917 թ. Ճանկաթաղից Արսեն Նարինյանը և Պողոս Հակոբյանը Բաքվում մասնակցում են հեղափոխական շարժմանը և կապ ստեղծում Ստեփան Շահումյանի ու քսանվեց կոմիսարների հետ:

1930 թ. Ճանկաթաղում ստեղծվում է կոլտնտեսություն: 1964 թ. կոլտնտեսությունը վերակազմավորվեց և վերածվեց սովխոզի: Տնտեսությունը որոշակի զարգացում ապրեց, որտեղ պահվում էին 600 գլուխ խոշոր և 4000 գլուխ մանր եղջերավոր անասուններ[777]:

Համեմատության համար նշենք, որ 2013 թ. հուլիսի 1-ի տվյալներով գյուղում կար 71 մեղվափեթակ, 229 գլուխ խոշոր եղջերավոր, 205 գլուխ մանր եղջերավոր անասուն, 19 գլուխ խոզ, 1525 թև թռչուն:

Ճանկաթաղի կոլտնտեսությունը, այնուհետև սովխոզը ղեկավարել են Ավանես Մկրտչյանը, Գրիգոր Պետրոսյանը, Գաբրիել Բալայանը, Ջիվանշիր Սարգսյանը, Մամիկոն Քարդումյանը, Դմիտրի Միխայլդիսը, Վլադիկ Հովսեփյանը, Ռաֆիկ Հարությունյանը, Վանիկ Մանուչարյանը, Վովա Մարտիրոսյանը:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 270 մարդ, զոհվել է 164-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան:

Ճանկաթաղի բնակչությունն իրենց երեխաներին հայեցի դաստիարակություն ապահովելու և ուսում տալու նպատակով 19-րդ դարի 80-ական թվականների կեսերին խնդրագիր են ուղարկում կաթողիկոսին՝ թուլատրելու բացել եկեղեցական-ծխական դպրոց: 1887-1888 ուսումնական տարում բացվել է միադասյա արական ծխական դպրոց՝ 35 աշակերտով, որտեղ դասավանդում էր 1 ուսուցիչ: Դպրոցը փակվել է 1896 թ. և վերաբացվել 1908 թ. հոկտեմբերին: Այն մեկդասյա երկսեռ էր, ուներ երկու բաժանմունք, 45 աշակերտ և 1 ուսուցիչ: Դպրոցը պահվել է աշակերտների ուսման վարձով: 1918-1920 թթ. դպրոցը գործել է Ջարգարանց տոհմի ներկայացուցիչներ Մկրտչյանների տանը: 1930-40-ական թվականներին դպրոցում սովորում էր 85 աշակերտ:

[773] Մակար եպս. Բարխուտարեանց, Արցախ, էջ 48:

[774] Армяно-русские отношения в первой трети XVII века, сборник документов, т. 2, ч. 2, Ереван, 1967, с. 285.

[775] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 271:

[776] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[777] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

1948–1949 ուսումնական տարում Ճանկաթաղի յոթամյա դպրոցը դառնում է ութամյա: 1950–60-ական թվականներին դպրոցում սովորում էր 110 աշակերտ, 1965–1970-ական թվականներին աշակերտների թիվը հասավ 160-ի:

1992 թ. հուլիսի 4-ին գյուղի բռնի տեղահանման պատճառով դպրոցը ժամանակավորապես փակվում է: 1994 թ. փետրվարի 1-ին գյուղի ազատագրվելուց հետո դպրոցն իր աշխատանքները վերսկսեց՝ ունենալով 4 աշակերտ և 2 ուսուցիչ: 2018–2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 50 աշակերտ և դասավանդում՝ 16 ուսուցիչ: Խորհրդային և անկախության տարիներին դպրոցը ղեկավարել են Անդրանիկ Այվազյանը, Ռուբեն Այվազյանը, Անդրանիկ Բուդաղյանը, Վահան Ղուլյանը, Լևոն Հարությունյանը, Ռաֆիկ Բաղդասարյանը, Ռայա Դանիելյանը, Բենիկ Մուսայելյանը, Արտեմ Սարգսյանը, Արտեմ Զաքարյանը, Բորիկ Սարգսյանը, Կառլոս Մինասյանը, Սլավիկ Մանգասարյանը, Վարսենիկ Առուշանյանը, Ասյա Մանգասարյանը, Էմմա Դանիելյանը:

Արցախահայության ազատագրական շարժման առաջին իսկ օրվանից Ճանկաթաղի բնակչությունն ակտիվ մասնակցություն է ունեցել: Գյուղը, շրջապատված լինելով ադրբեջանաբնակ 5 գյուղերով, ծանր կացության մեջ էր հայտնվել: Գյուղում հաշվառված էր 18–45 տարեկան 167 երիտասարդ:

1988 թ. օգոստոսին գյուղի հասարակության ընդհանուր ժողովում ստեղծվում է 9 հոգուց բաղկացած ազգային ճակատ, որը գլխավորում էր Սլավիկ Մանգասարյանը: Այդ մարմնի անդամներն էին Արտո Ջհանգիրյանը, Համլետ Բաբայանը, Բորիկ Միրզոյանը, Վագիֆ Միրզոյանը, Բարմեն Խաչատրյանը, Կառլեն Աղաբեկյանը, Սեժիկ Ջհանյանը և Վովա Մովսիսյանը: Ստեղծվում է 16 խմբից կազմված պաշտպանական միավորում: Ամեն մի խումբ ուներ իր հրամանատարը: Գյուղի մոտական բարձունքներում ստեղծվում են պաշտպանական դիրքեր և որսորդական հրացաններով սկսում են հերթապահել:

Ադրբեջանական ավազակախմբերը, իրենց ազգային վարք ու բարքին համապատասխան, թալանով էին զբաղվում, քշում-տանում Ճանկաթաղի հայերի անասունները: Անտառում նրանք սպանում են Էդիկ Ամյանին և վիրավորում Սոկրատ Հակոբյանին: Ադրբեջանական բնակավայրերում օմոնականների թիվը օրեցօր մեծանում էր: 1992 թ. հունվարին ադրբեջանցիներին հաջողվում է մտնել գյուղ, դաժանաբար սպանել Կոլյա Բաղալյանին: Կտրում են նրա գլուխը և հրդեհում տունը: 1992 թ. փետրվարի 3-ին Սամվել Ջահանգիրյանը իր ջոկատով ազատագրում է հայրենի գյուղը:

1992 թ. մարտի 12-ին Ճանկաթաղի և Ներքին Հոռաթաղի ջոկատները աքցանի մեջ են առնում օմոնականների բուն դարձած Մանիքլուն և գրավում այն: 1992 թ. ապրիլի 21-ին գյուղ է ժամանում Լեոնիդ Ազգալդյանը և գյուղի պաշտպանությունը կազմակերպելու միջոցներ ձեռնարկում: Որպես օգնություն Ճանկաթաղում դիրքավորվում են Հրազդանի կամավորականները՝ Սասուն Միքայելյանի գլխավորությամբ:

Նախահարձակ գործողությունների դիմելով՝ Ճանկաթաղի ջոկատը՝ Սամվել Ջհանգիրյանի և Հրազդանի ջոկատը՝ Սասուն Միքայելյանի գլխավորությամբ մոտենում են Ղարաչիլար և Փափռնանդ գյուղերին: Ռազմագործողությունը ձախողվում է, իսկ հրամանատար Սամվել Ջհանգիրյանը զոհվում է: 1992 թ. հուլիսի 4-ին Սամվել Ջհանգիրյանին հուղարկավորում են դպրոցի բակում: Մարտակերտ քաղաքի ընկնելուց հետո՝ հուլիսի 4-ին, Ճանկաթաղի բնակիչները նույնպես հեռանում են գյուղից: 1993 թ. մարտի 17-ին Արցախի պաշտպանության բանակի կողմից գյուղը ազատագրվում է: Պատերազմի տարիներին 19 հոգի զոհվում են: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվում: Սամվել Ջհանգիրյանին հետմահու շնորհում են ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշան:

Հետպատերազմյան տարիներին ավերված գյուղն արագ վերականգնվում է: Գյուղում գործում են միջնակարգ դպրոց, մշակույթի տուն, բուժկետ:

Ճանկաթաղում պահպանվել են պատմաճարտարապետական նշանակության որոշ հուշարձաններ: Հաշվառված է 51 հուշարձան: Դրանցից հայտնի են 12–13-րդ դարերի Ծովատեղ եկեղեցին, 1609 թ. կառուցված Սուրբ Գևորգ եկեղեցին, սրբավայրեր, միջնադարյան խաչքարեր:

Համայնքի աղբյուրներն են՝ Քյահրիզ, Երին ջուր, Մոստին տակ, Ջհանանց, Ցորտ, Մղրակերին, Մարունց, Ծով, Դերին, Հովուզ, Հաչա հղեց:

Գյուղի նշանավոր հանդամասերն են Գյորգին ձոր, Վասիլին տափ, Թազա տափ, Ցանցախ, Ծով, Պապով, Սղնախ:

Ճանկաթաղում ներկայումս ապրում են Սարդարանց, Ավաքանց, Պուտունց, Վհանանց, Վանունց, Գլմանց, Բեդունց, Ջհանգիրանց, Խանանց, Վղնեցունց, Թմամանց, Հրբեդանց, Քսպարանց, Ղարախանանց, Աղաջանանց, Մանբունց, Ավագումանց, Խաչատորանց, Հաբունց, Խուջանց, Ղազունց, Աղաբեգանց, Քյասունց, Ջավունց, Մակունց, Սայունց, Չարչունց, Հուրունց, Իսախանանց, Վնեսանց, Խուղունց, Մոսունց, Չատունց, Սևունց, Պետրոսանց, Սերոփանց, Մարուց, Փուրունց, Բլանց, Հուռունց, Թունունց, Բաղունց, Թուվուսանց, Կափունց, Մսելանց, Ջդանց, Դերունց ազգատոհմերի ներկայացուցիչները:

1890-ական թվականների սկզբներին Ճանկաթաղում կար 85 տուն, 628 բնակիչ, 1979 թ.՝ 228 տուն, 778 բնակիչ, 1987 թ.՝ 251 տուն, 828 բնակիչ,[778] իսկ 2018 թ.՝ 103 տուն, 434 բնակիչ[779]:

Ճանկաթաղի բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ, մի մասն էլ աշխատում է «Բեյզ Մեթըլս» ընկերությունում:

[778] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 168

[779] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

ՄԱՏԱՂԻՍ

Բնակավայրը գտնվում է ԱՀ հյուսիսարևելյան մասում՝ Մռավի լեռնաշղթայի արևելյան լեռնաճյուղերի ստորոտում գտնվող ձորի մեջ՝ Թարթառ գետի ստորին հոսանքի ձախ ափին: Նախկինում բնակավայրը ներառված էր Արցախի Ջրաբերդ գավառում:

Լեռնաստանը հարթավայրի հետ կապող կարևոր հանգուցակետում լինելով՝ Մատաղիսը և նրա հարակից տարածքները մարդու ապրելու համար բարենպաստ պայմաններ ունեն: Մատաղիսից 8 կմ հարավ գտնվում է Ք. ա. 2–1–ին հազարամյակների դամբարանաղաշտը: Գյուղից 7 կմ դեպի հյուսիս–արևմուտք Մռավի լանջին է գտնվում Եղիշե Առաքյալի վանքը: Մովսես Կաղանկատվացին պատմում է, որ Հայոց արևելից կողմանց Վաչագան Բարեպաշտ թագավորը 5–րդ դարում Սուրբ Եղիշեի գերեզմանի վրա կառուցել է մատուռ–դամբարան[780]: Վանական համալիրում, ավանդության համաձայն, թաղված է նաև Վաչագան թագավորը:

1286 թ. Վաչագան Բարեպաշտի գերեզմանի վրա վանահայր Սիմեոնը կառուցել է մատուռ, որի խորանի ճակատակալ քարի վրա գրված է. «Այս է հանգիստ Վաչագան թագաւորին. Աստուած ողորմի Հայրապետայ և ոյր (իւր) ծնողացն, որ շինեց զեկեղեցիս առաջնորդութիւն տէր Սիմիոնի, թիւ ՉՀԵ (1286 — Վ. Բ.) էր»[781]: Մատուռի դիմաց գտնվում է Ջրաբերդի Մելիք Ադամ Մեծի գերեզմանոցը: Նրա տապանաքարը մահմեդականները ջարդել են:

Եղիշե Առաքյալի վանքի հետ է կապված նաև 18–րդ դարի արցախահայության ազատագրական պայքարի երկու նշանավոր գործիչների՝ Դալի–Մահրասայի և Տեոնմազի անունները: Դալի Մահրասան բնակվել է այդ վանքում: Դալի Մահրասայի սենյակը պատուհանների փոխարեն ունի հրացանից կրակելու անցքեր: Վանքի հյուսիսային պարսպի փակված դռան վրա փորագրված է «ՐԾՅՁ ես Տոնմազ բեկեցի թվ. ՌՃՀԷ»[782]:

16–րդ դարում վանքը պարսպապատվել է: Այն դարձել էր ազատագրական պայքարի կենտրոններից մեկը:

Ի դեպ, վանքի տարածքում հեթանոսության շրջանում կառուցված է եղել Միհրին նվիրված տաճար[783]:

5–13–րդ դարերում Մատաղիսի շրջակայքում էին գտնվում Էրկան լենջ, Խալվաթաշեն, Դաստակերտ, Թորուս բնակավայրերը: Որոշ գյուղատեղիների հետքեր, որոնց անունները մեզ առայժմ անհայտ են, պահպանվում են առայսօր: Մատաղիսի մասին հիշատակված է նաև արաբ պատմագիր Աբու–Իսխակ ալ Իստախրի (850–934 թթ.) աշխատության մեջ[784]:

[780] Մ. Կաղանկատուացի, էջ 12:

[781] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 282:

[782] Նույն տեղում, էջ 282:

[783] Նույն տեղում, էջ 281:

[784] Гейбуллаев Г., Монгольские топонимы в Азербайджане, «Известия АН Аз.ССР. Серия история, философия и право», № 3, Баку, 1981, с. 12.

13–16–րդ դարերում քոչվոր ցեղերի մշտական կրկնվող ասպատակությունների պատճառով բնակչությունը ստիպված է լինում հեռանալ Մատաղիսից: Այս հանգամանքը Գյուլիստանի և Ջրաբերդի մելիքների համար ծանր իրավիճակ է ստեղծում: Անպաշտպան ձորով քոչվոր ցեղերի համար անարգել ասպատակություններ կատարելու բարենպաստ պայմաններ է ստեղծվում: Ի դեպ, ինչպես 1991–1994 թթ. պատերազմի, այնպես էլ 2016 թ. ապրիլյան ռազմագործողությունների ժամանակ Ադրբեջանի զինված ուժերը անընդհատ փորձում էին ճեղքել Մատաղիսի ուղղությամբ պաշտպանական գիծը և խորանալ Մարտակերտի շրջանի մեջ:

Տարածքի ռազմավարական նշանակությունը հաշվի առնելով՝ 18–րդ դարի վերջերից Գյուլիստանի և Ջրաբերդի մելիքները նորից որոշեցին վերականգնել նախկին բնակավայրը: Այդ նպատակով 1806 թ. Թարթառ գետի ամենավտանգավոր տեղում՝ Պառավի կամրջի մոտ, սկզբում ստեղծվեց պահակակետ, այնուհետև հայկական բնակավայրերից մելիքները ռազմական գործի մեջ հմուտ երիտասարդներ բերեցին և բնակեցրին ներկայիս Մատաղիսի տարածքում: Առաջին բնակիչները դարձան Աբրահամյան (Շիբրանանց), Ավանեսյան (Չիլինգարանց), Ավանեսյան (Զոպչունց), Աղաջանյան, Առուստամյան, Բարսեղյան, Գրիգորյան (Զարչունք), Համբարձումյան, Ղահրամանյան, Մարտիրոսյան (Ասրունք), Միրզոյան, Մովսեսյան (Սահականք), Վարդազարյան (Տնդեկնունք), Սարգսյան (Գինցանք), Սիմոնյան, Վանյան տոհմերի ներկայացուցիչները[785]: Նրանք ամուսնանում են հարևան գյուղերի աղջիկների հետ և դառնում նոր Մատաղիսի առաջին գերդաստանների նահապետները:

Ավանդությունը պատմում է, որ Վաղուհաս գյուղի մոտ գտնվող Մատաղիսից մեծ քանակությամբ ընտանիքներ տեղափոխվել և բնակություն են հաստատել նոր բնակավայրում և տարածքն էլ կոչել են իրենց հայրենի գյուղի անունով:

Բնակչության հոգևոր պահանջները բավարարելու նպատակով 1892–1898 թթ. կառուցվում է եկեղեցի:

Գյուղի խորհրդայնանալուց հետո 1930 թ. կազմակերպվել է կոլտնտեսություն: 1963 թ. Դաստագիրի, Տոնաշենի, Ներքին Չայլուի, Վերին Չայլուի և Մատաղիսի տնտեսությունները միավորվել են և կազմավորվել է «Կոմունիզմ» կոլտնտեսությունը, որը 1975 թ. վերակազմակերպվել է սովխոզի: Տնտեսությունը ղեկավարել են Արշակ Բարսեղյանը, Սուրեն Բարսեղյանը:

Ընդհանուր առմամբ խորհրդային տարիները Մատաղիսի համար արդյունավետ էին: Համայնքում կառուցվել են հիդրոէլեկտրակայան, կահույքի և փայտամշակման ֆաբրիկա: Գյուղն ունեցել է բնական կաուչուկի, լուցկու, կաթի մշակման արտադրամասեր:

[785] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

Գյուղի զարգացմանը նպաստել է նաև Թարթառի ՀԷԿ-ի կառուցումը: Կառուցապատման ընթացքում տարբեր վայրերից, այդ թվում Ռուսաստանից շինարարներ, ինժեներներ եկան և բնակություն հաստատեցին Թարթառի աջ ափին գտնվող Տերտերգես ավանում, որը հետագայում դարձավ Մատաղիսի թաղամասերից մեկը:

1941–1945 թվականների Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 100 մարդ, նրանցից 54-ը զոհվել են:

Մատաղիսի բնակչությունը նույնպես ներգրավվել է արցախյան շարժմանը: 1991–1992 թթ. մարտեր են ընթացել Մատաղիսի ուղղությամբ: Կամավորական ջոկատները չեն կարողացել դիմակայել մինչև ատամները զինված ադրբեջանցիների ճնշմանը: 1992 թ. հունիսի 16-ին Մատաղիսի հայությունը բռնագաղթում է:

1992 թ. Ստեփանակերտում Ռ. Պետրոսյանի և Ռ. Հայրիյանի գլխավորությամբ կազմավորվում է մատաղիսցիների կամավորական ջոկատը, որը մինչև պատերազմի հաղթական ավարտը մասնակցել է ռազմական գործողություններին: Մատաղիսի պաշտպանությանը մեծ ավանդ է ունեցել Ազատագրական բանակի հրամանատար Լեոնիդ Ազգալդյանը: ԱՀ ՊԲ և Էջմիածնի կամավորականների ջանքերով 1994 թ. ձմռանը գյուղը վերջնականապես ազատագրվում է: Գյուղը լիովին ավերվել էր: Մատաղիսի բնակիչների մի մասը, վերադառնալով հայրենի օջախ, սկսում է վերականգնել գյուղը: Ինչպես Մատաղիսի պաշտպանության, այնպես էլ վերականգնման գործում մեծ ներդրում է ունեցել դեռևս 1989 թ. Երևանում ստեղծված Մատաղիսի, Տոնաշենի և Դաստագիրի հայրենակցական միությունը, որը գլխավորում էր ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ծննդով Մատաղիսից Վանյա Բարսեղյանը:

19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին Մատաղիսի դպրոցահասակ երեխաները կրթություն էին ստանում Թալիշում և Կուսապատում: 1913 թ. Կրասնոդարի երկրամասից Մատաղիս տեղափոխված ռուսաց լեզվի ուսուցչուհի Սոֆյա Զանչիտյանի և գյուղի քահանա տեր Հայրապետ Եղիգարյանի ջանքերով եկեղեցուն կից բացվեց մեկդասյա դպրոց: Դասերն անց էին կացվում տեր Հայրապետի և Հայրապետ Ղահրամանյանի տների նկուղային հարկերի երկու սենյակներում[786]:

Խորհրդային իշխանության առաջին տարիներին գյուղում բացվում է տարրական դպրոց և պարապմունքները անց են կացվում Ալեքսանդր Սարգսյանի բնակարանում: 1930-ական թվականներից դպրոցը ուներ յոթամյայի կարգավիճակ: 1939 թվականից որպես դպրոց ծառայում էր Կաուչուկի գործարանի փայտաշեն 5 սենյականոց գրասենյակը:

Քանի որ 1930-ական թվականների վերջերից Տերտերգես ավանում ռուս մասնագետների ընտանիքներ էին ապրում, ուստի 1940 թ. դպրոցը դարձավ միջնակարգ՝

[786] Հարությունյան Ժ., Մատաղիսի դպրոցը, «Կրթությունը և գիտությունը Արցախում», հմ. 1, 2012, էջ 105:

հայերեն և ռուսերեն բաժիններով: Ռուսական բաժինը փակվեց 1956 թ.: Դպրոցը տեղափոխվեց Տերտերգես ավանի տարածքը, որտեղ կար միահարկ մի շինություն: 1972–73 ուսումնական տարում շահագործման հանձնվեց նոր տիպային շենքը:

1994 թ., երբ Մատաղիսի բնակիչները վերադարձան ազատագրված բնակավայր, դպրոցը նույնպես ավերված գտան: 1995 թ. այն վերանորոգվեց և վերաբացվեց:

2001 թ. ապրիլի 30-ին Մատաղիսի դպրոցը անվանափոխվեց նույն կրթական հաստատության շրջանավարտ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի անունով:

2007 թ. սեպտեմբերի 1-ին շահագործման է հանձնվում Տորոնտոյի հայ համայնքի միջոցներով կառուցված դպրոցը: 2016 թ. քառօրյա պատերազմից հետո հրետակոծված դպրոցը նույն համայնքի միջոցով նորից վերանորոգվեց:

Խորհրդային և հետխորհրդային շրջանում դպրոցի տնօրեններ են աշխատել Ալեքսանդր Սարգսյանը, Սրբուհի Հովհաննիսյանը, Մուշեղ Տերյանը, Սուրեն Երիցյանը, Արտակ Անանյանը, Ռաֆիկ Միրզոյանը, Արմիկ Գրիգորյանը, Վազգեն Ղուկասյանը, Կարո Ներսիսյանը, Նորվարդ Անտոնյանը, Նորա Գասպարյանը, Գեղամ Աղաջանյանը:

2016–2017 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 84 աշակերտ, դասավանդում՝ 16 ուսուցիչ:

Դպրոցի շրջանավարտներ են ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վանյա Բարսեղյանը:

Մատաղիսում և նրա շրջակայքում պահպանվել են պատմաճարտարապետական բազմաթիվ հուշարձաններ: Նրանցից առավել հայտնի են Եղիշե Առաքյալի վանական համալիրը (5-րդ դար), Պառավի, Վարընկաթաղի կամուրջները (7–13-րդ դարեր), Վաչագան Բարեպաշտի մատուռ-դամբարանը (1286 թ.), կրկնահարկ դահլիճը (1552 թ.), 12–18-րդ դարերի բազմաթիվ խաչքարեր, գերեզմանատներ, Սբ. Եղիշե եկեղեցին (1892–1898 թթ.):

Համայնքի տարածքում գործում են Կոլին դոիգ և Հոոի աղբյուրները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Մատաղիսում ներկայումս գործում են գյուղապետարան, բուժկետ, դպրոց, մանկապարտեզ, առևտրի 4 կետեր, երկու փոքր ՀԷԿ և թառափաձկան բուծման արտադրամաս:

1890-ական թվականներին Մատաղիսում կար 35 տուն, 165 բնակիչ, 1970 թ.՝ 172 տուն, 745 բնակիչ, 1987 թ.՝ 208 տուն, 697 բնակիչ[787], իսկ 2018 թ.՝ 180 տուն, 543 բնակիչ[788]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[787] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 165:
[788] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

ՄԱՂԱՎՈՒԶ

Բնակավայրը գտնվում է ԱՀ հյուսիսարևելյան հատվածում՝ Մարտակերտի շրջանում՝ նախկին Ջրաբերդ գավառում: Բնակավայրը տեղաբախշված է Թարթառ գետի աջ ափի բարձրավանդակի մի լեռնահովտում:

Մակար Բարխուդարյանի տվյալներով Մաղավուզի բնակչությունը այստեղ է տեղափոխվել 17-րդ դարի վերջերին Սյունիքի Մաղավուզ գյուղից: Չհարմարվելով տեղանքին հետագայում տեղափոխվել են Շուլավերի կողմերը, ապա վերադարձել Գետաշեն, այստեղից էլ վերստին Մաղավուզ:[789]

Սակայն սկզբնաղբյուրներն ու հնագիտական ուսումնասիրությունները վկայում են, որ հին ժամանակներից սկսած՝ այդտեղ բնակավայր է եղել և անվանվել է Չարդախլու:[790]

Ընդհանուր առմամբ Մաղավուզի շրջակայքը խիտ բնակեցված է եղել: Դեռևս վաղ միջնադարից այստեղ էին գտնվում Կաղանկատույք, Ջրաբերդ, Դաստակերտ, Խալվաթաշեն բնակատեղիները, Սանգյառ ամրոցը և վերջապես նշանավոր Մայրաքաղաքը կամ ինչպես տեղաբնիկներն են ասում Քըղրքատեղը: Այստեղ են գտնվում 13-րդ դարում ապրած Վահրամ իշխանի ապարանքը, Մելիք Ադամի պալատ-ամրոցը: Պատահական չէ, որ որոշ աղբյուրներում Մայրաքաղաքը անվանվել է նաև Վահրամ քաղաք ձևով:

Դրա մասին հիշատակված է նաև Մայրաքաղաքի գերեզմանոցում գտնվող մատուռի բարավորի ՉԹ (1260) թ. արձանագրության մեջ:[791]

Մայրաքաղաքի մասին հիշատակված է նաև ՊԼԲ (1383) թ. կազմված մի Ավետարանի մեջ:[792]

Եղիշե ավագ քահանա Գեղամյանցը 19-րդ դարի վերջերին, լինելով այդ վայրերում, գրել է, որ Մայրաքաղաքում դեռ «... Չորս-հինգ հարիւր քարուկրեայ տների աւերակներ կան»:[793]

Արցախի այդ բարգավաճ բնակավայրը տակնուվրա դարձավ Աղա Մուհամմադ խանի 1795-1797 թվականների արշավանքների և դրան հաջորդած սովի ու մահտարժամի հետևանքով: Նախկին ավանի բնակիչների մի մասն իր ապագան կապեց Արցախի մի շարք բնակավայրերի, մասնավորապես՝ Մեծ շենի և Մոխրաթաղի հետ:

[789] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 274: Ավանդությունը պատմում է, որ Գիժ լեռան ժայթքած հրաբխի և երկրաշարժի պատճառով ավերվել է Վայոց ձորի Մոզ ավանը: Բնության արհավիրքից փրկվածները հետագայում հիմնավորվել են Մաղավուզում:

[790] Кавказский календарь на 1856 г., Тифлис, 1855, с. 381; Հայկունի, նշվ. աշխ., էջ 45-46:

[791] Մակար եպս. Բարխուտարեանց, Արցախ, էջ 223; Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 95; Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, т. 6, Тифлис, 1887, с. 339.

[792] Մատենադարան, ձեռ. հմ. 6288:

[793] Հայկունի, նշվ. աշխ., էջ 46:

Այդ ամենը կործանարար էր նաև Մաղավուզի համար: Այդտեղի բնակիչները նույնպես ցիրուցան եղան: Պատահական չէ, որ 19-րդ դարի 80-ական թվականներին այդտեղ կար ընդամենը 40 տուն:[794]

Չնայած 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին գյուղը գտնվում էր ռուսական տիրապետության տակ, այնուամենայնիվ բնակիչները ստիպված էին իրենց բնակավայրը պաշտպանել թուրք-թաթարական և քրդական հրոսակներից: Մանավանդ Արցախի հյուսիսարևելյան բնակավայրերի հայության համար պատուհաս էր դարձել քոլանի քրդական ցեղը:

Խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1929 թ., Մաղավուզում ստեղծվում է կոլտնտեսություն: 1929 թվականից մինչև 1964 թվականը կոլտնտեսության վարչության նախագահներ են աշխատել Հայկազ Գրիգորյանը, Փարավոն Դավթյանը, Ավանես Ավանեսյանը, Առաքել Միրզոյանը, Ռուբեն Գրիգորյանը, Ջավեն Գրիգորյանը, Արտյոմ Առուշանյանը, Անդրանիկ Սողոմոնյանը:

1964 թ. Մաղավուզի, Վարնկաթաղի, Ջրաբերդի կոլտնտեսությունների հիմքերի վրա ստեղծվել է ծովակալ Իսակովի անվան հմ. 3 խաղողագործական սովխոզը: Այդ նոր տնտեսությունը մինչև 1997 թ. ղեկավարել են Արտյոմ Պողոսյանը, Իվան Մանուչարյանը, Գիսկարդո Դավթյանը, Էդիկ Գրիգորյանը, Գեղեոն Հակոբյանը, Էմիր Դանիելյանը:

1998 թ. Մաղավուզի տնտեսության հողերը սեփականաշնորհվեցին մենատնտեսներին:

Հայրենական մեծ պատերազմին Մաղավուզից մասնակցել է 383 մարդ, զոհվել է 134-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան:

Արցախահայութան ազատագրական պայքարի առաջին տարիներին գյուղում կազմակերպվել էր ինքնապաշտպանության ջոկատ, որը Լեոնիդ Ազգալդյանի հրամանատարությամբ գործող «Անկախության բանակ»-ի կազմում մասնակցել է Մատաղիսի և հարակից հայկական բնակավայրերի պաշտպանական մարտերին: Լ. Ազգալդյանի զոհվելուց հետո այդ ստորաբաժանումը Արցախի Պաշտպանության բանակի կազմում մասնակցել է ինչպես պաշտպանողական, այնպես էլ հարձակողական մարտերի: Ռազմական գործողություններին մասնակցել է շուրջ 140 մարդ: Նրանցից 16 հոգի զոհվել է: Ռազմական գործողությունների ժամանակ ցուցաբերած խիզախության համար Արթուր Նիկոլայի Ավանեսյանը և Հենրիխ Գրիգորի Եդիգարյանը արժանացել են ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի:

19-րդ դարի 70-ական թվականներին եկեղեցուն կից գործել է դպրոց, որտեղ տեր Գրիգոր քահանան երեխաներին դարձրել է տառաճանաչ, սովորեցրել գրել, կարդալ, հաշվել: 1988-89 ուսումնական տարում գյուղում բացվել է ծխական դպրոց: 1903 թ. հուլիսին Ցարական արքունիքի կողմից հայկական դպրոցների փակման ընթացքում

[794] Հայկունի, նշվ. աշխ., էջ 46:

տուժեց նաև Մաղավուզի կրթարանը: Այն նորից վերաբացվեց 1907–1908 ուսումնական տարում: Միաղասյա երկսեռ դպրոցն ուներ 2 բաժանմունք: Միակ ուսուցիչն էր Ջալալ Գրիգորյանը: 1913 թ. Բախշի Տեր-Գրիգորյանը (Պապաշա) իր երկհարկանի տունը դարձնում է պետական դպրոց, որտեղ լայն գործունեություն էր ծավալել Հայկանուշ Իսրայելյանը: Այդտեղ սովորում էին նաև հարևան գյուղերի երեխաները:

Խորհրդային տարիներին գյուղում դպրոցը շարունակել է գործել:

1934–35 ուսումնական տարում, շենքային սուղ պայմաններից ելնելով, դպրոցը տեղափոխվում է Մինգրելսկ: 1956–1957 ուսումնական տարվանից դպրոցը միջնակարգի կարգավիճակ ստացավ: Այնտեղ սովորում էր շուրջ 300 աշակերտ: 1977–78 ուսումնական տարվանից դպրոցը սկսեց գործել նորակառույց տիպային շենքում: 1992 թ. բնակչության բռնագաղթից հետո մինչև 1994 թ. դպրոցի շենքը ծառայում էր որպես շտաբ և հոսպիտալ: Ռազմական գործողությունների ժամանակ դպրոցի շենքը տուժեց: 1994 թ. սեպտեմբերին պարապմունքները շարունակվեցին կոլտնտեսության վարչության նախկին գրասենյակում:

Ներկայումս դպրոցի շենքը հիմնանորոգված է:

1935 թ. առայսօր դպրոցի տնօրեններ են աշխատել Վահան Հովսեփյանը, Սամսոն Սահակյանը, Ալան Բունիաթյանը, Հմայակ Գրիգորյանը, Արտաշ Դանիելյանը, Արշակ Ղազարյանը, Վարազդատ Հակոբյանը, Էդուարդ Հովհաննիսյանը, Ցուրա Եդիգարյանը, Արամայիս Հովհաննիսյանը, Էլզա Հարությունյանը, Վաչագան Ավանեսյանը:

Մաղավուզի դպրոցում սովորել են Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին առաջինը (Գարեգին Կարապետի Հովսեփյան), ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար Եղիշե Գրիգորյանը, գրող, թատերագետ, թարգմանիչ Ջալալ Տեր-Գրիգորյանը, նկարչուհի Վինիկ Տեր-Գրիգորյանը, ԽՍՀՄ դիվանագետ, Մերձավոր Արևելքի տարբեր երկրներում ԽՍՀՄ դեսպան Ալեքսանդր Գրիգորյանը, ԵՊՀ նախկին պրոռեկտոր Հայկազ Ադամյանը, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեյնարդ Դանիելյանը, բժշկական գիտությունների դոկտոր Արտաշես Հակոբյանը:

Մաղավուզ գյուղում և նրա շրջակայքում պահպանվել են մի շարք պատմամշակութային հուշարձաններ: Դրանցից նշանավոր են Մայրաքաղաք քաղաքատեղին (7–18-րդ դարեր), Հին Մաղավուզ գյուղատեղին (13–19-րդ դարեր), Սանգյառ ամրոցի ավերակները (7–18-րդ դարեր), աշտարակ-դիտակետ (18-րդ դար), Սուրբ Գևորգ եկեղեցին՝ կառուցված 1901 թ., Թուխկասարի վանքը (8-րդ դար), Անապատ վանքը (12-րդ դար), մի շարք գյուղատեղիների և հին գերեզմանոցների մնացորդներ, 12–18-րդ դարերի խաչքարեր:

Գյուղի քահանայի մոտ պահպանվել է մի գրչագիր Մաշտոց, որը թվագրված է ՌԻԴ թվական: Գրչագրի մեջ խոսվում է նաև Ծարի Եանշաղ հայկական գյուղի մասին: Պահպանվել է նաև Մելիք Ադամի թղթերից մեկը:

Գյուղի նշանավոր աղբյուրներն են՝ Երի ջուր, Ռուսին ջուր, Սոսին ջուր, Քյուլումփին, Երի շենին, Թունգ, Ղզարին, Պուղկատեղի, Ծրըվաձուրի, Ճաքած հարթի, Մուշուհավի, Նուվավուր, Սուրփի, Աջին ձորի, Գյոլին ձորի, Քըղրքատեղի, Շոշոան:

Գյուղում ապրող ազգատոհմերից են Եգանանց, Ժակուց, Ղարիբանց, Ղարաբեկանց, Պետունց, Միքյանանց, Եփրումանց, Միրզանց, Բաղալանց, Բալունց, Թութունց, Օհանանց, Աղաբեգանց, Ղուզյազանց, Վարդազարանց, Ներսեսանց, Վանունց, Մադունց, Սայունց, Ջալալանց, Եղունց, Գալուստանց, Կյվերքանց, Առուստամանց, Դերունց, Բաղդասարանց, Ասլանանց:

Նախկինում գյուղում կար ակումբ, մանկապարտեզ, դպրոց, հանդիսությունների սրահ, բուժկետ, փոստ, կենցաղսպասարկման կետ, մարզադաշտ:

Ներկայումս համայնքում գործում են գյուղապետարան, դպրոց, բուժկետ, առևտրի 3 տաղավարներ:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները հասանելի են բնակչությանը:

Մաղավուզում 1987 թվականին կար 300 տուն, 1202 բնակիչ,[795] 2018 թ.՝ 88 տուն, 346 բնակիչ:[796] Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Բնակչության մի մասն էլ աշխատում է Կաշենի հանքավայրում:

ՔՄՔԱՁՈՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսարևելյան մասում՝ Մարտակերտի շրջանում՝ նախկին Ջրաբերդ գավառում:

Բնակավայրը տեղաբաշխված է Տրտու-Թարթառ գետի միջին հոսանքի աջափնյակում, Մաղավուզի արևելյան կողմի սարի ստորոտում գտնվող հարթակում:

Քմքաձորը հարևան գյուղերի համեմատ նոր բնակավայր է:

Որպես հարմարավետ բնակատեղի՝ 19-րդ դարի 70-ական թվականների սկզբներին Մաղավուզից մի քանի ընտանիքներ հաստատվել են իրենց բնակավայրի հանդամասերից մեկում և նոր գյուղը անվանել Քմքաձոր[797]:

20-րդ դարի սկզբներին մի քանի հույն ընտանիքներ նույնպես հիմնավորվել են Քմքաձորում:

Խորհրդային տարիներին գյուղը պաշտոնապես ստացել էր Մինգրելսկ անունը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, մինչև 1960-ական թվականների կեսերը, հույն բնակիչները տեղափոխվել են քաղաքներ:

[795] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 171:
[796] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:
[797] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 276:

1929 թ. գյուղում կոլտնտեսություն էր կազմակերպվել: 1964 թ. Մաղավուզի հետ միավորվելով ստեղծվել է պետական տնտեսություն:

Հայրենական մեծ պատերազմին Մինգրելսկից մասնակցել է 78 մարդ, զոհվել է 34-ը: Ծնունդով Մինգրելսկից է Խորհրդային միության հերոս Գուրգեն Հայրապետյանը:

Արցախյան պատերազմի տարիներին Մինգրելսկի երիտասարդները Մաղավուզի ինքնապաշտպանական ջոկատի կազմում մասնակցել են ռազմական գործողություններին:

1992 թ. Ադրբեջանի զինված ուժերի կողմից գրավվել է նաև Մինգրելսկը: 1993 թ. ԱՀ ՊԲ հարվածների տակ գյուղը նորից ազատագրվել է, սակայն բնակչության մի մասն էլ այդպես չվերադարձավ հայրենի օջախ:

Խորհրդային տարիներին Մինգրելսկում գործում էր տարրական դպրոց: Աշակերտների թվաքանակի նվազման պատճառով 1980-ական թվականների վերջերին դպրոցը փակվել է:

Արցախյան պատերազմի ավարտից հետո Մինգրելսկում բացվել է Մաղավուզի միջնակարգ դպրոցի մասնաճյուղը:

Գյուղը նորից ստացել է Քմքաձոր անունը:

Բնակավայրը էլեկտրաֆիկացված է: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Քմքաձորում 1970 թ. կար 45 տուն, 184 բնակիչ, 1987 թ.՝ 60 տուն, 247 բնակիչ[798], 1992 թ.՝ 266 բնակիչ, 1998 թ.՝ 49 բնակիչ, 2010 թ.՝ 26 տուն, 108 բնակիչ[799], 2018 թ.՝ 21 տուն, 89 բանկիչ[800]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՄԵԾ ՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսարևելյան հատվածում՝ Մարտակերտի շրջանում՝ նախկին Ջրաբերդ գավառում: Բնակավայրը տեղաբախշված է Ղարաբաղի լեռնաշղթայի Կաթողիկեսարի լեռնաճյուղի հարավարևելյան լեռնալանջի արևելահայաց կողմում, Թարթառի աջ ափին:

Մեծ շենի շրջակայքն Արցախի համեմատաբար խոշոր բնակավայրերից մեկն է եղել: Վաղ միջնադարում Մեծ շենի բնակիչներն ապրում էին ներկայիս բնակավայրի հարևանությամբ գտնվող հին Մեծ շեն գյուղում: Վերջինս գտնվել է Քաղաքատեղի (Մայրաքաղաքի կամ Մայրամքաղաքի) հարավային կողմում: Մշտապես կրկնվող պատերազմի պայմաններում հին Մեծ շենի բնակիչները ստիպված են լինում տեղափոխվել Գանձակի և Թբիլիսիի կողմերը: Հին Մեծ շենի բնակիչների մեծ մասն ապաստանում է Գետաշենում:

Հին Մեծ շենը և Մայրաքաղաքը համարյա մեկ բնակավայր են եղել: Այն մելիքանիստ է եղել և ունեցել է 900 ծուխ: Գյուղն ունեցել է 3 եկեղեցի, որոնցից մեկը հիմնահատակ ավերվել է, մյուսի ավերակներն են միայն մնացել, իսկ երրորդը դեռ կանգուն է:

Մելիք Ադամ Մեծը Մայրաքաղաքում կամ Քաղաքատեղիում նախկինում գոյություն ունեցած ապարանքը վերանորոգում և այն դարձնում է Մելիք-Իսրայելյանների ձմեռանոց-ապարանք: Վաղ շրջանից ապարանքի գոյության փաստը պատահական չէ, որովհետև 7-րդ դարի Մայրաքաղաքը համարվում էր Աղվանից կաթողիկոսների նստավայրը:

Հայտնի է, որ 7-րդ դարից մինչև 9-րդ դարը Բերդակուրը համարվել է Աղվանից կաթողիկոսների ամառանոցը, մյուս կողմից ուսումնասիրողները Բերդակուրը նույնացնում են 12-րդ դարի իրադարձությունների առնչությամբ հիշվող Կաթողիկոսի քար կամ Կաթողիկոսասար բերդի հետ, իսկ տեղական ավանդությունը՝ Քաղաքատեղ-Մայրաքաղաքի հետ[801]:

19-րդ դարում գրառված մեկ այլ ավանդազրույցի համաձայն՝ վերոհիշյալ ամրոցը կառուցվել է Վաչագան Բարեպաշտ թագավորի կողմից 5-րդ դարում և ծառայել է որպես ամառային նստավայր[802]:

Փաստերը վկայում են, որ Մայրաքաղաքը (Մայրամաքաղաք), Բերդակուրը կամ Կաթողիկոսի քարը, հին Մեծ շենը իրար մոտ գտնվող և, շատ դեպքերում, իրար փոխլրացնող բնակավայրեր են եղել: Եվ ոչ միայն մարդաշատ մեծ ավաններ են եղել, այլ նաև Ջրաբերդի մելիքության համար հոգևոր ու աշխարհիկ կենտրոնների դերակատարություն են ունեցել: Ամենայն հավանականությամբ այստեղից էլ Մեծ շեն անվանումը: Ի դեպ, որոշ աղբյուրներում այն ներկայացված է նաև Մեծ Քարաբեկ անվամբ[803]: Վերոհիշյալ բնակավայրերի հարևանությամբ է գտնվում նաև նշանավոր Չարաբերդ-Ջրաբերդ ամրոցը, որի անունից էլ ամբողջ գավառը ստացել է Ջրաբերդ անունը:

Գանձակի ու Թիֆլիսի կողմերը տեղափոխված հին մեծշենցիների մի մասը 18-րդ դարի վերջերին նորից վերադառնում է հարազատ վայրերը, «բայց փոխանակ այստեղ բնակվելու, հիմնում Մեծ-Շէնը և բնակվում այնտեղ, քանզի երկիւղալի է լինում այստեղ բնակելն»[804]: Ինչպես վկայում են պատմական աղբյուրները, Մեծ

[798] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 172:
[799] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[800] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

[801] Մ. Կաղանկատուացի, էջ 353; Մ. Գոշ, Կաթողիկոսք և դեպք Աղուանից աշխարհին ի մէջ ԺԲ դարու, Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 386; Ա. Ղուլյան, Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները, Երևան, 2001, էջ 73:
[802] Ղուլյան Ա., նշվ. աշխ., ծան. 187:
[803] Свод статистических данных о населении Закавказского края, часть IV, описание Карабахской провинции, составленное в 1823 г., с. 129.
[804] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 276:

շենը վաղնջական պատմություն ունի, որի առանցքում, պաշտպանական ամրություններից դատելով, ընկած են եղել թշնամիների դեմ պայքարի հերոսական դրվագները: Ջորատափի առկայությունը վկայում է, որ Մեծ շենը ոչ երկրորդական դերակատարություն է ունեցել սղնախական պայքարի և մելիքական ժամանակաշրջանում:

Ազատագրական պայքարի նշանավոր գործիչներից էին մեծշենցի Ավագ Ասատրյան վարդապետը (Դալի Մահրասան), Թյուլի Արզումանը (Թաբաղանց տոհմից) և Չալաղան հարյուրապետը (Տեր-Դանիելյան): Նրանց քաջարի ու դյուցազնական արարքները դարեր շարունակ երախտապարտ ժողովուրդը պահել է իր հիշողության մեջ և բերնեբերան փոխանցել սերունդներին, որոնց գործերով ոգևորված այսօր հայ զինվորն անսասան է պահում հայրենի սահմանները: Պատմում են, որ «Արզուման անունով մեկն այդ ժամանակ, իր շուրջը համախմբելով մի խումբ քաջերի, այն վայրերում խիզախ արարքներ էր գործում: Փանահ խանի դեմ թշնամություն էր անում և նրա ստորադասներին վնասներ հասցնում: Մի անգամ Փանահ խանը Արզումանի հորն ասում է. «Ինչու որդուդ չէս խրատում, որ իր չարագործություններին վերջ տա ու այս կռիվներից ձեռք քաշի»:

Նա պատասխանում է. «Արզումանն իմ որդին չէ, քանի որ, եթե իմ որդին լիներ, ոչ մեկին չէր թողնի, որ Շուշիի բերդից դուրս գա»:

«Մեկ անգամ էլ Փանահ խանը Չերաղ բեկ անունով մեկին հեծյալների մի խմբով ուղարկում է, որ գնան, Արզումանին մի հնարով բռնեն: Արզումանը, այդ լսելով, գալիս է նրա հեծյալների խումբը ցաքուցրիվ անում, իսկ իրեն՝ Չերաղ բեկին, գերում: Հաջորդ օրը նրա վրա նշան բռնելով՝ ասում է. «Կամ ընդունի՛ր որ Հիսուսն է Աստվածը, կամ էլ կրակում եմ»:

Չերաղն ընդունում է, որ Հիսուսն է Աստվածը, որից հետո Արզումանը նրան ազատ է արձակում: Երբ Չերաղը Փանահ խանին է ներկայանում, նրան (խանը) այսպես է դիմում. «Չամաչեցի՞ր, որ մի կաթիլ արյան համար Հիսուսին Աստված անվանեցիր»:

Չերաղը բացատրում է. «Ո՛վ խան, եթե Արզումանին այնքան վճռական ու ահեղ, որ ես տեսա ու Հիսուսին Աստված կոչեցի, դու տեսնեիր, իրեն՝ Արզումանին, Աստված կկոչեիր»[805]:

1787 թ. Իբրահիմ խանը բանակցությունների պատրվակով Շուշի է հրավիրում Դիզակի մելիք Բախտամին, Ջրաբերդի մելիք Մեժումին, Գյուլիստանի մելիք Աբովին և ձերբակալում: Այնուհետև նրա բանդաները կողոպտում են Գանձասարի վանքը և կալանավորում Հովհաննես կաթողիկոսին ու նրա 5 եղբայրներին և տանում Շուշի: Ժողովրդական հերոսներ Թյուլի-Արզումանը, Դալի-Մահրասան և Ջարդար Մելքումը զինված խմբով հանդուգն հարձակում են գործում Շուշիի բանտի վրա և ազա-

[805] Ներսեսով Միրզա Յուսուֆ, Ճշմարտացի պատմություն, էջ 92-93:

տում մելիք Մեժումին և մելիք Աբովին: Շուշիի բանտում սպանվում են Հովհաննես կաթողիկոսը և մելիք Բախտամը[806]:

Բաֆֆին գրել է, թե մինչև այսօր առակ է դարձել Ղարաբաղի ժողովրդի մեջ, որ Թյուլի-Արզումանը, Դալի-Մահրասան և Չալաղան-յուզբաշին ամբողջ յոթն տարի թույլ չտվեցին մի թուրք անց կենար Մազե-կամուրջից դեպի Ջրաբերդ և Գյուլիստանի կողմերը[807]:

Երկարատև պատերազմների ու անապահովության պատճառով Մեծ շենը սակավամարդ էր դարձել:

19-րդ դարի վերջերին Մեծ շենում կար ընդամենը 50 տուն բնակիչ[808]:

1920 թ. Մեծ շենում մեծ ազդեցություն ունեին բոլշևիկները: Ջրաբերդի կուսկազմակերպության ընդհատակյա նիստերը Հակոբ Կամարու և Թևանդրոս Միրզաբեկյանի ղեկավարությամբ կայանում էին Մեծ շենում:

1929 թ. գյուղում կազմակերպվել է կոլտնտեսություն, որի վարչության առաջին նախագահն է եղել Վլաս Ասծատրյանը: Հետագա տարիներին կոլտնտեսությունը ղեկավարել են Պիտակ Բաբայանը, Արշավիր Կարապետյանը, Իշխան Ղուկասյանը, Խորեն Աղաջանյանը, Իշխան Դանիելյանը, Արմեն Աղաջանյանը, Պետրոս Մայիլյանը, Բորիկ Դանիելյանը, Անդրանիկ Սողոմոնյանը, Սոկրատ Դանիելյանը, Արմիկ Սարգսյանը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին գյուղից ռազմաճակատ է մեկնել 238 մարդ: Նրանցից 97-ը զոհվել են: Թամանյան դիվիզիայի գնդի հրամանատարներից մեկը մեծշենցի Ջահանգիր Բաբայանն էր:

Մեծշենցի Արշալույս Ղուկասյանը գլխավորել է Ղարաբաղից ճակատ մեկնած աղջիկների ջոկատը: Նրանք մարտնչել են տարբեր ռազմաճակատներում: Արշալույս Ղուկասյանը զոհվել է Ժիտոմիրի մարզում:[809] Հայրենական պատերազմում զոհվածների հիշատակին Մեծ շենում հուշարձան էր կառուցվել, որը ավերվել է 1992 թ. ադրբեջանցիների ռմբակոծության հետևանքով:

Արցախյան պատերազմի տարիներին՝ 1992 թ. գարնանը, Աղաբեկալինջի, Մոխրաթաղի և Մեծ շենի երիտասարդներից ձևավորվել էր Մարտակերտի գումարտակի 9-րդ վաշտը:

1992 թ. հուլիսի 4-ին Մեծ շենը գրավվում է ադրբեջանցի հրոսակների կողմից: Հուլիսի 19-ին պաշտպանության բանակի զորամասերը ազատագրեցին գյուղը: Հուլիսի 25-ին թուրքերը կրկին գրավեցին գյուղը: Մի քանի օր անց՝ հուլիսի 27-ին հայկական ուժերը, հակահարձակման անցնելով, նորից ազատագրեցին Մեծ շենը:

[806] Բալայան Վ., Շուշի, էջ 107:

[807] Բաֆֆի, Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան 1964, էջ 211:

[808] Հայկունի, նշվ. աշխ., էջ 54:

[809] Կարապետյան Ս., Լեռնային երկրամասի քաջարի զավակները, Բաքու, 1969, էջ 94-95:

1992 թ. օգոստոսի 12-ին գյուղը նորից ընկավ: 1993 թ. մարտի 5-ին հայկական ուժերի ճնշման տակ Մեծ շենը վերջնականապես ազատագրվեց: Պատերազմական գործողությունների ընթացքում գյուղի մեծ մասն ավերվել է: Այն վերականգնվեց հետպատերազմյան տարիներին:

Արցախյան պատերազմի տարիներին 16 մեծշենցիներ զոհվել են: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվել են վիրաբույժ Արցախ Ասլանի Բունիաթյանը, հետմահու՝ Գարիկ Ալեքսանդրի Անանյանը:

1894 թ. Մեծ շենում բացվել էր եկեղեցական-ծխական դպրոց՝ 25 աշակերտներով, և դասավանդում էր 1 ուսուցիչ: 1895 թ. դպրոցը փակվել է և վերաբացվել 1906-1907 ուսումնական տարում: Այն միադասյա երկսեռ դպրոց էր, որն ուներ 3 բաժանմունք, 56 աշակերտ, որից 27-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Միսաք Պետրոսյանը: Որպես դպրոցի շենք, ծառայում էր մեծշենցի Տիգրան Յուզբաշյանի նվիրած սեփական առանձնատունը: Մինչև 1920 թ. դպրոցը պահվում էր բաքվաբնակ մեծշենցիների նվիրատվությունների հաշվին[810]:

1932 թ. Մեծ շենի դպրոցը յոթնամյա էր, իսկ 1939 թ.՝ միջնակարգ: Ներկայիս դպրոցի շենքը կառուցվել է 2003 թ., հին դպրոցի հարևանությամբ:

1970-ական թվականներին դպրոցում սովորում էր 150-ից ավելի աշակերտ, իսկ 2018 թ. տվյալներով՝ 55 աշակերտ:

1920 թվականից առայսօր դպրոցի տնօրեններ են աշխատել՝ Կարո Դավթյանը, Բախշի Ներսիսյանը, Գրետա Ղուկասյանը, Արզիկ Մայիլյանը, Լևոն Սահակյանը, Բոգդան Պողոսյանը, Վահան Սողոմոնյանը, Սերյոժա Ներսիսյանը, Սվետլանա Խաչատրյանը, Վիլյամ Դանիելյանը, Լենդրուշ Առուստամյանը, Վեներա Խուրշուդյանը, Էդվարդ Դանիելյանը, Վալերիկ Անանյանը, Ռուզաննա Դանիելյանը: Այժմ դպրոցի տնօրենն է Մայկո Մարգարյանը:

Մեծ շենի դպրոցը տվել է նշանավոր շրջանավարտներ՝ Դավիթ Անանուն (Տեր-Դանիելյան)՝ հրապարակախոս, պատմաբան, Լևոն Մայիլյան՝ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Սերգեյ Մայիլյան՝ տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռաֆայել Մայիլյան՝ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Սերգեյ Մովսիսյան՝ կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հրանտ Դանիլյան՝ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ցոլակ Դանիելյան՝ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Կառլեն Եսայան՝ ՀՀ վաստակավոր բժիշկ, բարերար, Արտուշ Ղուկասյան՝ ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Սերժիկ Սարգսյան՝ քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ջալալ Բաբայան՝ գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, Նիկիտա Պողոսյան՝ ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Էդվարդ Ղուկասյան՝ բժշկական գիտությունների թեկնածու, ԱՀ վաստակավոր բժիշկ, Սերգեյ Դանիելյան՝ ՀՀ

[810] «Նոր դպրոց», հմ. 6, 1909; ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 543, թ. 18-22:

վաստակավոր երկրաբան, Մարիուս Յուզբաշյան՝ ՀԽՍՀ Ազգային անվտանգության կոմիտեի նախագահ:

Մեծ շենի տարածքում պահպանվել են պատմաճարտարապետական հուշարձաններ, մասնավորապես Մայրաքաղաքը կամ Քաղաքատեղին, հին Մեծ շենի ավերակները (5-16-րդ դարեր), Հարթապտոկ ամրոցը և խոնարհված եկեղեցու հիմքերը (11-17-րդ դարեր), Ջորատափ ամրոցը (12-18-րդ դարեր), 12-13-րդ դարերի սրբավայր, միջնադարյան մի քանի գերեզմանոցներ, խաչքարեր, 1620 թ. կառուցված և կանգուն վիճակում գտնվող Սբ. Գևորգ եկեղեցին:

Գյուղն ունի նշանավոր հանդամասեր, որոնց հետ հետաքրքիր պատմություններ կան կապված: Օրինակ՝ Խնիգիա տարածքում մի քանի ամիս մնացել էր Լենկ-Թեմուրը: Պատմում են, որ Լենկ-Թեմուրի զորքը փորձել է անցնել Թարթառ գետը և նրա զինվորների մեծ մասը խեղդամահ են եղել փոթորկված գետի ջրերում: Լենկ-Թեմուրը, այդ ամենը տեսնելով, ասել է,-այ տարտարոս, տարտարոս...,- այսինքն գիժ գետ, և իբրև դրանից հետո Տրտու գետը անվանել են Տարտար, հետո՝ Թարթառ[811]:

Մեծ շենի նշանավոր աղբյուրներն են՝ Պլպլան, Նովավուր, Տնջրե, Ցորտ, Թունգ, Տանձեն, Քար, Վետած, Տամբուլ ձորի, Բուլլուխ:

Գյուղի նշանավոր ազգատոհմերն են Թուրշունք, Ինյանք, Մյիլանք, Ղզլումանք, Պուղունք, Բաղունք, Ըթանք, Աղաջանանք, Թունանանք, Թունուբանք, Բաջունք, Լղարանք, Ասրունք, Միգալանք, Քոթունք, Բաղդունք, Արթունանք, Հեյբաթանք, Քոշունք: Նրանց շառավիղներն այսօր ապրում են Մեծ շենում:

Արցախյան պատերազմից հետո գյուղն արագ ոտքի է կանգնում: Պետության օժանդակությամբ վերականգնվել են ավերված տները, հասարակական շենքերը:

Այդ գործում նշանակալից է ծագումով մեծշենցի, երևանաբնակ բարերար, բժիշկ՝ Կառլեն Եսայանի դերը: Եսայանների ընտանիքի միջոցներով կառուցվել են Հայրենական պատերազմի և արցախյան պատերազմի զոհերի հիշատակը հավերժացնող հուշահամալիր, Սբ. Գևորգ եկեղեցին՝ շրջապատված խաչքարերի պուրակով, համայնքապետարանի նոր շենքը, մանկապարտեզը, խաղահրապարակը, հանդիսությունների սրահը, մշակույթի տունը, հիմնովին վերանորոգվել է դպրոցը, բարեկարգվել բակը, կառուցվել լողավազան:

Մեծ շենում 1901 թ. կար 718 բնակիչ[812], 2018 թ.՝ 97 տուն, 352 բնակիչ[813]: Նրանք աշխատում են գյուղատնտեսության ասպարեզում, դպրոցում, մանկապարտեզում, բուժկետում, համայնքապետարանում, հացի արտադրամասում, Սարսանգի հէկ-ում, Մաղավուզի քարածխի և Կաշենի բազմամետաղ հանքավայրերում: Երիտասարդների մի մասն էլ ԱՀ բանակի զինծառայողներ են:

[811] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[812] Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 408:

[813] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

ՄԵՀՄԱՆԱ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսարևելյան հատվածում՝ Մարտակերտի շրջանում՝ նախկին Ջրաբերդ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Սարսանգի ջրամբարի մոտակայքում՝ նրա աջափնյա անտառապատ հատվածում:

Մեհմանան Արցախի հին բնակավայրերից է: Մեհմանա անունը համեմատաբար նոր է՝ 19-րդ դարի իրողությունների զարգացման հետևանք:

Կարծիք կա, որ գյուղը 13-րդ դարում կրում էր Մասրո կամ Մասրուտ անունը[814]:

Մասրո անվամբ բնակավայրի մասին տեղեկություն է պահպանվել Մեհմանայի Սբ. Աստվածածին եկեղեցու խաչքարի արձանագրության (1250 թ.) մեջ[815]:

Գյուղում և նրա շրջակայքում պահպանվում են Ք. ա. 2-1-ին հազարամյակների դամբարանաբլուրներ, բնակատեղիի և հուշարձանների, միջնադարյան գերեզմանատան մնացորդներ:

Գյուղից 1 կմ դեպի հյուսիս-արևելք գտնվում է 1228 թ. կառուցած Սբ. Աստվածածին եկեղեցին: Նույն ուղղությամբ՝ 3 կմ հեռավորության վրա է գտնվում կիսականգուն վիճակում Սբ. Աստվածածին անունը կրող մեկ այլ եկեղեցի (1249 թ.), որին տեղացի հույները թարգմանաբար Պանայա են անվանել:

Գյուղի շրջակայքում առկա են նաև 12-13-րդ դարերի խաչքարեր:

Գյուղի Մեհմանա անվան հետ մի զրույց է պահպանվել, ըստ որի՝ Տրապիզոնի մոտ գտնվող հույն և հայ հանքագործները, ենթարկվելով թուրքերի հալածանքներին և հրաժարվելով հավատափոխ լինելուց, հույն Խարալամպիի առաջնորդությամբ գաղթում են Հայաստան: Անիում Թագուհի անունով տարեց մի կին նրանց խորհուրդ է տալիս գնալ Արցախ: 1740-ական թվականներին նրանք հասնում են Շուշի: Երբ անգլիացիները 1852 թ. Մեհմանա գյուղի մոտակայքում հայտնաբերում են բազմամետաղ հանքավայր, հույն հանքափորներին տեղափոխում և բնակեցնում են հայկական բնակավայրում: Այնուհետև, անգլիացի կառավարիչը իր փոխարեն մեկ հույնի նշանակելով, տեղափոխվում է Անգլիա: Հույն կառավարիչը հանքում աշխատելու համար Հունաստանից հրավիրում է իր ազգակիցներին: Հույների թիվը հայերի համեմատ բնակավայրում շատանում է: Շուտով բնակավայրը վերանվանվեց և դարձավ հունարեն Մեհմանա, որը հայերեն թարգմանաբար նշանակում է հանքատեղի[816]:

Իրականում գյուղի մոտ գտնվող բազմամետաղների (ցինկ, կապար, պղինձ, արծաթ) հանքավայրի շահագործման նպատակով 1850-ական թվականներին, անգլիացիները և ֆրանսիացիները հրավիրել էին հույն հանքափորների, որոնք էլ հաստատվել են Մեհմանայում:

[814] Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 120:
[815] Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 120:
[816] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 262:

19-րդ դարի վերջերին հանքավայրի շահագործումը դադարեցվել է: Երկրորդ աշխարհամարտի տարիներին՝ մի կարճ ժամանակահատված, ռազմաճակատի կարիքներից ելնելով այն նորից շահագործվել է:

Չնայած հույն հանքափորները մնացել էին առանց աշխատանքի, այնուամենայնիվ շարունակել են ապրել Մեհմանայում: Հայերի և հույների կրոնական ու ազգային սովորությունների, կենցաղավարության նմանությունները թույլ են տվել, որ նրանք մերվեն հայկական իրականությանը:

Արցախյան ազատագրական պատերազմի օրերին Մեհմանան դարձել էր թեժ զինաբախումների կետ:

1992 թ. ադրբեջանցիների կողմից գյուղը բռնազավթվել և ավերվել է: 1993 թ. ԱՀ ՊԲ հարվածների տակ բնակավայրը ազատագրվել է: Չնայած գյուղը պատերազմից հետո վերականգնվել է, այնուամենայնիվ հույն բնակիչների մեծ մասը բռնագաղթից հետո տեղափոխվել է պատմական հայրենիք՝ Հունաստան: Գյուղի հայ բնակիչները շարունակում են ապրել հարազատ վայրում:

Հարկ է նկատել, որ 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին բնակավայրը երբեմն կրում էր հույն (rpek)[817], Բերզեն (վրացերեն՝ հույն)[818] անունները:

Գյուղում 1930 թ. կոլտնտեսություն էր կազմակերպվել: 1977 թ. Չլդրանի կոլտնտեսության հետ կազմել են միացյալ պետական տնտեսություն: 1988 թ. ապախոշորացումից հետո Մեհմանայի կոլտնտեսությունը շարունակել է գործել: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո այն լուծարվել է:

Գյուղից Հայրենական պատերազմի տարիներին մասնակցել է 11 մարդ, զոհվել է 5-ը:

Մեհմանայի երիտասարդությունը ակտիվորեն մասնակցել է արցախյան ազատագրական պատերազմին:

Մեհմանայում 1970 թ. կար 30 տուն, 104 բնակիչ, 1987 թ.՝ 22 տուն, 51 բնակիչ[819], 2010 թ.՝ 12 տուն, 25 բնակիչ[820], 2018 թ.՝ 13 տուն 24 բնակիչ[821]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՄՈԽՐԱԹԱՂ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսային հատվածում՝ Մարտակերտի շրջանում՝ նախկին Ջրաբերդ գավառում՝ Թարթառ գետի միջին հոսանքի աջ ափին՝ Մարտակերտ

[817] Кочарян Г., Нагорный Карабах, с. 50.
[818] Դավթյան Կ., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966, էջ 10:
[819] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 176:
[820] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[821] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

շրջկենտրոնից 10 կմ դեպի հյուսիս-արևմուտք՝ գեղատեսիլ նախալեռնային բնության գրկում:

Հին Մոխրաթաղը եղել է ներկայիս բնակավայրից 2-3 կմ դեպի արևմուտք: Այն շրջապատված էր թավուտ անտառներով:

Այստեղ պահպանվել են հին գյուղի մնացորդները, մասնավորապես 12-րդ դարի կառույց Ինանը մաս եկեղեցին, Մահլա ամրոց-ապարանքը, որի վրա պահպանվել են 1700 թ. և 1771 թ. արձանագրություններ:

Հին Մոխրաթաղում պահպանված տների և պատմաճարտարապետական հուշարձանների մնացորդները վկայում են, որ բնակավայրը սկզբնավորվել է Ք. հ. 1-ին հազարամյակի սկզբներին և ունեցել է հարուստ պատմություն:

Սկզբնաղբյուրները պատմում են, որ արաբ զորավար Սալման իբն Ռաբիա ալ-Բահիլին 654 թ., ի թիվս գավառի այլ բնակավայրերի, գրավում է նաև Մուխրաջալը (ալ-Մուխրաղժալ, ալ-Մուխրախալ)[822]: Ամենայն հավանականությամբ խոսքը վերաբերում է Հին Մոխրաթաղին: Որոշ տվյալներով միջնադարում Հին Մոխրաթաղը ուներ 700 տուն[823]:

Հին Մոխրաթաղը այնքան առանցքային բնակավայր էր, որ Ջրաբերդի տերերը՝ Մելիք Իսրայելյանները, իրենց ապարանքներից մեկը կառուցել են Ինանը մաս հնավայրում:

Մոխրաթաղի Մահլա ամրոց-ապարանքը կառուցվել է Մելիք Ադամի, նախաձեռնությամբ, իր հոր՝ Մելիք Իսրայելի հիշատակին: Մելիք Իսրայելի աճյունն ամփոփված է Գանձակի Սբ. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցում՝ Աղվանից Ներսես կաթողիկոսի տապանաքարի հարևանությամբ: Տապանաքարի վրա արձանագրված է.

Այս է հանգիստ Իսրայելին
Որն է ազնիվ և գովելին,
Նման արդարոյն Աբելին,
Եվ որդի մելիք Հաթամին:
Ութուտասան կեանք սկսելի
Առնու անանց պարգևս լի
Եվ մեզ երդ տրտմութեամբ լի:

ՌՄԻԵ թուի, ԵՎ Ժ, Ե, մայիսի (15 մայիսի 1776 թ. — Վ. Բ.):

Առաջին ռուս-պարսկական պատերազմի ժամանակ, երբ 1805 թ. պարսկական զորքերը պաշարում են Շուշին, բերդաքաղաքի պաշտպաններին օգնելու համար Հին Մոխրաթաղում Մելիք Վանին և Հակոբ հարյուրապետը կամավորներ են հավաքագրում, ինչպես նաև բնակչությունից սննդամթերք ժողովում:

[822] Ибн ал-Фарих, СМОМПК, XXXI, Тифлис, 1902, с. 27.
[823] Հայկունի, նշվ. աշխ., էջ 55:

Հին Մոխրաթաղի բնակիչները 19-րդ դարի սկզբներին ներկայիս Մոխրաթաղի տարածքում նոր գյուղ են հիմնադրում: Նոր Մոխրաթաղի տեղանքն ընտրել է Մինասը, որի ժառանգներն առայսօր ապրում են վերոհիշյալ գյուղում: Նոր Մոխրաթաղի առաջին տանուտերը 19-րդ դարի վերջերին եղել է Ղազար քյոխվան: Վերոհիշյալ ժամանակահատվածում նոր Մոխրաթաղում կար 85 ընտանիք, 733 բնակիչ, որից 384-ը՝ արական սեռի ներկայացուցիչներ, 349-ը՝ իգական[824]:

Բնակլիմայական պայմանների տեսանկյունից նոր գյուղը, լինելով հարմարավետ վայրում, արագ զարգանում է:

19-րդ դարում այստեղ էր ապրում Արցախի ամենահարուստ մարդկանցից մեկը՝ Նիկոլայ բեկ Փիրումյանը: Նրան էին պատկանում տասնյակ հազարավոր հեկտար հողատարածքներ: Բեկը, լինելով բարեհոգի մարդ, վար ու ցանքի համար արտոնյալ պայմաններով այդ հողերը տրամադրել է գյուղացիներին:

Մոխրաթաղում հողը՝ որպես գյուղացու սեփականություն, ծառայել է մինչև 1930 թ.: Այդ նույն թվականին Մոխրաթաղ և Աղաբեկալինջ համայնքների հիման վրա ստեղծվել է կոլտնտեսություն, իսկ 1992 թ. այն վերակազմավորվել է և դարձել են առանձին տնտեսություններ: 1950 թ. նորից 2 համայնքները վերամիավորվել են մեկ տնտեսության մեջ: 1975 թ. այդ նույն կոլտնտեսության հիմքերի վրա կազմակերպվել է խաղողագործական սովխոզ:

Խորհրդային տարիներին Մոխրաթաղում կառուցվել է 300 տեղանոց մշակույթի տուն:

Մոխրաթաղի հայությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին հաղթանակի կերտման գործում իր լուման է բերել: Մոխրաթաղից պատերազմին մասնակցել են 382 մարդ, որոնցից 154 հոգին զոհվել են:

1987 թ. գյուղում կար 246 տուն, 934 բնակիչ[825]:

Արցախյան ազատագրական շարժման առաջին իսկ օրերից Մոխրաթաղի բնակչությունը նորից ներգրավվեց պատերազմի հորձանուտը:

Մոխրաթաղի երիտասարդները դարձան Վլադիմիր Բալայանի կազմավորած կամավորական ջոկատի մարտիկներ:

Ջոկատը հետագայում միավորվեց նոր կազմավորված «Ազատագրական բանակ»-ի հետ, որի հրամանատարն էր Լեոնիդ Ազգալդյանը:

Թշնամու ճնշման տակ 1992 թ. հուլիսի 3-4-ը մոխրաթաղցիները բռնեցին գաղթի ճանապարհը: Գյուղում մնացած ծերերին և հիվանդներին ադրբեջանցի ելուզակները գազանաբար սպանեցին: Նրանց թվում էին՝ Հեղինե Ոսկանյանը, Մաշինկա Բալայանը, Սոնյա Գրիգորյանը, Սաթենիկ Պետրոսյանը, Ալեքսեյ Ղազարյանը, Գարեգին Բաղդասյանը, Անգին Պողոսյանը, Արտաշ Իսրայելյանը, Վարսենիկ Յախշինյանը,

[824] Մակար եպս. Բարխուտարյանց, Արցախ, էջ 219:
[825] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 170:

Մարիա Ավագյանը, Մարգո Սարգսյանը, Արգամ Բալայանը, Արկադի Բալայանը, Քնարիկ Բաբայանը, Վարսենիկ Պետրոսյանը, Արշակ Բաբայանը, Կոլյա Սեյինյանը, Արփենիկ Սեյինյանը: Ռոմա Աբրահամյանին թուրքերը գերել են, և նրա ճակատագիրն առայսօր անհայտ է:

Արկի բեկորներից մահացել են Ռազմիկ Պողոսյանը, Վարդան Ջավադյանը և Սլավիկ Խաչատրյանը:

Պատերազմի տարիներին Մոխրաթաղը մի քանի անգամ ձեռքից ձեռք է անցել: Գյուղը վերջնականապես ազատագրվել է 1994 թ. ապրիլի 16-ին:

Ազատագրական պատերազմի տարիներին իրենց կյանքը հայրենիքին նվիրել են 12 մոխրաթաղցիներ:

ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի ասպետ է Վանյա Ալեքսեյի Միրզոյանը: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի է արժանացել Աշոտ Վազգենի Ավանեսյանը:

Ազատագրվելուց հետո Մոխրաթաղում կյանքն իր բնականոն հունի մեջ է մտել: Սկզբում նորից վերականգնվել է տնտեսության վարման կոլեկտիվ ձևը: 1995 թ. կոլտնտեսությունը վերակազմավորվում է որպես փայատիրական տնտեսություն: 1998 թ. հողի սեփականաշնորհումից հետո երկար ժամանակ գյուղի բնակչությունը ծանր կացության մեջ էր հայտնվել: Վերջին տարիներին անհատական տնտեսությունների վարման եղանակի մեջ նկատելի են որոշ տեղաշարժեր, որոնք, ցավոք, դեռ բավարար չեն:

1895 թ. Մոխրաթաղում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց, որտեղ սովորում էր 20-30 աշակերտ: Դպրոցում աշխատել են Թիֆլիսից Մոխրաթաղ տեղափոխված Մարիամ Քույրիկը և Թագուհի Յախշինյանը: 1903 թ. դպրոցը փակվել է: 1906 թ. այն նորից վերաբացվել է: Դպրոցի տնօրեն էր նշանակվել ռուսախոս վրացի՝ Սողոմոն վարժապետը: Դասավանդումը պիտի իրականացվեր ռուսերեն լեզվով: Աշակերտները հրաժարվում են դպրոց գնալ և հաճախում են հարևան Կուսապատ գյուղի կրթօջախը[826]:

Մեկ տարի անց գյուղում նորից բացվում է հայկական դպրոց, որի ուսուցիչն էր քահանա Արիստակես Բաղալյանը: Դպրոցը պահվում էր Սաշաբեկ Սարիբեկյանի միջոցներով և Բաքվի հայոց մշակութային միության նպաստով:

Խորհրդային առաջին տարիներին գյուղում բացվում է 4-ամյա դպրոց: 1925 թ. Մարտակերտի շրջան են գործուղվում Լենինականի որբանոցի 5 սաներ: Նրանցից՝ Հարություն Եղիազարյանը հետագայում դարձել է Մոխրաթաղի դպրոցի տնօրեն:

1936 թ. դպրոցը դառնում է յոթամյա, 1938 թ.՝ ութամյա, 1973 թ.՝ միջնակարգ:

Դպրոցի նախկին շենքը վերանորոգելուց հետո պարապմունքներն այդտեղ են կազմակերպվում: 2017 թ. տվյալներով դպրոցում սովորում էր 34 աշակերտ, դասավանդում՝ 14 ուսուցիչ:

[826] ԱրՊՀ հայագիտական կենտրոն, Արմինե Ղահրամանյան, 2004, էջ 18:

Մոխրաթաղ գյուղը և նրա շրջակայքը հարուստ են պատմաճարտարապետական հուշարձաններով: Պահպանվում են Հին Մոխրաթաղ գյուղի ավերակները: Այդտեղ է գտնվում 12-րդ դարում կառուցված Իննը մաս եկեղեցին: Այն վերջին անգամ վերանորոգվել է 1881 թ.: Տաճարի հյուսիսային որմի մոտ ամփոփված են Մելիք-Իսրայելյանների ննջեցյալները՝ Սարիբեկի, Սիար խանումի, Մելիք Ադամի կին՝ Թումար խանումի և այլ մելիքազուն գերդաստանների ներկայացուցիչների աճյունները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Իննը մաս եկեղեցուց ոչ շատ հեռավորության վրա գտնվող Խաչխոռհատի եկեղեցին ավելի վաղ շրջանում է կառուցվել: Եկեղեցին, նրան հարակից սրանոցը և այլ կենցաղային նշանակության շինությունները ժամանակին Մարտակերտի լեռնային գյուղերից դեպի Կուսապատ տանող ճանապարհին ծառայել են որպես իջևանատուն:

Հին Մոխրաթաղում է գտնվում Մահլա ամրոց-ապարանքը, որը կառուցվել է 1771 թ.: Հին գյուղատեղիի մոտ պահպանվել է գերեզմանոց, որտեղ գտնվում են 12-17-րդ դարերի խաչքարեր: Գյուղից քիչ հեռավորության վրա գտնվում են Մելիքանց կամուրջը, նշանավոր Ծիրանաքար ամրոցի մնացորդները:

Նոր Մոխրաթաղում 1883 թ. շուշեցի Մեսրոպ Թառումյանը կառուցել է Սբ. Աստվածամոր եկեղեցին:

Մոխրաթաղում հայտնի են Բլեղանց, Քիթի-մարեն, Իննը մասեն, Քյահրիզ, Պնջիր-փիշին, Տզզալուն աղբյուրները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Գյուղում գործում են գյուղապետարան, ակումբ, դպրոց, բուժկետ:

2018 թ. տվյալներով Մոխրաթաղում կար 84 տուն, 280 բնակիչ[827]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՆԵՐՔԻՆ ՀՈՌԱԹԱՂ

Բնակավայրը գտնվում է Մարտակերտի շրջանի հյուսիսարևելյան հատվածում՝ շրջկենտրոնից 4 կմ դեպի արևմուտք: Գյուղը հիմնականում հարթավայրում է գտնվում, իսկ նրա մի մասն էլ փռված է Մռավի լեռնաշղթայի Կաթողիկեսարի լեռնաճյուղի հարավարևելյան փեշերին:

Չնայած Ներքին Հոռաթաղը համեմատաբար նոր բնակավայր է, այնուամենայնիվ նրա շրջակայքում պահպանվում են հին գյուղատեղիների, միջնադարյան գերեզմանոցների մնացորդներ:

Բնակավայրը ձևավորվել է 1810-ական թվականներին:

[827] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

Սակավաջրության պատճառով Կուսապատ գյուղի որոշ բնակիչներ տեղափոխվել և հաստատվել են Աթաբեկանց բլրի վրա և զբաղվել գյուղատնտեսությամբ:

Տեղացիները պատմում են, որ Ներքին Հոռաթաղի որոշ գերդաստանների նախնիները եկել են Զանգեզուրից, Նուխիից: Ջրույցներից մեկում հիշվում է, որ Պարսկաստանից մի հայ գերդաստան, չկամենալով իր աղջկան կնության տալ խանին, որպես ապահով վայր տեղափոխվում և հաստատվում է Ներքին Հոռաթաղում[828]:

Գյուղը, հարթավայրին մոտ գտնվելով, զարգացման մեծ հնարավորություններ է ստանում:

Հանրության հոգևոր կարիքները հոգալու նպատակով 1899–1900 թթ. գյուղում կառուցվում է Սբ. Աստվածածին եկեղեցին:

Ներքին Հոռաթաղում 1920 թ. մայիսին հաստատվում են խորհրդային կարգեր: 1932 թ. կազմակերպվում է Ներքին Հոռաթաղի կոլտնտեսությունը: Նոր տնտեսության վարչության առաջին նախագահն է դառնում Համբարձում Հայրապետյանը: 1934 թ. նրան փոխարինում է «տասհազարական» շարժման միջոցով Բաքվից Ներքին Հոռաթաղում հայտնված բանվոր Ղևոնդը, որին էլ այդպես չհաջողվեց ղեկավարել կոլտնտեսությունը: Շուտով կոլտնտեսության ղեկը հանձնվում է Շամիր Անաստասյանին:

1975 թ. Ներքին Հոռաթաղի կոլտնտեսությունը վերակազմակերպվեց սովխոզի: Շուրջ 20 տարի՝ 1968–1988 թթ., Ներքին Հոռաթաղի տնտեսությունը ղեկավարել է Գաբրիել Բալայանը: Զարգանում էր անասնապահությունը, մանավանդ խաղողագործությունը: Դա հնարավորություն է տալիս, որ Ներքին Հոռաթաղի բնակիչներն ունենան երկհարկանի տներ, խմելու ջուր, մշակույթի պալատ, նորակառույց դպրոց, գրադարան, երիտասարդների համար ժամանցի սրահ:

Գաբրիել Բալայանին 1988 թ. փոխարինեց Ենոք Հայրապետյանը, այնուհետև՝ Արծվին Մկրտումյանը:

Խորհրդային տարիներին ստալինյան բռնաճնշումները հասել էին նաև Ներքին Հոռաթաղ: 1932–1936 թթ. Ներքին Հոռաթաղից Սիբիր են աքսորվել Հրանտ Բաղդասարյանը, Բախշի Անդրյանը, Ներսես Բաղդասարյանը, Լևոն Զաքարյանը, Կուքուն Հայրապետյանը և Մարգարա Աթաբեկյանը: Նրանցից միայն հայրենի բնակավայր է վերադարձել Բախշի Անդրյանը:

Ներքին Հոռաթաղից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 220 մարդ, զոհվել է 127-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Արցախյան ազատագրական պայքարին ակտիվորեն մասնակցել են գյուղի երիտասարդները: Սկսած ընդհատակյա շարժումից մինչև զինված պայքար՝ Ներքին Հոռաթաղի բնակիչները իրենց տեղն ու դերն են ունեցել: 1989 թ. գյուղում կազմակերպվել է կամավորական ջոկատ, որի հրամանատարն էր Ռ. Հայրապետյանը:

[828] ԱրՊՀ հայագիտական կենտրոն, Մ. Դավթյան, Ներքին Հոռաթաղ, էջ 1:

1992 թ. հուլիսի 4-ին ադրբեջանցիները գրավում են Ներքին Հոռաթաղը: Մեկ տարի անց՝ 1993 թ. հունիսին, Արցախի պաշտպանության բանակը ազատագրում է Ներքին Հոռաթաղը: Ազատագրական պատերազմի տարիներին 26 հոռաթաղցիներ զոհվում են: Ներքին Հոռաթաղից ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի արժանացել են Աշոտ Բեգլարյանը և Ռաֆիկ սարկավագ Խաչատրյանը:

2016 թ. ապրիլյան պատերազմում զոհվում է Վաչիկ Մովսիսյանը:

Պատերազմից հետո զոհված համագյուղացիների հիշատակին ՌԴ-ում ապրող Ներքին Հոռաթաղցի բարերար Նելսոն Բազիյանի միջոցներով հուշարձան է կառուցվում: Գյուղում կառուցվում են նաև զոհված տանկիստների և անհայտ կորածների հիշատակին նվիրված հուշակոթողներ:

Մինչև խորհրդային կարգերի հաստատումը Ներքին Հոռաթաղում դպրոց չի գործել:

1927–28 ուսումնական տարում գյուղում տարրական դպրոց է բացվել, որի աշխատանքները կազմակերպվում էին Բլասանց Սարգիսի տանը: 1934–35 ուսումնական տարում դպրոցական շենք է կառուցվում: Առաջին տնօրենն էր Սարգիս Հակոբյանը: Նրան հաջորդել են Գրիշա Ղուկասյանը, Գուրգեն Պետրոսյանը, Հայկազ Գրիգորյանը, Գուրգեն Հովսեփյանը, Էդիկ Զաքարյանը, Ֆլորա Բաղմանյանը, Ռիմա Հարությունյանը:

1989 թ. կրթարանը միջնակարգ դպրոցի կարգավիճակ է ստանում:

1990-ական թվականներին Ներքին Հոռաթաղում նոր դպրոցական շենք է կառուցվում: 1992 թ. բռնագաղթի պատճառով դպրոցի նորակառույց շենքը վերջնական տեսք չի ստանում: Հետագայում այդ շենքը ՊԲ տնօրինությանն է տրվում:

1995–2000 թթ. Արցախի իշխանությունները դպրոցական նոր շենք են կառուցում: 1994 թ. սեպտեմբերի 1-ին դպրոցի տնօրեն է նշանակվում Լավրենտ Մնացականյանը: 2000 թվականից առայսօր դպրոցի տնօրենն է Մելանյա Դավթյանը:

2015–2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 151 աշակերտ, աշխատում 24 ուսուցիչ:

2015 թ. շահագործման է հանձնվել դպրոցին կից կառուցված մանկապարտեզը:

Ներքին Հոռաթաղի արևելյան կողմում՝ Սարեն դուզ բարձրադիր լանջին է գտնվում Թազա խաչ և Կոտրած եղցի ուխտատեղին: Արևմտյան հատվածում՝ բլրի գագաթին է գտնվում Նահատակ ուխտատեղին:

19-րդ դարի վերջերին կառուցված եկեղեցին գործել է մինչև 1925 թ.: Սկզբում այն վեր էր ածվել մշակույթի տան, իսկ ստալինյան վարչակարգի ուժեղացման պայմաններում դարձել է կոլտնտեսության պահեստ: Հետխորհրդային տարիներին եկեղեցին հիմնանորոգվել է:

2014 թ. Ներքին Հոռաթաղում կառուցվել է նաև Սուրբ Գևորգ եկեղեցին, որը ավելի շատ հոգում է գյուղում տեղակայված զորամասի զինծառայողների հոգևոր կարիքները:

Ներքին Հոռաթաղում հայտնի են հետևյալ աղբյուրները՝ Սուրուցեն (սառույցեն), Ինը ակնով քյահրիզը:

Գյուղում շարունակում են ապրել Հայրունց, Ղղմալանց, Խաչունց, Քրսպարանց, Ջաքունց, Մկրտումանց, Կյափունց, Աշրղանց, Մոսունց, Նալբանդանց, Քոչարանց, Բլրսանանց, Բլանց, Տանունց, Բալունց, Պիծի Գյուլունց, Հուսեփանց, Տուկանանց, Հրրրբեդանց, Ըթրրեկանց, Գլմանց, Տրնյելանց, Մուքելանց, Կալունց, Մաթոսանց, Մարդունց, Շբանանց, Վհանանց, Ռքալանց, Անդրունց, Քրիանանց, Ղարահաբունց, Ջվադանց, Սայունց, Սհականց, Դադայանների, Բեգլարյանների, Բազիյանների ազգատոհմերի ներկայացուցիչները:

Համայնքում գործում են գյուղապետարան, բուժկետ, դպրոց:

1979 թ. մարդահամարի տվյալներով Ներքին Հոռաթաղում կար 321 տուն, 1357 բնակիչ[829]: 2018 թ. տվյալներով գյուղում կար՝ 204 տուն, 1105 բնակիչ[830]: Նրանք աշխատում են գյուղատնտեսության ասպարեզում, Կաշենի գործարանում և ծառայում ԱՀ Պաշտպանության բանակում:

ՆՈՐ ԱՅԳԵՍՏԱՆ

Բնակավայրը գտնվում է ԱՀ հյուսիսային հատվածում, Թարթառ գետի ձախ ափին: Չայլուն Մարտակերտի շրջանի ծայր հյուսիսային բնակավայրերից մեկն է, որն առայսօր բռնազավթված է Ադրբեջանի կողմից: Ադրբեջանի Թարթառ (Միր Բաշիր) բնակավայրից ընդամենը 2 կմ հեռավորության վրա է գտնվում: Ներկայիս բնակավայրը նախկինում ներառված էր Արցախի Խաչեն գավառում:

1826–1828 թթ. ռուս–պարսկական պատերազմից հետո Պարսկաստանից որոշ ընտանիքներ տեղափոխվում և հաստատվում են Արցախի մի շարք լքված բնակավայրերում: Միջնադարում Թարթառի երկու ափերին՝ հարթավայրային շրջանում, հայկական գյուղեր կային: Մահմեդական քոչվոր ցեղերի ճնշման տակ հայերը լքում են իրենց նախկին բնակավայրերը:

Հայկունին թվարկում է Թարթառի երկու ափերի հայկական 19 գյուղերի անուններ, որոնք մինչև 18–րդ դարը լքվել են: Դրանք են՝ Ծոս, Մասիս, Խուտրաշեն, Սրոենշեն, Սրաշեն, Մթնաձոր, Ըկանայ, Լեռվա (Լեռնաբերդ), Խըլզնաշեն, Ղառուքենդ, Օրան–Մեծշեն, Ծարավաջուր, Ջուխտակ շինատեղ, Եղցաթումբ, Բակլիկ շինատեղ, Բըլախանա, Թրթոր, Մեջիդ, Կաթողիկոսասար[831]:

1828 թ. Խոյ գավառի Բադրբեով կոչված հայկական բնակավայրից մի քանի ընտանիքներ հաստատվեցին Ներքին Չայլուի, իսկ Ուրմիայի Շոհովա և Ըռհավա գյուղերից՝ Վերին Չայլուի տարածքներում:

[829] Մելքումյան Ս., Նշվ. աշխ., էջ 167:
[830] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 3:
[831] Հայկունի, նշվ. աշխ., էջ 56:

Չայլուի տարեցները պատմում են, որ բնակավայրի հիմնադիրները Անտոն, Բաբա, Բաղդասար, Աբրահամ, Խաչատուր եղբայրներն են եղել: Նույն բնակավայրի երկու թաղամասերում՝ Վերին Չայլուի և Ներքին Չայլուի միջև գտնվող բաց տարածքում, 20–րդ դարի 60–ական թվականներին հաստատվում են Թարթառի ձախափնյակում գտնվող հայկական մեկ այլ գյուղի՝ Ղահրիլալի բնակիչները: Եվ այդպես, Ներքին և Վերին Չայլուները դառնում են մեկ ամբողջություն:

1890–ական թվականներին Վերին Չայլուն ուներ 55 տուն, 489 բնակիչ, իսկ Ներքին Չայլուն 45 տուն, 257 բնակիչ[832]:

19–րդ դարի երկրորդ կեսերին Չայլույում կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցին:

1930 թ. Չայլույում կոլտնտեսություն է կազմավորվել: 1974 թ. այն վերակազմակերպվել և դարձել էր խորհրդային տնտեսություն (սովխոզ): Չայլուի տնտեսությունը ղեկավարել են Բարաթ Բաղալյանը, Արտաշես Գաբրիելյանը, Ալյոշա Վարդազարյանը, Սուրեն Բարսեղյանը, Ռաֆիկ Մելքումյանը, Ռուբեն Աբրահամյանը, Երվանդ Բաբայանը:

Բնակլիմայական պայմանները և ժողովրդի աշխատասիրությունը նպաստեցին գյուղի տնտեսապես հզորանալուն: Գյուղում կառուցվեցին դպրոց, երկու մանկապարտեզ, մշակույթի տուն, գրադարան, կապի բաժանմունք, հանդիսությունների սրահ, կենցաղսպասարկման 6 կետ: 1954 թ. գյուղը էլեկտրաֆիկացվել է: Կառուցվել են երկհարկանի բնակելի տներ:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 650 մարդ, որից 194–ը զոհվել են:

Չայլուի նշանավոր հանդամասերն են Թխմաչարը, Կամրջի թաղը, Անդոնանց բաղերը, Բաբիի դարան, Կասիմ դարան և այլն:

Արցախյան ազատագրական պատերազմին Չայլուից մասնակցել են 100–ից ավելի մարդ, զոհվել են 44–ը: Կոլյա Ավանեսյանը, Սամանդար Անտոնյանը, Վալերի Ղամբարյանը հետմահու արժանացել են ԱՀ «Մարտական խաչ» 2–րդ աստիճանի շքանշանի:

1992 թ. հունիսի 17–ին ադրբեջանական զինված ուժերը գրավեցին նաև Չայլու գյուղը: Մինչև Չայլուի անկումը գյուղում ապրում էր 2759 մարդ, կար 692 տուն: Չայլուի բնակչության մեծ մասը տեղափոխվեց ՌԴ: Մի փոքր հատված էլ շարունակում է ապրել Արցախում:

1995 թ. պատերազմի ավարտից հետո նրանք որոշեցին ապրել ազատագրված տարածքներից մեկում՝ Մոլալարում: Գյուղը անվանվեց Նոր Այգեստան: Այն գտնվում է Մարտակերտ քաղաքից 20 կմ դեպի հարավ՝ Խաչեն գետի ափին: Նոր Այգեստանի տարածքում միջնադարյան եկեղեցու, գյուղատեղիի, գերեզմանոցի մնացորդները խոսում են այն մասին, որ նախկինում Աղդամը (Ակնա) և նրան հարակից հարթավայրային շրջանները հայաբնակ էին:

[832] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 277:

19–րդ դարի երկրորդ կեսին Չայլուի Սբ. Աստվածածին եկեղեցուն կից գործում էր դպրոց, որտեղ սովորեցնում էին գրել, կարդալ, հաշվել, կրոն: 19–րդ դարի 80–ական թթ. վերջերին Չայլույում բացվել է ծխական դպրոց՝ 45 աշակերտով: 1908 թ. տվյալներով այստեղ գործում էր միդասյա երկսեռ դպրոց՝ 66 աշակերտով և դասավանդում էր 2 ուսուցիչ[833]:

Խորհրդային տարիներին Չայլուի դպրոցը միջնակարգի կարգավիճակ ուներ: 20–րդ դարի 70–80–ական թթ. այդ դպրոցում սովորում էր 300 աշակերտ, աշխատում՝ 42 ուսուցիչ:

Նոր Այգեստան գյուղի հիմնավորվելուց հետո, այստեղ նոր դպրոց է բացվում: Սկզբում այն տարրականի կարգավիճակ ուներ, այնուհետև դարձավ ութամյա, իսկ 2010 թ.՝ միջնակարգ: Նշված ժամանակահատվածում դպրոցում սովորում էր 44 աշակերտ, դասավանդում՝ 12 ուսուցիչ:

Ծննդով Չայլուից է նշանավոր մանկագիր Յուրի Սահակյանը:

Նոր Այգեստանի համայնքը ապահովված է էլեկտրաէներգիայով: Հեռուստատեսությունը, ռադիոն, ինտերնետ ծառայությունը, անլար հեռուստակապը հասանելի են Նոր Այգեստանում: Այստեղ գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, միջնակարգ դպրոց:

Գյուղում կա մեկ աղբյուր՝ Տնջրե:

Չայլուի՝ Բաղդասարյանների, Բաբայանների, Պողոսյանների, Աբրահամյանների, Մովսիսյանների, Հարությունյանների, Աբգարյանների, Նիկողոսյանների, Գալստյանների, Ֆահրադյանների, Ավանեսյանների ազգատոհմերի ներկայացուցիչները ապրում են Նոր Այգեստանում:

2018 թ. տվյալներով գյուղում կար 47 տնտեսություն, 173 բնակիչ[834]: Նրանց հիմնական զբաղմունքը անասնապահությունն ու հողագործությունն են:

ՆՈՐ ԿԱՐՄԻՐԱՎԱՆ

Բնակավայրը գտնվում է ԱՀ հյուսիսարևելյան հատվածում՝ Թարթառի ստորին ավազանի հարթավայրային գոտում՝ Մարտակերտ քաղաքից 16 կմ հեռավորության վրա: Նախկինում բնակավայրը գտնվում էր Արցախի Ջրաբերդ գավառում:

Պահպանված հնագիտական նյութերը վկայում են, որ Կարմիրավանի տարածքում վաղ շրջանում հայկական բնակավայր է եղել: Այդտեղ պահպանվել է հողաթումբ տիպի բերդի մնացորդները: Տեղացիներն այն անվանել են Սանգար[835]:

[833] ՀԱԱ, ֆ. 56, գ. 143, թ. 8, գ. 543, թ. 110:
[834] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 3:
[835] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

1922 թ. Մարտակերտի շրջանի որոշ բնակավայրերի մի քանի ընտանիքներ փորձել են հաստատվել Շոթլանլու գյուղից ոչ հեռու՝ Թարթառի ձախ ափին: Սակայն սելավը քարուքանդ է անում հողաշեն տները, քշում տանում գյուղացիների ունեցվածքը:

Աղետից նրանք չեն հուսահատվում և չեն ընկրկում դժվարություններից: Այս անգամ որոշում են գյուղը հիմնադրել նախկին հայկական բնակավայրերից մեկի հիմքերի վրա: Նորաստեղծ բնակավայրը անվանում են Կարմիր բերդ: Բոլշևիկյան գաղափարախոսության տպավորության տակ գյուղը 2 տարի անց վերանվանում են Կարմիրավան:

1930 թ. այդտեղ կազմակերպվել է կոլեկտիվ տնտեսություն: 1950 թ. այն միավորվել է Սեյսուլանի կոլտնտեսության հետ: Կարմիրավանի նախկին տնտեսությունը 1964 թ. միավորվել էր Մարտակերտի՝ կուսակցության 22–րդ համագումարի անվան պետական տնտեսության (սովխոզի) հետ: Տարբեր ժամանակահատվածներում տնտեսությունը ղեկավարել են Սամվել Մամունցն ու Սեդրակ Մկրտումյանը:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 63 մարդ, որից 24–ը զոհվել է: Նրանց հիշատակին հուշարձան է կանգնեցվել:

1970 թ. գյուղում արդեն կար 132 տուն, 605 բնակիչ, 1987 թ.՝ 148 տուն, 518 բնակիչ[836], բռնագաղթի նախօրյակին՝ 1992 թ. հուլիսի 1–ին՝ 513 բնակիչ[837]:

Կարմիրավանն ուներ մշակույթի պալատ, գրադարան, կապի բաժանմունք, բուժկետ, մանկապարտեզ, խանութ, վարսավիրանոց:

Արցախյան ազատամարտին կարմիրավանցիներն իրենց գործուն մասնակցությունն են ունեցել: Կազմավորվել էր կամավորական ջոկատ, որի հրամանատարն էր Յակով Գալստյանը: Գյուղը 15 զոհ է ունեցել: Նրանցից Իգոր Հասրաթյանը հետմահու պարգևատրվել է ԱՀ և ՀՀ «Մարտական խաչ» 2–րդ աստիճանի շքանշաններով:

1992 թ. հուլիսի 3–ին ադրբեջանցիներին հաջողվում է գրավել գյուղը: Բնակչության մեծ մասը տարիների ընթացքում տեղափոխվում է Ռուսաստան: Կարմիրավանի հայության ավանդույթները պահելու նպատակով 2001 թ. նախատեսվում է նրանց համար Մարտակերտ քաղաքում կառուցել մի առանձին թաղամաս: 2001–2002 թթ. կառուցվեց 6 բնակարան, որոնք տրամադրվեցին զոհված կարմիրավանցիների ընտանիքներին: Սակայն այդ ծրագիրը այդպես էլ չիրագործվեց: 2003 թ. կարմիրավանցիները որոշեցին Մարտակերտից 7 կմ հեռավորության վրա գտնվող, նախկինում ադրբեջանաբնակ Փափրավանդ գյուղի տեղում՝ Խաչենագետի ձախ գետահովտում հիմնադրել Նոր Կարմիրավան գյուղը:

Կարճ ժամանակահատվածում գյուղում ապրելու համար որոշակի պայմաններ ստեղծվեցին: Գյուղն ապահովված է խմելու և ոռոգման համար մշտական ջրով: Ռադիոն, հեռուստատեսությունը, ինտերնետ կապը, անլար հեռախոսակապը բնակչու-

[836] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 161:
[837] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

թյան համար հասանելի են: Նոր Կարմիրավանում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, դպրոց:

Դեռևս 1931 թ. Կարմիրավանում բացվել էր տարրական դպրոց, որը 1990 թ. դարձել է ութամյա: Այդ տարիներին դպրոցում սովորում էր 77 աշակերտ, դասավանդում՝ 16 ուսուցիչ:

Բռնագաղթից հետո՝ 2006 թ. սեպտեմբերի 1-ին, Նոր Կարմիրավանում դպրոց է բացվում: 2018-2019 ուսումնական տարում Նոր Կարմիրավանում սովորում էր 17 աշակերտ:

Ինչպես Կարմիրավանում, այնպես էլ Նոր Կարմիրավանում դպրոցի տնօրեններ են աշխատել Ալյոշա Պետրոսյանը, Վոլոդյա Պետրոսյանը, Լարիսա Հասրաթյանը, Սուսաննա Թևոսյանը:

Բնակավայրի տարածքում պահպանվել են վաղ միջնադարյան եկեղեցու, գյուղատեղի, գերեզմանոցի հետքեր, քարարկղային թաղման դամբարաններ:

Համայնքի տարածքում կա 3 աղբյուր՝ Երե, Հոռին, Տնջրե:

Հին Կարմիրավանից այսօր Նոր Կարմիրավանում ապրում են Նավթալյանների, Ավթանդիլյանների, Պետրոսյանների, Ափյանների, Կարապետյանների, Գալստյանների, Անտոնյանների և Ասատրյանների ազգատոհմերի ներկայացուցիչները:

2018 թ. հունվարի 1-ի դրությամբ Նոր Կարմիրավանում կար 23 տուն և 159 բնակիչ[838]: Նրանց հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն է:

ՆՈՐ ՂԱԶԱՆՉԻ

Ղազանչի գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսարևելյան հատվածում՝ Մարտակերտի շրջանում, նախկին Խաչեն գավառում: Գյուղը տեղաբաշխված է Խաչեն գետի աջափնյակում՝ Վանքասարի ստորոտում և երեք կողմից շրջապատված է անտառապատ լեռներով: Գյուղը ելք ունի արևելյան կողմից դեպի հարթավայր:

Ղազանչին Արցախի հին գյուղերից է: Միջին միջնադարում տարածքը խիտ բնակեցված է եղել:

Ղազանչիի մոտ են գտնվում Կյուլ Մալիք (Գայլ Մելիք) և Կարմիր եղցու խութ տեղամասերի գյուղատեղիները, գերեզմանատները, կիսավեր կառույցների ավերակները:

Ղազանչիի հայերը մշտապես պայքարել են օտար նվաճողների դեմ: Սբ. Գևորգ եկեղեցու արևմտյան պատի մոտ գտնվող արձանագիր տապանաքարը պատմում է, որ 1557 թ. երկրամաս ներխուժած թուրքերի նկատմամբ տեղացիները հաղթանակ են տարել:[839]

[838] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

[839] Մակար եպս Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 271:

13-րդ դարում գյուղում կառուցվել է Սբ. Գևորգ եկեղեցին, որը 1671 թ. վերանորոգվել է: Գյուղին մոտ են գտնվում Կարմիր եղցին և Մեղրակեր սրբավայրը:

Արցախում խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1931 թ., գյուղում կոլտնտեսություն էր կազմակերպվել, որը 1967 թ. միավորվել էր Սրխավենդի տնտեսությանը, իսկ հետագայում դարձել մարզային «Ագրոարդ»-ի օժանդակ տնտեսություն[840]:

Հայրենական մեծ պատերազմին Ղազանչի գյուղից մասնակցել է 167 մարդ, զոհվել է 65-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կանգնեցվել:

1924 թ. գյուղում բացվել է տարրական դպրոց, որը հետագայում ութամյակի կարգավիճակ է ստացել:

Արցախյան ազատագրական պայքարի առաջին տարիներին՝ 1990 թ., գյուղում ինքնապաշտպանական ջոկատ էր կազմակերպվել:

Ղազանչի գյուղը 1992-1993 թթ. հայտնվել էր թեժ զինաբախումների կիզակետում: 1992 թ. Ադրբեջանի զինված ուժերի կողմից գյուղը գրավվել է: Բնակավայրում մնացած խաղաղ բնակիչները, հատկապես ծերեր ու կանայք, գերվել են: Նրանց կոտտանքների են ենթարկել, իսկ մեծ մասին էլ գնդակահարել կամ էլ դաժանորեն կենդանի վառել են:

1993 թ. ԱՀ ՊԲ զորամասերի հարվածների տակ գյուղը ազատագրվել է: Գյուղից ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվել են Թեմուր Վերդիի Առուստամյանը, հետմահու՝ Վոլոդյա Վյաչեսլավի Եսայանը:

Ղազանչիում 19-րդ դարի 90-ական թվականներին կար 35 տուն, 325 բնակիչ, 1970 թ.՝ 89 տուն, 455 բնակիչ, 1987 թ.՝ 75 տուն, 260 բնակիչ[841], 1992 թ. հուլիսի 1-ին՝ 235 բնակիչ[842]:

Բռնագաղթից հետո գյուղը չի վերաբնակեցվել: Ղազանչիի 126 բնակիչներ պատերազմից հետո՝ 1994 թ., հաստատվել են հարևան Սրխավենդ գյուղում, որը վերանվանվել և ստացել է Նոր Ղազանչի անունը:

Գյուղը գտնվում է Ղազանչիից ոչ շատ մեծ հեռավորության վրա՝ ԱՀ հյուսիսարևելյան հատվածում՝ Մարտակերտի շրջանում՝ նախկին Խաչեն գավառում: Բնակավայրի սահմանային գոտով է հոսում Խաչենի ձախակողմյա վտակներից մեկը:

Նոր բնակավայրում հաստատվելուց հետո գյուղում միջնակարգ դպրոց է բացվել:

Նոր Ղազանչին էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Գյուղի աղբյուրներն են՝ Թեմարի և Ներքին:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

[840] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 271:

[841] Նույն տեղում:

[842] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ և բուժկետ:

Նոր Ղազանչիում 2010 թ. կար 36 տուն, 128 բնակիչ[843], 2018 թ.՝ 41 տուն, 204 բնակիչ[844]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՆՈՐ ՄԱՐԱՂԱ

Բնակավայրը գտնվում է ԱՀ հյուսիսարևելյան մասում՝ Թարթառ գետի աջ ափին՝ Ադրբեջանի հանրապետության Թարթառ (Միրբաշիր) ավանից ընդամենը 1,5 կմ հեռավորության վրա:

1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո Թուրքմենչայի 1828 թ. փետրվարի 10-ի հաշտության պայմանագրով պարսկահպատակ հայերին թույլատրվում է տեղափոխվել և բնակություն հաստատել Արևելյան Հայաստանում:

1828 թ. Մարաղայից յոթ ընտանիքներ հասնում են Թարթառի ափը և հիմնադրում նոր բնակավայր, որն էլ ավանակոչում են իրենց քաղաքի՝ Մարաղայի անունով:

Գյուղը, գտնվելով Թարթառի ափի հարուստ հողատարածքների վրա, զարգացման լայն հնարավորություններ է ստանում: 1885 թ. այստեղ արդեն 80 ընտանիք էր ապրում[845]:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, ռուսական կայսրության փլուզման և ամենաթողության պայմաններում, Ղարաբաղի դաշտավայրում արդեն մեծամասնություն դարձած մահմեդական խառնամբոխ ցեղերը փորձում են հաշվեհարդար տեսնել հայ բնակչության, այդ թվում մարաղացիների նկատմամբ:

Մինչև Արցախում հայկական պետականության կազմավորումը (1917 թ., դեկտեմբեր) մարաղացիները, որպես ապահով վայր ապրում էին Մաղավուզում:

1918 թ. նրանք ոչ միայն վերադառնում են իրենց բնակավայրը, այլև նորից սկսում են կարգավորել սոցիալ-տնտեսական կյանքը: Ավելին, 1918 թ. հունվարի վերջերին Արցախի կառավարությանը կից գործող պարենավորման հանձնախումբը Սարով, Մարտակերտ, Կուսապատ, Չայլու, Մարաղա գյուղերից և Մարգուշևանում գտնվող Ավան Յուզբաշյանի տնտեսությունից ալյուր և այլ մթերքներ են հավաքագրել Շուշիի բնակչության պարենային սուղ վիճակը մեղմելու համար[846]:

Մարաղայում խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1930 թ., գյուղում կազմակերպվել է կոլտնտեսություն: 1960 թ. Մարաղայի և Մարգուշևանի կոլտնտեսությունները խոշորացվել են և դարձել մեկ տնտեսություն: 1964 թ. տնտեսությունը վերակազմակերպվել է սովխոզի: Մինչև 1992 թ. ապրիլը՝ ադրբեջանցիների կողմից Մարաղայի գրավումը, տնտեսությունը գործել է: Տնտեսության ղեկավարներ են եղել

[843] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[844] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:
[845] Հայկունի, նշվ. աշխ., էջ 41:
[846] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 108:

Դարչի Պողոսյանը, Ջիվանշիր Սարգսյանը, Շուրա Ջաքարյանը, Ժորա Հարությունյանը, Էդվարդ Ղարիբյանը, Աբել Սարգսյանը, Սլավիկ Սարգսյանը, Սլավիկ Մովսեսյանը, Վագիֆ Համբարձումյանը: Կաթի արտադրության ասպարեզում ունեցած ակնառու հաջողությունների համար Լենա Ղուլյանը արժանացել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի բարձր կոչման:

1964 թ.՝ խաղողագործական սովխոզի ստեղծվելուց հետո, երկու գյուղերի՝ Մարաղայի և Մարգուշևանի հիմքերի վրա ստեղծվում է Լենինավան ավանը: Մինչև 1992 թ. ավանի հայաթափումը այդտեղ ապրում էր 5013 մարդ, որից 2513 մարաղացիներ, 2500 մարգուշավանցիներ: Բնակչության հիմնական զբաղմունքներն էին անասնապահությունը և հողագործությունը, մասնավորապես խաղողագործությունն ու բամբակագործությունը: 1950-ական թվականներին Մարաղայում արտադրվել է նաև բնական կաուչուկ: Լենինավանում գործում էին նաև արդյունաբերական ձեռնարկություններ: Այստեղ էին գտնվում Ստեփանակերտի էլեկտրագործարանի և կոնդենսատորի գործարանի մասնաճյուղերը, գինեգործարանը, փայտավերամշակման գործարանը, տրակտորների վերանորոգման հանրապետական նշանակության գործարանը, շերամի վերամշակման կոմբինատը, հացի գործարանը, բենզինի, դիզվառելիքի, ավտոպահեստամասերի, քսայուղերի խոշոր կայանը:

Լենինավանում գործում էր «Ղարաբաղ» գիտափորձնական կայանը: Դրանից բացի այստեղ կային մի քանի կենցաղասպասարկման կետեր, 1 ռեստորան, 6 ճաշարան, 4 առևտրի օբեկտներ, միջնակարգ դպրոց՝ հայկական և ռուսական բաժանմունքներով, 3 մանկապարտեզ, որից երկուսը հայկական, մեկը ռուսական, հիվանդանոց, կապի բաժանմունք: Ավանը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված էր:

Միայն Մարաղայից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 255 մարդ, որից 148-ը զոհվել է: Նրանց հիշատակին գյուղում կառուցվել է հուշարձան:

Մարաղացիներին առանձնապես ծանր ճակատագիր բաժին հասավ արցախյան ազատագրական պայքարի տարիներին: 1988 թվականից մինչև 1992 թվականի հունիսի 17-ը թշնամին տասնյակ հարձակումներ է գործել Մարաղա և Մարգուշևան գյուղերի ուղղությամբ: Մարաղայի (հրամանատար՝ Ռոմա Կարապետյան) և Հասանղայի (հրամանատար՝ Ժորա Պողոսյան) կամավորականների ջանքերով հաջողվել է նրանց հետ շպրտել ելման դիրքեր: 1992 թ. փետրվարի 25–26-ին, երբ ԱՀ ինքնապաշտպանական ջոկատները ոչնչացնում էին Խոջալուի կրակակետը, Ադրբեջանի զինված ուժերը փորձեցին գրավել Մարաղա և Մարգուշևան գյուղերը: Թշնամին, ճակատամարտի դաշտում թողնելով 40-ից ավելի դիակներ, նահանջում է:

1992 թ. ապրիլի 10-ին ադրբեջանցիները մեծաքանակ ռազմական տեխնիկայով 3 անգամ գրոհում են Լենինավանի վրա: Երկու գրոհները տեղի ջոկատների և ազատագրական բանակի մարտիկներ՝ Լեոնիդ Ազգալդյանի և Վլադիմիր Բալայանի գլխավորությամբ, հետ են շպրտվում:

Երրորդ գրոհը ճակատագրական եղավ Լենինավանի համար: Հակառակորդը ձեղքեց պաշարման օղակը և մտավ ավան: Հայկական զինված ուժերը, վերախմբավորելով ուժերը, ապրիլի 10-ի լույս 11-ի գիշերը նորից ազատագրեցին ավանը: Մինչ այդ թշնամուն հաջողվել էր թալանել և հրկիզել 175 տուն, խոշտանգելով սպանել 51 խաղաղ բնակիչների և գերել 38 տարեց մարդկանց ու կանանց: 24 պատանդները հետագայում փոխանակվեցին, իսկ 14-ի ճակատագիրը այդպես էլ առայսօր անհայտ է: Սպանվածների մեծ մասի մարմինները անդամահատված էին, աչքերը՝ հանած:

Թշնամին նահանջելով թողնում է 44 սպանված, 12 բեռնատար, 9 մարդատար մեքենաներ, 2 թնդանոթ և արկերով բարձած 2 մեքենա:

Մարաղայում կատարված դաժանությունների վերաբերյալ հետագայում փաստավավերագրական ֆիլմ է նկարահանվել:

1992 թ. մայիսի 11-ին՝ ժամը 16:00-ին, թշնամին 16 զրահատեխնիկայի աջակցությամբ, նորից գրոհում է Մարաղա գյուղի վրա: Մարաղայի պաշտպանները Աշոտ Ղուլյանի (Բեկոր) առաջին վաշտի հետ միասին հետ են շպրտում թշնամուն:

Մարտական գործողությունների ժամանակ զոհվում են 17 ազատամարտիկներ, վիրավորվում՝ 19 հոգի: Թշնամու կորուստներն անհամեմատ մեծ էին: Նրանք ռազմի դաշտում թողնում են 164 ասկյարներ և մեծ քանակությամբ ռազմական տեխնիկա:

Մայիսի 11-ի փայլուն հաղթանակից հետո Լենինավանի բնակիչները վերադառնում և իրենց օջախում ապրում են մինչև հունիսի 17-ը:

1992 թ. հունիսի 17-ին Մարտակերտի հյուսիսարևելյան ողջ ճակատով ադրբեջանցիները, անցնելով գրոհի, գրավում են հայկական մի շարք բնակավայրեր, այդ թվում Մարաղան:

Մարտական գործողություններին Մարաղայից մասնակցել է 206 հոգի, նրանցից 48-ը զոհվել է: Մարաղայի 60 խաղաղ բնակիչներ նույնպես դաժան պատերազմի զոհ են դարձել: Մարաղայից Միքայել Միրզոյանը և Իվան Գրիգորյանը պարգևատրվել են ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

Հայրենի օջախից զրկված Մարաղայի բնակիչներն ապրում են ԱՀ, ՀՀ և արտասահմանյան մի շարք երկրների բնակավայրերում: Բարեբախտաբար, նրանց մի մասը հայրենի երկրի նկատմամբ ունեցած պարտքի մեծ զգացումով իրենց գյուղից ոչ շատ մեծ հեռավորության վրա գտնվող Արցախի հնագույն բնակավայրերից մեկի՝ Տիգրանակերտի հարևանությամբ գտնվող նախկին ադրբեջանաբնակ Քյանգաղի գյուղի տարածքում՝ Խաչեն գետի ափին, 1995 թ. Վագիֆ Հայրապետյանի ղեկավարությամբ Նոր Մարաղա անունով գյուղ է հիմնադրում: Գյուղը օրեցօր նոր շունչ է ստանում: Նոր Մարաղայում զոհվածների հիշատակին հուշարձան է կառուցվել:

19-րդ դարի 60-ական թվականներից Մարաղայի Սբ. Աստվածածին եկեղեցուն կից գործել է դպրոց: 1873 թ. կաթողիկոսի կոնդակով գյուղում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց՝ 30 աշակերտով, որտեղ դասավանդում էր 1 ուսուցիչ: 1886 թ. գյուղում գործում էր մեկդասյա արական ծխական դպրոց՝ 40 աշակերտով: Աշխատում էր 1 ուսուցիչ: Երբ 1896 թ. ցարական հրովարտակով փակվեցին հայկական դպրոցները, Մարաղայի դպրոցը շարունակում էր գործել: 1908-1909 ուսումնական տարում Մարաղայի մեկդասյա երկսեռ դպրոցն ուներ 2 բաժանմունք, 52 աշակերտ, 2 ուսուցիչ: Դպրոցը պահվում էր բաքվաբնակ մարաղացիների հայրենակցական միության նպաստով և աշակերտների ուսման վարձով:

Խորհրդային տարիներին Մարաղայում արդեն գործում էր միջնակարգ դպրոց, որն ուներ ինչպես հայկական, այնպես էլ ռուսական բաժիններ: 1989-1990 ուսումնական տարում դպրոցն ուներ 300 աշակերտ և 34 ուսուցիչ: 1992 թ. գյուղի բռնատեղահանվելուց հետո, դպրոցահասակ երեխաները միառժամանակ ուսումը շարունակեցին տարբեր բնակավայրերի դպրոցներում:

1997 թ. սեպտեմբերի 20-ին Նոր Մարաղայում բացվեց 8-ամյա դպրոց՝ 20 աշակերտով: 2004 թ. Թեհրանի հայոց թեմի միջնորդությամբ տեր և տիկին Վարուժան և Ալմա Հովհաննիսյանների միջոցներով կառուցվեց նոր դպրոց: 2010 թ. դպրոցում սովորում էր 82 աշակերտ, դասավանդում 22 ուսուցիչ, 2017-2018 ուսումնական տարում համապատասխանաբար 84 աշակերտ, 19 ուսուցիչ: Մարաղացի ռուսաստանաբնակ Մարատ Պետրոսյանի միջոցներով դպրոցի շենքը վերանորոգվել է: Դպրոցի տնօրեններ են աշխատել Երվանդ Հովակիմյանը, Հենրիկ Բախշիյանը, Վոլոդյա Մանասյանը, Մկրտիչ Ասրյանը, Լյուբա Գրիգորյանը:

Ծննդով Մարաղայից են բժշկական գիտությունների դոկտոր Սերգեյ Թադևոսյանը, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վաչագան Գրիգորյանը, ֆիզմաթ գիտությունների դոկտոր Արտեմ Ավագյանը, ԱՀ առաջին և երկրորդ գումարումների Ազգային ժողովի պատգամավոր, Մարաղայի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատար Ռոմա Կարապետյանը:

Մարաղայի տարածքում է գտնվում 19-րդ դարում կառուցված Սբ. Աստվածածին եկեղեցին: Նոր Մարաղայի շրջակայքը առատ է պատմամշակութային արժեքներով: Գյուղի շրջակայքում պահպանվում են Ք. ա. 2-1-ին հազարամյակների դամբարանաբլուրներ, ֆալոս, միջնադարյան եկեղեցիներ, այդ թվում ժայռափոր: Մասնավորապես նշանավոր է Վանքասարի եկեղեցին (5-7-րդ դարեր):

Այստեղ է գտնվում Տիգրան Մեծի կառուցած քաղաքներից մեկը՝ Արցախի Տիգրանակերտը: ՀՀ և ԱՀ հնագետները ամեն տարի նոր շինություններ են հայտնաբերում: Ամրոցից ներքև փռված է եղել քաղաքը, որը գոյատևել է մինչև 14-րդ դարը: Այստեղ հնագետները հայտնաբերել են 5-7 դարերի բազիլիկ երկու եկեղեցիների հիմքեր: Պեղված նյութերի հիման վրա ամրոցում բացվել է թանգարան: Նոր Մարաղայի նշանավոր հանդամասերն են՝ Ճղպրոտ, Տերտերանց տափ, Մարկուսանց տափ, Հեռու դաշտ, Ներքևի դաշտ, Մուխանանց տափ, Անանյանանց տափ:

Համայնքի տարածքում է գտնվում Կամոյի աղբյուրը:

Նոր Մարաղայում ապրում են Մարաղայից այստեղ տեղափոխված Կարապետյանների, Գրիգորյանների, Մովսեսյանների, Վանյանների ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղում գործում են ակումբ, համայնքային կենտրոն, դպրոց, շուկա, 5 խանութներ: Համայնքը ապահովված է էլեկտրաէներգիայով, խմելու և ոռոգման ջրով: Այստեղ հասանելի են հեռուստատեսությունը, ռադիոն, ինտերնետ կապը:

2018 թ. տվյալներով Նոր Մարաղայում կա 121 տուն, 371 մարդ[847]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Բնակչության մի մասն էլ աշխատում է Կաշենի հանքավայրում: Այստեղ կան նաև կրաքարի հարուստ պաշարներ:

ՆՈՐ ՍԵՅՍՈՒԼԱՆ

Գյուղը գտնվում է Մարտակերտի շրջանի հյուսիսարևելյան հատվածում: Գյուղի տարածքը հարթավայրային է, զուրկ անտառներից:

Սեյսուլանը գոյություն ուներ միջնադարից. դրա մասին են վկայում Սեյսուլանի հին գերեզմանատունը և պահպանված տապանաքարերը: Դաշտավայրը հնում խիտ բնակեցված է եղել և պատահական չէ, որ Սեյսուլանի մոտ պահպանվել են հին հայկական քաղաքի ավերակներ, որի տարածքում խորհրդային տարիներին հիմնվել է ադրբեջանական Ղափանլու գյուղը: Եկվորները եկեղեցիների քարերը և տապանաքարերն իրենց բնակարանների համար օգտագործել են որպես շինանյութ:

Խորհրդային տարիներին հայաբնակ գյուղի համար անհարմարություններ ստեղծելու նպատակով, Ադրբեջանի ղեկավարության որոշմամբ Սեյսուլանի շուրջը հիմնադրել են Ղափանլու, Շոթլանլու, Նամեռլի, Ղազիան ադրբեջանաբնակ գյուղերը:

Հարթավայրում գտնվելով՝ Թարթառ գետի վարարումների պատճառով գյուղը մի քանի անգամ հեղեղվել և ավերվել է: Գյուղի բնակիչները դարերի ընթացքում ստիպված մի քանի անգամ փոխել են բնակավայրի տեղը:

Շատերի մոտ այն տպավորությունն է ձևավորված, որ Սեյսուլան տեղանունը թուրքական ծագում ունի: Մինչդեռ այն պարզապես կապված է բնական արհավիրքի՝ ջրհեղեղի հետ: Ամենայն հավանականությամբ գյուղի անունը նախկինում եղել է Սելսուլան: Բառը բաղկացած է երկու արմատից՝ «սել», որ նշանակում է հեղեղ և «սուլ», որը, ըստ Ստեփան Մալխասյանի՝ ստուգաբանվում է ջրաղացի խողովակ կամ նավ[848]: Փաստորեն կարելի է ենթադրել, որ գյուղը, ջրհեղեղի ենթարկված վայրում լինելով, անվանվել է Սելսուլան, հետագայում՝ Սեյսուլան:

[847] ԱՀ առկա բնակրության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

[848] Մալխասյան Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. 4, էջ 210:

1868 թ. մարդահամարի տվյալներով Սեյսուլանում ապրում էր 220 մարդ[849]: 19-րդ դարի վերջերին Սեյսուլանում կար 35 ծուխ, 209 բնակիչ[850]: 1920 թ. գյուղում արդեն կար 89 տուն, 489 բնակիչ, 1970 թ.՝ 179 տուն, 782 բնակիչ, իսկ 1987 թ.՝ 178 տուն, 650 բնակիչ[851]: Լինելով դաշտավայրում դարերի ընթացքում գյուղն անընդհատ ասպատակվել է քոչվոր ցեղերի կողմից: Այդ պայքարում նրանք ապավինում էին իրենց ուժին ու հավատին: 1811 թ. գյուղում նրանք կառուցեցին Սուրբ Աստվածածին եկեղեցին, որը 1992 թ. ավերվել է ադրբեջանցիների կողմից:

Խորհրդային տարիներին Սեյսուլանը, լինելով ԼՂԻՄ կազմում, ունեցավ որոշակի ձեռքբերումներ: 1932 թ. գյուղում կազմավորվեց կոլեկտիվ տնտեսություն: Զարգացած էին բանջարաբուծությունը, անասնապահությունը և, հատկապես, խաղողագործությունը: 1980-ական թվականներին կոլտնտեսության դրամական եկամուտները անցնում էին 2,5 միլիոն ռուբլուց: Մեկ աշխատողի հաշվով տարեկան արտադրվում էր 11 000 ռուբլու գյուղատնտեսական մթերք[852]:

Տնտեսական վերելքը հնարավորություն ընձեռեց գյուղում կառուցելու երկհարկանի առանձնատներ, դպրոց, գյուղապետարան, մանկապարտեզ, մշակույթի պալատ, մարզադահլիճ, հանդիսությունների սրահ, ունենալ խանութ, կենցաղ սպասարկման կետ, կապի բաժանմունք:

Կոլտնտեսության վարչությունը ղեկավարել են Հակոբ Հարությունյանը, Արշակ Վարդումյանը, Թևան Հարությունյանը, Արամ Մարգարյանը, Արտաշ Իսրայելյանը, Անտոն Գրիգորյանը, Միշա Յախշիյանը, Արտաշ Հարությունյանը, Զավեն Ներսիսյանը, Ալյոշա Խաչատրյանը:

1976 թ. կոլտնտեսությունը վերակազմակերպվեց խորհտնտեսության: Այդ տնտեսության ղեկավարներն էին Սուրեն Ավանեսյանը, Անուշավան Գրիգորյանը, Գեղեոն Հակոբյանը, Սպարտակ Մկրտչյանը: Վերջինիս ադրբեջանցի օմոնականները անձնագրային ռեժիմի խախտման պատրվակով ձերբակալեցին, ենթարկեցին խոշտանգումների և ազատ արձակեցին միայն համագյուղացիների կողմից հանգանակված շատ խոշոր փրկագին ստանալուց հետո:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 93 մարդ: Զոհվել է 48-ը: Նրանց հիշատակին հին Սեյսուլանում կանգնեցված է եղել հուշարձան:

Արցախահայության ազատագրական պայքարի առաջին իսկ օրվանից Սեյսուլանը ենթարկվել է ադրբեջանցի զինված ավազակախմբերի գրոհներին: 1992 թ. փետրվարի 27-ին գյուղը տեղահանվել է: Ազատագրական պատերազմի տարիներին 8 սեյսուլանցիներ նահատակվել են: Տարբեր երկրներ տեղափոխված սեյսուլանցիներին հայրենի երկրում հավաքելու նպատակով ԱՀ կառավարության որոշմամբ

[849] «Кавказский календарь» на 1868, Тифлис, 1867, с. 6.

[850] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 177:

[851] Մելքումյան Ս., նշվ. աշխ. էջ 166:

[852] ԱրՊՀ հայագիտական կենտրոն, Ա. Մինասյան, Նոր Սեյսուլան, էջ 2:

Խաչենի հովտում՝ գետի ձախ ափին՝ նախալեռնային գոտում՝ Մարտակերտ–Ստեփանակերտ մայրուղու հարևանությամբ, հիմնադրվում է Նոր Սեյսուլան գյուղը: Ներկայումս գյուղում ապրում է Հին Սեյսուլանի և Յարմջայի նախկին բնակիչների մի մասը: Նոր Սեյսուլանի շենացմանն իրենց մասնակցությունն են բերում նաև ՀՀ և ԱՀ տարբեր բնակավայրերից այդտեղ տեղափոխված վերաբնակիչները:

Հին Սեյսուլանում Սուրբ Աստվածածին եկեղեցին կառուցելուց հետո սկսել է գործել հոգևոր դպրոց, որտեղ երեխաներին սովորեցնում էին գրել, կարդալ, հաշվել, կրոն:

1870–ական թվականներին գյուղում բացվում է նախակրթարան, որտեղ սովորում էր 20 աշակերտ, դասավանդում՝ 1 ուսուցիչ: Գյուղացիների խնդրանքով, Կաթողիկոսի թույլատվությամբ Սեյսուլանում 1887–1888 ուսումնական տարում բացվել է մեկդասյա ծխական դպրոց: 1909 թվականից գյուղում գործել է 45 աշակերտով մեկդասյա երկսեռ դպրոց[853]: Խորհրդային տարիներին հին Սեյսուլանում գործում էր միջնակարգ դպրոց, 1980–ական թվականներին դպրոցում սովորում էր 170 աշակերտ, դասավանդում՝ 32 ուսուցիչ: Երկար տարիներ դպրոցը ղեկավարել է Զաբելլա Պետրոսյանը: 1980–ական թվականներին այդ պաշտոնը վարում էր Ա. Գրիգորյանը: 1994 թ.՝ Խաչենի ափին նոր գյուղի հիմնադրումից հետո, այստեղ սկսել է գործել դպրոց, որտեղ սովորում էր 12 աշակերտ, և դասավանդում՝ 3 ուսուցիչ, իսկ 2017–2018 ուսումնական տարում Նոր Սեյսուլանում արդեն սովորում էր 73 աշակերտ, դասավանդում՝ 21 ուսուցիչ: Նոր Սեյսուլանի դպրոց են հաճախում նաև Հովտաշենի երեխաները: 1994 թվականից դպրոցի տնօրենն է Ա. Մինասյանը:

Համայնքի տարածքում կա մեկ աղբյուր՝ Միերի:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը:

Գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, դպրոց, առևտրի 2 կետ:

Նոր Սեյսուլանում 2018 թ. կար 38 տուն, 181 բնակիչ[854]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՇԱՀՄԱՍՈՒՐ

Բնակավայրը գտնվում է ԱՀ հյուսիսային հատվածում՝ Մարտակերտի շրջանում՝ Արծաթասարի հարավային ստորոտի հարթավայրային մասում՝ Վանք և Ծմակահող գյուղերի միջև՝ Խաչենագետի վերին հոսանքի ձախ ափին: Գյուղը գտնվում է գեղատեսիլ վայրում՝ դարավոր անտառների գրկում: Նախկինում բնակավայրը ներառված էր Արցախի Խաչեն գավառում:

[853] ՀԱԱ, ֆ. 56, ց. 2, գ. 10, թ. 10

[854] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 3:

Շահմասուրը Արցախի հինավուրց բնակավայրերից մեկն է: Դրա մասին են վկայում նաև գյուղի տարածքում գտնվող նախաքրիստոնեական դարաշրջանի դամբարանաբլուրները, սրբավայրերն ու մատուռները:

Ներկայիս գյուղը հիմնվել է 12–13–րդ դարերում և Գանձասարի վանքի կալվածքների մեջ էր: Մոնղոլ–թաթարների կողմից բնակավայրը ավերվել էր:

Շահմասուր գյուղի հայությունը, դիմակայելով բազմաթիվ դժվարությունների, կարողացավ անսասան պահել հայրենի եզերքի այդ հատվածը: Գյուղի համար նոր պատուհաս դարձան Աղա Մուհամմադ շահի 1795–1797 թթ. արշավանքներն ու դրան հաջորդած սովն ու մահտարժամը: Բնակչության մի զգալի մասն այդ ամենի զոհը դարձավ: Եղան նաև օտար ափերում իրենց կյանքը որոնողներ: Մի քանի ընտանիքներ էլ համառորեն շարունակեցին ապրել հարազատ բնակավայրում:

19–րդ դարի սկզբներին Գանձասարի կաթողիկոսը փորձեց վերաբնակեցնել մայր աթոռի շրջակայքում գտնվող գյուղերը, այդ թվում՝ Շահմասուրը: Դիզակ գավառի Առաքյալ գյուղից մի քանի ընտանիքներ հաստատվեցին Շահմասուրում և նախկին հայկական բնակավայրը նոր շունչ ստացավ:

Շահմասուրում խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1930 թ., կոլտնտեսություն է կազմակերպվել: 1951 թ. կոլտնտեսությունը միավորվել է Վանքի նույնօրինակ տնտեսության հետ: 1976 թ. վերոհիշյալ կոլտնտեսությունը վերակազմակերպվել և դարձել է խորհրդային տնտեսություն (սովխոզ): 1988 թ. այն նորից կոլտնտեսության կարգավիճակ էր ստացել:

Շահմասուրի տնտեսությունը ղեկավարել են Զինավուր Բաղդասարյանը, Ներսես Ավագյանը, Ուսուբ Ստեփանյանը, Միրզա Էմիրյանը, Ներսես Գրիգորյանը, Ռադիկ Բաղդասարյանը, Ալյոշա Էմիրյանը:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 56 մարդ, որից 17–ը զոհվել է: Նրանց հիշատակին Ծմակահողում հուշարձան է կանգնեցվել:

Շահմասուրի բնակչությունն իր մասնակցությունն է բերել արցախյան ազատագրական պայքարին: Գյուղում կազմավորվել է ինքնապաշտպանական ջոկատ, որը մինչև 1994 թ. զինանդադարը, Մարտակերտի պաշտպանական շրջանի գնդի կազմում մասնակցել է տարբեր ռազմագործողությունների: Մարտական գործողություններին մասնակցած 48 ազատամարտիկներից 7–ը զոհվել են: Նրանցից Արկադի Հայրապետյանը հետմահու պարգևատրվել է ԱՀ «Մարտական խաչ» 2–րդ աստիճանի շքանշանով:

1923 թ. Շահմասուրում բացվել է տարրական դպրոց: 1990 թ. այն ստացել է ութամյայի կարգավիճակ, որտեղ սովորում էր 34 աշակերտ: 1992 թ. սեպտեմբերից մինչև 1993 թ. փետրվար ամիսը դպրոցը, ռազմաճակատին մոտ լինելու պատճառով, փակվել է: Հրետակոծության պատճառով դպրոցը ավերվել է: 1993 թ. փետրվարից, թշնամուն Արցախի սահմաններից դուրս քշելուց հետո, պարապմունքները վերսկսվել են մասնավոր տներում: 2007 թ. Շահմասուրի կրթական հաստատությունը հիմնական

դպրոցի կարգավիճակ ստացավ: 2018–2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 22 աշակերտ:

Դպրոցի տնօրեններ են աշխատել Լազր Սարգսյանը, Սուրեն Ազատյանը, Արևհատ Մկրտչյանը, Արամ Աբրահամյանը, Անդրանիկ Ալեքսանյանը:

Շահմասուրի տարածքում պահպանվել են պատմամշակութային մի շարք արժեքներ, մասնավորապես Խաչին ձոր եկեղեցին (12–13-րդ դարեր), Խանաթոռի, Նահատակի, Ծաղկի խաչ հնավայրերը, Կտողնու, Թազա սրբատեղին, միջնադարյան բազմաթիվ խաչքարեր:

Գյուղամիջում 13-րդ դարում կառուցված եկեղեցին քանդվել է 1940 թ.: Մնացել է միայն զանգը, որն այսօր կախված է դպրոցի բակում:

Գյուղի նշանավոր հանդամասերն են Լուլի խութը, Հնձանա հողը, Կուտրատածը, Պուղունց աղբյուրը, Չնչխնեն, Քյաթա ծովը, Պրտնտուս հողը, Տզնոտեն հաքին, Ճղպրաթաղը, Ռուսկումերի թումբը, Արակբեյին տեղը, Վետած աղբյուրը, Մակին տափը, Սունեն քերծը, Կապեն քերծը, Կտողնոտ թալան, Սևին շուվաքը, Մարդին բողազը, Մեծ-մեծ քարերը, Վերսին յալը, Վարթուտը, Պել ապան տոշը, Ծակ քարը, Սուլու քարը, Տնջրին, Տափարակը, Մեյդանը, Հիկեղանը:

Շահմասուրի տարածքում կա 9 աղբյուր՝ Տնջրեն տակեն, Ջրին ձորին, Ճղպրաթաղի, Մեյդանեն, Պուղունց, Խոնչ, Խուզլանեն, Վետանց, Վարդուտ:

Շահմասուրում այսօր ապրում են Ռաքելանց (Առաքելյաններ), Բղդատանց (Բաղդասարյաններ), Իմիրանց (Էմիրյաններ), Պուղունց (Պողոսյաններ), Ըվաքյանց (Ավագյաններ), Ստեփանանց (Ստեփանյաններ), Իվազանց (Այվազյաններ), Բաղդունց (Բաղդասարյաններ), Կևերքանց (Գևորգյաններ) ազգատոհմերի ներկայացուցիչները:

Շահմասուրում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, դպրոց: Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Հեռուստատեսությունը, ռադիոն, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը:

Շահմասուրում 1959 թ. կար 38 տուն, 160 բնակիչ, 1979 թ.՝ 44 տուն, 153 բնակիչ, 1987 թ.՝ 54 տուն, 151 բնակիչ[855], 2018 թ.՝ 31 տուն, 153 բնակիչ[856]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՉԱՓԱՐ

Բնակավայրը գտնվում է ԱՀ հյուսիսային մասում՝ Մարտակերտի շրջանում՝ նախկին Խաչեն գավառում: Բնակավայրը տեղաբախշված է Մոռվի լեռնաշղթայի հարավային մի գոգավորությունում՝ Թարթառ գետի միջին հոսանքի ձախ ափի գեղատեսիլ վայրում: Գյուղի շրջապատը անտառածածկ է:

[855] Մելքումյան Ս., նշվ աշխ., էջ 185:

[856] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

Ներկայիս բնակավայրից 500 մ դեպի հարավ 12–17-րդ դարերում գոյություն է ունեցել հին Չափար գյուղը (հին շեն): Որոշ տվյալներով ժամանակին այդ գյուղում 500 տուն հայ ընտանիք է ապրել[857]: Չափար գյուղի մասին խոսվում են նաև Դաղի վանքի կալվածագրերում[858]: Չափարից 1,5 կմ դեպի արևմուտք եղել է հայկական Սուրբեն դյուզ գյուղը, իսկ 2 կմ դեպի հարավարևմուտք՝ Սուրբ Մինաս բնակավայրը:

Ընդհանուր առմամբ վաղ միջնադարից սկսած՝ Չափար գյուղի շրջակայքը խիտ բնակեցված է եղել: Այդ կապակցությամբ Մակար Բարխուդարյանը գրել է. «Սկսեալ Չափար շինից մինչև Խոթայ վանք, մինչև Եանշաղ կան շատ աւերակներ, որոց մէջ կան աւերակ եկեղեցիներ և մօտերքում հանգստարաններ: Գաւառումս այժմ մնացած են միայն երկու հայաբնակ գիւղ. երեսուն գիւղից աւելի է մնացեալ հայ գիւղերի աւերակներն, որոնց շատերին մէջ այժմ տեղակալած են աւազակաբարոյ քեօլանի անուն մահմեդականներ: Այսպէս են Խոթ գիւղն և Եանշաղ վտակի մօտ եղած Եանշաղ գիւղն, որոց մէջ բնակում են մահմեդականք, բայց եկեղեցիներն մնում են դեռ կանգուն»[859]:

16–17-րդ դարերում հայկական լեռնաշխարհը դարձել էր թուրք-պարսկական պատերազմների թատերաբեմ: Այդ արհավիրքի տարիներին Հին Չափարի հայությունը նույնպես լքել է իր բնակավայրը: 17-րդ դարի վերջերին գյուղն արդեն դատարկ էր:

12-րդ դարում կառուցված Կարմիր քարի եկեղեցու շրջակայքում՝ հին Չափարից 500 մ հեռավորության վրա, 19-րդ դարի սկզբներից սկսեց ձևավորվել ներկայիս Չափար գյուղը: Այստեղ հաստատվեցին Բերդաձորի ենթաշրջանի գյուղերից, Ծամձորից և Տաթևից տեղափոխված հայ գյուղացիները:

19-րդ դարի 90-ական թվականներին Չափարում կար 12 տուն, 65 բնակիչ[860]: Բնակչությունը հիմնականում զբաղվում էր ծխախոտագործությամբ և անասնապահությամբ:

1930 թ. գյուղում կազմակերպվել է Ստեփան Շահումյանի անվան կոլտնտեսությունը, որը 1977 թ. վերակազմվել ու դարձել է պետական տնտեսություն: Տնտեսությունն ուներ 400 հա մշակովի հողատարածք և մոտ 200 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ:

Կոլտնտեսությունը և սովխոզը ղեկավարել են Բալախանում Գրիգորյանը, Սուրեն Սարգսյանը, Մովսես Դալլաքյանը, Ռաֆիկ Ստեփանյանը, Ջավեն Գրիգորյանը, Անուշավան Մարտիրոսյանը, Անուշավան Մկրտչյանը, Գարիկ Ասրյանը, Սերժիկ Գրիգորյանը, Գագիկ Սարգսյանը, Վարդան Մկրտչյանը:

[857] Հայկունի, նշվ. աշխ., էջ 69:

[858] Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 203:

[859] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 265:

[860] Մակ. արք. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ դրացիք, Արցախ, էջ 265:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 82 մարդ, զոհվել՝ 43-ը, որոնց հիշատակին կանգնեցվել է հուշարձան:

Արցախյան գոյամարտին մասնակցել է համարյա ողջ գյուղը: Ամեն մեկը յուրովի իր լուման էր դրել ազգանվեր շարժմանը: Գյուղում ստեղծվել է ինքնապաշտպանական ջոկատ՝ Վովիկ Գրիգորյանի գլխավորությամբ:

Մարտական գործողությունների ընթացքում 26 հոգի զոհվել են: Նրանցից 2 հոգի՝ Վլադիմիր Սարգսյանը և Հրայր Դավթյանը, հետմահու արժանացել են ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի:

1992 թ. հունիսին գյուղի բնակչությունը բռնագաղթի ենթարկվեց: 1993 թ. գյուղի ազատագրվելուց հետո Չափար վերադարձավ բնակչության մեծ մասը և ձեռնամուխ եղավ հայրենի բնակավայրի վերականգնմանն ու շենացմանը: Այդ հարցում մեծ օժանդակություն է ցուցաբերել ծննդով Չափարից բարերար Վարուժան Գրիգորյանը:

Մինչև խորհրդային կարգերի հաստատվելը Սարգիս վարժապետը Չափարի երեխաներին իրենց տներում կարդալ և գրել էր սովորեցնում: 1934 թ. կառուցվել է գյուղի քառամյա դպրոցը: 1937 թ. այն յոթնամյակի կարգավիճակ է ստացել: 1956–57 ուսումնական տարվանից գյուղում գործել է միջնակարգ դպրոց:

1960-ական թվականներին դպրոցում սովորում էր 250–270 աշակերտ:

2014 թ. սեպտեմբերի 1-ին շահագործման է հանձնվել դպրոցի նոր շենքը: 2018 թ. տվյալներով դպրոցում սովորում էր 66 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ:

Չափարի դպրոցի տնօրեններ են եղել Լևոն Հակոբյանը, Գարեգին Մկրտչյանը, Մակիչ Մակյանը, Համբարձում Լալայանը, Վաղարշակ Աղաբեկյանը, Վլաստ Սարգսյանը, Նիկոլայ Սաղյանը, Եփրաքսյա Մակյանը, Նիկոլայ Սաղյանը, Իրինա Սևումյանը:

Չափարի դպրոցի շրջանավարտներ են ԽՍՀՄ հերոս Միշա Սաղյանը և քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ իսկական անդամ՝ Աշոտ Սաղյանը:

Չափար գյուղում և նրա շրջակայքում պահպանվել են 66 պատմաճարտարապետական հուշարձաններ: Դրանցից նշանավոր են՝ Հակառակաբերդ ամրոցը (12–13-րդ դարեր), Հակառակաբերդ սրբատեղին (12–13-րդ դարեր), Հակառակաբերդ ջրամբարը (12–13-րդ դարեր), Սուրբեն դյուզ գյուղատեղին (11–13-րդ դարեր), Հին Չափար կամ Հին շեն գյուղատեղին (12–17-րդ դարեր), Հին Չափարի եկեղեցին (16-րդ դար), Սուբ Մինաս բնակատեղին (9–13-րդ դարեր), Սուբ Մինաս սրբատեղին (11–12-րդ դարեր), Ճանջանոց գերեզմանոցը (9–13-րդ դարեր), Սիբիրդարա գերեզմանոցը (13–20-րդ դարեր), ինչպես նաև 12–17-րդ դարերի բազմաթիվ խաչքարեր:

Համայնքի տարածքում առկա են թվով 20 աղբյուրներ՝ Միրզայի, Շուռուղեն, Ավագեն, Խաչուն, Պլպլանեն, Ֆարաղեին, Վլյաթեն, Էրմուն, Քոռ, Շորշոր, Քյոհնա շենին,

Հրձարկեն, Յեթվանանց, Թիմբանեն, Տիգրանեն, Վարուժեն, Օսեփին, Դյուդիջլիրով, Թթու ջուր և Խաչաղբյուր:

Գյուղի նշանավոր հանդամասերն են Շիրխանեն տափը, Սաղունց թումբը, Թյունուն տափը, Շիրինեն տափը, Տանձուտը, Հրրբեղանց տափերը, Կրուքանց տափը, Սարինգյուլեն բաղը, Դերին տափը, Սուրկատեղը, Համփուն յամաջը, Կալերը, Գյոլեն ծորը, Մալուն տափը, Ապոր տափը:

Չափարի նշանավոր ազգատոհմերն են Քիսպարանք (Գասպարյաններ), Վրսկանանք (Ոսկանյաններ), Էրմունք (Հակոբյաններ), Իսունք (Սևումյաններ), որոնք ծագումով Սյունիքի Տեղ գյուղից են, Յեթքանունք (Սարգսյաններ), Աղքատանք (Սարգսյաններ), Միրզախանանք (Դանիելյաններ), Խութանք (Դանիելյաններ), Աղաջանանք (Մուրադյաններ)՝ Բերդաձորից, Թամրազյաններ (Եփրեմյաններ)՝ Իրանից, Դավթյանները՝ Հարարից, Մկրտչյանները՝ Վերին Հոռաթաղից, Մկրտիչները՝ Բաքվից:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները հասանելի են բնակչությանը:

Համայնքում գործում են գյուղապետարան, բուժկետ, դպրոց, մանկապարտեզ, մարզադաշտ, հանդիսությունների սրահ, առևտրի 2 օբյեկտներ:

Չափարում 19-րդ դարի 90-ական թվականներին կար 12 տուն, 65 բնակիչ, 1970 թ.՝ 177 տուն, 686 բնակիչ, 1987 թ.՝ 188 տուն, 587 բնակիչ,[861] 2018 թ.՝ 107 տուն 356 բնակիչ[862]: Նրանք հիմնականում զբաղվում են անասնապահությամբ, հողագործությամբ, մեղվաբուծությամբ:

ՉԼԴՐԱՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսարևելյան հատվածում՝ Մարտակերտի շրջանում՝ նախկին Խաչեն գավառում: Չլդրանը տեղաբաշխված է Խաչենագետի և Թարթառ գետի արանքում: Դիրքը բարձրադիր է, անտառապատ, գեղատեսիլ, կլիման՝ մեղմ:

Ներկայիս գյուղը սկսել է կառուցվել 1905 թվականից: Գյուղի շրջակայքի թռուցիկ ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ այդ հատվածում միջին միջնադարում հայկական գյուղեր են եղել: 12–16-րդ դարերում Չլդրանի շրջակայքում պահպանվել են Սևաքարեր, Հնձախոտ, Ըխպըրքանք, Բրաթա հող գյուղատեղիների, գերեզմանոցների մնացորդները: Խաչքարերից մեկը թվագրված է՝ 1151:

Գյուղի տարածքում տեսանելի են Ք. ա. 2–1-ին հազարամյակների դամբարանաբլուրները:

[861] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 193:

[862] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

Տարածաշրջանի հայությունը դարեր շարունակ պայքարել է օտար նվաճողների դեմ: Ղևոնդ Ալիշանը պատմում է, որ Գանձակի Չոլի անունով թուրք զորավարը 1146 թ. հարձակվել է Արցախի վրա: Չկարողանալով ամրոցներ գրավել նա ավերել է բնակավայրերը և Դադի վանքի համալիրը[863]:

Ավանդությունը պատմում է, որ Լենկ-Թեմուրի հրոսակախմբերը հասել են մինչև «Չլդրանա տափ» կոչված տեղամասը: Մեկ այլ տեղեկության համաձայն՝ 16-րդ դարում Արևելյան Հայաստանի գավառները թուրքական և պարսկական զորքերի ոտքի կոխան էին դարձել: 1514 թ. Արևմտյան Հայաստանի Չալդրան գյուղի մոտ պարսկական և թուրքական զորքերի միջև տեղի է ունեցել դաժան ճակատամարտ: Առավել շատ տուժել են տեղացի հայ բնակիչները, որոնք ցիրուցան են եղել ու նոր բնակության վայրեր են ընտրել Արևելյան Հայաստանի և Վրաստանի տարածքները: Ըստ այդ զրույցի՝ Չալդրանի որոշ ընտանիքներ էլ հաստատվել են Խաչենում, տվյալ պարագայում՝ ներկայիս Չլդրան գյուղի տեղում, և որպեսզի մոռացության չտրվի իրենց ծննդավայրի անունը, բնակավայրը կոչել են Չալդրան, իսկ հետագայում՝ դարերի ընթացքում, իբր Չալդրանը հնչյունափոխվել դարձել է Չլդրան[864]:

Դարերի ընթացքում նախկին Չլդրանը և հարակից բնակավայրերը, լինելով Ջրաբերդ Խաչենի հետ կապող առանցքային կետում, քոչվոր ցեղերի կողմից ասպատակության են ենթարկվել և բնակչության մեծ մասը ստիպված հեռացել է ավելի ապահով վայրեր:

Ցարական տիրապետության շրջանում Արցախն ապրում էր համեմատաբար խաղաղ ժամանակներ: Չլդրանի գյուղատնտեսական նշանակության հողերը, մանավանդ արոտավայրերը, սկսեցին օգտագործել հարևան գյուղերի բնակիչները:

20-րդ դարի սկզբին Առաջաձորի անասնապահները ընտանիքներով սկսեցին հաստատվել Չլդրանի տարածքում: Մինչև 1930-ական թվականների սկիզբը բնակավայրի անունը որևէ փաստաթղթի մեջ չի հիշատակվում: Բնակչության համապատասխան քանակություն հավաքվելուց հետո Չլդրանը իր նախկին անունով բնակավայրի կարգավիճակ ստացավ:

Գյուղն իր կայացման սկզբից առայսօր բաժանված է 6 առանձին թաղամասերի՝ Վրցկալեր, Քյուրքորեգ, Փերին (Վերին) գոմեր, Խոր ձոր, Փոքր Չլդրան, Ղուլունց թաղ:

1920-30-ական թվականներին գյուղի համար պետական և տնտեսական կառույցների ձևավորման ու կայացման ժամանակաշրջան է եղել: Ստեղծվել է գյուղական խորհուրդը, իսկ 1929 թ.՝ Կիրովի անվան կոլտնտեսությունը:

Կոլեկտիվացումից դժգոհ բնակիչների մի մասը ստիպված հեռացավ գյուղից: Հայրենական մեծ պատերազմից հետո կոլտնտեսությունը կազմակերպա-տնտեսա-

[863] Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 386; «Բազմավեպ», հ. 1-4, 1988, էջ 269:
[864] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

կան տեսանկյունից համեմատաբար կայացավ: Սակայն 1950-ական թվականներին կոլտնտեսության խոշորացման պատճառով նոր կորուստներ ունեցավ: 1977 թ. Չլդրանի, Պողոսագոմերի, Ղազարահողերի, Դրմբոնի, Կոճողոտի, Մեհմանայի, Բաշ Գյունեփայայի կոլտնտեսությունների հիման վրա ձևավորվեց մեկ միասնական խորհտնտեսություն: Կազմակերպական այս ձևն իրեն չարդարացրեց և 1984 թ. Դրմբոն ու Կոճողոտ գյուղերը բաժանվում են միացյալ խորհտնտեսությունից և իրար հետ կազմում առանձին կոլտնտեսություն: Շուտով այդ խորհտնտեսությունն էլ լուծարվում է, և ստեղծվում են առանձին կոլտնտեսություններ: Տնտեսվարման այդ ձևը հողերի սեփականաշնորհման հետևանքով քայքայվեց 1998 թ.:

1929-1994 թթ. կոլտնտեսության նախագահներ են եղել Մկրտիչ Առստամյանը, Ալեքսան Հովհաննիսյանը, Հակոբ Միրումյանը, Սողոմոն Սողոմոնյանը, Արշակ Հարությունյանը, Ռուբեն Սարգսյանը, Ղազար Չիլինգարյանը, Լևոն Սահակյանը, Գաբրիել Բալայանը, Վահան Ղուլյանը, Արամայիս Առուշանյանը, Մռավ Հարությունյանը, Ռոմա Ադամյանը, Կոստյա Բաղախովը, Ռաշիդ (Գևորգ) Ղալայանը, Համլետ Դանիելյանը, Սերգեյ Արզումանյանը:

Հայրենական մեծ պատերազմին Չլդրանից մասնակցել են 153 բնակիչներ, նրանցից զոհվել են 85-ը, որոնց հիշատակին գյուղում կանգնեցված է հուշարձան:

Արցախյան ազատագրական շարժման և պատերազմի տարիներին գյուղն ինչպես հերոսական էջեր, այնպես էլ զրկանքներ ունեցավ:

1990-1991 թթ. Չլդրանում կազմավորվել է կամավորական ջոկատ: 1992 թ. սեպտեմբերին ադրբեջանցիներին հաջողվեց գրավել Չլդրանը: Գյուղի խաղաղ բնակչությունը ստիպված ապաստանեց ԱՀ և ՀՀ տարբեր բնակավայրերում: 1993 թ. փետրվարի 5-ին գյուղի ազատագրվելուց հետո, Չլդրանի տեղահանված բնակիչների մեծամասնությունը վերադարձավ հայրենի օջախ և սկսեց վերականգնել ավերվածն ու հրդեհվածը:

Արցախյան պատերազմի ժամանակ ռազմական գործողություններին մասնակցել են 76 չլդրանցիներ: Նրանցից 22-ը զոհվել են: Անուր Գրիգորյանը և Վիգեն Սողոմոնյանը պարգևատրվել են ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

1993-1994 թթ., որպես ապահով վայր, Չլդրանում գործել են Մարտակերտի շրջանային հիվանդանոցն ու զինվորական հոսպիտալը:

1928 թ. Չլդրանում բացվել է տարրական դպրոց: Սկզբում դպրոցը տեղակայված էր մասնավոր տներում: Աշակերտների թվակազմի ավելացման պատճառով 1930 թ. գյուղի կենտրոնում կառուցվեց 4 դասասենյակներից բաղկացած դպրոց: 1932 թ. դպրոցը յոթանմյակի կարգավիճակ ստացավ: 1930-ական թվականների երկրորդ կեսին կոլտնտեսության միջոցներով նոր դպրոցական շենք կառուցվեց: 1955-1960 թթ. դպրոցի աշակերտների թիվն անցնում էր 230-ից: Նորից դպրոցական շենք կառուցվեց: Դպրոցը միջնակարգի կարգավիճակ ստացավ: 1960 թ. հարևան

գյուղերից եկած աշակերտների համար դպրոցական շենքին կից գիշերօթիկ կազմակերպվեց:

1992 թ. ադրբեջանցիները հրկիզել են Չլդրանի միջնակարգ դպրոցի շենքը: Գյուղի ազատագրումից հետո երեխաների ուսուցման գործը կազմակերպվել է կոլտնտեսության շենքում: Սկզբում սովորում էր 60 աշակերտ, և դասավանդում՝ 16 ուսուցիչ:

2002 թ. շվեյցարահայ բարերար Տիգրան Իզմիրլյանի միջոցներով դպրոցական նոր շենք է կառուցվել:

Դպրոցը 1928 թ. առայսօր տարբեր տարիների ղեկավարել են Աշոտ Բախշիյանը, Արտեմ Ղահրամանյանը, Լևոն Սամվելյանը, Գրիգոր Մանգասարյանը, Վահրամ Գրիգորյանը, Վահան Ղուլյանը, Արամայիս Առուշանյանը, Հովհաննես Հովսեփյանը, Սուրեն Առաքելյանը, Գայանե Սարուխանյանը, Դավիթ Լալայանը, Սամվել Ղուկասյանը:

2018 թ. տվյալներով դպրոցում սովորում էր 70 աշակերտ: Չլդրանի դպրոցում սովորել են գրող Լևոն Ադյանը, ԱՀ առողջապահության նախկին նախարար Ջոյա Լազարյանը:

Չլդրանում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ: Դրանցից առավել հայտնի են Նահատակ եկեղեցին (17-րդ դար), Դադվեր սրբատեղին (9-13-րդ դարեր), Կարմիր եղցի եկեղեցին (16-17-րդ դարեր), Ախպերանքի նահատակ եկեղեցին (17-րդ դարեր), Ամենափրկիչ վանքը (13-17-րդ դարեր):

Չլդրանի տարածքում պահպանվել են 12-17-րդ դարերի բազմաթիվ խաչքարեր:

Իրենցից մեծ հետաքրքրություն են ներկայացնում Չլդրանի քարայրերը, որտեղ նույնիսկ ամռան շոգին պահպանվում են սառցե զանգվածները: Տեղացիները այդ քարայրերին անվանում են Սոնատուն: Նախկինում գյուղի բնակիչներն այդտեղ մթերքներ էին պահում: Ըստ ավանդության՝ այդ սառույցների ջուրը բուժիչ է:

Համայնքի աղբյուրներն են՝ Պերակ ձուր, Ղրմա, Քչալանց, Մանասեն, Աթուլին, Թալիշին, Չառդանց, Ղուլունց, Կարմունջեն, Բըրսեղեն, Հայկազեն, Կրվերեն, Պապեն, Մակին, Գորգին, Կըզկիատ, Սըռնտանա, Թխկոտեն, Ըլբստրակեն, Մըրթպանա, Դովեն, Փոսեն, Նավի:

Գյուղի նշանավոր հանդամասերն են՝ Ջիբեռնին կապ, Ռուշանանց կալեր, Բրաթա հող, Շբարանց թումբ, Ղուգյազանց Աթան տափ, Մըրթպան, Էրգան հող, Հացոտ, Հնձախութ, Մարդունց թումբ, Սև ցեխ, Թևոսի տափ, Արզումանեն խմհատ, Բախճոտ:

Գյուղում բնակվող ազգատոհմերն են Ջուլանք, Միրումանք, Շեկյանք, Սիփարանք, Սեյրանանք, Սարուխանանք, Մսելանք, Չուփուրանք, Ադունք, Աղասանք, Ղուկասանք, Սուղունք, Մարդունք, Տոնունք, Ջատանք, Օհանանք, Ղուլունք:

Խորհրդային տարիներին գյուղում գործել են ակումբ և կապի բաժանմունք: Ակումբին կից գործել են թատերական, սպորտային խմբակներ:

Արցախյան պատերազմից հետո ԱՀ կառավարության և բարերարների համաֆինանսավորմամբ կառուցվել են նոր դպրոց և համայնքային կենտրոն: 2010 թ. բնակավայրը գազաֆիկացվել է, իսկ հոսանքը Չլդրան էր հասել դեռ 1964 թ.: Ջրամատակարարումը իրականացվում է ինքնահոս ձևով: Գյուղում գործում են բուժկետ, փայտամշակման արհեստանոց, առևտրի 9 օբյեկտ:

Ջոհված ազատամարտիկների հիշատակին կառուցվել է հուշարձան:

1970 թ. Չլդրանում կար 87 տուն, 366 բնակիչ, 1987 թ.՝ 173 տուն, 476 բնակիչ,[865] 2018 թ.՝ 119 տուն, 533 բնակիչ[866]:

Գյուղը, գտնվելով Ստեփանակերտ–Քարվաճառ–Վարդենիս–Երևան մայրուղու վրա, զարգացման նոր հեռանկարներ ունի:

Գյուղի ազգաբնակչությունը հիմնականում աշխատում է գյուղատնտեսության ոլորտում, անտառտնտեսությունում և «Բեյզ Մեթըլս» ընկերությունում:

ՊՈՂՈՍԱԳՈՄԵՐ

Բնակավայրը գտնվում է ԱՀ հյուսիսային հատվածում՝ Թարթառ գետի միջին հոսանքի աջ ափին՝ Սարսանգի ջրամբարի աջ մասի մի թեք հարթակում՝ Յոթնաղբյուրի լեռնաշղթայի ստորոտում:

Պողոսագոմերի հարևանությամբ են գտնվում Պեմեն շինատեղը, Քոհնա շինատեղը, Մանդուռ, Թխախոտ գյուղատեղիները: Ասել կուզի, որ միջնադարից սկսած՝ նշված վայրերում գոյություն են ունեցել հայկական բնակավայրեր: Այդ բնակավայրերը, միջին միջնադարում քոչվոր ցեղերի ձնշումների տակ, հայաթափվել են: Վերոհիշյալ տարածքները եղել են Գանձասարի կաթողիկոսության իրավասության տակ:

1747 թ. Պողոս Մելիք-Եգանյան անուն ազգանունով մի առաջնորդի տեղափոխվում է այդ ազատ տարածքները և զբաղվում գյուղատնտեսությամբ: Նրա անունով էլ բնակավայրը կոչվում է Պողոսագոմեր: Շուտով հարևան գյուղերից նոր ընտանիքներ հիմնավորվեցին վերոհիշյալ բնակավայրում և այդ տարածքները նորից հայաշունչ կերպարանք ստացան:

Տեղի ազգաբնակչությունը, զբաղվելով անասնապահությամբ և հողագործությամբ, ապրում էր առօրյա հոգսերով:

Խորհրդային տարիներին կոլտնտեսային կարգեր հաստատվեցին նաև Պողոսագոմերում: 1930 թ. կազմակերպվեց կոլեկտիվ տնտեսություն: 1978 թ. Չլդրանի, Դրմբոնի, Պողոսագոմերի և Ղազարահողերի կոլտնտեսությունների հիմքի վրա ստեղծվում է պետական նոր տնտեսություն, որը գոյատևում է մինչև 1980 թ.: Սով-

[865] Մելքումյան Ս., նշվ.աշխ. էջ 174:

[866] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

խոզի լուծարվելուց հետո նորից ստեղծվեց Պողոսագոմերի կոլտնտեսությունը, որը գոյատևեց մինչև հողերի մասնավորեցումը:

Կոլտնտեսությունը և սովխոզը 1930–1990 թթ. ղեկավարել են Ներսես Առուշանյանը, Արշակ Հարությունյանը, Ռուբեն Սարգսյանը, Ղազար Չիլինգարյանը, Լևոն Սահակյանը, Գաբրիել Բալայանը, Վահան Ղուլյանը, Արամայիս Առուշանյանը, Մռավ Հարությունյանը, Հովհաննես Գրիգորյանը, Ռոմա Ադամյանը:

Գյուղից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 42 մարդ, զոհվել է 19-ը:

Արցախյան ազատագրական պատերազմի տարիներին Վ. Բեդյանի հրամանատարությամբ ստեղծվել է կամավորական ջոկատ:

1992 թ. հունիսի 3-ին գյուղը գինակալվել է թշնամու կողմից: 1993 թ. փետրվարի 5-ին հայկական զորամասերի ձնշման տակ գյուղն ազատագրվել է:

Մարտական գործողություններին Պողոսագոմերից մասնակցել 47 բնակիչ, նրանցից 11-ը՝ Արայիկ Առստամյանը, Սուրիկ Բեդյանը, Սաշիկ Բեդյանը, Արտուր Ադյանը, Օլեգ Բեդյանը, Յուրա Առստամյանը, Կիմա Աբրահամյանը, Կաղլեն Աբրահամյանը, Սամվել Ադյանը, Կոլյա Առստամյանը, Ալբերտ Աբրահամյանը զոհվել են: ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով պարգևատրվել է Արամայիս Առստամյանը, «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով՝ Վիտալի Բեդյանը, հետմահու՝ Ալբերտ Աբրահամյանը:

Մինչև 1935 թ. Պողոսագոմերի երեխաները հաճախում էին հարևան գյուղերի դպրոցները: 1935 թ. գյուղում բացվում է եռամյա դպրոց, որտեղ 20 աշակերտ էր սովորում: 1936 թ. դպրոցն արդեն քառամյա էր: 1971–1972 ուսումնական տարում Պողոսագոմերում դպրոցի շենք է կառուցվում և ուսումնական հաստատությունը ութամյայի կարգավիճակ է ստանում: 1991–1992 ուսումնական տարվանից դպրոցը դարձավ միջնակարգ: 2018–2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 39 աշակերտ, և դասավանդում՝ 14 ուսուցիչ:

Դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Սուրեն Վերդյանը, Ելենա Առստամյանը, Կարո Ադյանը, Գուրգեն Սարգսյանը, Սերոբ Սաղյանը, Էվելինա Գրիգորյանը, Նաիրա Դանիելյանը, Ստելա Առստամյանը:

Պողոսագոմերում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ 12–13-րդ դարերի Սբ. Ամենափրկիչ վանքը՝ կառուցված Հասան-Ջալալյանների կողմից, Պեմեն եկեղեցին, մատուռը, 10–13-րդ դարերի արձանագիր խաչքարեր, տապանաքարեր:

Գյուղի տարածքում գտնվում են Քառ, Կալին, Սակին անցեն, Շնխպիրին ձորեն, Գյուլուլ, Սև ցխեն, Բաջին, Դյովեն, Շկոլեն, Գյոլեն, Սառնատան աղբյուրները:

Պողոսագոմերի նշանավոր հանդամասերն են՝ Կուքին տափը, Ներքին խմհատը, Խազար քաշածը, Ալեքսանեն տափը, Բախտին խմհատը, Պուլոր գյունեն, Քոհնա շինատեղը, Ուղտաքարեն տափը, Սակին անցը, Պապեն ծյուվատեղը, Սև ցեխը, Բաղերը, Շալ քարը, Նուվավուր աղբյուրը, Գյունե պատը, Մանդուռը, Բաբան շինատեղը,

Խոտ տեղը, Մոսես ամուն տեղը, Քրիատեն գյունեն, Շուղին փոսը, Բուրջալին, Դիքավարը, Փիրմին առաչը, Պլյուխոտը:

Գյուղի նշանավոր ազգատոհմերն են՝ Ըթրջանանք, Մելունք, Ղուգազանք, Բեգունք, Ըվանանք, Ըսլանանք, Չփուռանք, Ադունք, Կրբեդանք, Ըպրրհամանք, Թնամանք:

Պողոսագոմերում գործում են գյուղապետարան, բուժկետ, դպրոց, հանդիսությունների սրահ, առևտրի 2 կետ:

Պողոսագոմերում 1970 թ. կար 99 տուն, 419 բնակիչ, 1979 թ.՝ 93 տուն, 332 բնակիչ, 1987 թ.՝ 92 տուն, 334 բնակիչ[867], 2015 թ.՝ 55 տուն, 173 բնակիչ[868], 2018 թ.՝ 49 տուն, 178 բնակիչ[869]: Նրանք հիմնականում աշխատում են գյուղատնտեսության ոլորտում և «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ում:

ՂԱԶԱՐԱՀՈՂ

Բնակավայրը գտնվում է ԱՀ հյուսիսային հատվածում՝ Մռով սարի դեմ դիմաց՝ Թարթառ գետի վրա կառուցված Սարսանգի ջրամբարից ոչ շատ մեծ հեռավորության վրա: Գյուղի տարածքը նախկինում ներառված էր Արցախի Խաչեն գավառում:

Ղազարահողերի հարևանությամբ են գտնվում Պեմեն, Քոհնա, Մանդուռ, Թխախոտ գյուղատեղիները:

Գանձասարի վանքի տաճարի հյուսիսային պատի կենտրոնական մասում ՋՂԵ (1546 թ.) թվագրությամբ հիշատակված է Կասրայ կալվածքի մասին[870]: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուշ միջնադարում քննարկվող տարածաշրջանի լքված բնակավայրերը և նրանց շրջակա հողերը դարձել են Գանձասարի սեփականությունը, կարելի է ենթադրել, որ վերոհիշյալ արձանագրության մեջ մատնանշված կալվածքը նույն Ղազարահողն է:

Ավանդությունը պատմում է, որ 1700 թ. Առաջաձորից Ղազար անունով մի գյուղացի տեղափոխվում և հաստատվում է ներկայիս Ղազարահողի տարածքում: Եվ այդպես մի ժամանակ լքված բնակավայրի տեղը նորն է հիմնվում: 19-րդ դարի վերջերին կառուցվել է գյուղի Սբ. Ամենափրկիչ եկեղեցին:

Խորհրդային տարիներին՝ 1930 թ., կազմակերպվեց Ղազարահողի կոլեկտիվ տնտեսությունը: 1978 թ. Չլդրանի, Դրմբոնի, Պողոսագոմերի և Ղազարահողի կոլտնտեսությունների հիմքի վրա ստեղծվում է պետական նոր տնտեսություն, որը գոյատևում է ընդամենը երկու տարի՝ մինչև 1980 թ.: Սովխոզի լուծարումից հետո նորից ստեղծվեց կոլտնտեսություն:

[867] Մելքումյան Ս., նշվ աշխ., էջ 175–176:
[868] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[869] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:
[870] Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 46; Մակար եպս. Բարխուտարեանց, Արցախ, էջ 178:

Հայրենական մեծ պատերազմին Ղազարահողից մասնակցել է 31 մարդ, որից զոհվել է 16-ը: Ղազարահողի բնակչությունը մասնակցել է նաև արցախահայության ազատագրական պատերազմին:

1992 թ. հունիսի 3-ին գյուղը գավթվել է ադրբեջանցիների կողմից: 1993 թ. փետրվարի 5-ին հայկական զորամասերի ճնշման տակ գյուղն ազատագրվել է: Հետպատերազմյան տարիներին, ինչպես պետության, այնպես էլ բարերարների օժանդակությամբ գյուղը վերականգնվել է: Հայրենական մեծ և Արցախյան պատերազմի ժամանակ Պողոսագոմերից և Ղազարահողից զոհվածների հիշատակին Սերգեյ Բալայանի և մի խումբ ռուսաստանաբնակ բարերարների կողմից Ղազարահողում հուշարձան է կառուցվել:

Գյուղը գազաֆիկացվել է: 2011 թ. «Համահայկական» հիմնադրամի միջոցներով կառուցվել է խմելու ջրի նոր ջրագիծ: Նույն հիմնադրամի միջոցով վերանորոգվել է գյուղի բուժկետը, իսկ հանդիսությունների սրահը հիմնանորոգվել է Կարո Աղյանի կողմից:

Նախկինում Ղազարահողում դպրոց էր գործում: Ներկայումս գյուղի դպրոցահասակ երեխաները սովորում են Պողոսագոմերում:

Ղազարահողը մտնում է Պողոսագոմեր համայնքի վարչական տարածքի մեջ:

Ղազարահողում նշանավոր են Լլախկի, Սիման, Նուվավուր, Ըլբըստրակեն աղբյուրները:

Ղազարահողի հայտնի հանդամասերն են՝ Մաչի տափը, Չխմխքարեն ծորը, Կրբեդանց տափը, Ադունց տափը, Խջմուտեղեն ծորը, Չփուռանց տափը, Ղուվալանց տեղը, Սիման տեղը, Շինատեղը, Ըղբալանց յաստան, Թինամանց յաստան, Սիրկիվլյոտը:

1987 թ. տվյալներով Ղազարահողում կար 35 տուն, 70 բնակիչ[871], 2015 թ.՝ 18 տուն, 60 բնակիչ[872], 2018 թ.՝ 19 տուն, 66 բնակիչ[873]: Նրանք հիմնականում զբաղվում են գյուղատնտեսությամբ և աշխատում «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ում:

ՎԱՂՈՒՀԱՍ

Գյուղը գտնվում է ԱՀ Մարտակերտի շրջանի հյուսիսարևմտյան մասում՝ նախկին Խաչեն գավառում՝ Թարթառ գետի աջ ափին՝ Ղարաբաղի լեռնաշղթայի Հակառակաբերդի լեռնաճյուղի անտառապատ գեղատեսիլ լանջին:

ԱՀ այս հին և նշանավոր բնակավայրը կարևոր դերակատարություն է ունեցել Արցախի ընդհանրական պատմության մեջ: Վաղուհասը, գտնվելով Պարտավ-Դվին

[871] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 175:
[872] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[873] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

ճանապարհը հսկող հանգուցային կետերից մեկում, զարգացման համար նպաստավոր պայմաններ ուներ:

Գյուղի շրջակայքում պահպանվել են Ք. ա. 1-ին հազարամյակից մնացած դամբարանադաշտեր, հին գյուղատեղիների, գերեզմանոցների, մատուռների, եկեղեցիների ավերակներ և մնացորդներ:

Դրանք լուռ վկաներն են այն բազմաբովանդակ և հագեցած կյանքի, որով հայ մարդը ապրել է դրախտային այս վայրերում:

Ներկայիս Վաղուհաս գյուղից դեպի հարավ-արևմուտք՝ 1 կմ հեռավորության վրա գտնվում են հին եկեղեցու և գյուղատեղիի ավերակներ, որը տեղացիներն անվանում են Հին Վաղուհաս: Մակար Բարխուդարյանն ասում է, որ այդտեղ կա «ձոխ հանգստարան և մի քարեայ բարձր խաչ, որի երկարութիւնն աւելի է 3 մետրից»[874]:

Վաղուհասից ոչ շատ մեծ հեռավորության վրա գտնվող նշանավոր Խաթրավանքի համալիրից ներքև պահպանվում են ավերակ եկեղեցիներ, մատուռներ, գերեզմանոցներ, «Ջոխտակ եղցի, Վարդանայ գիւղ, Մըրջման շինատեղ»-ը[875]: Խաթրավանքի արձանագրություններից մեկում հետաքրքիր տեղեկություն կա նաև Վաղուհասի մասին. «Շնորհիւ Քրիստոսի և Ասփե դուստր արքայաշուք իշխանին Տարսայիձի, թագաւարն մաւրն իմոյ Մինա Խաթունին, նպաստ եղեալ քրիստոսապսակ գլխոյ իմոյ մեծափառ իշխանին Գրիգորի ի շինութեան լուսանուէր սուրբ եկեղեցւոյս, կամեցայ ի ձեռն քահանայապետին մեծի տեառն Յովհաննիսի՝ զիմ յարդար ընչից կանգնեցի բեմի սեղան ի գենմանն Քրիստոսի, զի յամենայն կիրակիէ և շաբաթ տաւն ծննդեան և տեառն ընդառաջին, զատկին, զվարդավառին, Աստուածածնին և Սուրբ խաչին ինձ կատարի պատարագ զամեն եկեղեցիքս, որ և տիի զմեր Խաս հողն...»:[876]

Ամենայն հավանականությամբ արձանագրության մեջ տեղ գտած «Խաս հողն» արտահայտությունը վերաբերում է Վաղուհասին, որը նշանակում է նաև սուրբ հող:

Քանի որ Թարթառի ձախ և աջ ափերին կառուցված երկու նշանավոր վանական համալիրները անմիջապես կապված են Քրիստոսի երկու աշակերտների՝ Դադիի և Խադիի անունների հետ, ուստի այդ տարածքների բնակավայրերն այս կամ այն ձևով կապված են եղել այդ սրբերի հետ:

Ինչպես Վաղուհասը, այնպես էլ հարակից բնակավայրերը մոնղոլական արշավանքների ժամանակ ավերվել են: Հետագա դարերում Վաղուհասի բնակիչները, վերականգնելով իրենց օջախները, օրհասական պայքար են մղել թուրքերի, պարսիկների և Հյուսիսային Կովկասի խառնամբոխ լեռնականների դեմ, որոնք ամեն կերպ ցանկանում էին տիրանալ հայոց երկրի այս հատվածին:

[874] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 260:
[875] Նույն տեղում, էջ 262:
[876] Սարգիս արք.Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 181:

Թարթառի ափամերձ վայրերի հայկական բնակավայրերի համար 18-րդ դարի երկրորդ կեսից մի օրհասական շրջան սկսվեց: Դա կապված էր քրդական ցեղերի թափանցումների հետ, որոնք օգտվելով Ղարաբաղի Իբրահիմ խանի հովանավորությունից, հայությանը սկսեցին դուրս մղել պատմական Քարվաճառ-Վայկունիքից: Այդ քայլով Իբրահիմ խանը փորձում էր իրարից կտրել Արցախի հարավային և հյուսիսային գավառները: Դա մասամբ նրան հաջողվեց: Վաղուհասի և հարակից բնակավայրերի հայությունը տոկաց և պաշտպանեց ռազմավարական նշանակության հայրենի տարածքները:

Հին Վաղուհասի բնակիչները մոտավորապես 1775 թ. տեղափոխվեցին և Հակառակաբերդի հարավարևելյան անտառապատ լանջի հարթավայրում ստեղծեցին նոր բնակավայր:

19-րդ դարի 90-ական թվականներին այստեղ կար 40 տուն, 322 բնակիչ, 1970 թ.՝ 266 տուն, 1562 բնակիչ, 1979 թ.՝ 288 տուն, 1340 բնակիչ, 1987 թ.՝ 320 տուն, 1492 բնակիչ:[877]

1929 թ.՝ Վաղուհասում խորհրդային կարգեր հաստատելուց հետո, ձևավորվել էր Կագանովիչի անվան կոլտնտեսությունը: Մինչև 1977 թ. կոլտնտեսությունը ղեկավարել են Բախշի Նարիմանյանը, Բաղդասար Սկյանը, Բախշի Հակոբյանը, Սուրեն Միքայելյանը, Պետրոս Պետրոսյանը, Ջինավոր Շիրինյանը, Աշոտ Միքայելյանը, Հայկազ Վերդիյանը, Հովհաննես Առուստամյանը, Գարիկ Հակոբյանը:

1977 թ. հունվարի 1-ին կոլտնտեսությունը վերակազմակերպվել է Ս. Սպանդարյանի անվան խորհտնտեսության: Այն իր մեջ ներառում էր Վաղուհասի, Վերին Հոռաթաղի և Հարությունագոմերի տնտեսությունները: Խորհտնտեսության տնօրեններ են աշխատել Ջավեն Հարությունյանը, Ջավեն Գրիգորյանը, Վազգեն Իշխանյանը, Բորիկ Ասլանյանը, Ոսկան Օհանյանը, Ռոմա Աղաբեկյանը, Վալերիկ Մանգասարյանը, Հենրիխ Ջաքարյանը, Նինա Վարդանյանը:

Հայրենական մեծ պատերազմին Վաղուհասից մասնակցել են 203 մարդ, զոհվել են՝ 90-ը, որոնց հիշատակին գյուղում կանգնեցված է հուշարձան:

Արցախյան ազատագրական շարժման տարիներին Վաղուհասի հայությունը, գտնվելով քրդաբնակ Քարվաճառի հարևանությամբ և ենթարկվելով ավազակային հարձակումների, նախաձեռնեց հայկական բնակավայրերի պաշտպանության գործը: Գյուղում կազմավորված կամավորական ջոկատի հրամանատարն էր Հայկ Աղաբեկյանը: Հետագայում ջոկատը վերակազմավորվել է վաշտի: Ռազմական գործողությունների ընթացքում, 1992 թ. հունիսի 4-ին, գյուղը բռնազավթվել է թշնամու կողմից: 1993 թ. փետրվարի 12-ին Վաղուհասը նորից ազատագրվեց: Ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին մասնակցել են Վաղուհասի 140-ից ավելի երիտասարդներ, որոնցից 30-ը զոհվել են:

[877] Մելքումյան Ս., նշվ. աշխ, էջ 186:

ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով պարգևատրվել են Սլավիկ Պետրոսյանը, Բորիկ Բախշիյանը: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվել են Գրիշա Աղաջանյանը, Գարիկ Սկյանը և Գրիշա Մուրադյանը:

Պատերազմական գործողությունները ծանր հետևանքներ ունեցան գյուղի համար:

Մինչև պատերազմը Վաղուհասը ունեցել է 1492 բնակիչ, 2005 թ.՝ 640 բնակիչ[878]:

Վաղուհասի բնակչության համար կրթությունը և գիտությունը միշտ էլ առաջնային նշանակություն են ունեցել: Միջնադարից սկսած վաղուհասցիների համար կրթական կենտրոնի դերակատարություն է ունեցել Խաթրավանքի վանական համալիրը: Հավանաբար բուն գյուղում գտնվող եկեղեցիները նույնպես լուսավորության օջախներ են եղել: 1873 թ. Վաղուհասում եկեղեցական-ծխական դպրոց էր գործել: 1907-1908 ուսումնական տարում Վաղուհասում բացվել է մեկդասյա երկսեռ դպրոց, որն ուներ 1 ուսուցիչ և 35 աշակերտ: Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և եկեղեցու միջոցներով:[879] 1912 թ. գյուղում գործող մեկդասյա դպրոցը դարձել է երկդասյա:

Խորհրդային կարգեր հաստատելուց հետո Վաղուհասում սկսել է գործել տարրական, 1933 թ.՝ յոթնամյա, իսկ 1941 թ.՝միջնակարգ դպրոց: Կրթական հաստատության տնօրեններ են եղել Արտեմ Սարգսյանը, Լենա Տալյանը, Սեդրակ Խաչյանը, Աշոտ Միքայելյանը, Միշա Միքայելյանը, Կառլեն Մովսիսյանը, Նինա Վարդանյանը, Վանյա Առաքելյանը, Արմինե Մուրադյանը, Նինա Վարդանյանը, Դոնարա Գրիգորյանը, Արմեն Գրիգորյանը:

2012 թ. մայիսի 23-ին գյուղում բացվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի կառուցած դպրոցը:

2015-2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էին 180 աշակերտներ, դասավանդում՝ 26 ուսուցիչներ:

Ներկայումս գյուղում ապրում են Ջաքարյան, Հայրապետյան, Մանգասարյան, Վերդյան, Սկյան, Ղարախանյան գերդաստանների ներկայացուցիչները: Նրանց մի մասը 18 և 19-րդ դարերում Վաղուհաս են տեղափոխվել Գետաշենից, Սյունիքից, Շուշիից:

Վաղուհասում և նրա շրջակայքում պահպանվել են պատմաճարտարապետական հուշարձաններ: Գյուղի կենտրոնում գտնվող 1183 թ. կառուցված Մայրաքաղաք կամ Տիրամայր վանական համալիրի ավերակները վկայում են, որ այն հզոր կառույց է եղել և ունեցել է մատենադարան ու կրթարան:

Գյուղից 9 կմ հյուսիս-արևմուտք պահպանվում է 1204 թ. կառուցված Խաթրավանքը: Այստեղ է գտնվում Վերին Խաչենի և Հաթերքի իշխանական տների տապա-

[878] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[879] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 78:

նատունը: Գյուղից 900 մ դեպի հարավ-արևմուտք պահպանվում է 9–12-րդ դարերի ընթացքում կառուցված Թլենի եկեղեցին: Վաղուհասից 10 կմ դեպի արևմուտք, խոր անտառում, պահպանվում է Վարդանի գոմեր հին գյուղի կիսավեր եկեղեցին:

Գյուղի հարևանությամբ գտնվում է 1224 թ. կառուցված Կարմիր վանք վանական համալիրը:

Վաղուհասի արևմտյան եզրին է գտնվում Եղցու թալա հին գյուղատեղիի ավերակ եկեղեցին:

Ծագումով վաղուհասցի ռուսաստանաբնակ բարերար Գրիգորի Հայրապետյանի միջոցներով 2007 թվականից մինչև 2012 թվականը կառուցվել է Սուրբ Աստվածածնի եկեղեցին, որը 2012 թ. փոտրվարի 19-ին օծվել է Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի ձեռամբ:

Վաղուհասից 1 կմ հյուսիս գտնվում են 12–13-րդ դարերի և 16–17-րդ դարերի կամուրջներ: Վաղուհասում և մերձակա տարածքներում պահպանվում են 9–13-րդ դարերի բազմաթիվ խաչքարեր: Ընդհանուր առմամբ տարածքում հաշվառված է 125 հուշարձան:

Վաղուհասի նշանավոր հանդամասերն են՝ Կուլի կեծան, Տանձուտ յաստան, Ջկոոտ թալա, Թլենի, Մտաղես, Ղուզե, Շինատեղ, Էրգան գյունե, Ըլխաց:

Համայնքի տարածքում առկա են բազմաթիվ աղբյուրներ՝ Կուքին, Հաթումեն յաթաղի, Կտվենին տակեն, Շուղկաթ, Շենին ձուր, Սալաթին, Սևունց թաղեն, Ներքին Ուկահին, Տակեն, Ջկոոտ թլեն, Քոռ, Պըլըպուղուն, Վանին, Ցորտ, Անուշ, Սրականց տափեն, Թռուսխեն, Խաչունց, Շաշմա, Պեխե, Դնգդնգան, Կուքուն, Շահրամանեն, Եփրեմեն, Շոր, Շենեն, Բաջին, Ճինջի քարեն, Իշխանեն, Լալախկեն:

Վաղուհասում ներկայումս գործում են գյուղապետարանը, մշակույթի տունը, դպրոցը, մանկապարտեզը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը:

Վաղուհասում 2018 թ. կար 148 տուն, 658 բնակիչ[880]: Բնակչությունը հիմնականում աշխատում է գյուղատնտեսության ասպարեզում և Դրմբոնի պղնձի-ոսկու հանքում:

ՎԱՆՔ

Գյուղը գտնվում է Մարտակերտի շրջանի գեղատեսիլ մի անկյունում՝ Խաչեն գետի վերին հոսանքի ձախ ափին: Ընդհանուր առմամբ Խաչեն գետի վերին հոսանքի հարակից տարածքները, հնագույն ժամանակներից սկսած, խիտ բնակեցված են եղել:

[880] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

Դրա մասին են վկայում Ք. ա. 3–1-ին հազարամյակներին վերաբերող դամբարանները և գյուղատեղիների պահպանված մնացորդները:

Գյուղն աղբյուրներում հիշվում է Վանքեն շեն[881], Գանձասար[882], Վանք անուններով:

Նոր և նորագույն շրջանում վերոբերյալ տեղանունը թուրքերը, հարմարեցնելով իրենց լեզվի հնչյուններին, անվանել են Ալվանքլու[883] կամ Վանքլու[884]:

Գյուղն իր անունը ստացել է Գանձասար վանքից, որը գտնվում է գյուղից 1,5–2 կմ հեռավորության վրա: Մինչև 19-րդ դարի կեսերը բնակավայրը եղել է Վանքի շրջակայքում, այնուհետև այն տեղափոխվել է ներկայիս բնակավայրի տեղը:

Ներկայիս բնակավայրը բաղկացած է 2 թաղամասերից՝ «Հյունահող» (այժմ՝ Ներքին գյուղ) և «Գոմակալ» (այժմ՝ Վերին գյուղ):

Գյուղը շրջապատված է անտառներով և սարերով: Նշանավոր լեռներ են համարվում Հկեղանը, Ղեղամարգը, Մուխութիգը, Ալաղայան, Թրխանա ղալան, Կարմիր քարը:

Գյուղի նշանավոր հողահանդակներն են Կպանա հողը, Եղծատափը, Քոլատակը, Կիրատափը, Նովերը:

Վանք գյուղը հայոց պատմության մեջ անգնահատելի դեր է խաղացել: Այն հիմնականում կապված է Գանձասար վանքի գործունեության հետ: Մանավանդ 17–18-րդ դարերում Գանձասարի կրոնապետության պայմաններում, ըստ էության, Վանքը ոչ միայն Հայոց արևելից նահանգների, այլ նաև մինչև Կասպից ծով և Դերբենդ ընկած տարածքներում ապրող հայության ոչ պաշտոնական մայրաքաղաքն էր:

Գանձասարի վանքի շրջակայքում 9-րդ դարում հիմնադրվել էր բնակավայր: Այն ծաղկում ապրեց 13-րդ դարից սկսած: Վանք գյուղի հետ է կապված Հասան-Ջալալյան նշանավոր իշխանական տոհմի գործունեությունը:

13-րդ դարի առաջին կեսերին Հասան-Ջալալ իշխանի գործունեության տարիներին Վանքն աննախադեպ վերելք ապրեց: Չնայած այդ շրջանում Արցախը գտնվում էր մոնղոլական գերիշխանության տակ, բայց Հասան-Ջալալի ողջախոհ գործունեության շնորհիվ Արցախում պահպանվեցին հայկական պետականության բեկորները: Պատահական չէ, որ պատմական աղբյուրներում նրան անվանել են «Մեծ իշխան», «Իշխանաց իշխան տէր Խաչենոյ և Առանայ», «Թագավոր Ջալալ Դովլա», «Բարեպաշտ արքա Ջալալ», «Ինքնակալ իշխանաց իշխան տեր Խաչենու»: Նրա ջանքերով 1216–1238 թթ. կառուցվեց Գանձասարի վանքը:

Հասան-Ջալալի միջնորդությամբ Կիլիկիայի թագավոր Հեթումի և մոնղոլների միջև ստեղծվեց բարեկամական հարաբերություն: Հակամոնղոլական ապստամբու-

[881] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 3, թ. 97:
[882] ՀԱԱ, ֆ. 56. ց. 1, գ. 2914, թ. 87:
[883] ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 50, թ. 456:
[884] ՀԱԱ, ֆ. 37, ց. 3, գ. 436, թ. 3:

թյան համար 1261 թ. Արղուն ոստիկանը նրան ձերբակալում և հոդակոտոր է անում: Կինը՝ Մամքանը և որդին՝ Աթաբեկ-Իվանեն նրա մարմինը ամփոփում են Գանձասարի վանքի գավթում:

1400 թ. Գանձասարը, դառնալով Աղվանից կաթողիկոսության աթոռանիստ, առավել նպաստեց բնակավայրի զարգացմանը: 17-րդ դարի վերջերից և 18-րդ դարի սկզբներից հայ ազատագրական շարժման կենտրոններ դարձան Գանձասարն ու Վանք գյուղը: Դա հիմնականում կապված էր Պետրոս Խանցկեցի և Եսայի Հասան-Ջալալյանի անվան հետ:

Հայ ազատագրական շարժման նվիրյալներ Իսրայել Օրին և Հովսեփ Էմինը եղել են Վանք գյուղում: Այստեղ 1701 թ. հայ մելիքները նամակ են գրել ռուսաց ցարին՝ Պետրոս Առաջինին և խնդրել, որ հյուսիսային քրիստոնյա հարևանը օգնի՝ Ղարաբաղն ազատագրելու արևելքի բարբարոսներից:

1815 թ., երբ վերացվեց Գանձասարի կաթողիկոսական աթոռը, ոչ միայն վանքը, այլ նաև բնակավայրը կորցրեց իր վաղեմի փառքը: Խաչենի վերին հոսանքում և Թարթառի ափերին գտնվող կալվածքներին տիրեցին քրդական ցեղերը:

Ռուսական տիրապետության շրջանում բնակչությունը զբաղվում էր անասնապահությամբ, հողագործությամբ և արհեստագործությամբ:

1930 թ. խորհրդային իշխանությունը փակեց Գանձասարի վանքը: Այդ նույն թվականին գյուղում ստեղծվել է կոլեկտիվ տնտեսություն:

Վանք գյուղից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 313 մարդ: Նրանցից 174 հոգի զոհվել է: Զոհվածների հիշատակին գյուղում հուշարձան է կանգնեցված:

Վանքի հայությունը մեկ մարդու նման մասնակցեց արցախահայությանը պարտադրված պատերազմին: 1988 թ. վերջերին Վանք գյուղում կազմավորվել է կամավորական ջոկատ: 1992 թ. սեպտեմբերին ջոկատի հիմքի վրա ստեղծվել է գումարտակ, որը մասնակցել է ինչպես ինքնապաշտպանական, այնպես էլ ազատագրական մարտերին: Հրամանատարը եղել է Յուրի Հակոբյանը: 38 հոգի իրենց կյանքը նվիրաբերել են հայրենիքի ազատագրության գործին: Ստորև ներկայացնում ենք նրանց անուն-ազգանունները. Բաբայան Բորիկ, Հակոբյան Բորիկ, Հակոբյան Յուրի, Մկրտչյան Արտավազդ, Թովմասյան Ռաֆիկ, Բաբայան Էռնեստ, Աբրահամյան Սուրիկ, Աբրահամյան Վոլոդյա, Ավանեսյան Միհեր, Ավանեսյան Բորիկ, Բաղրամյան Մելսիկ, Ավետիսյան Սերյոժա, Ասրյան Հայասեր, Սարգսյան Կարեն, Բալայան Համլետ, Հակոբյան Միքայել, Ջալալյան Արթուր, Հարությունյան Արամ, Ջալալյան Ջալալ, Բաղրամյան Արայիկ, Ահարոնյան Դավիթ, Պողոսյան Հայասեր, Մկրտչյան Սվետլանա, Հակոբյան Աշոտ, Ավանեսյան Լամբերտ, Մեժլումյան Հենրիկ, Ասրյան Վոլոդյա, Ասրյան Բորիկ, Ղազարյան Համլետ, Թովմասյան Մուրադ, Սողոմոնյան Մերուժան, Մակյան Աշոտ, Ասրյան Արկադիա, Բաղդասարյան Շուրա, Հակոբյան Կարեն, Ասրյան Մելսիկ, Գևորգյան Արարատ, Գրիգորյան Աշոտ:

Գանձասարի վանականները նույնպես անձնվիրաբար նվիրվեցին գյուղի պաշտպանությանը: Մասնավորապես Հովհաննես քահանա Հովհաննիսյանը, Ռաֆայել սարկավագ Խաչատրյանը, Գրիգոր քահանա Մարտիրոսյանը, Կորյուն քահանա Կարապետյանը, Ստեփանոս քահանա Հակոբյանը: Պատերազմում գործած խիզախության համար Հովհաննես քահանա Հովհաննիսյանը պարգևատրվել է ՀՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի են արժանացել նաև Ալբերտ Մռավի Հայրապետյանը, Սերժիկ Վրեժի Աբրահամյանը, Արտավազդ Բորիկի Մկրտչյանը և Կարեն Արտաշի Ասրյանը:

1994 թ. պատերազմի ավարտից հետո Վանք գյուղն աննախադեպ վերելք ապրեց: Դա մեծ մասամբ կապված էր ծննդով վանքեցի մեծ բարերար Լևոն Հայրապետյանի անվան հետ: Նրա միջոցներով լիովին վերանորոգվեց Գանձասարի վանքը, այնուհետև Խաչեն գետի վրա գտնվող կամուրջից մինչև վանական համալիրն անմխիթար վիճակում գտնվող ճանապարհն ասֆալտապատվեց: Գանձասարի համալիրի պարիսպներից դուրս բարերարի կառուցած շենքում տեղակայված է Երևանի Մատենադարանի մասնաճյուղը: Բնակչության համար նոր աշխատատեղեր ստեղծելու նպատակով բացվեց Վանքի փայտամշակման կոմբինատը՝ «ԱՏԱ-Վանք-Լես»-ը: Ձեռնարկության արտադրանքը, մասնավորապես՝ մանրահատակը մեծ պահանջարկ էր վայելում անգամ միջազգային շուկայում: Այսօր գործարանը մասամբ է աշխատում:

2007 թ. սեպտեմբերի 26-ին Վանք գյուղում բացվեց Լևոն Հայրապետյանի հոր՝ մանկավարժ Գուրգեն Հայրապետյանի անունը կրող նորակառույց շքեղ դպրոցական շենքը: Մեկ օր անց շահագործման հանձնվեց «Ծովին քար» կոչվող հյուրանոցային համալիրը:

Լևոն Հայրապետյանի շնորհիվ գյուղում կառուցվեց «Էկլեկտիկա» հյուրանոցը, որն ունի նաև չինական խոհանոց: Բացվեց կենդանաբանական այգի:

Նրա շնորհիվ գյուղում հայ, ռուս և հանրահայտ այլ էստրադային աստղերի մասնակցությամբ համերգներ էին կայանում, կազմակերպվում սպորտային միջոցառումներ: Նա նախատեսել էր կառուցել նոր մարզադաշտ, հիվանդանոց, ճանապարհ դեպի Հացեն աղբյուրը, ռազմական ուսումնարանի շենք, Խաչենագետի վրա ջրամբար և էլեկտրոկայան: Ցավոք բանսարկությունների զոհ դարձավ մեծ հայորդին և այդ ծրագրերը մնացին անավարտ: Նրա օրինակով Էդուարդ Ղուլյանը նոր մանկապարտեզ է կառուցել հայրենի գյուղում:

Լևոն Հայրապետյանը նյութական օգնություն է ցույց տվել հաշմանդամներին, զոհվածների և բազմազավակ ընտանիքներին:

Այսօր գյուղում կան ակումբ, էլեկտրաղաց, բենզալցակայան, ՅունիԲանկի մասնաճյուղ, 6 խանութ, 8 կրպակ, 1 դեղատուն, հիվանդանոց, հանդիսությունների սրահ:

Գյուղում տները հիմնականում երկհարկանի են, հարմարավետ և թիթեղածածկ:

Վանքը համարվում է զբոսաշրջային կայացած կենտրոն:

Դարերի ընթացքում Գանձասարի վանքում գոյություն է ունեցել եկեղեցական դպրոց և հարուստ մատենադարան: Հայկունին գրում է, որ 19-րդ դարի վերջերին Գանձասարում կար «48 կտոր գրեանք, որոնց մի մասը ձեռագիր են»,[885] իսկ Եղիշե Իշխանյանը պատմում է, որ 1919 թ. փետրվարի 1-ին լինելով Գանձասարում, նրան վանահայրը ցույց է տվել մի թաքստոց, որտեղ գտնվում է «զանազան անօթներ և սպասներ..., մատենադարանն էլ տեղաւորուած է թաքստոցներից մեկում, որը յայտնաբերուած չէ»:[886]

19-րդ դարի 20-ական թվականներին Գանձասարի եկեղեցական-ծխական դպրոցում աշխատել են հայտնի լուսավորիչներ Հովսեփ Արցախեցին, Պողոս վարդապետ Ղարաբաղցին և Տեր-Ավագյանը:

19-րդ դարի վերջերին, երբ ցարական իշխանությունները փակեցին հայկական դպրոցները, Գանձասարում շարունակվում էր գաղտնի գործել եկեղեցական-ծխական դպրոցը, ուր ուսում էին ստանում նաև մոտակա գյուղերի աշակերտները: Վանքում 1930 թվականից գործում էր յոթնամյա, իսկ 1938 թվականից՝ միջնակարգ դպրոց: 1986-2011 թթ. դպրոցի տնօրենն էր Ֆլորա Բաղրամյանը: 2007-2008 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 125 աշակերտ, դասավանդում՝ 24 ուսուցիչ, իսկ 2014-2015 ուսումնական տարում՝ 125 աշակերտ, 34 ուսուցիչ:

Գանձասարից բացի, Վանք գյուղի տարածքն անչափ հարուստ է պատմամշակութային այլ հուշարձաններով: Հայտնի են Խոխանաբերդը, Թարխանաբերդը (12-րդ դար), Հասան-Ջալալյան իշխանների վարչական կենտրոն՝ Դարպասներ պալատամրոցը (13-րդ դար), Պառավաձորի զույգ եկեղեցին (13-րդ դար), Հավապտուկ վանքը (12-13-րդ դարեր), Վաճառ գյուղաքաղաքը (12-13-րդ դարեր), Նատարին բերդը (13-րդ դար), Համամի եղցեն, Մուղդուսին մատուռը, Կոտրած եղցեն, Ռուզանի բերդը, եկեղեցին, գերեզմանոցը, Թախտեն կամուրջը, Սղնախ կայազորը, Դարպասներ, Պառավաձոր, Եղցուն խութ գյուղատեղիները, Քոլատակեն բաղեն կլոխ, Գերեզմանոցեն յալ, Պառավաձորի գերեզմանոցները, բազմաթիվ խաչքարեր (5-13-րդ դդ.):

Համայնքի տարածքում առկա են 13 աղբյուրներ՝ Հոռ, Գեղջուկի, Քրդաղբյուր, Ռուզանանց, Նովեր, Ղզնող, Դրբսների, Ավանց, Գաղ, Գանձասարի, Սայունց, Սարգիսջանանց, Ապրունց:

Վանքի համայնքի կազմում գտնվող Անձավներ գյուղում և շրջակայքում պահպանվել են անձավ-բնակատեղիներ, եկեղեցու, միջնադարյան գյուղի, գերեզմանոցի հետքեր: 20-րդ դարում այստեղ հայտնվել էին թուրքեր և հայկական բնակավայրը թարգմանաբար վերանվանել՝ Ջաղալար:

20-րդ դարում նույն ճակատագրին են արժանացել նաև Դաշտագլուխ (թուրքերեն՝ Թախտաբաշի), Ծաղկունք (թուրքերեն՝ Ալաղայա), Ճրագ (թուրքերեն՝ Չրաղ-

[885] Հայկունի, նշվ. աշխ., էջ 63:
[886] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 337:

լու) գյուղերը: Չնայած Նարեշտարում նույնպես թուրքեր էին ապրում, բայց ի տարբերություն վերոնշյալների՝ նրա հայկական անունը պահպանվել է: Նշված բնակավայրերի տարածքներում նույնպես պահպանվել են եկեղեցիների, հին գյուղատեղիների, գերեզմանոցների մնացորդներ:

Վանք համայնքի տարածքում 2019 թ. ապրում էր 1574 մարդ[887]: Նկատենք, որ այդ համայնքի կազմում ընդգրկված են նաև Անձավներ, Դաշտագլուխ, Ծաղկունք, Ճրագ, Նարեշտար գյուղերը:

Անձավներում բնակվում է 8 մարդ, Դաշտագլխում՝ 5 մարդ, Ծաղկունքում՝ 3 մարդ, Ճրագում՝ 6 մարդ, Նարեշտարում՝ 4 մարդ[888]:

Համայնքի տարածքում ապրող բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԱՆՁԱՎՆԵՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսային հատվածում՝ Մարտակերտի շրջանում՝ նախկին Խաչեն գավառում:

Բնակավայրը գտնվում է Խաչեն գետի վերին հոսանքում:

Բնակավայրում և շրջակա տարածքներում պատահականորեն հայտնաբերված հնագիտական նյութերը և քարանձավ բնակարանները վկայում են, որ նախկինում վերոհիշյալ տարածքում գյուղ է եղել:

Նախկինում գոյություն ունեցած հայկական բնակավայրը, քանի որ գտնվում էր դեպի ալպյան մարգագետինները տանող ճանապարհի վրա, հետևաբար հարյուրամյակներ շարունակ քոչվոր անասնապահ ցեղերի, մասնավորապես թուրքերի և քրդերի շահերի կենտրոնում էր գտնվում: Պատահական չէ, որ ոտքի կոխան դարձած հայկական գյուղի բնակիչները դարեր շարունակ իրենց օջախն ու ունեցվածքը պաշտպանելու համար պայքարել են օտար ցեղերի դեմ:

18-րդ դարի 2-րդ կեսին, Ղարաբաղի Իբրահիմ խանի ճնշումներին այլևս չդիմանալով, Անձավների բնակիչները ստիպված հեռացել են հարևան հայկական գյուղեր և այլ երկրներ:

Շուրջ 150 տարի բնակավայրը անտերության էր մատնվել: Դարերի հոլովույթում մոռացության են մատնվել ոչ միայն գյուղի աղբյուրների, հանդամասերի անունները, նրա հետ կապված պատմական հիշողությունները, այլ նաև բնակավայրի անունը:

Դեպի ալպյան մարգագետինները տանող ճանապարհները հսկելու նպատակով Աղրբեջանի իշխանությունները խորհրդային տարիներին մի քանի թաթար ընտանիքների բնակեցրել են հայկական բնակավայրում: Նրանք գյուղը անվանակոչել էին Ջաղալար:

[887] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[888] Նույն տեղում:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում և նրա շրջակայքում եղած պատմամշակութային հուշարձանները եկվորները ոչնչացրել են:

1993 թ. հակամարտության խորացման պայմաններում Ջաղալարի ադրբեջանցիները հեռացել են բնակավայրից:

Պատերազմից անմիջապես հետո՝ 1995 թ. Ջաղալարում հաստատվել են Ադրբեջանից բռնագատեղահանված մի քանի հայ ընտանիքներ: Գյուղը ստացել է Անձավներ անունը: Վարչականորեն այն մտնում է Վանք համայնքի կազմի մեջ:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային հեռախոսակապը Անձավներում հասանելի են:

Անձավներում 2015 թ. կար 4 տուն, 8 մարդ[889], 2018 թ.՝ 1 տուն, 1 մարդ[890], որն էլ զբաղվում է անասնապահությամբ:

ԴԱՇՏԱԳԼՈՒԽ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսային հատվածում՝ Մարտակերտի շրջանում՝ նախկին Խաչեն գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Խաչեն գետի վերին հոսանքում:

Գյուղում և մերձակա հանդամասերում հայտնաբերված հնագիտական նյութերը, միջնադարյան գերեզմանոցի և որոշ շինությունների հետքերը հիմք են տալիս ասել, որ վերոհիշյալ տարածքում հին հայկական բնակավայր է եղել:

Ղևոնդ Ալիշանը Արցախին նվիրված աշխատության մեջ խոսում է Թախթա բնակավայրի մասին[891]: Հնարավոր է, որ բազմավաստակ հետազոտողը նկատի ուներ ներկայիս Դաշտագլուխ գյուղի տարածքում միջնադարում գոյություն ունեցած հայկական բնակավայրը:

18-րդ դարի երկրորդ կեսին Ղարաբաղի Իբրահիմ խանի և քոչվոր քրդերի ճնշումների տակ Թախտա գյուղի բնակիչները ստիպված հեռացել են և հաստատվել Շաքիի, Շիրվանի, Կախեթի հայկական բնակավայրերում:

Ավելի քան 150 տարի բնակավայրը անտերության էր մատնվել: Դարերի հոլովույթում մոռացության են մատնվել գյուղի հետ կապված պատմական հիշողությունները:

1921 թ. հայկական բնակավայրի տարածքը բռնակցվել էր Ադրբեջանին:

Ալպյան մարգագետինները տանող ճանապարհները հսկելու և ԼՂԻՄ-ը թուրքական ու թուրքացած քրդերի բնակավայրերով շրջափակելու նպատակով խորհրդային տարիներին Ադրբեջանի իշխանությունները հայկական ավերված գյուղում մի քանի քուրդ ընտանիքներ են բնակեցրել:

[889] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 203:
[890] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:
[891] Ղևոնդ Ալիշան, Արցախ, էջ 25:

Գյուղը անվանվել էր Թախտաբաշի: Սկզբում 1923-1930 թվականներին այն ներառված էր Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ. Քելբաջարի շրջանի մեջ:

1993 թ. հայկական բանակի ռազմագործողության արդյունքում բնակավայրը ազատագրվել է:

1995 թ. այստեղ վերաբնակվել են Ադրբեջանից բռնագաղթված մի քանի հայ ընտանիքներ:

Գյուղը ստացել է Դաշտագլուխ անվանումը:

Վարչականորեն այն մտնում է Վանք համայնքի կազմի մեջ:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է գյուղում գործող բնական աղբյուրների հաշվին:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային հեռախոսակապը Դաշտագլխում հասանելի են:

Դաշտագլխում 2010 թ. կար 4 տուն, 6 բնակիչ[892], 2018 թ.՝ 2 տուն, 6 բնակիչ[893]:

Նրանց զբաղմունքը անասնապահությունն է:

ԾԱՂԿՈՒՆՔ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսային հատվածում՝ Մարտակերտի շրջանում՝ նախկին Խաչեն գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Տրտու-Թարթառի վերին հոսանքում:

Ներկա բնակավայրի տեղը հին գյուղի հետքեր չեն հայտնաբերվել:

1921 թ. հայկական բնակավայրի շրջակայքում գտնվող տարածքը բռնակցվել էր խորհրդային Ադրբեջանին:

Ալպյան մարգագետինները տանող ճանապարհները հսկելու և ԼՂԻՄ-ը թուրքական ու թուրքացած քրդերի բնակավայրերով շրջափակելու նպատակով խորհրդային տարիներին քուրդ մի քանի ընտանիքներ, որոնք զբաղվում էին քոչվորական անասնապահությամբ, նստակյաց էին դարձել և գյուղ հիմնադրել: Բնակավայրին տրվել էր Ալաղայա անվանումը:

1930 թ. Ալաղայան Քելբաջարի շրջանի կազմի մեջ էր:

Արցախաադրբեջանական պատերազմի տարիներին՝ 1993 թ., հայկական բանակի ռազմագործողության արդյունքում բնակավայրը ազատագրվել է:

1995 թ. գյուղում վերաբնակիչների կարգավիճակով հաստատվել են Ադրբեջանից բռնագաղթված մի քանի հայ ընտանիքներ:

Բնակավայրը ստացել է Ծաղկունք անվանումը:

Վարչականորեն այն մտնում է Վանքի համայնքի կազմի մեջ:

[892] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[893] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է բնական աղբյուրների հաշվին:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային կապը գյուղում հասանելի են:

Ծաղկունքում 2010 թ. կար 2 տուն, 2 մարդ[894], 2018 թ.՝ 1 տուն, 1 մարդ[895]: Նրա զբաղմունքը անասնապահությունն է:

ՃՐԱԳ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսային հատվածում՝ Մարտակերտի շրջանում՝ նախկին Ծար գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Խաչեն գետի վերին հոսանքում՝ Նարեշտար գյուղից ոչ շատ մեծ հեռավորության վրա:

Գյուղում և մերձակա հանդամասերում պատահականորեն հայտնաբերված հնագիտական նյութերը, միջնադարյան գերեզմանոցի և որոշ շինությունների հետքերը հիմք են տալիս ասել, որ վերոհիշյալ տարածքում հին բնակավայր է եղել:

Խաչեն գետի վերին հոսանքում գտնվող ալպյան մարգագետիններին տիրելու նպատակով 18-րդ դարի սկզբներից սկսած քոչվոր մահմեդական անասնապահ ցեղերի ճնշումը հայկական բնակավայրերի վրա սաստկացել էր:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի Իբրահիմ խանը, թրքախոս քրդական ցեղերի հետ համագործակցելով, հայերին դուրս մղեց վերոհիշյալ շրջաններից:

Ավելի քան 150 տարի բնակավայրը անտերության էր մատնվել: 1921 թ. հայկական բնակավայրի տարածքը բռնակցվել էր Ադրբեջանին:

Իրենց ցեղակիցների ծրագիրը իրագործելու նպատակով, ինչպես նաև ԼՂԻՄ-ը թուրքական և թրքախոս քրդերի բնակավայրերով շրջափակելու նպատակով խորհրդային տարիներին հայկական ավերված գյուղում Ադրբեջանի իշխանությունները քուրդ մի քանի ընտանիքներ են բնակեցրել:

Գյուղը անվանվել էր Չրաղլու:

Ընդհանուր առմամբ Չրաղլու և Չրաղ անուններով գյուղեր կան Քաշաթաղի շրջանում և Քարվաճառում՝ Դուտխու գետի վերին հոսանքում: Վերոհիշյալ բոլոր գյուղերում էլ հայկական հետքերը տեսանելի են: Չրաղլուն 1923-1930 թվականներին ներառված էր Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Քելբաջարի շրջանի կազմի մեջ:

1993 թ. հայկական բանակի ռազմագործողության արդյունքում բնակավայրն ազատագրվել է:

1995 թ. այստեղ վերաբնակվել են Ադրբեջանից բռնագաղթած հայ մի քանի ընտանիքներ: Գյուղը ստացել էր Ճրագ անվանումը:

[894] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[895] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

Վարչականորեն այն մտնում է Վանք համայնքի կազմի մեջ:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է գյուղում գործող բնական աղբյուրների հաշվին:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային հեռախոսակապը Ճրագում հասանելի են: Ճրագում 2010 թ. կար 4 տուն, 7 մարդ[896], 2018 թ.՝ 3 տուն, 5 մարդ[897]: Նրանց զբաղմունքը անասնապահությունն է:

ՆԱՐԵՇՏԱՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսային հատվածում՝ Մարտակերտի շրջանում՝ նախկին Խաչեն գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Խաչեն գետի վերին հոսանքում:

Գյուղում և շրջակա տարածքներում հայտնաբերված հնագիտական նյութերը, միջնադարյան գերեզմանոցի և որոշ շինությունների հետքերը հիմք են տալիս ասելու, որ վերոհիշյալ տարածքում հին բնակավայր է եղել:

Խաչեն գետի վերին հոսանքում գտնվող ալպյան մարգագետիններին տիրելու նպատակով 18-րդ դարի սկզբներից սկսած քոչվոր մահմեդական անասնապահ ցեղերի ճնշումը հայկական բնակավայրերի վրա սաստկացել էր:

Ղարաբաղի Իբրահիմ խանը, թրքախոս քրդական ցեղերի հետ համագործակցելով, հայերին դուրս մղեց վերոհիշյալ շրջաններից:

Ավելի քան 150 տարի բնակավայրը անտերության էր մատնվել:

1921 թ. նախկին հայկական բնակավայրի տարածքը ներառվել էր ԼՂԻՄ Մարտակերտի վարչական շրջանի կազմի մեջ:

Ադրբեջանական իշխանությունները, ԼՂԻՄ ազգագրական դեմքը փոխելու և վերջնական հայաթափելու նպատակով մարզի տարածքի առանցքային վայրերում թուրքերով և քրդերով բնակեցված գյուղեր էին հիմնել: Այդպիսի բնակավայրերից մեկն էլ դարձավ նախկին հայկական Նարեշտար գյուղը, որը գտնվում էր դեպի ալպյան մարգագետինները տանող ճանապարհի վրա:

1930 թ. գյուղում կոլտնտեսություն էր կազմավորվել: Այն 1988 թ. միավորվել էր Վանքի պետական տնտեսությանը: Ապախոշորացումից հետո՝ 1988 թ., Նարեշտարի կոլտնտեսությունը առանձնացվել էր:

1987 թ. Նարեշտարում արդեն կար 70 տուն, 382 բնակիչ[898]:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի ռազմագործողության արդյունքում միջնադարյան հայկական բնակավայրը ազատագրվել է:

[896] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[897] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

[898] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 195:

1995 թ. այդտեղ վերաբնակվել են Ադրբեջանից բռնագաղթված մի քանի հայ ընտանիքներ:

Գյուղը շարունակում է կրել իր պատմական Նարեշտար անվանումը: Այն վարչականորեն մտնում է Վանքի համայնքի կազմի մեջ:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է գյուղում գործող բնական աղբյուրների հաշվին:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային հեռախոսակապը Նարեշտարում հասանելի են:

Նարեշտարում 2010 թ. կար 2 տուն, 2 մարդ[899], 2018 թ.՝ 1 տուն, 3 մարդ[900]: Նրանց հիմնական զբաղմունքը անասնապահությունն է:

ՎԱՐԴԱՁՈՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսարևելյան հատվածում՝ Մարտակերտի շրջանում՝ նախկին Ջրաբերդ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Ղարաբաղյան լեռնաշղթայից դեպի արևելք ձգվող լեռնաճյուղերից մեկին հարող ձորալանջին: Գյուղը երեք կողմերից շրջապատված է լեռներով և միայն արևելյան կողմից է բաց ու ձգվում է դեպի հարթավայրը:

Նախկինում Վարդաձորը գտնվում էր ներկա բնակավայրից հարավ արևմուտք՝ 4 կմ հեռավորության վրա: Այսօր էլ տեսանելի են հին գյուղատեղիի հետքերը, տների և եկեղեցու մնացորդները:

Պահպանվել են նաև հին գյուղատեղիի մոտ գտնվող միջնադարյան գերեզմանատան տապանաքարերը, 11–13-րդ դարերի խաչքարերի բեկորները: Վարդաձորի հին գերեզմանատանը ամփոփված է արցախահայության ազատագրական պայքարի առաջնորդներից մեկի՝ մելիք Ռուստամի մարմինը[901]:

Գյուղի շրջակայքի ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ միջին միջնադարում Վարդաձորի շրջակայքը խիտ բնակեցված է եղել և գոյություն են ունեցել նաև այլ գյուղեր: Վարդաձորից 4 կմ հյուսիս-արևելք գտնվում են Հովսեփ եղցի եկեղեցին (12–13-րդ դարեր) և նրա անմիջական հարևանությամբ անանուն գյուղի և գերեզմանոցի բեկորված մնացորդները: Գյուլաթաղի հարավարևմտյան մասում՝ Չոքման տեղամասում էր գտնվում Կոտրած եղցին, որը 1970-ական թվականներին ավերվել է:

1797–1798 թվականներին Արցախում բռնկված ժանտախտի հետևանքով տասնյակ հազարավոր մարդիկ մահացել են: Նույն ճակատագիրն են ունեցել նաև Գյուլաթաղի բնակիչները: Կենդանի մնացածները 2 տասնամյակ անց հաստատվել էին ներկայիս բնակավայրում:

1813 թ. Արցախի՝ ռուսական կայսրության մի մասը դառնալուց հետո, մելիք Վանի Աթաբեկյանն իր հայրենակիցների հետ միասին վերաշինեց ու հիմնեց նոր գյուղեր՝ Մեծ Շենը, Մոխրաթաղը, Կարմիրավանը, Ծաղկաշենը, Ենգիջանը, Մաղավուզը, Լյուլասազը, Գյուլաթաղը, Ջանյաթաղը[902]:

Գյուլաթաղը սկսեց զարգանալ: Այդտեղ հաստատվել էր նաև Ղարաբաղի Իբրահիմ խանի միջոցով Խաչենի մելիքությունը իր ձեռքը գցած մելիք Ալլահվերդու ժառանգներից մեկը՝ մելիք Առուշան Ալլահվերդյանը: Վերջինս գյուղում պալատ-ամրոց է կառուցել, որն առայսօր պահպանվում է:

Գյուլաթաղ և Ջանյաթաղ գյուղերի միջև էր գտնվում ազնվացեղ ղարաբաղյան ձիերի արքունական ձիաբուծարանը, որի կառավարիչ Վիլմանին քոլանի քրդերը սպանել են: Վիլմանը հայերի հետ լավ հարաբերություններ ուներ[903]:

1870 թ. կառուցվել է գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցին:

Միջնադարից սկսած՝ շահագործվում էին Վարդաձորի մոտ գտնվող բազմամետաղ հանքերը:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1932 թ., Վարդաձորում կոլտնտեսություն էր կազմակերպվել: 1974 թ. Ջանյաթաղի տնտեսության հետ միասին մեկ սովխոզ էր ձևավորվել: Վերոհիշյալ պետական տնտեսությունը 1988 թ. նորից ապախոշորացվել է: 1998 թ. կոլտնտեսությունը լուծարվել է և ստեղծվել են անհատական տնտեսություններ:

Վարդաձորից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 250 հոգի, զոհվել է 111-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կանգնեցվել:

Արցախյան ազատագրական շարժման առաջին տարիներին գյուղում Նորայր Դանիելյանի հրամանատարությամբ ինքնապաշտպանական ջոկատ էր կազմավորվել: Ազատագրական պատերազմի տարիներին Վարդաձորից 9 ազատամարտիկներ զոհվել են: 1992 թ. գյուղը գրավվել էր Ադրբեջանի զինված ուժերի կողմից:

ԱՀ ՊԲ հարվածների տակ 1993 թ. Վարդաձորը նորից ազատագրվել է:

Ծննդով Վարդաձորցի Նորայր Դանիելյանը ծանրակշիռ ավանդ է ունեցել Արցախի պաշտպանության գործում: Նա մեծ ներդրում է ունեցել Մարտակերտի պաշտպանական շրջանի և գնդի կազմակերպման գործում և դարձել է այդ զորամիավորման առաջին հրամանատարը: Նա հետմահու արժանացել է ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով

[899] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[900] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

[901] Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, էջ 34:

[902] Израелов Г., Село Касапат, Елисаветпольской губернии Джеванширского уезда, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. 13, Тифлис, 1892, с. 42–45.

[903] Հայկունի, նշվ.աշխ., էջ 77:

պարգևատրվել են Սամվել Խաչատրյանը, հետմահու՝ Արարատ Դանիելյանը, Զավեն Սարգսյանը, Ռաֆիկ Բաբայանը:

1873 թ. Գյուլաթաղում բացվել է մեկդասյա ծխական դպրոց, որտեղ սովորում էր 34 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ[904]:

19-րդ դարի վերջերին՝ 1885 և 1896 թվականներին դպրոցը երկու անգամ փակվել և վերաբացվել է:

20-րդ դարի սկզբներին դպրոցի ուսուցիչն էր Աբրահամ Ալավերդյանը:

Խորհրդային տարիներին գյուղում ութամյա դպրոց է գործել: Այնուհետև այն ստացել է միջնակարգի կարգավիճակ:

1992 թ. գյուղի՝ Ադրբեջանի կողմից բռնազավթվելուց հետո, դպրոցը մինչև 1994 թ. չի գործել: 1934 թ. ապրիլի 1-ից կրթական հաստատությունը իր գործունեությունը վերսկսել է: Դպրոցը կրում է Նորայր Դանիելյանի անունը:

2016 թ. համայնքի տարածքում է պղնձի, հանքաքարի վերամշակման «Կաշեն»-ի գործարանը: Այն տարածաշրջանի ամենախոշոր և ժամանակակից սարքավորումներ ունեցող խոշոր գործարաններից մեկն է համարվում:

Վարդաձորի աղբյուրներն են՝ Սանդրած քոլեն, Ցլանեն, Մելիքանց, Օհանջանանց, Բլբուլին ձորի, Կարվինին, Քյահրիզ, Ճղպրոտեն, Դերին բաղեն, Փարսադանովանց, Ծակ, Քոռ, Տոնունց:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրացանց:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, դպրոց, բուժկետ:

Վարդաձորում 19-րդ դարի 90-ական թվականներին կար 74 տուն, 611 բնակիչ[905], 1992 թ.՝ 484 բնակիչ, 1998 թ. ՝ 184 բնակիչ[906]: Բռնատեղահանումից հետո բնակչության մի մասը գյուղ չի վերադարձել: 2018 թ. գյուղում կար 55 տուն, 180 բնակիչ[907]:

Նրանք հիմնականում աշխատում են գյուղատնտեսության և հանքարդյունաբերության ասպարեզում:

ՎԱՐՆԿԱԹԱՂ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսարևելյան հատվածում՝ Մարտակերտի շրջանում՝ նախկին Ջրաբերդ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Տրտու-Թարթառի միջին հոսանքի աջ ափի բարձրավանդակի վրա:

[904] Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Արցախի կրթական համակարգը, հ.1, էջ 431:
[905] Մակար եպս. Բարխուդարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 271:
[906] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[907] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

Վաղ միջնադարից սկսած՝ Վարնկաթաղը և նրա շրջակա տարածքները խիտ բնակեցված են եղել: Գյուղի շրջակայքում պահպանվում են Ճոխտակ շինատեղ 2 անանուն գյուղերի մնացորդները: Նրանց մոտ տեսանելի է հին գերեզմանատան հետքերը:

Վարնկաթաղի մոտ՝ Թարթառի աջափնյակում՝ լանջի վրա է գտնվում քարայր բնակարան, որին ժողովուրդը անվանում է Կաթողիկոսարան: Ավանդությունը պատմում է, որ այդտեղ ապրում էր Աղվանից Վիրո կաթողիկոսը[908]:

Որոշ աղբյուրներում բնակավայրը ներկայացված է Նոր շեն անունով[909]:

Ամենայն հավանականությամբ Ճոխտակ շենատեղում գտնվող 2 անանուն գյուղերի բնակիչները՝ 1797-1798 թթ. ժանտախտից հետո կենդանի մնացածները, տեղափոխվել և հաստատվել էին ներկայիս Վարնկաթաղ բնակավայրում, և հավանաբար դրանից էլ գյուղը ստացել էր Նոր շեն անունը:

Գյուղը հայտնի է նաև Լյուլասազ անունով:

Ավանդությունը պատմում է, որ Շամշադինից այդտեղ վերաբնակվել են հրացանի փողեր պատրաստող 2 արհեստավոր եղբայրներ Թունին ու Բաբան: Քանի որ այդ արհեստավորների գործունեությամբ պայմանավորված՝ գյուղը հանրահռչակվել է, այստեղից էլ ստացել է Լուլասազ անվանումը[910]:

Հայտնի է, որ Արցախի՝ 1813 թ. Ռուսաստանին անցնելուց հետո կուսապատցի մելիք Վանի Աթաբեկյանն իր իր հայրենակիցների հետ վերաշինել ու հիմնել էր նոր գյուղեր Մեծ շենը, Մոխրաթաղը, Կարմիրավանը, Ծաղկաշենը, Ենդիջանը, Մաղավուզը, Լուլասազը, Գյուլաթաղը, Ջանաթաղը[911]:

19-րդ դարի երկրորդ կեսին գյուղում կառուցվել էր Սբ. Մինաս եկեղեցին:

Վարնկաթաղի բնակչությունը նպաստել է Արցախում խորհրդային կարգերի հաստատմանը: Ծագումով Լուլասազից են հայտնի բոլշևիկ-հեղափոխականներ Հակոբ Կամարին, Թևատրոս, Բեյբուդ և Լազր Միրզաբեկյանները:

1984 թ. գյուղը վերանվանվել է Հակոբ Կամարի:

Ցավոք Լուլասազի հայ կոմունիստները համագործակցում էին թաթար բոլշևիկների հետ, ինչն էլ կործանարար հետևանքներ ունեցավ Արցախի համար:

Թևատրոս Միրզաբեկյանն իր անտիպ հուշերում գրել է, որ 1919 թ. աշնանը Լուլասազ գյուղում տեղի է ունեցել թաթար և հայ կոմունիստների համատեղ խորհրդակցություն: Ժողովը ղեկավարում էր թուրք-թաթարական հրոսակախմբերից մեկի պա-

[908] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եի դրացիք, Արցախ, էջ 276:
[909] Описание Карабахской провинции, составленное в 1823 г., с. 130:
[910] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 172:
[911] Израелов Г., Село Касапет Елизаветпольской губернии Джеванширского уезда, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып.12, Тифлис, 1892, с. 42-45.

ռագլուխ Մամեդ Մամեդովը (Կադր Մամեդ): Որոշվել էր զենքի ուժով տապալել Արցախի կառավարությունը[912]:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1930 թ., Վարնկաթաղում կոլտնտեսություն է կազմակերպվել:

1960-ական թվականներին Վարնկաթաղի, Մաղավուզի և Մինգրելսկի կոլտնտեսությունների միավորումով մեկ պետական տնտեսություն էր կազմակերպվել: Այն գործել է մինչև 1988 թ.: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո Վարնկաթաղում ձևավորվել են անհատական մասնավոր տնտեսություններ:

Գյուղից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 154 մարդ, զոհվել է 64-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Արցախյան շարժման օրերին՝ 1990 թ., Վարնկաթաղում ինքնապաշտպանական կամավորական ջոկատ էր ստեղծվել:

1991-1994 թվականների պատերազմի ժամանակ 2 ազատամարտիկ է զոհվել:

Վարնկաթաղում 1914 թ. բացվել էր մեկդասյա դպրոց: Խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1920 թ., այն ստացել էր տարրական, 1938 թ.՝ յոթնամյա, 1980 թ.՝ ութամյա դպրոցի կարգավիճակ:

1992 թ. գյուղը բռնազավթվել է Ադրբեջանի զինված ուժերի կողմից: 1993 թ. Վարնկաթաղի ազատագրվելուց հետո, բնակչության մի մասը չվերադարձավ հայրենի գյուղ:

Աշակերտների թվաքանակի կրճատման պատճառով նախկին կրթօջախը վերակազմակերպվել և այսօր այն Մաղավուզի միջնակարգ դպրոցի մասնաճյուղի կարգավիճակ ունի:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Գյուղի աղբյուրներն են՝ Ծափկոտ, Փոքր Թոշկասար, Մեծ Թոշկասար, Նովինջուր, Գյուղամիջյան, Չինարի, Քաշի:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, դպրոց, բուժկետ, ակումբ:

Վարնկաթաղում 19-րդ դարի 90-ական թվականներին կար 20 տուն, 130 բնակիչ[913], 1970 թ.՝ 88 տուն, 356 բնակիչ, 1987 թ.՝ 84 տուն, 342 բնակիչ[914], 2010 թ.՝ 28 տուն, 78 բնակիչ[915], 2018 թ.՝ 22 տուն, 74 բնակիչ[916]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[912] Тевадрос Мирзабекян, с. 23, անտիպ գործ պահպանվում է ԱՀ պատմաերկրագիտական թանգարանում, հմմտ. Բալայան Վ., Դրվագներ..., էջ 99:

[913] Մակար եպս. Բարխուդարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 276:

[914] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 172:

[915] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[916] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

ՎԵՐԻՆ ՀՈՌԱԹԱՂ

Բնակավայրը գտնվում է ԱՀ Մարտակերտի շրջանի հյուսիսային նախալեռնային գոտում՝ Թարթառ գետի աջ ափին՝ Սարսանգի ջրամբարի հարևանությամբ: Գյուղի շրջակայքը հիմնականում անտառապատ է: Բնակավայրից վեր՝ Խոյնա անտառն է:

Ճիշտ է, այս գյուղը հիմնվել է 19-րդ դարի կեսերին, սակայն մասնակի ուսումնասիրությունները, գյուղատնտեսական և շինարարական աշխատանքների ընթացքում հայտնաբերված նյութերը վկայում են, որ Արցախի գեղատեսիլ այս հատվածը ժամանակին խիտ բնակեցված է եղել: Վիտին սրո, «Ղամշոտ ծով» տեղամասերում պահպանվում են դամբարանադաշտեր, միջնադարյան բնակատեղիների, գերեզմանոցների մնացորդներ:

20-րդ դարի 80-ական թվականներին Վերին Հոռաթաղի Ցաստան դաշտում դամբարանաբլուրներ են քանդվել, որտեղից հայտնաբերվել են կարասներ, ամաններ, ոսկորներ:

Եղիշե Գեղամյանցը, 19-րդ դարի վերջերին լինելով այդ վայրերում, գրել է, որ Վերին Հոռաթաղում 5 տուն կար: Նա ավելացնում է «ընդարձակ աւերակներից պարզ երևում է, որ գիւղս ժամանակաւ գիւղաքաղաք է եղել: Կիսաքանդ եկեղեցին ցարդ մնում է»[917]:

Պարտավ-Դվին ճանապարհի վրա գտնվելով՝ Վերին Հոռաթաղի տարածում եղած բնակավայրը, 11-րդ դարից սկսած, օտար ցեղերի հարձակումների թիրախում է եղել: Բնակիչները տեղափոխվել են ապահով վայրեր, և նախկին բնակավայրերը ավերվել ու հայաթափվել են:

Արցախի՝ Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո տարածաշրջանում ապրող հայության համար խաղաղ պայմաններ էին ստեղծվել: Այդ գեղատեսիլ վայրերի բնակավայրերը նորից սկսեցին կենդանություն ստանալ:

19-րդ դարի 30-ական թվականներին անասնապահությամբ զբաղվելու նպատակով Վանք գյուղից մի քանի ընտանիքներ, անցնելով «Խոյնա» անտառը, հաստատվում են ներկայիս գյուղից քիչ վերև՝ Պիծի Հոռաթաղ կոչված տեղամասում:

Վերին Հոռաթաղի տարեց և իրենց գյուղի պատմությանը գիտակ բնակիչները պատմում են, որ Շուշիի մոտ գտնվող Ղայբալիշեն գյուղից Գևորգ անունով մի գյուղացի իր եղբայրներով, ապահովության նկատառումներից ելնելով, նախ տեղափոխվում և հաստատվում է Վանք գյուղում, այնուհետև հասնում է Թարթառ գետի ափը, ջրաղաց կառուցում և իր հարազատների հետ բնակության վայր ընտրում գյուղի ներկայիս տարածքը: Մինչև 20-րդ դարի սկիզբը Վերին Հոռաթաղում հաստատվում են Կիվերքանց, Սայունց, Սաքունց, Մարտիրոսանց, Ավունց, Աթանեսանց, Թալիշանց տոհմի ներկայացուցիչները:

Երկրորդ հոսքը դեպի Վերին Հոռաթաղ արդեն կատարվում է խորհրդային տարիներին:

[917] Հայկունի, նշվ. աշխ., էջ 75:

1956 թ. Կոմողոտ համայնքի Երկու ջրի արանք կոչվող տեղամասից մի քանի ընտանիքներ տեղափոխվում և հաստատվում են Վերին Հոռաթաղում: Նրանց մեջ էր Վահան Վանյանը (որն ուներ 12 երեխա), Գրիշա, Ջիվանշիր, Անուշավան, Թադևոս, Գավրուշ, Ալյոշա Թադևոսյանները, Ռաֆիկ Դավթյանը, Վահան Հաթամյանը: Դրա շնորհիվ գյուղը օրեցօր մեծանում և բազմամարդ էր դառնում:

1970 թ. Վերին Հոռաթաղում կար 89 տուն, 432 բնակիչ, 1987 թ.՝ 125 տուն, 480 բնակիչ[918]:

Խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1929 թ., Վերին Հոռաթաղում «Սոցիալիստական ուղի» անունով կոլտնտեսություն է կազմավորվում: Այնուհետև Հարությունագոմերի տնտեսության հետ միասին կազմավորեցին «Իսկրա» անունով կոլտնտեսությունը:

1976 թ. Վաղուհասի, Խնկավանի, Իմերեթ Քերվենդի, Չափարի, Հարությունագոմերի և Վերին Հոռաթաղի տնտեսությունների հիման վրա ձևավորվեց Սպանդարյանի անվան խորհտնտեսությունը: 1989 թ. ապախոշորացման հետևանքով ձևավորվեց Վերին Հոռաթաղի՝ Վիկտոր Համբարձումյանի անվան կոլտնտեսությունը: 1998 թ. կոլտնտեսությունը լուծարվեց, ստեղծվեցին անհատական տնտեսություններ:

Կոլտնտեսության վարչության նախագահի պաշտոնում աշխատել են Հովսեփ Հարությունյանը, Գրիշա Առաքելյանը, Միքայել Մարտիրոսյանը, Շուրա Միրզոյանը, Վաչագան Պետրոսյանը, Հենզել Հայրապետյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 36 հոգի: Նրանցից 28 հոգի զոհվել են: 1983 թ. նրանց հիշատակին գյուղում հուշակոթող է կառուցվել:

Վերին Հոռաթաղի ազգաբնակչությունը ակտիվ մասնակցել է արցախյան ազատագրական պայքարին: 1989 թ. գյուղում ինքնապաշտպանական ջոկատ է կազմավորվել: Ռաֆայել Սայիյանը (Միրուք) այդ ջոկատի հրամանատարն էր: Արցախյան պատերազմի աչքի ընկնող հրամանատարներից էր նաև Արկադյա Շիրինյանը (Խալաստոյ): Այդ օրերին զենքի հայթայթումը ամենադժվարինն էր: Մանավանդ խորհրդային զորքերի ուղեկցությամբ Ադրբեջանի ուժային կառույցները ԼՂԻՄ հայկական բնակավայրերից հավաքել էին բոլոր որսորդական հրացանները: Այդ հարցի լուծման միակ ուղին օդային ճանապարհն էր: Զենքով, վառելիքով, սննդամթերքով ծանրաբեռնված ուղղաթիռները 1990–1992 թվականներին վայրէջք էին կատարում նաև Վերին Հոռաթաղում:

1991 թ. օգոստոսի 13-ին Վերին Հոռաթաղի կանայք փակում են Բաքու–Քարվաճառ մայրուղին: Գյուղի կամավորների աջակցությամբ նրանք պատանդ վերցրին պատժիչ գործողություններ իրականացնող 11 զինվորների: Նրանցից խլված 11 ինքնաձիգերով գյուղի կամավորական ջոկատը զինվեց:

[918] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 188:

1992 թ. հուլիսին գյուղը հայաթափվել է: 1993 թ. փետրվարին այն նորից ազատագրվեց: Ազատագրական պատերազմին Վերին Հոռաթաղից մասնակցել են 50 հոգի: Ռազմական գործողությունների հետևանքով 13 հոգի զոհվել են: Նրանցից 3-ը երեխաներ էին:

ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի ասպետներ են Արմիկ Գրիգորյանը, Ռաֆայել Սայիյանը, Արկադի Շիրինյանը և հետմահու՝ Ռոմեո Գալստյանը:

Վերին Հոռաթաղն առաջին անգամ դպրոց է ունեցել 1951 թ.: Այն տարրական դպրոցի կարգավիճակ ուներ: 1961 թ. դպրոցը դարձել է ութամյա, 1989–1990 ուսումնական տարվանից՝ միջնակարգ:

1972 թ. գյուղում դպրոցական նոր շենք է կառուցվել:

1989–1990 ուսումնական տարում դպրոցն ուներ 146 աշակերտ, 22 ուսուցիչ:

2008 թ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով կառուցվել է տիպային դպրոց՝ 120 աշակերտների համար:

2015–2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 90 աշակերտ, դասավանդում՝ 20 ուսուցիչ:

Դպրոցի տնօրեններ են աշխատել Աշխեն Սարգսյանը, Վարդուշ Անանյանը, Վարդուհի Էմիրյանը, Կարմեն Սարգսյանը, Մակիչ Մակյանը, Նուրվարդ Պետրոսյանը, Գրետա Համբարձումյանը, Արտեմ Սարգսյանը, Անուշավան Աբրահամյանը, Շահում Հարությունյանը, Նաիրա Առստամյանը: Այսօր այդ պաշտոնը վարում է Արուս Մարտիրոսյանը:

Վերին Հոռաթաղի դպրոցում կրթություն է ստացել քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամսոն Թևոսյանը:

Վերին Հոռաթաղում և նրա շրջակայքում պահպանվել են պատմաճարտարապետական հուշարձաններ. Վիտին սեռ, Ղամշոտ ծով վայրերում՝ Ք. ա. 2–1-ին հազարամյակների դամբարանադաշտեր, 12–13-րդ դարերի խաչքարեր:

Վերին Հոռաթաղում հայտնի են Քյահրիզ, Շենին, Պեխեն, Տկողնին, Հաճարկեն, Ձորին, Երե թաղեն, Մուքյուն, Սպիտակ, Ուզուն-թալա, Նվավուր, Խաթունա ջուր, Պիծի ջուր, Խաչին սեռ, Հարությունա, Կառնեն, Ըխպիրին ծոր, Քոռ, Նանեն, Փըզզանեն, Մըշրհավեն, Արցախ աղբյուրները:

Գյուղի հայտնի հանդամասերն են՝ Խոյնա սար և անտառ, Ղամշուտ ծով, Քիրանեն ծոր, Արշակեն ճըղպըրեն տակը, Ավունց տեղ, Մնցկանանց խմհատը, Հաճարկեն տակը, Յաստան, Օսեփեն տեղը, Պիծի Հուռատաղը, Աթանեսանց տափը, Կաղնուտ սեռը, Թառեն տակը, Իմրանեն տեղը, Ուզուն թալա, Նվավուր աղբյուր, Ճղպրոտ, Աթաջանեն կյումերը, Գյուլատեղ, Հացուտ ծոր, Պուրուտին փոսը, Իզալյատոր, Քարին տափը, Լուբատեղ:

Գյուղի ազգատոհմերն են՝ Արշականք (Հարությունյաններ), Սաքունք (Հարությունյաններ), Սայունք (Սայիյաններ), Թալիշանք (Միրզոյաններ), Ավունք (Առաքելյաններ), Նալբանդովանք (Հովհաննիսյաններ), Մելունք (Վանյաններ), Հայրունք

(Հայրիյաններ), Հաթամանք (Ադամյաններ), Թաթոսանք (Թադևոսյաններ), Տիվիթանք (Դավթյաններ), Աթանեսանք (Մկրտչյաններ), Պարսունք (Գրիգորյաններ), Մելքումյաններ, Շիրինյաններ, Ավետիսյաններ, Սոնունք (Մելքումյաններ), Սայամանք (Սարգսյաններ), Վաչագանունք (Պետրոսյաններ), Երմիյանք (Հայրապետյաններ), Միրզաբեկյաններ, Մկրտչյաններ:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը: Համայնքում գործում են գյուղապետարան, բուժկետ, դպրոց, առևտրի 5 կետ:

Վերին Հոռաթաղում 2018 թ. կար 75 տուն, 502 բնակիչ[919]: Բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ, նաև աշխատում բնակավայրին հարակից հանքավայրերում:

ՆՈՐ ՋՐԱԲԵՐԴ

Գյուղը գտնվում է ԱՀ արևելյան հատվածում՝ Մարտակերտի շրջանում՝ նախկին Խաչեն գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Խաչենագետի ստորին հոսանքի ձախափնյակում՝ Ջանյաթաղ, Ղազանչի, Նոր Մարաղա գյուղերի արանքում:

Վաղանցյալ շրջանում գյուղի գոյության մասին սկզբնաղբյուրները լռում են: Սակայն շինարարական աշխատանքների ընթացքում հայտնաբերվել են նախաքրիստոնեական ժամանակաշրջանին բնորոշ տաճարների հիմնաքարեր:

Ընդհանուր առմամբ Նոր Ջրաբերդի շրջակայքում միջնադարում հայկական բնակավայրեր են եղել: 18-րդ դարի երկրորդ կեսին Ղարաբաղի խաների ճնշումների տակ այդ գյուղերի մի մասը հայաթափվել էր: Մինչև խորհրդային կարգերի հաստատումը Խաչենագետի ստորին հոսանքի նախկին հայկական բնակավայրերի տարածքները քոչվորների համար որպես ձմեռանոցներ էին ծառայում:

Խորհրդային տարիներին Ադրբեջանի կառավարության որոշմամբ թուրք մի քանի ընտանիքներ վերաբնակվեցին ներկայիս Նոր Ջրաբերդի տարածքում: Գյուղը ստացավ Գալայչիլար անվանումը:

1923 թ. ԼՂԻՄ սահմանները ճշտող հանձնաժողովը նորաստեղծ ինքնավար մարզի վարչական ենթակայությունից դուրս թողեց վերոհիշյալ բնակավայրը: Այն հայտնվեց ԱԽՍՀ Աղդամի շրջանի կազմում:

Արցախյան ազատագրական պայքարի տարիներին Գալայչիլարից հրետանակոծվում էին մարզի հայկական բնակավայրերը: 1993 թ. ԱՀ ՊԲ հարվածների տակ Գալայչիլարը ազատագրվեց: 1996 թ. սկսվեց բնակավայրի վերաբնակեցման գործընթացը: Այստեղ հաստատվեցին Ադրբեջանից բռնագաղթած և Մարտակերտի շրջանի գյուղերից մի քանի ընտանիքներ:

[919] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 3:

Գյուղը ստացավ պատմական Ջրաբերդ բնակավայրի՝ Նոր Ջրաբերդ անվանումը:

Գյուղում 2010 թ. հոկտեմբերի 1-ից գործում է Նոր Մարաղայի միջնակարգ դպրոցի մասնաճյուղը: 2015-2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 7 աշակերտ, դասավանդում՝ 2 ուսուցիչ՝ Կնյազ Մելքումյանը, Արմեն Մելքումյանը[920]:

Կապված «Կաշեն»-ի բազմամետաղ հանքի շահագործման հետ՝ Նոր Ջրաբերդի վերաբնակները հեռացել են իրենց նախկին բնակավայրերը: Այդ պատճառով 2019-2020 ուսումնական տարվանից դպրոցը չի գործում:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային հեռախոսակապը բնակչությանը հասանելի են: Բնակավայրը ներառված է Նոր Հայկաջրի կազմում:

Նոր Ջրաբերդում 2010 թ. կար 31 տուն, 78 բնակիչ[921], 2018 թ.՝ 2 տուն, 75 բնակիչ[922]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՔՈԼԱՏԱԿ

Բնակավայրը գտնվում է Խաչեն գետի Քոլատակ վտակի միջին հոսանքի ձախ ափին՝ գեղատեսիլ հովտում: Գյուղը երեք կողմից շրջապատված է անտառապատ լեռնաշղթաներով, և բաց է միայն արևելյան հատվածը: Գյուղի հարավային մասով՝ արևմուտքից արևելք, ձգվում է Հավքախաղաց լեռնաշղթան, որի բարձր գագաթներն են Կաչաղակաբերդը (1915 մ) և Հաչա ժայռը (2087 մ): Հյուսիսային և արևմտյան մասերով ձգվում է Խոյախանի լեռների Քոլատակ լեռնաբազուկը, որի ամենաբարձր գագաթը Քարագլուխն է (1993 մ): Հարավարևմտյան մասով ձգվում են Ղարաբաղյան լեռնաշղթայի Կուսանաց լեռները: Արցախի այդ գողտրիկ հատվածը մարդու ապահով կյանքի համար բավականաչափ հարմարավետ է: Պատահական չէ, որ այդտեղ վաղ միջնադարից սկսած եղել են բազմաթիվ բնակավայրեր՝ Հնձան, Կչորան, Բեշտաև, Ճրտապաս, Մոշի հող, Շահեն սեռ և այլն, որոնք 18-րդ դարում ավերվել են թուրքերի կողմից: Դարերի ընթացքում Հայոց երկրի այդ հատվածի բնակիչները, այդ թվում նաև Քոլատակի հայությունը, պայքարել են հայոց պետականության պահպանման համար և պատահական չէ, որ այս գյուղը դարձել էր Խաղբակյան կամ Պոռշյան իշխանական տոհմի նախնական բնակավայրը, իսկ Հավապտուկ վանքը՝ նրանց տոհմական գերեզմանատունը:

Քոլատակից ոչ շատ մեծ հեռավորության վրա, բնակավայրից 2 կմ դեպի հյուսիս, գտնվում է Մեծիրանից Սուրբ Հակոբա վանքը: Այն դեռևս 7-րդ դարից դարձել էր գրչության և դպրության կենտրոն: Վանքը եղել է ինչպես եպիսկոպոսանիստ, այն-

[920] Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Լեռնային Ղարաբաղի հանրապետության կրթական համակարգը (1991-2016 թթ.), հ. 3, էջ 552:

[921] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[922] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

պես էլ կաթողիկոսանիստ կենտրոն: Խաչենի իշխան Վախթանգի կինը՝ Սարգիս Ջալալյանի դուստր Խորիշահը, կառուցում է համալիրի եկեղեցիներից մեկը: Այս հանգամանքը նպաստել է, որ շրջակա բնակավայրերը, այդ թվում Քոլատակը, զարգանան: Տեղի հայությունը արաբական արշավանքներից պաշտպանվելու նպատակով 8-րդ դարում կառուցել է Խաչենի բերդը կամ Կաչաղակաբերդը: Քոլատակի բնակչությունը դժվարին պայմաններում դիմակայել է նաև սելջուկ-թուրքական և մոնղոլ-թաթարական արշավանքներին:

Դիմակայելով բոլոր տեսակի դժվարություններին՝ 1813 թ. Արցախի մյուս բնակավայրերի հետ միասին Քոլատակը հայտնվել է ռուսական կայսրության կազմում:

19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին Քոլատակում գործել են փայտամշակման, շերամապահական, մետաքսամշակման փոքր գործարաններ, 3 ալրաղաց (Մասունց, Իրիցանց, Տնջրեն տակեն): Գյուղն ունեցել է նաև հնձան:

19-րդ դարի 80-ական թվականներին գյուղն ուներ 25 տուն[923]:

Համեմատաբար խաղաղ իրավիճակը նպաստավոր պայմաններ ստեղծեց գյուղի զարգացման համար: Քոլատակն ուներ առանձին թաղամասեր՝ Բախչոտ, Երե թաղ, Միջին թաղ, Ներքե թաղ, Գյունե թաղ, Վարդոտ, Իրիցին թաղ, Փլխատեղ, Կալին թաղ:

1920 թ. մայիսին Քոլատակում հաստատվեցին խորհրդային կարգեր: Կոլտնտեսությունը կազմակերպվել է 1930 թ., որը այնուհետև միավորվել է Առաջաձորի տնտեսությանը, և ստեղծվել է միացյալ պետական տնտեսություն:

1988 թ. երկու տնտեսությունները նորից առանձնացվել են:

Կոլտնտեսության վարչության նախագահներ էին Եփրեմ Մաղաքելյանը, Բախշի Աղասյանը, Նապոլեոն Հարությունյանը, Բենիկ Մաղաքելյանը, Սմբատ Դանիելյանը:

Սովխոզի ղեկավարներից են եղել Սմբատ Դանիելյանը, Արտուր Աղասյանը, Կիմա Ավանեսյանը, Արթուր Բաբայանը:

Քոլատակից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 155 մարդ, զոհվել է 74-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան:

Քոլատակի հայությունը անմնացորդ մասնակցեց արցախահայության ազատագրական պատերազմին: Ռազմական գործողություններին մասնակցել են 50 քոլատակցիներ: Նրանցից 13 հոգի զոհվել են: Պատերազմի զոհերի հիշատակին գյուղում հուշարձան է կանգնեցվել:

ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի են արժանացել Ատոմ Գաբրիելյանը և Մխիթար Գաբրիելյանը:

Դեռևս միջնադարից սկսած Քոլատակի երեխաները ուսում էին ստանում Սբ. Հակոբա վանքում:

Խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Քոլատակում 1923 թ. բացվել է տարրական դպրոց, 1936 թ.՝ յոթնամյա, 1968 թ.՝ միջնակարգ:

[923] Հայկունի, նշվ. աշխ., էջ 75:

1988-1991 թթ. դպրոցում սովորում էր 126 աշակերտ, դասավանդում՝ 12 ուսուցիչ: 2017-2018 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 50 աշակերտ: Դպրոցի տնօրեններ են եղել Սարգիս Զաքարյանը, Վաղարշակ Գաբրիելյանը, Արթուր Աղասյանը, Ալեքսանդր Մաղաքելյանը, Գրիշա Հարությունյանը, Թաթուլ Եսայանը, Վահրամ Աղասյանը:

Գյուղի դպրոցի շրջանավարտներ են տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լենսեր Աղալովյանը, ԱՀ ժողովրդական դերասան Քաջիկ Հարությունյանը, ԽՍՀՄ հերոս՝ Նիկոլայ Եսայանը:

Քոլատակ գյուղում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության մի շարք հուշարձաններ: Դրանցից նշանավոր են Մեծիրանից Սբ. Հակոբա վանքը (7-18-րդ դդ.), Կոշիկ անապատ վանական համալիրը (12-13-րդ դդ.), Իսարանցոց ամրոց-բնակատեղին, Իսարանցոց մատուռը (8-13-րդ դդ.), Իսարանցոց և Վնրհետեր սրբատեղին, Հավապտուկ վանքը (9-18-րդ դդ.), Հնձանին, Մոշեն հողի, Զառունց տափի եկեղեցիները, Եղցուն խութ եկեղեցին, Կաչաղակաբերդը (7-13-րդ դդ.), Նատարին, Ծիրանաքար, Դետ ամրոցները (10-13-րդ դդ.), ինչպես նաև 853 թվականից մինչև 19-րդ դարն ընկած ժամանակաշրջանին առնչվող խաչքարեր, արձանագրություններ:

Քոլատակի աղբյուրներն են՝ Նով, Ցորտ ձյուր, Ծլլոկ, Սոուցեն ծոր, Վետանց, Քոռչ, Վաղուն, Ըրկըծորին, Բալունց, Մարդին, Վանքեն, Ճղացեն դռան, Դալլաքեն, Շվաքեն, Վեղեն, Փանցին սպանածը, Զաքին ծով, Կողեն, Թթու ջուր, Քոռճ ձյուր, Կարմիր:

Գյուղի նշանավոր հանդամասերն են Հնձանը, Գիլաբա խութը, Քարեն կլոխը, Գյուռուգանց խաչեն խութը, Տնջրեն տափը, Թավը, Սրենը:

Քոլատակում նշանավոր ազգատոհմերն են՝ Իրիցանք, Օհանանք, Սայունք, Չփախանք, Պտրուսանք, Կափունք, Քյուխանց, Նկարանք, Պղուսանք, Զաքունք, Ըկուրջանանք, Կիվերքանք, Մելքումանք, Զառունք, Բրլրսանանք, Մասունք:

Համայնքում գործում են գյուղապետարան, բուժկետ, դպրոց:

Գյուղից դեպի մայրուղի տանող ճանապարհը 2012 թ. ասֆալտապատվել է ռուսաստանաբնակ քոլատակցի Հայկ Մաղաքելյանի միջոցներով:

Քոլատակում 1970 թ. կար՝ 131 տուն, 534 բնակիչ, 1979 թ.՝ 131 տուն, 461 բնակիչ, 1987 թ.՝ 117 տուն 341 բնակիչ[924], 2018 թ.՝ 65 տուն, 262 բնակիչ[925]: Քոլատակի բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ:

[924] Մելքումյան Ս., նշվ. աշխ, էջ 181:

[925] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

ՏՈՆԱՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսարևելյան հատվածում՝ Մարտակերտի շրջանում՝ նախկին Ջրաբերդ գավառում:

Տոնաշենը Արցախի հին բնակավայրերից է:

Վաղ միջնադարից սկսած՝ Տոնաշենը և նրա շրջակայքը խիտ բնակեցված են եղել: Այդտեղ են գտնվում մեկը մյուսից ոչ շատ մեծ հեռավորության վրա գտնվող գյուղերի մնացորդները:

Տոնաշենի շրջակայքում են գտնվում Ջերմուկ, Թագավորասեր, Կոտրած եղցի, Եղակեր, Փոքր թթոտ, Դաստագիր կամ Դաստակերտ, Ղուզե գյուղատեղիներն ու մի քանի գերեզմանատներ:

Դեռևս վաղ միջնադարից սկսած վերոհիշյալ տարածքը Արցախի հոգևոր և աշխարհիկ տերերի հետաքրքրությունների շրջանակում էր, և պատահական չէր, որ այս բնակավայրերից մի քանիսը Հայոց Արևելից կողմանց թագավոր Վաչագան Բարեպաշտի, Աղվանից Վիրո կաթողիկոսի համար նստավայրի դեր էին կատարում: Վաչագան Բարեպաշտի դամբարանը և Ջրաբերդի Մելիք Իսրայելյանների տապանատունը գտնվում են Տոնաշենից ոչ շատ մեծ հեռավորության վրա՝ Եղիշ առաքյալ կամ Ջրվշտիկ վանքում:

Տոնաշենի դեմ դիմաց Տրտու-Թարթառի աջափնյակում է գտնվում Կաթողիկոսարանը՝ Աղվանից Վիրո կաթողիկոսի (615-630 թթ.) քարանձավ-բնակարան նստավայրը:

Տոնաշենից 10 կմ հարավ արևմուտք՝ Մռավի հարավային անտառածածկ լանջին, կառուցվել էր Երից Մանկանց (Երեք մանկունք) եկեղեցին, որտեղ 1691 թ. ստեղծվել էր Գանձասարին հակաթոռ կաթողիկոսական կենտրոն:

Տոնաշենից ոչ շատ մեծ հեռավորության վրա են գտնվում միջնադարյան Ճոխտ եղցեն, Կոտրած եղցեն, Անապատ, Թուխկասարի վանքերը, նշանավոր Ջրաբերդի ամրոցը (7-18-րդ դարեր) և 1902 թ. կառուցված Գետի գոմեր կամուրջը:

Գյուղը Մակար Բարխուդարյանցը անվանել է նաև Դոնի շեն, Դանիելի շեն[926]:

Մակար Բարխուդարյանցը գրել է, որ գյուղի եկեղեցին և հանգստարանը հին են, իսկ բնակիչները նոր էին հաստատվել Տոնաշենում[927]:

Արխիվային նյութերը վկայում են, որ 19-րդ դարի 60-ական թվականներին Մաղավուզից մի քանի ընտանիքներ քահանա Դանիել Ետգարյանցի հետ միասին տեղափոխվել և բնակություն են հաստատել անտերության մատնված Տոնաշենում[928]:

Դանիել Ետգարյանի անունով էլ գյուղը անվանվել է՝ Դանիելի շեն:

[926] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 280:

[927] Նույն տեղում:

[928] ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 46, թ. 27; «Մշակ», հմ. 246, 1902:

Մեկ այլ տեսակետի համաձայն էլ, որը հիմնված է ավանդազրույցի վրա, գյուղը հիմնադրել է Վաչագան Բարեպաշտի տոհմակից Տոնին կամ Դոնին: Նրա անունից էլ գյուղը անվանվել է Տոնաշեն[929]:

Գյուղի Սբ. Գևորգ եկեղեցին գործել է մինչև 1920 թ.: 1930 թ. այն վերածվել էր կոլտնտեսության պահեստի:

Տոնաշենում 1930 թ. կոլտնտեսություն էր կազմակերպվել, որը Մատաղիսի և Չայլույի կոլտնտեսությունների հետ միասին կազմել է առանձին պետական տնտեսություն (սովխոզ): 1988 թ. միացյալ սովխոզը ապախոշորացվել է, իսկ 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվել են անհատական տնտեսություններ:

Տոնաշենից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 93 մարդ, զոհվել է 41-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Տոնաշենցիները իրենց ավանդն են բերել նաև արցախահայության ազատագրական պայքարին: Ռազմական գործողությունների ժամանակ զոհվել է տոնաշենցի մեկ ազատամարտիկ:

1992 թ. գյուղը զինակալվել է թշնամու կողմից: ԱՀ պաշտպանության բանակին հաջողվել է 1993 թ. ազատագրել նաև Տոնաշենը:

Խորհրդային տարիներին գյուղում գործել է տարրական, այնուհետև ութամյա դպրոց: Աշակերտների թվաքանակի կրճատման պատճառով 1980-ական թվականների վերջերին դպրոցը փակվել է:

ԱՀ կազմավորումից հետո Տոնաշենում բացվել էր տարրական դպրոց:

Ադրբեջանցիների կողմից 1992 թ. հունիսի 16-ին գյուղի բռնազավթումից հետո ութ տարի դպրոցը չի գործել: 2000 թ. սեպտեմբերին 6 աշակերտով դպրոցը վերաբացվել է: 2012 թ. Տոնաշենի կրթօջախը դարձել է Մատաղիսի միջնակարգ դպրոցի մասնաճյուղ:

Ծննդով Տոնաշենցի են բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սարգիս Սարգսյանը, գրող-հրապարակախոս Բակուր Կարապետյանը:

Գյուղի աղբյուրներն են՝ Անումավոր, Ղուդի, Նոթուտ, Ստեփանեն, Ճղպուրոտեն, Ֆերմայի, Միջիդին, Պապին, Անահիտին, Պատին, Օբեշիկի, Ջավոդեն, Բալախանի, Սևգուլին, Հարամ, Ծով, Հով, Վերդուն, Ոսկի, Մուշուհավեն:

Տոնաշենը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, բուժկետ, դպրոց, առևտրի 1 կետ:

[929] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 165:

Տոնաշենում 1890-ական թվականներին կար 35 տուն, 247 բնակիչ, 1987 թ.՝ 65 տուն, 140 բնակիչ[930], 1992 թ. հուլիսի 1-ի տվյալներով՝ 162 բնակիչ, 2010 թ.՝ 29 տուն, 86 բնակիչ[931], 2018 թ.՝ 11 տուն, 117 բնակիչ[932]:

Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[930] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 165:
[931] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[932] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ԳՈՐԾՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՔԱՐՏԵԶԸ



ՄԱՐՏՈՒՆԻ

Մարտունի քաղաքը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մուխանքի դաշտաբերանում՝ Խոնաշեն սակավաջուր գետի երկու ափին՝ բլրաշատ մի հարթավայրում:

Վարանդայի մելիքության հզորության ժամանաշրջանում՝ 17-րդ դարի վերջերին և 18-րդ դարում, բերքառատ այդ հողերը մշակելու նպատակով ներկայիս Մարտունիի մերձակա գյուղերից մի քանի ընտանիքներ հիմնավորվեցին այդ վայրում, և գետի անունից բնակավայրն անվանվեց Խոնաշեն:

1830–1850 թթ. Ռուսաստանի տարբեր նահանգներից, մասնավորապես Սարատովից և Տամբովից, ռուս-մոլականների հազարավոր ընտանիքներ տեղափոխվում և բնակավայր են հիմնում Գուգարքից մինչև Արաքս գետն ընկած հարթավայրային տարածքներում:

Բազմաթիվ ընտանիքներ հաստատվել են նաև Խոնաշենում, ինչից հետո բնակավայրը վերանվանվել է Նիկոլաևկա: Պատահական չէ, որ առայսօր Մարտունու թաղամասերից մեկը, որտեղ ներկայումս ռուսներ չեն ապրում, կոչվում է ռուսեն թաղ:

1870 թ. Այսրկովկասում՝ մասնավորապես Հայաստանում, ձորտատիրական կարգերի վերացումից հետո, Խոնաշենի արգավանդ հողերի մշակումը նոր ընթացք ստացավ: Այստեղ էին գալիս ոչ միայն Վարանդայի, այլև Դիզակի, Խաչենի և Ջրաբերդի գյուղերից: Խորհրդային տարիներին Մարտունուց դեպի հյուսիս-արևելք ընկած դաշտավայրի հողերն անցել են վերոհիշյալ գավառների գյուղերում ձևավորված կոլտնտեսություններին:

19-րդ դարի 70-ական թվականներից սկսած այս հանգամանքները նպաստեցին, որ Խոնաշենի բնակչությունն անհամեմատ շատանա: Խոնաշենը կարճ ժամանակամիջոցում ընդարձակվեց և գավառի մեծ գյուղերից մեկը դարձավ: Այդ պատճառով 1923 թ. շրջանի կենտրոնը Ճարտարից տեղափոխվեց Խոնաշեն, որը նորից կրում էր այդ անունը:

1925 թ. ավիավթարի հետևանքով զոհվեց նշանավոր պետական, կուսակցական գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանը (Մարտունի): 1927 թ. Վարանդայի շրջանը նրա անունով վերանվանվել է Մարտունու շրջան, իսկ 1930 թ. այդ անունը կրեց նաև շրջկենտրոնը:

Խորհրդային տարիներին Մարտունին որոշակի զարգացում ապրեց: 1931 թ. այստեղ կառուցվել է գինու-կոնյակի գործարան: Մարտունու այն թաղամասը, որտեղ կառուցվել էր վերոհիշյալ գործարանը, անվանվեց Կարվին: 1986 թ. գործարանը կոչ-

վեց Կարվինի համար 3 գինու գործարան: 2002 թ. այն սեփականաշնորհվել է Ղարաբաղ գոլդ ընկերության կողմից:

Երկրորդ աշխարհամարտի նախօրյակին և հատկապես դրանից հետո, շրջկենտրոնում մի շարք արդյունաբերական և կենցաղսպասարկման ու տրանսպորտի օբեկտներ ստեղծվեցին, որոնց թվում յուղի-պանրի գործարանը, արհեստագործական արտելը, կենցաղսպասարկման կոմբինատը, ավտոշարասյունը, էլեկտրոցանցի շրջանային ենթակայանը, թռչնաբուծական ֆաբրիկան, ասֆալտի և հացի գործարանները, Ստեփանակերտի կոնդենսատորների գործարանի Մարտունու մասնաճյուղը, գյուղքիմիայի, շինարարական ձեռնարկությունները, Ղարաբաղ գորգագործական արտելի Մարտունու մասնաճյուղը, շերամի ընդունման և չորացման կետ, բաղնիք, հյուրանոց, հանրակացարան:

1924 թ. Մարտունիում բացվեց ագրոկետ, որտեղ մասնագետները գյուղացիներին սովորեցնում էին հողի մշակման նոր եղանակները, անց էին կացնում զրույցներ, գյուղատնտեսական տարբեր հարցերի շուրջ կազմակերպում դասախոսություններ:

1929 թ. կազմակերպվեց Մարտունու Ա. Մյասնիկյանի անվան կոլտնտեսությունը:

Շրջկենտրոնում գործում էին կոշկակարական, կար ու ձևի, ժամագործական արհեստանոցներ:

Մարտունիում գերակշռում են երկհարկանի բարեկարգ տները, իսկ 1960-ական թվականներից բնակավայրի կենտրոնական մասում կառուցվում են 4–5 հարկանի պետական բնակելի շենքեր:

1958 թ. Մարտունին ավանի, իսկ 1985 թ. քաղաքի կարգավիճակ ստացավ:

1930-ական թվականներին հիմնադրվում է Մարտունու շրջանային հիվանդանոցը: Խորհրդային շրջանում երկար տարիներ հիվանդանոցը գլխավորել են բժիշկներ Է. Դաղայանը, Գ. Նարինյանը, Գ. Գասպարյանը: Ներկայումս կառուցվել է հիվանդանոցի ժամանակակից նոր մասնաշենք, որի գլխավոր բժիշկը Ռ. Բաղդասարյանն է:

Շրջկենտրոնն էլեկտրաֆիկացվել է 1958–1961 թթ., իսկ 1987 թ. գազաֆիկացվել է:

1925 թ. Մարտունիում հիմնադրվել է թիվ 1 միջնակարգ դպրոցը, որտեղ տնօրեններ են եղել Բ. Հակոբյանը, Ս. Ավանեսյանը, Ս. Ավետիսյանը, Է. Բալայանը:

Խորհրդային տարիներին դպրոցն ուներ նաև ռուսական բաժին, որտեղ հայ երեխաներ էին սովորում:

1961 թ. Մարտունիում բացվում է թիվ 2 ութամյա դպրոցը, որի տնօրեններ են եղել Ռ. Բաբայանը, Օ. Գրիգորյանը:

1987 թ. կառուցվում է նոր դպրոցական շենք և թիվ 1 դպրոցը տեղափոխվում է Խոնաշենի ափամերձ հատվածը: 1988–1990 թթ. Ն. Ստեփանյանի անվան թիվ 1 դպրոցում սովորում էր 252 աշակերտ, իսկ 2014–2015 ուսումնական տարում՝ 479 աշակերտ, դասավանդում՝ 38 ուսուցիչ: 1987–1992 թթ. դպրոցի տնօրենի պաշտոնում աշ-

խատել է Ս. Պետրոսյանը, 1992–2011 թթ.՝ Վ. Հայրապետյանը, 2011 թվականից առայսօր՝ Կ. Պողոսյանը:

Մարտունու Մ. Մաշտոցի անվան թիվ 2 դպրոցում 1989–1990 ուսումնական տարում սովորում էր 426 աշակերտ, դասավանդում՝ 42 ուսուցիչ: Իսկ 2014–2015 ուսումնական տարում համապատասխանաբար՝ 348 աշակերտ և 32 ուսուցիչ: 1993 թվականից դպրոցի տնօրեններ են աշխատել՝ Հ. Գասպարյանը, Է. Մուսայելյանը, Ն. Բաբայանը, Մ. Ջիվանյանը:

Մարտունու միջնակարգ դպրոցն է ավարտել օվկիանոսագետ, ԽՍՀՄ ԳԱԱ ակադեմիկոս Արտյոմ Սարգսյանը:

1973 թ. Մարտունիում բացվել է թիվ 25 գյուղպրոֆտեխուսումնարանը: 1974 թ. հունվարի 1–ից այն վերանվանվել է Մարտունու համար 125 գյուղպրոֆտեխուսումնարանի, 1993 թ. սեպտեմբերի 1–ից՝ Մարտունու միջնակարգ գյուղպրոֆտեխուսումնարանի: 2010 թ. օգոստոսի 12–ից այն կրում է ուսումնարանի շրջանավարտ, արցախյան ազատագրական պայքարի նշանավոր դեմքերից մեկի՝ Վ. Խաչատրյանի անունը: 1974 թվականից մինչև 2016 թ. հուլիս ամիսն ուսումնարանն ունեցել է 5658 շրջանավարտներ: Նրանցից Շվարց Հարությունյանը և Վազգեն Բալայանը ընտրվել են ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորներ:

1973 թ. առայսօր ուսումնարանի տնօրեններ են եղել Ք. Սաֆարյանը, Ս. Սաֆարյանը. Ռ. Գրիգորյանը, Մ. Սարգսյանը, Գ. Հակոբյանը, Ժ. Խաչատրյանը, Ս. Հայրապետյանը, Ռ. Բաբայանը:

1992 թ. հունվարի 21–ից մինչև 1993 թ. նոյեմբերի 1–ը ուսումնարանի շենքում գործել է Մոնթե Մելքոնյանի (Ավո) գլխավորած Մարտունու պաշտպանական շրջանի շտաբը:

2016–2017 ուսումնական տարում ուսումնարանում սովորել են 204 աշակերտներ, աշխատել՝ 58 վարպետներ և ուսուցիչներ:

Ինչպես խորհրդային տարիներին, այնպես էլ ներկայումս Մարտունիում գործում է երկու մանկապարտեզ:

Մարտունիի տպարանում հրատարակվել են Բոլշևիկյան դրոշ, Դեպի կոմունիզմ, Աշխատանք, իսկ ներկայումս՝ Ամարաս թերթերը:

Մարտունիում գործել են գրադարան, գրախանութ, պատմաերկրագիտական թանգարան, մշակույթի հոյակերտ պալատ: Գրախանութից բացի մշակույթի մնացած հիմնարկություններն այսօր գործում են: Մարտունու Սայաթ–Նովայի անվան կինոյի շենքը վերակառուցվել է, և այն ծառայում է որպես մարզադահլիճ: Մշակույթի պալատում գործում են արվեստի և երաժշտության խմբակներ: Նշանավոր է Մարտունու Քնար պետական–երաժշտական համույթը:

Արցախի հայաթափման և թուրքերով բնակեցնելու քաղաքականությունն առավել արտահայտված ձևով տեսանելի էր Մարտունի քաղաքում: Պատահական չէ, որ Մարտունիում հյուսիսային և արևմտյան թևերում ձևավորվել էր երկու թաղամաս՝ Աֆշարը

(տեղացիները անվանում էին Օշառեն թաղ — Վ. Բ.) և Խոջավենդը: Վերջինս ձևավորվել էր 20–րդ դարի սկիզբներին: Այն սկզբում գյուղի կարգավիճակ ուներ, սակայն 1958 թվականից Ադրբեջանի իշխանությունների որոշմամբ միացվեց Մարտունի ավանին:

1981 թ. տվյալներով Մարտունին ունեցել է 1450 տուն, 7100 բնակիչ[933]: Քաղաքի ազգաբնակչության 90 տոկոսը հայեր էին, իսկ մնացած 10 տոկոսը՝ ադրբեջանցիներ և քիչ թվով ռուսներ: Իսկ քաղաքից քիչ հեռու արագորեն աճում էր թուրքացված մեկ այլ բնակավայր՝ Ամիրանլարը: Պատահական չէ, որ արցախյան շարժման առաջին իսկ օրերին Մարտունին հայտնվել էր կրակե աքցանի մեջ:

1989 թ. Մարտունիում Ա. Արզումանյանը, Վ. Խաչատրյանը, Ս. Երեմյանը, Մ. Օհանյանը, Մ. Մոսիյանը կազմակերպեցին առաջին մարտական ջոկատները:

1992 թ. հունվարին Մոնթե Մելքոնյանը, դառնալով Մարտունու ՊՇ հրամանատար, իր շուրջ համախմբեց Մարտունի քաղաքի և ողջ շրջանի առանձին–առանձին գործող ջոկատները:

Մարտունու ազատամարտիկները ռազմաճակատի տարբեր հատվածներում ապացուցեցին, որ կարող են հայրենիքի վստահելի պաշտպաններ լինել: Ազատագրական պատերազմի տարիներին Մարտունի քաղաքից 143 ազատամարտիկներ զոհվեցին: Նրանց հիշատակը հավերժացնելու համար քաղաքում կառուցվել է հուշահամալիր:

Վլադիմիր Մնացականի Խաչատրյանը, Մերուժան Արմենի Մոսիյանը, Արթուր Արմենի Մոսիյանը, Յուրի Նորիկի Գասպարյանը, Կամո Գեորգիի Դանիելյանը, Մավր Զոհրաբի Օհանյանը, Վլադիմիր Ալբերտի Առստամյանը, Սարո Բաբկենի Երեմյանը, Մասիս Սերգեյի Սուլեյմանյանը, Առուշան Հմայակի Բաղասյանը և Կոմիտաս Արարատի Ավետիսյանը արժանացել են ԱՀ «Մարտական խաչ» 1–ին աստիճանի շքանշանի:

Հայկ Կարոյի Սարգսյանը, Ռաֆիկ Գեորգիի Մարտիրոսյանը, Արամ Ռոբերտի Ավանեսյանը, Աբրիկ Աշոտի Արզումանյանը, Սամվել Կառլենի Ղահրամանյանը, Արթուր Ալեքսանդրի Սարգսյանը, Գարիկ Բենիկի Ստեփանյանը, Կարեն Մարտինի Ուլուբաբյանը, Ռոբերտ Ալեքսանդրի Մուսայելյանը, Տոլիկ Խորենի Աբրահամյանը, Վլադիկ Հրաչիկի Ոսկանյանը, Ֆելիքս Ռազմիկի Պողոսյանը, Գոռ Էդուարդի Իշխանյանը, Ժիրայր Ռաֆայելի Ազիզյանը, Վազգեն Բորիկի Ազիզյանը, Արայիկ Հրանտի Հակոբյանը, Հովիկ Գրիգորիի Միրզաջանյանը, Նարեկ Վլադիմիրի Աթալյանը, Գրիշա Ռաֆիկի Ազիզյանը, Գրիգորի Ժորայի Բաբայանը, Վարդան Ոսկանի Խաչատրյանը, Սամվել Արտյոմի Եսայանը, Ռոբերտ Բաբկենի Սաղյանը, Սենորիկ Սեդրակի Ավագյանը, Վլադիմիր Միքայելի Միրզոյանը, Արարատ Հրանտի Օհանյանը, Ժան Էռնեստի Գասպարյանը, Կիմ Նիկիտի Մկրտչյանը, Սեյրան Անդրանիկի Գևոր-

[933] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 305:

գյանը, Կոմիտաս Միխայիլի Զարդարյանը և Սեյրան Ալեքսանդրի Ազիզյանը արժանացել են ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի:

Արցախյան գոյամարտից հետո մարտունեցիները ձեռնամուխ եղան պատերազմի հետքերը վերացնելու և Մարտունու շենացման գործին: Քաղաքի կենտրոնում վեր է խոյանում Արցախյան ազատամարտի նվիրյալ, Հայաստանի Հանրապետության ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի (Ավոյի) հուշարձանը, որն արթուն պահակի պես հսկում է մարտունեցիների անդորրը:

2002 թ. սկսեց գործել թռչնաբուծական ֆաբրիկան, բացվեց քաղցրավենիքի, հրուշակեղենի, լիմոնադի («Տնջրի» ԱՁ-ն) արտադրամասը, կառուցվեց բարձրահարկ բազմաբնակարան շենքերից բաղկացած նոր թաղամաս, հանդիսությունների սրահ:

2006 թ. ավարտվեցին Սբ. Ներսես Մեծ եկեղեցու շինարարական աշխատանքները:

2011 թ. Մարտունիում բացվեց մանկապատանեկան մարզադպրոց, որտեղ տարբեր սպորտաձևերով մարզվում են 325 աշակերտներ:

Ներկայումս Մարտունիում գործում են երաժշտական դպրոց, զինվորական հոսպիտալ, հյուրանոց, կահույքի մի քանի արտադրամասեր, երկու գրադարան, պատմաերկրագիտական թանգարան, ժամանակակից խանութներ, 4 բանկի մասնաճյուղեր:

2019 թ. տվյալներով Մարտունի քաղաքում կա 1624 տուն, 5705 բնակիչ[934]:

Նրանք աշխատում են շրջկենտրոնի պետական և մասնավոր հիմնարկ-ձեռնարկություններում, ծառայում ԱՀ Պաշտպանության բանակում:

ՔԱՋԱՎԱՆ

Գյուղը գտնվում է ԱՀ արևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Մուղանի դաշտաբերանում՝ Խոնաշենի աջափնյա բլրապատ հարթավայրում:

Քաջավանը ներառված է Մարտունու քաղաքային համայնքի կազմի մեջ և համանուն շրջկենտրոնից 1 կմ դեպի արևելք է գտնվում:

Գյուղի տարածքում պահպանված գյուղատեղիի, եկեղեցու, խաչքարերով գերեզմանոցի մնացորդները վկայում են, որ միջնադարում այդտեղ հայկական բնակավայր է եղել:

Հայկական պետականության անկումից հետո, քոչվոր ցեղերի մշտական ավազակային հարձակումների պայմաններում դաշտավայրի հայությունը ստիպված ապաստանել է լեռնաստանում:

[934] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

15-16-րդ դարերից, մի քանի հարյուրամյակ շարունակ, Ամիրանլարը, որի պատմական անունը մեզ անհայտ է, լքված էր:

Խորհրդային տարիներին Ադրբեջանի ղեկավարությունը, ռազմավարական նշանակության կետերում ադրբեջանաբնակ բնակավայրեր հիմնելու շարժառիթով, նպատակային աշխատանքներ է կատարել: Թիրախում էր հայտնվել նաև Մարտունի շրջկենտրոնը:

1921-1930 թվականներին Մարտունի քաղաքի շուրջ ի հայտ եկան Ամիրանլար, Մուղանլու, Խոջավենդ ադրբեջանաբնակ բնակավայրերը:

Արցախյան ազատագրական պատերազմի տարիներին վերոհիշյալ բնակավայրերը Ադրբեջանի համար վերածվել էին ռազմական հենակետի: Մարտունին հայտնվել էր հրե օղակի մեջ:

1992 թ. հոկտեմբերի 2-ին Մարտունու շրջանի ինքնապաշտպանական ուժերի սրընթաց գրոհով թշնամուց մաքրվեցին Մուղանլու, Կուրոպատկինո և Ամիրանլար գյուղերը:

Արցախյան պատերազմի ավարտից հետո Ամիրանլարում հաստատվել էին Ադրբեջանից բռնագաղթած հայ ընտանիքներ:

Գյուղը ստացավ Քաջավան անվանումը:

Բնակավայրը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Բնակավայրում գործում են դպրոց, ակումբ, բուժկետ:

Քաջավանում 2010 թ. կար 21 տուն, 77 մարդ[935], 2018 թ.՝ 15 ընտանիք, 55 մարդ[936]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԱՇԱՆ

Գյուղը գտնվում է Մարտունու շրջանում՝ Լուսասարի և Եղնիկասարի հարավհայաց լանջին: Աշանը սահմանակից է Բերդաշեն, Եմիշձան, Սպիտակաշեն, Կաղարծի, Հացի ու Նոր Շեն գյուղերին: Գյուղը գտնվում է Արցախի նախալեռնային հատվածում, որի բնակլիմայական պայմանները հարմատավետ են գյուղատնտեսությամբ զբաղվելու և բարեկեցիկ կյանքով ապրելու համար:

Արցախի հնագույն բնակավայրերից է: Բնակչությունը հիմնականում տեղաբնիկ է: Որոշ ընտանիքներ տեղափոխվել են Ջրաբերդից:

Գյուղի շրջակայքում եղած հնավայրերը վկայում են, որ այդ բնակավայրը գոյություն ունի Ք. ա. 1-ին հազարամյակից: Մ. Կաղանկատվացին գյուղը ներկայացնում է

[935] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[936] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

Արաժան, Արաժանք ձևով[937]: Սարգիս Ջալալյանցը պատմում է, որ Վաչագան Բարեպաշտը 5-րդ դարում Ամարաս տանող ճանապարհին անցել է Արժան գյուղով[938]:

19-րդ դարի վերջին այստեղ կար 90 տուն: Այդ նույն ժամանակահատվածում Հայկունին, լինելով Աշանում, գրել է, որ այստեղ նա տեսել է մի հին կարմիր Ավետարան: Տեղացիները նրան պատմել են, որ այն 200 տարվա գրչագիր է[939]:

1929 թ. ստեղծվում է Աշանի կոլտնտեսությունը, որի վարչության առաջին նախագահն էր Ռուբեն Քոչարյանը: Տնտեսությունը զարգացում ապրեց 1970-80-ական թվականներին: Այդ ժամանակ կոլտնտեսությունը ղեկավարում էր Ժորա Ստեփանյանը, այնուհետև՝ Էմիլ Բալայանը:

Աշանը, փռված լինելով Խութ սարի լանջին, գտնվում է ակտիվ սողանքների գոտում: 1965-1968 թվականներին Աշանը տեղափոխվում է ներկայիս բնակավայրի տարածքը:

1848 թ. Աշանում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 30 աշակերտով, ուսուցիչն էր Հովակիմ Շինդիյանցը: 1908-1909 ուսումնական տարում Աշանում բացվել է երկդասյա երկսեռ դպրոց: 1917 թ. դպրոցն ուներ 4 բաժանմունք, 88 աշակերտ, 4 ուսուցիչ: Դպրոցը պահվում էր բաքվաբնակ աշանցիների և գյուղական հասարակության միջոցներով:

Խորհրդային տարիներին սկզբում դպրոցը յոթնամյա էր, այնուհետև դարձավ ութամյա, իսկ 1947-48 ուսումնական տարում դարձավ միջնակարգ: Այն հարևան գյուղերի համար հենակետային դպրոցի դեր էր կատարում: Այդ տարիներին դպրոցի տնօրեններ են եղել Վարդան Բալայանը, Հակոբ Հովսեփյանը, Միքայել Խաչատրյանը, Գուրգեն Բալայանը:

1998 թ. Աշանում գործող «Անիթա Հովսեփյան» հիմնադրամի միջոցներով և ԱՀ կառավարության աջակցությամբ շահագործման հանձնվեց դպրոցի նորակառույց շենքը:

2005-2006 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 115 աշակերտ, դասավանդում՝ 14 ուսուցիչ[940]: 2017-2018 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 76 աշակերտ: Հետխորհրդային տարիների դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Լևոն Հարությունյանը (1988-1992 թթ.), Էմիլ Բալայանը (1992-1995 թթ.), Դավիթ Իշխանյանը (1995-2000 թթ.), Մխիթար Շինդյանը (2000 թվականից առայսօր):

Ծննդով աշանցի են կուսակցական, պետական գործիչ Լևոն Միրզոյանը, Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր Աշոտ Տեր-Մկրտչյանը:

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Աշանից մասնակցել են 325 տղամարդ և 15 կին: Նրանցից 8 հոգի դարձել են գնդապետներ, 4 հոգի՝ փոխգնդապետներ[941]: 163 աշանցիներ զոհվել են Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Նրանց հիշատակին 1968 թ. գյուղում կառուցվել է հուշարձան:

Արցախյան ազատագրական պատերազմի տարիներին 110 աշանցիներ մասնակցել են ռազմական գործողություններին: Նրանցից 8 հոգի զոհվել է:

Դավիթ Իշխանյանը դարձել է գումարտակի հրամանատար, այնուհետև ԱՀ ԱԺ պատգամավոր: Նա արժանացել է ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի:

Վարդան Բալայանը դարձել է ԱՀ պաշտպանության բանակի հրամանատարի տեղակալ, ունի գեներալ-մայորի զինվորական կոչում, արժանացել է ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի:

ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի արժանացել են՝ Արմեն Ժորիկի Ավագյանը՝ հետմահու և Գեորգի Արամի Գաբրիելյանը:

Աշանում կան 12 աղբյուրներ՝ Թեղեն տակեն, Ավագեն, Տանունց, Սեթունց, Քրահանդեն ջուր, Քշա ջուր, Հին շենի ջուր, Բախշուն ջուր, Պռավանց, Բլեն քյահրիզ, Արցախ, Կոնդունց ջուր:

Հին գյուղի տարածքում պահպանվում է Սուրբ Աստվածածնի եկեղեցին՝ կառուցված 1896 թվականին: 2001 թ. այն վերանորոգվել է ամերիկահայ բարերարներ Պոյաճյան և Աբգարյան ընտանիքների միջոցներով:

Նշանավոր են նաև Կարմիր Ավետարան մատուռը, Պիծի սրբավայրը, Սվեգանց սուրբը, Ոսկե խաչ մատուռը, Աշան բերդը, Ցեց քարը, Ղուզե արտեր, Երե շեն բնակատեղիները, 17-18-րդ դարերի գերեզմանոցը:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, դպրոց, «Սոսե» մանկապարտեզ, մեկ խանութ:

Աշանում 2018 թ. կար 137 տուն, 532 բնակիչ[942]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԱՎԴՈՒՈ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Բովրխանի լեռնազանգվածից դեպի արևելք ձգվող լեռնաճյուղերի մեջ գտնվող ձորի երկու անտառապատ լանջերի վրա:

[937] Մ. Կաղանկատվացի, էջ 52, 166:
[938] Սարգիս արք. Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 520:
[939] Հայկունի, նշվ. աշխ., էջ 84:
[940] ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, 148, 231:

[941] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[942] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

Գյուղի շրջակայքում գտնվող վաղ միջնադարյան Ճոխտ խաչ գյուղատեղիի, գերեզմանոցի, Պողոսեն բերդ ամրոցի մնացորդները վկայում են, որ առնվազն 1-ին դարից սկսած վերոհիշյալ վայրերում հայկական բնակավայրեր են եղել:

Ավդուռը հիշատակվում է Տաքիր և Տակիր անուններով[943]:

1814 թ. ավդուռցի Սարգիս բեկ և Հարություն բեկ Ղազյանները գյուղում կառուցում են Սբ. Աստվածածին կամարակապ եկեղեցին[944]:

20-րդ դարի սկզբներին Ավդուռի հայությունը միահամուռ ուժերով պայքարել է երկրամասի խորքերը թափանցել ցանկացող թուրք-թաթարական հրոսակախմբերի դեմ:

1918-1920 թվականներին ավդուռցիները Դրոյի զինակից Թեմուր Ավանեսյանի գլխավորությամբ մի քանի անգամ ջախջախել են Աղդամից Ավդուռ շարժվող բազմաքանակ թուրք-թաթարական զորքերին:

Շատ հաճախ Ավդուռի երիտասարդները օգնության էին հասել հարևան գյուղերի պաշտպաններին:

Ավդուռում խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1930 թ., գյուղում կոլտնտեսություն է կազմակերպվել: 1950-ական թվականներին՝ կոլտնտեսությունների խոշորացման տարիներին, Ավդուռի և Մյուրիշենի տնտեսությունները միավորվել են: 1989 թ. Ավդուռը առանձնացավ, և գյուղի բնակչությունն ունեցավ իր առանձին կոլտնտեսությունը:

Տարբեր տարիների Ավդուռի կոլտնտեսությունը ղեկավարել են Պողոս Պետրոսյանը, Վարդան Թովմասյանը, Ռուբեն Գրիգորյանը, Սլավիկ Պողոսյանը, Գրիշա Ամիրխանյանը, Շահեն Բեգլարյանը:

1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվեցին անհատական տնտեսություններ:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 112 մարդ, զոհվել են՝ 72-ը: Նրանց հիշատակին Ավդուռում հուշարձան է կառուցվել:

Արցախյան պատերազմում Ավդուռի բնակչությունն իր ներդրումն է ունեցել հաղթանակի կերտման գործում:

Սահմանային գյուղ լինելով, մասնավորապես Ավդալ, Գյուլափլու ադրբեջանական գյուղերի հարևանությամբ գտնվելով, որոնք դարձել էին ադրբեջանական ռազմական հենակետեր, բնակավայրում ինքնաբերաբար 1988 թ. սկսվել էր ինքնապաշտպանական ջոկատի կազմավորման գործընթացը:

Գյուղի կամավորականները՝ Գրիշա Ամիրխանյանի հրամանատարությամբ, 1992 թ. մասնակցել են Ավդալի և Գյուլափլուի ռազմական հենակետերի վնասազերծմանը:

[943] «Բազմավեպ», 1989, հմ.1-4, էջ 213; Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.1, էջ 358; Кочарян Г., Нагорный Карабах, с. 49.

[944] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 226:

Ավդուռի երեք տասնյակից ավելին կամավորականներ Մարտունու պաշտպանական զորամասերի շարքերում մասնակցել են ռազմական գործողություններին: 7 ազատամարտիկներ զոհվել են: Նրանցից փոխգնդապետ Սամվել Սաֆարյանը զոհվել է Քարվաճառի ազատագրման ռազմագործողության ժամանակ և արժանացել է ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի:

Ավդուռում 1886 թ. բացվել էր եկեղեցական-ծխական դպրոց: Չնայած ցարական իշխանությունների որոշմամբ 1896 թ. փակվել էին հայկական դպրոցները, Ավդուռում կրթական օջախը գաղտնի շարունակում էր իր գործունեությունը՝ սպասարկելով նաև հարևան գյուղերին:

1906-1907 ուսումնական տարում Ավդուռում բացվել էր մեկդասյա երկսեռ դպրոց, որն ուներ 3 բաժանմունք, 54 աշակերտ: Ուսուցիչն էր Բարութել Թառումյանը[945]:

Խորհրդային տարիներին Ավդուռում գործել է ութամյա դպրոց: 1992 թ. մարտից մինչև 1993 թ. հունվարը, պատերազմական իրավիճակով պայմանավորված, դպրոցական պարապմունքները ընդհատվել էին:

2018-2019 ուսումնական տարում Ավդուռի դպրոցում սովորում էր 11 աշակերտ, դասավանդում 8 ուսուցիչ:

1998 թ. դպրոցական նոր շենք է կառուցվել:

Տարբեր տարիների Ավդուռի Սամվել Սաֆարյանի անունը կրող դպրոցում տնօրեններ են աշխատել՝ Ս. Քոչարյանը, Վ. Թովմասյանը, Ռ. Գրիգորյանը, Ռ. Պողոսյանը:

Համայնքի պատմամշակութային նշանակության հուշարձաններն են Սբ. Աստվածածին եկեղեցին (1874 թ.), միջնադարյան գերեզմանոցը, Ճոխտ խաչ, Ծառեխ, Մաթեզ, Ցեց քար սրբավայրերը, Պողոսեն բերդ ամրոցը:

Ավդուռի աղբյուրներն են՝ Գյուղի, Սարեն արտեն, Գիրիշեն, Կկլիուն, Իբուն, Ավետիսին, Ինգուղների:

Գյուղի հանդամասերն են Ղուզե, Կյումեր, Նավարդ, Նվեն ձոր:

Ավդուռում շարունակում են ապրել Բինդանց, Ղրխանանց, Թյունունց, Կևունց, Խլափանց, Վանունց, Սիփարանց, Փիթունց, Առուշանանց, Ամիրխանյանների ազգատոհմերի ներկայացուցիչները:

Բնակավայրը էլեկտրաֆիկացված ու գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը, բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, առևտրի մեկ կետ:

Ավդուռում 19-րդ դարի վերջերին կար 125 տուն, 847 բնակիչ, 1959 թ.՝ 98 տուն, 450 բնակիչ, 1970 թ.՝ 71 տուն, 300 բնակիչ, 1979 թ.՝ 50 տուն, 213 բնակիչ, 1987 թ.՝ 45

[945] ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, թ. 1-8:

տուն, 122 բնակիչ[946], 2018 թ.՝ 25 տուն, 130 բնակիչ[947]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԲԵՐԴԱՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում:

Բնակավայրը տեղաբաշխված է Մուխանքի դաշտաբերանում:

Ինչպես հայկական մի շարք բնակավայրերի, այնպես էլ Բերդաշենի անունը թուրքերը (ադրբեջանցիները) թարգմանաբար ներկայացրել են Ղզղալա կամ Կարաքենդ ձևով:

Բերդաշենի ամենանշանավոր հնավայրերից մեկի՝ Աղջկաբերդի հարավարևելյան ստորոտում՝ դեպի Դյուզերն ընկած տարածքը, հազարամյակներ առաջ բնակավայր է եղել: Այն անվանվել է Հինգ շեն:

Նշված տարածքում ինչպես պատահական, այնպես էլ գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ ի հայտ են եկել մի շարք ուշագրավ հնագիտական գտածոներ:

Ամենայն հավանականությամբ ժայռամրոցի շրջակայքը բավականին խիտ բնակեցված է եղել: Տեղացիները, պաշտպանական նկատառումներից ելնելով, կառուցել են նշանավոր Աղջկաբերդը: Բերդի կառուցման վերաբերյալ պահպանվել է մի ավանդություն, որը հարկ ենք համարում ներկայացնել ընթերցողին:

Ավանդությունը պատմում է, որ անհիշելի ժամանակներում այստեղ ապրում էր իր հայրենի լեռների պես հպարտ և Արցախի կուսական անտառների եղնիկի նման չքնաղ, բայց նաև քաջ ու համարձակ մի աղջիկ: Նա սիրում էր իր հայրենակից կտրիճ ազնվազարմ իշխաններից մեկին: Անսահման էր նրանց սերն իրար նկատմամբ: Սակայն թշնամու դեմ մղած մարտերից մեկում զոհվում է աղջկա սիրած երիտասարդը: Օրիորդը երկար սգում, ողբում է այդ կորուստը և երդվում՝ սրբորեն պահել սիրած տղայի նկատմամբ տածած անսահման զգացմունքը: Աղջկա գեղեցկության համբավը տարածվում է ամենուրեք: Բազմաթիվ երիտասարդ իշխաններ, կտրիճներ են գալիս խնդրում նրա ձեռքը: Սակայն ոչ հարստությունը, ոչ էլ սպառնալիքները չեն կոտրում նրա կամքը:

Եվ ահա օտար երիտասարդներից մեկը որոշում է զորքով մտնել երկիր և ուժով տիրանալ նրան: Աղջիկը բարձրանում է ժայռի գագաթը, այնտեղ ամրոց կառուցում և պատսպարվում: Հայ կտրիճները պաշտպանում են իրենց քաջասիրտ իշխանուհուն:

[946] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 246:

[947] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

Թշնամին նոր ու մեծ ուժերով պաշարում է բերդը, պաշտպաններին զրկում ջրից, հույս ունենալով, որ ծարավից կհանձնվեն: Սակայն մոտակա ձորի աղբյուրից հայրենակիցները նրանց ջուր են հասցնում: Բազմաթիվ գրոհներից հետո թշնամին գրավում է ամրոցը: Քաջարի գեղեցկուհին, հավատարիմ մնալով իր երդմանը, ժայռի կատարից իրեն գցում է անդնդախոր ձորը: Պատմում են, որ բերդասարի ստորոտում մինչև այժմ էլ բխող զուլալ աղբյուրը ժայթքել է նահատակ գեղեցկուհու ընկած տեղում: Ասում են, որ այդ ժամանակներից ժայռակատարը կոչվում է Աղջկաբերդ[948]:

Բերդաշենի ծերերի մոտ պահպանված զրույցի համաձայն՝ 1236 թ. մոնղոլները, մտնելով Արցախ, ավերում են նաև Հինգ շենն ու Աղջկաբերդը:

20-րդ դարում բերդի ստորոտում գտնվել են մեծ քանակությամբ մոնղոլական դրամներ: Բերդից հարավ ընկած մի հողատարածք մինչ այսօր էլ կրում է Մուղուլեն կամ Մողոլեն բաղ անունը:

Բերդի և Հինգ շենի ավերումից հետո բնակիչների մի մասը, որոնց հաջողվել է փրկվել մահից և կենդանի մնալ, թողնում է հարազատ վայրերը, ցրվում երկրամասով մեկ: Բերդն ու Հինգ շենը լրիվ դատարկվում են և այլևս չեն վերականգնվում:

17-րդ դարում Բերդաշենից փախած յոթ ընտանիքներ վերադառնում են հարազատ վայրեր և որոշում նորից հաստատվել իրենց գյուղում: Սակայն հիմնավեր բերդի գոյության պայմաններում դաշտավայրում անհնարին է դիմակայել թշնամուն: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ նրանք որոշում են ներկայիս Բերդաշենի գերեզմանատան արևելյան լանջի փոքրիկ հարթակի վրա նոր գյուղ կառուցել:[949] Այն անչափ մոտ է, և վտանգի դեպքում հեշտ է արագ թաքնվել:

Այս փաստի օգտին է խոսում նաև նախկին գերեզմանատանը մնացած, 17-րդ դարի սկիզբ թվագրված տապանաքարի արձանագրությունը:

Մեկ այլ տեղեկության համաձայն 18-րդ դարի երկրորդ կեսին Արցախում ստեղծված անտանելի պայմանների հետևանքով բնակչության մի մասն արտագաղթել է Հյուսիսային Կովկաս: Բերդաշենցիները հաստատվել էին Կիզլարում: Նրանց մի մասը, չհարմարվելով նոր պայմաններին, նորից վերադարձել է հայրենիք և հիմնավորվել ներկայիս Բերդաշենում:

Մակար Բարխուդարյանցն էլ ասում է, որ Բերդաշենի բնակիչները հիմնականում բնիկ են, իսկ մի մասն էլ եկել են Ջրաբերդի Եղակեր գյուղից:[950]

Մելիք Շահնազարյանների ժամանակ Բերդաշենը ենթաշրջանային գյուղի դեր ուներ: Այստեղ նստում էր նրանց հարկահավաքը, որին անվանում էին դարղա: Դրանից էլ Դրղանց տոհմը: Նրանք ապրում են գյուղում:

[948] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 213-214, Սարգսյան Ա., Արցախյան ավանդություններ, Ստեփանակերտ, 2007, էջ 41:

[949] ԱրՊՀ հայագիտական կենտրոն, էջ 9:

[950] Մակար եպս. Բարխուտարեանց, Արցախ, էջ 122-123:

Բերդաշենի վարելահողերի, այգիների մեծ մասը պատկանում էր Մելիք-Շահնազարյանների տոհմին: Նրանց գյուղում աղա էին անվանում:

Առայսօր Բերդաշենի մի շարք տարածքներ կոչվում են Ղանց դուզ, Ղանց տափեր, Ղանց բաղեր անուններով:

1920 թ. մայիսի 23-ին 11-րդ կարմիր բանակի 18-րդ հեծելազորային դիվիզիայի ստորաբաժանումները հասնում են Բերդաշեն: Գյուղում հեղկոմի նախագահ է դառնում Ասծատուր Հարությունյանը:

1928 թ. գյուղում կազմակերպվում է կոմունա, իսկ 1929 թ.՝ կոլտնտեսություն, որը կրում էր Ալեքսանդր Մյասնիկյանի (Մարտունի), իսկ 1950 թ.՝ Կիրովի անունը: Ասծատուր Հարությունյանը դառնում է կոլտնտեսության առաջին նախագահը: Այդ պաշտոնում հետագայում աշխատել են Գրիշա Սողոմոնյանը, Աշոտ Դանիելյանը, Իշխան Հարությունյանը:

Կոլտնտեսությունն աննախադեպ զարգացում արձանագրեց, երբ վարչությունը սկսեց գլխավորել Սիմոն Սողոմոնյանը (1959-1988 թթ.): Այդ տարիներին հացահատիկայինների արտադրությունը հասել էր 4300 տ., խաղողինը՝ 7000 տ., կաթինը՝ 2000 տ., մսինը՝ 400 տ.: Համախառն արտադրանքը դրամական արժեքով անցել էր 3 մլն ռուբլուց[951]:

Բազմաթիվ պետական պարգևների էր արժանացել ինչպես կոլտնտեսությունը, այնպես էլ նրա նախագահը՝ Սիմոն Սողոմոնյանը:

Գյուղում այնքան էր զարգացած խաղողագործությունը, որ Բերդաշենում նպատակահարմար գտնվեց կառուցել գինու գործարան: Բերդաշենի գինին հայտնի է մեր երկրի սահմաններից դուրս, և դրանով բերդաշենցիները իրավամբ հպարտանում են:

Եղիշե Իշխանյանն իր հուշերում գրել է. «Ղզղալայի գինին շատ մուգ կարմիր գույն ունի և այնքան մուգ է, որ բաժակի մեջ սևագույն է երևում, և բաժակը դատարկելուց կարմիր գույնը բաժակին կպած մնում է, չի անցնում մինչև լանալը: Բժիշկների խորհուրդով, արեան պակասութիւն ունեցող մարդիկ Ղզղալայի գինի են գործածում ճաշին: ... Անգլիայի սպաներից մեկը ճաշակելով երկու գինիներից, (խոսքը վերաբերում է Բերդաշենի և Շվանիձորի գինիներին — Վ. Բ.), զարմախոսութիւն արաւ, թե՝ "այս անուշահամ գինիների համար էլ է Անգլիան պարտաւոր և պէտք է Հայաստանի մանդատը վերցնի իր վրայ"»[952]:

Ընդհանուր առմամբ կոլտնտեսային կարգերը նպաստել են, որ Բերդաշենում կառուցվեն երկհարկանի բնակելի տներ, դպրոց, մանկապարտեզ, բուժկետ, փոստ, մշակույթի պալատ, ֆերմաներ, արհեստանոցներ:

Հայրենական մեծ պատերազմին արժանի ավանդ են բերել բերդաշենցիները: Ռազմական գործողություններին մասնակցել են 463 հոգի, նրանցից 13-ը՝ կին: 180 հոգի զոհվել է: Նրանց հիշատակը հավերժացնելու համար գյուղի ամենաբարձրադիր վայրում կառուցվել է հուշարձան, որը տեսանելի է նույնիսկ տասնյակ կիլոմետրերից:

Արցախյան պատերազմի տարիներին Բերդաշենը հայտնվել էր ճակատի ամենաթեժ գծում: Առճակատման առաջին իսկ օրերից Բերդաշենում ձևավորվում է կամավորական ջոկատ, որի հիմքերի վրա էլ ձևավորվում է Բերդաշենի գումարտակը: Հրամանատարն էր Նելսոն Սերգեյի Սողոմոնյանը: Նա հետագայում դարձավ ռազմական գործիչ և արժանացել է գեներալ-մայորի զինվորական կոչման: Ն. Սողոմոնյանը ստացել է ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշան:

Բերդաշենցի 31 քաջորդիներ իրենց կյանքը նվիրաբերեցին հայրենիքի պաշտպանության սուրբ գործին: Նրանցից հետմահու ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվել են Էռնիկ Գրիգորի Գևորգյանը, Կարո Բենիկի Պողոսյանը, Յուրի Մուրադի Հովսեփյանը, Կամո Աշոտի Աղաջանյանը, Կարեն Էռնեստի Առստամյանը, Աշոտ Սուրենի Ավետիսյանը, Էռնիկ Մուրադի Աբրահամյանը:

ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի է արժանացել նաև Ռուսլան Իսրայելյանը՝ ԱՀ ԱԺ պատգամավոր:

Գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում ունի բերդաշենցի Ալիկ Միրզաբեկյանը: Նա եղել է ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ:

1873 թ. Բերդաշենում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց՝ 20 աշակերտով, ուսուցիչն էր Թովմաս քահանա Տեր-Իսրայելյանը: Այն փակվել է 1885 թ. և վերաբացվել 1886-1887 ուսումնական տարում:

19-րդ դարի վերջերին գյուղում գործել է նաև իգական դպրոց: Այդ նույն ժամանակաշրջանում երկու դպրոցները փակվում են և վերաբացվում 1906 թ. սեպտեմբերին: Ուսուցիչներն էին Աբել Սողոմոնյանն ու ննգեցի Առուստամ վարժապետը:

Խորհրդային տարիներին Բերդաշենում գործել է միջնակարգ դպրոց: 1973-1975 թթ. կառուցվել է դպրոցական նոր շենք: Տնօրենն էր Կիմ Գաբրիելյանը: Դպրոցում սովորում էր շուրջ 300 աշակերտ: 2012-2016 թթ. ընթացքում դպրոցում սովորում էր 209 աշակերտ, դասավանդում՝ 24 ուսուցիչ:

Հայրենական մեծ պատերազմի զոհվածներին նվիրված հուշահամալիրում է գտնվում գյուղի պատմաերկրագիտական թանգարանը:

2007 թ. օգոստոսի 2-ին վերաբացվել է Բերդաշենի մանկապարտեզը: Ներկայումս Բերդաշենի անհատ տնտեսները զբաղվում են գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ: Երիտասարդության մի մասը ծառայում է պաշտպանության բանակում:

Բերդաշենում պահպանվել են բազմաթիվ ճարտարապետական հուշարձաններ: Դրանցից հայտնի է Աղջկաբերդը, որի մասին նշվել է վերևում: Այն կարևոր աշխարհագրական դիրքում է գտնվում և այդ հատվածում փակում է արևելյան հարթավայրային տարածքներից դեպի լեռնաշխարհի խորքը տանող ճանապարհը: Բերդի տարածքից հայտնաբերված նյութերը թույլ են տալիս եզրակացնել, որ այն իր դերակատարությունն է ունեցել Ք. ա. 2-րդ հազարամյակից մինչև 13-րդ դարը:

[951] «Աշխատանք», 19 փետրվարի, 1974:
[952] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 409:

Մեծ նահատակ մատուռը կառուցվել է 1676 թ. գյուղի հյուսիսային մասում գտնվող բարձր սարի գագաթին: Պիծի Նահատակ մատուռը (17-րդ դար) գտնվում է գյուղի արևելյան մասում՝ տներից մոտ 1 կմ հեռավորության վրա: Այստեղ պահպանվել է մի խոյակ, որը վերագրվում է 6-7-րդ դարերին: Սբ. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 17-րդ դարում և գտնվում է գյուղի կենտրոնում: Եկեղեցում պահվում էր 1623 թ. Հալեպում գրված մի ավետարան և 1671 թ. ձեռագիր Մաշտոց: Երկուսի ճակատագիրն էլ այսօր հայտնի չէ:

Բերդաշենից դեպի հարավ՝ Ծովեր վայրում, գտնվում է մի սրբատեղի, որտեղ միայն հին ծառերն են մնացել:

Արցախյան պատերազմում զոհված բերդաշենցիների հիշատակը հավերժացնող հուշարձանը տեղաբնիկների համար նույնպես սրբատեղի է դարձել:

Գյուղի աղբյուրներն են՝ Ջնիհալի, Ներքին ջուր, Երե ջուր, Մուղանլու, Բլեն քյահրիզ և Գոմերի:

1901 թ. Բերդաշենում կար 1030 բնակիչ[953], 2018 թ.՝ 381 տուն, 1325 բնակիչ[954]:

Ներկայումս Բերդաշենի անհատ տնտեսները զբաղվում են գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ: Բնակիչների մի մասը ծառայում է պաշտպանության բանակում:

ԳԻՇԻ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Խոնաշենի վտակ Թիլին գետի աջափնյակում: Գյուղը թիկունքով հենված է 3 կողմով շրջապատված բարձրադիր լեռներին՝ Բերդասար, Շրմանա քերծ, Չղալա խութ, Քերծ: Դրանք էլ գյուղի շրջակայքի բարձրադիր կետերն են: Բերդասարի, Շրմանա քերծի, Չղալա խութի փեշերը անտառածածկ են, իսկ գագաթային մասում խոտածածկ բարձունքներ են: Քերծը, որ անմիջապես գյուղի շարունակությունն է կազմում լերկ քարաժայռ է:

Գիշին միայն հարավարևելյան ուղղությամբ ելք ունի դեպի Խոնաշենի հովիտը:

Գյուղի տեղում և նրա շրջակայքում ամենավաղ ժամանակներից եղել են մի շարք բնակավայրեր: Այստեղ կարելի է տեսնել քարե դարաշրջանի և հետագա ժամանակաշրջանների բնակավայրերի, բերդերի, առանձին կառույցների ավերակներ ու հետքեր, հողի տակ թաղված զանազան զենքեր, իրեր, զարդեր, գործիքներ: Նման փաստեր մեր կողմից արձանագրվել են Ղլեն Խութ, Շրմանա քերծ, Բրբհաջ Կալին խութ, Խոտհարքեր հնավայրերում և Ղուլուն բաղի հին գերեզմանոցում:

[953] Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ., էջ 405:

[954] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

Վարանդայի այս նշանավոր բնակավայրը հայտնի է իր հնավայրերով, հնադարյան բրուտանոցներով, գերեզմանաբլուրային, կարասային, քարարկղային, դագաղային (սարկոֆագային) ձևերի թաղումներով ու դամբարաններով:

Գյուղի և նրա շրջակայքի մասնակի հետախուզական ուսումնասիրությունները հիմք են տալիս ասելու, որ հնագույն դարաշրջանից մինչև Արշակունյաց թագավորության անկումը (428 թ.), բնակավայրը փռված էր հարթավայրային շրջանում՝ Խոտհարքներում, Խոնաշենի հովտում և Ղլեն խութի շրջակայքում: Հարկ է նկատել, որ որոշ ուսումնասիրողներ՝ Մակար Բարխուդարյանցը, Երվանդ Լալայանը, Շահեն Մկրտչյանը, Ղլեն խութը շփոթել են Շրմանա քերծի Գիշ ամրոցի հետ[955]:

Գիշին Գիշ կամ Կիշ ձևով գոյություն է ունեցել նաև Արտաշեսյանների թագավորության ժամանակ (Ք. ա. 189–Ք. հ. 1 թթ.):

Ամենայն հավանականությամբ գյուղի անունը կապ ունի Հայոց արևելից կողմերում քրիստոնեական առաջին կենտրոններից մեկի Գիս ավանի հետ, որի մասին հիշատակություններ կան Մ. Կաղանկատվացու աշխատության մեջ[956]: Վերոհիշյալ բնակավայրը վրացական աղբյուրներում ներկայացվում է Գիշ ձևով[957]:

Հնարավոր է, որ Արցախի Գիշին նույնպես պաշտամունքային կենտրոն է եղել ինչպես քրիստոնեական այնպես էլ նախաքրիստոնեական դարաշրջաններում: Դրա մասին է վկայում նաև Գիշիում առայսօր պահպանվող Ոսկե խաչ հայտնի սրբատեղին:

Այս մտքի օգտին է խոսում նաև պարսկա-ռուսական բառարանում Կիշ-ի թարգմանությունը, որը պարսկերեն նշանակում է պաշտամունք[958]:

Էջմիածնում պահպանվող հին հանրագիտարաններից մեկում այդ անվանումը բխեցվում է պարսկական Ջիշ բառակապակցությունից, որը Արցախում հասկացվում է, որպես ազնվացեղ: Ավանդությունը պատմում է, որ այդ կողմերում ազնվացեղ մարդիկ էին ապրում դրանից էլ բնակավայրը անվանվել էր Ջիշ[959], իսկ այնուհետև կատարվել է Ջիշ-Կիշ-Գիշ-Գիշի անցումները:

Պտղոմեոսը հաղորդում է, որ Պարսկաստանում եղել է Ջիս սրբավայր բնակավայրը, որը կրակապաշտ Զարդուշտ (Զրադաշտ) մարգարեի հայրենիքն էր[960]:

Տեղաբնիկները Գիշի անվանումը բացատրում են նաև Գինեշատ, Գինեվետ ձևերով:

[955] Բալայան Վ., Գիշի. պատմական անցյալն ու ներկան, Երևան, 1997, էջ 14:

[956] Մ. Կաղանկատուացի, էջ 10:

[957] Аноним, Церемониал коронованния царей. Обзор источников по истории Азербайджана, вып. II, Меликсетбеков Л., Историки грузинские, Баку, 1939, с. 12.

[958] Миллер Б., Персидско-русский словарь, Москва, 1960, с. 415.

[959] Բալայան Վ., Գիշի, էջ 14:

[960] Иакут ал-Хамави, Муджам ал-Булудан, с. 28:

Ակադեմիկոս Ս. Երեմյանը Գիշին տեղադրում է Մեծ Հայքի Ծավդեք (Արցախ) աշխարհի տարածքում[961], Ամարաս վանքից հյուսիս, Միլլի դաշտի արևմտյան, Դիզափայտ լեռան հյուսիսարևելյան կողմում[962]: Ըստ «Աշխարհացույցի» Արշակունիների կառավարման տարիներին Գիշին գտնվել է Մեծ Հայքի Արցախ աշխարհի Մյուս Հաբանդ գավառում[963]: Պատահական չէ, որ գյուղի տարածքում հայտնաբերվել է Տիգրան Մեծի դրամներից:

Հայկական պետականության կործանումը (428 թ.) և դրան հաջորդած արաբական աշխարհակործան արշավանքները (7–9-րդ դարեր) տխուր հետևանքներ ունեցան գյուղի համար: Գյուղը առանձնապես կործանվեց Բուղայի 852 թ. արշավանքի ժամանակ: Գյուղի բնակչությունը այնքան սակավամարդ դարձավ, որ անգամ Բագրատունիների թագավորության տարիներին Գիշու մասին մեզ ոչ միայն տեղեկություն չի հասել, այլև հետագայում այդ շրջանի քարտեզագիրները բնակավայրը մոռացության են մատնել:

Պաշտպանական նկատառումներով 15–16-րդ դարերում գյուղը տեղափոխվել էր Շրմանա քերծի տափարակը, որտեղ էլ կառուցվել էր Բերդաշեն: Այն բավականին մեծ տարածք էր զբաղեցնում, որի մեջ կա նաև աղբյուր: Ցավոք, խորհրդային տարիներին բերդի պարիսպները քանդել են, քարը օգտագործել գյուղի տների կառուցման համար, իսկ տարածքն էլ դարձրել արոտատեղ:

19-րդ դարի վերջերից մինչև 20-րդ դարի 20-ական թվականները ակադեմիկոս Սամվել Գրիգորյանի հոր՝ Գերմանիայում համալսարանական կրթություն ստացած Սամվել Գրիգորյանի հուշատետրից մենք իմանում ենք, որ 17-րդ դարի սկզբներին, հիվանդությունների և համաճարակի հետևանքով, գյուղի ազգաբնակչության մեծ մասը մահացել է: Փրկվել են միայն 7 գերդաստանի ներկայացուցիչներ:

1684 թ. Գորիսի Տեղ գյուղից Ալյազյանների (Իլյազյան) տոհմից Ջեյրան երեցը հանգրվանում է Գիշի գյուղում: Նրա օրինակին հետևել են նաև Տեղի և Քարահունջի մի քանի ընտանիքներ ևս: Դրա մասին են վկայում նաև 17-րդ դարից Ոսկե Խաչի գերեզմանոցում պահպանվող շիրիմաքարերը: 18-րդ դարի սկզբներից Շրմանա քերծի թամբարդի սահմանափակ տարածքի գերբնակության հետևանքով բնակչության մի մասը ամրոցից մի քանի հարյուր մետր ներքև՝ արևկող լեռնալանջին, տներ է կառուցել: Եվ այդպես գյուղը, մեծանալով լանջն ի վար, հասնում է մինչև հարթավայրը:

Ղարաբաղի Փանահ և Իբրահիմ խաների հրոսակները բազմիցս ջախջախվել են գյուղի մատույցներում: Նույն ճակատագրին են արժանացել նաև 1795 թ. պարսից շահ Աղա Մուհամմադ խանի զորքերը:

[961] Երեմյան Ս., Հայկական պետությունը Տիգրան Մեծի ժամանակշրջանում (93–66 մ.թ.ա), քարտեզ, Երևան, 1977:

[962] Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.1, Երևան, 1986, էջ 867:

[963] Հայկական համառոտ հանրագիտարան, Երևան, 1990, հ.1, էջ 368 (քարտեզ):

Գյուղը ծանր շրջան է ապրել նաև 1804–1813 թթ. և 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմների տարիներին:

1827 թ. հուլիսի 30-ին պարսկական մի զորագունդ՝ բաղկացած 2000 շահսևանցիներից, կոտորում են գյուղի բնակչությանը և գերի տանում 7 կնոջ, 3 տղամարդու, քշում տանում 182 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 5 ձիեր և էշեր[964]:

Ռուսական տիրապետության տարիներին կյանքը որոշակիորեն կայունացել է:

19-րդ դարի վերջերին Գիշիում Սմբատ Քամալյանը բացել էր բոժոժի նախնական վերամշակման գործարան: Նմանօրինակ մանուֆակտուրային տիպի ձեռնարկություններ բացել են նաև Թևոս Մելքումյանը և Բայլարը:

Գյուղում գործում էին մի քանի ջրաղացներ, իսկ 20-րդ դարի սկզբին՝ դիզելային վառելիքի հիման վրա աշխատող էլեկտրաաղաց:

Առևտրական լայն գործունեություն էին ծավալել Արտեմ Ղուկասյանն ու խոջա Սարգիս Բաբայանը:

Գիշին հատկապես հայտնի է թթի և խաղողի այգիներով:

Գիշեցիները ավանդաբար խաղողագործներ ու գինեգործներ են: Պատահական չէ, որ 19-րդ դարի սկզբներին Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցը գրել է. «Քո գինին և գավաթը Գիշու լիճն են»[965]:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին Գիշուց և Վարանդայի մյուս գյուղերից մի քանի ընտանիքներ տեղափոխվել և Կոկիսոն (Գյուգ-չայ) գավառում հիմնադրել են Գիրկ ու Ռուշան գյուղերը[966]:

Գյուղի ազգաբնակչության համար պատուհաս էին դարձել հայ թաթարական ընդհարումները: 1905 թ. Գիշուց «Արշալույս» թերթի խմբագրությանը գրել են. «Ապահովութիւնից զուրկ ենք. մեր գիւղացիք չեն կարողանում դաշտ դուրս գալ, վար ու ցանք անել, որովհետև թուրքերից երկիւղ են կրում: Մեր գիւղում տարածած է մանուկների մեջ ծաղիկ հիւանդութիւնը, որ բավական զոհեր է տանում...»[967]: 1905 թ. գյուղը թալանվել է կոզակների պատժիչ ջոկատների կողմից:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին գյուղի երիտասարդները կռվել են տարբեր ռազմաճակատներում: Նրանցից Մովսես Բաբայանը հասել է գնդապետի զինվորական աստիճանի: Նա արևմտյան ճակատում կռվել էր գեներալ Բրյուսիլովի գլխավորած բանակում և զոհվել է 1917 թ. հուլիսի 6-ին: Նրա մարմինը ամփոփված է Գիշու գերեզմանատանը: Մովսես Բաբայանը բացառիկ ծառայությունների համար արժանացել էր Գիորգիևյան առաջին և երկրորդ աստիճանի շքանշանների և ոսկե թրի[968]:

[964] Присоединение Восточной Армении к России, т. 2, Ереван, 1978, с. 330.

[965] Սարգիս արք. Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 519:

[966] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 105–106:

[967] «Արշալոյս», 11 հոկտեմբերի, հմ. 35, 1905:

[968] «Արշալոյս», 6 օգոստոսի, հմ. 15, 27 օգոստոսի, հմ. 19, 1917:

Արցախի պատմության մեջ խոր հետք է թողել նաև գիշեցի եպիսկոպոս Ջավեն Մահտեսի Բաբայանը: Նա 20-րդ դարի սկզբներին Արցախի թեմի առաջնորդն էր, Սարդարապատի հերոսամարտի քարոզիչ ու մասնակից հոգևորականներից մեկը: Նրա մարմինը ամփոփված է Էջմիածնի մայր տաճարի բակում:

Գիշեցի երիտասարդները մասնակցել են նաև 1918 թ. հոկտեմբերի 18-ի Մամնայի ճակատամարտին:

19-րդ դարի երկրորդ կեսին կառուցվել է Սբ. Մինաս թաղակապ եղեղեցին: Այն կառուցվել էր Բերդասարի անմատչելի լանջին՝ հին գյուղի կենտրոնում: Ցավոք 1950-ական թվականներին բոլշևիկների և Ադրբեջանի ղեկավարության քաղաքականության արդյունքում եկեղեցին հիմնահատակ քանդվել է:

Դարեր շարունակ Ոսկե խաչն ու Բրջամալը համարվում են կարևոր սրբատեղիներ:

Խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1930 թ., Գիշիում կազմակերպվել էր կոլտնտեսություն: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո կոլտնտեսությունները լուծարվել և ստեղծվել են անհատական տնտեսություններ:

Տարբեր տարիների Գիշու Կ. Մարքսի անվան կոլտնտեսությունը ղեկավարել են Ներսես Դադայանը, Եսայի Բաբայանը, Հայրապետ Աղաբեկյանը, Արշավիր Հակոբջանյանը, Թևան Ջավադյանը և Ռազմիկ Բալայանը:

Տնտեսությունն աննախադեպ վերելք էր ապրել 1972-1998 թվականներին, երբ կոլտնտեսության վարչության նախագահն էր Ռ. Բալայանը: Մեկ շնչին ընկնող արտադրանքով կոլտնտեսությունը ԼՂԻՄ-ում առաջինն էր:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են 370 գիշեցիներ: Ցավոք նրանցից 183-ը չեն վերադարձել ռազմի դաշտից: Նրանց հիշատակին 1968 թ. գյուղում հուշարձան է կառուցվել:

Հետպատերազմյան տարիներին Արցախի հայության խաղաղ աշխատանքի ընթացքը խաթարվել էր Ադրբեջանի իշխանությունների նոր սադրանքով:

Մարզի ազգագրական դեմքը փոխելու նպատակով 1949 թ. մեծ քանակությամբ ադրբեջանցիներ ՀԽՍՀ-ից տեղափոխել և բնակեցրել են Լեռնային Ղարաբաղի հայկական գյուղերում: Ամեն մի հայ ընտանիք պարտավոր էր իր հարկի տակ օթևանել մեկ-երկու ադրբեջանցի ընտանիքի: Գիշիում այդ տարիներին ապրում էին հարյուրից ավելի ադրբեջանցի ընտանիքների: Ծեծկոտոցն ու մասսայական ընդհարումները սովորական երևույթներ էին: Ալեկոծվեց ու խռովվեց Գիշու համայնքի անդորրը: Բարեբախտաբար, գիշեցիների անհաշտ ու անկոտրում կամքին չհամակերպվելով, 1950 թ. նրանք տեղափոխվել են Խանլարի և Շամխորի հարթավայրային շրջանները:

Առավել մեծ ոգևորությամբ գիշեցիները կռվել են արցախյան գոյամարտի տարիներին: 300-ից ավելի ազատամարտիկներ, տարբեր զորամասերում, կռվել են դարավոր թշնամու դեմ:

41 գիշեցիներ՝ Վլադիկ Առստամյանը, Սերժիկ Շամամյանը, Լորիս Գրիգորյանը, Ռաբլե Ղարիբյանը, Համլետ Հարությունյանը, Մավրիկ Հայրապետյանը, Վլադիմիր Բալայանը, Բորիսլավ Շաքարյանը, Վաղինակ Ավանեսյանը, Գարսևան Բաղրյանը, Արթուր Գրիգորյանը, Ռաֆիկ Բալայանը, Ռուբիկ Այդինյանը, Ռոմիկ Գրիգորյանը, Սենիկ Գասպարյանը, Արմո Առստամյանը, Երջանիկ Բարխուդարյանը, Գրիգորի Շաքարյանը, Օլեգ Ղարիբյանը, Արարատ Շամամյանը, Միքայել Շամամյանը, Էռնիկ Սվարյանը, Սարո Ջամալյանը, Մաքսիմ Ջամալյանը, Արարատ Ավանեսյանը, Դադա Դադայանը, Ռադիկ Ավանեսյանը, Ղարիբ Ղարիբյանը, Ռուդիկ Հայրապետյանը, Համլետ Մոսյանը, Լևոն Գրիգորյանը, Պետո Ավագյանը, Վաչագան Ջուլհակյանը, Կամո Մկրտումյանը, Արմեն Ջանյանը, Կամո Գրիգորյանը, Ռազմիկ Ջամալյանը, Նվեր Շամամյանը, Վիտալի Պողոսյանը, Հայկ Գրիգորյանը, Հովիկ Ջամալյանը իրենց կյանքը նվիրաբերել են հայրենիքի ազատության գործին:

ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի են արժանացել՝ Գարեգին Ղարիբյանը և Լեռնիկ Բաբայանը, հետմահու՝ Վլադիմիր Առստամյանը: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի ասպետներ են Վրեժ, Գոռ, Կարեն Իշխանյանները, Մարտիկ Հայրապետյանը, Ավանես Ավանեսյանը, հետմահու՝ Սերժիկ Շամամյանը և Լորիս Գրիգորյանը:

Գնդապետի զինվորական աստիճանի են հասել Վրեժ, Կարեն, Գոռ Իշխանյանները, Արթուր Բալայանը, Մարտիկ Հայրապետյանը, Գառնիկ Ավագիմյանը, Ավանես Ավանեսյանը:

Դարեր շարունակ գիշեցին փափագել է ուսյալ սերունդ ունենալ: 1875 թ. գյուղում գործել է նախակրթարան[969]:

Գիշեցիների խնդրանքով և կաթողիկոսի կոնդակով 1880-81 ուսումնական տարում գյուղում բացվել է ծխական դպրոց, որն ուներ 35 աշակերտ, 1 ուսուցիչ: 1889-90 ուսումնական տարում դպրոցն ուներ 2 բաժանմունք: Ուսուցիչն էր Միքայել Տեր Բախշյանը: Ցարական իշխանությունների որոշմամբ 1903 թ. Գիշու դպրոցը փակվել էր: Այն ժամանակ դպրոցն ուներ 3 բաժանմունք և երկսեռ էր: 1905 թ. դպրոցը նորից վերաբացվել է: Ուսուցչուհին էր Սաթենիկ Ջաքարյանը: 1908-1909 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 88 աշակերտ, դասավանդում՝ 3 ուսուցիչ:

Խորհրդային կարգերի հաստատումից մինչև 1932 թվականը, հարմարավետ շինության բացակայության հետևանքով դպրոցը գործել է Դանիել Ջավադյանի, Վրշաբանց և Պետրոս Թովմասյանի տներում: 1930-1932 թվականներին կառուցվել է դպրոցական շենքի մի մասը: Հետպատերազմյան տարիներին, դպրոցի տնօրեն Հովհաննես Ջավադյանի ջանքերով կառուցվել է նոր մասնաշենք: 1970-ական թվականների վերջերին և 1980-ականների սկզբներին կոլտնտեսության միջոցներով կառուցվել են դպրոցի ճաշարանը, մարզադահլիճը, լուծվել ջեռուցման հարցը:

[969] ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 52, թ. 149:

2009–2011 թվականներին «Հայաստան» համահայկական հիմնադրամի և ԱՀ կառավարության համաֆինանսավորմամբ գյուղում կառուցվել է 300 տեղանոց ժամանակակից դպրոցական նոր շենք:

1970–1980-ական թվականներին Գիշու միջնակարգ դպրոցում սովորում էր 320–330 աշակերտ, 2017–2018 ուսումնական տարում՝ 181 աշակերտ, դասավանդում՝ 36 ուսուցիչ:

Տարբեր տարիներին դպրոցի տնօրեններ են եղել Վաղարշակ Գաբրիելյանը Բարկեն Քամալյանը, Մուկուչ Բարսեղյանը, Վաչե Գրիգորյանը, Շահեն Բախշյանը, Թևան Ջավադյանը, Բագրատ Մկրտչյանը, Հովհաննես Ջավադյանը, Վլադիմիր Անտոնյանը, Արկադյա Ավանեսյանը:

Ծննդով և ծագումով Գիշի գյուղից են Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ եպիսկոպոս Զավեն Մահտեսի Բաբայանը, գեներալ-մայոր Արսեն Ավթանդիլյանը, ԽՍՀՄ և ՌԴ ԳԱ ակադեմիկոս Սամվել Գրիգորյանը, կենսաբանական գիտությունների դոկտոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտի նախկին ռեկտոր Գուրգեն Քամալյանը, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԼՂԻՄ մարզգործկոմի նախագահ Սեմյոն Բաբայանը, ԱՀ վարչապետ, տեխնիկական գիտությունների թեկնածու Ժիրայր Պողոսյանը, ԼՂԻՄ լուսժողկոմ Արշավիր Քամալյանը, ԱՀ կրթության և գիտության նախարար Հենրիկ Գրիգորյանը, ԱՀ Գերագույն խորհրդի (Ազգային ժողով) առաջին գումարման պատգամավոր Ռազմիկ Բալայանը, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Փիրուզա Ավագյանը, Սոցիալիստական աշխատանքի հերոս Շմավոն Ղարիբյանը, գրողներ Հակոբ Աթալյանը (Հակթալ), Արկադի Թովմասյանը, ՀՀ ԱԺ պատգամավոր Թևան Պողոսյանը, ՀՀ վաստակավոր մարզիչ Արտո Առստամյանը, ԱՀ ԱԺ փոխնախագահ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահրամ Բալայանը:

Գյուղի պատմամշակութային նշանակության հուշարձաններից են Ոսկե խաչ սրբատեղին, հին գերեզմանոցը (16–18-րդ դարեր), Շրմանա քերծի ամրոցը (9–20-րդ դարեր):

Բնակավայրի աղբյուրներն են Ոսկե խաչի, Ջվադանց, Քմալա, Թաքուն, Ղուլուն բաղեն, Մկիչանց, Բբջամալի, Մուխուրջանի, Նանունց, Ղրիբանց, Բեղունց, Քյահրիզ:

Գյուղի հանդամասերն են՝ Դերունց բաղ, Տրանց ծմակ, Ղուլուն բաղ, Ջաքարուն բաղ, Ջվադանց բաղ, Բղամաչ, Նունգուզա հարթ, Ճրմոտ, Խուջեն յալ, Թաքուն բաղ, Խորան, Դուզին տափ, Սարեն տակ, Բրբրհաջ:

Գյուղի ազգատոհմերն են՝ Շմամանք, Տրանք, Բլանք, Մուղդուսունք, Դերունք, Ղրիբանք, Ջվադանք, Յսրղուլանք, Վրշաբանք, Բղերանք, Նանունք, Չարչունք, Ավանեսյաններ, Քսպարանք, Յթարանք, Միութանք, Խչանանք, Մակունք, Բաջունք, Սհականք, Մյիլանք, Ծտորանք, Ջմալանք, Պիծի Բաբունք, Միրքիրանք, Ըսոփանք (Առստամյաններ), Սնամանք, Մկիչանք, Սրաթանք:

Համայնքը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Ճանապարհները ասֆալտապատված և հիմնականում սալահատակված են (բարերարներ՝ Վլադիմիր Ավագյան, Աշոտ Ջիվանյան, Արարատ Կարապետյան, Կարեն Բաբայան):

Գյուղում գործում են գյուղապետարան, դպրոց, բուժկետ, մարզադահլիճ, մանկապարտեզ (այն հիմնովին վերանորոգվել է բարերար Վլադիմիր Ավագյանի միջոցներով), միջոցառումների և հանդիսությունների 2 սրահ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Գիշիում 19-րդ դարի սկզբներին կար 30 տուն[970], 19-րդ դարի 90-ական թվականներին՝ 127 տուն, 1065 բնակիչ[971], 1907 թ.՝ 1285 բնակիչ, 1915 թ.՝ 1237 բնակիչ[972], 1989 թ.՝ 305 տուն, 1313 բնակիչ[973], 2018 թ.՝ 299 տուն, 1030 բնակիչ[974]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Երիտասարդության մի մասը ծառայում է ԱՀ Պաշտպանության բանակում:

ԵՄԻՇՃԱՆ

Գյուղը գտնվում է ԱՀ արևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդայի գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Արցախի լեռնաշղթայից դեպի հարավ-արևելք ձգվող Ամենափրկիչ լեռնաճյուղի ստորոտի արևելահայաց գոգավորության վրա: Գյուղում և նրա շրջակայքում եղած 12–17-րդ դարերից մնացած գյուղատեղիի մնացորդները, խաչքարերը, մատուռներն ու սրբատեղիները հիմք են տալիս ասել, որ քննության նյութ հանդիսացող վերոհիշյալ գյուղի պատմությունը սկսվում է առնվազն 12-րդ դարից: Բնակիչները հիմնականում տեղաբնիկ են: Մի քանի ընտանիքներ Եմիշճանում հաստատվել են 19-րդ դարի սկզբներին Պարսկաստանից:

1880-ական թվականներից մնացած որոշ փաստաթղթերում գյուղը ներկայացված է Ելիշա անվանումով[975]:

Ամենայն հավանականությամբ Եղիշան թարգմանաբար ռուսերեն դարձել էր Ելիշա:

Մ. Կաղանկատվացու վկայությամբ Թադևոս առաքյալի նահատակվելուց հետո նրա աշակերտներից Եղիշան շարունակում է քրիստոնեական հավատքի քարոզչու-

970 Սարգիս արք. Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 519:

971 Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 222:

972 Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.1, էջ 867:

973 Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 217:

974 ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

975 Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, т. IV, Тифлис, 1886, с. 324.

թյունը Հայոց արևելից կողմերում՝ հիմնադրելով այստեղ քրիստոնեական համայնքներ[976]: Պատմական սկզբնաղբյուրների քննության արդյունքում Հ. Սվազյանը իրավացիորեն եզրակացրել է, որ Սբ. Եղիշան իր առաքելական գործունեությունը իրականացրել է 1-ին դարի վերջերին և 2-րդ դարի սկզբներին:[977] Հայտնի փաստ է նաև, որ քրիստոնեության քարոզիչների հիշատակին Արցախի տարբեր բնակավայրերում կառուցվել են եկեղեցիներ, մատուռներ, սրբավայրեր, հնարավոր է նաև բնակավայրեր: Նկատենք, որ Եղիշեն Արցախյան բարբառում հնչում է Եղիշա ձևով:

Ս. Սարգսյանի կարծիքով բնակավայրի Ելիշա անվանումը կապված է հենց վերը հիշատակված Թադևոս առաքյալի աշակերտ Եղիշեի հետ: Վերջինիս անվամբ կան մի շարք պաշտամունքային կառույցներ, որոնց թվում Ճարտարի՝ Եղիշա կուսի (կուս նշանակում է սուրբ վայր) անապատը[978]:

20-րդ դարի փաստաթղթերում գյուղը արդեն ներկայացված է Եմիշճան անվանումով[979]:

19-րդ դարում համայնքում կառուցվել է Սբ. Ստեփանոս եկեղեցին:

1920 թ.՝ Շուշիի մարտյան ողբերգության օրերին, Եմիշճանի մոտ գտնվող Խաներ տեղամասում թուրք-թաթարների հետ զինաբախում է եղել: Տեղացիներին հաջողվել է ջախջախել ասպատակիչներին և վտարել նրանց երկրամասի սահմաններից:

1930 թ. գյուղում կոլտնտեսություն էր կազմակերպվել: Խոշորացման տարիներին՝ 1951 թ., այն միավորվել էր Սպիտակաշենի Ժդանովի անվան, իսկ 1961 թ.՝ Ղզղալայի Կիրովի անունը կրող կոլտնտեսության հետ: 1989 թ. Եմիշճանի կոլտնտեսությունը նորից առանձացվել է: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո կազմակերպվել են անհատական տնտեսություններ:

Տարբեր տարիների Եմիշճանի կոլտնտեսությունը ղեկավարել են Լևոն Հայրապետյանը, Ալեքսանդր Ալեքսանյանը, Ավետիս Աղաբեկյանը, Նիկիտ Ավանեսյանը, Շահմար Խաչատրյանը, Արայիկ Հայրապետյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են 125 հոգի, որոնցից 6-ը՝ կին: Նրանցից 48-ը զոհվել են: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Արցախյան ազատամարտի օրերին՝ 1988-1989 թվականներին, գյուղում Գեղամ Հովհաննիսյանի հրամանատարությամբ կազմակերպվել է ինքնապաշտպանական ջոկատ: Եմիշճանից 30 ազատամարտիկներ մասնակցել են ռազմական գործողություններին: Զոհվել է մեկ ազատամարտիկ՝ Վազգեն Աբրահամյանը: ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի է արժանացել Լավրենտ Շումանյանը, իսկ ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի՝ Գեղամ Հովհաննիսյանը:

976 Մ. Կաղանկատվացի, էջ 10:

977 Սվազյան Հ., Քրիստոնեության Աղվանք ներթափանցման ուղիներն ու ժամանակաշրջանը, ՊԲՀ, 2002, հմ. 2, էջ 135:

978 Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 74:

979 ԱՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 1, թ. 1; «Советское краеведение», № 10, 1936, с. 1.

1890-ական թվականների փաստաթղթերից մեկում ներկայացված է, որ 1892-1893 ուսումնական տարում Եմիշճանում գործել է եկեղեցական-ծխական դպրոց, որտեղ սովորում էր 20 աշակերտ, դասավանդում՝ 1 ուսուցիչ[980]:

1896 թ. դպրոցը փակվել է և վերաբացվել 1908 թ. հոկտեմբերին: Խորհրդային տարիներին՝ 1922-1923 ուսումնական տարում, գյուղում բացվել է տարրական դպրոց: Այն 1930 թ. քառամյա էր, 1946 թ.՝ յոթնամյա, 1950 թ.՝ ութամյա, 2006 թ.՝ ինն-ամյա:

2008 թ. դպրոցական նոր շենք է կառուցվել:

2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 20 աշակերտ, դասավանդում՝ 11 ուսուցիչ:

Դպրոցը կրում է նահատակ ազատամարտիկ Վազգեն Աբրահամյանի անունը:

Տարբեր տարիների դպրոցը ղեկավարել են Շահեն Հայրապետյանը, Լյովա Գրիգորյանը, Լեոնիդ Սողոմոնյանը, Լիլիթ Աբրահամյանը:

Ծագումով Եմիշճանից է ՀՀ պետական գործիչ, դիվանագետ Ալեքսան Հարությունյանը:

Գյուղի պատմամշակութային նշանակության հուշարձաններն են Ջարգա մարագ մատուռը և գերեզմանոցի մնացորդները (12-րդ դար), Թազա սուրբ մատուռը (16-17-րդ դարեր), Եղծա խութ սրբատեղին, Սբ. Ստեփանոս եկեղեցին (19-րդ դար), խաչքարեր (12-րդ դար):

Համայնքի աղբյուրներն են Երե ջուր, Մաչի ջուր, Քյահրիզ, Փիրմադա ջուր, (Կիրիքորանց ջուր), Քարեն առաջ, Խաներեն ջուր:

Գյուղի հանդամասերն են՝ Բրղամանց տափեր, Եղնիկի աղբյուր, Ակոսի աղբյուր, Կապույտ քար, Կոմսոմոլի հովիտ, Մուղանլու, Ճապկուտ, Թեղուտ:

Բնակավայրում շարունակում են ապրել Առաքելանց, Շմանանց, Չիլինգարանց, Բուդունց, Մուսունց, Պետունց, Սարգիս ամունց, Ղլեջունց, Թիլիվանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, հանդիսությունների սրահ, առևտրի 1 կետ:

Եմիշճանում 19-րդ դարի 90-ական թվականներին կար 62 տուն, 402 բնակիչ[981], 1989 թ.՝ 47 տուն, 131 բնակիչ[982], 2018 թ.՝ 41 տուն, 155 բնակիչ[983]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

980 Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Արցախի կրթական համակարգը, հ.1, էջ 384:

981 Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 223:

982 Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 245:

983 ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

ՋԱՐԴԱՆԱՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Վարանդա գետի աջափնյակից վեր բարձրացող անտառածածկ լեռան լանջին: Գյուղի երկու կողմերով հոսում են Վարանդայի Շորին և Պիծի վտակները:

Ջարդանաշենը, քանի որ Թաղավարդ գյուղի հյուսիսարևմտյան մասում է գտնվում և աշխարհագրական դիրքի տեսանկյունից կարծես վերոհիշյալ բնակավայրի շարունակությունն է համարվում, կրում է նաև Վերին Թաղավարդ անունը:

19-րդ դարի պաշտոնական փաստաթղթերում գյուղը անվանվել էր Ջարդանաշեն[984]:

Միջնադարում բնակավայրը գտնվում էր ներկա գյուղից ոչ շատ մեծ հեռավորության վրա՝ Բերդահոնջ ամրոցի շրջակայքում: 1800-ական թվականների սկզբներին նրանք տեղափոխվել և ներկայիս Ջարդանաշենի տեղանքում նոր գյուղ են հիմնել:

19-րդ դարի երկրորդ կեսին Ջարդանաշենում հաստատվել էին Խնձորեսկից, Տեղից, Տաթևից մի քանի ընտանիքներ: Նույն ժամանակահատվածում էլ կառուցվել է եկեղեցի, որը չունի շինարարական արձանագրություն: Գյուղի տարեցները վկայում են, որ Ջարդանաշենի հոգևոր տունը կառուցել են Ներքին Թաղավարդի Սբ. Աստվածածին եկեղեցու շինարարները:

1913 թ. Շուշիի թեմական դպրոցի 75-ամյա հոբելյանը նշելու համար, Ջարդանաշեն գյուղից սերված, մոսկվայաբնակ վաճառական Բաղդասար Արզումանյանը 200 000 ռուբլու աննախադեպ նվիրատվություն է կատարել[985]:

Բաղդասար Արզումանյանը հայրենի գյուղում կառուցել էր նաև մետաքսամշակման գործարան, որի երկհարկանի կառույցը 1920 թ. խորհրդային կարգեր հաստատելուց հետո օգտագործվել է որպես դպրոցական շենք: 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Ջարդանաշենի մոտ գտնվող ոսկու և պղնձի հանքերը շահագործվում էին անգլիացիների կողմից:

19-րդ դարի 40-ական թվականներից սկսած հայ ժողովրդի բոլոր շերտերի համար հասկանալի դարձավ, որ ցարական արքունիքը ոչ միայն նպատակ չուներ վերականգնել հայկական պետականությունը, այլև վարում էր գաղութային անսքող քաղաքականություն:

Օրեցօր աճում էին դժգոհությունները ցարիզմի սոցիալական, դասակարգային, ազգային քաղաքականության, տեղական իշխանությունների չարաշահումների և ծանր հարկերի դեմ:

1840 թ. Արցախում գյուղացիական հուզումներ են արձանագրվել Ջարդանաշեն, Կարագյադուկ, Բանազուր գյուղերում և Շուշիում[986]:

[984] ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 9:
[985] Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 629:
[986] Բալայան Վ., Դրվագներ..., էջ 49:

Խորհրդային տարիներին Ջարդանաշենը գտնվում էր ԼՂԻՄ Մարտունու շրջանում:

Ադրբեջանի իշխանությունները ամեն կերպ ձգտում էին միջամտել ԼՂԻՄ ներքին գործերին և փորձում իրավիճակներ ստեղծել՝ Արցախը հայաթափելու համար:

1930 թ. Արցախից Ադրբեջանի տարբեր շինարարական կազմակերպությունների համար պետք է հավաքագրվեր 1000 բանվոր, մինչդեռ հաջողվել էր միայն 27 հոգու համոզել: «Կոմունիստ» թերթը դա գնահատել է որպես «օպորտոնիստական վերաբերմունք և թերագնահատվել է այդ կարևոր գործը»[987]:

Որոշ գյուղերի՝ Խերխանի, Նգգիի, Ջարդանաշենի կոլտնտեսությունների վարչությունները հրաժարվել են բանվորական ուժ տրամադրել[988]:

1930 թ. Ջարդանաշենում ստեղծվել էր կոլեկտիվ տնտեսություն: Այս կոլտնտեսությունը 1961 թ. ընդգրկվել է Կարմիր Շուկայի սովխոզի կազմում: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո Ջարդանաշենի բնակիչները դարձել են մենատնտեսներ:

Տարբեր տարիների Ջարդանաշենի կոլտնտեսությունը ղեկավարել են Թևան Բաղդասարյանը, Սամսոն Ներսիսյանը:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 140 մարդ, զոհվել է 73-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Ջարդանաշենի հայությունն իր մասնակցությունը բերեց արցախահայության ազատագրական պայքարին: 1989-1990 թվականներին գյուղում կազմավորվել էր ինքնապաշտպանական ջոկատ: Ջարդանաշենցի 21 ազատամարտիկներ Մարտունու պաշտպանական շրջանի ստորաբաժանումների կազմում մասնակցել են 1991-1994 թվականների ռազմական գործողություններին: 6 ազատամարտիկներ զոհվել են:

1943-1980 թվականներին գյուղում գործել է ութամյա դպրոց: Աշակերտների թվաքանակի նվազման պատճառով դպրոցը 1981 թ. տարրականի կարգավիճակ է ստացել: 1989 թ. այն նորից դարձավ ութամյա: 2009 թ. վերոհիշյալ դպրոցը դարձավ Թաղավարդի միջնակարգ դպրոցի մասնաճյուղ:

Եթե 1950-1960-ական թվականներին Թաղավարդի դպրոցում սովորում էր 80-82 աշակերտ, ապա 2018-2019 ուսումնական տարում գյուղում կար ընդամենը 8 աշակերտ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Ջ. Միրզոյանը, Ա. Բեգլարյանը, Ֆ. Պողոսյանը, Ռ. Առստամյանը:

1971 թ. գյուղում դպրոցական նոր շենք է կառուցվել:

Ծննդով Ջարդանաշենից է ազգագրագետ, հայագետ, Խաչիկ վարդապետ Դադյանը:

Գյուղի պատմամշակութային նշանակության հուշարձաններն են Սբ. Աստվածածին եկեղեցին (19-րդ դար), Հայրենական մեծ պատերազմում և արցախյան ազատամարտում զոհվածների հիշատակին նվիրված հուշակոթողները:

[987] «Կոմունիստ», 14 հոկտեմբերի, 1931:
[988] «Կոմունիստ», 21 հունիսի, 1931:

Գյուղի աղբյուրներն են՝ Շենին, Յուղոնեգ, Գյոկու, Մեյդան գոմեր, Կապեն:

Բնակավայրի հանդամասերն են՝ Խութ, Տկղնոտ, Գյոկ, Մեծ տախտ:

Համայնքում ապրում են Մամունց, Կյալունց, Տոնունց, Խաչունց, Բեջունց, Բուզանանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, ակումբ, բուժկետ, հանդիսությունների սրահ, Թաղավարդի Ա. Գրաշու անվան դպրոցի մասնաճյուղը:

Ջարդանաշենում 19-րդ դարի վերջերին կար 137 տուն, 895 բնակիչ[989], 1989 թ.՝ 26 տուն, 90 բնակիչ[990], 2018 թ.՝ 25 տուն, 93 բնակիչ[991]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԹԱՂԱՎԱՐԴ

Գյուղը գտնվում է Մարտունու շրջանում՝ Վարանդա գետի աջ ափին, և թիկնած է Ղալա քարի հարավարևելյան լանջին: Բնակավայրը շրջապատված է անտառներով և պտղատու այգիներով:

Միջնադարում գյուղը գտնվում էր Բրդահոնջ տեղամասում, որտեղ առայսօր պահպանվում են համանուն եկեղեցու փլատակները, պարիսպների, ամենազանազան շինությունների հետքերը, ստորգետնյա անցուղիները:

Սելջուկ-թուրքերի արշավանքների ժամանակ բնակչությունը տեղափոխվում և հաստատվում է նախկին բնակավայրից ոչ հեռու գտնվող Գյունե բաղ վայրում: Այստեղ կառուցվում է նոր եկեղեցի (Գյունե եկեղեցի), որը մինչև հիմա պահպանվում է:

1698 թ. եկեղեցում տոնախմբության ժամանակ թուրքերը հարձակվում են գյուղի վրա, կոտորում անպաշտպան բնակչության մի մասը, հրդեհում տները, թալանում կայքը և հեռանում: Գյուղում մնացած բնակչությունը տեղափոխվում է Գարդան անտառի բացատը, կառուցում տներ և բնակավայրը անվանում Վերին շեն[992]: Սակայն նոր ընտրված բնակավայրի բնակլիմայական պայմանները հարմարավետ չէին, մանավանդ անտառի մեջ խոնավությունը շատ բարձր էր: Որոշվեց այդ տարածքից իջնել 3 կմ հարավ-արևելք և հարմարավետ լեռան լանջին կառուցել նոր գյուղ, որը անվանվեց Թաղավարդ (Վերին Թաղավարդ): Բնակավայրից հյուսիս-արևելք՝ 4 կմ հեռավորության վրա, գտվում են գյուղացիների կալերը: Համեմատաբար ապահով և խաղաղ կյանքի պայմաններում, ինչպես Արցախի մի շարք բնակավայրերից, այնպես էլ Թաղավարդից 19-րդ դարի

[989] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 206:
[990] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 227:
[991] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:
[992] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

սկզբներին բնակիչներն իջան ավելի հարմարավետ կալերը և նոր բնակավայր հիմնեցին: Այն անվանվեց Թաղավարդի Կալեր կամ Ներքին Թաղավարդ:

Գյուղը փռված է լեռան լանջին և Ներքին Թաղավարդից մինչև Վերին Թաղավարդի վերջը շուրջ 7 կմ երկարություն ունի: Ճանապարհների բարեկարգ լինելը գյուղացիների համար ամենահարատապն էր համարվում: 1903 թ. քյոխվա Արշակի նախաձեռնությամբ սալահատակվում է գյուղի կենտրոնական փողոցը, որն առայսօր ծառայում է ազգաբնակչությանը: Մինչև 20-րդ դարի սկիզբը Թաղավարդում 3 ձիթահաններ և 6 ջրաղացներ կային:

1917-20 թթ. ընթացքում՝ Արցախում պետականության վերակերտման շրջանում, Թաղավարդը հայտնվել է պատերազմական իրադարձությունների կիզակետում:

1920 թ. մարտի 23-ին թուրք-թաթարները, Շուշիի հայկական քաղաքամասը հրի մատնելուց և թալանելուց հետո ռազմական գործողություններ ծավալեցին Ասկերանի և Վարանդայի ուղղությամբ: Սղնախ գյուղի տակ թշնամին մեծաքանակ կորուստներ է կրում և հետ նահանջում Շուշի:

Այդ օրերին կազմվեց Արցախի ժամանակավոր կառավարությունը, որի կազմը հաստատվեց Թաղավարդ գյուղում 1920 թ. ապրիլի 25-ին հրավիրված Ղարաբաղի հայության 9-րդ համագումարում: Միաժամանակ համագումարը որոշեց. «Հռչակել Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանի Հանրապետությանը, որպես նրա անբաժան մաս»[993]:

Արցախը պաշտոնապես ընդունում է Հայաստանի Հանրապետության դրոշը, զինանշանը, հիմնը, դրամը:

Որպես ապահով վայր՝ Արցախի կառավարությունը սկսեց գործել Թաղավարդում: Այդտեղ կառավարությունը Դրոյի հետ խորհրդակցաբար մի քանի նիստեր է գումարել և Ադրբեջանին բռնակցելուն ուղղված բոլշևիկների քայլերը խափանելու համար որոշել ձեռնարկել համապատասխան միջոցներ: Օրեցօր Արցախի վրա կարմիր բանակի ճնշումները մեծանում էին: Այլ ելք չգտնելով՝ 1920 թ. մայիսի 26-ին Թաղավարդում հրավիրված արցախահայության տասներորդ համագումարը երկրամասը հայտարարում է խորհրդային: Ստեղծվում է իշխանության նոր մարմին՝ հանձին հեղկոմի, որի նախագահը դարձավ Սաքո Համբարձումյանը[994]:

1920-ական թվականներին Թաղավարդում կազմակերպվել է կոմունա, իսկ 1934 թ.՝ կոլտնտեսություն: 1962 թ. կոլտնտեսությունը վերակազմակերպվեց պետական տնտեսության (սովխոզ), որի կազմի մեջ ներառվեցին Շեխերի, Սխտորաշենի, Սարգսաշենի և Կարմիր շուկայի կոլտնտեսությունները: Պետական այդ տնտեսությունը մինչև 1988 թ. հիմնականում մասնագիտացել էր խաղողագործության, հացահատիկի արտադրության և անասնապահության ասպարեզներում:

[993] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 98:
[994] Բալայան Վ., Դրվագներ..., էջ 130:

Հայրենական Մեծ պատերազմին մասնակցել է 670 թաղավարդցի, որոնցից զոհվել է 234-ը: Նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Թաղավարդցիներից Հովսեփ Հովսեփյանն արժանացել է փառքի 1-ին, 2-րդ և 3-րդ աստիճանի շքանշանների:

Թաղավարդի քաջորդիները անմնացորդ նվիրվածությամբ կռվել են նաև արցախյան ազատագրական պատերազմի տարիներին: Նրանցից 40 հոգի զոհվել են: Բորիկ Շահենի Ջիվանյանը, Կամո Նիկոլայի Ալավերդյանը, Սլավիկ Էդիկի Թամրազյանը, Շահեն Շահմարի Շահրամանյանը և Ֆելիքս Հրանտի Ալավերդյանն արժանացել են ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի: Զոհվածների հիշատակին գյուղում կառուցվել է հուշարձան:

1868 թ. Թաղավարդում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց՝ 15 աշակերտով: Գյուղում գործել է նաև մասնավոր դպրոց:

1880-81 ուսումնական տարում գյուղում բացվել է մեկդասյա երկսեռ դպրոց, որն ուներ 3 բաժանմունք: Նույն ժամանակահատվածում Սբ. Էջմիածնի Սինոդի թույլտվությամբ գյուղում սկսել էր գործել օրիորդաց դպրոց՝ 40 աշակերտուհիներով:

1896 թ. գյուղն ունեցել է երկսեռ դպրոց[995]:

Խորհրդային տարիներին Թաղավարդում գործում էր 2 դպրոց, մեկը՝ միջնակարգ (Վերին Թաղավարդ), մյուսը՝ ութամյա (Ներքին Թաղավարդ): 1984 թ. Վերին Թաղավարդում նոր դպրոցական շենք է կառուցվել: Ներկայումս Վերին Թաղավարդում գործում է Աշոտ Գրաշու անվան միջնակարգ դպրոցը: 2014-2015 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 125 աշակերտ, դասավանդում՝ 22 ուսուցիչ: Դպրոցի տնօրեններ են եղել Լ. Մուսաելյանը (1988-1999 թթ.), Ս. Շահրամանյանը (1999-2006 թթ.), Հ. Ալավերդյանը՝ 2006 թվականից առ այսօր:

Ներքին Թաղավարդում գործում է հիմնական դպրոց: 2015-2016 ուսումնական տարում դպրոցում սովորել են 51 աշակերտ, դասավանդել՝ 14 ուսուցիչ: 1988-1994 թթ. դպրոցի տնօրենն էր Ե. Գաբրիելյանը, իսկ 1994 թվականից առայսօր՝ Մ. Սահակյանը:

Թաղավարդում ծնվել և կրթություն են ստացել բանաստեղծ Աշոտ Գրաշին, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Մոսկվայի Տիմիրյազևի անվան ակադեմիայի ամբիոնի վարիչ Երվանդ Արզումանյանը, Աշխաբադի գլխավոր ճարտարապետ Երվանդ Ռուստամբեկովը, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ, գեներալ-մայոր Երվանդ Շահնազարյանը, նշանավոր բժիշկ Վարդան Արզումանյանը, երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Թամրազյանը, ԱՀ գերագույն դատարանի նախագահ Վլադիմիր Հովսեփյանը:

Ներկայումս գյուղի տարածքում պահպանվում են պատմամշակութային մի շարք նշանավոր հուշարձաններ, մասնավորապես՝ Բերդահունջի եկեղեցին (17-րդ դար),

[995] Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Արցախի կրթական համակարգը, հ. 1, էջ 384-385:

Բերդահունջի ամրոցը (8-13-րդ դարեր): Պահպանվել են բերդի կրկնապարիսպները, աշտարակները, բնակարանների մի մասը, ջրավազանները, ստորգետնյա մուտքը:

Հայտնի է նաև Չիրավուշ կամ Գյունե եկեղեցին, որտեղ պահպանվում են 17-րդ դարի խաչքարեր, գեղատեսիլ բլրի վրա՝ միջնադարյան Հին Ղալա ամրոցը, Ջուխտ Պառավածառ սրբավայրը (13-14-րդ դարեր), Գյունե Բաղի եկեղեցին, 1840 թ. կառուցված Սբ. Աստվածածին եկեղեցին, 12-13-րդ դարերի խաչքարեր, 10-13-րդ դարերի գերեզմանոց, Բարևածառի սրբավայրը (10-13-րդ դարեր):

Թաղավարդի տարածքում կան բազմաթիվ աղբյուրներ՝ Երե, Ներքե, Ասրունց, Պլպլան, Խուռհատ, Կաթնաղբյուր, Շեշմա, Ծատորեն, Սլակնեն, Շորեն, Բաղունց, Բլբահանդ, Ռուսեն, Դերին, Ղազունց, Օհանանց, Փաշուն, Խուդուն, Ծլլոկ:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, 2 դպրոցներ, 3 խանութներ:

19-րդ դարի վերջերին Ներքին Թաղավարդն ուներ 170 տուն, 1140 բնակիչ, Վերին Թաղավարդը՝ 137 տուն, 895 բնակիչ[996]: Թաղավարդում 2018 թ. կար 329 տուն, 1261 բնակիչ[997]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԽԵՐԽԱՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Բովուրխանի լեռնազանգվածից դեպի հարավ-արևելք ձգվող Ծծաքարի լեռնալանջի արևելահայաց թեքության վրա: Գյուղի հարևանությամբ հոսում է Հաչա գետակը:

Խերխանից 1 կմ հեռավորության վրա պահպանվում են Խաչեր գյուղատեղիի մնացորդները, որը գոյատևել է 10-ից մինչև 18-րդ դարը: Որոշակի քաղաքական, տնտեսական հանգամանքների ազդեցության տակ վերոհիշյալ բնակավայրից մարդիկ հեռացել են:

Մի քանի ընտանիքներ իրենց բնակավայրին մոտ գտնվող Ծծաքարի լեռնալանջին նոր գյուղի հիմքեր են դրել: Բնակավայրը ստացել էր Խերխան անունը: 18-րդ դարի կեսերից մինչև 19-րդ դարի վերջերը Խերխանում հաստատվել էին նաև մի քանի ընտանիքներ Բերդաձորի Խերխան և Կանաչ թալա գյուղերից:

Գյուղի մոտ գտնվող Ծծաքարի քարանձավը Խերխանի պատմության անբաժան մասն է կազմել: Վերոհիշյալ քարանձավի մասին ժողովրդի մոտ ավանդազրույց է

[996] Մակար եպս. Բարխուտարյանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 206:
[997] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

պահպանվել, ըստ որի գյուղի հարսներից մեկի նկատմամբ սկեսուրը միշտ դաժան է վարվել: Հեզ ու խոնարհ հարսը այլևս չի կարողացել դիմանալ այդ հալածանքներին: Մի օր էլ առավոտյան նա հեռանում է տնից և հասնում լեռան կատարը: Նա վերջին անգամ նայել է գյուղին, հետո ծունկի իջել, աղոթել Աստծուն, որ իրեն ազատի տառապանքներից. «Քար դարձրու մարմինս, Տեր իմ, միայն ստինքներս թող, որ մանկիկս չզրկվի կենարար աղբյուրից»,— ասել է հարսը: Աստված կատարում է նրա ցանկությունը: Լեռան վիմափոր անձավի պատին պահպանվել են ջահել հարսի քարե ստինքները: Ազատամարտի տարիներին քարանձավում ապաստանել են Խերխանի ու շրջակա գյուղերի բնակիչները[998]:

19-րդ դարի վերջին Խերխանում կառուցվել է Սբ. Գևորգ եկեղեցին:

Գյուղում խորհրդային կարգեր հաստատելուց հետո 1930 թ. կոլտնտեսություն է կազմակերպվել: 1950 թ. Հերհերի, Ծովատեղի և Խերխանի տնտեսությունները միավորվել են:

1988 թ. ապախոշորացումից հետո Խերխանի կոլտնտեսությունը շարունակել է առանձին գործել: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվել են անհատական տնտեսություններ:

Խերխանից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 137 հոգի, որոնցից 63-ը զոհվել է: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Խորհրդային Միության հերոսի բարձր կոչմանն է արժանացել Իսահակ Մանասյանը:

Արցախյան ազատագրական պատերազմի ժամանակ մարտական գործողություններին գյուղից մասնակցել է 15 ազատամարտիկ: Նրանցից 1 ազատամարտիկ զոհվել է:

1930 թ. Խերխանում բացվել է տարրական դպրոց, 1960-ական թվականներին այն ութամյայի կարգավիճակ ուներ: 1964 թ. դպրոցական նոր շենք է կառուցվել:

1974 թ. աշակերտների թվաքանակի կրճատման պատճառով դպրոցը դարձել է տարրական և հանդիսացել է Ծովատեղի կրթօջախի մասնաճյուղ: 1984-1988 թթ. դպրոցը փակվել էր:

1988-1989 ուսումնական տարվանից նորից սկսեց գործել Խերխանի տարրական դպրոցը: 2006-2007 ուսումնական տարվանից դպրոցը դարձել է հիմնական, որտեղ սովորում էր 26 աշակերտ, դասավանդում՝ 10 ուսուցիչ: 2018-2019 ուսումնական տարում Խերխանի դպրոցում կար 14 աշակերտ և 11 ուսուցիչ:

Տարբեր տարիներին դպրոցի տնօրեններ են աշխատել Նիկոլայ Հովակիմյանը, Քնարիկ Մարտիրոսյանը, Սիրան Մանասյանը, Լորա Խաչատրյանը, Վլադիմիր Առուստամյանը:

[998] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 318:

Գյուղի զարգացման գործում կարևոր դերակատարություն են ունեցել եղբայրներ՝ Գերասիմ և Ջիվան բեկերը: Առայսօր նրանց տները գյուղի համար ծառայում են որպես գյուղապետարան, ակումբ, հանդիսությունների սրահ:

Ծննդով Խերխանից է Հայոց մեծ եղեռնի կազմակերպիչներից մեկի՝ Էնվեր փաշայի ոչնչացման ռազմագործողության հրամանատար, խորհրդային բանակի գեներալ-լեյտենանտ Հակոբ Մելքումյանը, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրաչիկ Փարամազյանը, ՀԽՍՀ վաստակավոր արտիստ Սուրեն Համզոյանը:

Խերխանի պատմամշակութային նշանակության հուշարձաններն են Սբ. Գևորգ եկեղեցին (19-րդ դար), Խաչեր գերեզմանոցը (11-14-րդ դարեր), համանուն սրբատեղին:

Գյուղի աղբյուրներն են՝ Թլեն, Գյուղամեջի, Դերուն, Մելուն:

Համայնքը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Խերխանում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, առևտրի կետ:

Խերխանը 1890-ական թվականներին ուներ 31 տուն, 270 բնակիչ, 1989 թ.՝ 40 տուն, 84 բնակիչ[999], 2018 թ.՝ 28 տուն, 140 բնակիչ[1000]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԽՆՈՒՇԻՆԱԿ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում, նախկին Վարանդայի գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Սրբախութ լեռան արևելյան լանջի գոգավորությունում:

Միջնադարում գյուղը գտնվում էր ներկայիս բնակավայրից 1 կմ արևմուտք՝ Սրբախութ լեռան ավելի բարձրադիր մասում:

Գյուղը նախկինում կրում էր Իսպահանջուղ անվանումը: Դա պատահական չէր, որովհետև Իսպահանից, մասնավորապես Նոր Ջուղայից, մի քանի ընտանիքներ ժամանակին տեղափոխվել և հաստատվել են վերոհիշյալ բնակավայրում:

19-րդ դարի սկզբներից գյուղը կրում էր Խնուշինակ անվանումը: Ս. Մելքումյանը բնակավայրի անունը ստուգաբանում է որպես խանի շեն[1001]:

Մեկ այլ հետազոտող Ս. Սարգսյանը գյուղի նախանվանում է համարում Հանի շենը (Հանիշենի ակ)՝ նկատի ունենալով, որ այն կամ նախկին բնակավայրը գտնվում էր Հան-Շրմանա քար-Գորոզուի արևելակողմ լանջին կամ ստորոտում[1002]:

[999] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 224:
[1000] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:
[1001] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 235-236:
[1002] Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 71:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գյուղի հողատարածքները գտնվում են Խոնաշեն գետի աջափնյակում, ուստի հնարավոր է, որ գյուղի անվանումը կապ ունենա վերջինիս հետ:

1860 թ. խնուշինակցի շուշվաբնակ Հայրապետ Բեկ Դոլուխանյանցը գյուղում կառուցել է Սբ. Աստվածածին եկեղեցին: Մակար եպս. Բարխուդարյանի վկայությամբ եկեղեցում պահվում էր ձեռագիր Ավետարան, որը հետագայում տեղափոխվել է Ավետարանոց ավան: Այդտեղ պահպանվում էր նաև շուշեցի տիրացու Անաստաս Տեր-Մկրտչյանցի՝ եկեղեցուն նվիրված գրչագիր Մաշտոցը[1003]:

1905–1906 թվականներին ծանր կացության մեջ էր հայտնվել նաև Խնուշինակ գյուղը:

1905 թ. մարտին 400 զինվորներից և կոզակներից բաղկացած մի զորագունդ, չորս թնդանոթներով փոխգնդապետ Վիվերնի, գավառապետ Ֆրեյլիխի, սպաներ Բիրկիվլիկինի, Հաջինի, հաշտարար միջնորդ Երմոլաևի և պրիստավ Ֆիտինի գլխավորությամբ մտան Վարանդայի և Դիզակի գավառները:

Նրանք ամենադաժան կերպով թալանեցին և ավերեցին Ավետարանոց, Սարգսաշեն, Շեխեր, Թաղավարդ, Թաղլար, Տող, Տումի, Ազոխ, Հաղորտի, Սոս, Գյունե Ճարտար, Խնուշինակ և Գիշի գյուղերը[1004]:

Խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1930 թ., Խնուշինակում կոլտնտեսություն է կազմակերպվել: Խոշորացման տարիներին Խնուշինակի, Սպիտակաշենի տնտեսությունները միացվել էին Գիշու կոլտնտեսությանը: 1960-ական թվականներին վերոհիշյալ կոլտնտեսությունը նորից ապախոշորացվել էր: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվել են անհատական տնտեսություններ:

Խնուշինակից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 210 մարդ, զոհվել է 116-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կանգնեցվել:

Արցախյան շարժման առաջին տարիներին Խնուշինակում կամավորական ջոկատ էր ստեղծվել: Մարտական գործողություններին մասնակցել են 120 ազատամարտիկներ: Նրանցից 29 ազատամարտիկներ զոհվել են: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի են արժանացել Արթուր Ավագյանը, Ռազմիկ Յախշիբեկյանը, իսկ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի՝ Վալերիկ Մարտիրոսյանը, Գրիշա Դանիելյանը, Նելսոն Սարգսյանը և Կամո Մուրսալյանը:

Խնուշինակում 1870 թ. բացվել էր նախակրթարան, իսկ 1873 թ.՝ եկեղեցական-ծխական դպրոց: Ուսուցիչն էր Տեր Միքայել քահանան: Դպրոցը 2 անգամ՝ 1885 թ. և 1896 թ., փակվել է: Վերաբացվել է 1906 թ.: Ուսուցիչն էր Նիկողայոս Հարությունյանը:

[1003] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 221–222:
[1004] Բալայան Վ., Դրվագներ..., էջ 66:

Խորհրդային տարիներին գյուղում գործում էր ութամյա դպրոց: 1991 թ. դպրոցը միջնակարգի կարգավիճակ էր ստացել: 2013–2014 ուսումնական տարում գյուղում սովորում էր 96 աշակերտ, դասավանդում՝ 16 ուսուցիչ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Վ. Դոլուխանյանը, Ս. Հակոբյանը:

Ծննդով Խնուշինակ գյուղից են գեներալ-լեյտենանտ Ռուբեն Գաբրիելյանը, գեներալ-մայոր Գուրգեն Ղազարյանը, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռազմիկ Բեգլարյանը, անասնաբուժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Շաքարյանը, տեխնիկական գիտությունների դոկտոր Անահիտ Բեգլարյանը, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարիա Շաքարյանը, ԱՀ փոխվարչապետ Սպարտակ Թևոսյանը, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի փոխառաջնորդ Սահակ վարդապետ Շաքարյանը:

Խնուշինակի պատմամշակութային նշանակության հուշարձաններն են՝ 17–19-րդ դարերի գյուղատեղին և Սբ. Աստվածածին եկեղեցին (19-րդ դար):

Համայնքի աղբյուրներն են՝ Շենին ջուր, Ծլլոկ, Վարար, Վետած, Բալունց ջուր, Տնգզբուլաղ կամ Դոնգուզբուլաղ, Շլորին, Քյահրիզին ջուր:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, հանդիսությունների սրահ, առևտրի 3 կետ:

Խնուշինակում 19-րդ դարի սկզբներին կար 25 տուն[1005], 1890-ական թվականներին՝ 96 տուն, 810 բնակիչ, 1987 թ.՝ 151 տուն, 608 բնակիչ[1006], 2018 թ.՝ 130 տուն, 499 բնակիչ[1007]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԾՈՎԱՏԵՂ

Գյուղը գտնվում է ԱՀ հարաարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Քոչիզ, այնուհետև՝ Վարանդա գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Բովուրխանի լեռնազանգվածից դեպի հարավ-արևելք ձգվող լեռնաճյուղերից մեկի գոգավորությունում:

Ծովատեղն Արցախի հնագույն նշանավոր բնակավայրերից է:

[1005] Սարգիս արք. Ջալալյանց, նշվ. աշխ. էջ 519:
[1006] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 236:
[1007] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

Ըստ Մակար Բարխուդարյանի՝ Ծովատեղ անունը ծագումնաբանական կապ ունի երկու լճակների հետ, որ ժամանակին կային Ծովատեղ և Խերխան բնակավայրերի միջև[1008]: Նույնանման մեկնաբանություն է տվել նաև Ստեփան Մալխասյանցը[1009]:

Ս. Սարգսյանի կարծիքով Ծովատեղը համատեղելի է բարձր դիրք ունեցող բնակավայրի անվան հետ[1010]:

Իսկ ահա ժողովրդի մոտ պահպանված ավանդության համաձայն՝ ժամանակին գյուղի արևակն (գյունե) հանդերում այնքան շատ էին կաքավները, որ մարդիկ գնում, ձու էին հավաքում, այդտեղից էլ Ծուվատեղ անունը, որից էլ առաջացել է Ծովատեղ[1011]: Հարկ է նկատել, որ Վարանդայի ներկայիս բնակիչները գյուղն անվանում են Ծուվատեղ և ոչ թե Ծովատեղ:

Որոշ հետազոտողներ գտնում են, որ Ծովատեղը և վերջինիս հարևանությամբ գտնվող Քոչիզը նույն բնակավայրն են:

Ըստ Ս. Ումառյանի՝ գյուղը նախկինում կրում էր Ծավդեք անվանումը[1012]: Սակայն պետք է նկատել, որ Ծավդեք գավառի համանուն բերդը գտնվում է Գյուլիստանի գավառում (նախկին Շահումյանի շրջանում):

Թռուցիկ ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ Ծովատեղը և Քոչիզը տարբեր բնակավայրեր են և մի ժամանակահատվածում՝ սկսած 12-րդ դարից մինչև 18-րդ դարի վերջերը, երկուսն էլ հարևանությամբ գոյատևել են:

Մինչև Վարանդայի մելիքության ասպարեզ գալը Ամարասի շրջակայքում գոյություն է ունեցել Քոչիզի իշխանությունը, այնուհետև՝ մելիքությունը: Մանավանդ Ամարասի հոգևոր կենտրոնի առկայությունը նպաստավոր էր նման իշխանություն ունենալու: Ծովատեղը իշխանական կենտրոն էր, իսկ Քոչիզը՝ գլխավոր ամրոցը:

Ընդհանուր առմամբ Արցախում ընդունված էր գլխավոր պաշտպանական նշանակության բնակավայրի անունով իշխանությունը անվանակոչել, ինչպես օրինակ Ջրաբերդի կամ Գյուլիստանի մելիքությունները:

16-րդ դարի երկրորդ կեսին Քոչիզը և Ծովատեղը նույն մելիքության տարբեր նշանակության կենտրոններն էին: Շահ Աբաս առաջինի հետ բարիդրացիական հարաբերություններ ստեղծելու և հակաթուրքական ճակատ հարդարելու նպատակով 1605 թ. Արցախից մի պատվիրակություն՝ Սարուխան բեկը և իր եղբայր Նազարը՝ Ոսկանապատից, Օղլան քեշիշը և իր եղբայր Ղալաբեկին՝ Հաթերքից, Ջալալ Բեկն ու իր եղբոր որդիները՝ Խաչենից, Մելիք Սուջումը՝ Դիզակից, Մելիք Փաշիկը՝ Քոչիզից, Մելիք Բաբան՝ Բրիտաս գյուղից, Մելիքսեթ եպիսկոպոսը՝ Վերին Ջակամից՝ Մելիք-

[1008] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 216:
[1009] Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. 2, էջ 333, 351:
[1010] Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 86:
[1011] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1012] Ումառյան Ս., Սյունիքը դիցարան, Երևան, 1981, էջ 60:

զատա գյուղից, Մելիք Հայկազը՝ Քաշաթաղ գավառի Խնածախ գյուղից, մեկնեցին Պարսկաստան[1013]:

Պահպանվել են Քոչիզի մոտ գտնվող գերեզմանատան մնացորդները: Տապանաքարերը երեսնիվայր ընկած և կիսով չափ թաղված են հողի մեջ: Դրանք 12-15-րդ դարերի հուշարձաններ են: Իսկ ինչ վերաբերում է Ծովատեղի մոտ գտնվող գերեզմանատանը, ապա այնտեղ պահպանված տապանաքարերի մեծ մասը ավելի ուշ շրջանի՝ 14-17-րդ դարերի մահարձաններ են:

Վերոհիշյալ տարածքում գտնվող հուշարձանախումբը, որը բաղկացած է 3 իրար կից ստորգետնյա մատուռ դամբարաններից, կիսլից, մի փոքր կամարակապ եկեղեցուց և ընդարձակ գերեզմանատնից, հայտնի է Կարմիր եղցի (1621 թ.) անունով:

Պահպանված մահարձանների, տապանաքարերի, խարխլված պատերի մեջ ագուցված խաչքարերի արձանագրությունների ընդօրինակումը 19-րդ դարի վերջին կատարել է Մակար Բարխուդարյանը: Դրանց մեջ կա նաև 13-րդ դարի մահարձան:

Դամբարաններն իրար հետ հաղորդակցվում են փոքրիկ դռներով: Թե եկեղեցում և թե դամբարաններում կան գերեզմաններ, որոնց տապանաքարերը քառանկյունի սնագույն մեծ պատվանդանների վրա են:

Մահարձան խաչքարերը միջին մեծության, ճաշակով հարդարված կոթողներ են, որոնց ներքևի պատվանդանին մոտիկ, նեղ մասում՝ վերևից ներքև, փորագրված են վիմագրերը: Բոլոր մահարձան-խաչքարերը միջին մեծության բարձրարվեստ զարդանախշերով են ծածկված: 1566, 1576, 1586, 1621 թվագրություններ ունեն վերոհիշյալ խաչքարերը:

Վիմագրերի մեջ հանդիպում են անուններ, որոնցից հատկապես Դիզակի մելիք Ավանը, Քոչիզի մելիք Փաշիկը, Սահակ եպիսկոպոսը առավել հայտնի դեմքեր են:

Հայտնի է, որ Դիզակի Մելիք Ավանի կառավարման ժամանակ Քոչիզի մելիքությունը վերջինիս ենթակայության տակ էր գտնվում, որի մասին պատմում է նաև Տողի ապարանքի վիմագիրը:

19-րդ դարում Վարանդայի մի շարք գյուղերից՝ Մամնայից, Ղավախանից, Ավետարանոցից, Ծովատեղից, տեղափոխվում են Շամախու գավառ և Աղսուի աջափնյակում հիմնում Քովլուջ գյուղը[1014]:

1895 թ. կառուցվել է նաև Ծովատեղի Սբ. Աստվածածին եկեղեցին:

Ծովատեղում խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1930 թ., կոլտնտեսություն է կազմակերպվել:

Խոշորացման տարիներին Հերհերի, Ծովատեղի և Խերխանի տնտեսությունները միավորվել են մեկ կոլտնտեսության մեջ:

[1013] Առաքել Դավրիժեցի, Պատմություն, էջ 25:
[1014] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 97:

1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվել են անհատական տնտեսություններ:

Տարբեր տարիներին կոլտնտեսությունը ղեկավարել են Երվանդ Սարգսյանը, Կոլյա Գաբրիելյանը, Սմբատ Ծատրյանը:

Ծովատեղից Հայրենական Մեծ պատերազմին մասնակցել է 140 մարդ, զոհվել է 68-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Գյուղի երիտասարդությունն իր մասնակցությունը բերեց արցախյան պատերազմին: Մարտական գործողություններին մասնակցել են 35 հոգի: Մեկ հոգի՝ Գավրուշա Ավագյանը, զոհվել է:

Հովիկ Աբրահամյանը պարգևատրվել է ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

1873 թ. Ծովատեղում նախակրթարան է բացվել:

1874-1875 ուսումնական տարում գյուղում արդեն գործում էր եկեղեցական ծխական դպրոց: Ուսուցիչն էր Հովսեփ տիրացուն: 1896 թ. փակվել է Ծովատեղի դպրոցը: Այն վերաբացվել է 1908 թ.: Դպրոցի հիմնադիրն էր Սերգեյ վարժապետը: Նա Գերմանիայում կրթություն ստանալուց հետո վերադարձել է հայրենի երկրամաս և Հերհեր, Ծովատեղ, Խերխան, Սխտորաշեն, Բլբլաք գյուղերի աշակերտների համար դպրոց է կառուցել[1015]:

Խորհրդային տարիներին Ծովատեղում գործում էր ութամյա դպրոց: 2018-2019 ուսումնական տարում Ծովատեղի կրթական հաստատությունը ուներ իննամյա դպրոցի կարգավիճակ, որտեղ սովորում էր 34 աշակերտ, դասավանդում՝ 9 ուսուցիչ:

2015-2016 ուսումնական տարում Ծովատեղի դպրոցը տեղափոխվել է նորակառույց շենքը, որն ունի նաև մարզադահլիճ:

Տարբեր տարիներին դպրոցի տնօրեններ են աշխատել Սերգեյ Մելիք Փաշայանը, Միքայել Բեգլարյանը, Ամիր Մինասյանը, Ջարմայր Հարությունյանը, Նշան Պետրոսյանը, Սարգիս Գրիգորյանը, Գալյա Փաշայանը:

Ծագումով Ծովատեղից են ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Մոսկվայի Մեծ թատրոնի գլխավոր դիրիժոր Ալեքսանդր Մելիք Փաշայանը, նկարիչներ Գրիգոր և Յուրի Գրիգորյանները, ավիացիոն և հրթիռային շարժիչների տեսության բնագավառի գիտնական Ներսես Մելիք Փաշայանը:

Գյուղի պատմամշակութային նշանակության հուշարձաններն են Կարմիր եղցի եկեղեցին (1621 թ.), Սբ. Աստվածածին եկեղեցին (1895 թ.), ապարանքը (18-րդ դար), խաչքարեր (13-17-րդ դարեր):

Գյուղի աղբյուրներն են՝ Շոր, Չիման, Դերունց, Տնջրուն:

Համայնքի հանդամասերն են Դաղուն դուզը, Քյահրիզը, Ղուզե բաղը, Պապունց կալերը, Կարաս խութին յալը:

[1015] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 43, թ. 10:

Ծովատեղում շարունակում են ապրել Փաշայանների, Աբրահամյանների, Ավագյանների, Դանիելյանների, Առստամյանների, Ավանեսյանների, Հայրումյանների, Թավադյանների, Հարությունյանների, Մարտիրոսյանների, Գասպարյանների, Սեյրանյանների տոհմերի ներկայացուցիչները: Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, ինտերնետ ծառայությունը, բջջային և անլար հեռախոսակապը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, դպրոց, գրադարան, առևտրի 1 կետ:

Ծովատեղում 19-րդ դարի սկզբներին կար 16 տուն[1016], 1890-ական թվականներին՝ 86 տուն, 576 բնակիչ, 1989 թ.՝ 44 տուն, 140 բնակիչ[1017], 2018 թ.՝ 33 տուն, 113 բնակիչ[1018]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԿԱՂԱՐԾԻ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդայի գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Ստեփանակերտ-Մարտունի մայրուղու միջնամասի ձախ հատվածում: Գյուղի ձախ մասով հոսում է Խոնաշենի ձախափնյա Տնջրի վտակը, որը ամռան ամիսներին ցամաքում է:

Կարծիք կա, որ բնակավայրը կազմավորվել է վաղ միջնադարում: Գյուղի մոտ 13-րդ դարի խաչքար է հայտնաբերվել: Մովսես Կաղանկատվացին պատմում է, որ Աղվանից Աբաս կաթողիկոսի ժամանակ (6-րդ դար) սրբերի մասունքները հասցրել են Արցախի Կաղսետու բնակավայրը[1019]:

Ա. Հակոբյանի կարծիքով Կաղսետուն համադրելի է Կաղարծի գյուղի հետ[1020]:

Կաղարծին Վարանդայի նշանավոր բնակավայրերից մեկն է, որը կարևոր դերակատարություն է ունեցել, մանավանդ, 13-րդ դարից մինչև խորհրդային կարգերի հաստատումը՝ 1920 թվականը:

19-րդ դարում գյուղում կառուցվել է Սբ. Թարգմանչաց եկեղեցին, որը 2000-ական թվականների սկզբներին վերանորոգվել է:

20-րդ դարի սկզբներին այստեղ փայտե տուփի մեջ պահպանվում էին մի հին արծաթե խաչ ու պատկերազարդ Ավետարան: Այդտեղ եղած հիշատակարանում նշված էր, որ այդ Ավետարանը Հովհաննես գրչի գործն է եղել, և որ Թորոս երեցը 6000 դահեկանով այն գնել է անօրենների ձեռքից ու 1477 թ. բերել Արցախ[1021]:

[1016] Սարգիս արք. Ջալալյանց, նշվ.աշխ., էջ 514:
[1017] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 223:
[1018] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:
[1019] Մ. Կաղանկատվացի, էջ 120-121:
[1020] Յակոբեան Ա., նշվ. աշխ., էջ 297:
[1021] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 240:

Թարգմանչաց եկեղեցին ունեցել է գմբեթավոր զանգակատուն, որի զանգը կշռել է մոտ 900 կգ: Եկեղեցին գործել է մինչև 1920 թ.: Խորհրդային տարիներին զանգը գլորել են ձորը, որը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին օգտագործել են որպես մետաղի ջարդոն[1022]:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին գյուղը բավականաչափ բազմամարդ ու բարեկարգ էր:

Նշված ժամանակահատվածում Միջին Ասիայում վաճառականությամբ զբաղվող կաղարծեցի Ավանես Նալբանդյանի միջոցներով սալահատակվել են գյուղի հիմնական փողոցները:

18-19-րդ դարերում Կաղարծիից որոշ ընտանիքներ տեղափոխվել և հաստատվել են Հաթերքում ու Շամախիի Մյուրիշեն գյուղում[1023]:

Գյուղում խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1930 թ., կազմակերպվել է կոլտնտեսություն: Խոշորացման տարիներին ստեղծվել էր Կաղարծու, Պառավաթումբի և Ղարադաղլուի միացյալ կոլտնտեսությունը: 1988 թ. ապախոշորացումից հետո Կաղարծու կոլտնտեսությունը շարունակել է գործել:

1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվել են անհատական տնտեսություններ:

Տարբեր տարիների Կաղարծու կոլտնտեսությունը ղեկավարել են Տիգրան Բաբայանը, Սամսոն Զաքիյանը, Մուշեղ Հայրապետյանը, Արշակ Առուշանյանը, Գրիգոր Աբրահամյանը, Արմենակ Գրիգորյանը, Միքայել Հովսեփյանը, Իվան Աթայանը, Ալեքսանդր Հայրապետյանը, Միշա Գրիգորյանը, Գարուշ Սարգսյանը:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 460 մարդ, որոնցից 123-ը զոհվել է: Նրանց հիշատակին Կաղարծիում հուշարձան է կառուցվել:

Արցախյան ազատագրական պայքարի առաջին տարիներին՝ 1988-1989 թվականներին, Արմեն Սարգսյանի հրամանատարությամբ գյուղում ինքնապաշտպանական ջոկատ է կազմակերպվել: Մարտական գործողություններին մասնակցել է 75 ազատամարտիկ: Նրանցից 11-ը՝ Լևոն Գասպարյանը, Նելսոն Հարությունյանը, Արմավիր Պետրոսյանը, Վլադիմիր Սայիյանը, Մերուժան Ասրիբաբայանը, Էդիկ Սաֆարյանը, Սեյրան Հարությունյանը, Ռազմիկ Բաբայանը, Լավրենտ Սաղյանը, Հենրիխ Հակոբջանյանը, Ռազմիկ Բալասանյանը զոհվել են:

Գյուղում նրանց հիշատակը հավերժացնող հուշարձան է կառուցվել:

1869 թ. Կաղարծիում գործել է մասնավոր դպրոց: 1873 թ. բացվել է նախակրթարան: Այն գործում էր Խմբաջանց, Թևունց տներում:

[1022] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 322:

[1023] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 92, 264:

1877-1878 թվականներին գյուղի բնակչությունը խնդրագրով դիմել է կաթողիկոսին և վեհափառի թույլտվությամբ դպրոց բացել: Ուսուցիչն էր Տեր Մարտիրոս քահանան: Այն փակվել է 1896 թ. և վերաբացվել 1906 թ.:

1908-1909 ուսումնական տարում դպրոցն ուներ 3 բաժանմունք, 65 աշակերտ, 2 ուսուցիչ:

1908-1910 թվականներին կաղարծեցի վաճառական Առաքել Սաֆարյանի նախաձեռնությամբ և նյութական միջոցներով դպրոցական շենք է կառուցվել, որն առայսօր ծառայում է գյուղի բնակիչներին:

1922 թ. գյուղում բացվել է տարրական դպրոց: 1938 թ. այն միջնակարգի կարգավիճակ է ստացել: Այստեղ իրենց կրթությունն էին ստանում նաև Ննգու, Մյուրիշենի, Ավդուռի, Հացու դպրոցահասակ երեխաները:

Տարեցտարի աշակերտների թվաքանակը նվազել է: 2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 32 աշակերտ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են եղել Սամսոն Ղարաբեկյանը, Աղասի Սաֆարյանը, Թևան Ջավադյանը, Հայրապետ Սարգսյանը, Վարդան Բաբայանը, Գրիգոր Գրիգորյանը, Սերգեյ Մանգասարյանը, Միքայել Հովսեփյանը, Միքայել Հայրապետյանը, Սուրեն Հայրապետյանը, Գուրգեն Սաղյանը, Սերյոժա Սարգսյանը, Արմեն Սարգսյանը, Լյուդմիլա Հայրապետյանը:

Կաղարծու դպրոցի շրջանավարտ է ԱՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարար, ԱԺ պատգամավոր Արմեն Սարգսյանը:

Ծնունդով Կաղարծի գյուղից է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, ճարտարապետ Սամվել Սաֆարյանը:

Համայնքի պատմամշակութային նշանակության հուշարձաններն են՝ Լուսավորիչ մատուռը (17-18-րդ դարեր), գերեզմանոց (18-19-րդ դարեր), Մատթե սրբատեղին (10-13-րդ դարեր), Սբ. Թարգմանչաց եկեղեցին (19-րդ դար): Կաղարծիի ազգաբնակչության մոտ պահպանված ավանդազրույցի համաձայն Լուսավորչի մատուռում ամփոփված է Գրիգոր Լուսավորչի ցուցամատը:

Գյուղի աղբյուրներն են՝ Ղղլարանց, Ընմավուր, Տկողնուն, Փյալա, Շիշի, Հացե, Տաք, Ետեն, Օխնան, Ճրմաղբյուր, Լալեգ, Սազարտ, Շաման, Սուբանց, Սոնատուն, Ծլլոկ, Մեքուն, Չորան, Թունգ, Թխկուն տակ, Բաղեն ծորեն, Թազուն, Միզաղբյուր:

Համայնքի անտառներն ու հանդամասերն են՝ Աղբուլաղ, Սազարտ, Բեդուն ծմակ, Հաբուն ծմակ, Ծառեխ, Ցաքուտ, Ետե հանդ, Հացե խութ, Թեղե վեղ, Կակուլին բաղ, Բաղեն ծոր, Տանձի վեղ, Միրդանանց տափ, Շիշի աղբյուր, Ղղլարանց տափ, Նորաշենք, Փյալա աղբյուր, Լուսավորիչին տափ, Սազարտ տափ, Լվաշա տափ, Էվուլին թումբ, Գուրջունց քոլոտ, Փյալ աղբյուրի տափ, Տկողնե աղբյուրի տափ:

Գյուղում շարունակում են ապրել Խաչունց, Ըլբվերդանց, Սիփարանց, Շիրինանց, Ջաքունց, Իվիտանց, Նալբանդանց, Բաղունց, Քլբսանանց, Դերունց, Քեչունց, Ավագանց, Ուղունց, Մուսանց, Ադունց, Տոնունց, Խոջանց, Տզանց, Նանունց, Սայունց,

Վիտիսանց, Ընդրյազանց, Հարունց, Հրպեդանց, Թաթունց, Ղրբալանց, Սևունց, Սիլալանց, Բրիշանց, Մարգարանց (Դվիթանց), Բլանց, Ընանանց, Սորբանց, Գյուրջունց, Թվադանց, Վինանանց, Սսնանց, Ընթռանանց, Տանունց, Շարունց, Եղունց, Վարունց-Բաբունց, Փաթանունց, Ավունց, Ղթուցունց, Դերունց-Տոնունց, Վառունց, Բախունց, Սուփանանց, Սուղանց, Առաքելանց, Խանունց, Մարդունց, Մեքունց, Մուքունց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Բնակվայրը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, հանդիսությունների սրահ, առևտրի 1 կետ, ալրաղաց:

Կաղարծիում 1890-ական թվականներին կար 165 տուն, 1189 բնակիչ[1024], 1987 թ.՝ 99 տուն, 301 բնակիչ[1025], 2018 թ.՝ 66 տուն, 211 բնակիչ[1026]:

Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԿԱՐՄԻՐ ՇՈՒԿԱ

Ավանը գտնվում է Մարտունու շրջանի հարավարևմտյան միջլեռնային գոգավորությունում՝ Վարանդա գետի երկու ափին: Որպես բնակավայր՝ այն ձևավորվել է խորհրդային տարիներին:

Նախկինում, Ամարասից սկսած մինչև Սխտորաշենի հարթավայրային հատվածը, այդ թվում Կարմիր շուկան, գտնվում էր Մելիք-Շահնազարյան տոհմի ներկայացուցիչ մելիք Սարիի տիրապետության տակ:

Մինչև բնակավայրի ստեղծումը, հարթավայրային ճանապարհների վրա գտնվող այդ տարածքը հարևան գյուղերի բնակիչների համար գյուղատնտեսական մթերքների, անասունների և արհեստագործական արտադրանքների իրացման հարմարավետ շուկա էր դարձել:

Պատահական չէ, որ բնակիչներն իրենց բնակավայրն անվանում են նաև բազար: 1922 թ. ներկայիս Կարմիր շուկայի բնակիչները սկսեցին կառուցել առաջին տները:

1927 թ. ԼՂԻՄ իշխանությունները որոշում են այստեղ կառուցել գինու-օղու գործարան: Շինհարթակում աշխատող բանվորների համար նույնպես սկսեցին կառուցել տներ:

Նոր կառուցվող ավանի առաջին բնակիչները դարձան հարևանությամբ գտնվող Բիլբիլաք, Մավաս, Սխտորաշեն գյուղերից տեղափոխվածները:

[1024] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 217:
[1025] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 240:
[1026] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

Ռուսեն աղբյուր[1027] կոչված տարածքից խմելու ջուրը խողովակներով հասցվեց ավան:

Շոտով որոշում ընդունվեց այստեղ հիմնել արտել-կոմբինատ, կաթի ընդունման և պանրի պատրաստման փոքր գործարան, բացվեցին վարսավիրանոց, կոշկակարանոց, դարբնոց:

1950-1960-ական թվականներին ընդլայնվեց շուկան: Այստեղ սկսեցին ապրանքներ բերել Ֆիզուլուց, Հորադիզից: Կիրակի օրերին կազմակերպվում էր տոնավաճառ, իսկ գինու-օղու գործարանի համբավը գնալով ավելի էր մեծանում:

Ավանը դարձավ զինվորական ճամբարի կազմակերպման կենտրոն: Այն օրեցօր բարգավաճում էր: Անգամ փորձ արվեց Կարմիր շուկան վերանվանել Այգեստան, բայց Բաքվի կողմից մերժվեց: Խորհրդային տարիներին Կարմիր շուկայում գործում էր խաղողագործական սովխոզ:

Արցախյան ազատագրական շարժման առաջին իսկ օրերից Կարմիր շուկայի հարևանությամբ գտնվող Ղաջար գյուղը դարձել էր ավազակորջ, որտեղից թուրքերը հարձակումներ էին գործում հայկական բնակավայրերի վրա: Հայության համար այդ գյուղը չարիք էր դարձել նաև 1918-1920 թթ. իրադարձությունների ժամանակ: Արդեն հրամայական էր դառնում հայրենի օջախները զենքով պաշտպանելու հարցը: 1990 թ. հոկտեմբերին Կարմիր շուկայում՝ կապի բաժանմունքի շենքի մի սենյակում, ստեղծվում է ինքնապաշտպանության մարմին, որի ղեկավարն էր Վլադիմիր Հակոբի Բալայանը, իսկ շտաբի պետն էր Մելս Հովսեփյանը: Մարմնի առաջնահերթ խնդիրն էր՝ մի կողմից հոգալ ավանի բնակչության անվտանգությունը և մյուս կողմից էլ՝ սննդամթերքի, հացի, վառելիքի հավաքագրումն ու այդ ամենի տրամադրումը Ստեփանակերտում գործող ինքնապաշտպանական կոմիտեին: Կարմիր շուկայում ձևավորվում և կարճ ժամանակում մեծանում է Նիկոլայ Բաբայանի ղեկավարությամբ գործող կամավորական ջոկատը, որը Բեջանլարի տեղամասում ստեղծում է երեք դիրքից կազմված պաշտպանական բնագիծ: Ջոկատի տղաներին օգնելու համար հերթապահությանը մասնակցում էին նաև գյուղի՝ զենք բռնելու ընդունակ տղամարդիկ: Նրանք զինված էին որսորդական հրացաններով, ինքնաշեն զենքերով:

1992 թ. սեպտեմբերի 1-ին կազմավորվում է Կարմիր շուկայի գումարտակը, որի հրամանատարն էր ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի ասպետ, թաղավարդցի Առուշան Բաղասյանը:

Թշնամու գլխավոր հարվածային ուղղություններից մեկն էր Մարտունու և Հադրութի շրջանների սահմանային կտցամասում խորացված Ղաջար-Կարմիր շուկա

[1027] Ասում են, որ երբ ռուսական զորքերը հայտնվեցին Արցախում, նրանց տեղակայման վայրերից մեկը դարձավ Կարմիր շուկայից վերև՝ անտառամուտի հատվածը: Պաշտպանության նկատառումով նրանք խրամատներ են փորում և դրանցից մեկից ջուր է հորդում: Մոտակա գյուղերից արհեստավորները օգնում են աղբյուրը կառուցելու, որն էլ ստացել է Ռուսեն աղբյուր անունը: Տես՝ ԱրՊՀ հայագիտական կենտրոն, Ա. Ավագիմյան, 2012, էջ 12:

մարտավարական կարևոր նշանակության հատվածը: Հակառակորդը նպատակ ուներ վերացնել ձորակի պաշտպանությունն իրականացնող ուժերի դիմադրությունը, ապա, զարգացնելով առաջխաղացումը, Կարմիր շուկա–Սարուշեն–Ստեփանակերտ ուղղերթով դուրս գալ հանրապետության մայրաքաղաք և Արցախի հարավը կտրել հյուսիսից: Առաջադրված խնդիրը լուծելու համար ադրբեջանական բանակի հրամանատարությունը նշված ուղղությամբ գործի դրեց մեծաքանակ կենդանի ուժ և զինտեխնիկա:

1993 թ. հունիսի 29–ին ադրբեջանցիները, 40 զրահամեքենաներով ու տանկերով, մեծաքանակ հետևակով, լայնածավալ գրոհ են ձեռնարկել Ալիբալի, Մաձկալաշեն, Ճարտար և Կարմիր շուկա՝ չորս ուղղություններով: Ձեռք բերելով որոշակի հաջողություններ՝ թշնամին հասել է մինչև Կարմիր շուկայի գինեգործարանը և Ճարտարի պաշտպանական դիրքերը: Մաձկալաշեն գյուղը, մնալով երեք կողմից շրջափակման մեջ, դիմել է հերոսական պաշտպանության: Թշնամին հետ է շպրտվել՝ տալով 200–ից ավելի զոհեր ու վիրավորներ և մարտադաշտում թողնելով վեց զրահամեքենքաներ ու տանկեր, որոնցից 3–ը պիտանի էին օգտագործման համար:

Կարմիր շուկան գտնվում էր թշնամու թիրախում, և ամենօրյա հրետակոծության պատճառով ավանի տների զգալի մասը ավերվել էին: 1993 թ. օգոստոսին՝ Ֆիզուլին ազատագրելուց հետո, Կարմիր շուկան ամենօրյա հրետակոծություններից վերջնականապես փրկվեց:

Պատերազմի տարիներին Կարմիր շուկայի ջոկատի մարտիկները մասնակցել են Օմարից մինչև Արաքսն ընկած ռազմաճակատի բոլոր հատվածների մարտական գործողություններին: Այդ մարտերի ընթացքում քաջի մահով զոհվեցին Կարմիր շուկայի 16 ազատամարտիկները:

Միքայել Հովհաննիսյանը ԱՀ «Մարտական խաչ» 1–ին աստիճանի ասպետ է: ԱՀ «Մարտական խաչ» 2–րդ աստիճանի շքանշանակիրներ են Սահակ Պողոսյանը, Սեյրան Աբրահամյանը, Գառնիկ Ազատյանը, Արարատ Գրիգորյանը: Արարատ Մելքումյանը արժանացել է ՀՀ «Մարտական խաչ» 1–ին աստիճանի և ԱՀ «Մարտական խաչ» 2–րդ աստիճանի շքանշանների:

Մինչև Հայրենական մեծ պատերազմը Կարմիր շուկան ուներ յոթնամյա դպրոց, որի տնօրենն էր գիշեցի Գրիգոր Բալայանը: 1965 թ. դպրոցն արդեն ութամյա էր, որտեղ սովորում էր 120 աշակերտ, դասավանդում՝ 10 ուսուցիչ: 1970 թ. դպրոցը միջնակարգի կարգավիճակ ստացավ, և դասերը սկսեցին կազմակերպվել նորակառույց շենքում: 1970–1990 թթ. դպրոցի տնօրենն էր Ա. Հովսեփյանը, 1991–2003 թթ. այդ պաշտոնում աշխատել է Մ. Սահակյանը, 2003–2008 թթ.՝ Ա. Ադամյանը, 2008 թ. առայսօր՝ Է. Բաղդասարյանը: 2015–2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 231 աշակերտ, դասավանդում՝ 28 ուսուցիչ:

Կարմիր շուկայի պատմամշակութային հուշարձաններն են 16–19–րդ դդ. գերեզմանոցը, Մավաս գյուղատեղին (12–20–րդ դդ.), Սխտորաշեն գյուղատեղին (15–20–

րդ դդ.), Տնջրի աղբյուրը՝ իր հռչակավոր ավելի քան 2000 տարեկան չինարի ծառով, Երեք մանկունք վանական համալիրը (17–րդ դար), 1731 թ. կառուցված Սբ. Աստվածածին եկեղեցին, Սբ. Գևորգ մատուռ–եկեղեցին (18–րդ դար), 13–17–րդ դդ. խաչքարեր:

Համայնքի տարածքում նշանավոր են Բլբիլաքի, Բջալայի, Անդրանիկի, Տնջրեն տակ, Քրսեն, Թասկետի, Սխտորաշենի և Կարմիր շուկայի աղբյուրները:

Արցախյան պատերազմից հետո, ավանը մայրուղիների վրա գտնվելով, արագ զարգանում է: Բնակչության հիմնական մասը զբաղվում է գյուղատնտեսությամբ: Ավանի բնակչության զբաղվածության հարցը ինչ որ չափով լուծում է ձեթի նորակառույց գործարանը:

Ավանն ունի նորակառույց համայնքային կենտրոն, բուժկետ, դպրոց, մանկապարտեզ, 8 առևտրի և 2 սննդի օբյեկտներ:

Կարմիր շուկայում 2018 թ. կար 258 տուն, 1127 բնակիչ[1028]:

ԿՈԼԽՈԶԱՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Մեծ Քիրս լեռնագագաթից արևելք ձգվող լեռնաբազուկի՝ Բովուրխան լեռնազանգվածից ճյուղավորվող դեպի Շոշկա վանք, Հերհեր, (Մավասի լեռնաշղթա) և դեպի Բուղդուն խութ–Ռսկիան լեռնաճյուղերի արանքում գտնվող լեռնալանջերի վրա:

Կոլխոզաշենը Արցախի հնագույն բնակավայրերից մեկն է:

Նախկինում կրել է Քարմեջ, Բրետես կամ Պիրիտես, Մաշադի շեն անունները:

Նախկինում բնակավայրը գտնվում էր Կոլխոզաշենից 1,5 կմ հարավ արևմուտք՝ Բրետես գյուղատեղիում, որտեղ առայսօր պահպանվում են նախկին տների, գերեզմանոցի, 2 եկեղեցիների մնացորդները:

Գյուղից 0,8 կմ հյուսիս–արևմուտք՝ Շինատեղ տեղամասում, հայտնաբերվել են քարարկղային, իսկ Հունուն խութ հանդամասում՝ կարասային թաղումներ:

Միջնադարում բնակավայրը գավառում կարևոր դերակատարություն է ունեցել: Առաքել Դավրիժեցին պատմում է, որ 17–րդ դարի սկզբներին Արցախի մի քանի գյուղերի ներկայացուցիչներ, այդ թվում Բրիտաս գյուղից մելիք Բաբան, մեկնում են Պարսից արքունիք՝ Շահ Աբասի հետ բանակցելու և երկրամասը շահի զորքերի ասպատակություններից զերծ պահելու նպատակով[1029]:

Ըստ գյուղի տարեցների պատմածների՝ Բրետեսի բնակիչները համաձարակի պատճառով մեծ կորուստներ են ունեցել: Ողջ մնացածները, փրկվելու նպատակով,

[1028] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 4:
[1029] Առաքել Դավրիժեցի, Պատմություն, էջ 25:

տեղափոխվում են տարբեր գավառներ և մի քանի տարի անց՝ համաձարակի նահանջից հետո, վերադառնում են հարազատ վայրեր ու իրենց նախկին բնակավայրի հարևանությամբ հիմնում նոր գյուղ:

Մինչև խորհրդային տարիները գյուղը անվանվում էր Մաշադի շեն, իսկ կոլտնտեսային շարժման տարիներին բնակավայրը ստացել է ժամանակի ոգուն համահունչ անուն՝ Կոլխոզաշեն:

20-րդ դարի սկզբներին բնակավայրը հայտնվել էր հայ-թաթարական ընդհարումների կիզակետում:

1918 թ. հոկտեմբերի 17-ին թուրքական մի զորամաս Շուշիից հասնում է Մմնա՝ նպատակ ունենալով հաջորդ օրը շարժվել դեպի Ճարտար, այնտեղից էլ Կարյագինո: Գիշերը Մմնայից լուրը հասցնում են Կոլխոզաշեն, իսկ վերջինիս բնակիչներն էլ այդ ամենի մասին տեղյակ են պահում Վարանդայի հարևան գյուղերին: Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 18-ին, երբ թուրքերը փորձում են շարունակել ճանապարհը և հասնում են Կոլխոզաշենի Ջրատափեր տեղամասը, Վարանդայի և Դիզակի կամավորական ջոկատները, որոնք արդեն հարմար դիրքավորվել էին կտրտված տեղանքում, հանկարծակիի բերելով թշնամուն՝ նրան ջախջախիչ պարտության են մատնում:

1929 թ. գյուղում կոլտնտեսություն է կազմակերպվել: 1980 թ. Կոլխոզաշենի, Մմնայի և Ղավահանի կոլտնտեսությունների հիմքերի վրա ստեղծվում է խորհրդային տնտեսություն (սովխոզ): 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվեցին մենատնտեսություններ:

Տարբեր տարիների Կոլխոզաշենի կոլտնտեսությունը ղեկավարել են Շմավոն Մաթևոսյանը, Վարդան Կարապետյանը, Թևան Կարապետյանը, Սոկրատ Հակոբջանյանը, Ռուբեն Ավետիսյանը, Արամ Մաթևոսյանը, Ստյոպա Հովհաննիսյանը, Էդիկ Գևորգյանը, Մահմուդ Ալեքսանյանը, Արտակ Բաբայանը, Արմո Ավանեսյանը, Հունան Ավետիսյանը, Մարտիկ Գրիգորյանը, Մարտիկ Հարությունյանը:

Կոլխոզաշենից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 225 մարդ, զոհվել է 106-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Կոլխոզաշենի բնակչությունը արցախյան ազատագրական պայքարին իր արժանի ներդրումն ունեցավ: 1988-1989 թվականներին գյուղում կազմակերպվել է կամավորական ջոկատ, որը 1991-1994 թվականներին Մարտունու պաշտպանական շրջանի ստորաբաժանումների շարքերում, ռազմաճակատի տարբեր հատվածներում, իր արժանի ավանդն ունեցավ հաղթանակների կերտման գործում: 18 ազատամարտիկներ զոհվել են:

Ազատամարտիկներից Արթուր Գրիգորյանը և Արթուր Պողոսյանը հետմահու արժանացել են ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանների: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշաններով պարգևատրվել են Լեոնիկ Ասրյանը, Ալիկ Ավանեսյանը, հետմահու՝ Բենիկ Սահակյանը:

2016 թ. ապրիլյան պատերազմի օրերին Կոլխոզաշենի երիտասարդները արժանապատվորեն պաշտպանեցին երկրի սահմանները:

1971 թ. գյուղում կառուցվել է կոլխոզաշենցի, ԽՍՀՄ հերոս, գեներալ-գնդապետ Միքայել Բարսեղովի տուն թանգարանը: 2016-2017 թվականներին արմատներով կոլխոզաշենցի, Արցախի հերոս, գեներալ-մայոր Սամվել Կարապետյանի հովանավորությամբ հուշահամալիրը հիմնովին վերանորոգվել է, իսկ Հայրենական մեծ պատերազմի զոհերի հուշարձանի մոտ կառուցվել արցախյան ազատագրական պատերազմում նահատակված 18 կոլխոզաշենցիների հիշատակը հավերժացնող հուշակոթող, որի բացումը հանդիսավորությամբ կատարվել է 2019 թ. մայիսի 11-ին:

1912 թ. գյուղի տերտեր Ավանես Մաթևոսյանը, որը ավարտել էր Շուշիի ռեալական դպրոցը և աշակերտել Ղազարոս Աղայանին, գյուղի երեխաներից հավաքագրում է մոտ 15 հոգու և իր տանը նրանց գրել ու կարդալ սովորեցնում[1030]:

1920 թ. գյուղում սկսել է գործել տարրական դպրոց, որտեղ սովորում էր 80 աշակերտ, դասավանդում՝ 3 ուսուցիչ:

1934-1961 թվականներին Կոլխոզաշենի դպրոցն ուներ յոթնամյայի, իսկ 1961 թ. ութամյայի կարգավիճակ:

1982-1983 ուսումնական տարվանից գյուղի դպրոցը դարձավ միջնակարգ: Պարապմունքները կազմակերպվում էին նորակառույց դպրոցում:

2018 թ. հունվարի 1-ի դրությամբ Կոլխոզաշենի Հրաչյա Բեգլարյանի անվան միջնակարգ դպրոցում սովորում էր 45 աշակերտ, դասավանդում՝ 20 ուսուցիչ:

1920 թ. մինչև 2019 թ. դպրոցը տվել է 800-ից ավելի շրջանավարտներ, որտեղ դասավանդել են 160-ից ավելի ուսուցիչներ: Դպրոցը ունեցել է 21 տնօրեն: Դպրոցի երիտասարդ տնօրեն Բորիկ Բաբայանը զոհվել է արցախյան պատերազմում:

Ծննդով ու ծագումով Կոլխոզաշենից են ցարական բանակի կապիտան, Գեորգիևյան Ոսկե խաչ շքանշանի եռակի ասպետ Սարգիս Առաքելյանը, ԽՍՀՄ հերոս, գեներալ-գնդապետ Միքայել Բարսեղովը, գրողներ Հրաչյա Բեգլարյանը, Սուրեն Կարապետյանը, Արցախի հերոս, գեներալ-մայոր Սամվել Կարապետյանը, Ստեփանակերտի քաղխորհրդի նախագահ Սերգեյ Շաքարյանը:

Գյուղի պատմամշակութային նշանակության հուշարձաններն են Սբ. Աստվածածին եկեղեցին (19-րդ դար), միջնադարյան գյուղի, գերեզմանոցի մնացորդներ, 15-17-րդ դարի խաչքարեր, Խաչին տակ, Կաղնե խաչ, Սորբեն տոշ, Սորբեն խութ, Կրբեդանց սուրբ սրբատեղիները, Բաղդունց և Եգանանց ջրաղացները:

Գյուղում կան 119 աղբյուրներ, որոնցից նշանավորներն են՝ Հուռումեն, Կանունց, Սրաբունց, Աբունց, Պլպլան, Աղբյուրեն ձորի, Դոնգոմի, Գարաքի, Չաման, Կետեն արտի:

Գյուղամերձ անտառներն են՝ Վեսմին ծմակ, Թմրազին յամաջ, Քերծեն տակ, Մինասանց բաղեն ծմակ:

[1030] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

Կոլխոզաշենում շարունակում են ապրել Աբունց, Բաբունց, Սրաբունց, Խաչունց, Սայունց, Կոթունց, Ափունց, Կուքունց, Եգանանց, Բաղդունց, Բողվանց, Ապրունց, Վանունց, Ղազունց, ազգատոհմերի ներկայացուցիչները:

Համայնքը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները, բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, առևտրի 3 կետեր: Խորհրդային տարիներին այստեղ կային նաև կոշիկի վերանորոգման կետ ու վարսավիրանոց:

Կոլխոզաշենում 1890-ական թվականներին կար 120 տուն, 943 բնակիչ[1031], 1987 թ.՝ 104 տուն, 371 բնակիչ[1032], 2018 թ.՝ 64 տուն, 232 բնակիչ[1033]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՀԱՂՈՐՏԻ

Գյուղը գտնվում է հարավարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Բովուրխանի լեռնազանգվածից Վարանդա գետի աջափնյակով դեպի հարավ-արևելք ձգվող լեռնաճյուղի արևելահայաց լանջին:

Նախկինում գյուղը գտնվում էր Տերթն տեղամասում, որտեղ պահպանվում են գերեզմանաքարեր, աղոթատեղիներ: Գյուղատեղիում հայտնաբերվել են թոնրի մնացորդներ, քարաժայռի վրա քանդակներ:

Նախկին բնակավայրի հետքեր տեսանելի են Մոշ աղբյուրից դեպի Ենգի գնացող ճանապարհին, որտեղ պահպանվել են անտաշ անարձանագիր շիրմաքարեր:

Մոտավորապես 15-րդ դարի վերջերին ու 16-րդ դարի սկզբներին, որոշակի հանգամանքների թելադրանքով վերոհիշյալ գյուղերից բնակիչները հեռացել և իրենց հանդամասերում նոր բնակավայր են հիմնադրել:

Գյուղի մոտ եղել է ավելի քան 500 տարեկան թեղի ծառ, որի տակ եղել է մատուռ-աղոթատեղի: Բնակիչները այդտեղ հավաքվում և մատաղ էին անում, աղոթում ու հաղորդվում Աստծո հետ: Այստեղից էլ առաջացել է գյուղի անվանումը՝ Հաղորտի[1034]:

Ավանդությունը պատմում է, որ 1724 թ. Ավան հարյուրապետը իր զորաջոկատով եղել է Հաղորտիում, որտեղից էլ նա անցել է Կաղարծի, հետո Ասկերան, նպատակ ունենալով Վարանդայի զինական ուժը համախմբել և թուրքերի դեմ կռվել[1035]: Այն տեղամասը, որտեղով անցել էր Ավան հարյուրապետի զորաջոկատը, ժողովուրդը անվանել է Ավանաքար:

Պաշտպանական առումով հարմարավետ դիրքը նպաստել է, որ գյուղը արագ զարգանա:

Ցարական իշխանությունների օրոք Հաղորտին ենթաշրջանի կենտրոնի դերակատարություն է ունեցել: Պրիստավի նստավայրը և բանտը այս գյուղում էին:

1905-1906 և 1917-1920 թվականների հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Հաղորտու երիտասարդները ինքնապաշտպանական ջոկատների կազմում պաշտպանում էին Արցախի սահմանները:

1905 թ. մարտին ռուսական պատժիչ ջոկատները թալանել են նաև Հաղորտի գյուղը[1036]:

Խաղաղ բնակչությանը ահաբեկելու պատճառով հայ վրիժառուները հաշվեհարդար էին տեսնում ցարական չինովնիկների նկատմամբ: Հաղորտեցի Թևոս Առստամյանը 1911 թ. Ստեփանակերտի Մազի կամրջի մոտ ոչնչացրել էր պրիստավ Սումակևիչին[1037]:

Հաղորտու երիտասարդները հերոսական էջ են գրել նաև 1918 թ. Մսմնայի ճակատամարտի ժամանակ:

Արցախը Ադրբեջանին բռնակցելուց հետո Ադրբեջանի ղեկավարությունը, մասնավորապես Նարիմանովը, գողոնը յուրացնելու համար ամեն կերպ ձգտում էր գրավոր ձևով ստանալ հայերի համաձայնությունը: Այդ նպատակով նա Արցախ ուղարկեց Ադրբեջանի նախարարների խորհրդի նախագահի տեղակալ և արհմիությունների հանրապետական խորհրդի նախագահ Լևոն Միրզոյանին:

Նրանք Արցախի շրջաններում հրավիրել են խորհուրդների շրջանային արտահերթ համագումարներ ու փորձել կորզել Ադրբեջանի շահերից բխող որոշումներ: 1921 թ. օգոստոսի 1-ին Հաղորտի գյուղում տեղի է ունեցել Վարանդայի խորհուրդների արտահերթ համագումարը, որտեղ, չնայած Լևոն Միրզոյանի ջանքերին, ադրբեջանանպաստ որոշում չկայացվեց: Դեռ ավելին՝ պատգամավորներից մեկը նորից հաստատեց արցախահայության կամքը՝ միավորվելու մայր Հայաստանին[1038]:

Խորհրդային կարգեր հաստատելուց հետո Հաղորտիում 1927-1928 թվականներին կազմավորվել էր գյուղատնտեսական արտել: 1929 թ. գյուղը կոլեկտիվացվել է: Խոշորացման տարիներին այն միավորվել էր Մուշկապատի կոլտնտեսությանը: 1988 թ. նորից Հաղորտու կոլտնտեսությունը առանձնացել է:

1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո կազմավորվել են անհատական տնտեսություններ:

[1031] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 216:
[1032] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 233:
[1033] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:
[1034] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 238; Ավետիսյան Ն., Հաղորտի, Ստեփանակերտ, 2009, էջ 8:
[1035] Ավետիսյան Ն., նշվ. աշխ., էջ 10:

[1036] Բալայան Վ., Դրվագներ..., էջ 65-66:
[1037] Ավետիսյան Ն., նշվ. աշխ., էջ 34-35:
[1038] ԱՀ պետարխիվ, ֆ. 485, ց. 1, գ. 14, թ. 70:

Հաղորտուց Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 300 հոգի, որից 7-ը՝ կին: 152 հաղորտեցիներ զոհվել են: Նրանցից 22-ը եղբայրներ էին, 3-ը՝ հայրեր՝ իրենց զավակների հետ: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Ծանր շրջան է ապրել Հաղորտին արցախյան ազատագրական պայքարի տարիներին: Գյուղի հարևանությամբ գտնվող ադրբեջանաբնակ Ղարադաղլու գյուղը ավազակաորջ էր դարձել: 1991 թ. հուլիսի 3-ին ադրբեջանցի օմոնականները, խորհրդային ներքին գործերի մի ջոկատի ուղեկցությամբ, մտել էին Հաղորտի և ձերբակալել խաղաղ բնակիչների:

Նրանց 40 օր պահել են բանտում և կտտանքների ենթարկել:

1991 թ. հուլիսի 16-ին գյուղամերձ անտառում ադրբեջանցիները դաժանորեն սպանել են դպրոցի զինղեկ Վալերի Կարապետյանին: Նրա մարմինը այնուհետև թուրքավարի հրկիզել են:

Օրեցօր լկտիացող ադրբեջանցիներին զսպելու համար գյուղում Կամո Բալասանյանի գլխավորությամբ ինքնապաշտպանական ջոկատ էր ստեղծվել: Ջոկատի մարտիկների մասնակցությամբ 1992 թ. ազատագրվել է Ղարադաղլու գյուղը: Մարտական գործողությունների ժամանակ զոհվել էր Հաղորտու խաղաղ բնակիչ Արամ Քարամյանը, իսկ ազատամարտիկներ Կամո Բալասանյանն ու Մագելան Պետրոսյանը վիրավորվել են:

Ազատագրական պատերազմի տարիներին Հաղորտուց Վալերի Կարապետյանը, Նելսոն Ղազարյանը, Արամ Քարամյանը, Ներսես Գրիգորյանը, Բորիս Ղահրամանյանը, Մարտիկ Ջաքարյանը, Վլադիկ Գասպարյանը, Արամ Ավանեսյանը, Ռաֆայել Առստամյանը, Ռոբերտ Գրիգորյանը զոհվել են:

ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի է արժանացել Կամո Բալասանյանը:

1873 թ. Հաղորտիում բացվել է նախակրթարան՝ 15 աշակերտով: 1874-1875 ուսումնական տարում Կաթողիկոսի կոնդակով գյուղում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց:

1892-1893 ուսումնական տարվանից գյուղում գործել է մեկդասյա երկսեռ դպրոց, որտեղ սովորում էր 35 աշակերտ, որից 16-ը՝ աղջիկ: 1896 թ. դպրոցը փակվել և կրկին վերաբացվել է 1907 թ.: Դպրոցի ուսուցիչն էր Տեր Գրիգոր քահանա Առաքելյանը:

1922-1923 ուսումնական տարում գյուղում բացվել է տարրական դպրոց: Այն 1928 թվականից յոթնամյա էր, իսկ 1939 թ. դարձել է միջնակարգ: 2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 30 աշակերտ, դասավանդում՝ 15 ուսուցիչ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Խաչատուր Պետրոսյանը, Եղիշե Մարտիրոսյանը, Գրիգոր Ուլուբաբյանը, Սամսոն Ավետիսյանը, Աշխեն Մարտիրոսյանը, Գրիգոր Պետրոսյանը, Արաքսյա Պետրոսյանը, Արաքսյա Օհանյանը, Նորայր Ավետիսյանը, Արտուր Ավետիսյանը, Հունան Ավետիսյանը:

Ծննդով և ծագումով Հաղորտի գյուղից են ԽՍՀՄ հերոս Արամ Սաֆարյանը, սոցիալիստական աշխատանքի հերոսներ Սավադ Մեժլումյանը, Արտաշ Սաֆարյանը, ԼՂԻՄ լուսժողկոմ Հայկ Բալայանը, ՀՀ վաստակավոր արտիստ Լորենց Առուշանյանը, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, սոցիալիստական աշխատանքի հերոս Յուրի Օսիպյանը, գրող, հասարակական գործիչ Ջորի Բալայանը, գրողներ Նորայր Ավետիսյանը, Գևորգ Բլանցը, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Յուրի Հովհաննիսյանը, բժշկական գիտությունների դոկտոր Բորիս Բալայանը, մարզիկ (սանդա ուշու) Վիլեն Գրիգորյանը:

Հաղորտու պատմամշակութային նշանակության հուշարձաններից է Սբ. Աստվածածին եկեղեցին:

Գյուղի աղբյուրներն են՝ Ներքե ջուր, Երե ջուր, Ջրրավոր, Քարդաշին ջուր, Քար մոշ, Թառ, Քթեշ, Ծիան, Քրթոլ, Դալլաքանց, Խուդունց, Ջավադեն, Բաղասանց, Նովավոր:

Բնակավայրի հանդերն են՝ Ծվերե խութ, Կհոլին կլոխ, Երեք տանձու տակ, Տերթն, Օջախեն բաղ, Խաչին տակ, Ներքե հանդ, Երե հանդ, Ջրաղացաձոր, Կատվաձոր, Ջրաձոր, Դերին բաղ, Ուռած քար, Ափունց բաղ, Դաղունց բաղ, Քեչունց բաղ, Երե խմհատ, Թուփ քոլ, Չատունց կարաններ, Մահտեսանց դոշ, Խանլարեն տափ, Շամիրին արխեր, Բալասանց խութ, Աղավելին տափ, Ծակ քար, Պղնձի կալ, Սանգյար, Գայլալանջ, Պլպլան, Ծրտոտ ձոր, Թուփունց մոշուտ:

Հաղորտու ազգատոհմերն են՝ Ղազունք, Դերանք, Սրփարանք, Մարդունք, Ղահրունք, Փիթունք, Քյեչունք, Չատունք, Բրլանք, Մուշրրվանք, Ջրրգարանք, Ընանք, Բարխունք, Բաջունք, Ղրվալանք, Դրլլաքանք, Քյադունք, Պատվականանք, Մյութոսանք, Սունանք, Նանունք, Քյարմանք, Ռրքելանք, Կուրբուդանք, Պուպուռուզանք, Մյաքունք, Քյարունք, Ղրրրշարանք, Վանունք, Օհանանք, Բրլասանք, Քյուխանք, Մրսկանանք, Ջրքարանք, Դադունք, Ղասունք, Սրվարանք, Շրղրազանք, Շուղունք, Խուդունք, Մաթոսանք, Ղուլունք, Բաղունք, Անունք, Թուխունք, Բխանանք, Քոչանք, Մալունք, Ճրղարանք, Սյուտունք, Մեծունք, Ղութուրչունք, Խանունք, Դրրղանք, Բրդալանք, Գյուլունք, Քյասունք, Չոլփանք, Հոռոմանք, Բրդասանք, Ալունք, Սիմոնանք, Հիրեքյանք, Կրկովանք, Կյրվերքանք:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, փոստ, մանկապարտեզ (2000-ական թվականների սկզբին այն բացվել էր ՀՕՄ-ի օժանդակությամբ, սակայն այսօր չի գործում), առևտրի 1 կետ:

Հաղորտի գյուղում 19-րդ դարի 90-ական թվականներին կար 136 տուն, 1132 բնակիչ[1039], 1920 թ.՝ 1500 բնակիչ[1040], 1989 թ.՝ 98 տուն, 313 բնակիչ[1041], 2018 թ.՝ 39 տուն, 215 բնակիչ[1042]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՀԱՑԻ

Գյուղը գտնվում է ԱՀ արևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Բովուրխան լեռնազանգվածից դեպի արևելք ձգվող լեռնաճյուղերից մեկի՝ Պտկես պերք կոչվող լեռան արևելահայաց լանջին:

Հացին Արցախի հնագույն բնակավայրերից է: Գյուղը առնվազն 2000-ամյա պատմության ընթացքում իր աշխարհագրական սահմանում երեք անգամ տեղից տեղ է տեղափոխվել: Սկզբում տեղաբաշխված է եղել Դրղեն վեղ, Խաչեն վեղ տարածքներում, իսկ միջին միջնադարում արդեն տեղաբնիկները հաստատվել էին Պտկես պերք լեռան լանջին: Հին Հացին Սարգիս Ջալալյանցը ներկայացնում է որպես քաղաք: Միաժամանակ նա գրել է, որ Հացիի որոշ ընտանիքներ տեղափոխվել են Բիլուկան քաղաքից[1043]:

Գյուղի անվան ծագումնաբանության շուրջ տարբեր բացատրություններ կան:

Հ. Հյուբշմանը գտնում է, որ նախաքրիստոնեական շրջանում Արցախում տարածված էր տարբեր ծառատեսակների, այդ թվում Հացիի պաշտամունքը: Այստեղից էլ բնակավայրը ստացել է Հացի անունը[1044]: Ս. Մելքումյանի կարծիքով գյուղի անվանումն առաջացել է հացահատիկի առատության շնորհիվ[1045], իսկ Ս. Սարգսյանն էլ Հացին մեկնաբանում է որպես սուրբ սրբավայր, սրբատեղի ձևով[1046]:

Ավանդությունը պատմում է, որ Վաչագան Բարեպաշտը անցել է Հացի, Աշան գյուղերով և նրա հրամանով Արցախում կառուցված եկեղեցիներից մեկի հիմնարկեքն էլ կատարվել է Հացի գյուղում:

Պատահական չէ, որ Բռի եղցի տարածքում պահպանվել են 5-6-րդ դարի կոթողների բներ, խարիսխներ, խոյակներ, քիվեր, զարդանախշերի բեկորներ:

Կարծիք կա, որ Վաչագան Բարեպաշտի պատվերով կառուցված եկեղեցին հիմնվել է հեթանոսական շրջանի մեհյանի հիմքերի վրա:

[1039] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 216:
[1040] Ավետիսյան Ն., նշվ. աշխ., էջ 6:
[1041] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 238:
[1042] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:
[1043] Սարգիս արք. Ջալալյանց, նշվ.աշխ., էջ 520:
[1044] Հյուբշման Հ., Հին հայոց տեղոյ անունները, Վիեննա, 1907, էջ 369:
[1045] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 243:
[1046] Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 74:

Արևելքը արևմուտքի հետ կապող մետաքսի ճանապարհի մի հատվածն անցել է գյուղի ներքևի մասով, և Բռի եղցի վանական համալիրի 2 կամարակապ խաչքարերով զարդարված դռները, տեղացիների բարբառով ասած՝ Ճոխտ տեմը, այդ ճանապարհի ուղեցույց են հանդիսացել[1047]:

Ընդհանուր առմամբ Հացիում գտնվող Բռի եղցու այժմյան համալիրը բաղկացած է 4 եկեղեցիներից, գավթից, 3 խոշոր որմնափակ խաչքարերից, որոնցից մեկն ունի 1270 թ. շինարարական արձանագրություն, քանդված մատուռից, օժանդակ շենքերից և գերեզմանատնից:

Բռի եղցի վանական համալիրը կառուցվել է 13-րդ դարում Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի և նրա եղբայր Ներսես եպիսկոպոսի պատվերով ու անմիջական մասնակցությամբ:

Համալիրի եկեղեցիներից մեկը կառուցվել է Արցախ հրավիրված Խաչենիկ Անեցի ճարտարապետի կողմից: Մյուս միանավ եկեղեցու հեղինակն էլ Շահեն ճարտարապետն էր: Հարավարևմտյան խաչքարը ևս Խաչենիկ Անեցու ստեղծագործությունն է:

Հացիի ազգաբնակչությունը սղնախական պայքարի ժամանակ Արցախի սահմանները թուրքերից պաշտպանելու գործում իր արժանի ներդրումն ունեցավ: Դրա մասին է վկայում նաև Հացիի գերեզմանատան տապանաքարի վրա 1725 թ. արձանագրությունը, համաձայն որի Պապա Ուշաղին զորքով հասնում է Արցախ և հացեցի Սարգսի գլխավորությամբ հայ կամավորները նրան դիմադրություն են ցուցաբերում:

Արցախահայությունը ծանր ժամանակներ ապրեց 1795-97 թվականներին Պարսից Աղա Մահմադ շահի արշավանքների ժամանակ, երբ ավերվեցին երկրամասի բնակավայրերը, որին էլ հաջորդեցին սովն ու մահտարժամը: Արցախից հազարավոր մարդիկ հեռացան այլ գավառներ: Հացիից նույնպես որոշ ընտանիքներ բռնեցին գաղթի ճամփան:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Ջմյուռնիայի Տենիզլի գյուղի գերեզմանոցում պահպանվել էին շիրմաքարեր, որոնց վրա եղած արձանագրությունները պատմում են, որ այդ հանգուցյալների մի մասը ծագումով Վարանդայի Հացի գյուղից էին[1048]:

Բնակչության մի մասն էլ տոկաց և վաղվա լավ օրվա հույսով շարունակեց ապրել ու արարել հայրենի գյուղում:

19-րդ դարի երկրորդ կեսին Հարություն և Հուռի Մուսայելյան ամուսինները, երեխա ունենալու նպատակով, իրենց միջոցներով գյուղի կենտրոնում կառուցել են Սբ. Աստվածածին եկեղեցին:

19-րդ դարի երկրորդ կեսից սկսած գյուղը բաժանված էր 3 թաղերի՝ Ճիրին, Երե, Ներքե:

[1047] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1048] Բեկնազարյանց Ա., Գաղտնիք Ղարաբաղի, էջ 195:

Գյուղում խորհրդային կարգեր հաստատելուց հետո՝ 1933 թ., կոլտնտեսություն է կազմակերպվել: Խոշորացման տարիներին Հացիի, Նորշենի, Ավդուռի, Մյուրիշենի, կոլտնտեսությունները միավորվել են: 1989 թ. Հացին առանձնացել և դարձել է Աբովյանի անվան կոլտնտեսություն:

1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվեցին անհատական տնտեսություններ:

Տարբեր տարիների կոլտնտեսությունը ղեկավարել են Խաչատուր Մուսայելյանը, Եղիշե Անտոնյանը, Կոմունար Ղուկասյանը, Կոմիտաս Կարապետյանը, Էդիկ Խաչատրյանը, Գավրուշա Աբրահամյանը, Գասպար Գասպարյանը, Էդիկ Սարգսյանը, Վասակ Աղաբեկյանը, Ալեքսան Մուսայելյանը:

Հացիից Հայրենական Մեծ պատերազմին մասնակցել է 157 մարդ, որոնցից զոհվել է 106-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կանգնեցված:

1988-1991 թվականներին գյուղում կազմավորվել է ինքնապաշտպանական ջոկատ, որը Մարտունու պաշտպանական շրջանի ստորաբաժանումների շարքերում մասնակցել է պաշտպանական և հարձակողական նշանակության մարտերին: Գյուղից ռազմական գործողություններին մասնակցել է 72 հոգի, զոհվել է՝ 11 ազատամարտիկ և 6 խաղաղ բնակիչ: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի հետմահու արժանացել է Մարգարիտա Սարգսյանը:

Նահատակների հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել, որում մեծ ներդրում է ունեցել նաև ծագումով Հացի գյուղից, երևանաբնակ բարերար Նելսոն Սարգսյանը: Ի դեպ, Ն. Սարգսյանի հովանավորությամբ հիմնովին վերանորոգվել ու կահավորվել են նաև գյուղի հանդիսությունների սրահը և բուժկետը:

Ըստ գյուղի տարեցների պատմածների՝ 5-րդ դարում գյուղում հիմնադրվել էր կրթարան, որն ուներ մեկ ռաբունապետ և 10-12 աշակերտ:

1873 թ. Հացիում բացվել է նախակրթարան: 1874-1875 ուսումնական տարում գյուղում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց: Ուսուցիչն էր Հովհաննես քահանա Տեր-Սարգսյանը:

1886 թ. գյուղում գործում էր նաև իգական մեկդասյա դպրոց: 19-րդ դարի վերջերին Հացիում գործող տարբեր տիպի դպրոցներում ուսուցչական գործունեություն են ծավալել եղբայրներ Պողոս և Իսահակ Ղազիյանները և Եղիսաբեթ Սարգսյանը:

Չնայած 1896 թ. կառավարության որոշումով փակվել էր նաև Հացիի դպրոցը, սակայն կրթօջախը գաղտնի աշխատում էր:

1906-1907 ուսումնական տարում գյուղում բացվել է մեկդասյա երկսեռ դպրոց, որն ուներ 3 բաժանմունք, 48 աշակերտ: Ուսուցիչն էր Հովհաննես Նասիբյանը:

1908-1909 ուսումնական տարում արդեն բացվում է երկդասյա երկսեռ դպրոց:

1911 թ. հացեցի Գյուլբահար և Ջիվանշիր Ղազինյան ամուսինները կառուցել են դպրոցական նոր շենք, որն առայսօր ծառայում է գյուղի ազգաբնակչությանը:

Դպրոցը գործել է մինչև խորհրդային շրջանը:

1924-1925 ուսումնական տարվանից գյուղում գործում էր տարրական դպրոց, 1933-1934 ուսումնական տարում՝ ութամյա, 2008-2009 ուսումնական տարում՝ ինն-ամյա:

Արցախյան ազատագրական պատերազմի տարիներին, քանի որ գյուղը համեմատաբար պաշտպանված էր հրետանակոծությունից, այստեղ իրենց կրթությունն էին ստանում նաև հարևան բնակավայրերի երեխաները:

2018-2019 ուսումնական տարում Հացիի դպրոցում սովորում էր 10 աշակերտ, դասավանդում՝ 12 ուսուցիչ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրենի պաշտոնը վարել են Քնարիկ Շումանյանը, Մարուսյա Գրիգորյանը, Ծատուր Մուսայելյանը, Էդիկ Ղահրամանյանը, Սերգեյ Մկրտչյանը, Նելսոն Աբրահամյանը, Սուսաննա Գրիգորյանը:

Ծննդով Հացի գյուղից են կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բարխուդար Բալայանը, խորհրդային բանակի գեներալ-մայոր Ռուդոլֆ Ղազինյանը, գրողներ Էռնեստ և Աշոտ Բեգլարյանները:

Համայնքի պատմամշակութային նշանակության հուշարձաններն են Բռի եղցի վանական համալիրը (5-17-րդ դարեր), որմնափակ խաչքարեր (13-րդ դար), Սբ. Աստվածածին եկեղեցին (19-րդ դար), միջնադարյան գերեզմանատունը:

Գյուղի աղբյուրներն են՝ Ակն, Անահիտ, Սվեգա ջուր, Քոնով, Մարգարիտի, Շրշռան, Ջարգ աղբյուրոտ, Տես, Չայլաղի, Խնուշաղբյուր, Դերունց բաղի, Կաթնաղբյուր: Վերջին երեքը ցամաքած են:

Գյուղի հանդամասերն են՝ Սարեն վեղ, Խոսրովեն բաղ, Պետրունց խմհատ, Կյուքունց ծմակ, Լալունց մոշուտ, Փոհրա, Շըրմանանց բաղ, Շրշռանա տեղամաս, Ջարգ աղբյուրուտ, Հաբունց բաղ, Ղուզուն տակ, Ըղբալանց ծմակ, Իսուն քոլոտ, Քոնավ, Դամիրչունց բաղ, Փաթունց շիվոտ, Ղումեն բաղ, Ղրմանանց հղե, Կուկվեն տոշ, Ծմակեն տակ, Թոփալ Ավագեն տեղ, Կյումերատեղ, Սվեգյանց ծոր, Ալիբլաղ, Ղաոի բաղ, Լլեգին չափար, Շահլի վեղ, Թումբեն ղուրուղ, Կաթնաղբյուրի տեղ, Պառավ վեղ, Մոսունց տափ, Խնթեր, Վարդուն տեղ, Դավալու տեղ:

Գյուղի շրջակայքի անտառներն են՝ Ղուզուն ծմակ, Խնթեր, Ըղբալանց ծմակ, Իսուն քոլուտ, Շրմանանց բաղ, Փյուհրին ծմակ, Պետրունց խմհատ, Կյուքունց ծմակ, Խոսրովեն բաղը, Լյալունց մոշուտ:

Գյուղում շարունակում են ապրել Սհականց, Ըղջանանց, Թվաղանց, Ալունց, Բլանց, Խուջանց, Բնյաթանց, Սայունց, Հմբարձունց, Ըղբալանց, Ընդունանց, Թինդիլանց, Մանունց, Ռուշանց, Լալունց, Մուսայելանց, Գյանջումանց, Կյուքունց, Մինասեթանց, Կրիքորանց, Սդղանց, Ղրմանանց, Դամուրչունց, Օսեփանց, Կաղթականնանց, Թեվանանց, Հաբունց, Ջըքրանց, Քոծունց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, հանդիսությունների սրահ, առևտրի 1 կետ:

Հացիում 19-րդ դարի սկզբներին կար 20 տուն[1049], 19-րդ դարի 90-ական թվականներին՝ 143 տուն, 995 բնակիչ, 1989 թ.՝ 88 տուն, 250 բնակիչ[1050], 2018 թ.՝ 61 տուն, 220 բնակիչ[1051]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՀԵՐՀԵՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում:

Բնակավայրը տեղաբաշխված է Բովորխանից դեպի Ամարասի հովիտը ձգվող լեռնազանգվածի վերջին ելուստի արևելահայաց լանջի գոգավորությունում: Հերհերի սահմանային գոտով հոսում է Վարանդա գետի Քոչիզ վտակը:

Հերհերը Արցախի հնագույն բնակավայրերից է: Գյուղի շրջակայքում կա Ք. ա. առաջին հազարամյակի դամբարանադաշտ: Հայտնաբերվել են նաև հելենիստական դարաշրջանի մշակույթին առընչվող կարասային թաղումներ:

5-րդ դարից սկսած՝ Հերհերը Ամարասի վանքի վանականների համար ամառանոցի դեր էր կատարում: 5-րդ դարի վերջերին և 6-րդ դարի սկզբներին Վաչագան Բարեպաշտ թագավորը Գրիգորիսի մասունքները գտնելու համար Դյութականից հասել է Արժան (Աշան), այնտեղից՝ Քարվեջ (Քարահունջ), որից հետո՝ Ամարաս[1052]:

Հերհերի դերակատարությունը տարածաշրջանում մեծացավ, երբ Վարանդա և Դիզակ գավառների մի հատվածում՝ Վարանդա գետի երկու ափերին, 16-րդ դարում ձևավորվեց Քոչիզի մելիքությունը՝ Մելիք Փաշայանների տոհմի գլխավորությամբ, որոնց նստավայրը Հերհերից 1 կմ դեպի հարավ գտնվող Ծովատեղ գյուղն էր:

1553 թ. Ստեփանոս եպիսկոպոսի կողմից ընդօրինակված Ավետարանի մեջ, որը գրվել էր Հերհերում, բնակավայրը ներկայացված է որպես գյուղաքաղաք[1053]:

Պատահական չէ, որ Աղվանից կաթողիկոս Պետրոս Խանցկեցու հովվապետության ժամանակ նրա հանձնարարականով ծագումով գիշեցի Բարսեղ արքեպիսկոպոսը 1667-1676 թվականներին Հերհերում կառուցել էր Սբ. Գրիգորիսի եկեղեցին[1054]: Հարկ է նշել, որ Վաչագան Բարեպաշտի գտած Սբ. Գրիգորիսի նշխարներից մի մասունք ամփոփել են վերոնշյալ տաճարում: Նորակառույց տաճարը դարձավ Ամարասի սուրբ աթոռի ամառանոցը:

[1049] Սարգիս արք. Ջալալյանց, նշվ.աշխ., էջ 520:
[1050] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 245:
[1051] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:
[1052] Սարգիս արք. Ջալալյանց, նշվ.աշխ., էջ 498-511:
[1053] Մատենադարան, ձեռ. 7542, թ. 304 ա:
[1054] Սարգիս արք. Ջալալյանց, նշվ.աշխ., էջ 511:

Հերհերի ազգաբնակչությունը, տանուտեր Ղասումի գլխավորությամբ որոշում են մեծ և փոքր ճանապարհների տակի տափը, որը նախկինում պատկանում էր Սբ. Աստվածածին եկեղեցուն, նվիրաբերել Սբ. Գրիգորիսի տաճարին[1055]:

Սբ. Գրիգորիսի եկեղեցու կառուցումից հետո Հերհերը շրջակա գյուղերի համար դարձավ նաև հոգևոր կենտրոն: Դրա մասին գրել են Հերհեր գյուղով տարբեր ժամանակներում անցած ճանապարհորդները՝ այդ թվում 19-րդ դարի վերջերին վերոհիշյալ բնակավայր այցելած Եղիշե քահանա Գեղամյանցը:

Հարկ է նկատել, որ նա Սարգիս Ջալալյանցի նկարագրած Սյունիքի Կապույտ բերդը սխալմամբ տեղադրվել է Արցախի Հերհեր գյուղում[1056]:

Հերհերում խարհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1930 թ., կազմակերպվել է կոլտնտեսություն: 1950-ական թվականներին Հերհերի, Ծովատեղի և Խերխանի տնտեսությունները կազմել են միացյալ կոլտնտեսություն: 1988 թ. վերոհիշյալ տնտեսությունները տարանջատվել, դարձել են առանձին կոլտնտեսություններ: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվեցին մենատնտեսություններ:

Տարբեր տարիներին Հերհերի Շմիդտի անվան կոլտնտեսությունը ղեկավարել են Մարկոս Ադամյանը, Կոլյա Մինասյանը, Սմբատ Ծատուրյանը, Արշավիր Սարգսյանը, Շահեն Հովհաննիսյանը, Միշա Խաչատրյանը, Սեյրան Գրիգորյանը, Սամվել Բաղդասարյանը, Ժորա Բալայանը, Սերյոժա Ստեփանյանը:

Հերհերից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 200 մարդ, որից 89-ը զոհվել է: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Արցախյան ազատագրական պատերազմին գյուղից 140 հոգին մասնակցել են ռազմական գործողություններին: 28 ազատամարտիկներ զոհվել են: Նրանց հիշատակին գյուղում հուշակոթող է կառուցվել:

Վոլոդյա Համբարձումյանը հետմահու արժանացել է ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի:

1880-ական թվականներին Հերհերում գործել է նախակրթարան: Հերհերի բնակչության խնդրագրի հիման վրա կաթողիկոսի 1890 թ. կոնդակով գյուղում ծխական դպրոց էր բացվել: Դպրոցը գործել է մինչև Արցախում խորհրդային կարգերի հաստատվելը: Կրթօջախը պահվում էր բաքվաբնակ հերհերցիների միջոցներով և աշակերտների ուսման վարձով:

1921 թ. Հերհերում բացվել էր տարրական դպրոց: 1936-1937 ուսումնական տարում դպրոցը դարձել էր յոթնամյա, 1955 թ.՝ միջնակարգ:

[1055] Սարգիս արք. Ջալալյանց, նշվ.աշխ., էջ 512:
[1056] Հայկունի, նշվ.աշխ, էջ 87; Հմմտ. Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 85:

2002 թ. ֆրանսիահայ բարերարներ Հրաչ և Էլիզաբեթ Սիսեոյանների կողմից նոր դպրոցական շենք է կիառուցվել: 2012 թ. վերոհիշյալ բարերարները կառուցել են նաև մարզադահլիճի շենքը:

1940-ական թվականներին դպրոցում սովորում էր 200-250 աշակերտ, 2004-2005 ուսումնական տարում՝ 110 աշակերտ, 2018-2019 ուսումնական տարում՝ 70 աշակերտ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Վաղարշակ Գրիգորյանը, Միքայել Բեգլարյանը, Վաղինակ Բաղիշյանը, Եսավ Բաղիշյանը:

Հերհերի դպրոցի շրջանավարտ է ՀՀ և ԼՂՀ գերագույն խորհուրդների պատգամավոր, ԱՀ կրթության, գիտության նախարար, ԱրՊՀ ռեկտոր, մանկավարժական գիտությունների թեկնածու Համլետ Գրիգորյանը:

Հերհերի պատմամշակութային նշանակության հուշարձաններն են՝ Սբ. Աստվածածին մատուռը (17-րդ դար), Սբ. Գրիգորիս եկեղեցին (1667-1676 թթ.), գերեզմանոց (17-18-րդ դարեր):

Գյուղի աղբյուրներն են՝ Պրպտան, Երե ձյուր, Հոռուն քոլ, Չալունց, Ծլլոկ, Ճիրմաձուր, Անուշի, Ներքին, Փաշին, Կռան:

Հերհերում ապրում են Կրիքորանց, Չալունց, Ըղբլիշանց, Խչտուրանց, Ստեփանունց, Բալունց, Գյուլամանց, Ջաբունց, Խնումանց, Նփերանց, Քիրամանց, Ջովանանց, Հարությունանց տոհմերի ներկայացուցիչները:

Համայնքը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Բնակավայրն ունի գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, միջնակարգ դպրոց, մարզադահլիճ, փոստ, հանդիսությունների սրահ, առևտրի 2 կետ:

Հերհերում 19-րդ դարի սկզբներին կար 20 տուն[1057], 1890-ական թվականներին՝ 80 տուն, 577 բնակիչ, 1989 թ.՝ 164 տուն, 610 բնակիչ[1058], 2018 թ.՝ 121 տուն, 474 բնակիչ[1059]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԿԱՎԱՀԱՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում:

Բնակավայրը տեղաբաշխված է Ննգի գյուղով անցնող Ստեփանակերտ-Մարտունի մայրուղու միջնամասի հարավային հատվածում՝ անտառապատ բլուրներով շրջապատված հովտում:

[1057] Սարգիս արք. Ջալալյանց, նշվ.աշխ., էջ 498:
[1058] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 219:
[1059] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

Կավահանը Արցախի հնագույն բնակավայրերից է: Գյուղի մոտ գտնվող Վըշկեն թումբ տեղամասում առայսօր պահպանվում է Ք. ա. 2-1-ին հազարամյակների դամբարանադաշտ:

11-րդ դարից մինչև 17-րդ դարի վերջերը հին Կավահանը գտնվում էր ներկա բնակավայրից 2-3 կմ հեռավորության վրա՝ Շինատեղ տեղամասում: Այստեղ պահպանվում են միջնադարյան գերեզմանատան տապանաքարերի մի մասը և քարաշեն մատուռը:

18-րդ դարի սկզբներին հին Կավահանի բնիկները տեղափոխվեցին բնակավայրից ոչ շատ մեծ հեռավորության վրա գտնվող առավել հարմարավետ տեղանք և հիմնեցին ներկայիս գյուղը: Վաղ շրջանից Կավահանի հայերը Արցախում և հարևան նահանգներում հայտնի էին որպես հմուտ բրուտագործներ: Կարծիք կա, որ բնակավայրի մոտ գտնվող կավի հարուստ հանքերից և բրուտագործությունից էլ գյուղը ստացել է Կավահան անունը:

Ս. Սարգսյանը գտնում է, որ Ղավահանը ավելի շատ "սուրբ բնակավայր" իմաստը ունի[1060]:

Ներկայիս բնակավայրում 1871 թ. կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցին:

19-րդ դարի երկրորդ կեսին Կապանից և Դիզակի Խանձաձորից մի քանի ընտանիքներ և չորս գերդաստան՝ Խաչենի Խնձրիստան գյուղից, հաստատվել են Կավահանում[1061]:

Նույն ժամանակահատվածում Կավահանից մի քանի ընտանիքներ տեղափոխվել և հիմնավորվել են Գարդմանի Քովլուջ գյուղում[1062]:

Կավահանի հայությունը անմնացորդ նվիրվածությամբ պայքարեց 1917-1920 թվականներին՝ Արցախի անկախությունը պահպանելու համար:

1918 թ. սեպտեմբերի 18-ին Լաչինի քրդերի ավազակախմբերը հարձակվել էին Ղայբալիշենի, Կրկժանի, Փահլուրի և Ջամիլլուի վրա: Խաչենի ուժերին օգնության էին հասել Վարանդայի կամավորական ջոկատները, որոնց շարքերում էին նաև Կավահանի հայերը[1063]:

1920 թ. մայիսին խորհրդային կարգեր հաստատվեցին Կավահանում: 1923 թ. գյուղը ընդգրկվեց ԼՂԻՄ կազմում:

1923 թ. Կավահանում կազմակերպվել էր կոլտնտեսություն, 1954 թ. այն միավորվել է Կոլխոզաշենի և Մամնայի միացյալ տնտեսությանը:

1974 թ. վերոհիշյալ տնտեսությունը խորհտնտեսության (սովխոզ) կարգավիճակ էր ստացել: 1989 թ. Կավահանի կոլտնտեսությունը առանձնացել և գործել է

[1060] Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 76:
[1061] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 217:
[1062] Նույն տեղում, էջ 97:
[1063] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 211:

մինչև 1998 թ.: Հողերի սեփականաշնորհումից հետո Կավահանի բնակիչները դարձան մենատնտեսներ:

Տարբեր տարիների Կավահանի տնտեսությունը ղեկավարել են Յուրի Պետրոսյանը, Ավանես Սահակյանը, Սոկրատ Հակոբջանյանը, Սերգեյ Հովհաննիսյանը, Արտակ Բաբայանը:

Հայրենական մեծ պատերազմին Կավահանից մասնակցել է 145 մարդ, զոհվել 89-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Կավահանի հայությունն իր մասնակցությունը բերեց արցախահայության ազատագրական պայքարին: 1988-1990 թվականներին գյուղում կազմակերպվել էր ինքնապաշտպանական ջոկատ: 30 հոգանոց ջոկատը Մարտունու պաշտպանական շրջանի զորամասերի կազմում մասնակցել է 1991-1994 թվականների ռազմական գործողություններին: Նրանցից 2 հոգի զոհվել են, 1 հոգու ճակատագիր անհայտ է: Ազատամարտիկ Գառնիկ Պողոսյանը արժանացել է ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի:

1870 թ. Կավահանում բացվել է նախակրթարան: 1873-1874 ուսումնական տարում, կաթողիկոսի թույտվությամբ, բացվել է եկեղեցական ծխական դպրոց: Ուսուցիչն էր Արտաշես Տեր-Միքայելյանը[1064]:

1945 թ. գյուղում բացվել է յոթամյա դպրոց, որտեղ 50 աշակերտ էր սովորում:

Ներկայումս աշակերտների թվաքանակի կրճատման պատճառով դպրոցը դարձել է Կոլխոզաշենի կրթօջախի մասնաճյուղը, որտեղ սովորում է ընդամենը 3 աշակերտ:

Կավահանի պատմամշակութային հուշարձաններն են Ք. ա. 2-1-ին դարերի դամբարանադաշտը հին Կավահանում, Սրբի դոշ անտառածածկ բլրի վրա 13-րդ դարում կառուցված մատուռը, Սբ. Աստվածածին եկեղեցին (1871 թ.), Դիլլաքանց սորբը, Բաղդունց սորբը, գերեզմանոց (17-19-րդ դարեր), խաչքարեր (15-16-րդ դարեր):

Գյուղի հանդամասերն են Ղուզե, Շինատեղ, Շիլաթաղ, Էլուն ղուրուղ, Բաբուն տափ:

Կավահանի նշանավոր աղբյուրներն են՝ Շենին, Էլուն ղուրուղին, Ըղեն, Արզումանեն, Կլերեն, Գյուլասեն:

Գյուղում շարունակում են ապրել Սիյամանց, Փանունց, Մարդունց, Սահականց, Բիբունց, Բաղդունց, Դուշանանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացվել է 1964 թ.: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական կարգով:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքը ունի գյուղապետարան, ակումբ, բուժկետ, գրադարան, Կոլխոզաշենի միջնակարգ դպրոցի Կավահանի մասնաճյուղը, առևտրի 1 կետ:

[1064] Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Արցախի կրթական համակարգը, հ. 1, էջ 388:

Կավահանում 19-րդ դարի վերջերին կար 34 տուն, 280 բնակիչ[1065], 1987 թ.՝ 43 տուն, 141 բնակիչ[1066], 2018 թ.՝ 20 տուն, 57 բնակիչ[1067]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՃԱՐՏԱՐ

Ճարտար քաղաքը գտնվում է Մարտունու շրջանի կենտրոնական նախալեռնային հատվածում: Հեռավորությունը Մարտունուց 16 կմ է, Ստեփանակերտից՝ 45 կմ: Նախկինում բնակավայրը գտնվում էր Արցախի Վարանդա գավառում:

Քաղաքը հարավարևելյան հատվածից ձգվելով իջնում է դեպի դաշտավայր և երեք կողմերից շրջապատված է համեմատաբար բարձր լեռնաշարերով (Եղիշե սար, Սրբախութ, Կարմիր քար և Ղլեն խութ): Վերոհիշյալ սարերի բարձրությունը ծովի մակարդակից 1100-1300 մ է: Ճարտարի կլիմայական պայմանները չոր մերձարևադարձային են:

Բնակավայրի շրջակայքում գտնվող դամբարանաբլուրներն ու հնավայրերը վկայում են, որ Ճարտարում հայ մարդն անընդհատ ապրել է առնվազն Ք. ա. 1-ին հազարամյակից:

Ճարտարում շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերվել է 4-րդ դարից մնացած քարակերտ խոյակ, որը պահպանվում է Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանում:

Ճարտար քաղաքի և Գիշի գյուղի արանքում՝ Շըրմանա քերծի վրա, որին տեղացիներն անվանում են նաև Ղլեն խութ, պահպանվում են միջնադարյան ամրոցի մնացորդներ, որը նույնպես խոսում է Ճարտարի հին բնակավայր լինելու փաստի օգտին: Հավանաբար վտանգի դեպքում այդ ամրոցում պաշտպանվում էին երկու բնակավայրերի բնակիչները:

7-րդ դարի արաբական արշավանքներից սկսած՝ Մուխանքի տափաստանում ապրող հայությունն ապահովության նպատակով սկսել է բարձրանալ դեպի լեռները՝ պաշտպանություն գտնելով իրենց հայրենակիցների մոտ:

Ճարտարցիների մոտ պահպանված ավանդազրույցի համաձայն՝ ներկայիս Ադրբեջանի հանրապետության Աղջաբադու, Ժդանովի շրջաններից թշնամիների ճնշման տակ որոշ ընտանիքներ տեղափոխվել և բնակություն են հաստատել ներկայիս Ճարտարի տարածքում: Դա հավանական վարկած է: Այդ նույն Աղջաբադիի մոտակայքում է եղել հայկական պատմական Յունան քաղաքը, որի բնակիչներն արաբների ճնշման տակ ցրվել են Արցախի լեռնային հատվածներում:

[1065] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 217:
[1066] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 235:
[1067] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

Կա նաև տեսակետ, որ այդ վայրերից Ճարտար հասած բնակիչների մի մասն էլ, շարունակելով իր երթը դեպի Հայաստանի հյուսիսարևմտյան՝ համեմատաբար ապահով գավառները, հաստատվել է ներկայիս Տավուշի մարզի Սևքար գյուղի տարածքում, որտեղ էլ գյուղ է հիմնադրել[1068]: Երևի պատահական չէ, որ 18-րդ դարում նորից Արցախից մեծ քանակությամբ հայ ընտանիքներ հաստատվել են նույն Սևքար գյուղում:

Ճարտար քաղաքը մինչև 19-րդ դարի վերջն իրենից ներկայացնում էր որպես երկու առանձին գյուղեր, որոնց իրարից բաժանող սահմանագիծ էր համարվում ձորակով հոսող գետակը:

Արևելահայաց կամ հարավահայաց սարալանջին փռված էր Գյունե Ճարտարը, իսկ հյուսիսահայաց հատվածում՝ անտառի փեշին էր գտնվում Ղուզե Ճարտարը:

Միջին միջնադարում, պաշտպանական նկատառումներից ելնելով, Գյունե Ճարտարի բնակիչներն ապրել են Կարմիր քարի և Շըրմանա քերծի միջև գտնվող հատվածում՝ բերդի անմիջական հարևանությամբ, իսկ Ղուզե Ճարտարի հայերը բնակության վայր էին ընտրել Եղիշե սարի վրա գտնվող համանուն վանքի շրջակայքը: Այն տեղացիները անվանում են շինատեղ:

20-րդ դարից սկսած՝ երկու գյուղերի բնակիչներն էլ հարթավայրերին ավելի մոտ իրենց կալերում կառուցել են տներ, և այդպես ստեղծվել է ևս երկու բնակավայր՝ Գյունե կալեր և Ղուզե կալեր անվանումներով: Գյունե կալերը և Գյունե Ճարտարը 20-րդ դարում ընդարձակվելով իրար են միացել:

19-րդ դարի 90-ական թվականներին Գյունե Ճարտարի ծխերի թիվը եղել է 260, բնակչության թիվը՝ 1950 մարդ: Այդ նույն ժամանակահատվածում Ղուզե Ճարտարում կար 145 ծուխ և 1045 մարդ[1069]:

Խորհրդային տարիներին երկու Ճարտարներում ստեղծվել են առանձին կոլտնտեսություններ: 1948 թ. երկու կոլտնտեսություններն իրար միացան, և զարգացման ավելի լայն հեռանկար բացվեց: 1945 թ. Գյունե Ճարտարի կոլտնտեսության նախագահ ընտրվեց Սուրեն Ադամյանը: 1948-1983 թթ. նա միացյալ տնտեսության նախագահն էր: Ճարտարն այդ տարիներին աննախադեպ բարգավաճեց և դարձավ ԼՂԻՄ ամենախոշոր տնտեսություններից մեկը: Գյուղից 5 հոգի՝ Սուրեն Ադամյանը, բրիգադավարներ՝ Թևոս Սարգսյանը, Ղուկաս Ավանեսյանը, օղակավարներ՝ Մուրադ Առուստամյանը և Դանիել Բաղդասարյանը արժանացել են սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման: 1980-ական թվականներին Ճարտարի տնտեսությունն արտադրում էր 15-16 հազար տոննա խաղող:

Սուրեն Ադամյանից հետո Ճարտարի կոլտնտեսությունը ղեկավարել են Լեոնարդ Մայիլյանը, Վաչե Ադամյանը, Հենրիկ Տոնոյանը:

[1068] Մելքումյան Ս., Ճարտար, Երևան, 2006, էջ 22:
[1069] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 51:

1988 թ. Ղուզե և Գյունե Ճարտարները տարանջատվել են, դարձել առանձին համայնքներ: 2015 թ. երկու գյուղերը նորից միացել են իրար: Նույն թվականին ԱՀ կառավարության որոշմամբ Ճարտարը ստացել է քաղաքի կարգավիճակ:

Ճարտարում մնացել են հին ժամանակներից մնացած մի շարք աղբյուրներ: Ղուզե Ճարտարում առավել նշանավոր են Մոտե ձուրը, Խաչուն ձուրը, Շրշոանը, Վետած աղբյուրը, իսկ Գյունե Ճարտարում՝ Նավերը, Խութին ձուրը, Երե ձուրը, Չաղալ աղբյուրը, Գովուն աղբյուրը, Ծրվաձուրը, Ծլոկը, Սարվազ աղբյուրը, Հաբեթ ապուն աղբյուրը:

Դուրդուրչակ աղբյուրի ջուրն օգտագործվում է ալերգիկ հիվանդների բուժման համար:

Ճարտարում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ: Դրանցից հայտնի է Եղիշեի վանքը կամ Եղիշե կույսի վանքը: Ճարտարցիներն այն անվանում են Ղշավանք: Վանքի ներկայիս շինությունները կառուցվել են 12-րդ դարում: 1675 թ. այն վարպետ Գաբրիելի կողմից հիմնովին վերանորոգվել է: Հայտնի է նաև Գյունե Ճարտարի Ամենափրկիչ եկեղեցին, որը 1789 թ. կառուցել է վարպետ Հարությունը: Ղուզե Ճարտարի Սբ. Գևորգ եկեղեցին կիսավեր վիճակում է գտնվում:

Սպիտակ բերդասարի վրա պահպանվում է Բերդի նահատակ, իսկ Կոհակ սարի վրա՝ մատուռների հիմնապատերը:

Ինչպես Արցախի մյուս բնակավայրերում, այնպես էլ Ճարտարում գործել են կրթական և մշակութային հաստատություններ: 1874-75 ուսումնական տարում Գյունե Ճարտարում բացվել է եկեղեցական ծխական դպրոց, իսկ 1883-84 ուսումնական տարիներից գործում էր երկսեռ դպրոց[1070]:

Խորհրդային տարիներին Ճարտարում գործում էր երկու միջնակարգ և երկու ութամյա դպրոց: Աշակերտների թիվը հասնում էր 850-ի:[1071] Ներկայումս Ճարտար քաղաքում գործում են հինգ դպրոցներ:

Ճարտարի թիվ 1 Ազատամարտիկների անվան հոսքային դպրոցի տնօրեններ էին՝ Լեոնարդ Տոնյանը (1988-2000 թթ.), Օֆելյա Շահրամանյանը (2000-2007 թթ.), Աիդա Հովհաննիսյանը (2007-2013 թթ.), Լեոնարդ Տոնյանը՝ 2013 թվականից առայսօր:

Թիվ 2 Ա. Ավանեսյանի անվան դպրոցի տնօրեններն էին՝ Բաբկեն Սաֆարյանը (1999-2007 թթ.), Պերճ Գասպարյանը (2007-2012 թթ.), Հասմիկ Մայիլյանը՝ 2012 թվականից առայսօր:

Թիվ 3 Հ. Հարությունյանի անվան հիմնական դպրոցի տնօրենը 1999 թվականից առ այսօր Մ. Արզումանյանն է:

Թիվ 4 Ա. Հայրապետյանի անվան հիմնական դպրոցի տնօրենն է՝ Դ. Գրիգորյանը:

[1070] Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Արցախի կրթական համակարգը, հ. 1, էջ 382:
[1071] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

Թիվ 5 հիմնական դպրոցը հիմնադրվել է 2011 թ. Ճարտարի Ալիբալի տեղամասում կառուցված նոր զորամասում: Այն հիմնականում սպասարկում է սպաների երեխաներին:

Ճարտարից են սերված նշանավոր գիտնականներ, քաղաքական պետական գործիչներ՝ օվկիանոսագետ, Ռուսաստանի ԳԱ ակադեմիկոս Արտեմ Սարգսյանը, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Երվանդ Հակոբյանը, ֆիզմաթ գիտությունների դոկտոր Ֆոմբերդ Բախշյանը, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Գևորգյանը, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԱԺ փոխնախագահ Միքայել Մելքումյանը, տնտեսագիտության դոկտոր Անահիտ Մելքումյանը, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Մելքումյանը, երկրաբան, պրոֆեսոր, Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի պրոռեկտոր Սուրեն Սուլեյմանյանը, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գեորգի Հակոբյանը, կենսաբանական գիտությունների դոկտորներ Միրիկ Սուլեյմանյանն ու Սեներիկ Հայրապետյանը, կենսաբանական գիտությունների դոկտոր պրոֆեսորներ Բորիս և Անդրեյ Վարդապետյանները (հայր և որդի), տեխնիկական գիտությունների դոկտոր Ռուդիկ Սահակյանը, ֆիզմաթ գիտությունների դոկտոր Լևոն Հայրապետյանը, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԱրՊՀ նախկին ռեկտոր, ԱՀ ԱԺ պատգամավոր Արպատ Ավանեսյանը, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Օլեգ Քամալյանը, Երևանի մանկավարժական ինստիտուտի ռեկտոր Լևոն Վարդունին, կապիտան Արտաշես Վարդապետյանը, որը 1918–1919 թթ. եղել է Արցախի զինված ուժերի շտաբի պետը, ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Եղիշե Ասծատրյանը, ՀԽՍՀ արդարության ժողկոմ, գլխավոր դատախազ, Գերագույն դատարանի նախագահ Լևոն Վարդապետյանը, կուսակցական, պետական գործիչներ Միսաք Բալայանը, Շմավոն Պետրոսյանը, Արամ Գրիգորյանը, ՀԽՍՀ սոցիալական ապահովության նախարար Նարինե Բալայանը, ՀՀ գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Մովսես Հակոբյանը:

Ճարտարում այժմ գործում է վարդագույն տուֆից կառուցված հիասքանչ մշակույթի պալատ, 3 ակումբ, 5 գրադարան, հյուրանոց, պատերազմում զոհվածների հուշարձան-թանգարան, հիվանդանոց, բաղնիք, կարի բաժանմունք, ճաշարան: Ճարտարում գործում է նաև 2 մանկապարտեզ:

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին 500 ճարտարցիներ զոհվել են: Նրանց հիշատակին Ճարտարում կառուցվել է տուֆակերտ հուշարձան:

Ճարտարի 119 ազատամարտիկներ 1988–1994 թթ. իրենց կյանքը նվիրաբերեցին հայրենի երկրի սահմանների պաշտպանության սուրբ գործին: Ճարտարի ամենագողտրիկ վայրերից մեկում՝ մշակույթի պալատի հարևանությամբ, կառուցված է նրանց հիշատակը հավերժացնող հուշարձան: Ճարտարցիներից գեներալ-գնդապետ Մովսես Հակոբյանը արժանացել է «Արցախի հերոս»-ի բարձր կոչմանը: ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի ասպետներ են Անդրանիկ Շամիրի Ղահրամանյանը, Հովիկ Վաչենի Հարությունյանը, Հովիկ Խանլարի Ջիվանյանը, Հայկազ Արշավիրի Հակոբջանյանը, Ժիրայր Համլետի Պողոսյանը, Թաթուլ Սլավիկի Հայրապետյանը, Էռնեստ Լենտրուշի Դադայանը, Ռուբիկ Հրանտի Հայրապետյանը: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանակիրներ են Բորիկ Բեհբութի Ղազարյանը, Հովիկ Հրանտի Աղաջանյանը, Սերժ Ռուբենի Հայրապետյանը, Սարգիս Սեդրակի Ամիրյանը, Հովիկ Վարդանի Առստամյանը, Արամայիս Գեորգիի Հայրապետյանը, Գևորգ Լեոնիդի Միրզոյանը, Հրայր Համլետի Պողոսյանը, Յուրի Վաղարշակի Բաբաջանյանը, Գարիկ Անդրեյի Պետրոսյանը, Գեորգի Մկրտչյանը, Հայասեր Հայրապետյանը, Գարուշ Լևոնի Սարգսյանը, Լեոնիկ Գուրգենի Աղաբեկյանը, Հովիկ Ալբերտի Միրզոյանը, Սնակ Արազի Ղուկասյանը, Ոսկան Ապրեսի Ազիզյանը, Վարուժան Սաշայի Գևորգյանը, Կարեն Ռաֆիկի Հակոբյանը, Արթուր Ռաֆիկի Հովսեփյանը, Վովա Աշոտի Մովսիսյանը, Կարեն Ռաֆիկի Թովմասյանը, Կարեն Շահենի Շաքարյանը և Արսեն Վաչենի Սարգսյանը:

Ճարտարի զարգացման գործում մեծ ներդրում ունի ռուսաստանաբնակ բարերար Վլադիմիր Ավագյանը: Նրա իսկ ստեղծած հիմնադրամը լայնածավալ շինարարական աշխատանքներ է կատարում ոչ միայն Ճարտարում, այլ նաև մյուս բնակավայրերում: Նրա միջոցներով Ճարտարում կառուցվել է նաև նոր եկեղեցի:

Այսօր Ճարտարում աշխատում է Ստեփանակերտի գորգի ֆաբրիկայի մասնաճյուղը: Խորհրդային տարիներին այստեղ տեղակայված էին Ստեփանակերտի մետաքսի կոմբինատի, կոնդենսատորների գործարանի մասնաճյուղերը: Նշանավոր էր Ճարտարի գինու գործարանը:

Մայրուղիներին մոտ լինելը, գյուղատնտեսական նշանակության հողահանդակների բավարար չափը, բնակչության քանակը, կրթական որակը, նորօրյա պետականության պայմաններում զարգացման լայն հեռանկարներ են բացում Ճարտար քաղաքի համար:

Ճարտարում 2018 թ. կար 985 տուն, 3909 բնակիչ[1072]: Նրանք աշխատում են գյուղատնտեսության ոլորտում, պետական և մասնավոր հիմնարկ-ձեռնարկություններում, ծառայում ԱՀ Պաշտպանության բանակում:

ՄԱՃԿԱԼԱՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում: Գյուղը տեղաբաշխված է Ամարասի հովտում՝ համանուն գետի երկու ափերին: Բնակավայրի արևելյան մասով ձգվում է Լուսավորչի, իսկ հարավարևելյան մասով՝ Խազազի լեռները:

[1072] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

Ամարասի հովիտը դարեր շարունակ Արցախի համար ոչ միայն հոգևոր կենտրոնի դերակատարություն է ունեցել, այլև երկրամասի համար պաշտպանական հանգույց է հանդիսացել: Բոլոր ժամանակների նվաճողներն էլ փորձել են Ամարասի հովտով խորանալ լեռնաստանի մեջ և Արցախի հարավային թևը կտրել կենտրոնական և հյուսիսային հատվածներից:

Ամարասի հովտի ռազմավարական նշանակությունը հաշվի առնելով՝ Արշակունյաց թագավորության առաջին պատմափուլում՝ 1-ին և 2-րդ դարերում, Արցախի իշխանական տան ներկայացուցիչները ներկայիս վանական համալիրի շրջակայքում կառուցել էին գյուղաքաղաք: Գյուղատնտեսական աշխատանքների և մասնակի պեղումների ընթացքում հայտնաբերվել են գետնափոր տների մնացորդներ, կարասներ, սափորներ, քարե սանդեր, խեցեղեն անոթներ, երկաթյա գեղարդներ, դանակներ, ձիթաձրագներ, զարդարանքներ, կավե ամանների թրծման հնոցներ:

Գյուղաքաղաքն էլ հիմք է հանդիսացել, որպեսզի 4-5-րդ դարերում կառուցվի Ամարասի վանական համալիրը:

4-րդ դարի սկզբներին Գրիգոր Լուսավորիչն Ամարասում հիմնել է վանք, որի կառուցումն ավարտել է նրա թոռը Գրիգորիսը: Վատնյա դաշտում զոհվելուց հետո, նրա դին տեղափոխել և ամփոփել են Ամարասի վանքում:

Ըստ Մովսես Կաղանկատվացու՝ 489 թ. Աղվանքի Վաչագան Գ Բարեպաշտ թագավորը Ամարասում վերագտնում է Գրիգորիսի գերեզմանի տեղը և վրան մատուռ կառուցում:

5-րդ դարի սկզբին Մեսրոպ Մաշտոցն Ամարասում դպրոց էր բացել:

Արաբական արշավանքների ժամանակ վանքը և գյուղաքաղաքը ավերվել են զավթիչների կողմից: 821 թ. արաբները, Պարտավից շարժվելով դեպի Արցախի խորքերը, ասպատակեցին Ամարասը և մոտ հազար հոգու գերեվարելով՝ ամրացան Շիկաքար բերդում: Արցախի Սահլ Սմբատյան իշխանին հաջողվում է Մուխանքի դաշտում ջախջախել արաբներին[1073]:

Ամարասը դաժան ավերածությունների և թալանի է ենթարկվել 1293 թ. մոնղոլ Աբաղա խանի հրոսակների կողմից: Նրանք, կողոպտելով վանքը, իրենց հետ տարել էին Սբ. Գրիգորիսի գավազանը և 36 ակներով ընդելուզված ոսկեձույլ խաչը:

1387 թ. Լանկ Թեմուրի արշավանքից հետո Ամարաս գյուղաքաղաքը և վանքը նորից ավերվել են: Ավանդությունը պատմում է, որ, որպեսզի վանքը այլևս չվերականգնվի, Լանկ Թեմուրը իր զորքը շարքով կանգնեցրել էր մինչև Երասխի ափը, և զինվորները, վանքի քարերն իրար տալով, թափել էին գետը: Սակայն այս անգամ էլ, երբ բռնակալը հեռացել էր Արցախից, վանքը նորից վերաշինվել և ավելի շքեղ տեսք է ստացել:

Ամարասը դարերի հոլովույթում շարունակում էր մնալ որպես եպիսկոպոսանիստ և մշակութային-լուսավորչական աշխույժ կյանքով ապրող կենտրոն: Ամարասում

[1073] Բալայան Վ., Արցախի պատմությունը, էջ 74:

ստեղծվել էին թանկարժեք ձեռագրեր, որոնց մի մասն այսօր պահվում է Մատենադարանում:

17-րդ դարում վանքը պարսպապատվել էր: 18-րդ դարի վերջերին Վարանդայի մելիք Շահնազարը, մեղքերին թողություն տալու նպատակով, վանական համալիրը հիմնովին վերանորոգել է:

Ամարասում պահպանվում է 925 թ. արձանագրությամբ խաչքար:

1832-1847 թվականներին ռուսները Ամարասը դարձրել էին մաքսատուն: Բաղդասար Մետրոպոլիտին հաջողվել էր վերադարձնել Ամարասն ու վանական կալվածքները:

19-րդ դարի երկրորդ կեսին շուշեցի բարերարների ջանքերով վանական համալիրը վերանորոգվել և նոր կյանք էր ստացել:

Խորհրդային տարիները նոր արհավիրքներ բերեցին բազում դարերով անցած հոգևոր մշակութային կենտրոնին:

Խորհրդային Ադրբեջանի ղեկավարները 1921 թ. նոյեմբերին ձերբակալեցին և Բաքվի բանտը նետեցին Ամարասի վանահայր Սուրեն եպիսկոպոսին[1074]:

1929 թ. հոկտեմբերի 4-ին փակվեց Ամարասի հոյակերտ եկեղեցին, իսկ պատմամշակութային արժեքները ուղարկվեցին Բաքու՝ «ուսումնասիրելու» համար[1075]:

Արցախի պետականության վերականգնումից հետո Ամարասը նորից դարձավ հոգևոր մշակութային կենտրոն: Ներկայումս ԱՀ կառավարության և բարերարների ֆինանսավորմամբ իրականացվում են վերանորոգման աշխատանքներ:

Ամարաս գյուղաքաղաքի կենսագրությունը անշեղորեն կապված է վանական համալիրի պատմական ճակատագրի հետ: 19-րդ դարի առաջին կեսին, երբ վանքը վերածվել էր մաքսատան, խամրել էր նաև գյուղաքաղաքի վաղեմի փառքը: 1905-1906 թվականների հայ-թաթարական ընդհարումների ժամանակ վանքը և գյուղաքաղաքը նորից հայտնվել էին դաժան հակամարտության կիզակետում:

Խորհրդային տարիներին ԼՂԻՄ կանոնադրությունը մշակելու, վարչատարածքային պատկանելիության հարցերը լուծելու և նոր միավորի սահմանները ճշտելու նպատակով Լեռնային Ղարաբաղի, Դաշտային Ղարաբաղի, Քուրդիստանի և ԱԽՍՀ կենտրոնական իշխանություններից 1923 թ. ստեղծված հանձնաժողովի փաստաթղթերում Ամարասը դեռևս հիշատակված էր որպես բնակավայր[1076]: Ավելին, արխիվում պահպանվել է Ամարասի բնակիչ Լուսիկ Դանիելբեկյանի նամակը՝ գրված 1929 թ. ԼՂԻՄ Կենտգործկոմին, որի մեջ նա թախանձագին խնդրում էր մարզի իրավասու մարմիններին՝ թույլ տալ իրեն և ընտանիքի անդամներին աքսորավայրից՝ Ղազախից, նորից տեղափոխվել հարազատ օջախ՝ Ամարաս[1077]:

[1074] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 98, թ. 46:
[1075] Բալայան Վ., Շուշի, էջ 304:
[1076] Բալայան Վ., Դրվագներ..., էջ 176:
[1077] ԱՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 11, թ. 59:

Փաստորեն, մինչև 1930-ական թվականների կեսերը Ամարաս բնակավայրը շարունակում էր գոյատևել:

Ամարաս բնակավայրից 3,5 կմ դեպի հյուսիս՝ Մաշադիշենի (Կոլխոզաշեն) կալերում, 1923 թ. վերոնշյալ գյուղից մի քանի ընտանիքներ են հաստատվել: Բաքվից գործուղված, ծննդով Սիսիանից մի «տասհազարական» բանվորի առաջարկությամբ նոր բնակավայրը ստացել էր Մաճկալաշեն անունը:

Այսպիսով, հնագույն Ամարաս գյուղաքաղաքի կենսագրության շարունակողը դառնում է Մաճկալաշենը:

1930 թ. Մաճկալաշենում կոլտնտեսություն է կազմակերպվել: 1950 թ. այն ներառվեց Սոսի կոլտնտեսության կազմի մեջ: 1988 թ. Մաճկալաշենի կոլտնտեսությունը նորից առանձնացվեց: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո գյուղում կազմակերպվեցին անհատական տնտեսություններ:

Տարբեր տարիների Մաճկալաճենի կոլտնտեսությունը ղեկավարել են Հավետ Ղևոնդյանը, Ալբերտ Գրիգորյանը, Արտաշես Հարությունյանը:

Գյուղից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 131 մարդ, որոնցից 51-ը զոհվել է: Նրանց հիշատակին Մաճկալաշենում հուշարձան է կառուցվել:

Արցախյան ազատագրական պատերազմի տարիներին Մաճկալաշենը հերոս գյուղի համարում է ձեռք բերել: Մաճկալաշենը և շրջակա հայկական գյուղերի երիտասարդները Արմեն Մելքումյանի հրամանատարությամբ Ամարասի հովտում թշնամու դեմ վահան էին դարձել: Ռազմական գործողություններին Մաճկալաշենից մասնակցել է 132 ազատամարտիկ: Նրանցից 28-ը զոհվել է:

ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի արժանացել են Գեղամ Կարապետյանը, հետմահու՝ Արմեն Մելքումյանը, Նելսոն Հարությունյանը, Կարեն Ավետիսյանը, ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի ասպետ են դարձել Գագիկ Գաբրիելյանը, Լեոնիկ Ավանեսյանը, Մերուժան Հարությունյանը, Կամո Խաչատրյանը, իսկ հետմահու՝ Արամ Ավետիսյանը և Արմեն Ծատրյանը:

Զոհված ազատամարտիկների հիշատակին գյուղում կառուցվել է հուշահամալիր:

1924-1925 ուսումնական տարում Մաճկալաշենում բացվել էր տարրական դպրոց: 1960-1961 ուսումնական տարվանից այն ութամյայի կարգավիճակ էր ստացել: 1967 թ. գյուղում նոր դպրոցական շենք է կառուցվել: Արցախյան պատերազմի տարիներին այն վերածվել էր շտաբի: Պատերազմից հետո դպրոցը հիմնանորոգվել է: Այն միջնակարգի կարգավիճակ ունի և կրում է Արմեն Մելքումյանի անունը:

Տարբեր տարիներին դպրոցի տնօրեններ են եղել Հովհաննես Գրիգորյանը, Լևոն Առաքելյանը, Վանի Գաբրիելյանը, Միքայել Բեգլարյանը, Շուրա Գրիգորյանը, Արտավազդ Խաչատրյանը, Բենիկ Դադասյանը, Լևոն Մուսայելյանը, Ալիշ Մանասյանը, Արմիկ Գևորգյանը, Վերա Ալեքսանյանը, Վալերի Հարությունյանը, Սեդա Ալահվերդյանը, Սլավիկ Գրիգորյանը, Մանուշակ Գևորգյանը, Մանյա Ավանեսյանը:

Ծննդով Մաճկալաշենից են փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աղասի Խաչատրյանը, Մարտունու կուսշրջկոմի առաջին քարտուղար Ստախոն Պետրոսյանը:

Մաճկալաշենի պատմաճարտարապետական նշանակության հուշարձաններն են Ամարասի վանքը, Սբ. Գրիգորիս սրբավայրը:

Գյուղի աղբյուրներն են՝ Աղբյուրաձորի, Շնագայլերի, Շենին ջուր, Հաջուն դարայի:

Բնակավայրի հանդամասերն են՝ Թեղուտ, Սուլու Դարա, Սզնոտ, Շողավար, Ծրած, Քարին առաջ:

Մաճկալաշենում ապրում են Աբունց, Եգանանց, Ղևոնդանց, Սիրարբունց, Կիվերքանց, Սահականց, Մելքումանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, մանկապարտեզ, առևտրի 2 կետ:

Մաճկալաշենում 1989 թ. կար 176 տուն, 671 բնակիչ[1078], 2019 թ.՝ 146 տուն, 577 բնակիչ[1079]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՄՅՈՒՐԻՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Բովուրխանի լեռնազանգվածից դեպի արևելք ձգվող լեռնաճյուղի արևելահայաց փեշերին:

Ընդհանուր առմամբ գյուղը շրջափակված է Պուղուս ղլեն քերծ, Կարմիր քերծ, Ախնավ, Քարեգ, Օռած թումբ, Մաչի մաննը, Դերին կալ սարերով և անտառապատ բլուրներով: Բնակավայրի դիմաց գտնվում է Մաթեգ լեռը, որի վրա կա նաև սրբավայր:

Ծննդով Մյուրիշենցի, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Վլադիկ Հակոբյանը գտնում էր, որ գյուղը գոյություն ունի 12-13-րդ դարերից: Դրա մասին են վկայում նաև Մյուրիշենի մոտ պահպանված Ծռած թումբ ամրոցի մնացորդները, հին գերեզմանոցի 12-16-րդ դարերի մահարձանները:

Ավանդությունը պատմում է, որ բնակավայրը սկզբում գտնվում էր Աղվաշ կոչված տեղամասում: 17-րդ դարի վերջերին և 18-րդ դարի սկզբներին բնակիչները որոշում են տեղափոխվել ավելի հարմարավետ վայր և իրենց գյուղի հարևանությամբ հիմնում Մյուրիշենը:

[1078] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 222:
[1079] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

Աղվաշ հնավայրում պահպանվում են խաչքարեր, տների պատերի հետքերը: 1869 թ. կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցին:

18-րդ դարի վերջերին Մյուրիշեն, Կաղարծի, Հաղրութ և Շոշ բնակավայրերից որոշ ընտանիքներ տեղափոխվել են Շամախու գավառ և Մադրասա գյուղի հարևանությամբ հիմնել Մյուրիշեն գյուղը[1080]:

1905-1906 թվականների հայ թաթարական ընդհարումների ժամանակ Մյուրիշենը ճակատային գծում էր հայտնվել: Հարևան Ավդալ և Գյուլափլու թուրքաբնակ գյուղերից ավազակախմբերը հարձակումներ էին գործում Մյուրիշեն և Ավդուռ հայկական գյուղերի վրա: Հայ ինքնապաշտպաններին հաջողվում է հետ մղել այդ հարձակումները:

Վիճակը ավելի ծանրացավ 1918 թ., երբ ավազակախմբերին միացավ թուրքական կանոնավոր զորքը: Արցախի կառավարության և տեղի ինքնապաշտպանական ջոկատներին հաջողվել է կանխել արհավիրքը:

Խորհրդային տարիներին Մյուրիշենը ներառված էր ԼՂԻՄ Մարտունու շրջանի վարչական կազմում:

1930 թ. գյուղում կազմակերպվել է կոլտնտեսություն: Խոշորացման տարիներին՝ 1950-ական թվականներին, կազմակերպվել էր Մյուրիշենի և Ավդուռի միացյալ կոլտնտեսություն:

1988 թ. այն նորից առանձնացվել է: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվել են անհատական տնտեսություններ:

Տարբեր տարիների Մյուրիշենի կոլտնտեսությունը ղեկավարել են Արշակ Հակոբյանը, Շահեն Հարությունյանը, Պողոս Պետրոսյանը, Վարդան Թովմասյանը, Ավագ Ավագյանը, Ռշտուն Առաքելյանը, Սլավիկ Պողոսյանը, Ռուբեն Գրիգորյանը, Գրիշա Մեժլումյանը, Բորիկ Մեժլումյանը:

Հայրենական մեծ պատերազմին Մյուրիշենից մասնակցել է 156 մարդ, որոնցից զոհվել է 82-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Արցախյան ազատագրական պատերազմի հաղթանակի կերտման գործում իր ներդրումն է ունեցել նաև Մյուրիշենի հայությունը: 1989-1990 թվականներին գյուղում կազմակերպվել է կամավորական ջոկատ: Մարտական գործողություններին մասնակցել է 40 հոգի: 6 ազատամարտիկներ զոհվել են:

ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի հետմահու արժանացել է Արկադի Զաքարյանը:

2016 թ. Մյուրիշենցի բարերար Արմեն Սարգսյանի միջոցներով հիմնովին վերակառուցվել է Մյուրիշենի հուշակոթողը և կառուցվել նորը, որը նվիրված է ինչպես Հայրենական, այնպես էլ Արցախյան պատերազմում զոհվածների հիշատակին:

[1080] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 92:

1873 թ. Մյուրիշենում բացվել էր եկեղեցական-ծխական դպրոց: Ուսուցիչն էր Արշակ Տեր-Հայրապետյանը: 1896 թ. դպրոցը փակվել և վերաբացվել է 1906 թ. սեպտեմբերին: Դպրոցի ուսուցիչներն էին Լևոն Զաքարյանը և Ավետիս Գասպարյանը: Դպրոցը պահվում էր բաքվաբնակ մյուրիշենցիների և, ինչ-որ չափով, աշակերտների ուսման վարձով:

1928 թ. Մյուրիշենում բացվել է տարրական դպրոց: 1936-1937 ուսումնական տարում այն յոթնամյայի, իսկ 1964-1965 ուսումնական տարվանից՝ ութամյայի կարգավիճակ էր ստացել:

1947-1948 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 132 աշակերտ: 1980-ական թվականներին Մյուրիշենի դպրոցում սովորում էր առավելագույնը 42 աշակերտ, 2018-2019 ուսումնական տարում՝ 15 աշակերտ: Կրթօջախը հիմնական դպրոցի կարգավիճակ ունի:

Տարբեր տարիներին դպրոցի տնօրեններ են աշխատել Արշակ Մեժլումյանը, Վանյա Սարգսյանը, Գուրգեն Բալայանը, Էդիկ Մեժլումյանը, Մուրադ Գաբրիելյանը, Վագիֆ Մեժլումյանը, Լիրա Զաքարյանը:

Ծննդով և ծագումով Մյուրիշենից են ԼՂՀ Գերագույն Խորհրդի (Ազգային ժողով) առաջին գումարման քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Վլադիկ Հակոբյանը, Ուկրաինայի հանրապետության ներքին գործերի նախարար Արսեն Ավակովը, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Միքայել Առաքելյանը:

Մյուրիշենի պատմամշակութային նշանակության հուշարձաններն են՝ 12-16-րդ դարերի գերեզմանոցը, Ծռած թումբ ամրոց բնակատեղին (10-12-րդ դարեր), Սբ. Աստվածածին եկեղեցին (1869 թ.), ջրաղացը (19-րդ դար):

Գյուղի աղբյուրներն են՝ Պլլաճուր, Ծլլոկ, Կարմիր, Վերդուն, Խուդուն, Ռուսեն, Կտավ, Օխնը, Կարապետի, Մալա, Ռուսեն, Ղաթ:

Մյուրիշենի հանդամասերն են՝ Սոնեն բաղ, Էրկան արտ, Ախնավ, Աղվաշ, Ճեխեն ծոր, Անձուղ արտ, Պառավ արտ, Արջեն պռակ, Քարեգ, Խուդուն չորքակ, Բաղուն գյոլ, Մոշին ակն, Բուդաղա վեղ, Ղուզուն կյումեր, Գունե կյումեր, Ղզարա բաղ:

Գյուղում շարունակում են ապրել Ասիրդայունց, Դայունց, Սահականց, Զաքունց, Պետունց, Խլափանց, Ավագանց, Առաքելանց, Իբունց, Մուլքումանց, Քոլունց, Մքելանց, Բաջունց, Դերունց, Սքանանց, Միսիրանց, Առուստամանց, ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, առևտրի 1 կետ:

1890-ական թվականներին գյուղում կար 31 տուն, 280 բնակիչ, 1989 թ.՝ 61 տուն, 187 բնակիչ[1081], 2018 թ.՝ 39 տուն, 126 բնակիչ[1082]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՄՍՄՆԱ

Գյուղը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում: Գյուղը տեղաբաշխված է Բովուրխան լեռնազանգվածից դեպի հարավ ձգվող Շոշկավանք լեռնաբազուկի հարավարևելյան լեռնալանջերի միջև:

Գյուղի սահմանային գոտով հոսում է Վարանդա գետի վտակը: Բնակավայրը 3 կողմից շրջապատված է անտառներով:

Բնակավայրի կազմավորման մասին ստույգ տեղեկություններ չկան: Գյուղի տարեցների կարծիքով Մսմնան հիմնադրվել է 15-16-րդ դարերում:

Մինչև վերոհիշյալ ժամանակաշրջանը Տնջրուն տակ տեղամասում և Մսմնայից ավելի բարձր՝ հյուսիսարևմտյան ուղղությամբ, գոյություն են ունեցել գյուղեր: Վերջինս ունեցել է Ղուզե, Ներքե Ղուզե, Վերին Ղուզե անունները: Նշված գյուղերից բնակիչները 15-16-րդ դարերում տեղափոխվել և հիմնադրել են ներկայիս բնակավայրը[1083]:

1651 թ. գյուղից հյուսիս, ըստ արձանագրության, Ուսեփ և Գևորգ վարպետները կառուցել են Շոշկավանքը: 1996-1997 թվականներին այն հիմնովին վերակառուցվել է Սամվել և Կարեն Բաբայանների կողմից:

19-րդ դարի երկրորդ կեսին գյուղում կառուցվել է Սբ. Ստեփանոս եկեղեցին:

Մսմնայի պատմության արժանահիշատակ էջերից մեկը գրվել է 1918 թ.: Նույն թվականի հոկտեմբերին 400 հոգուց բաղկացած թուրք-թաթարական մի զորամաս փորձել է Շուշիից Վարանդայի վրայով անցնել Կարյագինո՝ նպատակ ունենալով ավերել Դիզակն ու Վարանդան:

Հոկտեմբերի 17-ի երեկոյան թուրքերը հասել էին Մսմնա: Ժամանակ շահելու և ուժերը համախմբելու նպատակով Մսմնայի բնակիչները «հյուրասիրել» էին թուրքերին: Միաժամանակ սուրհանդակների միջոցով նրանք հարևան գյուղերի կամավորականներին իրադարձությունների ընթացքի մասին տեղյակ են պահել:

Դիզակի զորահրամանատար Արտեմ Լալայանը և կապիտան Արտեմ Պետրոսյանը անմիջապես համախմբել էին Դիզակի և Վարանդայի աշխարհազորայիններին և Ասլանիկին՝ Ասլան Մուրադխանյանին, հանձնարարել փակել թշնամու ճանապարհը: Առավոտյան թուրքերը, անցնելով Մսմնա և Կոլխոզաշեն գյուղերի տարածքները բաժանող գետը, հասել էին Կոլխոզաշենի Ջրատափեր դաշտը, որտեղ էլ հայկական ուժերը գլխովին ջախջախել են թուրքերին:

Այս հաղթանակը արցախահայության համար ոգևորիչ էր: Համաժողովրդական պայքար սկսվեց թուրք-մուսավաթական Ադրբեջանի զավթողական քաղաքականության դեմ:

1988 թ.՝ Արցախյան ազատագրական շարժման օրերին, պայքարի առաջնորդներից մեկի՝ Վաչագան Գրիգորյանի ջանքերով, հաղթական ճակատամարտի վայրում հուշարձան է կանգնեցվել:

Խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1929 թ., Մսմնայում կոլտնտեսություն է կազմակերպվել: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվեցին մենատնտեսություններ:

Տարբեր տարիների Մսմնայի կոլտնտեսությունը ղեկավարել են Կոստի Պետրոսյանը, Սոկրատ Հակոբջանյանը, Եսավ Սարգսյանը, Համլետ Բաղասյանը:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 85 մարդ, զոհվել է 55-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Արցախյան ազատագրական պատերազմին գյուղից մասնակցել է 11 ազատամարտիկ: Արթուր Գասպարյանը, Դավիթ Խաչատրյանը, Ռոմա Գրիգորյանը և Լեռնիկ Ծատրյանը մարտական գործողությունների ժամանակ զոհվել են: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի հետմահու արժանացել է Հրանտ Ծատրյանը:

1884 թ. Մսմնայում բացվել էր եկեղեցական-ծխական դպրոց: Ուսուցիչն էր Սերգի Տեր-Իսրայելյանը: 1896 թ., երբ ցարական կառավարության որոշմամբ փակվել էին հայկական դպրոցները, Մսմնայում շարունակում էր գործել կրթական օջախը:

1908-1909 ուսումնական տարում Մսմնայում բացվել է մեկդասյա երկսեռ ծխական դպրոց: Այն ուներ երկու բաժանմունք: Ուսուցիչն էր Մելիք Տեր-Գրիգորյանը:

1930 թ. գյուղում գործել է տարրական դպրոց, որը հետագայում ութամյայի կարգավիճակ էր ստացել: 2012 թ. կրթական հաստատությունը դարձել է Կոլխոզաշենի միջնակարգ դպրոցի մասնաճյուղը:

Տարբեր տարիների դպրոցը ղեկավարել են Ալվինա Ծատրյանը, Նունե Ուլուբյանը, Մարետա Հարությունյանը, Դիանա Սահակյանը:

2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 9 աշակերտ:

Ծագումով Մսմնայից են երգահան Անդրեյ Բաբաևը (Բաբայան), ԱՀ ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ, Արցախի հերոս Սամվել Բաբայանը, Գերագույն խորհրդի (ԱԺ) առաջին գումարման պատգամավոր, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ Հրանտ Խաչատրյանը, գրող, հրապարակախոս, ԱՀ Գլխավոր դատախազ Վլադիմիր Գասպարյանը:

Մսմնայի պատմամշակութային նշանակության հուշարձաններն են՝ Շոշկավանքը (1651 թ.), Սբ. Աստվածածին եկեղեցին (19-րդ դար), Փիստիկալեր և Շիլորու խաչ սրբավայրերը:

[1081] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 246:
[1082] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:
[1083] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

Գյուղի աղբյուրներն են՝ Շենին, Սպիտակ, Գյավալեն, Տնջրեն տակեն, Կուձուր, Մեծ, Կենուն:

Բնակավայրի հանդամասերն են՝ Խոտհարքը, Թքերնոտը, Փիստիկալերը, Ղումեն կլոխը, Տանձուն խութը, Թխկուն տափը, Ըրբաշ տափը, Գաղուկեն տափը:

Համայնքում շարունակում են ապրել Քսպարանց, Ծտորանց, Քալունց, Ազունց, Հուրունց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց:

Մսմնայում 1890-ական թվականներին կար 70 տուն, 490 բնակիչ[1084], 1987 թ.՝ 27 տուն, 74 բնակիչ[1085], 2018 թ.՝ 22 տուն, 72 բնակիչ[1086]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՄՈՒՇԿԱՊԱՏ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Բովուրխանի լեռնազանգվածից դեպի հարավ արևելք ձգվող լեռնաճյուղերից մեկի վրա գոյացած հարթակին:

Մուշկապատը՝ որպես բնակավայր, ձևավորվել է վաղ միջնադարում:

Հայտնի է, որ Ավարայրի ճակատամարտից հետո Հայաստանի տարբեր նահանգներում, այդ թվում՝ Արցախում ազատագրական պատերազմի նահատակների հիշատակին սրբատեղիներ են կառուցվել: Վարդան զորավարի անունը կրող մի մատուռ էլ կառուցվել էր Մուշկապատում:

Արցախի հնագույն այս բնակավայրը միշտ էլ ներգրավված է եղել ազատագրական պայքարի հորձանուտներում:

Ավանդությունը պատմում է, որ սղնախական պայքարի տարիներին Ավան հարյուրապետը գյուղից 1 կմ հեռավորության վրա ջախջախել է Վարանդայի կողմերում հայտնված ավարառու լեզգիներին: Այդ հաղթանակի մասին նա ժայռի վրա արձանագրություն է թողել, որը ներկայումս ծածկված է հողով: Վերոհիշյալ տեղամասը ժողովուրդը անվանել է Ավանա քար:

13-րդ դարում Մուշկապատում կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցին: 18-րդ դարի սկզբներին Մելիք Եգանի կողմից այն հիմնովին վերանորոգվել է: Շինարարական միջամտություններն այնքան շատ են եղել, որ երբեմն եկեղեցու կառուցման ժամանակաշրջան է համարվում 18-րդ դարը:

2017 թ. ծագումով մուշկապատցի բարերար Անդրեյ Մարտիրոսովի միջոցներով և ԱՀ կառավարության համաֆինանսավորմամբ վերանորոգվել է Սբ. Աստվածածին եկեղեցին:

19-րդ դարում Մուշկապատից մի քանի ընտանիքներ տեղափոխվել են Կոկիսոն (Գեոգ չայ) գավառ և հիմնել Դայմադաղը գյուղը[1087]:

Խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մուշկապատում 1930 թ. կոլտնտեսություն է կազմակերպվել: Տնտեսությունների խոշորացման տարիներին՝ 1951 թ., Մուշկապատի և Հաղորտու կոլտնտեսությունները միավորվել են:

1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվել են անհատական տնտեսություններ:

Տարբեր տարիների Մուշկապատի կոլտնտեսությունը ղեկավարել են Սերգեյ Մանգասարյանը, Աբրահամ Ստեփանյանը, Միշա Ասրիբաբայանը, Խաչատուր Ասրիբաբայանը, Միշա Սաղյանը, Ռուբեն Մուսայելյանը, Ամիր Առուշանյանը, Եղիշե Մարտիրոսյանը, Աշոտ Մուսայելյանը, Շահմուրադ Գրիգորյանը, Հրանտ Հովսեփյանը, Լևիտան Ավանեսյանը, Ռուդիկ Բաղդասարյանը:

Մուշկապատից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 272 մարդ, զոհվել է 127-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Մուշկապատի հայությունն իր արժանի ավանդն ունեցավ արցախահայ պետականության վերակերտման գործում: 1988 թ. գյուղում ստեղծվել է կամավորական ինքնապաշտպանական ջոկատ, որը 1991-1994 թվականների ռազմական գործողությունների ժամանակ ռազմաճակատի տարբեր հատվածներում հերոսաբար կռվել է թշնամու գերազանցող ուժերի դեմ:

Մարտունու պաշտպանական շրջանի գնդի շտաբի պետի պարտականությունները կատարում էր մուշկապատցի փոխգնդապետ ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանակիր Աբրիկ Հայրապետյանը:

Գնդապետ Կարեն Գրիգորյանն էլ հետագայում դարձավ Մարտունու երրորդ ՊՇ հրամանատար:

ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի արժանացել են Յուրի Բեգլարյանը, Աբրիկ Մուսայելյանը և Կարեն Գրիգորյանը:

Մուշկապատից 80 հոգի մասնակցել են ռազմական գործողություններին: 17 ազատամարտիկներ զոհվել են: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

1886-1887 ուսումնական տարում Մուշկապատում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց, որտեղ սովորում էր 20 աշակերտ, դասավանդում՝ 1 ուսուցիչ: Դպրոցը փակվել է 1896 թ. ու վերաբացվել 1907 թ.: Ուսուցիչն էր Առստամ Հովհաննիսյանը:

[1084] Մակար եպս. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 216:
[1085] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 234:
[1086] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:
[1087] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 102:

Դպրոցը 1930-ական թվականների վերջերին ստանում է յոթնամյայի, 1960-ական թվականներին՝ ութամյայի, իսկ 1985 թ.՝ միջնակարգի կարգավիճակ: 1981 թ. դպրոցական նոր հարմարավետ շենք է կառուցվել: «Մանկության առաքելություն» հայ-ֆրանսիական կազմակերպության կողմից 2005 թ. դպրոցը հիմնանորոգվել է:

1950-60-ական թվականներին դպրոցում սովորում էր 200 աշակերտ, 1970-80-ական թվականներին՝ 100, 1990-ական թվականներին՝ 80, իսկ 2018-2019 ուսումնական տարում՝ 50 աշակերտ, դասավանդում՝ 19 ուսուցիչ: 2002 թ. դպրոցը անվանակոչվել է Բագրատ Ուլուբաբյանի անունով:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Գրիգոր Ուլուբաբյանը, Համբարձում Կարապետյանը, Անդրեյ Մանգասարյանը, Համբարձում Հովսեփյանը, Ժենյա Եղյանը, Արմո Ուլուբաբյանը, Արմենակ Սարգսյանը, Արշավիր Հովհաննիսյանը, Միքայել Ուլուբաբյանը, Աստղիկ Սարուխանյանը, Մարուսյա Ուլուբաբյանը Արմենակ Սարգսյանը, Արշավիր Հովհաննիսյանը, Միքայել Ուլուբաբյանը, Սաշա Ավանեսյանը, Կամո Գրիգորյանը, Կամո Պետրոսյանը:

Ծննդով Մուշկապատից են գրող, պատմական գիտությունների դոկտոր, արցախահայ ազատագրական պայքարի ռահվիրաներից մեկը՝ Բագրատ Ուլուբաբյանը, գրող Արմո Լեոնենցը:

Գյուղի պատմամշակութային նշանակության հուշարձաններն են Սբ. Վարդան Մատուռը, Սբ. Աստվածածին եկեղեցին, Քմախաչին տակ, Ծրտախաչին յալ սրբատեղիները:

Գյուղի աղբյուրներն են՝ Շենին ջուր, Ցեխնե, Ցաղուբեն, Տկողնեն, Հաչալը, Թողլայեր, Ծվեն ծոր, Ծրվաձուր, Ցղուբեն, Շխրին, Շրշռան, Սիսեռ, Պիծի կետ, Առու կերակ, Ծլլոկ:

Մուշկապատի հանդամասերն են Քարատափը, Թաքուն բաղը, Բուստանա ծմակը, Մանգունց բաղը, Միալանց բաղը, Տժեր ծորը, Ետե հանդը, Համամեն յալը: Գյուղի տարեցները ասում են, որ Համամեն յալ հանդամասը կապված է Աղվանից Գրիգոր Համամ Արևելցի իշխանի անվան հետ:

Գյուղում շարունակում են ապրել Դդամանց, (Դադամյան, Դադալյան, Գրիգորյան, Պետրոսյան, Մուսայելյան, Հայրապետյան, Հովսեփյան, Առստամյան, Բալայան, Սարգսյան), Ուլուբաբանց (Ուլուբաբյան, Ասրիբաբյան, Հովհաննիսյան, Օհանջանյան, Ջհանգիրյան, Միրզաջանյան), Շթանանց (Ստեփանյան, Ավանեսյան), Ըթամանց (Բաբայան, Բեգլարյան), Սաղյանց (Սաղյան, Ալավերդյան), Ուլվանց (Դանիելյան, Աղաբեկյան), Բուղդունց (Սարգսյան, Փարամազյան, Մանգասարյան, Բալայան) ազգատոհմերի ներկայացուցիչները:

Մուշկապատում 19-րդ դարի սկզբներին կար 26 տուն, 1832-1833 թթ.՝ 152 բնակիչ, 1841 թ.՝ 125 բնակիչ, 1851 թ.՝ 250 բնակիչ, 1873 թ.՝ 469 բնակիչ, 1885 թ.՝ 706

բնակիչ, 1897 թ.՝ 762 բնակիչ, 1917 թ.՝ 1361 բնակիչ, 1921 թ.՝ 1002 բնակիչ[1088], 2018 թ.՝ 85 տուն, 302 բնակիչ[1089]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՆՆԳԻ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում:

Բնակավայրը տեղաբաշխված է Խոնաշենի վերին հոսանքի աջափնյա հարավահայաց լեռնալանջին: Գյուղը երեք կողմերից շրջապատված է հարավահայաց լեռներով: Ննգին արևմտյան մասից շրջափակված է Բովուրխանի, հյուսիսից՝ Ծառեխի, հարավից՝ Ղավախանի անտառածածկ սարերով: Միայն հարավարևելյան ուղղությամբ բնակավայրը ելք ունի դեպի հարթավայրը: Աշխարհագրական այս դիրքը գյուղին առանձնակի հմայք է հաղորդում: Բնակավայրով է անցնում Ստեփանակերտ-Մարտունի մայրուղին:

Վաղ միջնադարից սկսած Ննգիի վարչական տարածքում եղել են 12 փոքր գյուղեր՝ Եխծե հողը, Բյարգյուզանը, Արցախբյուրը, Քոլատակը, Շենի առաջը, Օխն աղբյուրը, Ըլաջու ձուրը, Մկնակերը, Թանակ աղբյուրը, Գոմերի հովիտը, Թառանց տունը և Նիգ շենը[1090]:

16-րդ դարի կեսերին, որոշ հանգամանքներից (այդ թվում՝ պաշտպանական) ելնելով, վերոհիշյալ գյուղերի բնակիչները հավաքվել են մեկ վայրում և հիմնել Ննգի գյուղը: Կարճ ժամանակահատվածում Ննգին դառնում է Խոնաշենի հովտի ամենախոշոր բնակավայրը:

Սահմանափակ քանակությամբ մշակովի հողատարածքների առկայության պայմաններում որոշ ընտանիքներ ստիպված են լինում տեղափոխվել այլ վայրեր: Այդ տրամաբանությամբ 18-րդ դարի վերջերին Ննգիից ոչ շատ մեծ հեռավորության վրա հիմնվել է Ննգիջան գյուղը, որն այսօր բնակեցված չէ: Տասնյակ ընտանիքներ տեղափոխվել են Բեխ կամ Կոկիսոն (Գեոգ չայ) գավառը և արցախի տարբեր բնակավայրերից գաղթած բնակիչների հետ միասին հիմնադրել Գանձակ, Քեշխուրդ, Գիրկ, Ռուշան, Վանքաշեն գյուղերը[1091]:

Արցախը Ռուսաստանի կազմ անցնելուց հետո Ննգին սեփականության իրավունքով տրվել է գեներալ Վ. Մադաթովին[1092]:

[1088] ԱրՊՀ հայագիտական կենտրոն: Նյութը ձեռք է բերվել ՀԱԱ-ից: Ըստ Մակար Բարխուդարյանի՝ 19-րդ դարի 90-ական թվականներին Մուշկապատում կար 83 տուն, 827 բնակիչ, տես՝ Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 218:

[1089] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

[1090] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 236:

[1091] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 104-107:

[1092] Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 111, գ. 36, վավ. 80, թ.1-3:

1858 թ. Նգիում կառուցվել է Սբ. Աստվածածին մայր եկեղեցին: Կառույցի պատի մեջ ագուցված է 1523 թ. խաչքար: Այս հանգամանքը հիմք է տալիս ասելու, որ նախկինում եկեղեցու տեղը կամ հարակից հատվածում շինություն է եղել, և այդ քարերը օգտագործվել են նոր եկեղեցու շինարարության ժամանակ: 1895 թ. Նգիչան գյուղում Գալուստ Գաբրիելյանի միջոցներով մեկ այլ եկեղեցի է կառուցվել[1093]:

Խոնաշեն գետն ի վեր 2 տասնյակից ավելի ջրաղացներ են կառուցվել, որոնց կիսավեր պատերը լուռ վկաներն են ոչ հեռավոր ժամանակների գյուղի բազմաբովանդակ կյանքի:

1915 թ. Հայոց Մեծ եղեռնի ժամանակ հայրենակիցներին օգնելու նպատակով Շուշիում գտնվող փախստականների օգնության կազմակերպությունները, համապատասխան պաշարներ կուտակելու նպատակով, Ասկերանում, Շուշում, Թաղավարդում, Նգիում ստեղծել են 5 աշխատակիցներից կազմված պարենի հավաքագրման բաժիններ, պահեստներ: Գյուղերում նշանակվել են գաղթականների հարցերով զբաղվող լիազորներ, բացվել բժշկական կետեր, բաղնիքներ[1094]:

Անհիշելի ժամանակներից Նգիում զարգացած էր բրուտագործությունը: Դրան նպաստել է գյուղի մոտակայքում գոյություն ունեցած կավի հարուստ հանքը:

Խորհրդային կարգերը Նգիի համար շահեկան ու հեռանկարային չէին: Վատ ապրելակերպը դրդում է, որ տասնյակ ընտանիքներ հեռանան հայրենի օջախներից: Դրան ամեն կերպ նպաստում էին Ադրբեջանի իշխանությունները: Այսպես, 1930 թ. Ադրբեջանի տարբեր շինարարական կազմակերպությունների համար Արցախից պետք է հավաքագրվեր 1000 բանվոր, մինչդեռ հաջողվել էր միայն 27 հոգու համոզել: «Կոմունիստ» թերթը դա գնահատել է որպես «օպորտունիստական վերաբերմունք և թերագնահատվել է այդ կարևոր գործը»: Որոշ գյուղերի՝ Խերխանի, Նգիի, Զարդանաշենի կոլտնտեսությունների վարչությունները հրաժարվել էին բանվորական ուժ տրամադրել[1095]: «Մեղավորներին» պատժելու նպատակով 1933 թ. հունիսի 21-ին ԱԽՍՀ ժողկոմխորհը Միր Ջաֆար Բաղիրովի ստորագրությամբ հատուկ որոշում էր կայացրել[1096]:

1929 թ. Նգիում կոլտնտեսություն է կազմակերպվել: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվել են անհատական տնտեսություններ:

Տարբեր տարիների Նգիի կոլտնտեսությունը ղեկավարել են Բագրատ Գասպարյանը, Եղիշե Նասիբյանը, Սերգեյ Հայրապետյանը, Սայի Ասրյանը, Երվանդ Սարգսյանը, Ներսես Հարությունյանը, Երվանդ Ղահրամանյանը, Հայրապետ Քամալյանը, Վոլոդյա Նասիբյանը, Գրիգոր Նասիբյանը, Սոկրատ Հարությունյանը, Գրիգոր Գալստյանը, Մայոր Աբրահամյանը:

[1093] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 217:
[1094] «Փայլակ», հմ. 48, 23 օգոստոսի, 1915:
[1095] «Կոմունիստ», 14 հոկտեմբերի, 21 հունիսի, 1931:
[1096] ԱՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 53, թ. 354:

Նգիից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 350 մարդ, զոհվել է 150-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

1874-1875 ուսումնական տարում Նգիում բացվել է նախակրթարան: 1880 թ. գյուղում գործում էր ծխական եկեղեցական դպրոց: Ուսուցիչն էր Գրիգոր Հովհաննիսյանը: 1896 թ. դպրոցը փակվում և վերաբացվում է 1905 թ.: Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և բաքվաբնակ նգեցիների միջոցներով:

Խորհրդային տարիներին Նգին ուներ ութամյա դպրոց: 1960-ական թվականներին դպրոցում սովորում էր 250-ից ավելի աշակերտ:

1980-ական թվականներին դպրոցն արդեն միջնակարգ էր:

2018-2019 ուսումնական տարում դպրոցն ուներ 38 աշակերտ, 14 ուսուցիչ:

Տարբեր տարիների Նգիի դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Վարդան Թովմասյանը, Քնարիկ Շումանյանը, Մովսես Գրիգորյանը, Գրիգորի Պետրոսյանը, Սոկրատ Հարությունյանը, Էլզա Իշխանյանը, Մանվել Հայրապետյանը, Ժենյա Աբրահամյանը, Ռաֆիկ Նարինյանը, Նելլի Գրիգորյանը:

Ծննդով և ծագումով Նգի գյուղից են Այսրկովկասում սոցիալ-դեմոկրատական շարժման հիմնադիրներից Բոգդան Կնունյանցը (նրա կիսանդրին այսօր կանգնեցված է գյուղի կենտրոնում), «Ռաբոտնիցա» ամսագրի առաջին խմբագիր, ԽՄԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ, ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի քաղբաժնի պետի տեղակալ, Հեռավոր Արևելյան ռազմական օկրուգի քաղբաժնի պետ, գեներալ-մայոր Փառանձեմ Կնունյանցը, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, գեներալ-մայոր Վալենտին Կնունյանցը, կոմպոզիտոր, երգահան Դանիել Ղազարյանը, ԱՀ մշակույթի վաստակավոր գործիչ Աշոտ Առաքելյանը:

Արցախյան ազատագրական պատերազմի տարիներին մարտական գործողություններին Նգիից մասնակցել է 72 ազատամարտիկ: Զոհվել է 8 ազատամարտիկ: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվել է Կամո Մարկոսի Քոչարյանը:

Նգի գյուղն ու նրա շրջակայքը հարուստ են պատմամշակութային նշանակության հուշարձաններով: Բովուրխան լեռան փեշերին է գտնվում Բովուրխանի վանք ամրոցը (17-18-րդ դարեր): Վանքը հիմնել էր Վարանդայի մելիք Բաղրը: Կարծիք կա, որ նրա անունով էլ վանքը անվանվել էր սկզբում Բաղրխան, այնուհետև հնչյունափոխվելով դարձել էր Բովուրխան:

Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցը գտնում էր, որ վերոհիշյալ վանքը անվանվել է Հովհաննես Ավետարանիչի աշակերտ Պրոխորոնի անունով[1097]:

Գյուղի հուշարձաններից են նաև 8-րդ դարում կառուցված Եղծահողի վանքը, 19-րդ դարի սկզբներին կառուցված Գրիգոր Լուսավորչի վանքը, Ծառեխի մատուռը, Սբ.

[1097] Սարգիս արք. Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 520:

Աստվածածին մայր եկեղեցին (1858 թ.), Նոգիջանի եկեղեցին (1895 թ.), 11-16-րդ դարերի խաչքարեր:

Բնակավայրի աղբյուրներն են՝ Ցորտ, Սահակեն, Ըլբլաղ, Ըրցախաղբյուր, Բալասանեն, Օրթեր, Պիծի ջուր, Անմահական, Զոքած, Ներքե, Քյութունց, Օխտը, Համբարձուն, Տանձուն, Բովուրխան, Վանքի, Ըլաջա ջուր, Ըզբաշի ջուր, Ակնեն տակը, Ծլլոկ, Նուվերեն ծորը, Դերունց, Ծուվերեն, Բլանց, Բաղեն, Ըրզմանանց, Բազեն, Ղզարանց, Անմահական, Կուր, Մկնակեր, Խաթունենց, Թանգ, Նոգիջանի:

Գյուղի հանդամասերն են՝ Նոգիջան, Արցախբյուր, Գյադուկ, Ղուզե, Մուկնակեր, Փերունց ջուր, Լյազգուց բաղ, Կարչովկա:

Նոգիում շարունակում են ապրել Միրզաբեկանց, Սփարանց, Արզումանանց, Թջումանց, Ղահրամանանց, Թլանց, Խառատանց, Ղավալանց, Բոնդունց, Քոչանց, Տանիանց, Քամալանց, Խաչունց, Ղալմաղալանց, Ղզարանց, Դաջալանց, Դերբրանանց, Պիծանանց, Մանգասարանց, Ղուշուջանց, Կյափունց, Լորթանց, Քոչարանց, Աննամունց, Նարինենց, Ներկարարանց, Սահականց, Համբարձումանց, Զեքունց, Քյարթունց, Սամսոնանց, Նասիբանց, Ղուլունց, Սաքանունց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Համայնքը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Նոգիում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, փոստ, առևտրի 1 կետ:

Նոգիում 19-րդ դարի սկզբներին կար 50 տուն[1098], 19-րդ դարի 90-ական թվականներին՝ 230 տուն, 1859 բնակիչ, 1989 թ.՝ 125 տուն, 464 բնակիչ[1099], 2018 թ.՝ 75 տուն, 280 բնակիչ[1100]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՆՈՐ ՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում:

Բնակավայրը տեղաբաշխված է Բովուրխան լեռնազանգվածից դեպի Մարտունի ձգվող լեռնաճյուղի արևելյան լեռնալանջին:

Ներկայիս բնակավայրը, համեմատած հարևան Աշան, Հացի գյուղերի հետ, նոր է և հիմնադրվել է 18-րդ դարում: Սակայն Նոր շենի մոտ պահպանված 10-12-րդ դարերի գերեզմանոցների մնացորդները, նույն շրջանի իշխանական պալատի ավերակները, 11-13-րդ դարերի խաչքարերի բեկորները վկայում են, որ այս վայրերում միջնադարում շեն և առանցքային նշանակության բնակավայր է եղել:

Նոր շենի տարեցների մոտ մի հուշ պատում է մնացել, ըստ որի՝ 18-րդ դարում Տրապիզոնում թուրքական իշխանությունները հայերի նկատմամբ բռնություններ են գործադրել: Նրանց մի մասը փրկվելու հույսով մահմեդականություն է ընդունել, իսկ մի քանի ընտանիքներ էլ արտագաղթել են:

Նրանց թվում էր Կարապետ Տեր-Կարապետյանցը: Նա սկզբում հասնում է Շուշի, այնուհետև տեղափոխվում Հացի գյուղ, որտեղ նրան մեծ պատվով ընդունել էր Ղարիբեկ Ղարիբեկյանցը: Նա իր հողերից որոշ կտորներ տրամադրել է Կարապետին: Վերջինս էլ այդ հողամասերում, որոնք գտնվում էին ներկայիս Նոր շեն գյուղում, գետնափոր կացարան է կառուցում:

Գյուղի հողը բերքառատ էր, և շուտով Կարապետ Տեր Կարապետյանցը, տնտեսապես ամրապնդվելով, երկհարկանի տուն է կառուցում: Նրա որդիները՝ Տեր Հովսեփը, Դանիել Բեկը, Միքայել Բեկը, առանձին տներ են կառուցում[1101]:

Նոր շենը դեպի իրեն էր ձգում նոր բնակիչների: Այստեղ հաստատվում են Ղարադաղից, Գյուլիստանից, Կուսապատից, Բանանցից, Ծամձորից[1102], Խաչենի Նորագյուղից մի քանի ընտանիքներ: Նոր բնակիչներն էին Վրթանանց, Օհանանց, Չփուռանց տոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը ստանում է Նոր շեն անունը: Համայնքի անդամները Շուշիից հրավիրում են վարպետ Գալուստ Սահակյանին: 1876 թ. Նոր շենում նա կառուցում է Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին: Հոգևոր տունը հիմնականում կառուցվել է Տեր Կարապետի 4 թոռների միջոցներով, իսկ նրանցից մեկը՝ Հակոբը, դարձել է եկեղեցու առաջին հոգևորականը:

Տասնամյակներ անց Կարապետ Տեր-Կարապետյանի շառավիղներից ստեփանակերտաբնակ Կոմիտաս Կարապետյանի աջակցությամբ 2013 թ. վերանորոգվել է Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին: Կարապետ Տեր-Կարապետյանի աճյունը ամփոփված է Հացիի Բոի եղծե վանքի ներսում:

Նոր շենում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1929 թ., գյուղում կոլտնտեսություն է կազմակերպվել: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո կոլտնտեսականները դարձել են մենատնտեսներ:

Նոր շենից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 141 մարդ, նրանցից 88-ը զոհվել է: Գյուղում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձան է կառուցվել:

Արցախյան ազատագրական պատերազմին իրենց մասնակցությունն են բերել Նոր շենի հասարակության ներկայացուցիչները: Ռազմական գործողություններին մասնակցել է 56 մարդ, զոհվել է 12-ը:

[1098] Նույն տեղում:

[1099] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 237:

[1100] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

[1101] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1102] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 208:

ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվել են գեներալ-մայոր Կամո Վարդանյանը և Ալյոշա Դանիելյանը:

1870-ական թվականներին Նոր շենում գործել է 15 աշակերտով նախակրթարան[1103]: 1874-1875 ուսումնական տարում բացվել էր եկեղեցական ծխական դպրոց: 1880-1890-ական թվականներին ցարական վարչակարգի ճնշումների տակ դպրոցը մի քանի անգամ փակվել և նորից բացվել է: 1908 թ. մեկդասյա երկսեռ դպրոցում սովորում էր 60 աշակերտ:

Ուսուցիչն էր Գրիգոր Թևագյանը: Դպրոցը պահվում էր բաքվաբնակ նորշենցի Բաղդասար Հակոբյանի միջոցներով և աշակերտների ուսման վարձով:

Խորհրդային կարգերի հաստատվելուց հետո 1924 թվականից Նոր շենում գործել է տարրական դպրոց: 1936 թ. այն ստացել էր յոթնամյայի, իսկ 1960 թ.՝ ութամյայի կարգավիճակ:

1960 թ. Նոր շենի և Հացիի աշակերտների համար երկու գյուղերի արանքում կառուցում են նոր դպրոցական շենք: Արցախյան պատերազմի տարիներին այն ծառայել է որպես շտաբ:

2015-2016 ուսումնական տարում դպրոցը տեղափոխվել է գյուղում կառուցված նոր շենքը: 1989 թ. դպրոցը միջնակարգի կարգավիճակ է ստացել: 2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 54 աշակերտ, դասավանդում՝ 22 ուսուցիչ:

Տարբեր տարիների Նոր շենի դպրոցի տնօրենի պաշտոնը վարել են Շահեն Հովհաննիսյանը, Աշխեն Պետրոսյանը, Ռիգանա Օհանջանյանը, Արթուր Անտոնյանը, Սուսաննա Աբրահամյանը:

Նոր շենի դպրոցի շրջանավարտներ են գրողներ Լեոնիդ Հուրունցը, Կոմիտաս Դանիելյանը, ԼՂԻՄ ժողկոմիսար Շահեն Պողոսբեկյանը, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Սողոմոն Սեյրանյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լավրենտ Հովհաննիսյանը, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Պողոսյանը, գեներալ-մայոր Կամո Վարդանյանը:

Համայնքի պատմամշակութային նշանակության հուշարձաններն են Սբ. Հովհաննես եկեղեցին (19-րդ դար) և կամուրջը (1912 թ.): Գյուղի աղբյուրներն են Երե քյահրիզը, Շենին ջուրը, Շրշռանը, Ներքե քյահրիզը, Սփարանց ջուրը:

Նոր շենի հանդամասերն են Շըտրլան, Քարեն առաջը, Մեծ սարեն հետևը, Փոքր սարեն հետևը, Խրմհատները:

Գյուղում շարունակում են ապրել Վրթանանց, Վանիսամունց, Օհանանց, Ասրունց, Ամունց, Դիլլաքանց ազգատոհմերի ներակայացուցիչները:

Համայնքը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

[1103] Երիցյան Ա., Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1898, էջ 184:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, միջնակարգ դպրոց, հանդիսությունների սրահ, Ղարաբաղ տելեկոմի սպասարկման կետ, առևտրի 2 կետեր:

Նոր շենում 19-րդ դարի 90-ական թվականներին կար 70 տուն, 477 բնակիչ[1104], 1987 թ.՝ 123 տուն, 442 բնակիչ[1105], 2018 թ.՝ 86 տուն, 302 բնակիչ[1106]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Նորշենցիների համար աշխատավայր է հանդիսանում նաև գյուղի մոտ գտնվող սպիտակ մարմարի հանքը:

ՇԵԽԵՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում:

Բնակավայրը տեղաբաշխված է Վարանդա գետի աջափնյակում՝ Ղաշար քար լեռան անտառապատ մեղմ թեքություն ունեցող լանջին՝ Ստեփանակերտ-Հադրութ մայրուղու միջնամասի աջ կողմում, Հադրութի վարչական շրջանի սահմանին:

Տեղաբնիկների վկայությամբ գյուղը նախկինում ունեցել է Գառնաքար անունը:

10-17-րդ դարերում հին գյուղը տեղաբաշխված էր ներկայիս բնակավայրի հարավային կողմում գտնվող բարձունքում: Մինչև 19-րդ դարի վերջերը լավ վիճակում պահպանվում էին հին գյուղատեղի մնացորդները, հանգստարանը և մատուռը: Վերջինս ուներ 1604 թ. շինարարական արձանագրություն[1107]: Այդտեղ գտնվել է նաև 12-րդ դարի խաչքար:

17-րդ դարի վերջերին անհայտ պատճառներով բնակիչները հեռացել են իրենց գյուղից: Մի քանի ընտանիքներ հաստատվել են իրենց բնակավայրի հարևանությամբ գտնվող Ղաշար քար լեռան լանջին: Այդտեղ էլ հիմնվեց ներկայիս Շեխեր գյուղը:

19-րդ դարում Թաղլարից և Ավետարանոցից մի քանի ընտանիքներ նույնպես հաստատվել են Շեխերում, որոնց ժառանգները առայսօր ապրում են գյուղում:

Գյուղի ծերերի պատմածով 18-րդ դարի առաջին կեսին Շեխերում եկեղեցի է կառուցվել, որի մնացորդները չեն պահպանվել: Տեղաբնիկների հիշողության մեջ այն մնացել է որպես Քոհնա եղցե:

19-րդ դարում կառուցվել է Նահատակ Վարդան սպարապետի անունը կրող Սբ. Վարդան եկեղեցին: Խորհրդային տարիներին այն հիմնովին ավերվել է: Այսօր նախկին եկեղեցու բակում է գտնվում գյուղի գերեզմանոցը: Այն կոչվում է Եղցուն տոռնը:

[1104] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 224:
[1105] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 242:
[1106] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:
[1107] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 205:

20-րդ դարի սկզբները Շեխերի համար ծանր ժամանակներ էին: Գտնվելով թաթարաբնակ Ղաջարի (Ջիվանի) հարևանությամբ՝ 1905-1906 թվականներին գյուղը հայտնվել էր հայ-թաթարական ընդհարումների կիզակետում: Արցախյան ազատագրական շարժման տարիներին Շեխեր և Ղաջար գյուղերի սահմանում գտնվող Սրկվուլուն խութ բարձունքում 1905 թ. փորված խրամատները նորոգվեցին և կազմակերպվեց գյուղի պաշտպանությունը:

1905 թ. թշնամուն մոլորեցնելու նպատակով ինքնապաշտպանական ջոկատի մարտիկները առաջին և երկրորդ դիրքերը ազատ էին թողել և երկրորդ խրամատում դիրքավորվել:

Թաթար ավազակախմբերը Մեշադի Բեհբուդի հրամանատարությամբ, ստեղծված կացությամբ ոգևորվելով, որոշեցին սրընթաց գրոհով անմիջապես մտնել գյուղ: Պաշտպանները երրորդ դիրքից համազարկով ոչնչացրին գրոհողներին: Սպանվեց նաև Մեշադի Բեհբուդը:

Ինչ չկարողացան անել թուրքերը, առանց դիմադրության կատարեց կոզակներից բաղկացած զորաջոկատը: 1905 թ. մարտին 400 զինվորներից և կոզակներից բաղկացած մի զորագունդ՝ չորս թնդանոթներով, փոխգնդապետ Վիվերնի, գավառապետ Ֆրեյլիխի, սպաներ՝ Բիրկիվլկինի, Հաջիևի հաշտարար միջնորդ Երմոլաևի և պրիստավ Ֆիտինի գլխավորությամբ մտավ Վարանդայի և Դիզակի գավառները:

Նրանք ամենադաժան կերպով թալանեցին հայկական բնակավայրերը, այդ թվում՝ Շեխերը[1108]: «Մարդկանց տանջելը տեղի է ունեցել Թաղ, Տող, Ազոխ, Շեխեր, Սոս, Գիլնեյ Ճարտար, Գիլդելու և Չարաղ գիլդերում»- գրել էր ժամանակակիցը[1109]:

Ծանր էր նաև Շեխերի վիճակը խորհրդային առաջին տարիներին՝ 1920-30-ական թվականներին: Բռնությունների ենթարկվեցին ազնվական ծագում ունեցող ընտանիքի ներկայացուցիչները: 85-ամյա Բախշի Ավշարյանին՝ որպես Մելիք-Շահնազարյանների ազգակցի, ընտանիքի 20 անդամների հետ 1928 թ. Շեխերից աքսորել են Շամախի գավառը: Նա 1930 թ. մայիսի 10-ին Ադրբեջանի Կենտգործկոմին նամակով խնդրում է թույլ տալ՝ վերադառնա հայրենի գյուղ և մահանալ այնտեղ[1110]:

1930 թ. Շեխերում կազմակերպվել է Կիրովի անվան կոլտնտեսությունը: 1963 թ. վերոհիշյալ կոլտնտեսության կարգավիճակը փոխվել և ներառվել է Կարմիր շուկայի սովխոզի կազմը:

1988 թ. ապախոշորացումից հետո Շեխերի կոլտնտեսությունը վերակազմակերպվել է: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվեցին անհատական տնտեսություններ:

[1108] Բալայան Վ., Դրվագներ ..., էջ 65-66:
[1109] «Արշալույս», հմ. 69, 30 մարտի, 1906:
[1110] ԱՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 2. գ. 23, թ. 30-31:

Տարբեր տարիների Շեխերի կոլտնտեսությունը ղեկավարել են Գարեգին և Ավետիս Ղուլյանները, Մանվել Ավագյանը:

Շեխերից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 130 մարդ, զոհվել է 56-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Արցախյան ազատագրական պատերազմի տարիներին գյուղի չափահաս բնակչությունը մեկ մարդու նման լծվեց ԱՀ պաշտպանության գործին: Դեռևս 1988-1989 թվականներին գյուղում կազմակերպվել է 60 հոգուց բաղկացած ինքնապաշտպանական ջոկատ, որը հետագայում Մարտունու պաշտպանական շրջանի գնդի կազմում հերոսական կենսագրություն է կերտել: Վաշտի հրամանատարն էր Գավրիլ Միրզոյանը: Գյուղից 4 ազատամարտիկներ՝ Գավրիլ Միրզոյանը, Էդիկ Ամիրջանյանը, Վանյա Միրզոյանը, Կիմա Ավշարյանը զոհվել են: Հետմահու Գավրիլ Միրզոյանը արժանացել է ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի ասպետ է դարձել նաև Վլադիկ Ավանեսյանը:

19-րդ դարի 80-ական թվականներին Շեխերի Սբ. Վարդան եկեղեցուն կից գործել է դպրոց, որտեղ 10 աշակերտ էր սովորում: 1888-1889 ուսումնական տարում, կաթողիկոսի թույլտվությամբ, գյուղում բացվել է եկեղեցական ծխական դպրոց: Ուսուցիչն էր Տեր Առաքել քահանան: 1896 թ. դպրոցը փակվել է և վերաբացվել՝ 1908 թ.: Մինչև խորհրդային տարիները վերոհիշյալ կրթօջախը գործել է:

1925 թ. Ջարդանաշեն գյուղից Մարտիրոս Սարյանը Շեխերի բնակիչ Բալա Ավշարյանի տանը տարրական դպրոց է բացել: 1930-1931 ուսումնական տարվանից դպրոցը ստացել էր յոթնամյայի, 1961-1962 ուսումնական տարվանից՝ ութամյայի, իսկ 1990-1991 ուսումնական տարվանից՝ միջնակարգի կարգավիճակ:

2002 թ. Ֆրանսահայ բարերարներ Կարպիս և Նիկոլ Նիկողոսյանների հովանավորությամբ գյուղում նոր դպրոցական շենք է կառուցվել:

2010 թ. Ֆրանսահայ համայնքի կողմից նոր մարզադահլիճ է կառուցվել:

2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 71 աշակերտ, դասավանդում՝ 23 ուսուցիչ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Գրիգոր Ղուլյանը, Լյովա Աղավելյանը, Կարո Ավշարյանը:

Շեխերում պահպանվել են համեմատաբար քիչ քանակությամբ պատմամշակութային նշանակության հուշարձաններ, դրանք են Փիր Բաբա, Մատուռի վրա (1604 թ.) սրբատեղիները, միջնադարյան մի քանի խաչքարեր:

Գյուղի աղբյուրներն են՝ Օխտը, Ղուզե բաղ, Գյոլ, Թամամեն, Հաղթանակ, Խաչին:

Համայնքի հանդամասերն են՝ Ղզախեն դարա, Ղուլունց յալ, Դավալուն տափ, Պետրոսեն տափ, Սրկվիլուն խութ, Խմհատ:

Գյուղի շրջակայքի անտառներն են՝ Շլորի գյոլ, Սիսեռեն աղբյուր, Շահաղլու:

Համայնքը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքը ունի գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, հանդիսությունների սրահ, փոստ, առևտրի 2 կետ:

Շեխերում 1890-ական թվականներին կար 65 տուն, 354 բնակիչ[1111], 1987 թ.՝ 96 տուն, 336 բնակիչ[1112], 2018 թ.՝ 92 տուն, 327 բնակիչ[1113]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Գյուղում կա նաև գինու արտադրամաս, որտեղ նույնպես աշխատում են Շեխերի բնակիչները:

ՊԱՌԱՎԱԹՈՒՄԲ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում:

Բնակավայրը տեղաբաշխված է Ստեփանակերտ-Մարտունի մայրուղու միջնամասի ձախակողմյան մասում՝ Բովուրխանի լեռնազանգվածից սկիզբ առնող և դեպի արևելք ձգվող լեռնաձյուղերից մեկի գոգավորությունում:

Համայնքի վարչական տարածքի հարավային սահմանային գոտով՝ Ննգիջանի կողքով, հոսում է Խոնաշեն գետը: Հյուսիս-արևմուտքում սահմանային վերջնակետը Պուլուր թումբ կոչված բլրի եռանկյունին է, որտեղ սահմանազատվում են Պառավաթումբ, Ննգի, Կաղարծի համայնքների վարչական տարածքները: Արևմուտքում և հարավարևմուտքում սահմանակից է Ննգու վարչական տարածքին, հյուսիսում և հյուսիսարևելքում՝ ընդհուպ մինչև Խոնաշենի և Տնջրիի ջրկիցը, սահմանակից է Կաղարծի համայնքին:

Գյուղի հիմնադրման մասին ավանդազրույց է պահպանվել, ըստ որի՝ 17-րդ դարի կեսերին Սյունիքի Պառավաթումբ գյուղի արհեստավորները Վարանդայի մելիքի հրավերով աշխատել են երկրամասում: Արցախում բնակվելու համար նրանք մելիքից տարածք են խնդրել: Մելիքը որոշել էր նրանց խնդրանքը կատարել և տարածք էր հատկացրել Ննգու համայնքի հողահանդակներից: Նրանք նոր բնակավայրը անվանակոչել են Պառավաթումբ: 1720-ական թվականներին Ավան հարյուրապետի հետ Շաքիի և Շամախու հայկական բնակավայրերից որոշ ընտանիքներ տեղափոխվել և մասնակցել են սղնախական պայքարին: Նրանք հետագայում հաստատվել են Արցախում, այդ թվում՝ Պառավաթումբում: Ի դեպ, նրանց մեծ մասը ժամանակին Արցախից էին տեղափոխվել:

Բնակավայրը նախկինում կրել էր նաև Բարբատում անվանումը: Ըստ Մակար Բարխուդարյանի, գյուղի բնակիչները այստեղ հաստատվել էին Մեծ Սյունյաց

[1111] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 206:
[1112] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 227:
[1113] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

Պղնձահանք վայրից[1114]: Իրականում Կապանի մոտակայքում գոյություն է ունեցել փոքր բնակավայր, որը կոչվել է Բարբատում:

Ա-Դօն գյուղը ներկայացրել է Բռաթումբ անունով[1115], որը ցույց է տալիս, որ Պառավաթումբ-Բարբատումը իրականում Բռաթումբի աղավաղումն է[1116]:

Գյուղի անվան հետ կապված մեկ այլ ավանդազրույց էլ պատմում է, որ ժամանակին մի զորաբանակ էր անցնում բնակավայրի մոտակայքով: Հրամանատարը գյուղի պառավներից մեկին առաջարկել է զինվորներին հաց տալ, բայց նա հրաժարվել է: Այդ ժամանակ հրամանատարը զինվորներին հրամայել է պառավին ծածկել հողով: Առաջացած հողաթմբից էլ գյուղը ստացել է Պառավաթումբ անունը[1117]:

19-րդ դարում Պառավաթումբում կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցին: Խորհրդային տարիներին եկեղեցին վերածվել էր մշակույթի տան, այնուհետև կոլտնտեսության պահեստի: 1936 թ. եկեղեցու հիմքերի վրա կառուցվել է երկրորդ հարկ, որը ծառայում էր որպես տարրական դպրոցի շենք:

1905-1906 թվականներին հայ-թաթարական ընդհարումների, ինչպես նաև 1918-1920 թվականների ինքնապաշտպանական մարտերի ժամանակ Պառավաթմբի երիտասարդները ներգրավված էին Արցախի կամավորական խմբերի կազմի մեջ:

Խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Պառավաթումբում 1930 թ. կոլտնտեսություն է կազմակերպվել: Խոշորացման տարիներին այն միացվել է Կաղարծու կոլտնտեսությանը: 1988 թ. կոլտնտեսությունը ապախոշորացվել է: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվել են անհատական տնտեսություններ:

Տարբեր տարիների կոլտնտեսությունը ղեկավարել են Ռադիկ Ավագյանը, Ավանես Համբարձումյանը, Ներսես Ավանեսյանը, Ավանես Ավագյանը, Ալեքսանդր Հայրապետյանը: Պառավաթումբից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 108 մարդ, 46-ը՝ զոհվել է: Նրանց հիշատակին հուշարձան է կանգնեցվել:

Արցախյան ազատագրական շարժման առաջին տարիներին գյուղում ինքնապաշտպանական ջոկատ էր կազմակերպվել: Մարտական գործողություններին մասնակցել են 43 ազատամարտիկներ: 8 ազատամարտիկներ զոհվել են: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի են արժանացել Շիրազ Կոլյայի Առստամյանը և Սլավիկ Գրիգորի Ջավադյանը:

Պառավաթումբում 1895 թ. բացվել է եկեղեցական ծխական դպրոց: 1896 թ. այն փակվել է և վերաբացվել 1909 թ.: Ուսուցիչն էր Տիրան Ուլուբաբյանը:

1936 թ. գյուղում տարրական դպրոց է բացվել: Հետխորհրդային տարիներին Պառավաթումբի կրթօջախը դարձել էր Կաղարծու միջնակարգ դպրոցի մասնաճյուղը:

[1114] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 217:
[1115] Ա-Դօ, նշվ. աշխ, էջ 171:
[1116] Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 75:
[1117] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 349:

Տարբեր տարիների Պառավաթումբի դպրոցի վարիչներ են աշխատել Վանյա Սարգսյանը, Միքայել Հովհաննիսյանը, Միքայել Հայրապետյանը, Գոհար Սարգսյանը, Ռոզա Սայիյանը:

Ծննդով Պառավաթումբից է Խորհրդային միության հերոս Իվան Շահումյանը:

Համայնքի տարածքում առկա է մեկ աղբյուր՝ Մագուն, որը կառուցվել է 1947 թ.:

Գյուղի հանդամասերն ու անտառներն են՝ Շինատեղ, Ափունց, Բաղունց, Դերունց, Ջհանգիրանց, Գյուլբուդաղ, Սարգիս բեկի տափ, Գունե Մանասի բաղ, Խնձորի բաղ, Ղուզե հանդամաս, Մեծ ծմակ, Դերունց ծմակ, Ասլանի ծմակ, Սարգիս բեկի ծմակ, Պյուլուր թումբի ծմակ:

Բնակավայրում շարունակում են ապրել Բաղունց, Տիրզիգանց, Ափունց, Ղլեչունց, Դերունց, Սաքունց, Բալունց, Փափախչունց, Յուզուլանց, Բաղասյանների, Գևորգյանների ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում կան գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց:

Պառավաթումբում 1885 թ. կար 40 տուն[1118], 1901 թ.՝ 250 բնակիչ[1119], 1987 թ.՝ 51 տուն, 153 բնակիչ[1120], 2018 թ.՝ 36 տուն, 122 բնակիչ[1121]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՍԱՐԳՍԱՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Վարանդա գետի վերին հոսանքի աջափնյակում՝ վերոհիշյալ գետի և վերջինիս վտակ Լվացի միջև գտնվող գեղատեսիլ լեռնահովտում:

Սարգսաշենը Արցախի հնագույն բնակավայրերից է:

Խոր հնադարում գյուղը տեղաբաշխված էր ներկա բնակավայրից 1-1,5 կմ հեռավորության վրա գտնվող Վանքի խութ, Եիծուն խութ կամ Շինատեղ կոչվող վայրերում:

Ավանդությունը պատմում է, որ 3 եղբայրներ՝ Փիրումը, Սարոն և Սարգիսը, վերոհիշյալ բնակավայրից 17-րդ դարի սկզբներին հեռանում և Վարանդա գետի ձորակում հիմնում են Փիրումաշեն, Սարուշեն և Սարգսաշեն գյուղերը[1122]: Ներկայումս Փիրումաշենը անմարդաբնակ է, կանգուն է միայն միջնադարյան եկեղեցին:

[1118] Հայկունի, նշվ. աշխ., էջ 84:
[1119] Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 405:
[1120] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 241:
[1121] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:
[1122] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

Սարգսաշենի հարևանությամբ՝ գյուղից արևելք, ուր Վարանդա և Լվաց գետերը միախառնվելով ստեղծում են խորունկ ձորերով անջատված մի փոքրիկ հրվանդան, գտնվում է Խաչին հարթ (Ջաղադուզ) ամրոց-բնակատեղին: Այն գոյատևել է Ք. ա. 3-րդ դարից մինչև Ք. հ. 3-րդ դարը:

Նշանավոր է նաև Յոկու բնակավայրը, որի կենտրոնական մասում գտնվող գերեզմանոցում պահպանվել են եկեղեցու հիմնապատերի հետքեր և հողի մեջ կիսաթաղ մի խաչքար:

Սարգսաշենի գերեզմանատանն են գտնվում Սյունիքի ազատագրական պայքարի առաջնորդ՝ Դավիթ Բեկի զորապետներից մեկի՝ Տեր-Ավետիսի թոռ Պետրոս իշխանի գերեզմանաքարն ու տոհմական գերեզմանոցը: Իշխանի սրբատաշ գերեզմանաքարին արձանագրված է «Հանգիստ թոռան Սիւնեաց զորավար քաջ մարտիկ Տեր Ավետիքին Պետրոս իշխանին որէ որդի Հայրապետին հանգաւ ի Տեր 1814»[1123]:

19-րդ դարի որոշ աղբյուրներում Սարգսաշենը ներկայացված է նաև Ջաղադուզ[1124] և Ջաղաջուր[1125] անվանումներով:

Սարգսաշենի պատմության 19-րդ դարի իրողություններում կարևոր տեղ ունեն մոտ երկու տասնյակի հասնող ջրաղացները: Դրանք տեղաբաշխված էին Վարանդա և Լվաց գետերի վրա ու ապահովում էին ոչ միայն գյուղի ու շրջակա բնակավայրերի, այլ նաև Շուշիի օրեցօր աճող բնակչության կարիքները: Դրանից առավել հայտնի էին Աղանց, Ասլանանց, Սաքունց, Բղերանց, Կկառանց, Ափունց, Խունցունց, Տվիթանց, Ըվրգիմանց, Հրմբրցումանց, Խուրդանց, Միրզաբեկանց, Հակոբջանանց ջրաղացները: Կանգուն ու գործուն է միայն Աղանց ջրաղացը, որը արցախյան ազատագրական պայքարի տարիներին՝ շրջափակման պայմաններում, անգնահատելի դերակատարություն է ունեցել բնակչության համար:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Սարգսաշենում ապրել է Մելիք Շահնազարյան տոհմի շառավիղներից մեկը՝ Ալիկո Շահնազարյանը (Աղան), որը մեծ հարգանք է վայելել ժողովրդի շրջանում և նպաստել է գյուղի զարգացմանը:

Սարգսաշենի ազգաբնակչությունը 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին պայքարել է ինչպես թուրքերի, այնպես էլ ցարական չինովնիկների հակահայկական քաղաքականության դեմ:

1909 թ. ամռանը Շուշիի ցարական պրիստավի նկատմամբ ահաբեկչական գործողությանը մասնակցելու համար Սարգսաշենի տանուտեր Բեգլար Խաչատրյանի որդուն՝ դաշնակցական Սերգեյ Բեգլարյանին, դատապարտել էին տասը տարվա տա-

[1123] Նույն տեղում:
[1124] Описание Карабахской провинции, составленное в 1823 г., с.174, հմմտ. Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 79:
[1125] ЦГИА РФ. Санкт Петербургское отделение, Первая всеобшая перепись населения Российской империи, 1897 г., ф. 1290, оп. 4, д. 449, հմմտ. Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 79:

ժանակրության: Նա բանտարկված էր Պետրոգրադի Պետրոպավլովյան բերդում: 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո նրան ազատ են արձակել[1126]:

Սարգսաշենում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1930 թ., կոլտնտեսություն է կազմակերպվել: 1960 թ. վերոհիշյալ կոլտնտեսությունը ներգրավվել էր Կարմիր շուկայի խորհրդային տնտեսության կազմի մեջ: 1988 թ. տնտեսությունների ապախոշորացումից հետո ստեղծվել էր Սարգսաշենի կոլտնտեսությունը: 1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ձևավորվեցին անհատական տնտեսություններ:

Տարբեր տարիների Սարգսաշենի կոլտնտեսությունը ղեկավարել են Մարգարա Սարգսյանը, Սիմոն Արզումանյանը, Շիրին Բաբայանը, Կաղլեն Ասլանյանը:

Սարգսաշենից 214 մարդ մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, նրանցից 74-ը զոհվել է: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Սարգսաշենի ազգաբնակչությունը արցախյան պատերազմում հաղթանակի կերտման գործում իր արժանի ներդրումն ունեցավ: 43 ազատամարտիկներ մասնակցել են ռազմական գործողություններին: Նրանցից 10 ազատամարտիկներ նահատակվել են: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվել են Արտյուշա Մկրտումյանը՝ հետմահու և Գարիկ Գրիգորյանը:

1894 թ. Սարգսաշենում բացվել էր եկեղեցական ծխական դպրոց, որտեղ սովորում էր 22 աշակերտ, դասավանդում՝ 1 ուսուցիչ: 1895 թ. դպրոցը փակվել է և վերաբացվել 1908 թ.: Ուսուցիչն էր Վահան Տեր-Հայրապետյանը:

Խորհրդային տարիներին Սարգսաշենում գործում էր քառամյա դպրոց, 1935 թ. այն դարձել էր յոթնամյա, իսկ 1961 թ.՝ ութամյա: 1961 թ. գյուղում կառուցվել է երկհարկանի դպրոցական շենք: 1991 թ. դպրոցը դարձել է միջնակարգ:

2018-2019 ուսումնական տարում Սարգսաշենի դպրոցում սովորում էր 60 աշակերտ, դասավանդում՝ 23 ուսուցիչ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Ե. Շահրամանյանը, Մ. Ավետիսյանը, Վ. Միրզոյանը, Վ. Դավթյանը, Ա. Արզումանյանը, Ժ. Ստեփանյանը, Գ. Ստեփանյանը:

Սարգսաշենի պատմամշակութային նշանակության հուշարձաններն են՝ Խաչին հարթ (Ջաղադուզ) ամրոց բնակատեղին (Ք. ա. 3-րդ դար — Ք. հ. 3-րդ դար), Սբ. Աստվածածին եկեղեցին, որն ավերվել է 1960-ական թվականներին, խաչքարեր, (11-12-րդ դարեր), հին գերեզմանատներ:

Ընդհանուր առմամբ Սարգսաշենի միջնադարյան գերեզմանատներում պահպանված տապանաքարերի քանդակներն ու նախշազարդերը մեզ հարուստ նյութ են տալիս մեր նախնիների հարուստ մշակույթի, կենցաղի, սովորույթների մասին:

[1126] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 282:

Դրանց մեջ կարելի է հանդիպել եզներով, արորով, գութանով վար ու ցանքի, արհեստ խորհրդանշող պատկերներ, հեծյալներ, բազմաբովանդակ զարդաքանդակներ:

Սարգսաշենի մշակութային հարստություններից են համարվում նաև բնական հուշարձանները, հատկապես քարանձավները, ջրվեժները:

Գյուղի աղբյուրներն են՝ Շենին, Տանձի, Շրշոան, Ակնը, Միջնակեն, Տնջրուն, Մարկոսեն, Սալ, Ասլանանց:

Գյուղի հանդամասերն են՝ Շրշոանեն գլուխ, Աղեն բաղը, Աղեն տափը, Շլորու վեղերը, Քաչալ խութը, Կկառանց թաղը, Տուդունց տափը, Միրզուն ծովը, Դերին բաղը, Ծուվերը, Սաքունց տափը, Բուլվանց ձորը, Խուրդանց բաղը, Միջնակեն ձորը, Բաղեն գլուխը, Գյունեն, Հայրի ամունց Գյունեն, Ափունց կաղնուտը, Արթունանց ծմակը, Ասլանանց տափը, Ասլանանց ծմակը, Ղըրանց քոլը, Պառավ արտը, Գադուկը, Խորթնավարը, Խանձած արտը, Քահրիզին դարան:

Գյուղում շարունակում են ապրել Սաքունց, Ջիվանանց, Միրզաբեգանց, Հակոբջանանց, Բղերանց, Կկառանց, Բուշանց, Օրախանունց, Խչտորանց, Քյուխանց, Սղամալանց, Տվիթանց, Տուդունց, Թունունց, Ասլանանց, Վիլիջանանց, Բուշանց, Արթունունց, Արզիբաբունց, Ներսեսանց, Ղվենդանց, Նոյամանց, Խուրդանց, Բաբաջանանց, Խաչունց, Ափունց, Բուլվանց, Դարզունց, Համբարձումանց, Քռանց, Ըվրգիմանց, Ղրանց, Կըրբեղանց, Խունցունց, Բուրչունց, Նուխվեցունց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Համայնքը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են: Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, ձեթի գործարան, առևտրի 1 կետ:

Սարգսաշենում 19-րդ դարի վերջերին կար 90 տուն, 579 բնակիչ[1127], 1921 թ.՝ 136 տուն, 725 բնակիչ, 1989 թ.՝ 66 տուն, 235 բնակիչ[1128], 2018 թ.՝ 61 տուն, 275 բնակիչ[1129]:

Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Բնակչության մի մասն էլ աշխատում է ձեթի գործարանում:

ՍՈՍ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում:

Բնակավայրը տեղաբաշխված է Լուսավորչի սարի արևմտահայաց լանջին: Տեղաբնիկները սարը անվանում են նաև Կարմրաքար, որի կատարին կան տաճարի ավերակներ:

[1127] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 208:
[1128] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 232:
[1129] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

Գյուղի սահմանային գոտով հոսում է Վարանդայի Ամարաս վտակը: Գյուղամիջով անցնում է Ստեփանակերտ–Կարմիր շուկա–Մարտունի մայրուղին:

Սոսը Արցախի հնագույն բնակավայրերից մեկն է: Այն գոյություն ունի ուրարտական ժամանակներից:

1956 թ. Արին բերդում բացված շինությունը կոչվել է Սուսե: Շատ հնարավոր է, որ Սոս գյուղի շրջակայքում եղել է ուրարտական շրջանից մնացած որևէ սուսե (տաճար)[1130]: Այդտեղից էլ գյուղի Սոս անվանումը:

Մեր այս ենթադրությունը հիմնավորվում է նաև Գրիգոր Լուսավորչի գործունեությամբ: Հայտնի է, որ 4–րդ դարում քրիստոնեությունը, որպես պետական պաշտոնական կրոն, Հայաստանում ընդունվելուց հետո հեթանոսական տաճարները ավերվել և տեղը եկեղեցիներ են կառուցվել: Քանի որ Ամարասի հովիտը մինչև 4–րդ դարը խիտ բնակեցված է եղել և հանդիսացել է Արցախի հեթանոսական շրջանի պաշտամունքային կենտրոններից մեկը, ուստի Գրիգոր Լուսավորիչը տաճար է կառուցել ոչ միայն Ամարասում, այլև Կարմրաքարում, որը հետագայում ստացել էր Լուսավորչի սար անվանումը: Վերոհիշյալ սարի վրա պահպանվում են եկեղեցու և այլ շինությունների հետքերը: Լուսավորչի սարի արևելահայաց մասում հայտնաբերվել են կարասային թաղումներ, Ք. ա. 1–ին հազարամյակին վերաբերող խեցեղենի մնացորդներ:

Մակար Բարխուդարյանը Սոսում 19–րդ դարի վերջերին մի ավանդազրույց է լսել, ըստ որի՝ Գրիգոր Լուսավորիչը այդ կողմերում քարոզելու և եկեղեցիներ հիմնելու ժամանակ գիշերը բարձրացել էր սարի գլուխը և աղոթելով լուսացրել գիշերները: Ըստ պատմական աղբյուրների հաղորդած տեղեկությունների՝ Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսը անհավատների դեմ պայքարում նահատակվել է Վատնյան դաշտում և նրա աշակերտները սրբի մարմինը հասցրել են Արցախ: Երբ թշնամու զորքերը նրանց հետապնդելով հասնում են Կարմրաքար, Գրիգոր Լուսավորչի և սրբի մարմինը Գրիգորիսի աշակերտները արդեն հասցրել էին Ամարաս և թաղել վանքում[1131]:

Ըստ պատմավիպասան Հայկ Խաչատրյանի՝ 2200 տարի առաջ Արմավիրի մոտ արցախցի զորավարներից մեկը օտարների դեմ պայքարում անձնուրաց հերոսություն էր կատարել: Արքան կանչել էր քաջ արցախցուն և հայտնել, թե ինչ կուզենար իր խիզխության դիմաց: Վերջինս արքայից Սոսյաց անտառից 2 ոստ էր խնդրել: Արքան կատարել էր այդ խնդրանքը և 3 ոստ էր տվել: Զորավարը ոստերից մեկը տնկել էր Սխտորաշենի հանդում, մեկը՝ Հերհեր գյուղի վերևի մասում, մյուսը՝ Սոսի կենտրոնական ժայռի տակ: Հազարամյակներ անց սոսեցի վարպետ Կարապետը այդ Սոսիի տակ 2 ակ ունեցող մի աղբյուր էր կառուցել: Ծառը կործանվել է կայծակի հարվածից:

Մեկ այլ ավանդության համաձայն՝ 18–րդ դարի սկզբներին թուրքական հարձակումներից պաշտպանվելու համար բնակիչները փախել են գյուղի բարձունքը: Կանանցից մեկը չի հասցրել ժամանակին հեռանալ և թաքնվել էր թփերի մեջ: Կածանով անցնող թուրք զավթիչների աղմուկ–աղաղակից վախենալով՝ երեխան լաց էր եղել: Որպեսզի երեխայի ձայնը թշնամին չլսի, մայրը սաստել էր երեխային ասելով՝ սուս: Թուրքերը լսել էին այդ բառը և աղավաղված ձևով արտաբերել Սոս[1132]: Այնուամենայնիվ, այս ավանդությունը պատմագիտական որևէ արժեք ու հիմնավորվածություն չունի:

Սկզբնական շրջանում գյուղը գտնվում էր ներկայիս բնակավայրից արևելք ընկած հանդամասում, որը տեղացիները անվանել են շենատեղ:

17–րդ դարի երկրորդ կեսին բնակիչները տեղափոխվել են ներկայիս գյուղի տարածքը: Ըստ գյուղի ծերերի պատմածի՝ նշված ժամանակաշրջանում մի քանի ընտանիքներ Սոսում հաստատվել են Համադանից, իսկ 19–րդ դարի սկզբներին՝ Խոյից:

19–րդ դարում գյուղում կառուցվել էր Սբ. Գևորգ եկեղեցին: 1905–1906 թվականների հայ թաթարական ընդհարումների ժամանակ Սոսի երիտասարդները, ինքնապաշտպանական ջոկատներ ստեղծած, ավազակախմբերի հարձակումներից պաշտպանում էին Ամարասի հովտի հայկական բնակավայրերը:

1905 թ. ռուսական պատժիչ ջոկատները ավերել ու թալանել էին նաև Սոս գյուղը: Հասարակական կարծիք ձևավորելու նպատակով Արցախի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը 1905 թ. մարտի 19–ին հեռագիր էր ուղարկել «Արշալույս» թերթին, որտեղ մասնավորապես ասված էր «...Որդու աչքի առաջ բռնաբարում են մորը, եղբոր աչքի առաջ՝ քրոջը: Սոս գյուղում մի տղայ փորձել է պաշտպանել մորը, երբ նրան բռնաբարելիս են եղել, կոզակները այնպես անաստուած ծեծել են թշառին, որ երեք ժամից մեռել է: Այդ այն գիւղն է, որ պաշտպանել ու յետ է մղել 3000 թուրք խուժանի յարձակումը»[1133]:

Խորհրդային կարգերի հաստատվելուց հետո 1929 թ. կազմակերպվել էր Սոսի Ստ. Շահումյանի անվան կոլտնտեսությունը, որը ԼՂԻՄ առաջավոր տնտեսություններից մեկն էր: Հատկապես այն վերելք ապրեց Արսեն Մուքանյանի կոլտնտեսության վարչության նախագահ եղած տարիներին:

Սոսից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է շուրջ 300 հոգի: 138 սոսեցիներ զոհվել են: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կանգնեցվել: Արցախյան պատերազմի առաջին իսկ օրերից թշնամին կրակի օղակի մեջ էր առել Ամարասի հովիտը: Քաջարի սոսեցիները կրկին առաջնագծում էին: Մարտական գործողությունների ժամանակ զոհվել են 37 ազատամարտիկներ: Նրանցից Սոս Գասպարյանը պարգևատրվել է ԱՀ «Մարտական խաչ» 1–ին աստիճանի, իսկ Մովսես Պետրոսյանը և Հայկ Հակոբյանը՝ ԱՀ «Մարտական խաչ» 2–րդ աստիճանի շքանշաններով: ԱՀ «Մարտական խաչ» 2–րդ աստիճանի շքանշանի արժանացել են նաև Հրանտ Քոչարյանը և Արմեն Պետրոսյանը:

[1130] Բալայան Վ., Արցախի պատմությունը, էջ 26:

[1131] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 219–220:

[1132] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 218:

[1133] «Արշալույս», 30 մարտի, 1906:

1965 թ. հունիսի սկզբին ԼՂԻՄ-ի 13 ղեկավար աշխատողներ և մտավորականներ հանգամանալից նամակ են հղել ԽՄԿԿ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ու Մինիստրների խորհրդի ղեկավարությանը: Նամակում տարաբնույթ փաստերով ներկայացված էր մարզի գաղութային վիճակը, և հատկապես ցույց էր տրված Ադրբեջանի ղեկավարության շովունիստական վերաբերմունքը ԼՂԻՄ-ի հայ ազգաբնակչության նկատմամբ: Նամակը ստորագրողներից մեկն էլ Սոսի Ս. Շահումյանի անվան կոլտնտեսության նախագահ, Հայրենական մեծ պատերազմի վետերան, սպա, ԱԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Արսեն Մուքանյանն էր:

Վաղ միջնադարից սկսած Սոսի երեխաները ուսում էին ստանում Ամարասի վանքի դպրոցում: 1857 թ. Սոսի Սբ. Գևորգ եկեղեցուն կից գործել է դպրոց, 1870 թ. գյուղում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց: Ուսուցիչն էր Արամ Տեր-Երանյանը: 1887 թ. գյուղում բացվել է նաև իգական դպրոց: 1896 թ. երկու դպրոցներն էլ փակվել են, իսկ 1907-1908 ուսումնական տարում՝ վերաբացվել: Ուսուցիչն էր Եսայի Քամալյանը:

Խորհրդային տարիներին Սոսում գործում էր միջնակարգ դպրոց: 2014-2015 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 185 աշակերտ, դասավանդում՝ 28 ուսուցիչ: 2008 թ. առայսօր դպրոցի տնօրենն է Մանուշ Վանյանը:

Ծննդով Սոս գյուղից են գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Նովոսիբիրսկի համալսարանի պրոռեկտոր Աշոտ Բաղդասարյանը, տնտեսագիտության դոկտոր, Պլեխանովի անվան տնտեսագիտական համալսարանի ռեկտոր Գրիգոր Բաղդասարյանը:

Սոսի պատմամշակութային նշանակության հուշարձաններն են Ամարասի վանական համալիրը (4-րդ դար), Սբ. Գևորգ եկեղեցին (19-րդ դար):

Գյուղի աղբյուրներն են՝ Շենին ջուր, Կաքավաձոր:

Բնակավայրը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է:

Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, հանդիսությունների սրահ, մանկապարտեզ, առևտրի 3 կետ:

Սոսում 19-րդ դարի սկզբներին կար 30 տուն[1134], 1890-ական թվականներին՝ 107 տուն, 687 բնակիչ, 1989 թ.՝ 270 տուն, 979 բնակիչ[1135], 2018 թ.՝ 230 տուն, 1056 բնակիչ[1136]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1134] Սարգիս արք. Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 518:
[1135] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 218-219:
[1136] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

ՍՊԻՏԱԿԱՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում:

Բնակավայրը տեղաբաշխված է Ստեփանակերտ-Մարտունի ճանապարհի վերջնամասի ձախակողմյան սարալանջի վրա: Գյուղի թիկունքին՝ հյուսիս, հյուսիսարևելյան հատվածներում են գտնվում Ջարգա մարագ (915 մ) Պղնձե կալ (845 մ), Եխծու խութ (890 մ) սարերը:

Գյուղի տարածքում հայտնաբերված հնադարյան պղնձաձուլարանը, բյուզանդական ոսկեդրամը, միջնադարյան գյուղատեղիի, գերեզմանոցների, եկեղեցիների, սրբատեղիների մնացորդները անառարկելի փաստեր են, որոնք խոսում են վերոհիշյալ բնակավայրի հին ծագումնաբանության մասին:

Սպիտակաշենի շրջակայքում եղած սալաքարերի (թերթաքար) հանքերի շինանյութով կառուցվել են ոչ միայն Սպիտակաշենի, այլ նաև հարևան բնակավայրերի տները:

Կարծիք կա, որ այդ կրաքարի և կառուցված տների գույնի պատճառով էլ գյուղը անվանվել է Սպիտակաշեն[1137]:

Մեկ այլ բացատրության համաձայն, քանի որ գյուղը գտնվում է 13-րդ դարում կառուցած Սբ. Ամենափրկիչ եկեղեցուց ներքև, այն ստացել էր Սրբի տակեն անունը, իսկ հետագայում դարերի ընթացքում այն հնչունափոխվելով դարձել է Սպիտակաշեն[1138]:

Սպիտակաշենի տարեցների պատմածների համաձայն՝ ներկա բնակավայրը ձևավորվել է 1720-ական թվականներին: Գյուղի հյուսիսային մասում՝ սարի վրա գտնվող Ջարգա մարագ սրբավայրի մոտ գտնվող գյուղից Ղասումն ու Վանեսը բլրի արևելահայաց մասում տներ են կառուցել, թթի այգի հիմնել: Շուտով 5 ընտանիքներ նույնպես նոր վայրում տներ են կառուցում և այդպես ձևավորվում է Սպիտակաշեն բնակավայրը[1139]:

19-րդ դարի առաջին կեսին Սպիտակաշենում հաստատվում են Խոյից տեղափոխված մի քանի ընտանիքներ[1140]:

Բնակչության աշխատասիրության շնորհիվ բնակավայրը օրեցօր դառնում էր շեն ու բարեկեցիկ: Կառուցվում են երկհարկանի տներ, հիմնվում նոր այգիներ:

Գյուղում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1930 թ., կազմակերպվել է կոլտնտեսություն: Խոշորացման տարիներին այն միացվել էր Գիշու կոլտնտեսությանը, այնուհետև նորից առանձնացվել:

Տարբեր տարիների կոլտնտեսությունը ղեկավարել են Իվան Բալայանը, Պողոս Պետրոսյանը, Ռուբեն Բաղդասարյանը, Գրիգոր Արզումանյանը, Ավանես Սաֆա-

[1137] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 239:
[1138] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1139] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1140] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 222:

ոյանը, Ալեքսանդր Արզումանյանը, Արշավիր Հակոբջանյանը, Թևան Ջավադյանը, Նորիկ Գրիգորյանը, Յաշա Հայրապետյանը, Ալյոշա Հայրապետյանը, Էդիկ Բաղդասարյանը:

1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվեցին մենատնտեսություններ:

Գյուղից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 150 մարդ, որոնցից 64-ը զոհվել է: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Սպիտակաշենի ազգաբնակչությունը անմնացորդ իր մասնակցությունը բերեց արցախյան ազատագրական պայքարին: Ռազմական գործողություններին մասնակցել է 90 ազատամարտիկ, 13-ը զոհվել են: ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով պարգևատրվել է Վարդան Բաղդասարյանը: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի են արժանացել Կարո Հարությունյանը, Միշա Հայրիյանը և Սեյրան Բալայանը, իսկ հետմահու՝ Ռաֆայել Բաղդասարյանը և Կամո Բալասանյանը:

1894 թ. Սպիտակաշենում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց, որտեղ սովորում էր 20 աշակերտ, դասավանդում՝ 1 ուսուցիչ: 1896 թ. դպրոցը փակվում և 1908 թ. վերաբացվում է: Ուսուցիչն էր Տեր Մատթեոս Առաքելյանը:

1936 թ. բացվել էր յոթնամյա դպրոց: Այնուհետև այն դարձել է ութամյա: 1989 թ. դպրոցն ուներ միջնակարգի կարգավիճակ:

1988-2006 թթ. դպրոցում սովորում էր 90-92 աշակերտ, դասավանդում՝ 14-16 ուսուցիչ: 2017-2018 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 56 աշակերտ:

2009 թ. շահագործման է հանձնվել դպրոցական նոր եռահարկ շենքը:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Աշոտ Առուստամյանը, Սամսոն Հակոբյանը, Ալյոշա Հայրապետյանը, Սուսաննա Քամալյանը, Ռուզաննա Միրզոյանը, Էռնեստ Էսայանը, Շիրազ Հայրապետյանը:

Ծննդով և ծագումով Սպիտակաշենից են Միքայել Մուխանի Մանուկյանը՝ Հայրենական մեծ պատերազմից հետո ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար, վերջինիս թոռը՝ Միքայել Մանուկյանը, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Արշակ Հարությունյանը (Արշակունի)՝ ՀՀ ժողովրդական արտիստ, Լևոն Հովհաննիսյանը՝ ցարական բանակի գնդապետ, Արդահանի քաղաքագլուխ, Ելիզավետա Հովհաննիսյանը՝ վաստակավոր ուսուցչուհի, Սուրեն Գրիգորյանը՝ գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Դոնի Ռոստովի գյուղատնտեսական ինստիտուտի ռեկտոր, Աղալար Բաղդասարյանը՝ ՀՅԴ գործիչ, 1918-1920 թվականներին Վարանդայի գավառի զինված ստորաբաժանումների փոխհրամանատար:

Սպիտակաշենի պատմամշակութային նշանակության հուշարձաններն են Սբ. Ամենափրկիչ եկեղեցին, 13-րդ դարի Եղծու խութ, Ջարգա մարագ, Մատաղի խութ սրբատեղիները, միջնադարյան գյուղի և գերեզմանոցի մնացորդները:

Գյուղի աղբյուրներն են՝ Երե ջուր, Խոջաբանդ, Ծլլոկ, Շմամանց ջուր, 36 հորերով Ավոյի անունը կրող քահրիզը:

Սպիտակաշենի հանդամասերն են՝ Պղնձե Կալ, Խոջաբանդ (Ջանգակաջուր), Օհանանց քոլոտ, Ավանա տափ, Սեյրանանց ձոր, Կրավերի ձոր, Մարաղա խութ, Սև քար, Օջաղատեղ, Մեյդաններ, Թթոտուն տափ:

Գյուղում շարունակում են ապրել Ղասումանց՝ ճյուղավորված Բլանց, Սանթուրանց, Ջվադանց, Առաքելանց, Մկրտիչանց, Դերունց, Հարությունանց, Վնեսանց՝ ճյուղավորված Աղաջանանց, Աթունց, Բագասանց, Միրզոյանանց, Մրգանց, Ղարաշանց, Մուսանց, Բեյլարանց, Մելիքսեթանց, Խաթունամունց՝ ճյուղավորված Բաղդասարանց, Սովանց, Օհանանց, Բեգլարանց, Նանունց՝ ճյուղավորված Հրբեդանց, Դիլանանց, Սայունց, Հայրունց, Բալասանանց, Պուղունց, Մանուկանց, Սեյրանանց, Կուքունց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքը ունի գյուղապետարան, ակումբ, բուժկետ, միջնակարգ դպրոց, առևտրի 1 կետ, հանդիսությունների սրահ:

Սպիտակաշենում 19-րդ դարի վերջերին կար 70 տուն, 400 բնակիչ, 1989 թ.՝ 97 տուն, 378 բնակիչ[1141], 2018 թ.՝ 75 տուն, 331 բնակիչ[1142]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՔԱՐԱՀՈՒՆՋ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Բովուրխան լեռնազանգվածից հարավ-արևելք, դեպի հարթավայր ձգվող լեռնաճյուղերից մեկի վրա: Գյուղի մոտով է հոսում Պրկակեր գետակը, որի աջափնյա մասը անտառապատ է:

Քարահունջը Արցախի հնագույն բնակավայրերից է: Հին Քարահունջը գտնվում է ներկայիս բնակավայրից 2 կմ արևմուտք՝ Ռսկիան սարի լանջին, և տեղացիները այդ գյուղի մնացորդները անվանում են Քյոհնա (հին) Քարահունջ:

Վերոհիշյալ տարածքում առայսօր պահպանվում են տապանաքարեր, խաչքարեր:

Մովսես Կաղանկատվացին պատմում է, որ Վաչագան Բարեպաշտը Սբ. Զաքարիայի, Պանդալիոնի, Գրիգորի, Հռիփսիմեի ու Գայանեի մասունքները վերցրած գալիս հասնում է Քարուէճ[1143] (Քարահունջ):

[1141] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 240:
[1142] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:
[1143] Մ. Կաղանկատուացի, էջ 72:

Որոշ ուսումնասիրողներ գտնում են, որ Մովսես Կաղանկատվացու ներկայացրած Դարահոջ բնակավայրը[1144] համատեղելի է ներկայիս Քարահունջին[1145]: Մինչդեռ այն ավելի շատ պետք է որոնել հյուսիսային Արցախի Դյութական-Դաստակերտի շրջակայքում:

Ավանդությունը պատմում է, որ 17-րդ դարում բնական աղետի պատճառով հին Քարահունջը կործանվել է: Բնակիչների մի զգալի մասը տեղափոխվել է Սյունիք, և հիմնադրել Գորիսի ներկայիս Քարահունջ գյուղը:

Հին Քարահունջի բնակիչ Տեր Խաչատուրը իր համար նոր բնակատեղի էր ընտրել գյուղից 2 կմ հեռավորության վրա գտնվող կհոլների տեղը, որտեղ նա անասուններ էր պահում: Տարածքի մի զգալի մասը անտառածածկ էր: Նա անտառի հարավային մասը մաքրել է և հիմնել ներկայիս Քարահունջը: Տեր Խաչատուրը ունեցել է 3 տղա՝ Դավիթը, Բաղդասարը, Ավետիսը, և 3 աղջիկ: Տղաներից առաջին երկուսը դարձան Պապունց և Դավութանց գերդաստանների հիմնադիրները:

Տեր Խաչատուրի աղջիկներից մեկը ամուսնացել էր Ամարաս ավանի բնակիչ Հակոբի հետ: Վերջինս հաստատվել էր Քարահունջում և դարձել Աղաջանյանների ու Բեգլարյանների գերդաստանների հիմնադիրը: Միջնեկ աղջկա ամուսինը՝ սարուշենցի Թևոսը, նույնպես դարձել էր նոր գյուղի հիմնադիրներից մեկը և հիմք դրել Սուլեյմանյանների գերդաստանին, իսկ փոքր աղջկա ամուսին, քերթեցի Սարգսից էլ սերվել են Լալայանների ու Ալավերդյանների գերդաստանները[1146]:

18-րդ դարում Քարահունջում կառուցվել էր Սբ. Աստվածածին եկեղեցին: Բոլշևիկյան աթեիստական քաղաքականության հետևանքով 1930-ական թվականներին եկեղեցին քանդվել և քարը՝ որպես շինանյութ, օգտագործվել է կոլտնտեսության գրասենյակի կառուցման համար:

Գյուղում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1930 թ., կոլտնտեսություն էր կազմակերպվել:

Գյուղից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 66 մարդ, որից 30-զոհվել է: Նրանց հիշատակին հուշարձան է կառուցվել:

Արցախյան ազատագրական պատերազմի տարիներին Քարահունջից 37 հոգի մասնակցել են մարտական գործողություններին: Բարեբախտաբար զոհեր չեն եղել:

1920 թ. Շուշիի մարտյան ողբերգությունից հետո քաղաքում հաստատված քարահունջցի Բալասան Սուլեյմանյանն իր զավակներով վերադառնում է Քարահունջ: Արծվիկը, Ելենան, Հերսիկն ու Անահիտը գյուղում դպրոց են հիմնում: Սակայն այն կարճ կյանք ունեցավ: 1928-1929 ուսումնական տարում բացվեց Քարահունջի տարրական դպրոցը:

[1144] Նույն տեղում, էջ 67, 70, 90:
[1145] Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 118, 118, 309:
[1146] ԱրՊՀ հայագիտական կենտրոն, Մանուկյան Մ., նշվ., աշխ., էջ 358:

1960-ական թվականների սկզբին գյուղում դպրոցական նոր շենք է կառուցվել:

1975-1976 ուսումնական տարում վերոհիշյալ կրթօջախը միացվել է Քերթի միջնակարգ դպրոցին: 1989-1990 ուսումնական տարում դպրոցը նորից առանձնացվել և տրվել է միջնակարգի կարգավիճակ: Այդ տարիներին դպրոցն ունեցել է 53 աշակերտ, 16 ուսուցիչ: 2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 12 աշակերտ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Սերգեյ Առստամյանը, Սամվել Քոչարյանը, Արմենակ Դաղայանը, Գրիգոր Գրիգորյանը, Սուրեն Աղաբեկյանը, Նոբել Գրիգորյանը, Մանաս Փաշայանը, Ջալալ Աղաբեկյանը, Միքայել Բեգլարյանը, Հովհաննես Ներսիսյանը, Էդուարդ Բեգլարյանը, Իսահակ Հովհաննիսյանը, Էմմա Աթայանը, Ջիվան Ղահրամանյանը, Արթուր Լալայանը:

Գյուղի աղբյուրներն են՝ Շենին, Արզումանանց, Ջոլունց, Էլլի-ղուրուղեն, Ջրի, Սալ քարեն, Աղեն, Կալերեն, Ղում, Պրկակեր:

Բնակավայրի հանդամասերն են Ճեղթողան ձորը, Բուղեն դարան, Շենզարեն պատառը, Մշվարեն ձորը, Թոփազեն տեղը, Խնդղնոտեն ձորը, Ղուզուն տեղը, Ղուզեն, Ղարաշեն տափը, Բախշուն խամը, Բայլարեն տափը, Կալին տակը, Բաղունց բաղը, Լալունց տափը:

Քարահունջում շարունակում են ապրել Մուսանց, Ղահրամանանց, Ալավերդանց Մրեն, Լալունց, Բղդաղանց, Նանունց, Բաղունց, Փշանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Համայնքը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, առևտրի կետ: Նախկինում գյուղում գործում էր նաև մանկապարտեզ:

Քարահունջում 1890 թ. կար 36 տուն, 210 բնակիչ, 1989 թ.՝ 55 տուն, 221 բնակիչ[1147], 2018 թ.՝ 35 տուն, 136 բնակիչ[1148]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՔԵՐԹ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Ռսկիան, Ալանբոթ, Ծակ քար և Եղիշեի սարերի միջև ընկած հովտում:

Քերթը Արցախի հնագույն բնակավայրերից է:

Ուսումնասիրողներից Հ. Բեգլարյանը գտնում է, որ Հին Քարահունջից արևելք՝ ներկայիս Քերթ գյուղի մոտ՝ Ռսկիան սարի լանջին էր գտնվում 7-րդ դարի պատմիչ

[1147] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 221:
[1148] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

Մովսես Կաղանկատվացու հիշատակած Քարուեձ բնակավայրը[1149], որի մնացորդները 1971 թ. ճանապարհաշինական աշխատանքների ժամանակ պատահաբար հայտնաբերվել են:

Ալեքսան Հակոբյանի կարծիքով 6-րդ դարի սկզբներին անանուն հեղինակի կողմից շարադրված «Վաչագանի վեպ» երկի մեջ ներկայացված Վեհկերտ բնակավայրը ներկայիս Քերթ գյուղն է[1150]: Գյուղի տարածքում պահպանված 13-15-րդ դարերի խաչքարերը նույնպես խոսում են Քերթի հին բնակավայր լինելու մասին:

Ներկա բնակավայրի պատմությունը սկսում է 17-րդ դարի սկզբներից:

Սղնախական պայքարի շրջանում 18-րդ դարի սկզբներին կառուցվել է Քերթի բերդը:

Քերթից հյուսիս՝ Չիքա տակի մոտ, կա մի տարածք, որը կոչվում է Արաբի տափ: Ժողովրդի մոտ պահպանված մի ավանդազրույցի համաձայն՝ նշված վայրը արաբական զորքերի հավաքատեղի էր, որտեղից նրանք ասպատակում էին Ամարասի հովտի հայկական բնակավայրերը: Այս տարածքը հետագայում նաև տարբեր ապրանքների փոխանակման վայր է եղել[1151]:

19-րդ դարում Քերթից մի քանի ընտանիքներ տեղափոխվել և հաստատվել են Կոկիսոն (Գյոգ չայ) գավառում և Տող, Գիշի, Թաղավարդ, Հացի, Հաղորտի, Թաղլար, Ննգի, Ջրաբերդ բնակավայրերից տեղափոխվածների հետ հիմնել են Գիրկ գյուղը[1152]:

1858 թ. Քերթում կառուցվել է Սբ. Գևորգ եկեղեցին:

20-րդ դարի սկզբներին Քերթի հայությունը մյուս գյուղերի կամավորականների հետ պաշտպանել է Ամարասի հովտի հայկական գյուղերի անդորրը:

Խորհրդային կարգերի հաստատվելուց հետո գյուղում 1929 թ. կազմակերպվել է կոլտնտեսություն: 1950-ական թվականներին՝ խոշորացման շրջանում, Քերթի, Սոսի և Քարահունջի կոլտնտեսությունները միավորվել են:

1998 թ. հողերի սեփականաշնորհումից հետո լուծարվել է նախկին կոլտնտեսությունը և կազմավորվել են անհատական առանձին մանր տնտեսություններ:

Տարբեր տարիների Քերթի կոլտնտեսությունը ղեկավարել են՝ Ասծատուր Հակոբյանը, Բարսեղ Աբրահամյանը, Վոլոդյա Ղահրամանյանը, Ենգիբար Գասպարյանը, Ռուբեն Պողոսյանը, Մելիք Գրիգորյանը, Սերյոժա Հարությունյանը, Եփրեմ Ղահրամանյանը, Ալիշ Գևորգյանը, Քոչարի Գրիգորյանը, Աշոտ Խոսրովյանը, Առուստամ Առուստամյանը, Գուրգեն Հայրապետյանը, Արմեն Բաղրյանը, Արսեն Հակոբյանը, Գրիշա Ղուլյանը, Արազ Լալայանը, Գառնիկ Գևորգյանը, Շահեն Հակոբջանյանը, Գեորգի Լալայանը, Ջորիկ Ղուլյանը, Կիմա Գրիգորյանը:

[1149] Բեգլարյան Հ., Ամարասի հովտի հուշարձանները, «ԼՀԳ», հմ. 2, 1974, էջ 93:

[1150] Ցակոբեան Ա., Պատմա-աշխարհագրական և վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 308-309:

[1151] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1152] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 21:

Քերթից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 270 մարդ, զոհվել է 115-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Խորհրդային տարիներին՝ 1938 թ., գյուղի եկեղեցու վրա որպես երկրորդ հարկ ակումբ է կառուցվել:

Քերթի ազգաբանակչությունն իր մասնակցությունը բերեց արցախահայության ազատագրական պայքարին:

1991-1994 թվականներին Մարտունու պաշտպանական շրջանի զորամասերի կազմում Քերթից 96 ազատամարտիկներ մասնակցել են ինչպես պաշտպանական, այնպես էլ հարձակողական մարտերին: Նրանցից 17-ը զոհվել են: Զոհված ազատամարտիկների հիշատակին, ծագումով Քերթից, ռուսաստանաբնակ բարերար, Հենրիկ Մելիքսեթյանի միջոցներով հուշարձան է կառուցվել:

Քերթից ազատամարտիկներ Ռոմա Մարտիրոսյանն ու Գնել Ղուլյանը պարգևատրվել են ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

19-րդ դարի 70-ական թվականներին գյուղում Սբ. Գևորգ եկեղեցուն կից նախակրթարան է բացվել: 1882 թ. Քերթում սկսել էր գործել եկեղեցական-ծխական դպրոց, որտեղ սովորում էր 20 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ[1153]:

Դպրոցը փակվել էր 1896 թ. և վերաբացվել 1908 թ.: Դպրոցը պահվում էր բաքվաբնակ քերթեցիների հայրենակցական միության միջոցներով:

Խորհրդային տարիներին, մասնավորապես՝ 1973-1974 ուսումնական տարվանից, գյուղում միջնակարգ դպրոց էր գործում, որտեղ 170-180 աշակերտ էր սովորում: 2017-2018 ուսումնական տարում դպրոցն ուներ 87 աշակերտ:

2006 թ. դպրոցը հիմնանորոգվել է:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Ոսկի Հակոբյանը, Սարգիս Ալավերդյանը, Համայակ Համբարձումյանը, Գարեգին Ղուլյանը, Հրանտ Աբրահամյանը, Շամիր Գևորգյանը, Միքայել Բեգլարյանը, Պարգև Աղաբեկյանը, Սվետլանա Հակոբյանը, Արտյուշա Սարգսյանը և Ժիրայր Հայրապետյանը:

Ծննդով Քերթից են ռազմական ուսումնարանի պետ Առուստամ Առուստամյանը, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտակ Գուլյանը, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Աբրահամյանը, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ գիտության վաստակավոր գործիչ Աշոտ Գրիգորյանը, բանաստեղծ, արցախյան ազատամարտի նահատակ Կոմիտաս Հակոբյանը, որի անունով էլ կոչվում է Քերթի միջնակարգ դպրոցը:

Համայնքի պատմամշակութային նշանակության վայրերն ու հուշարձաններն են՝ Սբ. Գևորգ եկեղեցին (19-րդ դար), Հնձանց, Հաշամանց, Ղուլունց, Տոնունց, Սևհանց, Չորս կաղնիներ, Ջվաղանց օջախ, Չիքա տակ, Սբ. Ավետարան, Սբ. Ռսկըհան, Կարմիր Եխծի սրբատեղիները, 15-17-րդ դարերի մի քանի խաչքարեր:

[1153] «Արարատ», հմ 4, 1886:

Գյուղի աղբյուրներն են՝ Ղուրուսու, Ղևոն, Երե ջուր, Տիզկին, Շրշոան, Պիծի ջուր, Ջաքունց, Բալայանեն, Ղուրան ձորի, Հոստին տեղին, Իշխանեն, Մնացականի, Բուշուն, Կզմեն, Առուկերակի, Ջվաղանց, Գևորգանց, Ղուզուն բաղեն, Ղուլունց բաղեն, Գյուլերեն ծորին, Տինակեն, Պրկակերեն, Չմանին, Փղանց:

Բնակավայրի հանդամասերն են՝ Հին շինատեղ, Կարմիր Ավետարան, Արաբի տափ, Հին Քարահունջ, Չիքատակ, Ծակ քար, Քյուխվեն դուզ, Ղուլունց կալ, Կալին տոռնը, Քամիար յալ, Ղիրամանց տափ, Քարկապի ձոր, Ղուրուն ձոր, Սալին տակ, Կետեն ձոր, Ղուլունց բաղ, Հոստին տեղ, Գյուլերեն ձոր, Սզնոտուն տոշ, Շլորին դուզ, Դլիշին թալա, Թուփալեն տափ, Դերին ծմակ, Կհոլին ձոր, Դիվանամիր:

Գյուղում ապրում են Բղերանց, Սյամանց, Ղուլունց, Սևանց, Լալունց, Խչանանց, Ջվաղանց, Հնձանց, Բեգունց, Մնասանց, Պղուսանց, Տատունց, Տոնունց, Վրշաբանց, Քելունց, Տիզկանց, Մարտիրոսանց, Փշանց, Ջակունց, Դերունց, Խուդունց, Սփարունց, Աղաջանանց, Քթանանց, Բդասանց, Քմալանց, Քսպարանց, Յբլոկանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրացանց:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, միջնակարգ դպրոց, հանդիսությունների սրահ, առևտրի 2 կետ: Նախկինում եղել է նաև կենցաղասպասարկման կետ:

Քերթում 1890-ական թվականներին եղել է 56 տուն, 344 բնակիչ[1154], 1989 թ.՝ 155 տուն, 608 բնակիչ[1155], 2018 թ.՝ 137 տուն, 504 բնակիչ[1156]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՋԻՎԱՆԻ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Վարանդա գետի միջին հոսանքի ձախափնյա հովտում:

19-րդ դարի երկրորդ կեսին կովկասյան թաթարների մի քանի ընտանիքներ հաստատվել էին բարեբեր այդ հողերում: Գյուղը ստացել էր Ղաջար անունը: Օրեցօր բնակավայրը մեծանում և վերածվում էր ավազակաորջի: Հայկական գյուղերի վրա հարձակումներն ու թալանը սովորական երևույթներ էին:

[1154] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 218:
[1155] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 220:
[1156] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

Եղիշե Իշխանյանը 1918 թ. իրողությունների մասին գրել է. «... թրքական Ղաջար գիւղը, նրանց մեծագույն ավազակաբներից մեկը: ... Ղաջարցիները շատ անհանգիստ մարդիկ էին, մեծից մինչև փոքր ավազակներ ու գողեր: Նրանք ցարական կառավարության ժամանակ իսկ հանգիստ չէին տալիս գիւղացիութեանը, յեղափոխութիւնից յետոյ սանձարձակ էին դարձել և յաճախ անհանգստութիւն էին պատճառել, երբ տաճիկ զինուորները հաստատուել էին Ղաջարում, աւելի սանձարձակ պիտի դառնային և պրովակացիոն մի արարքով հայ-թրքական կռիւ ստեղծէին»[1157]:

Արցախը Ադրբեջանին բռնակցվելուց հետո Ղաջարը հայտնվել էր ԼՂԻՄ սահմաններից դուրս՝ Ֆիզուլիի վարչական շրջանի կազմում:

Անմիջապես ԼՂԻՄ սահմանագծին լինելով՝ արցախյան ազատագրական շարժման առաջին իսկ օրվանից Ղաջարը դարձել էր Ադրբեջանի ռազմական հենակետերից մեկը:

Շարժման առաջին ամիսներից, հայ ազգաբնակչության շրջանում վախի մթնոլորտ ձևավորելու նպատակով, Ղաջարում հավաքված ավազակախմբերը դարանակալում էին ճանապարհների վրա և հայ ուղևորներին սպանում, քշում տանում հայկական գյուղերի անասունները: Կենսական անհրաժեշտություն էր վերացնել 19-րդ դարի վերջերից սկսած և հայության համար չարիք դարձած այդ որջը: 1993 թ. ապրիլի սկզբներին Մարտունու և Հադրութի պաշտպանական շրջանների զորամասերը, դիմագրավելով հակառակորդի կողմից ձեռնարկված հարձակման բոլոր փորձերը, անցան հակահարձակման և վերացրին Ղաջար, Գովշաթլու, Դիվանլար բնակավայրերում տեղակայված կրակակետերը:

Ռազմավարական նշանակության կարևոր կետում գտնվելով՝ անհրաժեշտ էր լուծել հայոց հողի այդ մի կտորի հետագա ճակատագիրը:

1999 թ. ԱՀ կառավարության որոշմամբ Ղաջարում վերաբնակեցման գործընթաց սկսվեց: Այստեղ հաստատվել են Ախալքալաքից և Ախալցխայից մի քանի հայ ընտանիքներ: Նրանց միացել են նաև Ադրբեջանից բռնագաղթված և հարևան հայկական գյուղերից վերաբնակիչներ:

Քանի որ գյուղի վերաբնակիչները հիմնականում վրացահայեր էին, ուստի որոշվեց նոր բնակավայրը անվանել Ջիվանի՝ ի պատիվ ջավախահայ աշուղ Ջիվանու: Սակայն վրացահայերը տեղանքին և ընդհանրապես նոր միջավայրին չհարմարվելու պատճառով հիմնականում հեռացել են Ջիվանիից:

2002 թ. սեպտեմբերի 1-ից սկսել է գործել Շեխերի միջնակարգ դպրոցի Ջիվանիի մասնաճյուղը: 2009 թ. կրթօջախը հիմնական դպրոցի կարգավիճակ է ստացել:

2004-2005 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 19 աշակերտ, դասավանդում՝ 8 ուսուցիչ: 2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 43 աշակերտ, դասավանդում՝ 16 ուսուցիչ:

[1157] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 267:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Աբել Աբելյանը, Օֆելյա Ստեփանյանը, Նորայր Հարությունյանը, Սաթենիկ Հարությունյանը:

Ջիվանիի 9 բնակիչներ մասնակցել են ազատագրական պատերազմին: Գյուղի ազատագրման համար զոհվածների հիշատակին հուշակոթող է կառուցվել:

Բնակավայրի մոտ է գտնվում Ռուսեն աղբյուրը:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է, ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում է գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, առևտրի երկու կետ:

Ջիվանիում 2018 թ. կար 35 տուն, 167 բնակիչ[1158]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՎԱՐԱՆԴԱ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Խոնաշեն գետի միջին հոսանքի ձախափնյակում՝ Ստեփանակերտ–Մարտունի մայրուղու աջ մասում:

Վարանդան համանուն բնակավայրի այն սակավաթիվ բնակավայրերից մեկն է, որին թուրք-թաթարներին հաջողվել է առանց մեծ ջանքերի տիրանալ:

19-րդ դարի երկրորդ կեսերին Մուղանի տափաստանից թաթար մի քանի ընտանիքներ հաստատվել էին Խոնաշենի հովտում՝ Հաղորտի գյուղի վարչական տարածքում: Բնակավայրը ստացավ Վարանդալու անունը, իսկ 19-րդ դարի վերջերին այն անվանափոխվել և դարձել էր Ղարադաղլու:

1885 թ. վերոհիշյալ բնակավայրում ապրում էր 70 թուրք ընտանիք[1159]: Այդ ժամանակներից սկսած Ղարադաղլուն շրջակա հայկական գյուղերի, մասնավորապես Մուշկապատի, Հաղորտիի, Կաղարծու և Պառավաթումբի համար չարիք էր դարձել: Անասնագողությունը, ծեծն ու ջարդը սովորական երևույթներ էին:

Ծննդով Ղարադաղլուից էր նաև մասնագիտությամբ ուսուցիչ, կոչումով մարդասպան Արշադ Մամեդովը, ով դաժանորեն 1966 թ. խոշտանգել և սպանել էր բերդաշենցի երկրորդ դասարանի աշակերտ Նելսոն Մովսիսյանին:

Արցախյան շարժման առաջին շրջանում՝ 1988–1992 թվականներին, Ղարադաղլուն դարձել էր Աղդամի և Ադրբեջանի մյուս շրջաններից հավաքված ավազակախմբերի որջը:

[1158] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:
[1159] Հայկունի, նշվ. աշխ., էջ 85:

Շրջափակվել էին հայկական գյուղերի ճանապարհները: Կտրվել էր Ստեփանակերտի հետ Մարտունու շրջանի արևելյան ենթաշրջանի բնակավայրերի կապը:

Ադրբեջանի կառավարությունը մինչև ատամները զինել էր Ղարադաղլուի ադրբեջանցի բնակչությանը: Սպանություններն ու խոշտանգումները Խոնաշենի հովտում հաճախակի էին դարձել:

1991 թ. հունվարի 9-ին առավոտյան Կաղարծիի բնակիչ Լևոն Գասպարյանը կնոջը՝ Անժելա Գասպարյանին Մարտունու ծննդատուն տեղափոխելու ժամանակ Ղարադաղլուի մոտ դարանակալած թուրքերը երիտասարդ ամուսիններին տանջամահ են արել:

1991 թ. հուլիսի 17-ին մարդորսությամբ զբաղվող ավազակախմբերը Ափունց բաղ կոչված տարածքում գազանաբար սպանեցին Հաղորտու միջնակարգ դպրոցի զինղեկ, 33 ամյա Վալերիկ Կարապետյանին: Վայրենաբար սպանելուց հետո ավազակները հրկիզել են նրա դիակը:

1991 թ. հունիսի 27-ին գյուղ վերադառնալու ճանապարհին ադրբեջանական օմոնը ձերբակալել էր 7 մուշկապատցիների, որոնց Շուշիի և Ադրբեջանի շրջաններում տեղակայված բանտերում կտտանքների էին ենթարկել: 1991 թ. հուլիսի 3-ին դաժան ճակատագրի էին արժանացել նաև Հաղորտու 6 բնակիչներ:

1992 թ. հունվարի 12-ին Ղարադաղլուի մոտ դավադիր գնդակից սպանվել էր սպիտակաշենցի Արտո Հայրապետյանը:

Գյուղի ազատագրումը հայկական ինքնապաշտպանական ուժերի կողմից օրհասական հարց էր դարձել: 1992 թ. փետրվարի 17-18-ին իրականացվեց Ղարադաղլուի ազատագրման ռազմագործողությունը, որին մասնակցել են Մարտունի քաղաքի, Ճարտարի, Գիշու, Սպիտակաշենի, Հաղորտու, Մուշկապատի, Կաղարծու, Ննգիի կամավորականները, ԱՀ ինքնապաշտպանական ուժերի առաջին վաշտը և «Արաբո» ջոկատը:

Խաղաղ բնակչությանը չվնասելու նպատակով հայկական ուժերը Նոր շենի և Աշանի ուղղությամբ միջանցք էին թողել:

Գյուղում մնացած զինյալները շտաբի վերածված գյուղապետարանի շենքում մինչև վերջ դիմադրել են:

Մարտական գործողությունների ժամանակ հակառակորդը տվել է 60-ից ավելի սպանված և գերի: Թշնամուց առգրավվել է 70 միավոր զենք, մեծ քանակությամբ զինամթերք:

Մարտական գործողությունների ժամանակ Ամիրանլարի հենակետից հակառակորդի կազմավորումները հարձակվել են Մարտունի քաղաքի ուղղությամբ՝ նպատակ ունենալով Ղարադաղլուից շեղել հրամանատարության ուշադրությունը: Հայկական կամավորական ջոկատները ոչ միայն հետ մղեցին Ամիրանլարից կազմակերպված գրոհը, այլև Ղարադաղլուի ռազմագործողությունը փայլուն ավարտին հասցրին:

Գյուղի ազատագրման ժամանակ զոհվել էր «Արաբո» ջոկատի ազատամարտիկ Էդիկ Մելքումյանը՝ Արջ մականունով: Ղարադաղլուի մոտակայքում ադրբեջանցիների գնդակից զոհվել էր նաև Հաղորտու բնակիչ Արամ Քարամյանը:

Մարտական գործողությունների ժամանակ վիրավորվել են՝ Հաղորտու ջոկատի հրամանատար Կամո Բալասյանը և ազատամարտիկ Մագելան Պետրոսյանը:

1999 թ. սկսվել է գյուղի վերաբնակեցման գործընթացը:

Այդտեղ հաստատվել են Մուշկապատից, Հաղորտուց, Ստեփանակերտից, Մարտունի քաղաքից մի քանի ընտանիքներ:

Գյուղը մի կարճ ժամանակահատված անվանվել է Արջաձոր, այնուհետև վերանվանվել Վարանդայի:

2001–2008 թվականներին Վարանդայի կրթօջախը Կաղարծու միջնակարգ դպրոցի մասնաճյուղի կարգավիճակ ուներ, իսկ 2008 թ. առայսօր՝ Հաղորտու միջնակարգ դպրոցի:

Վարանդայի դպրոցում 2018–2019 ուսումնական տարում սովորում էր 20 աշակերտ, դասավանդում՝ 9 ուսուցիչ: Մասնաճյուղի վարիչն է Նաիրա Ուլուբաբյանը:

2012 թ. դպրոցի շենքը վերանորոգվել էր «Հայ կրթական հիմնարկության» և Արփիկ Շատիկյանի զավակների դրամական միջոցներով:

Էդիկ Մելքումյանի քրոջ որդի Վալերի Մանուչարյանի հովանավորությամբ 2014 թ. Վարանդայում կառուցվել է հուշակոթող՝ ի հիշատակ արցախյան պատերազմի և Ղարադաղլուի ազատագրման ժամանակ զոհվածների:

Գյուղն ունի մեկ աղբյուր՝ Սարգսյանի:

Վարանդայի հանդամասերն են Բաբա Բուլաղ, Փշիգա ծոր, Թուռնեն գյոլ:

Համայնքում ապրում են Ղասունց, Ուհանանց, Ռքալանց, Դերունց, Պտուրկանանց, Լոլունց, Դլլաքանց, Պետունց, Մղրովանց, Քաչալ պապունց, Բղերանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային, և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, բուժկետ, Հաղորտիի միջնակարգ դպրոցի Վարանդայի մասնաճյուղը:

Վարանդայում 2005 թ. կար 67 բնակիչ[1160], 2018 թ.՝ 23 տուն, 91 բնակիչ[1161]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1160] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 356:

[1161] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

ՎԱՋԳԵՆԱՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ արևելյան հատվածում՝ Մարտունու շրջանում՝ նախկին Վարանդա գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Կարկառի միջին հոսանքի աջափնյա մասում:

Գյուղից 1 կմ դեպի արևելք Կարմիր քերծ տեղամասում պահպանվել է Ք. ա. 2–1-ին հազարամյակների դամբարանադաշտ:

Վազգենաշենը ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող բնակավայր է: Այն լեռնաստանը Արցախի դաշտավայրի հետ կապող օղակ է: Պատահական չէ, որ վերջին երկու դարերի (19–20-րդ դարեր) ընթացքում թուրքերն ամեն կերպ ձգտում էին տիրանալ Արցախի այս հատվածին՝ հարվածի տակ դնելով արևելքում և հյուսիս-արևմուտքում գտնվող հայկական բնակավայրերը:

19-րդ դարի վերջերին դա նրանց հաջողվեց: Ցարական իշխանությունների թույլտվությամբ նրանք սեպի պես մխրճվեցին Կարկառի աջափնյակի, Արցախի լեռնաշղթայի արևելյան լեռնաձյուղերի լանջերի գոգավորությունները և երկու գյուղ հիմնեցին՝ Ավդալն ու Գյուլափլուն:

1885 թ. Ավդալում ապրում էր 150 տուն, իսկ Գյուլափլուում՝ 255 տուն թուրք[1162]:

Վարանդայի Բերդաշեն, Աշան, Նորշեն, Հացի, Ավդուռ, Մյուրիշեն, Դահրազ, Սառնաղբյուր, Վարազաբուն, Վարդաձոր, Նախիջևանիկ գյուղերը մշտապես հարվածների տակ հայտնվեցին: Մարդասպանությունը, գողությունը, ալան-թալանը սովորական երևույթներ էին:

Ավդալը և Գյուլափլուն Աղդամին հարակից հայաբնակ գյուղերի համար ավազակավորջ էին դարձել:

1905–1906 և 1918–1920 թվականների հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Ավդալում և Գյուլափլուում հավաքված ավազակախմբերը գրոհում էին հայկական գյուղերի վրա: Առայսօր հայկական բնակավայրերի մատույցներում պահպանվում են նախկին խրամատների հետքերը:

Արցախի հայությանը ծնկի բերելու նպատակով այդ տարիներին փակվել էին Շուշի-Եվլախ, Շուշի-Գորիս ճանապարհները: Հայկական բնակավայրերը շրջափակելու և ժողովրդին սովի մատնելու գործն առավել ջանադրաբար էին իրականացնում Աղդամի, Ավդալի, Գյուլափլուի թուրքերը: Իրենց այդ սև գործը վերոհիշյալ բնակավայրերի թուրքերը շարունակեցին նաև արցախահայության ազատագրական պայքարի առաջին փուլում՝ 1988–1991 թվականներին:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո վերոհիշյալ տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին: 1923 թ. Ավդալը և Գյուլափլուն Աղդամի շրջանի կազմում էին: Ադրբեջանի իշխանությունները Ավդալն ու Գյուլափլուն մեծացնելու համար միջոցներ չէին խնայում:

[1162] Հայկունի, նշվ. աշխ., էջ 81:

Արցախյան ազատագրական պայքարի առաջին իսկ օրվանից Ավդալն ու Գյուլափլուն Ադրբեջանի կարևոր ռազմական հենակետերն էին դարձել: Օր ու գիշեր «գրադ» կայանքներից հրետանակոծվում էին հայկական բնակավայրերը: Բարեբախտաբար, հայ ազատամարտիկներին հաջողվեց վերացնել հայոց հողի վրա եղած այդ թարախային բշտիկները՝ ապահովելով Արցախի խաղաղ բնակչության անվտանգությունը:

Ավդալն ու Գյուլափլուն ազատագրվել են 1992 թ. սեպտեմբերի 4–ին:

Պատերազմի ավարտից անմիջապես հետո՝ 1994 թ., սկսվեց Գյուլափլուի վերաբնակեցման գործը: Այստեղ հաստատվեցին Ադրբեջանից բռնագաղթված հայ ընտանիքներ և ՀՀ տարբեր բնակավայրերից քաղաքացիներ: Գյուղը ստացավ Վազգենաշեն անունը: 2000 թ. Վազգենաշենը համայնքի կարգավիճակ ստացավ:

Ավդուռի դպրոցի մասնաճյուղի կարգավիճակով 1998 թ. Վազգենաշենում սկսեց դպրոց գործել: 2001 թ. նոյեմբերից այն առանձին կրթօջախի կարգավիճակ ստացավ, իսկ 2003 թ. սեպտեմբերի 1–ից դպրոցը արդեն միջնակարգ էր: 2007–2008 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 84 աշակերտ, 2018–2019 ուսումնական տարում՝ 55 աշակերտ, դասավանդում 12 ուսուցիչ: Դպրոցը եռահարկ կառույց է:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Ռուբեն Պողոսյանը, Միհր Պողոսյանը, Սլավիկ Գրիգորյանը, Անդրանիկ Բաբայանը, Կարինե Վարդանյանը, Վագիֆ Մեժլումյանը:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը, բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, բուժկետ, միջնակարգ դպրոց, առևտրի 1 կետ:

Վազգենաշենում 2005 թ. կար 226 բնակիչ[1163], 2015 թ.՝59 տնտեսություն, 306 բնակիչ[1164], 2018 թ.՝ 73 տնտեսություն, 273 բնակիչ[1165]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1163] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 355–356:
[1164] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 267:
[1165] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 4:

ՔԱՐՎԱՃԱՌԻ ՇՐՋԱՆԻ ԳՈՐԾՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՔԱՐՏԵԶԸ



ՔԱՐՎԱՃԱՌ

Քաղաքը գտնվում է ԱՀ հյուսիսային հատվածում՝ Շահումյանի շրջանում՝ նախկին Վայկունիք, միջին միջնադարում՝ Ծար գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Տրտու–Թարթառ գետի վերին հոսանքի ձախափնյա բարձրադիր սարահարթին:

Քարվաճառը Արցախի հնագույն բնակավայրերից է: Դարեր շարունակ այն ներառված է եղել Արցախում գոյություն ունեցած հայկական իշխանությունների կազմում:

Այսօրվա դրությամբ հայագիտությանը հայտնի Քարվաճառի մասին պատմող ամենահին ձեռագիրը գրվել է 1402 թ.:

Ձեռագրի մեջ Քարվաճառը (Քարավաճառ) ներկայացված է որպես հռչակավոր Ծարա երկրի գրչօջախ բնակավայր[1166]: Հաջորդ տեղեկությունը մենք արդեն ստանում ենք 1661 թ. Դաղիվանքի կալվածացուցակից[1167]:

Չնայած 19–րդ դարում Քարվաճառում արդեն չկար հայ բնակչություն, բայց բնակավայրը մի գրության մեջ շարունակվում է հիշատակվել որպես Քարվաճառ[1168]:

Բնակավայրի անվան ծագման հետ կապված տարբեր մոտեցումներ կան: Կարծիք կա, որ Քարվաճառը միջնադարում հայտնի էր ջրաղացքարերի արտադրությամբ, և այդտեղից էլ բնակավայրը ստացել էր համապատասխան անվանումը:

Հովի. Կարագյոզյանը գտնում է, որ Քարվաճառ նշանակում է ավան[1169]: Ս. Կարապետյանի համոզմամբ Քարվաճառի անվան ծագումը պայմանավորված է եղել նրա բերդ լինելու հանգամանքով[1170]: Ս. Սարգսյանն էլ բնակավայրի անունը բխեցնում է սուրբ, աստվածային իմաստից[1171]:

1722–1730 թվականներին սղնախական պայքարի մարմանը զուգընթաց Արցախի դաշտավայրում թափառող մահմեդական ցեղերի՝ մասնավորապես թուրքերի և քրդերի ճնշումը Ծար գավառի վրա ավելի էր մեծանում:

18–րդ դարի երկրորդ կեսին Ղարաբաղի Փանահ և Իբրահիմ խաների ու քոչվոր քրդերի ճնշումների տակ Ծարա գավառը լիովին հայաթափվել է: Նման տխուր ճակատագիրը բաժին էր հասել նաև Քարվաճառ բնակավայրին:

[1166] Մատենադարան, ձեռ. 3578: ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 4, թ. 47:
[1167] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 4, թ. 47:
[1168] ՀԱԱ, ֆ. 468, ց. 2, գ. 73, թ. 1; Հմմտ Կարապետյան Ս., Հայաստանի պատմություն, Մռավականք, Երևան, 2019, էջ 385:
[1169] «Երկիր», հմ. 131, 1994:
[1170] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 385:
[1171] Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 189:

Թուրք և քուրդ խաշնարած ցեղերը Քարվաճառը հարմարեցնելով իրենց լեզվի հնչյունային համակարգին, այն դարձրել էին Քյալբաջար:

Ցարական տիրապետության շրջանում Քարվաճառը գտնվում էր Ելիզավետպոլ նահանգի Ջևանշիր գավառի կազմի մեջ:

Խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Քարվաճառը ողջ Արցախի հետ բռնակցվել էր Ադրբեջանին: 1923 թ. այն ներառվել էր Կարմիր Քուրդիստանի օկրուգի կազմի մեջ: 1930 թ. Քյալբաջարը դարձել էր նորաստեղծ համանուն շրջանի կենտրոնը:

ԼՂԻՄ–ը հյուսիսային Արցախից, մասնավորապես Քարհատի և Շահումյանի հայաբնակ շրջաններից, կտրելու նպատակով խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը Քարվաճառը թուրքերով և քրդերով էր բնակեցրել: Վերաբնակների համար սահմանվել էին տարբեր տեսակի արտոնություններ:

1960 թ. Քարվաճառը ստացել էր ավանի, իսկ 1980 թ. քաղաքի կարգավիճակ[1172]:

Այդ քաղաքականության արդյունքում 1970–1980–ական թվականներին Քարվաճառի բնակչությունը աճել էր 6–7 անգամ[1173]:

Արցախյան ազատագրական պատերազմի տարիներին Քարվաճառից հարձակումներ էին գործում՝ ինչպես Արցախի, այնպես էլ ՀՀ սահմանամերձ շրջանների վրա:

Ավազակորջը մեկընդմիշտ վերացնելու նպատակով 1993 թ. մարտի 27–ից մինչև ապրիլի 5–ը հայկական ուժերն անցան հակահարձակման և ազատագրեցին Քարվաճառը:

1998 թ. սկսվել էր Քարվաճառի վերաբնակեցման գործընթացը:

Քաղաքում հաստատվել են Ադրբեջանից բռնագաղթված հայ ընտանիքներ, ինչպես նաև ՀՀ բնակավայրերից քաղաքացիներ:

Բնակավայրը վերստացավ իր պատմական Քարվաճառ անվանումը:

1998 թ. ԱՀ կառավարության որոշմամբ պատմական Վայկունիքի (Ծար) գավառի տարածքի վրա կազմավորվել է ԱՀ Շահումյանի շրջանը, որի վարչական կենտրոնը դարձավ Քարվաճառ քաղաքը:

Քայլ առ քայլ վերաբնակիչների կյանքի համար նպաստավոր պայմաններ են ստեղծվում:

Քարվաճառի Վ. Սարոյանի անվան միջնակարգ դպրոցը 24 աշակերտներով հիմնադրվել է 1999 թ.: 2015–2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 118 աշակերտ[1174]:

Կառուցվել է նոր դպրոցական շենք: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Դ. Առստամյանը, Է. Ֆահրադյանը, Ա. Ղուկասյանը:

[1172] Ադրբեջանական սովետական հանրագիտարան, հ. 5, Բաքու, 1981, էջ 334 (ադրբեջաներեն):
[1173] «Ազատամարտ», հմ. 40, հոկտեմբեր, 1997; հմմտ Կարապետյան Ս., Մռավականք, էջ 386:
[1174] Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., ԼՂՀ կրթական համակարգը (1991–2016 թթ.), հ.3, էջ 609:

2019 թ. «Արի» ծրագրի շրջանակներում Քարվաճառում մեկնարկել է նոր թաղամասի կառուցման գործընթացը:

Քաղաքի պատմամշակութային նշանակության հուշարձաններն են՝ Ժայռապատկերներ, խաչքարեր, որոնցից մեկը՝ 916 թվագրությամբ, Հասան Ջալալ Ա-ի (1214-1261 թթ.) արձանագրությամբ սալիկ, տապանաքարեր (13–17-րդ դարեր), ձիթհանի քար (միջնադար):

Համայնքի տարածքում կան բազմաթիվ անանուն աղբյուրներ, հանդամասեր:

Քաղաքը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են շրջվարչակազմը, քաղաքապետարանը, մշակույթի տունը, շրջանային բուժմիավորումը, դպրոց, մանկապարտեզ, բանկի 1 մասնաճյուղ, առևտրի 8 կետեր:

Քարվաճառում 2003 թ. կար 549 բնակիչ, 2005 թ.՝ 492 բնակիչ, 2010 թ.՝ 141 տուն, 650 բնակիչ[1175], 2018 թ.՝ 186 տուն, 733 բնակիչ[1176]: Նրանք աշխատում են շրջկենտրոնի պետական և մասնավոր հիմնարկներում, զբաղվում գյուղատնտեսությամբ:

ՆՈՐ ՎԵՐԻՆ ՇԵՆ

Ադրբեջանի կողմից ԱՀ բռնազավթված Շահումյանի շրջանի Վերին շեն գյուղը գտնվում է հանրապետության հյուսիսային հատվածում՝ Սևջուր գետի զույգ ափերին: Թուրքերը հայկական բնակավայրը անվանում էին Յուխարի Աղջաքենդ:

Բնակավայրը նախկինում տեղաբաշխված էր Արցախի մեծ Կվենք (Մեծ Կողմանք) գավառում: Միջնադարում Գյուլիստանի մելիքության բարգավաճ գյուղերից մեկն էր:

Բնակավայրը գոյություն ուներ առնվազը 13–րդ դարից սկսած:

Մելիք Շահնազարյանների ոստերից մեկը՝ Մելիք Շահնազարյանց–Շահփուրյանց տոհմը, որը Ավետարանոցից տեղափոխվել էր Շուշի, այնուհետև Թիֆլիս, 19–րդ դարի կեսերին հաստատվել էր Վերին շենում[1177]:

18–րդ դարում գյուղում կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցին: Վերոնշյալ եկեղեցում պահվում էր 1493 թ. Կոշիկ անապատում (գյուղ Քոլատակ) գրված մի Ավետարան, որը խորհրդային տարիներին «անհետացել է»[1178]:

1905–1906 թվականների հայ թաթարական ընդհարումների ժամանակ կոզակներից բաղկացած ռուսական պատժիչ ջոկատները թալանել էին նաև Վերին շենը:

[1175] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1176] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 4:

[1177] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 288:

[1178] Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, նշխարներ, հ.Ա, Երևան, 2002, էջ 95; Կարապետյան Ս., Մռավկանք, էջ 200:

1920 թ. մարտ–ապրիլ ամիսներին գյուղն ամբողջությամբ ավերվել էր թուրքերի կողմից[1179]:

1915 թ. Մեծ Եղեռնից փրկված 53 ընտանիքներ (149 շունչ) հաստատվել են Վերին շենում[1180]: 1912 թ. գյուղն ուներ զանազան նշանակության 411 շինություն, այդ թվում 1 եկեղեցի, 190 բնակելի տուն, 210 տնտեսական կառույց, 6 խանութ և 4 ջրաղաց[1181]:

Վերին շենից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 667 մարդ, զոհվել է 241–ը[1182]: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել:

Վերին շենում 1873 թ. գործում էր նախակրթարան: Ուսուցիչն էր Սողոմոն Բաղդասարյանը: 1882 թ. բացվել էր եկեղեցական ծխական դպրոց, որը փակվել էր 1896 թ., այնուհետև վերաբացվել 1908 թ.:

1909–1910 ուսումնական տարում Վերինշենում բացվել էր երկդասյա դպրոց:

Մինչև 1920 թ. գյուղում 2 դպրոցական շենք էր կառուցվել:

Խորհրդային տարիներին ավանի կարգավիճակ ստացած բնակավայրում կային ութամյա և միջնակարգ դպրոցներ, որտեղ 1977 թ. սովորում էր 1000 աշակերտ, դասավանդում՝ 85 ուսուցիչ[1183]:

Գյուղը նախախորհրդային շրջանում ուներ 10–ից ավելի ջրաղացներ: 1929–1930 թվականներին Վերին շենում կառուցվել է փոքր հիդրոէլեկտրոկայան, որն էլ հնարավորություն է տվել գյուղում ունենալ նաև էլեկտրաղաց:

Վերին շենի աղբյուրներն են՝ Սպիտակ, Լիտրին, Հեքիաթ–թոլլած, Ասլանանց, Աղալովի, Նով, Կորկոտ, Կոլխոզի, Բաղերի, Ըրբթանի, Սուղին, Օխնակի, Ոտաց կամ Մանունց, Աղի ջրի, Շրաբին ձորի, Ղրխանանց, Սիլթիմանց, Մարիամ, Քարաղբյուր, Կաթնաղբյուր, Շրաբին ձորի կամ Ցորցոտ, Պղնձե, Կետին ղրաղի, Սոսին, Ճիլկոտի հոռին տակի, Լոբբրթանա հոռին տակի, Շելլունց յալի ձորի յոթ ակնանին, Վեսկանին, Գյուլումանց, Սահմադբեգին ուրդին, Տանձուտի ցեխի, Տանձուտի ձորի, Ցորտ, Սիպտակ քերծի, Ցմքաձորի, Էրգան հողերի, Միծրանին, Սովին ակնին, Թքըմանին ուրդի, Գյոյբուլաղի, Սրոնըվերա, Մևրի ձորի, Ջկոոտին, Ղոչահմադին, Լոցի (Սհակի), Թուզդուզի, Ղարագյոլի, Կետին ակնի, Մինիշակին թուլունաղը, Մաթին ուրդի, Մարյան, Օվդարի, Ջաթինդաղի, Գյոժգին քարին քշտի, Հորսկանին քարի, Դավաչուխուրի, Թոսխաձովի (Քոռ աղբյուր), Տոպրակին ուրդի, Բաբախանի քերծի տակի, Խաչգյաղուկի, Անտակ ծովի, Քերծին քշտի, Սլքամանց, Մոշի հողի, Չիքի, Սլյուկնաձովի մոտի, Քյահրիզի թաղի, Պռավին հանգստի քշտի, Ղչաղին[1184]:

[1179] Կարապետյան Ս., Մռավկանք, էջ 188:

[1180] Նույն տեղում, էջ 189:

[1181] Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год: Приложение к памятной книге, Тифлис, 1914, с. 53; հմմտ. Կարապետյան Ս., Մռավկանք, էջ 194:

[1182] Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հողը կանչում է, հ. Բ, Երևան, 2005, էջ 450–457:

[1183] «Նոր ուղի», հմ. 107, 6 սեպտեմբերի, 1977:

[1184] «Մռավի ղողանջներ», հմ. 8, 2002, հմ. 3, 2013, հմ. 2, 2015; հմմտ., Կարապետյան Ս., Մռավկանք, էջ 197:

Վերին շենում ապրել են Դալունց, Սուղունց, Սերոբանց, Սայունց, Բյացունց, Աղաջանանց, Մոսունց, Բաշրաթանց, Ջլավանց, Շաղունց, Ջանունց, Մանունց, Փստահանանց, Զանգլունց, Չիրթունց, Քյուխանց, Շելունց, Հախունց, Սաքունց, Պոռավանց, Բաբալունց, Պետունց, Ճիրինգանց, Բաղունց, Լոլունց, Ազրունց, Կզրիսաքունց, Դալլաքանց, Բուդունց, Պիպանանց, Վանունց, Ճիրինգանց, Պղնձե Բեղանց, Բիդունց, Թևանանց, Մյուրդունց, Պատվականանց, Ծիպունց[1185] ազգատոհմերի ներկայացուցիչները, որոնց մեծ մասն այսօր ապրում է աշխարհի տարբեր ծագերում:

Վերին շենը 1832 թ. ուներ 88 բնակիչ, 1886 թ.՝ 100 տուն, 1002 բնակիչ, 1918 թ.՝ 240 տուն, 1578 բնակիչ, 1970 թ.՝ 826 տուն, 4141 բնակիչ: Բռնագաղթի նախօրյակին 1992 թ.՝ 4200 բնակիչ[1186]:

Արցախյան ազատագրական պատերազմի տարիներին Շահումյանի շրջանի և ԼՂԻՄ-ի հայությունը միասնաբար ոտքի ելան պաշտպանելու իրենց ոտնահարված իրավունքները:

Վերին շենի հայությունը զենքը ձեռքին մինչև վերջ պայքարեց դարավոր թշնամու դեմ: Այդ պայքարում 83 հոգի զոհվել են, որոնցից 60-ը խաղաղ բնակիչներ էին: Ընդհանուր առմամբ արցախահայության ազատագրական պայքարի ամենաթեժ շրջանում՝ 1988-1994 թթ., Շահումյանի շրջանի հայությունը կարևոր դերակատարություն է ունեցել Արցախի սահմանների պաշտպանության և պետականության վերակերտման ու ամրապնդման գործում: Հայրենի պետությունը բարձր է գնահատել իր զավակների ծառայությունը: Արցախի հերոսի բարձր կոչմանն է արժանացել Շահեն Մեղրյանը: Խիզախության համար ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով պարգևատրվել են Արմո Գյուլումյանը, Սևան Նահապետյանը, ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանով՝ Դավիթ Պետրոսյանը, Արթուր Հակոբյանը, Շահեն Սահլյանը, Ֆյոդր Գզիրյանը, Վանյա Գզիրյանը, Յուրա Ախյանը, հետմահու՝ Հայկ Վարդանյանը, Դավիթ Խաչատուրովը, Սամվել Բաղդասարյանը, Վալերա Ջլավյանը, Հայկ Շելունցը:

Չնայած հերոսական դիմադրությանը՝ 1992 թ. հունիսի 13-ին ընկավ նաև Վերին-շեն ավանը:

Բազմադարյան կենսագրություն ունեցող բնակավայրից Նոր Շահումյանում, այդ թվում՝ Նոր Վերին շենում, հաստատվել էին ընդամենը մի քանի ընտանիքներ:

Նոր Վերին շենը գտնվում է ԱՀ հյուսիսային հատվածում՝ Շահումյանի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Վայկունիք, իսկ միջին միջնադարում՝ Ծար գավառում:

[1185] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 192-194:

[1186] ՀԱԱ, ֆ. 93, ց.1գ. 50, թ. 396-400; Свод статистических данных, извлеченных из посемейных списков населения Кавказа. Елисаветопольская губерния, Тифлис, 1888, с. 76-77; ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 59, թ. 4; Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ.Ա, էջ 30; Կարապետյան Ս., Մռավականք, էջ 189:

Բնակավայրը տեղաբաշխված է Տրտու-Թարթառ գետի գույգ ափերին՝ Քարվաճառ շրջկենտրոնից 8 կմ դեպի հյուսիս-արևելք:

Բնակավայրում և նրա շրջակայքում եղած գյուղատեղիների, գերեզմանոցների և հատկապես 12-13-րդ դարերից մնացած խաչքարերի բեկորները վկայում են, որ առնվազն միջին միջնադարից գոյություն ունի վերոհիշյալ գյուղը:

18-րդ դարի վերջերին քոչվորների ճնշման տակ գյուղը հայաթափվել էր: Այդտեղ հաստատվել էին վաչկատուն քրդեր, որոնք բնակավայրը անվանել էին Չայքենդ:

Հնարավոր է, որ նախկին հայկական բնակավայրն ունեցել էր Գետաշեն անունը և եկվորները պարզապես թարգմանաբար այն կոչել են Չայքենդ:

1993 թ. մարտի 27-ից մինչև ապրիլի 5-ը հայկական զինուժի ռազմագործողության արդյունքում դարավոր հայոց հողի այս կտորը ազատագրվել է:

1999 թ. սկսվել էր գյուղի վերաբնակեցման գործընթացը: Այդտեղ հաստատվել են Վերին շենի և Դաշքեսանի շրջանի Ջագլիկ ու Բանանց գյուղերից մի քանի ընտանիքներ: Բնակավայրը անվանակոչվել է Նոր Վերին շեն:

Վերինշենցի Շամիր և Գևորգ Ջլավյանների աջակցությամբ 2002 թ. Նոր Վերինշենում հիմնադրվել է դպրոց, որը կրում է բարերարների հոր Ջալալ Ջլավյանի անունը:

2015-2016 ուսումնական տարում դպրոցը ուներ 60 աշակերտ, 17 ուսուցիչ: Դպրոցի տնօրենն է Շ. Մարգարյանը:

Գյուղում և նրա շրջակայքում եղած աղբյուրների և հանդամասերի նախկին անունները մեզ չեն հասել:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, բուժկետ, դպրոց:

Նոր Վերին շենում 2015 թ. կար 56 տնտեսություն, 267 բնակիչ[1187], 2018 թ.՝ 57 տուն, 260 բնակիչ[1188]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՆՈՐ ՄԱՆԱՇԻԴ

Ադրբեջանի կողմից ԱՀ բռնազավթված Շահումյանի շրջանի Մանաշիդ գյուղը գտնվում է հանրապետության հյուսիսային հատվածում՝ Արցախի նախկին Մեծ Կվենք (Մեծ Կողմանք) գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Մռավի լեռնաշղթայի Ալիարակ և Շամփրապտոկ լեռնաճյուղերի միջլեռնային գոգավորությունում՝ Կուրակ գետի Բուզլուխ վտակի ձախ կողմի բարձունքի վրա:

[1187] Ղահրամանյան Կ., նշվ. աշխ., էջ 280:

[1188] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 4:

Գյուղը անցյալում ունեցել է նաև Մանուշ, Մանուշ շեն, Մանուշեցիք, Մնաշեն, անունները:

Գյուղում պահպանված 13-րդ դարի խաչքարերի բեկորները, գերեզմանոցները, նյութական մշակույթի հուշարձանները վկայում են, որ Մանաշիդը գոյություն է ունեցել առնվազն 12-13-րդ դարերից[1189]:

1629 թ. ձեռագրերից մեկում գյուղը հիշվում է Մանուշեցի անունով[1190]:

18-րդ դարում և 19-րդ դարի սկզբներին Մանաշիդը պատկանում էր Մելիք Բեգլարյանների մելիքական տանը:

18-րդ դարի սկզբներից մինչև 1992 թ.՝ գյուղի անկումը, բնակավայրի հայությունը, թուրք-թաթարական ավազակախմբերի դեմ պայքարելով, պահպանում էր հայրենի օջախը:

18-րդ դարի երկրորդ կեսին Մանաշիդի հայությունը, չդիմանալով Ղարաբաղի Իբրահիմ խանի ճնշումներին, Գյուլիստանի մելիք Հովսեփ Մելիք-Բեգլարյանի հետ հանգրվանել է Բոլնիսում:

Ռուս-պարսկական 1804-1813 թթ. պատերազմի տարիներին ռուսական զորքերի հաղթանակներով ոգևորված, 1812 թ. Մելիք-Բեգլարյաններն իրենց հպատակների հետ Բոլնիսի և Բորչալուի գավառներից տեղափոխվել և հաստատվել էին հայրենի Գյուլիստանում[1191]: Մանաշիդը նոր կյանք ստացավ:

1905-1906 թվականներին գյուղը հայտնվել էր հայ-թաթարական ընդհարումների կիզակետում:

1915 թ. գյուղում հաստատվել էին Մեծ եղեռնից փրկված 5 ընտանիքներ[1192]:

18-րդ դարում Մանաշիդում Ճղպրոտ վայրում կառուցվել էր Սբ. Խաչ (Նահատակ), իսկ 19-րդ դարում՝ Սբ. Աստվածածին (Սբ. Հովհաննես) եկեղեցիները: 1865 թ. մանաշիդցի Սարգիս Հարությունյանի (Փուլու Սարգիս) միջոցներով Կուրակ գետի վրա կառուցվել է կամարակապ կամուրջը[1193]: Գյուղն ուներ մի քանի ջրաղացներ:

Խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1929 թ., գյուղում կոլտնտեսություն էր կազմակերպվել, որը գործել է մինչև 1992 թ.:

Հայրենական մեծ պատերազմին Մանաշիդից մասնակցել է 182 հոգի, զոհվել է 84-ը: Նրանց հիշատակին գյուղում հուշակոթող էր կառուցվել:

1908 թ. Մանաշիդում դպրոց էր բացվել: Ուսուցիչն էր Գրիգոր Հակոբյանը[1194]:

[1189] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 153:
[1190] Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ., Երևան, 1978, էջ 336:
[1191] Բալայան Վ., Արցախահայ ազատագրական պայքարի բովանդակությունը 17-րդ դարի երկրորդ կեսից մինչև 1813 թ. , Ստեփանակերտ, 2013, էջ 87, 88, Բալայան Վ., Դրվագներ..., էջ 12:
[1192] Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Բ., էջ 330-331:
[1193] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 155-160:
[1194] «Մշակ». հմ. 70, 28 մարտի, 1908:

1921 թ. Մանաշիդում բացվել էր տարրական դպրոց, որը 1938 թ. միջնակարգի կարգավիճակ էր ստացել:

Մանաշիդի աղբյուրներն են՝ Ջինին, Ջորավոր, Շաբուխանի, Քոլին ղորղի, Քարի նով:

Մանաշիդում ապրում էին Ղասունց, Հոպոպանց, Առստամ Հայունց, Խնջալանց, Լշարանց, Հրպետանց, Ըղջանանց, Ալեքսանանց, Սիմոնանց, Քյուքունց, Թյունի-Հայունց, Իրիցանց, Բբանց, Պտրուսանց, Մնացականանց[1195] ազգատոհմերի ներկայացուցիչները:

Արցախյան ազատագրական պայքարի տարիներին առաջին հարվածը հասցվել էր Շահումյանի շրջանին: 1991 թ. հուլիսի 16-ին ԽՍՀՄ ներքին գործերի զորքերի աջակցությամբ ադրբեջանցի ավազակախմբերը գրավել էին Մանաշիդը: Տեղացի ազատամարտիկների և ՀՀ-ից ու ԱՀ մյուս բնակավայրերից եկած կամավորականների համատեղ ջանքերով հաջողվել էր նույն թվականի սեպտեմբերի 13-ին ազատագրել գյուղը:

Արցախյան ազատամարտի տարիներին զոհվել են ծննդով մանաշիդցի Սերգի Հարությունյանը, Էդիկ Հարությունյանը, Բենիկ Վարդանյանը, Մագթաղ Վերդյանը, Հայկ Վարդանյանը, Արծվիկ Պետրոսյանը, Լյովա Բարսեղյանը[1196]:

1992 թ. հունիսի 13-ին ընկավ նաև Մանաշիդը:

Մանաշիդում 1832 թ. կար 12 բնակիչ[1197], 1886 թ.՝ 39 տուն, 395 բնակիչ[1198], 1918 թ.՝ 80 տուն, 794 բնակիչ[1199], 1981 թ.՝ 415 բնակիչ[1200]:

Բռնագաղթած մանաշիդցիները հիմնականում տեղափոխվել էին ՀՀ և ՌԴ: Մի քանի ընտանիքներ հաստատվել են ազատագրված Քարվաճառի Նոր Մանաշիդ բնակավայրում:

Նոր Մանշիդը գտնվում է ԱՀ հյուսիսային հատվածում՝ Շահումյանի շրջանում՝ Արցախի նախկին Վայկունիք, միջին միջնադարում՝ Ծար գավառում:

Գյուղը տեղաբաշխված է Տրտու-Թարթառի վերին հոսանքի աջափնյակում:

Գյուղի հարևանությամբ գտնվում է 12-13-րդ դարի հայկական գերեզմանոց, որը վկայում է նախկինում հայկական բնակավայրի գոյության մասին:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին, թրքախոս քրդական ցեղերի ճնշման տակ, հայերը լքել էին իրենց բնակավայրը: Այստեղ հաստատված եկվորները բնակավայրը անվանակոչել են Սնրխքիլիսե, որը թարգմանաբար նշանակում է կոտրած (ավերված) եկեղեցի: Չնայած այսօր եկեղեցին հասկանալի պատճառով գոյու-

[1195] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 153-155:
[1196] Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Բ., էջ 679:
[1197] ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 50, թ. 392:
[1198] Свод статистических данных, извлеченных из посемейных списков населения Кавказа, с. 88-89.
[1199] ՀԱԱ, ֆ . 150, ց. 1, գ. 59, թ. 4:
[1200] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 154:

թյուն չունի, այնուամենայնիվ վերոհիշյալ անունը հայաբնակ բնակավայրի մասին է մեզ հուշում:

1993 թ. մարտի 27-ից մինչև ապրիլի 5-ը հայկական զինուժի ռազմագործողության արդյունքում բնակավայրը ազատագրվել է:

2001 թ. սկսվել էր գյուղի վերաբնակեցման գործընթացը: Այդտեղ հաստատվել էին Շահումյանի շրջանից, այդ թվում՝ Մանաշիդից, բռնատեղահանված ընտանիքներ:

Բնակավայրը ստացել է Նոր Մանաշիդ անվանումը: 2004 թ. հիմնադրվել է Նոր Մանաշիդի Հ. Վարդանյանի անվան հիմնական դպրոցը: 2015-2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 32 աշակերտ, դասավանդում՝ 14 ուսուցիչ:

Դպրոցի տնօրեններ են աշխատել Վ. Հարությունյանը, Ռ. Հարությունյանը:

Բնակավայրը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, դպրոց և բուժկետ:

Գյուղի տարածքում եղած աղբյուրների և հանդամասերի անունները մեզ անհայտ են:

Նոր Մանաշիդում 2010 թ. կար 19 տուն, 79 բնակիչ[1201], 2015 թ.՝ 22 տուն, 97 բնակիչ[1202], 2018 թ.՝ 18 տուն, 85 բնակիչ[1203]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԵՂԵԳՆՈՒՏ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսային հատվածում՝ Շահումյանի շրջանում՝ Արցախի նախկին Վայկունիք, իսկ միջին միջնադարում՝ Ծար գավառում:

Բնակավայրը տեղաբաշխված է Տրտու-Թարթառ գետի ձախակողմյան Լև վտակի զույգ ափերին:

Եղեգնուտը Արցախի հին բնակավայրերից է: Չնայած եկվոր քրդերն ու թուրքերը դարերի ընթացքում ավերել էին այն ամենը, ինչ հայկական է, այնուամենայնիվ գյուղում և նրա շրջակայքում պահպանված եկեղեցիների, մատուռների ավերակները, կամուրջները, խաչքարերի, արձանագրությունների բեկորները հեռավոր անցյալի հայկական եռուն կյանքի լուռ վկաներն են:

Եկվորները եկեղեցիների սրբատաշ արձանագիր քարերը, ջարդած խաչքարերի բեկորները օգտագործել են որպես շինանյութ: Դրանց մի մասը տեսանելի է նրանց տների և տնտեսական նշանակության շինությունների որմերում:

[1201] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1202] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 287:
[1203] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

Եղեգնուտի՝ ներկայումս գոյություն չունեցող եկեղեցու շինարարական արձանագրությամբ բարավորի քարը, որը ագուցված է տների պատերից մեկում, վկայում է որ Վերին Խաչենի Վախթանգ իշխանի կին Արզու Խաթունը, որը 13-րդ դարի սկզբներին մշակութային բեղուն գործունեություն էր ծավալել. կառուցել էր ինչպես Դադի վանքի Կաթողիկե, Օծկավանքի եկեղեցիները, այնպես էլ Եղեգնուտի վանքը: Գյուղից 0,7 կմ դեպի արևելք՝ մի թմբի վրա, պահպանվում է միանավ հորինվածքով փոքր մի եկեղեցի (12-13-րդ դարեր):

Եղեգնուտից 2,4 կմ հյուսիսարևմուտք՝ Լև գետին աջից միախառնվող վտակի թավ անտառածածկ ձորում, պահպանվում են Ծմակավանքի ավերակները (13-րդ դար): Վերոհիշյալ սրբավայրից 0,7 կմ հյուսիս-արևմուտք՝ լեռան գագաթին, տեսանելի են Սբ. Գևորգ կիսավեր մատուռի ավերակները:

Ծմակա անապատից 0,7 կմ հյուսիս-արևմուտք, Եղեգնուտից 3 կմ հեռավորության վրա՝ լեռան գագաթին են գտնվում միջնադարյան դիտակետ-աշտարակի ավերակները:

Գյուղից 1,5 կմ Լև գետի հոսանքն ի վեր պահպանվում է Շահի կոչված կամուրջը[1204]:

Գյուղի տարածքում պահպանվել են միջնադարյան գերեզմանոցների և 13-րդ դարից մնացած խաչքարերի բեկորներ:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և նրանց միացած թուրք ու քուրդ քոչվոր ցեղերից բաղկացած ավազակախմբերի անընդհատ կրկնվող արշավանքների պատճառով գավառի հայությունը, այդ թվում՝ Եղեգնուտի բնակիչները լքել էին իրենց տները: 19-րդ դարում այդտեղ հայտնվել էին թրքախոս քրդեր, որոնք բնակավայրը վերանվանել էին Աղայար, իսկ խորհրդային տարիներին այն պաշտոնապես կոչվել էր Ղամշլի:

Գյուղի պատմական անունը մեզ չի հասել: Հետազոտողներից Սամվել Կարապետյանը գտնում է, որ 1267 թ. Դադի վանքի արձանագրություններից մեկում հիշատակված վանքապատկան գյուղերից մեկը՝ Ծովատեղը, որի մասին տեղեկություններ է պահպանվել նաև մինչև 18-րդ դարի վերջերի վիմագիր և այլ հիշատակարաններում, ներկայիս Եղեգնուտն է[1205]:

Հնարավոր է նաև՝ նույն Դադի վանքի ավագ խորանի ճակատին պահպանված արձանագրության մեջ հիշատակված Եղեգիս բնակավայրը լինի ներկայիս Եղեգնուտը:

Խորհրդային տարիներին Քարվաճառը, այդ թվում՝ Եղեգնուտը բռնակցվել էին Ադրբեջանին: 1923 թ. Ղամշլին Կարմիր Քուրդիստանի օկրուգի կազմի մեջ էր, իսկ 1930 թ.՝ ԱԽՍՀ Քելբաջարի նորաստեղծ շրջանի:

[1204] Կարապետյան Ս., Մոավականք, էջ 243-251:
[1205] Կարապետյան Ս., Մոավականք, էջ 242-243:

1993 թ. մարտի 27-ից մինչև ապրիլի 5-ը հայկական զինուժի ռազմագործողության արդյունքում բնակավայրը ազատագրվել է:

1999 թ. սկսվել է գյուղի վերաբնակեցման գործընթացը: Այդտեղ հաստատվել էին Ադրբեջանից բռնագաղթված հայ ընտանիքներ: Վերաբնակիչների մի մասն էլ տեղափոխվել է ՀՀ բնակավայրերից:

Վերաբնակեցված գյուղը ստացել է Եղեգնուտ անունը:

Վերաբնակեցման առաջին տարում՝ 1999 թ., գյուղում բացվել է Պետրոս Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցը, որտեղ 2015-2016 ուսումնական տարում սովորում էր 66 աշակերտ, դասավանդում՝ 16 ուսուցիչ: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Մ. Ամիրյանը, Ա. Պետրոսյանը, Ժ. Սարգսյանը:

2009 թ. նոր դպրոցական շենք է կառուցվել: Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապն ու ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, դպրոց, մանկապարտեզ, բուժկետ, առևտրի 1 կետ:

Եղեգնուտում 2010 թ. կար 43 տնտեսություն, 183 բնակիչ[1206], 2018 թ.՝ 43 տնտեսություն, 220 բնակիչ[1207]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՋՈՒԱՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսարևմտյան հատվածում՝ Շահումյանի շրջանում՝ Արցախի նախկին Վայկունիք, միջին միջնադարում՝ Ծար գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Տրտու-Թարթառի վտակի Դուտխու (Թութխու) գետի ձախափնյակում:

Ջուարը Արցախի հին բնակավայրերից է: 1661 թ. ձեռագրերից մեկում խոսվում է Դուտխու գետահովտի վանքապատկան բնակավայրերից մեկի՝ Ջուար գյուղի մասին[1208]:

18-րդ դարում ապրած և գործած կաթողիկոս Սիմեոն Երևանցին իր աշխատության մեջ Ջուարը ներկայացրել է որպես Խութավանքի (Դադիվանք) արևելյան հատվածում գտնվող վանքապատկան բնակավայր[1209]:

[1206] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1207] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

[1208] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ.160, թ. 4 ա; ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 4, թ. 4:

[1209] Ջամբռ համաժողովեցեալ և շարադրեցեալ ի Սիմէօնէ կաթողիկոսէ Երևանցւոյ, Վաղարշապատ, 1873, էջ 283:

19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի սկզբների քարտեզներում բնակավայրը արդեն ուներ Ջուլֆուգարլու անունը[1210]:

Ուսումնասիրողներից Ա. Հակոբյանը գտնում է, որ Ջուարն ու Ջուլֆուգարլուն համադրելի են[1211]:

Ս. Սարգսյանի կարծիքով հնարավոր է Ջուլֆուգարլուն Դուտխու գետի հովտի վանքապատկան բնակավայրը լինի[1212]:

Բնակավայրի տարածքում հայտնաբերվել են 13-18-րդ դարերի մի քանի խաչքարերի բեկորներ:

Ջուարից Դուտխուի հովիտն ի վեր տեղաբաշխված են ևս հայկական միջնադարյան մի քանի գյուղեր, որտեղ պահպանվել են հին գերեզմանոցների մնացորդներ, իսկ Մոս գյուղի հարևանությամբ՝ Կարմիր վանքի ավերակները[1213]:

Գյուղից 3 կմ հեռավորության վրա են հանքային բուժիչ աղբյուրները: Վերոհիշյալ ջերմաջուրը կամ «բաղինք արքունական»-ը վաղ միջնադարից եղել է Հայոց արևելից կողմանց թագավորների և բանակի ամառային հանգստավայրը[1214]:

Մոս և Ապահեն գյուղերը մինչև 18-րդ դարը համարվել են գրչության կենտրոններ:

18-րդ դարի վերջերին վերոհիշյալ գյուղերը Ղարաբաղի խանի և թրքախոս քրդական ցեղերի ճնշման տակ հայաթափվել են:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Ջուարը բնակեցվել է քրդերով: Գյուղը ստացել էր Ջուլֆիգարլի անվանումը:

1921 թ. Դուտխուի հովիտը հայկական գյուղերի տարածքներով բռնակցվել էր խորհրդային Ադրբեջանին:

1923-1930 թվականներին Ջուլֆիգարլին գտնվում էր Կարմիր Քուրդիստանի օկրուգի կազմում, իսկ 1930 թ. այն Քելբաջարի նորաստեղծ շրջանի բնակավայրերից մեկն էր:

1993 թ. մարտի 27-ից մինչև ապրիլի 5-ը հայկական բանակի ռազմագործողության շնորհիվ ազատագրվել է նաև Ջուլֆիգարլի գյուղը:

Դեռևս մինչև Շահումյանի վարչական շրջանի կազմավորումը՝ 1996 թ., սկսվել էր բնակավայրի վերաբնակեցման գործընթացը: Հետագա տարիներին այդտեղ հաս-

[1210] Кондратенко, Карта Елисаветпольской губернии с показанием обществ и распределения населения по вероисповеданию, Тифлисъ, 1888, Карта Кавказского края, Тифлисъ, 1904, Пятиверстная карта Елисаветпольской губернии, Тифлисъ, 1910, Специальная карта Евразийской Росии, Тифлисъ, 1910, Карта генерального штаба К-38-141, Кельбаджар.

[1211] Յակոբեան Ա., Պատմա-աշխարհագրական և վիմագրագիտական հետազոտութիւններ, էջ 243-244:

[1212] Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 207; Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի, էջ 677:

[1213] Կարապետյան Ս., Մոռվականք, էջ 231-234:

[1214] Բալայան Վ., Արցախի պատմությունը, էջ 17:

տատվել են նոր վերաբնակներ ՀՀ և ԱՀ բնակավայրերից, մասնավորապես՝ Ջերմուկից, Վաղարշապատից, Արմավիրից, Հրազդանից, Վարդենիսից[1215]:

Բնակավայրը ստացել է Ջուար անունը:

Ջուարում 1998 թ. հիմնադրվել է Ն. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոցը: 2015–2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 20 աշակերտ, դասավանդում 9 ուսուցիչ: Տարբեր տարիների դպրոցը ղեկավարել են Ս. Ղարագյոզյանը, Ա. Արզոյանը, Ծ. Մակարյանը, Մ. Պողոսյանը, Տ. Բարսեղյանը[1216]:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, դպրոց, բուժկետ, առևտրի 1 կետ:

Գյուղի տարածքում կան անունները մոռացված շատ աղբյուրներ և հանդամասեր: Համայնքի կազմում ընդգրկված են Ջարկունի, Թութխուն, Հավախաղաց գյուղերը:

Ջուարում 2010 թ. կար 22 տուն, 76 բնակիչ[1217], 2018 թ.՝ 35 տուն, 101 բնակիչ[1218]:

Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԾԱՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսարևմտյան հատվածում՝ Շահումյանի շրջանում՝ Արցախի նախկին Վայկունիք, միջին միջնադարում՝ Ծար գավառում[1219]: Բնակավայրը տեղաբաշխված է Տրտու–Թարթառ գետի վերին հոսանքում՝ ձախից նրան միախառնվող վտակի՝ Ծարագետի միջև գոյացած եռանկյունաձև սարահարթում:

Երեք կողմերից անդնդախոր ձորերի առկայությունը հնարավորություն է տվել, որ միջին միջնադարից բերդավանը դառնար անմատչելի բնակավայր: Միայն հարավարևմտյան հատվածում սարահարթը նեղ շերտով միացված է շրջակա տարածքների հետ: Վերոհիշյալ հատվածն էլ ժամանակին պարսպապատված է եղել:

Բերդավանի անառիկ դիրքը հաշվի առնելով՝ 13–րդ դարից Վերին Խաչենի կամ Ծարի իշխանական տան՝ Դոփյանների ներկայացուցիչները Ծարը իշխանանիստ կենտրոն էին դարձրել: Բերդավանի անունը տարածվել էր ողջ իշխանության վրա:

13–րդ դարի սկզբներին Վերին Խաչենի կամ Ծարա իշխանությունը Զաքարյանների օժանդակությամբ սելջուկներից ազատագրվել էր:

[1215] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 381:

[1216] Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., ԼՂՀ կրթական համակարգը (1991–2016 թթ.), հ.3, էջ 610:

[1217] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1218] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 5:

[1219] Ալ. Հակոբյանը Վայկունիք և Ծար գավառները համադրելի չի համարում. Տես՝ Յակոբյան Ա., Պատմա–աշխարհագրական և վիմագրագիտական հետազոտութիւններ, էջ 225:

Զաքարյանների իշխանապետության տարիներին Վերին Խաչենում կամ Ծարում տիրություն էր անում Հասան իշխանը: Նրա վաղաժամ մահվանից հետո երկրամասում իշխում էր նրա կինը Զաքարե և Իվանե Զաքարյանների քույր Դոփին: Վերջինս եռանդուն գործունեություն է ծավալել իշխանության ամրապնդման, հարևանների հաշվին իր տարածքների ընդլայնման, վանական համալիրների կառուցման ուղղությամբ: Նրա օրոք Ծար բերդավանում շինարարական եռուզեռ էր[1220]:

Ծարի մասին առաջին գրավոր տեղեկությունը մեզ է հասել 11–րդ դարից[1221]:

Բնակավայրը արդեն ավանի համարում ուներ: Գյուղանունը վկայված է 1289 թ. ձեռագրերից մեկում[1222]:

1386 թ. Լենկ Թեմուրի հրոսակների հարձակման ժամանակ Ծար գյուղաքաղաքից Վակունիս, ապա Ղարաբաղ ու Ծափանիս գյուղաքաղաք էր փախել Սարգիս վարդապետը[1223]:

Հաջորդ անգամ Ծարը հիշատակվում է 1387 թ. կազմած մի Ավետարանում, այնուհետև 1541 թ. հիշատակարանում, իսկ 1588 թ. Թումա Ծարեցին հիշատակագրություն է թողել Դադի վանքում[1224]:

16–րդ դարի ձեռագրերում խոսվում է Հովհաննեսիկ Ծարեցու և Հովհաննես Ծարեցու մասին, իսկ 1621 թ. կազմված կալվածագրերից մեկի ներքո ստորագրել էր Հովհաննես վարդապետ Ծարեցին[1225]: 1691 թ., ի դեմս Գետամիջո վանքի, Ծարը եպիսկոպոսանիստ էր[1226]:

1696 թ. հիշվում է Աթանաս Ծարեցին[1227]: 1763 թ. կալվածացուցակում բնակավայրը հայտնի է Մեծ Ծար անունով[1228]:

Իշխանանիստ կենտրոն Ծարում ժամանակին կառուցվել էին չորս եկեղեցիներ: Դրանցից Ծարի մայր եկեղեցին, որը կառուցվել էր 1225 թ.[1229] կամ 1236 թ.[1230], և Սբ. Սարգիս եկեղեցին (1274 թ.): Դրանք հիմնահատակ ավերվել են, իսկ Սբ. Գրիգոր (1274 թ.) և Սբ. Սարգիս (1279 թ.) եկեղեցիները բարեբախտաբար կանգուն են:

[1220] Բալայան Վ., Արցախի պատմությունը, էջ 92–93:

[1221] Գրիգոր Մագիստրոս, Թղթեր, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 221; Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Յակոբոս Վ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 151; հմմտ. Կարապետյան Ս., Մռավականք, էջ 395:

[1222] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 396:

[1223] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 115:

[1224] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 396–397:

[1225] Նույն տեղում:

[1226] Նույն տեղում:

[1227] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. երկրորդ, յօրինեց Բարսեղ վ. Սարգիսեան, Վենետիկ, 1924, էջ 132; հմմտ. Կարապետյան Ս., Մռավականք, էջ 397:

[1228] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 397:

[1229] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 384:

[1230] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 397:

Ծարի մոտ է գտնվում նշանավոր Գետամիջո Սբ. Աստվածածին եկեղեցին (Ծարավանքը), որը նույնպես հիմնահատակ ավերվել է: Ծարում ուշագրավ և հազվագյուտ հուշարձան էր 1658 թ. Ավանեսի կառուցած գլխատունը, որը ավերվել է 1993 թ.[1231]:

Բնակավայրի տարածքում պահպանվել են 11–18-րդ դարերի խաչքարերի և տապանաքարերի բեկորներ: Խորհրդային տարիներին Ծարում ադրբեջանցիների կառուցած դպրոցի պատերին տեսանելի էր նմանօրինակ 132 բեկոր[1232]:

Միջնադարում Ծարը եղել է Հայոց արևելից կողմանց գրչության կենտրոններից մեկը: Այդտեղ գրվել են Ավետարաններ, ձեռագիր մատյաններ, որոնք ունեն ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ բնույթ:

Մոնղոլների համար եկամտի մեծ աղբյուր էր դարձել նվաճված վայրերում հափշտակված ձեռագիր մատյանները մեծ գումարներով հայ իշխաններին վաճառելու գործը: Կիրակոս Գանձակեցին՝ ի թիվս այլոց, հիշատակում է իշխան Գրիգոր Ծարեցուն[1233]:

16-րդ դարում ժրաջան աշխատանք է ծավալել Հովհաննես վարդապետ Ծարեցին: Սկզբնաղբյուրների վկայությամբ Դաղի վանքում նրա գլխավորությամբ ստեղծվել են բազում գրքեր, որոնք ժամանակի ընթացքում հրկիզվել և կողոպտվել են օտար նվաճողների կողմից: Այդ ձեռագրերից մեկը 6879 թվահամարով այսօր պահվում է Մատենադարանում:

Առավել բեղմնավոր է եղել Ծարա իշխանական տներից մեկի՝ Ջհանշահանց տոհմի ներկայացուցիչ Հովհաննեսիկ Ծարեցու գործունեությունը: Նրա թողած գրական-պատմագիտական ժառանգության ամենանշանակալից գործը «Յովհաննիսիկ վարդապետի համառոտ պատմութիւն անցից անցելոց ի վերին կողմանս Հայաստանի ըստ կարգի ժամանակագրութեան» աշխատությունն է[1234]: Ամստերդամում 17-րդ դարի սկզբներին Մատթեոս Ծարեցին տպարան է հիմնադրել:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խանի հայատյաց քաղաքականության և թրքախոս քրդերի ձնշման տակ Ծարի հայությունը բռնում է արտագաղթի ճանապարհը:

19-րդ դարի վերջերին այդտեղ հաստատվում է փարախկանլի (ֆարիկյան) քոչվոր ցեղը: Ծարը եկվորները վերանվանեցին Ջառ:

1921 թ. Ծարը բռնակցվել էր խորհրդային Ադրբեջանին: 1923–1930 թթ. բնակավայրը Կարմիր Քուրդիստանի օկրուգի կազմում էր, իսկ 1930 թվականից՝ նոր կազմավորված Քելբաջարի շրջանի:

[1231] Նույն տեղում, էջ 408–410:
[1232] Նույն տեղում, էջ 405:
[1233] Կիրակոս Գանձակեցի, էջ 280:
[1234] «Ճոռաքաղ», Մոսկվա, 1859, հ.Ա, տետրակ Գ, էջ 69–76, տետրակ Դ, էջ 105–112; հմմտ. Բալայան Վ., Արցախի պատմությունը, էջ 165:

1993 թ. մարտի 27-ից մինչև ապրիլի 5-ը հայկական բանակի ռազմագործողության շնորհիվ ազատագրվել է նաև Ծար գյուղը:

Մեկ դար անց բռնազավթված Արցախի հռչակավոր բնակավայրը վերադարձվել է իր նախկին տերերին:

Պատերազմի ավարտից հետո սկսվել էր բնակավայրի վերաբնակեցման գործընթացը:

Այդտեղ հիմնականում հաստատվել են ՀՀ Մարտունու շրջանի Ջոլաքար գյուղից մի քանի ընտանիքներ:

Բնակավայրը նորից ստացավ պատմական Ծար անունը:

1999 թ. հիմնադրվել է Վազգեն Սարգսյանի անվան հիմնական դպրոցը: 2002 թ. գյուղում դպրոցական նոր շենք է կառուցվել: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են եղել Ս. Սիմոնյանը, Վ. Աբրահամյանը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական կարգով: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Բնակավայրի տարածքում կան բազմաթիվ աղբյուրներ և հանդամասեր, որոնց անունները ժամանակի հոլովույթում մոռացության են մատնվել:

Համայնքն ունի գյուղապետարան, դպրոց, բուժկետ:

Ծարում 2010 թ. կար 13 տուն, 58 բնակիչ[1235], 2018 թ.՝ 14 տուն, 67 բնակիչ[1236]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՀԱՎՍԱԹԱՂ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսարևմտյան հատվածում՝ Շահումյանի շրջանում՝ նախկին Վայկունիք, իսկ միջին միջնադարից՝ Ծար գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Տրտու-Թարթառի վտակ Դուտխու գետի ձախափնյակում:

Հավսաթաղը Արցախի հին բնակավայրերից է և միջնադարում հայտնի է Խնձորուտ անունով[1237]: Գյուղի մասին առաջին հիշատակությունը հանդիպում ենք Մարտիրոս Խնձորեսկցու ձեռագիր Ավետարանում (1653–1654 թթ.)[1238]:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խանի հայակուլ քաղաքականության, քրդական ավազակաբարո ցեղերի ձնշման տակ հայկական գրչության կենտրոններից մեկը՝ Խնձորուտը, հայաթափվել էր:

[1235] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1236] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:
[1237] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա., Երևան, 1965; էջ 1056, ձեռ. 3647:
[1238] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 227; հմմտ. Մինասյան Թ., Արցախի գրչության կենտրոնները, Երևան, 2015, էջ 37:

19-րդ դարի վերջերին հայկական բնակավայրում հայտնված քրդերը գյուղանունը ուղղակի թարգմանությամբ կոչել են Ալմալու:

Ուսումնասիրողներից Ս. Սարգսյանը տեղանվան ստուգաբանության հետ կապված գտնում է, որ բնակավայրի անունը Խնձոր, Խնձորենի հասկացության հետ կապ չունի, և ավելի շատ այն լեռնային գետի կամ ձորագետի բնակավայր իմաստը ունի[1239]:

Բնակավայրում հաստատված քրդերը, մանավանդ խորհրդային տարիներին Բաքվի իշխանությունների հրահանգով հիմնովին ավերել են Խնձորուտի հուշարձանները:

Ներկայումս Խնձորուտում և հարակից տարածքներում միայն տեսանելի են մի ժամանակվա շեն հայկական գյուղերի, եկեղեցիների հետքերը:

1921 թ. Ալմանլուն բռնակցվել էր խորհրդային Ադրբեջանին: 1923 թ. մինչև 1930 թ. բնակավայրը Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ. նոր կազմավորված Քելբաջարի շրջանի կազմում էր:

1993 թ. մարտի 27-ից մինչև ապրիլի 5-ը հայկական բանակի հարվածների տակ ազատագրվել է նաև Ալմանլու գյուղը:

1998 թ. սկսվել է գյուղի վերաբնակեցման գործընթացը: Վերաբնակիչների կարգավիճակով այդտեղ հաստատվել են Մարտակերտի շրջանի բռնազավթված բնակավայրերից, ինչպես նաև ՀՀ Արագածոտնի մարզի, մասնավորապես Թալինի շրջանի գյուղերից և Երևանից մի քանի ընտանիքներ: Բնակավայրը ստացել է Հավսաթաղ անունը:

2002 թ. գյուղում հիմնական դպրոց է բացվել: 2003 թ. իրանահայ բարերար Շուշանիկ Սարգսյանի ժառանգների նվիրատվությամբ դպրոցական նոր շենք է կառուցվել: Դպրոցը կրում է Շ. Սարգսյանի անունը:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Ա. Գրիգորյանը, Ա. Մաթևոսյանը, Լ. Զոբանյանը, Ա. Դանիելյանը, Է. Հարությունյանը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Բնակավայրը ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Բնակավայրի տարածքի աղբյուրների, հանդամասերի անունները ժամանակի հոլովույթում մոռացության են մատնվել:

Համայնքն ունի գյուղապետարան, դպրոց, բուժկետ, առևտրի 3 կետ:

Հավսաթաղում 2010 թ.՝ կար 18 տուն 71 բնակիչ[1240], 2018 թ.՝ 19 տուն 77 բնակիչ[1241]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1239] Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 207:
[1240] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1241] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

ՆՈՐ ԲՐԱՋՈՒՐ

Բրաջուր գյուղը գտնվում է հյուսիսային Արցախում: Բնակավայրը Արցախի հին բնակավայրերից է:

10-11-րդ դարերում գյուղը գտնվում էր հյուսիսային Արցախում գոյություն ունեցած Փառիսոսի թագավորության կազմում: 12-13-րդ դարերում գյուղը Զաքարյանների իշխանապետության ներքո էր գտնվում: Մելիքական շրջանում Բրաջուրը Գյուլիստանի մելիքության կազմում էր:

Բրաջուրցիները զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, մասամբ էլ սայլապանությամբ: Հատկապես գյուղում զարգացած էր գորգագործությունը: Այդտեղ գործած գորգերն ու կարպետները մրցում էին տվյալ ժամանակի Պարսկաստանի գորգագործական ընկերությունների արտադրության հետ:

Բրաջուրի համար ձակատագրական էր 1905-1906 և 1918-1920 թվականների հայ-թաթարական ընդհարումները: Ստեղծված ծանր կացության հետևանքով բնակչության մի մասը հեռացել էր հարազատ վայրերից:

19-րդ դարի 90-ական թվականներին գյուղում կար 33 տուն 362 բնակիչ: Գյուղում գործել է Սբ. Գաբրիել եկեղեցին[1242]: Կառուցվել էին Հովսեփի և քարե կամուրջները:

1921 թ. գյուղը բռնակցվել էր խորհրդային Ադրբեջանին և ներառված էր Խանլարի շրջանի կազմի մեջ:

Արցախյան ազատագրական շարժման առաջին տարիներին՝ 1988-1989 թթ., գյուղը բռնատեղահանվել է: Կարճ ժամանակահատվածում գյուղը բնակեցվել է ադրբեջանցիներով: Նրանք բնակավայրն անվանել են Քյարամլի:

Հայկական բազմադարյա պատմություն ունեցող բնակավայրի անունը և նրա հետ կապված հիշատակները պահելու նպատակով ազատագրված Քարվաճառի բնակավայրերից մեկը՝ Ղլըչլրն, վերանվանվել է Նոր Բրաջուր:

Բնակավայրը գտնվում է ԱՀ հյուսիսարևմտյան հատվածում՝ Շահումյանի շրջանում, Արցախի նախկին Վայկունիք, իսկ միջին միջնադարից՝ Ծար գավառում:

Գյուղը գտնվում է Քարվաճառ քաղաքից 10 կմ դեպի հյուսիս-արևմուտք, Տրտու-Թարթառի ձախափնյակում:

Գյուղի տարածքում պահպանված գյուղատեղիի, եկեղեցու, գերեզմանոցի հետքերը, խաչքարերի և տապանաքարերի բեկորները վկայում են տվյալ վայրում միջնադարյան հայկական գյուղի գոյության մասին: Գյուղի հին գերեզմանոցում վերաբնակները հողի տակից հանել են 1197 թվագրությամբ գեղաքանդակ արձանագիր մի խաչքար[1243]: Գյուղի պատմական անունը դարերի ընթացքում մոռացության է մատնվել:

[1242] Մակար. եպս. Բարխուդարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 303:
[1243] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 374:

18-րդ դարի վերջերին ու 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խանի հայակործան քաղաքականության ու թրքախոս քրդերի ճնշման տակ տարածաշրջանի գյուղերը, այդ թվում՝ Նոր Բրաջուրի տարածքում եղած բնակավայրը հայթափվել են:

Մինչև խորհրդային շրջանը տարածքը անտերության էր մատնված: 1921 թ. վերոհիշյալ տարածքները բռնակցվել էր Ադրբեջանին:

Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը, հայկական տարածքները արագ յուրացնելու նպատակով, հանրապետության տարբեր շրջաններից թուրքերի և հիմնականում թրքացած քրդերի վերաբնակեցրեց Տրտու-Թարթառի մերձափնյա հատվածներում:

Եկվորները գյուղը անվանել են Ղլըչլը:

1923 թ. մինչև 1930 թ. բնակավայրը Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ նոր կազմավորված Քելբաջարի շրջանի կազմում էր:

1993 թ. մարտի 27-ից մինչև ապրիլի 5-ը հայկական բանակի հարվածների տակ ազատագրվել է նաև Ղլըչլը գյուղը: 1999 թ. սկսվել էր գյուղի վերաբնակեցման գործընթացը: Այդտեղ հաստատվել են Շահումյանի շրջանի գյուղերից բռնատեղահանված 11 ընտանիքներ: Քարհատի (Դաշքեսան) շրջանի Զագլիկ գյուղից բռնագաղթած 3 ընտանիքի ներկայացուցիչներ նույնպես դարձան Նոր Բրաջուրի բնակիչներ[1244]:

Բնակավայրը պաշտոնապես ստացել է Նոր Բրաջուր անունը:

Նոր Բրաջուրում 2000 թ. բացվել է Սևակ Էրումյանի անվան միջնակարգ դպրոցը: Դպրոցական նոր շենքը կառուցվել է Հայ առաքելական եկեղեցու Իսպահանի թեմի հովանավորությամբ: 2015-2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 54 աշակերտ, դասավանդում՝ 24 ուսուցիչ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Շ. Մարգարյանը, Դ. Գևորգյանը, Ն. Արզումանյանը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Լուծվել է խմելու ջրի հարցը: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Նոր Բրաջուրի տարածքում կան աղբյուրներ, հանդամասեր, որոնց անունները ժամանակի հոլովույթում մոռացության են մատնվել:

Համայնքում գործում են գյուղապետարան, դպրոց, բուժկետ, առևտրի 2 կետ:

Նոր Բրաջուրում 2010 թ. կար 47 տուն, 203 մարդ[1245], 2018 թ.՝ 53 տուն, 204 մարդ[1246]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1244] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 387:
[1245] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1246] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

ՉԱՐԵՔՏԱՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսային հատվածում՝ Շահումյանի շրջանում՝ Արցախի նախկին Ծար գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Տրտու-Թարթառի միջին հոսանքի երկու ափերին:

Չարեքտար գյուղը գոյություն ունի առնվազն միջին միջնադարից:

Բնակավայրը նշանավոր է գյուղի կենտրոնում՝ Թարթառի աջափնյակում, բլրի վրա գտնվող վանքով, որը բաղկացած է Սբ. Աստվածածին եկեղեցուց, գավթից, մատուռից և տապանատնից: Վանքում պահպանվել են տապանաքարեր, խաչքարեր, վիմագրություններ պարունակող սալաքարեր:

Վանքի տապանատանը ամփոփված է նաև Ծարա Դոփյան իշխան Գրիգորի մարմինը, որը 1360 թ. զոհվել էր թուրքերի դեմ մղված պատերազմում:

Ամենայն հավանականությամբ Խաթրավանքի հետ միասին Չարեքտարի վանքը Դոփյան իշխանների համար տապանատան դեր ուներ: Եկեղեցին կառուցվել է 12-րդ դարում և մինչև 19-րդ դարը Արցախի հոգևոր ու մշակութային կյանքում կարևոր դերակատարություն է ունեցել:

Գյուղի անվան հետ կապված ավանդազրույցում ասված է, որ Չարեքտարի Սարգիս վարդապետը մի անգամ գնում է Կ. Պոլիս՝ եկեղեցական ժողովի: Այդ օրը բոլորը սգի մեջ էին, որովհետև մահացել էր ամիրայի մինուճար որդին: Սարգիս վարդապետը մահացածի վրա կարդում է բժշկական գիրքը և Քրիստոսի անունով կանչում մահացածին: Ամիրայի որդին հարություն է առնում: Ամիրան իր ունեցածի մեկ քառորդը (չարեկ, արցախյան բարբառում չորսին նաև չորք են ասում — Վ. Բ.) նվիրում է վանքին, որի վանահայրն էր Սարգիս վարդապետը: Դրանից հետո վանքը և բնակավայրը անվանվել են Չարեքտար[1247]:

Լեոն գրում է, որ չարեքտարցիք հոգևոր իշխանություններին տալիս էին չորաշի կոչված հարկը[1248] (ասել կուզի բերքի մեկ քառորդը — Վ. Բ.):

Ուսումնասիրողներից Ս. Սարգսյանը գտնում է, որ Դաղի վանքի գմբեթավոր եկեղեցու արձանագրության մեջ հիշատակված Չորեցահող բնակավայրը համադրելի է Չարեքտարի հետ[1249]:

Ստեփան Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ում Չարեքտարը բացատրվում է որպես «կալված կամ արտ, որի վարձողը տիրոջը բահրա էր տալիս բերքի մի քառորդը»[1250]:

[1247] ԱրՊՀ հայագիտական կենտրոն, հմմտ. Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 401:
[1248] Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 673:
[1249] Սարգսյան Ս., Արցախի բանկավայրերը, էջ 190:
[1250] Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. 4, Երևան, 1945, էջ 15; հմմտ. Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 190:

Մի խոսքով, քանի որ Դադի վանքը լայնածավալ կալվածքներ ուներ, անհնարին էր, որ նրանից ոչ շատ մեծ հեռավորության վրա գտնվող բնակավայրը՝ Չարեքտարը, նույնպես հարկատուների ցանկում չլիներ:

Պատահական չէ, որ 1837 թ. սկսած Բաղդասար մետրոպոլիտը անզիջում պայքար սկսեց քրդական ցեղերի և թաթար բեկերի դեմ, որոնք միայն Դուտխու–Քելբաջարում Դադի վանքից զավթել էին շուրջ 140 000 դեսյատին կալվածքներ: Դրանց շարքում էր նաև «Չարաքդար»–ը[1251]:

Դեպի Ծար գավառի խորքեր տանող լեռնանցքի սկզբնամասում գտնվելով 14–րդ դարից սկսած թրքախոս ցեղերը անընդհատ գրոհում էին Չարեքտար բնակավայրի վրա: Մինչև 18–րդ դարի կեսերը Դոփյան ծագում ունեցող իշխանական տան ներկայացուցիչները հաջողությամբ թշնամիներին հետ էին մղում: Իրավիճակը ծանրացավ 18–րդ դարի վերջերին: Դոփյանները, ըստ էության, արդեն սպառվել էին, իսկ մյուս կողմից էլ Ղարաբաղի Իբրահիմ խանը, դաշնակցած քրդական ցեղերի հետ, ճնշումը լեռնաստանի վրա օրեցօր ուժեղացնում էր: Անտերության մատնված ժողովուրդը ի զորու չէր դիմակայել այդ մեծ հոսանքին: 19–րդ դարի սկզբներին գյուղը հայաթափվել էր:

Չնայած դրան Չարեքտարի վանքը շարունակում էր գործել: 1913 թ. Չարեքտարի վանքի պահակները մեծ դժվարությամբ շարունակում էին պահպանել Դադի վանքի կալվածքները[1252]:

Խորհրդային տարիներին վերջնականապես վանքի կալվածքները բոլշևիկները բռնագրավեցին և հանձնեցին քոլանի քրդերին:

Նույն ժամանակահատվածում ամայացված հայկական գյուղում հաստատվել էին եկվոր քրդերն ու թաթարները: Եկվորներից մեկը վանքի եկեղեցին դարձրել էր հարդանոց:

Չնայած վարչական տեսանկյունից Չարեքտարը գտնվում էր ԼՂԻՄ Մարտակերտի շրջանում, այնուամենայնիվ մի քանի տասնամյակի ընթացքում եկվորները Չարեքտարի վանքը և շրջակա հայկական հուշարձանները ավերել էին:

1993 թ. մարտի 27–ից մինչև ապրիլի 5–ը հայկական բանակի հարվածների տակ ազատագրվել էր նաև պատմական Չարեքտարը:

1995 թ. Չարեքտարում հիմնավորվել են Շահումյանի և Խանլարի շրջաններից բռնատեղահանված մի քանի ընտանիքներ: Նրանց հետ միասին գյուղի վերականգնման և շենացման գործին լծվել են նաև ՀՀ բնակավայրերից վերաբնակիչների կարգավիճակով այդտեղ հաստատված մի քանի ընտանիքներ:

1998 թ. Չարեքտարում բացվել էր ութամյա դպրոց: Այն ներկայումս միջնակարգի կարգավիճակ ունի և կրում է արցախյան պատերազմի նահատակներից մեկի՝ Կամո

[1251] Տէր Յովհաննիսեանց Գ. (Մուրացան), Բաղդասար մետրապոլիտ Հասան-Ջալալեանցի համառօտ կենսագրութիւնը, «Փորձ», մայիս, 1880, էջ 160:

[1252] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 11709, թ. 1:

Հովհաննիսյանի անունը: 2015–2016 ուսումնական տարում Չարեքտարում սովորում էր 71 աշակերտ, դասավանդում՝ 18 ուսուցիչ:

Դպրոցական նոր շենքի կառուցումը ավարտի վրա է:

Տարբեր տարիներին դպրոցը ղեկավարել են Ա. Խաչատուրովը, Կ. Բաղեյանը, Վ. Բաղրամյանը, Ս. Սիմոնյանը, Ա. Մարտիրոսյանը, Գ. Մանուկյանը, Ս. Մարտիրոսյանը, Ռ. Ռոմանոսյանը, Լ. Հովհաննիսյանը, Ա. Քոչարյանը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, դպրոց, բուժկետ, առևտրի 1 կետ:

Չարեքտարում 2010 թ. կար 50 տուն, 196 մարդ[1253], 2018 թ.՝ 49 տուն, 227 մարդ[1254]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՆՈՐ ԳԵՏԱՇԵՆ

Գետաշենը Արցախի հնագույն հռչակավոր բնակավայրերից է: Գտնվում է Մռավի լեռնաշղթայի հյուսիսային անտառապատ լանջին՝ Կուրակ գետի ձախ ափին: 2,5 կմ երկարությամբ և 600 մ լայնությամբ գյուղը փռված է Կուրակի գետահովտում: Գյուղի տարածքում հայտաբերված հնագիտական նյութերը վկայում են, որ հայկական այդ բնակավայրը գոյություն ունի առնվազն վաղ միջնադարից: Գյուղի տարածքում պահպանված տապանաքարերը վկայում են, որ 9–րդ դարից մինչև 1991 թ. բռնագաղթը Գետաշենը բազմամարդ բնակավայր է եղել: Պատահական չէ, որ 18–րդ դարում Գետաշենը դարձել էր Գյուլիստանի Մելիք Բեգլարյանների իշխանական տան նստավայրերից մեկը:

1766 թ. Գետաշենում էր հայ ազատագրական շարժման գործիչներից մեկը՝ Հովսեփ Էմինը: Նա փորձում էր Արցախի մելիքների՝ մասնավորապես Գետաշենի մելիք Հովսեփի, զինված ուժերի միջոցով իրականություն դարձնել Հայաստանի ազատագրման իր ծրագիրը:

1766 թ. Գանձակի Շահվերդի խանը փորձեց պատժել Մելիք Հովսեփին: Նա հանկարծակի հարձակվեց Գետաշենի վրա: Հանկարծակիի եկած գետաշենցիները՝ մելիք Հովսեփի որդի Բեգլարի գլխավորությամբ, 40 հոգով լեռնային կռիվներով հաղթեցին 4500 հոգանոց հակառակորդի ուժերին: Մի քանի օրից հետո ռազմական գործողությունները նոր թափով շարունակվեցին: Հայերին հաջողվեց ոչ միայն պաշտպանել Գետաշենը, այլև հալածելով թշնամուն, պաշարեցին Գանձակը: Շահվերդի

[1253] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1254] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 3:

խանի խնդրանքով Վրաց Հերակլ թագավորի միջնորդությամբ հակամարտությունը հարթվեց[1255]:

1626 թ. վրացական զորքերը հարձակվել էին Գետաշենի վրա: Փաստորեն Գետաշենի մասին առաջին տեղեկությունը մենք ստանում ենք ձեռագիր հիշատակարանի մեջ նկարագրված վերոհիշյալ իրադարձության կապակցությամբ[1256]: 17-րդ դարի երկրորդ կեսի պատմական իրողություններում Գետաշենի մասին վավերագրերը առավել հաճախակի են դառնում[1257]:

1804 թ. Գետաշենում հաստատվել էին Ջրաբերդի գավառի Ակնա, Մեծ շեն, Մաղավուզ գյուղերից մի քանի ընտանիքներ[1258]: Գյուղը, Ռուսաստանից և Այսրկովկասից դեպի Պարսկաստան տանող մայրուղիների վրա գտնվելով, օրեցօր բարգավաճում ու ավելի մարդաշատ էր դառնում:

Գետաշենում 1839 թ. կար 145 տուն, 603 բնակիչ[1259], 1891 թ.՝ 434 տուն, 1702 բնակիչ[1260], 1910 թ.՝ 3675 բնակիչ[1261]: Գյուղը այնքան էր մեծացել, որ բնակիչների կալատեղերում ձևավորվել էին նոր գյուղեր՝ Մրցունիս, Չիլքին, Չրաղիձոր, Գյորան:

Նախախորհրդային տարիներին Գետաշենում գործել են 18 ջրաղացներ, 5 ձիթահան, 4 դարբնոց, 3 կաշեմշակման ու 6 կոշկակարական արհեստանոցներ[1262]: 1883 թ. գյուղն ունեցել է մինչև 35 խանութ[1263]: Գետաշենի ճանապարհների մի մասը սալահատակված էին: Գյուղում կառուցվել էին 3 եկեղեցիներ՝ Ավագ Սբ. Նշան կամ Նահատակը (1677), Սբ. Աստվածածինը (կառուցման թվականը անհայտ է, բայց մկրտարանի ավազանից ներքև ագուցված տապանաքարի երեսին արձանագրված է 1643 թ.), Կուսանաց անապատը (կառուցման թվականը անհայտ է, բայց եկեղեցու որմերին ագուցված է 1588 թ. խաչքար)[1264]:

Եկեղեցիներում պահվել են 1223 թ. մինչև 1673 թ. ընկած ժամանակահատվածում ստեղծված Ավետարաններ և այլ մասունքներ:

Գյուղի շրջակայքում պահպանվել էին Եղնասարի վանքը (17-18-րդ դարեր), Մրցունիսի եկեղեցին, Սբ. Պանդալիոն մատուռը[1265]:

[1255] Բալայան Վ., Արցախի պատմությունը, էջ 134-135:
[1256] Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, էջ 206:
[1257] Կարապետյան Ս., Գետաշեն, Երևան, 1992, էջ 3:
[1258] Նույն տեղում, էջ 4:
[1259] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 30-31:
[1260] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 293:
[1261] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 56-57:
[1262] Բալասանյան Գ., Դարերի ճամփորդը, Երևան, 1986, էջ 7; հմմտ. Կարապետյան Ս., Գետաշեն, էջ 13:
[1263] Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, էջ 13:
[1264] Կարապետյան Ս., Գետաշեն, էջ 15-21:
[1265] Նույն տեղում, էջ 32, 35:

1905-1906 թվականների հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Գետաշենի հայությունը, Արցախի տարբեր բնակավայրերի երիտասարդներից կազմված մարտական ջոկատների օժանդակությամբ, կարողացավ պաշտպանել հյուսիսային Արցախի հայկական գյուղերը:

Ինչպես Արցախի մյուս գյուղերը, Գետաշենը նույնպես կոզակներից բաղկացած ռուսական զորախմբերի պատժիչ գործողությունների ժամանակ բավականաչափ տուժել էր: Թնդանոթների համազարկով նրանք ավերել են գյուղի թաղամասերից մեկը[1266]:

1862 թ. բացվել էր Գետաշենի եկեղեցական ծխական արական միդասյա դպրոցը: Ցարական կառավարության որոշմամբ 1885 թ. դպրոցը փակվել էր և վերաբացվել 1888 թ.: 1906 թ. գյուղում գործում էր նաև օրիորդաց դպրոց: 1886 թ. ցարական իշխանությունների որոշմամբ Գետաշենում բացվել է ռուսական պետական դպրոց:

Խորհրդային տարիներին գյուղում գործել էին ութամյա և միջնակարգ դպրոցներ: Ծննդով գետաշենցի են Խորհրդային Միության հերոսներ Ղազարոս Ավագյանը, Էդուարդ Այանյանը, Փառքի երեք աստիճանների ասպետ Իսահակ Կարախանյանը:

Արցախյան շարժման օրերին Հյուսիսային Արցախի բնակավայրերը հայտնվել էին խուլ շրջափակման մեջ, իսկ 1989 թվականից անընդհատ ենթարկվում էին ադրբեջանական ավազակախմբերի հարձակումներին: 1991 թ. գարնանը դրությունը առավել օրհասական էր: Չնայած ՀԽՍՀ-ից և ԼՂԻՄ-ից Հյուսիսային Արցախում գտնվող ինքնապաշտպանական ջոկատները ամեն ջանք գործադրում էին պաշտպանելու Հայոց արևելից կողմանց հազարամյա պատմություն ունեցող բնակավայրերը, այնուամենայնիվ, ուժերն անհավասար էին:

ԽՍՀՄ ներքին գործերի զորամասերի հետ համագործակցող Ադրբեջանի հատուկ ջոկատայինները հայաթափեցին Հյուսիսային Արցախի բնակավայրերը: 1991 թ. մայիսի 7-ին ընկավ նաև Գետաշենը: Հարկ է նշել, որ բռնագաղթի նախօրյակին՝ 1992 թ., Գետաշենում ապրում էր շուրջ 5000 մարդ[1267]:

Կարճ ժամանակահատվածում գյուղը վերաբնակեցվել էր ադրբեջանցիներով:

Հայկական բազմադարյա պատմություն ունեցող բնակավայրի անունը և նրա հետ կապված հիշատակները պահելու նպատակով Քարվաճառի ազատագրված բնակավայրերից մեկը՝ Նադիրխանլին, անվանվել է Նոր Գետաշեն: Բնակավայրը գտնվում է ԱՀ հյուսիսարևմտյան հատվածում՝ Շահումյանի շրջանում՝ Արցախի նախկին Վայկունիք կամ Ծար գավառում:

Գյուղը տեղաբաշխված է Քարվաճառ քաղաքից 14 կմ դեպի հյուսիս-արևելք՝ Տրտու-Թարթառ գետի ձախափնյակում:

[1266] «Մշակ», հմ. 68, 29 մարտի, 1906:
[1267] http://old.memo.ru/hr/hotpoints/karabah/getashen/chapter1.htm

Գյուղի տարածքում պահպանված գյուղատեղիի, եկեղեցու, գերեզմանոցի հետքերը, խաչքարերի և տապանաքարերի բեկորները վկայում են տվյալ վայրում միջնադարյան հայկական գյուղի գոյության մասին:

Նախկին հայկական բնակավայրի ոչնչացված գերեզմանոցից վերաբնակիչները գտել են ամբողջական պահպանված գեղաքանդակ և արձանագիր մի խաչքար (15–16–րդ դարեր): Հնավայրի տարածքից գտնված մեկ այլ խաչքար էլ ոճական և գեղարվեստական լուծումներով բնորոշ է 12–13–րդ դարերին[1268]:

Գյուղի պատմական անունը դարերի հոլովույթում մոռացության է մատնվել:

18–րդ դարի վերջերին և 19–րդ դարի սկզբներին Ղարաբաղի խանի հայակործան քաղաքականության և թրքախոս քրդերի ճնշման տակ տարածաշրջանի գյուղերը՝ այդ թվում Նոր Գետաշենի տարածքում եղած բնակավայրը, հայաթափվել են:

Մինչև խորհրդային շրջանը տարածքը անտերության էր մատնված: 1921 թ. վերոհիշյալ տարածքները բռնակցվել են Ադրբեջանին:

Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը, հայկական տարածքները արագ յուրացնելու և ԼՂԻՄ–ի շուրջ թուրքաբնակ շրջաններ ստեղծելու նպատակով, հանրապետության տարբեր վայրերից հիմնականում թրքացրած քրդերի տեղափոխել և բնակեցրել է Տրտու–Թարթառի մերձափյա տարածքներում:

Այդպես ձևավորվել էր Նադիրխանլը բնակավայրը:

1923–1930 թթ. բնակավայրը Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թվականից նոր կազմավորված Քելբաջարի շրջանի կազմում էր:

1993 թ. մարտի 27–ից մինչև ապրիլի 5–ը հայկական բանակի հարվածների տակ ազատագրվել է նաև Նադիրխանլը գյուղը:

2000 թ. սկսվել էր գյուղի վերաբնակեցման գործընթացը: Այդտեղ հաստատվել են Գետաշենի և Շահումյանի շրջանի գյուղերից բռնատեղահանված մի քանի ընտանիքներ:

Նոր Գետաշենում 2001 թ. հիմնադրվել է Վ. Նազարյանի անվան միջնակարգ դպրոցը: Դպրոցի շենքը կառուցվել է Սպահանի հայոց թեմական խորհրդի միջոցներով: 2015–2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 34 աշակերտ, դասավանդում՝ 14 ուսուցիչ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են եղել Ս. Չիթչյանը, Դ. Գևորգյանը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Նոր Գետաշենի տարածքում եղած աղբյուրների և հանդամասերի անունները մեզ անհայտ են:

Համայնքում գործում են գյուղապետարան, դպրոց, բուժկետ, առևտրի 2 կետ:

[1268] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 374:

Նոր Գետաշենում 2010 թ. կար 49 տուն, 216 բնակիչ[1269], 2018 թ.՝ 46 տուն 180 բնակիչ[1270]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԱԿՆԱԲԵՐԴ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսարևելյան հատվածում՝ Շահումյանի շրջանում՝ Արցախի նախկին Մեծ Կուենք (Մեծ կողմանք) գավառում, միջին միջնադարում՝ Ներքին Խաչենի իշխանության կազմում: Բնակավայրը տեղաբաշխված է Սարսանգի ջրամբարի ձախ ափին՝ մի գեղատեսիլ վայրում:

Ակնաբերդը (պատմական անունը Ականա) Արցախի հին բնակավայրերից է:

Ականա բնակավայրի մասին գրավոր աղբյուրներում առաջին անգամ ներկայացված է 7–րդ դարի սկզբի իրողությունների՝ մասնավորապես հոների, կամ ինչպես ընդունված է հայ մատենագրության մեջ, խազարների արշավանքների հետ կապված:

Մովսես Կաղանկատվացին պատմում է, որ 626–627 թվականներին Չողից մինչև Ուտիք ու Արցախ խազարները թալանել ու ավերել էին ամեն ինչ: Խազարները գրավել էին Պարտավը և Կաղանկատույք գյուղի մոտ՝ լեռան ստորոտում, անխնա ջարդել ժողովրդին: Ուտիքից փախածների մի մասը փրկվել է Արցախի անմատչելի լեռներում ու բերդերում[1271]: Փախած իշխաններից մեկը թաքնվել է Խաչենի Ականա քաղաքում[1272]:

13–րդ դարում քաղաքը և նրա մոտ գտնվող համանուն բերդը Հասան Ջալալյան իշխանական տան նստավայրերից էին:

Կիրակոս Գանձակեցին նշում է, որ Հասան Ջալալ իշխանը հայրենական տիրույթները՝ Ականան, Չարաբերդը և Կարկառը թուրքերից և վրացիներից հետ ստանալու նպատակով 1251 թ. բանակցել է Բաթու խանի և նրա որդու՝ Սարթախի հետ[1273]:

1312 թ. ընդօրինակված Ավետարանում Ականան արդեն ներկայացված է, որպես Ծարի Գրիգոր Դոփյան իշխանի սեփականություն[1274]:

1430 թ. Ականան շարունակում էր մնալ Դոփյանների ոստերից մեկի՝ իշխան Սայտի որդի պարոն Շանշիի տիրույթը: Դրա մասին է պատմում Ծարա վանքի, ներկայումս կոտրված խաչքարերից մեկի արձանագրությունը[1275]:

Ականայի մասին հաջորդ հիշատակությունը հանդիպում ենք Հայոց Փիլիպոս Ա Աղբակեցի կաթողիկոսի (1632–1655 թթ.) կոնդակում[1276]:

[1269] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1270] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 5:
[1271] Մ. Կաղանկատուացի, էջ 151–160:
[1272] Տաշեան Ց., Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանիՄխիթարեանց, էջ 39:
[1273] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 359:
[1274] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 84:
[1275] Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 225:
[1276] Յակոբեան Ա., Պատմա–աշխարհագրական և վիմագրագիտական հետազոտութիւններ, էջ 262:

Հյուսիսային Կովկասի խառնամբոխ ցեղերի արշավանքների հետ կապված՝ 1722 թ. կաթողիկոս Եսայի Հասան Ջալալյանը գրել է, որ նրանք հասել են Ականակերտ և բանակ դրել Տրտու-Թարթառի ափին[1277]:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի Իբրահիմ խանի ու թրքախոս քրդական ցեղերի ձնշման տակ Տրտու-Թարթառի հոսանքն ի վեր դեպի Ծար հասնող բնակավայրերը հայաթափվել են:

19-րդ դարի առաջին քառորդին Ականան արդեն ամայի էր: Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցը, անցնելով այդ վայրերով, գրել է. «Հառաչանքով անցա այստեղից և մտա Ակնա գյուղ, որը գտնվում է Թարթառին խառնվող վտակի ափին: Սա մեծ գյուղի ավերակ է, այժմ՝ անտառապատ: Ունի վեց գեղեցկակերտ այուների վրա կանգնած հոյակապ ու պատվական եկեղեցի, այժմ ամայի, ուր մակաղում են մերձակա գյուղերի խոտակեր անասունները»[1278]:

19-րդ դարի 80-90 ական թվականներին Հայկունին[1279] և Մակար Բարխուդարյանցը Ականան տեսել են ավերված ու անմարդաբնակ վիճակում[1280]:

Ականա քաղաքի մոտ է գտնվում նշանավոր Ականաբերդ ամրոցը: Պատմական երկարատև ժամանակահատվածում բերդը քաղաքի ուղեկիցն է եղել և ունեցել է նույնօրինակ ճակատագիր:

20-րդ դարի սկզբներին մի քանի թաթար ընտանիքներ Ականա քաղաքի ավերակների հարևանությամբ բնակավայր էին հիմնել: Խորհրդային տարիներին այն համայնքի կարգավիճակ էր ստացել և սկզբից հորջորջվել էր Արխանա[1281], այնուհետև Ումուդլու:

Խորհրդային տարիներին գյուղը թուրքաբնակ էր և գտնվում էր Մարտակերտի շրջանի վարչական կազմում:

1942 թ. գյուղում ապրում էր միայն մեկ հայ՝ Արտավազդ Գրիգորյանի ընտանիքը: Նա այստեղ էր տեղափոխվել Վարդենիսից: Նրա որդին՝ Մերուժան Գրիգորյանը, արցախյան պատերազմի տարիներին անմնացորդ կռվել է թշնամու դեմ:

1930 թ. գյուղում կազմավորվել էր կոլտնտեսություն, այնուհետև կազմակերպական տեսանկյունից այն դարձել էր խորհտնտեսություն:

1992 թ. Ումուդլուն ազատագրվելուց հետո այստեղ հաստատվել են Մարտակերտի շրջանի Չայլու, Մաղավուզ, Սեյսուլան, Յարըմջա գյուղերից բռնատեղահանված մի քանի ընտանիքներ:

Բռնատեղահանված Շահումյանի շրջանի բնակիչների մի մասին տեղավորելու և ապագայում Նոր Շահումյանի շրջանը կազմակերպելու նպատակով, 1994 թ. ԱՀ

[1277] Հասան Ջալալեանց Եսայի կաթողիկոս Աղուանից, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Երուսաղէմ, 1868, էջ 38:

[1278] Սարգիս արք. Ջալալեանց, նշվ.աշխ., էջ 38:

[1279] Հայկունի, նշվ. աշխ., էջ 56:

[1280] Մակար եպս., Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 265:

[1281] Кочарян Г., Нагорный Карабах, с. 51; հմմտ. Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 127:

ՊՊԿ-ի որոշմամբ վարչական տեսանկյունից նախկին պատմական անունը ստացած Ակնաբերդը առանձնացվեց Մարտակերտի շրջանից:

Մինչև Քարվաճառ տեղափոխվելը Ակնաբերդը Նոր Շահումյանի շրջանի վարչական կենտրոնն էր: Գյուղում հիմնականում հաստատվել են Շահումյանի շրջանի բնակավայրերից և Չայլուից տեղափոխված ընտանիքներ:

Ակնաբերդից ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի հետմահու արժանացել են Հայկ Մովսեսի Վերդյանը և Հովիկ Հունիի Հակոբյանը:

1993 թ. Ակնաբերդում բացվել էր ութամյա դպրոց: 1995 թ. այն ստացել էր միջնակարգի կարգավիճակ և կրում է Շահեն Մեղրյանի անունը:

2015-2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 114 աշակերտ, դասավանդում՝ 24 ուսուցիչ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Է. Հարությունյանը, Ս. Ոսկանյանը, Ա. Առաքելյանը, Ս. Խաչատրյանը, Ն. Օսիպյանը[1282]:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը, բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, դպրոց, ակումբ, բուժկետ, մանկապարտեզ:

Ակնաբերդում 2010 թ. կար 135 տուն, 528 բնակիչ[1283], 2018 թ.՝ 124 տուն, 545 բնակիչ[1284]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԴԱԴԻՎԱՆՔ

Բնակավայրը գտնվում էր ԱՀ հյուսիսային հատվածում՝ Շահումյանի շրջանում՝ Արցախի նախկին Վայկունիք, միջին միջնադարում՝ Ծար գավառում:

Գյուղը տեղաբաշխված է Տրտու-Թարթառի ձախափնյակում:

Դադիվանքը Արցախի հնագույն բնակավայրերից է: Գյուղը նախկինում ունեցել է Խութ, Խութավան կամ Խութավանք անվանումները:

Գյուղի վերաբերյալ մեզ հասած առաջին գրավոր վկայությունը 13-րդ դարից է՝ Խուդ անվանաձևով, ապա 1558 թ.՝ Խութ ձևով (նույն կերպ ևս 16-րդ դարում): Երկու անգամ գյուղը հիշվում է 18-րդ դարում[1285]:

18-րդ դարի երկրորդ կեսին Ղարաբաղի Իբրահիմ խանի ձնշումների տակ տարածաշրջանի գյուղերը հիմնականում հայաթափվել էին: Ի տարբերություն մյուս

[1282] Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., ԼՂՀ կրթական համակարգը (1923-1988 թթ.), հ. 2, Երևան, 2015, էջ 609:

[1283] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1284] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

[1285] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 291:

բնակավայրերի՝ Խութավանի բնակչությունը հայրենի օջախի պահպանման համար շարունակում էր պայքարել:

1795–1797 թվականներին Պարսկաստանի Աղա Մուհամմադ խանի արշավանքների և դրան հաջորդած սովի, հիվանդությունների և մահտարժամի պատճառով Խութավանի հայերը լքում են բազմադարյա պատմություն ունեցող բնակավայրի տարածքը:

Եպիսկոպոսանիստ բնակավայրի անկումը ծանր անդրադարձավ Ծար գավառի մյուս գյուղերի վրա: Հայության վերջին բեկորները հեռացան հայրենի գավառից:

Խութավանը հատկապես նշանավոր էր գյուղից վերև գտնվող Դադի վանքի կամ Խութավանքի համալիրի գոյությամբ:

Սկզբնաղբյուրները վկայում են, որ վանական համալիրի շինությունը սկսվել էր առաջին դարում: Քրիստոնեություն քարոզելու նպատակով այդ վայրում նահատակված Դադիի գերեզմանի վրա փայտե մատուռ է կառուցվել[1286], իսկ 4-րդ դարում՝ առաջին քարաշեն եկեղեցին:

Մովսես Կաղանկատվացու աշխատության մեջ խոսվում է 9-րդ դարի սկզբներին Դադի վանքի գոյության մասին[1287]:

1145–1146 թթ. պարսից Զոլի զորավարը, ի թիվս Արցախի մյուս բնակավայրերի, ավերել էր նաև Խութավան-Դադիվանքը[1288]:

12-րդ դարի 70-ական թվականներից Դադիվանքում շինարարական ծավալուն աշխատանքներ են կատարվել[1289]: 1214 թ. Վերին Խաչենի Արզու Խաթուն իշխանուհին կառուցել է Դադի վանքի հոչակավոր Սբ. Աստվածածին Կաթողիկե եկեղեցին:

Ցայսօր վանական համալիրում պահպանված է շուրջ 30 կառույց[1290]:

Մինչև 19-րդ դարի վերջերը Դադի վանքը հայ գրչության և մշակույթի խոշորագույն կենտրոններից մեկն էր:

18-րդ դարի վերջերին Իբրահիմ խանի աջակցությամբ քոլանի ցեղի քրդերը բռնազավթել են անտերության մատնված Դադի վանքի կալվածքների մեծ մասը:

1830 թ. Բաղդասար Հասան-Ջալալյանը Ղարաբաղի մետրոպոլիտ դառնալուց հետո քրդերի և թուրք բեկերի գերիշխանության տակ գտնվող հայրենի կալվածքները վերադարձնելու աննախադեպ ու աննահանջ գործ ձեռնարկեց: Միայն քոլանի քրդերի բռնազավթած 196 438 դեսյատին հող վերադարձվեց Դադի վանքին[1291]: Չնայած դրան՝ վանքի մի ժամանակվա փառքն ու հեղինակությունը այդպես էլ չվերականգնվեց: 19-րդ դարի վերջերից քոլանի քրդերը շատ դեպքում վանքը օգտագործում էին որպես փարախ:

[1286] Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոց պատրիարքի, Յերուսաղէմ, 1871, էջ 33:

[1287] Մ. Կաղանկատուացի, էջ 340:

[1288] Նույն տեղում, էջ 353:

[1289] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 293:

[1290] Դադի վանքի վանական համալիրի մասին մանրամասները տես՝ Կարապետյան Ս., Մռավականք, էջ 291–355:

[1291] «Մշակ», հմ. 94, 1988:

Խորհրդային իշխանության հաստատումից հետո վանական կալվածքները պետականացվեցին: Այդպես մարեց հազարամյակներ տևած Դադի վանքի հոգևոր կյանքը:

Դադի վանքի վանական համալիրից բացի գյուղի շրջակայքում գտնվում են ևս երեք մատուռներ: Խորհրդային տարիներին քրդերը, անցնելով նստակեցության, Ադրբեջանի կառավարության որոշմամբ 1942–1943 թթ. ամայացած հայկական բնակավայրի տեղը քրդական գյուղ են հիմնել: Բնակավայրը սկզբում անվանվել էր Վանք, այնուհետև՝ Քյոլանլու:

Հարկ է նկատել, երբ 1921 թ. Վանքը բռնակցվեց խորհրդային Ադրբեջանին, ԼՂԻՄ սահմանը այնպես «նկարվեց», որ վանական համալիրը մարզի վարչական տարածքից գտնվում էր ընդամենը 200 մ հեռավորության վրա:

Վանքը 1923 թ. ներառվել էր Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Քելբաջարի շրջանի կազմում:

1993 թ. մարտի 27-ից մինչև ապրիլի 4-ը հայկական բանակի հարվածների տակ ազատագրվել է նաև Վանք գյուղը:

Մինչև Նոր Շահումյանի վարչական շրջանի կազմավորումը, 1995 թ. սկսվել է գյուղի վերաբնակեցման գործընթացը: Այդտեղ հաստատվել էին ինչպես Ադրբեջանից բռնագաղթված ընտանիքներ, այնպես էլ ԱՀ և ՀՀ բնակավայրերից քաղաքացիներ: Գյուղը ստացել էր Դադիվանք անվանումը:

Դադիվանքից ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի է արժանացել Ռաֆայել Հովհաննեսի Պողոսյանը:

1999 թ. Դադիվանքում բացվել է Արմենակ Արմենակյանի անվան ութամյա դպրոցը, որը հետո ստացել է միջնակարգի կարգավիճակ:

2015–2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 26 աշակերտ, դասավանդում՝ 12 ուսուցիչ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Ս. Կարոյանը, Ռ. Սայիյանը, Կ. Բաղեյանը, Մ. Հայրապետյանը, Ա. Գրիգորյանը, Մ. Կիրակոսյանը:

Օրեցօր բարելավվում է գյուղի սոցիալ-տնտեսական կացությունը: Դադի վանքում տարիներ շարունակ, ինչպես հովանավորների, այնպես էլ պետության միջոցներով, իրականացվում են լայնածավալ շինարարական աշխատանքներ: Վանքը վերականգնել է իր փառահեղ տեսքը: Այսօր Դադիվանքը դարձել է Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի գործող կարևոր հոգևոր կենտրոններից մեկը: Դադի վանքը դեպի իրեն է ձգում ինչպես հազարավոր հայ հավատավորների, այնպես էլ տարբեր երկրների զբոսաշրջիկներին: Այս հանգամանքը նպաստում է գյուղի զարգացմանը:

Բնակավայրը էլեկտրաֆիկացված է: Գյուղն ունի խմելու ջրի ջրացանց:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, բուժկետ, դպրոց:

Դադի վանքում 2010 թ. կար 27 տուն, 101 բնակիչ[1292], 2018 թ.՝ 26 տուն, 117 բնակիչ[1293]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՆՈՐ ԷՐՔԵՋ

Գյուղը գտնվում է հին Շահումյանի շրջանում՝ Մռավի հյուսիսային լեռնաճյուղերից գոյացած գոգավորության մեջ՝ փոքր Կուրակ գետի աջափնյակում:

Էրքեջը Արցախի հին բնակավայրերից է: Ուսումնասիրողներից Կ. Ղահրամանյանը գտնում է, որ գյուղի անունը ծագել է Այրքաջ բառից և ունեցել է Էրքաջ, ապա՝ Էրքեջ անցումները[1294]:

Գյուղի անվան վերաբերյալ կա նաև ավանդազրույց, համաձայն որի արաբների քարավանը գյուղի կողմերով անցնելիս վրաններ է խփել և գիշերել քերծի տակ: Առավոտյան նրանցից մեկը ուղտերը տարել է ջրելու և վերադառնալիս տեսել է, որ քերծը փլվել է վրանների վրա ու սպանել բոլորին: Դառնացած արաբը մի ծառի վրա գրել էր Էրքեջ, որը արաբերեն նշանակում է անիծված վայր, և հեռացել այդտեղից[1295]:

Գյուղի շրջակայքում եղած պատմամշակութային հուշարձանները վկայում են, որ գյուղը գոյություն ունի առնվազն 9–10-րդ դարերից[1296]:

1676 թ. գրավոր աղբյուրներում խոսվում է Էրքեջ գյուղի մասին[1297]:

Ցարական արքունիքի սին խոստումներից հուսալքված և չդիմանալով Ղարաբաղի Իբրահիմ խանի ճնշումներին՝ Գյուլիստանի մելիք Աբով Մելիք-Բեգլարյանը իր հպատակների, այդ թվում՝ Էրքեջի հայերի հետ միասին տեղափոխվում և ժամանակավոր ապաստան է գտնում Բոլնիսի կողմերը[1298]:

Արցախը ռուսական տիրապետության տակ անցնելուց հետո՝ 1817 թ., Մելիք Բեգլարյաններն իրենց հպատակների հետ նորից վերադառնում են Գյուլիստանի մելիքություն[1299]:

[1292] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1293] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:
[1294] Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ.Ա., էջ 33:
[1295] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 393:
[1296] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 80:
[1297] Թօփճեան Յ., Ցուցակ ժողովածուաց Դադեան Խաչիկ վարդապետի, մասն Բ., Վաղարշապատ, 1900, էջ 19; հմմտ., Կարապետյան Ս., Մռավականք, էջ 80:
[1298] Բալայան Վ., Արցախահայ ազատագրական պայքարի բովանդակությունը ..., էջ 98:
[1299] Բալայան Վ., Դրվագներ..., էջ 11:

Ռուս-պարսկական պատերազմի տարիներին մի քանի ընտանիքներ Էրքեջից փոխադրվել և հաստատվել էին Բրաջուր գյուղում[1300]:

Ռուսական տիրապետության շրջանում գյուղը որոշակի զարգացում էր ապրել: 1912 թ. գյուղում կար եկեղեցի, 136 բնակելի տուն, 140 տնտեսական կառույց, 3 խանութ, 9 ջրաղաց[1301]:

Քաղաքական կայուն վիճակը, տնտեսական զարգացումը նպաստել են գյուղի բնակչության թվաքանակի աճին:

Էրքեջում 1832 թ. կար 72 բնակիչ[1302], 1886 թ.՝ 91 տուն, 766 բնակիչ[1303], 1912 թ.՝ 136 տուն, 990 բնակիչ[1304]:

1905–1906 և 1918–1920 թվականների հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Էրքեջի համար ծանր շրջան էր:

1918–1920 թվականներին մուսավաթական Ադրբեջանի զորքերը ամեն կերպ ձգտում էին գրավել Գյուլիստանի նախկին մելիքության տարածքները:

Գյուղի պաշտպանությունը կազմակերպում էր ցարական բանակի սպա, էրքեջցի Սաշա Տեր-Սարգսյանը: Չնայած գյուղի պաշտպանների անձնուրաց դիմադրությանը՝ թշնամուն հաջողվել էր 1920 թ. մարտի վերջերին և ապրիլի սկզբներին գրավել Էրքեջը[1305]:

1923 թ. Շահումյանի շրջանը կտրվեց ԼՂԻՄ-ից և բռնակցվեց Ադրբեջանին: Չնայած դաժան հետապնդումներին՝ Հյուսիսային Արցախի հայությունը ամեն գնով պայքարում էր ԼՂԻՄ-ի հետ միասին խորհրդային Հայաստանին վերամիավորման համար: Այդ պայքարի կազմակերպիչներից մեկն էլ Սաշա Տեր-Սարգսյանն էր, որը իր մարտական ընկերների հետ դիմադրում էր բոլշևիկներին ու թուրքերին: Ուժերն անհավասար էին: Սաշա Տեր-Սարգսյանը պայքարը դադարեցնում է և 1931 թ. որոշում հանձնվել իշխանություններին, և այդ նպատակով նա գնաց ոչ թե Գանձակ կամ Բաքու, այլ Ստեփանակերտ[1306]:

1929 թ. գյուղում ստեղծվել էր կոլտնտեսություն:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Էրքեջից զոհվել է 127 մարդ[1307]: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կանգնեցվել:

[1300] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 82:
[1301] Նույն տեղում, էջ 86:
[1302] ՀԱԱ, ֆ. 93, ց.1, գ. 390, թ. 392:
[1303] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 83:
[1304] Памятная книга Елисаветопольской губернии на 1914 год, с. 54.
[1305] Нагорный Карабах в 1918–1923 гг., Сборник доккументов и материалов, под. ред. В. Микаеляна, Ереван, 1992, с. 436:
[1306] Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ (պատմության քննական վերլուծություն), պ.գ.դ. գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2000, էջ 110–111:
[1307] Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ.Բ., էջ 425–428:

Էրքեջում 1908 թ. բացվել էր միդասյա արական ծխական դպրոց, 1909–1910 ուսումնական տարում այն արդեն երկսեռ կրթօջախ էր: 1912 թ. գյուղում բացվել էր պետական դպրոց[1308]:

Խորհրդային տարիներին Էրքեջն ուներ միջնակարգ դպրոց: Մինչև բռնագաղթը Էրքեջում ապրում էին Բաբայանների, Դանիելյանների, Հովհաննիսյանների, Առստամյանների, Դիվանյանների, Խաչատրյանների, Արզումանյանների, Լազարյանների, Ղազարյանների, Մանուկյանների, Մարտիրոսյանների, Քամալյանների, Եսայանների, Տոնյանների, Ստեփանյանների, Սաֆարյանների ազգատոհմերի ներկայացուցիչները: Ծագումով Էրքեջից է ազգագրագետ–բանահավաք Երվանդ Լալայանը[1309]:

Մինչև բռնագաղթը Էրքեջում պահպանվում էր 1710–ական թվականներին կառուցված Սբ. Սարգիս եկեղեցին: 1881 թ. այդ եկեղեցին էր այցելել Ռաֆֆին: 1928 թ. եկեղեցին փակվել է: Սկզբում այն դարձրել են ակումբ, այնուհետև վեր էր ածվել կոլտնտեսության պահեստի[1310]:

Գյուղի պատմաճարտարապետական նշանակության հուշարձաններից էր Սբ. Սարգիս, Կհոկ, 3ից քարի միջնադարյան եկեղեցիները, Գալուստանց կամուրջը (19–րդ դարի վերջ, 20–րդ դարի սկիզբ), Մկնատամի խաչ ուխտատեղին[1311]:

Գյուղի աղբյուրներն էին՝ Շենին, Հովուզի, Չատունց և Գոզանա ձորի[1312]:

Էրքեջի պատմական անցյալի հերոսական էջերից մեկն էլ գրվել է արցախյան ազատագրական պայքարի տարիներին:

1988–1992 թթ. գյուղը հիմնականում պաշարված վիճակում էր գտնվում: Ադրբեջանական ավազակախմբերին 1991 թ. հուլիսի 16–ին հաջողվել էր գրավել Էրքեջը: Նույն թվականի սեպտեմբերի 13–ին Հայաստանից և ԼՂՀ–ից եկած մարտական ջոկատների աջակցությամբ հաջողվել էր ազատագրել բնակավայրը: Մեծ քանակությամբ ուժեր կուտակելով Շահումյանի շրջանում՝ 1992 թ. հունիսի 13–ին ադրբեջանցի զինյալներին հաջողվեց գրավել գյուղը:

Ազատագրական պայքարի տարիներին զոհվել են ծննդով էրքեջցի 8 ազատամարտիկներ՝ Սլավիկ Դանիելյանը, Շուրա Խաչատրյանը, Վանիկ Լալայանը, Կամո Հովհաննիսյանը, Մինաս Հակոբյանը, Ալեքսանդր Մարտիրոսյանը, Վասակ Հովհաննիսյանը:

ԱՀ սահմանները պաշտպանելու ժամանակ 2016 թ. զոհվել է ծագումով հին էրքեջցի, Նոր Էրքեջի բնակիչ Կամո Հովհաննիսյանը:

Էրքեջի բռնատեղահանված հայությունը հետագա տարիներին հաստատվել է ազատագրված Քարվաճառի Բաղլուփեյա գյուղում: Բնակավայրը ստացել է Նոր Էրքեջ անվանումը:

[1308] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 86:
[1309] Նույն տեղում, էջ 83:
[1310] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 86–88:
[1311] Նույն տեղում, էջ 91–93:
[1312] Ղահրամանյան Կ., Օշախի գիրք, հ.Բ., էջ 337–338:

Նոր Էրքեջը գտնվում է ԱՀ հյուսիսային հատվածում՝ Շահումյանի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Վայկունիք, միջին միջնադարում՝ Ծար գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Դաղի վանքից 3 կմ դեպի հարավ–արևելք՝ Տրտու–Թարթառի միջին հոսանքի ձախափնյակում:

Գյուղը Արցախի հին բնակավայրերից է:

«Դատելով 1986 թ. այստեղ հայտնաբերված թերի պահպանված մի արձանագրության բովանդակությունից՝ գյուղն առնվազն ԺԱ (11–րդ) դարի վերջերին գավառամասի կարևոր բնակավայրերից մեկն էր»,— գրել է Ս. Կարապետյանը[1313]:

Գյուղի պատմական անունը ժամանակի հոլովույթում մոռացության է մատնվել: Ուսումնասիրողներից Ս. Սարգսյանը գտնում է, որ Դաղի վանքից հարավ–արևմուտք, Տրտու–Թարթառի աջափնյակում գտնվող Սբ. Աստվածածին վանքի արձանագրության մեջ հիշատակված Իգաձոր գյուղը միջնադարում Բաղլուփեյա բնակավայրի տեղում էր[1314]:

18–րդ դարի վերջերին և 19–դարի սկզբներին Ղարաբաղի Իբրահիմ խանի հովանավորությամբ տարածաշրջան թափանցած թրքախոս քրդական ցեղերի ճնշման տակ բնակավայրը հայաթափվել էր: Երկար ժամանակ տարածքը անտերության էր մատնված: Քոչվոր քրդերը տասնամյակների ընթացքում ավերել են գյուղի պատմական հուշարձանները:

Խորհրդային տարիներին գյուղատեղիում բնակություն էին հաստատել քոլանի ցեղից սերված Մեշադի Մեհմեդլիի ժառանգները[1315]: Գյուղը նրանք անվանակոչել են Բաղրլուփեյա:

1923–1930 թթ. բնակավայրը Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ նոր կազմավորված Քելբաջարի շրջանի կազմում էր:

1993 թ. մարտի 27–ից մինչև ապրիլի 5–ը հայկական բանակի հարվածների տակ ազատագրվել էր նաև Բաղրլուփեյա գյուղը:

Հին Էրքեջի բնակիչների հետ միասին Նոր Էրքեջում հաստատվել են նաև մի քանի ընտանիքներ ՀՀ–ից:

2002 թ. իրանահայ բարերարների միջոցով Նոր Էրքեջում դպրոցական նոր շենք է կառուցվել: Միջնակարգ դպրոցը կրում է Հայկուհի Ջառահյանի անունը:

2015–2016 ուսումնական տարում դպրոցում կար 46 աշակերտ և 16 ուսուցիչ:

Դպրոցի տնօրենն է Ա. Հովհաննիսյանը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

[1313] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 290:
[1314] Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 191–192:
[1315] Ismyilov P., kəlbəcər Rayonunun Yer–yurd Adləri Bəki, 2012, p.44; Կարապետյան Ս., Մռավականք, էջ 290:

Նոր Էրքեջի տարածքում եղած աղբյուրների և հանդամասերի անունները մեզ անհայտ են:

Համայնքում գործում են գյուղապետարան, դպրոց, բուժկետ, առևտրի 1 կետ:

Նոր Էրքեջում 2010 թ. կար 25 տնտեսություն, 120 մարդ[1316], 2018 թ.՝ 23 տնտեսություն, 124 մարդ[1317]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՆՈՐ ԿԱՐԱՉԻՆԱՐ

Հին Կարաչինար գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսային հատվածում՝ Ադրբեջանի կողմից բռնազավթված Շահումյանի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Մեծ Կվենք (Մեծ Կողմանք) գավառում, իսկ ուշ միջնադարում՝ Գյուլիստանի մելիքության կազմում: Բնակավայրը տեղաբաշխված է Սև ջուր գետի աջափնյակում՝ շրջկենտրոն Շահումյան (Ներքին շեն) ավանից 6,3 կմ հյուսիս-արևելք:

Կարաչինարի «Սեփունց թափա» կոչված բլրից հայտնաբերված պղնձե գավաթները, զենքերը, կավից պատրաստված իրերը վկայում են, որ գյուղը հին պատմություն ունի:

19-րդ դարի և 20-րդ դարի սկզբների աղբյուրներում գյուղը հայտնի է Աղջաղալա, Ջեյվա, Կարաչինար անվանաձևերով[1318]:

Գյուղի անվան հետ կապված ավանդություն է պահպանվել, ըստ որի բնակավայրի երիտասարդներից մեկը փախցնում է իր սիրած աղջկան: Հարսնացուի ծնողների հետապնդումներից փրկվելու համար նրանք թաքնվում են գյուղի մոտ գտնվող մի մեծ չինարի ծառի փչակում: Մի օր էլ տղան հաց բերելու համար գյուղ է գնում: Աղջկա ծնողները երկարատև փնտրտուքից հետո իրենց դստերը գտնում են փչակում և ծառի ճյուղից նրան կախում են: Տղան գալիս և տեսնում է այդ ողբերգությունը: Նա ինքնասպան է լինում: Այդ օրվանից Չինարին կոչվեց ղարա Չինարի (սև Չինարի): Գյուղի անունն էլ նույնպես մնաց Ղարաչինար[1319]:

Կարաչինարը պատկանում էր Մելիք-Բեգլարյաններին:

19-րդ դարում ստեղծված համեմատաբար խաղաղ պայմանները նպաստավոր էին գյուղի զարգացման համար: Այն դարձել էր ենթաշրջանի վարչական կենտրոնը:

1912 թ. գյուղում կար զանազան նշանակության 388 շինություն, այդ թվում՝ 1 եկեղեցի, 185 բնակելի տուն, 190 տնտեսական կառույց, 8 խանութ և 4 ջրաղաց[1320]:

[1316] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1317] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:
[1318] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 135:
[1319] Սարգսյան Ա., Արցախի բանահյուսությունը, էջ 197:
[1320] Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год, с. 53; հմմտ. Կարապետյան Ս., Մռավականք, էջ 145:

Կարաչինարից 1898 թ. «Մշակ»-ին հասցեագրված նյութի մեջ նշված է, որ գյուղում կար նյութապես ապահով 200 տուն[1321]:

Կարաչինարը ծանր ժամանակներ ապրեց 1905-1906 թվականների հայ-թաթարական ընդհարումների և 1918-1920 թվականների իրադարձությունների ժամանակ:

1920 թ. մարտի 25-27-ը գյուղը ամբողջապես ավերվել էր մուսավաթական Ադրբեջանի զորքերի կողմից[1322]:

Կարճ ժամանակահատվածում գյուղ վերադարձած կարաչինարցիների ձեռքով բնակավայրը վերստացավ իր նախկին շեն տեսքը:

1915 թ. Մեծ եղեռնի օրերին գյուղի հայությունը մեծ աջակցություն է ցուցաբերել գաղթականներին: 1920 թ. դրությամբ Կարաչինարում բնակվում էին Մեծ եղեռնը վերապրած 52 տուն (203 շունչ) գաղթականներ[1323]:

1921 թ. Կարաչինարը բռնակցվել է Խորհրդային Ադրբեջանին: 1929 թ. գյուղում կոլտնտեսություն էր կազմակերպվել, որը գործել է մինչև 1992 թ.՝ գյուղի անկումը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Կարաչինարից 167 հոգի զոհվել է: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցվել[1324]: Կարաչինարից ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի է արժանացել Կամո Մովսեսի Հարությունյանը:

1874 թ. Կարաչինարում բացվել էր եկեղեցական ծխական դպրոց: Ուսուցիչն էր ներքինշենցի տիրացու Հակոբ Խաչատրյանը: 1885 թ. գյուղում սկսել էր գործել պետական ռուսական դպրոց: 1916-1920 թվականներին Կարաչինարը գաղթականների համար առանձին դպրոց ուներ[1325]:

1977 թ. գյուղն ուներ 1 միջնակարգ (հայկական և ռուսական հոսքերով), 1 ութամյա և 1 տարրական դպրոց: 1989 թ. վերոնշյալ դպրոցներում սովորում էր 545 աշակերտ[1326]:

19-րդ դարի վերջերին Կարաչինարն ուներ 30 մահճակալով հիվանդանոց և առանձին դեղատուն[1327]:

1880-ական թվականներին գյուղի նախկին Սբ. Աստվածածին եկեղեցու տեղը նոր եկեղեցի էր կառուցվել: Այն փակվել է 1928 թ. և օգտագործվում էր որպես պահեստ:

Կարաչինարն ուներ նաև Ապրեսանց, Խալափանց սրբատեղիները[1328]:

[1321] «Մշակ», հմ. 108, 23 յունիսի, 1898:
[1322] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 436:
[1323] «Հայաստանի ձայն», հմ. 11, 6 փետրվարի, 1920; հմմտ. Կարապետյան Ս., Մռավականք, էջ 141:
[1324] Ղահրամանյան Կ., Օշախի գիրք, հ. Բ., էջ 434-438:
[1325] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 147:
[1326] Նույն տեղում, էջ 147:
[1327] Նույն տեղում, էջ 148:
[1328] ՀԱԱ, ֆ. 1159, ց. 10, գ. 60, թ. 15; Կարապետյան Ս., Մռավականք, էջ 153:

Գյուղի աղբյուրներն են՝ Պրմբատի, Անուշ, Չինարի, Մռավանց, Քերծին տակի, Ջալունց[1329]:

Կարաչինարի հանդամասերն են Մրչիմի (Մրջյունի) տափը, Գյոդավ արխը, Գյուրջին ձորը, Շոր ջուրը, Գազխանան, Կաթաղի ձորը, Ջալունց թախտը, Սուրանի ձորը, Միմյանց ձորը, Հովուզի դուզը, Դիք տափերը, Գերեզմանոցի յալը, Շլորուտը, Քավթառ ձորը, Կուճուր դուզը, Մեշ դուզը, Թալիշանց տափերը, Ջկռոտը, Ցեխին տակը, Ջաքի նահատակը, Կրակտվածը, Դարբանդը, Յանըղը, Բուրուլ-Պետին, Թոլիլածը, Աղվեսի յալը, Ճալան, Միլավայրը, Չլկոտը, Աղջի յազին, Աջին, Բուշունց առուն, Բաղատեղերը, Շունքարը, Տանին զարուտեղը, Ջալակշնոտը, Խնձորի ձորը, Սառնարածի դոշը, Մեղրունց ղուրուղը, Աղին կեծանը, Խազազի ձորը, Շըրրոը[1330]:

Կարաչինարում ապրում էին Տափրունց կամ Դարբնունց, Հյուրունց, Դոշունց, Ճեպոռունց, Կյուլունց, Օսեփանց, Դբաջանց, Քյուքյունց, Բուղունց, Գրիգորյանների, Քաշ Ավաքանց, Միրյուսանց, Ջարդար Եղունց, Տեր-Եփրեմանց, Ջհանգիրանց, Բիլոյանց, Չոբան-Եղունց, Ղավալ-Եղունց, Ջյառունց, Ջավունց, Կիզիրանց, Ներքին Կիզիրանց, Սյուրմաղուլունց, Դալլաղուլունց, Սևյանների, Սեփյանների, Մռավյանների, Ղարիբյանների, Ղևոնդյանների, Բոյախչունց, Ուտուխմանց, Ղրգյոզանց տոհմերի ներկայացուցիչները[1331]:

Կարաչինարում 1832 թ. կար 406 բնակիչ[1332], 1886 թ.՝ 124 տուն, 765 բնակիչ[1333], 1918 թ.՝ 196 տուն, 1171 բնակիչ[1334], 1989 թ.՝ 511 տուն, 2141 բնակիչ[1335]:

Կարաչինարի համար ամենածանր ժամանակաշրջանը դարձան 1988-1992 թվականները: Գյուղը հայտնվել էր խուլ շրջափակման մեջ: Մեծ քանակությամբ ուժեր կուտակելով Շահումյանի շրջանում՝ 1992 թ. հունիսի 13-ին ադրբեջանցի զինյալներին հաջողվեց գրավել գյուղը: Մարտական գործողությունների ժամանակ ՀՀ-ից և ԱՀ-ից 10 ազատամարտիկներ զոհվել են:

Արցախյան ազատամարտի ընթացքում Կարաչինարից 90 հոգի զոհվել կամ անհետ կորել է[1336]: 2000-ից ավելի բռնագաղթած կարաչինարցիներից միայն 3 ընտանիքներ են 2001 թ. հաստատվել ազատագրված Քարվաճառի Ջամիլլու գյուղում: Հին Կարաչինարից մնացած հիշատակները պահպանելու և սերունդներին փոխանցելու նպատակով գյուղը անվանվել է Նոր Կարաչինար:

[1329] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 146:
[1330] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 153:
[1331] Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Բ., էջ 356, հ.Գ, էջ 59-60:
[1332] ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 50, թ. 366-380:
[1333] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 140:
[1334] ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 59, թ. 4:
[1335] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 141:
[1336] Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Բ., էջ 674-678; հմմտ. Կարապետյան Ս., Մռավականք, էջ 141:

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսային հատվածում՝ Շահումյանի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Վայկունիք, Միջին միջնադարում՝ Ծար գավառում: Բնակավայրը տեղավաշխված է Թարթառի վտակ Լև գետի ձախափնյակում:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի Իբրահիմ խանի և տարածաշրջան թափանցած թրքախոս քրդական ցեղերի ճնշումների տակ բնակավայրը հայաթափվել էր: Երկար ժամանակ տարածքը քոչվոր քրդերի համար արոտավայր էր դարձել: Տասնամյակների ընթացքում ավերվել էին գյուղի պատմամշակութային նշանակության հուշարձանները:

Բնակավայրի տարածքում հայտնաբերվել են 12-15-րդ դարերի խաչքարերի բեկորներ: Տեսանելի են նաև միջնադարյան հայկական գերեզմանոցի հետքերը:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո նախկին հայկական բնակավայրի տեղը քրդերով բնակեցված գյուղ է հիմնադրվել, որը ստացել էր Ջամիլլու անունը:

1993 թ. մարտի 27-ից մինչև ապրիլի 5-ը հայկական բանակի հարվածների տակ ազատագրվել է նաև Ջամիլլու գյուղը:

Հին Կարաչինարի բնակիչների հետ միասին Նոր Կարաչինարում հաստատվել են նաև մի քանի ընտանիքներ ՀՀ-ից:

2002 թ. բացվել է Արամայիս Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցը: 2015-2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 24 աշակերտ, դասավանդում՝ 12 ուսուցիչ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Հ. Մանուկյանը, Ռ. Մխիթարյանը, Ռ. Ալավերդյանը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքի տարածքում կան աղբյուրներ, հանդամասեր, որոնց անունները անհայտ են:

Նոր Կարաչինարն ունի գյուղապետարան, դպրոց, բուժկետ:

Նոր Կարաչինարում 2010 թ. կար 22 տուն, 86 բնակիչ[1337], 2018 թ.՝ 23 տուն, 122 բնակիչ[1338]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԽԱՐԽԱՓՈՒՏ

Գյուղը գտնվում է ԱՀ Ադրբեջանի կողմից բռնազավթված Շահումյանի շրջանում: Բնակավայրը տեղաբաշխված է Սև ջուր գետի աջափնյակում: Գյուղը հայտնի է նաև Խարխափոտ, Խարխափուդ, Նոր Խրխափոտ, Խորխափոր անվանաձևերով:

[1337] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1338] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

Գյուղը, Շահումյանի շրջանի մյուս բնակավայրերի հետ համեմատած, նոր է: Այն հիմնադրվել է 1880-ական թվականներին: Բնակիչները տեղափոխվել էին գյուղից ոչ շատ մեծ հեռավորության վրա գտնվող Հին Խարխափուտից:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին գյուղը պատկանում էր Մելիք Բեգլարյան տոհմի ներկայացուցիչներին[1339]:

Խարխափուտի համար ծանր հետևանքներ ունեցան 1905-1906 և 1918-1920 թվականների հայ-թաթարական ընդհարումները:

1920 թ. մարտի վերջերին և ապրիլի սկզբներին գյուղը գրավվել էր Ադրբեջանի զինյալների կողմից:

Խորհրդային տարիներին գյուղը նորից վերաբնակեցվել էր:

Չնայած Խարխափուտի հայերը նյութապես ծանր վիճակում էին ապրում, այնուամենայնիվ գյուղի բնակչությունը 1915 թ. Մեծ եղեռնի օրերին մեծ աջակցություն էր ցուցաբերել գաղթականներին: 1920 թ. դրությամբ Խարխափուտում բնակվում էին Մեծ Եղեռնը վերապրած 15 տուն (39 շունչ) գաղթականներ[1340]:

1880-ական թվականներին կառուցվել էր գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցին: 1928 թ. եկեղեցին փակվել է: Գյուղի տարածքում էր գտնվում նաև Արքայեկ անապատը (12-րդ դար)[1341]:

Խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1921 թ., գյուղը նախկին Գյուլիստանի մելիքության տարածքների մեծ մասի հետ միասին բռնակցվել էր Ադրբեջանին:

1929 թ. գյուղում կոլտնտեսություն է կազմակերպվել:

Հայրենական մեծ պատերազմի ժամանակ գյուղից 48 հոգի զոհվել է[1342]:

Խորհրդային տարիներին գյուղում գործում էր ութամյա դպրոց:

Խարխափուտում ապրել են Մխովանց, Կուփանց, Ազիզանց, Կիվերքանց, Հիլվերանց, Բեգունց, Սաքունց, Վառունց, Պուչունց, Գոսունց, Ղուլունց, Ջհանանց, Հովհաննիսյան, Անտոնյան, Հարությունյան, Սողոմոնյան, Սարգսյան, Նիգարյան, Պատվականյան, Գոսյան, Մխիթարյան, Գրիգորյան, Նահապետյան, Ջհանյան տոհմերի ներկայացուցիչները:

Բռնազավթված Շահումյանի շրջանի Հին Խարխափուտում 1841 թ. կար 25 տուն, 88 բնակիչ[1343]: Նոր Խարխափուտ տեղափոխվելուց հետո գյուղում կար 27 տուն, 178 բնակիչ[1344], 1918 թ.՝ 52 տուն, 275 բնակիչ[1345], 1992 թ.՝ 550 բնակիչ[1346]:

[1339] ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 558, թ. 217; հմմտ. Կարապետյան Ս., Մռավականք, էջ 98:
[1340] «Հայաստանի ձայն», հմ. 11, 6 փետրվարի, 1920; հմմտ. Կարապետյան Ս., Մռավականք, էջ 98:
[1341] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 99:
[1342] Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Բ., էջ 356, հ.Գ, էջ 428-429:
[1343] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 47:
[1344] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 99:
[1345] ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 59, թ. 4:
[1346] Կարապետյան Ս., Մռավականք, էջ 99:

Խարխափուտի համար ամենածանր ժամանակաշրջանը դարձան 1988-1992 թվականները: Գյուղը հայտնվել էր խուլ շրջափակման մեջ:

Մեծ քանակությամբ ուժեր կուտակելով Շահումյանի շրջանում՝ 1992 թ. հունիսի 13-ին ադրբեջանցի զինյալներին հաջողվել է գրավել Խարխափուտը:

Ազատագրական պայքարի տարիներին գյուղից զոհվել կամ անհետ կորել է 18 հոգի[1347]:

Խարխափուտից բռնահանված մի քանի ընտանիքներ և ՀՀ բնակավայրերից քաղաքացիներ 2004 թ. հաստատվել են ազատագրված Քարվաճառի Կանլըքենդ գյուղում: Բնակավայրը վերանվանվել է Խարխափուտ:

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսային հատվածում՝ Շահումյանի շրջանում, նախկինում՝ Արցախի Վայկունիք, միջին միջնադարում՝ Ծար գավառում:

Բնակավայրը տեղաբաշխված է Լև գետի վերին հոսանքի ձախափնյակում: Հարկ է նկատել, որ վաղ միջնադարից Պարտավ-Դվին առևտրական ճանապարհը անցնում էր Լև գետի ափամերձ տարածքներով, որը նպաստել էր գետի հոսանքն ի վեր գտնվող հայկական գյուղերի զարգացմանը:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի Իբրահիմ խանի և տարածաշրջան թափանցած թրքախոս քրդական ցեղերի ճնշումների տակ բնակավայրը հայաթափվել էր: Երկար ժամանակ տարածքը քոչվոր քրդերի համար արոտավայր էր դարձել: Տասնամյակների ընթացքում ավերվել էին հայկական գյուղի պատմամշակութային նշանակության հուշարձանները:

Բնակավայրի տարածքում հայտնաբերվել էր 12-ից 15-րդ դարերի խաչքարերի բեկորներ: Տեսանելի են նաև միջնադարյան հայկական գերեզմանատների հետքերը:

Բնակավայրի անունը տասնամյակների ընթացքում մոռացության էր մատնվել:

Ուսումնասիրողներից Ս. Սարգսյանը Կանլըքները միջնադարյան հայկական Կարմիր շենի հետ տեսականորեն համադրելի է համարում[1348]:

Ադրբեջանի խորհրդայնացվելուց հետո նախկին հայկական բնակավայրի տեղը քրդերով բնակեցված գյուղ է հիմնադրվել, որը ստացել էր Կանլըքենդ անունը:

1993 թ. մարտի 27-ից մինչև ապրիլի 5-ը հայկական բանակի հարվածների տակ ազատագրվել է նաև Կանլըքենդը:

2004 թ. գյուղը վերաբնակեցնելուց հետո հայկական բնակավայրի 200 տարի առաջ մարած կյանքը նոր բովանդակություն ստացավ:

2007 թ. հիմնվել է Խարխափուտի հիմնական դպրոցը: 2015-2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 19 աշակերտ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Ա. Վարդանյանը, Թ. Հարությունյանը:

Համայնքը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

[1347] Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հ. Բ., էջ 672-673:
[1348] Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 197:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Բնակավայրում կան գյուղապետարան, դպրոց, բուժկետ, առևտրի մեկ կետ: Այդտեղ է գտնվում նաև ԱՀ-ն ՀՀ-ի հետ կապող անցակետը:

Խարխափուտում 2010 թ. կար 19 տուն, 107 բնակիչ[1349], 2018 թ.՝ 19 տուն, 101 բնակիչ[1350]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՔՆԱՐԱՎԱՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսային հատվածում՝ Շահումյանի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Վայկունիք, միջին միջնադարում՝ Ծար գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Լև գետի վերին հոսանքի աջափնյա հատվածում՝ անտառապատ սարերով նեղ ձորակի պարանոցում:

Ներկայիս համայնքի տարածքում, ինչպես միջնադարում, այնպես էլ նոր շրջանում, որևէ բնակավայր չի եղել: Հարկ է նկատել, որ Քնարավանից արևելք և հյուսիս արևելք տեսանելի են միջնադարյան հայկական մի քանի բնակավայրերի հետքեր, որոնց անունները մեզ անհայտ են:

Քնարավանի հարևանությամբ են գտնվում պատմամշակութային նշանակության կարևոր հուշարձաններ՝ Հանդաբերդը և նույնանուն վանական համալիրը:

Հանդաբերդը գտնվում է Լև գետի աջափնյա անտառածածկ լեռնագագաթին: Հանդաբերդը Արցախի կարևոր պաշտպանական նշանակության կառույցներից մեկն էր: Այն, դեռևս վաղ միջնադարից սկսած, երկու կարևորագույն գործառույթ էր կատարում. հսկում էր Պարտավ–Դվին առևտրական ճանապարհները և թշնամիներից պաշտպանում Հայկական լեռնաշխարհի կենտրոնում գտնվող արքայանիստ Այրարատ նահանգը:

Պատահական չէ, որ 5-րդ դարից սկսած՝ Արցախի իշխանները տարեցտարի ավելի էին ամրապնդում Հանդաբերդը:

Հայոց արևելից կողմանց պատմիչի վկայությամբ 9-րդ դարի երկրորդ կեսերին Սահլ Սմբատյանի որդի Ատրներսեհը Հանդաբերդում և Բաղունիք արքունականում լայնածավալ շինարարական աշխատանքներ է կատարել[1351]:

12–14-րդ դարերում բերդը շարունակում էր ծառայել Հաթերքի Վախթանգյան և Ծարի Դոփյան իշխանական տներին:

16-րդ դարից՝ պարսկական տիրապետության շրջանում, բերդի դերակատարությունը խունացավ: 1720-ական թվականներին՝ սղնախական պայքարին տարիներին, Հանդաբերդը ծառայում էր Արցախի մելիքներին:

[1349] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1350] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:
[1351] Մ. Կաղանկատուացի, էջ 340:

Անմատչելի տեղանքում կառուցված լինելով՝ Հանդաբերդի շինությունների մեծ մասը կիսավեր վիճակում պահպանվել է:

Քնարավանից 0,5 կմ արևելք գտնվում է Հանդաբերդի վանական համալիրը, որի պատմական անունը մոռացության է մատնվել: Վանքը 12–13-րդ դարերի կառույց է: Վանքի պատերին ագուցված են 12–13-րդ դարերի խաչքարեր: Այդտեղ է գտնվում նաև Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի տապանաքարը[1352]:

Քնարավանի տարածքը Քարվաճառի մյուս բնակավայրերի հետ միասին 1921 թ. բռնակցվել էր խորհրդային Ադրբեջանին:

1923–1930 թվականներին վերոհիշյալ տարածքը Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ. Քելբաջարի շրջանի կազմում էր:

1993 թ. մարտի 27-ից մինչև ապրիլի 5-հայկական բանակի հարվածների տակ ազատագրվել է նաև Հանդաբերդի շրջակայքը:

2002 թ. «Երկիր միություն» կազմակերպության նախաձեռնությամբ հավաքագրված միջոցներով ազատագրված Քարվաճառի գավառում նշանավոր Հանդաբերդի հարևանությամբ մի նոր բնակավայր է կառուցվել, որտեղ հիմնականում հաստատվել էին մարզերից տեղափոխված ընտանիքներ: Բնակավայրը ֆրանսահայ բարերար Կարապետ Հարությունյանի կնոջ՝ Քնարիկ Հարությունյանի անունով անվանվել է Քնարավան: Կ. Հարությունյանի միջոցներով կառուցվել է նաև գյուղի դպրոցի շենքը, որը 2005 թվականից է գործում:

2015–2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 29 աշակերտ, դասավանդում՝ 12 ուսուցիչ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Շ. Հարությունյանը, Ռ. Վարդևանյանը, Ս. Հովհաննիսյանը, Բ. Սարգսյանը, Ա. Գևորգյանը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է, ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, դպրոց, բուժկետ:

Քնարավանում 2010 թ. կար 15 տուն, 71 բնակիչ[1353], 2018 թ.՝ 16 տուն, 69 բնակիչ[1354]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսություն է:

[1352] Կարապետյան Ս., Մոավականք, էջ 268–276:
[1353] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1354] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

ՇՈՒՇԻԻ ՇՐՋԱՆԻ ԳՈՐԾՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՔԱՐՏԵԶԸ



ՇՈՒՇԻ

Քաղաքը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ նախկինում՝ Արցախի Վարանդա գավառում՝ Կարկառ գետի ձախափնյա բարձրադիր սարահարթում: Շուշին արևելյան, արևմտյան և հարավային կողմերից շրջապատված է սառած լավայից կազմված ժայռագոտիով, որով ներս մտնելը մարդու համար փաստացի անհնարին է:

Ռազմական պատմագիր, գեներալ Պոտտոն 1826 թ. լինելով Շուշիում, գրել է. «Շուշիի բերդը կառուցված է անմատչելի ժայռերի արանքում, որոնք իրար հետ շաղկապված են ու մեկ միասնություն են կազմում և միայն նեղ մուտք ունի, որը ուժով գրավելը անհնարին է: Ով տիրում է այդ ամրոցին, նա իշխում է այդ երկրամասում»[1355]:

Այդ ամենի գիտակցումով, Ք. ա. 1-ին հազարամյակից սկսած, հայ թագավորները, իշխանները տափաստանից դեպի հայկական լեռնաշխարհի խորքերը տանող առանցքային այդ կետում կառուցել են ամրոց-բնակավայր:

Տարեցտարի ահագնացող վտանգն Արցախի իշխաններին դրդում էր առավել անխոցելի դարձնելու բերդավանը: Ժամանակի ոգուն համահունչ այն սովորական ամրոցից քայլ առ քայլ վերածվում էր պաշտպանական համակարգի:

Շուշիի սարահարթի տեղագննումն ու մասնակի ուսումնասիրությունները, ինչպես նաև մեզ հասած սկզբնաղբյուրները թույլ են տալիս ասել, որ վաղ միջնադարից մինչև 19-րդ դարի 20-ական թվականների վերջը, այսինքն՝ ռուսական գերիշխանության նախնական փուլը և հիմնական ամրոցի կառուցման ժամանակահատվածը, վերոհիշյալ բարձրավանդակում կային առանձին ամրոցներ: Պատահական չէ, որ 2017 թ. օգոստոսին քաղաքի Վերին մզկիթի վերանորոգչական աշխատանքների ընթացքում հայտնաբերվել է վաղ միջնադարյան քրիստոնեական դամբարան: Ավելին՝ Շուշիում և նրա անմիջական շրջակայքում հայտնաբերվել են 10-13-րդ դարերի խաչքարեր, ինչպես նաև նույն ժամանակաշրջանին վերաբերող գերեզմանոց:

2012 թ. Շուշիի տուն-ինտերնատի կառուցման ընթացքում շինարարները գտել են մարդու ոսկորներ և կավահողից պատրաստված խողովակներ: Այն թվագրվում է 5-7-րդ դարեր[1356]: 7-րդ դարում Շավշին ձևով Շուշիի գոյության մասին են պատմել արաբ մատենագիրները[1357]:

[1355] Потто В., Первые добровольцы Карабага въ эпоху водворенія русского владычества (Меликъ-Вани и Акопъ Юзбаши Атабековы), с. 3-4.

[1356] U. A. Regnum (02-03-20; KK, 2012, № 2 և 25).

[1357] Баладзори, Завоевания стран, пер. П. Жузе, Баку, 1927, с. 13; Ибн-ал Факих, СМОМПК, XXXI, Тифлис, 1902, с. 27.

9–13–րդ դարերի ընթացքում հզորանում են Արցախի իշխանական տների ներկայացուցիչները: Ծաղկում են ապրում մշակույթն ու տնտեսական կյանքը: Այդ օրինաչափ և բնականոն զարգացումից դուրս չմնաց նաև Շուշին, որը այդ ժամանակներում ավելի շատ հայտնի էր Քար կամ Քարագլուխ,[1358] Շուշիքար անուններով:

Շուշիի հարևան գյուղերի բնակիչները քաղաքի որոշ հատվածներ անվանում են «Քերծեն կըլօխ», որը կարելի է հասկանալ նաև բերդ, անմատչելի վայր ձևով: Պատահական չէ, որ 1724 թ. Իվան Կարապետը ռուսական արքունիքին գրել է, որ ինքը գտնվում է Թարխան և Բաղի հարյուրապետերի մոտ Քարագլխի սղնախում[1359]:

13–րդ դարի 20–ական թվականներին Ջալալ–ադ–Դին սուլթանի անձնական քարտուղար Շեխաբ–ադ–Դին ան–Նասավին Շուշիի սարահարթի ամրոցներից մեկին «Կալաղարա» անունն է տվել[1360]: Նկատենք, որ նոր և նորագույն ժամանակներում արցախահայերը Շուշիի բերդը երբեմն անվանում էին ղալա, իսկ նրա բնակիչներին՝ ղլըցեք:

16–րդ դարից սկսած թուրքերը անընդհատ փորձում էին նվաճել Շուշիի կիրճը: Դրա ռազմավարական նշանակությունը նրանք քաջ գիտակցում էին: Վերացնելով այդ ամրոցների համակարգը՝ նրանք, ըստ էության, Արցախը կկիսեին երկու մասի: Դիզակի և Վարանդայի մելիքությունները կզրկվեին Խաչենի, Ջրաբերդի ու Գյուլիստանի հետ ունեցած կապից: Նման պայմաններում թշնամուն կհաջողվեր առանձին-առանձին հաշվեհարդար տեսնել հայկական իշխանությունների հետ: Մյուս կողմից էլ թուրքերի համար դեպի Արարատյան դաշտավայր շարժվելու լայն հեռանկար էր բացվում:

Քանի որ Շուշիի սարահարթը հանդիսանում էր Վարանդայի Մելիք–Շահնազարյանների ժառանգական կալվածքը, 17–րդ դարի կեսերից նրանց տոհմի որոշ ոստեր այստեղ էին հաստատվել:

17–րդ դարի վերջերից հայ իրականության մեջ համատարած կորուստների ու հուսահատության պայմաններում Արցախի մելիքական տների ներկայացուցիչները և Գանձասարի կաթողիկոսները, որպես հայկական կորուսյալ պետականության լավագույն ավանդույթների կրողներ, նոր էջ բացեցին հայ ազատագրական շարժումների պատմության մեջ:

1717 թ. Ավան հարյուրապետն իր զինակիցների հետ հաստատվում է Արցախում՝ Շուշին դարձնելով ազատագրական պայքարի օջախներից մեկը[1361]:

[1358] Այս Քարագլուխը չպետք է շփոթել Խրամորթի մոտ գտնվող Քարագլուխ–Շիկաքարի հետ:

[1359] Հայ–ռուսական հարաբերությունները 18–րդ դարի առաջին երեսնամյակում, հ. 2, մասն 3, Երևան, 1967, էջ 186:

[1360] Шихаб ад–Дин Мухаммад ан Насави, Жизнеописание султана Джалал ад–Дина Манкбурны, Бакы, 1973, с. 278.

[1361] Երկու վավերագրեր տ. Խաչիկ վարդապետի ձեռագրերի ժողովածուից, «Արարատ», հունիս, Վաղարշապատ, 1900, էջ 35:

1720–ական թվականներին Ավան հարյուրապետը Շուշիի ձորահայաց ժայռի պոնկին գտնվող ամրոցը վերակառուցում է և այն հզորացնում ևս չորս աշտարակներով: 19–րդ դարի կեսերին ռուս հեղինակները նկատել են, որ մինչև Փանահի Շուշիում հայտնվելը Ավան հարյուրապետի ժամանակ ամրոցը դարձել էր Արցախի մելիքների ամենաապահով նստավայրը[1362]:

Նկատենք, որ այդ շրջանում, եթե Գանձասարը Արցախի և շրջակա տարածքների համար հոգևոր կենտրոնի դերակատարություն էր ստանձնել, ապա Շուշին քայլ առ քայլ դառնում էր նրա քաղաքական զարկերակը: Մինչև 1729 թ. Շուշիից էին սկիզբ առնում քաղաքական գործընթացներից բխող նորանոր զարգացումները:

18–րդ դարի կեսերին, օգտվելով Պարսկաստանում ստեղծված խառնակ վիճակից, Կուր–արաքսյան միջագետքում թափառող ավազակաբարո թյուրքալեզու ցեղերը, միավորվելով ջևանշիր ցեղի սարըջալլու տոհմի առաջնորդ Փանահի շուրջը, թալանի նպատակով հարձակումներ էին գործում Արցախի վրա: Սկզբում Արցախի մելիքները հաջողությամբ հետ էին մղում նրանց: Իրավիճակը փոխվեց 1751 թ., երբ Վարանդայում Մելիք–Շահնազարյան տոհմի կրտսեր ներկայացուցիչ Շահնազարը, չհանդուրժելով իր եղբոր՝ Մելիք Հովսեփի իշխանությունը, դավադրաբար սպանեց նրան: Ավետարանոցում տեղի ունեցած եղեռնագործությունը Շահնազարի դեմ հանեց Խամսայի ավանդապահ մելիքներին, և վերջիններս միաբանվեցին՝ նրանից վրեժխնդիր լինելու համար:

Դիզակի, Ջրաբերդի, Խաչենի և Գյուլիստանի մելիքների նկատմամբ հաղթանակ տանելու և իր դիրքերն ամրապնդելու նպատակով մելիք Շահնազարը դաշնակցեց Փանահի հետ: Մելիք Շահնազարն ու Փանահը հայ մելիքներին դիմագրավելու համար սկսեցին վերակառուցել ու ավելի ամրացնել բերդը: Շուշիի բերդի շինարարության վրա հիմնականում հայեր էին աշխատում, որոնց մելիք Շահնազարը հավաքագրել էր Վարանդայի գյուղերից:

Հայ մարդու ձեռքերով Արցախի սրտում առավել ամրացվում էր մի բերդավան, որը դարեր շարունակ քաղաքական առումով արհավիրքներ պետք է բերեր այդ նույն ժողովրդին: Արցախահայությունը նախկինում իրեն պաշտպան բերդավանին արդեն դիտում էր որպես թշնամական կենտրոնի:

Մելիք Շահնազարի դավաճանական քայլով պատմության մեջ առաջին անգամ թուրքը փորձեց բռնությամբ բնավորվել Ղարաբաղում: Սակայն այնքան օտար էր Արցախի համար նորեկ բռնավորը, որ Փանահն անգամ իր տոհմի համար գերեզմանատուն ընտրեց Խաչենի մելիքից գնած Աղդամը:

Չնայած բազում դժվարություններին՝ Շուշիի հայությունը շարունակում է ոչ միայն ապրել, այլ նաև պաշտպանել հայրենի բերդավանը:

[1362] «Северная пчела», № 210, 18 сентября, С. Петербург, 1851.

1795 թ. օգոստոսին պարսկական բազմահազարանոց բանակը Աղա Մուհամմադ խանի գլխավորությամբ 33 օր պաշարման մեջ պահեց Շուշին: Ինչպես Շուշիի, այնպես էլ Արցախի տարբեր բնակավայրերից հայերը, կազմակերպելով զինված ջոկատներ, պաշտպանեցին բերդավանը:

1813 թ. Գյուլիստանի հաշտության պայմանագրով Արցախի Ռուսաստանին անցնելուց հետո Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի խանությունների տարածքների վրա ստեղծվեց մի ռազմական շրջան՝ Ղարաբաղի մարզ անունով, որի կենտրոնը Շուշին էր:

1826–1828 թթ. ռուս–պարսկական պատերազմի տարիներին Շուշիի և հարևան գյուղերի հայությունը, իր քաջարի նախնիների ավանդներին հավատարիմ, հերոսաբար պաշտպանում էր հայրենի հողը: Շուշիի հայերը ոչ միայն կռվում էին ճակատի առաջին գծում, այլև միաժամանակ սննդամթերք հայթայթում, վառոդ պատրաստում, նորոգում բերդի փլված պատերը, կանայք և երեխաները փամփուշտ, հաց և ջուր էին մատակարարում զինվորներին, խնամում վիրավորներին:

Ռուս–պարսկական հաղթական պատերազմից հետո Շուշին դառնում է հայոց աշխարհի ամենաապահով վայրերից մեկը: Շուշին նորից դարձավ հայահավաք կենտրոն:

Դեռևս Ք. ա. 1–ին հազարամյակից Շուշիի արևելյան և արևմտյան հատվածները հայաբնակ էին: 18–րդ դարի կեսերին Ղազանչիի (Շահկերտ), Ագուլիսի, Մեղրիի հայերի մի մասը, չդիմանալով խաների ճնշումներին, տեղափոխվեցին Շուշի: Շուշին ռուսական տիրապետության տակ անցնելուց հետո վերոհիշյալ տարածքներից, ինչպես նաև Արցախի տարբեր գավառներից, մասնավորապես՝ Ջրաբերդից, նոր բնակիչներ են համալրում համերկրացիների շարքերը:

Շուշի տեղափոխված հայերը բնակություն են հաստատում հայրենակցական սկզբունքով: Բերդավանի թաղերը նրանք կոչել են իրենց նախկին բնակավայրերի (ղազանչեցոց, ագուլեցոց, մեղրեցոց, ղարաբաղցոց կամ ջրաբերդցոց) անուններով: Տարբեր գյուղերում, գավառներում արմատավորված սովորությունները Շուշիի միջավայրում փոխակերպվում կամ էլ, այս կամ այն դրսևորումներով, շարունակում են գոյատևել՝ դառնալով քաղաքային համակեցության նոր կանոններ:

1846 թ. Շուշին քաղաքի կարգավիճակ ստանալուց հետո ոչ միայն Արցախի, այլև հարևան գավառների՝ Շաքիի, Շիրվանի, Զանգեզուրի հայության համար նույնպես մայրաքաղաքի դերակատարություն ուներ:

Զարգացման ուղին բռնած բերդաքաղաքն օրեցօր դառնում էր տարածաշրջանի վարչական, քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոն, և այդտեղ ապրելը դառնում էր հաճելի ու պատվաբեր:

Մինչև 18–րդ դարի 50–ական թվականները Շուշին, ազգային հիմքով, միատարր հայկական բնակավայր էր: Ղարաբաղի խանության գոյության շրջանում Շուշի սկսեցին թափանցել թուրքեր և քրդեր: 1833 թ. Շուշիում ապրում էր 7304 մարդ, որոնցից 3850–ը (52,8%) հայեր էին, 3446–ը (47,1%) թուրքեր, 0,1% էլ այլ ազգերի ներկայացուցիչներ[1363]: 1854 թ. արդեն քաղաքի կարգավիճակ ունեցող Շուշիում բնակչությունը կազմել էր 15 194 մարդ, որից 7760–ը (51,1%) հայեր էին, 7391–ը (48,6%) թուրքեր (թաթարներ), 43–ը (0,3%) ռուսներ[1364]: 1873 թ. Շուշիում կազմակերպված մարդահամարի տվյալներով քաղաքում ապրում էր 24 552 մարդ, որից 13 504 (55%) հայեր էին, 10 804 (44%) թուրքեր (թաթարներ) և 244–ը (1%) այլ ազգերի ներկայացուցիչներ[1365]:

Շուշիի ազգաբնակչության օրեցօր աճող թվաքանակի մասին են խոսում 1886 թ. կազմված քաղաքի ընտանեկան ցուցակներից ստացված տվյալները:

1885 թ. Շուշիի ազգաբնակչությունն արդեն կազմել էր 26 806 մարդ, որից 15 188–ը (56,7%) հայեր էին, 11 595–ը (43,2%) թուրքեր, 21–ը (0,07%) ռուսներ և միայն 2 հոգի՝ հրեաներ[1366]:

1886 թ. տվյալներով Շուշին բնակչության թվաքանակով Բաքվից (86 611 մարդ) և Թիֆլիսից (78 445 մարդ) հետո իր մեծությամբ Այսրկովկասում երրորդ քաղաքն էր:

1897 թ. առաջին համառուսական մարդահամարի տվյալներով Շուշիում ապրում էր 25 881 մարդ, որից 14 420–ը (55,7%)՝ հայեր, 10 778–ը (41,6%) թուրքեր, 396–ը (1,5%) ռուսներ, 133–ը՝ լեհեր, 1 չեխ, 1 լատիշ, 73 մոլդովացիներ, 1 ֆրանսիացի, 12 գերմանացիներ, 5 պարսիկներ, 1 օս, 2 գնչու, 4 հրեա, 39 վրացի, 4 ավարներ, 1 չեչեն, 8 բաշկիրներ, 1 չուվաշ: Դրանից բացի քաղաքում ապրում էին 249 ժամանակավոր բնակիչներ և 745 օտարերկրյա քաղաքացիներ[1367]:

Քաղաքի ազգաբնակչության թվաքանակի կրճատումը բացատրվում է տնտեսական անբարենպաստ պայմաններով:

19–րդ դարի վերջին և 20–րդ դարի սկզբներին Շուշիի ազգաբնակչության թվակազմի աճ է նկատվում: Դա հիմնականում բացատրվում է Շուշիի տնտեսության մեջ արհեստագործության նկատմամբ մանուֆակտուրային, ֆաբրիկային, գործարանային արտադրության զգալի աճով: Լուծվեց քաղաքի ազգաբնակչության զբաղվածության հարցը: 1904 թ. Շուշիի բնակչության թիվը հասավ 33 187–ի, որից 17 982–ը (54,2%) հայեր էին, 14 548 (43,8%) թուրք–թաթարներ էին, 593–ը (1,8%) ռուսներ և 64–ը (0,2%) այլ ազգերի ներկայացուցիչներ[1368]:

Շուշիի հայության համար նոր արհավիրք դարձան 1905–1906 թթ. հայ–թաթարական ընդհարումները, որոնց հետևանքով հարյուրավոր հայեր զոհվեցին, իսկ մյուսներն էլ նորից վերցրին գաղթականության ցուպը:

[1363] ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 51–52:

[1364] «Кавказский календарь» на 1856 г., отдел III, Тифлис, 1855, с. 358–359.

[1365] Статистические таблицы о народонаселении Кавказского края, сборник сведений о Кавказе, Т. VII, Тифлис, 1880, с. XXII–XXV.

[1366] Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г., Тифлис, 1888; ՀԱԱ, ֆ. 57, ց–1, գ. 118, թ. 89–93:

[1367] Первая всеобщая перепись Российской империи, Т. LXIII, Елизаветпольская губерния, 1904, под. ред. Тройницкого.

[1368] ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 265, թ. 144:

Եթե հայ-թուրքական (թաթարական) ընդհարումների նախօրյակին՝ 1904 թ., քաղաքում ապրում էր 17 982 հայ, ապա 1906 թ. այդ թիվը պակասեց 5184-ով և հասավ 12 798-ի[1369]:

Մի կարճ ժամանակահատված, երբ 1907 թվականից ռուսական կայսրությունում կյանքը որոշակիորեն կարգավորվեց, մինչև 1917 թ. իրադարձությունները Շուշին նորից ապրեց իր բնականոն կյանքով: Դա իր նպաստավոր ազդեցությունն ունեցավ ժողովրդագրական գործընթացների վրա:

1914 թ. Շուշիի ազգաբնակչության թիվը հասավ 42 130 մարդու, որից 22 004 (52,2%) հայեր էին, 18 864-ը (44,7%)՝ թուրքեր, 1188-ը (2,8%)՝ ռուսներ և 74-ը՝ այլ ազգերի ներկայացուցիչներ[1370]: 1916 թ. Շուշիում արդեն ապրում էր 43 864 մարդ[1371]: Մեկ այլ հեղինակի տվյալներով Շուշիի 43 869 բնակիչներից 23 396-ը (53,33%) հայեր էին, 19 121-ը՝ մահմեդականներ, 1249-ը՝ ռուսներ, մյուսները՝ վրացիներ, լեռնականներ, եվրոպացիներ[1372]:

Համարյա նույն տվյալներն են պարունակում անգլիական աղբյուրները: Շուշիում գործող Ազգային խորհրդի նախագահ Ե. Իշխանյանի հաշվարկներով՝ քաղաքում 1918 թ. ապրում էր 32 000 հայ[1373]:

Շուշիի հայկական քաղաքամասը բաղկացած էր 4 թաղերից (ղազանչեցոց, ագուլեցոց, մեղրեցոց և ղարաբաղցոց կամ ջրաբերդցոց): Դրանք էլ իրենց հերթին բաժանված էին 18 թաղամասերի:

18-րդ դարի վերջերից՝ Ղարաբաղի խանության շրջանից սկսած՝ հայերի հետ հարևանությամբ ապրում էին նաև թուրքեր և քրդեր: Շուշիում էին հանգրվանել նաև ռուս, գերմանացի, լեհ և ազգային այլ փոքրամասնությունների նշանավոր գերդաստանների ներկայացուցիչներ:

19-րդ դարի կեսերից սկսած Շուշիում աննախադեպ վերելք էին ապրում քաղաքային տնտեսությունն ու մշակույթը: Տվյալ ժամանակաշրջանում Շուշին առավել շատ հայտնի էր որպես արհեստագործական կենտրոն:

1891-1895 թթ. Շուշիում գործում էին մի քանի մետաքսագործական ֆաբրիկաներ, կաշվի, 5 օճառի, 2 աղյուսի, 10 ներկերի գործարաններ:

19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին Շուշիի շուկաներում և առևտրի կենտրոններում հաճախակի կարելի էր հանդիպել Հնդկաստանի, Թուրքիայի, Պարսկաստանի, Միջին և Մերձավոր Արևելքի երկրների, Ռուսաստանի, Այսրկովկասի տարբեր հատվածներից այդտեղ ժամանած առևտրականների:

[1369] ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 265, թ. 144:

[1370] «Кавказский календарь» на 1915 г., Тифлис, 1914, с. 81-214.

[1371] «Кавказский календарь» на 1917 г., Тифлис, 1916, с. 190.

[1372] Ալեքսանյան Հ., Շուշիի և Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը 1916-1926 թթ., Շուշին հայոց քաղաքակրթության օրրան, Երևան, 2007, էջ 116:

[1373] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 321:

Գերմանական «Ալգեմայն ցայտունգ» թերթը 1846 թ. նոյեմբերի 15-ի համարում գրել է. «Ղարաբաղի գլխավոր քաղաք Շուշին, առանց չափազանցության, կարելի է համարել Կովկասյան Ջիբրալթար»[1374]:

Հախումյանների, Թառումյանների գերդաստանների առևտրական ձեռնարկությունները կապեր ունեին Իրանի, Ռուսաստանի, եվրոպական երկրների իրենց գործընկերների հետ: Եթե 1850 թ. Շուշիում կար 493 առևտրական[1375], ապա 1902 թ. նրանց թիվը հասավ 1535-ի[1376]:

Մեծածախ առևտուրը հիմնականում կենտրոնացված էր հայերի ձեռքում: Թուրքերը զբաղվում էին մանրածախ առևտրով: Առևտրի զարգացման, ինչպես նաև քաղաքի հյուրերին ընդունելու համար 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Շուշիում կառուցվել է 6 իջևանատուն և 4 հյուրանոց:

Քաղաքում գործում էր երկու բանկ:

Քննարկվող ժամանակաշրջանում շուշեցի մեծահարուստները՝ Հախումյանները, Թառումյանները, Ժամհարյանները, Ղուկասյանները, Խանդամիրյանները, Արամյանները, Թադևոս Թամիրյանը, Գրիգոր Առաքելյանը (Արաֆելով), Միրզաջան Խաչատրյանը, Ավագ Սարդարյան-Մասիրխանյանցը, Եսայի Արզումանյան-Թունիբեկյանը, Ավետիս Ղարաբեկյանցը, Իսահակ Թադևոսյանցը, Առաքել Բաբայանը, Պողոս Գասպարյան-Ալեքսանյանցը և շատ ուրիշներ մի քանի միլիոն ռուբլի են հատկացրել հայրենի քաղաքի բարգավաճմանը:

1893-1896 թթ. Թադևոս Թամիրյանի միջոցներով կառուցվել է 18 կմ երկարություն ունեցող ջրատարը, որով խմելու ջուրը Սարի Բաբայից հասցվել է Շուշի: 1902 թ. շուշեցի Հովհաննես Ժամհարյանի միջոցներով քաղաքում բացվեց եռահարկ հիվանդանոց, որի շինությունն առայսօր կանգուն է:

Ղուկասյան, Արամյան, Արաֆելյան, Մելիք-Ազարյան, Յուզբաշյան, Թունիբեկյան, Խունունց, Տեր-Մարգարյան, Թադևոսյան, Ջանումյան ընտանիքների միջոցներով ոչ միայն սալահատակվել են Շուշիի փողոցները, այլև 20-րդ դարի սկզբներին սկսվել են Եվլախ-Շուշի երկաթգծի կառուցման աշխատանքները:

1838 թ. Շուշիում գործել է թեմական դպրոցը, որն իր անուրանալի դերակատարությունն ունեցավ արցախահայության կյանքում:

1864 թ. ապրիլի 7-ին մեծահարուստ Համբարձում Հախումյանի տիկնոջ՝ Մարիամ Հախումյանի միջոցներով Շուշիում բացվում է իգական դպրոց:

19-րդ դարի վերջերին Շուշիում բացվում է ռուսական իգական Մարինսկու դպրոցը, որի աշակերտների մեծ մասը հայուհիներ էին: 1914-1915 ուս. տարում շուշեցի մեծահարուստ Պողոս, Արշակ, Հակոբ և Աբրահամ Ղուկասյան եղբայրներն

[1374] «Algemeine zeitung», 15 november, 1846.

[1375] «Кавказ», № 23, Тифлис, 1850.

[1376] Науменко Е., Елизаветпольская губерния. Военно-статистическое описание, часть 1, Тифлис, 1903, с. 330.

իրենց հանգուցյալ քրոջ հիշատակը հավերժացնելու նպատակով քաղաքում բացում են նոր օրիորդաց դպրոց:

1881 թ. Շուշիում բացվում է ռեալական դպրոցը, որտեղ ուսուցումը տարվում էր ռուսերենով:

1901–1908 թթ. շուշեցի մեծահարուստ նավթարդյունաբերող Գրիգոր Առաքելյանի (Առաֆելով) միջոցներով կառուցվում է ռեալականի նոր շենքը, որն իր ճարտարապետական ուրույն լուծումներով այսօր էլ կարող է զարդարել եվրոպական որևէ երկրի մայրաքաղաքը: Խոնարհված շենքի ճակատին առայսօր պահպանվում է հայ բարերարի կատարած գործի մասին գրությունը:

1895–1896 ուսումնական տարում, թեմական և քաղաքային դպրոցներից բացի, Շուշիում գործում էին 10 հայկական դպրոցներ, որտեղ սովորում էր 981 աշակերտ, դասավանդում՝ 36 ուսուցիչ: Ռուսական 2 տիպի դպրոցներում 543 աշակերտներից 349–ը և 30 ուսուցիչներից 25–ը հայեր էին[1377]:

Շուշիի դպրոցների շրջանավարտներից 10–15 հոգի ամեն տարի ընդունվում էին եվրոպական երկրների նշանավոր բուհերը:

1828 թ. հայրենի հողում՝ Շուշիում, Բազելի քարոզչական ընկերության կողմից ստեղծվում է երկրորդ տպարանը:

1830–ական թվականներից Շուշիում տպագրական գործի զարգացման գործում մեծ ներդրում է ունեցել Բաղդասար մետրոպոլիտը:

1881 թ. Շուշիում տպարաններ բացեցին Տիգրան Նազարյանը և Միրզաջան Մահտեսի Հակոբյանը: Այդ գործը հետո շարունակեցին Բագրատ Տեր–Սահակյանը և Մելքոն Բաբաջանյանը:

Մինչև 1912 թ. Շուշիում հրատարակվել է 150 անուն գիրք[1378]:

1874 թ. մինչև 1920 թ. մարտը Շուշիում լույս է տեսել 28 անուն թերթ և հանդես, որից 25–ը՝ հայերեն, 3–ը՝ ռուսերեն[1379]: Թուրքերենով մինչև 1921 թ. Շուշիում ոչ մի թերթ չի հրատարակվել:

Շուշիից մեզ են հասել 20, Ջակամա երկրից 35, Շամախուց՝ 15 ձեռագրեր[1380]:

19–րդ դարում և 20–րդ դարի սկզբներին Շուշիում բուռն զարգացում է ապրում գիտական միտքը, մասնավորապես՝ հայագիտությունը: Այդ շրջանում Շուշիում հրապարակ են եկել բառարանագիտական, բանահավաքչական, պատմագիտական և հայոց լեզվի քերականությանը նվիրված աշխատություններ:

Հայրենի քաղաքում ստեղծագործել են Մուրացանը (Գրիգոր Տեր–Հովհաննիսյան), Լեոն (Առաքել Բաբախանյան):

[1377] Բալայան Վ., Շուշի, էջ 229:
[1378] Նույն տեղում, էջ 235:
[1379] Նույն տեղում:
[1380] Հակոբյան Հ., Արցախ–Ուտիքի մանրանկարչությունը 13–14–րդ դարերում, Երևան, 1989, էջ 32:

Շուշիում, առաջինը Արևելյան Հայաստանում, Նիկիտա–Մկրտիչ Խանդամիրյանի ջանքերով և նախաձեռնությամբ 1873 թ. կառուցվում է թատրոնի շենք, որի բացումը տեղի է ունենում նույն թվականի օգոստոսի 22–ին: Սկզբում շենքը ծառայում էր որպես քաղաքային ակումբ, որտեղ միաժամանակ ներկայացումներ էին տրվում: 1891 թ. նա Ղազանչեցոց եկեղեցու մոտ գտնվող այդ շենքը հիմնովին վերակառուցեց և դարձրեց 350 տեղանոց դահլիճով քաղաքային թատրոն:

Շուշիում են ծնվել հայ բեմի ականավոր գործիչներ Գրիգոր Ավետյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Վաղարշ Վաղարշյանը:

Խանդամիրյան թատրոնը թուրքերի կողմից կործանվեց 1905 թ., որը շատ բան էր տվել նաև իրենց:

Շուշիում հարմարեցված երկու դահլիճներում կազմակերպվում էին կինոցուցադրումներ (սինեմատոգրաֆիա)[1381]: Բերդաքաղաքի բնակչությունը ծանոթ էր նաև կրկեսային արվեստին:

Աննախադեպ վերելք էր ապրում նաև երաժշտական արվեստը: Հայ երաժշտագետ Վ. Կարագանովը գրել է. «Անդրկովկասին երաժշտագետներ և երգիչներ է մատակարարում Շուշին, որը համարվում է պոեզիայի, երգի և երաժշտության աստվածաշնորհ հայրենիքը: Այն Անդրկովկասի համար կոնսերվատորիայի դեր էր կատարում»[1382]:

19–րդ դարում և 20–րդ դարի սկզբներին աննախընթաց զարգացում է ապրել հայ կերպարվեստի և քանդակագործության արցախյան դպրոցը: Այդ գործում անուրանալի ավանդ են ունեցել ծննդով շուշեցիներ տաղանդավոր դիմանկարիչ Ստեփան Աղաջանյանը (1863–1940 թթ.), քանդակագործ Հակոբ Գյուրջյանը (1881–1948 թթ.):

Ելնելով քաղաքաշինության առանձնահատկություններից քննարկվող ժամանակաշրջանում կազմվել և իրականացվել է Շուշիի կառուցապատման չորս գլխավոր հատակագիծ: Երեք հատակագծերը պահպանվում են Ռուսաստանի կենտրոնական պետական ռազմապատմական արխիվում:

Պատահական չէ, որ ժամանակակիցները Շուշին անվանում էին «փոքր Փարիզ»: 1816 թ. կառուցվել է Կուսանաց Սբ. Աստվածածնի միանավ թաղածածկ եռահարկ զանգակատնով վանքը:

Խաչատուր Աբովյանի անվան ներկայիս դպրոցի մի մասի տեղում 18–րդ դարում կառուցված Ագուլեցոց Սբ. Աստվածածնի եկեղեցու տեղում 1822 թ. Զոհրապ, Մարկոս, Բաբա և Օհանջան Տեր–Մատթևոսյան–Թառումյան եղբայրների միջոցներով կառուցվել է եռանավ բազիլիկ նոր եկեղեցի:

1708 թ. ձեռագրում[1383] հիշատակված Շուշիի Մեղրեցոց Սբ. Աստվածածնի եկեղեցու տեղը Մահտեսի Բաբա Հախումյանը 1832 թ. կառուցում է Մեղրեցոց Սբ. Աստվա-

[1381] «Գործ», հմ. 9, 7 մարտի, Բաքու, 1914:
[1382] Караганов В., Кавказская музыка, Тифлис, 1908, с. 28.
[1383] Թոպճեան Յ. Յակոբ, Յուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Ա., Վաղարշապատ, 1895, էջ 45:

ծածնի եռանավ բազիլիկ եկեղեցին: 1847–1857 թթ. կառուցվում է խաչաձև գմբեթավոր Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին՝ Կանաչ ժամը: Այն հայտնի է նաև Ղարաբաղցոց եկեղեցի անունով, որն առայսօր կանգուն է:

1883 թ. կառուցվել է Ջրաբերդցոց եկեղեցին, որն ավերվել է 1920 թ. և տեղն առողջարանի շենք է կառուցվել:

Շուշիի ամենամեծ եկեղեցին համարվում է Ղազանչեցոց Ամենափրկիչ մայր տաճարը: 1868 թ. մայիսի 21-ին, ճարտարապետ Սիմոն Տեր Հակոբյանի նախագծին համապատասխան, դրվեցին եկեղեցու հիմքերը: Այն բարերար Թադևոս Թամիրյանի նյութական օժանդակությամբ ամբողջական տեսքի բերվեց 1887 թ.:

Թաթարներին (թուրքերին) պատկանող կառույցների մեջ ճարտարապետական արժեք ունի «Խանի աղջկա» պալատը, որը կառուցվել է 19-րդ դարի կեսերին հայ ճարտարապետների և արհեստավորների կողմից:

Թուրքական (թաթարական) թաղամասում ճարտարապետական առումով կարևոր շինություններ են համարվում վերին և ներքին մզկիթները, որոնք կառուցվել են 1874–1875 և 1883 թվականներին: Ներկայումս այդ մզկիթները վերականգնվում և պահպանվում են պետության կողմից:

Շուրջ 610 հա տարածություն զբաղեցնող բերդաքաղաքի արևմտյան, արևելյան և հարավային հատվածները շրջափակված են բնական պարիսպներով, իսկ հյուսիսային մասը պարսպապատված է, որոնց մեջ կային 50 աշտարակներ: Պարիսպներն ունեին 6–9 մետր բարձրություն: Պատերի հաստությունը 1 մետրից հասնում է 2,1 մետրի:

Շուշիի ամրոցի շրջագիծը 10 248 գծամետր է, որից 6894 մետր ժայռեր են, իսկ 3990 մետր քարակերտ պատ: Բերդը ունեցել է 4 դուռ:

1815 թ. Աղվանից կաթողիկոսության վերացումից և Ղարաբաղի թեմի կազմավորումից հետո Շուշին դարձավ Հայոց արևելից կողմերի հոգևոր կենտրոնը:

19-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ Շուշին դարձավ նաև սահմանադրական շարժման, ազատամիտ, առաջադեմ ազգային գաղափարների ձևավորման, դրանց արծարծման և տարածման կենտրոն:

Արևմտյան Հայաստանի ազատագրման և պետականության վերականգնման գաղափարաբանությունը Շուշիում ծնված և դաստիարակված գործիչների շնորհիվ համահայկական երանգավորում ստացավ:

Շուշիի թեմական դպրոցը դարձել էր ազատագրական շարժման գործիչների դարբնոց: Այստեղ կրթություն են ստացել և որպես անհատականություններ ձևավորվել Մենակը (Եգոր Առստամյան), Թորգոմը (Թուման Թումյանց), Իշխանը (Նիկոլ Պողոսյանը), Նիկոլ Դումանը (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան), Արամ Մանուկյանը (Սարգիս Հովհաննիսյան) և ուրիշներ:

1917 թ. դեկտեմբերին՝ Անդրկովկասի երեք ազգային հանրապետությունների ծնունդից մի քանի ամիս առաջ, Շուշիում դրվեց պետական մի միավորի հիմքը, որը

վերջնական տեսք ստացավ 1918 թ. հուլիսին: Այն ուներ պետությանը հատուկ բոլոր ինստիտուտները՝ օրենսդիր մարմին, գործադիր, դատական իշխանություն, բանակ: Մայրաքաղաք Շուշին դարձավ անկախ Արցախի տնտեսական, մշակութային և քաղաքական կենտրոնը:

1918 թ. հուլիսից մինչև 1920 թ. մայիսը արցախահայության տասը համագումարներից հինգը հրավիրվել են Շուշիում: 1917–1920 թվականներին Շուշիում գործել են հայ քաղաքական ուժերն ու կուսակցությունները:

Հայաստանի Հանրապետության առաջին խորհրդարանի 46 պատգամավորներից 3-ը՝ Արշալույս Բաբալյանը, Միքայել Ղարաբեկյանը և Պետրոս Ջաքարյանը ծնվել են Շուշիում:

ՀՀ հիմնադիր և առաջին կառավարության 6 անդամներից մեկը՝ Արամ Մանուկյանը, ծնվել է Շուշիում 1879 թ.:

1920 թ. ծանր ժամանակներ սկսվեցին Շուշիի հայության համար: Թուրքերը, մեծաքանակ զորքեր կենտրոնացնելով Շուշիում, 1920 թ. մարտի 23-ին հրի մատնեցին և թալանեցին հայկական քաղաքամասը: Ավելի քան 10 000 հայեր ենթարկվեցին կոտորածի, կրակի ճարակներից փրկված գույքն ու կայքը բաժին հասավ թուրք-թաթարներին:

Այդ ամիսներին խորհրդային իշխանության շոշափուկները հասան նաև Այսրկովկաս: 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Արցախի նկատմամբ հավակնություններն ավելի մեծացան:

1920 թ. մայիսի 12-ին 11-րդ կարմիր բանակը մտավ Շուշի: Խորհրդային կարգեր հաստատվեցին նաև Արցախում: Շուշիում տեր ու տնօրինություն էին անում մուսավաթականներն ու թուրք կոմունիստները:

Հայ ժողովրդի պարծանքը հանդիսացող հայաշունչ ու հայաբույր Շուշին խորհրդային ողջ ժամանակաշրջանում՝ մինչև 1992 թ. մայիսի 9-ի նրա վերջնական ազատագրումը, արցախահայության համար դարձել էր վախի, սարսափի, տխուր և անհեռանկար, անհույս ապագայի խորհրդանիշ:

Շուշիի թուրք բնակչությունը տարեցտարի աճում էր: 1988 թ. քաղաքում ապրում էր 13 500 մարդ, որի 15 տոկոսը՝ մոտ 2200 հոգի, հայեր էին[1384]:

Արցախյան ազգային-ազատագրական պայքարի առաջին իսկ օրերից Շուշիի հայությանը նորից արտաքսեցին իրենց հայրենի բնակավայրից:

Խորհրդային տարիներին, չնայած Շուշին հայաթափվել էր, այնուամենայնիվ, մինչև այդ հայկական քաղաքում ծնված, մեծացած ու դաստիարակված շատ ու շատ հայորդիներ, ապրելով ԽՍՀՄ-ի տարբեր հանրապետություններում, փայլուն ձևով իրենց դրսևորեցին գիտության, կրթության, մշակույթի, ռազմական գործի, տնտեսական կյանքի տարբեր ասպարեզներում:

[1384] Դաբաղյան Ա., Գաբրիելյան Մ., Շուշին 1992–2002 թթ. հայերի վերադարձը ազատագրված քաղաք (ազատագրական ակնարկ), Երևան, 2004, էջ 26:

Շուշիում են ծնվել Խորհրդային Միության հերոսներ, գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը, գնդապետ Հրանտ Ավագյանը, լեյտենանտ Ռուբեն Բաղիրյանը, Անդրկովկասում Խորհրդային Միության միակ կրկնակի հերոս՝ Նելսոն Ստեփանյանը:

Կրթության, գիտության, մշակույթի համաշխարհային գանձարանում իրենց ներդրումն են ունեցել շուշեցիներ՝ երաժիշտ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Ալեքսանդր Ալեքսանդրյանը, Ճարտարապետ Ֆրեյդուն Աղալյանը, նկարիչ Ստեփան Աղաջանյանը, քանդակագործ Հակոբ Գյուրջյանը, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Արտաշես Առաքելյանը, գրող, մանկավարժ, հրապարակախոս, հասարակական, քաղաքական գործիչ Համբարձում Առաքելյանը, համաճարակաբան, բժշկական գիտությունների դոկտոր Մարգար Առուստամյանը, ճարտարապետ Հայկ Ավետովը, ԱԽՍՀ և ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Արտաշես Արզումանյանը, Խորհրդային բեմանկարչության հիմնադիր, նկարիչ Միքայել Արուտչյանը, մաթեմատիկոս Բահաթուր Բահաթրյանը, երգչուհի, պարուհի, ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի Արև Բաղդասարյանը, կոմպոզիտոր, խմբավար, հասարակական գործիչ Եղիշե Բաղդասարյանը, գրաքննադատ, փիլիսոփա, հասարակական գործիչ Հայկ Գյուլիքևխյանը, դերասան, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Գուրգեն Գաբրիելյանը, մանկաբույժ Հովնան Գաբրիելյանը, ռուս քիմիկոս Նիկոլայ Զինինը, բուսաբան, ԽՍՀՄ և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Արմեն Թախտաջյանը, դիրիժոր Հովհաննես Հովհաննիսյանը, քիմիկոս, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վաչե Իսագուլյանցը, պատմաբան, գրականագետ, գրող, հրապարակախոս Լեոն (Առաքել Բաբախանյան), քիմիկոս, գեներալ-մայոր, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Հովհաննես (Իվան) Կնունյանցը, օպերային երգիչ (քնարա-դրամատիկական տենոր) Արշակ Կոստանյանը, հրապարակախոս, գրող, թարգմանիչ Սիմեոն Հախումյանը, մետաղագետ, ֆիզիկոս, քիմիկոս, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, ՌՍՖՍՀ գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Ռուբեն Համբարձումյանը, բանաստեղծ Միքայել Հարությունյանը, պատմաբան, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, քիմիկոս Հակոբ Հովհաննիսյանը, գրող, գրականագետ Գուրգեն Հովհաննիսյանը (Հովնան), կոմպոզիտոր, խմբավար, երգիչ, մանկավարժ Դանիել Ղազարյանը, գրականագետ, թարգմանիչ Եղիշե Մադաթյանը, ինժեներ-տեխնոլոգ Ջավեն Մելիք-Թանգիևը, թառահար Բալա Մելիքյանը, գրող, հասարակական գործիչ Կոնստանդին Մելիք Շահնազարյանը (Տմբլաչի Խաչան), գրող Սողոմոն Մելիք Շահնազարյանը, ինժեներ-էներգետիկ Հովհաննես Մելիք-Փաշայանը, բժիշկ, հիգենիստ Հայկ Միրզաբեկյանը, գրող Մուրացանը (Գրիգոր Տեր-Հովհաննիսյան), ինժեներ-էներգետիկ Մկրտիչ Յուզբաշյանը, կենդանաբան, պրոֆեսոր Սիմոն Յուզբաշյանը, խմբագիր, հրատարակիչ, հասարակական գործիչ Տիգրան Նազարյանը, ռեժիսոր, դերասան և մանկավարժ Տիգրան Շամիրխանյանը, տնտեսագետ, պրոֆեսոր Ղևոնդ Շաքարյանը, գրականագետ Արֆենիկ Պետրոսյանը, բժիշկ, բժշկական գիտությունների դոկտոր Գրիգոր Սաղյանը, գրականագետ Խորեն Սարգսյանը, լեռնային ինժեներ Արմենակ Սարգսյանցը, նյարդաֆիզիոլոգ, նյարդամորֆոլոգ Սիմեոն Սարկիսովը, ճարտարապետ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Սամվել Սաֆարյանը, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Վաղարշ Վաղարշյանը, մանկավարժ, հասարակական գործիչ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Լևոն Վարդունին, բուսաբույծ-սելեկցիոներ, պրոֆեսոր Եսայի Վարունցյանը, հիդրոէներգետիկ Հովսեփ Տեր-Ասծատրյանը, քիմիկոս, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ղազար Տեր-Ղազարյանը, մաթեմատիկոս, ինժեներ-մեխանիկ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Աշոտ Տեր-Մկրտչյանը, ինժեներ Բոգդան Փիրումովը, գյուղատնտեսական կենսաքիմիայի հիմնադիրը ՀԽՍՀ-ում, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Քամալյանը (նա ծնվել է Մարտունու շրջանի Գիշի գյուղում, մանկությունն ու պատանեկությունը անց է կացրել Շուշիում):

Ծագումով շուշեցիներ էին կուսակցական, հասարակական, քաղաքական, պետական, ռազմական, հոգևոր գործիչներ՝ ՀԽՍՀ արտաքին գործերի ժողկոմ Ալեքսանդր Բեկզադյանը, Սարգիս Բաղդասարյանը, ՀԽՍՀ ներքին գործերի ժողկոմ Իսահակ Դովլաթյանը, ԽՍՀՄ սև մետալուրգիայի նախարար Հովհաննես Թևոսյանը, ՀԽՍՀ մինիստրների խորհրդի նախագահ Սարգիս Կասյանը, Լյուդվիգ Կնունյանցը, Փառանձեմ (Ռիզել) Կնունյանցը, Սարգիս Համբարձումյանը, Եղիշե Շամախյանը, Ալեքսանդր Ծատուրյանը (Ռուբենի), Մարտիրոս (Մարտիկ) Սարուխանյանը (Լևոնյան), Սպանդար Սպանդարյանը, ՀԽՍՀ մինիստրների խորհրդի նախագահ Սահակ Տեր Գաբրիելյանը, Սրբուհի Քարամյանը, գեներալ-լեյտենանտ Հովհաննես Լազարյանը (Իվան Լազարև), Հայաստանի հանրապետության հիմնադիր, ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանը, Սարգիս Հովհաննիսյանը, Գանձասարի կաթողիկոս Հովհաննես Հասան-Ջալալյանը, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը:

Արցախյան շարժման առաջին իսկ օրերից Շուշին վերածվել էր օմոնականների և Ադրբեջանի ժողձակատայինների գրոհայինների որջի, որտեղից ամեն օր գնդակոծվում և հրետակոծվում էին հայկական գյուղերն ու ու Ստեփանակերտը:

1992 թ. մայիսի 8-ի գիշերվա ժամը 2:20-ին հայկական հրետանու համազարկով սկսվեց Շուշիի ազատագրման՝ «Հարսանիք լեռներում» ռազմագործողությունը: Հայկական ինքնապաշտպանական ուժերը գրոհեցին չորս ուղղություններով: Հյուսիսային ուղղությամբ գործող ստորաբաժանումների հրամանատարն էր Վալերի Չիթչյանը, արևելյանը՝ Արկադի Կարապետյանը, հյուսիսարևմտյանը՝ Սեյրան Օհանյանը և հարավայինը՝ Սամվել Բաբայանը: Ռազմագործողությունը ղեկավարում էր գնդապետ Արկադի Տեր-Թադևոսյանը: Նրա տեղակալն էր Ֆելիքս Գզողյանը:

Մայիսի 9-ի առավոտյան թշնամու բարոյալքված զորամասերը ժողովրեցին Շուշիից: Արցախի զինված ուժերը, զարգացնելով հարձակումը, մայիսի 19-ին հասան ՀՀ-ի սահման: Բացվեց Արցախի Հանրապետությունը ՀՀ-ին կապող կյանքի ճանապարհը:

Շուշիի և ընդհանրապես Արցախի համար մղված ազատամարտերին իրենց մասնակցությունն են բերել ծագումով շուշեցիները: «Արցախի հերոսի» բարձր կոչմանն է արժանացել գեներալ-գնդապետ Սեյրան Օհանյանը, ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի՝ Էռնեստ Դանիելյանը: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվել են Սասուն Հակոբյանը (հետմահու), Սամվել Աղաջանյանը, Արթուր Առաքելյանը և Անդրանիկ Հակոբյանը:

1992 թ. ԱՀ կառավարության որոշմամբ ստեղծվեց Շուշիի վարչակազմը: Խնդիր դրվեց սկսել քաղաքի վերականգնողական և վերաբնակեցման աշխատանքները: Տարեցտարի վերականգնվում են կիսավեր շինությունները, կառուցվում են նոր առանձնատներ, շենքեր, վերանորոգվում փողոցներն ու ջրագծերը:

Շուշիում այսօր գործում են կրթական, մշակութային բազմաթիվ հաստատություններ, որոնք լծված են բերդաքաղաքի վաղեմի փառքի վերականգնմանը:

Քաղաքը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Քաղաքում գործում են 3 հյուրանոցներ՝ Ավան Շուշի Պլազա, Շուշի Գրանտ հոթել, Շուշի, 3 բանկերի մասնաճյուղեր, առևտրի 25 կետեր: Համայնքում գործում են Շուշիի շրջվարչակազմը, քաղաքապետարանը, «Շուշի մշակույթի և երիտասարդության կենտրոն» ՊՈԱԿ-ը, շրջանային հիվանդանոցը, երկու դպրոցներ, Եզնիկ Մոզյանի անվան արհեստագործական ուսումնարանը, «Շուշիի մանկական երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ը, Դանիել Ղազարյանի անվան երաժշտական մասնագիտացված դպրոցը, երկու մանկապարտեզ: Այստեղ է գտնվում նաև Շուշիի տեխնոլոգիկան համալսարանը, Շուշիի «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտը, ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարությունը:

Շուշիում 2010 թ. կար 1419 տուն, 3880 բնակիչ[1385], 2018 թ.՝ 1619 տուն, 4446 բնակիչ[1386]:

Նրանք հիմնականում աշխատում են մայրաքաղաքի և Շուշիի պետական և մասնավոր հիմնարկ ձեռնարկություններում, ծառայում ԱՀ Պաշտպանության բանակում:

ԼԻՍԱԳՈՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Շուշիի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Վարանդա գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Ղարաբաղյան լեռնաշղթայի Լիսագոր լեռան հյուսիսարևմտյան բարձրադիր ստորոտում, որտեղով անցնում է նաև Ստեփանակերտ-Շուշի-Բերձոր-Գորիս մայրուղին: Այստեղից սկիզբ է առնում նաև Կարկառի վտակներից մեկը:

[1385] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1386] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

Շուշիի կիրճի վերջնամասում գտնվող բնակավայրերից են Ջառիստն ու Լիսագորը: Մինչև 20-րդ դարի սկզբները Լիսագորը ուներ Թթու ջուր անունը:

Առնվազն 12-13-րդ դարերից սկսած Ջառիստը և Թթու ջուր բնակավայրերը գոյություն ունեին: Բնակավայրի հարևանությամբ գտնվող Թթու ջուր նշանավոր աղբյուրից էլ գյուղը կրում էր Թթու ջուր անունը:

20-րդ դարի 20-ական թվականներին Շուշիի և Թթու ջրի բնաշխարհագրական առանձնահատկություններն ուսումնասիրող գիտնական Ի. Ֆիգուրովսկին գրել է. «Չափավոր տաք, նույնիսկ հով ամառը, որը միաժամանակ համեմատաբար պարզ է և չոր, այդ վայրը դարձնում է առհասարակ Անդրկովկասի ամենալավ կլիմայական վայրերից մեկը և ամենալավը ամբողջ Արևելյան Անդրկովկասում: Շուշին և Թթու ջուրը այս տեսակետից վաղուց ի վեր հայտնի են, ինչպես և Դիլիջանը, ամառը այստեղ իր ջերմաստիճանով նմանվում է Ցյուրիխին, Բերնին, Ժնևին և այլ Շվեյցարական և Տիրոլյան վայրերին»[1387]: Պատահական չէ, որ 19-20-րդ դարերում Թթու ջուրը հովվեկների, մասնավորապես շուշեցիների համար, հարմարավետ ամառանոցային բնակավայր էր:

Մինչև 19-րդ դարի վերջը Թթու ջուր բնակավայրում միայն հայեր էին ապրում: 18-րդ դարի վերջերից սկսած հայերը սկսեցին հեռանալ Թթու ջուր գյուղից: 19-րդ դարի վերջերին գյուղում մի քանի ընտանիքներ էին մնացել: Ցարական արքունիքը, Այսրկովկասն գերիշխանության տակ առնելուց հետո, իր հեռագնա նպատակների իրագործման համար տարածաշրջանում ձգտել է ստեղծել նաև ազգային հենարան: Այդ նպատակով 19-րդ դարի 20-ական թվականներից՝ Երմոլովի կառավարչության շրջանում, Հայոց արևելից նահանգներում բնակեցնում էին Ռուսաստանի տարբեր նահանգներից բերված գաղթականներ:

1830-ական թվականներից մինչև 1880-ական թվականները Ղարաբաղում հիմնվեցին Շաբա-Կիշլյակ, Ռուս Բորիս, Գորելոյե, Կարյագինո, Միխայլովկա, Նովո-Իվանովկա, Սարատովկա, Սլավյանկա, Նովո-Սպասկոյե, Նովո-Տրոիցկոյե գյուղերը: 1880-ական թվականներից մինչև 1903 թ.՝ Կոտլյարևկա, 1903-1917 թթ.՝ Ալեքսեևկա, Գեորգևսկայա, Գոլիցինո, Գրաֆսկոյե, Կովալյովկա, Կուրոպատկինո, Լևոն-Արխ, Լըսագորսկ, Լվովկա, Մինգրելսկ, Նիկոլաևկա, Օրլովո-Դենիսովկա, Պետրովկա, Սկոբոլևկա, Սունժենկա, Ֆոկինսկոյե, ռուսական Խոջալու, Խոնաշեն գյուղերը:

Ռուսները, վերաբնակվելով Թթու ջուր գյուղում, բնակավայրը անվանեցին Լըսագորսկ: Ռուսների վերաբնակեցմանը զուգընթաց հայ վերջին ընտանիքները նույնպես լքեցին Թթու ջուրը:

1905-1906 և 1917-1920 թվականների հայ-թաթարական ընդհարումների ժամանակ թաթարները, ռուսներին համարելով գյավուրներ (անհավատներ), նրանց հետ

[1387] Фигуровский И., Материалы по районированию Азербайджанской ССР, Т. I, вып.1, часть 2, Баку, 1926, с. 135.

նույնպես հաշվեհարդար տեսան: Կորուստներ են ունեցել նաև Լիսագորի ռուս վերաբնակիչները: Կենդանի մնացացածները հիմնականում վերադարձել էին Ռուսաստան:

1923 թ. ԼՂԻՄ սահմանները ճշտող հանձնաժողովը ներկայիս Լիսագորը Լրսագորսկ անունով ներառեց նորաստեղծ մարզի կազմի մեջ[1388]: 1923 թ. առայսօր բնակավայրը Շուշիի շրջանի կազմում է:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Ադրբեջանի ղեկավարությունը, հաշվի առնելով Լիսագորի աշխարհագրական դիրքը, Արցախի մյուս բնակավայրերը՝ մասնավորապես Ստեփանակերտը Բերդաձորի ենթաշրջանի գյուղերի հետ կապող օղակ լինելու հանգամանքը, նախկին հայկական գյուղը լցրեց թուրքերով:

Խորհրդային տարիներին Լիսագորում ստեղծվել էր տոհմային տնտեսություն, որտեղ կաթի արտադրությունը դրված էր նորարական հիմքերի վրա:

Արցախյան ազատագրական պայքարի առաջին շրջանում Ադրբեջանը Լիսագորը դարձրեց ռազմական հենակետ, որտեղից հարձակումներ էր գործում Բերդաձորի ենթաշրջանի հայկական գյուղերի վրա:

1992 թ. մայիսի 16–18–ը ԱՀ ՊԲ զորամասերն ազատագրեցին Լիսագորն ու Բերդաձորը, Լաչինն ու նրա շրջակա գյուղերը: Ավարտվեց Արցախյան պատերազմի առաջին փուլը:

Նախկին ԼՂԻՄ–ի տարածքը մաքրվեց թշնամուց: Կյանքի կոչվեց երկու հանրապետություններն իրար կապող ճանապարհը, որն ընդունված է կոչել նաև «հումանիտար միջանցք»:

1994 թ. սկսվել է գյուղի վերաբնակեցման գործընթացը: Այդտեղ հաստատվել էին ՀՀ և ԱՀ բնակավայրերից մի քանի ընտանիքներ:

1996 թ. գյուղում բացվել է ութամյա դպրոց, որը 1997 թ. ստացել է միջնակարգի կարգավիճակ: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Ի. Բաբաջանյանը, Ա. Բարսեղյանը, Լ. Նասիբյանը:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, «Շուշիի մանկական երաժշտական դպրոց» ՊՈԱԿ–ի Լիսագորի մասնաճյուղը:

Լիսագորում 2010 թ. կար 28 տուն, 128 բնակիչ[1389], 2018 թ.՝ 29 տուն, 133 բնակիչ[1390]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1388] ԱՀ պետարխիվ, ֆ.1, ց.1, գ.1, թ.12; «Советское краеведение», № 10, 1936, с.1.
[1389] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1390] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 5:

ՔԻՐՍԱՎԱՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Շուշիի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Վարանդա գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Փոքր Քիրսի ստորոտում:

Մինչնադարում ներկայիս բնակավայրի և նրանից ոչ շատ մեծ հեռավորության վրա մի քանի հայկական գյուղեր են եղել:

Փոքր Քիրսին հարակից ձորահովտում հայկական գյուղեր են եղել՝ Մեղին, Քյոհնաշենը, Ռիչան, Ղշլաղը:

Վերոհիշյալ տարածքներում առայսօր տեսանելի են եկեղեցիների, մատուռների, գերեզմանատների հետքերը, մասնավորապես Քյոհնաշենից 5 կմ հեռավորության վրա գտնվող Հարթագոմ կամ Զանգելան, Գափ վայրում:

Քիրսավանը նախկինում ունեցել է Քյոհնաշեն անվանումը:

18–րդ դարի երկրորդ կեսին Ղարաբաղի Իբրահիմ խանը ծրագրված միջոցառումներ է իրականացրել Արցախում ոչ միայն մահմեդականների վերաբնակեցնելու, այլև հայ ազգաբնակչությանը կրոնափոխելու ուղղությամբ: Դրա զոհը դարձավ Մելիք–Եգանյան–Ավանյանների հայտնի տոհմը: Մելիք–Եգանյանների շառավիղներից մելիք Վահանին և մելիք Ասլանին Իբրահիմ խանը կրոնափոխ էր արել: Նրանց են անցել այդ գերդաստանի կալվածքներն ու ողջ ունեցվածքը:

Նմանօրինակ տխուր ճակատագիր բաժին էր հասել նաև Փոքր Քիրսի ստորոտում եղած հայկական գյուղերի և Շուշիից ոչ շատ մեծ հեռավորության վրա գտնվող Զառիստ բնակավայրի հայերին: Քյոհնաշենի հայերը, իսլամ ընդունելուց հետո, գյուղը վերանվանել են Մուսուլմանլար:

Այդ դեպքերի մասին Աբրահամ Կիսիբեկյանն իր «Հուշեր»–ում գրել է. «Մուսուլմանլարը կոչվում է նաև Ենգի Մուսուլմանլար: «Ենգի» նշանակում է հավատափոխ եղած: ...Սրանք թե իրենց դիմագծերով և թե նիստ կացով նման են հայերին:

Մուսուլմանլարի գյուղախմբի հարևան ադրբեջանական գյուղերն իրենց վերաբերմունքով դեպի հայերը միանգամայն տարբերվում են. այսպես, օրինակ, նրանք չեն ուտում հայերի թխած հացը. կարիքի դեպքում նրանցից ստանում են ալյուր և իրենք թխում: Նրանք հայերի ամաններով կերակուր չեն ուտում և կամ ջրամանով ջուր խմում: Սակայն դրան հակառակն էր Մուսուլմանլարը: Այստեղի բնակիչներն ուտում էին հայերի թխած հացը, նրանց ամանով կերակրվում ու նրանց ամանով ջուր խմում: Մուսուլմանլարի բնակիչները, համեմատած ադրբեջանական մյուս գյուղերի բնակիչների հետ, վերին աստիճանի մաքրասեր են: Սա Խոնաբերդի հետ չափազանց մտերմական ու բարեկամական հարաբերությունների մեջ էր գտնվում: ... Եղել են այնպիսի դեպքեր, երբ դրանք միասնաբար պաշտպանել են իրար: Օրինակ՝ 1919 թ., երբ Մուսուլմանլարի շրջակա գյուղերը հավաքվում են հարձակվելու Խոնաբերդի վրա, Մուսուլմանլարի հասարակության առաջնորդ Իլդրիմն իր ժողովրդի հետ միասին հրաժարվում է մասնակցել այդ հարձակմանը և մինչև անգամ զգուշաց-

նում են Խոծաբերդին ու այսպիսով խոչընդոտ հանդիսանում նրանց: 1905 թ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ այդ գյուղերը չեն մասնակցել ընդհարումներին, այլ ընդհակառակը՝ նրանք իրար պաշտպանել են: Այդտեղ տարածված է այն կարծիքը, որ Մուսուլմանլարի այժմյան բնակիչների նախնիները եղել են հայեր և անընդհատ շարունակվող ճնշումների ու անվերջ բռնությունների պատճառով նրանք կրոնափոխ են եղել»[1391]:

1918-1920 թվականներին Արցախի և Ադրբեջանի միջև ընթացող պատերազմական գործողությունների ժամանակ Մուսուլմանլար գյուղախմբի մեջ մտնող բնակավայրերը Ադրբեջանի քաղաքական ղեկավարությունը դարձրել էր ռազմական հենակետեր:

1920 թ. մարտի 23-ին՝ Շուշիի հայկական քաղաքամասը թուրք-թաթարների կողմից կրակի մատնելուց հետո, երկրամասի տարբեր գավառներում Արցախի և Ադրբեջանի զինված ուժերի միջև ծանր մարտեր էին ընթանում:

Ադրբեջանի կառավարությունը թուրք սպաների գլխավորությամբ մեծաքանակ զորքեր էր կուտակել Ղշլաղում, որը համարվում էր Արցախը Սյունիքի հետ կապող կարևոր հանգուցակետերից մեկը: Հրամանատարությունը խնդիր էր դրել անպայման գրավել ադրբեջանական ռազմական այդ հենակետը: Ռազմաճակատի այդ հատվածում հայկական զինված ուժերը՝ հետևազորը՝ Ստեփանյանի, իսկ հեծելազորը՝ Մանուկի հրամանատարությամբ, երեքօրյա մարտերից հետո Ղշլաղը ազատագրեցին: Համառ մարտերից հետո հայկական ուժերին հաջողվեց ազատագրել Մուսուլմանլարի գյուղախմբի մյուս բնակավայրը՝ Ռիչանը[1392]:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Ադրբեջանի ղեկավարությունը ամեն կերպ ձգտում էր ԼՂԻՄ-ից կտրել մարզի տարածքում գտնվող թուրքաբնակ, ինչպես նաև խառը բնակչություն ունեցող բնակավայրերը:

ԼՂԻՄ սահմանները ճշտող հանձնաժողովի անդամ, ԱԽՍՀ Չեկայի նախագահ հայատյաց Միր Ջաֆար Բաղիրովը 1923 թ. հոկտեմբերի 8-ին ԱԿ(բ)Կ Կենտկոմին հայտնում է, որ անհրաժեշտ է Բերձորի և Ստեփանակերտի արանքում գտնվող թուրքաբնակ Խալփալու, Ջարսլու, Մուսուլմանլար գյուղախմբի բնակավայրերը, ինչպես նաև Շուշի քաղաքն ընդգրկել Քրդստանի օկրուգի կազմի մեջ: Նա առաջարկում է նույն սկզբունքով լուծել նաև Ջևանշիրի գավառի թաթարաբնակ գյուղերի ճակատագիրը[1393]:

ԼՂԻՄ ղեկավարության բողոքների հետևանքով հարցը հանվեց օրակարգից:

1992 թ. մայիսին Շուշիի ռազմագործողությունից հետո ազատագրվեցին նաև Մուսուլմանլարի գյուղախմբի բնակավայրերը:

[1391] Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ.1, էջ 471-472:
[1392] Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ.1, էջ 476-477:
[1393] http://www.irs-az.com/100331140534pdf.; հմմտ. Բալայան Վ., Դրվագներ ..., էջ 178:

Արցախյան պատերազմի ավարտից հետո Ադրբեջանից բռնագաղթված և ԱՀ բնակավայրերից մի քանի ընտանիքներ վերաբնակվել են Քյոհնա շենում (Մուսուլմանլար): Բնակավայրը ստացավ Քիրսական անվանումը:

Համայնքը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Գյուղի աղբյուրներն են Ցորտ, Երե:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային հեռախոսակապը և ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Քիրսավանը ունի գյուղապետարան, դպրոց, բուժկետ:

Քիրսավանում 2010 թ. կար 11 տուն, 63 բնակիչ[1394], 2018 թ.՝ 27 տուն, 95 բնակիչ[1395]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԵՂՑԱՀՈՂ

Գյուղը տեղաբաշխված է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Շուշիի շրջանում՝ Արցախի նախկին Բերդաձոր գավառում: Բնակավայրը գտնվում է Ղարաբաղյան լեռնաշղթայի կենտրոնական հատվածի արևելյան լեռնաճյուղերի հարթավայրային մասում, Շուշի-Բերձոր մայրուղուց 1,5 կմ հյուսիս՝ Մեծ Շեն բնակավայրի դեմ դիմաց՝ մոտ 2,5-3 կմ հեռավորության վրա:

Եղցահող և Կանաչ թալա գյուղերի միջև գտնվող տարածքում պահպանվել են հին բնակատեղիների, գերեզմանոցների հետքեր: Մասնակի պեղումների և գյուղատնտեսական աշխատանքների ընթացքում հայտնաբերվել են կենցաղային իրեր, զարդեր, որոնց մի մասը պահպանվում է Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանում:

Եղցահողը բնակեցված է եղել հին շրջանից: Գյուղը դեռևս վաղ միջնադարում ունեցել է եկեղեցի, որը վերանորոգվել է ուշ միջնադարում: 15-19-րդ դարերում Եղցահողի տարածքը խիտ բնակեցված է եղել:

Խորհրդային տարիներին Ադրբեջանի հայահալած քաղաքականության հետևանքով Մեծ Խերխան, Փոքր Խերխան, Դաշտահող, Կանաչ թալա գյուղերը լիովին հայաթափվել էին: 1970-ական թվականներին Լաչինի ադրբեջանցիները և քրդերը տեղափոխվել և բռնազավթել են Կանաչ թալայի հայկական տները: Եղցահողի մոտ գտնվող գետնափոր անձավները, որ տեղացիները անվանում են կիոլներ, վկայում են, որ գյուղի բնակիչները վաղանցյալ ժամանակներում ապրել են Բերդաձորի ենթաշրջանի այդ հատվածում: Իրենց բնակավայրից մոտ 3 կմ հեռավորության վրա հին Եղցահողի բնիկները 1762 թ. կառուցել են եկեղեցի:

[1394] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1395] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

Գյուղի ներկայիս տարածքում բնակիչները սկսել են հաստատվել 1905 թ.: Առաջին բնակիչները եղել են Բաղունց, Թոխունց տոհմերի ներկայացուցիչները: Արդեն 1930-ական թվականներին Եղցահողում ապրում էր 28–30 ընտանիք: Հետագայում Մեծ Խերխան, Փոքր Խերխան և ենթաշրջանի հայաթափվող այլ գյուղերից բնակիչներ են տեղափոխվում և հաստատվում Եղցահողում:

1929 թ. Եղցահողում ձևավորվել է կոլեկտիվ տնտեսություն: Կոլտնտեսության ձևավորման ընթացքը Եղցահողում բավականին ցավոտ է ընթացել: Մի շարք մենատնտեսներ, որոնք ունեին մեծ քանակությամբ անասուններ և վարելահողեր, չէին ցանկանում մտնել կոլտնտեսություններ: Խորհրդային բիրտ վարչակարգը կուլակաթափման պատրվակով ունեզրկեց այդ ընտանիքներին: Նրանց մի մասը ստիպված մտան կոլտնտեսություն, իսկ մյուս մասն էլ, չհամակերպվելով իրավիճակին, հեռացավ այլ բնակավայրեր:

1978 թ. կոլտնտեսությունը վերափոխվել է խորհտնտեսության:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են 80-ից ավելի Եղցահողցիներ, որոնցից 67-ը զոհվել են:

Եղցահողի բնակչությունը անմասն չի մնացել արցախյան շարժումից: Եղցահողի չափահաս բնակիչները Բերդաձորի ենթաշրջանի ինքնապաշտպանական ջոկատի անդամներ էին: Օրեցօր թշնամին Բերդաձորի ենթաշրջանի գյուղերի նկատմամբ մահվան օղակը ավելի էր սեղմում: 1991 թ. մայիսի 18-ին «Օղակ» ռազմագործողության արդյունքում հայաթափվեց Եղցահողը:

1992 թ. մայիսի 16–18-ը ԱՀ ինքնապաշտպանական զորամասերն ազատագրեցին Եղցահողը:

1992 թ. սեպտեմբերի 17-ին թուրքերը՝ անցնելով հակագրոհի, գրավեցին Սարիբաբա լեռը: Նորից Եղցահողը վտանգի տակ դրվեց: Կատաղի և անզիջում ճակատամարտում հայ քաջորդիներին հաջողվեց հետ մղել թշնամուն: Այդ ճակատամարտում զոհվեցին Արմենակ Պետրոսյանը, Սպարտակ Հայրիյանը, Արթուր Պետրոսյանը, Նորայր Գրիգորյանը:

Մարտական գործողությունների ժամանակ 19 հոգի զոհվել են: ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի հետմահու արժանացել է գյուղի կամավորական ջոկատի հրամանատար Հրաչիկ Պետրոսյանը: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվել են Հրաչիկ Նասիբյանը, Արայիկ Գրիգորյանը, Կամո Սարգսյանը:

1918–19 ուսումնական տարվանից Եղցահողում սկսել է գործել տարրական դպրոց, որտեղ ուսուցչություն էր անում Պողոս վարժապետը:

1950–60-ական թվականներին դպրոցում սովորում էր մինչև 70 աշակերտ: Եղցահողի դպրոցի տնօրենի պարտականություններն են կատարել Հրանտ Ղարախանյանը, Մայոր Պետրոսյանը, Վիգեն Սիմոնյանը, Ռուզաննա Բազյանը, Ալվարդ Պետրոսյանը, Ցուրա Քարամյանը, Արմեն Պետրոսյանը:

2018 թ. տվյալներով դպրոցում սովորում էր 13 աշակերտ:

Ծագումով եղցահողցի են 1992–1993 թթ. ԱՀ Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնակատար, այնուհետև ԱՀ արտաքին գործերի նախարար Գեորգի Պետրոսյանը, ԱՀ առողջապահության նախարար Ալեքսանդր Պետրոսյանը:

Եղցահողի նշանավոր պատմամշակութային հուշարձաններն են՝ Սբ. Աստվածածին եկեղեցին (18–19-րդ դդ.), Սբ. Սարգիս եկեղեցին (2003 թ.), 17–19-րդ դարերի գերեզմանոցը:

Եղցահողի համայնքի տարածքում են Մուղդամ, Քոռած նով, Ցորտ, Չորանանց գյոլ, Հախուն գյոլ, Թաբունց գյոլ, Մելիքանց, Սավալասարուն, Հարամ ջուր, Թթու ջուր աղբյուրները:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները հասանելի են բնակչությանը:

Եղցահողում 2018 թ. կար 35 տուն, 128 բնակիչ[1396]:

Համայնքում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, «Շուշիի մանկական երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ի Եղցահողի մասնաճյուղը, հիմնական դպրոց: Նախկինում գործել է նաև մանկապարտեզ: Երեխաների թվաքանակի նվազման պատճառով այն փակվել է:

Գյուղում շարունակում են ապրել Բուլումանց, Հախունց, Ղունաղանց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Եղցահող համայնքի մեջ մտնում են նաև Կանաչ թալա և Տասը վերստ գյուղերը:

ԿԱՆԱՉ ԹԱԼԱ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Շուշիի շրջանում՝ նախկին Բերդաձոր գավառում: Բնակավայրը տեղաբախշված է Ստեփանակերտ–Բերձոր մայրուղու աջ կողմում՝ մոտ 0,5 կմ դեպի հյուսիս:

Կանաչ թալայի տարածքում պահպանվել են Ք. ա. 2–1 հազարամյակների դամբարաններ, կիկլոպյան ամրոցի, միջնադարյան եկեղեցիների, գյուղատեղիների, գերեզմանոցների մնացորդներ: Մասնակի պեղումների և գյուղատնտեսական աշխատանքների ընթացքում հայտաբերվել են կենցաղային իրեր, զարդեր, որոնց մի մասը պահպանվում է Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանում:

Լինելով կարևոր ռազմավարական կետում՝ Բերդաձորի ենթաշրջան ներթափանցած ցեղերն ամեն կերպ փորձել են վերացնել այդ հայկական բնակավայրը: Այդ գործը 20-րդ դարի 70-ական թվականներին իր ավարտին հասցրեցին խորհրդային Ադրբեջանի ղեկավարները: Նրանք Լաչինի շրջանի քրդերի և ադրբեջանցիների մի

[1396] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

քանի տասնյակ ընտանիքներ տեղափոխեցին Կանաչ թալա և բռնազավթեցին հայերի տներն ու այգիները: 1992 թ. մայիսի 17-ին հայկական զինված ուժերը, ոչնչացնելով Լիսագորում տեղակայված թշնամու ռազմական հենակետերը, ազատագրեցին նաև Կանաչ թալան[1397]:

Կանաչ թալայի բնակիչները մասնակցել են Հայրենական մեծ պատերազմին: Նրանց մի մասը ռազմաճակատի տարբեր հատվածներում զոհվել են:

Ծննդով Կանաչ թալայի բնակիչները ԱՀ ինքնապաշտպանական բանակի ստորաբաժանումներում մասնակցել են նորօրյա ժամանակաշրջանի ազատամարտին:

Գյուղի ազատագրվելուց հետո Կանաչ թալայի նախկին բնակիչներից վերադարձել են հայրենի գյուղ և փորձում են շենացնել իրենց պապերի օջախները: Գյուղում հայտնի են Քափունց տոհմի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը:

Կանաչ թալա բնակավայրը մտնում է Եղծահող համայնքի մեջ:

Կանաչ թալայում 2018 թ. կար 4 տուն, 16 բնակիչ[1398]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԾԱՂԿԱՁՈՐ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Շուշիի շրջանում՝ նախկինում Բերդաձոր գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Բերձորից Լիսագոր տանող լեռնանցքում՝ Կանաչ թալայից 1 կմ հարավ-արևմուտք՝ Ստեփանակերտ-Բերձոր մայրուղու վրա: Ծաղկաձորը կամ Տասը վերստը նախկինում կրել է նաև Ենգիբար անունը: Ըստ ավանդության՝ Ենիգիբարն անձնավորություն է եղել և այս բնակավայրում ունեցել է քարավանսարա (Ենգիբարի քարավանսարա):

Դարերի ընթացքում Շուշի-Գորիս ճանապարհի ուղևորների համար կարևոր իջևանատեղի է հանդիսացել: Քանի որ գյուղը Շուշիից մոտ 10 վերստ հեռավորության վրա է գտնվում, հետևաբար 19-րդ դարից այն կրել է նաև Տասը վերստ անունը:

Գյուղում և նրա շրջակայքում պահպանվել են միջնադարյան գյուղատեղիների, գերեզմանոցների, մատուռների հետքեր:

Խորհրդային տարիներին Տասը վերստը ներառված է եղել Բերդաձորի կոլտնտեսության կազմի մեջ:

Տասը վերստի բնակիչներն իրենց մասնակցությունն են բերել Հայրենական մեծ պատերազմին:

[1397] Բալայան Վ., Շուշի, էջ 482:

[1398] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

Արցախյան շարժման առաջին իսկ օրվանից Տասը վերստի չափահաս ազգաբնակչությունը մասնակցել է ինքնապաշտպանական ջոկատների կազմավորմանը և ԱՀ Պաշտպանության բանակի կազմում իր ներդրումն է ունեցել հաղթանակի կերտման գործում:

1992 թ. մայիսի 17-ին ԱՀ ՊԲ զորամասերն ազատագրեցին Տասը վերստը: Պատերազմից հետո գյուղը վերաբնակեցվել է:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը:

Տասը վերստում 2018 թ. կար 3 տուն, 4 բնակիչ[1399]: Նրանք հիմնականում զբաղվում են գյուղատնտեսությամբ:

ՀԻՆՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Շուշիի շրջանում՝ նախկինում՝ Բերդաձոր գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Սաղսաղան, Համզասար լեռների հարավարևմտյան և Բայթալը սարի արևելյան փեշերին՝ Չիման և Ըլանանց գետերի հովիտներում:

Ընդհանուր առմամբ Հինշենի տարածքը սկսվում է Վարար ջուր գետից, ձգվում Օթասխան լեռան արևելյան, Սաղսաղան լեռան հարավարևելյան լանջերով, թեքվում հարավարևելք՝ մինչև Մուսալմանլար գյուղ, Քիրս լեռան արևմտյան ստորոտները, Խաչ գյաղուկ լեռան լանջով, Ջիբրախաչ լեռան գոգահովտով իջնում Այնալու, Ըլանանց, Չիման, Հակարա գետերի միացման տարածքը, որը կոչվում է Ղլեն-տակ (Բերդին տակ):

Արևմտյան կողմից սահմանակից է Աղանուս գյուղի տարածքին: Գյուղի սահմանը Բայթալը լեռան արևելյան կողմից թեքվում, հարավարևմտյան հատվածով հասնում է մինչև Լոլար բալի, Լծավար հանդամասով հատվում է Չիման, Հակարի, Ըլանանց և Այնալու գետերի միացման մասում:

Հինշենը նման սահմաններով ունի 4100,75 հա տարածք: Համայնքի սահմանում է գտնվում Հունանավ գյուղը:

Նախկին Հինշենի համայնքի մեջ մտնում էին Թևանի տուն, Ղրմանահող, Չորան գյունե բնակավայրերը: Թևանի տուն, Ղրմանահող բնակավայրերը գտնվում էին Բայթալը լեռան արևմտյան լանջին: Այստեղ ապրել են Դերունց, Բուզանանց, Ոսկանանց, Սլավալանանց տոհմերը[1400]:

[1399] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

[1400] Հարությունյան Մ., Բերդաձոր. պատմություն, տոհմաբանություն, Երևան, 2011, էջ 4:

Զորան գյուղն բնակավայրը Լաչին լեռան հարավարևելյան լանջին էր, Ստեփանակերտ–Բերձոր խաչուղու աջ և ձախ հատվածներում: Այդտեղ ապրել են Բուրումանց տոհմից՝ Սահակը և Մուխանը[1401]: Նրանց տները գետնափոր են եղել: Այդ բնակարաններն անվանվել են նաև «ծակեր» կամ «կըհոլներ»: Դրանք այսօր էլ տեսանելի են և մեզ որոշակի պատկերացում են տալիս Հինշենի նախորդ սերունդների ապրելակերպի մասին:

Հինշենի տարածքում պահպանված եկեղեցիները, բերդերը, միջնադարյան բնակավայրերը, կացարանները, գերեզմանոցները, տարբեր ժամանակաշրջանի պատկանող մշակութային արժեքները՝ մասնավորապես մահարձանները, խաչքարերը վկայում են, որ հայ մարդը այստեղ ապրել է հնագույն ժամանակներից:

Գտնվելով դեպի Մեծ Հայքի սիրտը՝ Արարատյան դաշտավայր տանող ճանապարհի վրա՝ Բերդաձորի ենթաշրջանի գյուղերի, այդ թվում Հինշենի հայերը անընդհատ պայքարել են արաբ, թուրք–սելջուկ, մոնղոլ–թաթար, պարսիկ նվաճողների, Կովկասի խառնամբոխ ցեղերի դեմ: Օտար նվաճողների դեմ բերդաձորցիների մղած հերոսական պաշտպանության էջերից տեղաբնիկների մոտ հետաքրքիր հուշ–պատմություններ են մնացել:

Պատմում են, որ 1604 թ. պարսից Շահ Աբասը փորձում է նվաճել Հայաստանը, այդ թվում նաև Արաքսի ափերից մինչև Ռմբոսյան լեռնաշղթան ընկած տարածքը: Նա փորձում է նվաճել նաև Բերդաձորը: Շահը իր զորքով հասնում է մինչև Կարմիր քարի հարթակը, նայում անառիկ գյուղին: Երբ նայում է անառիկ գյուղին, գլուխը պտտվում է, և քիչ է մնում՝ գլորվի անդունդը: Նա ահով իջնում է ժայռից ու քթի տակ մրթմրթում. «Իրոք որ անառիկ բերդ է այս գյուղը»[1402]:

Սակայն նրան անընդհատ հետապնդում է Բերդաձորը նվաճելու մարմաջը: Նա բանակի հետախուզության պետին՝ Ալի–Մալի զորավարին, հրամայում է խետախուզել տեղանքը և մեծ ուժերով հարմար տեղից գրոհել գյուղը: Ալի–Մալին 200 հոգանոց զորաջոկատով փորձում է կատարել առաջադրանքը: Բերդաձորցիները թշնամուն ընդառաջ դիրքավորվում են Դնգլբազի ձորում: Սակայն կորուստներից խուսափելու նպատակով նրանք չեն ընդհարվում և թույլ են տալիս՝ թշնամին մտնի ավելի հարմարավետ տեղ՝ Վարար ջրի նեղ կիրճը:

Հինշենի կտրիճները բռնում են ձորաբերանի երեք կողմերը: Երբ Ալի–Մալիի զորաջոկատը խորանում է կիրճի մեջ, բերդաձորցիները բոլոր կողմերից վրա են տալիս և ոչնչացնում բոլորին: Ալի–Մալիին և մի քանի զինվորների գերում են:

Գյուղի պաշտպանները նրան հարցաքննում են և ասում. «Մեր այս հողը սուրբ է: Այստեղ առ այսօր ոչ մի օտար ոտք չի դրել: Իսկ ովքեր էլ փորձել են քեզ պես գաղտագողի մեր տարածքը մտնել, ստացել են արժանի պատիժը: Քո ձեռքով նամակ գրիր

[1401] Նույն տեղում:

[1402] Հայրապետյան Մ., նշվ. աշխ., էջ 4:

շահին և ասա, որ անհնարին է մտնել գյուղ: Թուղթը վերցնելուց հետո կարդում են նրա մահվան դատավճիռը. Հանուն մեր սուրբ հողի, մեր հավատի պահպանման՝ կապել ոտքերը կաղնիներից, որոնք իրարից 4 մետր հեռու են, և ծառերը բաց թողնել»: Շահը կարդում է նամակը, սթափվում և հրաման արձակում. «Զորքը հետ քաշել այս անիծված գյուղի սահմաններից»[1403]:

Բերդաձորցիք տոնում են իրենց հաղթանակը և որոշում այդ վայրը դարձնել սրբատեղի ու կոչել «Ալմալի», իսկ Կարմիր քարը վերանվանել են Շինաքար (Շահի քար):

1804–1813 թթ. և 1826–1828 թթ. ռուս–պարսկական պատերազմների տարիներին հաղթանակի կոման գործում բերդաձորցիներն իրենց ավանդն են ունեցել: 1828 թ. Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմ անցնելու կապակցությամբ Հինշենի մոտ գտնվող աղբյուրներից մեկը անվանել են Ռուսի աղբյուր:

1828–1829 թթ. ռուս–թուրքական պատերազմի տարիներին ղարաբաղյան գնդի կազմում բերդաձորցիներ Բալապուղունց Աթունը (Հարությունը), Գիլբիսարանց Աստվածատուրը, Նյունի Վերդին մասնակցել են Արևմտյան Հայաստանի բնակավայրերի ազատագրման գործին[1404]:

1905–1906 թթ. հայ–թաթարական ընդհարումների ժամանակ Բերդաձորի հայկական գյուղերը հայտնվեցին դեպքերի կիզակետում: 1905 թ. բերդաձորցիները, հետ մղելով թաթար հրոսակների գրոհները, օգնության են գնում նաև Լաչինի մոտ գտնվող Աբուհասան հայկական գյուղի բնակիչներին: Այդ կռիվների ժամանակ բերդաձորցիները 2 զոհ են տալիս:

Այդ տարիներին Բերդաձորի հայերը շատ զրկանքներ կրեցին և որոշ ընտանիքներ ապահովության համար տեղափոխվեցին Չափար, Ջարդա խաչ, Չլդրան գյուղերը:

Առավել նոր մարտահրավերներ բերեց բերդաձորցիներին 1918 թ.: Նույն թվականի հուլիսին Զանգեզուրից շուրջ 4000 գաղթականներ շարժվում են դեպի Զաբուխ՝ նպատակ ունենալով հասնել Շուշի: Հուլիսի 31–ին մեծ դժվարությամբ Բերդաձորի գյուղեր են հասնում 2500 գաղթականներ:

1918 թ. օգոստոսի 7–ին Արցախի կառավարությունը ռազմագործողության շնորհիվ թուրք–թաթարական ելուզակներից մաքրում է Բերդաձոր–Շուշի ճանապարհը, և գաղթականները բարեհաջող հասնում են Շուշի:

1918 թ. հուլիս–օգոստոս ամիսներին Բերդաձորի կիրճում ծանր մարտեր են ընթացել հայ ինքնապաշտպանների և թուրք–թաթարական հրոսակախմբերի միջև: Շուրջ 700 բերդաձորցիներ մասնակցում էին մարտական գործողություններին: Ինքնապաշտպանական մարտերը ղեկավարում էին Խաչատուր Գրիգորյանը, Սարգիս Գրիգորյանը, Ճոռունց Ջհանգիրը: Սյունիքի կողմից հայկական ուժերի ճապաղ գործողությունների հետևանքով օգոստոսի 25–ին ղարաբաղյան կողմը, տալով 20 սպան-

[1403] Նույն տեղում, էջ 7:

[1404] Նույն տեղում, էջ 10:

ված և 35 վիրավոր, ստիպված եղավ նահանջել: Թշնամու ճնշումների տակ դատարկվում են Բերդաձորի հյուսիսային գյուղերը:

Ինքնապաշտպանական ուժերի հետ միասին Բերդաձորի ենթաշրջանի գյուղերից շուրջ 5000 խաղաղ բնակիչներ հեռացան հայրենի օջախներից և ապաստանեցին Շուշիում, Վարանդայի և Խաչենի գյուղերում:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո բերդաձորցիների մի մասը տեղափոխվեց հարազատ բնակավայրեր և նորից սկսեց վերաշինել թուրքերի կողմից ավերված օջախները: Չնայած Հինշենի բնակիչները իրենց փոքրիկ հայ աշխարհը պահելու համար շատ զրկանքներ են կրել, այնուամենայնիվ, իրենց պապերի օջախները շեն պահելու միտումով նորից վերադառնում են սարի վրա թառած իրենց գյուղը: Ի դեպ, բնությունը շռայլ է եղել բերդաձորցիների նկատմամբ: Չնայած նրանք ունեցել են դժվար կյանք, այնուամենայնիվ, մարդու համար բարենպաստ պայմանների շնորհիվ նրանք հայտնի են նաև իրենց երկարակեցությամբ: Օրինակ, Բալապուղունց տոհմից Արություն ապերը (Հարությունը) ապրել է 135 տարի, նույն տոհմից Մակիչի կին Թամամը, որը Ջափանց տոհմից էր, ապրել է 132 տարի: Գիլբիսարանց տոհմից Նյունի Վերդին (Աստվածատուրը) ապրել է 135 տարի, Բոզունց Բեգլարի կինը՝ Եվան, 130 տարի: Նրա տղան՝ Բախշի Բեգլարյանը, 106 տարի:[1405]

Հինշենում հայտնի ազգատոհմեր են՝ Դերունք, Յուղուտանք, Գիլբիսարանք, Բոզունք, Բալապուղունք, Բուղունք, Քյասունք, Ճոռունք, Աթայանք, Գյուլդադունք, Բրումանք, Ափոնք, Նոթունք, Ջափունք, Ջոկառանք, Ջինգիրանք, Թինդիլանք, Իշլիմազանք: Ցավոք այդ տոհմերի մի զգալի մասն այժմ Հին Շենում չեն:

Հինշենում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1929 թ., գյուղում կազմակերպվում է կոլեկտիվ տնտեսություն: Կոլտնտեսության վարչության նախագահներ են աշխատել՝ Աղալո Ավանեսյանը, Ավանես Գրիգորյանը, Վանո Պետրոսյանը, Թևան Բաբայանը, Արմենակ Բարսեղյանը, Բախշի Հարությունյանը, Գրիշա Սարգսյանը, Ջիվան Հայրապետյանը: 1978 թ. կոլտնտեսությունը վերակազմակերպվեց խորհտնտեսության: Խորհրդային տարիներին ծանր կյանքով ապրեցին Բերդաձորի ենթաշրջանի հյուսիսային գյուղերը: Այդ բնակավայրերը մտցվեցին Շուշիի շրջանի կազմի մեջ, որտեղ էլ հայերի նկատմամբ խտրական քաղաքականությունը նկատելի էր: Դա էր պատճառը, որ հայ բնակիչները ստիպված լքում էին հարազատ բնօրրանը:

1930 թ. ապրիլի 7-ին Բերդաձորի ենթաշրջանի գյուղերից 47 տնտեսություն՝ շուրջ 250 մարդ, տեղափոխվեց Ստեփանակերտի շրջանի (հետագայում Ասկերանի շրջան — Վ. Բ.) Արանզամին (Վարազաբուն) գյուղը[1406]:

[1405] Հայրապետյան Մ., նշվ. աշխ., էջ 19-20:
[1406] ԱՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 19, թ. 21:

1960-ական թվականներին Բերդաձորի կոլտնտեսության զոոտեխնիկներին սպանեցին Շուշիում: Պատահական չէ, որ Բերդաձորի ենթաշրջանի գյուղերը տարեցտարի հայաթափվում էին:

Եթե 1918 թ. սկզբներին Բերդաձորի ենթաշրջանի հայկական գյուղերում կար 800 տնտեսություն[1407] և շուրջ 5000 ազգաբնակչություն, ապա 1989 թ. Հինշենում ապրում էր ընդամենը 201 բնակիչ:[1408]

1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հինշենից 196 հոգի մասնակցել են մարտական գործողություններին, 62-ը զոհվել են: Նրանց հիշատակին գյուղում հուշարձան է կառուցված:

Արցախյան ազատագրական շարժման տարիներին ծանր ժամանակաշրջան սկսվեց Բերդաձորի ենթաշրջանի գյուղերի համար: Շրջապատված ադրբեջանական բնակավայրերով 1988-1991 թթ. գյուղի ազգաբնակչությունը՝ Առնո Մկրտչյանի գլխավորությամբ կենաց ու մահու պայքար էր մղում: Այդ գործում անուրանալի է ՀՅ Դաշնակցության դերակատարությունը: Կուսակցական կամավորական ջոկատները, որի կորիզը կազմված էր Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ուսանողներից, գիշեր ու զոր հսկում էին գյուղի անդորրը: Սակայն ուժերը անհավասար էին:

1991 թ. մայիս և հունիս ամիսներին ադրբեջանական հատուկ նշանակության զինված ջոկատները (ՕՄՕՆ), խորհրդային բանակի հետ համատեղ, իրականացրին «Օղակ» ռազմագործողությունը: Դատարկվեցին Գետաշենի, Շահումյանի շրջանի գյուղերը: Բռնատեղահանվեցին Հադրութի շրջանի մի շարք գյուղեր: 1991 թ. մայիսի 18-ին նույն ճակատագրին արժանացան նաև Հինշեն գյուղի հայերը: Տեղահանությունն ուղեկցվում էր բռնություններով և թալանով:[1409]

Աննկուն հրամանատար Առնո Մկրտչյանին դավադրաբար ձերբակալեցին և, Բաքվի բանտում կտտանքների ենթարկելով, 1993 թ. սպանեցին:

1992 թ. մայիսի 16-18-ը ԱՀ ինքնապաշտպանական զորամասերը ազատագրեցին Լիսագորն ու Բերդաձորը, Լանչինն ու նրա շրջակա գյուղերը: Ազատագրական պատերազմի տարիներին Հինշենից 8 ազատամարտիկներ զոհվել են: ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի են արժանացել Առնո Մկրտչյանը՝ հետմահու և Վլադիմիր Կասյանը: ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանակիր է Դավիթ Ֆարսյանը:

19-րդ դարի վերջերից Հինշենի երեխաները հաճախում էին Մեծ Շենի դպրոցը: 1935 թ. Հինշենում բացվում է տարրական դպրոց, հետո այն միջնակարգի կարգավիճակ է ստանում: Մինչև 1966-ական թվականները դպրոցում սովորում էր 200 աշա-

[1407] Իշխանեան Ե., նշվ.աշխ., էջ 109:
[1408] Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 275:
[1409] Библиотека центра русско-армянских инициатив, депортация населения армянских сел НКАО и прилегающих районов, апрель-июнь 1991 года, составила Седа Вермишева, Ереван, 1995, с. 11-17.

կերտ: 1988–1991 թթ. այստեղ սովորում էր 60 աշակերտ, դասավանդում՝ 14 ուսուցիչ: Ցավոք, այսօր աշակերտների թիվը հասել է 15-ի:

Դպրոցի տնօրեններն էին՝ Մուսա Մուսայելյանը, Եվգենիա Աբրահամյանը, Միքայել Մկրտչյանը, Նապոլիոն Առստամյանը, Սուրեն Իշխանյանը, Արարատ Բարսեղյանը, Յուրիկ Հայրապետյանը: 1995 թ. առայսօր այդ պաշտոնը վարում է Կարեն Բարսեղյանը: Ներկայումս դպրոցը ունի կահավորված և ժամանակի պահանջներին համապատասխան դասասենյակներ:

Հինշենում ծնվել և մեծացել են քաղաքական, պետական, գիտության և մշակույթի նշանավոր գործիչներ Սահակ Տեր-Գաբրիելյանը (1928–1935 թթ.)՝ ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ (վարչապետ), Սարգիս Կասյանը (1927–1931 թթ.)՝ Անդրֆեդերացիայի և ՀԽՍՀ կենտգործկոմների, իսկ 1931–1934 թթ.՝ Անդրֆեդերացիայի Գերագույն դատարանի նախագահ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ՝ Ալեքսանդր Գաբրիելովը, Արտաշես Հայրապետյանը, Պետրոս Մովսեսովը, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Յուրի Մովսեսյանը, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Աղաջանյանը, ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի Թամարա Ավթանդիլյանը, Ուզբեկական ԽՍՀ ժողովրդական արտիստուհի՝ Գոհար Ավթանդիլյանը: Ծննդով Հինշենից է ԽՍՀՄ պետական հիմնի տեքստի համահեղինակ, գրող Գաբրիել Արշակի Էլ-Ռեգիստանը (Տեր-Գաբրիելյան): Նա Հայրենական մեծ պատերազմի մասնակից է և Մարտական փառքի երեք աստիճանի ասպետ: Հինշենցի է նաև ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ, միջազգային կարգի մրցավար, Հայաստանի սամբո ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ գնդապետ Լևոն Հայրապետյանը:

Հինշենի շրջակայքում նշանավոր են Պարին պիժ եկեղեցին, Ալմալի, Համզասար, Եղծուն գլուխ, Ջորավոր ծառ, Սուրբ Հռիփսիմե սրբավայրերն ու գերեզմանոցները: 19-րդ դարում այստեղ կառուցվել է Սուրբ Աստվածածին եկեղեցին: Հինշենի շրջակայքում եղել են հզոր բերդեր, որոնց մնացորդները պահպանվել են առայսօր: Դրանցից նշանավոր են Թումասաբերդը, Օշափեն քար բերդը, Հին բերդը, Չիման բերդը, Ղլեն տակը (Բերդին տակ — Վ. Բ.): Հայտնի է նաև Փուլեն գլուխ իջևանատունը:

Համայնքում հայտնի են Տնգլբազ, Ծլլան, Կուքուն, Ճռանց, Թթու ջուր, Թարչխ, Ջաքունց, Կաթնաղբյուր, Բայթալլը, Բխաֆին դարա աղբյուրները:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը:

Համայնքում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, հիմնական դպրոց, առևտրի 1 կետ:

Հինշենում 2018 թ. կար 48 տուն, 185 բնակիչ[1410]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՄԵԾ ՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Վարար ջուր գետակի արևմտյան կողմում՝ Քաչալ սար, Օթասխան լեռների արևմտահայաց լանջերին:

Մեծ շենի տարածքում հայտնաբերված հնագիտական նյութերը, մասնավորապես կավանոթները, կարասները, աշխատանքային գործիքները, պահպանված դամբարանաբլուրները, եկեղեցիները, բերդերը, միջնադարյան բնակավայրերի հետքերը, տարբեր ձևերի կացարանները, գերեզմանոցները, տարբեր ժամանակաշրջանների պատկանող մշակութային արժեքները, մասնավորապես մահարձանները, վիմագրերն ու տապանագրերը, խաչքարերը վկայում են, որ մարդը այստեղ ապրել է հնագույն ժամանակներից:

Մեծ շենի մոտակա ձորակի քարայրային բնակավայրերից այստեղ տեղափոխված հայ բնակիչները 19-րդ դարում լեռան լանջին հիմնել են այս գյուղը:

Գտնվելով դեպի Մեծ Հայքի սիրտը՝ Արարատյան դաշտավայրը տանող ճանապարհի վրա՝ Բերդաձորի ենթաշրջանի, այդ թվում Մեծ Շենի բնակիչներն անընդհատ պայքարել են արաբ, թուրք-սելջուկ, մոնղոլ-թաթար, պարսիկ նվաճողների և Հյուսիսային Կովկասի խառնամբոխ ցեղերի դեմ:

1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի տարիներին Մեծ շենի բնակիչներն ամեն կերպ աջակցեցին ռուսներին՝ պարսիկների նկատմամբ հաղթանակ կռելու: Պոտտոն գրում է, որ 1826 թ. Գորիսում գտնվող ռուսական երեք վաշտեր Նազիմկայի հրամանատարությամբ որոշեցին Բերդաձորի հարևանությամբ գտնվող ճանապարհով հասնել Շուշի: Ճանապարհին դարանակալած թուրքական ու քրդական զինված ավազակախմբերը հանկարծակիի բերեցին ռուսներին: 1000 հոգուց կենդանի մնացած 2 սպայի, 6 ենթասպայի ու զինվորի ապաստան տվեցին Մեծ Շենի հայերը: Զինվորական պատմաբանը գրել է. «Նրանք այդտեղ ցանկալի հյուրեր էին և Ղարաբաղից պարսիկներին քշելուց հետո բարեհաջող նորից միացել են իրենց գնդին»:[1411]

Նույն ժամանակահատվածում պրապորշչիկ Խվոստիկովը 30 եգերների և 50 բերդաձորցիների, այդ թվում մեծշենցիների, հետ պաշտպանում են Լաչինի մոտ գտնվող Աղանուս գյուղը: Այնուհետև նրանք հարձակվում են թուրքական և քրդական ավազակախմբերի վրա և հետ բերում հայկական գյուղերից թալանված անասունները[1412]:

[1410] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:
[1411] Потто В., Первые добровольцы Карабаха въ эпоху водворенія русского владчества, с. 60.
[1412] Հայրապետյան Մ., նշվ. աշխ., էջ 9:

Բերդաձորի ենթաշրջանի 7 գյուղերը՝ Կանաչ Թալան, Եղցահողը, Մեծ և Փոքր Խերխանները, Մեծ Շենը, Հինշենը, Ծաղկաձորը (Տասը վերստ) գյուղերը պաշտպանական տեսանկյունից մի ամբողջություն էին կազմում: Հագարուի գետահովտի վրա հսկող ռազմավարական նշանակության այս բարձրավանդակը հայկական ավանդական սովորություններով և ինքնամփոփ կյանքով ապրող համայնքների մի փունջ էր կազմում:

Մեծ Շենը վարչական տեսանկյունից, մյուս գյուղերի համար կենտրոնի դեր էր կատարում: 19-րդ դարում Բերդաձորի ենթաշրջանի գյուղերի տանուտերը նստում էր Մեծ շենում: Բոլոր գյուղերը իրարից 2,5–5 կմ հեռավորության վրա են գտնվում: Տանուտերի հրահանգով այդ գյուղերից մարդ կանչելու համար կատարածուն կանգնում էր բլրի վրա, անվանական անում: Տանուտերին կից գործում էր ավագների խորհուրդը, որը ընտրության կարգով ձևավորվում էր մյուս համայնքների անդամներից:

Հինշենում էր պահվում ենթաշրջանի գյուղերի պաշտպանության համար նախատեսված զենքն ու զինամթերքը:

Ժողովրդի մեջ պահպանվել է վառոդագործ Յուղուտանց Պետին (Պետրոսը), որը ապրել է 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին: Հին Շենի բնակիչները հերոսաբար կռվեցին 1905–1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ: Այդ իրադարձությունները նկարագրող Ադոն գրել է. «Բերդաձորցիք կպան քերծերի պերծին մինչև վերջ պաշտպանեցին իրենց հավատն ու անկախությունը»[1413]:

1918 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Բերդաձորի կիրճում ծանր մարտեր են ընթացել հայ ինքնապաշտպանների և թուրք-թաթարական հրոսակախմբերի միջև:

1918 թ. օգոստոսի 5-ին թշնամու ճնշման տակ Մեծ Շենի բնակիչները ստիպված հեռացան հայրենի օջախից՝ հանգրվանելով Արցախի գավառներում, մասնավորապես Շուշի քաղաքում:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մեծ Շենի բնակիչների մի մասը վերադարձավ հարազատ օջախ և սկսեց վերաշինել իր փոքրիկ լեռնաշխարհը:

1929 թ. Մեծ Շենում կազմակերպվում է կոլտնտեսություն: Տնտեսության կազմակերպիչներից էր Բախշի Հարությունյանը: Կոլտնտեսության վարչության առաջին նախագահը Թևան Բաբայանն էր: Հինշենի կոլտնտեսության մեղվաբույծները 1939 թ. Մոսկվայում կազմակերպված գյուղատնտեսական ցուցահանդեսում առաջին տեղն են գրավել և արժանացել առաջին կարգի դիպլոմի ու ոսկե մեդալի:

Հետագայում Բերդաձորի ենթաշրջանի գյուղերը միավորվել են մեկ կոլտնտեսության մեջ:

Հայրենական մեծ պատերազմին Մեծ շենից մասնակցել է 191 մարդ: Նրանցից 84-ը զոհվել են:

[1413] Ա.-Դ., նշվ.աշխ., էջ 5:

Արցախյան ազատագրական պայքարի տարիներին Մեծ Շենի բնակիչները շատ զրկանքներ կրեցին: 1988–1991 թթ. գյուղի բնակչությունը կենաց ու մահու կռիվ էր տալիս Ադրբեջանի ժողովրդական ճակատի հրոսակների և նրանց աջակցող խորհրդային զինված ուժերի դեմ: Ենթաշրջանի հայկական գյուղերի ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով ստեղծվել էր «Բերդաձորի ինքնապաշտպանության խորհուրդ»: 1991 թ. մայիսի 18-ին «Օղակ» ռազմագործողության արդյունքում հայաթափվեց Մեծ շենը: 1992 թ. մայիսի 16–18-ը ԱՀ ինքնապաշտպանական զորամասերը ազատագրեցին Մեծ Շենը:

Արցախյան պատերազմի տարիներին մարտական գործողություններին մասնակցել են 75 մեծշենցիներ: Նրանցից 11-ը զոհվել են: Իդրիս Հունանյանը հետմահու արժանացել է ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի: Քաջագործության համար ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշան է ստացել նաև Վարուժան Նասիբյանը:

Մեծ Շենում դարեր շարունակ ապրել են Ջափունց, Իշլիմազանց, Արզումանանց, Նանու Ջաքունց, Բուզանանց, Պետունց, Ղուլունց, Գոլունց, Քիսպարանց ազգատոհմերի ներկայացուցիչները: Սակայն այդ տոհմերի ներկայացուցիչների մեծ մասը ապրում է հայրենի գյուղի սահմաններից դուրս՝ աշխարհի տարբեր ծագերում:

1850 թ. Մեծ Շենում գործել է եկեղեցական-ծխական դպրոց: Ուսուցչություն էր անում գյուղի քահանա Միքայել Թովմասյանը: Դպրոցը պահվում էր համայնքի բնակիչների միջոցներով: 1902 թ. բաքվաբնակ բերդաձորցի Գրիգոր Ոսկանյանի միջոցներով կառուցվել է դպրոցական շենք: Դպրոցում դասավանդել են Մակիչ, Պետրոս և Արշակ Թովմասյանները: Դպրոցը երկդասյա էր:

1905–1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների և 1917–1920 թթ. թուրք-թաթարների դեմ Արցախում ընթացող պատերազմների պատճառով դպրոցը դադարել էր գործել:

Խորհրդային տարիներին դպրոցը վերաբացվել է: Այդ տարիներին դպրոցի ուսուցիչն էր ծննդով Քարին տակ գյուղից Պողոս Պետրոսյանը:

1934 թ. դպրոցը միջնակարգի կարգավիճակ էր ստացել: Դպրոցի տնօրեններ են աշխատել Ներսես Գրիգորյանը, Ստեփան Բաբայանը, Սլավիկ Գրիգորյանը, Էմմա Ավետիսյանը, Կամո Հայրապետյանը, Բորիս Մնացականյանը, Սերյոժա Դավթյանը: 2005 թվականից առայսօր դպրոցի տնօրենն է Դավիթ Դավթյանը: Դպրոցի շենքը հիմնանորոգվել է 2017 թ.: Եթե նախկինում Մեծ Շենի դպրոցում սովորում էին 150–180 աշակերտ, ապա 2018 թ., ցավոք, նրանց թիվը հասել է 13-ի: Դասավանդում են 9 ուսուցիչներ:

Գյուղի նշանավոր հանդամասերն են՝ Իլանանց, Նոթունց խութը, Ղրմանա վեղը, Շորեն թալան, Բաղեն տափը, Ալմալին, Թևանատունը:

Մեծ Շենում և նրա շրջակայքում նշանավոր սրբավայրերն են՝ Համզասարը, Ալմալին, Ջիրավոր ծառը: Փոլեն գլուխ հանդամասում պահպանվում են միջնադարյան իջևանա-

տան փլատակները, կիոլները: Հայտնի են Իլանաց և Բղլավար բնակատեղիները, Կապեն ձորի, Ճաք քարի, Ծլլան աղբյուրի հնադարյան կացարանները: Պահպանվում են Օշապ քար, Հին բերդ, Բերդաձոր ամրոցների մնացորդները: Եկեղեցիներից հայտնի են Պարին պիժը՝ կառուցված 1658 թ., և Սուրբ Աստվածածինը (19-րդ դար):

Նշանավոր են Սուրբ, Շորեն, Ալամալի, Թևանի, Ղուզե և Խաչուն աղբյուրները:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում ներկայումս գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, դպրոց, 1 առևտրի կետ:

Մեծ Շենում 2018 թ. կար 31 տուն, 121 բնակիչ[1414]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՔԱՐԻՆ ՏԱԿ

Գյուղը գտնվում է ԱՀ կենտրոնական հատվածում՝ Շուշիի շրջանում՝ Կարկառ գետի Քարին տակի վտակի ձախ ափին՝ անդնդախոր կիրճի զառիթափ քարաժայռի ստորոտում: Քարին տակը լեռներով շրջապատված բնության մի գողտրիկ անկյունում է գտնվում:

Արևելքից՝ Կապասարը, արևմուտքից՝ Կարմրաքարը և Տիզկանց ժայռերը, իսկ հյուսիսից՝ Շուշիի ժայռապարիսպը, որին տեղացիները Քերծ են անվանում, օղակել են գյուղը: Հարավ-արևմուտքից իրար վրա նստած անտառապատ բլրակները հասնում են մինչև Քիրս:

Գյուղի տարածքում հայտնաբերված հնագիտական նյութերը, բնակատեղիների հետքերը վկայում են, որ այստեղ մարդն ապրել է հնագույն ժամանակներից: 2010 թ. հնագետների և մարդաբանների կողմից Ալեքսանա ղուզուն կարան և Ավանա կարան քարանձավներում ուսումնասիրություններ են կատարել և գիտնականները հայտնաբերել են քարե դարից մինչև միջնադարն ընկած ժամանակահատվածին առնչվող նյութեր: Իրենից մեծ հետաքրքրություն է ներկայացնում քարե հղկված կամնը, որը վկայում է այստեղի հնաբնակների նստակյացության մասին: Այստեղ հայտնաբերվել են մարտական կացիններ, որոնք օգտագործվել են ուշ բրոնզե դարում՝ Ք. ա. 13-12-րդ դարերում[1415]:

Գյուղի տարածքում են գտնվում Ավանա կարան, Ալեքսանա ղուզուն կարան, Եղունիկի կարան քարանձավները, որոնք տեղացիների համար, ինչպես հնադարում,

[1414] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

[1415] Асрян Ю., Нагорный Карабах в эпохе поздней бронзы и раннего железа, Степанакерт, 1999, с. 49, 70.

այնպես էլ միջնադարում, ծառայել են որպես պաշտպանական կառույցներ, մանավանդ դրանց մի մասը կառուցապատվել, ամրացվել է մարդկանց կողմից:

Մելիքական շրջանում, հատկապես 17-18-րդ դարերում Քարին տակը կարևոր դերակատարություն է ունեցել արցախահայության ազատագրական պայքարի կազմակերպման գործում:

1795 թ. օգոստոսի 22-ին Աղա Մահմադ խանի զորքերը հանկարծակի մտնում են Քարին տակ գյուղը և կոտորում եկեղեցում հավաքվածներին: Բնակչության մի մասն էլ, փախչելով անտառներն ու լեռները, փրկվում է վերահաս ջարդերից[1416]:

Ներկայիս Քարին տակի բնակիչների մեծ մասը 19-րդ դարի սկզբներին այստեղ է տեղափոխվել Խծաբերդ գյուղից: Այդ վերաբնակության հանգամանքների մասին քարինտակցիների մոտ մի հուշ-պատմություն է մնացել, ըստ որի Խծաբերդ գյուղն ուներ 600-700 ծուխ բնակչություն: Նրանք քաջ ու անվախ մարդիկ էին և զենքի ուժով պաշտպանում էին իրենց ինքնուրույնությունը: Նրանք հրաժարվում են խանին հարկ վճարելուց: Ալեանլու ցեղի քուրդ ցեղապետը գյուղը գրավելու համար մի քանի անգամ հարձակվել է, բայց ամեն անգամ պարտվել ու հեռացել է: Տեսնելով, որ չի կարող Խծաբերդի հայերին զենքի ուժով ծնկի բերել՝ խանը դիմեց իրենց համար սովորական դարձած ստոր միջոցի: Հյուրասիրության պատրվակով ճաշկերույթի հրավիրեց գյուղի երևելիներին և բոլորին թունավորեց: Հետո խանը հանկարծակի հարձակվեց գյուղի վրա, սակայն այս անգամ էլ խայտառակ պարտություն կրեց: Խծաբերդցիների նկատմամբ ատելությամբ լցված խանն այս անգամ էլ այլ խարդավանքի դիմեց: Կրոնական տոներից մեկի ժամանակ, երբ համայնքի անդամները եկեղեցում հավաքվել էին քրիստոնեական ծեսի ու աղոթքի, խանը հարձակվեց անպաշտպան գյուղացիների վրա: Սպանդը շարունակվեց 3 օր: Խծաբերդի գետն արյունով լցվեց և այդ ժամանակներից սկսած այն կոչվեց «Հարամ» (Կեղտոտ) անունով: Գյուղն ամայացավ: Ողջ մնացածները փախան տարբեր տեղեր: Հիմնական մասը հաստատվեց Քարին տակում:[1417]

Ալիանլու քրդերը, թաթարական ցեղերը, Մուսուլմանլար գյուղի մահմեդականները շարունակում էին Քարին տակում հաստատված փախստականների համեստ ունեցվածքի՝ անասունների, սննդի պաշարի, կենցաղային և այլ իրերի հափշտակության գործը: Գյուղի ազգաբնակչությունն ամեն անգամ ստիպված էր իր կյանքն ու կայքը պաշտպանելու համար զենքի դիմել: 19-րդ դարի ռուս հեղինակներից մեկը գրել է, որ այդ ամենը պաշտպանելու համար քարինտակցիների մոտ ձևավորվել է զենքի նկատմամբ համակրանք[1418]:

[1416] Բարխուդարյան Ա., Մի քանի հնութիւններ, «Արձագանք», 1 սեպտեմբերի, հմ. 9, Թիֆլիս, 1885, էջ 122:

[1417] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1418] Осипов Г., Сборник материалов для описания местности и племен Кавказа, Тифлис, 1898, с. 100-109, 118.

Երևի թե զենքի նկատմամբ ունեցած սերն է հնարավորություն ստեղծել, որ հայ մարդը դարերի ընթացքում ապրի այդ բարդ աշխարհագրական և աշխարհաքաղաքական միջավայրում: Քարին տակի հայերն առանձնակի քաջագործություն են կատարել 1826–28 թթ. ռուս–պարսկական պատերազմի տարիներին:

Շուշիի և Քարին տակի կամավորները Սաֆար հարյուրապետի գլխավորությամբ թիկունքից, տարբեր տեղերից հանկարծակի հարձակվում էին բերդաքաղաքը շրջապատած թշնամական ուժերի վրա, անընդհատ լարվածության մեջ պահում Աբաս Միրզայի սարբազներին[1419]:

Ըստ 1851 թ. Ղարաբաղի վիճակի, քաղաքների, գյուղերի, ժողովրդի, քահանաների, սարկավագների, եկեղեցականների հաշվեցուցակի՝ Քարին տակում կար 56 տուն, քահանան էր Հովհաննես Տեր–Հովհաննիսյանը[1420]: 1873 թ. տվյալներով, վերոհիշյալ բնակավայրերում կար 147 ընտանիք՝ 823 շնչով (427՝ արական, 396՝ իգական), իսկ 1896 թ. այդ թիվը կազմել է 165 ընտանիք՝ 944 շնչով[1421]:

1897 թ. համառուսաստանյան առաջին մարդահամարի տվյալներով Քարին տակի բնակչությունը կազմել էր 561 տղամարդ, 465 կին[1422]:

Ըստ Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցի 19–րդ դարի վերջին Քարին տակում կար 174 ծուխ, 1068 բնակիչ, որից 625 արական, 443 իգական[1423]:

Քարին տակի բնակչության հիմնական զբաղմունքն էր հողագործությունն ու անասնապահությունը:

1888 թ. Դանիել Ահարոնյանը (Արունով — Վ. Բ.) Քարին տակում հիմնում է մետաքսաոլորման ֆաբրիկա, որտեղ աշխատում էին 55 բանվորներ, իսկ արտադրանքը կազմում էր 75 փութ մետաքս[1424]:

1905–1906 թթ. հայ–թաթարական բախումների ժամանակ Քարին տակը նույնպես ենթարկվեց թաթարական ավազակախմբերի հարձակումներին:

1905 թ. օգոստոսին, երբ առաջին անգամ Զարիսլու և Խալֆալու գյուղերի թուրքերը քրդերի հետ միասին փորձեցին ներխուժել Շուշի, հենց այդ ժամանակ քաղաքին օգնության եկան Քարին տակ, Հունոտ, Արկաթալի, Ղայբալիշեն, Կրկժան գյուղերի հայ կամավորները: Փակելով երևանյան դարպասները՝ նրանք կանգնեցրին թշնամու ներխուժումը Շուշի: Հակառակորդը, տեսնելով այդ արգելքը, փոխեց հարվածի ուղղությունը և փորձեց մտնել Քարին տակ: Ընդհարումների ժամանակ զոհվեցին Նիկողայոս Ասրյանը և Սարգիս Պետրոսյանը[1425]:

[1419] Բալայան Վ., Շուշի, էջ 159:
[1420] Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 202:
[1421] Осипов Г., Указ. соч., с. 128.
[1422] ЦГИАРФ, ф. 290, оп. 11, д. 2726.
[1423] Մակար եպս. Բարխուտարյանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 229:
[1424] Аракелян А., Закавказские шелкомотальные заводы, Тифлис, 1893, с. 28.
[1425] Ա–Դ, նշվ. աշխ., էջ 174, 440:

1918 թ. թուրքական զորամասերը մտան Շուշի: Նրանք մի քանի անգամ փորձեցին մտնել նաև Քարին տակ, սակայն գյուղի պաշտպանները քարինտակցի սպա Հարություն (Արտեմ) Պետրոսյանի գլխավորությամբ կարողանում են հետ շպրտել թշնամուն:

Քարինտակցիները մասնակցեցին նաև Մամնայի ճակատամարտին, որն ավարտվեց հայերի փայլուն հաղթանակով: Հայ կամավորականների հրամանատարներից էր Վարանդայի մարտական ուժերի հրամանատար Արտեմ Պետրոսյանը[1426]:

Քարին տակի քաջորդիները 1919 թ. հունիսի 7–ին արժանի ջարդ կազմակերպեցին նաև Խոսրով Բեկ–Սուլթանովի հրոսակների նկատմամբ, որոնք փորձում էին գրավել գյուղը: Այդ դեպքերի մասին Հ. Թումյանը գրելէ. «Քարին տակ գյուղի ամբողջ լեռնալանջերը ծածկվել էին մուսուլման մարդասպանների հարյուրավոր դիակներով»[1427]:

1920 թ. մարտի 23–ին Շուշիում թուրք–թաթարական հրոսակախմբերի կողմից հայերի սպանդ կազմակերպվեց: Այդ դժոխային օրը փրկվածների մեծ մասը ապաստանում են Քարին տակ գյուղում: 1920 թ. մայիսին խորհրդային կարգեր են հաստատվում նաև Քարին տակում: Գյուղխորհրդի առաջին նախագահը եղել է Մարյան–գյուլ Սարգսյանը: 1931 թ. Քարին տակում նույնպես կազմակերպվում է կոլտնտեսություն, որի առաջին նախագահը եղել է Լևոն Համբարձումյանը: Կոլտնտեսության նախագահներ են եղել՝ Արշակ Պետրոսյանը, Ս. Սարգսյանը, Ջ. Հարությունյանը, Գրիգորի Հովհաննիսյանը:

Հայրենական մեծ պատերազմին իրենց ակտիվ մասնակցությունն են ունեցել նաև քարինտակցիները: Գյուղից 200 մարդ է մեկնել ռազմաճակատ, նրանցից 99 հոգի զոհվել են: Նրանց հիշատակը հավերժացնող հուշարձանը կանգնեցվել է Խութին կոչվող բարձունքի վրա: Հայրենական մեծ պատերազմում Խորհրդային Միության հերոսի կոչման է արժանացել քարինտակցի սպա, փոխգնդապետ Հրանտ Ավագյանը:

Արցախահայության ազգային–ազատագրական շարժման սկզբից քարինտակցիները հայտնվեցին ռազմաճակատի առաջին գծում: Շուշիի հայության հարցը թուրքավարի լուծելուց հետո ադրբեջանական հրոսակախմբերն ավազակային հարձակումներ սկսեցին Քարին տակի վրա: Պայթուցիկներով լցված անվադողերն ու ժայռաբեկորները սարահարթից գլորելով՝ ոչնչացնում էին հայերի տները: 1990 թ. մարտի 28–ին՝ ժամը 5:30–ին, ներքին գործերի զինվորներն ու ադրբեջանցի օմոնականները շրջապատում են Քարին տակ գյուղը և սկսում 4 կողմից կրակել: Գյուղում ոչինչ չգտնելուց հետո կալանավորեցին մի քանի բնակիչների և տեղափոխեցին Շուշիի մեկուսարանը: Մեկամսյա ձերբակալությունից հետո միայն պարզվեց, որ ձերբա-

[1426] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 289:
[1427] Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917–1920 թթ., Երևան, 2008, էջ 229–230:

կալվածներն անմեղ են, և սահմանված փրկագինը ստանալուց հետո նրանց ազատ արձակեցին[1428]:

Անձնագրային ռեժիմի ստուգման պատրվակով գյուղացիների նկատմամբ բռնությունները շարունակվեցին նաև հետագայում: 1991 թ. հուլիսի 3-ին Քարին տակի տասնյակ խաղաղ բնակիչներ նորից հայտնվեցին Շուշիի մեկուսարանում: Դարանակալ թշնամու զոհ դարձան Քարին տակի մի քանի խաղաղ բնակիչներ: 1991 թ. դեկտեմբերի 28-ին Շուշիից ադրբեջանցիները փորձեցին գրոհով մտնել գյուղը: Բայց պաշտպանների, մասնավորապես Ալյոշա Վարդանյանի, հերոսական արարքի շնորհիվ թշնամին հետ շպրտվեց:

Ռազմական նախաձեռնությունն իրենց ձեռքը վերցնելու նպատակով Ադրբեջանի իշխանությունները որոշեցին վերջնականապես գրավել անմատչելի բերդի համարում ունեցող Քարին տակը: 1992 թ. հունվարի 26-ին՝ առավոտյան ժամը 6:30-ին, 500 հետևակայիններով և 3 զրահատեխնիկայով տարբեր ուղղություններով ադրբեջանցիներն անցան գրոհի: Մի պահ թվացել է, թե ամեն ինչ վերջացած է, որովհետև ասկյարներն արևմտյան կողմից մտել էին գյուղի առաջին տունը, որն այրվում էր կրակների մեջ: Տանտերը՝ Մարտին Ամիրջանյանը, կնոջ ու երեխայի հետ այրվող տան ներքնահարկում իր խնայած 2 գնդակները ցույց տալով, կնոջն ասել է. «վերջին պահին երեխային կրծքիդ կսեղմես, որպեսզի գնդակներն հերիքեն»: Այդ պահին ներս է մտնում թուրք զինվորն ու իր վայրի քրքիջով ասում. «Գյավո՛ւր, դուրս արի, գիտեմ էլ փամփուշտ չունես»: Մի գնդակով գետնին տապալելով թուրքին՝ Մարտինը վերցնում է նրա հարուստ ռազմավարն ու նորից շարունակում մարտը[1429]:

Քարին տակի պաշտպաններն անընկճելի էին, ուստի հեշտ թալանին սովոր ադրբեջանցիները, հայ մարտիկների հարվածներին չդիմանալով, ձողոպրեցին՝ մարտի դաշտում թողնելով շուրջ 132 դիակ և 1 խոցված զրահատեխնիկա: Քարին տակի ջոկատի հրամանատար Վաղարշակ Առուշանյանի հետ հերոսաբար զոհվեցին նաև գյուղի 20 պաշտպաններ: Քարին տակի ջոկատը պատերազմի տարիներին մասնակցել է նաև մի շարք պաշտպանական և ազատագրական մարտերի: Արցախի ազատագրման համար իրենց կյանքը նվիրաբերել են 43 քարինտակցիներ Ալբերտ Աբաղյանը, Ալեքսանդր Աբաղյանը, Արթուր Աբալյանը, Աղելլա Աբրահամյանը, Գարիկ Առաքելյանը, Նարինե Առաքելյանը, Վագիֆ Առստամյանը, Ավետիս Առուշանյանը, Արթուր Առուշանյանը, Արտյուշա Առուշանյանը, Ջանիկ Առուշանյանը, Կարո Առուշանյանը, Վաղարշակ Առուշանյանը, Հենրիխ Ամիրջանյանը, Մամիկոն Ամիրջանյանը, Գուրգեն Ավանեսյանը, Դավիթ Բաբայանը, Հասմիկ Բաղդասարյանը, Կարո Բաղրյանը, Յուրա Բաղրյանը, Հայկ Բալասանյանը, Աշոտ Գասպարյանը, Սասուն Թովմասյանը, Ռազմիկ Թևոսյանը, Անյա Հակոբյանը, Վալերի Հակոբյանը, Կնյազ Համբարձումյանը, Վոլոդյա Համբարձումյանը, Ալյոշա Հովհաննիսյանը, Արմեն Հովհաննիսյանը, Միշա Հովհաննիսյանը, Հովիկ Հովհաննիսյանը, Էդուարդ Հովսեփյանը, Արշավիր Մարգարյանը, Ռոմիկ Մարգարյանը, Արմեն Միրզոյանը, Վահան Մուսայելյանը, Բորիկ Պետրոսյանը, Կամելա Պետրոսյանը, Վագիֆ Պետրոսյանը, Մախմոր Պողոսյանը, Նելսոն Պողոսյանը, Ալյոշա Վարդանյանը:

[1428] «Մարտիկ», հմ. 3, 21 հունվարի, 2007:

[1429] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

ԱՀ «Մարտական խաչ» 1-ին և 2-րդ աստիճանի շքանշաններ են հետմահու ստացել Վաղարշակ Բեհբուդի Առուշանյանը և Ալյոշա Երվանդի Վարդանյանը:

ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշան են ստացել նաև Ալեքսանդր Սողոմոնի Աբրահամյանը, Արթուր Կոմունարի Առաքելյանը, Ռոմիկ Սուրենի Բաղդասարյանը, Ալյոշա Երվանդի Վարդանյանը, հետմահու՝ Հենրիխ Շահենի Ամիրջանյանը, Վագիֆ Համբարձումի Պետրոսյանը, Գագիկ Ալեքսանդրի Առաքելյանը:

2006 թ. հունվարի 26-ին Քարին տակում բացվեց արցախյան ազատամարտի նահատակներին նվիրված հուշահամալիրը:

Քարինտակցիները գիտեն նաև կրթության և գիտության հարգը: 1890 թ. Քարին տակում գործում էր եկեղեցական-ծխական դպրոց՝ 20-30 աշակերտներով: Հայկական դպրոցների փակվելուց հետո՝ 1896-1905 թթ., այստեղ գաղտնի գործել է դպրոց: 1906-1907 ուսումնական տարում այստեղ բացվում է մեկդասյա երկսեռ դպրոց: Այն ուներ 2 բաժանմունք, 41 աշակերտ. ուսուցիչն էր Թադևոս Ազարյանը: Դպրոցը պահվում էր տեղացիների և բաքվաբնակ քարինտակցիների միջոցներով:

Խորհրդային տարիներին գյուղում գործել է յոթնամյա դպրոց: 1950-1951 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 245 աշակերտ: Դպրոցի տնօրեններ են աշխատել Վաղարշակ Սարգսյանը, Հրանտ Ղարախանյանը, Վահան Հարությունյանը, Թ. Գաբրիելյանը, Սուրեն Հակոբջանյանը:

1954 թ. Քարին տակի դպրոցը դառնում է միջնակարգ: 1994 թ. ապրիլի 13-ից մինչև առկա պահը դպրոցի տնօրենն է Արամայիս Հովհաննիսյանը: 2014-2015 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 103 աշակերտ, դասավանդում՝ 23 ուսուցիչ: Քարին տակի դպրոցի շրջանավարտ է ԱՀ Ազգային ժողովի պատգամավոր, այնուհետև ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարար Լեոնիկ Հովհաննիսյանը:

Քարին տակի մոտակայքում հայտնաբերվել է Ք. ա. 3-1-ին հազարամյակների բրոնզեդարյան դամբարանադաշտ, պահպանվում են 15-17-րդ դարերի հին գյուղատեղին, 13-18-րդ դարերի խաչքարեր, նախկին մատուռի տեղում 1816 թ. կառուցված Սբ. Աստվածածին եկեղեցին, 18-րդ դարի Ներքե կամուրջը, երկհարկանի բաղնիքը, ջրաղացների ավերակները, 13-րդ դարի խաչքարերով գերեզմանոցները:

Համայնքի տարածքում նշանավոր աղբյուրներն են՝ Պեխեն, Երիտասարդության, Շամիրին, Իվանեն, Ավդուլեն, Յորտ, Շեշմա, Օխնը:

Գյուղը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, «Շուշիի մանկական երաժշտական դպրոց» ՊՈԱԿ–ի Քարին տակի մասնաճյուղը, միջնակարգ դպրոց, մանկապարտեզ, բուժկետ, 3 խանութներ:

2019 թ. Քարին տակում կա 161 տնտեսություն, 660 բնակիչ[1430]:

Գյուղն իր ավանդույթներով և հաստատակամ բնակչությամբ կայուն զարգացման հեռանկար է ուրվագծում:

[1430] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆԻ ԳՈՐԾՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՔԱՐՏԵԶԸ

ԲԵՐԶՈՐ

Քաղաքը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Բերդաձոր գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Գորիս-Ստեփանակերտ մայրուղու վրա՝ Հակարի գետի միջին հոսանքի ձախափնյա բլրապատ լանջին:

Բերձորը Արցախի Հանրապետության հնագույն բնակավայրերից մեկն է: Այդ մասին են վկայում քաղաքի տարածքում պահպանված հայ մշակույթի հետքերը: Այստեղ հաստատված թուրքերն ու քրդերը ոչնչացրել են այն ամենը, ինչ հայկական է: Արձանագիր և թվագիր խաչքարերը ջարդելով՝ նրանք կառուցել են իրենց տները, որոնց մասին դեռևս 1980-ական թվականներին գրել են հայ գրողներն ու գիտնականները[1431]:

Բնակավայրը կրել է Սարալանջ անունը[1432]:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի թուրք խաների և քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել էին: 19-րդ դարի սկզբներին այստեղ հաստատվել էին թրքախոս քրդեր և բնակավայրը անվանափոխել, դարձրել Աբդալլար:

1813 թ. Արցախի՝ Ռուսաստանի գերիշխանության տակ անցնելուց հետո, հայերի մի քանի ընտանիքներ նորից վերադարձել են իրենց օջախները:

Լաչինի պատմությունը ուսումնասիրող Ամինե Ավդալը գտնում էր, որ խորհրդային տարիներին Լաչինում ապրում էին քրդեր, ադրբեջանցիներ և հայեր[1433]:

1914 թ. Աբդալլարում 124 թրքախոս քուրդ էր ապրում[1434]:

Արցախահայությանը օգնելու նպատակով Անդրանիկի զորքերը 1918 թ. նոյեմբերի 29-30-ը, հաղթահարելով քրդերի և թուրք-թաթարների դիմադրությունը, հասնում են Մարքիզ գյուղը, իսկ դեկտեմբերի 1-ին՝ Ավդալլար: Այստեղ էլ Անդրանիկը ստանում է գեներալ Թոմսոնի հայտնի նամակը և վերադառնում Գորիս[1435]:

Խորհրդային տարիներին Ավդալարն ու հարակից հայկական բնակավայրերը հանձնվեցին Ադրբեջանին:

1923 թ. Ավդալլարը անվանափոխվեց և դարձավ Լաչին: Վերջինս հանդիսանում էր Կարմիր Քուրդիստանի վարչական կենտրոնը:

[1431] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ176:

[1432] Մկրտչյան Շ., Արցախում ես ուրիշ պատերազմ տեսա, Երևան., 1996, էջ 61:

[1433] Ամինե Ավդալ, Անդրկովկասյան քրդերի կենցաղը, Երևան, 1957, էջ 13:

[1434] Кавказский календарь на 1915 г., Тифлис, 1914, с. 82.

[1435] Բալայան Վ., Շուշի, էջ 436-437:

1930 թ. բնակավայրը դարձավ Լաչինի շրջկենտրոնը:

Լաչինը գտնվելով ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին կապող ամենամոտ հատվածում, Բաքվի իշխանությունների կողմից արագաթափ կառուցապատվում է:

Լաչինում հաստատվողների համար պետության կողմից սահմանվել էին արտոնյալ պայմաններ: ԱԽՍՀ տարբեր բնակավայրերից շրջկենտրոն տեղափոխվեցին բազմաթիվ ադրբեջանցի ընտանիքներ: Շուտով շրջկենտրոնը ստացավ քաղաքի կարգավիճակ, և օրեցօր նրա սահմանները սկսեցին ավելի ընդլայնվել՝ ԼՂԻՄ-ը առավել կտրելով ՀԽՍՀ-ից:

Եկան նոր ժամանակներ, և հայկական բանակի հարվածների տակ կործանվեց արհեստածին այդ պատնեշը: 1992 թ. մայիսի 18-ին ԱՀ Պաշտպանության բանակի ստորաբաժանումները մտան Լաչին:

Մինչև պատերազմի ավարտը՝ 1994 թ. փետրվարից սկսած՝ Ադրբեջանից բռնագաղթված հայ ընտանիքներ հաստատվեցին Լաչինում: Հետագա տարիներին ՀՀ տարբեր բնակավայրերից, մասնավորապես Աբովյան, Հրազդան, Չարենցավան քաղաքներից, այստեղ հաստատվեցին նոր վերաբնակիչներ:

Բնակավայրը ստացավ Բերձոր անունը և դարձավ ԱՀ Քաշաթաղի շրջկենտրոնը: Ի տարբերություն մյուս վերաբնակեցվող տարածքների՝ կյանքը Բերձորում ավելի արագ կանոնավոր հունի մեջ մտավ:

1994 թ. սեպտեմբերի 1-ից 35 աշակերտներով և 12 ուսուցիչներով իր գործունեությունը սկսեց Բերձորի թիվ 1 միջնակարգ դպրոցը: 2009 թվականից դպրոցը կրում է Վահան Թեքեյանի անունը:

2015-2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 197 աշակերտ, դասավանդում՝ 27 ուսուցիչ: Տարիների ընթացքում դպրոցը բոլոր առումներով կայացել է: Նրա սաները ԱՀ, ՀՀ մարզական, մշակութային, ինտելեկտուալ մրցույթներում, առարկայական օլիմպիադաներում բազմիցս արժանացել են պարգևների, մրցանակների: Տարբեր տարիների դպրոցը ղեկավարել են Անդրանիկ Երվանդյանը, Ալբերտ Մխիթարյանը, Դավիթ Դավթյանը, Արմեն Շահինյանը, Անահիտ Քոսակյանը:

Բերձորի Վահան Ջատիկյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1996 թ.: Դպրոցում սովորում էր 52 աշակերտ, դասավանդում՝ 18 ուսուցիչ: Տարեցտարի աշակերտների թվաքանակը ավելացել է:

2015-2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 182 աշակերտ, դասավանդում՝ 26 ուսուցիչ: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Ժ. Հակոբյանը, Հ. Հակոբյանը, Հ. Արզանյանը:

Քաշաթաղի շրջանի վարչակազմի առաջին ղեկավար Ալեքսան Հակոբյանի նախաձեռնությամբ Բերձորում 1996-1998 թվականներին կառուցվել է Սբ. Համբարձման եկեղեցին:

Քաղաքն էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Բնակավայրն ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային կապի համակարգը, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են քաղաքապետարան, շրջանային նորակառույց հիվանդանոց, 4 ատամնաբուժարան, 2 միջնակարգ դպրոցներ, գիշերօթիկ դպրոց, «Բերձորի երաժշտական դպրոց» և «Բերձորի արվեստի և սպորտի դպրոց» ՊՈԱԿ-ներ, մանկապարտեզ, գրադարան, պատմաերկրագիտական թանգարան, պատկերասրահ, մշակույթի պալատ, փոստային բաժանմունք, երկու հյուրատուն, կաթի նախնական վերամշակման գործարան, 2 բանկերի մասնաճյուղեր, մետաղամշակման և փայտամշակման, գորգագործական արտադրամասեր, կենցաղսպասարկման, առևտրի կետեր, խանութներ:

Բերձորի Խաղաղության հրապարակին հարակից բլրի վրա կառուցվել է փառքի հուշահամալիր:

Բերձոր քաղաքում 2005 թ. կար 2190 մարդ, 2010 թ.՝ 1656 մարդ[1436], 2018 թ.՝ 456 տուն, 2058 մարդ[1437]: Նրանք հիմնականում զբաղվում են գյուղատնտեսությամբ, աշխատում պետական հիմնարկներում, կրթական, մշակութային հաստատություններում, կենցաղսպասարկման, առողջապահական ոլորտներում, առանձին արտադրական ձեռնարկություններում:

ԿՈՎՍԱԿԱՆ

Քաղաքը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Մեծ Հայքի Սյունիք նահանգի Կովսական գավառում: Որոշ աղբյուրներում Կովսականը ներկայացված է Կուսական, Կոսական տարբերակներով[1438]: Բնակավայրը տեղաբաշխված է Ողջի գետի աջակողմյան Բեխ, Վաչագան, Գեղանուշ վտակների շրջանում:

Միջնադարում բնակավայրն ունեցել է Բուրջևան անունը: Կարծիք կա, որ բնակավայրն ունեցել է նաև Աշտարակ, Բերքնի անունները: Վաղ միջնադարում Բուրջևանը ընդգրկված է եղել Կովսական գավառի կազմի մեջ: Միջին միջնադարում գավառը արդեն հայտնի էր Գրիամ անունով[1439]: Անվան այս փոփոխությունը կապված է Բուրջևանից ոչ շատ մեծ հեռավորության վրա 10-րդ դարում Սյունյաց իշխանների կողմից Գրիամ բերդի կառուցման հետ, որը միաժամանակ իշխանական բնակավայրի համարում ուներ:

[1436] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 463:
[1437] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:
[1438] Մովսէսի Խորենացվոյ Մատենագրութիւնք, ի Վենետիկ, 1843, էջ 609:
[1439] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 402:

19-րդ դարում թրքախոս քրդերը, հայտնվելով Բուրջևանում, իրենց լեզվին համահունչ գյուղն անվանեցին Պիրչևան կամ Փիրչևան: 1920-ական թվականների սկզբներին արաքսամերձ հայկական տարածքները բռնակցվեցին Ադրբեջանին:

Բնակավայրը 1923 թվականից ընդգրկված էր Կարմիր Քուրդիստանի օկրուգի կազմի մեջ: 1930 թ. կազմավորվեց Ջանգելանի վարչական շրջանը, և Փիրչևանն էլ դարձավ այդ միավորի կենտրոնը:

1957 թ. Փիրչևանը վերանվանվեց Ջանգելան և դարձավ քաղաքատիպ ավան: Ջանգելանը 1967 թ. հանրապետական ենթակայության քաղաքի կարգավիճակ ստացավ:

Ողջի գետափի հայաթափման գործընթացը նոր թափ ստացավ խորհրդային տարիներին:

Եթե 1959 թ. Ջանգելանի շրջանում դեռևս ապրում էր 324 հայ, ապա 1979 թ. մնացել էր ընդամենը 35-ը[1440]:

Շրջանի վերջին Տանձատափ գյուղից բնակիչները հեռացան 1967 թ.:

Արցախյան ազատագրական պատերազմի տարիներին թեժ մարտական գործողություններ ծավալվեցին նաև Ջանգելանի շրջանում:

Ստանալով մարդկային, նյութական, ռազմատեխնիկական զգալի համալրում 1993 թ. հոկտեմբերի 21-23-ը Ջեբրայիլի, Ֆիզուլու, Կուբաթլուի շրջաններում ադրբեջանական ուժերը հարձակման անցան: ԱՀ պաշտպանության բանակը ոչ միայն կասեցրեց թշնամու հարձակումը, այլև սրընթաց գրոհով հոկտեմբերի 23-ին մտավ Հորադիզ կայարանը: Շրջափակման մեջ հայտնվեցին ոչ միայն ադրբեջանական ցաք ու ցրիվ խմբավորումները, այլ նաև խաղաղ բնակչությունը: Վերջիններիս միջանցք ու ցրիվ խմբավորումները, այլ նաև խաղաղ բնակչությունը: Վերջիններիս միջանցք տրվեց, որպեսզի հեռանան ռազմական գործողությունների թատերաբեմից: Հոկտեմբերի 28-ից հայկական ուժերը, մեծացնելով ճնշումը, նոյեմբերի 1-ին մտան նաև Ջանգելան շրջկենտրոնը:

1997 թ. սեպտեմբերից Կովսական անունը ստացած այս ավերված բնակավայրը սկսեցին վերականգնել Ադրբեջանից բռնագաղթված մի քանի հայ ընտանիքներ: Այստեղ հաստատվեցին նաև ՀՀ բնակավայրերից, իսկ վերջերս էլ Սիրիայից ներգաղթած հայկական ընտանիքները: Շուտով բնակավայրը ստացավ քաղաքի կարգավիճակ, և զարգացման նոր հորիզոններ բացվեցին:

1998 թ. սեպտեմբերի 1-ից Կովսականում գործում է միջնակարգ դպրոց: Աշակերտների թիվը տարեցտարի աճում է: 2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում է 105 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Լարիսա Ավետիսյանը, Երվանդ Պյազյանը, Վարդան Մաղոյանը, Գոհար Կարապետյանը, Սերոբ Քարամյանը:

[1440] «Հայաստանի հանրապետություն», 18 ապրիլի, 1997:

Քաղաքը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Միաժամանակ համայնքի տարածքով անցնում են Կովսական–1, Կովսական–Աջափնյա–1, Կովսական–Աջափնյա–2 և Դիցմայրի ոռոգման ջրատարները, որոնք նոր հնարավորություններ են ընձեռում քաղաքի բնակչությանը՝ զարգացնելու հողագործությունը:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Կովսականում գործում են քաղաքապետարան, դպրոց, «Բերձորի արվեստի և մշակույթի դպրոց» ՊՈԱԿԻ–ի մասնաճյուղը, 2 նախադպրոցական խմբեր, հիվանդանոց, մարզահրապարակ, շինանյութերի վերամշակման գործարան, առևտրի 5 կետեր: Կովսականով էր անցնում ներկայումս չգործող Միջնավան–Կապան երկաթուղին: Կովսականի համայնքում ընդգրկված են նաև Դիցմայրի և Քարատակ գյուղերը:

Կովսականում 2019 թ. տվյալներով կար 200 տուն, 800 բնակիչ[1441]:

Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԴԻՑԱՄԱՅՐԻ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Կովսական գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Բասուտաջրի ստորին հոսանքում՝ գետի ձախափնյա հարթավայրում:

Դիցմայրիից ոչ շատ մեծ հեռավորության վրա է գտնվում Իրանի Իսլամական հանրապետությունը:

Բնակավայրի անվան և պատմության վերաբերյալ աղբյուրներում առայսօր հիշատակություններ և մանրամասնություններ չեն հայտնաբերվել: Գյուղը գտնվում է սոսիների պուրակում՝ Շիկահողի արգելոցի հարևանությամբ:

Սոսիների պուրակի վերաբերյալ Արցախում ժողովրդի մոտ մի հետաքրքիր ավանդություն է պահպանվել, ըստ որի՝ Ավարայրի ճակատամարտից հետո Բակ Առանշահիկն արցախյան գնդի գլուխն անցած գալիս են Արցախ՝ իրենց հետ բերելով նաև Վարդան սպարապետի անշնչացած մարմինը: Վայոց ձորում իրենց հետապնդող պարսիկների հետ ընդհարվելուց և կորուստներ ունենալուց հետո հասնում են Ողջի գետի ստորին հոսանք և ներկայիս Դիցմայրիի մոտ հողին են հանձնում զորավարի մարմինը: Հետագայում տեղաբնիկները այդ տարածքում Ավարայրի նահատակների հիշատակը հավերժացնող սոսիների պուրակ են հիմնադրել:

Վերոհիշյալ զրույցի մեկ այլ տարբերակով Դիցմայրի գյուղում ապստամբները մի քանի օր դադար են առնում, զոհվածներին էլ հուղարկավորում, իսկ Վարդան սպարապետի մարմինն էլ հասցնում Խաչենի Աստղաշեն գյուղը և այդտեղ էլ մի խորհրդավոր տեղում զորավարի մարմինը ամփոփում:

[1441] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

Երկու դեպքում էլ սոսիների պուրակը կապվում է Ավարայրի նահատակների անվան հետ:

Դիցմայրիի շրջակայքում առայսօր պահպանվում են Շաթաուզի եկեղեցու ավերակները:

18–րդ դարի երկրորդ կեսին և 19–րդ դարում քուրդ ցեղապետերին և պարսիկ խաներին հաջողվեց հայերին դուրս մղել Արաքսի ափամերձ տարածքներից:

Շուտով թուրքերն ու քրդերը հաստատվեցին հայկական գյուղերում, այդ թվում Դիցմայրիում:

Հայկական բնակավայրը նրանք անվանեցին Մեշադի–Իսմայիլի:

1930 թ. վերոհիշյալ գյուղը գտնվում էր Զանգելանի շրջանում:

1993 թ. հոկտեմբերի 28–29–ին ԱՀ պաշտպանության բանակի հարվածների տակ ազատագրվեց Մեշադի Իսմայիլին:

ՊԲ ստորաբաժանումները հումանիտար միջանցք թողեցին, որպեսզի խաղաղ բնակչությունը հեռանա այդ վայրերից:

1997 թ. և դրան հաջորդած տարիներին գյուղում հաստատվեցին Ադրբեջանից բռնագաղթված հայ ընտանիքներ, ինչպես նաև ՀՀ տարբեր բնակավայրերի քաղաքացիներ:

2000 թվականից Դիցմայրիում գործում է միջնակարգ դպրոց: 2018–2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 15 աշակերտ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրենի պաշտոնը վարել են Ա. Մխիթարյանը, Օ. Ներսիսյանը, Ս. Բալասանյանը:

Գյուղի երիտասարդները մասնակցել են 2016 թ. ապրիլյան պատերազմին: Դիցմայրին ընդգրկված է Կովսական համայնքի կազմի մեջ:

Բնակավայրը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական ջրհորների միջոցով:

Գյուղի հարթավայրային գոտում լինելու հանգամանքը, ինչպես նաև ջրային պաշարների առկայությունը նպաստում են հողագործության զարգացմանը:

Դիցմայրիում 2003 թ. կար 77 մարդ, 2005 թ.՝ 67 մարդ, 2010 թ.՝ 55 մարդ[1442], իսկ 2018 թ.՝ 21 տուն, 76 մարդ[1443]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1442] Մանուկյան Մ., նշվ.աշխ., էջ 469:

[1443] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 5:

ԿԵՐԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Կովսական գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Ողջի գետի միջին հոսանքի աջ ափին՝ Կովսական Կապան ճանապարհի վրա:

Կարծիք կա, որ գյուղը գոյություն ունի վաղ միջնադարից և կրում էր Կերեն անունը[1444]: Նշված տարածքը Արևելյան Հայաստանի ամենախիտ բնակեցված վայրերից մեկն է եղել:

1996 թ. ՀՀ Ազգագրության, հնագիտության ինստիտուտի մասնագետները Ողջի գետի երկու ափերին պեղումներ են կատարել: Հաշվառվել են 100-ից ավելի դամբարանաբլուրներ: Դրանցից մի քանիսը պեղվել են և հայտնաբերվել երկաթի դարաշրջանի, մասնավորապես Վանի թագավորության մշակույթին առնչվող նյութեր՝ արձաններ, կարասներ, արծաթյա սրվակ, ծիսական անոթներ, խեցեղեն իրեր, որոնք այսօր պահվում են Արցախի պատմաերկրագիտական թանգարանում:

Կերենից ոչ շատ մեծ հեռավորության վրա են գտնվում հայկական Բերքնի (Շատարիս) գյուղի մնացորդները:

Գյուղատեղիից 1 կմ հյուսիս-արևմուտք պահպանվել է 16-րդ դարի միանավ թաղածածկ եկեղեցի[1445]:

Շատարիսի հայերը խորհրդային տարիներին ստիպված հեռացել են իրենց բնակավայրերից և հաստատվել Սյունիքի Շիկահող գյուղում:

Խորհրդային տարիներին Կերենում հաստատվել են թրքախոս քրդեր և գյուղը անվանել Կարագյոլ:

1923 թ. Կարագյոլը Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Զանգելանի շրջանի կազմում էր:

1993 թ. հոկտեմբերի 23-ին ԱՀ Պաշտպանության բանակի ստորաբաժանումները, մի քանի ուղղություններով զարգացնելով հարձակումը, ճնշել են Հորադիզում և նրա շրջակայքում տեղաբաշխված թշնամու հենակետերը: Զանգելանի, Ջեբրայիլի և Կուբաթլուի շրջաններում գտնվող Ադրբեջանի զինված ուժերի ստորաբաժանումները և խաղաղ բնակչությունը հայտնվել էին շրջափակման մեջ: Հոկտեմբերի 25-ի կեսօրին ՊԲ հրամանատարությունը միակողմանիորեն դադարեցրել էր մարտական գործողությունները և հնարավորություն տվել խաղաղ բնակչությանը՝ հեռանալու ռազմագործողությունների թատերաբեմից: Առիթից օգտվելով հակառակորդը սկսեց հրթիռակոծել Հադրութի շրջանի խաղաղ բնակավայրերը, օգտագործվել է նաև օդուժը: Հոկտեմբերի 26-ին, վերսկսելով հարձակումը, հայկական ստորաբաժանումները ճնշել են Խանլրղ բնակավայրի ռազմական հենակետը:

[1444] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1445] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 208:

Հոկտեմբերի 27-ին՝ ժամը 18:00-ից, Իրանի Իսլամական հանրապետության և Հայաստանի հանրապետության նախագահների կոչով ՊԲ-ի հրամանատարությունը դարձյալ դադարեցրել է ռազմական գործողությունները՝ հնարավորություն ընձեռելով Զանգելանի շրջանի խաղաղ բնակչության մնացած մասին դուրս գալու մարտական գործողությունների տարածքից: Հոկտեմբերի 28-ին՝ ժամը 17:00-ին, հակառակորդը մեծաքանակ ուժերով հարձակման է անցել Բոյուկ Բահմանլու բնակավայրի ուղղությամբ՝ նպատակ ունենալով վերահաստատվել նախկին դիրքերում: Տևական մարտերից հետո ՊԲ-ն սկզբում կասեցրել էր հակառակորդի ուժերի առաջխաղացումը, ապա ձեռնամուխ եղել կրակակետերը վերացնելուն: Ադրբեջանական բանակի կազմավորումները, չդիմանալով ղարաբաղյան զինուժի շարունակական ճնշմանը, լքել են գրաված դիրքերը և Արաքսի ծանծաղուտներով հեռացել Իրանի տարածքը: Հոկտեմբերի 28-ին ՊԲ մարտիկները մտել են Մինջևան երկաթուղային կայարանը: Նոյեմբերի 1-ին ՊԲ վերահսկողության տակ են անցել Զանգելանի շրջանի բնակավայրերը, այդ թվում Կարագյոլը:

1998 թ. սկսվել էր Կարագյոլի վերաբնակեցումը: 1998 թ. հուլիսի 6-ին այն վարչական միավորի կարգավիճակ ստացավ, և վերականգնվեց պատմական Կերեն անունը: Այստեղ առաջինն իր ընտանիքով վերահաստատվեց Վլադիմիր Թումասյանը, ով համայնքը ղեկավարեց մինչև 2008 թ.:

Բնակչության արտահոսքի պատճառով 2008 թ. համայնքը, որի կազմի մեջ էին նաև Գրհամ և Սպիտակաշեն գյուղերը, լուծարվեց և դարձավ Կովսականի համայնքի վարչական տարածք:

2012 թ. օգոստոսից Կերենի վերաբնակեցման նոր գործընթաց սկսվեց: Առաջինը այստեղ հաստատվեցին 3 ընտանիքներ՝ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքից, (Ա. Ամիրխանյան), Սյունիքի մարզի Դաստակերտ քաղաքից (Տ. Բաղալյան) և Կապան քաղաքից (Ա. Ավագյան):

2013 թ. Կերենը հարևան Գրհամ և Սպիտակաշեն գյուղերի հետ կրկին առանձին համայնք է կազմում:

2002 թ. բացվել է Կերենի միջնակարգ դպրոցը: Աշակերտների թվաքանակի կրճատման պատճառով այն շուտով փակվեց:

2012 թ. սեպտեմբերի 3-ին նորից վերաբացվեց Կերենի միջնակարգ դպրոցը: 2013-2014 ուսումնական տարում դպրոցում սովորել է 26 աշակերտ, դասավանդել՝ 12 ուսուցիչ:

Դպրոցի տնօրեններ են աշխատել Վլադիմիր Թումասյանը և Անուշ Աբրահամյանը:

2016 թ. ապրիլյան պատերազմի օրերին գյուղի բնակիչներն իրենց ներդրումն ունեցան երկրի սահմանների պաշտպանության գործում:

Բնակավայրը էլեկտրաֆիկացված է: Ջրամատակարարումը իրականացվում է ինքնահոս եղանակով:

Բջջային հեռախոսակապը և ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, դպրոց:

Կերենում 2003 թ. կար 32 մարդ, 2010 թ.՝ 47 մարդ[1446], 2018 թ.՝ 9 տուն, 22 մարդ[1447]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՔԱՐԱՏԱԿ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Կովսական գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Ողջիի և Բասուտաջրի միջագետքում: Հարավ-արևմուտքից Քարատակը սահմանակից է ՀՀ-ին: Արևելքում բնակավայրից ոչ շատ մեծ հեռավորության վրա է գտնվում Իրանի Իսլամական հանրապետությունը:

18-րդ դարի սկզբներին Դավիթ Բեկի և Մխիթար Սպարապետի գլխավորած ազատագրական պայքարի տարիներին Քարատակը գտնվում էր Սյունիքի իշխանության Գիլաբերդ գավառում:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի և Նախիջևանի խաների, քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել էին: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում՝ Քարատակի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը, մոռացության մատնվեն:

19-րդ դարի սկզբներին ամայության մատնված գյուղում հաստատվել էին թուրք և քուրդ խաշնարած մի քանի ընտանիքներ: Հայկական գյուղը նրանք անվանակոչեցին Քեչիկլի:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված թուրքերն ու քրդերը հիմնահատակ կործանել էին հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ: Այստեղ այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մոսկվայի կենտրոնական բոլշևիկյան իշխանության որոշմամբ այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին:

1923 թ. Քարատակը գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Զանգելանի շրջանի կազմի մեջ:

1993 թ. նոյեմբերի սկզբներին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

[1446] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 508:

[1447] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

1998 թ. սկսվեց գյուղի վերաբնակեցման գործընթացը: Այստեղ հաստատվեցին ՀՀ-ի տարբեր բնակավայրերից մի քանի ընտանիքներ:

Գյուղը ստացավ Քարատակ անունը:

Բնակավայրը ընդգրկված է Կովսական համայնքի կազմում:

Գյուղի աշակերտները հաճախում են Դիցմայրիի միջնակարգ դպրոց: Բնակավայրն ունի բազմաթիվ հիմնախնիրներ՝ կապված էլեկտրականության, ջրի, բնակչության սպասարկման տարբեր ոլորտների հետ:

Քարատակում 2005 թ. կար 10 մարդ, 2010 թ.՝ 12 մարդ[1448], 2018 թ.՝ 4 տուն, 13 մարդ[1449]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԳՐՀԱՄ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Կովսական գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Կերեն գյուղից 1 կմ դեպի արևմուտք՝ Ողջի գետի միջին հոսանքի աջափնյա բլրապատ հարթավայրային մասում:

Գրհամը Սյունիքի հնագույն բնակավայրերից մեկն է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ տարածքը հնագույն ժամանակներից խիտ բնակեցված է եղել, 1996 թ. ՀՀ Ազգագրության, հնագիտության ինստիտուտի մասնագետները Ողջի գետի երկու ափերին պեղումներ են կատարել:

Գրհամ գյուղի մոտ գտնվող դամբարանաբլուրներից հնագետները հայտնաբերել են ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններին պատկանող նյութեր, ինչպես նաև բնակավայրի հետքեր:

Գյուղը առավել շատ հայտնի է բնակավայրի մոտ գտնվող Գրհամ բերդով: Սյունյաց իշխանության (821-987 թթ.), այնուհետև թագավորության տարիներին (987-1070 թթ.) Գրհամ բերդը կարևոր դերակատարություն է ունեցել: Այն ոչ միայն գավառի գլխավոր բերդն էր, այլև իշխանական նստավայրը:

Վերոհիշյալ ժամանակաշրջանում բերդը այնքան նշանավոր էր, որ նրա անունից Կովսական գավառը անվանվել է նաև Գրհամ[1450]:

Սյունյաց Գրիգոր թագավորը, որ ժառանգներ չուներ, իր դստերը՝ Կատային, ամուսնացնում է Խաչենի Հասան Գեռաքարեցի իշխանի հետ և նրան դարձնում թագաժառանգ:

Սյունիքում Հասան Գեռաքարեցու իշխանության շրջանը (1066-1070 թթ.) համընկավ թագավորության վրա սելջուկ թուրքերի ճնշումների մեծացման հետ:

[1448] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 469:

[1449] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

[1450] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի Պատմություն, էջ 402:

1070 թ. սելջուկները նվաճեցին Գրիամը, Գեղին, Կաքավաբերդը և Բաղաբերդը: Հասան Գեռաքարեցին ստիպված իր ընտանիքի հետ գիշերով Բաղաբերդից հեռանում է Խաչեն[1451]:

Այդ դեպքերից հետո Գրիամը կորցրեց իր երբեմնի դերն ու նշանակությունը:

17–18-րդ դարերում Կովսական-Գրիամ գավառը տրոհվեց մի շարք գավառակների՝ Չավանդուր, Գիլաբերդ, Գրիամ, Աձան (Աձանան), մասամբ Բարգուշատ[1452]: Երբեմնի հայաշատ գավառը 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին թուրքերի և քրդերի ճնշումների տակ զրկվեց իր նախկին տերերից:

Գրիամում հաստատված թուրքերն ու քրդերը բնակավայրը անվանակոչել էին Քեչիկլի: Նրանք հիմնահատակ կործանել էին հայկական բնակավայրի պատմամշակութային արժեքները:

Խորհրդային տարիներին Գրիամը բռնակցվեց Ադրբեջանին:

1923 թ. Քեչիկլին գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի, իսկ 1930 թ.՝ Զանգելանի շրջանի կազմի մեջ:

1993 թ. նոյեմբերի սկզբներին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ ազատագրվեց հնադարյան հայկական այդ հողակտորը:

1998 թ. սկսվեց այդ տարածքների վերաբնակեցման գործընթացը:

Գյուղում հաստատվեցին ՀՀ բանակվայրերից մի քանի ընտանիքներ: Նորից վերականգնվեց բնակավայրի պատմական Գրիամ անունը:

Կերեն համայնքի կազմի մեջ է ընդգրկված Գրիամ գյուղը: Գրիամի աշակերտները սովորում են Կերենի միջնակարգ դպրոցում: Բնակավայրն ունի բազմաթիվ հիմնախնդիրներ՝ կապված էլեկտրականության, ջրի ճանապարհների, բնակչության սպասարկման տարբեր ոլորտների հետ:

Գրիամում 2010 թ. կար 17 մարդ[1453], 2018 թ.՝ 12 տուն, 32 մարդ[1454]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՍՊԻՏԱԿԱՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Կովսական գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Կերեն գյուղից 2 կմ դեպի արևմուտք՝ Ողջի գետի միջին հոսանքի աջափնյա բլրապատ հարթավայրում: Գյուղից դեպի արևմուտք գտնվում է Հայաստանի Հանրապետությունը, իսկ արևելք՝ Իրանի Իսլամական հանրապետությունը:

[1451] Բալայան Վ., Արցախի պատմությունը, էջ 89:

[1452] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 202–203:

[1453] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1454] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի և Նախիջանի խաների ու քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել էին: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում Սպիտակաշենի պատմական անցյալի մանրամասներն ու անգամ անունը մոռացության մատնվեն:

18-րդ դարի սկզբներին Սպիտակաշենը գտնվում էր Սյունիքի անկախ իշխանության Գիլաբերդ գավառում:

19-րդ դարի սկզբներին ամայության մատնված գյուղում հաստատվել էին թուրք և քուրդ խաշնարած մի քանի ընտանիքներ: Հայկական գյուղը նրանք անվանել էին Աղքենդ:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված թուրքերն ու քրդերը հիմնահատակ կործանել էին հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին մասնավորապես ՀԽՍՀ-ի սահմանամերձ նախկին հայկական բնակավայրերի նկատմամբ դա առավել ծրագրված բնույթ էր ստացել: Այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մոսկվայի կենտրոնական իշխանության որոշմամբ այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին:

1923 թ. Սպիտակաշենը գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Զանգելանի շրջանի կազմի մեջ:

1993 թ. նոյեմբերին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

1998 թ. սկսվեց գյուղի վերաբնակեցման գործընթացը: Այստեղ հաստատվեցին ՀՀ-ի տարբեր բնակավայրերից մի քանի ընտանիքներ:

Գյուղը ստացավ Սպիտակաշեն անունը:

Գյուղի աշակերտները հաճախում են Կերենի միջնակարգ դպրոցը:

Բնակավայրը ունի բազմաթիվ հիմնախնդիրներ կապված էլեկտրականության, ջրի, բնակչության սպասարկման տարբեր ոլորտների հետ:

Սպիտակաշենում 2010 թ. կար 17 մարդ[1455], 2015 թ.՝ 7 տուն, 27 մարդ[1456], 2018 թ.՝ 3 տուն, 13 մարդ[1457]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1455] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 510:

[1456] Ղահրամանյան Հ., նշվ.աշխ., էջ 355:

[1457] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

ՄԻՋՆԱՎԱՆ

Քաղաքը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Կովսական գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Ողջի և Արաքս գետերի միախառնման տեղից 2 կմ դեպի հյուսիս-արևմուտք:

Մինջևանը Սյունիքի հնագույն բնակավայրերից մեկն է:

Սյունիքը Պարսկաստանի հետ կապող առանցքային կետում լինելով՝ բնակավայրը միջնադարում զարգացել և կարևոր դերակատարություն է ունեցել ինչպես Սյունիքի, այնպես էլ Արցախի համար:

Միջին արևելքից դեպի Սյունիք և Արցախ տանող ճանապարհների վրա գտնվելով, 11-րդ դարի կեսերից սկսած՝ սելջուկ թուրքերի, մոնղոլական, թուրքմենական ցեղերի պարսիկների, թուրքերի, քրդերի արշավանքների պատճառով մշտապես ավերվել է: 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի կեսերին ավանի հայ բնակչությունը բռնում է արտագաղթի ճանապարհը: Պարապը շուտով լցվում է թուրքերի և քրդերի կողմից:

Մի քանի տարվա ընթացքում ավանում հաստատված թուրքերն ու քրդերը հիմնահատակ կործանել էին հայկական պատմամշակութային արժեքները:

Արցախի Ռուսաստանին անցնելուց հետո՝ մինչև 1917 թ. դեկտեմբերը, բնակավայրը Ելիզավետպոլի նահանգի կազմի մեջ էր:

1917-1920 թ. Արցախի անկախ պետության գոյության շրջանում Մինջևանը գտնվում էր հայկական իշխանությունների իրավասությունների ներքո:

1921 թ. Մոսկվայի բոլշևիկյան կենտրոնական իշխանությունների թեթև ձեռքով այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին:

Բնակավայրը կարևոր հանգուցակետում լինելով Նախիջևանի Ինքնավար հանրապետությունը ԱԽՍՀ-ի հետ երկաթուղային կապ ստեղծելու նպատակով Բաքվի իշխանությունները այստեղ ստեղծեցին առանձին կայարան:

Խորհրդային տարիներին Մինջևանը գտնվում էր Կարմիր Քուրդիստանի օկրուգի, այնուհետև Զանգելանի վարչական շրջանի կազմի մեջ: 1993 թ. հոկտեմբերի վերջերին և նոյեմբերի սկզբներին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ բնակավայրը ազատագրվեց:

1995 թ. օգոստոսից այստեղ հաստատվեցին Ադրբեջանից բռնագաղթված և ՀՀ բնակավայրերից տեղափոխված հայ ընտանիքներ:

Շուտով բնակավայրը ստացավ քաղաքի կարգավիճակ, վերանվանվեց ու ստացավ Միջնավան անվանումը:

1996 թ. քաղաքում բացվել էր միջնակարգ դպրոց: 2013-2014 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 82 աշակերտ, դասավանդում՝ 18 ուսուցիչ: Հիմնադրման օրվանից դպրոցի տնօրենն է Մ. Սարգսյանը:

Քաղաքը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Բնակիչներն ունեն նաև անհատական ջրհորներ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են քաղաքապետարան, դպրոց, հիվանդանոց, մանկապարտեզ, «Բերձորի արվեստի և սպորտի դպրոց» ՊՈԱԿ-ի Միջնավանի մասնաճյուղը, մարզահրապարակ, կարի բաժանմունք, մշակույթի տուն, շինանյութերի կոմբինատ, առևտրի 2 կետեր:

Համայնքի տարածքով անցնում են ոռոգման ջրատարներ, որոնք նպաստում են հողագործության զարգացմանը:

Միջնավանում 2005 թ. կար 324 մարդ[1458], 2015 թ.՝ 138 տուն, 483 մարդ[1459], 2018 թ.՝ 86 տնտեսություն, 322 մարդ[1460]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Բնակչության մի մասն էլ աշխատում է պետական հիմնարկություններում:

ԱԼԱՇԿԵՐՏ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ նախկինում՝ Սյունիքի Կովսական գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Ողջի գետի աջափնյա ձորալանջին: Բնակավայրից ոչ շատ մեծ հեռավորության վրա է գտնվում Իրանի Իսլամական հանրապետությունը:

18-րդ դարի սկզբներին Ալաշկերտը գտնվում էր Սյունիքի իշխանության Ջրաբերդ գավառում:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի և Նախիջևանի խաների ու քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել էին: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում Ալաշկերտի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը, մոռացության մատնվեն:

19-րդ դարի սկզբներին ամայության մատնված գյուղում հաստատվել էին քուրդ խաշնարած մի քանի ընտանիքներ: Հայկական գյուղը նրանք անվանեցին Կըրխ-Մուշլան:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված թուրքերն ու քրդերը հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ: Այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մոսկվայի կենտրոնական բոլշևիկյան իշխանության որոշմամբ այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին:

[1458] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 469:
[1459] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 324:
[1460] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

Ալաշկերտը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Զանգելանի շրջանի կազմում:

1993 թ. նոյեմբերի սկզբներին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

1997 թ. սկսվեց գյուղի վերաբնակեցման գործընթացը: Այստեղ հաստատվել էին ինչպես Ադրբեջանից բռնագաղթված հայ ընտանիքներ, այնպես էլ ՀՀ-ի բնակավայրերից տեղափոխված քաղաքացիներ:

Գյուղը ստացավ Ալաշկերտ անունը:

1999 թ. սեպտեմբերի 1-ից իր գործունեությունը սկսեց Ալաշկերտի միջնակարգ դպրոցը, որտեղ սովորում էր 18 աշակերտ, դասավանդում՝ 6 ուսուցիչ: 2015-2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 32 աշակերտ, դասավանդում՝ 16 ուսուցիչ: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Յու. Բաղդասարյանը, Լ. Հակոբյանը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական ջրհորների միջոցով: Համայնքի տարածքով անցնող Ալաշկերտ-1, Ալաշկերտ-2, ոռոգման ջրատարները նպաստում են հողագործության զարգացմանը:

Հեռուստատեսությունը, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Բնակավայրը ունի գյուղապետարան, դպրոց:

Ալաշկերտում 2010 թ. կար 104 մարդ[1461], 2015 թ.՝ 36 տուն, 126 մարդ[1462], 2018 թ.՝ 31 տուն, 119 մարդ[1463]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԱՂԱՁՈՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Պարսկանք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հակարի գետի ստորին հոսանքի ձախափնյա հարթավայրում: Գյուղից ոչ շատ մեծ հեռավորության վրա է գտնվում Իրանի Իսլամական հանրապետությունը:

Բնակավայրի անվան և պատմության վերաբերյալ աղբյուրներում առայսօր հիշատակություններ չեն հայտնաբերվել:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարում քուրդ ցեղապետերին և պարսիկ խաներին հաջողվեց հայերին դուրս մղել Արաքսի ափամերձ տարածքներից:

Բնաշխարհագրական միջավայրը հարմարավետ էր, մյուս կողմից էլ այստեղ գտնվող հայկական նախկին բնակավայրերը հնարավորություն ընձեռեցին, որ թուրքերն ու քրդերը անցնեն նստակեցության:

[1461] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 474:
[1462] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 326:
[1463] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

Հայկական բնակավայրը նրանք անվանել էին Աղալի: Այդ նույն տարածքում եկվորները խորհրդային տարիներին հիմնել էին ևս 2 բնակավայր: Այդպես խորհրդային տարիներին վերոհիշյալ տարածքներում կային Աղալի-1, Աղալի-2, Աղալի-3 անուններով թուրքաբրդաբնակ 3 գյուղեր:

1930 թ. վերոհիշյալ գյուղերը ընդգրկված էին ԱԽՍՀ Զանգելանի շրջանի կազմի մեջ: Չնայած բռնաճնշումներին, խորհրդային տարիներին Զանգելանի շրջանում դեռևս հայ ընտանիքներ կային:

Այսպես՝ 1959 թ. Զանգելանի շրջանում կար 324 հայ, 1979 թ. արդեն մնացել էր 35 հոգի[1464]:

1993 թ. հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ ազատագրվեց ողջ Զանգելանի շրջանը, այդ թվում՝ վերոհիշյալ բնակավայրը: ԱՀ ՊԲ ստորաբաժանումները հումանիտար միջանցք թողեցին, որպեսզի խաղաղ բնակչությունը հեռանա այդ վայրերից:

1999 թ. և դրան հաջորդած տարիներին գյուղում հաստատվեցին Ադրբեջանից բռնագաղթված հայ ընտանիքներ, ինչպես նաև Վայոց ձորի, մասնավորապես Աղնջաձոր համայնքի, Արարատի և Արմավիրի մարզերի բնակիչները: Բնակավայրը ստացավ Աղաձոր անունը:

2006 թ. հիմնադրվեց Աղաձորի միջնակարգ դպրոցը: 2014-2015 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 38 աշակերտ, դասավանդում՝ 12 ուսուցիչ: 2015 թ. կրթօջախը անվանվել է դպրոցի շրջանավարտ, 2015 թ. մարտի 19-ին ԱՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհված Հակոբ Խաչատրյանի անունով:

Գյուղի երիտասարդները մասնակցել են 2016 թ. ապրիլյան պատերազմին:

Աղաձորում և նրա շրջակայքում եղած պատմամշակութային նշանակության հուշարձանները թուրքերի և քրդերի կողմից ոչնչացվել են: Գյուղում այսօր մնացած մզկիթը հիմնված է միջնադարյան հայոց եկեղեցու հիմքերի վրա[1465]:

Համայնքը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական ջրհորների միջոցով: Գյուղի տարածքով է անցնում Աղաձոր-1, Աղաձոր-2 ոռոգման ջրատարները, որոնք նպաստում են հողագործության զարգացմանը:

Համայնքն ունի գյուղապետարան, դպրոց:

Աղաձորում 2010 թ. կար 24 տուն, 101 մարդ[1466], 2018 թ.՝ 25 տուն, 89 մարդ[1467]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1464] Բալայան Վ., Դրվագներ..., էջ 254:
[1465] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 203:
[1466] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1467] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

ԱՂԱՆՈՒՍ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Բերդաձոր գավառում: Բնակավայրը տեղակայված է Հակարի գետի միջին հոսանքի ձախափնյա վտակի ձորալանջին:

19-րդ դարում քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հիմնականում հայաթափվել էին: 19-րդ դարի երկրորդ կեսին Աղանուսում հաստատվել էին թրքախոս քոչվոր քրդերի մի քանի ընտանիքներ, որոնք էլ գյուղի մոտ գտնվող հանքային թթու ջրի անունից բանակվայրը անվանակոչել են Թուրշսու:

Մի քանի տասնամյակի ընթացքում Աղանուսում և նրա շրջակայքում գտնվող պատմամշակութային հուշարձանները թուրքերի և քրդերի կողմից համատարած ավերվել են: Տարածաշրջանի գյուղերում գործածական են եղել քարանձավային բնակավայրերը, որոնցից մեկը իրենից պատմամշակութային արժեք է ներկայացնում և գործածվել է Ք. ա. 1-ին հազարամյակից:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մոսկվայի կենտրոնական բոլշևիկյան իշխանության որոշմամբ այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին:

Թուրշսուն 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Զանգելանի շրջանի կազմի մեջ:

1992 թ. մայիսին ԱՀ պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվել է:

Պատերազմի ավարտից անմիջապես հետո՝ 1994 թ., այստեղ հաստատվեցին Ադրբեջանից բռնագաղթված հայ ընտանիքներ: Մի քանի տարի անց այստեղ վերաբնակվեցին նաև ՀՀ բնակավայրերից քաղաքացիներ:

Բնակավայրը ստացավ Աղանուս անունը:

2000 թ. գյուղում գործում է միջնակարգ դպրոց: Այն կրում է Արցախյան ազատամարտի նահատակ Արսեն Հակոբյանի անունը:

2015-2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 24 աշակերտ, դասավանդում՝ 8 ուսուցիչ: Տարբեր տարիների դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Գ. Սայամյանը, Ա. Արգարյանը, Հ. Թևանյանը, Ռ. Ներսիսյանը, Ա. Խաչատրյանը:

Աղանուս համայնքի կազմում ընդգրկված են Ապարան և Մեղվաձոր գյուղերը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական եղանակով բնական աղբյուրների հաշվին:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքը ունի գյուղապետարան, դպրոց:

Աղանուսում 2010 թ. կար 11 տուն, 37 մարդ[1468], 2018 թ.՝ 8 տուն, 30 մարդ[1469]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԱՊԱՐԱՆ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Բերդաձոր գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հակարի գետի միջին հոսանքի ձախափնյա ձորալանջին, Աղանուս գյուղից 4 կմ դեպի հարավ: 19-րդ դարում քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հիմնականում հայաթափվել էին:

19-րդ դարի երկրորդ կեսին Ապարանում հաստատվել էին թրքախոս քոչվոր քրդերի մի քանի ընտանիքներ, որոնք էլ հայկական գյուղը անվանել էին Փաթալիփեյա:

Մի քանի տասնամյակի ընթացքում, մասնավորապես խորհրդային տարիներին, Փաթալիփեյայում և նրա շրջակայքում գտնվող պատմամշակութային նշանակության հուշարձանները թուրքերի և քրդերի կողմից համատարած ավերվել են:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մոսկվայի կենտրոնական բոլշևիկյան իշխանության որոշմամբ այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին:

Քանի որ ներկայիս Բերձոր քաղաքը, Աղանուսը, Ապարանը, Աղավնոն անմիջապես գտնվում են ՀԽՍՀ-ն ԼՂԻՄ-ի հետ կապող ամենանեղ շերտում, ուստի խորհրդային տարիներին արագ բնակեցվել են թուրքերով և քրդերով:

Փաթալիփեյան 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Զանգելանի շրջանի կազմի մեջ:

1992 թ. մայիսին ԱՀ պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

1996 թ. բնակավայրում հաստատվեցին Ադրբեջանից բռնագաղթված հայ ընտանիքներ և ՀՀ բնակավայրերից քաղաքացիներ: Գյուղը ստացավ Ապարան անունը:

Բնակավայրի աշակերտները սովորում են Աղանուսի միջնակարգ դպրոցում:

Ապարանը ընդգրկված է Աղանուս համայնքի կազմում:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական եղանակով՝ բնական աղբյուրների հաշվին: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Ապարան գյուղում 2010 թ. կար 4 տուն, 20 մարդ[1470], 2018 թ.՝ 4 տուն, 16 մարդ[1471]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1468] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 475:
[1469] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:
[1470] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1471] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

ՄԵՂՎԱՁՈՐ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Բերձոր գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հակարիի միջին հոսանքի ձախափնյա ձորալանջին՝ Աղանուս գյուղից 6 կմ հարավ:

19-րդ դարում թրքախոս քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հիմնականում հայաթափվել էին:

19-րդ դարի երկրորդ կեսին Մեղվաձորում հաստատվել էին թրքախոս քոչվոր քրդերի մի քանի ընտանիքներ, որոնք էլ հայկական գյուղը անվանակոչեցին Մըղիդերե:

Մի քանի տասնամյակի ընթացքում, մասնավորապես խորհրդային տարիներին Մեղվաձորում ու նրա շրջակայքում գտնվող պատմամշակութային նշանակության հուշարձանները թուրքերի ու քրդերի կողմից համատարած ավերվել են:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մոսկվայի կենտրոնական իշխանության որոշմամբ այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին:

Քանի որ ներկայիս Բերձոր քաղաքը, Աղանուսը, Ապարանը, Մեղվաձորը, Աղավնոն անմիջապես գտնվում են ՀԽՍՀ-ն ԼՂԻՄ-ի հետ կապող ամենանեղ հատվածում, ուստի խորհրդային տարիներին Բաքվի իշխանությունների կողմից այն արագ բնակեցվում է թուրքերով ու քրդերով:

Մըղիդերեն 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Զանգելանի շրջանի կազմի մեջ:

1992 թ. մայիսին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

1996 թ. բնակավայրում հաստատվեցին Ադրբեջանից բռնագաղթված հայ ընտանիքներ և ՀՀ բնակավայրերից քաղաքացիներ: Գյուղը ստացավ Մեղվաձոր անունը: Այն ընդգրկված է Աղանուս համայնքի կազմում:

Բնակավայրի աշակերտները սովորում են Աղանուսի միջնակարգ դպրոցում:

Մեղվաձոր գյուղը էլեկտրաֆիկացված չէ և ունի սոցիալ-կենցաղային բազմաթիվ հիմնախնդիրներ:

Մեղվաձորում 2010 թ. կար 3 տուն, 8 մարդ, 2018 թ.՝ 3 տուն, 11 մարդ[1472]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԱՂԱՎՆԱՏՈՒՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան մասում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Բերձոր գավառում: Աղավնատունը տեղաբաշխված է Հակարի գետի միջին հոսանքի ձորալանջին՝ Բերձոր քաղաքից 36 կմ հարավ-արևելք:

[1472] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

Գյուղի միջնադարյան պատմության վերաբերյալ սկզբնաղբյուրներում դեռ հիշատակություններ չեն գտնվել: Կարծիք կա, որ Աղավնատունը համապատասխանում է այդ տարածքում եղած Ղևոնդ Ալիշանի հիշատակած միջնադարյան հայկական Չինարի գյուղի հետ:

20-րդ դարի սկզբներին այստեղ հաստատված քրդերը դարձան հայկական բնակավայրերի տերերը: Աղավնատան հարևանությամբ գտնվող Հարար հայկական գյուղը միառժամանակ տոկաց և դիմադրեց քրդերին ու թուրքերին:

Թրքախոս գյուղը անվանակոչեցին Ղուշչիլար:

Խորհրդային տարիներին գյուղը հայտնվեց սկզբում Կարմիր Քուրդիստանի, իսկ 1930 թ.՝ նոր ձևավորված Ղուբաթլիի շրջանի կազմում:

1993 թ. Արցախի Հանրապետության ՊԲ-ի հարվածների տակ բնակավայրը ազատագրվեց:

Գյուղի վերաբնակեցման գործընթացը սկսվեց 1995 թվականից;

Այստեղ հաստատվեցին Երևանից, Գյումրիից և ԱՀ բնակավայրերից առաջին ընտանիքները: Ռազմական գործողությունների հետևանով ավերված գյուղը սկսեց վերականգնվել և նոր շունչ ստանալ:

1996 թ. Աղավնատնում գործել է Հարարի դպրոցի տարական դասարանների մասնաճյուղը: 1997 թ. Աղավնատանը բացվել է միջնակարգ դպրոց: 2001 թ. դպրոցական շենքը հիմնանորոգվել է: Ներկայումս դպրոցում գործում է 5 երկկոմպլեկտ դասարան:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Նորայր Արամյանը, Հրաչ Մելիքյանը, Արամ Խզմալյանը, Սասուն Խաչատրյանը, Օլյա Վարդանյան, Բուդաղյանը, Ղուկաս Սիրունյանը, Լուսաբեր Ասատուրյանը և Հայկ Միրոնյանը:

ԱՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհվել է Համլետ Հաջոյանը:

Համայնքը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Ժամանակի ընթացքում թուրքերը և քրդերը ոչնչացրել են գյուղում և նրա շրջակայքում եղած պատմամշակութային նշանակության հուշարձանները: Մնացել է 15-16-րդ դարերի մեկ խաչքար:

Աղավնատուն համայնքի կազմում ընդգրկված են Հարար և Խաչգետիկ գյուղերը:

Համայնքում գործում են գյուղապետարան և դպրոց:

Աղավնատուն գյուղում 2018 թ. տվյալներով կար 9 տնտեսություն, 37 բնակիչ[1473]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1473] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

ԽԱՉԳԵՏԻԿ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Բերդաձոր գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հակարի գետի միջին հոսանքի ձախափնյա ձորալանջին:

19-րդ դարում քրդական ցեղերի ձնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հիմնականում հայաթափվել էին: Հայտնի է, որ Սաֆիան գյուղի հարևանությամբ էր գտնվում Արցախի վաղ միջնադարյան բնակավայրերից մեկը՝ Խաչգետիկը, որի հետքերը առայսօր տեսանելի են:

19-րդ դարի երկրորդ կեսին Սաֆիանում հաստատվել էին թրքախոս քոչվոր քրդերի մի քանի ընտանիքներ:

Մի քանի տասնամյակի ընթացքում Սաֆիան և Խաչգետիկ գյուղերում և նրանց շրջակայքում գտնվող պատմամշակութային հուշարձանները թուրքերի և քրդերի կողմից համատարած ավերվել են:

20-րդ դարի սկզբներին Սաֆիանում և հարակից հայկական նախկին բնակավայրերում հաստատված թուրքերն ու քրդերը անընդհատ հարձակումներ էին գործում իրենց հարևանությամբ գտնվող և դեռևս կենսունակ Հարար գյուղի վրա:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մոսկվայի կենտրոնական բոլշևիկյան իշխանության որոշմամբ այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին:

Քանի որ վերոհիշյալ գյուղը և նրա շրջակայքում գտնվող մյուս բնակավայրերը ԼՂԻՄ-ին առավել մոտ էին գտնվում, ուստի խորհրդային տարիներին Բաքվի իշխանությունների կողմից արագ բնակեցվում էին թուրքերի և քուրդ նոր ընտանիքներով:

Սաֆիանը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմի մեջ:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվել էր:

1995 թ. ՀՀ բնակավայրերից, մասնավորապես, Երևանից և Գյումրիից այստեղ հաստատվեցին մի քանի ընտանիքներ: Գյուղը ստացավ Խաչգետիկ անունը: Խաչգետիկը ներառված է Աղավնատուն համայնքի կազմում:

Բնակավայրի աշակերտները սովորում են Աղավնատան միջնակարգ դպրոցում:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական կարգով: Հեռուստատեսությունը, ռադիոն Խաչգետիկում հասանելի են: Բնակավայրում առկա են սոցիալ-կենցաղային բնույթի բազմաթիվ չլուծված հարցեր:

Խաչգետիկում 2010 թ. կար 7 տուն, 27 մարդ[1474], 2015 թ.՝ 11 տուն, 47 մարդ[1475], 2018 թ.՝ 13 տուն, 52 մարդ[1476]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1474] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1475] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 330:
[1476] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

ՀԱՐԱՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Բերդաձոր գավառում: Հարարը տեղաբաշխված է Հակարի գետի միջին հոսանքի ձախափնյակում՝ գետից 6 կմ հեռավորության վրա:

Հարարը Արցախի հնագույն բնակավայրերից մեկն է: Գյուղի եկեղեցու մուտքի շեմին ագուցված 12-13-րդ դարերի խաչքարերը[1477] դրա մասին են վկայում: Դեռ ավելին՝ գյուղը Խարար անունով ներկայացրել է արաբ պատմիչ Համադալլահ Ղազվինին[1478]:

Արաբական շրջանի վերաբերյալ մի պատմություն է պահպանվել, ըստ որի՝ 9-րդ դարում հագարացիները գրավում են գյուղը և նրա շրջակայքում գտնվող գիհու անտառը կտրտում ու որպես թանկարժեք փայտ տեղափոխում Բաղդադ: Քանի որ արաբերեն գիհին թարգմանաբար հարար է նշանակում, ուստի բնակավայրն էլ անվանակոչեցին Հարար:

1603-1604 թվականներին Շահ Աբասի կողմից կազմակերպված մեծ գաղթաշարժի ժամանակ Նախիջևանի և ընդհանրապես Արևելյան Հայաստանի հարյուրավոր գյուղերի հետ տուժեցին նաև Հակարիի հոսանքն ի վեր գտնվող բնակավայրերը: Հարյուր հազարավոր մարդկանց քշեցին Պարսկաստան:

Այդպես առաջին անգամ որպես վերաբնակիչներ Հակարիի ափին հայտնվեցին քոչվոր քրդերը: Դա ծրագրված քաղաքականություն էր: Շահ Աբասը նպատակ ուներ հայկական պետականության գաղափարը կրող երկու նահանգները՝ Արցախը և Սյունիքը, իրարից սահմանազատել:

Տնվորի կեցվածքով եկվորներն անմիջապես չկարողացան տեր դառնալ հայկական երկրամասին: Դրա մասին են վկայում Քարվաճառի (Քելբաջար) և Քաշաթաղի (Լաչին) շրջաններում ներկայումս պահպանվող 17-18-րդ դարերում կառուցված եկեղեցիների ու մատուռների մնացորդները: Դրանցից մեկն էլ 17-րդ դարում կառուցված Հարարի Սբ. Ստեփանոս եկեղեցին է, որը 19-րդ դարի վավերագրերում հիշատակված է Սբ. Հռիփսիմե անունով[1479]:

Հուշարձանագետ Ս. Կարապետյանը գտնում է, որ եկեղեցին կառուցվել է ավելի հին եկեղեցու տեղում[1480]:

Հարար գյուղի հայ բնակիչները մեծ գաղթաշարժի ժամանակ նույնպես քշվեցին Պարսկաստան: Ամենայն հավանականությամբ դա է պատճառը, որ 17-18-րդ դարերի վավերագրերում գյուղի մասին սակավ հիշատակություններ են մնացել: Չնա-

[1477] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 182:
[1478] Хамдаллах Казвини, Нузхат ае-Кулуб, с. 50.
[1479] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 45:
[1480] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 182:

յած դրան՝ գյուղում հայությունը շարունակել է պահպանել իր ներկայությունը: Մարտիրոս քահանայի պատվերով Պաղտասար դպիրը Հարարի Սբ. Ստեփանոս եկեղեցում 1666 թ. մի Մաշտոց է ընդօրինակել[1481]:

Երկու տարի անց այստեղ ստեղծվել է մեկ այլ ձեռագիր Մաշտոց[1482]:

1671 թ. Պաղտասար դպիրը Սբ. Ստեփանոս եկեղեցում ընդօրինակել է նաև Ավետարանը[1483]: Այն այսօր պահվում է Լոնդոնի Վելքոմ ինստիտուտի գրադարանում[1484]:

Արցախը Ռուսաստանի կազմ անցնելուց հետո (1813 թ.) Հարարի բոնահանված հայության մի զգալի մասը տեղափոխվել և հաստատվել է հայրենի երկրամասում: Նրանք հիմնել են Արփագյադուկ, Թեզխարաբ, Գոնաղգեորմազ և Սեչմանլու գյուղերը:

Չորս գյուղերն էլ միասին անվանակոչվել են Հարար[1485]:

Հարարում 1841 թ. կար 31 տուն, 322 բնակիչ, 1901 թ.՝ 1260 բնակիչ[1486]:

Չնայած գյուղը գտնվում էր ռուսական տիրապետության ներքո, այնուամենայնիվ թուրքերն ու քրդերը իրենց վարք ու բարքին համապատասխան հանգիստ չէին տալիս Հակարիի միջին հոսանքում մնացած մի քանի հայկական գյուղերի բնակիչներին: Թալանն ու սպանություններն անպակաս էին: 1891 թ. Հարարից 15 ընտանիքներ տեղափոխվել և հաստատվել են Թարթառի ձախափնյակում գտնվող Չափար գյուղում[1487]:

Գյուղի համար նոր արհավիրք դարձան 1905–1906 թվականների հայ-թաթարական ընդհարումները:

1905 թ. գյուղը հիմնովին թալանվել էր հարևան թուրքերի և քրդերի կողմից: Տասնյակ մարդիկ զոհվել են[1488]: Մազապուրծ բնակչությունը հաստատվել էր Սյունիքի և Արցախի առավել ապահով բնակավայրերում: Որոշ ընտանիքներ էլ բնավորվել էին Ստեփանակերտում: Ներկայումս նրանց ժառանգները շարունակում են ապրել ԱՀ մայրաքաղաքում:

1914 թ. Հարարում մնացել էր 412 հոգի[1489], իսկ 1921 թ.՝ 55 հոգի[1490]:

[1481] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա., ձեռ. հմ 3437:
[1482] «Մեղու Հայաստանի», 1 դեկտեմբերի, հմ. 94, 1885; հմմտ. Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 179:
[1483] Ա-Դօ, նշվ. աշխ., էջ 262–263:
[1484] «Բանբեր Մատենադարանի», հմ. 15, Երևան, 1986, էջ 323:
[1485] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 179:
[1486] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 15:
[1487] ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 205, թ. 235–236:
[1488] Сборник материалов для описания местностей и племен Кавказа, выпуск 25, Тифлис, 1898, с. 103.
[1489] Кавказский календарь на 1915 г., Тифлис, 1914, с.107.
[1490] Карапетян М., Этническая структура населения Нагорного Карабаха в 1921 г., Ереван, 1991, с. 17.

Խորհրդային առաջին տարիներին գյուղը գտնվում էր ԼՂԻՄ-ի Հադրութի վարչական շրջանի կազմում: 1926 թ. Ադրբեջանի իշխանությունների որոշմամբ գյուղը միացվեց Լաչինի շրջանին և դրանով ԼՂԻՄ սահմանային կապը ՀԽՍՀ հետ առավել անհնարին դարձավ[1491]: Մի քանի տարի անց գյուղում այլևս հայ չմնաց: 1930 թ. Հարարում հայտնվել էին թրքախոս քրդեր: Գյուղը սկզբում նրանք անվանափոխել և դարձրել էին Ջաֆարաբադ, այնուհետև Հարարի մոտ գտնվող հայկական Փարաջան գյուղի անունով՝ Աշաղը (Ներքին) Փարաջան:

Գյուղում եղած պատմամշակութային արժեքները եկվորները սկսել էին ոչնչացնել: Ավերվել էին եկեղեցին, գերեզմանատունը:

Մինչև արցախյան շարժումը Հարարի գերեզմանատանը պահպանվում էին հայատառ արձանագիր տապանաքարեր: 1988–1992 թվականների ընթացքում գերեզմանատունը լիովին ավերվել և տեղը գոմ է կառուցվել: Այսօր երբեմնի շեն Սբ. Ստեփանոս եկեղեցու միայն ավերակներն ու երեք խաչքարերն են պահպանվում: Հարարի շրջակայքում եղել են Ամուտեղ, Հուռում այա, Սյումիքլու Բաբա ուխտատեղիները:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվել է: 1995 թ. այստեղ հաստատվեցին ՀՀ բնակավայրերից և Ադրբեջանից բռնագաղթված մի քանի ընտանիքներ:

Գյուղը նորից վերստացավ իր պատմական Հարար անունը: Բնակավայրի աշակերտները սովորում են Աղավնատան միջնակարգ դպրոցում:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական եղանակով:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Հարարը ընդգրկված է Աղավնատուն համայնքի կազմում:

Հարարում 2010 թ. կար 17 մարդ[1492], 2015 թ.՝ 11 տուն, 44 մարդ[1493], 2018 թ.՝ 6 տուն, 21 մարդ[1494]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԱՂԱՎՆՈ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Աղահեձք գավառում: Բնակավայրը տեղակայված է ԱՀ-ն ՀՀ-ին կապող առանցքային կետում՝ Աղավնո գետի ստորին հոսանքի աջ և ձախ ձորալանջերին:

[1491] Բալայան Վ., Դրվագներ..., էջ 181:
[1492] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1493] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 330:
[1494] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

Աղավնոն ԱՀ հնագույն բնակավայրերից է:

Շուշիի ռեալական ուսումնարանի ուսուցիչ Էմիլ Ռյոսլերը 1898 թ. Զաբուխի փոստային կայանի մոտ հայտնաբերել է հին հայկական մահարձաններ[1495]:

13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը Աղահեճք գավառի գյուղերի ցանկում հիշատակում է Շապոկի[1496] կամ Շաբակի[1497] անունով բնակավայր:

Ղ. Ալիշանը, Ա. Ղարագյոզյանը, Մ. Հասրաթյանը Շապոկին[1498] նույնացնում են Զաբուխի հետ: Գրող Սերո Խանզադյանը Զաբուխի մոտ գտնվող Քեշիշ-վերան հանդամասում արձանագիր թվագիր (1555 թ.) խաչքարի վրա ընթերցել է «Շապոկի գիւղը»:[1499]

Ս. Կարապետյանը դա հավանական չի համարում, քանի որ Զաբուխ և Տեղ գյուղերի միջև Շապոկի անունով մեկ այլ գյուղատեղի գոյություն ունի[1500]:

Փաստն այն է, որ մինչև 19-րդ դարի կեսերին քրդերի թափանցումը տարածաշրջան Զաբուխը հայկական բնակավայր էր:

1760-ական թվականներից սկսած՝ Ղարաբաղի Փանահ և Իբրահիմ խաները ամեն կերպ ձգտում էին Արցախը և Սյունիքը իրար հետ կապող Հակարի գետն ի վեր գտնվող հայկական բնակավայրերը ոչնչացնել: Սերո Խանզադյանը նույն Շապոկի գյուղի մոտ՝ ձորի պոնկին՝ մի տապանաքարի վրա, ընթերցել է «Քաջազարմ Մելիք Գեղէոն իշխան Տեղիոյս, նահատակ եղև կովում անօրէն պարսիկ Ջառչի Փանահի դեմ ծաղիկ հասակաւ ԹՎՆ. ՌՄԺԱ»(1762 թ.)[1501]:

Քրդերը հայկական բնակավայրը անվանակոչեցին Զաբուխ: Քանի որ քրդերը թրքախոս էին, ուստի 1888 թ. այստեղով անցնող հայ ճանապարհորդը նկատել է, որ Զաբուխում կար 60 տուն թուրք բնակիչ[1502]:

1905-1906 թվականների հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Զաբուխի քրդերը հարձակումներ են գործել Սյունիքի և Արցախի հայկական գյուղերի վրա:

Զաբուխի քրդերը 1917-1921 թվականներին նույնպես շատ անախորժություններ պատճառեցին Սյունիքի և Արցախի հայությանը:

[1495] Эмиль Реслер, Археологические изыскания в Закавказье. «Кавказ», № 134, 1903, с. 2.

[1496] Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911, էջ 516:

[1497] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 399:

[1498] Ղևոնդ Ալիշան, Սիսական, էջ 268; Карагезян А, Сюник, Нахчаван и Гохтн, Ереван, 2002, с. 40; Նույնի՝ К локализации гавара Кашатаг, «Լրաբեր հասարակական գիտությունների», հմ.1, 1987, էջ 43:

[1499] Խանզադյան Ս., Ինչ են պատմում քարերը, «Սովետական Հայաստան», ամսագիր, հմ. 6, 1984, էջ 24:

[1500] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 154:

[1501] Խանզադյան Ս., նշվ. աշխ., էջ 24:

[1502] «Նոր դար», հմ. 33, 1888:

1918 թ. նոյեմբերի 16-ին զորավար Անդրանիկը Զաբուխում ջախջախեց թուրք-թաթարներից ու քրդերից բաղկացած ավազակախմբերին և շարժվեց դեպի Ավդալար՝ նպատակ ունենալով այդտեղից հասնել Շուշի[1503]:

Նույն ձևով էլ 1921 թ. ապրիլի 18-ին սյունեցիների ջոկատը կապիտան Ամիրջանյանի գլխավորությամբ Ավդալարի և Զաբուխի ուղղությամբ ճեղքում է կարմիր բանակի ու տեղացի քրդերից բաղկացած զորամասերի պաշարման օղակը և Զանգեզուրում միանում Նժդեհի հիմնական ուժերին[1504]:

Խորհրդային տարիներին Զաբուխը գտնվում էր Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմի մեջ:

1992 թ. մայիսի 18-ին «Սյունիքի աշխարհազորի», Աբովյանի՝ «Կոտայք», Հոկտեմբերյանի՝ «Սև հովազներ», Սիսիանի և այլ կամավորական ջոկատների հարվածների տակ ազատագրվեց Զաբուխը: Մյուս կողմից էլ ԱՀ պաշտպանության բանակը ազատագրեց Լաչին շրջկենտրոնը, և երկու հայկական զորամիավորումները միմյանց հանդիպեցին Աղավնոյի գետանցի կողմերում: Բացվեց ԱՀ-ն ՀՀ-ին միացնող կյանքի ճանապարհը:

Ի տարբերություն մյուս գյուղերի՝ վերաբնակեցման գործը Աղավնոյում սկսվել է դեռևս պատերազմական թեժ օրերին: 1992 թ. հունիսից այստեղ հաստատվեց ԱՀ Մարտակերտի շրջանի Մարաղա գյուղում ցեղասպանության զոհ դարձած Լավրենտ Առաքելյանի և Լյուդմիլա Խոջանայի ընտանիքը: 1994 թ. պատերազմի ավարտից հետո այդ գործընթացը նոր թափ ստացավ:

1994 թ. սեպտեմբերից գյուղում գործում է Գարեգին Նժդեհի անունը կրող միջնակարգ դպրոց: Սկզբում դպրոցն ուներ 43 աշակերտ: Բնակչության արտահոսքի հետևանքով աշակերտների թվաքանակը նվազել էր:

Դպրոցական նոր շենքը կառուցվել էր 1997 թ.:

2019 թ. ՀՅԴ Լիբանանի կառույցի ջանքերով Բեյրութում ստեղծվել է «Արցախի ներդրումային հիմնադրամ»-ը (անգլերեն հապավումը՝ Արի): Վերոհիշյալ կառույցի մեջ ներգրավվել են տարբեր կազմակերպությունների և գործարար շրջանակների ներկայացուցիչներ: Սկզբում կառույցը Քաշաթաղի վերաբնակիչներին գյուղատնտեսական վարկեր է տրամադրել՝ նպաստելով այդ ոլորտի զարգացմանը: Այնուհետև 2014 թ. Աղավնոյում սկսել են իրականացնել բնակարանաշինության ծրագիր: Մինչև 2019 թ. կառուցվել է 50 առանձնատներից բաղկացած առանձին թաղամաս: Նախատեսվում է կառուցել ևս 10 նոր բնակարաններ: Այդ քաղաքականության շնորհիվ Աղավնոյում վերաբնակեցման գործը նոր ընթացք ստացավ: Արդյունքում ավելացավ դպրոցահասակ երեխաների թվաքանակը:

2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 45 աշակերտ:

[1503] Բալայան Վ., Դրվագներ..., էջ 90:

[1504] Նույն տեղում, էջ 145:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Գևորգ Պետրոսյանը, Արմեն Հակոբյանը, Մելս Սահակյանը, Ժուլիետա Մանվելյանը, Սուրիկ Մկրտչյանը, Ելենա Թանայանը, Վիտալիկ Շալունցը, Աննա Հայրապետյանը:

2002 թ. Պարույր Հայրիկյանի նախաձեռնությամբ և ամերիկահայ բարերար Վահե Կարապետանի հովանավորությամբ գյուղում կառուցվել է «Սրբոց նահատակաց» եկեղեցին: Հոգևոր տան շրջակայքում կա 4 տապանաքարերից բաղկացած հուշակոթող, որտեղ քանդակված են գյուղի և շրջակա տարածքների ազատագրման և պաշտպանության ժամանակ զոհված ազատամարտիկների անունները: 2017 թ. մայիսի 18-ին գյուղում բացվել է հուշաղբյուր՝ նվիրված ապրիլյան պատերազմի հերոսներին:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետը ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, դպրոց, առևտրի 2 կետ: Աղավնոյում գործում է նաև ՀԷԿ:

Աղավնոյում 2010 թ. կար 128 մարդ[1505], 2018 թ.՝ 70 տուն, 225 մարդ[1506]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԱՅԳԵՀՈՎԻՏ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Մյուս Հաբանդ գավառում: Բնակավայրը տեղակայված է Հակարի գետի միջին հոսանքի ձախ ափի հարթավայրային մասում:

Նախկինում գյուղն ունեցել է Խոջիկ անվանումը:

Միջնադարում եկեղեցի է ունեցել: Մինչև 1880-ական թվականները այն կիսավեր վիճակում պահպանվում էր[1507]:

Թրքախոս ցեղերը, հաստատվելով այս բնակավայրում, հիմնովին ոչնչացրել են հայկական բոլոր հուշարձանները, այդ թվում՝ եկեղեցին: Նրանք անվանափոխել են նաև գյուղը՝ այն կոչելով Բալասուլթանլի:

Խորհրդային տարիներին գյուղը սկզբում ընդգրկված էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Ղուբաթլիի շրջանի կազմի մեջ:

1993 թ. ԱՀ ՊԲ հարվածների տակ ազատագրվեց Խոջիկ գյուղը: 1997 թ. այստեղ հաստատվեցին Ադրբեջանից բռնագաղթված հայ ընտանիքներ: Բնակավայրը ստացավ Այգեհովիտ անունը: Նոր ձևավորված բնակավայրը հետագա տարիներին համալրվել է նաև ՀՀ բնակավայրերից տեղափոխված մի քանի ընտանիքներով: Նրանք հիմնականում զբաղվում են անասնապահությամբ, հողագործությամբ և մեղվաբուծությամբ:

Այստեղ հաստատվածներից Գևորգ Գևորգյանը, Մուրադ Ավագյանը, Գագիկ Խաչատրյանը, Նաիրի Իսրայելյանը մասնակցել են արցախյան պատերազմին:

Գյուղի երիտասարդները 2016 թ. ապրիլյան պատերազմի ժամանակ պաշտպանեցին ԱՀ սահմանները:

25 աշակերտով և 9 ուսուցչով 1998 թ. նոյեմբերին հիմնադրվել է Այգեհովիտի միջնակարգ դպրոցը: 2014-2015 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 36 աշակերտ, դասավանդում՝ 14 ուսուցիչ: Դպրոցական շենքը հիմնանորոգված է: Տարբեր տարիների այստեղ տնօրեններ են աշխատել Կարեն Հովհաննիսյանը, Վարդան Վարդանյանը, Արամ Արամյանը, Վիտալի Շալունցը, Մարիցա Հարությունյանը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու և ոռոգման ջրերի հարցը համայնքում լուծված է: Գյուղի տարածքով են անցնում Այգեհովիտ-1, Այգեհովիտ-2 ոռոգման ջրատարները:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Բնակավայրում գործում են գյուղապետարան, բուժկետ, դպրոց, հանդիսությունների սրահ, ալրաղաց, առևտրի 1 կետ: Համայնքի կազմում ընդգրկված է նաև Լաճաշեն գյուղը:

Այգեհովիտում 2010 թ. կար 135 բնակիչ, 2014 թ.՝ 42 տուն, 151 բնակիչ[1508], իսկ 2018 թ.՝ 41 տուն, 127 բնակիչ[1509]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԼԱՃԱՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Մյուս Հաբանդ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հակարի գետի ստորին հոսանքի ձախափնյա վտակ փոքր Հակարիի ձախ կողմի ձորալանջի վրա:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ճնշման տակ Լաճաշենը հայաթափվել է: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ գյուղի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

[1505] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1506] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:
[1507] Ալիշան Ղ., Արցախ, Երևան, 1993, էջ 400:

[1508] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 481:
[1509] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

19-րդ դարի սկզբներին ամայության մատնված գյուղում հաստատվել են թուրք և քուրդ խաշնարած մի քանի ընտանիքներ:

Հայկական գյուղը նրանք անվանեցին Դաղմաշանլի:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված թուրքերն ու քրդերը հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ: Այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մոսկվայի կենտրոնական բոլշևիկյան իշխանության որոշմամբ այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին:

Դաղմաշանլին 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Ջաբրայիլի շրջանի կազմի մեջ:

1993 թ. հոկտեմբերի վերջերին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

1998 թ. այստեղ սկսվեց բնակավայրի վերաբնակեցման գործընթացը: Գյուղում հաստատվեցին Ադրբեջանից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետությունից մի քանի ընտանիքներ: Գյուղը ստացավ Լճաշեն անունը:

Բնակավայրի դպրոցահասակ երեխաները հաճախում են Այգեհովիտի միջնակարգ դպրոցը:

Լճաշենն ընդգրկված է Այգեհովիտ համայնքի կազմում:

Լճաշենը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական ջրհորների հաշվին:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Լճաշենում 2010 թ. կար 13 մարդ[1510], 2015 թ.՝ 3 տուն, 8 մարդ[1511], 2018 թ.՝ 2 տուն, 6 մարդ[1512]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԱՅԳԵԿ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Մյուս Հաբանդ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հակարիի ստորին հոսանքի ձախափնյա բլրապատ հարթավայրում:

Միջնադարում բնակավայրը ընդգրկված էր Դիզակի մելիքության կազմում:

[1510] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1511] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 333:
[1512] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել են: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում՝ Այգեկի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

19-րդ դարի սկզբներին ամայության մատնված գյուղում հաստատվել են թուրք և քուրդ խաշնարած մի քանի ընտանիքներ: Նրանք հայկական գյուղը անվանել են Մարդանլի:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված թուրքերն ու քրդերը հիմնահատակ կործանել էին հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ: Այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում: Դրա փոխարեն եկվորները 20-րդ դարի սկզբներին մզկիթ են կառուցել:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մոսկվայի կենտրոնական բոլշևիկյան իշխանության որոշմամբ այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին: Մարդանլին 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Ղուբաթլիի շրջանի կազմում:

1993 թ. հոկտեմբերի վերջերին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

1997 թ. այստեղ վերաբնակվել են Ադրբեջանից բռնագաղթված, ինչպես նաև ՀՀ բնակավայրերից տեղափոխված մի քանի ընտանիքներ:

Բնակավայրը ստացավ Այգեկ անունը:

1997 թ. Այգեկում բացվեց միջնակարգ դպրոց:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական ջրհորների հաշվին: Համայնքի տարածքով անցնող Այգեկ-Գետամեջ ոռոգման ջրատարը նպաստում է հողագործության զարգացմանը:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում է գյուղապետարան:

Այգեկում 2010 թ. կար 14 տուն, 85 մարդ[1513], 2015 թ.՝ 23 տուն, 94 մարդ[1514], 2018 թ.՝ 29 տուն, 102 մարդ[1515]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1513] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1514] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 332:
[1515] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

ԱՐԱԽԻԾ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Վայկունիք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Շալվա գետի վերին հոսանքում՝ ձախից նրան միախառնվող Ռախիշ (Ղորչու) վտակի ձախ կողմի անտառապատ ձորալանջին: Տվյալ տարածքում Արըքլի անունով իրար մոտ գտնվող երկու գյուղեր կան:

Մովսես Կաղանկատվացին իր պատմության մեջ ներկայացնում է Արքուգետ բնակավայրը, որը գտնվում էր Սյունիքի Աղահեճք գավառում[1516]: Նույն բնակավայրը Ստեփանոս Օրբելյանը անվանում է Արքո[1517]: Ուսումնասիրողների մի մասը գտնում է, որ վերոհիշյալ բնակավայրը նույն Արախիշն է: Սակայն հարկ է նկատել, որ Արքուգետը կամ Արքուն Սյունիքի Աղահեճք գավառում էր գտնվում, իսկ Արախիշը Արցախի հնագույն բնակավայրերից է:

Արախիշը գյուղի պատմական անունն է: Այստեղ 1568 թ. ընդօրինակված ձեռագրում բնակավայրը ներկայացված է որպես Վայկունիքի Արախիշ գյուղ, իսկ 1653-1654 թվականներին արտագրված Ավետարանի մեջ հիշատակված է Ռախիշ[1518]:

Գյուղից 3 կմ հեռավորության վրա է գտնվում նաև Արախշուն հանդամասը: Գյուղի հարավային ծայրին է գտնվում 1246 թ. կառուցված Զորախաչ եկեղեցին:

Ներքին Արախիշից 1,5 կմ հարավ պահպանվում են միջնադարյան անանուն գյուղի գերեզմանատան մնացորդները և 1983 թ. պայթեցված 12-13-րդ դարերի Սբ. Աստվածածին եկեղեցու ավերակները:

Ս. Կարապետյանը գտնում է, որ այս եկեղեցին կառուցվել է ավելի հին եկեղեցու հիմքերի վրա[1519]:

Տակնուվրա արված միջնադարյան գերեզմանատանը պահպանվում են արձանագիր տապանաքարեր և խաչքարեր (11-17-րդ դարեր), որոնց մեծ մասը ջարդված է:

Արախշունի սարահարթի հյուսիսային հատվածում են գտնվում 12-13-րդ դարերի կառույց միանավ բազիլիկ եկեղեցու ավերակները, որը նույնպես խորհրդային տարիներին պայթեցվել է ադրբեջանցիների կողմից:

Եկեղեցու հարևանությամբ գտնվող ավերված գերեզմանատան մեջ պահպանվել են 11-17-րդ դարերի խաչքարեր և տապանաքարեր:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին տարածաշրջան թափանցած քրդական ցեղերը Արախիշը հարմարեցրել էին իրենց լեզվի հնչյուններին և բնակավայրի անունը դարձրել Արըքլի:

[1516] Մ. Կաղանկատուացի, էջ 331:
[1517] Ստեփանոս Օրբելյան, էջ 399:
[1518] Հայերեն ձեռագրերի ԺԷ դարերի հիշատակարաններ, կազմեց Վ. Հակոբյան, հ. Գ, (1641-1660 թթ.), Երևան 1984, էջ 601:
[1519] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 168:

Չնայած բնակավայրում հաստատված թուրքերն ու քրդերը՝ մանավանդ խորհրդային շրջանում, ծրագրված ոչնչացնում էին հայկական ճարտարապետական հուշարձանները, և այնուամենայնիվ, դրանց մի մասը կիսավեր վիճակում մեզ է հասել:

Ընդհանուր առմամբ, ի տարբերություն արաքսամերձ հայկական բնակավայրերի, որտեղ պատմամշակութային հուշարձանները հիմնովին ոչնչացվել են, Քաշաթաղի հյուսիսային հատվածներում շատ թե քիչ, թեկուզև կիսավեր վիճակում դրանց մի մասը մեզ է հասել:

Արըքլին 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Զանգելանի շրջանի կազմում:

Արըքլին 1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ ազատագրվել է: 1998 թ. այստեղ հաստատվել են ՀՀ բնակավայրերից տեղափոխված մի քանի ընտանիքներ:

Գյուղը նորից ստացավ իր պատմական Արախիշ անունը:

Արախիշում գործում է տարրական դպրոց, իսկ բարձր դասարանցի աշակերտները հաճախում են Մովսեսաշենի հիմնական դպրոցը:

Արախիշ համայնքի կազմում ընդգրկված են Գահանիստ, Աղբրաձոր, Մովսեսաշեն, Հայթաղ, Վազգենաշեն և Քարաբակ գյուղերը:

2014 թ. հունվարի 1-ի դրությամբ Քարաբակում մարդ չի ապրում:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Արախիշն ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Արախիշն ունի գյուղապետարան:

Բնակավայրում 2010 թ. կար 26 մարդ[1520], 2015 թ.՝ 5 տուն, 12 մարդ[1521], 2018 թ.՝ 3 տուն, 11 մարդ[1522]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԱՂԲՐԱՁՈՐ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Վայկունիք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Շալվա գետի վերին հոսանքում՝ ձախից նրան միախառնվող Ռախիշ (Ղորչու) վտակի ձախ կողմի անտառապատ ձորալանջին:

Աղբրաձոր գյուղից 2,5 կմ հեռավորության վրա՝ Ռախիշ գետակի հյուսիսային անտառապատ լանջին, տեղաբնիկները 2000 թ. հայտնաբերել են փոքր վանական համալիր, որի շրջակայքում պահպանվել են 17-րդ դարի արձանագիր տապանաքարեր:

[1520] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1521] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 335:
[1522] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

Աղբրաձոր գյուղի դիմաց՝ Բախիշ գետակի աջ ձորալանջին պահպանվել են 11-րդ դարի փոքր եկեղեցու ավերակներ: Եկեղեցու շրջակայքում գտնվում են 11-17-րդ դարերի արձանագիր խաչքարեր ու տապանաքարեր:

Աղբրաձորից ոչ շատ մեծ հեռավորության վրա՝ Բախիշ վտակի աջ ձորալանջի բարձրադիր մասում են գտնվում նաև Մայրեջրի վանքի ավերակները: Այն կառուցվել է 11-րդ դարում և որպես հոգևոր կենտրոն գործել է մինչև 17-րդ դարը: Վանքի պարիսպների ներսում և նրա հարևանությամբ գտնվող գերեզմանատանը նույնպես պահպանվել են խաչքարեր ու տապանաքարեր: Այս թռուցիկ քննությունը մեզ հիմք է տալիս ասելու, որ առնվազն միջին միջնադարում Աղբրաձորի հայությունը ապրել է հետաքրքիր ու բազմաբովանդակ կյանքով:

18-րդ դարի վերջերից սկսած՝ Աղբրաձորի հայության համար ծանր ժամանակներ սկսվեցին:

Ղարաբաղի խաներն ու քրդական ցեղերը ամեն գնով ձգտում էին տարածաշրջանից դուրս մղել հայությանը՝ աքցանի մեջ առնելով Գյուլիստանի, Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի, մելիքությունները: Նրանք այդ ծրագիրը իրագործեցին: 19-րդ դարի սկզբներին Աղբրաձորը լրիվ հայաթափվել ու ամայացել էր: 19-րդ դարի երկրորդ կեսերին այստեղ հայտնվել էին թուրք և քուրդ քոչվոր մի քանի ընտանիքներ: Գյուղը նրանք անվանափոխել և դարձրել էին Կյուրջուբուլաղ:

Այդ ժամանակվանից սկսած՝ մանավանդ խորհրդային տարիներին եկվոր թուրքերն ու քրդերը ոչնչացրել են այն ամենը, ինչը կապված էր հայ ժողովրդի անվան հետ: Բարեբախտաբար որոշ հուշարձաններ պահպանվել են, որոնց մասին վերևում անդրադարձ կատարվեց: Պահպանված խաչքարերից չորսի թվականները (1068, 1069, 1075, 1244) ընթեռնելի են:

Խորհրդային տարիներին վերոհիշյալ տարածքները նվիրաբերվեցին Ադրբեջանին: Գյուղը նորից անվանափոխվեց և ստացավ Ղորչբուլաղ անունը:

1993 թ. ԱՀ պաշտպանության բանակի հարվածների տակ բնակավայրը ազատագրվեց:

1997 թ. այստեղ ՀՀ բնակավայրերից հաստատավել էին մի քանի ընտանիքներ: Սակայն սոցիալ-տնտեսական ոչ բարվոք պայմանների պատճառով վերաբնակները սկսեցին հեռանալ գյուղից:

2003 թ. Աղբրաձորում կար 26 մարդ[1523], իսկ 2010 թ. գյուղում այլևս մարդ չէր բնակվում:

Բնակավայրը գտնվում էր Արախիշ համայնքի կազմում:

[1523] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 484:

ԳԱՀԱՆԻՍՏ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Վայկունիք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Շալվայի Բախիշ (Ղորչու) վտակի ձախափնյա լանջին:

Գահանիստը Քաշաթաղի շրջանի հյուսիսային հատվածի ամենավերջին բնակավայրն է:

Գահանիստը Արցախի հնագույն բնակավայրերից մեկն է: Այն միջին միջնադարում կրել է Լիլաբակ կամ Լիլոբաղր անունը[1524]: Մակար Բարխուդարյանը 19-րդ դարի վերջերին գրել է, որ Հարձլանք և Վայկունիք (Վակունիք) գավառներում կար «...մօտ վաթսուն գիւղ, որ կանխավ եղած է հայաբնակ, բայց այժմ մահմեդականաբնակ են, որոնց մէջ սակայն անպակաս են հայկական հնութեանց հետքեր — կամ կիսակործան, կամ հիմնայատակ կործանուած և կամ կանգուն տաճարներ, եկեղեցիներ, մատուռներ և հանգստարաններ»[1525]:

Նման գյուղերից մեկն էլ Լիլաբակն էր: Հարյուր տարի անց՝ 20-րդ դարի վերջերին և 21-րդ դարի սկզբներին, պատկերն ավելի տխուր էր: Եղած հուշարձանները հիմնականում ավերված վիճակում են:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդերի ճնշումների տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել են:

19-րդ դարի երկրորդ կեսին Լիլաբակում հաստատվել են թրքախոս քրդեր, որոնք էլ հայկական բնակավայրը վերանվանեցին և դարձրին Լյալյաբաղիրլի:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մոսկվայի կենտրոնական բոլշևիկյան իշխանության որոշմամբ ռազմավարական նշանակության այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին:

Լյալյաբաղիրլին 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմում:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ բնակավայրը ազատագրվեց: ՀՀ-ից առաջին վերաբնակիչները այստեղ հաստատվեցին 1998 թ.: Բնակավայրը ստացավ Գահանիստ անունը:

Գահանիստում տիրող սոցիալ-կենցաղային ոչ բարվոք վիճակի պայմաններում բնակավայրում բնակչության թվաքանակի աճ չի արձանագրվում:

Գահանիստում 2010 թ. կար 2 տուն, 2 մարդ[1526], 2015 թ.՝ 4 տուն 5 մարդ[1527], իսկ 2018 թ.՝ 2 տուն, 2 մարդ[1528]: Վերջիններս գյուղում ապրում են առանց իրենց ընտանիքների և զբաղվում են գյուղատնտեսական աշխատանքներով:

[1524] Մակար Բարխուդարյան, Արցախ, էջ 400-401:
[1525] Նույն տեղում, էջ 400:
[1526] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1527] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 335:
[1528] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

ՀԱՅԹԱՂ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Վայկունիք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Շալուայի վերին հոսանքում՝ նրա երկու վտակների գետի հետ միախառնման եռանկյունում:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել են: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի զգալի մասի, այդ թվում՝ Հայթաղի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

Տիրելով բարձրադիր այդ գավառներին քոչվոր քրդերի և թուրքերի համար ալպիական մարգագետիններից օգտվելու հնարավորություններ ստեղծվեցին:

19-րդ դարի սկզբներին ամայության մատնված գյուղում հաստատվել էին քուրդ խաշնարած մի քանի ընտանիքներ: Հայկական բնակավայրը նրանք անվանել են Ղուշասու:

Գյուղում հաստատված եկվորները մի քանի տասնամյակի ընթացքում ոչնչացրել են հայկական պատմամշակութային արժեքները: Այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատելուց հետո ռազմավարական նշանակության այդ բարձրադիր վայրերը հանձնվեցին ԱԽՍՀ-ին:

Ղոշասուն 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Զանգելանի շրջանի կազմում:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

Առաջին վերաբնակիչները ՀՀ բնակավայրերից գյուղում հաստատվեցին 1996 թ.: Բնակավայրը ստացավ Հայթաղ անունը:

Գյուղի աշակերտները սովորում են Մովսեսաշենի հիմնական դպրոցում:

Հայթաղն ունի սոցիալ-տնտեսական բնույթի բազմաթիվ չլուծված հարցեր:

Հայթաղում 2003 թ. կար 30 մարդ, 2010 թ.՝ 3 տուն, 7 մարդ[1529], 2018 թ.՝ 3 տուն, 8 մարդ[1530]:

Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1529] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1530] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

ՄՈՎՍԵՍԱՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Վայկունիք գավառում: Մովսեսաշենը տեղաբաշխված է Շալվա գետի վերին հոսանքում՝ նրա Բախիշ (Ղորչու) վտակի ձախափնյա անտառապատ ձորալանջին:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել են: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ գյուղի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

19-րդ դարի սկզբներին ներկայիս Մովսեսաշենում հայտնվել էին քուրդ խաշնարած մի քանի ընտանիքներ: Հայկական բնակավայրը նրանք անվանել էին Քյուրդ-Հաջի: Նպատակ ունենալով տարածաշրջանից վերացնել հայկական հետքը՝ մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված քրդերը ոչնչացրել են հայկական պատմամշակութային արժեքները: Այնուամենայնիվ Քյուրդ-Հաջիում միջնադարյան հայկական հետքը տեսանելի է:

Գյուղի հարավային եզրին պահպանվում են գերեզմանատան մնացորդները: Քյուրդ-Հաջիում քրդերի կողմից կառուցված անասնագոմերի պատերի մեջ տապանաքարեր են ագուցված: Գյուղից 2,5 կմ հարավ գտնվում է Խաչինտակ կամ Խաչինյալ գյուղատեղին[1531]:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին:

Քյուրդ-Հաջին 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմի մեջ:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

1995 թ. այստեղ սկսվեց բնակավայրի վերաբնակեցման գործընթացը: Այստեղ հաստատվեցին Ադրբեջանից բռնագաղթված մի քանի ընտանիքներ և ՀՀ բնակավայրերից քաղաքացիներ: Գյուղը ստացավ Մովսեսաշեն անունը: Բնակավայրը գտնվում է Արախիշ համայնքի կազմում:

Գյուղի դպրոցահասակ երեխաների ուսման և դաստիարակության հարցերը լուծելու նպատակով Մովսեսաշենում 1997 թ. բացվեց դպրոց: Սկզբում դպրոցում սովորում էր 19 աշակերտ: Հարևան գյուղերից բնակչության արտահոսքի պատճառով կրճատվեց նաև աշակերտների թվաքանակը: 2018-2019 ուսումնական տարում դպրոցում կար 13 աշակերտ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Արթուր Ստեփանյանը, Ֆաուստ Սիմոնյանը, Միքայել Բալայանը, Քրիստինե Բալայանը:

[1531] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 166:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Հեռուստատեսությունը, բջջային, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Մովսեսաշենում 2010 թ. կար 5 տուն, 17 մարդ[1532], 2018 թ.՝ 5 տուն, 19 մարդ[1533]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՎԱԶԳԵՆԱՇԵՆ

Բնակավայրը գտնվում է ԱՀ հյուսիսարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Բերձոր գավառում: Գյուղը տեղաբաշխված է Հակարի գետի Շալուա վտակի աջափնյա հովտում՝ Բերձոր քաղաքից 38 կմ հյուսիս-արևմուտք: Գյուղը չորս կողմից շրջապատված է անտառներով:

Մինչև հայաթափվելը բնակավայրը միջնադարում անվանակոչված էր Զառիստ:

1246 թ. Գտչավանքի շինարարական արձանագրության մեջ Արցախի մի շարք հնագույն բնակավայրերի հետ միասին հիշատակված է նաև Զառիստը:

Բնակավայրը այնքան առանցքային դերակատարություն ուներ գավառի կյանքում, որ միջին միջնադարից մինչև 19-րդ դարի վերջերը և 20-րդ դարի սկզբները վերոհիշյալ տարածքը գյուղի անունից սկսեց անվանվել Զառիստ: Դրա մասին իր ուղեգնացական ակնարկներում հիշատակում է նաև Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցը[1534]:

Թրքախոս քրդերը, հայտնվելով հայկական այս տարածքներում, ոչ միայն ոչնչացրին հայերին, այլև նրանց ստեղծած մշակույթը ու իրենց լեզվահնչյունային մտածողության համաձայն՝ անվանափոխեցին նաև հայկական բնակավայրերը: Զառիստի փոխարեն շրջանառության մեջ դրվեց Հաջի-Սամլու անունը[1535]:

20-րդ դարի սկզբներին Հաջի-Սամլուն համանուն գավառամասի վարչական կենտրոնն էր: Գավառամասում կար 28 գյուղ[1536]:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին ֆրանսիական կապիտալը մտավ նաև Արցախ: Ֆրանսիական կապիտալով ձեռնարկություններ ստեղծվեցին հանքարդյունաբերության, մետաքսագործության և փայտամշակման ասպարեզում:

Փայտամշակման մի գործարան էլ ստեղծվեց Հաջի-Սամլուում:

1918 թ. մինքենդցի Սուլթան բեկի գլխավորած թուրքերից ու քրդերից կազմված ավազակախմբերը թալանեցին և հրի մատնեցին փայտամշակման գործարանը[1537]:

[1532] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1533] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

[1534] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ 305, թ. 45:

[1535] «Մշակ», հմ. 2, 4 հունվարի, 1906; Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 172:

[1536] Кавказский календарь на 1917 г., Тифлис 1916, с. 53-54.

[1537] Հովհաննիսյան Գ., Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1971, էջ 102:

Խորհրդային տարիներին Հաջի-Սամլուն գտնվում էր Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմի մեջ:

Խորհրդային տարիներին քրդերով վերաբնակեցված հին հայկական գյուղերը Արցախը և Սյունիքը իրարից բաժանող սև օղակ էին դարձել:

1993 թ. Արցախի պաշտպանության բանակը ազատագրեց Հաջի-Սամլուն: 1994 թ. զինադադարի կնքումից հետո այստեղ հաստատվեցին հայ առաջին վերաբնակիչների ընտանիքները: Գյուղը ստացավ Վազգենաշեն անունը:

Գյուղի դպրոցահասակ երեխաները հաճախում են նույն համայնքի կազմի մեջ գտնվող Մարտունաշենի հիմնական դպրոցը, որը բացվել էր 1997 թ.:

Չնայած Վազգենաշենում և նրա շրջակայքում գտնվող պատմամշակութային հուշարձանները դարեր շարունակ ավերվել են երկրամաս ներխուժած թուրքերի կողմից, այնուամենայնիվ դրանք այնքան շատ են եղել, որ դրանց մի մասը փրկվել և նորից ու նորից որպես անխոս վկաներ հաստատում են այս տարածքների հայկական լինելու հանգամանքը:

Մակար Բարխուդարյանը 19-րդ դարի վերջերին, լինելով վերոհիշյալ գյուղում և գավառամասում ու այդ ամենը տեսնելով, գրել է. «Պակաս չեն աւերակ գիւղեր, եկեղեցիներ և հանգստարան Զառիստում և սորա շրջականերում»[1538]:

Վազգենաշենի պատմամշակութային նշանակության հուշարձաններն են՝ եկեղեցի (16-17-րդ դարեր), գերեզմանոց (15-16-րդ դարեր), խաչքարեր (15-16-րդ դարեր), «Կոտրած» կամուրջ (17-18-րդ դարեր):

Վազգենաշենը գտնվում է Արախիշի համայնքի կազմի մեջ:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Բնակիչները ապահովված են խմելու ջրով:

Հեռուստատեսությունը, բջջային հեռախոսակապը և ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Վազգենաշենում 2018 թ. կար 7 տնտեսություն, 29 բնակիչ[1539]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՔԱՐԱԲԱԿ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Վայկունիք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Շալվա գետի Բախիշ (Ղորչու) վտակի ձախափնյա անտառապատ ձորալանջին:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել են: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ այս գավառի մի շարք գյուղերի, այդ

[1538] Մակար եպս. Բարխուտարեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 134:

[1539] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

թվում՝ Քարաբակի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

19-րդ դարի սկզբներին ամայության մատնված գյուղում հաստատվել էին քուրդ խաշնարած մի քանի ընտանիքներ: Հայկական բնակավայրը նրանք անվանել են Ղարաբեկլու:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված թրքախոս քրդերը հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ: Այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո վերոհիշյալ տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին:

Քարաբակը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Զանգելանի շրջանի կազմում:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց: Գյուղը ստացավ Քարաբակ անունը:

1998 թ. այստեղ հաստատվեցին ՀՀ բնակավայրերից մի քանի վերաբնակիչներ:

Քարաբակը գտնվում է Արախիշ համայնքի կազմում: Գյուղը ուներ սոցիալ տնտեսական բազմաթիվ հիմնահարցեր:

Քարաբակում 2010 թ. կար 4 մարդ[1540]: 2014 թ. հունվարի 1-ի դրությամբ Քարաբակը բնակչություն չունի:

ԱՐԾՎԱՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան մասում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Պարսկանք գավառում: Արծվաշենը տեղաբաշխված է Հակարիի ստորին հոսանքում՝ գետի ձախ ափին՝ Որոտանի հետ միախառնման մասում:

Այստեղ եղած հայկական բնակավայրերի մասին սկզբնաղբյուրներում հիշատակություններ չեն հայտնաբերվել:

Խորհրդային տարիներին, երբ արաքսամերձ այս շրջանները բռնակցվեցին Ադրբեջանին, հանրապետության ղեկավարությունը սկսեց իրականացնել ադրբեջանցիներով և քրդերով վերաբնակեցնելու քաղաքականություն:

Նախկին հայկական գյուղի ավերակները մաքրեցին և կառուցեցին Զինախլու անունով բնակավայրը: Այն Ջեբրայիլի շրջանի կազմի մեջ էր: Գյուղն ազատագրվեց 1993 թ.: 1998 թ. հունվարից սկսվեց բնակավայրի վերաբնակեցման գործընթացը: Այստեղ հաստատվեցին ՀՀ Տավուշի մարզի Արծվաշենից Ադրբեջանի զինուժի ձնշման տակ բռնահանված հայ ընտանիքներ:

[1540] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

Գյուղը ստացավ Արծվաշեն անունը: Առաջին տարում այստեղ հաստատվել էին 80 ընտանիքներ: Սակայն բնակարանային պայմանների բացակայության պատճառով նրանց մի մասը հեռացել է նորաստեղծ բնակավայրից:

1999 թ. հեկտեմբերի 6-ից գյուղում գործել է միջնակարգ դպրոց, որտեղ հաճախում էին նաև Աղաձորի և Մխանց գյուղերի դպրոցականները: Դպրոցն ուներ 70 աշակերտ: Դպրոցական շենքը հիմնովին վերանորոգված է:

2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 31 աշակերտ, դասավանդում՝ 11 ուսուցիչ: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Վ. Ֆոանկյանը, Հ. Ոսկանյանը, Յու. Սարգսյանը, Վ. Կիրակոսյանը, Ա. Հակոբյանը, Դ. Աղաջանյանը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվում է անհատական ջրհորների միջոցով: Համայնքի տարածքով են անցնում Արծվաշեն-1, Արծվաշեն-2, Արծվաշեն-3 և Արծվաշեն-4 ոռոգման ջրատարները: Ոռոգման ցանցի առկայությունը նպաստում է Արծվաշենում հողագործության զարգացմանը:

Հեռուստատեսությունը, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, դպրոց, առևտրի 1 կետ:

Արծվաշենում 2018 թ. կար 28 տուն, 75 բնակիչ[1541]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՄԽԱՆՑ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Պարսկանք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հակարիի ստորին հոսանքի ձախափնյա հարթավայրային մասում:

Բնակավայրից ոչ շատ մեծ հեռավորության վրա է գտնվում Իրանի Իսլամական հանրապետությունը:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի, Նախիջևանի խաների ու քրդական ցեղերի ձնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել են: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում՝ Մխանցի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

19-րդ դարի առաջին կեսին գյուղը հայտնի էր Մուղանլու անունով: Հնարավոր է՝ գյուղը ունեցել է պատմական Մուխանք անունը: Իրենց սովորության համաձայն՝ եկվորները բնակավայրի անունը համապատասխանեցրել են իրենց լեզվի հնչյունային համակարգին՝ այն դարձնելով Մուղանլու:

[1541] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված թուրքերն ու քրդերը հիմանահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մոսկվայի կենտրոնական իշխանության որոշմամբ այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին:

Մուղանլուն 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Զանգելանի շրջանի կազմում:

1993 թ. հոկտեմբերի վերջերին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

1999 թ. ՀՀ Վայոց ձորի Եղեգնաձորի ենթաշրջանի գյուղերից մի քանի ընտանիքներ հաստատվեցին այս բնակավայրում: Գյուղը ստացավ Մխանց անունը: Մխանցը ընդգրկված է Արծվաշենի համայնքի կազմում:

Բնակավայրի աշակերտները հաճախում են Արծվաշենի և Իշխանաձորի դպրոցները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական ջրհորների միջոցով:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Մխանցում 2010 թ. կար 22 տուն 73 մարդ[1542], 2015 թ.՝ 26 տուն, 94 մարդ[1543], 2018 թ.՝ 23 տուն, 76 մարդ[1544]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԱՐՏԱՇԱՎԻ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Բերդաձոր գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Շալուա գետի ստորին հոսանքի ձախակողմյան Արտաշավի վտակի աջափնյա ձորալանջին:

Արտաշավին Արցախի հնագույն բնակավայրերից մեկն է: Ընդհանուր առմամբ վերոհիշյալ տարածքը վաղ և միջին միջնադարում բավականաչափ խիտ բնակեցված է եղել:

Արտաշավիի հարևանությամբ են գտնվում Ձորաշեն, Հախնազար գյուղերը:

1615 թ. Քասպար երեցի կողմից նորոգված ձեռագիր հիշատակարանում գյուղը ներկայացված է Արտաշաիպ[1545], իսկ 1637 թ. ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում՝ Արտայշիբի[1546] անուններով:

[1542] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1543] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ, էջ 337:
[1544] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:
[1545] ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, Երևան, 1976, էջ 561:
[1546] ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Բ, էջ 699:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարում թրքախոս քրդական ցեղերը թափանցեցին տարածաշրջան: Հայության վերջին բեկորները լքեցին հայրենի օջախները, և հազարամյակների ընթացքում ստեղծածը շուրջ երկու դար մնաց օտար եկվորների գերության շղթաներում: Երկու հարյուրամյակի ընթացքում ոչնչացվեցին Արտաշավիի պատմամշակութային նշանակության հուշարձանները: Այսօր միայն դրանց հետքերն են մնացել: Գյուղում տեսանելի են միջնադարյան եկեղեցու հիմքերի մնացորդները, իսկ նրա շրջակայքում եղած գերեզմանոցի խաչքարերն ու տապանաքարերը եկվորները ջարդել և իրենց տների ու գոմերի համար շինանյութ էին դարձրել:

Գյուղի աղբյուրի պատի մեջ տեղադրված է մի տապանաքար, իսկ փոստի շենքի որմերի մեջ ագուցված քանդակազարդ արձանագիր (1481 թ.) խաչքարի բեկորը հայ վերաբնակիչները 1995 թ. տեղադրել են Արտաշավիի կենտրոնում գտնվող աղբյուրի մոտ[1547]:

Արտաշավիում և նրա շրջակայքում պահպանվել են արձանագիր քար (1221 թ.), խաչքար (13-րդ դար), խաչքար (1481 թ.), երկու խաչքարեր (17-րդ դար), տապանաքար (1575 թ.), միջնադարյան կամուրջ:

Խորհրդային տարիներին գյուղը գտնվում էր Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմի մեջ:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ ազատագրվեց Արտաշավին:

1994 թ. մայիսին զինադադարի կնքումից հետո գյուղում հաստատվեցին Ադրբեջանից բռնագաղթած հայ ընտանիքներ և ՀՀ բնակավայրերից քաղաքացիներ:

1995 թ. բացվել է գյուղի միջնակարգ դպրոցը, որտեղ սովորում էր 27 աշակերտ, դասավանդում՝ 14 ուսուցիչ: 2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 35 աշակերտ: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Ռոբիկ Սիմոնյանը, Վոլոդյա Հարությունյանը, Վերա Խաչատրյանը:

2002 թ. դպրոցը անվանակոչվել է Արցախի հերոս, ՀՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանակիր Լեոնիդ Ազգալդյանի անունով:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, բուժկետ, դպրոց:

Արտաշավիում 2003 թ. կար 85 մարդ, 2010 թ.՝ 84 մարդ[1548], 2018 թ.՝ 29 տուն, 109 մարդ[1549]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1547] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 176:
[1548] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 489:
[1549] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

ԳԱՆՁԱ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Բերդաձոր գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Շալվա գետի ստորին հոսանքի աջափնյա բարձրադիր ձորալանջին:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հիմնականում հայաթափվել են:

Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում՝ Գանձակի պատմական անցյալի մանրամասների վերաբերյալ մեզ կցկտուր տեղեկություններ հասնեն:

19-րդ դարի սկզբներին Գանձակում հայտնվել էին քուրդ քոչվոր մի քանի ընտանիքներ: Հայերի արտահոսքը գյուղից ավելի մեծացավ:

Ըստ 1823 թ. Կամերալ ցուցակագրության, Գանձակում դեռևս 3 հայ ընտանիք էր ապրում[1550]:

Վերոհիշյալ ժամանակահատվածում գյուղը քրդերը անվանել էին Սեյիդլար: Այստեղ պահպանվել են քրդական ամենահին գերեզմանային հուշարձանները՝ ձիակերպ ու խոյաձև տապանաքարեր և դամբարաններ (19-20-րդ դարեր): Գերեզմանատանը թաղված են նաև սեյիդներ[1551]: Ամենայն հավանականությամբ գյուղը դրանից էլ ստացել էր Սեյիդլար անունը:

Մի քանի տասնամյակի ընթացքում Գանձայում հաստատված եկվորները հիմնականում ոչնչացրին հայկական պատմաճարտարապետական հուշարձանները: Այդ ամենով հանդերձ, որոշ հուշարձաններ, թեկուզ կիսավեր վիճակում, մեզ են հասել:

Գանձայում առայսօր պահպանվել է հայերի կողմից միջնադարում կառուցված աղբյուրի թաղակապ շինությունը: Գյուղից ոչ շատ մեծ հեռավորության վրա պահպանվում են Շալվա գետի վրա կառուցված միաթռիչք կամրջի մնացորդները: Գետի ափին պահպանվել են միջնադարյան ջրաղացների ավերակները:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին:

Սեյիդլարը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմում:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց: 1995 թ. սկսվեց գյուղի ազատագրման գործընթացը: Այստեղ հաստատվել են ՀՀ բնակավայրերից մի քանի ընտանիքներ: Գյուղը ստացավ Գանձա անունը:

[1550] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 491:

[1551] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 175; հմմտ. Расим Эфенди, Декоративно-прикладное исскуство Азербайджана, Баку, 1976, с. 36:

1996 թ. բացվել է Գանձայի քառամյա դպրոցը: 2002 թ. դպրոցը ստացել է միջնակարգի կարգավիճակ: 2015-2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 22 աշակերտ, դասավանդում՝ 9 ուսուցիչ[1552]: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Ա. Տոնոյանը, Հ. Հովհաննիսյանը:

Գանձա համայնքի կազմում ընդգրկված է նաև Բազմատուս գյուղը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Բնակավայրը ունի խմելու ջրագիծ:

Բջջային, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Գանձայում 2003 թ. կար 53 մարդ, 2010 թ.՝ 9 տուն, 40 մարդ[1553], 2015 թ.՝ 11 տուն, 58 մարդ[1554], 2018 թ.՝ 14 տուն, 66 մարդ[1555]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԲԱԶՄԱՏՈՒՍ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Բերդաձոր գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Շալվա գետի ստորին հոսանքի ձախափնյա ձորալանջին:

Բյուլուլդուզը Արցախի հնագույն բնակավայրերից է: 19-րդ դարի վերջերին ապրած հայագետներից Ս. Բահաթրյանը գտնում է, որ հնադարում Բյուլուլդուզի տարածքում հայկական քաղաք է եղել[1556]: Բնակավայրի մասին որոշ տեղեկություններ պահպանվել են նաև 16-17-րդ դարերի վիմագիր արձանագրություններում:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների ու քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել են:

Միջնադարում բարգավաճ Բյուլուլդուզի բնակչության կյանքը հայրենի հողի վրա անհնարին դարձավ: Մեկը մյուսի հետևից հայ ընտանիքները հեռացան մոտիկ և հեռու երկրներ: Ստեղծված պարապը լցվել էր թրքախոս քոչվորական կյանքով ապրող քրդական ցեղերով: Եկվորները բնակավայրը անվանակոչեցին Բազարդուզ:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված քրդերը հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները:

Այսօր գյուղում և նրա շրջակայքում տեսանելի են միջնադարյան եկեղեցիների, գերեզմանոցների, խաչքարերի, տապանաքարերի բեկորներ: Դրանք՝ որպես շինանյութ, եկվորները օգտագործել են՝ կառուցելու իրենց գոմերն ու տները:

[1552] Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Լեռնային Ղարաբաղի հանրապետության կրթական համակարգը (1991-2016 թթ.), հ. 3, էջ 608:

[1553] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1554] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 340:

[1555] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

[1556] «Նոր-Դար», հմ. 29, 1885:

Խորհրդային տարիներին այս տարածքները նվիրաբերվեցին ԱԽՍՀ-ին:

Բազմատուսը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմում:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

1995 թ. ՀՀ-ի բնակավայրերից մի քանի ընտանիքներ են հաստատվել երբեմնի բարգավաճ հայկական բնակավայրում: Գյուղը ստացավ Բազմատուս անունը, որը ներառված է Գանձա համայնքի կազմում:

2012 թ. գյուղում բացվել է միջնակարգ դպրոց, որի տնօրենն էր Հ. Եղիազարյանը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Բջջային և անլար հեռախոսակապն ու ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Բազմատուսում 2010 թ. կար 1 տուն, 4 մարդ[1557], 2015 թ.՝ 9 տուն, 37 մարդ[1558], 2018 թ.՝ 10 տուն, 43 մարդ[1559]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԳԵՏԱՄԵՋ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Պարսկանք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հակարի գետի ձախ ափի հարթավայրային մասում: Գյուղից ոչ մեծ հեռավորության վրա է գտնվում Իրանի Իսլամական հանրապետությունը:

Բնակավայրի անվան և պատմության վերաբերյալ աղբյուրներում առայսօր հիշատակություններ չեն հայտնաբերվել:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին այստեղ հաստատվել են եկվոր թրքախոս քրդերը: Բնաաշխարհագրական միջավայրի հարմարավետ պայմանները և հայկական նախկին բնակավայրերի առկայությունը հնարավորություն ընձեռեցին նրանց՝ արագ յուրացնելու նոր տարածքներ: Նախկինում գոյություն ունեցած հայկական բնակավայրը եկվորներն անվանել են Համզալի:

Բնակավայրում և նրա շրջակայքում եղած հայկական հուշարձանները տասնամյակների ընթացքում՝ մանավանդ խորհրդային տարիներին, իսպառ ոչնչացվեցին:

Խորհրդային տարիներին՝ 1923 թ., գյուղը ընդգրկվել էր Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ ԱԽՍՀ Ղուբաթլիի շրջանի կազմի մեջ:

Գյուղն ԱՀ Պաշտպանության բանակի կողմից ազատագրվել է 1993 թ. հոկտեմբերի վերջերին:

[1557] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1558] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 340:

[1559] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

1999 թ. փետրվարից սկսվեց գյուղի վերաբնակեցման գործընթացը: Այստեղ հաստատվել են Ադրբեջանից բռնագաղթված հայ ընտանիքներ և ՀՀ տարբեր մարզերից բնակիչներ: Գյուղը ստացավ Գետամեջ անունը:

2001 թվականից գյուղում գործում է միջնակարգ դպրոց: Գետամեջի դպրոցում սովորում են նաև հարևան Այգեկ գյուղի աշակերտները: 2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 36 աշակերտ: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Գարիկ Հովհաննիսյանը, Վիլիկ Մուրադյանը, Սվետա Մարգարյանը, Նաթելա Սարոյանը:

2016 թ. ապրիլյան պատերազմի օրերին գյուղի երիտասարդությունը անձնվիրաբար պաշտպանեց ԱՀ սահմանները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվում է գործող 25 անհատական ջրհորների միջոցով:

Համայնքի տարածքով է անցնում Գետամեջ ոռոգման ջրատարը:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Գետամեջը ունի գյուղապետարան, դպրոց, «Բերձոր երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ի Գետամեջի մասնաճյուղը, առնտրի 1 կետ:

Գետամեջում 2003 թ. կար 84 բնակիչ, 2010 թ.՝ 79 բնակիչ[1560], 2018 թ.՝ 30 տուն, 110 բնակիչ[1561]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԳԵՏԱՓ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Բաղք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հակարիի միջին հոսանքի աջափնյա հարթավայրում:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի, Նախիջևանի խաների ու քուրդ աշիրաթապետերի ձնշումների տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել են: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում՝ Գետափի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

19-րդ դարի սկզբներին լքված գյուղում հաստատվել էին թուրք և քուրդ քոչվոր մի քանի ընտանիքներ: Հայկական բնակավայրը նրանք անվանել էին Կարաաղաջ:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված թուրքերն ու քրդերը հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ:

[1560] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 492:

[1561] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

Մի քանի ջրաղացների ավերակներից բացի, որոնք նախկինում օգտագործվել են նաև եկվորների կողմից, մնացած հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին:

Գետափը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Ղուբաթլիի շրջանի կազմում:

1993 թ. հոկտեմբերի վերջերին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

1995 թ. սկսվեց գյուղի վերաբնակեցման գործընթացը: Այստեղ հաստատվեցին Ադրբեջանից բռնագաղթված և ՀՀ-ից տեղափոխված մի քանի ընտանիքներ:

Գյուղը ստացավ Գետափ անունը:

2011 թ. գյուղում բացվել է տարրական դպրոց, որը հանդիսանում է Սարատակի միջնակարգ դպրոցի մասնաճյուղը: Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական ջրհորների միջոցով:

Համայնքի տարածքով անցնող Գետափ-Սարատակ ոռոգման ջրատարները նպաստում են ինտենսիվ հողագործության զարգացմանը:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, բուժկետ, Սարատակի միջնակարգ դպրոցի Գետափի մասնաճյուղը, առևտրի 1 կետ:

Գետափում 2003 թ. կար 119 մարդ, 2010 թ.՝ 27 տուն 101 մարդ[1562], 2015 թ.՝ 34 տուն, 124 մարդ[1563], 2018 թ.՝ 31 տուն, 117 մարդ[1564]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԳՈՂԹԱՆԻԿ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Բերդաձոր գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Շալուայի և Հոչանցի ստորին հոսանքի միջագետքում:

Փիրիջան Արցախի հնագույն բնակավայրերից մեկն է: Նրա պատմական անունը մեզ չի հասել:

Փիրիջանում պատմամշակութային հուշարձաններ չեն պահպանվել, դրանք ավերվել են նախկինում գյուղում հաստատված թրքալեզու քրդերի կողմից:

[1562] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1563] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 342:
[1564] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին հայկական այս գյուղում հաստատված քրդերը խաչքարերն ու սրբատաշ քարերը իրենց տների համար որպես շինանյութ են օգտագործել: Գյուղամեջում տներից մեկի առաջին հարկի մուտքի շուրջ ագուցված են կոտրատված խաչքարեր: Դրանք արձանագիր են և ունեն 9-11-րդ դարերին բնորոշ խաչքարերին հատուկ զարդաձևեր[1565]:

Փոստատան ավերակի բակում թափված են հայկական գերեզմանքարերի բեկորներ, այդ թվում մեկը 1751 թ. տապանագրով: Կարելի է ենթադրել, որ գյուղի եկեղեցու հիմքերը մնացել են հենց փոստատան տակ[1566]:

Փիրջահան գյուղից 2,5 կմ հարավ-արևելք՝ Շալուա գետի վրա, պահպանվում են 17-րդ դարի կիսավեր սրբատաշ միաթռիչք կամրջի մնացորդները: Այս եզակի մնացորդներն էլ միջնադարում տվյալ տարածքում հայության ներկայությունը փաստող լուռ վկայություններ են:

Խորհրդային առաջին տարիներին Փիրջահանը գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմի մեջ:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ ազատագրվեց պատմական հայկական բնակավայրը:

1995 թ. այստեղ հաստատվեցին Ադրբեջանից բռնագաղթված ընտանիքներ, և ՀՀ բնակավայրերից քաղաքացիներ:

1995 թ. սեպտեմբերի 11-ից 7 աշակերտով սկսեց գործել Գողթանիկի միջնակարգ դպրոցը: 2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 28 աշակերտ: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Ալբերտ Տոնոյանը, Հրաչյա Բեյլերյանը, Արմինե Բարեյանը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է, խմելու ջրի համակարգը անհատական բնույթի է և սնվում է տարբեր բնական աղբյուրներից:

Ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, դպրոց:

Գողթանիկում 2003 թ. կար 98 մարդ, 2010 թ.՝ 79 մարդ[1567], 2018 թ.՝ 20 տուն, 103 մարդ[1568]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1565] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 174:
[1566] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 493-494:
[1567] Նույն տեղում, էջ 492:
[1568] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

ԴՐԱԽՏԱՁՈՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Բերձոր գավառում: Բնակավայրը տեղակայված է Հակարի գետի Հոչանց և Շալուա վտակների հատման միջանկյալ գետահովտում և փռված է Հոչանցի սարալանջին:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին այստեղ հաստատված թրքախոս քրդերը բնակավայրն անվանել են Ղոշասու, թարգմանաբար՝ երկու գետ:

Միջնադարում բնակավայրի գոյության մասին սկզբնաղբյուրներն առ այս պահը լռում են:

Գյուղից ոչ շատ մեծ հեռավորության վրա Հոչանց գետի աջ ափից 20 մ բարձրության բլրալանջին է գտնվում 9-րդ դարում կառուցված Կատոսավանքը: Նույն Դրախտաձորից 6 կմ հարավ-արևելք՝ Նորաբերդ հանդամասում՝ Հոչանցի ձորալանջին, պահպանվում են հնամենի անանուն բերդի ավերակները:

Վերոհիշյալ կառույցները վկայում են, որ խոր հնադարից Հոչանցի գետահովիտներում հայկական բնակավայրեր են եղել, որոնք քրդերի ներթափանցումներից հետո ոչնչացվել են:

Մեկ դար անց պատմական արդարությունը վերականգնվեց: 1993 թ. Արցախի պաշտպանության բանակը ազատագրեց Հոչանցի առափնյա շրջանները:

1996 թ. նոյեմբերի 7-ին ՀՀ-ի բանակվայրերից մի քանի ընտանիքներ հաստատվեցին Դրախտաձորում:

1997 թ. մարտի 11-ից գյուղում սկսել էր գործել քառամյա, այնուհետև միջնակարգ, իսկ այժմ՝ հիմնական դպրոցը: 2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 18 աշակերտ, դասավանդում՝ 14 ուսուցիչ: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Ռազմիկ Մամիկոնյանը, Գեղամ Գրիգորյանը, Արտակ Թամրազյանը, Արևիկ Դավթյանը:

Դրախտաձորի բանկիչների մի մասը մասնակցել է ինչպես Արցախյան ազատագրական, այնպես էլ 2016 թ. ապրիլյան պատերազմներին:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի համակարգը անհատական է և սնվում է տարբեր բնական աղբյուրներից:

Հեռուստատեսությունը, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Դրախտաձորի համայնքի կազմի մեջ է մտնում նաև Անի գյուղը:

Համայնքն ունի գյուղապետարան, հիմանական դպրոց:

Դրախտաձորում 2018 թ. կար 13 տուն, 61 բնակիչ[1569]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1569] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

ԼԵՌՆԱՀՈՎԻՏ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Աղահեճք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հոչանց գետի վերին հոսանքի աջ հովտի բարձրադիր սարահարթում:

Լեռնահովիտը Սյունիքի հնագույն բնակավայրերից մեկն է: Լեռնահովտից 2,5 կմ հարավ-արևմուտք՝ բարձրադիր բլրի գագաթին, պահպանվել են Ք. ա. 2-1-ին հազարամյակների կիկլոպյան ամրոցի ավերակներ: Ամրոցը բավականաչափ ընդարձակ տարածք է զբաղեցնում: Պատի երկարությունը 280 մ է, լայնությունը 110 մ, բարձրությունը 4-5 մ: Պարսպաշարից դուրս պահպանվել են մեծ ու փոքր սենյակների հետքերը[1570]:

Բնակավայրը՝ Եզնագոմեր անունով, իր տեղն է գտել Ստեփանոս Օրբելյանի կազմած Սյունիքի Աղահեճք գավառի Տաթևի 18 վանքապատկան գյուղերի ցանկում[1571]:

Միջնադարում Եզնագոմերը Աղավնո և Հոչանց գետերի վերին հոսանքի ամենամեծ բնակավայրն է եղել և Տաթևի վանքին առավելագույն պտղահարկ մուծողն էր:

Եզնագոմերի հյուսիսային թաղամասում պահպանվել է գյուղի երբեմնի տանտիրոջ կամ քահանայի երկսենյականոց տունը, որը 17-րդ դարի վերջերի և 18-րդ դարի սկզբների կառույց է համարվում:

Եզնագոմերում հաստատված թուրքերն ու քրդերը այս տանը տվել են «Ասլի Քյարամի քիլիսա» անունը[1572]:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի գյուղերը հայաթափվել էին:

19-րդ դարի կեսերին Եզնագոմերում հաստատվել էին թրքախոս քրդեր և բնակավայրը անվանափոխելով դարձրել Կարաքեշիշ:

Խորհրդային տարիներին Հոչանցի վերին հոսանքի շրջանում գտնվող գյուղերը Մոսկվայի բոլշևիկյան իշխանությունների կողմից նվիրաբերվեցին Ադրբեջանին: Այս անգամ էլ գյուղը ստացավ Լենինքյանդ անունը:

Մի քանի տասնամյակի ընթացքում բնակավայրում հաստատված թուրքերն ու քրդերը հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքների մեծ մասը: Այդ ամենը՝ որպես շինանյութ, նրանք օգտագործել են իրենց տների և գոմերի կառուցման համար:

1923 թ. Լենինքյանդը գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմի մեջ:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

[1570] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 499:

[1571] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, հավելված, Երևան, 1942, էջ 42:

[1572] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 128:

1995 թ. վերջերին և 1996 թ. սկզբներին ՀՀ բնակավայրերից մի քանի ընտանիքներ հաստատվեցին ազատագրված գյուղում:

Բնակավայրը վերստին ստացավ իր պատմական Եզնագոմեր անվանումը: 2013 թ. այն վերանվանվել էր Լեռնահովիտ:

1998 թ. գյուղում գործում է միջնակարգ դպրոց: 2013 թ. դպրոցական շենքը հիմնանորոգվել է ամերիկահայ բարերարներ Միսակ և Ազնիվ Տատրյանների կողմից: Դպրոցը անվանակոչվել է բարերարների անունով: 2015–2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 42 աշակերտ, դասավանդում՝ 14 ուսուցիչ:

Լեռնահովիտի միջնակարգ դպրոց են հաճախում նաև համայնքի կազմի մեջ ընդգրկված Շրվական և Սպիտակաջուր գյուղերի աշակերտները:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Հ. Հայրապետյանը, Ն. Կնյազյանը, Խ. Խաչատրյանը, Յու. Պողոսյանը, Ղ. Սիրունյանը, Վ. Թադևոսյանը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական կարգով՝ տարբեր բնական աղբյուրների հաշվին:

Անլար ու բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, դպրոց:

Լեռնահովիտում 2003 թ. կար 41 մարդ[1573], 2018 թ.՝ 15 տուն, 55 մարդ[1574]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՍՊԻՏԱԿԱՋՈՒՐ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Աղահեճք գավառում: Սպիտակաջուրը Հոչանց գետի ջրահավաք ավազանի ամենաբարձրադիր բնակավայրն է: Ծովի մակարդակից գյուղի բարձրությունը հասնում է 1780–1850 մետրի:

Սպիտակաջուրը Սյունիքի հնագույն բնակավայրերից մեկն է: Գյուղի մասին մեզ տեղեկություններ է հաղորդել 13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը: Այդ պատմափոլում գյուղը կրում էր Ակունք անունը[1575]:

17–18-րդ դարերում գյուղը շարունակում է պահպանել Սպիտակաջուր անունը: Ամենայն հավանականությամբ բնակավայրն այդ անունը ստացել էր Սպիտակաջրից անմիջապես ներքև՝ Հոչանցի 40 մետրանոց ջրվեժի անունից, որը հեռվից նայողի վրա սպիտակ ջրի տպավորություն է թողնում:

[1573] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 498:
[1574] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:
[1575] Ժամանակագրութիւն Ստեփանոսի Օրբէլեանի, էջ 42:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը, այդ թվում՝ Սպիտակաջուրը, հայաթափվել են:

19-րդ դարի սկզբներին գյուղում հաստատվել են քուրդ քոչվոր մի քանի ընտանիքներ: Հայկական բնակավայրը նրանք թարգմանաբար անվանել են Աղբուլաղ: Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված քրդերը հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները:

Ուսումնասիրողներից Ալեքսան Հակոբյանը, գտնում է, որ գյուղի եկեղեցու հիմքերի վրա քրդերը գոմ են կառուցել, որի փլված պատի մեջ ագուցված խաչքարերի ու տապանաքարերի կտորներն այսօր տեսանելի են: 16-րդ դարի երկու տապանաքարերի վրա էլ պահպանվել են հայերեն արձանագրություններ[1576]:

Հոչանցի վրա տեսանելի է նաև մի քանի ջրաղացների ավերակներ:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին:

Սպիտակաջուրը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Զանգելանի շրջանի կազմում:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

1998 թ. այստեղ, որպես վերաբնակներ, հաստատվել են ՀՀ բնակավայրերից, մասնավորապես Սյունիքի մարզից, մի քանի ընտանիքներ: Գյուղը նորից ստացավ Սպիտակաջուր անունը:

Բնակավայրը ընդգրկված է Լեռնահովտի համայնքի կազմում: Գյուղի աշակերտները սովորում են Լեռնահովտի միջնակարգ դպրոցում:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական կարգով՝ բնական աղբյուրների հաշվին: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են: Սպիտակաջրում 2010 թ. կար 8 տուն, 28 բնակիչ[1577], 2015 թ.՝ 11 տուն, 458 բնակիչ[1578], 2018 թ.՝ 12 տուն, 36 բնակիչ[1579]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՇՐՎԱԿԱՆ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Աղահեճք գավառում: Շրվականը տեղաբաշխված է Հոչանցի վերին հոսանքի աջափնյակի բարձրադիր վայրում:

[1576] Յակոբեան Ա., Պատմա-աշխարհագրական և վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 354–356:
[1577] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1578] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 346:
[1579] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

Շրվականը Սյունիքի հնագույն բնակավայրերից է:

Շրվականից 1 կմ հեռավորության վրա գտնվող Արվական գյուղի շրջակայքի դամբարանների 1980-ական թվականներին պեղումների ժամանակ հայտնաբերվել են ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններին (13-12-րդ դարեր) վերաբերող նյութեր[1580]:

Տաթևի վանքին պտղահարկ մուծող գյուղերի շարքում 13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը ներկայացրել է նաև Շրվական գյուղը[1581]:

Ս. Կարապետյանի կարծիքով նախախորհրդային շրջանի քարտեզներում հիշատակված Շարքյար, Շեվաքար կամ Շվաքար անունները համատեղելի են Շրվականի հետ[1582]:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել են:

19-րդ դարի սկզբներին ամայության մատնված գյուղում հաստատվել էին քուրդ խաշնարած մի քանի ընտանիքներ: Հայկական գյուղը նրանք անվանել են Շեյլանի:

Մի քանի տասնամյակի ընթացքում եկվորները հիմնականում կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Գյուղից հյուսիս՝ Հոչանց գետի վրա, պահպանվել է 12-13-րդ դարերի միաթռիչք կամուրջը: Շրջակայքում տեսանելի են նաև միջնադարյան հայկական անանուն գյուղերի և գերեզմանոցների մնացորդները:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին: Շրվականը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմում:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

1998 թ. ՀՀ բնակավայրերից մի քանի ընտանիքներ վերաբնակվել են հնագույն հայկական այս բնակավայրում: Գյուղը նորից ստացավ իր պատմական Շրվական անունը:

Գյուղի աշակերտները սովորում են Լեռնահովիտի միջնակարգ դպրոցում:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական կարգով՝ բնակավայրում եղած բնական աղբյուրների հաշվին:

Բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելիս են:

[1580] Алиев А., Исследования в Лачинском районе, Археологические открытия 1980 г., Москва, 1981, с. 414 հմմտ.; Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 159:

[1581] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 42:

[1582] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 159:

Շրվականում 2010 թ. կար 8 տուն, 27 բնակիչ[1583], 2015 թ.՝ 7 տուն, 24 բնակիչ[1584], 2018 թ.՝ 5 տուն, 19 բնակիչ[1585]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԵՐԻՑՎԱՆՔ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Կովսական գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հակարի գետի ստորին հոսանքի աջափնյա հարթավայրային մասում: Գյուղի հարևանությամբ է գտնվում Արաքսի ջրամբարն ու Իրանի Իսլամական հանրապետությունը:

Գյուղի վաղանցյալ ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ սկզբնաղբյուրները լռում են:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարում թուրքերին ու թրքախոս քրդերին հաջողվել է հայերին դուրս մղել Հակարիի ստորին հոսանքի բարեբեր տարածքներից: Թուրքերն ու քրդերը, հայտնվելով վերոհիշյալ տարածքներում, նախկին այգիներն ու դաշտերը ավերեցին, դարձրին արոտավայրեր: Քայլ առ քայլ նրանք անցան նստակեցության և հաստատվեցին հայկական բնակավայրում:

Եկվորները հայկական բնակավայրը անվանափոխեցին Ալիբեյլի: Ժամանակի ընթացքում նրանք ավերեցին բնակավայրի պատմաճարտարապետական հուշարձանները:

Խորհրդային տարիներին Ալիբեյլին գտնվում էր Կարմիր Քուրդիստանի, իսկ 1930 թ.՝ Զանգելանի շրջանի կազմի մեջ:

1993 թ. հոկտեմբերի վերջերին և նոյեմբերի սկզբներին ԱՀ Պաշտպանության բանակի ստորաբաժանումների հարվածների տակ ազատագրվեց պատմական հայկական բնակավայրը:

1997 թ. այստեղ հաստատվեցին Ադրբեջանից բռնագաղթված մի քանի հայ ընտանիքներ և ՀՀ բնակավայրերից քաղաքացիներ: Վերաբնակներից 30 հոգի արցախյան շարժման և պատերազմի մասնակիցներ են: Գյուղը անվանափոխվեց Երիցվանք:

1998 թ. հոկտեմբերի 11-ից 20 աշակերտով և 9 ուսուցչով սկսեց գործել գյուղի միջնակարգ դպրոցը: 2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 55 աշակերտ, դասավանդում՝ 16 ուսուցիչ: Դպրոցական շենքը երկհարկանի է, հիմնանորոգվել է 2001 թ.: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են եղել Հ. Ամալյանը, Գ. Սարոյանը, Բ. Այվազյանը, Ա. Ջանջուղազյանը, Թ. Խնկոյանը, Վ. Սաֆյանը:

[1583] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1584] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 346:

[1585] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

Գյուղը էլեկտրաֆիկացված է, խմելու ջրի հարցը լուծվել է անհատական ջրհորների միջոցով:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, դպրոց, առևտրի 1 կետ:

Երիցվանք համայնքի կազմում ընդգրկված են Ամիրյան, Երվանդակերտ և Կրմեն գյուղերը: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

Երիցվանքում 2002 թ. կար 143 բնակիչ, 2010 թ.՝ 175 մարդ[1586], 2018 թ. 53 տուն, 204 բնակիչ[1587]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԱՄԻՐՅԱՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Կովսական գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հակարի գետի ստորին հոսանքի աջափնյա հարթավայրում: Բնակավայրից ոչ շատ մեծ հեռավորության վրա է գտնվում Իրանի իսլամական հանրապետությունը:

18-րդ դարի սկզբներին Ամիրյանը գտնվում էր Սյունիքի իշխանության Գիլաբերդ գավառում:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի և Նախիջևանի խաների ու քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել էին: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում՝ Ամիրյանի պատմական անցյալի մանրամասներն և անգամ անունը մոռացության մատնվեն:

Բերրի և ջրարբի հողերի վրա աչք տնկած թուրք և քուրդ խաշնարած ցեղերի ներկայացուցիչները տեր դարձան հայերի տներին ու ունեցվածքին: Նրանք գյուղին տվեցին Սարալի անունը:

Մի քանի տասնամյակի ընթացքում եկվորները հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ: Այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին:

Ամիրյանը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Զանգելանի շրջանի կազմում:

1993 թ. հոկտեմբերի վերջերին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

[1586] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 495-496:

[1587] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

Գյուղի վերաբնակեցման գործընթացը սկսվել է 1999 թվականից: Այստեղ ՀՀ բնակավայրերից հաստատվեցին մի քանի ընտանիքներ: Ազատագրված գյուղը ստացավ Ամիրյան անունը:

Ամիրյանը ընդգրկված է Երիցվանք համայնքի կազմում:

Գյուղի երեխաները սովորում են Երիցվանքի միջնակարգ դպրոցում:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական ջրհորների միջոցով:

Հեռուստատեսությունը, բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Ամիրյանում 2010 թ. կար 3 բնակիչ[1588], 2015 թ.՝ 10 տուն, 34 բնակիչ[1589], 2018 թ.՝ 7 տուն, 25 բնակիչ[1590]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԿՐՄԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Կովսական գավառում: Կրմենը տեղաբաշխված է Հակարիի ստորին հոսանքի աջափնյա հարթավայրում և վերոհիշյալ գետի ափամերձ գյուղերից Իրանի Իսլամական հանրապետության ամենամոտ բնակավայրն է համարվում:

18-րդ դարի սկզբներին Կրմենը գտնվում էր Սյունիքի իշխանության Գիլաբերդ գավառում:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի, Նախիջևանի խաների և քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել են: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում՝ Կրմենի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

19-րդ դարի սկզբներին ամայության մատնված գյուղում հաստատվել էին թուրք և քուրդ քոչվոր մի քանի ընտանիքներ: Հայկական գյուղը նրանք անվանել էին Խումարլի: Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված թուրքերն ու քրդերը հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ: Այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին: Խումարլին 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի կազմում, իսկ 1930 թ.՝ Զանգելանի շրջանի կազմում:

[1588] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 496:

[1589] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 347:

[1590] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

1993 թ. հոկտեմբերի վերջերին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

1999 թ. ՀՀ բնակավայրերից մի քանի ընտանիքներ վերաբնակիչների կարգավիճակով հաստատվեցին ազատագրված գյուղում: Բնակավայրը ստացավ Կրմեն անունը: Գյուղն ընդգրկված է Երիցվանքի համայնքի կազմում:

Կրմենը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական ջրհորների միջոցով:

Հեռուստատեսությունը, բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Կրմենում 2003 թ.՝ կար 26 բնակիչ, 2010 թ.՝ 23 բնակիչ[1591], 2015 թ.՝ 10 տուն, 45 բնակիչ[1592], 2018 թ.՝ 11 տուն, 41 բնակիչ[1593]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԻՇԽԱՆԱՁՈՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Պարսկանք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հակարի գետի ձախ ափին հարթավայրային մասում: Բնակավայրը աչքի է ընկնում գեղատեսիլ բնությամբ: Գյուղից ոչ շատ մեծ հեռավորության վրա է գտնվում Իրանի Իսլամական հանրապետությունը:

Բնակավայրի անվան և պատմության վերաբերյալ սկզբնաղբյուրներում առայսօր հիշատակություններ չեն հայտնաբերվել:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին թրքախոս քրդերին հաջողվեց հայերին դուրս մղել Արաքսի ափամերձ տարածքներից:

Բնաշխարհագրական միջավայրը հարմարավետ էր, և հայկական նախկին բնակավայրերի առկայությունը հնարավորություն ընձեռեց նրանց՝ արագ յուրացնելու նոր տարածքներ: Նախկինում գոյություն ունեցած հայկական բնակավայրը եկվորները անվանել էին Խանլրդ:

Բնակավայրում և նրա շրջակայքում եղած հայկական հուշարձանները նրանց բնակարանների և օժանդակ շինությունների կառուցման համար շինանյութ դարձան:

Խորհրդային տարիներին՝ 1930 թ., գյուղն ընդգրկված էր ԱԽՍՀ Ղուբաթլիի շրջանի կազմի մեջ: Գյուղն ԱՀ Պաշտպանության բանակի կողմից ազատագրվել է 1993 թ. հոկտեմբերի վերջերին:

[1591] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1592] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 347:
[1593] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

1998 թ. դեկտեմբերից սկսվեց գյուղի վերաբնակեցման գործընթացը: Այստեղ հաստատվեցին Ադրբեջանից բռնագաղթված հայ ընտանիքներ և ՀՀ տարբեր մարզերից բնակիչներ: Գյուղը ստացավ Իշխանաձոր անունը:

2000 թ. սեպտեմբերից Իշխանաձորում գործում է Հովհաննես Թումանյանի անվան միջնակարգ դպրոցը: Այն ունի եռահարկ շենք: 2017 թ. ԱՀ կառավարության «Քաշաթաղ» բարեգործական հիմնադրամի և «Հայրենասեր» կազմակերպության ջանքերով դպրոցական շենքը վերանորոգվել և կահավորվել է նոր գույքով:

2017 թ. սեպտեմբերին դպրոցի մասնաշենքում բացվել է Շուշիի տեխնոլոգիական համալսարանին կից գործող քոլեջի մասնաճյուղ, որտեղ սովորում են 13 ուսանողներ:

2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 107 աշակերտ, աշխատում՝ 26 ուսուցիչ և տեխնիկական անձնակազմի անդամներ: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Վ. Ֆրանգուլյանը, Վ. Մուրադյանը, Խ. Միքայելյանը, Ն. Եղիկյանը:

Իշխանաձորի զարգացման նպատակով նոր թաղամասում «Քաշաթաղ» բարեգործական հիմնադրամի և ԱՀ կառավարության հովանավորությամբ կառուցվել են բնակարաններ և 2016 թ. օգոստոսին հանձնվել շահառուներին՝ նորաստեղծ և բազմանդամ ընտանիքներին:

Տնտեսության զարգացման նպատակով կառուցվել են Իշխանաձոր-1, Իշխանաձոր-2, Իշխանաձոր-Աջափնյա ոռոգման ջրատարները, բացվել բուժամբուլատորիա, մեքենատրանսպորտային կայան, «Ջրմուղ» ՓԲԸ-ն: Կառուցվում են նոր թռչնաբուծարան ու խոզաբուծարան:

Գյուղն էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է գործող անհատական 40 ջրհորների միջոցով:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, բուժկետ, դպրոց, Անդրանիկ Զոհրաբյանի անվան մինի ֆուտբոլի մարզադաշտ, խաղահրապարակ, Բերձորի սպորտի և արվեստի դպրոցների՝ պարի, կերպարվեստի և դաշնամուրի խմբակներ, առևտրի 3 կետեր:

Իշխանաձորում 2003 թ. կար 211 մարդ, 2010 թ.՝ 155 մարդ[1594], 2018 թ.՝ 101 տուն, 376 բանակիչ[1595]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1594] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 497:
[1595] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

ԾԱՂԿԱԲԵՐԴ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ պատմական Քաշունիքում: Բնակավայրը տեղակայված է Հակարի գետի միջին հոսանքի աջ ափին: Գյուղի տարածքի հյուսիսային մասով է հոսում Կուռաթի գետը, որը սկիզբ է առնում ՀՀ սահմաններից և գալիս թափվում է Հակարի գետը: Վերոհիշյալ գետի վտակներից է համարվում Ծաղկաբերդ գետակը, որը, սկիզբ առնելով ՀՀ Սյունիքի մարզի Խնձորեսկ գյուղի մոտակայքից և հատելով Ծաղկաբերդ համայնքի տարածքի հարավարևմտյան մասը, հասնում է Հակարիին:

Ծաղկաբերդի հարավարևմտյան հատվածում է գտնվում միջնադարյան Քրոնք եկեղեցին իր կողքի բնակատեղիներով, որտեղ նախկինում հայեր են ապրել: Մինչև 19-րդ դարի սկզբները այդ բնակավայրերը լիովին հայաթափվել են՝ այդպես էլ ժամանակի ընթացքում մոռացության մատնելով հայկական անունները: Առայսօր հայագետների կողմից վերոնշյալ բնակավայրերի վերաբերյալ նյութեր չեն հայտնաբերվել: Դրա փոխարեն պահպանվել են քրդերի կողմից կատարված անվանափոխությունները: Դրանք են Ռաֆի, Թյուրքլար, Քուրդալի, Աբբասղլաղ, Մազմազակ, Վերին Մազմազակ բնակատեղիները[1596]:

Ստեփանոս Օրբելյանն իր աշխատության մեջ հիշատակում է Քրոնից վանքի և Տաթևի վանքապատկան գյուղերի ցանկում Հաբանդ գավառի Քրվանք գյուղի մասին[1597]: Ամենայն հավանականությամբ Քրվանք գյուղը վերոնշյալ բնակատեղիներից մեկն է: Քրվանից եկեղեցու հարևանությամբ կան քարանձավներ, որոնք ժամանակին անվանել են Ձորս Հայքարա[1598]: Ընդհանուր առմամբ տարածաշրջանին բնորոշ էին քարանձավային բնակավայրերն ու ապաստարանները:

Արցախյան պատերազմի տարիներին Գիլաբերդը վեր էր ածվել ռազմական հենակետի, որտեղից ադրբեջանական ուժերը հարձակումներ էին գործում ՀՀ և ԱՀ բնակավայրերի վրա:

Պատերազմի տարիներին գյուղը 3 անգամ ձեռքից ձեռք է անցել, սակայն վերջնականապես ազատագրվել է 1993 թ. օգոստոսի 28-ին:

1994 թ. սկսվել է գյուղի վերաբնակեցումը: Գյուղը ստացավ Ծաղկաբերդ անունը: Վերականգնվեց բնակավայրի հայաշունչ կերպարանքը: Շուտով այն դարձավ Քաշաթաղի զարգացող համայնքներից մեկը:

Արցախյան ազատագրական պատերազմին մասնակցել են 10, իսկ 2016 թ. ապրիլյան մարտական գործողություններին՝ 28 ծաղկաբերդցիներ:

[1596] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 184:
[1597] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 36:
[1598] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 502:

Արցախյան պատերազմի տարիներին Ծաղկաբերդի տարածքը ազատագրելու ժամանակ զոհված ազատամարտիկների հիշատակին Հակարիի ձախ ափին կառուցվել է Սուր-Մելիք աղբյուրը, իսկ դեպի Բերձոր տանող ճանապարհին տեղադրվել է հուշարձան: Առայսօր գյուղը ունեցել է 3 համայնքապետեր՝ Վլադիկ Թոխունցը, Սուրեն Նավասարդյանը և Ազատ Եղոյանը: Վերջինս ԱՀ ԱԺ 3-րդ գումարման պատգամավոր է եղել:

1997 թ. հիմնադրվել է Ծաղկաբերդի միջնակարգ դպրոցը: 2003 թ. կառուցվել է նոր դպրոցական շենքը: Դպրոցը կրում է Աշոտ Նավասարդյանի անունը: 2015 թ. դպրոցի բակում տեղադրվել է «Նիկոլ Դուման» ջոկատի զոհված տղաների հիշատակին նվիրված խաչքարը:

2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 49 աշակերտ, դասավանդում՝ 17 ուսուցիչ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Սամվել Սեդրակյանը, Վարդիթեր Պետրոսյանը, Ռիմա Բաբաջանյանը:

Ծաղկաբերդի պատմամշակութային նշանակության հուշարձաններ են Քրոնք ժայռափոր եկեղեցին (12-13-րդ դարեր), Կոտրած կամուրջը (17-18-րդ դարեր), քարանձավ:

Ծաղկաբերդը էլեկտրաֆիկացված է: Չունի ջրագիծ, բայց գործում են 40 անհատական ջրհորներ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, մշակույթի տուն, դպրոց, առևտրի 1 կետ: Ծաղկաբերդ համայնքի կազմում ընդգրկված է Մարաթուկ գյուղը:

Ծաղկաբերդում 2018 թ. կար 56 տուն, 206 բնակիչ[1599]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Երիտասարդների մի մասն էլ աշխատում է «Հելո Թրանս» միջազգային կազմակերպությունում՝ որպես ականազերծող: Վերջին տարիներին ականներից մաքրվել են գյուղի հարակից տարածքները: Դա ինքնին նպաստում է գյուղատնտեսության զարգացմանը:

ՄԱՐԱԹՈՒԿ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Բերդաձոր գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հակարիի միջին հոսանքի ձախափնյա բլրապատ մասում:

Մարաթուկը Արցախի հնագույն բնակավայրերից է:

[1599] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

Ներկայիս գյուղը համադրելի է 7-րդ դարի պատմիչ Մովսես Կաղանկատվացու պատմության մեջ տեղ գտած Հակարի բնակավայրի հետ[1600]: Արաբական աղբյուրներում բնակավայրը ներկայացված է Ախար անունով[1601]:

Ուսումնասիրողներից Ա. Հակոբյանը որպես Հակարիի նախանվանում ներկայացնում է Մարաթուկ բնակավայրը, որն էլ եկվորները աղավաղել, դարձրել են Մուրադխանլի[1602]: Գյուղից 3 կմ հյուսիս-արևելք՝ լեռնագագաթին, գտնվում են միջնադարյան բերդի և մատուռի ավերակները: Բնակավայրը հայտնի է Ղալալի անվամբ[1603]:

Ս. Սարգսյանի կարծիքով Ղալալին նույն Քարալի կամ Կառնակաշ ամրոցն է, որի մասին խոսում է նաև Մ. Կաղանկատվացին[1604]:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քուրդ ցեղապետերի ձնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել էին:

19-րդ դարի սկզբներին հայկական բնակավայրում հաստատվել էին թրքախոս քուրդ խաշնարած մի քանի ընտանիքներ: Գյուղը նրանք անվանեցին Մուրադխանլի: Կարճ ժամանակահատվածում եկվորները հիմնականում ավերել են հայկական պատմամշակութային արժեքները:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին: Գյուղը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Ղուբաթլիի շրջանի կազմում:

1993 թ. ԱՀ պաշտպանության բանակի հարվածների տակ բնակավայրը ազատագրվեց: 1996 թ. այստեղ հաստատվել են ՀՀ բնակավայրերից մի քանի ընտանիքներ:

Մարաթուկը ընդգրկված է Ծաղկաբերդի համայնքի կազմում: Գյուղի աշակերտները սովորում են Ծաղկաբերդի միջնակարգ դպրոցում: Մարաթուկը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական ջրհորների միջոցով:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Մարաթուկում 2010 թ. կար 5 տուն, 14 բնակիչ[1605], 2015 թ.՝ 5 տուն, 18 բնակիչ[1606], 2018 թ.՝ 5 տուն, 18 բնակիչ[1607]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1600] Մ. Կաղանկատվացի, էջ 256:

[1601] Хамдаллах Казвини, Нузхат ал-Кулуб, с. 59.

[1602] Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 162:

[1603] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 198:

[1604] Մ. Կաղանկատվացի, էջ 256; Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 161:

[1605] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1606] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 350:

[1607] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

ԾԻԾԵՌՆԱՎԱՆՔ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Աղահեճք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Աղավնո գետի աջակողմյան հատվածում՝ Խոզնավար ու Բայանդուր վտակների միախառնման վայրում՝ գլխավոր մայրուղուց 12 կմ հեռավորության վրա: Գյուղը շրջապատված է ոչ խիտ անտառներով:

Ծիծեռնավանքը Սյունիքի հնագույն բնակավայրերից է: Գյուղը վաղ միջնադարից նշանավոր էր իր հռչակավոր Ծիծեռնավանք տաճարով: 13-րդ դարում Ստեփանոս Օրբելյանը Սյունյաց միտրոպոլտության 10 նշանավոր վանքերն ու անապատները թվարկելիս հիշատակել է նաև Ծիծեռնավանքը[1608]: Եկեղեցու մոտ գտնվող Ծիծեռնավանք բնակավայրը, պատմիչի վկայությամբ, Տաթևի վանքի հարկատու գյուղերից էր և տարեկան վճարում էր 10 արծաթ[1609]:

Գյուղի նշանավոր կոթողի՝ Ծիծեռնավանքի, մանրակրկիտ ուսումնասիրությունների արդյունքում հետազոտողները այն եզրահանգումն են կատարել, որ եկեղեցին նախկինում ծառայել է որպես հեթանոսական տաճար: Վանքը ուսումնասիրել են Ե. Լալայանը, Մ. Հասրաթյանը, Ս. Կարապետյանը, Ալ. Հակոբյանը, Հ. Սիմոնյանի գլխավորած հնագիտական արշավախումբը: Եկեղեցու շինարարությունը փաստող վիմագրեր չեն հայտնաբերվել:

Ճարտարապետական շինության քննությունից պարզապես ենթադրվում է, որ այն կառուցվել է 4-5-րդ դարերում: 13-րդ դարի պատմագիր Վարդան Արևելցին իր «Աշխարհացոյց» երկում եկեղեցին հիշատակել է Ծիծռան, Ծիծեռու, Ծիծառնայ, Ծիծռավանք, Ծիծռանավանք անուններով[1610]:

Տարբեր ուսումնասիրողներ Ծիծեռնավանք տեղանվան իմաստը մի դեպքում կապում են ծիծեռնակի պաշտամունքի, մեկ այլ պարագայում էլ Պետրոս առաքյալի ձկույթի՝ ծիծեռնի հետ, որն իբր պահվել է վանքում[1611]:

Ավանդությունն ասում է, որ Հոչանց գյուղի մելիք Թումանը շարունակ նեղացրել է քահանային: Մելիքից ազատվելու համար վերջինս անեծքաթուղթ է գրում, գցում Թումանի սենյակը և փախչում Հոռմ: Այդ անեծքաթղթի ուժով մելիքը զրկվում է հարստությունից, կորցնում կնոջը և որդիներին: Հասկանալով իր կատարած սխալը, մելիքը գնում է Հոռմ՝ քահանայից թողություն խնդրելու: Սակայն Հոռմում նրան ասում են, որ քահանան վախճանվել է: Հուսահատված մելիքը Հոռմի վանքերից մե-

[1608] Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1861, գլ. ՀԱ, էջ 365:

[1609] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 399:

[1610] Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, քննական հրատ. Հ. Պերպերեանի՝ համեմատութեամբ 24 ձեռագրի և տպագրի, Փարիզ, 1960, էջ 12:

[1611] Ալիշան Ղ., Սիսական, էջ 268; Լալայան Ե., Զանգեզուր, նյութեր ապագա ուսումնասիրության համար, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1898, հմ. 2, գիրք Դ, էջ 18, 46-48; Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 192:

կում աշխատում է լուսարար և մշտապես աղոթում իր հոգու փրկության համար: Ժամանակ անց, այլ ելք չտեսնելով, մելիքը կծում է Պետրոս առաքյալի մասունքներից ծիծեռնը (ձկույթ) և պահում բերանում: Քահանաները ուզում են մելիքի բերանից հանել մասունքը, իրեն էլ սպանել, սակայն Սեղանից մի ձայն է լսվում, որն ասում է «Մի մերձենաք մելիքին»: Մելիքը մասունքը անվտանգ հասցնում է Սյունիք, որտեղ վանք է կառուցում, այնտեղ էլ ամփոփում Պետրոս Առաքյալի ծիծեռնը[1612]:

Ուսումնասիրողներից Ս. Սարգսյանի կարծիքով «Ծիծեռնավանք ասելով պետք է հասկանալ որպես «Սիսար» տարածաշրջանի (գավառի, վարչական տարածքի) վանք, հոգևոր առաջնորդարան: [1613]»

17–18–րդ դարերում վանքը վերանորոգել է Մելիք Հայկազը և մինչև 18–րդ դարի վերջը այն գործող էր: Եկեղեցին վերանորոգվել է նաև 1999–2001 թթ. և վերանվանվել Սբ. Գևորգ:

18–րդ դարի վերջերին և 19–րդ դարի սկզբներին Ղարաբաղի խանի և քրդական ցեղերի ճնշումների տակ տարածաշրջանի բնակավայրերը, այդ թվում Ծիծեռնավանքը, սկսել են հայաթափվել:

19–րդ դարի կեսին հայկական գյուղում հաստատվել էին քուրդ մի քանի ընտանիքներ: Ըստ Ս. Կարապետյանի՝ 19–րդ դարի վերջին հինավուրց գյուղն արդեն հայտնի էր Զեյվա անունով[1614]: Ուսումնասիրողներից Ալեքսան Հակոբյանը, չկիսելով վերոնշյալ կարծիքը, գրել է. «Մինչև 1906 թ. կիսով չափ հայաբնակ եղած Զէյվան գտնւում է Աղաւնոյ վտակի ձախ (հիւսիսային) բարձրադիր լանջին՝ վանքից ուղիղ գծով 3–4 կմ հեռաւորութեան վրայ: Իսկ Ծիծեռնավանք վերաշենացուած գիւղը՝ Աղաւնոյի աջ ափին, ուր այժմ բնակվում է 30 ընտանիք, ԺԹ դ. լինելով քրդաբնակ, յորջորջուել է Քեօսալար, իսկ խորհրդային տարիներին, մինչև ազատագրումը՝ Գիւսուլու»[1615]:

20–րդ դարասկզբի վիճակագրական տվյալների համաձայն այնտեղ բնակվում էին 100 տուն քրդեր և 25 տուն հայեր[1616]:

Ա–Դո–ի վկայությամբ այս գյուղը նույնպես տուժել է 1905–1906 թթ. հայ–թաթարական ընդհարումների ժամանակ՝ ունենալով 5 զոհ: Գյուղի հայազգի բնակչությունը կողոպտվելուց ու գույքը կորցնելուց հետո այլևս չի վերադարձել:

Փաստորեն այդ ժամանակ էլ գյուղը լիովին հայաթափվել էր:

[1612] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 503:

[1613] Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 142:

[1614] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 141; Սիմոնյան Հ., Սանամյան Հ., Ծիծեռնավանք, Հայոց սրբերը և սրբավայրերը, Երևան, 2001, էջ 202:

[1615] Յակոբեան Ալ., Պատմա–աշխարհագրական և վիմագրագիտական հետազոտութիւններ, էջ 134–135:

[1616] Ա–Դո, նշվ. աշխ., էջ 262:

1923 թ. Գյուսուլու գյուղը գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմում:

ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ 1992 թ. գյուղը ազատագրվել է: Բնակավայրը վերաբնակեցվել է 1994 թ. հետո: Այդտեղ հաստատվել են Կոտայքի մարզի Նոր Հաճն քաղաքից և Մրգաշեն գյուղից մի քանի ընտանիքներ: Գյուղը վերստացել է Ծիծեռնավանք անունը:

Բնակավայրում 1995 թ. հոկտեմբերի 15–ին դպրոց է բացվել: 2019–2020 ուսումնական տարում դպրոցում սովորում է 29 աշակերտ: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Գ. Հովսեփյանը և Ջ. Գրիգորյանը:

Համայնքը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական եղանակով գյուղում գտնվող աղբյուրների հաշվին:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, դպրոց, բուժկետ, առևտրի 1 կետ: Ծիծեռնավանք համայնքի կազմում ընդգրկված են նաև Մելիքաշեն, Տանձուտ և Արահոծ գյուղերը:

Ծիծեռնավանքում 2010 թ. կար 28 տուն, 111 բնակիչ[1617], 2018 թ.՝ 21 տուն, 79 բնակիչ[1618]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՄԵԼԻՔԱՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Աղահեճք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Աղավնոյի ստորին հոսանքի ձախափնյա բլրապատ հատվածում՝ նշանավոր Ծիծեռնավանքից 2 կմ հարավ–արևելք:

Արքուգետ անունով գյուղի մասին առաջին անգամ հիշատակել է 7–րդ դարի պատմիչ Մովսես Կաղանկատվացու պատմության շարունակող Մովսես Դասխուրանցին: Պատմիչը ասում է, որ 846 թ. խազարները արշավում են Սյունիք, գրավում Բաղքը և հասնում Աղահեճք գավառի Արքուգետ ավանը և ավերում Սուրբ Գրիգորի անունը կրող եկեղեցին[1619]:

Ուսումնասիրողներից Ս. Սարգսյանը գտնում է, որ վերոհիշյալ բնակավայրը անվանվել է նաև Քաշաթաղ: Բնակավայրը իշխանանիստ է եղել և հանդիսացել է Աղահեճք գավառի վարչական կենտրոնը[1620]: Հետագայում Ղևոնդ Ալիշանը, հավանաբար

[1617] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1618] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 6:

[1619] Մ. Կաղանկատվացի, էջ 260:

[1620] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 70, 399; հմմտ. Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 140:

հաշվի առնելով Ստեփանոս Օրբելյանի հիշատակությունը, Արքուգետը ներկայացրել է Արքունագետ անունով[1621]՝ ենթադրելով, որ բնակավայրը իշխանանիստ էր:

Պատահական չէ, որ վերոհիշյալ բնակավայրը 16-րդ դարի վերջերին և 17-րդ դարի սկզբներին Հայոց Արևելից կողմանց նշանավոր գործիչներից մեկի՝ Քաշաթաղ գավառի տեր մելիք Հայկազի նստավայրն էր: Մելիք Հայկազը լավ հարաբերություններ ուներ Շահ Աբասի հետ և պարսից արքունիքում մեծ հեղինակություն էր վայելում[1622]:

Վերոհիշյալ տարածքները ազատագրելուց հետո վերականգնվել է նաև մելիք Հայկազի ապարանքը:

18-րդ դարի երկրորդ կեսերին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ձնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել էին:

19-րդ դարի սկզբներին այստեղ հայտնված թրքախոս քուրդ մի քանի ընտանիքներ, հաշվի առնելով բնակավայրի նախկին կարգավիճակը, այն անվանել էին Սուլթանքենդ:

Եկվորները կարճ ժամանակահատվածում ավերեցին բնակավայրի պատմամշակութային հուշարձանները:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին: Սուլթանքենդը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմում:

1992 թ. հայկական զորամիավորումների ձնշման տակ բնակավայրը ազատագրվեց:

1994 թ. ՀՀ Կոտայքի մարզի Մրգաշեն գյուղից, Նոր Հաճն քաղաքից այստեղ հաստատվեցին մի քանի ընտանիքներ: Բնակավայրը ստացավ Մելիքաշեն անունը: Գյուղը ներառված է Ծիծեռնավանքի համայնքի կազմում: Բնակավայրի աշակերտները սովորում են Ծիծեռնավանքի միջնակարգ դպրոցում:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական կարգով՝ բնական աղբյուրների հաշվին:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Մելիքաշենում 2010 թ. կար 13 տուն, 49 բնակիչ[1623], 2015 թ.՝ 14 տուն, 51 բնակիչ[1624]:

2018 թ.՝ 9 տուն, 37 բնակիչ[1625]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1621] Ղ. Ալիշան, Սիսական, էջ 266:

[1622] Մատենադարանի պարսկերեն վավերագրեր, հրովարտակներ, կազմող Հ. Դ. Փափազյան, պրակ. երկրորդ, 1601–1650 թթ., Երևան, 1959, էջ 89–100:

[1623] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1624] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 352:

[1625] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

ԱՐԱՀՈՒԾ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Աղահեճք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Աղավնոյի ստորին հոսանքի աջափնյա բլրապատ մասում:

Արահուծը Սյունիքի հնագույն բնակավայրերից մեկն է: Գյուղի պատմական անվան վերաբերյալ տարբեր տեսակետներ են ձևավորվել: Սերո Խանզադյանը բնակավայրի նախանվանում է համարում Ստ. Օրբելյանի ներկայացրած Մախուլն գյուղը[1626]: Խորհրդային տարիներին նա, լինելով Մալիբեյլի գյուղում, գտել է մի կոտրած խաչքար, որի վրա փորագրված էր Սյունիքի Տարսայիճ մեծ իշխանի անունը, իսկ դպրոցական զանգի վրա կարդացել էր պղնձագործ Հովհան վարպետի անունը, որը զանգը ձուլել էր 1328 թ.: Գյուղի քրդերից մեկի տանը վիշապագորգի վրա ընթերցել էր «ԱՍԱՏՈՒՐ ԱՂԻՆ Ի ՎԱԵԼՈՒՄ, ՌԾԳ — 1604[1627]»

Մալիբեկլուի թաղամասերից մեկը, որը նախախորհրդային շրջանում Արըգլար անունով առանձին բնակավայրի կարգավիճակ ուներ, Ս. Կարապետյանը վերապահումով հավանական է համարում, որ դա Ստ. Օրբելյանի հիշատակած Արքո գյուղն է[1628]:

Ա. Ղարագյոզյանն էլ գտնում է, որ դա պատմական Կատոհորինքն[1629] է, իսկ Ա. Հակոբյանն էլ դա նույնացնում է Արահուծ բնակավայրի հետ[1630]:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ձնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել են: 19-րդ դարի սկզբներին Արահուծում հաստատվել էին քուրդ խաշնարած մի քանի ընտանիքներ: Հայկական գյուղը նրանք անվանեցին Մալիբեկլու:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված եկվորները կործանել են հայկական պատմամշակութային հուշարձանները:

1921 թ. Մոսկվայի կենտրոնական բոլշևիկյան իշխանության որոշմամբ այս տարածքները բռնակցվեցին Ադրբեջանին: Մալիբեկլուն 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմում:

1992 թ. Լաչինի հումանիտար միջանցքի բացումից հետո ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ Մալիբեկլուն ևս ազատագրվեց:

1994 թ. այստեղ հաստատվեցին ՀՀ Կոտայքի մարզի Մրգաշեն գյուղից և Նոր Հաճն քաղաքից մի քանի ընտանիքներ: Բնակավայրը վերստացավ Արահուծ անունը:

[1626] Խանզադյան Ս., Ինչ են պատմում քարերը, «Սովետական Հայաստան» ամսագիր, հմ. 6, էջ 24, 31; հմմտ. Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 153:

[1627] Խանզադյան Ս., նշվ. աշխ., էջ 24, 31; հմմտ. Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 153:

[1628] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 153:

[1629] «ԼՀԳ», հմ 1, Երևան, 1987, էջ 42 (քարտեզ):

[1630] Յակոբեան Ալ., Պատմա-աշխարհագրական և վիմագրագիտական հետազոտութիւններ, էջ 27:

Բնակավայրի աշակերտները սովորում են Ծիծեռնավանքի միջնակարգ դպրոցում:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական կարգով՝ բնական աղբյուրների հաշվին:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Արահուծում 2015 թ. կար 2 տուն, 6 բնակիչ[1631], 2018 թ.՝ 4 տուն, 8 բնակիչ[1632]: Նրանք հիմնականում զբաղվում են գյուղատնտեսությամբ:

ԾՈԲԱՁՈՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Կովսական գավառում: Բնակավայրը գտնվում է Բասուտաջուր գետի Ծոբաջուր վտակի ձախափնյա բլրապատ հարթավայրում: Ծոբաձորից ոչ շատ մեծ հեռավորության վրա է գտնվում Իրանի Իսլամական հանրապետությունը:

Արաքսի ափամերձ շրջանները, 18-րդ դարի երկրորդ կեսից սկսած, Ղարաբաղի և Նախիջևանի խաների, քրդական ցեղերի ճնշման տակ արագ հայաթափվեցին ու այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառների գյուղերը, այդ թվում Ծոբաձորի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

19-րդ դարի սկզբներին գյուղում հաստատվել էին թուրքեր և քրդեր: Եկվորները բնակավայրն անվանեցին Չոպադարա:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղի թուրքերն ու քրդերը հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Այսօր դրանց անգամ հետքերը չեն երևում:

Խորհրդային տարիներին այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին: 1923 թ. Չոպադարան գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ. Զանգելանի շրջանի կազմի մեջ:

1993 թ. հոկտեմբերի վերջերին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղն ազատագրվեց:

1998 թ. ՀՀ-ից գյուղում հաստատվել էին առաջին վերաբնակիչները: Բնակավայրը ստացավ Ծոբաձոր անունը:

2010 թ. գյուղում բացվել էր դպրոց: Դպրոցական շենքը վերանորոգվել է 2011 թ.: 2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 13 աշակերտ, դասավանդում՝ 9 ուսուցիչ: Տարբեր տարիների դպրոցը ղեկավարել են Ռոզա Մանասարյանը, Սամսոն Սարդարյանը, Հարութ Մկրտչյանը:

[1631] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 352:

[1632] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

2016 թ. ապրիլյան պատերազմին գյուղից մեկ հոգի է մասնակցել:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Բնակավայրն ունի խմելու ջրագիծ: Համայնքի տարածքով անցնում են Ծոբաձոր-1, Ծոբաձոր-2 և Որդուակ ոռոգման ջրատարները, որոնք նպաստում են ինտենսիվ հողագործության զարգացմանը:

Հեռուստատեսությունը, բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, բուժկետ, դպրոց:

Համայնքի կազմում ընդգրկված է նաև Որդուակ գյուղը:

Ծոբաձորում 2003 թ. կար 82 մարդ, 2010 թ.՝ 18 մարդ[1633], 2018 թ. 3 տուն, 8 մարդ[1634]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՈՐԴՈՒԱԿ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Կովսական գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Ծոբաջուր գետի աջափնյա հարթավայրում: Որդուակից ոչ շատ մեծ հեռավորության վրա է գտնվում Իրանի Իսլամական հանրապետությունը:

Արաքսի ափամերձ համեմատաբար հարթավայրային շրջանները, 18-րդ դարի երկրորդ կեսից սկսած, Ղարաբաղի և Նախիջևանի խաների ու քրդական ցեղերի ճնշումների տակ արագ հայաթափվեցին և այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառների գյուղերի, այդ թվում Որդուակի, պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

Որդուակի անվան ծագման հետ կարծիք կա, որ նախկինում էլ գյուղը ուներ վերոհիշյալ անունը և հետագայում եկվորներն այն իրենց լեզվահնչունային համակարգին հարմարեցրել և դարձրել են Օրդուաքլի: Սակայն այս վարկածը սկզբնաղբյուրներով հիմնավորված չէ:

19-րդ դարի սկզբներին արդեն ամայության մատնված գյուղում հաստատվել են թուրքեր և քրդեր: Եկվորները բնակավայրն անվանել էին Օրդուաքլի:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղի թուրքերն ու քրդերը հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Մասնավորապես այդ գործընթացը ծրագրված իրագործվել էր խորհրդային Ադրբեջանի իշխանությունների կողմից: Այսօր այդ հուշարձանների հետքերը չեն երևում:

Խորհրդային տարիներին այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին: 1923 թ. Օրուդաքլին գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Զանգելանի շրջանի կազմի մեջ:

[1633] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 507:

[1634] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

1993 թ. նոյեմբերի սկզբներին ԱՀ պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց: 1998 թ. ՀՀ–ից գյուղում հաստատվել էին առաջին վերաբնակիչները: Բնակավայրը ստացավ Որդուակ անունը:

Գյուղի դպրոցահասակ երեխաները սովորում են համայնքի կենտրոն Ծոբաձորի միջնակարգ դպրոցում:

Բնակավայրը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծված է անհատական կարգով: Որդուակի ոռոգման ջրատարը անցնում է գյուղի տարածքով, որը նպաստում է հողագործության զարգացմանը:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Գյուղն ընդգրկված է Ծոբաձորի համայնքի կազմում:

Որդուակում 2010 թ. կար 24 մարդ[1635], 2018 թ.՝ 11 տուն, 41 մարդ[1636]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԿՈՒՄԱՅՐԻ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Հաբանդ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Որոտան և Հակարի գետերի միախառնման հատվածից ներքև՝ աջափնյա բլրապատ հարթավայրում:

Ղևոնդ Ալիշանը հայկական այդ բնակավայրը անվանել է Խալիճան, որտեղ շարունակվում էին պահպանվել իշխանական դղյակի և գերեզմանոցի մնացորդներ[1637]:

18–րդ դարի երկրորդ կեսին Ղարաբաղի խաների և քուրդ ցեղապետերի ձնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել էին: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ տարածքի գյուղերի, այդ թվում Խալիճանի պատմական անցյալի մանրամասները մոռացության մատնվեն:

Հայկական բանակավայրում հաստատված եկվորները գյուղը անվանափոխել և դարձրել էին Գիլիջան:

Մի քանի տասնամյակի ընթացքում քոչվորները հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Այսօր դրանց փշրանքներն են մնացել:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ–ին: Գիլիջան 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Ղուբաթլիի շրջանի կազմում: Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ–ին:

[1635] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 508:

[1636] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 6:

[1637] Ղ., Ալիշան, Սիսական, էջ 282; հմմտ. Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 196:

Գիլիջան 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ. Ղուբաթլիի շրջանի կազմում: 1993 թ. նոյեմբերի սկզբներին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղն ազատագրվեց:

1997 թ. սկսվեց գյուղի վերաբնակեցման գործընթացը: Այստեղ հաստատվել էին ՀՀ բնակավայրերից, մասնավորապես Շիրակի մարզից, մի քանի ընտանիքներ: Նույն թվականին էլ գյուղում բացվել էր միջնակարգ դպրոց: 2015–2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 48 աշակերտ, դասավանդում՝ 14 ուսուցիչ: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Ա. Սարգսյանը, Օ. Նազարյանը, Հ. Կատայանը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Բնակվայրն ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Կումայրի համայնքի կազմում ընդգրկված է նաև Շիրակ գյուղը:

Համայնքն ունի գյուղապետարան, բուժկետ, դպրոց:

Կումայրիում 2003 թ. կար 91 մարդ, 2010 թ.՝ 13 տուն, 52 մարդ[1638], 2015 թ.՝ 14 տուն, 70 մարդ[1639], 2018 թ.՝ 16 տուն, 71 մարդ[1640]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՇԻՐԱԿ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Հաբանդ գավառում: Բնակվայրը տեղաբաշխված է Որոտան և Հակարի գետերի միախառնման հատվածից ներքև՝ աջափնյա բլրապատ հարթավայրում:

18–րդ դարի երկրորդ կեսին և 19–րդ դարի սկզբներին Ղարաբաղի և Նախիջանի խաների ու քրդական ցեղերի ձնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել էին: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում՝ Շիրակի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

19–րդ դարի սկզբներին ամայության մատնված գյուղում հաստատվել էին թուրք և քուրդ խաշնարած մի քանի ընտանիքներ: Հնավանդ հայկական գյուղը նրանք անվանել էին Գիյասլի: Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված թուրքերն ու քրդերը հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ: Այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

[1638] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1639] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 356:

[1640] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 6:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո այս տարածքները բռնակցվել են ԱԽՍՀ-ին: Գիյասլին 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Զանգելանի շրջանի կազմում:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

1998 թ. ՀՀ տարբեր բնակավայրերից, մասնավորապես Շիրակի մարզից, այստեղ հաստատվեցին մի քանի ընտանիքներ: Գյուղը ստացավ Շիրակ անունը: Բնակավայրը գտնվում է Կումայրի համայնքի կազմում:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Շիրակում 2010 թ. կար 9 ընտանիք, 49 բնակիչ[1641], 2015 թ.՝ 25 տուն, 55 բնակիչ[1642], 2018 թ.՝ 11 տուն, 51 բնակիչ[1643]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՀԱԿ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Աղահեճք գավառում: Հակը տեղաբաշխված է Աղավնո գետի ակունքներում, ձախակողմյա բարձրավանդակում՝ ծովի մակերևույթից 1780 մ բարձրության վրա: Գետի հարավարևմտյան մասում վեր է խոյանում Իշխանասարը, իսկ հյուսիսարևմտյան մասում՝ Ծղուկ լեռը:

Հակը ԱՀ հնագույն բնակավայրերից է: Գյուղի շրջակայքում պահպանված ժայռապատկերները վկայում են, որ բնակավայրը մի քանի հազար տարվա պատմություն ունի:

Հակ գյուղի մասին ներկայացված է 13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի աշխատության մեջ: Պատմիչը վկայում է, որ Հակը եղել է Տաթև վանքի հարկատու գյուղերից մեկը[1644]:

Բնակավայրի Հակ անունը հիշատակված է նաև 1675 թ. գյուղամիջում կառուցված Սբ. Մինաս եկեղեցու շինարարության արձանագրության մեջ:

Հակի հարևանությամբ էր գտնվում Աղվեսահաքի գյուղը, որից մնացել են եկեղեցու և գերեզմանոցի մնացորդները:

18-րդ դարի երկրորդ կեսին քրդերը սկսեցին թափանցել հայոց երկրի այս հատվածը, և Հակը սկսեց հայաթափվել: Թրքախոս քրդերը Հակը վերափոխեցին Մինքենդի: Այս անվան ծագման վերաբերյալ մի ավանդություն է պահպանվել, ըստ որի

[1641] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1642] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 356:

[1643] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

[1644] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 399:

Լենկ Թեմուրի հրոսակախմբերը, մտնելով Հայաստան, ավերելով բնակավայրերը, հասան Հակին և այն նույնպես կործանեցին: Հակը Լենկ Թեմուրի ավերած 1000-րդ բնակավայրն էր: Այստեղից էլ Մինքենդ կամ Մինքանդ[1645]:

Քանի որ Մինքենդի շրջակայքում շարունակում էին գոյատևել հայկական բնակավայրերը, այստեղ 1841 թ. և դրան հաջորդած տարիներին Խնձորեսկից հայ ընտանիքներ են տեղափոխվում և հաստատվում հին հայկական բնակավայրում[1646]:

Հայկական բնօրրանում հաստատված հայ ընտանիքները նոր շունչ են հաղորդում հնագույն գյուղին: Մինքենդի հարավային կողմում ձևավորվել է հայկական թաղամաս:

1886 թ. Մինքենդում կար հայ՝ 47 տուն, 453 բնակիչ, քուրդ՝ 23 տուն, 147 բնակիչ[1647]: 1918 թ. այստեղ ապրում էր արդեն 811 հայ[1648]:

20-րդ դարի սկզբին Մինքենդի հայերը «...ունէին լաւ տներ՝ յաձախ երկու յարկանի և թիթեղեայ տանիքով: Նրանք պարապում էին երկրագործութեամբ, անասնապահութեամբ, մասամբ ել առևտրով: Ունէին 21 խանութ զանազան տեսակի ապրանքներով: Ունէին նաև դպրոց, իր յատուկ շէնքով, ուր սովորում էին նոյն իսկ թուրք մանուկներ...»[1649]:

1905 թ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Մինքենդի քրդերին միացած շրջակա գյուղերի թուրքերի և քրդերի հրոսակախմբերը թալանեցին և հրկիզեցին գյուղի հայերի՝ շատ դեպքերում իրենց հարևանների տները: 696 հայ բնակիչներից սպանվեց 198-ը, իսկ 42-ը գերվեցին[1650]: Մինքենդի ջարդերի կազմակերպիչն էր ոստիկանական պրիստավ Սադխ բեկ Մելիք Ալանովը[1651]:

1913 թ. Գանձակի նահանգական դատարանը Մինքենդի հայերի ցեղասպանությունը իրագործած 29 մարդասպանների պատժում է[1652]:

Չնայած այդ դաժանություններին՝ գյուղի բնակչությունը վերադառնում և նորից շենացնում է հայրենի օջախը:

[1645] Ղանալյան Ա., Հայկական ավանդություններ, Երևան, 1969, էջ 172:

[1646] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 255; ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 205, թ.19:

[1647] Елисаветпольская губерния. Свод статистических данных, извлеченных из посемейных списков населения Кавказа, Тифлис, 1888, с. 140-141; Ղ. Ալիշան, Սիսական, էջ 101; Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 129:

[1648] ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 59, թ. 5; Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 129:

[1649] Ա-Դո, նշվ, աշխ., էջ 255; Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 129-130:

[1650] Ա-Դո, նշվ, աշխ., էջ 259; ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 422, թ. 5; Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 130:

[1651] «Արշալոյս», հմ. 30 մարտի, Թիֆլիս, 1906:

[1652] «Հորիզոն», հմ. 129, 1913; Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 130:

Պանթուրքիզմը պետական գաղափարախոսություն դարձրած մուսավաթական Ադրբեջանը 1918 թ. վերջնականապես հայաթափեց Մինքենդն ու շրջակա հայկական բնակավայրերը:

1923 թ. Մինքենդը ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմում էր: Նույնիսկ խորհրդային տարիներին Մինքենդի քրդերը շարունակեցին իրենց ավազակաբարո վարքն ու բարքը: Գորիսի հայկական գյուղերի բնակիչների համար նրանք պատուհաս էին դարձել:

Հայոց երկրի վրա այդ մահաբեր ուռուցքը նույնպես վնասազերծվեց: 1993 թ. գարնանը ԱՀ ՊԲ զորամասերը ազատագրեցին Մինքենդը: Պատերազմի հաղթական ավարտից հետո՝ 1995 թվականից, իրականացվեց գյուղի վերաբնակեցման գործը: Մինքենդը նորից ստացավ իր պատմական Հակ անունը:

19-րդ դարի երկրորդ կեսին Հակում գործում էր ծխական դպրոց: 1905 թ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ դպրոցը ավերվել էր: Գյուղի ազատագրվելուց հետո 2002 թ. սեպտեմբերի 1-ին Հակում բացվել էր միջնակարգ դպրոց, որտեղ 22 աշակերտ էր սովորում: Նոր դպրոցական շենքը կառուցվեց Թուֆենկյան բարեգործական կազմակերպության միջոցներով:

Նույն կազմակերպության միջոցներով վերանորոգվեց նաև Հակի Սբ. Մինաս եկեղեցին:

2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 15 աշակերտ: Դպրոցի տնօրենն է Յուրի Պողոսյանը:

Հակում և շրջակայքում դարերի ընթացքում կառուցվել են պատմամշակութային նշանակության բազմաթիվ հուշարձաններ: Դրանց մեծ մասը թուրքերի և քրդերի կողմից ոչնչացվել է:

Ներկայումս շինարարական աշխատանքների ընթացքում հայտնաբերվում են տապանաքարեր, խաչքարեր, շատ դեպքերում դրանց ջարդված հատվածները, եկեղեցիների, բերդերի սրբատաշ անկյունաքարեր:

Բարեբախտաբար որոշ կառույցներ ամբողջական կամ էլ կիսավեր վիճակում մեզ են հասել, մասնավորապես՝ Սբ. Մինաս եկեղեցին (1673 թ.), երկթռիչք կամուրջ (19-րդ դար), Սբ. Աստվածածին եկեղեցին (16-րդ դար), միջնադարյան գերեզմանոցներ, ջրաղացներ, իջևանատուն:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ջրամատակարարման համակարգը անհատական բնույթի է: Բնակիչները օգտվում են տարբեր աղբյուրներից, որոնց անունները ժամանակի ընթացքում մոռացության են տրվել:

Հեռուստատեսությունը, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Գյուղն ունի գյուղապետարան, դպրոց, հանդիսությունների սրահ:

Հակը 2003 թ. ուներ 80 բնակիչ, 2010 թ.՝ 46 բնակիչ, 2018 թ.՝ 23 տուն, 89 բնակիչ[1653]:

Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Համայնքի մի քանի անդամներ էլ աշխատում են գյուղի մոտ գտնվող ՀԷԿ-երում:

ՀԱԿԱՐԻ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Մյուս Հաբանդ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հակարի գետի միջին հոսանքի ձախ ափին: Գյուղամիջով հոսում է Ջանգանակ (Խաչգյադուկչայ) գետակը, որը Հակարիի ձախակողմյան վտակներից մեկն է:

Գյուղի Հակարի անունը հիշատակված է 7-րդ դարի պատմիչ Մովսես Կաղանկատվացու աշխատության մեջ[1654]: 10-րդ դարում այն ուներ Ախար անունը[1655]: Միջին միջնադարում առավել հայտնի է Ակերա[1656], ավելի ուշ՝ Ակերլու[1657] անուններով:

18-րդ դարի երկրորդ կեսին պարսիկ խաների, թուրք փաշաների և քուրդ բեկերի անընդհատ կրկնվող արշավանքների պատճառով հայ ազգաբնակչությունը ստիպված էր հեռանալ:

19-րդ դարի երկրորդ կեսերին այստեղ հայտնվեցին քրդական ցեղախմբեր, որոնք էլ հայկական Հակարի գյուղից 1 կմ հեռավորության վրա հիմնեցին իրենց բնակավայրը և այն անվանակոչեցին Մուրադխանլի:

Չնայած թուրքերը և քրդերը մի քանի տասնամյակների ընթացքում անխնա ոչնչացրին այն ամենը, ինչ հայկական է, այնուամենայնիվ, Հակարիից 4 կմ դեպի հյուսիս՝ Ջանգանակ վտակի ձախ ափին, պահպանվել է Կառնակաշ անունով ամրոցը (11-14-րդ դարեր): Պարսպաշարը պահպանվել է հատվածաբար: Այն միջին չափի քարերից կրաշաղախով շարված պարիսպ է՝ տեղ-տեղ ամրացված որմնահեծերով, որը որոշ կետերում կանգուն է մնացել և ունի մինչև 5 մ բարձրություն: Ամրոցը ունեցել է միջնաբերդ: Ամրոցի տարածքում պահպանվել են 2 ջրամբարների և մի քանի աշտարակների մնացորդներ:

Կարծիք կա, որ գյուղում եղել է նաև միջնադարյան եկեղեցի:

Այստեղ հաստատված ավազակաբարո թուրքերն ու քրդերը 20-րդ դարի սկզբներին հարձակումներ են գործել Արցախի և Սյունիքի հայկական բնակավայրերի վրա, թալանել, քշել տարել անասունները:

Խորհրդային տարիներին՝ 1930 թ., Մուրադխանլին գտնվում էր ԱԽՍՀ Ղուբաթլիի շրջանի կազմի մեջ:

[1653] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

[1654] Մ. Կաղանկատվացի, էջ 256:

[1655] Хамадаллах Казвини, Нузхат ал-Кулуб, с. 59.

[1656] Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 162:

[1657] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 514:

1993 թ. հոկտեմբերին գյուղը ազատագրվեց ԱՀ Պաշտպանության բանակի ստորաբաժանումների կողմից: 1995 թ. ապրիլից սկսվեց Հակարիի վերաբնակեցման գործընթացը: Սկզբում այստեղ հաստատվեցին ՀՀ-ից 7 ընտանիքներ: Այնուհետև այստեղ հաստատվեցին նաև Ադրբեջանից բռնագաղթածներ:

Գյուղը սկզբում անվանվեց Մարաթուկ, իսկ 2002 թ. ԱՀ կառավարության որոշմամբ այն նորից ստացավ իր պատմական Հակարի անունը:

1995 թ. գյուղում բացվել է միջնակարգ դպրոց: 2002-2003 թվականներին դպրոցի երկհարկանի շենքը վերանորոգվել է բարերարներ Հակոբ և Մինաս Շիրվանյանների միջոցներով: 2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 21 աշակերտ, դասավանդում՝ 9 ուսուցիչ: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Ալեքսանդր Սաղաթելյանը, Արմեն Մովսիսյանը, Արսեն Հայրապետյանը:

1995 թվականից մինչև 2018 թվականը գյուղում ծնվել է 45 երեխա:

2016 թ. ապրիլյան պատերազմին գյուղից մասնակցել է 16 հոգի:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Համայնքում գործում են 18 անհատական ջրհորներ: 2019 թ. կառուցվեց խմելու ջրագիծ: Բնակավայրի տարածքով անցնում են Հակարի-1, Հակարի-2 ոռոգման ջրատարները:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, դպրոց, առևտրի 1 կետ:

Հակարիում 2003 թ. կար 131 բնակիչ, 2010 թ.՝ 104 բնակիչ[1658], 2018 թ. 32 ընտանիք, 113 բնակիչ[1659]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՀԱՅԿԱԶՅԱՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Հաբանդ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Որոտան գետի ստորին հոսանքի ձախափնյա հարթավայրում:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի և Նախիջևանի խաների ու քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել էին: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում՝ Հայկազյանի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

19-րդ դարի սկզբներին ամայության մատնված գյուղում հաստատվել էին թուրքեր և քուրդ խաշնարած մի քանի ընտանիքներ: Հայկական գյուղը նրանք անվանել էին Կազյան:

[1658] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 514:

[1659] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված թաթարներն ու քրդերը հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ: Այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մոսկվայի կենտրոնական բոլշևիկյան իշխանության որոշմամբ այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին:

Հայկազյանը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Ղուբաթլիի շրջանի կազմում:

1993 թ. նոյեմբերի սկզբներին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց: 1997 թ. սկսվեց գյուղի վերաբնակեցման գործընթացը: Այստեղ հաստատվել են ՀՀ տարբեր բնակավայրերից մի քանի ընտանիքներ: Գյուղը վերստացավ Հայկազյան անունը:

Հայկազյան համայնքի կազմում ընդգրկված են նաև Ջանֆիդա, Սահառ և Դարբնոց գյուղերը:

1999 թ. գյուղում հիմնադրվել է միջնակարգ դպրոց: Այն կրում է Հայկազ Խաչատրյանի անունը: 2015-2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 126 աշակերտ, դասավանդում՝ 18 ուսուցիչ[1660]: Այստեղ սովորում են նաև հարևան գյուղերի դպրոցահասակ երեխաները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Բնակավայրի տարածքով են անցնում ոռոգման ջրատարներ, որոնք նպաստում են հողագործության զարգացմանը:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Բնակավայրում գործում է առևտրի 1 կետ:

Համայնքն ունի գյուղապետարան, բուժկետ, դպրոց:

Հայկազյանում 2003 թ. կար 75 բնակիչ, 2010 թ.՝ 19 տուն, 78 բնակիչ[1661], 2018 թ.՝ 18 տուն, 67 բնակիչ[1662]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՋԱՆՖԻԴԱ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Հաբանդ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Որոտան գետի ստորին հոսանքի ձախափնյա հարթավայրում:

[1660] Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Լեռնային Ղարաբաղի հանրապետության կրթական համակարգը (1991-2016 թթ.), հ. 3, էջ 604:

[1661] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1662] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

18–րդ դարի երկրորդ կեսին և 19–րդ դարի սկզբներին Ղարաբաղի և Նախիջևանի խաների ու քրդական ցեղերի ճնշման տակ գավառի բնակավայրերը հայաթափվել էին: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում՝ Ջանֆիդայի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

19–րդ դարի սկզբներին գյուղում հաստատվել էին թուրք և քուրդ քոչվոր մի քանի ընտանիքներ: Հայկական գյուղը նրանք անվանեցին Դիլյալիմյուսկանլի:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված թուրք–թաթարներն ու քրդերը հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին այն առավել ծրագրված բնույթ ստացավ, որի արդյունքում այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո, այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ–ին: Ջանֆիդան 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Ղուբաթլիի շրջանի կազմում:

1993 թ. նոյեմբերի սկզբներին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց: 1997 թ. սկսվեց բնակավայրի վերաբնակեցման գործընթացը: Այստեղ հաստատվեցին ՀՀ բնակավայրերից մի քանի ընտանիքներ: Գյուղը ստացավ Ջանֆիդա անունը:

Ջանֆիդան ընդգրկված է Հայկազյան համայնքի կազմում: Գյուղի աշակերտները հաճախում են Հայկազյանի միջնակարգ դպրոց:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Ջանֆիդայում 2005 թ. կար 65 բնակիչ, 2010 թ.՝ 41 բնակիչ[1663], 2018 թ.՝ 6 տուն, 26 բնակիչ[1664]: Վերջին տարիներին գյուղից բնակչության արտահոսքը նկատելի է: Ջանֆիդա գյուղի բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՍԱՀԱՌ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Հաբանդ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Որոտան գետի ստորին հոսանքի ձախափնյա հարթավայրում:

18–րդ դարի երկրորդ կեսին և 19–րդ դարի սկզբներին Ղարաբաղի և Նախիջևանի խաների ու քրդական ցեղերի ճնշման տակ գավառի բնակավայրերը հայաթափվել էին:

[1663] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 510:

[1664] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 6:

Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում՝ Սահառի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

19–րդ դարի սկզբներին գյուղում հաստատվել էին թուրք և քուրդ քոչվոր մի քանի ընտանիքներ: Հայկական գյուղը նրանք անվանել էին Սարայ: Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված թուրք–թաթարներն ու քրդերը հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ: Այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ–ին: Սարայը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Ղուբաթլիի շրջանի կազմում:

1993 թ. նոյեմբերի սկզբներին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց: 1997 թ. ազատագրված բնակավայրում հաստատվեցին ՀՀ մի քանի ընտանիքներ: Գյուղը ստացավ Սահառ անունը: Գյուղի աշակերտները սովորում են Հայկազյանի միջնակարգ դպրոցում:

Բնակավայրը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական կարգով՝ ջրհորների հաշվին:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Սահառում 2005 թ. կար 8 մարդ[1665]: 2010 թ. գյուղում մարդ չէր ապրում:

ԴԱՐԲՆՈՑ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Հաբանդ գավառում: Բնակավայրը գտնվում է Որոտան գետի ստորին հոսանքի աջափնյա և Քաշունի գետի ձախափնյա բլրապատ հարթավայրում:

Ղևոնդ Ալիշանի կարծիքով վերոհիշյալ բնակավայրը նախկին հայկական Երկաթավորք գյուղն է[1666]: Բնակավայրի աշխարհագրական դիրքից էլ կարելի է եզրակացնել, որ Դարբնոցը 13–րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի նկարագրած Աժդակ գյուղն է[1667]:

[1665] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1666] Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 282:

[1667] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 401; հմմտ. Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 174:

Դարբնոցում պահպանվել են 14–15-րդ դարերի երկու դամբարաններ: Գյուղամիջում՝ Քաշունի գետի վրա, կանգուն է 17–18-րդ դարերի միաթռիչք կամուրջը, որը վերջին անգամ վերանորոգվել է 1990 թ.[1668]:

Բոլոր դեպքերում ակնհայտ է, որ Դարբնոցը Սյունիքի հնագույն բնակավայրերից է և նույն ձևով արժանացել է տարածաշրջանի հայկական գյուղերի տխուր ճակատագրին:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի, Նախիջևանի խաների և քրդական ցեղերի ճնշումների տակ Դարբնոցը հայաթափվել էր:

Շուտով այստեղ հայտնվել էին թուրք և քուրդ խաշնարած մի քանի ընտանիքներ: Հայկական գյուղը նրանք անվանել էին Դեմիրչիլար:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված թուրքերն ու քրդերը հիմնականում կործանել են հայկական պատմամշակութային արժեքները:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մոսկվայի կենտրոնական բոլշևիկյան իշխանության որոշմամբ այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին: Դեմիրչիլարը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Ղուբաթլիի շրջանի կազմում:

1993 թ. նոյեմբերի սկզբներին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

1996 թ. այստեղ հաստատվեցին ՀՀ բնակավայրերից տեղափոխված վերաբնակիչներ: Գյուղը ստացավ Դարբնոց անունը:

Բնակավայրը էլեկտրաֆիկացված է: Ջրի հարցը լուծվել է անհատական ջրհորների հաշվին:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Դարբնոցում 1997 թ. կար 10 բնակիչ: 2010 թ. վերաբնակները հեռացել են գյուղից: 2016 թ. նորից սկսվեց Դարբնոցի վերաբնակեցման գործը: 2018 թ. գյուղում կար 7 տուն, 20 բնակիչ[1669]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՎԱՆԱՆԴ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Հաբանդ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Որոտանի միջին հոսանքի ձախափնյա ձորալանջին:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի և Նախիջևանի խաների ու քրդական ցեղերի ճնշումների տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել էին: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում՝ Վանանդի, պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

19-րդ դարի սկզբներին ամայության մատնված գյուղում հայտնվել էին թուրք և քուրդ խաշնարած մի քանի ընտանիքներ: Հայկական գյուղը նրանք անվանել էին Էյվազլի:

Մի քանի տասնամյակում գյուղում հաստատված եկվորները կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ:

Բնակավայրից 1 կմ հյուսիս-արևելք՝ Յազի կոչված տեղամասում, պահպանվում են 15–17-րդ դարերի գերեզմանոցի մնացորդները, որոնք նախկին հայկական բնակավայրերի լուռ վկաներն են:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին:

Գյուղը, քանի որ գտնվում էր Խորհրդային Հայաստանի հարևանությամբ, արագ կառուցապատվեց: Ադրբեջանի տարբեր շրջաններից այստեղ տեղափոխեցին թուրք-թաթարների և քրդերի ընտանիքներ: Էյվազլին վերանվանվեց և դարձավ Կադրլու:

Այս բնակավայրը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Ղուբաթլիի շրջանի կազմում:

1993 թ. նոյեմբերի սկզբներին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց: Բնակավայրը ստացավ Վանանդ անունը:

Գյուղի վերաբնակեցման գործը սկսվեց 2010 թ.:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական կարգով՝ բնական աղբյուրների հաշվին:

Բջջային հեռախոսակապը և ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Բնակավայրը գտնվում է Որոտան համայնքի կազմում:

Վանանդում 2015 թ. կար 5 տուն, 16 բնակիչ[1670], 2018 թ.՝ 5 տուն, 15 բնակիչ[1671]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1668] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 192–194:

[1669] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

[1670] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 375:

[1671] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

ԲԱՐԿՈՒՇԱՏ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Հաբանդ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Որոտանի ստորին հոսանքի աջափնյա ձորալանջին:

Գյուղի մոտ գտնվող լեռան գագաթին առկա են Ք. ա. 2–1–ին հազարամյակների դամբարաններ: Ներկայիս գյուղի հարևանությամբ պահպանվում են հնագույն հայկական գյուղի և եկեղեցու ավերակները:

18–րդ դարի երկրորդ կեսին և 19–րդ դարի սկզբներին Ղարաբաղի և Նախիջևանի խաների ու քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել էին: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում՝ Բարկուշատի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

19–րդ դարի սկզբներին ամայության մատնված գյուղում հաստատվել էին թուրք և քուրդ քոչվոր մի քանի ընտանիքներ:

Հայկական գյուղը նրանք անվանեցին Բախտիարլի:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված թուրքերն ու քրդերը հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մոսկվայի կենտրոնական բոլշևիկյան իշխանությունների որոշմամբ այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ–ին: Բախտիարլին 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, 1930 թ.՝ Ղուբաթլիի շրջանի կազմում:

1993 թ. նոյեմբերի սկզբներին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

Գյուղը համեմատաբար ավելի ուշ վերաբնակեցվեց: 2010 թ. այստեղ հաստատվեցին ՀՀ բնակավայրերից մի քանի ընտանիքներ: Բնակավայրը ստացավ Բարկուշատ անունը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Բջջային հեռախոսակապն ու ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Բարկուշատը ընդգրկված է Որոտանի քաղաքային համայնքի կազմում:

Բարկուշատում 2015 թ. կար 7 տուն, 20 բնակիչ[1672], 2018 թ.՝ 6 տուն, 18 բնակիչ[1673]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1672] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 375:

[1673] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 6:

ՀՈՉԱՆՑ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Աղահեձք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հոչանցի ստորին հոսանքում՝ գետի աջափնյակում:

Հոչանցը Սյունիքի հնագույն գյուղերից է: Միջին միջնադարից սկսած՝ բնակավայրի անունը տարբեր՝ Հունչանք, Հավչանք, Հոչանց, Հոչանք, Հոչաս, Ղոչազ հոլովաձևերով մեզ է հասել:

Դարերի ընթացքում Աղավնոյի և Հոչանցի միջագետքում տեղաբաշխված գյուղերում հայ մարդու կառուցած պատմամշակութային նշանակության հուշարձանները եկվորները ոչնչացրել են: Հոչանցում եղածների մի մասը բարեբախտաբար փրկվել և մեզ է հասել, մասնավորապես՝ Սբ. Ստեփանոս եկեղեցին (17–րդ դար), Հոչանցի անապատ եկեղեցին, գերեզմանոց (14–րդ դար), 8 խաչքարեր (14–րդ դար), 1621 թ. արձանագիր քար, խաչքար (16–17–րդ դարեր), 4 տապանաքար (17–րդ դար), քարանձավ–բնակարան:

13–րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը բնակավայրը ներկայացնում է որպես Սյունյաց աշխարհի Աղահեչք գավառի Հունչանք գյուղ[1674]: Բնակավայրը՝ Հոչանց ձևով, հիշատակված է նաև Տաթևի վանքին պատկանող պտղահարկ մուծող գյուղերի թվում, 3450 հարկաչափով, որը 17–րդ դարի վերջերի և 18–րդ դարի սկզբների գյուղի բազմամարդության մասին վկայություն է[1675]:

Առաքել Դավրիժեցին պատմում է, որ Կիրակոս և Թումա եպիսկոպոսները 17–րդ դարի սկզբներին գնացին Քաշաթաղ գավառը և Հոչանց գյուղի մոտ շինեցին մի Անապատ ու այնտեղ էլ բնակվեցին: 1621 թ. տեր Կիրակոսը վախճանվեց և նրա մարմինը ամփոփեցին վերոհիշյալ անապատում[1676]:

Զաքարիա Քանաքեռցի պատմիչի վկայությամբ քրդական ղարաչորլու ցեղը Շահ Աբասի ժամանակ թափանցել է Հոչանցի հովիտը և ապրում էին Հոչանց գյուղում՝ վրաններում: Նրանց դեմ կռվի էին ելել Կարբի գյուղի հայերը[1677]:

1691–1692 թվականներին պարսկերենով կազմված մի փաստաթղթում Քաշաթաղի քեդխուդաների (գյուղապետ, տանուտեր, գեղջավագ) ցանկում առկա է նաև Հոչանցի տանուտերը[1678]:

18–րդ դարի վերջերին և 19–րդ դարի սկզբներին Ղարաբաղի խանի և քրդերի ճնշումների տակ հնագույն հայկական բնակավայրը լիովին հայաթափվել էր:

[1674] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 399:

[1675] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 163; հմմտ, Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 162:

[1676] Առաքել Դավրիժեցի, Պատմություն, էջ 206–207:

[1677] Զաքարեայ Սարկավագի Պատմագրութիւն, հ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 9:

[1678] Կոստիկյան Բ., Քաշաթաղի 17–րդ դարի պատմությանը վերաբերող մի փաստաթուղթ, էջ 170:

Երվանդ Լալայանի վկայությամբ՝ 19-րդ դարի վերջերին Հոչանցի եկեղեցին քրդերը դարձրել էին խոտանոց[1679], իսկ խորհրդային վերջին տարիներին՝ հացի փուռ[1680]:

Հոչանցի ազատագրվելուց հետո Քաշաթաղի վարչակազմի առաջին ղեկավար Ալեքսան Հակոբյանը, լինելով վերոնշյալ բնակավայրում, գրել է, որ այդ եկեղեցու հետքերը չեն նկատվում: Նրա կարծիքով հնարավոր է, որ եկեղեցին եղել է 1970-ական թվականներին կառուցված գյուղական խանութի շենքի տեղում: Այդ կառույցի կողքի փոքրիկ պուրակում՝ ամենայն հավանականությամբ նախկին գերեզմանոցի տեղում, պահպանվել են մեծ չափով և քանդակազարդ օրորոցաձև չորս տապանաքարեր: Դրանցից երկուսը արձանագիր են[1681]:

Հոչանցում քրդերի կողմից կառուցված տներում տեսանելի են հայկական հին գերեզմանատան տապանաքարերի բեկորները:

1920 թ. Հոչանցը բռնակցվել է խորհրդային Ադրբեջանին: 1923 թ. բնակավայրը գտնվում էր Կարմիր Քուրդիստանի, իսկ 1930 թ.՝ ԱԽՍՀ Լաչինի շրջանի կազմում: Գյուղը կրում էր Ղոչազ անվանումը:

Ղոչազը 1992 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ ազատագրվել է: Ղոչազի և շրջակա գյուղերի ազատագրման ժամանակ 47 ազատամարտիկներ են զոհվել: Նրանց հիշատակը հավերժացնելու համար գյուղի դպրոցում փառքի սրահ է բացվել:

Գյուղի վերաբնակեցման գործընթացը սկսել է 1997 թ.: Այդտեղ հաստատվել են ՀՀ տարբեր բնակավայրերից տեղափոխված ընտանիքներ: Գյուղը նորից ստացել է պատմական Հոչանց անվանումը:

1997 թ. Հոչանցում դպրոց է բացվել: Կրթօջախը կրում է Հոչանցի ազատագրման ժամանակ զոհված Ալվարդ Վարդանյանի անունը: Տարբեր տարիների Հոչանցի տնօրեններ են եղել Հովհաննես Հարությունյանը, Վազգեն Գրիգորյանը, Հասմիկ Բաղալյանը, Թուշիկ Մելքոնյանը:

2019-2020 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 10 աշակերտ: 2016 թ. ապրիլյան պատերազմի ժամանակ Հոչանցից 5 հոգի մասնակցել են ռազմական գործողություններին:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական եղանակով՝ բնակավայրում գտնվող աղբյուրների հաշվին: Գործող աղբյուրներից մեկը ունի Ճմաճմա անունը:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

[1679] Լալայեան Ե., Զանգեզուր, «Ազգագրական հանդես», գիրք Դ, հմ. 2, Թիֆլիս, 1898, էջ 50:

[1680] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 164:

[1681] Յակոբեան Ա., Պատմա-աշխարհագրական և վիմագրագիտական հետազոտութիւններ..., էջ 391-392:

Համայնքն ունի գյուղապետարան, դպրոց, բուժկետ:

Հոչանցում 2018 թ. կար 17 տուն, 53 բնակիչ[1682]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՁՈՐԱՓ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Բաղք գավառում: Բնակավայրը գտնվում է Հակարիի միջին հոսանքի աջափնյա բարձունքին:

Աշխարհագրական դիրքը և տեղաբաշխվածությունը, աղբյուրներից ստացված տեղեկությունները թույլ են տալիս ասել, որ Ձորափը Սյունիքի հնագույն Շագուա բնակավայրն է[1683]:

Նախախորհրդային քարտեզներում բնակավայրը կրում էր Շիխովա անունը:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել էին:

Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ Շագուա բնակավայրի պատմական անցյալի մանրամասները մոռացության մատնվեն:

19-րդ դարի սկզբներին ամայության մատնված գյուղում հաստատվել էին քուրդ խաշնարած մի քանի ընտանիքներ: Հայկական բնակավայրը նրանք անվանել էին Կարակիշլյար:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված թուրքերն ու քրդերը հիմնականում կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ: Այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մոսկվայի կենտրոնական բոլշևիկյան իշխանությունների որոշմամբ այս տարածքները բռնակցվել էին ԱԽՍՀ-ին: Կարակիշլյարը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Ղուբաթլիի շրջանի կազմում:

1993 թ. նոյեմբերի սկզբներին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

1995 թ. այստեղ հաստատվեցին Ադրբեջանից բռնագաղթված մի քանի հայ ընտանիքներ և ՀՀ բնակավայրերից քաղաքացիներ: Գյուղը ստացավ Ձորափ անունը:

Ձորափի աշակերտները սովորում են Մարտունաշենի հիմնական դպրոցում:

[1682] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

[1683] Ղ. Ալիշան, Սիսական, էջ 270:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական ջրհորների հաշվին: Համայնքի տարածքով անցնում է ոռոգման ջրատարը, որը նպաստում է հողագործության զարգացմանը:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում է գյուղապետարան, բուժկետ, առևտրի 1 կետ:

Ձորափում 2003 թ. կար 86 բնակիչ, 2010 թ.՝ 27 տուն, 80 բնակիչ[1684], 2018 թ.՝ 30 տուն, 101 բնակիչ[1685]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՂԱԶԱՐԱՊԱՏ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Բերդաձոր գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Շալուա և Հոչանց գետերի արանքում՝ անտառապատ և ջրառատ մի տարածքում:

Ալղուլիշենը Արցախի հնագույն բնակավայրերից մեկն է: Նրա պատմական անունը մեզ չի հասել: Սերո Խանզադյանը գտնում է, որ վերոհիշյալ բնակավայրը Ստեփանոս Օրբելյանի (13-րդ դար) հիշատակած Աղախիրգ գյուղն է[1686]: Բայց այս մոտեցումը հիմնավոր չէ, որովհետև Աղախիրգը գտնվում է Սյունիքում, իսկ Ալղուլիշենը՝ Արցախում:

Գյուղը 18-րդ դարի երկրորդ կեսից մինչև հայաթափումը՝ 1918 թ., պատմական ծանր ժամանակաշրջան է ապրել:

18-րդ դարի երկրորդ կեսին Ղարաբաղի Իբրահիմ խանը ամեն կերպ ձգտում էր ոչնչացնել Սյունիքի և Արցախի միջև գտնվող վերջին հայկական բնակավայրերը, այդ թվում՝ Ալղուլիշենը: Իբրահիմ խանի ավազակախմբերը, ամեն անգամ արժանի հակահարված ստանալով, նահանջել են:

Ռուսական տիրապետության շրջանում գյուղի վիճակը կայունացել էր: Դրա մասին է խոսում նաև բնակչության արձանագրած աճը: Եթե 1850 թ. Ալղուլիշենում կար 21 տուն, 225 բնակիչ[1687], ապա 1905 թ. այդ թվերը հաջորդաբար հասան 100-ի և 984-ի[1688]: 1918 թ.՝ ճակատագրական այդ տարում, գյուղում կար 1012 հայ բնակիչ[1689]:

19-րդ դարի պատմական վավերագրերում գյուղը ներկայացված է Ալղուլիշեն, Ալղուլի, Ալիղուլի անուններով[1690]:

[1684] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1685] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

[1686] «Սովետական Հայաստան», ամսագիր, հմ. 6, Երևան, 1984, էջ 26:

[1687] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ174:

[1688] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10403, թ. 54-55:

[1689] ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 59, թ. 5:

[1690] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, 6775, 8583, 10403; «Նոր դար», հմ. 64, 1899; «Մշակ», հմ. 2, 1906:

Գյուղն ուներ եկեղեցի՝ Սբ. Հռիփսիմե կամ Սբ. Աստվածածին անվամբ[1691]:

1905 թ. թուրքերից և քրդերից բաղկացած ավազակախմբերը փորձեցին գրավել հայաբնակ գյուղը: Երկու օր համառ մարտեր ընթացան: Գորիսից հասած զորքը բնակչությանը փրկեց վերահաս աղետից: Ալղուլեցիք ընդարումների ժամանակ 10 զոհ ունեցան, 20 տուն էլ հրո ճարակ դարձավ[1692]:

Գյուղի ազգաբնակչությունը ստիպված ապաստանեց Խնածախում և Բերդաձորի ենթաշրջանի գյուղերում: Իրավիճակի կարգավորվելուց հետո ալղուլեցիք նորից վերադարձել էին հայրենի օջախները:

1918 թ. նորից բռնկված հայ-թաթարական ընդարումների հետևանքով Ալղուլիշենի բնակիչները վերջնական հեռացան գյուղից և հաստատվեցին Ստեփանակերտում:

Խորհրդային տարիներին Ալղուլիշենը, հայտնվելով ԱԽՍՀ Լաչինի շրջանի կազմում, լցվեց թուրք-թաթարներով և քրդերով: Ավերվեցին հայկական պատմամշակութային արժեքները, այդ թվում՝ եկեղեցին և գերեզմանատունը:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ ազատագրվեց պատմական հայկական բնակավայրը: 1995 թ. այստեղ հաստատվեցին Ադրբեջանից բռնագաղթված ընտանիքներ, ինչպես նաև ՀՀ բնակավայրերից քաղաքացիներ: Բնակավայրը ստացավ Ղազարապատ անվանումը:

1996 թ. գյուղում հիմնադրվել է քառամյա դպրոց, որտեղ սովորում էր 7 աշակերտ: Ղազարապատի բարձր դասարանի 9 աշակերտներ սովորում էին հարևան Գողթանիկի (Փիրջահան) գյուղի միջնակարգ դպրոցում: 2003 թ. կառուցվել է դպրոցի նոր մասնաշենք, և կրթական հաստատությունը ստացել է միջնակարգի կարգավիճակ: 2013-2014 ուսումնական տարում դպրոցի աշակերտների թիվը հասել էր 22-ի: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Ռ. Հայրապետյանը, Ա. Բարեյանը և Ա. Տոնոյանը:

Ղազարապատի երիտասարդությունը մասնակցել է 2016 թ. ապրիլյան պատերազմին:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը բնակչությունը լուծում է բնակավայրի աղբյուրների միջոցով:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները գյուղում հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, դպրոց:

[1691] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ174:

[1692] Ա-Դ, Հայ-թուրքական ընդհարումները Կովկասում 1905-1906 թթ., էջ 263; «Մուրճ» ամսագիր, հմ. 10, 1905, էջ 106:

Ղազարապատում 1995 թ. կար 15 տուն, 62 բնակիչ[1693], 2003 թ.՝ 46 մարդ, 2010 թ.՝ 64 մարդ[1694], 2018 թ.՝ 10 տուն, 45 մարդ[1695]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՄԱՄԱՐՔ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Հաբանդ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Որոտանի ստորին հոսանքի աջափնյա հարթավայրային մասում:

Կարծիք կա, որ հնագույն շրջանում գյուղը նույնպես ունեցել է Մամար անունը, որն ունի արեգադեմ իմաստը և առընչվում է արևի պաշտամունքը խորհրդանշող սրբավայրի հետ[1696]: Փաստն այն է, որ ներկայիս բնակավայրի հյուսիսային եզրին մնացել են նախկին հայկական գյուղի ավերակները:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի և Նախիջևանի խաների ու քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել էին: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում՝ Մամարքի, պատմական անցյալի մանրամասները մոռացության մատնվեն:

Վերոհիշյալ ժամանակահատվածում մոռացության մատնված գյուղում հաստատվել էին քուրդ և թուրք խաշնարած մի քանի ընտանիքներ: Որոշ հանգամանքների բերումով հայկական բնակավայրի անունը նրանք պահպանել են:

Հայտնի է, որ ներկայիս Քաշաթաղի շրջանի որոշ գյուղերի հայ բնակիչներ, Շահ Աբասի ժամանակներից սկսած և առավել շատ 18-րդ դարի երկրորդ կեսին, Ղարաբաղի խաների ճնշումներին դիմակայելու և հայրենի օջախներից չհեռանալու միտումով մահմեդականություն են ընդունել: Հնարավոր է, որ նման տխուր ճակատագրի է արժանացել նաև Մամարքի հայությունը, որոնց մի մասը, մնալով գյուղում, շարունակել է պահպանել նախկին բնակավայրի անունը:

Տասնամյակների ընթացքում եկվորները կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ: Այսօր այդ հուշարձանների հետքերը հիմնականում չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մոսկվայի կենտրոնական բոլշևիկյան իշխանության որոշմամբ այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին: Մամարքը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Ղուբաթլիի շրջանի կազմում:

[1693] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1694] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 519:
[1695] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:
[1696] Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 176:

1993 թ. նոյեմբերի սկզբներին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց: 1995 թ. ազատագրված բնակավայրում հաստատվեցին ՀՀ բնակավայրերից մի քանի ընտանիքներ: Գյուղի պաշտոնական անունը դարձավ Մամարք:

Համայնքն էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Համայնքի տարածքով անցնող ոռոգման ջրատարները նպաստում են հողագործության զարգացմանը:

Հեռուստատեսությունը, բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Բնակավայրում գործում է գյուղապետարան:

Մամարքի համայնքի կազմում ընդգրկված է նաև Հալե գյուղը:

Մամարքում 2005 թ. կար 54 մարդ, 2010 թ.՝ 63 մարդ[1697], 2018 թ.՝ 12 տուն, 41 մարդ[1698]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՀԱԼԵ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Հաբանդ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Որոտան գետի ստորին հոսանքի աջափնյակում՝ Ծավիկ լեռան փեշերին:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի և Նախիջևանի խաների ու քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել էին: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում՝ Հալեի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

Վերոհիշյալ ժամանակշրջանում ամայության մատնված գյուղում հաստատվել էին թուրք և քուրդ քոչվոր մի քանի ընտանիքներ: Հայկական գյուղը նրանք անվանեցին Գալ: Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված թուրքերն ու քրդերը հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ: Այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո, Մոսկվայի կենտրոնական բոլշևիկյան իշխանության որոշմամբ, այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին: Գալը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Ղուբաթլիի շրջանի կազմում:

1993 թ. նոյեմբերի սկզբներին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

[1697] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 520:
[1698] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

1995 թ. վերաբնակների կարգավիճակով ազատագրված գյուղում հաստատվել են ՀՀ բնակավայրերից մի քանի ընտանիքներ: Գյուղը ստացավ Հալե անունը:

Հալեն էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական ջրհորների հաշվին: Հեռուստատեսությունը, բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Հալեում 2010 թ. կար 11 տուն, 38 բնակիչ[1699], 2018 թ.՝ 7 տուն, 23 բնակիչ[1700]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՄԱՐՏՈՒՆԱՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Բաղք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հակարիի միջին հոսանքի շրջանում, գետի աջ ափին՝ խոր ընկած հովտում: Գետահովտի աջ եզրից սկսվում է Տեղի սարահարթը:

Հակարիի հոսանքն ի վեր մարդու համար հարմարավետ ապրելու այս վայրերը 18-րդ դարի երկրորդ կեսից Ղարաբաղի ու Նախիջևանի խաների և քրդական ցեղերի ճնշումների տակ արագ հայաթափվեցին և այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառների, գյուղերի, այդ թվում՝ Մարտունաշենի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

19-րդ դարի սկզբներին արդեն ամայության մատնված գյուղում հաստատվել էին թուրքեր և քրդեր: Եկվորները բնակավայրն անվանեցին Կարաջալի:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված թուրքերն ու քրդերը հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Այսօր այս հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Խորհրդային կարգերի հաստատման արշալույսին այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին: 1923 թ. Կարաջալին գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի, իսկ 1930 թ.՝ Ղուբաթլիի շրջանի կազմի մեջ:

1993 թ. նոյեմբերի սկզբներին ԱՀ պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց: 1995 թ. սկսվեց գյուղի վերաբնակեցման գործընթացը: Այստեղ հաստատվեցին ՀՀ-ի տարբեր բանակվայրերից մի քանի ընտանիքներ:

Ազատագրելուց հետո գյուղի վերին բարձրադիր մասում սրբատեղի է օծվել և ներկայումս բնակչության համար ուխտագնացության վայր է դարձել:

1996 թ. գյուղում դպրոց է հիմնադրվել: Այն կրում է արցախյան ազատամարտի նահատակ Մարտուն Պապիկյանի անունը: Դպրոցը երկհարկանի տիպային շինություն է: Ունի 18 դասասենյակ: 2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 35 աշակերտ, դասավանդում՝ 16 ուսուցիչ: Տարբեր տարիների դպրոցը ղեկավարել են Հ. Քոսյանը, Ս. Աբունցը, Է. Կարապետյանը, Ռ. Բաբաջանյանը, Մ. Դաղունցը:

2016 թ. ապրիլյան պատերազմի ժամանակ գյուղից 5 կամավորականներ մասնակցել են մարտական գործողություններին:

Գյուղն էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական ջրհորների հաշվին: Համայնքի տարածքով է անցնում «Մարտունաշեն» ոռոգման ջրատարը, որը նպաստում է հողագործության զարգացմանը:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, բուժկետ, դպրոց, առևտրի 1 կետ:

Մարտունաշենում 2003 թ. կար 86 մարդ, 2010 թ.՝ 54 մարդ[1701], 2018 թ.՝ 18 տուն, 66 մարդ[1702]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՄԻՐԻԿ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Աղահեճք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Աղավնո գետի Միրիկ վտակի երկու ափերին: Միրիկը շրջապատված է Սյունիքի լեռնաշղթայի Մեծ Իշխանասար և Բևեռաթաղ լեռներով: Գյուղը պատմական աղբյուրներում հիշատակվել է Մերիկ, իսկ խորհրդային շրջանից սկսած՝ Միրիկ անվանաձևով:

Գյուղի հյուսիսային հատվածում գտնվող բարձր լեռան վրա է գտնվում Սբ. Աստվածածին եկեղեցին: Թաղածածկ, կոփածո քարով ու կրաշաղախով, անկյունները՝ սրբատաշ քարաշարով բազիլիկ եկեղեցու պատերի մեջ ագուցված են 12-13-րդ դարերի տապանաքարեր, իսկ որմերին պահպանված արձանագրությունները, որոնցում նաև տեղեկություններ կան եկեղեցու շինարարության վերաբերյալ, փաստում են, որ այն կառուցվել է 1682 թ. Հախնազարի կողմից[1703]: Նրա տապանաքարը ևս պահպանված է և թվագրված է 1654:

19-րդ դարի վերջերին Երվանդ Լալայանը, լինելով Աղավնոյի հովտում, արձանագրել է. «Հերիկի, Մերիկի, Բայենդուրի, Հոչասի, Փչանիսի, Չրախլուի եկեղեցիները խոտանոցներ են դարձուած, Կատոսի, Սունասարի, Ղորդղաձքի եկեղեցիները իբր փարախ կամ գոմ են ծառայում»[1704]:

[1699] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1700] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

[1701] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 521:

[1702] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

[1703] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 134:

[1704] Լալայեան Ե., Զանգեզուր, էջ 50:

Եկեղեցու պահպանմանը հավանաբար նպաստել է խորհրդային ժամանակներում նրա որպես ակումբ օգտագործումը:

Եկեղեցին ուսումնասիրվել ու չափագրվել է Ս. Կարապետյանի կողմից 1990-ական թվականներին:

2017 թ. գյուղի տարածքում հայտնաբերվել է Վանի թագավորության ժամանակաշրջանին վերաբերող ամրոց, որը հնագիտական ուսումնասիրության փուլում է գտնվում:

Վերջերս հայտնաբերված մի փաստաթղթում Քաշաթաղի գավառից Տաթևին հարկատու գյուղերի 1733 թ. ցանկում հիշատակված է նաև Մերիկը[1705]:

Միրիկի հարևանությամբ են գտնվում Մոշաթաղ և Ղուշչի գյուղերը: Քանի որ վերջինս ավերված ու անմարդաբնակ է, տարածքը ներառված է Միրիկի համայնքի մեջ:

Ղուշչի գյուղի տարածքում է գտնվում Մկնատամի խաչ փոքրիկ եկեղեցին: 12–13-րդ դարերին վերագրվող եկեղեցին կապտավուն բազալտից կառուցված միանավ, թաղածածկ շինություն է՝ ներկա դրությամբ զուրկ արձանագրություններից[1706]:

1924 թ. Միրիկ գյուղի հանդամասերից մեկում հովիվները պատահաբար հայտնաբերել են 16-րդ դարի պարսկական դրամներից բաղկացած դրամական գանձ, որը տեղափոխվել է Բաքու[1707]:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին Մերիկը և շրջակա հայկական գյուղերը Ղարաբաղի խաների, քրդական ցեղերի ճնշումների տակ հայաթափվել են: 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Մերիկում քրդեր են հաստատվել:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվել է: Քաշաթաղի շրջանի ողջ տարածքի ազատագրումից հետո՝ մասնավորապես 1995 թ., սկսվել է Միրիկի վերաբնակեցման գործընթացը: Գյուղի առաջին վերաբնակիչները ՀՀ Արարատի մարզից այստեղ հաստատվել են 1995 թ. փետրվարի 25-ին: Նույն թվականին էլ հիմնվել է միջնակարգ դպրոցը, որի առաջին տնօրենն էր Շ. Սահակյանը, ապա՝ Ֆ. Մկրտչյանը, Ա. Աբգարյանը, իսկ 2008 թ. հոկտեմբերից՝ Ն. Սարգսյանը: Ներկա դրությամբ դպրոցում դասավանդում են 13 ուսուցիչներ, իսկ աշակերտների թիվը 41 է:

Գյուղի վերաբնակիչներից Հ. Գևորգյանը և Խ. Թադևոսյանը արցախյան ազատամարտի մասնակիցներ են:

Գյուղը չունի մանկապարտեզ, բուժկետ: Գյուղապետարանը և ակումբը նույն շենքում են տեղակայված: Գյուղը էլեկտրաֆիկացված է, ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

[1705] Կոստիկյան Ք., Քաշաթաղի 17-րդ պատմությանը վերաբերող մի փաստաթուղթ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XX, Երևան, 2001, էջ 169–170:

[1706] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 138–139:

[1707] Пахомов Е., Монетные находки в Аз.ССР в 1924 г., "Известия Азербайджанского археологического комитета", вып. 1, Баку, 1925, с. 81–82.

Միրիկում 2018 թ. կար 47 տուն, 158 բնակիչ[1708]: Հիմնական զբաղմունքը անասնապահությունն է: Զբաղվում են նաև մեղվաբուծությամբ և հողագործությամբ:

ՄՇԵՆԻ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Աղահեճ գավառում: Բնակավայրը գտնվում է Հոչանց գետի ստորին հոսանքի աջափնյա սարալանջին: Մշենին երեք կողմերից շրջապատված է գեղատեսիլ լեռներով: Գյուղի մոտ՝ Հոչանց գետի վրա, կա 10 մ բարձրությամբ ջրվեժ:

Մշենին Սյունիքի հնագույն գյուղերից է: Մշենիի մասին տեղեկություններ են պահպանվել 13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» աշխատության մեջ[1709]:

Հին հայկական բնակավայրը բաղկացած էր երկու թաղամասերից՝ ներքին և վերին: Ներքին թաղամասում պահպանվել են ժայռափոր բնակարաններ: Միջնադարում նման տները Սյունիքի և Արցախի լեռնային գավառների գյուղերին հատկանշական էին:

Քանի որ տարածքը միջնադարում խիտ բնակեցված է եղել, հետևաբար այստեղ ժամանակի ընթացքում կառուցվել են հոգևոր և պաշտպանական նշանակության կառույցներ:

Մշենուց արևելք՝ Հոչանցի ձախափնյա ձորալանջին, պահպանվել են Ք. ա. 2–1-ին հազարամյակներին վերաբերող կիկլոպյան ամրոցի մնացորդները: Ուսումնասիրողների մի մասի կարծիքով վերոհիշյալ ամրոցը Ստեփանոս Օրբելյանի հիշատակած Խոժոռաբերդն է[1710]:

Պատահական չէ, որ տարածաշրջանում 19-րդ դարում հաստատված թուրքալեզու եկվոր ցեղերը հայկական ամրոցը անվանել են Գյավուրղալա[1711]:

19-րդ դարի սկզբներին թուրքերի և քրդերի ճնշումների տակ գյուղը հայաթափվել է: Այստեղ հաստատված եկվորները՝ իրենց լեզվի հնչյունային համակարգին համապատասխան, գյուղը անվանել են Միշնի:

Մի քանի տասնամյակների ընթացքում՝ մասնավորապես խորհրդային տարիներին, հիմնականում ոչնչացվել են Մշենու և նրա շրջակայքի հայկական պատմամշակութային արժեքները:

[1708] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

[1709] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 399:

[1710] Карагезян А., К локализации гавара Кашатаг, «ԼՀԳ», հմ. 1, 1987, էջ 44:

[1711] Ադրբեջանական խորհրդային հանրագիտարան, հ VII (ադրբեջաներեն), Բաքու, 1983, էջ 14:

Խորհրդային ժամանակահատվածում այս տարածքները բռնակցվել են ԱԽՍՀ-ին: 1923 թ. Միշնին գտնվում էր Կարմիր Քուրդիստանի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմի մեջ:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ պատմական հայրենիքի այս հատվածը նույնպես ազատագրվեց:

ՀՀ-ից առաջին վերաբնակիչները գյուղում հաստատվել են 1995 թ.: Նույն տարում հիմնվել է գյուղի միջնակարգ դպրոցը: Նոր դպրոցական շենքը կառուցվել է 1997 թ.:

1995-1996 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 38 աշակերտ: Բնակչության արտահոսքի հետևանքով աշակերտների թվաքանակը կտրուկ նվազել է: 2018-2019 ուսումնական տարում դպրոցում արդեն սովորում էր 10 աշակերտ: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Գևորգ Խաչատրյանը, Աշոտ Ներսիսյանը, Մաղլենա Վարդանյանը:

Արցախյան ազատագրական պատերազմին գյուղից մասնակցել է 3 հոգի:

Գյուղը էլեկտրաֆիկացված է, ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, բուժկետ, դպրոց, առևտրի 3 կետ:

Գյուղի տարածքում է գտնվում նաև փոքր ՀԷԿ:

Մշենում 2005 թ. կար 85 մարդ, 2010 թ.՝ 78 մարդ[1712], 2018 թ.՝ 24 տուն, 64 մարդ[1713]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԱՐՎԱԿԱՆ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Աղահեճք գավառում: Բնակավայրը տեղակայված է Հոչանց գետի ստորին հոանքի աջափնյա ձորալանջին:

Արվականը Սյունիքի հնագույն բնակավայրերից է: Գյուղը Արուական անունով ներկայացված է 13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Ժամանակագրության» մեջ[1714]:

Ընդհանուր առմամբ Արուականին հարող շրջակա տարածքները միջնադարում խիտ բնակեցված են եղել և այդտեղ գտնվում էին մի քանի հայկական գյուղեր:

Դեռևս 1980 թ. Արվականի շրջակայքում Ադրբեջանի ԳԱ հնագիտության ինստիտուտը պեղումներ էր կազմակերպել, որի ընթացքում հայտնաբերվել են բրոնզի և երկաթի դարաշրջաններին վերաբերող նյութեր[1715]:

[1712] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 523:

[1713] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

[1714] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 42:

[1715] Алиев А., Исследование в Лачинском районе, «Археологические открытия 1980 г.», с. 414; հմմտ. Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 159:

Նույն ժամանակահատվածում Արվականից ոչ շատ մեծ հեռավորության վրա հայտնաբերվել է վանքի բարավորի վրա փորագրված հայատառ արձանագրություն[1716], որը ժամանակին ադրբեջանցիները ներկայացրել են որպես աղվանական:

19-րդ դարի սկզբներին թուրքերի և քրդերի ճնշումների տակ գյուղը հայաթափվել էր: Այստեղ հաստատված թուրքերն ու քրդերը բնակավայրը անվանեցին Արբիյան: Այդպես էր ներկայացված նաև 1904 թ. կազմված Ելիզավետպոլի նահանգի քարտեզում:

Խորհրդային տարիներին գյուղը անվանափոխվեց և դարձավ Ալխասլի: Մի քանի տասնամյակի ընթացքում եկվոր խաշնարածները հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները:

Խորհրդային ժամանակշրջանում այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին: 1921 թ. Ալխասլին գտնվում էր Կարմիր Քուրդիստանի, իսկ 1930 թ.՝ Զանգելանի շրջանի կազմի մեջ:

1993 թ. ԱՀ պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

ՀՀ-ից առաջին վերաբնակիչները գյուղում հաստատվել են 1997 թ.: Նույն թվականին էլ գյուղում դպրոց է հիմնադրվել: 2015 թ. այն հիմնական դպրոցի կարգավիճակ ստացավ: 2017-2018 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 17 աշակերտ, դասավանդում՝ 9 ուսուցիչ: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Սուրիկ Կարոյանը, Մյասնիկ Գրիգորյանը, Հանիբալ Հովհաննիսյանը, Հայկարամ Մելքոնյանը:

Բնակավայրը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական կարգով: Գյուղում կան աղբյուրներ, որոնց անունները անհայտ են:

Հեռուստատեսությունը, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Գյուղն ընդգրկված է Մշենի համայնքի կազմում:

Արվականում 2003 թ. կար 66 մարդ, 2010 թ.՝ 42 մարդ[1717], 2018 թ.՝ 14 տուն, 66 մարդ[1718]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՄՈՇԱԹԱՂ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Աղահեճք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Աղավնոյի միջին հոսանքի ձախափնյա գողտրիկ հովիտներից մեկում: Գյուղի թիկունքից վեր են խոյանում բարձրաբերձ լեռներ:

[1716] Свазян Г., Об одной «Албанской надписи», «ԼՀԳ», հմ. 2, էջ 42-471:

[1717] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 524:

[1718] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 6:

Ուսումնասիրողներից ոմանք հակված են վերոհիշյալ բնակավայրը համադրել 13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի հիշատակած Մոշենք գյուղի հետ[1719]: Ղ. Ալիշանը բնակավայրը ներկայացրել է Բոզտու անունով[1720]: Ս. Սարգսյանի կարծիքով Մոշաթաղը Ղևոնդ Ալիշանի կազմած գյուղանունների ցանկում տեղ գտած Արահուծ բնակավայրն է[1721]:

Գյուղի մոտ՝ Աղավնոյի աջ ափին, պահպանվել են միջնադարյան ջրաղացի մնացորդները:

Թռուցիկ քննությունը թույլ է տալիս ասել, որ Մոշաթաղը Սյունիքի հնագույն բնակավայրերից է:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քուրդ ցեղապետերի արյունոտ ձեռքերը հասան նաև հայոց երկրի այս հատվածը: Տեղի հայությունը, այդ ճնշումներին չդիմանալով, հեռացավ օտար երկրներ, լավագույն դեպքում՝ հարևան հայկական համեմատաբար ապահով գավառներ:

Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում՝ Մոշաթաղի պատմական անցյալի մանրամասները մոռացության մատնվեն: 19-րդ դարի սկզբներին ամայության մատնված գյուղում հաստատվել էին քուրդ քոչվոր մի քանի ընտանիքներ: Հայկական գյուղը նրանք անվանեցին Բոզլու:

Մի քանի տասնամյակի ընթացքում եկվորները հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո, Մոսկվայի կենտրոնական բոլշևիկյան իշխանության որոշմամբ, այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին: Բոզլուն 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմում:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

Պատերազմի անմիջապես ավարտից հետո՝ 1994 թ., այստեղ հաստատվեցին ՀՀ բնակավայրերից վերաբնակիչներ: Գյուղը ստացավ Մոշաթաղ անունը:

1995 թ. Մոշաթաղում դպրոց բացվեց: 2016-2017 ուսումնական տարում սովորում էր 46 աշակերտ, դասավանդում՝ 14 ուսուցիչ: 2009 թ. դպրոցական շենքը հիմնանորոգվել է: Տարբեր տարիների դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Ս. Գալստյանը, Վ. Գրիգորյանը, Կ. Սարգսյանը, Հ. Հակոբյանը, Ա. Հովհաննիսյանը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական կարգով՝ բնական աղբյուրների հաշվին:

[1719] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 399:
[1720] Ղ. Ալիշան., Սիսական, էջ 267:
[1721] Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 145:

Հեռուստատեսությունը, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, բուժկետ, դպրոց, մանկապարտեզ և առևտրի 2 կետ:

Մոշաթաղում 2005 թ. կար 203 բնակիչ, 2010 թ.՝ 50 տուն, 183 բնակիչ[1722], 2018 թ.՝ 53 տուն, 220 բնակիչ[1723]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՀԵՐԻԿ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Աղահեճք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Աղավնոյի վերին հոսանքում՝ գետի աջափնյակից 3 կմ դեպի արևելք՝ գեղատեսիլ լեռնային հովիտներից մեկում: Գյուղամիջով հոսում է Աղավնոյի վտակներից մեկը:

Հերիկը հարուստ է քարանձավներով, որոնց մի մասը նախկինում ծառայել է որպես բնակարան, իսկ այժմ օգտագործվում են որպես գոմեր:

Հերիկը Սյունիքի հնագույն բնակավայրերից մեկն էր: Գյուղի ձևավորման կոնկրետ ժամանակահատվածը հայտնի չէ, սակայն 13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը Տաթևի հարկատու գյուղերի ցանկում վերոհիշյալ բնակավայրը ներկայացրել է Հայրի անվամբ:

Մինչև 19-րդ դարի վերջը և 20-րդ դարի սկիզբը այստեղ հայեր էին ապրում:

Հերիկի Սբ. Գրիգոր եկեղեցին (16-րդ դար), որն առայսօր կանգուն է, 19-րդ դարի վերջերին քրդերն օգտագործում էին որպես խոտանոց: Եկեղեցուն կից կա մի կամարակապ քարանձավ, որի ներսի պատերին խաչեր են քանդակված և ծառայել են որպես սրբատեղի:

Գյուղի տարածքում կան բազմաթիվ միջնադարյան խաչքարեր, որոնց մեծ մասը կոտրված և արձանագրությունները ջնջված են:

1904 թ. կազմված քարտեզում գյուղը ներկայացված է Բաղատուն-Հերիկ անունով:

Խորհրդային տարիներին այստեղ ապրող քրդերի թիվն անհամեմատ շատացավ: 1988 թ. այստեղ կար 275 տնտեսություն[1724]: Եկվորները գյուղը անվանափոխելով դարձրել են Ահմադլի: Բնակավայրը 1923 թ. եղել է ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմի մեջ:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի կողմից Հերիկը ազատագրվել է:

[1722] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 525:
[1723] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:
[1724] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

Հերիկի վերաբնակեցման գործը սկսել էր դեռևս մինչև պատերազմի ավարտը՝ 1994 թ. ապրիլից: Իր ընտանիքով Գորիսից այստեղ հաստատվեց Արամ Բակունցի ընտանիքը: Նա հիմնում է անասնապահական ֆերմա և կաթի վերամշակման փոքր գործարան: Հետագա տարիներին այստեղ են հաստատվել ՀՀ-ից և ԱՀ-ից մի քանի ընտանիքներ:

1995 թվականից գյուղում գործել է միջնակարգ դպրոց: Սակայն աշակերտների թվաքանակի կրճատման պատճառով այն շուտով փակվեց:

2011 թ. դպրոցը նորից վերաբացվեց: «Հայրենասեր» բարեգործական կազմակերպության և Լոս Անջելեսի հայ համայնքի օգնությամբ 2016 թ. կառուցվեց նոր, հարմարավետ և ժամանակակից պայմաններին համապատասխան դպրոցական նոր շենք: Դպրոցը կրում է Արցախի հերոս Ռոբերտ Աբաջյանի անունը:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Սիրակ Գալստյանը, Անահիտ Մկրտչյանը, Սամվել Պագալվյանը:

2016 թ. ապրիլյան պատերազմի ժամանակ գյուղի 5 բնակիչներ մասնակցել են ռազմական գործողություններին: Հերիկը ներառված է Մոշաթաղ համայնքի կազմում:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծված է անհատական կարգով՝ բնական աղբյուրների միջոցով: Գյուղը ունի հանքային աղբյուրներ:

Հեռուստատեսությունը, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Հերիկում 2010 թ. կար 11 տնտեսություն, 46 մարդ[1725], 2019 թ.՝ 13 տնտեսություն, 63 մարդ[1726]:

ԲԵՐԴԻԿ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Աղահեճք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Աղավնոյի միջին հոսանքի ձախ ափին՝ լեռնային բարձունքի ստորոտում:

Ուսումնասիրողներից Ս. Կարապետյանի կարծիքով վերոհիշյալ գյուղը 13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի հիշատակած Փուլն բնակավայրն է[1727]:

Բերդիկը Սյունիքի հնագույն բնակավայրերից է: Գյուղից 1 կմ արևմուտք՝ Աղավնոյի աջ ափի բարձրադիր վայրում են գտնվում միջնադարյան ամրոց-բնակավայրի ավերակները[1728]:

[1725] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 521:
[1726] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1727] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, (հավելված), էջ 42; հմմտ., Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 133:
[1728] Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 146:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել էին: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ միջնադարյան Փուլն բնակավայրի պատմական անցյալի մանրամասները մոռացության մատնվեն:

Վերոհիշյալ ժամանակահատվածում հայկական բնակավայրում հայտնվեցին թրքախոս քոչվոր քրդերի մի քանի ընտանիքներ: Հայկական գյուղը նրանք անվանեցին Բուլիջա:

Ի դեպ, 1904 թ. կազմած քարտեզում բնակավայրը նույնպես ներկայացված է Բուլիջա անունով:

Մի քանի տասնամյակի ընթացքում եկվորները հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Բերդերի, եկեղեցիների քարերը նրանք իրենց բնակարանների և գոմերի համար օգտագործել են որպես շինանյութ:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մոսկվայի կենտրոնական բոլշևիկյան իշխանության որոշմամբ այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին:

Խորհրդային տարիներին գյուղը վերանվանվեց և դարձավ Ղալաչա:

Այս բանակավայրը 1923 թ. գտնվում էր Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Ղուբաթլիի շրջանի կազմում:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ Ղալաչան ազատագրվեց:

1995 թ. վերաբնակիչների կարգավիճակով ՀՀ մարզերից այստեղ հաստատվել են մի քանի ընտանիքներ: Գյուղը ստացավ Բերդիկ անունը:

Գյուղի աշակերտները հաճախում են Հերիկի հիմնական դպրոց: Բերդիկը ընդգրկված է Մոշաթաղի համայնքի կազմում:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական կարգով՝ բնական աղբյուրների հաշվին: Բերդիկից 3 կմ դեպի արևմուտք կան հանքային ջրերի աղբյուրներ:

Հեռուստատեսությունը բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Բերդիկում 2003 թ. կար 33 բնակիչ, 2010 թ.՝ 8 տուն, 26 բնակիչ[1729], 2018 թ.՝ 7 տուն, 22 բնակիչ[1730]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1729] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 525:
[1730] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:

ՄՈՒՇ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիք նահանգում: Բնակավայրը տեղաբաշխված է Ողջի գետի ստորին հոսանքի աջափնյա ձորալանջին:

Նախկինում այստեղ եղած հայկական բնակավայրերի մասին սկզբնաղբյուրներում հիշատակություններ չեն հայտնաբերվել:

Խորհրդային տարիներին արաքսամերձ այս շրջաններում, որոնք գտնվում էին ՀԽՍՀ հարևանությամբ, Ադրբեջանին բռնակցելուց հետո արագաթափ սկսեցին ադրբեջանցիներով և քրդերով վերաբնակեցնելու քաղաքականություն իրագործել:

Նախկին հայկական գյուղի ավերակները և պատմամշակութային նշանակության հուշարձանները մաքրեցին և կառուցեցին Իչարի Մուշլան կամ Մելիքլի անունով ադրբեջանցիներով և քրդերով բնակեցված բնակավայրը:

Գյուղը խորհրդային տարիներին Զանգելանի շրջանի կազմի մեջ էր: Բնակավայրն ազատագրվեց 1993 թ.: Հայկական զորամիավորումների կողմից միջանցք բացվեց և խաղաղ բնակչությունը հեռացավ Ադրբեջան:

1998 թ. ապրիլից սկսվեց գյուղերի վերաբնակեցման գործընթացը: Այստեղ հաստատվեցին ՀՀ-ից, ԱՀ-ից վերաբնակիչներ, ինչպես նաև Ադրբեջանից բռնագաղթված հայ ընտանիքներ: Գյուղը ստացավ Մուշ անունը:

Բնակլիմայական պայմանները թույլ են տալիս, որ մշեցիները մշակեն նաև արևադարձային բուսատեսակներ:

Սկզբում գյուղի դպրոցական երեխաները հաճախում էին Ալաշկերտի դպրոց:

2017 թ. «Հայրենասեր» կազմակերպության օժանդակությամբ կառուցվել է նոր դպրոց, որը կրում է ապրիլյան պատերազմի նահատակ, ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանակիր Արմենակ Ուրֆանյանի անունը:

Դպրոցը միջնակարգ է, որտեղ 2018-2019 ուսումնական տարում սովորում էր 46 աշակերտ: Դպրոցի տնօրենն է Լիանա Հակոբյանը:

Ապրիլյան պատերազմի օրերին զենքի ունակ մշեցիներն իրենց մասնակցությունն են բերել ԱՀ սահմանների պաշտպանման գործում:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Բնակավայրում առկա է գիշերային լուսավորում:

Համայնքի բնակչության խմելու ջրի հարցը լուծվել է անհատական օգտագործման ջրհորների միջոցով: Բնակավայրի տարածքով անցնում են Մուշ-1, Մուշ-2 ոռոգման ջրատարները, որոնք նպաստում են հողօգտագործման զարգացմանը:

Հեռուստատեսությունը, անլար հեռախոսակապը և ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, դպրոց:

Մուշում 2018 թ. կար 32 տուն, 121 բնակիչ[1731]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՆՈՐԱՇԵՆԻԿ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Բերդաձոր գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Շալվա գետի ստորին հոսանքի ձախափնյա վտակներից մեկի աջակողմյա բլրապատ հարթավայրում:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել էին: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում՝ Նորաշենիկի պատմական անցյալի մանրամասները մոռացության մատնվեն:

Ղևոնդ Ալիշանի կարծիքով Թազաքենդը պատմական Նոր գյուղն է[1732]:

19-րդ դարի սկզբներին ամայության մատնված գյուղում հաստատվել էին թրքախոս քուրդ մի քանի ընտանիքներ: Հայկական գյուղը նրանք անվանեցին Թազաքենդ:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված եկվորները հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ: Այսօր այդ հուշաձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո այդ տարածքները բռնակցվել են ԱԽՍՀ-ին: Թազաքենդը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմում:

1995 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղն ազատագրվեց: 1995 թ. սկսվեց գյուղի վերաբնակեցման գործընթացը:

Այստեղ հաստատվել են ՀՀ բնակավայրերից մի քանի ընտանիքներ: Գյուղը վերստացավ նախկին հայկական անունը՝ Նորաշենիկ:

Գյուղի աշակերտները սովորում են Արտաշավիի միջնակարգ դպրոցում:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական եղանակով՝ շրջակա բնական աղբյուրների հաշվին:

Հեռուստատեսությունը, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, բուժկետ: Նորաշենիկի համայնքի կազմում ընդգրկված է նաև Վարդուտ գյուղը:

[1731] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:
[1732] Ղ. Ալիշան, Սիսական, էջ 287:

Նորաշենիկում 2015 թ. կար 15 տուն, 78 բնակիչ[1733], 2018 թ.՝ 10 տուն, 48 բնակիչ[1734]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՎԱՐԴՈՒՏ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Բերդաձոր գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Շալուա գետի ստորին հոսանքի ձախափնյա բլրապատ լանջին:

Վարդուտը Արցախի հնագույն բնակավայրերից է: Մինչև 18-րդ դարի կեսերը այստեղ հայեր էին ապրում: Չդիմանալով Ղարաբաղի Փանահ և Իբրահիմ խաների ճնշումներին, նրանք հեռացան հարազատ բնակավայրից: Այստեղ հայտնվեցին անասնապահ մի քանի թրքախոս քրդերի ընտանիքներ:

Արցախը Ռուսատանի գերիշխանության տակ անցնելուց հետո քրիստոնյա հայերի համար համեմատաբար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին, և Վարդուտի նախկին բնակիչները նորից վերադարձան իրենց օջախները: Մինչև խորհրդային կարգերը գյուղը հայաբնակ էր:

1921 թ.՝ Արցախը Ադրբեջանին բռնակցվելուց հետո, Վարդուտի հայությունը Բաքվի բռնաճնշումների տակ վերջնականապես լքեց հայրենի եզերքը: Ստեղծված պարապը նորից լցվեց եկվորներով: Թուրքերը և քրդերը, տեր դառնալով հայերի ունեցվածքին, գյուղը անվանակոչեցին Դարաքյանդ:

Մի քանի տասնամյակի ընթացքում եկվոր խաշնարածները ոչնչացրին հայկական գերեզմանոցները, խաչքարերն ու եկեղեցիները: Այսօր դրանց հետքերն են միայն պահպանվում: Քրդերի ու թուրքերի տների, գոմերի պատերի մեջ կարելի է տեսնել, անտառներում հանդիպել երեսնիվայր շուռ տված, ջարդված արձանագիր տապանաքարեր, խաչքարեր:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ ազատագրվեց Վարդուտը:

2007 թ. գյուղում սկսեցին հաստատվել Ադրբեջանից բռնագաղթված մի քանի հայ ընտանիքներ և ՀՀ բնակավայրերից քաղաքացիներ:

2007 թ. «Հայ կրթական հիմնարկություն» կազմակերպության կողմից դպրոցական շենք է կառուցվել և նույն թվականին էլ հիմնվել է Վարդուտի միջնակարգ դպրոցը:

2017-2018 ուսումնական տարում Վարդուտի դպրոցում սովորում էր 17 աշակերտ, դասավանդում՝ 7 ուսուցիչ[1735]: 2007-2017 թթ. դպրոցը տվել է 15 շրջանավարտ: Նրանցից Տիգրանուհի Խաչատրյանը 2015-2017 թվականներին սովորել է Դիլիջանի միջազգային դպրոցում, իսկ 2017 թվականից՝ ուսումը շարունակել ԱՄՆ Մինիսոտա նահանգի Սենտ Օլաֆ համալսարանում:

[1733] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 530:

[1734] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:

[1735] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

Դպրոցի հիմնադրման օրվանից տնօրենն է Ռ. Բաղիկյանը:

Վարդուտի չափահաս տղամարդիկ 2016 թ. ապրիլյան պատերազմի օրերին նվիրվածությամբ պաշտպանեցին ԱՀ սահմանները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական կարգով:

Ռադիոն, հեռուստատեսությունը, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Գյուղում գործում են դպրոց, բուժկետ, կաթի ընդունման կետ, խանութ:

Վարդուտում 2010 թ. կար 16 տուն, 56 բնակիչ[1736], 2018 թ.՝ 13 տուն, 54 բնակիչ[1737]:

Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՇԱԼՈՒԱ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Վայկունիք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Շալուա գետի ձախափնյա ձորալանջին:

Շալուան Արցախի հնագույն բնակավայրերից մեկն է: Այստեղ ամենուր հայկական հետքը առկա է: Շալուայի վերին հոսանքում մի քանի տասնյակ հայկական գյուղերի գերեզմանոցների, 1-13-րդ դարերի դամբարանների, ջրաղացների, սրբավայրերի մնացորդները վկայում են այս տարածքում հայության աշխույժ և կենսառատ կյանքի մասին: Բարեբախտաբար Շալուայի հարավային կողմում պահպանվել է 17-րդ դարում կառուցված Պողոս-Պետրոս եկեղեցին:

Տարաբախտաբար 18-րդ դարի երկրորդ կեսին՝ Ղարաբաղի Իբրահիմ խանի կառավարման շրջանում, լեռնաստանից դուրս մղեցին հայերին: Ստեղծված պարապը լցվեց քրդերով: Մանավանդ 19-րդ դարում թրքախոս քրդերի մուտքը տարածաշրջան աննախադեպ ծավալներ ստացավ:

Խորհրդային տարիներին գյուղը ընդգրկված էր ԱԽՍՀ Լաչինի շրջանի կազմում: Շալուան Քաշաթաղի այն քիչ բնակավայրերից է, որի հայկական անունը քրդերը չփոխեցին: Սակայն ամեն ինչ ավերվեց՝ հայկական հետքը ոչնչացնելու նպատակով, իսկ Պողոս-Պետրոս եկեղեցին էլ դարձրին պահեստ:

Եկեղեցու պատերին ագուցված արձանագիր, թվագիր (1611 թ., 1629 թ., 1651 թ.,) տապանաքարերը վկայում են, որ մինչև սրբավայրի շինությունը այստեղ եղել է հին բնակավայր:

[1736] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 531:

[1737] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:

Քրդերի կառուցած տների, գոմերի պատերին հայատառ սրբատաշ քարերը նույնպես տեսանելի են:

1993 թ. ԱՀ ՊԲ հարվածների տակ ազատագրվեցին Շալուան և տարածաշրջանի հայկական գյուղերը:

1995 թ. ՀՀ Աբովյան քաղաքի 30 ընտանիքներ տեղափոխվել և հաստատվել են Շոշավանք և Քարագլուխ գյուղերում: Այնուհետև վերաբնակեցվում են Վերիշեն և Հիմնաշեն գյուղերը: Մի քանի տարի անց չորս գյուղերի բնակիչները նպատակահարմար են գտնում ապրել Շոշավանքում, որը վերանվանվեց Շալուա:

1995 թ. սեպտեմբերի 1-ից գյուղում գործել է միջնակարգ դպրոց, որտեղ սովորում էր 14 աշակերտ: Մի քանի ընտանիքների՝ գյուղից հեռանալուց հետո աշակերտների թվաքանակը նվազել է, և 2018-2019 ուսումնական տարում արդեն դպրոցում կար 15 աշակերտ: 2012 թ. դպրոցը հիմնանորոգվել է: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Վ. Խառատյանը, Ա. Ավետիսյանը, Հ. Կիրակոսյանը, Ա. Մկրտչյանը:

Շալուայում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ դամբարանադաշտ (1-13-րդ դարեր), Պողոս-Պետրոս եկեղեցին (17-րդ դար), խաչքարեր (12-17-րդ դարեր), միջնադարյան կամուրջ:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրագծերը անհատական բնույթի են և սնվում են տարբեր աղբյուրներից:

Շալուայի տարածքում կան բազմաթիվ աղբյուրներ, որոնց անունները անհայտ են: Հեռուստատեսությունը, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքը ունի գյուղապետարան, բուժկետ, դպրոց:

Շալուա համայնքի կազմում ընդգրկված են նաև Հիմնաշեն, Վերին Շեն, Քարուտ գյուղերը:

Շալուայում 2014 թ. կար 18 տնտեսություն, 55 բնակիչ[1738], 2018՝ 13 տնտեսություն, 35 բնակիչ[1739]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՀԻՄՆԱՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Վայկունիք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Շալվա գետի վերին հոսանքի ձախափնյա մասից վեր բարձրացող լեռան փեշերին:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի անընդհատ արշավանքների հետևանքով տարածաշրջանի բնա-

[1738] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 373:

[1739] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:

կավայրերը հայաթափվել էին: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում՝ Հիմնաշենի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

19-րդ դարի սկզբներին գյուղում հաստատվել են քուրդ խաշնարած մի քանի ընտանիքներ: Հայկական գյուղը նրանք անվանել են Իմանլար:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված քրդերը հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ: Այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մոսկվայի կենտրոնական բոլշևիկյան իշխանության որոշմամբ այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին: Իմանլարը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմում:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղն ազատագրվեց:

1995 թ. սկսվեց գյուղի վերաբնակեցման գործընթացը: Այստեղ հաստատվել են ՀՀ բնակավայրերից մի քանի ընտանիքներ: Գյուղը ստացավ Հիմնաշեն անունը:

Գյուղի աշակերտները սովորում են Շալուայի միջնակարգ դպրոցում:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է բնական աղբյուրների հաշվին:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Բնակավայրն ընդգրկված է Շալուայի համայնքի կազմում:

Հիմնաշենում 2005 թ. կար 22 բնակիչ, 2010 թ.՝ 5 տուն, 33 բնակիչ[1740], 2018 թ.՝ 7 տուն, 34 բնակիչ[1741]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՎԵՐԻՆ ՇԵՆ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում Արցախի Վայկունիք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Շալվայի վերին հոսանքի աջափնյա մասից բարձրացող լեռան փեշերին:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ձնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել էին:

Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում՝ Վերին Շենի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

[1740] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1741] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:

19-րդ դարի սկզբներին ամայության մատնված գյուղում հաստատվել են քուրդ քոչվոր մի քանի ընտանիքներ: Հայկական գյուղը նրանք անվանեցին Վելլիբեյլի:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված քրդերը հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ: Այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին: Վելլիբեյլին 1923 թ. գտնվում էր Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմում:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

1995 թ. սկսվեց գյուղի վերաբնակեցման գործընթացը: Այստեղ հաստատվել են ՀՀ-ի բնակավայրերից մի քանի ընտանիքներ: Գյուղը ստացավ Վերին շեն անունը:

Բնակավայրի աշակերտները սովորում են Շալուայի դպրոցում:

Վերին շենը ընդգրկված է Շալուա համայնքի կազմում:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական կարգով՝ բնական աղբյուրների հաշվին:

Վերին շենում 2005 թ. կար 19 բնակիչ, 2010 թ.՝ 12 բնակիչ[1742], 2018 թ.՝ 2 տուն, 7 բնակիչ[1743]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՔԱՐՈՒՏ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Վայկունիք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Շալվա գետի վերին հոսանքի աջափնյա ձորալանջի երկայնքով:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել են: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ վերոհիշյալ գավառի գյուղերի, այդ թվում՝ Քարուտի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

19-րդ դարի սկզբներին ամայության մատնված գյուղում հաստատվել են քուրդ խաշնարած մի քանի ընտանիքներ: Հայկական գյուղը նրանք անվանեցին Դաշլի:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված թրքախոս քրդերը հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ: Այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

[1742] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 533:

[1743] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մոսկվայի կենտրոնական բոլշևիկյան իշխանության որոշմամբ այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին: Քարուտը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմում:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

1995 թ. սկսվեց գյուղի վերաբնակեցման գործընթացը: Այստեղ հաստատվեցին ՀՀ բնակավայրերից մի քանի ընտանիքներ: Գյուղն անվանվեց Քարուտ:

Բնակավայրը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական կարգով՝ բնական աղբյուրների հաշվին:

Հեռուստատեսությունը, ռադիոն, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Բնակավայրը ընդգրկված է Շալուա համայնքի կազմում:

Քարուտում 2005 թ. կար 16 բնակիչ, 2010 թ.՝ 5 բնակիչ[1744], 2018 թ.՝ 2 տուն, 2 բնակիչ[1745]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՍԱՐԱՏԱԿ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Բաղք գավառում: Բնակավայրը տեղակայված է Հակարի գետի աջ ափի հարթավայրային մասում:

Գյուղի վաղանցյալ ժամանակշրջանի պատմության վերաբերյալ սկզբնաղբյուրները լռում են: Միայն հայտնի է, որ բնակավայրն ունեցել է Սարատակ անունը:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարում թրքախոս քրդերին հաջողվել է հայերին դուրս մղել Հակարի գետի ստորին հոսանքի բարեբեր տարածքներից: Թուրքերն ու քրդերը, հայտնվելով վերոհիշյալ տարածքներում, նախկին այգիներն ու դաշտերը դարձրել են արոտավայրեր: Քայլ առ քայլ նրանք անցան նստակեցության և, հաստատվելով հայկական բնակավայրերում, նախկին Սարատակ անունը հարմարեցրին իրենց լեզվի հնչյուններին և այն դարձրին Սարըյաթաղ:

Ժամանակի ընթացքում եկվորներն ավերեցին հայկական բնակավայրի պատմաճարտարապետական հուշարձանները: Բնակավայրի հայկական գերեզմանոցից մնացել է մեկ խոյատապան (17-18-րդ դարեր):

Խորհրդային տարիներին Սարըյաթաղը գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Ղուբաթլիի շրջանի կազմի մեջ:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ ազատագրվեց պատմական հայկական բնակավայրը:

[1744] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 534:

[1745] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:

Գյուղի վերաբնակեցման գործընթացը սկսվեց 1996 թվականից: Առաջին վերաբնակները Եղեգնաձորի շրջանի Մալիշկա գյուղից յոթ ընտանիքներ էին: Հաջորդ տարիներին գյուղը համալրվեց նաև Ադրբեջանից բռնագաղթված մի քանի ընտանիքներով: Գյուղը նորից վերստացավ իր նախկին Սարատակ անունը: Ավերված գյուղը քայլ առ քայլ վերականգնվեց:

1997 թ. գյուղում գործում է միջնակարգ դպրոց: Դպրոցական շենքը հիմնանորոգվեց 2003 թ.: 2015 թ. դպրոցը անվանակոչվեց Ղուբաթլիի ազատագրման ժամանակ զոհված Բերդաձորի 51-րդ գումարտակի 2-րդ վաշտի հրամանատար Իդրիս Հունանյանի անունով:

2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 30 աշակերտ, աշխատում՝ 14 ուսուցիչ: Դպրոցի տնօրենը հիմնադրման օրվանից Գևորգ Դավթյանն է:

2016 թ. ապրիլին շփման գծի ամենավտանգավոր կետերում, որտեղ ընթանում էին թեժ մարտեր, մարտնչում էին նաև Սարատակի երիտասարդները, որոնք արժանացան բարձր պարգևների ու մեդալների:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծված է անհատական ջրհորների միջոցով:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, դպրոց, առևտրի 2 կետեր:

Սարատակում 2005 թ. կար 126 մարդ, 2010 թ.՝ 103 մարդ [1746], 2018 թ.՝ 32 տուն, 101 բնակիչ[1747]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՍՈՆԱՍԱՐ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Աղահեճք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հոչանց գետի ստորին հոսանքի աջափնյա ձորալանջին:

Սոնասարը Սյունիքի հնագույն բնակավայրերից մեկն է:

Գյուղի տարածքում գոյություն ունեն հելենիստական դարաշրջանի՝ Ք. ա. 2-1-ին դարերի դամբարանադաշտեր:

Սոնասարի բնակիչներից մեկը 2013 թ. պատահաբար այդ դամբարաններից մեկում մեծ գտածո է հայտնաբերել: Նույն դամբարանի պեղումները հիմնավոր նոր փաստեր են տալիս՝ նշելու, որ այն ազնվական մարդու դամբարան է եղել: Գտածոյի մեջ եղել են բրոնզից, արծաթից և առավելապես ոսկուց պատրաստված զարդեր, կոճակներ, ջարդված թասեր, գավաթներ, գահի բրոնզաձույլ ոտնակներ: Այդ ամենը Հայաստանի հելենիստական դարաշրջանի մշակույթին պատկանող նյութեր են:

[1746] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1747] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:

Գյուղի միջնադարյան ավերված գերեզմանատանը պահպանվել են պատկերաքանդակներով զարդարված տապանաքարեր, թվագիր (1056 թ.) արձանագրությամբ խաչքար և պատվանդան, սյան խոյակ:

Մինչև 19-րդ դարի վերջը գյուղում կանգուն է եղել միջնադարյան եկեղեցին, որը քրդերն օգտագործում էին որպես գոմ[1748]:

Գյուղից հյուսիս՝ Հոչանցի աջ ափին, պահպանվել են միջնադարյան ջրաղացի ավերակներն ու չորս վիշապաքանդակներով զարդարված ջրաղացքար[1749]: Ջրաղացի ավերակների մոտ պահպանվել է 11-13-րդ դարերի կամրջի ձախակողմյան խելը:

Գյուղի մասին գրավոր հիշատակություն է թողել նաև 13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը: Պատմիչը Աղահեճք գավառի հարկատու գյուղերի ցուցակում Սոնասարը ներկայացրել է Ձիասար անունով[1750]:

19-րդ դարի ուսումնասիրությունների մեջ գյուղը ներկայացված է Ձիասար, Սոնասար, Ձևասար անուններով[1751]: Այս թռուցիկ քննությունը խոսում է նրա մասին, որ վաղ շրջանում Սոնասարը Սյունիքի կարևոր բնակավայրերից մեկն է եղել, որը մինչև 19-րդ դարի կեսերը ունեցել բարգավաճ հայեցի կյանք:

Քրդերը, հաստատվելով հայկական բնակավայրում, այն անվանակոչել են Սունասար կամ Մեծ Սունասար:

Խորհրդային տարիներին գյուղը հայտնվեց ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմի մեջ:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ Սունասարը ազատագրվեց: 1995 թ. գյուղում հաստատվեցին Երևանից, Գառնիից, Արտաշատից և Արթիկից տեղափոխված ընտանիքներ:

1996 թ. նոյեմբերի 3-ին բացվեց Սոնասարի միջնակարգ դպրոցը, որտեղ սովորում էր 35 աշակերտ: Դպրոցական նոր շենքը կառուցվել է 2007 թվականին: 2010 թ. դպրոցն անվանակոչվել է Արցախյան գոյամարտի նահատակ Սամսոն Կյուրեղյանի անունով:

2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 16 աշակերտ: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Էդուարդ Մելքոնյանը, Արտյոմ Ղազարյանը, Ա. Նազարյանը:

1991-1994 թվականների Արցախյան ազատագրական պատերազմին գյուղից մասնակցել է 2 հոգի, իսկ 2016 թ. ապրիլյան ռազմական գործողություններին՝ 15

[1748] «Ազգագրական հանդես», գիրք Դ, հմ. 2, Թիֆլիս, 1898, էջ 50:

[1749] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 162:

[1750] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 399:

[1751] Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, էջ 375:

հոգի: ԱՀ պետական սահմանների պաշտպանության ժամանակ զոհվել է համայնքի բնակիչ՝ ժամկետային զինծառայող Արայիկ Օրդուբեկյանը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական ձևով՝ տեղի բնական աղբյուրներին հաշվին:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, մարզադաշտ, առևտրի մեկ կետ: Գյուղի տարածքում գործում է 1 ՀԷԿ: Սոնասարի համայնքի կազմում ընդգրկված է նաև Մարգիս գյուղը:

Սոնասարում 2005 թ. կար 68 մարդ, 2010 թ.՝ 74 մարդ, 2019 թ. 76 մարդ[1752]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՄԱՐԳԻՍ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Աղահեճ գավառում:

Մարգիսը Սյունիքի հնագույն բնակավայրերից մեկն է: 13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը Տաթևի վանքի հարկատու գյուղերի ցանկում վերոհիշյալ բնակավայրը Մարգք անունով է հիշատակում[1753]:

Մերիկ գյուղի եկեղեցու ճակատակալ քարի վրայի արձանագրությունում գրված է, որ Մարգք գյուղի բնակիչները 1682 թ. եկեղեցին կառուցելու համար 5 թուման նվեր են տվել:

19-րդ դարում այստեղ նույնպես քրդեր են հաստատվում: Մինչև խորհրդային շրջանը թրքախոս քրդերը բնակավայրին տվել են Մարկիզ, Ղըզխանմ-Թոյուղլան անունները:

Խորհրդային տարիներին Մարկիզը անվանափոխեցին դարձրին Մայիս:

1923-1930 թվականներին գյուղը գտնվում էր Կարմիր Քուրդիստանի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմի մեջ:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ ազատագրվեց նաև հայոց այդ հողակտորը:

1995 թ. այստեղ հաստատվել են ՀՀ բնակավայրերից մի քանի ընտանիքներ: Բնակավայրը ստացավ Մարգիս անունը:

Գյուղի դպրոցահասակ երեխաները սովորում են Սոնասարի միջնակարգ դպրոցում: Սոնասար գյուղից 1 կմ դեպի արևմուտք գտնվող գյուղը վերոհիշյալ համայնքի կազմում է:

[1752] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1753] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 399:

Մարգիսում 2005 թ. կար 12 մարդ, 2010 թ.՝ 8 մարդ, իսկ 2019 թ. ընդամենը 2 մարդ[1754]: Նրանց զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

Կենցաղային ոչ հարմարավետ պայմանների բացակայության պատճառով Մարգիսի բնակիչները հեռանում են իրենց նախկին բնակավայրերը:

ՍՈՒՍ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Աղահեճ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հակարի գետի միջին հոսանքի աջափնյակում՝ Բերձոր շրջկենտրոնից 6 կմ հարավ:

Հնադարում վերոհիշյալ գյուղի տեղը բնակավայր է եղել: Դրա մասին է խոսում նաև բնակավայրի Սուս անվանումը: Ուրարտագետ Հովհաննես Կարագյոզյանը Սուսը կապում է ուրարտական սուսե (տաճար) անվան հետ: Ի դեպ, ասվածը հիմնավորվում է ԱՀ Մարտունու շրջանի Սոս գյուղի անվամբ, որտեղ ևս գոյություն է ունեցել տաճար և որը քրիստոնեության ընդունումից հետո վերակառուցվել է որպես քրիստոնեական եկեղեցի՝ հանձին Ամարասի վանքի:

Գյուղի միջնադարյան պատմության վերաբերյալ աղբյուրները լռում են:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խանի և քուրդ ցեղապետերի ճնշումների տակ տարածաշրջանի գյուղերը հայաթափվել են:

20-րդ դարի սկզբներին քրդերը, հայտնվելով այս գյուղում, չեն փոխել նրա հայկական Սուս անունը:

1992 թ.՝ մայիս-հունիս ամիսների ռազմագործողությունների ժամանակ, քանի որ վերոհիշյալ բնակավայրը գտնվում էր Արցախը Սյունիքի հետ կապող մարդասիրական միջանցքի վրա, այդ ժամանակահատվածում ազատագրվել է:

Չնայած ընթանում էին մարտական գործողությունները, 1993 թ. Սուսում հաստատվեցին ԱՀ Չայլու գյուղից բռնատեղահանված մի քանի ընտանիքներ: Պատերազմի ավարտից հետո վերաբնակիչների կարգավիճակով Սուսում սկսեցին ապրել նաև ՀՀ Երևան, Գորիս քաղաքներից մի քանի ընտանիքներ: Հետագա տարիներին նրանց մի մասը տեղափոխվել և հաստատվել են Ներքին Սուսում:

Գյուղի աշակերտները սովորում են Ներքին Սուսի միջնակարգ դպրոցում:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է բնակավայրում եղած աղբյուրների հաշվին:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Սուս համայնքի կազմում ընդգրկված են նաև ներքին Սուս, Գիհուտ և Ուրմիա գյուղերը: Համայնքն ունի գյուղապետարան, բուժկետ:

[1754] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

Սուսում 2018 թ. կար 9 տուն, 18 բնակիչ[1755]: Նրանց հիմնական զբաղմունքը անասնապահությունն է:

ՈՒՐՄԻԱ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Աղահեճք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հակարիի միջին հոսանքի աջափնյա բլրապատ մասում:

18–րդ դարի երկրորդ կեսին և 19–րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել էին: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում Ուրմիայի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

19–րդ դարի սկզբներին ամայության մատնված գյուղում հաստատվել են թաթար և քուրդ քոչվոր մի քանի ընտանիքներ:

Հայկական գյուղը նրանք անվանեցին Ղըզըլջա:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված թուրքերն ու քրդերը հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ: Այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ–ին: Ղըզըլջան 1923 թ. ընդգրկվել էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ղըզըլջան գտնվում է ԼՂԻՄ–ը խորհրդային Հայաստանին կապող ամենամոտ հատվածում՝ Ադրբեջանի իշխանությունների կողմից այն արագությամբ վերաբնակեցվել էր:

1992 թ. մայիսին Լաչին շրջկենտրոնով ԼՂՀ–ից դեպի ՀՀ հումանիտար միջանցքի բացման ռազմագործողության ժամանակ ազատագրվեց նաև Ղըզըլջան:

1996 թ. ՀՀ Երևան և Գորիս քաղաքներից մի քանի ընտանիքներ վերաբնակների կարգավիճակով հաստատվեցին Ղըզըլջայում: Գյուղը ստացավ Ուրմիա անունը:

Նոր գյուղում գոյություն ունեցած սոցիալ–տնտեսական բազմաթիվ չլուծված հիմնահարցերի առկայության և բնակչության հոսունության պայմաններում բնակավայրը այդպես էլ չձևավորվեց:

Ուրմիայում 2010 թ. կար 6 բնակիչ, 2015 թ.՝ 2 բնակիչ[1756], 2018 թ. արդեն մարդ չէր ապրում[1757]:

Գյուղը գտնվում է Սուս համայնքի կազմում:

[1755] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 7:
[1756] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1757] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 7:

ԳԻՀՈՒՏ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Աղահեճք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հակարիի միջին հոսանքի աջափնյա թեք հարթության վրա:

Ուսումնասիրողներից Ա. Հակոբյանը գտնում է, որ Գիհուտը համապատասխանում է Ստեփանոս Օրբելյանի հիշատակած Բողխոչող բնակավայրին[1758]:

18–րդ դարի երկրորդ կեսին և 19–րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել էին: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում Գիհուտի, պատմական անցյալի մանրամասները մոռացության մատնվեն:

19–րդ դարի սկզբներին լեռնային այս հատվածներում հայտնվեցին քուրդ խաշնարած մի քանի ընտանիքներ: Հայկական գյուղը նրանք վերանվանեցին Մոլլալար:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված թրքախոս եկվորները հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ: Այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մոսկվայի կենտրոնական բոլշևիկյան իշխանության որոշմամբ այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ–ին: Մոլլալարը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմում:

1992 թ. մայիսին ԼՂՀ–ից դեպի ՀՀ հումանիտար միջանցքի բացման ռազմագործողության ժամանակ ազատագրվեց նաև Մոլլալարը:

1996 թ. ՀՀ Երևան և Գորիս քաղաքներից մի քանի ընտանիքներ հիմնավորվեցին ազատագրված բնակավայրում: Գյուղը ստացավ Գիհուտ անունը:

Գյուղը ընդգրկված է Սուս համայնքի կազմում:

Գիհուտը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական կարգով՝ բնական աղբյուրների հաշվին:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Գիհուտում 2002 թ. կար 40 բնակիչ, 2010 թ.՝ 45 բնակիչ[1759], 2018 թ.՝ 11 տուն, 35 բնակիչ[1760]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1758] Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 158:
[1759] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1760] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 7:

ՆԵՐՔԻՆ ՍՈՒՍ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Բերձոր գավառում: Ներքին Սուսը տեղակայված է Հակարի գետի ձախ ափին՝ Բերձոր շրջկենտրոնից 4 կմ հարավ:

Ի տարբերություն Քաշաթաղի շրջանի մյուս բնակավայրերի՝ 20-րդ դարի սկզբներին քրդերը, հայտնվելով այս գյուղում, չեն փոխել նրա հայկական Սուս անունը:

Սկզբնաղբյուրներն այս գյուղի անցյալի պատմական իրադարձությունների վերաբերյալ լռում են:

1992 թ. մայիս-հունիս ամիսների ռազմագործողությունների ժամանակ, քանի որ վերոհիշյալ բնակավայրը գտնվում էր Արցախը Սյունիքի հետ կապող մարդասիրական միջանցքի վրա, այդ ժամանակահատվածում ազատագրվել է:

1994 թ. մայիսին՝ զինադադարի հաստատումից հետո, Ներքին Սուսում հաստատվեցին ԱՀ Չայլու գյուղից բռնատեղահանված և ՀՀ բնակավայրերից մի քանի ընտանիքներ:

Արցախյան ազատագրական պատերազմին մասնակցել են Ռաֆիկ Մելքումյանը, Սարգիս Ասլանյանը, Արթուր Ֆարադյանը, Ալբերտ Բաղալյանը, Ռաֆիկ Վարդանյանը:

2016 թ. ապրիլյան պատերազմին գյուղի երիտասարդներն իրենց մասնակցությունն են բերել:

2002 թ. ապրիլին գյուղում բացվել է միջնակարգ դպրոց: Սկզբում դպրոցում սովորում էր 20 աշակերտ, 2018-2019 ուսումնական տարում՝ 40 աշակերտ, դասավանդում՝ 16 ուսուցիչ:

Դպրոցի շենքը հիմնանորոգվել է 2005 թ.: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Տիգրան Սարգսյանը, Գոհար Սարգսյանը, Գևորգ Ալեքսանյանը, Հովհաննես Մկրտչյանը, Աստղիկ Ավետիսյանը:

Գյուղում և նրա շրջակայքում եղած պատմամշակութային նշանակության հուշարձանները ժամանակին թուրքերի ու քրդերի կողմից ավերվել են:

Բնակավայրը էլեկտրաֆիկացված է: Բնակչությունը ապահովված է խմելու ջրով: 2002 թ. ֆրանսահայ բարերար Թագուհի Ալեքսանյանի հովանավորությամբ կառուցվել է գյուղի ջրագիծը, իսկ 2014 թ. համահայկական հիմնադրամի միջոցներով այն հիմնանորոգվել է:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Ներքին Սուսում 2018 թ. կար 22 տուն, 73 բնակիչ[1761]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

Ներքին Սուսը ընդգրկված է Սուս համայնքի կազմի մեջ:

[1761] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:

ՎԱԿՈՒՆԻՍ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսարևմտյան նահատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Վայկունիք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Շալվայի վտակ Բչանիսի աջ ափից դեպի լեռը ձգվող ձորալանջին:

Միջնադարում գյուղն ունեցել է Բչանց անունը:

Պատմական փաստերը վկայում են, որ Բչանցը Արցախի հնագույն բնակավայրերից է և միջնադարում, մասնավորապես 13-18-րդ դարերում, Վայկունիք գավառում առանցքային դերակատարություն է ունեցել:

Գյուղի մասին տեղեկություններ են պահպանվել Դադիվանքի Կաթողիկե եկեղեցու 1214 թ. շինարարական արձանագրության մեջ, որտեղ իշխան Վախթանգի տիկին Արզու Խաթունը ներկայացրել է Վերին Խաչենի իշխանության սահմանային բնակավայրերը, այդ թվում՝ Բչանցը[1762]:

Գյուղի կենտրոնական մասում պահպանվել է կիսավեր եկեղեցին, որի պատերի մեջ ագուցված են 14-17-րդ դարերին պատկանող բազմաթիվ խաչքարեր ու տապանաքարեր[1763]:

Խաչենից Չորմանք և Բչանց գյուղերով դեպի Սյունիք տանող ճանապարհի վրա գտնվելով՝ վերոհիշյալ բնակավայրը կարևոր դերակատարություն է ունեցել:

Պատահական չէ, որ քննարկման նյութ հանդիսացող տարածաշրջանը բավականաչափ խիտ բնակեցված է եղել և իրար մոտ՝ մեկ-երկու կիլոմետր հեռավորության վրա մի քանի գյուղեր են եղել, որոնց ավերակները և պատմամշակութային որոշ արժեքներ պահպանվել են: Մասնավորապես խոսքը վերաբերում է Արդուշլու, Սուվատ, Ղալաալթի (Բերդատակ), Աղջայազ, գյուղատեղիներին[1764], որոնց հայկական անունները չեն պահպանվել: Նշված բնակավայրերում պահպանվել են 13-րդ դարի՝ երկու, 15-16-րդ դարերի՝ մեկ, խաչքարեր և 17-18-րդ դարերի տապանաքարեր:

Սերո Խանզադյանը գրել է, որ 1932 և 1953 թվականներին լինելով Բչանցում, գյուղից մի փոքր վերև տեսել է կիսականգուն եկեղեցի, որի ճակատակալ արձանագիր քարը թվագրված էր 905 թ., եկեղեցու մոտ տապանաքարը՝ 1755 թ., աղբյուրի մոտ արձանագիր խաչքարը՝ 1084 թ., իսկ Ջրաձորի ժայռին Բչանցի ամրոցի հետքերը, որ կառուցել էր Պռոշ մեծ իշխանի թոռնորդին՝ Վասակ իշխանը, 1328 թ.[1765]:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ճնշման տակ Բչանցը հայաթափվել էր: Գյուղում 19-րդ դարի սկզբներին հաստատվել էին եկվոր քոչվոր թրքախոս քրդեր, որոնք բնակավայրը անվանել էին Բիչանաղ:

[1762] Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 198-199:
[1763] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 171:
[1764] Նույն տեղում, էջ 173:
[1765] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 537:

Նրանք ավերել էին այն ամենը, որոնք դարերի ընթացքում ստեղծվել էին տեղաբնիկ հայերի կողմից: Գյուղի եկեղեցին 19-րդ դարում քրդերը օգտագործում էին որպես հարդանոց, իսկ խորհրդային տարիներին՝ որպես պահեստ[1766]:

Ռուսական տիրապետության շրջանում գյուղում բնակվում էին Ռուսաստանից տեղափոխված մոլականները: Գյուղը նրանք անվանել են Կարմալինովկա[1767]: 1918 թ.՝ գյուղից նրանց հեռանալուց հետո, նորից այստեղ հայտնվել են քրդերը:

Խորհրդային տարիներին այս տարածքները բռնակցվեցին Ադրբեջանին: Բիչանաղը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմում:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

1997 թ. գյուղում հաստատվեցին ՀՀ բնակավայրերից մի քանի ընտանիքներ: Գյուղը անվանվեց Վակունիս: Նույն թվականին գյուղում բացվեց միջնակարգ դպրոց: 2012-2016 թթ. դպրոցում սովորում էր 32 աշակերտ, դասավանդում՝ 12 ուսուցիչ: Տարբեր տարիների դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել են Ց. Կարպետյանը, Լ. Կարապետյանը, Հ. Տոնյանը, Վ. Հարությունյանը, Հ. Բախշյանը[1768]:

Վակունիս համայնքի կազմում ընդգրկված են Խաչինտակ, Չորմանք և Շամք գյուղերը:

Վակունիսը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական կարգով՝ բնական աղբյուրների հաշվին:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, հիմնական դպրոց, բուժկետ:

Վակունիսում 2005 թ. կար 38 բնակիչ, 2010 թ.՝ 12 տուն, 44 բնակիչ[1769], 2018 թ.՝ 14 տուն, 63 բնակիչ[1770]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԽԱՉԻՆ ՏԱՓ

Գյուղը գտնվում է ԱՀ հյուսիսարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Վայկունիք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Շալվայի ձախափնյա ձորալանջին:

[1766] «Ազգագրական հանդես», գիրք Դ, հմ. 2, Թիֆլիս, 1898, էջ 49; հմմտ. Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ171:

[1767] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 53:

[1768] Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Լեռնային Ղարաբաղի հանրապետության կրթական համակարգը, հ. 3, էջ 171:

[1769] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1770] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:

Ս. Կարապետյանը վերոհիշյալ բնակավայրը Գտիչ վանքի 1246 թ. շինարարական արձանագրության մեջ հիշատակված Խաչինամարգը գյուղի հետ վերապահումով համադրելի է համարում[1771]:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ձնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել էին: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ գավառի գյուղերի, այդ թվում՝ Խաչին տափի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

19-րդ դարի սկզբներին ամայության մատնված գյուղում հաստատվել էին քուրդ խաշնարած մի քանի ընտանիքներ: Գյուղը նրանք անվանեցին Խաչինյալը:

Հնարավոր է, որ հնում վերոհիշյալ գյուղի անվան սկզբնամասը ունեցել է Խաչին բառարմատը: Պարզապես եկվոր քրդերն այն որոշակի փոփոխության են ենթարկել և դարձրել Խաչինյալը:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված եկվորները հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ: Այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մոսկվայի կենտրոնական բոլշևիկյան իշխանության որոշմամբ այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին: Խաչին տափը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմում:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց: 1995 թ. վերաբնակների կարգավիճակով ՀՀ տարբեր բնակավայրերից այստեղ հաստատվել են մի քանի ընտանիքներ: Բնակավայրը ստացավ Խաչին տափ անունը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական կարգով՝ բնական աղբյուրների հաշվին:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Բնակավայրը ընդգրկված է Վակունիս համայնքի կազմում:

Խաչին տափում 2007 թ. կար 7 բնակիչ, 2010 թ.՝ 3 բնակիչ[1772], 2018 թ.՝ 3 տուն, 9 բնակիչ[1773]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1771] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 166:

[1772] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1773] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:

ՎԱՂԱԶԻՆ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Վայկունիք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Շալվա գետի միջին հոսանքի ձախակողմյա Վաղազնագետ վտակի աջափնյա անտառապատ լանջին: Վերոհիշյալ գետի պատմական անունը «...Վակունիս Վաղազնագետոո...» տարբերակով ներկայացված է Գտիչ վանքի 1246 թ. շինարարական արձանագրության մեջ[1774]:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել էին: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում՝ Վաղազինի, պատմական անցյալի մանրամասները մոռացության մատնվեն: Պահպանվել է բնակավայրի միայն պատմական անունը:

19-րդ դարի սկզբներին ամայության մատնված գյուղում հաստատվել էին քուրդ քոչվոր մի քանի ընտանիքներ:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված եկվորները հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ: Այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո վերոհիշյալ տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին: Վաղազինը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմում:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

ՀՀ բնակավայրերից մի քանի ընտանիքներ՝ վերաբնակների կարգավիճակով, 1995 թ. հաստատվել են ազատագրված գյուղում:

1996 թ. Վաղազինում հիմնվել է միջնակարգ դպրոց: 2015-2016 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 36 աշակերտ, դասավանդում՝ 12 ուսուցիչ: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Ա. Տոնոյանը, Մ. Մամիկոնյանը, Վ. Հարությունյանը, Ա. Մկրտչյանը[1775]:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական եղանակով՝ ինքնահոս աղբյուրների հաշվին:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, բուժկետ, դպրոց: Համայնքի կազմում է ընդգրկված նաև Մարտիրոս գյուղը:

[1774] Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 183; հմմտ. Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ176:

[1775] Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Լեռնային Ղարաբաղի հանրապետության կրթական համակարգը, հ. 3, էջ 601:

Վաղազինում 2005 թ. կար 58 բնակիչ, 2010 թ.՝ 51 բնակիչ[1776], 2015 թ.՝ 13 տուն, 53 բնակիչ[1777], 2018 թ.՝ 7 տուն, 29 բնակիչ[1778]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՄԱՐՏԻՐՈՍ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Վայկունիք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հակարիի վերին հոսանքի ձախակողմյան Բչանիս վտակի ափամերձ շրջանում:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել էին: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում՝ Մարտիրոսի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

19-րդ դարի սկզբներին ամայության մատնված գյուղում հաստատվել էին թրքախոս քուրդ խաշնարած մի քանի ընտանիքներ: Հայկական գյուղը նրանք անվանել էին Արդուշլի:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված եկվորները հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ: Այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին: Արդուշլին 1923 թ. ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ. Լաչինի շրջանի կազմում էր:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ Արդուշլին ազատագրվեց: 1995 թ. ՀՀ բնակավայրերից մի քանի քաղաքացիներ հաստատվեցին բարձրադիր այս գյուղում: Բնակավայրը պաշտոնապես ստացավ Մարտիրոս անունը:

Գյուղն ընդգրկված է Վաղազին համայնքի կազմում:

Բնակավայրը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է բնական աղբյուրների հաշվին:

Մարտիրոսում 2005 թ. կար 4 մարդ, 2010 թ.՝ 1 տուն, 1 մարդ[1779], 2018 թ.՝ 1 տուն, 1 մարդ[1780]: Նրա զբաղմունքը անասնապահությունն է:

[1776] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1777] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 380:

[1778] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:

[1779] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1780] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:

ՎԱՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Կովսական գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Ողջի գետի ստորին հոսանքի ձախափնյա հարթավայրում: Իրանի Իսլամական հանրապետությունից գյուղը գտնվում է 3 կմ հեռավորության վրա:

Արաքսի ափամերձ շրջանները, 18-րդ դարի երկրորդ կեսից սկսած Ղարաբաղի և Նախիջևանի խաների ու քրդական ցեղերի ճնշման տակ արագ հայաթափվեցին, և այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառների, գյուղերի, այդ թվում՝ Վանի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին գյուղում հաստատվել էին թուրքեր և քրդեր: Եկվորները բնակավայրը անվանեցին Ջհանգիրբեյլի:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղի թուրքերն ու քրդերը հիմնահատակ կործանել են պատմամշակութային արժեքները: Այսօր անգամ դրանց հետքերը չեն երևում:

Խորհրդային տարիներին վերոհիշյալ տարածքները Մոսկվայի բոլշևիկյան իշխանությունների կողմից նվիրաբերվել են Ադրբեջանին: 1923 թ. Ջհանգիրբեյլին գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Զանգելանի շրջանի կազմի մեջ:

1990 թ. հոկտեմբերի վերջերին ԱՀ պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

1998 թ. աշնանից սկսվել է գյուղի վերաբնակեցման գործընթացը: Այստեղ հաստատվել են ՀՀ Բերդ, Սևան քաղաքներից, Եղեգնաձորի նախկին շրջանի Թառաթումբ գյուղից մի քանի ընտանիքներ:

Գյուղը ստացավ Վան անունը:

2002 թ. բացվել է Վանի միջնակարգ դպրոցը, որտեղ սովորում էր 28 աշակերտ, դասավանդում՝ 9 ուսուցիչ: 2018-2019 ուսումնական տարում դպրոցն ուներ 31 աշակերտ: Դպրոցի հիմնադիր տնօրենն է Վ. Վարդանյանը:

2016 թ. ապրիլյան պատերազմի ժամանակ 9 հոգի մասնակցել են մարտական գործողություններին:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը բավարար լուծում չի ստացել: Համայնքի տարածքով անցնում են Վան 1, Վան 2, Վան 3 ոռոգման ջրատարները:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելիին են:

Համայնքում գործում է գյուղապետարան, դպրոց, առևտրի 1 կետ:

Վանում 2005 թ. կար 187 մարդ, 2010 թ.՝ 30 տուն, 119 մարդ[1781], 2018 թ.՝ 31 տուն, 136 մարդ[1782]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1781] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1782] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:

ՎԱՐԴԱԲԱՑ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Հաբանդ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Քաշաթաղի շրջանի հարավային հատվածում՝ Որոտան գետի ստորին հոսանքի աջափնյակում:

Միջնադարում գյուղի գոյության մասին մեզ տեղեկություններ չեն հասել: Վարդաբացում և նրա շրջակայքում պատմամշակութային նշանակության հուշարձաններ չեն պահպանվել:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ճնշումների տակ տարածաշրջանի գյուղերը հայաթափվել էին:

1920 թ. Որոտանի ստորին հոսանքի տարածքները բռնակցվել են խորհրդային Ադրբեջանին: Այդ տարիներին խորհրդային Հայաստանի սահմանամերձ շրջաններում Ադրբեջանի կառավարությունը ստեղծել էր քրդաբնակ գյուղեր, որոնց մի քանի տասնամյակների ընթացքում թուրքացրել են: Այդպիսի բնակավայրերից մեկն էլ դարձել էր Ուլաշլի կամ Աբիլջա գյուղը: 1923 թ. վերոհիշյալ գյուղը գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի, իսկ իսկ 1930 թ.՝ Կուբաթլուի շրջանի կազմում:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվել է: Բնակավայրը վերաբնակեցվել է 1997 թ., և առաջին բնակիչներն են եղել ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքից Գրիգոր Ղարիբյանի և Օնիկ Նաջարյանի ընտանիքները: Գյուղի Վարդաբաց անվանումն էլ տրվել է Օնիկ Նաջարյանի կողմից այն հիմնավորմամբ, որ գյուղը, վերևից դիտելով, վարդի բացվելու տեսարանի է նման:

Վարդաբացի աշակերտները սովորում են Քարոտանի դպրոցում:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական ջրհորների հաշվին: Բնակավայրի տարածքով է անցնում Վարդաբաց-Կրմեն ոռոգման ջրատարը:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Համայնքում առկա են գյուղապետարան, բուժկետ:

Վարդաբացում 2018 թ. կար 14 տուն, 56 բնակիչ[1783]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՔԱՐՈՏԱՆ

Գյուղը գտնվում նէ ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Հաբանդ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Քաշաթաղի շրջանի հարավային հատվածում՝ Որոտան և Աղավնո-Հակարի գետերի միջև:

[1783] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:

Գյուղից հարավ՝ ծովի մակերևույթից 420 մ բարձրության վրա է գտնվում միջնադարյան ամրոց բնակատեղին, որն ունի օվալաձև հատակագիծ: Մուտքը հարավային կողմից է, որտեղ պահպանվել են երկու կիսավեր աշտարակները: Ամրոցը շրջապատված է եղել պարսպով, որ նույնպես հիմնականում ավերված է: Ենթադրվում է, որ պարսպի հաստությունը որոշ հատվածներում հասել է 2 մետրի: Վերջին շրջանում հնավայրում մասնակի ուսումնասիրություններ է կատարել հնագետ Գ. Սարգսյանը, ըստ որի ամրոցը ավելի վաղ շրջանում է հիմնվել:

Բնակավայրը հայաթափվել է 18–20-րդ դարերի ընթացքում, երբ այստեղ են թափանցել թուրքացված քոչվոր քրդերը: 20-րդ դարի սկզբներին գյուղը հայտնի է Քևդադիխ անունով: 1920 թ. տարածաշրջանի գյուղերը բռնակցվել են խորհրդային Ադրբեջանին: 1923 թ. Քևդադիխը գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի, իսկ 1930 թ.՝ Կուբաթլուի շրջանի կազմում:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվել է: Բնակավայրը վերաբնակեցվել է 1998 թ., և առաջին վերաբնակիչներն են եղել ծննդով ՀՀ Սյունիքի մարզի Անգեղակոթ գյուղից Հրայր Մակարյանի, այնուհետև Ցաշա և Գրիշա Մակարյան եղբայրների ընտանիքները: Նրանք հիմնականում «Սևան» ջոկատի անդամներն են և մասնակցել են արցախյան պատերազմին ու պարգևատրվել են տարբեր շքանշաններով: Համայնքից 15 հոգի մասնակցություն են ունեցել ապրիլյան պատերազմին:

2006 թ. գյուղը վերանվանվել է Քարոտան: Բնակավայրն ընդգրկված է Վարդաբաց համայնքի կազմում:

2007 թ. հիմնադրվել է գյուղի դպրոցը, որտեղ նույն թվականից գործում է նաև երաժշտական դասարան: Գյուղի միջնակարգ դպրոցն են այցելում նաև հարևան՝ Փակահան, Շիրակ, Կումայրի, Վարդաբաց, Մամարք, Հալե գյուղերի երեխաները: Աշակերտների թիվը սկզբում հասնում էր 63-ի, իսկ ուսուցիչների և օժանդակ աշխատողների թիվը՝ 18-ի: 2018 թ. դրությամբ դպրոցն ուներ 30 աշակերտ, 12 ուսուցիչ և օժանդակ աշխատող: 1998–2012 թթ. դպրոցի տնօրենն էր Օնիկ Նաջարյանը, 2012–2015 թթ.՝ Հռիփսիմե Կարայանը, 2015–2016 թթ.՝ Մկրտիչ Ղազարյանը, 2016 թվականից՝ Սաթենիկ Սարգսյանը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական ջրհորների միջոցով: Բնակավայրի տարածքով է անցնում Քարոտան 1 ոռոգման ջրատարը: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Քարոտանում 2018 թ. կար 13 տուն, 47 բնակիչ[1784]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1784] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:

ՎՈՒՐԳԱՎԱՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Մյուս Հաբանդ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հակարի գետի միջին հոսանքի ձախափնյակում: Գյուղի և նրա շրջակայքի մասնակի ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնել, որ միջնադարում այստեղ բնակավայր է եղել:

Վուրգավանում կիսով չափ կանգուն է մնացել հինավուրց եկեղեցի, որը խորհրդային տարիներին թուրքերի և քրդերի համար ծառայել է որպես բնակարան[1785]:

Ի տարբերություն Հակարիի և Արաքսի միախառնման հատվածի գավառների բնակավայրերի, որոնք 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին լիովին հայաթափվել էին, Հակարիի միջին հոսանքում տեղաբաշխված հայկական գյուղերում մինչև 20-րդ դարի սկզբները դեռևս տեղաբնիկներ կային:

1920 թ. վերոհիշյալ տարածքները բռնակցվեցին խորհրդային Ադրբեջանին: Այդ տարիներին քուրդ մի քանի ընտանիքներ հաստատվել են արդեն ավերակված հայկական բնակավայրում և տվել են Խանդեկ անվանումը:

Գյուղն ազատագրվել է 1992 թ. մայիսին: Վուրգավան անվանումը ստացել է սիսիանցի ազատամարտիկ Վուրգ Ոսկանյանի անունից, որը մասնակցել է Քաշաթաղի շրջանի բնակավայրերի ազատագրման ռազմագործողություններին և զոհվել Վակունիս գյուղում: Առաջին վերաբնակիչներն են եղել Վուրգ Ոսկանյանի զինակից սիսիանցի ընկերները, որոնք իրենց ընտանիքներով 1994 թ. տեղափոխվել ու վերաբնակվել են այնտեղ: 1994 թվականից սկսած գյուղում հաստատվել են նաև ընտանիքներ Շիրակից, Լոռուց, Վայոց ձորի, Արարատի մարզերից և հյուսիսային Արցախի հայաշատ շրջաններից բռնահանված ընտանիքներ: ԱՀ կառավարության, բարերարների ֆինանսական միջոցներով և վերաբնակիչների ջանքերով գյուղի ավերված տները վերակառուցվել են, լուծվել են կենսական անհրաժեշտության խնդիրները:

1997 թվականից գործում է գյուղի դպրոցը, որը վատթար վիճակում էր գտնվում: «Հայրենասեր» բարեգործական կազմակերպության կողմից այն վերակառուցվել է 2015 թ. և վերանվանվել «Աբրահամ և Էլիզաբեթ Պողոսյանների անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ՝ ի երախտագիտություն գլխավոր հովանավորներ Խաչատուր Պողոսյանի և Վարդուհի Աջապանյանի: 1997–2011 թթ. դպրոցի տնօրենն էր Էդիկ Հակոբյանը, 2011–2012 թթ.՝ Վարդան Բոբիկյանը, իսկ 2012 թվականից առ ներկան՝ Մկրտիչ Փոթոյանը: 1997 թվականից մինչև 2018 թվականը դպրոցը ունեցել 57 շրջանավարտ, որոնցից 23-ը ավարտել են ԱՀ և ՀՀ տարբեր բուհեր:

Դպրոցին կից առկա է մարզադահլիճ և բուժկետ:

[1785] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 543:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական եղանակով՝ գյուղում գործող 29 ջրհորների հաշվին: Համայնքի տարածքով անցնում է «Վուրգավան–Ուռեկան» ոռոգման ջրատարը:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, միջնակարգ դպրոց, «Բերձորի երաժշտական դպրոց» ՊՈԱԿ–ի Վուրգավանի մասնաճյուղը, բուժկետ, առևտրի 2 կետ:

Վուրգավանում 2018 թ. կար 34 տուն, 119 բնակիչ[1786]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՏԱՆՁՈՒՏ

Տանձուտ գյուղը գտնվում է Քաշաթաղի շրջանի հյուսիսային հատվածում՝ Աղավնո գետակի ձախ ափին՝ մայրուղուց 18 կմ հեռավորության վրա՝ Ծիծեռնավանքից 5 կմ դեպի հյուսիս–արևմուտք, ծովի մակերևույթից 1220–1290 մ բարձրության վրա: Գյուղը սահմանակից է ՀՀ Սյունիքի մարզի Խոզնավար, Խնածախ, ԱՀ Քաշաթաղի շրջանի Սոնասար, Մոշաթաղ, Ծիծեռնավանք և Մելիքաշեն գյուղերին: Տանձուտը ներառված է Ծիծեռնավանք համայնքի մեջ: Բնակավայրը նախկինում գտնվում էր Սյունիքի Աղահեճք գավառում: Գյուղի վերնամասում ձգվում է հիմնականում կաղնու և բոխու ծառերով անտառը:

Բնակավայրի տարածքում պահպանված ամենահին բնակելի շինության ավերակները (17–18–րդ դարեր) գտնվում են գյուղի հյուսիսարևմտյան հատվածում: Գյուղի տարածքում գտնվող ամենահայտնի հուշարձանը ժայռափոր եկեղեցին է, որը գտնվում է գյուղից շուրջ 1 կմ հեռավորության վրա՝ դեպի հյուսիս–արևելք: Ուսումնասիրողները եկեղեցու տարածքում արձանագրություններ չեն հայտնաբերել: Տարածքում կան ժայռափոր խորաններ: Եկեղեցին հարավային մասում ունի մեկ մուտք և երկու ժայռափոր պատուհաններ:

Տանձուտը Սյունիքի ամենահին բնակավայրերից է: 18–րդ դարի վերջերին և 19–րդ դարի սկզբներին Ղարաբաղի խանի և քրդական ցեղերի ճնշումների տակ գյուղը հայաթափվել է: 19–րդ դարի կեսերին այդտեղ քուրդ քոչվոր մի քանի ընտանիքներ են հաստատվել և անցել նստակեցության: Բնակավայրին նրանք տվել են Կարըկշլաղ կամ Ղարաղշլաղ անունը: 1863 թ. նրանք գյուղում բլրի վրա մզկիթ են կառուցել[1787]:

[1786] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 7:
[1787] Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 507:

Գյուղի մասին հիշատակության կա 1888 թ. Թիֆլիսում հրատարակված քարտեզում[1788]: 1914 թ. գյուղը ուներ 949 թրքացված քուրդ ազգաբնակչություն[1789]:

Խորհրդային տարիներին Կարըկշլաղը գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմի մեջ:

ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը 1992 թ. ազատագրվել է: Բնակավայրի վերաբնակեցման գործը սկսվել է զինադադարի կնքումից անմիջապես հետո: 1994 թ. մայիսին գյուղում հաստատված առաջին վերաբնակիչներն են եղել Բորիկ Մուսայելյանը, Վանիկ Ասոյանը, Հարություն Արամյանը, Կամո Պետրոսյանը և ուրիշներ: Ընտանիքներով Չարենցավանից տեղափոխվելով այստեղ՝ նրանք վերակենդանացրին գյուղը՝ միաժամանակ վերականգնելով բնակավայրի հայեցի շունչն ու ոգին: Գյուղը ստացավ Տանձուտ անունը:

Վերաբնակիչների մի մասը ղարաբաղյան պատերազմի մասնակիցներ են: Գյուղը ակտիվ մասնակցություն է ունեցել նաև 2016 թ. ապրիլյան պատերազմին: Նրանցից Եգոր Ասլանյանը, Էդգար Գևորգյանը և Գևորգ Թադևոսյանը հայրենիքին մատուցած ծառայությունների համար արժանացել են շքանշանների:

1994 թ. սեպտեմբերի 1–ին բացվել է Տանձուտի միջնակարգ դպրոցը, որի առաջին տնօրենն էր Կամո Պետրոսյանը, 2007–2015 թթ.՝ Գագիկ Համբարձումյանը, իսկ 2015 թվականից առ ներկա ժամանակները՝ Վանիկ Արշակյանը: Դպրոցում սկզբնական շրջանում սովորում էին ոչ միայն Տանձուտի, այլև Ծիծեռնավանքի և Մոշաթաղի աշակերտները: Հետագայում արդեն Ծիծեռնավանքը և Մոշաթաղը նույնպես ունեցան իրենց դպրոցները: 2018 թ. դրությամբ դպրոցում սովորում էր 21 աշակերտ: 2019 թ. դպրոցը հիմնանորոգվել է:

2010 թ. համայնքների խոշորացման արդյունքում միավորվեցին Տանձուտ, Ծիծեռնավանք և Մելիքաշեն գյուղերը:

Բնակավայրը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական ձևով գյուղում գործող աղբյուրների հաշվին: 2018 թ. գյուղում ոռոգման ջրագիծ է կառուցվել: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը բնակչությանը հասանելի են: Տանձուտում 2010 թ. կար 27 տուն, 81 բնակիչ[1790], 2018 թ.՝ 26 տուն, 88 բնակիչ[1791]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1788] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանի բռնակցված շրջաններում, էջ 140:
[1789] Նույն տեղում, էջ 141:
[1790] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1791] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1–ի դրությամբ, էջ 7:

ՏԻԳՐԱՆԱՎԱՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Մյուս Հաբանդ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հակարի գետի ձախափնյա ձորալանջին:

Արաքսի ափամերձ շրջանները 18-րդ դարի երկրորդ կեսից Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ճնշման տակ արագ հայաթափվեցին, և այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառների գյուղերի, այդ թվում՝ Տիգրանավանի պատմական անցյալի մանրամասներն ու անգամ անունը մոռացության մատնվեն:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին գյուղում հաստատվել էին թուրքեր և քրդեր: Եկվորները բնակավայրը անվանեցին Փադար: Մինչև 1880-ական թվականները այս բնակավայրում կիսավեր վիճակում պահպանվել էր եկեղեցին[1792]:

Խորհրդային տարիներին Հակարիի հոսանքն ի վեր գտնվող գյուղերը նվիրաբերվեցին Ադրբեջանին: 1921 թվականից մինչև 1992 թվականը եկվոր թուրքերն ու քրդերը հիմնահատակ կործանեցին գյուղի եկեղեցին, գերեզմանոցը և մյուս պատմամշակութային արժեքները:

1923 թ. Փադարը գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Կուբաթլուի շրջանի կազմի մեջ:

1993 թ. հոկտեմբերի վերջերին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

1995 թ. սկսվեց գյուղի վերաբնակեցման գործընթացը: Այստեղ հաստատվեցին Ադրբեջանից բռնազաղթված հայ ընտանիքներ և ՀՀ բնակավայրերից քաղաքացիներ:

Ի պատիվ արցախյան ազատամարտի նահատակ հերոս Տիգրան Արշակյանի գյուղն անվանվեց Տիգրանավան:

1996 թվականից գյուղում գործում է միջնակարգ դպրոց: 2009 թ. դպրոցը կրում է Արցախի ազգային հերոս Պետրոս Ղևոնդյանի անունը: 2009-2010 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 66 աշակերտ, դասավանդում՝ 16 ուսուցիչ: Բնակչության արտահոսքի հետևանքով դպրոցահասակ երեխաների թվաքանակը նվազել է և 2018-2019 ուսումնական տարում դպրոցական հաստատությունում սովորում էր 33 աշակերտ: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել Ռ. Հայրապետյանը, Ա. Աղաջանյանը, Ա. Մելիքյանը, Կ. Խաչատրյանը, Պ. Ստեփանյանը, Վ. Գալստյանը, Է. Միրզոյանը:

2016 թ. ապրիլյան պատերազմի ժամանակ երկրի սահմանների պաշտպանության գործին իր մասնակցությունն է բերել գյուղի երիտասարդությունը:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

[1792] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 198:

Համայնքն ունի գյուղապետարան, դպրոց, ոստիկանական բաժանմունք, Ղարաբաղ Տելեկոմի կրպակ, առևտրի 1 կետ:

Տիգրանավանում 2005 թ. կար 152 մարդ[1793], 2018 թ.՝ 37 տուն, 142 բնակիչ[1794]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՈՒՌԵԿԱՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Մյուս Հաբանդ գավառում: Բնակավայրը տեղակայված է Հակարիի միջին հոսանքի ձախափնյա հարթավայրում:

Արաքսի ափամերձ հարթավայրային հատվածները, 18-րդ դարի երկրորդ կեսից սկսած, Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ճնշումների տակ արագ հայաթափվեցին, և պատահական չէ, որ այդ գյուղերի, դրանց թվում՝ Ուռեկանի ոչ միայն պատմական անցյալի մանրամասները, այլև անունները չեն պահպանվել:

18-րդ դարի վերջերին և 19-րդ սկզբներին գյուղում հաստատվել էին թուրքեր և քրդեր: Եկվորները բնակավայրն անվանեցին Չղջիկ (Ջաղջիկ): Մինչև 1880-ական թվականները այս բնակավայրում կիսավեր վիճակում պահպանվել էր եկեղեցին[1795]:

Խորհրդային տարիներին Ուռեկանը և շրջակա տարածքները բոլշևիկները նվիրաբերեցին ԱԽՍՀ-ին: Նորից փոխվեց գյուղի անունը և դարձավ Իշղլի: Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները նպատակային կործանեցին գյուղի կիսավեր եկեղեցին ու գերեզմանոցը: 1923 թ. Իշղլին գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Կուբաթլուի շրջանի կազմի մեջ:

1993 թ. հոկտեմբերի վերջերին ԱՀ պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

1995 թ. սկսվեց գյուղի վերաբնակեցման գործընթացը: Այստեղ հաստատվեցին ՀՀ տարբեր բնակավայրերից ընտանիքներ:

1995 թ. բացվեց Ուռեկանի միջնակարգ դպրոցը, որտեղ սովորում էին նաև հարևան չորս գյուղերի աշակերտները:

2008 թ. քուվեյթահայ բարերար Կիրակոս Գոյումջյանի ջանքերով վերանորոգվել է դպրոցական շենքը: 2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 43 աշակերտ: Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են եղել Ֆ. Բարսեղյանը, Ս. Սողոմոնյանը, Ս. Մակարյանը, Ա. Հակոբյանը:

Գյուղի երիտասարդությունը 2016 թ. ապրիլյան պատերազմի օրերին խիզախորեն պաշտպանեց հայրենի երկրի սահմանները:

[1793] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1794] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 5:

[1795] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 198:

Ուռեկանը էլեկտրաֆիկացված է: Գյուղը ունի խմելու ջրագիծ: Բնակչության մեծամասնությունը օգտվում է նաև անհատական ջրհորներից:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքն ունի գյուղապետարան, դպրոց: Թուֆենկյան հիմնադրամի միջոցներով վերականգնվել է գյուղամերձ խաղողի այգիների մի մասը:

Ուռեկանում 2005 թ. կար 165 մարդ, 2010 թ.՝ 148 մարդ[1796], 2018 թ.՝ 42 տուն, 171 մարդ[1797]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՓԱԿԱՀԱՆ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան մասում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Հաբանդ, միջին միջնադարում՝ Քաշունիք գավառում: Բնակավայրը տեղակայված է Հակարի և Որոտան գետերի միախառնման վայրի աջափնյակի հարթավայրային մասում:

Փակահանից ոչ շատ քիչ հեռավորության վրա է գտնվում Սյունիքի մարզի Արծվաշեն և Ագարակ գյուղերի անտառները, իսկ հարավից Իրանի Իսլամական Հանրապետությունը:

Գյուղի մասին տեղեկություններ է պահպանվել Ղևոնդ Ալիշանի աշխատության մեջ: Նա գրել է, որ հայկական Խոջա Հովհան հայկական գյուղը այլազգիները աղավաղված ներկայացրել են Խոջախան ձևով: Խոջա Հովհանը հայտնի վաճառական է եղել և նրա ունեցվածքը հափշտակել է Ֆաթ-ալի բռնապետը: Դավիթ Բեկը վերջինիս հաղթում և ոչնչացնում է, իսկ վաճառականի ունեցվածքը հետ վերադարձնում[1798]:

18-րդ դարի կեսերին քուրդ ցեղապետերն ու պարսիկ խաները փորձում են հայերին դուրս մղել արաքսամերձ տարածքներից: Ըստ էության, դա նրանց հաջողվում է: Չդիմանալով այդ ճնշումներին՝ դաշտավայրի հայությունը տեղի է տալիս, և նրանց փոխարեն հայկական բնակավայրերում հաստատվում են թուրքեր ու քրդեր: Խոջա Հովհան բնակավայրը դառնում է Խոջախան, իսկ խորհրդային տարիներին՝ Ենիքենդ: 1923 թ. թվականին այն ներառված էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Կուբաթլուի շրջանի կազմի մեջ:

1993 թ. ԱՀ ՊԲ հարվածների տակ ազատագրվում է Ենիքենդը:

1996–1997 թվականներին այստեղ հաստատվել են արցախյան ազատագրական պատերազմի մասնակիցներ Մարտիրոս Շահբազյանը (Գառնի), Մնացական Կոստանյանը (Արմավիր), Գուրգեն Հայրապետյանը և Աշոտ Հովսեփյանը (Գորիս):

[1796] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1797] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:
[1798] Ալիշան Ղ., Սիսական, էջ 282:

Գյուղը ստացավ Փակահան անունը:

2006 թ. գյուղը համալրվեց արտաշատցիներով: Մի քանի տարիների ընթացքում տարբեր բնակավայրերից հավաքված ընտանիքների միջև ստեղծվում են ջերմ հարաբերություններ և Փակահանը դառնում է մի ամբողջություն:

Գյուղը ձորակով բաժանված է երկու թաղամասի: Երիտասարդ ընտանիքների համար ԱՀ կառավարությունը կառուցում է նոր բնակարաններ: Ապրելու համար ստեղծվում են հարմարավետ պայմաններ:

1997 թ. աշնանը բացվեց Փակահանի միջնակարգ դպրոցը: Այն սպասարկում է նաև Երիցվանք, Վանատուն և Կումայրի համայնքների աշակերտներին: 1997 թ. դպրոցի տնորենն է Արտյոմ Սարգսյանը:

Գյուղի հիմնադրման առաջին իսկ օրվանից այստեղ հաստատված ընտանիքները ամուր կապվեցին հայոց երբեմնի լքված այս հողակտորին: Ժամանակի ընթացքում թուրքերի և քրդերի կողմից պատմական բոլոր հուշարձանները ոչնչացվել են: Փակահանի մոտ մնացել են միայն միջնադարյան բերդ-դիտակետի մնացորդները:

2016 թ. ապրիլյան պատերազմի օրերին Փակահանի տղամարդիկ մեկ մարդու նման կանգնեցին սահմանին և պաշտպանեցին ԱՀ ամբողջականությունը:

2005 թ. գյուղը էլեկտրաֆիկացվել է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական կարգով և այն իրականացնում է 22 գործող ջրհորների միջոցով: Բնակավայրով անցնող ոռոգման ջրատարը նպաստում է հողագործության զարգացմանը:

Հեռուստատեսությունը, անլար և բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքը ունի գյուղապետարան, դպրոց: Կառուցվում են մանկապարտեզի և ակումբի շենքերը: Փակահանում 2005 թ. կար 86 բնակիչ, 2010 թ.՝ 125[1799], 2018 թ.՝ 43 տուն, 139 բնակիչ[1800]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՔԱՇՈՒՆԻՔ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Բաղք, միջին միջնադարում՝ Քաշունիք գավառում: Բնակավայրը տեղակայված է Հակարի գետի աջ ափի ձորալանջին:

Բնակավայրի անվան և պատմության վերաբերյալ աղբյուրներում առայսօր հիշատակություններ չեն հայտնաբերվել:

18-րդ դարի վերջին և 19-րդ դարի ընթացքում Հակարիի և Որոտանի միջագետք սկսեցին ներթափանցել թրքախոս քրդական ցեղերը: Բնաշխարհագրական միջա-

[1799] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[1800] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:

վայրը հարմարավետ էր, մյուս կողմից էլ այստեղ գտնվող հայկական նախկին բնակավայրը հնարավորություն ընձեռեց, որ նրանք անցնեն նստակեցության:

Հայկական բնակավայրը նրանք անվանեցին Աշաղը Մոլլու: Մի քանի տասնամյակների ընթացքում եկվորները հողին հավասարեցրին հայկական հուշարձանները, մանավանդ քրիստոնեական սրբատեղիները:

Խորհրդային տարիներին Աշաղը Մոլլուն գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստան օկրուգի, 1930 թ.՝ Կուբաթլուի շրջանի կազմում:

Գյուղն ազատագրվել է 1993 թ.: Առաջին վերաբնակիչները ՀՀ բնակավայրերից այստեղ հաստատվել են 1995 թ.:

Քաշունիքում 1998 թ. միջնակարգ դպրոց է հիմնադրվել: 2000 թ. կրթական հաստատությունը տեղափոխվել է համայնքի մյուս գյուղ՝ Վերին Քաշունիք: Դպրոցը հիմնադրվել և անվանակոչվել է արցախյան ազատագրական պատերազմի նահատակ Գրիգոր Ճաղարյանի անունով: Դպրոցի տնօրեններ են աշխատել Արագած Փիլոյանը, Սուրեն Այվազյանը, Մարգո Կարախանյանը, Սուսաննա Մանուչարյանը:

2018 թ. փետրվարին՝ «Գիրք նվիրելու օրը», ՀՅԴ Երիտասարդական միության կողմից Ստեփանակերտում կազմակերպված միջոցառման ժամանակ հավաքված 1500 կտոր գիրքը նվիրաբերվել է Վերին Քաշունիքի հիմնական դպրոցի գրադարանին:

Գյուղից ապրիլյան պատերազմին մասնակցել են 6 հոգի:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվում է անհատական կարգով՝ 18 ջրհորների միջոցով: Համայնքի տարածքով անցնող Քաշունիք-1 և Քաշունիք-2 ոռոգման ջրատարները նպաստում են հողագործության զարգացմանը:

Համայնքն ունի գյուղապետարան: Քաշունիք համայնքի կազմում ընդգրկվել են նաև Մորաջուր և Վերին Քաշունիք գյուղերը:

Քաշունիքում 2005 թ. կար 117 մարդ, 2010 թ.՝ 52 մարդ[1801], 2018 թ.՝ 15 տուն, 51 մարդ[1802]: Նրանց հիմնական զբաղմունքը հողագործությունն է:

ՄՈՐԱՋՈՒՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Բաղք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հակարիի միջին հոսանքի աջափնյա ձորալանջին:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել էին: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ տվյալ գավառի գյուղերի, այդ թվում՝ Մորաջրի պատմական անցյալն ու անգամ անունը մոռացության մատնվեն:

[1801] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1802] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, 2018, էջ 7:

19-րդ դարի սկզբներին ամայության մատնված գյուղում հաստատվել էին քուրդ խաշնարած մի քանի ընտանիքներ: Հայկական գյուղը նրանք անվանեցին Մոլլաբուրխան:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված եկվորները հիմնահատակ կործանել էին հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ: Այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մոսկվայի կենտրոնական բոլշևիկյան իշխանության որոշմամբ այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին: Մոլլաբուրխանը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Կուբաթլուի շրջանի կազմում:

1993 թ. նոյեմբերի սկզբներին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

1995 թ. սկսվեց գյուղի վերաբնակեցման գործը: 1995 թ. այստեղ հաստատվեցին ՀՀ բանակավայրերից մի քանի ընտանիքներ: Գյուղը ստացավ Մորաջուր անունը:

Բնակավայրը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական ջրհորների հաշվին: Գյուղի տարածքով անցնում են ոռոգման ջրատարներ, որոնք նպաստում են հողագործության զարգացմանը:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Մորաջուրը ընդգրկված է Քաշունիք համայնքի կազմում:

Մորաջրում 2005 թ. կար 5 բնակիչ, 2010 թ.՝ 5 բնակիչ[1803], 2018 թ.՝ 2 տուն, 6 բնակիչ[1804]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՎԵՐԻՆ ՔԱՇՈՒՆԻՔ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում, նախկինում՝ Սյունիքի Բաղք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հակարիի միջին հոսանքի աջափնյա ձորալանջին:

18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի խաների և քրդական ցեղերի ճնշման տակ տարածաշրջանի բնակավայրերը հայաթափվել էին: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ այս գավառի գյուղերի, այդ թվում՝ Վերին Քաշունիքի պատմական անցյալի մանրամասները և անգամ անունը մոռացության մատնվեն:

19-րդ դարի սկզբներին ամայության մատնված գյուղում հաստատվել էին քուրդ խաշնարած մի քանի ընտանիքներ: Հայկական գյուղը նրանք անվանեցին Յուխարի Մոլլու:

[1803] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1804] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված քրդերը հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Խորհրդային տարիներին դա առավել ծրագրված բնույթ ստացավ: Այսօր այդ հուշարձանների հետքերն անգամ չեն երևում:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մոսկվայի կենտրոնական բոլշևիկյան իշխանության որոշմամբ այս տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին: Յուխարի Մոլլուն 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Զանգելանի շրջանի կազմում:

1993 թ. նոյեմբերի սկզբին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց:

1995 թ. այստեղ հաստատվեցին ՀՀ բնակավայրերից մի քանի ընտանիքներ: Բնակավայրը անվանվեց Վերին Քաշունիք:

Գյուղի աշակերտները հաճախում են Քաշունիքի միջնակարգ դպրոց:

Վերին Քաշունիքը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական ջրհորների հաշվին: Գյուղն ունի ջրարբի հողատարածքներ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Վերին Քաշունիքը ընդգրկված է Քաշունիք համայնքի կազմում:

Վերին Քաշունիքում 2005 թ. կար 43 բնակիչ, 2010 թ.՝ 20 բնակիչ[1805], 2018 թ.՝ 6 տուն, 18 բնակիչ[1806]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՔԱՐԵԳԱՀ

Գյուղը գտնվում է ԱՀ արևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Արցախի Բերձոր գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Հակարի գետի վերին հոսանքի աջափնյա ձորալանջին՝ Բերձոր քաղաքից 4 կմ դեպի հյուսիս:

Գյուղի վաղանցյալ ժամանակաշրջանի պատմության մասին սկզբնաղբյուրներում տեղեկություններ չեն հայտնաբերվել:

Շինարարական աշխատանքների ընթացքում Քարեգահի շրջակայքում հայտնաբերվել են կարասային թաղումներ, որոնք բնորոշ են հելլենիստական դարաշրջանի Արցախի բնակավայրերին:

19-րդ դարի երկրորդ կեսին Քարեգահում և նրա շրջակայքում եղած գյուղերը հիմնականում հայաթափվել էին:

1920 թ. ներկայիս Բերձոր քաղաքը և նրա շրջակա գյուղերը բռնակցվել են խորհրդային Ադրբեջանին: 1920-ական թվականներին ներկայիս Քարեգահ գյուղի տեղը

[1805] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

[1806] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:

հիմնվել է թուրքացած քրդերով բնակեցված Կարըկախա բնակավայրը: 1923 թ. վերոհիշյալ գյուղը գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, իսկ 1930 թ.՝ Լաչինի շրջանի կազմում:

1992 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվել է: Գյուղը վերաբնակեցվել է 1994 թ.: Այդտեղ հաստատվեցին ՀՀ-ից և Գետաշենից ու Մարտակերտի բռնազավթված գյուղերից տեղահանված մի քանի ընտանիքներ: Գյուղի հիմնադիրներից է արցախյան ազատամարտի նվիրյալներից Սմբատ Թաթոսյանը: Նա էլ դարձավ բնակավայրի առաջին գյուղապետը: Սմբատ Թաթոսյանի վաղաժամ մահվանից հետո նրա գործի շարունակողը դարձավ կինը՝ Մարինե Պետոյանը, որը մինչև 2017 թ. ղեկավարել է համայնքը: Նոր բնակավայրը ստացել է Քարեգահ անունը:

1995 թ. սեպտեմբերից գյուղում դպրոց է գործում: 2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 32 աշակերտ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են եղել Լ. Վարդանյանը, Ս. Բաբայանը, Ա. Հակոբյանը, Վ. Գալստյանը, Գ. Մնացականյանը:

2003 թ. «Մոնթե Մելքոնյան» հասարակական բարեսիրական կազմակերպության նախաձեռնությամբ գյուղում գործում է Սմբատ Թաթոսյանի անվան երիտասարդական կենտրոնը, որտեղ գործում են մի շարք խմբակներ՝ համակարգչային լուսանկարչական, դիզայնի, կերամիկայի, նկարչական, պարի, էթիկայի և էսթետիկայի, կարատեի;

Համայնքը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական եղանակով՝ գյուղի աղբյուրների հաշվին:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Բնակավայրում գործում են գյուղապետարան, միջնակարգ դպրոց, մանկապարտեզ, բուժկետ, ակումբ, առևտրի 2 կետ:

Քարեգահում 2018 թ. կար 45 տուն, 165 բնակիչ[1807]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ՈՐՈՏԱՆ

Քաղաքը գտնվում է ԱՀ հարավարևմտյան մասում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Բաղք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Որոտան գետի ստորին հոսանքի ձախափնյա ձորալանջին:

Որոտանը Սյունիքի հնագույն բնակավայրերից է:

[1807] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:

13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանն իր աշխատության մեջ նշում է, որ Սյունյաց Հաբանդ գավառի սահմաններում են գտնվում Բորոդանա բերդը և համանուն բնակավայրը[1808]:

Ավելի ուշ շրջանի հիշատակարաններում բնակավայրը հանդես է գալիս Քարոտան, Քորատուն, Քորոդան անուններով[1809]:

Ընդհանուր առմամբ 1170 թ.՝ Սյունյաց թագավորության անկումից հետո, ինչպես Որոտան բնակավայրը, այնպես էլ Քաշունիք կամ Բարկուշատ գավառը դժվարին և դառնություններով առլեցուն պատմություն են ունեցել:

Սյունիքի Բաղք գավառը վերոհիշյալ ժամանակներում բաժանվել էր երկու հատվածի: Արևմտյան գավառամասը կոչվեց Աձեն կամ Աձանան, արևելյանը՝ Քաշունիք, իսկ արդեն 13-րդ դարում վերջինիս զուգահեռ կրում էր նաև Բարկուշատ անունը:

Սյունյաց պատմիչ՝ Ստ. Օրբելյանը վկայում է, որ Զաքարյանների կողմից Սյունիքը սելջուկ-թուրքերի տիրապետությունից ազատագրելուց հետո Իվանե աթաբեկը Սյունիքի Լիպարիտ իշխանին նվիրում է մի շարք բերդեր, բնակավայրեր, այդ թվում Բարկուշատ ամրոցն ու համանուն գյուղը[1810]: Ամենայն հավանականությամբ պատմիչը նկատի ուներ Բորոտան բերդն ու բնակավայրը: Դա պատահական չէ, որովհետև Բորոտանը արդեն Բարկուշատ գավառի վարչական կենտրոնն էր:

16-րդ դարի վերջերից սկսած՝ ձեռագրերում վերոհիշյալ գավառը արդեն ներկայացվում է միայն Բարկուշատ անունով:

18-րդ դարում Բարկուշատը Ֆաթալի խանի նստավայրն էր[1811]:

Վրաց Հերակլ թագավորը նշված ժամանակաշրջանում ասպատակում է հայոց արևելից նահանգները, հասնում Որոտանի ափերը ու գրավում Բարգուշատը[1812]:

18-րդ դարի երկրորդ կեսից հայերը հիմնականում հեռանում են Բարգուշատից: Դատարկված բնակավայրերը լցվում էին թուրքերով և քրդերով: Ռուսական տիրապետության շրջանում դա առավել մեծ չափեր ստացավ: 1880-ական թվականներից մինչև 1977 թ. նշված տարածքներում առաջացան 94 քրդաբնակ գյուղեր[1813]:

Մի քանի տասնամյակի ընթացքում եկվորների կողմից ոչնչացվեցին հայկական պատմամշակութային արժեքները: Այդ ամենով հանդերձ քաղաքի շրջակայքում տեսանելի են գերեզմանոցի, տապանաքարերի, եկեղեցու, միջնադարյան բնակավայրի հետքերը:

[1808] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 71, 400:
[1809] Մատենադարան, ձեռ. 2868, թ. 129; հմմտ. Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, էջ 178:
[1810] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 319:
[1811] Ղ. Ալիշան, Սիսական, էջ 282:
[1812] Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955, էջ 133:
[1813] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 187:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Մոսկվայի կենտրոնական բոլշևիկյան իշխանության որոշմամբ վերոհիշյալ տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին:

Գետեզրյա բարեբեր տարածքները 1923 թ. ընդգրկվեցին ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, 1930 թ.՝ Զանգելանի շրջանի, իսկ 1964 թ.՝ նոր ձևավորված Կուբաթլուի վարչական միավորի կազմում:

1962 թ. քաղաքատիպ ավանի կարգավիճակ ունեցող Բարգուշատը դարձավ Ղուբաթլի (Կուբաթլի)[1814]: 1964 թ. Կուբաթլի քաղաքատիպ ավանը նոր վարչական շրջանի կենտրոնն էր:

1993 թ. նոյեմբերի սկզբներին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ Կուբաթլուն ազատագրվեց:

Ռազմական գործողությունների ավարտից հետո սկսվեց բնակավայրի վերաբնակեցման գործընթացը: Սկզբում այստեղ հաստատվեցին Ադրբեջանից բռնագաղթված մի քանի ընտանիքներ և ՀՀ բնակավայրերի քաղաքացիներ: Բնակավայրը վերստացավ իր պատմական Որոտան անունը:

Որոտանի աշակերտները սովորում են Հայկազյան գյուղի հիմնական դպրոցում:

Որոտան քաղաքային համայնքի կազմում ընդգրկված են Անդոկաբերդ, Դողար, Բարկուշատ և Վանանդ գյուղերը:

Բնակավայրը էլեկտրաֆիկացված է, ունի խմելու ջրի ջրացանց: Տարածքով անցնում են ոռոգման ջրատարներ, որոնք նպաստում են ինտենսիվ հողագործության զարգացմանը: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են քաղաքապետարան, բուժկետ:

Որոտանում 2015 թ. կար 162 տուն, 556 բնակիչ[1815], 2018 թ.՝ 171 տուն, 588 բնակիչ[1816]: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

ԴՈՂԱՐ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Բաղք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Որոտանի աջափնյա ձորալանջին՝ վերոհիշյալ գետի և Վարարակնի հատման մասում:

Շահեն Մկրտչյանի կարծիքով Դավուդլուն Սյունիքի Դավթաշեն գյուղն է[1817], որը հնարավոր է՝ կապ ունի Դավիթ Բեկի անվան հետ:

[1814] Ադրբեջանական խորհրդային հանրագիտարան (ադրբեջաներեն), հ. III, էջ 254:
[1815] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 375:
[1816] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:
[1817] «Ազատամարտ», հմ. 40, 1993:

Սերո Խանզադյանը այստեղ պահպանված մի տապանաքարի վրա կարդացել է «ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԴԱՎԻԹ ՔԱՋ ՋՈՐԱՎԱՐԻՆ, ԹՎՆ. ՌԾՀ (1609)»: Միաժամանակ գրողը նշել է, որ Դավուդլուն պատմական Մարգաձոր գյուղն է[1818]: Դավուդլու գյուղի հարևանությամբ գտնվող միջնադարյան գերեզմանոցի տապանաքարերը և ջրաղացի ավերակները վկայում են, որ վաղ շրջանում այստեղ հայկական բնակավայր է եղել:

Որոտանի ստորին հոսանքի վերոհիշյալ տարածքներում 1722–1730 թվականներին Դավիթ Բեկը և Մխիթար սպարապետը դաժան մարտեր են մղել Բարկուշատի և շրջակա խաների դեմ:

Անընդհատ կրկնվող պատերազմների և դրան հաջորդած սովի ու մահտարժամի պատճառով 18-րդ դարի երկրորդ կեսին տեղի հայությունը լքել է հարազատ բնակավայրը:

19-րդ դարի սկզբներին Դավթաշենում հայտնվել էին թրքախոս քուրդ-քոչվոր մի քանի ընտանիքներ, որոնց համար հայկական գյուղը ժամանակավոր կացարան էր դարձել:

20-րդ դարի սկզբներին վերջիններիս միացան նոր ընտանիքներ, որոնք անցան նստակյաց կացութաձևին և հիմնավորվեցին հին հայկական գյուղում: Բնակավայրը նրանք համապատասխանեցրին իրենց լեզվի հնչունային համակարգին և այն անվանեցին Դավուդլու:

Մի քանի տասնամյակի ընթացքում գյուղում հաստատված եկվորները հիմնահատակ կործանել են հայկական պատմամշակութային արժեքները: Այդ ամենը խորհրդային տարիներին առավել ծրագրված բնույթ ստացավ:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո պատմական Բաղքի բարեբեր այս շրջանները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին: Դավուդլուն 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, 1930 թ.՝ Զանգելանի, իսկ 1964 թ.՝ նորաստեղծ Կուբաթլուի շրջանի կազմում:

1993 թ. ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ Դավուդլուն ազատագրվեց: 2000 թ. վերաբնակների կարգավիճակով այստեղ հաստատվել էին ՀՀ բնակավայրերից մի քանի ընտանիքներ: Բնակավայրը ստացել է Դողար անունը:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական կարգով՝ բնական աղբյուրների հաշվին:

Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Բնակավայրը ընդգրկված է Որոտանի քաղաքային համայնքի կազմում:

[1818] Խանզադյան Ս., Ինչ են պատմում քարերը, «Սովետական Հայաստան», ամսագիր, հմ. 6, Երևան, 1984, էջ 31; հմմտ. Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 196:

Դողարում 2018 թ. կար 3 տուն, 5 բնակիչ[1819]: Նրանք զբաղվում են գյուղատնտեսությամբ:

ԱՆԴՈԿԱԲԵՐԴ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավարևմտյան հատվածում՝ Քաշաթաղի շրջանում՝ նախկինում՝ Սյունիքի Բաղք գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Որոտանի միջին հոսանքի ձախափնյա վտակ Խնձորեկի աջափնյակում:

Գյուղի մերձակայքում պահպանվել են ժայռափոր եկեղեցի, 9–11-րդ դարերի բերդի և աղբյուրի մնացորդներ:

Անդոկաբերդի մոտ են գտնվում նաև քարայրներ, որոնք միջնադարում օգտագործվում էին որպես բնակարաններ և Որոտան գետի վրա Լալազարի նշանավոր երկթռիչք կամուրջը: 25 մ երկարություն ունեցող այս կամուրջը կառուցվել է 1867 թ. Խնձորեսկցի Հովակիմ Լալազարյանցի միջոցներով: Կամուրջի պատին ագուցված շինարարական արձանագրությունը ժամանակին միտումնավոր քերվել է եկվոր թուրքերի և քրդերի կողմից: 1900–1902 թթ. կամուրջը հիմնանորոգել է Հովակիմ Լալազարյանցի որդին՝ Սիմեոն Լալազարյանը[1820]:

Կամրջից 35 կմ ներքև պահպանվում են ջրաղացի ավերակները:

Այս փաստերը վկայում են, որ Անդոկաբերդը և նրա շրջակա տարածքները մինչև 18-րդ դարի կեսերը հայերով բնակեցված են եղել, իսկ մինչև 19–20-րդ դարի սկզբները՝ որոշակի ներկայություն են ունեցել այս բնակավայրերում:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին թրքախոս քրդերի ձնշման տակ վերոհիշյալ բնակավայրից հայությունը հիմնականում հեռացել է: Եկվոր քոչվոր քրդերը հայերի ունեցվածքի տերը դարձան: Նրանք ավերեցին հայկական պատմամշակութային արժեքները: Գյուղը նրանք անվանեցին Ալիղուլի-Ուշաղի:

Երվանդ Լալայանը վկայում է, որ 19-րդ դարի վերջերին Ալիղուլի-Ուշաղիի ժայռափոր եկեղեցին եկվորները գոմ էին դարձրել[1821]:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո, Մոսկվայի կենտրոնական բոլշևիկյան իշխանության որոշմամբ տարածքները բռնակցվեցին ԱԽՍՀ-ին: Անդոկաբերդը 1923 թ. գտնվում էր ԱԽՍՀ Կարմիր Քուրդիստանի օկրուգի, 1930 թ.՝ Զանգելանի շրջանի, իսկ 1964 թ.՝ Կուբաթլուի շրջանի կազմում:

1994 թ. նոյեմբերի սկզբներին ԱՀ Պաշտպանության բանակի հարվածների տակ գյուղը ազատագրվեց: Այն ստացավ Անդոկաբերդ անունը:

2000 թ. այստեղ հաստատվեցին ՀՀ բնակավայրերից մի քանի ընտանիքներ:

[1819] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:

[1820] «Մշակ», հմ. 161, 1902; հմմտ. Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 197:

[1821] Լալաեան Ե., Զանգեզուր, էջ 50:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Խմելու ջրի հարցը լուծվել է անհատական եղանակով՝ բնական աղբյուրների հաշվին:

Ռադիոյի հեռարձակումները, բջջային հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Վերոհիշյալ բնակավայրը ընդգրկված է Որոտան համայնքի կազմում:

Անդրադարձում 2015 թ. կար 2 տուն, 8 մարդ[1822], 2018 թ.՝ 1 տուն 2 մարդ[1823]: Նրանց զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

[1822] Ղահրամանյան Հ., նշվ. աշխ., էջ 375:

[1823] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 7:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ամփոփելով վերոհիշյալ ուսումնասիրությունը՝ հարկ է նկատել, որ անցյալի վերաարժևորման, ներկայի ու ապագայի արդյունավորման առումով մեզ հուզող բազում հարցերի պատասխաններ կարող ենք ստանալ՝ գիտականորեն ուսումնասիրելով ԱՀ բնակավայրերի պատմության անընդհատ շղթան, բացահայտելով նրանց անցած ճանապարհի առանձնահատկությունները, մատնանշելով այդ ամենի բնութագրական կողմերը, ընդգծելով համայնքների դերը հայ հոգևոր ու նյութական մշակութային արժեքների, Հայոց Արևելից նահանգների բնակչության ազգային, կրոնական, բարոյական բնութագրին հատուկ քաղաքական, տնտեսական համակարգերի ստեղծման գործում:

ԱՀ ներկայիս տարածքի շուրջ 308 բնակավայրերի բազմադարյա պատմության ուսումնասիրությունն ու շարադրանքը թույլ են տալիս ոչ միայն հայ, այլև օտար ընթերցողների մոտ ճիշտ ու անկողմնակալ պատկերացում ձևավորելու, թե ովքեր են եղել վաղնջական ժամանակներից Սյունիքի արևելյան գավառների, Արցախի և Ուտիքի բնիկ ու իսկական տերերը:

Աշխարհագրական տեսանկյունից ԱՀ ներկայիս տարածքի բնակավայրերի զգալի մասը Ք. ա. 1-ին հազարամյակից գտնվելով տափաստանից դեպի Հայկական լեռնաշխարհի խորքերը տանող ռազմավարական նշանակության կետերում, բազում դարերի ընթացքում անխոցելի վահան է դարձել՝ կասեցնելով բոլոր տեսակի թշնամիների հայակործան արշավանքները:

Այդ բնակավայրերի տեր ու տնօրեն ներկա սերունդը, պապերից ժառանգություն ստացած, հայրենապաշտական ավանդներով դաստիարակված, այսօր էլ շարունակում է երկրապահի պատվավոր առաքելությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սկզբնաղբյուրներ

1.1. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան

Ձեռագիր թիվ 2734, 2868, 3578, 6288, 7542, 7823, 8211:
Լազարյանների արխիվ, թղթ. 111, գ. 36, վակ. 80, թ. 1–3:
Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 160, թ. 4 ա:

1.2. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

ֆ. 37, g. 3, գ. 436, թ. 3:
ֆ. 53, g. 1, գ. 3800, թ. 30–31, g. 1, գ. 3877, թ. 29, g. 1, գ. 3917, թ. 56–57:
ֆ. 56, g. 1, գ. 43, թ. 1, 10, թ. 49, գ. 78, գ. 305, թ. 15, թ. 43, թ. 45, թ. 47, գ. 2596, թ. 10, գ. 2914, թ. 87, գ. 6416, 6775, թ. 120, գ. 8064, 8583, թ. 108, գ. 10403, թ. 54–55, գ. 11709, թ. 1:
ֆ. 56, g. 2, գ. 10, թ. 10:
ֆ. 56, g. 3, գ. 78, թ. 1–8, գ. 52, թ. 149, գ. 78, 144, 148, 231, գ. 314, թ. 10, գ. 543, թ. 18–22:
ֆ. 56, g. 4, գ. 422, թ. 5:
ֆ. 56, g. 6, գ. 558, թ. 217:
ֆ. 56, g. 14, գ. 205, թ. 19, թ. 235–236:
ֆ. 56, g. 15, գ. 265, թ. 144:
ֆ. 57, g. 1, գ. 3, թ. 10, թ. 72, թ. 97, թ. 112–113, գ. 4, թ. 4, թ. 47, գ. 118, թ. 89–93, գ. 148, թ. 89:
ֆ. 57, g. 3, գ. 46, թ. 27:
ֆ. 57, գ. 305, թ. 45:
ֆ. 93, g. 1, գ. 49, գ. 50, թ. 247, թ. 366–380, թ. 392, թ. 396–400, թ. 456, գ. 51–52, գ. 390, թ. 392:
ֆ. 114, g. 2, գ. 98, թ. 46:
ֆ. 150, g. 1, գ. 59, թ. 1–6:
ֆ. 200, g. 1, գ. 49, թ. 47, գ. 581, թ. 98:
ֆ. 319, g. 1, գ. 9:
ֆ. 468, g. 2, գ. 73, թ. 1:
ֆ. 1159, g. 10, գ. 60, թ. 15:

1.3. Արցախի հանրապետության պետական արխիվ (ԱՀ պետարխիվ)

ֆ. 1, g. 1, գ. 1, թ. 12:
ֆ. 1, g. 2, գ. 11, թ. 59, գ. 19, թ. 21, գ. 23, թ. 30–31, գ. 35, թ. 173, գ. 38, թ. 66–70, գ. 46, թ. 4, գ. 53, թ. 354:
ֆ. 56, g. 1, գ. 543, թ. 12, գ. 492, թ. 122
ֆ. 250, g. 11, գ. 1, թ. 38
ֆ. 268, g. 1, գ. 1, թ. 6, գ. 2, թ. 6, գ. 19, թ. 9:

1.4. Հաղրութի շրջանային արխիվ

ֆ. 3, գ. 60, թ. 108:

1.5. Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարան

1. Мирзабекян З., Тевадрос Мирзабекян, անտիպ գործ:

1.6. ԱրՊՀ հայագիտական կենտրոն

1.7. Центральный государственный исторический архив Российской федерации (ЦГИА РФ)

ф. 290, оп. 11, д. 2726.
ф. 1290, оп. 4, д. 645.
ЦГИА РФ, Санкт-Петербургское отделение, Первая всеобщая перепись населения Российской империи, 1897 г., ф. 1290, оп. 11, д. 449, 646.

2. Տպագիր սկզբնաղբյուրներ

ա) հայերեն

1. Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ Պատմագրութիւն անցիցին իւրոց և Նատր-Շահին պարսից, Վաղարշապատ, 1870:
2. Ա-Դօ, Հայ-թուրքական ընդհարումները Կովկասում 1905–1906 թթ., Երևան, 1907:
3. ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ, Ստեփանակերտ, 2018:
4. Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, Քննական հրատ. Հ. Պերպերեանի՝ համեմատութեամբ 24 ձեռագրի և տպագրի, Փարիզ, 1960:
5. Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Երևան, 1988:
6. Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Նալբանդյան, Երևան, 1965:
7. Արամայիս, Մի քանի գլուխ հայ-թրքական ընդհարումներից, մասն Ա., I. Ասկերան, II. Վարանդայ-Խաչէն, Թիֆլիս, 1907:
8. Գնթունի, Յիշողութիւներ մօտիկ անցեալից, պրակ առաջին (Ասկերան), Թիֆլիս, 1907:
9. Գրիգոր Մագիստրոսի թղթերը, բնագիրն յառաջաբանով և ծանօթութիւններով առաջին անգամ լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Ալեքսանդրապոլ, 1910:
10. Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1982:
11. Եղիշէի Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Երևան, 1957:
12. Երկու վավերագրեր տ. Խաչիկ վարդապետի ձեռագրերի ժողովածուից, «Արարատ», հունիս, Վաղարշապատ, 1900:
13. Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն, հ. Բ, Վաղարշապատ, 1870:
14. Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917–1920 թթ., Երևան, 2008:
15. Թօփճեան Յ. Յակոբ, Յուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Ա., Վաղարշապատ, 1895:

16. Թօփճեան Յ., Ցուցակ ժողովածուաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Բ., Վաղարշապատ, 1900:
17. Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի (հավելված), Երևան, 1942:
18. Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոց պատրիարքի, Յերուսաղէմ, 1871:
19. Իշխանեան Ե., Լեռնային Ղարաբաղ (1917-1920), Երևան, 1999:
20. Լեռնային Ղարաբաղի հանրապետության շրջանները թվերով (2004-2010), վիճակագրական ժողովածու, Ստեփանակերտ, 2011:
21. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982:
22. Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան 1961:
23. Կրետացի Ա., Պատմութիւն անցիցն իւրոց և Նատր-Շահին պարսից, Վաղարշապատ, 1870:
24. Հայ-ռուսական հարաբերությունները 18-րդ դարի առաջին երեսնամյակում, հ. 2, մասն 3, Երևան, 1967:
25. Հասան Ջալալեանց Եսայի կաթողիկոս Աղուանից, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Երուսաղէմ, 1868:
26. ԺԴ դարի հայերեն ձեռագիր հիշատակարաններ, կազմ. Լ. Խաչիկյան, Երևան, 1950:
27. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (1601-1620 թթ.), հ. Ա, կազմ. Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1976:
28. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (1621-1640 թթ.), հ. Բ, կազմ. Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1978:
29. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (1641-1660 թթ.), հ. Գ, կազմ. Վ. Հակոբյան, Երևան 1984:
30. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. երկրորդ, յօրինեց հ. Բարսեղ վ. Սարգիսեան, Վենետիկ, 1924:
31. Մատենադարանի պարսկերեն վավերագրեր, հրովարտակներ, կազմող Հ. Փափազյան, պրակ 2-րդ, 1601-1650 թթ., Երևան, 1959:
32. Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, պրակ III (1652-1731), կազմեց Ք. Կոստիկյանը, Երևան, 2005:
33. Մեսրովբ Թաղիղեանց, Ճանապարհորդութիւն ի Հայս, հ. 1, Կալկաթա, 1847:
34. Մովսէսի Խորենացվոյ Մատենագրութիւնք, ի Վենետիկ, 1843:
35. Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969:
36. Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983:
37. Ջամբռ համաժողովեցեալ և շարադրեցեալ ի Սիմէօնէ կաթողիկոսէ Երևանցւոյ, Վաղարշապատ, 1873:
38. Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանց, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մաս Ա, Բ, Երևան, 2016:
39. Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1861:
40. Ստեփաննոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911:
41. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986:
42. Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանց, հ. Ա, Էջմիածին, 1842:
43. Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան (1921-1958), Երևան, 1994:

44. Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, Հայ առաքելական եկեղեցուԱրցախի թեմը (1823-1933), Երևան, 2001:
45. Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Յակոբոս Վ. Տաշեան, Վիեննա, 1895:
46. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա., Երևան, 1965:

բ) ռուսերեն

1. Азербайджанское центральное статистическое управление, список населенных мест Азербайджана по данным переписи населения 1926 года А. О. Нагорного Карабаха, Баку, 1927.
2. АКАК, т. X, док. 295.
3. Армяно-русские отношения в первой трети XVIII века, Сборник документов, т. II, ч. I, Ереван, 1964, т. II, ч. II, Ереван, 1967.
4. Баладзори, Завоевания стран, пер. П. Жузе, Баку, 1927.
5. Всесоюзная перепись населения 1939 г.: основные итоги, Москва, 1992.
6. Всесоюзная перепись населения СССР 1989 года, Нагорно-Карабахская Автономная область, Москва, 1990.
7. Документы и материалы по истории армянского народа, социально-политическое и экономическое положение восточной Армении после присоединения к России (1830-1870), Ереван, 1993.
8. Елисаветпольская губерния. Свод статистических данных извлеченных из посемейных списков населения Кавказа. Тифлис, 1888.
9. Йакут ал-Хамави, Муджам ал-Булудан, Баку, 1983.
10. Ибн-ал Факих, СМОМПК, XXXI, Тифлис, 1902.
11. «Кавказский календарь» на 1856 г., Тифлис, 1855.
12. «Кавказский календарь» на 1868 г., Тифлис, 1867.
13. «Кавказский календарь» на 1915 г., Тифлис, 1914.
14. «Кавказский календарь» на 1917 г., Тифлис, 1916.
15. Карта генерального штаба К-38-141, Кельбаджар.
16. Карта Кавказского края, Тифлисъ, 1904.
17. Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, т. IV, Тифлис, 1886, т. VI, Тифлис, 1887.
18. Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов под. ред. В. Микаеляна, Ереван, 1992.
19. Описаніѣ Карабагской провинціи, составленное в 1823 г., по распоряженію главноуправляющаго въ Грузіи Ермоловым, действительном статским советникомъ Могилевскимъ и полковникомъ Ермоловымъ 2-мъ, Тифлисъ, 1866.
20. Памятная книга Елисаветпольской губернии на 1914 год: Приложение к памятной книге, Тифлис, 1914.
21. Первая всеобщая перепись населения Российской империи, т. LXIII, Елисаветпольская губерния, под. ред. Н. Тройницкого, Санкт-Петербург, 1904.
22. Присоединение Восточной Армении к России, сборник документов, т. 2, Ереван, 1978.
23. Пятиверстная карта Елисаветпольской губернии, Тифлис, 1910.

24. Сборник материалов для описания местностей и племен Кавказа, выпуск 25, Тифлис, 1898.
25. Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г., Тифлис, 1888.
26. Свод статистических данных о населении Закавказского края, материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, т. IV, Тифлис, 1886.
27. СМОМПК, Т. XXIX, Тифлис, с. 33, Т. XXXVIII, Тифлис, 1908.
28. Специальная карта Евразийской Росии, Тифлис, 1910.
29. Статистические таблицы о народонаселении Кавказского края, сборник сведений о Кавказе, Т. VII, Тифлис, 1880.
30. Хамадаллах Казвини, Нузхат ал-Кулуб, Баку, 1983.
31. Шихаб ад-Дин Мухаммад ан Насави, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны, Баку, 1973.
32. Энциклопедический словарь под ред. К. Арсеньева и проф. В. Шевякова, т. XIIIA, издатели Ф. Брокгауз, И. Ефрон, Санкт-Петербург, 1894.

3. Մենագրություններ

ա) հայերեն

1. Աբրահամյան Ե., Մեծ Թաղեր, Ստեփանակերտ, 2009:
2. Աբրահամյան Հ., Թևան, Երևան, 1998:
3. Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը (1917-2000), գիրք Գ, Ստեփանակերտ, 2007:
4. Աթայան Ի., Լույսի տաճարում, Ստեփանակերտ, 1991:
5. Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893:
6. Ալիշան Ղ., Հայապատում, մաս Բ, Վենետիկ, 1901:
7. Ալիշան Ղ., Արցախ, Երևան, 1993:
8. Աղայան Ղ., Իմ կյանքի գլխավոր դեպքերը, Թիֆլիս, 1893:
9. Աղաջանյան Մ., Հաթերք, պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Ստեփանակերտ, 2012:
10. Ամառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1948:
11. Ամառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Երևան, 1962:
12. Ամառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան, 1973:
13. Ամինե Ավդալ, Անդրկովկասյան քրդերի կենցաղը, Երևան, 1957:
14. Ամիրջանյան Թ., Արզումանյան Վ., Լեռնային Ղարաբաղի աշխարհագրություն, Ստեփանակերտ, 1994:
15. Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Արցախի կրթական համակարգը, հ. 1, Ստեփանակերտ, 2014:
16. Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Լեռնային Ղարաբաղի հանրապետության կրթական համակարգը (1923-1988 թթ.) հ. 2, Երևան, 2015:
17. Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Լեռնային Ղարաբաղի հանրապետության կրթական համակարգը (1991-2016 թթ.), հ. 3, Ստեփանակերտ, 2017:
18. Ավետիսյան Ն., Հաղորտի, Ստեփանակերտ, 2009:
19. Արիս Արսենի, Չերվոն Վարդանյանի կյանքն ու անմահությունը, Երևան, 2005:

20. Արցախապատում, գիրք 4, Թալիշ, Ստեփանակերտ, 2015:
21. Բալայան Վ., Գիշի. պատմական անցյալն ու ներկան, Երևան, 1997:
22. Բալայան Վ., Բալայան Ռ., Հարությունյան Մ., Անկախության նվիրյալները, ԱրՊՀ ուսանողները արցախյան ազգային-ազատագրական պայքարի տարիներին, Երևան, 2009:
23. Բալայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2011:
24. Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստեփանակերտ, 2012:
25. Բալայան Վ., Արցախահայ ազատագրական պայքարի բովանդակությունը 17-րդ դարի երկրորդ կեսից մինչև 1813 թ., Ստեփանակերտ, 2013:
26. Բալայան Վ., Շուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Երևան, 2017:
27. Բալասանյան Գ., Դարերի Ճամփորդը, Երևան, 1986:
28. Բաղդասարյան Ա., Հայրենի եզերք, Ստեփանակերտ, 2003:
29. Բարխուդարյան Մ., Արցախ, Երևան, 2018:
30. Բարսեղյան Ս., Արցախ-Ղարաբաղը մեծ հայրենականում (1941-1945 թթ.), Ստեփանակերտ, 2015:
31. Բեկնազարյանց Ա., Գաղտնիք Ղարաբաղի, Ստեփանակերտ, 2018:
32. Դաբաղյան Ա., Գաբրիելյան Մ., Շուշին 1992-2002 թթ. հայերի վերադարձը ազատագրված քաղաք (ազատագրական ակնարկ), Երևան, 2004:
33. Դավթյան Կ., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966:
34. Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963:
35. Երեմյան Ս., Հայկական պետությունը Տիգրան Մեծի ժամանակշրջանում (մ. թ. ա 95-66), քարտեզ, Երևան, 1977:
36. Երիցյան Ալ., Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1898:
37. Էփրիկեան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1903-1905:
38. Էփրիկեան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 2, գիրք Ա և Բ, Վենետիկ, 1907:
39. Լալայան Ե., Երկեր, հ. 2, Երևան, 1988:
40. Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, Երևան, 1973:
41. Լեո, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, 1985:
42. Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914:
43. Լիսիցյան Ս., Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ), Հայ ազգագրության և բանահյուսության նյութեր և ուսումնասիրություններ, հ. 12, Երևան, 1981:
44. Խաչատրյան Հ., Հացապատում, Երևան, 1984:
45. Խուդոյան Ս., Արևելահայ դպրոցները 1830-1920 թթ., Երևան, 1987:
46. Կարապետյան Ս., Լեռնային երկրամասի քաջարի զավակները, Բաքու, 1969:
47. Կարապետյան Ս., Գետաշեն, Երևան, 1992:
48. Կարապետյան Ս., Բուն Աղվանքի վիմագրերը, Երևան, 1997:
49. Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999:
50. Կարապետյան Ս., Հայաստանի պատմություն, Մռավականք, Երևան, 2019:
51. Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, Երևան, 2004:

52. Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. 1, 2, Երևան, 2011:
53. Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986:
54. Հակոբյան Հ., Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը 13-14-րդ դարերում, Երևան, 1989:
55. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986:
56. Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 1, Երևան, 1990:
57. Հայկունի. Եղիշե (Հովակիմ) ավագ քահանա Գեղամյանց, Ուղեգնացական ակնարկներ, Երևան, 2010:
58. Հարությունյան Մ., Բերդաձոր. պատմություն, տոհմաբանություն, Երևան 2011:
59. Հարությունյան Գ., Արցախահայ դպրոցը 5-19-րդ դարերում, Ստեփանակերտ, 2000:
60. Հյուբշման Հ., Հին հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907:
61. Հովհաննիսյան Գ., Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1971:
62. Հովսեփյան Գ., Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, մաս I, Վաղարշապատ, 1928:
63. Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901
64. Ղ. Ալիշան, Արցախ, Երևան, 1993:
65. Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893:
66. Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ. գոյության պայքար, գիրք Ա, Երևան, 1993:
67. Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ (պատմության քննական վերլուծություն), պ. գ. դ. գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2000:
68. Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, նշխարներ, հ. Ա, Երևան, 2002:
69. Ղահրամանյան Կ., Օջախի գիրք, հողը կանչում է, հ. Բ, Երևան 2005:
70. Ղահրամանյան Հ., Տեղեկատու ԼՂՀ վարչատարածքային միավորների սոցիալ-տնտեսական բնութագրերի, Երևան, 2015:
71. Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, 1969:
72. Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994 թթ., Երևան, 2004:
73. Ղարիբյան Ա., Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1969:
74. Ղուլյան Ա., Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները, Երևան, 2001:
75. Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1944:
76. Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. 4, Երևան, 1945:
77. Մակար եպիսկոպոս Բարխուտարյանց, Արցախ, Բագու, 1895:
78. Մակար եպիսկոպոս Բարխուտարյանց, Արցախ, Երևան, 2018:
79. Մակար եպիսկոպոս Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, մաս Ա, Թիֆլիս, 1900:
80. Մակար եպիսկոպոս Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Երևան, 1907:
81. Մակար եպիսկոպոս Բարխուդարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, Երևան, 1999:
82. Մանուկյան Մ., Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանները, քաղաքները, գյուղերը, Երևան, 2015:
83. Մելքումյան Ս., Լեռնային Ղարաբաղ, Երևան, 1990:
84. Մելքումյան Ս., Ճարտար, Երևան, 2006:

85. Մինասյան Թ., Արցախի գրչության կենտրոնները, Երևան, 2015:
86. Միքայելյան Դ., Այգեստանի արծիվները, Ստեփանակերտ, 2011:
87. Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985:
88. Մկրտչյան Շ., Արցախում ես ուրիշ պատերազմ տեսա, Երևան, 1996:
89. Մկրտչյան Շ., Արցախի գանձերը, Երևան, 2000:
90. Մկրտչյան Ա., Ինչ է տեղի ունեցել Հադրութում, Ստեփանակերտ, 2019:
91. Յակոբեան Ալ., Պատմա-աշխարհագրական և վիմագրագիտական հետազոտութիւններ (Արցախ և Ուտիք), Վիեննա-Երևան, 2009:
92. Ներսեսով Միրզա Յուսուֆ, Ճշմարտացի պատմություն, Երևան, 2000:
93. Վանյան Գ., Կոճողոտ գյուղի պատմություն, Ստեփանակերտ, 2009:
94. Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դդ., Երևան, 1975:
95. Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994:
96. Ումառյան Ս., Սյունիքը դիցարան, Երևան, 1981:
97. Սամուելյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, Երևան, 1941:
98. Սարգսյան Ա., Արցախի բանահյուսությունը, Երևան, 2015:
99. Սարգսյան Ա., Արցախյան ավանդություններ, Ստեփանակերտ, 2007:
100. Սարգսյան Ս., Արցախ, պատմաաշխարհագրական ձշգրտումներ, Երևան, 1996:
101. Սարգսյան Ս., Խնապատ. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2006:
102. Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը (ստուգաբանություններ), Երևան, 2018:
103. Սարուխան Ն., Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը 1960-1988 թվականներին, Երևան, 2008:
104. Սեյրան Գ., Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները, Թիֆլիս, 1928:
105. Սիմոնյան Հ., Սանամյան Հ., Ծիծեռնավանք, Հայոց սրբերը և սրբավայրերը, Երևան, 2001:
106. Ստեփանյան Գ., Համազասպ Սրվանձտյանց, Երևան, 2016:
107. Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, հ. 1, Երևան, 1967:
108. Տեր Գասպարյան Ռ., Շուշի, Երևան, 1993:
109. Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1965:

բ) ռուսերեն

1. Алиев А., Исследования в Лачинском районе, Археологические открытия 1980 г., Москва, 1981.
2. Аноним, Церемониал коронования царей. Обзор источников по истории Азербайджана, вып. II, Меликсетбеков Л., Историки грузинские, Баку, 1939.
3. Аракелян А., Закавказские шелкомотальные заводы, Тифлис, 1893.
4. Арутюнян К., Участие воинов-армян Нагорного Карабаха и Северного Арцаха в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945), Ереван, 2009.
5. Асрян Ю., Нагорный Карабах в эпохе поздней бронзы и раннего железа, Степанакерт, 1999.
6. Библиотека центра русско-армянских инициатив, депортация населения армянских сел НКАО и прилегающих районов, апрель-июнь 1991 года, составила Седа Вермишева, Ереван, 1995.

7. Заварян С., Экономические условия Карабага и голодъ 1905–1907 гг., С. Петербургъ, 1907.
8. Караганов В., Кавказская музыка, Тифлис, 1908.
9. Карагезян А, Сюник, Нахчаван и Гохтн, Ереван, 2002.
10. Карапетян М., Этническая структура населения Нагорного Карабаха в 1921 г. (по сельскохозяйственной переписи Азербайджана 1921 г.), Ереван, 1990.
11. Кондратенко Е., Карта Елисаветпольской губернии с показанием обществ и распределения населения по вероисповеданию, Тифлисъ, 1888.
12. Кочарян Г., Нагорный Карабах, Баку, 1925.
13. Миллер Б., Персидско-русский словарь, Москва, 1960.
14. Мирза Адигезал бек, Карабаг-наме, Баку, 1950.
15. Мирза Джамал Джеваншир, История Карабага, Баку, 1959.
16. Нагорный Карабах, Историческая справка, Ереван, 1988.
17. Науменко Е., Елизаветпольская губерния. Военно-статистическое описание, часть 1, Тифлис, 1903.
18. Осипов Г., Сборник материалов для описания местностей и племен Кавказа, Тифлис, 1898.
19. Пахомов Е., Монетные находки в Аз. ССР в 1924 г., "Известия Азербайджанского археологического комитета", вып. 1, Баку, 1925.
20. Потто В., Первые добровольцы Карабага въ эпоху водворенія русского владычества (Меликъ-Вани и Акопъ Юзбаши Атабековы), Тифлисъ, 1902.
21. Расим Эфенди, Декоративно-прикладное искусство Азербайджана, Баку, 1976.
22. Савин Б., Словарь географических терминов и других слов, формируюших топонимию Ирана, Москва, 1971.
23. Сегаль Л., Сборник сведений о Елисаветпольской губернии, Тифлис, 1902.
24. Словарь географических терминов и других слов, формирующих топонимию Ирана, Москва, 1971.
25. Товмасян В., Атаджанян В., Нерсесян Ю., Карабахский вопрос: Истоки и сущность в документах и фактах, Степанакерт, 1991.
26. Фигуровский И., Материалы по районированию Азербайджанской ССР, т. I, вып. 1, часть 2, Баку, 1926.

գ) անգլերեն

1. Boghossian, Armenian iconography, Paris, 1987.
2. Museum Gaukaicum, V, Tiflis, 1902.

դ) ադրբեջաներեն

1. Ադրբեջանական խորհրդային հանրագիտարան (ադրբեջաներեն), հ. III, Բաքու, 1979:
2. Ադրբեջանական խորհրդային հանրագիտարան (ադրբեջաներեն), հ. V, Բաքու, 1981:
3. Ադրբեջանական խորհրդային հանրագիտարան (ադրբեջաներեն), հ VII, Բաքու, 1983:
4. Ismyilov P., kəlbəcər Rayonunun Yer-yurd Adləri Bəki, 2012.

4. Հոդվածներ

ա) հայերեն

1. Ալեքսանյան Հ., Շուշիի և Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը 1916–1926 թթ., «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան», Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված նյութեր, Երևան, 2007:
2. Ամիրջանյան Թ., Արցախի գյուղանունները, «Կրթություն և գիտությունը Ղարաբաղում», հմ. 1, Երևան, 1996:
3. Բարխուդարյան Ա., Մի քանի հնութիւներ, «Արձագանք», 1 սեպտեմբերի, հմ. 9, Թիֆլիս, 1885:
4. Բեգլարյան Հ., Ամարասի հովտի հուշարձանները, «ԼՀԳ», հմ. 2, 1974:
5. Ընդհարումները Ջիվանշիրի գավառում, «Դրոշակ», հմ. 11, Ժնև, 1905:
6. Լալայեան Ե., Զանգեզուր, Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, «Ազգագրական հանդէս», հմ. 2, գիրք Դ, Թիֆլիս, 1898:
7. Խանզադյան Ս., Ինչ են պատմում քարերը, «Սովետական Հայաստան», ամսագիր, հմ. 6, Երևան, 1984:
8. Խաչատրյան Հ., Տարիքը տասնհինգ դար, «Գրական թերթ», 2 սեպտեմբերի, 1988:
9. Խաչենցի, Ղարաբաղի դրությունը, «Դրոշակ», հմ. 12, 1928:
10. Կոստիկյան Ք., Քաշաթաղի 17-րդ դարի պատմությանը վերաբերող մի փաստաթուղթ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XX, Երևան, 2001:
11. Հայ-թաթարական ընդհարումները Անդրկովկասում, «Դրոշակ», հմ. 13, Ժնև, 1905:
12. Հարությունյան Ժ., Մատաղիսի դպրոցը, «Կրթությունը և գիտությունը Արցախում» հմ. 1, 2012:
13. Սարուր, Կացությունը Ադրբէջանի մեջ, «Դրոշակ», հմ. 4, 1930:
14. Ստեփանյան Գ., Արևելյան Այսրկովկասում «ադրբեջանցի» էթնանվան գործառման հարցի շուրջ, «Մերձավոր Արևելք», պրակ V, Երևան, 2008:
15. Տէր Յովհաննիսեանց Գ. (Մուրացան), Բաղդասար մետրապոլիտ Հասան-Ջալալեանցի համառօտ կենսագրութիւնը, «Փորձ», մայիս, 1880:

բ) ռուսերեն

1. Гейбуллаев Г., Монгольские топонимы в Азербайджане, «Известия АН Аз. ССР, Серия история, философия и право», № 3, Баку, 1981.
2. Давидбеков И., Село Гадрут Елисаветпольской губернии, СМОМПК, вып. VI, Тифлис, 1888.
3. Долженко В., К истории образования русских поселений Закавказья (1830–1840 гг.), Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան, միջազգային գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 2007:
4. Израелов Г., Село Касапет Елизаветпольской губернии Джеванширского уезда, сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. 12, Тифлис, 1892.
5. Карагезян А, К локализации гавара Кашатаг, «ԼՀԳ», հմ. 1, 1987:
6. Эмиль Реслер, Археологические изыскания в Закавказье. «Кавказ», № 134, 1903.
7. Свазян Г., Об одной «албанской» надписи, Լրաբեր, 1987, թիվ 2:
8. О раскопках Реслера в Ходжалу, ОАК, 1895, 1899, 1900 гг.

5. Պարբերական մամուլ

ա) հայերեն

1. «Ազատ Արցախ», 19 ապրիլի, Ստեփանակերտ, 2012:
2. «Ազատամարտ», հմ. 40, 1993, հմ. 40, հոկտեմբեր, Երևան, 1997:
3. «Ազգագրական հանդես», գիրք Ա, Շուշի, 1895:
4. «Ազգագրական հանդես», գիրք Բ, Թիֆլիս, 1897:
5. «Ազգագրական հանդես», գիրք Դ, Թիֆլիս, 1898:
6. «Աշխատանք», 19 փետրվարի, Մարտունի, 1974:
7. «Արարատ», հմ. 4, Վաղարշապատ, 1886:
8. «Արձագանք», հմ. 38, 1887, հմ. 85, Թիֆլիս, 1897:
9. «Արշալույս», 11 հոկտեմբերի, հմ. 35, 1905, հմ. 66, 1 դեկտեմբերի, 1905, հմ. 69, 30 մարտի, 1906, հմ. 68, 3 դեկտեմբերի, 1905, հմ. 10, 17 հունվարի, հմ. 12, 19 հունվարի, 1906, 6 օգոստոսի, հմ. 15, 27 օգոստոսի, հմ. 19, Թիֆլիս, 1917:
10. «Բագուի ձայն», հմ. 121, 31 օգոստոսի, Բագու, 1913:
11. «Բանբեր Մատենադարանի», հմ. 15, Երևան, 1986:
12. «Բարեկամություն», 20 հոկտեմբերի, Մարտակերտ, 1988:
13. «Երկիր», հմ. 131, Երևան, 1994:
14. «ԼՀԳ», հմ. 1, Երևան, 1987:
15. «Խորհրդային Ղարաբաղ», 20 մայիսի, հմ. 115, Ստեփանակերտ, 1989:
16. «Կոմունիստ», 19 սեպտեմբերի, 23 սեպտեմբերի, 1923, 21 հունիսի, 1931, 14 հոկտեմբերի, 1931, 7 հունվարի, Երևան, 1974:
17. «Դպրոց», հմ. 1, Վաղարշապատ, 1875:
18. «Կարմիր դրոշ», հմ. 61, 9 սեպտեմբերի, Ասկերան, 1988:
19. «Գործ», հմ. 9, 7 մարտի, Բագու, 1914:
20. «Բազմավեպ», հմ. 1–4, Վենետիկ, 1889:
21. «Կրթությունը և գիտությունը Արցախում», մայիս, Երևան, 2015:
22. «Հայաստանի հանրապետություն», 18 ապրիլի, Երևան, 1997:
23. «Հայաստանի ձայն», հմ. 11, 6 փետրվարի, Երևան, 1920:
24. «Հորիզոն», հմ. 129, Թիֆլիս, 1913:
25. «Ճոաքաղ», հ. Ա, տետրակ Գ, Մոսկվա, 1859:
26. «Մարտիկ», հմ. 3, 21 հունվարի, հմ. 30, 1993, 25 հունվարի, Ստեփանակերտ, 1995:
27. «Մեղու Հայաստանի», 1 դեկտեմբերի, հմ. 94, Թիֆլիս, 1885:
28. «Մշակ», հմ. 108, 23 յունիսի, 1898, հմ. 161, 1902, հմ. 2, 4 հունվարի, 1906, հմ. 67, 28 մարտի, 1906, հմ. 68, 29 մարտի, Թիֆլիս, 1906:
29. «Մուրճ», հմ. 4, Թիֆլիս, 1889:
30. «Մռավի ղողանջներ», հմ. 8, 2002, հմ. 3, 2013, հմ. 2, Երևան, 2015:
31. «Նոր դար», հմ. 29, 1885, հմ. 1, 90, 12 հունիսի, 1886, հմ. 174, 1887, հմ. 33, 1888, հմ. 174, 1888, հմ. 32, 1889, հմ. 126, 1890, հմ. 153, 1890, հմ. 64, 73, 75, 1899, հմ. 3, 1907–1908, հմ. 5, 1908, հմ. 4, 6, 1909, հմ. 100, Թիֆլիս, 1911:
32. «Նոր դպրոց», հմ. 7, 1909, հմ. 3–5, 1913, հմ. 10, Թիֆլիս, 1914:
33. «Նոր ուղի», հմ. 107, 6 սեպտեմբերի, Շահումյանի շրջանային թերթ, 1977:
34. «Սովետական Ղարաբաղ», 4 նոյեմբերի, 1972, հմ. 6, 1984, հմ. 281, 8 դեկտեմբերի, Ստեփանակերտ, 1988:

35. «Խորհրդային Ղարաբաղ», 6 նոյեմբերի, Ստեփանակերտ, 1990:
36. «Փայլակ», հմ. 48, 23 օգոստոսի, 1915, հմ. 80, 20 հոկտեմբերի, հմ. 83, 30 հոկտեմբերի, Շուշի, 1916:
37. Պաշտօնական ամսագիր ամենայն հայոց կաթողիկոսութեան մայր աթոռոյ սրբոց Էջմիածնի., Ս. Էջմիածին, յունիս 2015:

բ) ռուսերեն

1. «Кавказ», № 23, Тифлис, 1850.
2. «Правда», 17 сентября, Москва, 1991.
3. «Республика Армения», 13 мая, Ереван, 1997.
4. «Северная пчела», № 210, 18 сентября, С. Петербург, 1851.
5. «Советское краеведение», № 10, Москва, 1936.

գ) գերմաներեն

1. «Algemeine zeitung», 15 november, 1846.

6. Կայքեր

1. http://old.memo.ru/hr/hotpoints/karabah/getashen/chapter1.htm
2. U. A. Regnum (02–03–20; KK, 2012, № 2 և 25).
3. www.irs-az.com/ 100331140534 pdf

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ

ԱԶՈԽ 170
ԱԼԱՇԿԵՐՏ 603
ԱԿՆԱԲԵՐԴ 533
ԱԿՆԱՂԲՅՈՒՐ 175
ԱԿՆԱՂԲՅՈՒՐ 36
ԱՂԱԲԵԿԱԼԱՆՋ 271
ԱՂԱՁՈՐ 604
ԱՂԱՆՈՒՍ 606
ԱՂԱՎՆԱՏՈՒՆ 608
ԱՂԱՎՆՈ 613
ԱՂԲՐԱՁՈՐ 621
ԱՄԻՐՅԱՆ 644
ԱՅԳԵԿ 618
ԱՅԳԵՀՈՎԻՏ 616
ԱՅԳԵՍՏԱՆ 167
ԱՅԳԵՍՏԱՆ 40
ԱՆԴՈԿԱԲԵՐԴ 725
ԱՆՁԱՎՆԵՐ 379
ԱՇԱՆ 405
ԱՊԱՐԱՆ 607
ԱՌԱՋԱՁՈՐ 273
ԱՌԱՋԱՄՈՒՂ 261
ԱՌԱՔԵԼ 178
ԱՍԿԵՐԱՆ 27
ԱՍՏՂԱՇԵՆ 42
ԱՎԴՈՒՌ 407
ԱՎԵՏԱՐԱՆՈՑ 46
ԱՐԱԽԻՇ 620
ԱՐԱՀՈՒԾ 655
ԱՐԱՔՍԱՎԱՆ 263
ԱՐԵՎՇԱՏ 183
ԱՐԾՎԱՇԵՆ 628
ԱՐՄԵՆԱԿԱՎԱՆ 51
ԱՐՎԱԿԱՆ 682
ԱՐՏԱՇԱՎԻ 630
ԱՐՓԱԳԵՏԻԿ 210

ԲԱԶՄԱՏՈՒՍ 633
ԲԱՆԱՁՈՐ 186
ԲԱՐԿՈՒՇԱՏ 670
ԲԵՐԴԱՇԵՆ 410
ԲԵՐԴԻԿ 686
ԲԵՐՁՈՐ 590
ԲԵՐՔԱՁՈՐ 55

ԳԱՀԱՆԻՍՏ 623
ԳԱՆՁԱ 632
ԳԱՌՆԱՔԱՐ 277
ԳԵՏԱՄԵՋ 634
ԳԵՏԱՎԱՆ 280
ԳԵՏԱՓ 635
ԳԻՀՈՒՏ 701
ԳԻՇԻ 414
ԳՈՂԹԱՆԻԿ 636
ԳՐՀԱՄ 599

ԴԱԴԻՎԱՆՔ 535
ԴԱՀՐԱՋ 132
ԴԱՀՐԱՎ 56
ԴԱՇՈՒՇԵՆ 60
ԴԱՇՏԱԳԼՈՒԽ 380
ԴԱՐԲՆՈՑ 667
ԴԻՑԱՄԱՅՐԻ 594
ԴՈՂԱՐ 723
ԴՐԱԽՏԱՁՈՐ 638
ԴՐԱԽՏԻԿ 192
ԴՐՄԲՈՆ 282

ԵՂԵԳՆՈՒՏ 516
ԵՂՑԱՀՈՂ 569

ԵՄԻՇՃԱՆ 421
ԵՐԻՑՎԱՆՔ 643

ԶԱԳԼԻԿ 285
ԶԱՐԴԱԽԱՋ 287
ԶԱՐԴԱՆԱՇԵՆ 424
ԶՈՒԱՐ 518

ԹԱԼԻՇ 289
ԹԱՂԱՍԵՌ 195
ԹԱՂԱՎԱՐԴ 426
ԹԱՂՈՒՏ 199
ԹԲԼՂՈՒ 292

ԻՇԽԱՆԱՁՈՐ 646
ԻՎԱՆՅԱՆ 62

ԼԵՌՆԱՀՈՎԻՏ 639
ԼԻՍԱԳՈՐ 564
ԼՃԱՇԵՆ 617
ԼՈՒՍԱՁՈՐ 66

ԽԱՆՁԱՁՈՐ 202
ԽԱՆՑՔ 71
ԽԱՉԳԵՏԻԿ 610
ԽԱՉԵՆ 76
ԽԱՉԻՆ ՏԱՓ 704
ԽԱՉՄԱՉ 79
ԽԱՐԽԱՓՈՒՏ 545
ԽԵՐԽԱՆ 429
ԽԾԱԲԵՐԴ 206
ԽՆԱՑԱԽ 82
ԽՆԱՊԱՏ 68
ԽՆԿԱՎԱՆ 294
ԽՆՁՐԻՍՏԱՆ 86
ԽՆՈՒՇԻՆԱԿ 431
ԽՐԱՄՈՐԹ 90

ՇԱԿՈՒՌՈՒ 212
ՇԱՂԿԱԲԵՐԴ 648
ՇԱՂԿԱՁՈՐ 572
ՇԱՂԿԱՇԱՏ 95
ՇԱՂԿԱՇԵՆ 295
ՇԱՂԿԱՎԱՆՔ 235
ՇԱՂԿՈՒՆՔ 381
ՇԱՄՁՈՐ 214
ՇԱՐ 520
ՇԻՇԵՌՆԱՎԱՆՔ 651
ՇՄԱԿԱՀՈՂ 297
ՇՈԲԱՁՈՐ 656
ՇՈՎԱՏԵՂ 433

ԿԱՂԱՐՇԻ 437
ԿԱՆԱՉ ԹԱԼԱ 571
ԿԱՎԱՀԱՆ 456
ԿԱՐՄԻՐ ԳՅՈՒՂ 98
ԿԱՐՄԻՐ ՇՈՒԿԱ 440
ԿԱՐՄՐԱԿՈՒՃ 256
ԿԵՐԵՆ 596
ԿԻՉԱՆ 301
ԿՈԼԽՈՋԱՇԵՆ 443
ԿՈՃՈՂՈՏ 302
ԿՈՎՍԱԿԱՆ 592
ԿՈՒՄԱՅՐԻ 658
ԿՈՒՍԱՊԱՏ 307
ԿՐՄԵՆ 645

ՀԱԴՐՈՒԹ 158
ՀԱԹԵՐՔ 311
ՀԱԼԵ 677
ՀԱԿ 660
ՀԱԿԱԿՈՒ 219
ՀԱԿԱՐԻ 663
ՀԱՂՈՐՏԻ 446
ՀԱՅԹԱՂ 624
ՀԱՅԿԱՁՅԱՆ 664
ՀԱՅԿԱՎԱՆ 205
ՀԱՎՍԱԹԱՂ 523
ՀԱՐԱՎ 104
ՀԱՐԱՐ 611
ՀԱՐԹԱՇԵՆ 218
ՀԱՐՈՒԹՅՈՒՆԱԳՈՄԵՐ 315
ՀԱՑԻ 450
ՀԵՐԻԿ 685

ՀԵՐՀԵՐ....454
ՀԻԼԻՍ....107
ՀԻՄՆԱՇԵՆ....692
ՀԻՆ ԹԱՂԵՐ....221
ՀԻՆՇԵՆ....573
ՀՈՉԱՆՑ....671
ՀՈՎՍԵՓԱՎԱՆ....109
ՀՈՎՏԱՇԵՆ....318

ՁՈՐԱԳՅՈՒՂ....180
ՁՈՐԱՓ....673

ՂԱՋԱՐԱՀՈՂ....369
ՂԱՋԱՐԱՊԱՏ....674

ՃԱՆԿԱԹԱՂ....319
ՃԱՐՏԱՐ....459
ՃՐԱԳ....382

ՄԱԴԱԹԱՇԵՆ....110
ՄԱՂԱՎՈՒՋ....328
ՄԱՃԿԱԼԱՇԵՆ....463
ՄԱՄԱՐՔ....676
ՄԱՏԱՂԻՍ....324
ՄԱՐԱԹՈՒԿ....649
ՄԱՐԳԻՍ....698
ՄԱՐԻԱՄԱՁՈՐ....224
ՄԱՐՏԱԿԵՐՏ....265
ՄԱՐՏԻՐՈՍ....707
ՄԱՐՏՈՒՆԱՇԵՆ....678
ՄԱՐՏՈՒՆԻ....400
ՄԵԼԻՔԱՇԵՆ....169
ՄԵԼԻՔԱՇԵՆ....653
ՄԵԽԱԿԱՎԱՆ....259
ՄԵԾ ԹԱՂԵՐ....226
ՄԵԾ ՇԵՆ....332
ՄԵԾ ՇԵՆ....579
ՄԵՀՄԱՆԱ....338
ՄԵՂՎԱՁՈՐ....608
ՄԻՋՆԱՎԱՆ....602
ՄԻՐԻԿ....679
ՄԽԱՆՑ....629

ՄԽԻԹԱՐԱՇԵՆ....112
ՄՅՈՒՐԻՇԵՆ....467
ՄՇԵՆԻ....681
ՄՈԽՐԱԹԱՂ....339
ՄՈԽՐԵՆԵՍ....231
ՄՈՇԱԹԱՂ....683
ՄՈՇԽՄՀԱՏ....114
ՄՈՎՍԵՍԱՇԵՆ....625
ՄՈՐԱՁՈՒՐ....718
ՄՈՒՇ....688
ՄՈՒՇԿԱՊԱՏ....472
ՄՍՄՆԱ....470

ՆԱԽԻՋԵՎԱՆԻԿ....115
ՆԱՐԵՇՏԱՐ....383
ՆԵՐՔԻՆ ՀՈՌԱԹԱՂ....343
ՆԵՐՔԻՆ ՍՋՆԵՔ....121
ՆԵՐՔԻՆ ՍՈՒՍ....702
ՆՆԳԻ....475
ՆՈՐ ԱՅԳԵՍՏԱՆ....346
ՆՈՐ ԲՐԱՁՈՒՐ....525
ՆՈՐ ԳԵՏԱՇԵՆ....529
ՆՈՐ ԷՐՔԵՋ....538
ՆՈՐ ԿԱՐԱՁԻՆԱՐ....542
ՆՈՐ ԿԱՐՄԻՐԱՎԱՆ....348
ՆՈՐ ՀԱՅԿԱՁՈՒՐ....269
ՆՈՐ ՂԱՋԱՆՁԻ....350
ՆՈՐ ՄԱՆԱՇԻԴ....513
ՆՈՐ ՄԱՐԱՂԱ....352
ՆՈՐ ՇԵՆ....478
ՆՈՐ ՋՐԱԲԵՐԴ....392
ՆՈՐ ՍԵՅՍՈՒԼԱՆ....356
ՆՈՐ ՎԵՐԻՆ ՇԵՆ....510
ՆՈՐԱԳՅՈՒՂ....118
ՆՈՐԱՇԵՆ....233
ՆՈՐԱՇԵՆԻԿ....689

ՇԱԼՈՒԱ....691
ՇԱՀՄԱՍՈՒՐ....358
ՇԵԽԵՐ....481
ՇԻՐԱԿ....659
ՇՈՇ....123

ՇՈՒՇԻ....551
ՇՐՎԱԿԱՆ....641

ՈՐԴՈՒԱԿ....657
ՈՐՈՏԱՆ....721

ՉԱՐԵՔՏԱՐ....527
ՉԱՓԱՐ....360
ՉԼԴՐԱՆ....363

ՊԱՌԱՎԱԹՈՒՄԲ....484
ՊԱՏԱՐԱ....52
ՊԼԵԹԱՆՑ....234
ՊՈՂՈՍԱԳՈՄԵՐ....367

ՋԱՆՖԻԴԱ....665
ՋԻՎԱՆԻ....500
ՋՐԱԿՈՒՍ....237
ՋՐԱՂԱՑՆԵՐ....126

ՌԵՎ....128

ՍԱՀԱՌ....666
ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ....130
ՍԱՐԱԼԱՆՋ....181
ՍԱՐԱՏԱԿ....695
ՍԱՐԳՍԱՇԵՆ....486
ՍԱՐԴԱՐԱՇԵՆ....134
ՍԱՐԻՆՇԵՆ....216
ՍԱՐՈՒՇԵՆ....136
ՍՂՆԱԽ....139
ՍՈՆԱՍԱՐ....696
ՍՈՍ....489
ՍՈՒՍ....699
ՍՊԻՏԱԿԱՇԵՆ....209
ՍՊԻՏԱԿԱՇԵՆ....493
ՍՊԻՏԱԿԱՇԵՆ....600
ՍՊԻՏԱԿԱՋՈՒՐ....640
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ....12

ՎԱՋԳԵՆԱՇԵՆ....505
ՎԱՋԳԵՆԱՇԵՆ....626

ՎԱԿՈՒՆԻՍ....703
ՎԱՂԱՋԻՆ....706
ՎԱՂՈՒՀԱՍ....370
ՎԱՆ....708
ՎԱՆԱՆԴ....668
ՎԱՆՔ....165
ՎԱՆՔ....374
ՎԱՐԱՁԱԲՈՒՅՆ....147
ՎԱՐԱՆԴԱ....502
ՎԱՐԴԱԲԱՑ....709
ՎԱՐԴԱՁՈՐ....143
ՎԱՐԴԱՁՈՐ....384
ՎԱՐԴԱՇԱՏ....240
ՎԱՐԴՈՒՏ....690
ՎԱՐՆԿԱԹԱՂ....386
ՎԵՐԻՆ ՀՈՌԱԹԱՂ....389
ՎԵՐԻՆ ՇԵՆ....693
ՎԵՐԻՆ ՍՋՆԵՔ....150
ՎԵՐԻՆ ՔԱՇՈՒՆԻՔ....719
ՎՈՒՐԳԱՎԱՆ....711

ՏԱՆՁՈՒՏ....712
ՏԻԳՐԱՆԱՎԱՆ....714
ՏՅԱՔ....163
ՏՈՂ....242
ՏՈՆԱՇԵՆ....396
ՏՈՒՄԻ....248

ՑՈՐ....191

ՈՒԽՏԱՁՈՐ....252
ՈՒՂՏԱՍԱՐ....151
ՈՒՌԵԿԱՆ....715
ՈՒՐՄԻԱ....700

ՓԱԿԱՀԱՆ....716
ՓԱՌՈՒԽ....152

ՔԱՇՈՒՆԻՔ....717
ՔԱՋԱՎԱՆ....404
ՔԱՐԱԲԱԿ....627
ՔԱՐԱԳԼՈՒԽ....182

ՔԱՐԱՀՈՒՆՋ....495
ՔԱՐԱՏԱԿ....598
ՔԱՐԵԳԱՀ....720
ՔԱՐԻՆ ՏԱԿ....582
ՔԱՐՈՏԱՆ....709
ՔԱՐՈՒՏ....694
ՔԱՐՎԱՃԱՌ....508
ՔԵՐԹ....497
ՔԻՐՍԱՎԱՆ....567
ՔՄՔԱՁՈՐ....331
ՔՑԱԹՈՒԿ....34
ՔՑՈՒՐԱԹԱՂ....254
ՔՆԱՐԱՎԱՆ....548
ՔՈԼԱՏԱԿ....393
ՔՌԱՄՆԻ....154

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն....5
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ....12

ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆ

ԱՍԿԵՐԱՆ....27
ՔՑԱԹՈՒԿ....34
ԱԿՆԱՂԲՅՈՒՐ....36
ԱՅԳԵՍՏԱՆ....40
ԱՍՏՂԱՇԵՆ....42
ԱՎԵՏԱՐԱՆՈՑ....46
ԱՐՄԵՆԱԿԱՎԱՆ....51
ՊԱՏԱՐԱ....52
ԲԵՐՔԱՁՈՐ....55
ԴԱՀՐԱՎ....56
ԴԱՇՈՒՇԵՆ....60
ԻՎԱՆՅԱՆ....62
ԼՈՒՍԱՁՈՐ....66
ԽՆԱՊԱՏ....68
ԽԱՆՑՔ....71
ԽԱՉԵՆ....76
ԽԱՉՄԱՉ....79
ԽՆԱԾԱԽ....82
ԽՆՁՐԻՍՏԱՆ....86
ԽՐԱՄՈՐԹ....90
ԾԱՂԿԱՇԱՏ....95
ԿԱՐՄԻՐ ԳՅՈՒՂ....98
ՀԱՐԱՎ....104
ՀԻԼԻՍ....107
ՀՈՎՍԵՓԱՎԱՆ....109
ՄԱԴԱԹԱՇԵՆ....110
ՄԽԻԹԱՐԱՇԵՆ....112
ՄՈՇԽՄՀԱՏ....114
ՆԱԽԻՋԵՎԱՆԻԿ....115
ՆՈՐԱԳՅՈՒՂ....118
ՆԵՐՔԻՆ ՍՋՆԵՔ....121
ՇՈՇ....123
ՋՐԱՂԱՑՆԵՐ....126
ՌԵՎ....128
ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ....130
ԴԱՀՐԱՋ....132
ՍԱՐԴԱՐԱՇԵՆ....134
ՍԱՐՈՒՇԵՆ....136
ՍՂՆԱԽ....139
ՎԱՐԴԱՁՈՐ....143
ՎԱՐԱՋԱԲՈՒՅՆ....147
ՎԵՐԻՆ ՍՋՆԵՔ....150
ՈՒՂՏԱՍԱՐ....151
ՓԱՌՈՒԽ....152
ՔՌԱՄՆԻ....154

ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆ

ՀԱԴՐՈՒԹ....158
ՏՅԱՔ....163
ՎԱՆՔ....165
ԱՅԳԵՍՏԱՆ....167
ՄԵԼԻՔԱՇԵՆ....169
ԱՋՈԽ....170
ԱԿՆԱՂԲՅՈՒՐ....175
ԱՌԱՔԵԼ....178
ՁՈՐԱԳՅՈՒՂ....180
ՍԱՐԱԼԱՆՋ....181
ՔԱՐԱԳԼՈՒԽ....182
ԱՐԵՎՇԱՏ....183

ԲԱՆԱՁՈՐ 186
ՑՈՐ 191
ԴՐԱԽՏԻԿ 192
ԹԱՂԱՍԵՌ 195
ԹԱՂՈՒՏ 199
ԽԱՆՁԱՁՈՐ 202
ՀԱՅԿԱՎԱՆ 205
ԽԾԱԲԵՐԴ 206
ՍՊԻՏԱԿԱՇԵՆ 209
ԱՐՓԱԳԵՏԻԿ 210
ԾԱԿՈՒՌԻ 212
ԾԱՄՁՈՐ 214
ՍԱՐԻՆՇԵՆ 216
ՀԱՐԹԱՇԵՆ 218
ՀԱԿԱԿՈՒ 219
ՀԻՆ ԹԱՂԵՐ 221
ՄԱՐԻԱՄԱՁՈՐ 224
ՄԵԾ ԹԱՂԵՐ 226
ՄՈԽՐԵՆԵՍ 231
ՆՈՐԱՇԵՆ 233
ՊԼԵԹԱՆՑ 234
ԾԱՂԿԱՎԱՆՔ 235
ՋՐԱԿՈՒՍ 237
ՎԱՐԴԱՇԱՏ 240
ՏՈՂ 242
ՏՈՒՄԻ 248
ՈՒԽՏԱՁՈՐ 252
ՔՅՈՒՐԱԹԱՂ 254
ԿԱՐՄՐԱԿՈՒՃ 256
ՄԵԽԱԿԱՎԱՆ 259
ԱՌԱՋԱՄՈՒՂ 261
ԱՐԱՔՍԱՎԱՆ 263

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆ

ՄԱՐՏԱԿԵՐՏ 265
ՆՈՐ ՀԱՅԿԱՁՈՒՐ 269
ԱՂԱԲԵԿԱԼԱՆՋ 271
ԱՌԱՋԱՁՈՐ 273
ԳԱՌՆԱՔԱՐ 277
ԳԵՏԱՎԱՆ 280
ԴՐՄԲՈՆ 282
ՋԱԳԼԻԿ 285
ՋԱՐԴԱԽԱՋ 287
ԹԱԼԻՇ 289
ԹԲԼՂՈՒ 292
ԽՆԿԱՎԱՆ 294
ԾԱՂԿԱՇԵՆ 295
ԾՄԱԿԱՀՈՂ 297
ԿԻՉԱՆ 301
ԿՈՃՈՂՈՏ 302
ԿՈՒՍԱՊԱՏ 307
ՀԱԹԵՐՔ 311
ՀԱՐՈՒԹՅՈՒՆԱԳՈՄԵՐ 315
ՀՈՎՏԱՇԵՆ 318
ՃԱՆԿԱԹԱՂ 319
ՄԱՏԱՂԻՍ 324
ՄԱՂԱՎՈՒՋ 328
ՔՄՔԱՁՈՐ 331
ՄԵԾ ՇԵՆ 332
ՄԵՀՄԱՆԱ 338
ՄՈԽՐԱԹԱՂ 339
ՆԵՐՔԻՆ ՀՈՌԱԹԱՂ 343
ՆՈՐ ԱՅԳԵՍՏԱՆ 346
ՆՈՐ ԿԱՐՄԻՐԱՎԱՆ 348
ՆՈՐ ՂԱՋԱՆՁԻ 350
ՆՈՐ ՄԱՐԱՂԱ 352
ՆՈՐ ՍԵՅՍՈՒԼԱՆ 356
ՇԱՀՄԱՍՈՒՐ 358
ՉԱՓԱՐ 360
ՉԼԴՐԱՆ 363
ՊՈՂՈՍԱԳՈՄԵՐ 367
ՂԱՋԱՐԱՀՈՂ 369
ՎԱՂՈՒՀԱՍ 370
ՎԱՆՔ 374
ԱՆՁԱՎՆԵՐ 379
ԴԱՇՏԱԳԼՈՒԽ 380
ԾԱՂԿՈՒՆՔ 381
ՃՐԱԳ 382
ՆԱՐԵՇՏԱՐ 383
ՎԱՐԴԱՁՈՐ 384
ՎԱՐՆԿԱԹԱՂ 386
ՎԵՐԻՆ ՀՈՌԱԹԱՂ 389

ՆՈՐ ՋՐԱԲԵՐԴ 392
ՔՈԼԱՏԱԿ 393
ՏՈՆԱՇԵՆ 396

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ

ՄԱՐՏՈՒՆԻ 400
ՔԱՋԱՎԱՆ 404
ԱՇԱՆ 405
ԱՎԴՈՒՌ 407
ԲԵՐԴԱՇԵՆ 410
ԳԻՇԻ 414
ԵՄԻՇՃԱՆ 421
ՋԱՐԴԱՆԱՇԵՆ 424
ԹԱՂԱՎԱՐԴ 426
ԽԵՐԽԱՆ 429
ԽՆՈՒՇԻՆԱԿ 431
ԾՈՎԱՏԵՂ 433
ԿԱՂԱՐԾԻ 437
ԿԱՐՄԻՐ ՇՈՒԿԱ 440
ԿՈԼԽՈՋԱՇԵՆ 443
ՀԱՂՈՐՏԻ 446
ՀԱՑԻ 450
ՀԵՐՀԵՐ 454
ԿԱՎԱՀԱՆ 456
ՃԱՐՏԱՐ 459
ՄԱՃԿԱԼԱՇԵՆ 463
ՄՅՈՒՐԻՇԵՆ 467
ՄՍՄՆԱ 470
ՄՈՒՇԿԱՊԱՏ 472
ՆՆԳԻ 475
ՆՈՐ ՇԵՆ 478
ՇԵԽԵՐ 481
ՊԱՌԱՎԱԹՈՒՄԲ 484
ՍԱՐԳՍԱՇԵՆ 486
ՍՈՍ 489
ՍՊԻՏԱԿԱՇԵՆ 493
ՔԱՐԱՀՈՒՆՋ 495
ՔԵՐԹ 497
ՋԻՎԱՆԻ 500
ՎԱՐԱՆԴԱ 502
ՎԱՋԳԵՆԱՇԵՆ 505

ՔԱՐՎԱՃԱՌԻ ՇՐՋԱՆ

ՔԱՐՎԱՃԱՌ 508
ՆՈՐ ՎԵՐԻՆ ՇԵՆ 510
ՆՈՐ ՄԱՆԱՇԻԴ 513
ԵՂԵԳՆՈՒՏ 516
ՋՈՒԱՐ 518
ԾԱՐ 520
ՀԱՎՍԱԹԱՂ 523
ՆՈՐ ԲՐԱՋՈՒՐ 525
ՉԱՐԵՔՏԱՐ 527
ՆՈՐ ԳԵՏԱՇԵՆ 529
ԱԿՆԱԲԵՐԴ 533
ԴԱԴԻՎԱՆՔ 535
ՆՈՐ ԷՐՔԵՋ 538
ՆՈՐ ԿԱՐԱՁԻՆԱՐ 542
ԽԱՐԽԱՓՈՒՏ 545
ՔՆԱՐԱՎԱՆ 548

ՇՈՒՇԻԻ ՇՐՋԱՆ

ՇՈՒՇԻ 551
ԼԻՍԱԳՈՐ 564
ՔԻՐՍԱՎԱՆ 567
ԵՂՑԱՀՈՂ 569
ԿԱՆԱՉ ԹԱԼԱ 571
ԾԱՂԿԱՁՈՐ 572
ՀԻՆՇԵՆ 573
ՄԵԾ ՇԵՆ 579
ՔԱՐԻՆ ՏԱԿ 582

ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆ

ԲԵՐՁՈՐ 590
ԿՈՎՍԱԿԱՆ 592
ԴԻՑԱՄԱՅՐԻ 594
ԿԵՐԵՆ 596
ՔԱՐԱՏԱԿ 598
ԳՐՀԱՄ 599
ՍՊԻՏԱԿԱՇԵՆ 600
ՄԻՋՆԱՎԱՆ 602
ԱԼԱՇԿԵՐՏ 603
ԱՂԱՁՈՐ 604
ԱՂԱՆՈՒՍ 606
ԱՊԱՐԱՆ 607
ՄԵՂՎԱՁՈՐ 608
ԱՂԱՎՆԱՏՈՒՆ 608
ԽԱՉԳԵՏԻԿ 610
ՀԱՐԱՐ 611
ԱՂԱՎՆՈ 613
ԱՅԳԵՀՈՎԻՏ 616
ԼՃԱՇԵՆ 617
ԱՅԳԵԿ 618
ԱՐԱԽԻՇ 620
ԱՂԲՐԱՁՈՐ 621
ԳԱՀԱՆԻՍՏ 623
ՀԱՅԹԱՂ 624
ՄՈՎՍԵՍԱՇԵՆ 625
ՎԱՋԳԵՆԱՇԵՆ 626
ՔԱՐԱԲԱԿ 627
ԱՐԾՎԱՇԵՆ 628
ՄԽԱՆՑ 629
ԱՐՏԱՇԱՎԻ 630
ԳԱՆՁԱ 632
ԲԱՋՄԱՏՈՒՍ 633
ԳԵՏԱՄԵՋ 634
ԳԵՏԱՓ 635
ԳՈՂԹԱՆԻԿ 636
ԴՐԱԽՏԱՁՈՐ 638
ԼԵՌՆԱՀՈՎԻՏ 639
ՍՊԻՏԱԿԱՋՈՒՐ 640
ՇՐՎԱԿԱՆ 641
ԵՐԻՑՎԱՆՔ 643
ԱՄԻՐՅԱՆ 644
ԿՐՄԵՆ 645
ԻՇԽԱՆԱՁՈՐ 646
ԾԱՂԿԱԲԵՐԴ 648
ՄԱՐԱԹՈՒԿ 649
ԾԻԾԵՌՆԱՎԱՆՔ 651
ՄԵԼԻՔԱՇԵՆ 653
ԱՐԱՀՈՒԾ 655
ԾՈԲԱՁՈՐ 656
ՈՐԴՈՒԱԿ 657
ԿՈՒՄԱՅՐԻ 658
ՇԻՐԱԿ 659
ՀԱԿ 660
ՀԱԿԱՐԻ 663
ՀԱՅԿԱՁՅԱՆ 664
ՋԱՆՖԻԴԱ 665
ՍԱՀԱՌ 666
ԴԱՐԲՆՈՑ 667
ՎԱՆԱՆԴ 668
ԲԱՐԿՈՒՇԱՏ 670
ՀՈՉԱՆՑ 671
ՁՈՐԱՓ 673
ՂԱՋԱՐԱՊԱՏ 674
ՄԱՄԱՐՔ 676
ՀԱԼԵ 677
ՄԱՐՏՈՒՆԱՇԵՆ 678
ՄԻՐԻԿ 679
ՄՇԵՆԻ 681
ԱՐՎԱԿԱՆ 682
ՄՈՇԱԹԱՂ 683
ՀԵՐԻԿ 685
ԲԵՐԴԻԿ 686
ՄՈՒՇ 688
ՆՈՐԱՇԵՆԻԿ 689
ՎԱՐԴՈՒՏ 690
ՇԱԼՈՒԱ 691
ՀԻՄՆԱՇԵՆ 692
ՎԵՐԻՆ ՇԵՆ 693
ՔԱՐՈՒՏ 694
ՍԱՐԱՏԱԿ 695
ՍՈՆԱՍԱՐ 696
ՄԱՐԳԻՍ 698

ՍՈՒՍ 699
ՈՒՐՄԻԱ 700
ԳԻՀՈՒՏ 701
ՆԵՐՔԻՆ ՍՈՒՍ 702
ՎԱԿՈՒՆԻՍ 703
ԽԱՉԻՆ ՏԱՓ 704
ՎԱՂԱՋԻՆ 706
ՄԱՐՏԻՐՈՍ 707
ՎԱՆ 708
ՎԱՐԴԱԲԱՑ 709
ՔԱՐՈՏԱՆ 709
ՎՈՒՐԳԱՎԱՆ 711
ՏԱՆՁՈՒՏ 712
ՏԻԳՐԱՆԱՎԱՆ 714
ՈՒՌԵԿԱՆ 715
ՓԱԿԱՀԱՆ 716
ՔԱՇՈՒՆԻՔ 717
ՄՈՐԱՁՈՒՐ 718
ՎԵՐԻՆ ՔԱՇՈՒՆԻՔ 719
ՔԱՐԵԳԱՀ 720
ՈՐՈՏԱՆ 721
ԴՈՂԱՐ 723
ԱՆԴՈԿԱԲԵՐԴ 725

Վերջաբան 727

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ 728

Բնակավայրերի այբբենական ցանկ 740

ԱՐՑԱԽԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Վահրամ Ռազմիկի Բալայան

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐ

Մենագրություն

Vahram Balayan

GLIMPSES ON THE HISTORY OF THE ARTSAKH REPUBLIC SETTLEMENTS

Monograph

"Zangak" Publishing House, Yerevan, Armenia

Ваграм Балаян

ОЧЕРКИ ИСТОРИИ НАСЕЛЕННЫХ ПУНКТОВ РЕСПУБЛИКИ АРЦАХ

Монография

Издательство "Зангак", Ереван, Армения

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Գեղարվեստական խմբագիր՝ Մարիամ Կանայան
Տեխնիկական խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան
Սրբագրիչ՝ Նարինե Ավանեսյան
Էջադրումը՝ Գրիգորի Հարությունյանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100/16: Թուղթը՝ օֆսեթ
Տառատեսակը՝ GHEA Mashtots: Ծավալը՝ 47 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 600

«ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23-25-28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ